Նուիրում է Գանձասարի վանքի
Սբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու
օծման 770-ամեակին

Գանձասար

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

"GANDZASAR"
THEOLOGICAL REVIEW

Գլխավոր խմբագիր
Մեսրոպ քահանայ
Արամեան

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Գ-276

Գլխաւոր խմբագիր՝
Մեսրոպ քահանայ Արամեան

Խմբագիր՝ Սեդա Ստամբոլցեան

Տեխնիկական խմբագրումը եւ
էջադրումը՝ Աշոտ Մովսիսեանի

Շապիկը՝ Արմէն Քիւրքչեանի

Գ-276 «Գանձասար» աստուածաբանական հանդէս / Գլխ. խմբագիր՝
Մեսրոպ քահանայ Արամեան:- Եր.: Գանձասար, հտ. Ը, 2010:- 653 էջ:

«Գանձասար» հանդէսի այս հատորում ամփոփուած ուսումնասիրութիւնները նուիրուած են քրիստոսաբանութեանը, հայկական ծէսի կորած շերտերի բացայայտմանը եւ սրբախօսական գրականութեանը: «Բնագրեր» բաժնում պատկառելի ծաւալ են կազմում Վաղ Եկեղեցու կարեւոր սկզբնաղբիւրների թարգմանութիւնները (հին յունարէնից) եւ Եկեղեցու հայրերի՝ ներանձնական աստուածպաշտութեանը նուիրուած երկերի արեւելահայերէն թարգմանութիւնները (գրաբարից): Հատորը շարունակում է հաւատարիմ մնալ հայ դաւանական մտքի վերհանմանը նուիրուած աւանդութեանը՝ ներկայացնելով մի շարք կարեւոր քննական բնագրեր: Իսկ վարքագրական ժանրով հետաքրքրուողներն այս հրատարակութեան մէջ կը գտնեն հոգեպարար պատմութիւններով զարդարուած մի ճոխ խճանկար:

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37

ISBN 978-99930-70-05-4 © «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, 2010 թ.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. ՊԱՐԳԵՒԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ

Մեկենասութեամբ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

11 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ
Քրիստոսի պայծառակերպութիւնը
եկեղեցական աստուածաբանութեան մէջ
21 ԲԱԳՐԱՏ ԵՊՍ ԳԱԼՍՏԱՆԵԱՆ
Օծումն հիւանդաց. խորհրդի խնդիրը Հայ Եկեղեցում
112 ՅԱՒԵԼՈՒԱԾ: Թովմա Մեծոփեցու «Կարգ օրհնութեան սուրբ իւղոյն
հիւանդաց» ծէսի բնագիրը
145 ՊԱՐՈՅՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նիւթեր պարսից քրիստոնէութեան պատմութիւնից
(սբ Գոլանդուխտի վարքը)

ԲՆԱԳՐԵՐ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

157 Բառնաբասի նամակը (ներածութիւն)
161 Բառնաբասի նամակը
211 Հռոմի եպիսկոպոս սբ Կղեմէսի Բ նամակը կորնթացիներին
231 ՍԲ ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ
Սկզբում էր խօսքը
236 Գոհութեան մասին
247 Ս. ՍՏԱՄԲՈԼՑԵԱՆ
Սբ Եւագր Պոնտացի
255 ՍԲ ԵՒԱԳՐ ՊՈՆՏԱՑԻ
Խրատական խօսք
261 Խրատական ուղերձ
263 «Միայնակեաց». մաս Ա- Արդիւնաւոր
294 «Միայնակեաց». մաս Բ- Հայեցող
303 Մարտիրոսներին
304 Նիկիական հաւատամքի մասին
309 ՅԱԿՈԲ ՔԵՈՍԷԵԱՆ
Սամուէլ Կամրջաձորեցու դաւանաբանական թուղթը՝ ուղղուած հայոց
Ոսկիձեռն իշխանին
314 ՍԱՄՈՒԷԼ ԿԱՄՐՋԱՁՈՐԵՑԻ
Պատասխանի մեծի եւ փառաւոր իշխանին...
322 Պօղոս Տարօնացու «Բացայայտութիւն ժամուց աղօթից» գործը
326 ՊՕՂՈՍ ՏԱՐՕՆԱՑԻ
Բացայայտութիւն ժամուց աղօթից
351 ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ
Նորին Յովհաննու քահանայի ի խնդրոյ Գագկայ կրօնաւորի յաղագս
քաղկեդոնականացն
361 Նորին վասն մասանց պատուոյ, յորում եւ վասն պատկերաց դարձեալ
368 Նորին Յովհաննու քահանայի առ որս պիղծ զմիս վարկանին եւ
զանձինս ոչ արգելուն
391 Յարացոյցք յաղագս մի զՔրիստոս ասելոյ եւ անբաժանելի
395 Նորին հակաբանութիւն հնագիտական ընդդէմ անգիտակաց ոմանց
յիրս գիտութեան...
404 Նորին յայտարարութիւն զանազան հերձուածոց յայլ եւ յայլ ժամանակս
արանց բղջախոհաց
423 Նորին դարձեալ
435 Վկայութիւնք սրբոցն, եթէ մի բնութիւն է Բանին Աստուծոյ մարմնացելոյ
456 ՄԽԻԹԱՐ ՍԱՍՆԵՑԻ
Մխիթար վարդապետի հաւաստի եւ համառօտ պատմութիւնը
461 Ճառ քահանայական զգեստների մասին
470 Ս. ՍՏԱՄԲՈԼՑԵԱՆ
Սբ Գրիգոր Տաթեւացու քարոզները մեղքերի տարատեսակների,
խոստովանութեան եւ խոստովանահայրերի մասին
482 ՍԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ
Ամառան հատոր
Քարոզ մեղքի մասին (գլ. ԽԷ)
492 Դարձեալ մեղքի մասին (գլ. ԽԹ)
496 Քարոզ սկզբնական մեղքի մասին (գլ. Ծ)
499 Քարոզ մահացու մեղքի մասին (գլ. ԾԱ)
502 Քարոզ ներելի մեղքի մասին (գլ. ԾԲ)
505 Քարոզ մեղքերի խորհուրդների մասին (գլ. ԾԳ)
511 Քարոզ խոստովանահայրերի մասին (գլ. ԽԳ)
517 Քարոզ խոստովանութեան մասին (գլ. ՀԸ)
525 Քարոզ խոստովանութեան մասին (գլ. ՀԹ)
534 Քարոզ դարձեալ խոստովանութեան մասին (գլ. Զ)
548 Զմեռան հատոր
Քարոզ խոստովանութեան մասին՝ ասուած
Քառասնորդական պահքից առաջ (գլ. ԿԹ)

ՎԱՐՔԵՐ ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

561 Սուրբ Թադէոս առաքեալ եւ սուրբ Սանդուխտ կոյս
573 Սուրբ Բարթողոմէոս առաքեալ
583 Սրբուհի Թեկղի վարքը
593 Սրբուհի Վառվառա կոյսի եւ Յուլիայի վկայաբանութիւնը
600 Կիպրիանոս եպիսկոպոսի եւ Յուստինէ կոյսի վկայաբանութիւնը
611 Սուրբ Գրիգոր Աստուածաբանի վարքը
635 Երանելի հայր Սիսոյիի վարքը
639 Երանելի հայր Պիմեն Մեծի վարքը

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեսրոպ քահանայ Արամեան

ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Աւետարանի սրբազան պատմութեան մէջ կայ մի խորհրդական դրուագ, որն առանձնայատուկ տեղ է գրաւում փրկական իրադարձութիւնների շղթայում: Ըստ Մատթէոս, Մարկոս եւ Ղուկաս աւետարանիչների՝ Քրիստոսը, Իր աշակերտներից ընտրելով երեք հոգու՝ Պետրոսին, Յակոբոսին եւ Յովհաննէսին, բարձրանում է մի բարձր լեռան վրայ, որը եկեղեցական աւանդութեան մէջ նոյնացւում է Թաբոր[1] լեռան հետ: Եւ յանկարծ Քրիստոսը պայծառակերպւում է աննկարագրելի աստուածային լոյսով, Նրա երեսը սկսում է փայլել արեգակի պէս, իսկ հանդերձները դառնում են ճերմակ եւ լուսեղէն: Նրա երկու կողմում յայտնւում են Հին Կտակարանի երկու մեծագոյն մարգարէները՝ Մովսէսը եւ Եղիան, որոնց հետ, համաձայն աւետարանական վկայութեան, Փրկիչը զրուցում է Իր երկրաւոր կեանքի վերջին իրադարձութիւնների մասին, որ տեղի էին ունենալու Երուսաղէմում: Առաքեալների վրայ մեծ սարսափ է իջնում, եւ Պետրոսն ասում է. «Ռաբբի՛, բարւոք է մեզ աստ լինել, արասցուք զերիս տաղաւարս. մի՝ Քեզ, մի՝ Մովսիսի եւ մի՝ Եղիայի» (Մարկ. Թ 4): Իսկ վերեւից մի ամպ հովանի է լինում, որի միջից լսւում է Հայր Աստուծոյ ձայնը. «Դա է Որդի Իմ սիրելի, ընդ Որ հաճեցայ, Դմա՛ լուարուք» (Մատթ. ԺԷ 5): Եւ երբ այս ամէնից յետոյ նրանք իջնում են ներքեւ, Յիսուսը երեք առաքեալներին պատուիրում է ոչ մէկի չյայտնել տեղի ունեցածի մասին մինչեւ Իր յարութիւնը մեռելներից:

---

1 *Իրականում աւետարանիչներից ոչ մէկը չի յիշատակում Թաբոր լեռը Փրկչի պայծառակերպութեան հետ կապուած պատմութեան մէջ: Թաբոր լեռը յաճախ յիշատակւում է Հին Կտակարանում որպէս սրբազան լեռ: Յատկանշական են Դաւիթ մարգարէի յաւիտենական խօսքերը. «Թաբոր եւ Հերմոն յանուն Քո ցնծասցեն» (Սաղմ. ՁԸ 13): Սկսած առաքելական շրջանից՝ եկեղեցական աւանդութեան մէջ ընդունուած է այն կարծիքը, որ Տիրոջ պայծառակերպութիւնը տեղի է ունեցել հէնց Թաբոր լեռան վրայ: Սակայն կան կարծիքներ, թէ այդ իրադարձութիւնը կարող է պատահած լինել Հերմոնի, Քորէբի կամ նոյնիսկ Զիթենեաց լեռան վրայ: Տե՛ս The Westminster Dictionary of Christian Theology, Transfiguration, Philadelphia 1983, էջ 578—579. The Oxford Dictionary of the Christian Church, Transfiguration, Oxford, 1993, էջ 1390. Библейская энциклопедия, Фавор гора, Москва, 1990, էջ 819—821:*

Առաջին հայեացքից այս իրադարձությունը կարծես դուրս է աւետարանական պատմութեան ենթատեքստից, կարծես չի բխում Աւետարանի դէպքերի ընդհանուր յաջորդականութեան տրամաբանութիւնից: Այն կարծես ներդրուած է Աւետարանի մէջ, ինչպէս յայտնութիւնը՝ յայտնութեան մէջ, լոյսը՝ լոյսի մէջ, խորհուրդը՝ խորհուրդի մէջ: Աշակերտներից միայն երեքին ընտրելը, լեռան վրայ բարձրանալը, Հին Կտակարանի երկու մեծագոյն մարգարէների ներկայութիւնը արդէն իսկ ակնարկում են այն բացառիկ յայտնութեան մասին, որ տեղի պիտի ունենար Թաբոր լեռան վրայ: Ըստ Եկեղեցու հայրերի՝ Տիրոջ պայծառակերպութիւնը բարձրագոյն յայտնութիւնն է մինչեւ Քրիստոսի յարութիւն եւ իր մէջ խտացնում է մարդկութեան փրկաբանական անցեալը (Հին Կտակարան), ներկան (Նոր Կտակարան) եւ ապագան (Երկրորդ գալուստ): Ահա թէ ինչու այն մշտապէս եղել է Եկեղեցու աստուածաբանական մտքի ուշադրութեան կենտրոնում:

Եթէ Պայծառակերպութիւնը արեւմտեան աստուածաբանութեան մէջ (հիմնականում Օգոստինոս, Լեւոն պապ) դիտուել է որպէս Սուրբ Երրորդութեան յայտնութեան մի իրադարձութիւն, ապա արեւելեան աստուածաբանութեան մէջ այն աւելի մեծ եւ համակողմանի ուշադրութեան է արժանացել:

Վաղ շրջանի Եկեղեցում առաջին անգամ այն մեկնաբանուել է Իրենէոսի կողմից՝ որպէս փրկաբանական եւ վախճանաբանական ուղղորդուածութիւն ունեցող իրադարձութիւն: Կղեմէս Ալեքսանդրացին Պայծառակերպութեան լոյսը մեկնաբանում է որպէս հոգեւոր լոյս, որը յայտնուեց առաքեալներին ըստ նրանց ընդունելու կարողութեան: Որոգինէսը Մատթէոսի իր մեկնութեան մէջ այդ լոյսը դիտում է վախճանաբանական ենթատեքստում: Ըստ նրա՝ պայծառակերպուած Քրիստոսի լոյսին հաղորդակից են նրանք, ովքեր վեր են այս աշխարհի «վեց օրերից» եւ գտնուում են նոր «շաբաթի» մէջ:

Ընդհանուր առմամբ բիւզանդական հայրերի կողմից Այլակերպութիւնը դիտուել է որպէս Քրիստոսի աստուածային բնութեան յայտնութիւն, Նրա Երկրորդ գալստեան աւետիս եւ արքայութեան լրում: «Բայց մեր ամենեցուն բացաւ երեսօք զփառսն Տեառն իբրեւ ընդ հայելի տեսեալ՝ ի նոյն պատկեր նորոգիմք...» [Բ Կոր. Գ 18] պօղոսեան բնորոշումը դառնում է մեկնաբանական օրինակ աւելի ուշ շրջանի յոյն հայրերի համար (Գրոկղ, Աթանաս Սինայեցի, Մաքսիմոս Խոստովանող, Անդրէաս Կրետացի եւ յատկապէս՝ Գրիգոր Պալամաս): Այս աստուա-

ծաբանների համար Թաբոր լեռան վրայ յայտնուած լոյսն իրականում Աստուած Ինքն է Իր աստուածային զօրութիւններով, որոնք առաքեալների կողմից որպէս ֆիզիկական լոյս են ընկալուել ըստ նրանց հաւատքի եւ լուսաւորուածութեան աստիճանի[2]:

Այլակերպութեան լոյսի բնոյթի շուրջ ԺԴ դ.-ում աստուածաբանական վէճեր բռնկուեցին յունական աստուածաբանական դպրոցի եւ Թովմա Աքուինացու հետեւորդների միջեւ: Այս վէճերը ծնունդն էին այն հակասութեան, որ ընդհանրապէս առկայ է խորհրդական աստուածաբանութեան եւ կրօնական փիլիսոփայութեան միջեւ, յայտնութեան Աստուծոյ եւ փիլիսոփայութեան կողմից ներկայացուող Աստուծոյ գաղափարի միջեւ: Այս հակաճառութեան մէջ առաջ քաշուեցին այնպիսի կարեւոր աստուածաբանական խնդիրներ, ինչպիսիք են խորհրդական-ներանձնական փորձառութեան եւ Աստուծոյ հետ հաղորդակցութեան հնարաւորութեան իրականութիւնը, շնորհի եղական կամ անեղ լինելու, մարդու վերջնական կոչման եւ արարածի աստուածացման հիմնահարցերը[3]:

Յատկապէս Գրիգոր Պալամասի աշխատանքների շնորհիւ յունական աստուածաբանութեան մէջ վերջապէս բիւրեղանում է այն գաղափարը, որ Պայծառակերպութեան լոյսն անեղ եւ աստուածային բնոյթ ունի, որը յայտնուում եւ հաղորդուում է նրանց, ովքեր ձգտում են միաւորուել նրա հետ: Սակայն այդ նախայաւիտեան, անժամանակ եւ անբովանդակելի լոյսը Հին Կտակարանում յայտնուում է որպէս Աստուծոյ փառք, քանի որ մինչեւ Բան Աստուծոյ մարմնաւորումը արարածը չէր կարող կրել այդ լոյսը: Ահա թէ ինչու Պօղոսը կուրացաւ այդ լոյսի յայտնութիւնից Դամասկոսի ճանապարհին, որովհետեւ դեռ չունէր հաւատք ի Քրիստոս[4]: Ընդհակառակը՝ Մարիամ Մագդալենացին կարող էր տեսնել յարութեան լոյսը, որը լցնում էր Տիրոջ գերեզմանը եւ տեսանելի դարձնում ամէն ինչ[5]:

2 Peter A. Chamberas, "The Transfiguration of Christ: Study in the Patristic Exegesis of Scripture", St. Vladimir's Theological Quarterly, v. 14, 1970, էջ 48—65. The Westminster Dictionary of Christian Theology, Transfiguration, Philadelphia 1983, էջ 579

3 Вл. Лосский, Очерк мистического богословия Восточной Церкви, Москва, 1991, էջ 165—167

4 Գրիգոր Պալամաս, PG, t. 150, 1169 A

5 նոյն, PG, t. 151, 268 AB

Բան Աստուծոյ մարմնաւորումով աստուածային լոյսը թանձրանում է, անբովանդակելին բովանդակւում է... Կատարեալ Լոյսը յայտնւում է ծառայի կերպարանքով՝ անտեսանելի մնալով շատերի համար: Քրիստոսի աստուածմարդկային միութեան մէջ ամէն ինչ պայծառակերպուած է աստուածային լոյսով: Եւ Պայծառակերպութիւնն այս առումով անժամանակ իրադարձութիւն է. Քրիստոսի համար այդ պահին ոչինչ չի փոխւում, փոփոխութիւնը տեղի է ունենում առաքեալների մօտ, ովքեր միաւժամանակ կարողութիւն ստացան տեսնելու իրենց Վարդապետին այնպէս, ինչպիսին էր Նա միշտ՝ Իր նախայաւիտեան Լոյսի մէջ: Առաքեալների համար սա յաւիտենականութիւնից եկող, ժամանակից եւ պատմութիւնից դուրս ընկալում էր[6]: Գրիգոր Պալամասը Պայծառակերպութեան մասին իր ճառում գրում է. «Տիրոջ պայծառակերպութեան լոյսը չի սկսուել եւ չի վերջացել. այն դուրս է ժամանակից ու տարածութիւնից եւ անզննելի է արտաքին զգայարանների համար, թէպէտեւ տեսանելի է դարձել մարմնաւոր աչքերի համար...»[7]:

Պայծառակերպութեանն առանձնայատուկ կարեւորութիւն է ընծայուած Հայ Եկեղեցու ծիսական եւ աստուածաբանական աւանդութեան մէջ: Պայծառակերպութիւնը Հայ Եկեղեցու հինգ գլխաւոր տաղաւար տօներից[8] մէկն է: Այս տօնին նախորդում է մէկշաբաթեայ պահք, ինչպէս Սբ Մննդեան[9], Վերափոխման եւ Խաչվերացի տօներին: Վարդավառի տօնակատարութիւնը տեւում է երեք օր, որոնցից իւրաքանչիւրն ունի իր յատուկ շարականի կանոնը[10]: Ըստ Շարակնոցի ներածական ծանուցման՝ Վարդավառի կանոնը յօրինուել է մասամբ Մովսէս Քերթողի եւ մասամբ սբ Ներսէս Շնորհալու կողմից[11]: Բացի կիրա-

6 Вл. Лосский, Очерк мистического богословия Восточной Церкви, Москва, 1991, էջ 168:

7 PG, t. 150, 1232C

8 Հայ եկեղեցու տօնակարգում հինգ գլխաւոր տաղաւար տօներ կան. Մնունդ եւ Աստուածայայտնութիւն, Զատիկ, Վարդավառ, Վերափոխումն սբ Աստուածածնի, Խաչվերաց:

9 Նախկինում Հայ Եկեղեցու աւանդութեան մէջ Սբ Մննդեան տօնից առաջ նոյնպէս եղել է յիսնօրեայ պահեցողութեան շրջան (ինչպէս Զատիկից առաջ), որը կոչուել է Ցիսնակաց պահք:

10 Կանոն Վարդավառի, Շարական, Վաղարշապատ, 1888, էջ 336—347 (= Կանոն Վարդավառի)

11 Նոյն, էջ 3

կի երեկոյեան ժամերգութեան ժամանակ ընթերցուող սբ Եղիշէ վարդապետի աղօթքից[12], Վարդավառի տօնակարգը չունի որեւէ առանձնայատկութիւն. միւս տաղաւար տօների պէս ունի գիշերային հսկում, անդաստան եւ երկրորդ օրը՝ մեռելոցի պատարագ:

Հայ Եկեղեցու աստուածաբանական աւանդութեան մէջ Պայծառակերպութիւնը դիտուել է որպէս մեր փրկական տնտեսութեան եւ աստուածային յայտնութեան կարեւորագոյն իրադարձութիւններից մէկը: Սկսած Ե դարից՝ հայ հայրերի եւ նշանաւոր վարդապետների կողմից գրուել են Պայծառակերպութեանը նուիրուած բազմաթիւ մեկնաբանական եւ տօնախօսական երկեր, որոնք որոշակիօրէն ազդուած լինելով Տիեզերական Եկեղեցու հայրերի գրուածքներից[13]՝ սոսկաբար չեն կրկնել իրենց նախորդներին, այլ յաւելել եւ էապէս հարստացրել են իրենց ժառանգութիւնը բազմաթիւ նոր եւ խոր մեկնաբանական[14] մտքերով: Փորձենք համառօտ ներկայացնել Տիրոջ պայծառակերպութեան մեկնաբանական պատկերը՝ ըստ Հայ Եկեղեցու աւանդութեան:

Նախեւառաջ՝ վեց եւ ութ օրերի մասին. Մատթէոս եւ Մարկոս աւետարանիչները յիշատակում են «յետ վեց աւուր», իսկ Ղուկասը՝ «իբրեւ աւուրք ութ»: Այստեղ հաշուարկը սկսւում է Պետրոսի դաւանութեան օրուանից, աւելի ստոյգ՝ այն պահից, երբ Քրիստոսն ասում է հետեւեալ խօսքը. «Ամէն ասեմ ձեզ, զի իցեն ոմանք ի սոցանէ, որ աստ կան, որք ոչ ճաշակեսցեն զմահ մինչեւ տեսանիցեն զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ Իւրով» (Մատթ. ԺԶ 28): Եւ հէնց այս խօսքն է, որ հայրաբանական գրականութեան մէջ յաճախ գործածուել է որպէս

12 Աղօթք սրբոյն Եղիշէի վարդապետի արարեալ վասն այլակերպութեանն Քրիստոսի, Ճաշոց, Վաղարշապատ, 1872, էջ 549—556 (= Եղիշէ (Ճաշոց))

13 Հայ մեկնաբանական միտքը ձեւաւորուել է ալեքսանդրեան եւ անտիոքեան դպրոցների ազդեցութեան ներքոյ: Վարդավառի հետ առնչուած կարելի է առանձնացնել Յովհան Ոսկեբերանի եւ Կիւրեղ Ալեքսանդրացու մեկնութիւնները: Տես St. John Chrysostom, Homilies on Matthew, Nicean and Post-Nicean Fathers, First Series, Vol. 10 (= Ոսկեբերան). Cyril of Alexandria, Commentary on the Gospel of St. Luke, trans. R. Payne Smith (Long Island, N.Y.: Studion, 1983):

14 Առհասարակ պէտք է նկատել, որ հայ մեկնաբանական միտքն ունեցել է ինքնուրոյն զարգացում եւ հասել է իւրայատուկ խորութիւնների: Մեզ հասել են Ս. Գրքի, Եկեղեցու հայրերի առանձին գրքերի, արտաքին իմաստասիրական գրուածքների՝ հայ հեղինակների կողմից գրուած բազմաթիւ մեկնողական երկեր, որոնք համաշխարհային մեկնաբանական ժառանգութեան մէկ կարեւոր մասն են կազմում:

բնաբան՝ Այլակերպութեանը նուիրուած ճառերի եւ քարոզների համար: Հայրերն այս խօսքը դիտել են որպէս բանալի-մուտք դէպի Պայծառակերպութեան խորհուրդ: Իսկ Պայծառակերպութիւնն այս խօսքերի կատարումն է, որին անհրաժեշտաբար պէտք է նախորդէր ճշմարիտ հաւատքի զաւանութիւնը: Վեց եւ ութ օրերի միջեւ իրականում չկայ ոչ մի հակասութիւն: Սա արդէն նկատուել էր Յերոնիմոսի[15] եւ Յովհան Ոսկեբերանի[16] կողմից եւ ընդհանրացել մեկնաբանական գրականութեան մէջ. վեցը միջանկեալ օրերն են, իսկ ութը՝ Պետրոսի դաւանութեան եւ Պայծառակերպութեան օրերը՝ միասին հաշուած[17]: Այս միտքը երկրորդում է սբ Եղիշէ վարդապետը. «Մատթէոս, ասեն, զասա՛ի անտիան եթող եւ միայն զմիջոցն առ ի համար, իսկ երկուքն եւ զխաստանալն եւ զերեւելն հանդերձ միջաւն. եւ հանոյ թուեցաւ ամենեցուն ընդունել զայս...»[18]: Որոշ մեկնիչներ վեց եւ ութ թուերի այս զուգակցման (լծակցման) մէջ տեսնում են խորհրդական առնչութիւն եւ իմաստ: Ըստ սբ Գրիգոր Տաթեւացու՝ վեցը խորհրդանշում է Առաջին գալուստը (առաջին արարչութիւն), իսկ ութը՝ Երկրորդ գալուստը (երկրորդ արարչութիւն)[19]:

Ութը, ըստ Եկեղեցու հայրերի, Քրիստոսի կամ Յարութեան թիւն է: Եօթը խորհրդանշում է հինկտակարանեան եւ առհասարակ երկրաւոր կամ արարչական կատարելութիւնները, որոնք մաթեմատիկական օբիեկտներ են, այսինքն՝ հասանելի են յաջորդականութիւնների շնորհիւ: Քրիստոսի բերած փրկութիւնը դուրս է այս աշխարհի կատարելութիւններից, ուստի այն դուրս է եօթնեակների փակ պարբերութիւններից: Քրիստոսը բերեց նոր կեանք, նոր օրինաչափութիւն, նոր ժամանակ, որն անուանւում է Առաջին Օր կամ Ութերորդ Օր: Սակայն այստեղ մէկը եւ ութը ոչ թէ թուային, այլ խորհրդական եւ անդրանցական օրինաչափութիւններ են. նրանք դուրս են յաջորդականութիւնների իշխանութիւնից եւ միաժամանակ նոր կեանք են հաղորդում եօթնեակներին: Ութը յարութիւն առած եօթն է, ութեակը՝ կատարեալ հոգեւոր

15 Евангеліе отъ Матѳея, Толковая Біблія, т. 3, Петербургъ, 1911, էջ 283

16 Ոսկեբերան, էջ 345

17 Պէտք է նկատել, որ Ղուկաս աւետարանիչը ստոյգ ութ օր չի ասում, այլ գործածում է «իբրեւ» (ὡσεί) բառը, այսինքն՝ շուրջ ութ օր:

18 Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի մատենագրութիւնք (= Եղիշէ), էջ 214

19 Սբ Գրիգոր Տաթեւացի, «Քարոզ Վարդավառի տօնին», Ամառան հտ., Կ. Պոլիս, 1741 թ. (= Տաթեւացի), էջ 481—482

պարբերութիւնը կամ յաւիտեանը (էոն): Նաեւ՝ Ութերորդ Օրը պիտի գայ Տէրը՝ դատելու կենդանիներին եւ մեռեալներին. այդ օրն անուանւում է Վերջին Օր կամ Տիրոջ Օր կամ Դատաստանի Օր: Այսպիսով՝ ութը միաժամանակ խորհրդանշում է ե՛ւ հոգեւոր յարութիւնը (Քրիստոսի Առաջին գալուստը)՝ անուանուելով առաջին, ե՛ւ մարմինների յարութիւնը (երկրորդ գալուստ)՝ անուանուելով վերջին: Քրիստոնեաները գտնւում են Ութերորդ Օրուայ խորհուրդի մէջ. նրանք, արժանացած լինելով Քրիստոսի բերած հոգեւոր յարութեանը, նաեւ մուտք են գործել երկրորդ գալստեան մէջ (վախճանաբանական սպասում)[20]:

Այսպիսով՝ Պայծառակերպութիւնն անցում է վեցից դէպի ութ, հին արարչութիւնից՝ դէպի նոր արարչութիւն, դէպի աստուածացում եւ երկրորդ գալուստ: Այս մասին է գրում Մովսէս Խորենացին. «Սա է, արդարեւ, ցնծութեան եւ ուրախութեան օրը, որ Տէրն արարեց, սա է Աստուծոյ մեծ փառքի ծագման օրը, որը նոր արքայութեան սկիզբն է եւ էական լոյսի յայտնութիւնը եւ յաւիտենական լոյսի նկարագիրը»[21]: Խորենացին այս օրն անուանում է միաժամանակ Առաջին Օր եւ Ութերորդ Օր[22]:

Մեկնիչներն առանձնայատուկ ուշադրութիւն են դարձրել այն հանգամանքին, որ Քրիստոսը մինչեւ Թաբոր լեռան վրայ բարձրանալն ընտրութիւն է կատարում Իր աշակերտների միջեւ: Առհասարակ մեծ եւ աստուածային յայտնութիւնները տրուել են սակաւաթիւ մարդկանց կամ այսպէս կոչուած ընտրեալ անօթների, որոնք այնուհետեւ եղել են այդ յայտնութեան փոխանցողները մնացած ժողովրդին: Հին Կտակարանում դրանք հիմնականում եղել են մարգարէները, որոնք փոխանցել են Աստուծոյ պատգամները ժողովրդին: Սակայն որքան էլ մարգարէներին տրւում էր այդ աստուածային յայտնութիւնը, այսուհանդերձ նրանց համար աստուածային իրականութիւնը մնում էր անբացայայտ եւ ժամանակ առ ժամանակ այցելող: Բան Աստուծոյ մարմնաւորումով աստուածայինը թանձրանում է եւ դառնում շօշափելի իրականութիւն, որը սկսում է գործել ոչ թէ դրսից, այլ ներսից: Այդ պատ-

20 Մեսրոպ քահանայ Արամեան, Մկրտութեան արարողութեան աստուածաբանութիւնը, «Գանձասար» Դ, էջ 90—91

21 Սբ Մովսէս Խորենացի, Վարդավառի խորհրդի մասին, «Գանձասար» Բ (= Խորենացի), էջ 21

22 Նոյն

ճառով Հին Կտակարանն անուանուում է ստուերակերպ պատմութիւն, որովհետեւ դեռ ճշմարիտ Լոյսը չէր յայտնուել: Քրիստոսով սկսւում է մարդկային փրկագործութեան նոր պատմութիւնը, սակայն Քրիստոսը նոյնպէս Իր փրկութեան խորհուրդները մարդկանց փոխանցելու համար ընտրեց յատուկ մարդկանց, որոնք կոչւում են առաքեալներ: Առաքեալներին Նա յայտնում էր ամենածածուկ խորհուրդները եւ առաքեալներով պիտի հաստատէր Իր փրկութեան Եկեղեցին այս աշխարհում՝ առաջնորդելու մարդկանց դէպի յաւիտենական կեանք եւ կատարեալ, անստուեր լոյս:

Եւ ահա Քրիստոսը մինչեւ լեռը բարձրանալը ընտրութիւն է կատարում Իր արդէն իսկ ընտրեալ աշակերտների մէջ՝ ցոյց տալով, որ այն, ինչ պիտի յայտնի, բացառիկ յայտնութիւն է լինելու ոչ միայն մարդկային բնութեան համար, այլեւ իմանալի աշխարհների համար: Երեք առաքեալները, ըստ Եկեղեցու հայրերի, խորհրդանշում են Երրորդութեան արտապատկերը արարչութեան մէջ, միաժամանակ վախճանաբանական հունձքի հարիւրաւորները, վաթսունաւորները եւ երեսնաւորները: Երեք առաքեալներն իրենց հոգեւոր տեսողութեամբ առաւել էին միւսներից[23]: Եւ այսպէս՝ ընտրելով երեք աշակերտների՝ Քրիստոսը բարձրանում է Թաբոր լեռ:

Մարդկութեան բոլոր կարեւորագոյն յայտնութիւնները տրուել են լեռների վրայ, եւ որոշ լեռներ ուղղակի եղել են Աստուծոյ առանձնայատուկ այցելութիւնների եւ աստուածային պատգամների յայտնութեան վայրեր, ինչպէս օրինակ՝ Սինա եւ Քորէբ լեռները:

Ըստ Յովհաննէս Երզնկացու՝ Թաբորը խորհրդանշում է անցումը հինկտակարանեան յայտնութիւնից դէպի նորկտակարանեան յայտնութիւն. Աստուած Սինայի վրայ Մովսէսին յայտնեց հին օրէնքը՝ քարէ տախտակների վրայ գրելով, իսկ այստեղ յայտնեց նոր օրէնքը՝ Սուրբ Հոգով գրելով սրտի մարմնեղէն տախտակների վրայ[24]: Հետեւաբար Թաբորը ոչ միայն աստուածգիտութեան վայր[25] է, այլեւ երկնքի արքայութեան, նոր երկնքի[26] խորհրդանիշ, որովհետեւ Քրիստոսն Իր

23 Ոսկեբերան, էջ 345, Յովհաննէս Երզնկացի, «Յաղագս Վարդավառի տօնին», ՄՄ N 2173 (= Երզնկացի), 17ա—31բ, Տաթեւացի, էջ 482

24 Երզնկացի, 29բ

25 Խորենացի, էջ 21

26 Խորենացի, էջ 19—22

աստուածային լոյսով այլակերպել էր նիւթական լեռը եւ դարձրել երկինք[27]: Ահա թէ ինչու որոշ մեկնիչներ Թաբորի խորհուրդի մէջ տեսնում են նաեւ եկեղեցաբանական երանգ: Թաբորը հաւատքի բարձրացրած խորանն է[28], ուր կարող են բարձրանալ միայն արժանաւորները[29]:

Թաբոր լեռան վրայ Եղիային եւ Մովսէսին կանչելը, ըստ Յովհան Ոսկեբերանի, ցոյց է տալիս, որ Քրիստոսը կենաց եւ մահուան զօրութիւն ունի: Հնարաւոր է դառնում այն, ինչ հնարաւոր չեղաւ Սինայի եւ Քորէբի վրայ: Ըստ Մովսէս Խորենացու՝ Մովսէսը խորհրդանշում է մեռելների յարութիւնը, իսկ Եղիան՝ յարութեան ժամանակ առանց մահուան երկինք յափշտակուելը: Եղիան երկնքից է, իսկ Մովսէսը՝ երկրից, որովհետեւ Քրիստոսը տէր է երկնքի (իմանալի աշխարհ) եւ երկրի (զգալի աշխարհ), եւ նրանք յարութեան աւետիսը պէտք է փոխանցէին իմանալի եւ զգալի աշխարհներին (հոգիներին), որոնց այն դեռեւս յայտնի չէր[30]:

Պայծառակերպութիւնը, ըստ մեկնիչների, Ամենասուրբ Երրորդութեան կարեւորագոյն յայտնութիւններից մէկն է[31], որը հնարաւոր է դարձել Աստուծոյ Որդու փրկագործ մարդեղութեամբ: Քրիստոսի մարդեղութեամբ Աստուածութեան անպարագրելի եւ անտեսանելի լոյսը բովանդակուել է ծառայի կերպի մէջ. «Ճառագայթ փառաց Հօր՝ Որդիդ Միածին, որ զլոյսդ անվայրապակ մարմնով պարագրեալ այսօր ի Թաբոր փառօք փայլեցեր»[32]: «...Ծառայի կերպիւ պարածածկեալ զլոյսդ անստուեր, այսօր ի Թաբոր փառօք փայլեցեր»[33]:

Աստուած անմատոյց լոյս է, որը հնարաւոր չէ տեսնել մարմնաւոր աչքերով, եւ առաքեալները հաղորդակցուեցին աստուածային լոյսին ըստ իրենց ընդունելու կարողութեան[34]: Աշակերտների տեսողութիւնը պայծառանում է, եւ նրանք սկսում են տեսնել «զանապական Լու-

27 Եղիշէ, էջ 227—228

28 Խորենացի, էջ 19

29 Երզնկացի, 30ա

30 Տաթեւացի, էջ 489

31 Եղիշէ (Ճաշոց). Կանոն Վարդավառի, էջ 339, 346

32 Կանոն Վարդավառի, էջ 340

33 Նոյն

34 Երանելւոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան, Վենետիկ, 1832 թ., Ճառ տասներորդ, էջ 165

սոյն ծաւալումն»[35]: Առաքեալներին նախապէս յայտնի է դառնում այն իրականութիւնը, որը հնարաւոր է լինելու միայն յարութիւնից յետոյ. Պայծառակերպութեամբ նրանց բացայայտւում է մարդկութեան փրկաբանական ապագան՝ մարդկային բնութեան աստուածացման խորհուրդը[36]: Ըստ շարականագրի՝ առաքեալները նախաճաշակում են անմահութեան եւ փրկութեան պտուղը. «Եւ զԵրրեակ միութեան զանտանելի զլոյսն տեսանելով՝ կենդանւոյն անմահացան»[37]: Եւ երեք տաղաւարների յօրինման միտքը եւ լեռան վրայ մնալու ցանկութիւնը պայմանաւորուած էին յարութեան յայտնութեամբ: Պետրոսը ցանկանում է տաղաւարել յարութիւնը եւ մնալ յարութեան վայրում[38]:

Պայծառակերպութեան իրադարձութիւնը մեկնիչների համար ունի վախճանաբանական ուղղորդուածութիւն: Պայծառակերպութեամբ յայտնւում է այն, ինչ լինելու է գալիքում՝ վախճանաբանական ապագայում: Սակայն դա ոչ թէ լինելու է անվերջ եւ անորոշ մի սպասում, այլ հաստատուելու է Քրիստոսի յարութեամբ[39]: Մահուան իշխանութեամբ արարածը հագել էր սգոյ խաւարային զգեստ: Քրիստոսի մահուամբ արարածը վերազգեստաւորւում է յարութեան եւ յաւիտենական կեանքի զգեստներով[40]: Համընդհանուր յարութիւնը եւ արարածի նորոգումը քրիստոնէական աստուածաբանութեան հիմնական թեմաներից մէկն է, որովհետեւ այն մեր փրկութեան վերջնական նպատակն է: Պայծառակերպութեամբ յայտնուեց այն, ինչ լինելու է մարդկային բնութեան հետ, ինչպիսին լինելու է պայծառակերպուած, այլակերպուած, յարութիւն առած նոր արարչութիւնը[41]. «Այսօր զծագումն արդարոցն արեգակնակերպ փայլմամբ ծանուցեր ծագմամբ փառաց Քոց, Տէ՛ր, յարքայութեանն...»[42]:

35 Կանոն Վարդավառի, էջ 339
36 Երզնկացի, 31ա
37 Կանոն Վարդավառի, էջ 336
38 Եղիշէ, էջ 223
39 Երզնկացի, 31ա
40 Եղիշէ, էջ 221—222
41 Տաթեւացի, էջ 482
42 Կանոն Վարդավառի, էջ 347

Բագրատ եպիսկոպոս Գալստանեան

ՕԾՈՒՄՆ ՀԻԱՆԴԱՑ ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հայ Եկեղեցու ծէսը՝ որպէս բնական օրինաչափութիւն՝ իր զարգացման ընթացքում մեծապէս ազդուել է պատմական զանազան վայրիվերումներից, որոշակի ժամանակաշրջանի ընկալումներից ու ըմբռնումներից եւ նոյնիսկ աշխարհագրական դիրքից բխող իւրայատուկ աշխարհայեացքից: Լինելով այս բոլորի արտայայտիչը՝ կարելի է ասել՝ Եկեղեցու ծէսը ինքնատիպ խճապատկերն է Եկեղեցու պատմութեան: Ամէն պարագայում Եկեղեցին մշտապէս ձգտել է կենսունակ պահել ծիսական, ներքին, հոգեւոր կեանքը՝ որպէս միակ գրաւականն իր ներմտածողութեան զարգացման եւ հոգեւոր փորձառութեան: Սակայն, ցաւալիօրէն, շատ երեւոյթներ Եկեղեցու ներքին կեանքում սահմանուել են պատմական իրադրութիւնների թելադրմամբ եւ երբեմն էլ՝ պարտադրանքով: Այլ խօսքով՝ շատ յաճախ այս կամ այն երեւոյթը որոշակիօրէն պատճառ է դարձել Եկեղեցու կեանքի եւ փորձառութեան ձեւաւորման համար: Այսուհանդերձ, Եկեղեցին, լինելով նորոգող եւ ինքնանորոգուող իրականութիւն, մշտապէս վերատեսութեան եւ քննութեան է ենթարկել ժամանակների ներթափանցումն իր կեանքի մէջ՝ մէկ կողմից ձգտելով համընթաց քայլել ժամանակի հետ, իսկ միւս կողմից չմոռանալ կամ չջնջել անցեալի հաստատուած աւանդութիւններն ու ժառանգութիւնը: Այս իմաստով՝ Հայ Եկեղեցու խորհրդաբանական կեանքը լուրջ վերատեսութեան ու յստակեցման կարիք ունի, որից որպէս մասնաւոր երեւոյթ բացառութիւն չի կազմում նրա միաւորներից մէկը՝ Հիւանդաց օծման խորհուրդը: Այն ընդհանրապէս յայտնուած է եղել մոռացութեան անհնութեան մէջ կամ էլ որոշակի արգելքի պատճառով մատնուել անտարբերութեան, որի հետեւանքով ձեւաւորուել են զանազան, միմեանցից տարբերուող եւ նոյնիսկ իրարամերժ կարծիքներ Հայ Եկեղեցու դիրքորոշման ճշգրտման առումով: Այս մտահոգութիւնից մղուած՝ ձեռնարկեցինք սոյն գործի գրութեանը՝ առաջին հերթին փորձելով պատմական քննութեամբ պարզաբա-

նել Հայ Եկեղեցու վերաբերմունքն այս խորհրդի նկատմամբ: Հետեւաբար, այս նպատակին հետամուտ՝ առանձնակիօրէն չենք անդրադարձել խորհրդի աստուածաբանութեանը՝ որպէս ուրոյն միաւորի, այլ այն ներկայացրել ենք պատմական վերլուծութեանը զուգահեռ միեւնոյն եւ մէկ համատեքստի մէջ: Խնդիր ունենալով ներկայացնել Հայ Եկեղեցու դիրքորոշումը՝ այսուհանդերձ, ամէն կերպ ձգտել ենք պատկերագրել նաեւ Ընդհանրական Եկեղեցու դիրքորոշումն ու փորձառութիւնը եւ այս համայնապատկերի վրայ՝ զուգադրաբար տեսնել այն բոլոր իրական պատճառներն ու ազդեցութիւնները, որոնց հետեւանքով Հայ Եկեղեցում կա՛մ մերժուել եւ կա՛մ էլ անտեսուել է Հիւանդաց օծման խորհրդի գործադրութիւնը: Այսուամենայնիւ, ներկայացուած են նաեւ բոլոր նոյնութիւններն ու նմանութիւնները, որոնք առկայ են Հայ Եկեղեցու փորձառութեան մէջ: Փորձել ենք հպանցիկ կերպով անդրադառնալ խորհրդի սահմանումներին, ցոյց տալ Հիւանդաց օծման խորհրդի նորկտակարանեան սկզբունքը, ապա ըստ փուլերի եւ ժամանակագրական բաժանումների՝ ընդգծել ենք Հայ Եկեղեցում արձանագրուած զարգացումները Դ-ից մինչ ԺԵ դար ընկած ժամանակահատուածում: Համեմատել ենք նաեւ ներկայիս մեր «Մաշտոց» ծիսարաններում գոյութիւն ունեցող «Կանոն գիշեր ժամու» աղօթքը եւ Հիւանդաց օծման՝ Թովմա Մեծոփեցու կազմած ծիսակարգը՝ փաստելով այս երկու արարողակարգերի միջեւ առկայ նմանութիւններն ու նոյնութիւնները: Միեւնոյն ժամանակ զուգահեռներ ենք անցկացրել քոյր Եկեղեցիներում կիրառուող նոյն ծէսի հետ եւ փորձել ցոյց տալ, որ Հայ Եկեղեցին մշտապէս ունեցել է եւ ունի Հիւանդաց օծման խորհուրդը եւ, բնականաբար, նաեւ ծէսը, որը, սակայն, տարբեր պատճառներով ենթարկուել է ձեւափոխութեան: Գործն ամփոփել ենք «Ցաւելուած»-ով, որտեղ զետեղուած է ԺԵ դարում Թովմա Մեծոփեցու կազմած եւ Յովհաննէս Արճիշեցու ընդօրինակած ձեռագիրը՝ առանց համեմատութիւնների կամ զուգահեռների՝ որպէս լաւագոյն նմուշ եւ օրինակ Հայ Եկեղեցում երբեւէ գործադրուած Հիւանդաց օծման խորհրդի:

Հուսկ, ցանկանում ենք նշել, որ այս գործն ամբողջական եւ վերջնական խօսք լինելու հաւակնութիւնը չունի, այլ մի փորձ է՝ պարզելու Հիւանդաց օծման խորհրդի խնդիրը Հայ Եկեղեցում:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Խորհուրդ

Խորհուրդը Եկեղեցու բնութագիրն է, որում նա այս աշխարհում երկրի վրայ, իր առաքելութիւնն իրականացնելիս հասնում է իր Հիմնադրի հետ բարձրագոյն միութեան, ինչպէս նաեւ դրսեւորում իր ուրոյն նկարագիրն ու վերջնական նպատակը: Աւելին՝ խորհուրդները գերագոյն նշանակն են, որ զանազանում են Եկեղեցին միւս բոլոր հաստատութիւններից եւ հասարակութիւններից, այսինքն՝ նա ապրում է այնպիսի կեանքով, որը Հոգու պարգեւն է՝ Քրիստոսի միջոցով այն ընծայելով Հօրը:

Հին Կտակարանի կորիզը կազմում է Աստուծոյ եւ Նրա ժողովրդի յարաբերութիւնը, այսինքն՝ յարաբերութիւն յատուկ ժողովրդի հետ: Լայն հասկացութեամբ՝ այն անկում ապրած մարդկութեան շարժուն ու խոր պատրաստութիւնն է Աստուծոյ բարձրագոյն յայտնութեանը՝ Նրա Որդու մարդեղութեան միջոցով՝ այսպիսով բաժանուած մարդկութեանը հաշտեցնելով Աստուծոյ հետ եւ հաստատելով Նրա հետ նախնական ու մտերմիկ հաղորդութեան մէջ[1]: Մարդեղութեան խորհուրդը՝ որպէս ուղղակի միջամտութիւն, լինելով քաւուած ու վերականգնուած մարդկութեան վերարարման մի գործողութիւն, ձեւաւորում է համայնքի նոր ըմբռնումը՝ որպէս Աստուծոյ շնորհի արդիւնք՝ միեւնոյն ժամանակ բացայայտելով Աստուծոյ կամքը եւ ծրագիրը մարդկութեան համար: Հետեւաբար, Մարդեղութիւնը սոսկ վերացականութիւն չէ, որովհետեւ այնտեղ որոշակի վայր գոյութիւն ունի՝ Եկեղեցին, որի միակ նպատակը նոր կենսաձեւ ստեղծելն է, որի մէջ յաղթանակը, զոհաբերութիւնը եւ արդարութիւնը պէտք է իրականութիւն դառնան[2]: Կեանքի նկատմամբ այսպիսի արմատական մօտեցումը եւ նորութիւնը քրիստոնէական վարդապետութեան մէջ պայմանաւորուած է նոր ծնունդի մէջ ներգրաւուելու անհրաժեշտութեամբ՝ որպէս նոր արա-

1 Տես Արշակ Տէր-Միքելեան, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ Քրիստոնէական, Տփխիս, 1900, էջ 363:

2 Տես John D. Zizioulas, Being as Communion, Darton, Longman and Todd, London, 1985, էջ 113:

րած եւ նոր նկարագրին պատկանելութիւն, «կեանք արժանի Աստուծոյ»[3], որն «իր էութեամբ աստուածանման կամ քրիստոսանման, իսկ աւելի ճշգրիտ՝ աստուածակենտրոն կամ քրիստոսակենտրոն է»[4]: Այսպիսով է ժողովուրդը դառնում կամ կոչւում Եկեղեցի՝ ապրելով երեք որոշակի սահմանագծերում՝ որպէս Աստուծոյ ժողովուրդ[5], Քրիստոսի Հարս[6] եւ Քրիստոսի Մարմին[7]: Սկզբունքօրէն, այս երեք մեծ այլաբանութիւններն էլ հիմնականում բացայայտում են համայնքի էութիւնն ու բնութիւնը որպէս Եկեղեցի, որն ապրում, գործում եւ պաշտամունք է մատուցում աստուածային իրականութեան մէջ: Այդուհանդերձ, աստուածային գոյութիւնը ո՛չ նուազեցնում եւ ո՛չ էլ ոչնչացնում է մարդկային արժէքը Եկեղեցու կեանքի կազմաւորման գործում: Այս իմաստով՝ այդ համայնքը կարիք ունի եկեղեցաբանութեան, որը պէտք է ոչ նոյնական լինի շրջապատող աշխարհի հետ եւ ոչ էլ բաժանուած, մեկուսացուած նրանից: Եկեղեցին սիրոյ համայնք է, որն ապրում ու գործում է աշխարհի հետ եւ համար՝ լինելով անդրադարձը Սուրբ Երրորդութեան՝ որպէս բազումք մէկ էութեամբ, որպէս միմեանց հետ օրգանական յարաբերութեան մէջ գտնուող անհատների ամբողջութիւն: Սուրբ Յովհաննէս առաքեալը լուսաբանում է Եկեղեցու կատարեալ վիճակը որպէս երկրային եւ սահմանաւոր թանձրացումը Սուրբ Երրորդութեան կատարեալ միութեան եւ մէկութեան, որպէս յաւիտենական համայնք՝ հիմնուած սիրոյ եւ ազատութեան վրայ[8]: Հետեւաբար Եկեղեցին այն կարգն է՝ սրբագործուած Աստուծոյ Խօսքի եւ Հոգու իրական ներկայութեամբ, որում Աստուծոյ Շնորհով հռչակւում է Աստուծոյ եւ մարդու միջեւ Քրիստոսով հաստատուած հաշտութեան պատգամը: Երրորդութենական հիմնադրոյթը կատարելատիպ է Եկեղեցու, նրա փորձառութեան համար, որն աւելի ազդեցիկ բնոյթ ունի արեւելաքրիստոնէական ուղղափառ մտածողութեան մէջ, քան արեւմտեան քրիստոնէութեան զանազան ճիւղերում, ինչը բնականօրէն ազդել է

3 Ա Թես. Բ 12

4 Panayiotis Nellas, Deification in Christ, St. Vladimir's Seminary Press, New York, 1997, էջ 146.

5 Հռոմ. Թ 8

6 Եփես. Ե 26—32

7 Ա Կոր. Գ 21—23, ԺԲ 12—31, Եփես. Ա 21—23. Կող. Ա 1—18

8 Յովհ. ԺԷ 23

այս երկու մտածողութիւնները կրող հասարակութիւնների վրայ, անկախ այն բանից, թէ այն գործնականում ընկալուել է, թէ ոչ:

Եկեղեցու ներքին կեանքը խորհրդական է. Քրիստոսը Եկեղեցու Գլուխն է, եւ Եկեղեցին՝ Նրա Մարմինը՝ Սուրբ Հոգով, եւ «խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յԵկեղեցի» (Եփես. Ե 32):

Այս առումով՝ Եկեղեցու խորհրդական կեանքը՝ որպէս Աստուծոյ Արքայութեան քաղաքականութիւնը, մարդկանց ներգրաւում է եկեղեցական իրականութեան մէջ, որում առանցքային է խորհուրդների իրագործումը, որը յարատեւում է Եկեղեցու ողջ ծիսական եւ խորհրդական համակարգում: Ուստի Եկեղեցու խորհուրդները Երկնքի արքայութեան մէջ գալիք նոր դարաշրջանի կենցաղավարութեան չափանիշներն են, որոնցով իրականանում են Եկեղեցու պատկանելութիւնն աստուածային կեանքին, հաշտութիւնը եւ հաղորդութիւնը Աստուծոյ հետ՝ Սուրբ Հոգու գործունէութեան միջոցով[9]: Այլ խօսքով՝ անցանելի աշխարհում ապրելով հանդերձ՝ դրանք իրականացնում են սպասուող նոր դարի կամ յաւիտեանի խոստումը՝ տրուած Եկեղեցուն՝ որպէս «ճանապարհորդ ժողովրդի»: Այսպիսով՝ Եկեղեցին կամ մարդկանց համայնքը դառնում է ոչ թէ կայական (ստատիկ) վիճակ, այլ ձեռք է բերում շարժուն (դինամիկ), այլակերպուող նկարագիր, որին պատկանողներն ապրում են սիրոյ, հաւատքի, յոյսի կեանքն ազատութեան մէջ՝ զգալով Աստուծոյ ներկայութիւնը եւ փոխանցելով այն աշխարհին Եկեղեցու խորհրդական կեանքի եւ էութեան միջոցով, ոչ միայն մեղքերի քաւութեան, այլեւ կեանքի վերանորոգութեան եւ Երկնքի արքայութեան յաւիտենական փրկութեան համար՝ Սուրբ Երրորդութեան հետ հաղորդութեամբ: Այսինքն՝ Եկեղեցին մարդկութեան պատրաստութեան պատմութիւնն է Երկնքի արքայութեան՝ գալիք յաւիտեանի համար՝ որպէս համայնք նոր յաւիտեանի: Հետեւապէս, խորհրդական կեանքի պատկերը հրամայական չափանիշ է քրիստոնէական համայնքի յատուկ վարքագծի ձեւաւորման համար: Փաստը՝ «պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, զխօսուն պաշտօն»[10], բաւարար եւ հարազատ ընկալումն է՝ ըմբռնելու, թէ «որպէս պարտ իցէ ի Տան Աս-

9 Մատթ. ԻԶ 26—30, Մարկ. ԺԴ 22—26, Ղուկ. ԻԲ 14—38, Յովհ. ԺԳ 1—18, ԺԵ—ԺԷ

10 Հռոմ ԺԲ 1

տուծոյ շրջել»[11]: Պաշտամունքում են ստեղծւում քրիստոնէական փորձառութիւնն ու բարոյականութիւնը՝ որպէս հաստատուն իրականացումը «իրողութիւնների բուն կերպարանքի»[12], որն արդիւնաւորում է «զշաւիղս ուղիղս»[13] մերձեալ Օրուայ համար[14]: Եկեղեցին՝ որպէս մէկ միաւորեալ Մարմին, իր ամբողջութեան մէջ հետեւում է Քրիստոսին՝ իր մասնակցութիւնն ունենալով Քրիստոսի կեանքում: Այսինքն՝ սա մի սկզբունք է, որը ձեւակերպւում է հետեւեալ կերպ. ինչ պատահել է Քրիստոսին, պատահում է նաեւ Եկեղեցուն՝ որպէս ի Յիսուս Քրիստոս փրկութեան կեանքի բաժնեկցի:

Եկեղեցին, բնականաբար լինելով երկրային իրականութիւն, իր խորհրդական կեանքը գործադրում է նիւթեղէն կամ զգալի կերպով, որով կիրառուող նիւթը աղօթքի զօրութեամբ դառնում է շնորհաբաշխող միջոց նրա կենսագործունէութեան համար: Այսինքն՝ շնորհն արտայայտւում է տեսանելի նշանով որոշակի հանգամանքի, համակարգի եւ ձեւի մէջ ու պաշտօնեայի միջոցով[15] «ցուցնելու համար այնպիսի գործողութիւններ, որոնց կից կ՚ընթանայ երկնային շնորհքը ըստ ուղղափառ վարդապետութեան»[16]: Եկեղեցու խորհրդաբանական համակարգն աստուածային հիմնադրութիւն ունի՝ հաստատուած Քրիստոսի կողմից Նոր Կտակարանի սկզբունքներով, զարգացած առաքեալների միջոցով եւ սրբագործուած Եկեղեցու աւանդութեամբ: Մեր խնդրից դուրս է մանրամասն քննել խորհուրդների աստուածաբանական եւ

11 Ա Տիմ. Գ 15
12 Եբր. Ժ 1
13 Եբր. ԺԲ 13
14 Եբր. Ժ 25
15 Տես Շահէ արք. Գասպարեան, Տեսական Աստուածաբանութեան համառօտ դասընթացք, Անթիլիաս-Լիբանան, 2000, էջ 342, նաեւ Մաղաքիա արք. Օրմանեան, Տեղիք Աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1985, էջ 211: Այս մասին դիպուկ վերլուծութիւն է կատարում սբ Յովհան Ոսկեբերանը՝ բացատրելով նիւթի միջոցով շնորհի արծարծման նշանակութիւնը. «Քրիստոսը զգայական ոչինչ մեզ չտուեց, այլ այն, ինչ զգայական էր, տուեց հոգեւորապէս ըմբռնելու համար: Այսպէս է մկրտութեան ժամանակ. շնորհը տրւում է նիւթի միջոցով, որ է ջուրը, բայց այն, ինչ տրւում է, նկատի ունեմ ծնունդն ու նորոգութիւնը, պէտք է ընկալել հոգեւոր իմաստով» (Nicene and Post-Nicene Fathers of the Christian Church, ed. by Philip Schaff, T&T Clark, Edinburgh, 1889, vol. X, Homilies on the Gospel of Saint Matthew, LXXXII, էջ 495):
16 Մաղաքիա արք. Օրմանեան, Տեղիք Աստուածաբանութեան, էջ 209:

պատմական զարգացումները, սակայն հարկ է նշել, որ մինչեւ ԺԲ դարը խորհուրդների թուի եւ սահմանման խնդիրը, որոշակի աստուածաբանական մեկնաբանութիւններով հանդերձ, զանազան տարակարծութիւնների տեղիք է տուել: Եւ միայն ԺԲ դարում Արեւմտեան Եկեղեցու սխոլաստիկ վարդապետների ջանքերով հաստատուեց խորհուրդների եօթ թիւը՝ հետեւեալ դասակարգումով՝ Մկրտութիւն, Դրոշմ, Հաղորդութիւն, Ապաշխարութիւն, Հիւանդաց օծում, Պսակ, Ձեռնադրութիւն: Այս դրութիւնը, առաջանալով արեւմտեան քրիստոնէութեան մէջ, հիմնաւորապէս հանգրուանեց նաեւ արեւելեան քրիստոնէութեան ծիսական համակարգում, որից անմասն չմնաց նաեւ Հայ Եկեղեցին: Սակայն մէկ սկզբունք կարիք ունի ճշգրտման: Եկեղեցու ամբողջ կեանքը, լինելով խորհրդական եւ որպէս առանցք ունենալով Քրիստոսի մարդեղութեան խորհուրդը, չի կարող սահմանափակուել որեւէ թուի շրջագծում, եւ հետեւաբար «եօթ խորհուրդներու դրութիւնը պարզ վարդապետական կէտ մըն է եւ ոչ դաւանական վճիռ»[17]:

Հայ Եկեղեցին, ըստ Օրմանեան սրբազանի, երբեք էլ չի ընդունել այս կարգաւորութիւնը որպէս դաւանական դրութիւն, որովհետեւ Հայ Եկեղեցում նրանցից մէկը՝ Վերջին օծումը, խորհրդին անհրաժեշտ պայմաններին չի կարող համապատասխանել[18]: Այս դիտարկումը միանգամայն իրաւացի եւ ճշգրիտ է Վերջին օծման վերաբերեալ, սակայն ո՛չ երբեք Եկեղեցու՝ վաղ շրջանից որդեգրած Հիւանդաց օծման առնչութեամբ: Այսու՝ մենք փորձելու ենք քննել այս խորհրդի խնդիրը՝ անդրադառնալով նրա սուրբգրային հիմնաւորում ունենալու ակունքներին, վաղ Եկեղեցու փորձառութեանը եւ Հայ Եկեղեցու վերաբերմունքին՝ պատմական զարգացումներին եւ աստուածաբանական ընկալմանը:

17 Մաղաքիա արք. Օրմանեան, Հայոց Եկեղեցին, Մոնթրէալ, 2001, էջ 132: Արշակ Տէր-Միքելեանը քննադատութեան է ենթարկում լատինական ըմբռնումը, սակայն գայթակղութիւնն ունի որդեգրելու նրանց հասկացողութիւնն ու բանաձեւային դրսեւորումը խորհուրդների թուի վերաբերեալ, եւ դեռ աւելին՝ մեծ ճիգ է գործադրում մեկնաբանելու եօթ թուի խորհուրդ ու անհրաժեշտութիւնը Եկեղեցու կեանքի համար: Տես Ա. Տէր-Միքելեան, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ Քրիստոնէական, էջ 369—371:
18 Մաղաքիա արք. Օրմանեան, Հայոց Եկեղեցին, էջ 132:

Հիւանդաց օծման խորհուրդը Նոր Կտակարանում

Հիւանդութեան եւ նրա բժշկութեան մասին Եկեղեցու աստուածաբանական մօտեցումն ու մեկնաբանութիւնը խորապէս պայմանաւորուած են մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի երկրային գործունէութեամբ եւ առաքելութեամբ: Յիսուսի գործունէութեան առանցքը հիւանդութեան բժշկումն էր լայն հասկացութեամբ, այսինքն՝ անկում ապրած մարդկութեան վերականգնումն իր նախնական եւ սկզբնական վիճակին: Սա իր հիմնական ուղղուածութեամբ մեծ ընդգրկում ունի՝ մեղքից ազատագրում եւ յաղթանակ մահուան նկատմամբ՝ արդիւնաւորելով ամբողջ տիեզերական ներդաշնակութիւնը: Քրիստոնէական ըմբռնողութեամբ՝ Որդու մարդեղութեան՝ «աղքատանալու»[19] խորհուրդը բացայայտումն է Աստուծոյ եւ Նրա արարչագործութեան յարաբերութեան: Հետեւաբար, Մարդեղութիւնը, լինելով Աստուծոյ ինքնընծայման բարձրագոյն արտայայտութիւնը, վերահաստատում է տիեզերական եւ մարդաբանական նոր կարգը, որով փրկութեան պատմութիւնը հասնում է իր ամբողջացմանը արարչագործութիւնն աստուածայնացնելու նպատակով: Քանզի ամէն բան, ըստ էութեան, գոյութիւն ունի Մարդեղութիւնից եկող այն հսկայական շարժման մէջ, որը ձգտում է դէպի Յիսուս Քրիստոս եւ կատարեալ դառնում Նրանով[20]: Այսպիսով՝ Աստուծոյ Որդու մարդացումը դառնում է Նրա սեփական արարչագործութեան առանցքը, եւ աշխարհի հետ Նրա անձնական յարաբերութեամբ ամբողջ տիեզերքը վերածւում է մի գեղեցիկ համաձայնութեան՝ վերանորոգուելով իր սկզբնատիպի՝ անկողոպտելիութեան, անմահութեան եւ ազատութեան մէջ:

Նորկտակարանեան պատմութիւնները մեզ բազմաթիւ տեղեկութիւններ են հաղորդում Յիսուսի գործած հրաշք-բժշկութիւնների մասին՝ կաղի, կոյրի, անդամալոյծների, բորոտների բժշկութիւնները, դեւերի հալածումը[21]: Այս բոլոր պարագաներում Նրա գործն Աստուծոյ զօրութեամբ իրագործուած հրաշքի առկայութեան փաստն էր, ինչպէս նրանց համար, ովքեր ստացան այդ բժշկութիւնը, այնպէս էլ ականատեսների: Յիսուսը բժշկում էր թէ՛ խօսքով եւ թէ՛ հպումով՝ մարդկանց ընդգրկելով Աստուծոյ ապաքինող ներկայութեան մէջ:

Աւետարաններն արձանագրում են, որ առաքեալները նոյնպէս անմասն չէին Յիսուսի բժշկող առաքելութիւնից, որոնց Նա ուղարկում էր հիւանդներին բժշկելու եւ տարածելու Երկնքի արքայութեան աւետիսը[22]: Այս իմաստով՝ առաքելական քարոզութեան եւ գործունէութեան մէջ էական տեղ էին զբաղեցնում աղօթքը[23] եւ Յիսուսի անուան հռչակումը[24]: Այսինքն՝ դրանք իրականանում էին միայն հաւատքով եւ Տիրոջ անուան զօրութեամբ, որով նրանք կարողանում էին ընդդիմանալ խաւարի ուժերին եւ իրենց գործած հրաշքների միջոցով արտայայտել Երկնքի արքայութեան ներկայութիւնը: Առաքելական գործունէութեան մէջ հանդիպում ենք նաեւ բժշկութեան ժամանակ իւղի կիրառութեան փաստի, երբ «ելեալ քարոզէին, զի ապաշխարեսցեն: Եւ դեւս բազումս հանէին եւ օծանէին իւղով»[25]: Այսուհանդերձ, Եկեղեցին Մարկոս աւետարանչի այս տեղեկութիւնն ընկալել է ոչ թէ որպէս Հիւանդների օծման խորհրդի հաստատման փաստարկ, այլ նախատիպը կամ նշանակն այս խորհրդի: Եկեղեցու համար որպէս Հիւանդների օծման խորհրդի հիմնադրութիւն համարուել է Յակոբոս առաքեալի կարգադրութիւնը[26], որն իր ընոյթով աւելի ծիսական եւ խորհրդական սահմանում ունի, որտեղ առկայ են արդէն իսկ կազմակերպուող Եկեղե-

19 *Փլպ. Բ 7*

20 *Կողոսացիների Ա 16—17 համարներում պօղոսեան մեկնաբանութիւնն ընդգծում է մարդացած Որդու միջոցով Աստուած-մարդ եւ մարդ-Աստուած փոխադարձ ամբողջ ձգտումը. «Զի նովաւ հաստատեցաւ ամենայն որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի, որ երեւին եւ որ ոչն երեւին... ամենայն ինչ նովաւ եւ ի նոյն հաստատեցաւ: Եւ նա է յառաջ քան զամենայն, եւ ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ»:*

21 *Մատթ. Ը 14—17, Թ 18—26, Մարկ. Ա 40—45, Ե 30, Է 33, Ը 23—26, Ղուկ. 11—17, Ը 46*

22 *Ղուկ. Թ 1—6, Ժ 1—10*

23 *Մատթ. Թ 27—28*

24 *Ղուկ. Ժ 17—19*

25 *Մարկ. Զ 13: Յատկանշական է, որ համատես Աւետարանները համապատասխան հատուածներում չունեն «օծանէին իւղով» արտայայտութիւնը (Մատթ. Ժ 1 եւ Ղուկ. Թ 1):*

26 *«Հիւանդանայցէ՞ ոք ի ձէնջ, կոչեսցէ զերիցունս Եկեղեցւոյն եւ արասցեն ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն, եւ աղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն, եւ յարուցցէ զնա Տէր, եւ եթէ մեղս ինչ իցէ գործեալ, թողցի նմա» (Յակ. Ե 14—15):*

ցու յատկանիշները, նրա ներքին ծիսական ուրուագիծը, ինչպէս նաեւ նրա ուղղուածութիւնն ու նպատակը, որ են անձի վերականգնումն ու փրկութիւնը թէ՛ հոգեւոր եւ թէ՛ մարմնական բժշկութեամբ: Այս կարգադրութիւնն էլ յետագայում դարձաւ այն հիմնաւորումը, որի միջոցով Եկեղեցում բժշկութիւնը, հետեւաբար եւ օծումը, ընկալուեց որպէս Երկնքի արքայութեան տեսանելի նշաններից մէկը, որն էլ այս եզրաշերտերով ընդգրկուեց Եկեղեցու խորհրդաբանական համակարգի մէջ:

Հիւանդաց օծման խորհուրդը Հայ Եկեղեցում

Մակար Երուսաղէմացու «Կանոնական Թուղթ ի Հայս»

Ինչպէս արդէն տեսանք նախորդ գլխում, Հիւանդաց օծման խորհուրդը, թէեւ առարկայօրէն Քրիստոսի կողմից հաստատուած կամ կարգադրուած չէ, այդուհանդերձ աստուածային հիմնադրութիւն ունի եւ թէ՛ խորհրդանշական եւ թէ՛ անմիջական կերպով հաստատուել է առաքեալների կողմից Նոր Ուխտի սկզբունքի վրայ եւ ապա տարածում գտել Եկեղեցու կիրառութեան (praxis) մէջ: Սակայն ի՞նչ կիրառութիւն է ունեցել եւ, ընդհանրապէս, ինչպիսի՞ զարգացում է ապրել այն Հայ Եկեղեցում, ո՞րն են եղել մեր Եկեղեցու դիրքորոշումը, աստուածաբանական ըմբռնումը եւ որդեգրած դաւանաբանական մեկնաբանութիւնը Հիւանդաց օծման խորհրդի հանդէպ: Արդեո՞ք Հայ Եկեղեցին իրականում մերժել է այն դաւանական նկատառումներով, անհամապատասխան կամ ոչ ուղղափառ դրոյթներից մղուած, թէ՞ առկայ էին եւ են այլ հանգամանքներ (պատմական, քաղաքական, մշակութային, հասարակական, կենցաղավարական եւ այլն), որոնք խորքային իմաստով ստիպեցին ձեռնպահ մնալ[27] այս խորհուրդը Հայ Եկեղեցու եկեղեցաբանական համակարգում հիմնաւորուած կերպով ընդգրկելու եւ

27 Յատկապէս ցանկանում ենք ընդգծել այս պարագան, քանզի իրականում Հայ Եկեղեցին որեւէ յստակ դիրքորոշում չունի Հիւանդաց օծման խորհրդի վերաբերեալ: Եւ ըստ այսօրուայ իրականութեան մէջ տարածուած քարացած եւ հաստատուած մակերեսային կարծիքի՝ Հայ Եկեղեցին կտրականապէս մերժել է Հիւանդաց օծում խորհուրդը:

հաստատելու համար: Յայժմ եղած ծիսական, կանոնական, դաւանաբանական ժողովածուները, ինչպէս նաեւ մեր Եկեղեցու հեղինակաւոր հայրերի հաղորդած տեղեկութիւնները, աստուածաբանական ձեւակերպումներն ու անդրադարձումները մեզ լուրջ եւ խոր վերլուծումներ չեն առաջադրում հանգոյցը լուծելու առումով[28]: Հետեւաբար, փորձելու ենք վերոնշեալ նիւթերի հիմքի վրայ, համեմատական անցկացնելով ընդհանրական Եկեղեցու վերաբերմունքի եւ խորհրդի պատմական զարգացման հետ, պատմական քննութեամբ վերլուծել եւ պարզաբանել մերժման կամ, աւելի ճիշտ կը լինէր ասել, «կիսամերժման» իրական եզրաշերտերը: Աւելացնենք նաեւ, որ առկայ տեղեկութիւններն ու մօտեցումները՝ ժխտական կամ դրական, չեն թելադրում մտածելու, որ խնդրոյ առարկայ խորհուրդը միանշանակ մերժուել է Հայ Եկեղեցու կողմից, այլ աւելին, թէ՛ վաղ եւ թէ՛ նոր շրջանի վաւերագրերն ու ուսումնասիրութիւնները վկայում են խորհրդի՝ մինչեւ ԺԵ դարը Հայ

28 Այս մասին տես «Գիրք հարցմանց» երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1729. Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի Ճառք, Վենետիկ, 1860. Յովհաննու Իմաստասիրի Աւծնեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1953. Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց Թղթոց կաթուղիկեայց, Կ. Պոլիս, 1828. Խոսրով եպիսկոպոս Անձեւացի, Գիրք, որ կոչի մեկնութիւն աղօթից, Օրթագիւղ, 1840. Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն Տանն Սիսական, Մոսկուա, 1861. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1964. Հրահանգ քրիստոնէական հաւատոյ, աշխատասիրութեամբ Մսերայ վարժապետի Գրիգորեան Զմիւռնացւոյ, Մոսկուա, 1850. Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Պէյրութ, Ա, Բ, Գ, 1959—61. Մաղաքիա արք. Օրմանեան, Հայոց Եկեղեցին, Մոնթրէալ, 2001. Ղեւոնդ եպս. Զէյթէան, Հայ Եկեղեցւոյ եօթը Խորհուրդները, Անթիլիաս-Լիբանան, 1988. Դերենիկ եպս. Փոլատեան, Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցու եօթ խորհուրդները, Երեւան, 1992. Շահէ արք. Գասպարեան, Տեսական Աստուածաբանութեան համառօտ դասընթացք, Անթիլիաս-Լիբանան, 2000. Կանոնագիրք Հայոց, Ա հատոր, աշխատասիրութեամբ Վազգէն Յակոբեանի, Երեւան, 1964. Բ հատոր, Երեւան, 1971. Բաբկէն կաթողիկոս Կիւլէսէրեան, Քրիստոնէական, Երեւան, 1994. Ա. Տէր-Միքելեան, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ Քրիստոնէական, Տփխիս, 1900. Տ. Սահակ քահանայ Տէր-Սարգսեան, Քննական կրօնագիտութիւն, Կ. Պոլիս, 1897. Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901. Епископ Езник Петросян, Армянская Церковь, 4-ое издание, Святой Эчмиадзин, 2001:

Եկեղեցու ծիսական կարգաւորութեան մէջ հաստատուն տեղ ունենալու մասին[29]: Այս առումով, առաջին լուրջ եւ կարեւոր վկայութեանը հանդիպում ենք Դ դարի նշանաւոր Մակար Երուսաղէմացի հայրապետի (314—334) կանոնական գրութեան մէջ, որն ուղղուած է «քրիստոսասէր եւ երկիւղած» հայոց սբ Վրթանէս հայրապետին (333—341) «եւ առ համաւրէն եպիսկոպոսս եւ քահանայս հայոց»՝ ի պատասխան վերջիններիս «բարեպաշտ» խնդրանքի: Ջուներալով հանդերձ Վրթանէս հայրապետի նամակը՝ Մակար եպիսկոպոսի պատասխանից կարելի է եզրակացնել, թէ ինչպիսի մտահոգութեան, Եկեղեցու կարգի ինչպիսի խաթարման եւ «չփոթութիւնք»-ի մասին են ծանուցել վերջինիս հայոց հայրապետի պատգամաւորները: Փաստօրէն սբ Գրիգոր Լուսաւորչից մօտաւորապէս ութ տարի յետոյ Հայ Եկեղեցում բարեկարգութեան անհրաժեշտութիւն էր զգացուել, որն էլ մղել էր սբ Վրթանէսին դիմելու Սուրբ Տեղերի հեղինակաւոր հայրապետին, ինչպէս ուշագրաւ կերպով դիտարկում է Մաղաքիա արք. Օրմանեանը, ըստ որի՝ «Վրթանէս, 333-ին հայրապետութիւնը ստանձնածին պէս մտադրութիւն դարձուցած է եկեղեցական անկարգութիւնները վերջացնելու, եւ իրեն առջեւ հաստատուն ուղեցոյց մը ունենալու համար դիմած է Սուրբ Տեղեաց հայրապետին, նախնական ծէսերը իմանալու եւ Մակարի պէս նշանաւոր հայրապետի մը հեղինակութեամբ զօրանալու համար»[30]: Ի թիւս մի շարք բարոյական եւ ծիսական խնդիրների, այս կանոնախմբի Դ կանոնն անդրադառնում է ընդհանրապէս իւղի գործածութեանը եւ նրա տեսակներին, ըստ որի կարող ենք չորս տեսակ իւղեր տարբերակել[31]՝ ա) սրբու-

29 *Թէ որքանով է այն գործնական կիրառութիւն ունեցել կենցաղում, չենք կարող ասել, սակայն այս երեւոյթը, մեր կարծիքով, չէր կարող պատճառ լինել խորհուրդը մերժելու կամ ծիսարանում չընդգրկելու համար՝ նրա ժամանակավրէպ կամ գործնականութիւն չունենալու պատճառով: Այս տրամաբանութեամբ պէտք էր կամ է՛ հրաժարուել մեր ծիսակարգում տեղ գտած «Կանոն գիշեր ժամու աղօթից», «Դժուարածին յղի կնոջ» եւ այլ կարգերից եւս, որովհետեւ դրանք լայն կիրառութիւն չունեն, եթէ չասենք, որ ընդհանրապէս չեն օգտագործւում: Հետեւաբար, մեր կարծիքով, մինչեւ ԺԵ դարը, թերեւս մինչեւ Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսը, Հիւանդաց օծման խորհուրդն ընդգրկուած է եղել մեր Եկեղեցու խորհուրդների շարքում եւ ժամանակ առ ժամանակ արծարծուել թէ՛ Եկեղեցու բարեկարգմանը ձեռնամուխ լինելու եւ թէ՛ միջեկեղեցական, յատկապէս Լատին Եկեղեցու հետ, յարաբերութիւնների ժամանակ: Տես Adrian Fortescue, The Lesser Eastern Churches, Catholic Truth Society, London, 1913, էջ 426. H. F. Tournebize, Histoire Politique et Religieuse de l'Arménie, Paris, 1910, էջ 587—88. Donald Attwater, The Christian Churches of the East, Geoffrey Chapman, London, 1961, էջ 185. Rituale Armenorum, ed. by F. Conybeare, Clarendon Press, Oxford, 1905, էջ 114:*

30 *Տես Կանոնագիրք Հայոց, Երեւան, 1971, հտ. Բ, էջ 217—229, նաեւ Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 406—412: Նամակը վերնագրուած է «Երանելւոյն Մակարայ՝ Սրբոյ Քաղաքին Երուսաղէմի հայրապետի կանոնական թուղթ ի հայս. Վասն կանոնագրութեան Կաթողիկէ Եկեղեցւոյ կարգաց, զոր չէ արժան ընդ սահման եւ ընդ հրաման անցանել, գլուխք Թ»: Հարկ է նշել, որ մեր բանասիրութեան մէջ կասկած է յայտնուել նամակի վաւերականութեան եւ գրութեան ժամանակի մասին (մասնաւորաբար Ն. Ակինեանի կողմից, ով նամակը համարում է Զ դարի գրուածք), որին մանրակրկիտ վերլուծութեամբ անդրադարձել է Վազգէն Ցակոբեանը՝ փաստելով նամակի՝ Դ դարի նշանաւոր Մակար Երուսաղէմացի հայրապետի գրչին պատկանելու խնդիրը: Այս մասին տես Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, Ներածութիւն, LXXVII—XCVIII: Տես նաեւ Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Ա, էջ 131: Օրմանեան պատրիարքն այս պարագային քննարկուող խնդիրները ներկայացնում է որպէս «մտադրութիւն եկեղեցական անկարգութիւնները վերացնելու», որոնցից բնականաբար բացառուած չէ նաեւ Հիւանդաց օծումը, եւ, տրամաբանօրէն, Օրմանեան սրբազանը նրա չգոյութիւնը կամ խաթարումը համարում է եկեղեցական անկարգութիւններից մէկը, իսկ դրա վերականգնումը Վրթանէս հայրապետի կողմից ինքնըստինքեան բարեկարգումն է կամ, աւելի ստոյգ, վերադարձը դէպի սկզբնական ընկալում: Սակայն զարմանալին այն է, որ Հայ Եկեղեցու պատմութեան քննութեան այլ դէպքերում, երբ քննարկման առարկայ է Հիւանդաց օծումը, Օրմանեան պատրիարքը յստակ աչառութիւն է դրսեւորում՝ փորձելով ի դէն զանազան միջոցների մերժել այս խորհրդի առկայութեան փաստը Հայ Եկեղեցում: Տես Ազգապատում, Ա, էջ 830—831, Բ, էջ 1634: Այս մեկնակէտից անհասկանալի է այն պնդումը (Ս. քահ. Տէր-Սարգսեան), թէ, Մովսէս Խորենացու հաղորդման համաձայն, ե՛ւ սբ Թադէոս ու Բարթողոմէոս առաքեալները, ե՛ւ սբ Գրիգոր Լուսաւորիչը միայն ձեռք դնելով են բժշկել եւ կամ խաչով ու Աւետարանով (տես Տ. Սահակ քահանայ Տէր-Սարգսեան, Քննական կրօնագիտութիւն, Կ. Պոլիս, 1897, էջ 930): Սակայն հարկ է նշել, որ Մովսէս Խորենացին չի նշում նաեւ Աբգար Թագաւորի՝ Խաչով եւ Աւետարանով բժշկութեան մասին. հետեւաբար այս տրամաբանութեամբ չենք կարող «հաստատել», որ մեր այսօրուայ Հիւանդաց կարգում տեղ գտած Խաչով եւ Աւետարանով օրհնութիւնը կանոնական հիմք ունի: Սոյն խնդիրների քննարկմանը կ՛անդրադառնանք յետագայում:*

31 *Յատկանշական է, որ նոյն բաժանմանը հանդիպում ենք նաեւ սբ Յովհան Օձնեցի հայրապետի եւ Սարգիս Շնորհալու գրուածքներում, որոնց կ՛անդրադառնանք իրենց տեղում:*

թեան իւղ (սուրբ Միւռոն), բ) մահացածների, գ) հիւանդների, դ) երախայից կամ մկրտելոց[32]:

32 Վերջինս դարձեալ գործնականում գոյութիւն չունի, սակայն «Մայր Մաշտոց»-ում տեղ գտած իւղի օրհնութեան աղօթքը լաւագոյն վկայութիւնն է, որ այն կիրառուել է Հայ Եկեղեցում, թէեւ պահպանուած է սոսկ իւղի աղօթքը Մկրտութիւնից առաջ տեղի ունեցող ամբողջ երախայից (catechumenate) եւ դիւահալածութեան (exorcism) կարգից: Այս մասին՝ որպէս արդէն անհետացող երեւոյթի, ցաւով է անդրադարձել Եռսրով եպիսկոպոս Անձեւացին՝ նշելով, որ «Դիոնեսիոս Արիսպագացին գրէ երախայիցն ձէթ աւրհնել եւ օծանել եւ ապա մկրտել, եւ ով իշխէ ասել, զի զմեզ նախակոծ առնեն եւ հոռոմանուն կարդան ի վերայ մեր եւ անիմաստք յոլով յեպերեն զմեզ: Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր հրամայէր երեսն սատանայի թքանել հրաժարելոցն. զնոյն եւ Բազարատ աշակերտն Պետրոսի. եւ այժմ թէ յիշեմք, նորաձեւութիւն կոչեն. թողում ասել եւ զերիս փչումն ի նորակնիքսն զոր Գրիգոր աստուածաբան ասէ ունել ի բանս իւր» (տես ՄՄ ձեռագիր N 576, 143ա-բ): Դժբախտաբար, բացի 1961 թուականին Երուսաղէմում հրատարակուած Մաշտոցից, վերջին ժամանակներում տպագրուած միւս բոլոր ծիսարանները չունեն այս աղօթքը (տես Մաշտոց, Երուսաղէմ, Զ տպ., 1961, էջ 34—35): Ըստ «Մայր Մաշտոց»-ի՝ կարող ենք եզրակացնել, որ կարգը սկսուել է նախքան Մկրտութիւնը, այսինքն՝ լուացումը, համապատասխան ցուցումով. «Առնու Քահանայն զիւղն օծութեան ի ձեռն իւր, եւ Սարկաւագն ասէ...» (տես Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ, Կ.Պոլիս, 1807, էջ 12): Կարելի է կարծել, թէ այստեղ ցուցումը վերաբերում է սրբալոյս Միւռոնին, սակայն թէ՛ սարկաւագի քարոզը՝ «Վասն իշանելոյ շնորհաց Հոգւոյն Սրբոյ ընդ իւղս այսորիկ», եւ թէ՛ քահանայական աղօթքը՝ «Եւ այժմ աղաչեմք զքեզ, Տէր բարերար, առաքեա զշնորհս ամենասուրբ Հոգւոյդ ընդ իւղոյս. զի որ օծցի՝ եղիցի նմա ի սրբութիւն հոգեւոր իմաստութեան, ի նահատակութիւն եւ ի յաղթութիւն հակառակամարտից», խօսում են մի նոր իւղի օրհնութեան մասին, որը չէր կարող լինել սուրբ Միւռոնը, քանի որ այն արդէն իսկ օրհնուած է, եւ չենք կարծում, թէ կարելի է երկրորդ անգամ եւս օրհնել եւ այն էլ քահանայի կողմից, որի իրաւասութիւնները սահմանափակ են այս իմաստով: Երախայից ձէթի կամ իւղի օրհնութեան մասին տես Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 519—520, Կանոնք Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ, Թ, ժ, Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, էջ 16—18, Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց, էջ 166: Այս խնդրին անդրադարձել է նաեւ Ստեփանոս Օրբէլեանը. «Բայց թէ զանկատար իւղն որ վասն երեխային սահմանէք՝ ընդունելի է» (տես Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, աշխ. Կ. Վ. Շահնազարեանց, Թիֆլիս, 1910, էջ 459): Ընդհանրական Եկեղեցում եւ յատկապէս վաղ շրջանում նախալուացման կարգում գոյութիւն է ունեցել մի արարողութիւն, որը կոչվել է Effetatio-Ephphata (Եփփաթա՝ բացուիր)՝ հիմնուած Մարկոսի Աւետարանի է 34-ի վրայ: Սա մի արարողութիւն է, որը յայտնի է եղել միայն Արեւմուտքում: Սակայն ժամանակակից ծիսակարգում, որ Մարկոսի Աւետարանի այս հատուածն ընթերցելուց յետոյ, քահանան օծում է ընծայուողի ականջներն ու շուրթերը եւ կրկնում վերոբերեալ խօսքերը: Վաղ Եկեղեցում շրթունքի փոխարէն հպում կատարուում էր քթանցքին: Ամբրոսիոս Միլանցին սա բացատրում է մկրտուողի լսելու եւ «Քրիստոսի բուրմունքը» զգալու անհրաժեշտութեամբ: Այս մասին տես Edward Yarnold, The Awe-Inspiring Rites of Initiation, T&T Clark, Edinburgh, 1994, էջ 17—18: Այս արարողութիւնը տարբեր կարգաւորութիւն ունի Ամբրոսիոս Միլանցու եւ սբ Կիւրեղ Երուսաղէմացու մօտ: Առաջինը մատնանշում է, որ օծումը կատարւում է վերը նշուած եղանակով, իսկ երկրորդը՝ որ օծումը կատարւում է ամբողջ մարմնով: Սակայն երկուսն էլ համակարծիք են կարգը կատարելու տեղի առումով, որ է եկեղեցու գաւիթը (տես Edward Yarnold, նշ. աշխ., էջ 77, 101): Նոյնը ամենախիստ կարգադրութեամբ կրկնում է սբ Յովհան Օձնեցին իր «Ասնենաբանութեան» մէջ՝ նկարագրելով խախտուած կարգը. «Եւ ոչ զսրբոյ Երրորդութեանն խոստովանութիւն, եւ ոչ զերեխայութեանն նախկին մատուցանեն ձեռնադրութեամբ յօծումն, այլ միայն առ մկրտութիւն աւազանին վաղվաղեալ ի ներքս արկանեն»: Տես Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1953, էջ 17—18: Տես նաեւ Encyclopedia of Religion and Ethics, ed. James Hastings, Edinburg, T&T Clark, vol. XII, էջ 510:

Այստեղ ուշադրութեան արժանի է այս կանոնի գրութեան հանդիսաւորութիւնը, որն ըստ էութեան բացայայտում է մի կարեւոր եզրաշերտ. Եկեղեցու խորհրդական կեանքի վերաբերեալ յայտնւում է ամբողջ Եկեղեցու տեսակէտը եւ ոչ թէ սոսկ տեղական մի եպիսկոպոսի անձնական կարծիքը. «Արդ՝ միաբանութեամբ ժառանգաւորաց՝ եպիսկոպոսաց եւ քահանայից եւ սարկաւագաց, ես Մակարիոս արքեպիսկոպոս սուրբ քաղաքիս Երուսաղէմի, աւանդեմ զկանոնադրութիւնս զայս ձեզ, ուսեալ յառաքելոցն պատմութեանց. եւ աւանդութեամբ հարցն առ մեզ հաստատեալ հիմնանայ...»[33]: Այս պարագան յատկապէս ընդգծելի է, որովհետեւ կարելի էր ենթադրել, որ Մակար հայրապետը, լինելով Երուսաղէմի Աթոռի գահակալը, միեւնոյն ժամանակ շարունակողն է հիւանդների օծման ու բժշկութեան այն աւանդութեան ու խորհրդի, որոնք հիմնադրուած կամ բացայայտուած են Յակոբոս առաքելի՝ Երուսաղէմի անդրանիկ եպիսկոպոսի կողմից: Բնականաբար, խօսելով ամբողջ Եկեղեցու անունից՝ «յաթոռոյ», նա վերարծարծում է Դ դարի Եկեղեցում արդէն հիմնաւոր տեղ գրաւած խորհրդական կեանքի վերաբերեալ գոյութիւն ունեցող ծիսական, դաւանական ու կանոնական ըմբռնումները՝ այս դէպքում Մկրտութեան խորհրդի ուղղա-

33 Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, էջ 225:

փառ ընկալման եւ բարեփառ կիրառութեան, Միւռոնի՝ որպէս Եկեղեցին հաւաքողի, միացնողի եւ միեւնոյն շնորհի մէջ կենսագործողի՝ միայն եպիսկոպոսապետի օրհնութեամբ վաւերական լինելու[34], ինչպէս նաեւ երախայից, մահացածների եւ հիւանդների օծման իւղերի ուրոյն նշանակ ու իմաստ ունենալու եւ սրբալոյս Միւռոնի հետ չշփոթելու մասին[35]: Այսինքն՝ ի թիւս միւս խորհուրդների՝ հիւանդաց իւղի օրհնութիւնը եւ, տրամաբանօրէն, Հիւանդների օծման խորհուրդն ինքնին գոյութիւն են ունեցել Դ դարում, որն ուսուցանուած է «յառաքելոցն պատմութեանց եւ աւանդութեամբ հարցն հաստատեալ հիմնանայ»[36]: Ուստիւ Հայ Եկեղեցին, լինելով Ընդհանրական Եկեղեցու անբաժան միաւորներից մէկը, չէր կարող բաժանուած լինել ընդհանուր դաւանական եւ ծիսական փորձառութիւնից: Մէկ այլ տեսանկիւնից հարցը քննելու դէպքում յստակ է դառնում, որ Վրթանէս հայրապետը շօշափում է այնպիսի խնդիրներ, որոնք իրականում գոյութիւն են ունեցել, եւ հետեւապէս ցանկանում է ոչ թէ ներմուծել, այլ բարեկարգել խախտուած իրականութիւնը, որում բացառութիւն չէ նաեւ Հիւանդների օծման իւղի պարագան՝ համապատասխան Ընդհանրական Եկեղեցու տեսակէտին: Հետեւաբար, անժխտելի փաստ է, որ դեռեւս Դ դարում Հայ Եկեղեցում Հիւանդների օծումը գործնական եւ անհրաժեշտ կիրառութիւն է ունեցել որպէս խորհուրդ՝ արժէքով եւ պայմաններով, եւ ոչ թէ սոսկ բարեպաշտական կարգ կամ սովորութիւն: Նրա կարեւորութիւնը փրկաբանական իմաստով առանձնակիօրէն մատնանշուած է սբ Յովհան Մանդակունի հայրապետի կողմից Ե դարում[37] եւ սբ Յովհան Օձնեցի հայրապետի վերադիտողութեամբ գումարուած Դուինի 719 թուականի ժողովի կանոններում:

34 *Միւռոնի՝ միայն եպիսկոպոսի կողմից օրհնուելու կարգադրութիւնն արեւմտեան ծագում ունի: Այն կանոնացուել է 400 թուականին Տոլեդոյի ժողովում եւ կարգադրուել Ինոկենտիոս Ա պապի կողմից Կարթագենի Բ (387 կամ 390) եւ Գ (397) ժողովներում: Սակայն Աֆրիկայում, հալածանքների ժամանակ, քահանաներին եւս արտօնւում էր Միւռոն օրհնել (տես Encyclopedia of Religion and Ethics, vol. XII, էջ 511): Արեւելատարական եւ մալանկարա ծիսակարգերում, որոնցում Միւռոնի փոխարէն հասարակ իւղ է գործածւում, այն օրհնւում է մկրտութեան պահին, քահանայի կողմից (տես G. B. Howard, The Christians of St. Thomas and their Liturgies, Oxford, 1864, էջ 38):*

35 *Կանոնական եւ ծիսական այս դրոյթը խախտուած է Հայ Եկեղեցում, մեր կարծիքով, ըստ «արհեստական» այն ձեւակերպման, որով Հիւանդաց օծումը, որը լատինական ազդեցութեամբ կոչւում է «Վերջին օծում», միացած է Դրոշմի խորհրդին: Այս մասին կ'անդրադառնանք քիչ աւելի ուշ: Թերեւս այս շփոթը նոյնատիպ մեկնաբանութեամբ առկայ է եղել նաեւ Դ դարում, որը կարիք է ունեցել պարզաբանման եւ յստակեցման:*

36 *Դ դարի երկրորդ կէսից հիւանդների օծումը համախառնուած է եղել Մկրտութիւնից առաջ տեղի ունեցող դիւահալածութեան կարգի հետ, եւ թերեւս այս մասին է նաեւ Մակար Երուսաղէմացու կանոնական հաստատումը: Տես Bernard Poschmann, Penance and Anointing of the Sick, Burns & Oathes, London, 1964, էջ 239:*

37 *Բանասիրութեան մէջ (տես Հ. Սամուէլ Արամեան, Հիւանդաց Օծման Խորհուրդը Հայ Եկեղեցւոյ մէջ, Բազմավէպ, 1939, էջ 8) ընդհանրապէս ընդունուած է որպէս Հիւանդաց օծման խորհրդի ակնարկութիւն կամ ուղղակի փաստարկ վկայաբերել Կորիւնի այն հաղորդումը, թէ սբ Սահակ Պարթեւը մահացաւ «ի կատարել ամսեանն Նաւասարդի, յերկրորդ ժամու աւուրն, ի պաշտաման անուշահոտ իւղոյն, հանդերձ աստուածահաճոյ աղօթիւք» (Կորիւն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, աշխ. Ա. Մաթեւոսեանի, Երեւան, 1994, էջ 103): Իսկ ծանօթագրութեան մէջ աշխատութեան հեղինակը նշում է. «Անուշահոտ իւղի պաշտամունքը». հիւանդներին մահամերձների իւղով օծելու ծէսը, որ կատարում էին նախկին քրիստոնեաները» (տես անդ, էջ 142): Մեր կարծիքով՝ այստեղ խօսքը բնաւ էլ Հիւանդաց օծման խորհրդի մասին չէ, այլ միւռոնօրհնութեան. նախ՝ որ հիւանդների օծումը մինչեւ ԺԲ դար կատարուել է միայն բժշկութեան նպատակով եւ այդ ժամանակաշրջանում երբեք էլ վերջին վայրկեանին կատարուող ծէս չէր, եւ երկրորդ՝ հիւանդների օծման իւղը երբեք չի կոչուել «անուշահոտ իւղ», որը մակդիր է Միւռոնի համար, ինչպէս այն օգտագործում է սբ Յովհան Օձնեցին (տես Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 520): Սբ Գրիգոր Նարեկացին եւս Միւռոնն անուանում է «իւղ անուշութեան» (տես Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխ. Գ. Խաչատրեանի եւ Ա. Ղազինեանի, Երեւան, 1985, Բան ՂԳ, էջ 630): Հետեւաբար, չի կարելի վկայակոչել Կորիւնի տեղեկութիւնը որպէս փաստարկ Ե դարում Հիւանդաց օծման խորհրդի կիրառման: Այս հատուածն ընդհանրապէս խնդրայարոյց է, որովհետեւ որոշ ձեռագրերում «անուշահոտ իւղոյն» արտայայտութիւնը բացակայում է, եւ գրւում է լոկ «ի պաշտաման հանդերձ աստուածահաճոյ աղօթիւք»: Գառնիկ Ֆնտզլեանը պնդում է, որ այս ձեւափոխութիւնը կատարուել է Հայ Եկեղեցու տեսակէտին հակառակ լինելու միտումով, որովհետեւ «սա մի բացառութիւն է, որմէ կը խորշի Հայ Եկեղեցին» (տես Կորիւն, Վարք Մաշթոցի, ուղղեալ եւ լուսաբանեալ ի Գառնիկ Ֆնտզլեանէ, Երուսաղէմ, 1930, էջ 60—61):*

Սբ Յովհան Մանդակունի. Հիւանդաց օծումը Ե դարում

*Անդրադառնալով Յովհան Մանդակունի հայրապետի (478—490) տեղեկութեանը՝ անհրաժեշտ է այն դիտարկել ամբողջ Ե դարում տիրող հոգեւոր եւ բարոյապէս անկում ապրած իրականութեան լոյսի ներքոյ, երբ «լեզուօք խոստանամք ճանաչել զԱստուած եւ գործովք ուրանամք ի նմանէ»[38]: Մօտաւորապէս հարիւր յիսուն տարի առաջ հաստատուած քրիստոնէութիւնը եւ նրանով ստեղծուած արժէքները, Եկեղեցու կեանքը գտնւում էին դեռեւս կազմաւորման ու զարգացման փուլում, եւ միանշանակ է, որ չէին կարող լինել առանց վայրիվերումների եւ հեզասահ: Ժամանակաշրջանի լաւագոյն պատկերագրողը սբ Յովհան Մանդակունու ժամանակակից Մովսէս եպիսկոպոս Խորենացին է, ով իր նշանաւոր «Ողբ»-ում ուրուագծում է Ե դարի Եկեղեցու վիճակը՝ բնորոշելով թէ՝ «դրդուեցաւ ուղղափառութիւն... խրթնացեալ ի բարեզարդութենէ բեմին»[39]: Ի՞նչ է այս արտայայտութեան ներքին իմաստը. խախտուած է Եկեղեցու խորհրդական կեանքը՝ այն վայրը եւ ժամանակը, որտեղ իրականանում է Քրիստոսի յաւիտենական զոհաբերութեան խորհուրդը, եւ այդ խորհրդի մէջ մարդու եւ Աստուծոյ հանդիպումն ուղղափառ չէ, քանզի միութեան առագաստը՝ Եկեղեցին, խրթնացած անշքացած է բարեզարդութիւնից ոչ ուղղափառ կենցաղավարութեան ու պաշտամունքի պատճառով: Եւ այս քայքայուած վիճակի մեծագոյն պատասխանատուները Եկեղեցու վարդապետական կամ դաւանական կեանքը կազմաւորողներն ու իրագործողներն են, ովքեր, ըստ Խորենացու բնութագրման, «տխմար եւ ինքնահաճ, անձամբ առեալ պատիւ եւ ոչ յԱստուծոյ կոչեցեալ. արծաթով ընտրեալք եւ ոչ Հոգւով. ոսկեսէրք, նախանձոտք, թողեալ զհեզութիւն, յորում Աստուած բնակէ...»[40]: Զուգահեռ անցկացնելով՝ գրեթէ նոյնական արտայայտութեան ենք հանդիպում սբ Յովհան Մանդակունու նկարագրութեան մէջ՝ Եկեղեցու անկեալ վիճակի եւ Աստուծոյ տնօրինական տնտեսութեան՝ Սուրբ Հոգու շնորհական դաշտում խորհուրդների փորձառութեան ճանապարհով ոչ լիարժէք ծաւալուելու վերաբերեալ. «Զի եւս առաւել պարգեւացն արհամարհիցեն... Արդ ահա զշնորհսն Աստուծոյ եւ զզօրութիւն սուրբ խաչին լուծանես, եւ զպահս եւ զաղօթս զոր պատուիրանք հրամայեն, եւ մուծանես զգիր պահապան... որ ոչ է ի պատուիրանաց Աստուծոյ...»[41]: Կարծես շարունակելով սբ Մովսէս Խորենացու միտքը՝ նոյն պատկերաւորութեամբ Մանդակունի հայրապետը վերոնշեալը պայմանաւորում է դաւանանքի նկատմամբ անհոգութիւնից բխած կենցաղավարութեան պատճառահետեւանքային կապով. «...լոկ անուամբ զանձինս Աստուծոյ նուիրեն, եւ ի տան Աստուծոյ կերակրին, եւ վասն Աստուծոյ պատիւ ընդունին, եւ եկեղեցւոյ գլուխ համարին եւ զօրէնս Աստուծոյ ընթեռնուն, եւ տգիտաց վարդապետ անուանին եւ մոլորելոց առաջնորդ, եւ ինքեանք մոլորեալք են թողեալ զշնորհսն Աստուծոյ... եւ ոչ իմանան՝ եթէ յորժամ թողեալ ուրուք զճշմարիտ ճանապարհն աստուածպաշտութեան... չարաչար դատապարտեսցի...»[42]: Յատկապէս այս համատեքստում է սբ Յովհաննն անդրադառնում շնորհի ներգործութեան միջոցներից մէկի՝ Հիւանդաց օծման խորհրդի խափանմանը կամ հմայութիւններով ու դիւական զօրութիւններով փոխարինմանը, որոնք գերադասուած երեւոյթներ էին: Նրա համար ամբողջական մտահոգութեան առարկայ է այս խորհրդի անտեսումը, որը փրկութեան ճանապարհի մէջ էական նշանակութիւն ունի: Հետեւելով Մանդակունի հայրապետի քննութեանը՝ տեսնում ենք, որ «զշնորհս բժշկութեանն արհամարհիցեն, որով մարթ էր արուեստիւք բժշկութեան... բժշկել: Զի եւս առաւել զշնորհս պարգեւացն արհամարհիցեն. զի որ ասեն՝ եթէ «Հիւանդանայցէ ոք ի ձէնջ, կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն. աղօթս արասցեն ի վերայ նորա, եւ օծցեն իւղով ի յանուն Տեառն, եւ աղօթքն հաւատով փրկեսցեն զաշխատեալն»»[43]: Սակայն առաքելական այս պատգամը զանց է առնուած՝ Եկեղեցու կեանքում տեղը զիջելով հմայութիւններին եւ կախարդութիւններին, որով եւ «թողեալ զշնորհսն Աստուծոյ, զաղօթսն եւ զիւղն օծման՝ զոր պատուիրանք հրամայեցին հիւանդին, եւ զպահս եւ զա-

38 Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի ճառք, էջ 191:
39 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երեւան, 1991, էջ 358:
40 Անդ, էջ 363—364:

41 Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի ճառք, էջ 191:
42 Անդ, էջ 193:
43 Անդ, էջ 191—92:

ղօթս ցաւածին, եւ ինքեանք յուռութս եւ ի գիր զաւածին»[44]: Միեւնոյն միտքը խորացնելով՝ նա ցանկանում է վերստին շեշտադրել, թէ «ո՞չ ապաքէն ամենայն գործոց մերոց զխաչն հրամայէ պահապան եւ յօրինիչ, հիւանդաց աղօթս եւ օծումն իւղոյ, եւ լկելոցն ի սատանայէ պահս եւ աղօթս»[45]:

Մասնաւոր ուսումնասիրութիւնը յստակ է դարձնում, որ հիւանդների օծումը հաստատուն խորհուրդ էր Հայ Եկեղեցում, եւ վերոբերեալ խօսքերի ուշադիր վերլուծութիւնն այս առումով մի քանի սկզբունքներ է բացայայտում, որոնք կ՚ամփոփենք Ընդհանրական Եկեղեցում տուեալ ժամանակահատուածում առկայ Հիւանդաց օծման խորհրդի ընկալումը պարզաբանելուց յետոյ: Հետեւաբար, պատկերն ամբողջութեամբ ըմբռնելու համար հարկ է քննել, թէ ինչպիսի պատմական

44 Անդ, էջ 193: Նոյն ժամանակաշրջանի հեղինակ, Եկեղեցու նշանաւոր հայրերից սբ Կիւրեղ Ալեքսանդրացին (444), Մանդակունու նման դատապարտելով ժամանակի հեթանոսական բարքերի վերականգնումն ու հիւանդներին հմայութիւններով եւ այլ սնահաւատութիւններով բժշկելը, յիշեցնում է Յակոբոս առաքեալի կարգադրութիւնը եւ հետեւաբար նաեւ ընդունուած քրիստոնէական ծիսական դրութեանը հետեւելու անհրաժեշտութիւնը. «Եթէ քո մարմնի որեւէ մասը հիւանդ է, հաստատապէս հաւատա Սաբաովթին կամ այլ անուններով յայտնի Տիրոջը, որոնք Սրբազան Գրքերը յատկանշում են Նրա էութեանը համապատասխան, եւ Նա բժշկութիւն կը լինի քո հիւանդութեանը: Նոյնիսկ այն դէպքում, երբ դու այս խօսքերն արտասանես ինքդ քեզ վրայ, դու աւելին կը լինես, քան հեթանոսները, քանզի դու փառաբանում ես Աստծուն եւ ոչ թէ անմաքուր հոգիներին: Կրկին ցանկանում եմ յիշեցնել քեզ աստուածաշունչ գրուածքը, որն ասում է. «Հիւանդանայէ՞ ոք ի ձէնջ, կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն, եւ արասցեն ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն» (Sacraments of Forgiveness, ed. Paul Palmer, Darton, Longman & Todd, London, 1959, էջ 282. Cyrilli Alexandriae, Patrologiae Graecae, ed. J.P. Migne, Turnholti, 1844, De adoratione in spiritu et veritate, 68:470—471): Կիւրեղ Ալեքսանդրացուց մէկ դար յետոյ նոյն խնդրին է անդրադարձել նաեւ Կեսարիոս եպս. Արլեսցին՝ հաւատացեալներին խրախուսելով կիրառել Հիւանդաց օծման Եկեղեցու ծէսը, որը գերազանց է, քան հեթանոսական սովորութիւնները եւ բացի մարմնական բժշկութիւնից, այն հոգեւոր բժշկութեան ու մեղքերի թողութեան համար է (տես Hilaire et Cesaire d'Arles, Migne, La peres dan la foi, Paris, 1977, Serm. 13, 50, 52, էջ 81, 110, 111—112: Corpus Christianorum, ed. G. Morin, Turnout, 1953, vol. 103, էջ 66—67, 225, 232, vol. 104, էջ 751): Զուգահեռը տես Յովհան Մանդակունի Հայրապետի վկայութեամբ՝ Հայ Եկեղեցու վերաբերեալ:

45 Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի Ճառք, էջ 195:

եւ վարդապետական զարգացումներ է ունեցել այս խորհուրդը Դ եւ յետագայ դարերում ամբողջ Եկեղեցու կեանքում թէ՛ Արեւելքում եւ թէ՛ Արեւմուտքում:

Հիւանդաց օծման խորհուրդն Ընդհանրական Եկեղեցում Դ-Ե դարերում

Վրթանէս Հայրապետի ժամանակակից Սրապիոն եպիսկոպոս Թմուսցու (Նեղոսցի) (+360) «Միսարանում» (Euchologion) հանդիպում ենք իւղի աղօթքի թերեւս ամենավաղ տարբերակներից մէկին, որը վերնագրուած է «Աղօթք հիւանդաց իւղի, կամ հացի, կամ ջրի»[46]: Այս աղօթքում յատկապէս ընդգծելի է այն հանգամանքը, որ այն ոչ թէ սոսկական խնդրանք է օծման միջոցով հոգեւոր ներգործութեան, այլ մասնաւոր կերպով շեշտադրուած է «շնորհի եւ մեղքերի թողութեան» հայցումը[47]:

46 Սրապիոն Թմուսցու եւ նրա «Միսարանի» մասին տես Johannes Quasten, Patrology, Christian Classics, INC., Westminster, Maryland, vol. III, 1990, էջ 80—85: Աղօթքի նմանատիպ անուանումը կարող է խնդրայարոյց լինել, սակայն, ինչպէս դիտարկում է Ուսպենսկին, վաղ Եկեղեցու ընկալեալ աւանդութեան համաձայն, սովորութիւն էր նոյն աղօթքն ու պաշտօնը կիրառել նաեւ այլ պարագաներում (տես А. И. Успенскій, Таинство Елеосвященія, Москва, 1908, ст. 28): Յատկանշական է, որ այս ծիսարանը պարունակում է հինգ աղօթք. ա) «Իւղի եւ ջրի ընծայման», բ) «Զեռնադրութիւն իւղի եւ ջրի օրհնութիւնից յետոյ», գ) «Աղօթք հիւանդաց իւղի, կամ հացի, կամ ջրի», դ) «Աղօթք հիւանդների վրայ», ե) «Զեռնադրութիւն հիւանդների վրայ»:

47 «Աղաչում ենք Քեզ, որ ունես ամբողջ զօրութիւնն ու կարողութիւնը, Փրկիչ մարդկութեան եւ Հայր մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի, աղաչում ենք Քեզ երկնային հանգրուաններից առաքել այս իւղի վրայ Քո Միածնի բուժիչ զօրութիւնը, որպէսզի Քո արարածներից նրանք, ովքեր օծուեն սրանով կամ ստանան սա, այն լինի բժշկութիւն բոլոր հիւանդութիւնների եւ ախտերի, ի հալածումն դեւերի եւ անմաքուր հոգիների, հեռու պահի չար հոգիներից եւ լինի յարգելումն ներմութեան, ցրտահարութեան եւ յոգնութեան՝ շնորհիդ եւ մեղքերի թողութեան միջոցով, որ է դեղ կենաց եւ փրկութիւն, հոգու, մարքի, մարմնի բժշկութիւն եւ կատարեալ առողջութիւն» (Sacraments of Forgiveness, էջ 280: Սրան զուգահեռ տես նաեւ The Ante-Nicene Fathers, ed. by Rev. Alexander Roberts & James Donaldson, T&T Clark, Edinburgh, 1886, vol. VII, էջ 494): Այստեղ՝ «Առաքելական կանոնագրութիւն»-ում, իւղի եւ ջրի համար յա-

Հիւանդաց օծման խորհրդի՝ Դ դարում հաստատուն տարածում գտած լինելու իրողութեան մասին է խօսում սբ Յովհան Ոսկեբերան հայրապետը (+407)՝ նշելով, որ հիւանդների օծումն իր ժամանակաշր-

տուկ սահմանուած աղօթք գոյութիւն ունի՝ ցուցումով հանդերձ՝ վերագրուած Մատթիա առաքելին. «Զրի եւ իւղի վերաբերեալ, եւ՝ Մատաթիաս, հաստատում եմ. եպիսկոպոսը պէտք է օրհնի ջուրը կամ իւղը, սակայն եթէ նա այնտեղ չէ, այն կարող է օրհնել նաեւ քահանան՝ կողքին սարկաւագ ունենալով: Բայց եթէ եպիսկոպոսը ներկայ է, քահանան եւ սարկաւագը թող կանգնեն նրա կողքին, եւ եպիսկոպոսն արտասանի հետեւեալը. «Տէր Սաբաովթ եւ Աստուած զօրութիւնների, Արարիչ ջրերի եւ մատակարար իւղի: Դու, որ ողորմած եւ մարդասէր ես, որ պարգեւեցիր ջուրը խմելու եւ մաքրուելու եւ իւղը՝ մարդկանց զուարթ եւ առողջ կերպարանք ունենալու նպատակով [Հմմտ. Սաղմ. ՃԳ 15], Դու Ինքդ սրբիր այս ջուրն ու իւղը Քո Քրիստոսի միջոցով, նրա անունով, ով ընծայել է սրանք: Եւ զօրացրու նրանց, որպէսզի կարողանան վերականգնել իրենց առողջութիւնը, վանել հիւանդութիւնը, հալածել դեւերին եւ խափանել նրանց բոլոր որոգայթները մեր յոյս Քրիստոսի շնորհի միջոցով, Ում Քեզ եւ Սուրբ Հոգու հետ վայել է փառք, պատիւ եւ երկրպագութիւն յաւիտեանս: Ամէն»: Դ դարի վերջին եւ Ե դարի սկզբին գոյութիւն ունեցող Իւղի օրհնութեան աղօթքի վերաբերեալ տես նաեւ Testamentum Domini. The Testament of Our Lord, tr. Cooper and Maclean, 1902, էջ 77—78: Սոյն գործը գրուել է յունարէն, սակայն պահպանուած է միայն ասորերէնով եւ թուագրւում է մօտաւորապէս 400 թուականով: Այս վաղագոյն ծիսական յուշարձանում կարդում ենք հետեւեալ աղօթքը, որը ներքին բովանդակային աղերսներ ունի վերոբերեալ երկու աղօթքների հետ եւ իւղի օրհնութեան ու հիւանդաց օծման բանաձեւուած հնագոյն խորհրդական աղօթքներից մէկն է. «Տէ՛ր Աստուած, առաքող Մխիթարիչ Հոգուդ՝ Աստծուն, անուն փրկութեան, ամրութեան, որ ծածկուած է յիմարներից եւ յայտնուած իմաստուններին, Քրիստոսով լուսաւորեցիր մեզ, Քո ողորմութեամբ մեզ իմաստուն ծառաներ դարձրիր, որոնց ընտրեցիր Քո նախիմաստութեամբ: Ցանուն Քո սրբութիւնների առաքեցիր մեզ՝ մեղաւորներիս համար Քո Հոգու ճանաչողութիւնը, երբ պարգեւեցիր մեզ Քո Հոգու զօրութիւնը: Դու ես բժիշկը բոլոր ախտերի եւ տառապանքների՝ բժշկութեան շնորհ պարգեւելով նրանց, ովքեր ի Քեզ արժանացան այդ շնորհին: Այս իւղի վրայ հեղի՛ր Քո ամենաուժութեան նշանը, Քո բարերար գթասրտութեան կատարումը, որպէսզի այն ազատագրի տառապեալներին, բժշկի հիւանդներին, լուսաւորի վերադարձողներին, երբ գան Քո հաւատքին: Զի Քո են զօրութիւնն ու փառքը յաւիտեանս յաւիտենից: Ամէն»: Համեմատութեան համար տես Іеромонах Венедикт, Къ исторіи Православнаго Богослуженія, Сергіевъ Посадъ, 1917, с. 64:

ջանում Կոստանդնուպոլսում գործնական երեւոյթ էր[48] որպէս քահանաների կողմից մեղքերին թողութիւն տալու զօրութիւն: Ոսկեբերան հայրապետը, նկարագրելով քահանայութեան պատիւն ու մեծութիւնը, ի թիւս բազում փաստարկների, ընդգծում է նրա հոգեւոր ծառայութեան գերազանցութիւնը նոյնիսկ մարմնաւոր ծնողների նկատմամբ, քանի որ ծնողն աշխարհ է բերում սոսկ նիւթական մարմինը, սակայն նրան չի կարող պատսպարել եւ պահպանել հիւանդութիւններից ու մահից: Մինչդեռ քահանան վերստին ծնում է մարդու հոգին Մկրտութեան խորհրդի միջոցով եւ զօրութիւն ունի քաւելու Մկրտութիւնից յետոյ մարդու կեանքում տեղ գտած մեղքերը, եւ սա սբ Յովհանը տեսնում է առաքելական պատգամի (Յակ. Ե 14—15) ենթատեքստից: Առաջին հայեացքից կարելի է ենթադրել, որ Ոսկեբերանը խօսում է ոչ թէ Հիւանդաց օծման մասին, այլ առաւել շեշտը դնում է ապաշխարութեան խորհրդի վրայ, սակայն ուշադիր դիտարկելով ամբողջ գործը՝ տեսնում ենք, որ Ապաշխարութեան խորհուրդը որպէս քահանայական գործադրութեան շնորհ մանրամասն վերլուծւում է նախորդ գլուխներում[49], եւ բացի դրանից, այնքան էլ տարօրինակ չէ Հիւանդաց օծումից չանտեսել ապաշխարութեան եւ մեղքերի թողութեան անհրաժեշտութիւնը, ինչն առկայ է նաեւ Յովհան Մանդակունու գրուածքում:

Միեւնոյն ժամանակ ենթադրելի է, որ Ոսկեբերանը յետմկրտութենական մեղքերի քաւութեան համար անհրաժեշտ եւ ներգործող պայման է նկատում ապաշխարութիւնը, խոստովանութիւնը, ապա օծու-

48 «Աստուած քահանաներին առաւել մեծ շնորհ է պարգեւել, քան մեր բնական ծնողներին: Քանզի մեր ծնողները ծնում են մեզ միայն այս կեանքի, իսկ միւսները՝ գալիքի համար: Առաջինները չեն կարող մահը շեղել իրենց զաւակներից կամ վանել հիւանդութեան յարձակումները, սակայն երկրորդները յաճախ հիւանդ հոգիներ եւ նոյնիսկ մահուան վտանգի առջեւ կանգնածների են փրկել մի մեղմ սրբապատման մատակարարմամբ, ինչպէս նաեւ ուրիշներին զգուշացնում են անկումից ոչ միայն խորհրդաւորութեամբ եւ պատգամներով, այլեւ հաստատուած աղօթքների օգնականութեամբ: Քանզի ոչ միայն վերստին ծննդեան ժամանակ, այլեւ դրանից յետոյ եւս, նրանք իշխանութիւն ունեն մեղքերին թողութիւն տալու: Գրուած է. «Հիւանդանայցէ՞ ոք ի ձէնջ, կոչեսցէ զերիցուս եկեղեցւոյն, եւ արասցեն ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն: Եւ աղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն, եւ յարուցցէ զնա Տէր, եւ եթէ մեղս ինչ իցէ գործեալ, թողցի նմա»: Nicene and Post—Nicene Fathers, On the Priesthood, vol. IX, Book III, էջ 45—48:

49 Անդ, էջ 45—48:

մը, որը թէ՛ խորհուրդով եւ թէ՛ ծիսական գործադրութեամբ նման է Մկրտութեան խորհրդին: Վերջինս նոյնպէս ապաշխարութեան, մեղքերի քաւութեան ու թողութեան կարեւորագոյն պահանջ ունի՝ խորհրդի ե՛ւ աստուածաբանական, ե՛ւ գործնական տեսանկիւններից դիտարկուած՝ լինելով նրա անհրաժեշտ բաղկացուցիչ մասը, որն իրական է նաեւ Հիւանդաց օծման համար: Զուգահեռ համադրութիւն անցկացնելով Ոսկեբերանից մէջբերուած հատուածի Մկրտութեան եւ Օծման միջեւ՝ եւս մէկ անգամ համոզւում ենք, որ նա այստեղ խօսում է յատկապէս Օծման եւ ո՛չ Ապաշխարութեան խորհրդի մասին: Այսպէս՝ Մկրտութեամբ վերստին ծնունդը դիմադրուած է մարմնական ծնունդին, իսկ իւղի օծմամբ հոգեւոր բժշկութիւնն ու յաւիտենական մահից փրկութիւնը՝ իրենց զաւակներին մարմնաւոր հիւանդութիւններից ու մահից փրկելու ծնողների անկարողութեանը[50]: Այս կարծիքը հաստատւում է նաեւ Ոսկեբերանի մէկ այլ վկայութեամբ՝ «Մեկնութիւն սբ Մատթէոսի Աւետարանի» գործից, որտեղ ուղղակիօրէն խօսւում է Եկեղեցու կանթեղից իւղի օգտագործման եւ դրա բուժիչ շնորհի մասին[51]: Դ—Ե դարերում Հիւանդաց օծման խորհրդի արդէն իսկ լայն տարածում գտած

50 Այս մասին տես նաեւ Макарий Митрополит Московский и Коломенский, Православно-догматическое Богословие, С.-Петербург, 1883, т. 2, с. 468:

51 Տես Nicene and Post-Nicene Fathers of the Christian Church, ed. by Philip Schaff, T&T Clark, Edinburgh, 1889, vol. X, Homilies on the Gospel of Saint Matthew, էջ 217. «...այս սեղանն աւելի թանկագին եւ հիանալի է, քան միւսները, ինչպէս նաեւ այս կանթեղը՝ քան մնացած բոլորը: Եւ այս մասին նրանք գիտեն, ովքեր հաւատքով եւ համապատասխան վիճակով այդ իւղով օծուելով՝ վանել են իրենցից հիւանդութիւնները»: Ըստ Adrian Fortescue-ի՝ սա Արեւելքում կիրառուող օրհնութեան հնագոյն ձեւերից է, երբ կանթեղը վառուել է սրբապատկերի առջեւ կամ եկեղեցում, որտեղից էլ վերցուել է իւղը (տես A. Fortescue, The Lesser Eastern Churches, էջ 280): Յատկանշական է, որ Արեւելեան եկեղեցիներում Հիւանդաց օծման խորհուրդը կոչուել է «Կարգ կանթեղի», որը պահպանուած է Ղպտի եւ Ասորի եկեղեցիներում (տես Donald Attwater, The Christian Churches of the East, էջ 135, 209—210): Սոյն ձեւակերպումը գոյութիւն ունի նաեւ հայոց մօտ, ինչպէս վկայաբերում է Նորայր արք. Պողարեանը. «Կանոն Օրհնութեան Ջիթոյ, որ առնուն ի կանթեղէն եւ օծին զհիւանդն» (Նորայր արք. Պողարեան, Միսագիտութիւն, Նիւ Եորք, 1990, էջ 118. Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կաղմեց Նորայր Եպիսկոպոս Պողարեան, Երուսաղէմ, 1996, Ա, էջ 543):

լինելու մասին է վկայում նաեւ Յերոնիմոսը (342—420) «Սուրբ Հիլարիոնի վարքը» գործում (գրուած 390 թ.)[52]:

52 Տես Nicene and Post-Nicene Fathers, vol. VI, St. Jerome, էջ 311: Յերոնիմոսը, խօսելով մեծ ճգնութեամբ ապրող Հիլարիոնի մասին, պատմում է, որ նրան այցելող մարդիկ ամառային մի շոգ օր խայթուել էին անապատի օձերից ու թունաւոր զեւուններից, եւ «հետեւաբար նա իւղ օրհնեց, որով չփեց ամուսինների ու հովիւների վէրքերը, եւ արժանացան անսխալ բուժման»: Օծման խորհուրդը յատկապէս լայնօրէն կիրառուել է եգիպտական անապատներում: Աղբիւրները մասնաւորաբար վկայում են նշանաւոր հայրեր Պախոմի, Մակար Ալեքսանդրացու, Բենիամին Նիտրացու, Աբբայ Ամմոնի եւ այլոց վարքերում նրանց կողմից կամ նրանց համար գործադրուած հիւանդաց կարգի մասին, որտեղ իւղի հետ միաժամանակ հանդիպում ենք նաեւ ջրի օրհնութեանը: Ջուրը հաւանաբար խմուել է եւ որոշ դէպքերում օգտագործուել հիւանդի վրայ հեղուելու կամ ցողուելու նպատակով (տես Іеромонах Венедикт, Къ исторіи Православнаго Богослуженія, Сергіевъ Посадъ, 1917, с. 3—5, 70—72; The Journal of Theological Studies, The Sacramentary of Seraphion of Thmuis, by F.E. Brightman, 1899, էջ 260—261; Прот. Михаил Архангельскій, О тайне Св. Елея, С-Пб., 1895, ст. 6—7): Անուղղակի վկայութեամբ, օծման մասին տեղեկութիւն է արձանագրուած նաեւ Օգոստինոսի (354—430) կողմից, ով յղում է Յակոբոս առաքեալի խօսքերին՝ հիւանդների, ինչպէս նաեւ քրիստոնէական կեանքի եւ կենցաղավարութեան վերաբերեալ: Բացի նրա հաղորդած տեղեկութիւններից, նաեւ Օգոստինոսի վարքագիրը՝ Posidius-ը՝ նրա աշակերտն ու ընկերը, Vita Augustini (Վարք Օգոստինոսի) գործում խօսում է նրա կողմից կատարուած բժշկութեան կարգի մասին՝ նշելով, որ «նա հետեւում էր առաքեալի կողմից հաստատուած կանոնին՝ «այցելու լինել որբոց եւ այրեաց ի նեղութեան իւրեանց» (Յակ. Ա 27), եւ երբ պատահում էր, որ հիւանդները խնդրում էին նրան իրենց համար աղօթել Տիրոջը, նա ձեռք էր դնում նրանց վրայ առանց յապաղելու» (տես Posidius, Vita Augustini, P. L., ed. J. P. Migne, Paris 1857, XXXII 56): Հետաքրքրական է, որ Որոգինէսը, անդրադառնալով Յակոբոսեան ծէսին, այն անուանում է «ձեռք դնելու կարգ»: Այս անուանումը գոյութիւն ունէր նաեւ մինչեւ Դ դարի երկրորդ կէսը՝ մինչեւ Ամբրոսիոս եպիսկոպոս Միլանցու ժամանակները, եւ կիրառւում էր նրա իրաւասութեան ներքոյ գտնուող եկեղեցում: Լինելով Որոգինէսի ուսուցման հետեւորդներից՝ հաւանաբար հէնց Ամբրոսիոսն էլ այս կարգը փոխանցել է Օգոստինոսին (Nicene and Post-Nicene Fathers, vol. X, St. Ambrose, Prolegomena, xiv): Նոյն կարգաւորութեան մասին է խօսում ինքն իսկ Ամբրոսիոս Միլանցին՝ գրելով ընդդէմ նովատիանականների. «Այդ դէպքում ինչո՞ւ էք ձեռք դնում եւ հաւատում, որ այն օրհնութեան ներգործութիւն ունի, եւ արդեո՞ք պատահել է, որ որեւէ հիւանդ բժշկուի... Ինչո՞ւ էք մկրտում, եթէ

Վերջապէս Հիւանդաց օծման խորհրդի աստուածաբանական ձեւակերպման ու խորհրդական զօրութեան, ինչպէս նաեւ արդէն իսկ Ե դարում որպէս Եկեղեցու վաւերական խորհուրդներից մէկը լինելու մասին են խօսում նոյն դարի հեղինակներ Վիկտոր Անտիոքացին (450) եւ Ինոկենտիոս Ա պապը (402—417):

Վիկտոր Անտիոքացին սբ Մարկոսի Աւետարանի Զ 13 համարի մեկնութիւնը դիտարկում է սբ Յակոբոս առաքեալի ցուցման լոյսի ներքոյ՝ յաւելելով. «Իւղի կիրառումը երկբնոյթ է՝ բժշկութիւն յոգնութիւնից եւ աղբիւր լոյսի եւ ուրախութեան: Եւ այսպիսով՝ իւղով օծումը խորհրդանշում է Աստուծոյ ողորմութիւնը, բժշկութիւն հիւանդութիւնից եւ սրտի լուսաւորութիւն: Քանզի յստակ է, որ աղօթքը ներգործում է այս ամէնի վրայ, սակայն, ըստ իս, իւղը նշանակն է (symbol) այս ամէնի»: Այս հատուածում հանդիպում ենք մի տեսութեան, որը հիմնական ձեւակերպում է ստացել աւելի ուշ շրջանի աստուածաբանութեան մէջ՝ խորհրդի նշանակութեան եւ պատճառականութեան զանազանումը կամ տարբերակումը[53]: Վիկտոր Անտիոքացու մտքմբռնումը միանշանակ է. նա նշանակութիւնը վերագրում է նիւթին (իմա իւղ), իսկ պատճառականութիւնը՝ ձեւին (աղօթք): Վերջին եւ թերեւս ամենակարեւոր վկայութիւնը Ինոկենտիոս Ա պապինն է, ով այն ուղղակիօրէն համարում է genus Sacramenti (իւրատեսակ խորհուրդ) ի թիւս

մեղքերը չեն կարող քաւուել մարդկանց կողմից»: (Nicene and Post-Nicene Fathers, vol. X, St. Ambrose, On Repentance, I, VIII էջ 335): Ինչպէս նկատելի է, Միլանի եպիսկոպոսը զուգահեռներ է անցկացնում հիւանդների վրայ ձեռք դնելու կարգի եւ Մկրտութեան միջեւ՝ յարակցելով դրանք ապաշխարութեանը եւ այսպիսով խօսելով մի խորհրդի մասին, որը հաւասարազօր է Մկրտութեանը:

53 Sacraments of Forgiveness, էջ 282, Catenae Graecaorum Patrum, ed. J. Cramer, Oxford, 1840, vol. I, էջ 340: Այս մասին տես «Գիրք հարցմանց», էջ 594, Յովհաննու Իմաստասիրի Աւանդագրութիւնք, էջ 16, Ա. Տէր-Միքելեան, Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ Քրիստոնէական, էջ 364, նաեւ Encyclopedia of Theology, A Concise Sacramentum Mundi, ed. by Karl Rahner, Burns & Oathes, 1993, art. «Sacraments», նաեւ The New Dictionary of Theology, ed. Joseph A Komonchak, Mary Collins, Dermot A. Lane, A Michael Gazier Book, Minnesota 1987, էջ 914—922, նաեւ Бенедетто Тесta, Таинства в Католической Церкви, Москва, 2000, с. 62—67:

միւս խորհուրդների[54]: Ամբողջացնելով Դ եւ Ե դարերի ընդհանուր համայնապատկերը եւ զուգադրելով այն Հայ Եկեղեցու, ի մասնաւորի սբ Յովհան Մանդակունի հայրապետի միջոցով արտայայտուած պաշտօնական տեսակէտին՝ աներկբայելիօրէն կարող ենք ասել, որ Հայ Եկեղեցին անմասն չի եղել Հիւանդաց օծման խորհրդի վաւերականացման եւ անհրաժեշտութեան առումով Ընդհանրական Եկեղեցում տեղի ունեցող զարգացումներից եւ վարդապետական հիմնաւորումներից: Այս առումով յատկացուցելի են նոյնատիպ մտահոգութիւններն ու խորհրդի մեկնաբանութեան հետեւեալ սկզբունքները.

ա) Հիւանդների օծումը առաքելական խորհուրդ է՝ հիմնուած տէրունական պատգամի (Մատթ. Ժ 1, Ղուկ. Թ 1, Մարկ. Զ 7—13) եւ սբ Յակոբոս առաքեալի խօսքի վրայ (Յակ. Ե 14—15) (Յովհան Մանդակունի, Կիւրեղ Ալեքսանդրացի, Ինոկենտիոս Ա պապ).

բ) Աղօթքը եւ օծումը[55] միասնաբար շնորհաբաշխման կարեւորագոյն յատկանիշներ են հաւասար աստիճաններով՝ առանց սրանցից որեւէ մէկի առաւել կարեւորութեան եւ ստորադասման, համադրաբար՝ որպէս պատճառ եւ նշանակ՝ փոխստացական զօրութեամբ (Յովհան Մանդակունի, Յովհան Ոսկեբերան, Վիկտոր Անտիոքացի).

գ) Աղօթք-օծումը տեւական կրկնողութեամբ բացատրուած է որպէս «զշնորհս Աստուծոյ», «ճշմարիտ ճանապարհ աստուածպաշտութեան», «շնորհք եւ պատուիրանք Աստուծոյ», այսինքն՝ խորհուրդն աստուածային հաստատում եւ կարգադրութիւն ունի, որը չի կարող

54 Այս թուղթը որոշակի հարցերի պարզաբանում եւ պատասխան էր՝ ուղղուած Դեցենտիոս եպիսկոպոսին, ով հաւանաբար ցանկացել էր իմանալ, թէ հիւանդներին իւղով օծում կատարելու կանոնական իրաւունքը վերապահուած էր միայն եպիսկոպոսի՞ն, թէ՞ այն կարող էին իրականացնել նաեւ քահանաներն ու հաւատացեալները: Հռոմի եպիսկոպոսը յստակ կերպով շեշտադրում է եւ ըստ էութեան լուսաբանում վաղ Եկեղեցում տեղ գտած աւանդութիւնը, ըստ որի՝ օծումը կարող է լինել երկու բնոյթի. հոգեւոր (խարիզմատիկ), որը կարող է կատարուել հաւատացեալների կողմից, եւ խորհրդական (սակրամենտալ), որը հոգեւոր աստիճան ունեցողի իրաւունքն է միայն: Վերջինիս մասին խօսելիս յատկանշական է, որ Ինոկենտիոս պապը զատորոշում է Ապաշխարութեան խորհուրդը Հիւանդաց օծման խորհրդից՝ մատնանշելով նրանց ոչ միաձուլուած լինելու կարեւոր խորհրդական հանգամանքը, քանի որ նրանցից ամէն մէկը «իւրատեսակ խորհուրդ է: Եւ ինչպէ՞ս կարող է խորհուրդներից ցանկացածը շնորհուել մէկին, որից մերժուած են մնացած խորհուրդները»: Տես P.L., ed. J. P. Migne, Paris 1857, XX 559:

55 Յոյն եկեղեցում խորհուրդը հէնց այդպէս էլ կոչւում է՝ «Աղօթք եւ իւղ»:

արհամարհուել եւ չգործադրուել առանց լինելու «արտաքոյ պատուիրանաց եւ քրիստոնէութեան, եւ ընդ նզովիւք առաքելոցն»[56]: Այսպիսի արտայայտութիւններից եզրակացնելի է, որ Հիւանդաց օծումը Եկեղեցու խորհրդաբանական համակարգի ամենակարեւոր, գործնական եւ էական միաւորներից է (Յովհան Մանդակունի, Առ. կանոնադրութիւն, Կիւրեղ Ալեքսանդրացի).

դ) Անուղղակիօրէն ուրուագծուած են Հիւանդների օծման ծիսական կարգաւորութիւնն ու գործադրութեան պայմանները՝ պահք, աղօթք եւ խոստովանութիւն, այսինքն՝ ապաշխարական վիճակ, ապա իւղով օծում, մեղքերի թողութիւն, քահանայի ձեռք դնելը, ինչպէս նաեւ խաչի ներկայութեան անհրաժեշտութիւնը (Յովհան Մանդակունի, Յովհան Ոսկեբերան, Ամբրոսիոս Միլանցի, Օգոստինոս).

ե) Խորհրդի գործադրութեան նպատակը Հիւանդի բժշկութիւնն է մեղքերի թողութեան միջոցով եւ ոչ թէ մահուան նախապատրաստութիւնը՝ էականօրէն պայմանաւորուած ստացողի հաւատքով, որի արդիւնքում «ընդունի բժշկութիւն ցաւոց, զհաղածումն ախտի, եւ զելումն դիւաց եւ զթողութիւն մեղաց»[57] (Յովհան Մանդակունի, Յովհան Ոսկեբերան, մեր Տիրոջ Աւետարանը, Ինոկենտիոս Ա պապ):

56 Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի Ճառք, էջ 195, 192, 198, 201

57 Անդ, էջ 196: Մանդակունի Հայրապետի տեղեկութիւնից ենթադրելի է, որ արդէն իսկ Ե դարում նկատելի է բժշկութեան օծման եւ Միկրոութեան խորհրդից առաջ կատարուող դիւահալածութեան կարգի գրեթէ նոյնացումը: Սա պատճառաբանուած է հայրերի կողմից, որովհետեւ, քրիստոնէական վարդապետութեան ընկալմամբ, բժշկութիւնը, բացի մարմնական նշանակութիւնից, նաեւ հոգեւոր բնոյթ ունի՝ մարդուն ազատագրելու մեղքից եւ դիւական գերութիւնից՝ հիմնուած Մատթէոսի Աւետարանում արձանագրուած տէրունական պատգամի վրայ (Մատթ. ԺԲ 7—9): Այսու՝ անհասկանալի եւ պարզապէս միտումնաւոր ձեւափոխուած ու մեր կարծիքով ամբողջութեամբ մերժելի են Արշակ Տէր-Միքելեանի տեսակէտն ու վերլուծութիւնը սբ Յովհան Մանդակունու կարգադրութեան վերաբերեալ: Մեկնաբանելով Մանդակունի Հայրապետի խօսքերը՝ նա, չգիտես ինչպէս, յանգում է հետեւեալ եզրակացութեան. «Ս. Հայրապետը լաւագոյն է համարում աղօթքն ու պահքը եւ մերժում է հեթանոսական ժժմունքներն ու մինչեւ անգամ «պահապան գրերը» (տես Ա. Տէր-Միքելեան, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ Քրիստոնէական, էջ 466): Իսկապէս որ սբ Հայրապետը մերժում է հեթանոսական բարքերն ու սովորութիւնները, սակայն նա ոչ միայն չի բացառում Հիւանդների բժշկութեան համար օծման անհրաժեշտութիւնը, այլեւ շեշտադրում է այն որպէս շնորհաբաշխման միջոց՝ միախառնուած աղօթքին եւ պահքին, եւ հետեւաբար, Ա. Տէր-Միքելեանի պնդումն անտրամաբանական է եւ անընդունելի:

Սբ Յովհան Օձնեցու կանոնական Հաստատումը. Հիւանդաց օծման խորհուրդը Ը դարում

Այսպիսով՝ ունենալով հանդերձ Ե դարում հիմնաւորուած ընդհանուր մօտեցումը Հիւանդաց օծման խորհրդի վերաբերեալ՝ փորձենք տեսնել, թէ ինչ աստիճանի կիրառութիւն է ունեցել այն յետագայում: Դժբախտաբար, յաջորդական երեք դարերը իւրայատուկ լռութեան ժամանակաշրջան են, որոնք որեւէ տեղեկութիւն չեն հաղորդում մեզ: Անշուշտ, սա կարելի է բնութագրել երկու իմաստով էլ՝ յօգուտ եւ ընդդէմ խորհրդի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, այն առումով, որ կա՛մ այն, հաստատուած եւ հիմնաւորուած իրականութիւն լինելով, այլեւս կարիք չունէր աւելորդ անդրադարձումների եւ բնականօրէն շարունակում էր գրաւել իր ուրոյն կարգավիճակը Եկեղեցու խորհրդական կեանքում եւ կա՛մ էլ, համարուելով բոլորովին ոչ անհրաժեշտ երեւոյթ, մատնուած էր կատարեալ անտարբերութեան[58]: Այսուամենայնիւ, հակուած ենք կարծելու, որ ինչպէս միւս խորհուրդների պարագային, այս դէպքում եւս եղել են որոշակի պատճառներ, որոնք մեծ ազդակներ են եղել խորհրդի անտեսման կամ, աւելի ճիշտ, այն իրականացնելուց խուսափելու համար: Ինչպէս արդէն նկատեցինք, թէ՛ սբ Յովհան Մանդակունին եւ թէ՛ Ընդհանրական Եկեղեցու հայրերը խստագոյնս դատապարտում են հեթանոսական բարքերի ներթափանցումը ժողովրդի կեանք, եւ յետագայի վաւերագրերն էլ (մինչեւ Թ դար) վկայում են այն մասին, որ հակառակ բոլոր յորդորներին եւ կանոնական կարգադրութիւնների՝ Եկեղեցու հայրերը չեն կարողացել կանխել հմայութիւնների ճանապարհով բուժման ժողովրդական ընկալումը: Բացի այս պարագայից, կարեւորագոյն հանգամանք էր նաեւ քահանաների ծուլութիւնն ու անտարբերութիւնը, որ նրանց հեռու էր պահում հիւանդներին այցելելուց[59], եւ մեծ գումարներ ու

58 Յովհան Օձէնցին (829), «Institutio Laicalis» գործում անդրադառնալով այս երեւոյթին, դժգոհում էր, թէ «ժողովուրդը հիւանդութեան ժամանակ Եկեղեցուց սուրբ իւղը ստանալու փոխարէն, որը բժշկութիւն է հոգու եւ մարմնի, շտապում էր վհուկների մօտ: Եւ սրա արդիւնքում խորհուրդն ամբողջական անտարբերութեան է մատնուած եւ չի կիրառւում»: Տես B. Poschmann, Penance and Anointing of the Sick, էջ 239:

59 Այս մասին տես Խոսրով Անձեւացի, Գիրք, որ կոչի մեկնութիւն աղօթից (էջ 281), որի վաւերականութեան խնդրին եւ մասնաւոր քննութեանը կ՛անդրադառնանք իր տեղում:

վարձահատուցում պահանջելը, որը ժողովուրդն ի վիճակի չէր կատարելու[60]: Սակայն ամենաէական պատճառը, մեր կարծիքով, աւելի առնչուած է աստուածաբանական մեկնաբանութեան ու հիմնաւորման հետ, որով խորհուրդը ներառում է մի քանի յատկանիշներ ու ինքն իր մէջ փուլային զարգացում կրում՝ առաջին հայեացքից անհասկանալի՝ տեղի տալով թուացեալ շփոթի[61]: Աւելի պարզ լինելու համար ասենք, որ օծումը՝ որպէս հիւանդի ապաշխարութեան մասնաւոր մի հատուած, կարող էր սկզբունքային պատճառ լինել հաւատացեալների համար նրա նկատմամբ դժգոհութիւն ցուցաբերելու առումով: Նախկինում ապաշխարութիւնն ընդհանրական էր, եւ երբ բժշկուելու հնարաւորութիւն էր ծագում, դրւում էին որոշակի պատասխանատուութիւններ՝ կապուած յատկապէս կենցաղավարութեան եւ սեռական զսպուածութեան հետ: Կարծւում էր, որ օծումը՝ որպէս հիւանդի ապաշխարութեան յատկանշական տարրը, որը խորքում վաղ շրջանի ապաշխարութեան հանդիսաւոր ծէսի հետ էր առնչւում, թելադրում էր որոշակի պարտականութիւններ, եւ ովքեր ստանում էին այն, պէտք է հրաժարուէին ամուսնական յարաբերութիւնից, մսակերութիւնից եւ այլն: Այս գաղափարը մի բնական խոչընդոտ էր խորհրդի կիրառման ու լայն տարածում գտնելու համար եւ արդիւնքում, եթէ այն ամբողջութեամբ չմերժուեց, ապա յետաձգուեց մինչեւ կեանքի վերջին վայրկեանը[62]:

60 Ա. Տէր-Միքելեան, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ Քրիստոնէական, էջ 464, նաեւ B. Poschmann, Penance and Anointing of the Sick, էջ 243—44: Թերեւս սա աչքի առնելն ունենալով է, որ Ստեփանոս Օրբելեանը չի քաջալերում ոչ թէ խորհրդի կատարումը, այլ աղճատուած գաղափարը, որ է՝ «սակաւ դրամիկ մսխել, եւ ձէթ օրհնել եւ արդարանալ» (տես «Պատմութիւն Նահանգին Սիսական», էջ 459):

61 Բնականից այն կարող էր ընկալուել որպէս մի քանի խորհուրդների խառնուրդ, որովհետեւ պարունակում էր ապաշխարութեան տարրեր, ինչպէս նաեւ դիւահալածութիւն, հաղորդութիւն, օծում եւ կարող էր նաեւ անտեղի համարուել:

62 Թերեւս սա է բուն պատճառը, որ խորհուրդը յետագայում Ժ—ԺԱ դարերում, բնութագրուեց որպէս «Վերջին օծում» (Extrema Unctio) եւ կիրառութեան մէջ դրուեց ԺԲ դարից: Այս կերպ օծումը դարձաւ խորհուրդ առաւելապէս մահացողի համար, թէեւ այն չէր համապատասխանում ոչ նրա էութեանը՝ որպէս հիւանդութեան դարմանում, եւ ոչ էլ Եկեղեցու ուսուցմանը: Ցաւալին այն է, որ ցայսօր Հայ Եկեղեցու գրեթէ բոլոր դաւանական ձեռնարկները, ներառեալ սբ Գրիգոր Տաթեւացին, Հիւանդաց օծումը լատինականի նման համարում են Վերջին օծում, թէեւ 1962—65 թուականների Վատիկանի Բ պատմական ժողովը սրբագրեց այս սխալը եւ վերադարձաւ խորհրդի նախնական որակմանը որպէս Օծումն հիւանդաց: Այս մասին կը խօսենք աւելի ուշ:

Վերադառնալով մեր սկզբնական մտքին՝ նշենք, որ Հայ Եկեղեցու կեանքում երեքդարեայ լռութիւնից յետոյ Հիւանդաց օծման իւղի եւ խորհրդի մասին կանոնական եւ ծիսական խնդիրը վերստին արծարծւում է այս անգամ սբ Յովհան Օձնեցի հայրապետի կողմից, Դուինի Դ ժողովում (719): Սոյն ժողովը գումարուել է ի խնդիր Եկեղեցու բարեկարգութեան եւ բարեզարդութեան, երբ «ի յոլովագոյն եւ ի ծանր իրս անկարգութիւն բազմացեալ, ոչ միայն ի ժողովրդականս, այլ առաւել յուխտի մանկունս, եւ յառաջնորդս եկեղեցեաց...»[63]:

Արդէն իսկ ժողովի բացման «Ատենաբանութեան» մէջ Օձնեցի հայրապետն ընդգծում է «ժամանակի պէտքերը եւ կարեւոր խնդիրները»[64], որոնց թւում եւ մի ամբողջ գլուխ յատկացուած է Հայ Եկեղեցում ընդհանրապէս իւղի կիրառմանը, որի ոչ ուղղափառ մեկնաբանութիւնը եւ զանազան այլ պատճառներ արդիւնք են «խառնաբնդոր եւ եղծագործ սովորութեանց»[65]: Ի հակադրումն՝ սբ Յովհաննն առաջադրում եւ զարգացնում է իւղի ներգործական շնորհի խորհրդապաշտական նշանակութիւնն ու աստուածաբանութիւնը՝ որպէս «առհաւատչեայ Հոգւոյն»[66]: Թէպէտեւ «Հոգին մի է», սակայն խորհրդական ներգործութիւնը եւ գործադրութեան եղանակը՝ տարբեր, եւ, հետեւաբար, իւրաքանչիւր վիճակի համար նախատեսուած աղօթքն ու գործառութիւնն են սահմանում նպատակը: Այսինքն՝ ինչպէս Մակար հայրապետի կանոնական կարգադրութեան պարագային, այս դէպքում եւս անհրաժեշտ է յստակ զանազանել իւղի կիրարկութեան շնորհական տարբեր ներգործութիւններն ու տնտեսութիւնը, «որովք փրկեալք լինիմք»[67]: Այս առումով մեր ուշադրութիւնը գրաւում է այն հանգամանքը, որ նախասահմանուած իւրաքանչիւր իւղ իմաստ է ստանում որոշակի արարողակարգի՝ ծիսական խորհրդի մէջ: Այստեղից տրամաբանական հետեւողութեամբ՝ «ի հիւանդութեանն՝ զառողջութիւնն ունիմք կարօտութիւն, ոչ եւս եւ զայլոցն: Սոցա ապաքէն եւ աղօթքն եւ քարոզութիւնք եւ օծմունքն՝ բաժանաբար ըստ իւրաքանչիւրոցն վայել է լինել խորհրդոյ»[68], ուստի եւ այն չի կարող միաձանգուած լինել այլ

63 Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, էջ 13

64 Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Ա, էջ 828

65 Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, էջ 17

66 Անդ, էջ 16

67 Անդ, էջ 16

68 Անդ, էջ 17

խորհուրդների հետ՝ յայտնապէս կամ ծածկապէս, ինչպէս յետագայում որոշակի մտադրութեամբ թելադրում է սբ Գրիգոր Տաթեւացին[69]:

Քանի որ «Ատենաբանութիւնը» ժողովի ընդհանուր ուրուագիծն է, բնականաբար նրանից է բխում նաեւ Յովհան Օձնեցու կանոնական կարգադրութիւնը՝ ամփոփուած 32 կանոններում: Դրանցից երեքը՝ Թ, Ժ եւ ԺԱ, վերաբերում են իւղի ծիսական բարեփառ գործածութեանը: Իւղի տեսակները երեքն են՝ ա) սուրբ Միւռոն[70], բ) երախայից

69 Տես «Գիրք հարցմանց», էջ 592, 604: Այս խնդրին թէեւ կ'անդրադառնանք, սակայն հարկ է նշել, որ ընդգծուած հակասութիւնն ակներեւ է սբ Յովհան Օձնեցու եւ սբ Գրիգոր Տաթեւացու կարգադրութիւնների եւ խնդրի վերլուծութիւնների միջեւ:

70 Մեզ համար առաջին հայեացքից անհասկանալի էր յատկապէս սուրբ Միւռոնի օրհնութեան իրաւասութեան մասին այս կանոնը, որում Յովհան Օձնեցի հայրապետն ասում է. «Պարտ եւ արժան է զսուրբ Միւռոնն, այսինքն է՝ զիւղն անուշահոտութեան, հայրապետին աւրհնել, եւ իւրաքանչիւրոց եպիսկոպոսաց միանգամ ի Զատկին հինգշաբթի աւր, որպէս եւ հրամայեալն է: Եւ քահանայից առ մկրտեալսն մատուցանել միայն յորդեգրութեանն աւծումն, որ յետ մկրտութեանն լինի» (տես Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 520): Խօսելով Միւռոնի կանոնականացման պատմութեան մասին եւ յատկապէս մէջբերելով Յովհան Օձնեցու վերոբերեալ կանոնական կարգադրութիւնը՝ Վարդան Դեւրիկեանը գրում է, որ Միւռոնի օրհնութիւնը կարող է միայն կաթողիկոսը կատարել՝ ըստ Յովհան Օձնեցու սահմանած կանոնների. «Պարտ եւ արժան է զսուրբ միւռոնն, այսինքն է՝ զիւղն անուշահոտութեան, հայրապետին աւրհնել»: Փաստօրէն աշխատասիրողը զանց է առել այս կարգադրութեան երկրորդ՝ «եւ իւրաքանչիւրոց եպիսկոպոսաց միանգամ ի Զատկին հինգշաբթի աւր» հատուածը՝ այսպիսով յանգելով սխալ եզրակացութեան (տես Սրբալոյս Միւռոն, Վարդան Դեւրիկեան, Սրբալոյս Միւռոնի օրհնութեան կանոնը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001, էջ 19): Հետեւելով Օձնեցի հայրապետի կարգադրութեանը՝ մեր կարծիքով, մինչեւ Ը դար Միւռոնի օրհնութիւնը եղել է ոչ միայն հայրապետի իրաւունքը, այլեւ թեմական եպիսկոպոսների՝ տարին մէկ անգամ, Աւագ հինգշաբթի օրը: Ուշագրաւ է կանոնի վերջում «որպէս եւ հրամայեալն է» արտայայտութիւնը, որը յղումն է աւելի վաղ աւանդութեան: Մեր ուսումնասիրութեան արդիւնքում հանդիպեցինք մի քանի տեղեկութիւնների, որոնք լոյս են սփռում Յովհան Օձնեցու վերոնշեալ ցուցման վրայ: Վաղ Եկեղեցու աւանդութեամբ (մինչեւ Ե դար)՝ Արեւմուտքում Միւռոնը սրբագործւում էր թեմական եպիսկոպոսների կողմից, իսկ Արեւելքում՝ հայրապետի՝ Աւագ հինգշաբթի օրը (տես Encyclopedia of Religion and Ethics, vol. XII, էջ 510—11): Այս առումով հետաքրքրական է յատկապէս Ասորի Եկեղեցու ծիսական կարգաւորութիւնը, որը կատարւում է մասնակի արեւմտեան եւ ասորական, մասնաւորապէս հին ասորական, ապաշխարութեան խորհրդի միախառնութեամբ: Եւ յատկապէս նշանա-

իւղ, գ) հիւանդաց իւղ[71]: Բնականաբար մեզ յուզող խնդիրը վերջին՝ հիւանդաց իւղի պարագան է, որն, ինչպէս արդէն նշեցինք, իմաստ եւ

կալի է այն փաստը, որ հիւանդաց իւղն օրհնւում է եպիսկոպոսի կողմից Աւագ հինգշաբթի օրը (տես D. Attwater, The Christian Churches of the East, էջ 156): Սրա նմանութիւնը կամ անդրադարձը գտնում ենք նաեւ Հայ Եկեղեցում Աւագ հինգշաբթի տեղի ունեցող իւղի օրհնութեան կարգի առկայութեամբ, որի ժամանակ ոչ թէ ձէթ, այլ կարագ է օրհնւում: Սակայն չկարողացանք պարզել, թէ որ ժամանակից է Հայ Եկեղեցին սկսել ձէթի փոխարէն կարագ օրհնել եւ ինչ աւանդութեան վրայ է այն հիմնուած, քանի որ այս օրհնութիւնը կատարւում է պահեցողութեան շրջանում, եւ տրամաբանօրէն չէր կարելի կենդանական իւղ օգտագործել: Ուշագրաւ է նաեւ իւղի օրհնութեան Աւագ հինգշաբթի կամ Աւագ շաբաթ կատարուելու մեկնաբանութիւնը, որ երկբնոյթ է՝ գործնական եւ խորհրդանշական: Վաղ Եկեղեցու Արեւելեան հատուածում հաւաքական ապաշխարութիւնը տեղի է ունեցել այս երկու օրերին, իսկ Արեւմուտքում այս վերջին օրը սովորաբար կատարւում էր նաեւ իւղով օծում, որում իւղը համարւում էր թողութեան նշանակ (А. И. Успенскій, Таинство Елеосвященія, с. 88): Ըստ այսմ էլ թերեւս Յովհան Օձնեցին արտայայտել է Եկեղեցու երկու ճիւղերի աւանդութիւնն ու ընկալումը, որով իրաւունք էր տրւում նաեւ եպիսկոպոսներին կատարել սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը: Եւ թերեւս աւելի ուշ շրջանում կենտրոնական ուժեղ հայրապետական իշխանութիւն ունենալու եւ ժամանակի պառակտումներն ու կենտրոնախոյս շարժումները կանխելու նպատակով, ինչպէս նաեւ հայրապետի՝ ազգային միասնութեան գերագոյն խորհրդանիշ լինելու պատճառով է Միւռոնի օրհնութիւնը վերապահուել միմիայն նրան: Այսու, մեր կարծիքով, այն ենթադրութիւնը, թէ հայրապետի կողմից Միւռոն օրհնելու սովորոյթը «վերջնականապէս կանոնակարգւում է Ը դարի մեծանուն հայրապետ Յովհան Օձնեցու» կողմից (տես Սրբալոյս Միւռոն, Յակոբ Քեռսէեան, Սրբալոյս Միւռոնի խորհուրդը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001, էջ 9), ճիշտ չէ: Այլ այն վերջնականապէս հաստատուել է Օձնեցուց մօտ 50 տարի յետոյ Սիոն կաթողիկոսի կողմից գումարուած Պարտաւի ժողովի (768) Ե կանոնով (տես Կանոնագիրք Հայոց, Բ, էջ 7):

71 Տես Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 519—520, նաեւ Յովհաննու Իմաստասիրի Աւծնեցւոյ մատենագրութիւնք, էջ 36—37: Հարկ է անդրադառնալ, որ Օձնեցու այսպիսի դասակարգումն անծանօթ չի եղել Ընդհանրական Եկեղեցու ծիսական համակարգին, որի մասին մանրակրկիտ տեղեկութիւն է հաղորդում M. L. Duchesne-ը՝ նկարագրելով Միւռոնի եւ միւս իւղերի օրհնութեան կարգը, ըստ որի՝ Աւագ շաբաթի հինգշաբթի օրը Միւռոնի պատարագն էր մատուցւում, որի ժամանակ օրհնւում էին սուրբ իւղերը, որոնք օգտագործւում էին Մկրտութեան ժամանակ: Նրանք պատրաստւում էին երկու առանձին կաթսաներում (ampullae), որոնցից մէկը զուտ իւղ էր պարունակում, իսկ միւսն անուշաբոյր էր՝ միախառնուած բալասանին: Օրհնութեան կանոնի աւարտին հաւատացեալները իւղի փոքրիկ ամաններ էին բերում, որպէսզի դրանք եւս օրհ-

բովանդակութիւն է ստանում սահմանուած արարողակարգի մէջ, եւ, հետեւաբար, Յովհան Օձնեցին անուղղակիօրէն այն ընկալում է որպէս տեսանելի, շօշափելի միջոցը անտեսանելի շնորհի ստացման, այսինքն՝ յատուկ խորհրդի մէջ կիրառուած, որն էլ, մեր կարծիքով, Հիւանդաց խորհուրդն է եւ ոչ թէ Դրոշմի կամ Մկրտութեան: Հարցն այլ տեսանկիւնից դիտարկելով՝ կարելի է նաեւ մտածել, որ այն միգուցէ նորամուծութիւն է Օձնեցու կողմից կամ չբաժանուելու ցանկութիւն Ընդհանրական Եկեղեցու փորձառութիւնից: Սակայն ամբողջ կանոնախմբի քննութիւնը յստակ է դարձնում, թէ նա ինչպիսի չափանիշով է առաջնորդուել: Այսպէս՝ Ը կանոնը կարծես յետագայ բոլոր ծիսական կանոնների նախամուտը կամ նախաբանն է, որում յստակօրէն նշուած է Յովհան Օձնեցու վերաբերմունքը հանդէպ փոխառելի երեւոյթների՝ ընդունելով միայն այն, ինչն է «ըստ աւանդելոյ մեզ սրբոյն Գրիգորի եւ չխոնարհել յայլ ազգաց քրիստոնէից յաւանդութիւնս... եւ մեզ ի նմին պարտ է յարամնալ եւ չթողուլ ի բաց, եւ չառնել նորաձեւս ինչ»[72]: Ուստի համոզուած կարող ենք ասել, որ միւս կանոնները եւս հաստատուել են այս սկզբունքով ու հիմնաւորութեամբ:

Այս կէտում պարտ է անդրադառնալ Մաղաքիա արք. Օրմանեանի դիտարկմանը, ով, ինչպէս ամենայն ուրեք, այստեղ եւս փորձում է իւրայատուկ հնարագիտութեամբ շրջանցել Հայ Եկեղեցում սրբագործուած Հիւանդաց օծման առկայութեան փաստը: Նախապէս հիմք պատրաստելով յետագայում իր ասելիքի համար՝ Օրմանեան սրբազանը նշում է. «...պէտք է հետեւցնել, թէ հակառակ ժամանակին շփոթ կացութեան, բացարձակապէս ծանր կէտեր չեն յիշուածները»[73]: Մենք բնականաբար չենք կարող ասել, թէ ըստ Մաղաքիա պատրիարքի որոնք են ծանր կամ թեթեւ կէտերի սահմանումները, սակայն յստակ է, որ կանոնական կէտերը հաստատուում էին Եկեղեցու կեանքում տեղ գտած զեղծումները կանխելու եւ այն ուղիղ դաւանութեան ընթացքի մէջ պահելու մտադրութեամբ, եւ մանաւանդ Օձնեցին ինքն իսկ կարեւոր է համարում չեշտել, որ Հայ Եկեղեցում բազմացել են «ծանր իրս անկարգութեան»[74]: Հակառակը պնդելով, սակայն, կարող ենք ասել, որ Օձնեցու կանոնախմբում ընդգրկուած խնդիրները մշտապէս եղել են Հայոց հայրապետերի եւ վարդապետների ուշադրութեան կենտրոնում, որոնք են Հաղորդութեան խորհուրդը՝ իր բոլոր յատկանիշներով, սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը, Պասկի եւ Մկրտութեան խորհուրդները, «Երեքսրբեանի» հարցը, ոչ ուղղափառ՝ աղանդաւորական շարժումների խնդիրները եւ այլն: Մեր կարծիքով՝ Օրմանեան սրբազանի՝ այսպիսի արտայայտութիւն կատարելու շարժառիթը կամ պատճառը աւելի յետոյ իր իսկ բերած փաստարկին չհակասելու մտադրութիւնն է, ըստ որի՝ «հայերը իբր բարեպաշտական մի գործ օծումը արգիլելու ալ պէտք չեն զգացած, եւ այս հոգւով վարուած է Օձնեցին, երբ գրած է, թէ արժան է զհիւանդացն զձէթ քահանային օրհնել ըստ իւրում աղօթիցն, մինչ միւռոնին համար կը գրէ թէ պարտ եւ արժան է»[75]: Յաւալիօրէն, Օրմանեան պատրիարքը, ինչպէս արդէն անդրադարձել ենք, միտումնաւոր «անուշադրութիւն» է ցուցաբերում փաստերի նկատմամբ: Նախ՝ որ Օձնեցու ժամանակաշրջանում որեւէ խնդիր չէր դրուած արգելելու կամ չարգելելու համար, որն աւելի առարկայական էր յետագայի հայ-լատինական յարաբերութիւնների ժամանակ: Երկրորդ՝ Օձնեցին ոչ թէ արգելելու պէտք չի զգացել, այլ ընդհակառակը՝ նա զարգացրել եւ իմաստ է հաղորդել այս կարգադրութեանը՝ բարձրացնելով այն կանոնական դրութեան մակարդակի: Երրորդ՝ ճիշտ է, որ Օձնեցին հիւանդաց իւղով օծման դէպքում բաւարարւում է՝ միայն արժան է ասե-

նուէին նրանց սեփական պէտքերի եւ յատկապէս հիւանդների համար: Տես M. L. Duchesne, Christian Worship, its Origin and Evolution, tr. M. L. Mcclure, London, Society for Promoting Christian Knowledge, 1931, էջ 305: Երուսաղէմի Սուրբ Յակոբանց ձեռագրատան թիւ 2298 ձեռագիրը պարունակում է հետեւեալ կարգադրութիւնը. «Օրհնութիւն իւղոյն վերջին օծման հիւանդաց: Ի մեծի հինգշաբթին, զկնի պատարագին, եպիսկոպոսն նոյն զգեստիւքն, թագն ի գլուխն եւ գաւազանն ի ձեռն, գայ ի տեղին, ուր պատրաստեալ է իւղն, եւ լինիցի ձէթ ձիթենեաց» (Մայր Յուցակ Ձեռ. Սրբ. Յակոբեանց, Մ. Մաշտոց, 2298, էջ 597): Այս կարգադրութիւնը, սակայն, մեր կարծիքով, լատինական կարգի հայերէն թարգմանութիւնն է: Հետաքրքիր է այն փաստը, որ երեք իւղերի զանազանութիւնը կատարելիս Յովհան Օձնեցին կարծես հետեւում է կամ Հայ Եկեղեցում արդէն իսկ գոյութիւն ունեցող կանոնակարգին, որը հաստատուել էր սբ Գրիգոր Լուսաւորչի կամ, ինչպէս տեսանք, սբ Վրթանէսի կողմից, կամ էլ մինչեւ Զ դարը եղած Ընդհանրական Եկեղեցու (յատկապէս արեւմտեան) փորձառութեանը, ըստ որի՝ նշւում են իւղի երեք տեսակներ. ա) սուրբ իւղ՝ օծելու համար երախայի կուրծքն ու թիկնամէջը ընկզմումից առաջ, բ) սուրբ Միւռոն՝ ընկզմումից յետոյ, գ) իւղ հիւանդաց: Տես Encyclopedia of Religion and Ethics, vol. XII, էջ 510:

72 Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 519

73 Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Ա, էջ 830—31

74 Յովհաննու Իմաստասիրի Աւծնեցւոյ մատենագրութիւնք, էջ 13

75 Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Բ, էջ 1634

լով, սակայն այն չի նուազեցնում արծարծուող նիւթի կարեւորութիւնը, որովհետեւ Ը կանոնում, խօսելով անխմոր հացի եւ անապակ գինու մասին, դարձեալ շեշտում է, որ արժան է՝ առանց աւելացնելու պարտ է ցուցումը: Հետեւաբար, եթէ առաջնորդուենք Օրմանեան սրբազանի տրամաբանութեամբ, կը յայտնուենք մի անլուծելի թիւրիմացութեան մէջ, ըստ որի՝ անխմոր հացի եւ անապակ գինու գործածութիւնը Հայ Եկեղեցում երբեւէ կարեւոր խնդիր չի եղել, այլ սոսկ բարեպաշտական մի գործ: Մինչդեռ վերջինս առանցքային նշանակութիւն եւ փրկաբանական անուրանալի արժէք է ունեցել Հայ Եկեղեցու ողջ պատմութեան ընթացքում: Հետեւաբար, հանրագումարի բերելով կարող ենք եզրակացնել, որ Հայ Եկեղեցին Ը դարում կիրառել է Հիւանդաց օծման խորհուրդը եւ այն էլ մեծագոյն հեղինակութիւններից մէկի՝ սբ Յովհան Օձնեցի հայրապետի հաստատագրմամբ:

Այսուհանդերձ, ինչպէս մինչեւ Ե դարն ընկած ժամանակահատուածի ուսումնասիրութեան պարագային, այստեղ եւս կարեւոր ենք համարում անդրադառնալ Ը եւ յետագայ դարերում (մասնաւորապէս մինչեւ ԺԳ դար) Հիւանդաց օծման խորհրդի՝ Ընդհանրական Եկեղեցու ծոցում տեղ գտած պատմական եւ աստուածաբանական զարգացումներին՝ նախ համապարփակ պատկերացում ունենալու առումով եւ ապա, որ ամենակարեւորն է, այն պատճառով, որ ճիշտ այս ժամանակահատուածում է վաղ Եկեղեցում սրբագործուած Հիւանդաց օծման խորհուրդը իմաստային վերափոխման ենթարկուել՝ վերանուանուելով «Վերջին օծում», յատկապէս սխոլաստ վարդապետների ջանքերով, որն էլ անհասկանալի մեկնաբանութեամբ վաւերացուել է նաեւ Հայ Եկեղեցու կողմից: Սակայն հարկ է նշել, որ այս խնդրով զբաղուել է մասնաւորապէս Եկեղեցու Արեւմտեան հատուածը, որին բոլորովին չի արձագանքել Արեւելքը՝ արդիւնքում նոյնիսկ քննադատելով խորհրդի արեւմտեան սխալ ըմբռնումը[76]:

76 *Տես Іеромонах Венедикт, Къ исторіи Православнаго Богослуженія, с. 32—33; Прот. Михаил Архангельскій, О тайне Св. Елея, с. 2—4; Протопресвитер Михаил Помазанский, Догматическое Богословие, "Христианская жизнь", Клин, 2001, с. 297; Иеромонах Илларион Алфеев, Таинство веры, Братство Святителя Тихона, Москва-Клин, 1996, с. 166; Timothy Ware, The Orthodox Church, Penguin Books, Suffolk, 1975, էջ 303; Paul Evdokimov, Biblioteque Theologique, L'Orthodoxie, Edite en Suisse, 1959, էջ 299:*

Այս իմաստով առաջին եւ թերեւս ամենակարեւոր վկայութիւններից մէկը Ը դարի անգլիացի նշանաւոր սուրբգրային մեկնիչ եւ Անգլիայի պատմահայր Բեդ Վեներաբլինն է (Պատուական) (735), ով լինելով սուրբ Յովհան Օձնեցու ժամանակակիցը՝ հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում իր ժամանակաշրջանում շարունակուող Հիւանդների օծման՝ Եկեղեցու փորձառութեան մասին[77]: Արձանագրելով հանդերձ Հիւանդաց օծման խորհրդի կիրառութեան անհրաժեշտութիւնը՝ նա լուսաբանում է խորհրդի հետ առնչութիւն ունեցող մի քանի սկզբունքներ եւ ժամանակի ընկալումը: Բեդն ընդունում է խորհրդի առաքելական վաւերականութիւնը, ապա հետեւելով Ինոկենտիոս պապի կարգադրութեանը՝ թոյլատրում նաեւ հաւատացեալներին կատարել օրհնուած իւղով օծում, այնուհետեւ իւրօրինակ շեշտադրութեամբ անդրադառնում խորհրդի ուղղափառ ընկալմանը, ըստ որի՝ այն գործադրւում է ոչ թէ մեղքերի թողութեան, որի միակ միջոցը խոստովանութիւնն է[78], այլ միայն բժշկութեան[79] համար: Աւելի ուշ շրջանում,

77 *Ի դէպ, Բեդը Յակոբոս առաքելի ընդհանրական թղթի ամբողջական մեկնութեան ամենավաղ մեկնիչն է:*

78 *Ըստ ուղղափառ ընկալման՝ Հիւանդաց օծումը չի կարող տեղի ունենալ սոսկ յետմկրտութենական մեղքերի թողութեան համար լատինական ձեւակերպմամբ: Հիւանդների օծումը յետագայ դարերի զարգացումով փոխեց իր ներքին իմաստը՝ բժշկութիւնից վերածուելով մեղքերի թողութեան համար կատարուող խորհրդի. հաւատացեալներն ընդունում էին, թէ ապաշխարութեան եւ խոստովանութեան ժամանակ մոռացուած մեղքերը կամ յետմկրտութենական մեղքերի հետեւանքները կարող են ջնջուել Հիւանդաց օծման խորհրդով: Մեր կարծիքով՝ Հայ Եկեղեցին ընդդիմացել է խորհրդի այսպիսի իմաստային փոփոխութեանը եւ ոչ թէ խորհրդին ամբողջութեամբ, որը նոյնականօրէն տեսնում ենք նաեւ Յոյն Եկեղեցու պարագային:*

79 *Բեդը նշում է. «Աւետարանում կարդում ենք, որ առաքեալները նոյնպէս կատարել են այս խորհուրդը: Եւ այսօր եւս շարունակւում է այդ սովորոյթը, որ հիւանդները պէտք է քահանաների կողմից օծուեն օրհնուած իւղով եւ բուժուեն զուգորդուող աղօթքով: Եւ ոչ միայն քահանաները, այլեւ, ինչպէս գրում է Ինոկենտիոս պապը, բոլոր քրիստոնեաները եւս կարող են այս նոյն իւղով օծուել իրենց կամ իրենց ընտանիքի պահանջի դէպքում: Այսուամենայնիւ, այս իւղը պէտք է պատրաստուի միայն եպիսկոպոսի կողմից... որը պէտք է լինի Տիրոջ անունով: Եթէ հիւանդը մեղքի մէջ է, պէտք է խոստովանի քահանային այն ջնջելու եւ իր վիճակը բարելաւելու համար, որով եւ մեղքերի թողութիւն կը ստանայ, քանզի մեղքը չի կարող ներուել առանց խոստովանութեան» (Sacraments of Forgiveness, էջ 286): Նոյն միտքը զարգացնում է նաեւ Սարգիս Շնորհալին:*

սակայն, Կառլոսեան բարեկարգութիւնն[80] ու յետագայում այս ալիքից բխած զանազան տեղական ժողովներն էին, որ ուղղակիօրէն կարեւորեցին խորհրդի կիրառումը: Այն յատկապէս շեշտուած է Շառլմագնի (Կառլոս Մեծ)[81] (769), ինչպէս նաեւ Թէոդոլֆ Օռլէանցու[82] (789) հրահանգներում եւ Շալոնի[83] (813), Ախենի[84] (836), Մայնցի[85] (847), Պաւի-

80 Կառլոս Մեծի (748—814) Ախենի պալատական դպրոցի կողմից Եւրոպայում իրականացուած բարեկարգութեան մասին է, որը գլխաւորում էր անգլիացի Ալքուին Եորքցին:

81 Կառլոս Մեծի ընդունած «Ընդհանուր կանոն»-ը թելադրում է. «Հիւանդները եւ ապաշխարողները չպէտք է մահանան առանց օրհնուած իւղի օծման, ինչպէս նաեւ առանց հաշտութեան եւ հաղորդութեան» (Sacraments of Forgiveness, էջ 290):

82 «Այս օծումը պէտք է կատարուի ոչ միայն քահանաների, այլեւ աշխարհականների, ոչ միայն տղամարդկանց, այլեւ կանանց վրայ, երբ անհրաժեշտ է, որովհետեւ մենք կարդում ենք, որ սուրբ հայրերից ոմանք իւղով օծեցին հիւանդ աղջիկների ու տղաների, եւ նրանք բուժուեցին ու վերականգնեցին իրենց առողջութիւնը»: Սա վկայում է այն մասին, որ վաղ եկեղեցում օծումն անհրաժեշտութիւն է եղել, եւ բացի սրանից, այն գործադրուել է բուժման նպատակով (տես Иеромонах Венедикт, Къ исторіи Православнаго Богослуженія, с. 30):

83 Կանոն 48: «Ըստ Յակոբոս առաքեալի, ում հետ համաձայնում են նաեւ հայրերի գրուածքները, հիւանդը պէտք է օծուի իւղով, որն օրհնուած է եպիսկոպոսի կողմից: Համապատասխանաբար, այսպիսի ապաքինումը, որը բուժում է հոգու եւ մարմնի տկարութիւնը, չպէտք է անհոգութեամբ կատարուի» (Sacraments of Forgiveness, էջ 291):

84 Գլուխ Բ, Կանոն 8: «Պարտ է, որ տարին առնուազն մէկ անգամ Աւագ հինգշաբթի, որը Տիրոջ Ընթրիքի օրն է, սուրբ իւղով օծումը, որն ունի հիւանդի փրկութեան խորհուրդը, չարհամարհուի բոլոր քաղաքների եպիսկոպոսների կողմից, որն անտարբերութեան էր մատնուած ցայսօր: Այլ օրհնութիւնը պէտք է կատարուի մեծ հաւատքով, համաձայն առաքելական աւանդութեան եւ կանոնական հրամանների» (Sacraments of Forgiveness, էջ 291):

85 Ժողովը գումարուել է Ալքուինի աշակերտ Ռաբան Մորի գլխաւորութեամբ: Ժողովի որոշումը վերաբերում էր այն հիւանդներին, ովքեր արդէն իսկ խոստովանել էին իրենց խոստովանահօրը, սակայն դեռեւս թողութիւն չստացած ապաշխարողներ էին: Այսինքն՝ նրանք թողութիւնից յետոյ պէտք է օծում եւ Հաղորդութիւն ստանային (Sacraments of Forgiveness, էջ 291):

այի[86] (850) ժողովներում: Ուշադրութեան արժանի է նաեւ Բոնիֆացիոսին վերագրուող կանոնը (Թ դար), որում քահանաներին թելադրւում էր ճանապարհորդութիւնների Միւռոնի եւ Հաղորդութեան հետ մշտապէս ունենալ նաեւ օրհնուած իւղը[87]: Ուստիեւ, քանի որ օծումը Հաղորդութեանը հաւասարազօր է դասւում, յստակ է դառնում նրա խորհրդական բնոյթ ունենալու ընկալումը: Այսուամենայնիւ, մենք արդէն անդրադարձել ենք, որ յատկապէս այս շրջանում, չնայած բազում հրահանգներին եւ մեկնաբանութիւններին, զանազան պատճառներով Հիւանդաց օծման խորհուրդը մատնուել էր անտարբերութեան եւ արդիւնքում այն թողնուեց կեանքի վերջին վայրկեանին[88]: Այլեւ վիճակն աւելի բարդացաւ, երբ մտաւ քահանային ծառայութեան համար վարձատրելու սովորութիւնը, որը նախկինում լինելով ազատ նուիրատուութիւն՝ հնարաւորութեան եւ ցանկութեան համապատասխան, այս շրջանում դարձաւ պարտադիր պայման, որը զգալի ծանր պարտականութիւն էր մասնաւորապէս աղքատների համար[89]: Այսուհանդերձ, խորհրդի անտեսման կամ յետաձգման պատճառն այն սխալ ընկալումն էր, ըստ որի՝ խորհրդի կիրառումը որոշակի պայմաններ էր թելադրում կեանքի մնացած հատուածի համար, որը, մեր կարծիքով,

86 Գլուխ 8: «...Անշուշտ սա մեծ խորհուրդ է, եւ եթէ մէկը մօտենում է նրան, ապա նրա մեղքերը մաքրւում են, եւ որպէս արդիւնք՝ վերականգնւում է մարմնի առողջութիւնը: Բայց պէտք է հասկանալ, որ եթէ հիւանդն ապաշխարութեան մէջ է, նա չի կարող այս խորհրդի բժշկութեանն արժանանալ, մինչեւ նախ թողութիւն չստանայ եւ ապա արժանանայ Քրիստոսի մարմնին եւ արեանը: Քանզի, ում համար միւս խորհուրդներն արգելուած են, այս մէկին եւս չի կարող արժանանալ»: Այս դրոյթն ըստ էութեան կրկնում է Ինոկենտիոս Ա-ի կարգադրութիւնը (Sacraments of Forgiveness, էջ 292):

87 «Քահանաները պէտք է ճանապարհորդեն ո՛չ առանց սրբազան Միւռոնի, օրհնուած իւղի եւ կեցուցիչ Հաղորդութեան» (Sacraments of Forgiveness, էջ 292):

88 Տես վերը, էջ 25—26:

89 Poschmann-ը, ուսումնասիրելով այս ժամանակաշրջանը, հետաքրքրական մանրամասներ է հաղորդում. «Հիւանդների օծումը հնարաւորութիւն էր ստեղծում ազահ քահանաների համար: Այսպիսով շատ ծխատէր քահանաներ պահանջում էին սփռոցը, որի վրայ հիւանդն օծւում էր, ուրիշներ պահանջում էին մոմերը, որոնք լուցւում էին այդ պահին: Շատերը յայտարարում էին, որ օծման համար անհրաժեշտ է մի քանի քահանաների ներկայութիւն եւ տասներկու մոմերի առկայութիւն եւ որ որեւէ մէկը չի կարող այն պահանջել իրագործելու, ով առնուազն երկու կով չի կարող վճարել» (B. Poschmann, Penance and Anointing of the Sick, էջ 244):

բխում էր ապաշխարութեան եւ Հիւանդաց օծման խորհուրդների ոչ ճիշտ մեկնաբանութիւնից եւ դրանք չտարանջատելու շփոթից[90]: Եւ այս շրջանից սկսեալ, հակառակ վաղ Եկեղեցու աւանդութեան, Օծումը մշտապէս իրականացւում է խոստովանութեանը, Ապաշխարութեան եւ Հաղորդութեան խորհուրդներին միախառնուած եւ թիւրիմացաբար ներգրաււում Ապաշխարութեան խորհրդի մէջ՝ համարուելով լրացում եւ ոչ թէ առանձին, ինքնուրոյն խորհուրդ: Հետեւաբար, ինչպէս արդէն նշել ենք, խորհուրդը Հիւանդաց օծումից վերածուեց Վերջին օծումի, այսինքն՝ խորհուրդ մեռնողների համար եւ ոչ թէ բժշկութեան, որն էլ աստուածաբանական հիմնաւորում եւ ձեւակերպում ստացաւ սխոլաստիկ շրջանում եւ վաւերացուեց Տրիդենտեան ժողովում[91] (1545—63):

90 Տես վերը, էջ 26—27:

91 Ըստ Տրիդենտեան ժողովի ձեւակերպումների՝ «այս խորհուրդը պէտք է կատարուի միայն նրանց վրայ, ովքեր իրենց վերջին հանդրուանում են եւ մերձեցել են մահուան ու պատրաստւում են հանդիպելու Տիրոջը», եւ «այս օծութիւնը պէտք է կիրառուի հիւանդների նկատմամբ, բայց յատկապէս նրանց, ովքեր մահամերձ են, այսինքն՝ այս կեանքից մեկնելու վերջին կէտում են» (տես Catechism of the Catholic Church, Geoffrey Chapman, London, 1994, էջ 341): Ինչպէս յայտնի է, Տրիդենտեան ժողովը գումարուել է Լատին եկեղեցու ներքին կեանքը կազմաւորելու եւ պայքարելու հետզհետէ ահագնացող բողոքական շարժման դէմ: Ի շարս բազում այլ հարցերի՝ ժողովում քննարկուել եւ հաստատուել է նաեւ Հիւանդաց օծման խորհուրդը (անշուշտ, Վերջին օծման ընկալմամբ), որը միւս խորհուրդների թւում, ի բաց առեալ Մկրտութիւնն ու Հաղորդութիւնը, մերժւում էր բողոքական գործիչների կողմից: Զցանկանալով մանրամասնել խնդիրը՝ այսուհանդերձ կը փորձենք հպանցիկ ակնարկով անդրադառնալ նաեւ բողոքականների, յատկապէս նրանց առաջամարտիկների տեսակէտներին, որոնց ձայնակցել են նաեւ որոշ յունադաւան գործիչներ յանձին Կ. Գոլսի Կիւրեղ Լուկարիս պատրիարքի (1572—1638)՝ մականուանեալ Բողոքական կամ Կալվինիստ պատրիարք: Լուկարիս պատրիարքի ուսուցումը դատապարտուեց Կ. Գոլսի 1638 թ.-ի եւ Եաշի 1642 թ.-ի ժողովներում: Սպանուել է 1638 թուականին (տես Dictionary of Eastern Christianity, Blackwell, Oxford, 1999, էջ 295): Բողոքական շարժման հիմնադիր Մարտին Լութերը, մերժելով հանդերձ Հիւանդաց օծման խորհուրդը, այնուամենայնիւ, հաւատքի միջոցով մեղքերի թողութեան վերաբերեալ իր ուսուցման հիմնադրոյթներից ելնելով, ընդունում է, որ ծէսը կարող է հիւանդի հաւատքի շնորհիւ բժշկութիւն պարգեւել, սակայն նա մերժում է, որ խորհուրդը հիմնադրուել է Քրիստոսի կողմից: Բողոքական շարժման միւս կարկառուն ներկայացուցիչը՝ Ժան Կալվինը, ոչ միայն մերժում է հիւանդների օծման խորհուրդ լինելը, այլեւ այն համարում «սոսկ կեղծաւոր թաքնարխաղ» (տես Sacraments of Forgiveness, էջ 304—

Խոսրով Անձեւացի.

Հիւանդաց օծման խորհուրդը Ժ դարում եւ Մովսէս Երզնկացու խնդիրը

Արդէն իսկ Ը դարում Յովհան Օձնեցին, Հիւանդաց օծման խորհրդին վերաբերող նուրբ, յստակ ձեւակերպման կարիքը զգալով եւ լիովին այն պատկերացնելով, միեւնոյն ժամանակ ընկալում էր վտանգը, որ շփոթի եւ ոչ ճիշտ մեկնաբանութեան պատճառով այն կարող էր սխալ անդրադարձներ ունենալ, ինչը տեսանք Ընդհանրական եկեղեցում առկայ զարգացումներում: Վերոնշեալի արձագանքը գտնում ենք նաեւ Հայ Եկեղեցում Ժ դարում՝ Խոսրով Անձեւացեաց եպիսկոպոսի (900—963) մօտ: Այսու, նախքան բուն նիւթին անդրադառնալը, պիտի փորձենք ճշտել, թէ իրո՞ք Խոսրով Անձեւացին իր նշանաւոր «Մեկնութիւն կարգաց եկեղեցւոյ» հսկայածաւալ աշխատութեան մէջ արծարծել է այս խնդիրը, թէ այն սոյն աշխատութեան յետագայի խմբագիր Մովսէս վարդապետ Երզնկացու (1250/53—1323) գրչի արդիւնքն է: Այսպէս՝ բանասիրութեան մէջ եւ ընդհանրապէս Հիւանդաց օծման խորհրդի՝ Հայ Եկեղեցում գոյութիւն ունենալու խնդրով զբաղուողները վկայաբերում են Խոսրով Անձեւացու՝ Ճաշու Զ ժամի «Վասն հիւանդաց» քարոզի մեկնութիւնը[92]. «Ըստ մեծին Յակոբայ, որ ասէ. Հիւանդանայցէ.... Զգալի մարմին զգալապէս եւ զնիւթ բժշկութեանն սիրէ ըստ թանձրութեան մարմնոյն: Այլ առ ի միտս՝ իւղն յօրինակ շնորհաց Հոգւոյն Սրբոյ տուաւ, որ աներեւութաբար զներքին մարդն մաքրէ եւ յայտնապէս արտաքին մարմնոյն առողջութիւն պարգեւէ որք հաւատով յուսան: Բայց եւ զայն տեսանել պարտ է, զի եւ զիւղն աղօթքն զօրաւոր առնէ եւ դեղ բժշկութեան կատարէ: Վասն որոյ թէ երկոքին լինիցին, բարի է, եւ թէ վասն ծուլութեան կամ այլ պատճառի իրիք օծութիւն իւղոյն խափանէ, աղօթիցն լինիլ պարտ է առանց ամենայն պատճառի»[93]:

309): Այս խորհրդի մասին Անգլիայում եւ այլուր բողոքական շարժման ընդհանուր տեսակէտների մասին տես Jaroslav Pelikan, Reformation of Church and Dogma (1300—1700), The University of Chicago Press, Chicago and London, vol. 4, էջ 256—57, 293—95:

92 Տես Հ. Սամուէլ Արամեան, Հիւանդաց օծման խորհուրդը Հայ եկեղեցւոյ մէջ, էջ 10—13. Վարդան Հացունի, Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին, Վենետիկ, 1965, էջ 201—202:

93 Խոսրով եպիսկոպոս Անձեւացի, Գիրք, որ կոչի մեկնութիւն աղօթից, էջ 280

Մեր կարծիքով՝ «ժամակարգութեան մեկնութեան» թէ՛ այս եւ թէ՛ շատ այլ հատուածներ Խոսրով Անձեւացու գրչի արդիւնքը չեն, այլ պատկանում են Մովսէս Երզնկացու հեղինակութեանը: Նախ՝ որ ՄՄ անուան Մատենադարանում պահպանուող Խոսրով Անձեւացու «Բացայայտութիւն կարգաց եկեղեցւոյ քարոզութեանց եւ աղօթից» հնագոյն երեք ձեռագրերը՝ թթ. 1329, 2273, 1328՝ գրուած ԺԳ դարում, չունեն մեկնութեան այս հատուածը, իսկ թիւ 2607 ձեռագիրը (1300 թ.) մեկնութեանը զուգահեռ պարունակում է նաեւ մի ժամագիրք, որի լուսանցքներում համապատասխան աղօթքի կամ քարոզի դիմաց արձանագրուած է այդ միաւորի մեկնիչի անունը, որը բացակայում է վերոնշեալ քարոզի պարագային: Մեր կարծիքով՝ յետագայում Կ. Պոլսում 1734 եւ 1840 թուականներին հրատարակուած Խոսրով Անձեւացու ժամակարգութեան մեկնութեան համար հիմք է ծառայել վերջին ձեռագիրը, որում բացի Խոսրով Անձեւացուց առկայ են նաեւ Հայ Եկեղեցու այլ մեկնիչների գործեր ժամակարգութեան վերաբերեալ, որոնք «ի միում տփի» է հաւաքել Մովսէս Երզնկացին, ով էլ հաւանաբար աւելացրել է այս հատուածը[94]:

Բացի սրանից, մեր առաջադրած կարծիքի օգտին է խօսում նաեւ տեքստի լեզուն եւ ընդհանրապէս հարցերի նկատմամբ ունեցած մօտեցումը, որոնք բնաւ չեն համապատասխանում Խոսրով Անձեւացու հայեացքներին, ով աւելի կտրուկ եւ խիստ է հարցերի մեկնաբանման մէջ: Անձեւացու գործերում, մասնաւորաբար եկեղեցական կարգաւորութեան մէջ, որեւէ երեւոյթի խափանումը կամ խաթարումը, յատկապէս եկեղեցականների ծուլութեան պատճառով, մշտապէս արժանանում է ամենախիստ դատապարտութեան[95], իսկ խնդրոյ առարկայ հատուածն աւելի յարմարուողական բնոյթի է, որը, մեր կարծիքով, պատկերն է ժամանակի տիրող կացութեան: Այստեղ արծարծւում է մի խնդիր, որը զանազան դաւանաբանական, ծիսական հարցերի կողքին մշտապէս տեղ է զբաղեցրել ԺԳ—ԺԴ հայ-լատինական սրացող յարաբերութիւններում: 1245 թուականին Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսի նախագահութեամբ գումարուած Սսի ժողովը հաստատում է 25 կանոն, որոնց վերջին կէտը վերաբերում է հիւանդաց իւղի

94 Անդ, տիտղոսաթերթ

95 Տես Վազգէն սարկաւագ Գալստանեան, «Բանք երանելւոյն Խոսրովայ առ վասն եկեղեցականն», «Էջմիածին», 1994, Զ—Է, էջ 30—50:

օրհնութեանն ու հիւանդների օծմանը[96]: Ինչպէս դիտարկում է Մաղաքիա արք. Օրմանեանը, այս ժողովը, գումարուած լինելով բացարձակապէս կիլիկեցի ներկայացուցիչներով, կարիք ունէր Արեւելեան վարդապետների համաձայնութեան եւ համազգային ընդունելութեան, ինչ պատճառով ժողովի կանոնական որոշումները Վարդան վարդապետ Արեւելցու միջոցով ուղարկւում են Հայաստան[97], որոնք էլ, ըստ Կիրակոս վարդապետ Գանձակեցու, «առերես» ընդունւում են արեւելցիների կողմից[98]: Սակայն մեզ թւում է, որ Արեւելեան վարդապետները ոչ թէ «ի վերին երեսս մեծարեցին» եւ ապա հրաժարուեցին, այլ պարզապէս ոչ աւելորդ զգուշաւորութիւն են ցուցաբերել այս կանոնական հրամանի նկատմամբ, որը զերծ չէր լատինական որոշ ազդեցութիւններից[99]: Հէնց վերջին՝ ԻԵ կանոնում, որը վերաբերում է հիւանդների իւղին եւ օծմանը, զգացւում է այդ ժամանակաշրջանում լատինական սխալ մեկնաբանութեան առկայութիւնը: Այստեղ արդէն նկատւում է Հիւանդաց օծման խորհրդից անցումը Վերջին օծման խորհրդին. «Զհիւանդն ի ժամուն մահու օրհնել, ձիթով օծանել, որ թէ մեռանի, օծումն լինի թաղմանն, եւ թէ ապրի՝ լինի քաւութիւն մեղացն եւ

96 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 309

97 Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Բ, էջ 1626—27

98 Կիրակոս Գանձակեցին հետեւեալն է հաղորդում այս մասին. «Եւ զի ամենայն ոք խոտորեալ էր ի ճշմարտութենէն՝ ըմբռնեալք ախտիւ ագահութեան եւ արծաթասիրութեան, ծանր թուեցաւ հրամանն, բայց սակայն ոչ իշխեցին արհամարհել, այլ ի վերին երեսս մեծարեցին եւ ետուն ձեռագիր երդմամբ եւ նզովիւք առնել զհրամանն...»: Մեզ համար անըմբռնելի է Գանձակեցու «ամենայն ոք խոտորեալ էր ի ճշմարտութենէն՝ ըմբռնեալք ախտիւ ագահութեան եւ արծաթասիրութեան» արտայայտութիւնը, որովհետեւ համաձայնագիրը ստորագրողների թւում նա յիշատակում է նաեւ Խորանաշատի հռչակաւոր ուսուցչապետի եւ իր ուսուցչի՝ «մեծ, հռչակաւոր» Վանական վարդապետի անունը, ում նկատմամբ պաշտամունքի հասնող հիացմունք եւ վերաբերմունք ունի: Այս պատճառով էլ վերոբերեալ արտայայտութիւնը տարակուսանքի տեղիք է տալիս (տես Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 310): Մեր կարծիքով՝ Կիրակոս Գանձակեցին Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի կատարած այս քայլով տեսնում էր Հայ Եկեղեցու երկու հատուածների՝ Կիլիկիոյ եւ Հայաստանի միախորհուրդ գործելու հնարաւորութիւնը եւ իր ափսոսանքն ու ցաւն է յայտնում Արեւելեան վարդապետների ցուցաբերած զգուշաւորութեան եւ միգուցէ դժկամութեան առիթով:

99 Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Բ, էջ 1626—35

պատճառ աւուղջութեան»[100]: Խորհրդի այսպիսի ոչ ուղղափառ մեկնաբանութիւնը, բնականաբար, չէր կարող ընդունուել Արեւելեան վարդապետների կողմից եւ պատճառն էր եղել նրանց ցուցաբերած զգուշաւորութեան: Այսուհանդերձ, պէտք է արձանագրել, որ այս ժամանակահատուածում արծարծուող իւրաքանչիւր հարց չի կարելի քննել ինքն իրենով, այլ այն պէտք է դիտարկել ժամանակաշրջանի ամբողջութեան մէջ: Այս առումով, առանց չափազանցութեան, կարելի է ամբողջ ԺԳ դարի երկրորդ կէսից մինչեւ ԺԴ դարի երկրորդ կէսը՝ շուրջ հարիւր տարի, բնութագրել որպէս պայքար ընդդէմ Հռոմի Եկեղեցու ձգտումների եւ Հայ Եկեղեցու անկախութեան պահպանման համար: Այդ են վկայում թէ՛ Ստեփանոս եպիսկոպոս Օրբելեանի գլխաւորութեամբ վաւերացուած պատասխան նամակը Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոսին[101] եւ թէ՛ Սսի 1307 թ., Ադանայի 1317 թ., Սսի 1342 թ. ժողովների որոշումներն ու նրանց ղէմ ծաւալուած պայքարը Արեւելեան վարդապետների կողմից[102]: Այսինքն՝ հրապարակի վրայ էր ամբողջ Եկեղեցու փաստացի գոյութեան հարցը, եւ այս իմաստով՝ առանձին կէտերը կարող էին ոչ էական նշանակութիւն ունենալ եւ ոչ էլ բաժանուել ընդհանուր պատկերից: Ի դէպ, ե՛ւ Ստեփանոս եպիսկոպոս Օրբելեանի նամակում, ե՛ւ Սսի 1342 թ. ժողովում հայերին ներկայացուած 117 մեղադրանքների շարքում յիշատակւում է նաեւ Հիւանդաց օծման խորհրդի հարցը, որն անուանւում է «Վերջին օծում»: Հարկ է նշել, որ թէ՛ պատասխանների եւ թէ՛ հերքումների պարագային այս խնդրում որեւէ վերջնական եւ միանշանակ մերժում չկայ հայ վարդապետների կողմից, այլ նրանք աւելի հակուած են միջանկեալ վերաբերմունք ունենալու[103]: Այս լոյսի ներքոյ յստակ է, որ «թէ վասն ծուլութեան կամ այլ պատճառի իրիք օծութիւն իւղոյն խափանէ, աղօթիցն լինիլ պարտ է առանց ամենայն պատճառի» արտայայտութիւնը կարող էր կատարուել այս ժամանակաշրջանում ապրած հեղինակի կողմից, որ է Մով-

100 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 309
101 Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 459
102 Տես Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Բ, էջ 1784—1888:
103 Տես Սսի 1342 թ.-ի ժողովի պարագային՝ Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Բ, էջ 1886—1888:

սէս Երզնկացին[104]: Այսինքն՝ «այլ պատճառի իրիք»-ը կարող էր լինել թէ՛ Ստեփանոս Օրբելեանի նշած թիւր սովորութիւնը[105] եւ թէ՛ շեշտադրուած կերպով ընդդէմ լատինական վարդապետութեան ծաւալուած պայքարի արդիւնքում ձեւաւորուած հոգեբանական արգելքը[106]:

Այսուհանդերձ, Խոսրով Անձեւացեաց եպիսկոպոսը եւս անդրադարձել է Հիւանդաց օծման խնդրին եւ, որ էականն է, պարզում է ԺԴ դարում Հայ Եկեղեցում գոյութիւն ունեցող վերաբերմունքը խորհրդի նկատմամբ եւ դրա աստուածաբանական ըմբռնումը: ՄՄ անուան Մատենադարանի թիւ 577 ձեռագիրը պարունակում է Խոսրով Անձեւացու գործերից մի պատառիկ, որում երանելի հայրը, յղելով Յակոբոս առաքեալի խօսքերին, ասում է. «Եւ յառաքեալն Յակովբոս ասէ. «Հիւանդանայցէ ոք ի ձէնջ....» Զայսր արար թէ իցէ հիւանդութիւն որ ի մեղաց լինիցի. եւ մեղաւորացն աւծութիւն ոչ ինչ օգնէ, այլ մարմնա-

104 Վարդան Հացունին, քննելով այս քարոզի՝ Խոսրով Անձեւացու գրչին պատկանելու վաւերականութեան հարցը, ճիշտ է նկատում, որ «...անցման շրջանն է, գործածութենէ՝ իսպառ դադարման. եւ կը ներկայացնէ միջին վիճակ մը, Խոսրովու ժամանակն իսկ» (տես Վարդան Հացունի, Պատմութիւն Հայոց աղօթամատոյցին, էջ 202): Սակայն, մեր կարծիքով, անցման շրջանը չէր կարող մի քանի դար տեւել, մասնաւորապէս մինչեւ ԺԴ դար, առաւել եւս երբ Հիւանդաց օծման եւ իւղի օրհնութեան մասին խօսում է նաեւ Սարգիս Շնորհալին (տես Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց, էջ 166): Այս. մենք աւելի հակուած ենք մտածելու, որ գործածութիւնից իսպառ դադարման շրջանը աւելի համապատասխանում է ԺԴ դարին:

105 Ինչպէս նախապէս անդրադարձել ենք, Ստեփանոս Օրբելեանը դատապարտում է ոչ թէ խորհրդի կիրառումն ամբողջութեամբ, այլ ընկալեալ սխալ սովորութիւնը, որ է «սակաւ դրամիկ մսխել, եւ ձէթ օրհնել եւ արդարանալ»: Տես «Պատմութիւն Նահանգին Սիսական», էջ 459:

106 Հ. Սամուէլ Արամեանը, մեկնաբանելով այս արտայայտութիւնը, կարծում է, որ այն կարող էր երկու իմաստ ունենալ. առաջին՝ ձէթի չգոյութիւնը Հայաստանում, եւ երկրորդ՝ թէ «Ցունացմէ Հայաստան մտած էր հերետիկոսութիւն մը, որ կը դաւանէր, թէ Խոստովանութեան եւ Հիւանդաց Օծման խորհուրդը մեղքերու թողութեան նկատմամբ նոյնանալով, կ՚ըսէր, թէ կարելի էր մեղքերը ջնջել Հիւանդաց Օծման խորհուրդի միջոցաւ առանց խոստովանութեան խորհուրդին դիմելու, եւ այսպիսով հաւատացելոց մէջ սկսած էր թուլութիւն մտնել Խոստովանութեան խորհուրդին հանդէպ» (տես Հ. Սամուէլ Արամեան, Հիւանդաց Օծման Խորհուրդը Հայ Եկեղեցւոյ մէջ, էջ 13): Կարծում ենք, որ Հ. Սամուէլ Արամեանը մի փոքր սխալւում է, որովհետեւ այդպիսի մօտեցումը աւելի Արեւմտեան Եկեղեցուն է յատուկ, քան Արեւելեան, որը համապարփակ կերպով նկարագրել ենք «Ընդհանրական Եկեղեցի. սխոլաստիկ շրջան» գլխում:

կան ցաւոցն. իսկ մեղացն խոստովանութիւն եւ ապաշխարութիւն է բժշկութիւն. հայք [զ]հիւանդն ոչ օծանեն եւ յոյնք զառողջն օծանեն. երկոքին զարտուղի են [ի] ճշմարտութենէ, զի թէ մարմնով առողջ էր, ոչ ասէր թէ «կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն», այլ ինքն անձամբ գնայր յեկեղեցին եւ խոստովանէր զհոգւոյն հիւանդութիւն. յայլ յայտ է թէ զմարմնոյ ասէ հիւանդութիւն եւ ոչ հոգւոյ: Վասն որոյ պարտ էր հայոց եւ յունաց զմարմնովն հիւանդն օծանել ըստ առաքելոյ եւ հոգւով հիւանդացն խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ (էջ 264բ) տալ դեղ բժշկութեան...»[107]: *Հատուածի լեզուն, ոճը, հարցերի նկատմամբ ունեցած վերաբերմունքը կասկած չեն յարուցում, որ այն պատկանում է Խորոնի Անձեւացու գրչին*[108]: *Բնականաբար, այս պատառիկի բովանդակութիւնը կարող է ճշմարտել նախ այն, որ քիչ վերը յիշատակուած եւ Խորոնի Անձեւացուն վերագրուած հատուածն իրականում պատկանում է նրան, եւ երկրորդ՝ հաստատել Վարդան Հացունու վերոյիշեալ տեսակէտը, որ Ժ դարը մի միջին վիճակ է խորհրդի գործադրութիւնից իսպառ դադարեցման անցնելու: Այսու՝ քննելով վերոբերեալ*

107 ՄՄ ձեռագիրք 576, 577

108 Խորոնի Անձեւացուն ընդհանրապէս շատ բնորոշ է որեւէ խնդրայարոյց հարցի մասին համեմատութիւններ անել Ընդհանրական եկեղեցու տեսակէտի կամ փորձառութեան հետ՝ շատ յաճախ քննադատելով Հայ եկեղեցու որդեգրած ոչ թէ դաւանական, ծիսական եւ եկեղեցաբանական ըմբռնումները, այլ յատկապէս գործնական եւ կենցաղավարական կիրառումը: Աւելի յստակ լինելու համար բերենք մի քանի օրինակ Անձեւացու միւս գործերից: Այսպէս՝ «Առ վասն եկեղեցականն» գործում երանելի հայրը նշում է. «Իսկ վասն զատկի ճրագալուցին... չէ պարտ յարեւի արձակել պատարագն, այլ աստեղօքն եւ ճրագով, որպէս անունն ճրագալոյց է: Եւ յայսմիկ որպէս սուտ են յոյնք, զի պահք քարոզեն, թէպէտ մինչեւ յերեկոյ պահեն, սուտ են եւ հայք, զի յարեւի լուծանեն»: Յատկանշական է նաեւ այս հատուածը. «Թէ զայլոց քրիստոնէից զուղղութիւն ոք ի մէջ բերէ եւ նախանձաւոր այնմ յորդորէ լինել, զինքեանս սուրբ Գրիգորոյ հաւատով ասեն եւ ջատագով նմին քարոզեն: Ապա թէ զմերն ոք ստիպէ պինդ ունել զբարին եւ մի՛ [յ]այլոցն խոտորել հեշտութիւն եւ անկարգութիւն, այնմ ընդդէմ բերել հակառակին ասելով. նոքա մի՞թէ չեն քրիստոնեայք եւ աստուածապաշտք»: Խօսելով եկեղեցում առկայ սիմոնականութեան մասին՝ նա դատապարտում է ժամանակի եկեղեցականութեան բարքերը՝ ասելով. «Այսոքիկ հայոց թիւրութիւնք եւ որ սոցին գոն նմանք, եւ երանի թէ գոյր հնար բժշկել զհիւանդութիւնս զայս»: Տես Վազգէն սարկաւագ Գալստանեան, «Բանք երանելւոյն Խորոնայ առ վասն եկեղեցականն», համապատասխանաբար էջ 38, 43, 41, նաեւ էջ 46:

հատուածը՝ կարող ենք կարծել, թէ Անձեւացին իրեն յատուկ սկզբունքայնութեամբ ոչ թէ խօսում է միջին կամ այլընտրանքային վիճակի մասին, այլ խորհրդի՝ Հայ Եկեղեցում իսպառ անգործածութեան, այսինքն՝ կարելի է ենթադրել, թէ այն Ժ դարում այլեւս դադարել էր գոյութիւն ունենալուց: Սակայն մեզ համար այս տեսակէտն անընդունելի է, որովհետեւ եթէ իւղի գործածութիւնը կամ ընդհանրապէս խորհրդի կիրառումը վերացած լինէր, ապա այս խնդրին չէր անդրադառնայ Սարգիս վարդապետ Շնորհալին ԺԲ դարում: Երկրորդ՝ Խորոնի Անձեւացու գործերի եւ մտածողութեան ամբողջական ուսումնասիրութիւնը մի հետաքրքիր լուսաբանութիւն է բերում այն առումով, որ նա, լինելով Եկեղեցու կարգաւորութեամբ խորութեամբ մտահոգուող եւ պատասխանատու հայր, հակում ունի որեւէ մասնաւոր կամ փոքրիկ տեղային երեւոյթ ներկայացնել որպէս ընդհանրացած եւ տարածուած իրականութիւն[109]: *Մեր կարծիքով՝ այս համատեքստում բացառութիւն չի կազմում նաեւ Հիւանդաց օծման խորհրդի հետ առնչուող խնդիրը: Երրորդ՝ եթէ Անձեւացին իսկապէս մի այնպիսի հարց շօշափէր, որը հակասում էր Ժ դարում Հայ Եկեղեցու արդէն պաշտօնական դարձած տեսակէտին, ապա այն անպայմանօրէն արձագանք կը գտնէր նրա նկատմամբ առկայ մեղադրանքների թւում, ժամանակի Անանիա Մոկացի հայրապետի կողմից, ինչպէս նաեւ նրա ժամանակակից Յակոբ Ծպատեցու «Ընդդէմ Խորոնայ» գործում կամ յետագայի պատմիչների արձանագրութիւններում (Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Օրբելեան), ովքեր անդրադարձել են Անձեւացու խնդրին*[110]: *Սակայն այսպիսի ամենաչնչին ակնարկութիւն իսկ բացակայ է մեր պատմա-*

109 Անձեւացին իր գործերում, յատկապէս «Բացայայտութիւն կարգաց Եկեղեցւոյ» երկում, խօսում է կիրակամուտի ժամերգութեան «Լոյս զուարթ» փառաբանութեան ի թիւ ասուելու, Հանգստեան Աւետարանի, Առաւօտեան ժամերգութեան «Զուարճացեալքս» քարոզի եւ այլ նմանաբնոյթ քարոզների կարգաւորութիւնների՝ Եկեղեցում իսպառ դադարած լինելու մասին, որոնք, սակայն, երբեւէ չեն վերացել, այլ շարունակում են հաստատուն տեղ գրաւել ժամակարգութեան մէջ: Այս խնդրի մանրամասն վերլուծութիւնը տես Վազգէն սարկաւագ Գալստանեան, Խորոնի եպիսկոպոս Անձեւացի, 1994, Ս. Էջմիածին (աւարտական, անտիպ), էջ 23—25:

110 Այս մասին տես ՄՄ ձեռ. թիւ 3062 եւ 2966. Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, էջ 202. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 85—86. Գալուստ Տէր-Մկրտչեան, Անանիա Մոկացի, «Արարատ», 1897, էջ 91—96, 275—288:

գրութեան մէջ: Հետեւաբար, եզրակացնելով կարող ենք ասել, որ Անձեւացին արձանագրում է ոչ թէ Հիւանդաց օծման չգոյութեան հարցը, այլ անդրադառնում է խորհրդի կիրառման եւ աստուածաբանական ձեւակերպման սխալ ընկալմանը, այսինքն՝ այն պէտք է կատարուի ոչ թէ մեղքերի թողութեան, այլ հիւանդութեան բժշկութեան համար, որին արդէն անդրադարձել ենք բազմիցս մինչ այս եղած քննութեան ընթացքում: Այստեղ, սակայն, շեշտադրումն աւելի յստակ է դրուած. «Մեղաւորացն աւծութիւն ոչ ինչ օգնէ, այլ մարմնական ցաւոցն. իսկ մեղացն՝ խոստովանութիւն եւ ապաշխարութիւն է բժշկութիւն: Վասն որոյ պարտ էր... զմարմնովն հիւանդն օծանել ըստ առաքելոյ եւ հոգւով հիւանդացն խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ տալ դեղ բժշկութեան»: Այս ձեւակերպումը ուղղափառ եւ ճշմարիտ բանաձեւումն է Հիւանդաց օծման խորհրդի, որը յետագայում նոյնութեամբ արծարծուել ու շեշտադրուել է Սարգիս Շնորհալու կողմից (1090—1166): Սակայն, նախքան Սարգիս Շնորհալու տեղեկութեան քննարկմանն անցնելը, հարկ է անդրադառնալ նոյն ժամանակաշրջանի Ընդհանրական Եկեղեցում առկայ մօտեցումներին (թերեւս ամենակարեւոր շրջանը Եկեղեցու խորհրդաբանական համակարգի վերջնական ձեւաւորման տեսակէտից), որը հիմնաւորուելով Արեւմտեան Եկեղեցում յայտնի որպէս «սխոլաստիկ շրջան», մեծ ազդեցութիւն ունեցաւ նաեւ Արեւելեան Եկեղեցու աստուածաբանութեան եւ ծիսական-խորհրդաբանական ըմբռնումների վրայ:

Ընդհանրական Եկեղեցի. սխոլաստիկ շրջան (ԺԱ-ԺԳ դարեր)

Ինչպէս արդէն անդրադարձել ենք, ԺԱ դարից սկսեալ՝ հիւանդների օծումն ընկալւում էր որպէս խորհուրդ իր բոլոր յատկանիշներով, եւ այն, որ այս խորհուրդը կիրառւում էր ոչ թէ հիւանդութիւնից բժշկուելու նպատակով, այլ նկատւում որպէս պատրաստութիւն մահուան, սկսեց լայն տարածում գտնել: Մասնաւորապէս այս շրջանում ձեւաւորուեց խորհուրդների թուի սահմանումը, եւ ինչպէս դիպուկ ներկայացնում է Մաղաքիա արք. Օրմանեանը, Արեմուտքի Դպրոցականները «ամէն ճիգ թափեցին եօթ խորհուրդներու թիւը ամէնուն ընդունիլ տալու համար»[111]:

111 Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Հայոց Եկեղեցին, էջ 132

Այս ժամանակաշրջանի միջնադարեան աստուածաբանութեանը կամ սխոլաստիկ շրջանին բնորոշ է այս փաստը, եւ սա վերաբերում է ոչ միայն Հիւանդների օծման (որն այլեւս կոչւում էր «Վերջին օծում»)՝ որպէս խորհուրդ մեկնաբանութեանն ու ըմբռնումներին, այլեւ խորհրդի յետագայ ներգործութեանը, նրա գործադրողին եւ իւղի օգտագործմանը:

Վաղ սխոլաստիկ շրջանում առաջին հեղինակներից մէկը, որ Հիւանդաց օծմանն անդրադարձել է, Պետրոս Աբելեարն է (1070—1142), ըստ որի՝ այն խորհուրդ է, նրա հիմնական նշանակութիւնը մեղքերի թողութիւնն է, եւ, որ ամենակարեւորն է, այն նկատւում է որպէս պատրաստութիւն մահուան[112]: Հետաքրքրական է այս շրջանի մէկ այլ հեղինակի՝ Վիկտորցի Հիւգոյի (1078—1141) տեսակէտը, որ այս խորհուրդը երկմասնեայ ազդեցութիւն ունի՝ հոգեւոր եւ մարմնաւոր, սակայն, միեւնոյն ժամանակ, մարմնաւոր բժշկութիւնը ոչ միշտ է նպատակայարմար հոգու համար: Այսպիսով՝ նա մարմնաւոր բժշկութիւնը բխեցնում է հոգեւոր բժշկութիւնից՝ հաստատելով, որ ով օծւում է իւղով, նրա մեղքերը ներւում են, եւ այդպիսով է բժշկւում մարմնապէս[113]: Խորհուրդների վերջնական ձեւաւորման հարցում վաղ շրջանի հեղինակներից ամենանշանաւորը թերեւս Պիտեր Լոմբարդն է (1100—60), ով ներմուծեց խորհուրդների եօթ թուի սահմանումը: Նա, մասնաւորապէս խօսելով Հիւանդաց օծման խորհրդի մասին, շեշտում է, որ այն պէտք է իրականանայ հիւանդի մահուանից առաջ իւղի գործադրմամբ, որն օրհնուած է եպիսկոպոսի կողմից: Լոմբարդը իւրայատուկ մօտեցմամբ մեկնաբանում եւ բաժանում է խորհուրդը (sacramentum), որն արտաքին օծումն է, իրական խորհրդից (res sacramenti)՝ ներքին օծումից, որի ներգործութիւնը մեղքերի քաւութիւնն է եւ առաքինութեան առատացումը: Նա պնդում է նաեւ, որ միայն եպիս-

112 P. L., ed. J. P. Migne, Pseudo-Abelard, Epitome theologiae Christianae, 178: 1744, 30:

113 «Այս խորհուրդը հաստատուել է երկու պատճառով՝ մեղքերի քաւութեան եւ մարմնական հիւանդութեան վերացման...»: Տես R. J. Defarrari, Hugh of St. Victor, On the Sacraments (De Sacramentis) of the Christian Faith, Cambridge, 1951, 2:15, էջ 155:

կոպոսի կողմից օրհնուած իւղը կարող է վաւերական եւ ներգործուն լինել այս խորհուրդն իրագործելու համար[114]:

Հիւանդաց օծման խորհրդի հիմնական բանաձեւումները եւ աստուածաբանական դրոյթների հաստատումը՝ բոլոր առումներով, յատկապէս ձեւաւորուեցին ժամանակի խոշորագոյն Դոմինիկեան եւ Ֆրանցիսկեան վանական եւ աստուածաբանական դպրոցների ու նրանց առաջադէմ մտածողների կողմից: Առաջինների ընդգծուած ներկայացուցիչներն էին Ալբերտ Մեծը (1200—80) եւ Թովմա Աքուինացին (1225—1274), ովքեր ըստ էութեան համարւում են Արեւմտեան Եկեղեցու բոլոր ժամանակների մեծագոյն մտածողներն ու դաւանանքի հիմնական սահմանողները: Դոմինիկեան դպրոցի այս երկու կարկառուն ներկայացուցիչների կարծիքով՝ Օծման խորհրդականութիւնը նրա մասնաւոր հոգեւոր բնոյթն է: Ալբերտ Մեծի համար Օծումը այն խորհուրդն է, որ բժշկութիւն է մեղքի շարունակականութիւնից (reliquia peccati), որը ադամական մեղքից բխող յետմկրտութենական մեղք գործելն է, եւ եթէ նպատակայարմար է, այն կարող է ծառայել նաեւ որպէս մարմնի բժշկութիւն: Նա պնդում է, որ հոգեւոր հիւանդութեան՝ մեղքի վերացումը միայն կարող է ազդեցութիւն ունենալ մարմնի դարմանման համար՝ միեւնոյն ժամանակ ընդունելով մարմնական բժշկութեան երկրորդական նշանակութիւնը, որի համար մտահոգուելու անհրաժեշտութիւն չկայ[115]: Ըստ Դոմինիկեան դպրոցի մեծագոյն ներկայացուցչի՝ Թովմա Աքուինացու, ով, ըստ էութեան, արեւմտեան աստուածաբանութեան վերջնական ձեւաւորման հիմնահայրն է, խորհուրդը կիրառւում է մարմնի բժշկութեան նպատակով, ինչն էութենապէս մեղքի հետեւանք է, եւ, հետեւաբար, այն իր սկզբունքով միտուած է վերացնելու մեղքը: Այսպիսով՝ նա հաստատում է, որ յետմկրտութենական մեղքը սրբւում է Վերջին օծման ներգործութեամբ՝ անշուշտ ի մտի ունենալով, որ այն կատարւում է մահուան մահճում եւ բնականաբար այլեւս չի կարող կրկնուել: Նա եզրակացնում է, որ մեղքն արգելում է հոգուն յայտնուելու Փառքի մէջ: Իսկ այս խորհուրդը, լինելով Եկեղեցու կողմից իրականացուող բարձրագոյն բժշկութիւնը, մեղքի վերացմամբ հոգին անմիջապէս տեղափոխում է Աստուծոյ յաւիտենական փառքը: Այսինքն՝ Հիւանդաց օծումը կամ այլեւս նրա իմաստափոխուած տարբերակը՝ Վերջին օծումը, մարմնական բժշկութեան համար լինելով հանդերձ, պէտք է իրականացուի միմիայն հոգեւոր բժշկութեանն ի խնդիր՝ յարդարելով մուտքը դէպի յաւիտենական փառքը: Այս պատճառով էլ Աքուինացին նշում է, որ խորհուրդը չի կարող կատարուել աշխարհական անձանց կողմից, քանի որ այն մեղքերի թողութեան համար է, եւ բացի սրանից, այն իրագործւում է ամբողջ Եկեղեցու անունով, իսկ ամբողջի անունով կարող է գործել քահանան:

Նոյնն է նաեւ սարկաւագների պարագան, քանի որ այս դէպքում էլ պէտք է ի մտի ունենալ Յակոբոս առաքեալի կարգադրութիւնը, որում այս խորհրդի իրագործումը վերապահուած է քահանաներին: Թովմա Աքուինացին բանաձեւում է, որ սարկաւագութիւնը միայն մաքրագործող զօրութիւն ունի եւ ո՛չ լուսաւորող, այսինքն՝ հոգու եւ մտքի լուսաւորութիւնն արդիւնք է շնորհաբաշխման, եւ հետեւաբար, սարկաւագն ի պաշտօնէ (ex officio) չի կարող որեւէ խորհուրդ կատարել, որը շնորհի փոխանցման միջոց է: Եւ վերջապէս, խօսելով խորհրդի նիւթի մասին՝ թէ՛ Ալբերտ Մեծը եւ թէ՛ Թովմա Աքուինացին ընդունում են, որ խորհրդի էութիւնը իւղն է՝ օրհնուած եպիսկոպոսի կողմից[116]:

Դոմինիկեանների նման՝ Ֆրանցիսկեան դպրոցի ներկայացուցիչները, մասնաւորապէս Ալեքսանդր Հալեսը[117] (1186—1245) եւ Բոնավենտուրան[118] (1217—1274), նոյնպէս տարակուսանք չունեն Հիւանդաց օծման՝ խորհուրդ լինելու վերաբերեալ, ինչպէս նաեւ պնդում են, որ այն կատարւում է մահուան մահճում՝ որպէս մահուան պատրաստութիւն եւ երկինք մուտք գործելու գրաւական: Այսուհանդերձ, նրանք տարբերկերպ են մեկնաբանում խորհրդի՝ մահուան պատրաստութիւն լինելու հանգամանքը: Թէ՛ Ալեքսանդր Հալեսը եւ թէ՛ Բոնավենտուրան այն համոզումն ունեն, որ խորհուրդը սրբում է յետմկրտութենական մեղքի շարունակականութիւնը, ինչպէս նաեւ ուղղուած է ընդհանրապէս

114 The Oil of Gladness, ed. Martin Dudey and Geoffrey Powell, SPCK, London, էջ 115:
115 Albert, Comentaria in Librum IV Sententiarum, Florence, 1916, 23:2

116 The Summa Theologica of St. Thomas Aquinas, Suplimentum Tertiae Partis, 2 rev. ed. by Kevin Knight, 1920 (էլ. համացանց): Տես նաեւ Thomas Aquinas, Contra Gentiles, Paris, Vivres 1874, IV, 73, էջ 584:
117 Alexander Hales, Glossa in quattour libros sententiarum, Florence, Quarrachi, 1957, IV 23, էջ 387—394:
118 Bonaventure, in quantum librum sententiarum, Paris, Vivres, 1882—1902, էջ 134.

ընդդէմ մեղքի: Մինչ միւս խորհուրդներն առնչւում են աղամական կամ մահացու մեղքի հետ, Վերջին օծումը սկզբունքօրէն շաղկապուած է ներելի մեղքին, որը չի յայտնուել ապրելու ամբողջ ընթացքում, այլ միայն մահուան մահճում: Եզրակացնելով, թէ մահացու մեղքը հոգին ծանրացնում եւ ստորաքարշ է դարձնում՝ Բոնավենտուրան այն համոզումն է յայտնում, որ Վերջին օծման միջոցով հոգին ուժաւորւում է բարեպաշտութեամբ: Յատկանշական է, որ երկու Ֆրանցիսկեաններն էլ համամիտ են դոմինիկեան վարդապետների հետ խորհրդի՝ մահացու հիւանդութեան պարագային կամ մահուան մահճում իրականացուելու առումով: Ըստ էութեան՝ երկուսն էլ կրկնում են դոմինիկեանների ընկալումները խորհուրդն իրագործողի եւ նիւթի վերաբերեալ: Այսուհանդերձ, Բոնավենտուրան մի շատ կարեւոր հաստատում է կատարում, ըստ որի՝ իւղի օրհնութիւնն ինքնին չի կարող խորհուրդ լինել, քանի որ իւղը չի կարող կատարեալ սրբութիւն եւ նշանակութիւն ունենալ այնքան ժամանակ, քանի դեռ այն չի գործադրւում հիւանդին օծելիս՝ զուգորդուած խորհրդական աղօթքով: Միայն այն ժամանակ է շնորհաբաշխութիւնը տեղի ունենում, երբ օծւում է ներքին մարդը, եւ սա է դառնում խորհրդի նշանակը[119]: Խօսելով հանդերձ արեւմտեան աստուածաբանական ըմբռնումների մասին՝ սխալ կը լինէր չանդրադառնալ Արեւելեան Եկեղեցու մեծագոյն հեղինակներից մէկին՝ Սիմէոն Թեսաղոնիկեցուն (1429), ով, կարելի է ասել, ներկայացնում է ամբողջ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցու տեսակէտը Հիւանդաց օծման խորհրդի վերաբերեալ: Ըստ նրա՝ այս խորհուրդը միաժամանակ երկբնոյթ ներգործութիւն ունի՝ մարմնական բժշկութիւն եւ մեղքերի թողութիւն: Նա ընդդիմանում է Արեւմտեան Եկեղեցու՝ այս խորհուրդը միայն մահացողների նկատմամբ կիրառելու փորձառութեանը[120]: Թեսաղոնիկեցու համար մեկնակէտն այլ է. Հիւանդաց օծումը խորհուրդ է ապրողների համար, որը պէտք է գործադրուի բժշկութեան նպատակով, այսինքն՝ որ հիւանդը կարողանայ ապրել եւ սրբուել մեղքից: Եւ հետեւաբար, այս իմաստով՝ Լատին Եկեղեցին իր վարդապետական հիմնաւորումներով հակասում է առաքելական աւանդութեանը:

119 Այս մօտեցումն ուշագրաւ է, քանի որ դրեթէ նոյն ընկալումն ունի նաեւ Սարգիս Շնորհալին. սրան կ'անդրադառնանք աւելի ուշ:

120 Սիմէոն Թեսաղոնիկեցին փաստօրէն դատապարտում է արեւմտեան ըմբռնումը՝ ասելով, որ «Լատինները բոլոր նորամուծութիւններով հանդերձ մեղանչել են նաեւ այս խորհրդի վարդապետութեան հանդէպ եւ ասում են, որ այն չի կարելի կատարել հիւանդների վրայ, այլ մահացողների, որովհետեւ, ըստ նրանց, այն թողութիւն է պարգեւում մեղքերին, սակայն չի վերականգնում առողջութիւնը»: Տես Simeon Thessalonicae, De Sacro ritu sancti oei, Patrologiae Graecae, 155:518, 285:

Եզրափակելով՝ ցանկանում ենք ընդգծել, որ վերոբերեալը մի ուրուագծային ակնարկ էր միջնադարեան սխոլաստիկ խորհրդաբանական աստուածաբանութեան, որով նպատակ ունէինք հիմնականում պատկերելու, թէ այն որքան մեծ ազդեցութիւն է ունեցել Հիւանդաց օծման խորհրդի աստուածաբանութեան վրայ, ինչպէս նաեւ համեմատութեան եզրեր անցկացնելու Հայ Եկեղեցում գրեթէ նոյն ժամանակաշրջանից սկզբնաւորուած սխալ մեկնաբանութեան հետ, որը, մեր համոզմամբ, իր վրայ բացարձակապէս կրում է սխոլաստ վարդապետների ազդեցութիւնը: Այս իմաստով կարող ենք ամփոփ գծերով նշել, որ, ըստ վերջիններիս, Օծման խորհուրդը պայմանաւորուած է շնորհի փոխանցմամբ ու ծաւալմամբ, եւ խորհրդի հիմնական յատկանիշը նրա հոգեւոր ներգործութիւնն է, իսկ բժշկութիւնը համարւում է երկրորդական կամ յարաբերական՝ ըստ նպատակայարմարութեան: Շեշտադրելով այս խորհրդի միայն հոգեւոր անհրաժեշտութիւնը՝ նրանք վերջապէս հասան այն աստիճանին, որ խորհուրդն այլեւս վերածուեց մահուան պատրաստութեան: Թէպէտեւ գոյութիւն ունէին աստուածաբանական մտքի երկու տարբեր մօտեցումներ, թէ ինչպէս է խորհուրդը պատրաստում հոգին մուտք գործելու յաւիտենական կեանք, այսուհանդերձ, նրանք միասնական են խորհրդի էութեան առնչութեամբ, ըստ որի՝ այն պէտք է իրագործուի միայն մահացու հիւանդութեան դէպքում կամ մահուան մահճում եւ, հետեւաբար, չի կարող կրկնուել: Մինչդեռ, ինչպէս անդրադարձել ենք, մինչեւ Թ դար խորհուրդը կիրառւում էր բոլոր հիւանդների նկատմամբ, այն ակնկալիքով, որ մարմնական բժշկութիւնը հոգեւորին համահաւասար արժէք եւ նշանակութիւն ունի: Հետեւաբար, այս շրջանը վճռորոշ դերակատարութիւն ունեցաւ խորհրդի իմաստային աղաւաղման եւ աղճատման համար՝ ծիսական եւ վարդապետական առումներով. խորհուրդը վերածուեց ոչ միայն վերջին ծէսին կամ օծումների մէջ վերջինին, այլեւ հիւանդի վերջին օծմանը՝ որպէս պատրաստութիւն մահուան:

Հիւանդաց օծումը ԺԲ դարում.

Սարգիս Շնորհալի. «Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց»

Այսպիսով՝ նախորդ գլխում ներկայացուած համայնապատկերի լոյսի ներքոյ փորձենք անդրադառնալ եւ քննել Սարգիս Շնորհալու վկայութիւնը, որը շարունակում եւ ըստ էութեան կրկնում է Մակար Հայրապետի եւ սբ Յովհան Օձնեցու որդեգրած վարդապետական ուղղութիւնը Հիւանդաց օծման խորհրդի վերաբերեալ: Այլ կերպ ասած՝ Սարգիս վարդապետը իւրայատուկ եղանակով ամփոփում է Հայ Եկեղեցու՝ մինչեւ ԺԲ դարը գոյութիւն ունեցող դիրքորոշումը, որը յետագայում այլ ուղով զարգացաւ՝ մերժուեց կամ անհասկանալի ձեւակերպումներ ստացաւ: Այսպէս՝ Շնորհալին, մեկնաբանելով Յակոբոս առաքեալի Ընդհանրական Թղթի Ե գլխի 14 համարը, նշում է. «Փոխանակ միոյ իւղոյն՝ որ ըստ օրինացն կազմէին, որով օծանէին զքահանայս եւ զթագաւորս եւ զմարգարէս, բազում իւղս ի ձեռս առաքելոցն շնորհեցաւ եկեղեցւոյ»[121]: Իսկ որո՞նք են Սարգիս Շնորհալու կողմից ակնարկուած բազում իւղերը. «Առաջին իւղ եւ մեծ ասեմք զիւղն աւազանին՝ զօրինակ շնորհաց Հոգւոյն՝ զոր միւռոնն սուրբ անուանեմք, այսինքն մեռուցիչ բոլոր ախտից, որով եւ մարդիկ մեռեալք ի մեղաց ի մեծ պատիւն վեր ելանեն եւ որդիք Աստուծոյ անուանին: Եւ այլ իւղ օծութեան երախայիցն ըստ օրէնութեան քահանայիցն, եւ այլ՝ հիւանդացն, եւ այլ՝ վախճանելոցն»[122]: Սակայն նրանց միջեւ տարբերութիւն գոյութիւն չունի Մակար Հայրապետի եւ Սարգիս Շնորհալու թուարկած զանազան նպատակներով կիրառուող իւղերի պարագային: Այսինքն՝ Շնորհալին յստակ կերպով լուսաբանում է Հայ Եկեղեցում առկայ դրութիւնը եւ ընդգծում Դ դարի աւանդութեան շարունակականութիւնը: Մէկ այլ իմաստով՝ այս վկայութիւնը պատկերագրում է տուեալ իրականութիւնը եւ առկայ խնդիրները՝ առնչուած իւղի գործադրման հետ ընդհանրապէս: Բնականաբար, մեկնելով Յակոբոս առաքեալի Ընդհանրական Թղթի խնդրոյ առարկայ հատուածը՝ Սարգիս Շնորհալին կարող էր պարզապէս անդրադառնալ սոսկ հիւանդաց իւղին եւ սահմանափակուել այդքանով: Սակայն նա անհրաժեշտութիւն է զգացել մի ակնարկով խօսել թերեւս ժամանակաշրջանում առկայ խնդրի մասին, երբ կրկին կարիք կար վերահաստատելու Եկեղեցու նախնական այն ընկալումը, ըստ որի՝ իւրաքանչիւր կարգ եւ խորհուրդ ունի իր բացառիկ նշանակութիւնը եւ չնորհի ներգործման ինքնուրոյն, անկախ միջոցը՝ պայմանաւորուած իրեն միայն յատուկ ծիսական կարգաւորութեամբ, որի կարեւորութիւնը շեշտում է նաեւ Յովհան Օձնեցին: Հանրագումարի բերելով եւ զուգահեռ անցկացնելով երեք ժամանակաշրջանների միջեւ՝ տեսնում ենք, որ Հայ Եկեղեցին մինչեւ ԺԲ դար, բացի սրբալոյս Միւռոնից, գործնականօրէն օգտագործել է նաեւ այլ կիրառութեան իւղեր[123]:

123 ՄԱԿԱՐ ՀԱՅՐԱՊԵՏ — ՅՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻ — ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Սրբութեան իւղ կամ սուրբ Միւռոն	Սուրբ Միւռոն	Սուրբ Միւռոն կամ Աւազանի իւղ
Երախայից կամ հիւանդաց	Երախայից կամ մկրտութեան	Երախայից
Հիւանդաց	Հիւանդաց	Հիւանդաց
Մեռելոց		Վախճանելոց

Յատկապէս ուշագրաւ է Մեռելոց կամ Վախճանելոց իւղի պարագան, որն ըստ էութեան վկայում է այսօր կիրառուող հանգուցեալներին, մասնաւորապէս հոգեւորականներին Միւռոնով օծելու սխալ եւ անտեղի կարգի մասին: Մեր սուրբ հայրերի ցուցումները յստակ են դարձնում, որ մեռելներին օծելու համար Եկեղեցին յատուկ այս նպատակով սահմանուած իւղի կիրառութիւն ունեցել է, որը միւս իւղերի նման դուրս է մնացել գործնական կեանքից: Բնականաբար այս իմաստով փորձեր են արուել այս թիւր սովորութեանը նաեւ աստուածաբանական մեկնութիւն էլ կցել՝ պատճառ դառնալով անհասկանալի վիճակի: Արդիւնքում ստացուել է, որ միջնադարում Վերջին օծման ձեւափոխուած Հիւանդների օծումը, որ կատարւում էր բացառապէս ողջերի վրայ, Հայ Եկեղեցում մի երկրորդ իմաստ է ստացել՝ մեռելների օծում՝ հետեւաբար տեղի տալով մի անբացատրելի չփոթի Հայ Եկեղեցու ծիսական խորհրդաբանական կեանքում: Այսինքն՝ պատկերը հետեւեալն է. Հիւանդաց օծումը լատինական ազդեցութեամբ վերափոխուել է Վերջին օծման, որն էլ դարձել է մահացածների օծում՝ պահպանելով «Վերջին օծում» անուանումը: Դերենիկ եպս. Փոլատեանն այն համարում է «ննջեցեալի հոգու համար եւս Սուրբ Հոգու շնորհը վերակոչող խորհրդաւոր մասնաւոր մի արարողութիւն» (տես Դերենիկ եպս. Փոլատեան, Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցու եօթ խորհուրդները, էջ 112): Սա բնաւ բաւարարող բացատրութիւն չէ, որովհետեւ Եկեղեցին յատուկ սահմանուած Հոգեհանգստեան կարգով արդէն իսկ աղօթքով հայցում է Աստծուն ննջեցեալի հոգու խաղաղութեան եւ յաւիտենական հանգստի համար: Եւ բացի սրանից, յատկօրէն տեսանք, որ թէ՛ Մակար Հայրապետի կանոնական կարգադրութեան եւ թէ՛ Սարգիս Շնորհալու ցուցման համաձայն՝ Եկեղեցին ունեցել է վախճա-

121 Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց, էջ 166
122 Անդ, էջ 166

Շարունակելով Յակոբոս առաքեալի վերաբերեալ հատուածի մեկնութիւնը՝ Սարգիս Շնորհալին մի շատ կարեւոր հաստատում եւս կատարում է՝ ասելով, որ «յայտ է յայսմանէ՝ որպէս եսս վարկանիմ, եթէ ոչ իւղն ինչ տայր զառողջութիւն հիւանդին, այլ՝ անունն Տեառն»[124]: Այս տողերից կարելի է ենթադրել, որ Սարգիս Շնորհալին չի ընդունում իւղի գործադրութեան կարեւորութիւնը եւ հետեւաբար, եթէ անկարեւոր է այս եզրաշերտը, ուրեմն տրամաբանօրէն էական չէ նաեւ հիւանդների օծումը: Շնորհալին յստակ կերպով շեշտադրում է, որ իւղն ինքնին չի կարող փրկարար կամ բուժիչ զօրութիւն ունենալ, եթէ այն զուգակցուած կամ աւելի եւս՝ սրբագործուած չէ աղօթքով՝ Տիրոջ անուան հայցման կնիքով նրա վրայ: Արդէն իսկ Ե դարում թէ՛ Հայ (Յովհան Մանդակունի) եւ թէ՛ Ընդհանրական Եկեղեցու (Վիկտոր Անտիոքացի) հայրերն անդրադարձել են այս խնդրին՝ յստակ բանաձեւելով խորհրդի նշանակութեան եւ պատճառականութեան պարագան[125]: Այսինքն՝ իւրաքանչիւր խորհրդի իրագործում պայմանաւորուած է նիւթական կամ նշանակի եւ հոգեւոր ներքին բովանդակութեան՝ պատճառի դրսեւորմամբ, որով նիւթը միջոց է դառնում հոգեւոր ներթափանցման համար: Սա ճշմարիտ է ոչ միայն հիւանդաց իւղի կամ օծման, այլեւ բոլոր խորհուրդների դէպքում անխտիր, ինչպէս օրինակ՝ սրբալոյս Միւռոնով Դրոշմի, Հաղորդութեան խորհուրդների եւ այլն: Ըստ էութեան՝ Սարգիս Շնորհալին մատուցում է խորհրդի ուղղափառ վարդապետութիւնը եւ կրկնում արդէն իսկ Ե դարում Եկեղեցու կեանքի կոչուած եւ ձեւաւորուած միտքն ընդհանրապէս խորհրդի եւ մասնաւորապէս հիւանդաց օծման վերաբերեալ: Թերեւս Սարգիս Շնորհալու ժամանակ արդէն իսկ կար այն սխալ ընկալումը, որ իւղի օրհնութիւնն ինքնին մի առանձին խորհուրդ է: Սրա արձագանքները գտնում ենք Բո-

նեալց իւղի կիրառութիւնը, որը բացարձակապէս տարբեր է սուրբ Միւռոնից: Հետեւաբար, ննջեցեալներին Միւռոնով օծելը ուղղափառօրէն խաթարումը կամ ազճատումն է այն փրկառութեան եւ եկեղեցաբանական հասկացութեան, որ Հայ Եկեղեցին ուղղափառօրէն կիրառել է: Այս իմաստով թէեւ ճիշտ է Եղնիկ եպիսկոպոս Պետրոսեանի դիտարկումը, որ «մեռեալ մարմինը կարիք չունի Սուրբ Հոգու շնորհի ստացման», սակայն այստեղ եւս չի հերքուած Միւռոնով օծելու անհիմն սովորութիւնը: Տես Епископ Езник Петросян, Армянская Церковь, с. 52.

124 Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց, էջ 166

125 Այս մասին խօսուել է «Հիւանդաց օծման խորհուրդն Ընդհանրական եկեղեցում Դ—Ե դարերում» գլխում:

նավենտուրայի վերաբերեալ հատուածում, որով մերժւում է այս ըմբռնումը՝ այն մեկնութեամբ, որ ոչ թէ իւղի օրհնութիւնն է խորհուրդ, այլ աղօթքի զօրութեամբ հիւանդին օծելու հանգամանքը: Այս նոյն մտահոգութեամբ է առաջնորդւում նաեւ Ստեփանոս եպիսկոպոս Օրբէլեանը Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոսին ուղղած դաւանական թղթում շեշտելով, որ «համարձակութիւն յոյժ մատուցանէ ժրագունից ի մեղս՝ մեղօք ապականել զոգիսն յուսով ձիթին»[126]: Այսու՝ սբ Յովհան Մանդակունուց մինչեւ Սարգիս Շնորհալի եւ ապա Մովսէս Երզնկացի տեսնում ենք Հայ Եկեղեցում այն աւանդական ուղղափառ յստակ մտածողութիւնը, որ դարերի հոլովոյթում՝ անկախ բոլոր տեսակի պայքարներից եւ մտածումներից, ուղիղ կերպով շարունակականութիւն եւ հետեւաբար դաւանական դիրքորոշում է եղել բոլոր ժամանակների համար Հիւանդաց օծման խորհուրդը մեկնաբանելու առումով: Համադրելով մեր հայրերի միտքը՝ աներկբայելիօրէն ընդգծւում եւ բանաձեւուած կերպով մեզ է ներկայանում Հայ Եկեղեցու իրական մօտեցումն ու ատուածաբանական հիմնաւորումը. «աղօթս արասցեն... եւ օծցեն իւղով յանուն Տեառն, եւ աղօթքն հաւատով փրկեսցեն զաշխատեալն» (Մանդակունի), եւ «զմարմնովն հիւանդն օծանել ըստ առաքելոյ եւ հոգւով հիւանդացն խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ տալ դեղ բժշկութեան» (Անձեւացի), քանզի «յայտ է յայսմանէ, եթէ ոչ իւղն ինչ տայր զառողջութիւն հիւանդին, այլ՝ անունն Տեառն» (Սարգիս Շնորհալի), սակայն «զիւղն աղօթքն զօրաւոր առնէ եւ դեղ բժշկութեան կատարէ: Վասն որոյ թէ երկոքին լինիցին՝ բարի է» (Մովսէս Երզնկացի): Ահաւասիկ այն մօտեցումը, որ ուղղափառօրէն եւ խորհրդի ճշգրիտ մեկնաբանութեամբ Հայ Եկեղեցին դաւանել է մինչեւ ԺԳ—ԺԴ դարերը, որը, սակայն, ինչ-ինչ պատճառներով շարունակութիւն չունեցաւ:

«Թող աղօթեն եւ օծեն իւղով Տիրոջ անուամբ, եւ հաւատքով արուած աղօթքը կը փրկի հիւանդին» (Մանդակունի), եւ «պէտք է մարմնով հիւանդին օծել ըստ առաքեալի եւ հոգով հիւանդներին խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ բժշկութեան դեղ տալ» (Անձեւացի), քանզի «յայտնի է սրանից, որ ոչ թէ իւղն է առողջութիւն պարգեւում հիւանդին, այլ Տիրոջ անունը» (Սարգիս Շնորհալի), սակայն «աղօթքն է իւղը զօրաւոր դարձնում եւ բժշկութեան դեղ է: Ուստի եթէ երկուսը լինեն, բարի է» (Մովսէս Երզնկացի):

126 Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 459

Կիրակոս կաթողիկոս Վիրապեցու խնդիրը

Հայ Եկեղեցու ներկայիս անհասկանալի դաւանական մօտեցումը վերջնականապէս բանաձեւողը եւ Հիւանդաց օծման խորհրդի արգելման հիմնական եւ մեծագոյն հեղինակը սբ Գրիգոր Տաթեւացին (+1410) է, ում վստահաբար կարելի է համարել այն սահմանակէտը, որից այս կողմ խորհուրդը գործնականում դադարեց գոյութիւն ունենալուց, որը, սակայն, մէկ անգամ եւս արծարծուեց ԺԵ դարում՝ Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի (1441—1443) գահընկէցութեան առնչութեամբ: Անշուշտ, սբ Գրիգոր Տաթեւացին որոշակի արդարացուած կամ չարդարացուած պատճառներ ունէր այդպէս վարուելու, ում մեկնաբանութիւններին մենք մանրամասնօրէն անդրադառնալու ենք առանձին գլխով որպէս մի կարեւորագոյն հանգրուան եւ եզրակէտ: Ուստի հարկ ենք համարում նախ վերլուծել Կիրակոս Վիրապեցու առնչակցութիւնն այս խնդրին պատմաքաղաքական, դաւանաբանական եւ Հայ Եկեղեցու ներքին կեանքի քննութեան համատեքստում՝ փորձելով ցոյց տալ Հիւանդաց օծման խորհրդի այսպէս կոչուած մերժման իրական եւ հիմնական պատճառը, որը, մեր կարծիքով, շատ քիչ յարաբերութիւն ունի բուն խորհրդի աստուածաբանական կամ ծիսադաւանական անյարիրութեան հետ, այլ աւելի կապուած է վերոթուարկեալ հարցերի հետ:

Մաղաքիա արք. Օրմանեանը, նկարագրելով Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի հրաժարեցման եւ նրա դէմ յարուցուած մեղադրանքների մանրամասները, նշում է, թէ ի թիւս երկու այլ մեղադրանքների «անցողակի նշանակուած է երրորդ կէտ մըն ալ, թէ հերձուածող է, զի ղօծումն հիւանդաց բերեալ է ի Կոստանդնուպոլսէ, որ վերջին օծումի ձէթ գործածելու վրայ պիտի մեկնուի, սակայն ոչ առաջ եւ ոչ ետքը Մեծոփեցին այդ մասին լուսաբանութիւն չ'տար»[127]: Սակայն նախքան բուն խնդրի քննարկումն անհրաժեշտ է իմանալ, թէ ով էր Կիրակոս Վիրապեցին, եւ ժամանակի ինչ գործընթացներ էին տեղի ունենում կրօնաքաղաքական գետնի վրայ:

Ինչպէս նկատում է «Խոր Վիրապի վանքը եւ նրա գրչութեան կենտրոնը» ուսումնասիրութեան հեղինակ Կարէն Մաթեւոսեանը, մինչեւ կաթողիկոս դառնալը Կիրակոս Վիրապեցին եղել է Կաֆայում (Ղրիմ) եւ այնտեղից վերադառնալիս իր հետ բերել է քերականական

127 Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, էջ 2126

եւ այլ բնոյթի նիւթեր պարունակող մի շատ արժէքաւոր ժողովածու, որը յետագայում խմբագրել ու Ցովհաննէս Արճիշեցուն ընդօրինակելու է տուել Թովմա Մեծոփեցին[128]: Փաստօրէն, Կիրակոս կաթողիկոսը Կաֆայից կամ Ղրիմից էր, ուր հայութիւնը հանգրուանել էր յատկապէս թաթարական արշաւանքներից յետոյ, եւ որը դարձել էր հայութեան մեծագոյն եւ աշխոյժ գաղթօջախներից մէկը[129]: Ինչպէս ամենուր, այստեղ եւս հայութիւնն աչքի էր ընկնում իր հաւատարմութեամբ եւ առեւտրի մէջ ցուցաբերած բացառիկ ձիրքերով՝ այդպիսով սերտ յարաբերութիւններ հաստատելով տեղի ջենովացի բնակիչների եւ առեւտրականների հետ: Կառուցւում են եկեղեցիներ եւ դպրոցներ, մեծ վերելք է ապրում մշակութային կեանքը, եւ միեւնոյն ժամանակ հայերը մեծապէս մասնակից են լինում քաղաքաշինութեան գործին ու տեղաբնիկների հետ համատեղ պատերազմ մղում արտաքին թշնամու դէմ: Այդ գաղթօջախի զարգացումը չէր կարող դուրս մնալ հայութեան միւս հատուածների տեսադաշտից: Այս մասին հայ գաղթօջախների պատմութեան վերլուծութեամբ զբաղուած հեղինակներից Աշոտ Աբրահամեանը գրում է. «Ղրիմահայ գաղթականների շատ ու քիչ ապահով վիճակը դէպի իրեն է սկսում քաշել գաղթականութեան նոր հոսանքներ ինչպէս մայր հայրենիքից, այնպես էլ Կիլիկիայից ու հայկական գաղթավայրերից: Շուտով Ղրիմում այնքան ստուար հայութիւն է կենտրոնանում, որ Ղրիմ թերակղզու արեւելեան մասը կոչւում է «Ծովային Հայաստան»»: Յատկանշական է, որ այս անուանումը տուել են ոչ թէ հայերը, այլ Եւգինիոս Դ պապը 1432 թուականի կոնդակում ուղղուած Սուղդայի հայութեանը, եւ «հայ գաղթավայրին նոյնիսկ «Մեծ Հայաստան» անունն է տալիս»[130]: Այսպիսի աշխոյժ եւ հեղինակաւոր գաղութը, սակայն, կրօնական առումով միատարը չէր եւ երեք շերտաւորում ունէր. առաջին շերտը ջենովացիների հետ բարիդրացիական յարաբերութիւններ հաստատելու նպատակով հակուածութիւն էր ցուցաբերում լատինականութեան հանդէպ,

128 Կարէն Մաթեւոսեան, Խոր Վիրապի վանքը եւ նրա գրչութեան կենտրոնը, «Էջմիածին», 1997, Բ—Գ, էջ 177: Տես ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լեւոն Խաչիկեան, Երեւան, 1955, Ա էջ 597:

129 Այս մասին մանրամասն տես Ա. Աբրահամեան, Համառօտ ուրուագիծ հայ գաղթավայրերի պատմութեան, Երեւան, 1964, էջ 157—196:

130 Անդ, էջ 169

սակայն ոչ պաշտօնապէս, այլ իրավիճակի շահեկանութեան տեսակէտից, երկրորդ շերտն ամբողջութեամբ կաթոլիկացած հայերի համայնքն էր, եւ երրորդը՝ հայադաւանները[131]: Սակայն կաֆահայութիւնն առաւել յայտնի է դառնում յունալատինական միութեան նպատակով 1439 թուականին գումարուած Ֆլորենցիայի ժողովի որոշումների միջոցով: Մեր նպատակից դուրս է քննել սոյն ժողովի գումարման պատճառներն ու մանրամասները, սակայն կարեւոր ենք համարում նշել, որ Եւգինիոս Դ պապը Արեւելեան Եկեղեցիների հետ միութենական քայլ անելու ձգտումով հրաւէր է ուղղում նաեւ Հայ Եկեղեցուն: Այս հրաւէրը կա՛մ մերժւում, կա՛մ էլ անպատասխան է մնում պաշտօնական Աթոռից, սակայն արձագանք է գտնում Կաֆայի հայութեան կողմից, որտեղից պատգամաւորներ են ուղարկւում մասնակցելու ժողովին: Բանակցութիւնների արդիւնքում Եւգինիոս պապը հրապարակում է մի կոնդակ, որն ընդհանրապէս յայտնի է որպէս «Հրահանգ առ Հայս» (Decretum pro Armenis) անունով[132]: Սոյն «Հրահանգը» բաղում այլ հարցերի թւում անդրադառնում է նաեւ Հիւանդաց օծման խորհրդին, անշուշտ, «Վերջին օծում» անունով, որն ըստ էութեան բառացիօրէն վերցուած էր Թովմա Աքուինացու տեսութիւնից[133]: Այժմ, երբ յստակ է, թէ ինչ էին իրերի դրութիւնը եւ վերաբերմունքը

131 Անդ, էջ 171—72, նաեւ Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Բ, էջ 2076

132 Անդ, էջ 2074—2086: Ֆլորենցիայի ժողովի եւ հայերի մասնակցութեան մասին տես The Oxford Dictionary of the Christian Church, ed. F. L. Cross, Oxford University Press, 1978, էջ 519:

133 «Հրահանգն» իրականում ոչ թէ դաւանաբանական հիմնաւորում է, այլ մի վարդապետական ցուցում ըստ Թովմա Աքուինացու վարդապետութեան, որի մեջ յուզող հատուածը ներկայացնում ենք ստորեւ. «Հինգերորդ խորհուրդը Վերջին օծումն է, որի նիւթը եպիսկոպոսի կողմից օրհնուած ձիթենու իւղն է: Այս խորհուրդը պէտք է իրագործուի միայն այն հիւանդի վրայ, ով մահամերձ է, եւ օծումը պէտք է մատակարարուի մարմնի հետեւեալ մասերին. աչքերին՝ որպէս տեսողութեան զգայարանի, ականջներին՝ լսողութեան, քթին՝ հոտոտելիքի, բերանին՝ ճաշակելիքի կամ խօսելու, ձեռքերին՝ շօշափելիքի, ոտքերին՝ քայլելու, եւ կրծքին, որովհետեւ այնտեղ են փթթում բոլոր ցանկութիւնները: Խորհրդի բանաձեւը հետեւեալն է. այս սուրբ օծութեամբ եւ Իր ամենառատ ողորմութեամբ Թող Տէրը ների քեզ՝ ինչ որ գործել ես տեսողութեամբ. եւ նոյնը կատարել բոլոր անդամների վրայ: Այս խորհուրդն իրականացնողը քահանան է: Արդ՝ խորհրդի ներգործութիւնը մտքի բժշկութիւնն է եւ այսպիսով, եթէ նպատակայարմար է, այն կարող է լինել նաեւ մարմնի բժշկութիւն...»: Տես Sacraments and Forgiveness, էջ 304:

կաֆահայութեան հանդէպ, փորձենք վերլուծել Օրմանեան սրբազանի ակնարկը, թէ Կիրակոս Վիրապեցին որպէս հերձուածող մեղադրւում էր Հիւանդաց օծման խորհուրդը Հայ Եկեղեցի ներմուծելու համար, որը բերուել էր Կ. Պոլսից:

Մաշտոցեան Մատենադարանի թիւ 7117 ձեռագիր ժողովածուն այլ գործերի թւում պարունակում է նաեւ հիւանդների իւղի օրհնութեան եւ Հիւանդաց օծման խորհրդի ծիսակարգը: Սոյն կարգը, ըստ ձեռագրի յիշատակարանի, որ պատկանում է նշանաւոր Թովմա վարդապետ Մեծոփեցուն, Կաֆայից Հայաստան է բերել Կիրակոս Վիրապեցին, ապա սրբագրուել է Մեծոփեցու եւ ընդօրինակուել Յովհաննէս Արճիշեցու կողմից[134]: Յիշատակարանի վերջին հատուածն անուղղակի-օրէն վկայում է այս ծիսակարգի պատրուակով յարուցուած դժգոհութեան մասին: Թովմա Մեծոփեցին գրում է. «Բայց դուք ընկալարուք զսա զտախտակն Մովսիսի եւ զաւետարանն Քրիստոսի, եւ մի՛ ոք պախարակեսցէ զսա, զի ի վաղուց ժամանակաց նախատանս կրէաք յազգաց քրիստոնէից, եւ այսօր ետ ի ձեռս մեր. եւ որ ոչ ընդունի զսա, պատասխանի ինքն տացէ Քրիստոսի Աստուծոյ մերոյ»[135]: Փաստօրէն, սա մի հրաշալի պատրուակ էր Կիրակոս Վիրապեցուն մեղադրելու աղթարմայութեան մէջ, մանաւանդ որ արդէն իսկ գոյութիւն ունէր սբ Գրիգոր Տաթեւացու հեղինակաւոր հրահանգը, «զի մի՛ համարձակեսցին քահանայք եւ զձէթ օրհնելն վերստին մուծցեն յեկեղեցիս մեր»[136]: Այսինքն՝ կարող է հաստատուել այն տեսակէտը, թէ Հայ Եկեղեցին երբեք էլ չի ունեցել Հիւանդաց օծման խորհուրդը, եւ հետեւապէս, դրա լաւագոյն փաստարկը Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի հրաժարեցման հանգամանքն է: Սակայն մեր եզրակացութիւնը բոլորովին հակառակն է՝ մի քանի տեսակէտներով: Առաջին՝ Վիրապեցու՝ Կաֆայից բերած Հիւանդաց օծման խորհրդի ծիսակարգը բացարձակապէս տարբեր է լատինական ծիսակարգերից, թէեւ պարունակում է տարրեր «Հրահանգում» առկայ ցուցումներից[137]: Այսուհանդերձ, խորհրդի բնոյթը

134 Այս ծիսակարգը հանգերձ քննութեամբ տես սոյն գործի «Ցաւելուածում»:

135 Տես «Ցաւելուածի» Յիշատակարանը:

136 «Գիրք հարցմանց», էջ 605:

137 Համեմատութիւնը տես «Ցաւելուածում»:

138 Աղօթքում կարդում ենք. «Տո՛ւր սմա զայսոսիկ, Տէր՝ առողջութիւն մարմնոյ, անբծութիւն մտաց, երկայնմտութիւն առ Քեզ եւ խորհել զհանոյն Քո...» (տես «Ցաւելուածում»):

հիւանդի բժշկութիւնն է եւ ոչ թէ պատրաստութիւնը մահուան, այսինքն՝ այն ոչ թէ Վերջին օծումն է, ինչպէս «Հրահանգում», այլ Հիւանդաց օծում, ինչպէս թելադրում է ուղղափառ ըմբռնումը[138]: Երկրորդ՝ Կիրակոս Վիրապեցու հրաժարեցման պարագաներում Հիւանդաց օծման խորհուրդը, ինչպէս ներկայացնում է Մաղաքիա արք. Օրմանեանը, որպէս մեղադրանք առանձնակի շեշտադրութիւն չունի, այլ այն պատճառ էր ներեկեղեցական պայքարի[139]: Ուստի ոչ թէ Հայ Եկեղեցու Հիւանդաց օծման խորհուրդը չունենալու կամ չընդունելու դաւանական մտահոգութիւնից է կատարուել Վիրապեցու հրաժարեցումը, այլ այն ներքին խառնակութիւնների պատճառով, որոնք գոյութիւն ունէին Աթոռի տեղափոխութիւնից առաջ եւ յետոյ: Եւ երրորդ՝ Հիւանդաց օծման խորհրդի առնչութեամբ յարուցուած մեղադրանքը պարզապէս մի պատրուակ էր եւ ո՛չ Հայ Եկեղեցու դաւանանքին հակասող մտահոգութիւն Վիրապեցուն հրաժարեցնելու համար: Հետեւաբար, կարող ենք հաստատել մեր այն կարծիքը, որ Հայ Եկեղեցին մինչեւ ԺԵ դարն ունեցել եւ կիրառել է Հիւանդաց օծման խորհուրդը, որը, սակայն, գործնական կեանքից դուրս է մղուել լատինական ներթափանցմանն ընդդիմանալու եւ ազդեցութիւնից խուսափելու մտահոգութիւնից դրդուած՝ յատկապէս սբ Գրիգոր Տաթեւացու ջանքերով:

Սբ Գրիգոր Տաթեւացու հայեացքները Հիւանդաց օծման խորհրդի վերաբերեալ

Անտարակուսելի է, որ Հայ Եկեղեցու տեսակէտը Հիւանդաց օծման խորհրդի վերաբերեալ վերջնականապէս ձեւաւորուել եւ հաստատուել է սբ Գրիգոր Տաթեւացու կողմից, ով էլ մեծագոյն ազդեցութիւնն է ունեցել յետագայ հեղինակների մտածողութեան եւ դիրքորոշման վրայ: Յատկանշական է, ինչպէս արդէն անդրադարձել ենք, որ ԺԲ դարից յետոյ հայ-լատինական եւ ապա հայ ուղղափառ-կաթոլիկ միութենական յարաբերութիւնների հիմքում, բազմաթիւ հարցերի կողքին, ընդդրկուած է եղել Հիւանդաց օծման խորհրդի, կամ այլեւս Վերջին օծման, յստակեցման եւ պարզաբանման խնդիրը: Նոյնիսկ ԺԹ դարում Կ. Պոլսում ծաւալուած ուղղափառ եւ կաթոլիկ համայնքների միութեան ձգտումների ամփոփումը եղաւ, ըստ Օրմանեան սրբազան-

139 Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Բ, էջ 2126:

նի, Պօղոս պատրիարքի կողմից Վերջին օծման իւղի օրհնութիւնն ու համայնքներին առաքումը[140]: Այսպիսով՝ այստեղ փորձելու ենք համապարփակ կերպով անդրադառնալ Տաթեւի մեծ սուրբի հայեացքներին, ինչպէս նաեւ ըստ կարի մերում ցոյց տալ այն զուգահեռ գծերը, որոնք առկայ են յատկապէս լատին մտածողների մօտ, որով փաստորէն ընդգծելու ենք ամբողջ ԺԴ դարի իրականութիւնը: Նաեւ, միաժամանակ, ճիշտ պատկերացնելու համար յետագայի զարգացումները, համապատասխանաբար վկայակոչելու ենք Հայ Եկեղեցու վերջին ժամանակների կարեւոր քրիստոնէականներն ու ծիսական գրուածքները, որոնք լաւագոյնս կ՚արտայայտեն այս ընդհանուր մօտեցումը, որն ըստ էութեան ձեւաւորուել է Գրիգոր Տաթեւացուց յետոյ:

Առաջին եւ թերեւս ամենակարեւոր խնդիրը սբ Տաթեւացու խորհրդաբանական համակարգի քննարկումն է. նրանում ակնյայտ է սխոլաստների ուղղակի ազդեցութիւնը կամ նրանց օրինակով տրուած մեկնաբանութիւնները: Նախ՝ Տաթեւացին աներկբայօրէն եւ նոյնիսկ առանց քննարկման ընդունում է խորհուրդների եօթ թուի սահմանումը[141], որը Պիտեր Լոմբարդի հեղինակաւոր ներմուծումն էր համաքրիստոնէական կեանքում: Մինչդեռ, ըստ ուղղափառ մտածողութեան, Եկեղեցու ամբողջ կեանքն է խորհրդական, որովհետեւ Աստուծոյ շնորհը չի սահմանափակւում այս թուով: Ուղղափառ ձեւակերպմամբ՝ Եկեղեցու խորհրդական կեանքը եւ հիմնական խորհուրդը պէտք է ընկալուի Քրիստոսով, այսինքն՝ Եկեղեցու ներքին կեանքի քրիստո-

140 Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Գ, էջ 3465: Այս միութենական ձգտումների արդիւնքում 1820 թուականին ծնուեց «Բան հրաւէր սիրոյ» շրջաբերականը, որը պարունակում էր երկուստեք զիջումներ եւ հաւանականութիւնն ունէր լինելու առաքելական եւ կաթոլիկ համայնքների միութեան կանոնադիրը: Սակայն այն շատ կարճ կեանք ունեցաւ, բնականաբար նաեւ միութենական շարժումը, որը քննութեան առարկայ դարձաւ նաեւ պետութեան կողմից, որում առանցքային տեղ էր գրաւում յատկապէս իւղի օրհնութեան խնդիրը: Այսինքն՝ իւղի օրհնութիւնը մտածողութեան առումով հոմանիշ էր լատինականութեան եւ հետեւաբար չէր կարող մնալ առանց մեկնաբանութիւնների եւ դատապարտումների: Մեր կարծիքով՝ յատկապէս իւղի օրհնութիւնը միութեան կամ փոխհասկացողութեան խորհրդանշանն էր եւ այդ պատճառով էլ իրականացաւ հայոց պատրիարքի կողմից: Տես անդ, էջ 3469: Այս մասին տես Michael Schmaus, Dogma 5; The Church as Sacrament, Sheed and Ward, London, 1981, vol. 5, էջ 7—10:

141 Տես «Գիրք հարցմանց», էջ 587:

սակենտրոնութեամբ: Այս հասկացութեան հիմքը պօղոսեան ձեւակերպումն է[142], եւ հետեւաբար, խորհուրդները Աստուծոյ փրկարար ինքնայայտնութեան բարձրակէտն են Եկեղեցու ներկայ փորձառութեան մէջ՝ շարունակելով Քրիստոսի քաւութեան գործը Սուրբ Հոգու միջոցով[143]:

Սուրբ Գրիգոր Տաթեւացու համար միանշանակ է, որ Եկեղեցու կեանքի առանցքը եօթ խորհուրդներն են, որոնք ըստ ներգործութեան դասակարգելիս նա դարձեալ հետեւում է լոմբարդեան նշանաւոր համակարգին. «Ո՞րք են է խորհուրդք եկեղեցւոյ. նախ՝ մկրտութիւն, երկրորդ՝ դրոշմն, երրորդ՝ հաղորդութիւնն, չորրորդ՝ ապաշխարութիւնն, հինգերորդ՝ վերջին օծումն, վեցերորդ՝ կարգ քահանայութեան, եօթներորդ՝ պսակն»[144]: Այսինքն՝ ԺԳ դարի երկրորդ եւ ԺԴ դարի առաջին կէսին նկատուող անցման շրջանում դեռեւս չի օգտագործւում «Վերջին օծում» եզրը, թէեւ Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսն առանց բանաձեւելու անուղղակիօրէն մատնանշում է Հիւանդաց օծման խորհրդի էութենական փոփոխութեան գործընթացը: Այս

142 «Զխորհուրդն որ ծածկեալ էր ի յաւիտեանցն եւ յազգաց, որ այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց» (Կող. Ա 26):

143 Տես Panayiotis Nellas, Deification in Christ, էջ 146: Հայ Եկեղեցու խորհրդաբանական ընկալման վերաբերեալ Խոսրով Անձեւացին հետաքրքիր տեղեկութիւն է տալիս, որը Ժ դարում գոյութիւն ունեցող ծիսաբանական համակարգի ընդհանուր ուրուագիծն է. «Դարձեալ, զի ոչ չիք ինչ շնորհ զոր առանց առաջնորդաց տայ Աստուած. այլ վերստին ծննդեան որ ի Հոգւոյն, եւ կենարար մարմնոյ եւ արեան Տեառն բաշխման, թողութեան մեղաց դարձելոցն ի խոստովանութիւն ապաշխարութեան, եւ ամուսնութեամբ զուգութեան, եւ ընծայից եւ պատարագաց եւ նուիրաց մատուցմանց, եւ հոգւոցն հանգուցելոց առ Քրիստոս յուղարկմանց, եւ մարմնոց նոցա ընդ ամենապահ աջովն Քրիստոսի ամբանալոյ...» (Խոսրով Անձեւացի, Գիրք, որ կոչի մեկնութիւն աղօթից, էջ 45):

144 Փաստօրէն, Գրիգոր Տաթեւացին նոյնութեամբ կրկնում է խորհուրդների՝ Պիտեր Լոմբարդի հաստատած եւ Թովմա Աքուինացու կողմից իրացուած յաջորդական շարակարգումը: Իր հուչակաւոր «Գիրք նախադասութեանց» գործում Լոմբարդը նշում է. «Նոր Օրէնքի խորհուրդներն են մկրտութիւնը, դրոշմը, օրհնութեան հացը, այսինքն՝ հաղորդութիւնը, ապաշխարութիւնը, քահանայական կարգը, ամուսնութիւնը» (տես Thomas Aquinas, Summa 3a, 60—65): Բացի անհատական գրողների համոզմունքը լինելուց, այս նոյն դասակարգումը կանոնական ուժ ստացաւ եւ հետեւաբար դարձաւ ամբողջ Կաթոլիկ եկեղեցու եկեղեցաբանութեան հիմքը կամ զարգացման նախապայմանը Ֆլորենցիայի 1439 թուականի ժողովի որոշումներով, որն արտայայտուած է «Հրահանգ առ Հայս» կանոնական թղթում: Այս մասին տես ծնթ. 133:

առումով առաջին հեղինակը, որ գործածում է «Վերջին օծում» եզրը, Գրիգոր Տաթեւացին է՝ ըստ էութեան դառնալով Հայ Եկեղեցու մինչ այդ որդեգրած (ոչ թէ կանոնական իմաստով, այլ Եկեղեցու մտածողութեան) ծիսական աստուածաբանութեան վերաբերմունքի կտրուկ այլափոխողը: Տաթեւացին չի խուսափում նաեւ հետեւել իւրաքանչիւր խորհրդի նշանակութեան եւ ներգործութեան՝ պատճառականութեան եւ խորհրդանշականութեան լատինական բացատրութեանը, ըստ որի՝ իւրաքանչիւրն իր ուրոյն բովանդակութեամբ համապատասխանաբար ուղղուած է մեղքից ազատագրուելուն եւ ապաքինմանը[145]: Ըստ Տաթեւացու՝ «....Հինգերորդ վերջին օծումն, որ է եղելոցն ի կենցաղոյս եւ զերծելոցն ի պատերազմէ»[146]: Խորհրդի գործադրման երկրորդ պատճառը յաւիտենական փառքին արժանանալն է, որին, բնականաբար, արգելք կարող է լինել մեղքի առկայութիւնը[147]: Իսկ այդ մեղքը ոչ թէ ադամական կամ մահացու մեղքն է, այլ «ներելի»[148], որը վերջնականապէս սրբւում է մահուան մահճում, քանզի ադամական կամ սկզբնական մեղքը լուծւում է մկրտութեամբ, իսկ յետմկրտութենական կամ, Տաթեւացու ձեւակերպմամբ, ներգործական մահացու մեղքը սրբւում է տեւապէս շարունակուող ապաշխարութեան խորհրդով[149]: Վերլուծելով խորհրդի հետեւանքներն ու ազդեցութիւնը՝ Տաթեւացին մեկնաբանում է լատին մտածողների նոյն սկզբունքով, որի համաձայն՝ խորհուրդը երկբնոյթ է՝ հիմնականում նպատակամիտուած մեղքերի թողութեանը եւ ապա դրա միջոցով, եթէ նախասահմանուած է, նաեւ մարմնական բժշկութեան. «Եւ գործ այս խորհրդոյս այս է, որ զմնացեալ ներելի մեղքն թողու եւ այս յորժամ մեռանի: Իսկ թէ զերծանի ի

145 Հմմտ. Thomas Aquinas, Summa 3a, 65 a 1:

146 «Գիրք հարցմանց», էջ 587: Զուգահեռը տես Ալեքսանդր Հալեսցի եւ Բոնավենտուրա («Ընդհանրական եկեղեցի. սխոլաստիկայի շրջան (ԺԱ—ԺԳ դարեր)» գլխում):

147 «Օծումն է խորհուրդ ի լրումն արդարութեան, զի ելեալք ի պատերազմէ զփոշին եւ զքիրտն սրբեսք, որպէս ելեալքն ի մարմնական պատերազմէ» («Գիրք հարցմանց», էջ 587): Զուգահեռը տես Թովմա Աքուինացի (մեր աշխատութեան վերոնշեալ գլխում):

148 «Գիրք հարցմանց», էջ 587: Զուգահեռը տես Թովմա Աքուինացի, Բոնավենտուրա, Ալեքսանդր Հալեսցի (նոյն գլխում):

149 «Մկրտութիւնն է ընդդէմ սկզբնական մեղացն... ապաշխարութիւնն է ընդդէմ ներգործական մահու չափ մեղացն» («Գիրք հարցմանց», էջ 587): Զուգահեռը տես Թովմա Աքուինացի, Բոնավենտուրա, Ալեքսանդր Հալեսցի (նոյն գլխում):

մահուանէ, փութով առողջութեան պատճառ լինի»[150]: Այսինքն՝ Գրիգոր Տաթեւացին յստակօրէն, առանց միջամտութեան կամ որեւէ ձեւափոխման, գրեթէ բառացիօրէն հետեւում է սխոլաստ վարդապետներին՝ դառնալով հայ իրականութեան մէջ նրանց իսկ գաղափարների զարգացնողը: Փաստօրէն, Գրիգոր Տաթեւացու ձեւակերպմամբ օծումը ոչ թէ հիւանդների օծում է՝ ըստ վաղ աւանդութեան, այլ խորհուրդ է մահուան պատրաստութեան համար: Այսուհանդերձ, Տաթեւացու մտածողութեան ուշադիր եւ մանրակրկիտ ընթերցումը ցոյց է տալիս, որ նա անուղղակիօրէն ընդունում է հիւանդների օծման անհրաժեշտութիւնը, սակայն ծայրագոյն զգուշաւորութիւն է դրսեւորում՝ իւրայատուկ կերպով զերծ եւ անկախ պահելու Հայ Եկեղեցին լատինականացումից: Բայց, եթէ մէկ կողմից այսպիսի մօտեցումը կարող էր արդարացուած լինել ժամանակի թելադրանքով եւ Հայ Եկեղեցու ընդհանուր շահի պաշտպանութեան տեսանկիւնից, միւս կողմից այն չի կարող ընդունելի լինել խորհրդի աստուածաբանական, ներքին իմաստի հիմնաւորման առումով: Տաթեւացին, թէեւ արտաքնապէս խստագոյն դատապարտութեամբ մերժում է զանազան իւղերի գործածութիւնը եւ տրամաբանօրէն՝ նրանցով իրականացուող խորհուրդներն ու կարգերը[151], այնուամենայնիւ, ներքնապէս անուղղակիօրէն մատնանշում է նրանց գոյութիւնը: Այսպէս, խօսելով Դրոշմի խորհրդի մասին՝ սբ Գրիգոր վարդապետը թելադրում է հետեւեալը. «Եւ գիտելի է, զի որ ի ճակատն եւ ի սիրտն եւ ի թիկնամէջն օծանէ, այն դրոշմ է: Եւ որ զհինգ զգայութիւնսն օծանէ՝ այն ի խորհուրդ օծմանն է ծածկապէս: Եւ որ զայլ մասունս օծանէ, յայնմ խորհրդոյ է, որ յառաջ քան զմկրտութիւնն օծանեն այլ ազգք քրիստոնէից»[152]: Այս հատուածը պարզորոշ կերպով հակադրւում է թէ՛ Մակար հայրապետի եւ թէ՛ Յովհան Օձնեցու կանոնական կարգադրութիւններին եւ ցուցումներին, ըստ որոնց՝ իւրաքանչիւր կարգ կամ խորհուրդ իր յստակ ուղղուածութիւնն ու սահմանումն ունի եւ չի կարող միախառնուել կամ ձուլուել այլ խորհուրդների հետ: Պարզամտութիւն կը լինի կարծել, թէ Գրիգոր Տաթեւացին ծանօթ չէր այս նշանաւոր հայրապետերի հրահանգներին կամ վաղ Եկեղեցու աւանդութեանը: Նոյն այս հատուածից իսկ կարող ենք նկատել, որ նա առանձնակիօրէն նշում է ե՛ւ հիւանդաց, ե՛ւ երախայից օծման խորհուրդն ու կարգը որպէս Հայ Եկեղեցու ծիսաաստուածաբանական համակարգի յատկանիշներ, մանաւանդ որ աւելի ուշ շեշտադրում է. «Եւ թէ ոք ասիցէ՝ օծումն խորհուրդ է, ընդէ՞ր մեք ոչ ունիմք: Ասեմք, թէ ունիմք զխորհուրդ օծմանն, այլ ծածկապէս.... զդրոշմն եւ զառաջին օծումն եւ զվերջին օծումն կատարեմք ի մկրտեալն»[153]: Սկզբունքօրէն Տաթեւացին չի մերժում խորհուրդը, այլ, մեր կարծիքով, ամէն ջանք գործ է դնում նրա ձեւակերպումը յարմարեցնելու իր նպատակին: Յատկապէս ընդգծելի է «ծածկապէս» բառը[154], որ ենթադրում է, թէ խորհուրդն ինքնին գոյութիւն ունի: Տարօրինակ է, սակայն, այն պնդումը, «որ զանազան իւղ ոչ ունիմք, բայց միայն զմեռոնն սուրբ»[155], որով թերեւս հաստատւում է սրբալոյս Միւռոնի գերագոյն լինելու հանգամանքը, որը, բացի իր հոգեւոր հրաշալի ներքնութիւնից, նաեւ ազգային մէկութեան եւ ամբողջականութեան արժէք ունէր, եւ որի՝ Եկեղեցու կեանքում առանցքային նշանակութիւն ունենալու պատճառով է միայն արդարացուած Աւագ հինգշաբթի օրը իւղ օրհնելու կարգը. «Այլ ի մեծի ե շաբաթին օրհնեմք իւղ, զի մի՛ մեռոնն սուրբ ի հասարակաց ոտս մերձեսցի»[156]: Այսուհանդերձ, թէեւ Աւագ հինգշաբթի օրը իւղ[157] օրհնելը չի արգելւում կամ մերժւում Տաթեւացու կողմից, նրա

150 «Գիրք հարցմանց», էջ 604: Զուգահեռը տես Թովմա Աքուինացի, Բոնավենտուրա, Ալեքսանդր Հալեսցի (նոյն գլխում):

151 «Գիրք հարցմանց», էջ 604

152 Անդ, էջ 593

153 Անդ, էջ 604

154 Սակայն Դրոշմի եւ Հիւանդաց օծման բանաձեւերը բացարձակապէս տարբեր ուղղուածութիւն ունեն, եւ նրանց պարզագոյն համեմատութիւնն իսկ ցոյց է տալիս, որ դրանց մէկտեղումը կամ միախառնումը՝ որպէս մէկ խորհուրդ ներկայացմամբ, պարզապէս ծիսական եւ աստուածաբանական անլուծելի խնդիր է ստեղծում, եւ երկու խորհուրդների առանձնակի խորհուրդը չի շեշտւում, այլ մէկ խորհուրդ՝ երկու բանաձեւմամբ:

ԴՐՈՇՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ	ՀԻՒԱՆԴԱՑ ՕԾՈՒՄ
Կնիքս այս յանուն Յիսուսի լուսաւորեսցէ զաչս քո, զի մի՛ ննջեսցես ի մահ...	Օծանեմ զաչսդ քո իւղով սրբով, զի զոր ինչ տեսութեամբ մեղար, սորին օծութեամբ իւղոյս փրկեսցիս վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

155 «Գիրք հարցմանց», էջ 604

156 Անդ, էջ 604

157 Ուշադրութեան արժանի է, որ Տաթեւացին այս պարագային չի օգտագործում «ձէթ» բառը, քանի որ մէկ նախադասութիւն վեր նա խիստ կերպով շեշտում է. «Զի մի՛ համարձակեսցին քահանայք եւ զձէթ օրհնելն վերստին մուծցեն յեկեղեցիս մեր»: Անդ, էջ 605:

գործածութեան թէ՛ եղանակը եւ թէ՛ նիւթը մնում են անհասկանալի: Ցայտնի է, որ Աւագ հինգշաբթի օրը Միւռոնին զուգահեռ օրհնուել են նաեւ երախայից եւ հիւանդաց իւղերը, որոնք, ըստ ցուցման, բաղադրութեամբ պէտք է ձիթենու ձէթ կամ իւղ լինէին: Սակայն այս կէտում սբ Գրիգորը հարցն առկախ է թողնում եւ չի բացայայտում իւղի ինչ լինելը: Արդեո՞ք այն որեւէ բոյսի ձէթ էր, թէ՞ կենդանական իւղ կամ կարագ, ինչպէս այսօր կիրառւում է Հայ Եկեղեցում:

Մեր կածիքով՝ այն չէր կարող կարագ կամ կենդանական իւղ լինել, որին արդէն անդրադարձել ենք, քանզի ծէսը տեղի էր ունենում Եկեղեցու Աւագ շաբաթի ծոմապահութեան եւ պահեցողութեան շրջանում: Բացի այս ծիսական կարգապահական արգելքից, շատ կարեւոր է նաեւ ծիսական աստուածաբանութեան եզրաշերտը: Եկեղեցին եւ նրանում իրագործուող ծիսական կեանքն Աստուծոյ ներկայութեան եւ Երկնքի արքայութեան իրականութիւնն են երկրի վրայ: Միեւնոյն ժամանակ Եկեղեցին կատարելատիպն է նախաանկումային երանական կեանքի, որում կերակուրը կամ սնունդը զուտ բուսական տարրերից էր[158]: Եւ այս իսկ իմաստով՝ ծէսի մէջ նիւթի միջոցով թանձրացած հոգեւոր կերակուրը կամ նրա խորհրդանիշն իրականացւում է միմիայն բուսական պտուղներով, ինչպէս օրինակ՝ Հաղորդութեան հացն ու գինին, սրբալոյս Միւռոնը, աղը, ջուրը եւ այլն: Եւ բնականաբար, բացառութիւն չէր կարող լինել նաեւ իւղի պարագան: Այսինքն՝ թէպէտեւ Գրիգոր Տաթեւացին յստակօրէն չի խօսում սրա մասին, այդուամենայնիւ չէր էլ կարող այլ կերպ մտածել, որին եւ անդրադառնում է վախճանելոց կամ, աւելի ստոյգ, վախճանեալ քահանաներին օծելու պարագային: Սակայն այստեղ իւղը ոչ թէ վախճանելոց ձէթն է, որի մասին խօսում է Սարգիս Շնորհալին, այլ սրբալոյս Միւռոնը, որի կիրառութիւնը պարզապէս անհամապատասխան է այս դէպքում: Հարկ է խոստովանել, որ Գրիգոր Տաթեւացու բացատրութիւնները, ննջեցեալ հոգեւորականներին Միւռոնով օծելու ջատագովութեան առումով, այնքան էլ համոզիչ չեն. առաջին՝ ինչ էլ որ լինի պարագան, մեր կարծիքով՝ չի կարելի անկենդան մարմինն օծել սուրբ Միւռոնով, որը, խորհրդանշական ազդեցութեամբ եւ կիրառմամբ լինելով Սուրբ Հոգու շնորհաբաշխման

158 Մն. Ա 29. «Եւ ասաց Աստուած. «Ահաւադիկ ետու ձեզ զամենայն խոտ սերմանելի՝ սերմանել սերմն, որ է ի վերայ ամենայն երկրի, եւ զամենայն փայտ որ ունիցի յինքեան պտուղ սերման սերմանելոյ՝ ձեզ լիցի ի կերակուր»:

առհաւատչեան, որեւէ իմաստով օգտակարութիւն չի կարող ունենալ շունչ եւ հոգի չունեցող մարմնին[159]:

Այս հանգամանքը չափազանց յստակ է Գրիգոր Տաթեւացու համար, ով փորձում է առկայ հակադրութիւնը լուծել հետեւեալ աննախադէպ եւ անհասկանալի մեկնաբանութեամբ. «Եւ թէ, ասեն, միայն մարմինն օծանի, զի՞նչ ներգործէ ի հոգին: Ասեմք թէ՝ յորժամ միաւորեալ էր ի մարմինն, միութեամբ ներգործիւր ի նմա ամենայն մարմնականքն: Իսկ այժմ, որ բաժան է՝ բաժանմամբ հասանէ ի նա ամենայն սրբութեամբ»[160]: Այսպիսի օծումը, այսինքն՝ խորհրդաբար հոգու վրայ եւս ազդեցութիւն ունենալու հանգամանքը, թէկուզեւ հոգին արդէն իսկ բաժանուած է մարմնից եւ ներգրաւուած Աստուծոյ տիեզերական տնտեսութեան անսահմանութեան ոլորտում, Տաթեւացին համադրում է հոգեհանգստեան աղօթքի կամ թաղման կարգի հետ՝ եզրակացնելով, որ այն թէպէտ մարմնական իրականութիւն է, արդիւնքը կամ հետեւանքը հոգու հետ է առնչւում[161]: Սակայն մի՞թէ կարելի է շօշափելի կերպով ուղղակիօրէն մարմնի վրայ իրագործուող օծումը նոյնական համարել զուտ հոգուն վերաբերող աղօթքի հետ եւ դրանք միեւնոյն աստիճանի վրայ կարգել: Այս խնդիրը մեզ համար տարակուսելի է: Երկրորդ՝ Տաթեւացին վերոբերեալ խնդիրը պարզաբանելու մէջ հակասում է ինքն իրեն: Արդիւնքում «Վերջին օծում» նոյն անուանումը կրող խորհուրդը դառնում է կամ երկմասնեայ եւ կամ էլ դէմ-յանդիման ենք գտնւում մի այլ անմեկնելի եւ նոյնիսկ վտանգաւոր մեկնաբանութեան: Այսպէս՝ մեկնելով օծման խորհրդի կիրառման նպատակը՝ Տաթեւացին նշում է. «Գործ այս խորհրդոյս այս է, որ զներելի մեղքն թողու: Եւ այս յորժամ մեռանի»[162]: Պարզից էլ պարզ է, որ խոս-

159 Հարկ է նշել, որ, ըստ հին հրէական սովորութեան, ննջեցեալները օծուել են իւղով, սակայն դա որեւէ խորհրդական բնոյթ չի կրել, այլ պարզապէս կատարուել է մահացածին պատուելու նպատակով: Տես Մն. Ծ 2, Բ Մն. ԺԶ 14: Այս մասին տես նաեւ The New International Dictionary of New Testament Theology, ed. Colin Brown, Paternoster Press, London, 1986, էջ 120—121:

160 «Գիրք հարցմանց», էջ 605

161 «Ապա թէ ոչ ժամ է քեզ ասել թէ ամենայն կարգ թաղման մարմնոյն՝ ոչ է օգուտ հոգւոյ ննջեցելոցն: Ապա եւ ոչ աղօթք եւ պաշտօն քահանայից կամ տուրք կամ պատարագք է օգուտ հոգւոյն ըստ քեզ, որ է բնաւ սուտ եւ չար հերձուած»: Տես «Գիրք հարցմանց», էջ 604:

162 «Գիրք հարցմանց», էջ 604

քը վերաբերում է կեանքի վերջին հանդրուանում գտնուող մահամերձին, եւ բնականաբար, այս դէպքում խորհուրդը կարող էր քաւչական բնոյթ ունենալ, ինչպէս դիտարկում էին Արեւմտեան դպրոցի վարդապետները: Սակայն, սա նշելով հանդերձ, Գրիգոր Տաթեւացին մէկ այլ հաստատում եւս կատարում է՝ բացայայտ հակադրութիւն առաջ բերելով նախորդ մտքին. «Դարձեալ եւ զօծման խորհուրդս ունիմք ի քահանայս ննջեցեալս.... որպէս մահն է վախճան կենցաղոյս եւ սկիզբն հանդերձելոյն, նոյնպէս եւ օծումնս այս է վերջին որ զփոշետեսակ եւ զներելի մեղսն սրբէ»[163]: Հետեւելով սուրբ Գրիգորի մեկնաբանութեանը՝ հանդիպում ենք մի շատ դժուարալոյծ աստուածաբանական դրոյթի, ըստ որի՝ Հայ Եկեղեցին կամ առնուազն Գրիգոր Տաթեւացին արդարացնում է մահից յետոյ ապաշխարելու եւ քաւութիւն գտնելու հնարաւորութիւնը, ուստիեւ ստիպուած է արդարացնելու Քաւարանի վարդապետութիւնը, որն անընդունելի է Տաթեւացու կողմից մասնաւորապէս եւ Հայ Եկեղեցու ուղղափառ դաւանութեամբ ընդհանրապէս[164]: Մանաւանդ, եթէ «մահն սկիզբն է անփոփոխ կենացն, զի ոչ կարէ փոխիլ ի մեղաց յարդարութիւն»[165], ինչպէ՞ս կարող էր այս օծումը ներելի կամ որեւէ բնոյթի մեղքի սրբման միջոց լինել մահուանից յետոյ: Եւ եթէ խորհրդի բնոյթն այդպիսին չէ, ուրեմն կարիք չկայ նաեւ ննջեցեալին Միւռոնով օծելու:

Տաթեւացու վերաբերմունքը վերլուծելիս հասկանալի է, որ նա ըստ էութեան չի ժխտում Հիւանդաց օծման խորհրդի (թէպէտեւ մահամերձների համար) կիրառութեան անհրաժեշտութիւնը եւ ըստ էութեան այն որպէս այդպիսին գոյութիւն ունի եւ վերջինն է օծումների մէջ: Այսուհանդերձ, մի կարեւոր հանգամանք մշտապէս ներկայ է նրա մտածողութեան մէջ: Միսական, աստուածաբանական ձեւակերպումներին զուգընթաց՝ նա անընդհատ, ենթատեքստով, այլազան եղանակներով ձգտում է հայոց սկզբունքները պահել ինքնուրոյն, ազդեցութիւններից զերծ վիճակում: Սրա լաւագոյն վկայութիւնը շեշտադրումը օծումից խոստովանութեան վրայ փոխադրելն է: Անշուշտ, սա ունէր նաեւ բնական, պատմական զարգացումների պատճառով ձեւաւորուած հակընդդիմութիւն, որին անդրադառնում է նաեւ Ստեփանոս Օրբելեանը:

163 Անդ, էջ 604
164 Անդ, էջ 698—705
165 Անդ, էջ 699

Ինչպէս արդէն նշել ենք, Հիւանդաց օծման խորհուրդն աստուածաբանական սխալ մեկնաբանութեան, քահանաների ծուլութեան եւ ագահութեան պատճառով ժողովրդի կողմից թողնուեց կեանքի վերջին վայրկեանին իրականացուելու եւ տեղի տուեց այն թիւր կարծիքին, «որ ի վերջին օրն օծանիմք ձիթով բալասամինաւ եւ արդարանամք»[166]: Ստեփանոս Օրբելեանի նման՝ Տաթեւացին ընդդիմանում է ոչ թէ խորհրդի գործադրութեանը, այլ նրա թիւր ընկալմանը, որի պատճառով Հիւանդաց օծումն այլեւս վերածուել էր ապաշխարութեան խորհրդի այլ դրսեւորման, որով փաստօրէն վերանում էր վերջինիս կիրառութիւնը գործնական եւ ծիսական կեանքից: Հետեւաբար, քանի որ «բարձին մարդիկք զխոստովանութիւն որ հարկաւոր էր», բայց «անհնար է առանց խոստովանելոյ արդարանալ մարդոյ», որի պատճառով «Հայրապետք եկեղեցւոյ լաւ համարեցին.... բառնալ.... վերջին օծումն, քան թէ բառնալ զխոստովանութիւն որ հարկաւոր է՝ առանց որոյ ոչ գոյ ներգործական մեղացն թողութիւն գտանել»[167]: Այս խնդիրը նոր չէր Եկեղեցու համար, սակայն, մեր կարծիքով, լուծումը ոչ թէ երկու խորհուրդներից մէկի վերացումը պէտք է լինէր ի հաշիւ միւսի շահեկանութեան, այլ իւրաքանչիւրի առանձնակի ճիշտ մեկնաբանութիւնը, մատուցումն ու գործադրութիւնը: Նոյն ըմբռնումը, այս անգամ Մկրտութեան խորհրդի վերաբերեալ, որոշակի շրջան յուզել է վաղ Եկեղեցու կեանքը, երբ խորհուրդը թողնուում էր մահուան մահճում իրականանալու, Մկրտութիւնից յետոյ մեղք չգործելու մտայնութեամբ[168]: Այսինքն՝ այս պարագային եւս սխալ մեկնաբանութեան պատճառով մի խորհուրդ կատարում էր մէկ այլ խորհրդի գործառութիւնը: Հետեւաբար, եթէ հետեւելու լինենք Գրիգոր Տաթեւացուն, արդեո՞ք այս դէպքում պէտք է մերժուէր ապաշխարութեան կամ խոստովանութեան դե-

166 Անդ, էջ 604
167 Անդ, էջ 604
168 Ըստ աւանդութեան՝ նոյնիսկ Կոստանդիանոս Մեծը մկրտուել է մահուան մահճում: Քրիստոնէութեան առաջին չորս-հինգ դարերում շատ տարածուած էր Մկրտութիւնը մինչեւ կեանքի վերջին օրը յետաձգելու սովորութիւնը՝ պայմանաւորուած յետմկրտութենական մեղքի նկատմամբ ունեցած վախի զգացումով եւ քրիստոնէական որոշակի պարտաւորութիւններ կատարելու դժուարութեամբ: Այս դէպքում, սակայն, Մկրտութիւնը կատարւում էր առանց հանդիսաւորութեան, եւ մկրտուողները կոչւում էին «անկողնայիններ» (clinici, յունարէն «կլինէ»՝ անկողին, մահճակալ բառից):

ը կատարող Մկրտութեան խորհուրդը եւ բանաձեւուէր, թէ՝ «Պիտանի է խոստովանիլ քան օծանիլ»[169], ինչպէս սուրբ Գրիգորը թելադրում է Հիւանդաց օծման խորհրդի առնչութեամբ. բնականաբար, ոչ: Ուստի պէտք էր յստակ զանազանել եւ իւրաքանչիւր խորհուրդ մեկնել յատուկ աստուածաբանական տիրոյթում, ինչպէս վարւում է Յովհան Օձնեցին: Սակայն Տաթեւացին այսպէս կատարելու այլ նպատակ ունէր՝ իր դժուարին ժամանակաշրջանում կանխել օտար բոլոր տեսակի ուղղափառ կամ ոչ ուղղափառ թափանցումները հայ իրականութիւն, որը կրօնական կրթութեան իմաստով գտնւում էր շատ անխնամ ու անկայուն վիճակում, եւ հետեւապէս պէտք էր զգուշանալ, քանզի «ի հնարից չարին.... ազգն յունաց եւ վրաց եւ ասորւոց բարձեալ են զխոստովանութիւն»[170]: Տաթեւացու կողմից խնդրի այսպիսի լուծումը վստահաբար մեծագոյն նշանակութիւն ունէր ազգային հոգեւոր ամբողջականութեան պահպանութեան իմաստով, սակայն ո՛չ երբեք աստուածաբանական հիմնաւորման ճշգրտութեան առումով: Խորհուրդն իրագործող պաշտօնեան Տաթեւացու համար միանշանակօրէն քահանան է, ում «ձեռն է օծեալ եւ սրբեալ մեռոնաւն»[171]: Այսու՝ շեշտւում է խորհրդի խորհրդական (սակրամենտալ) բնոյթը եւ արգելւում հոգեւոր (խարիզմատիկ) կիրառումը հաւատացեալների կողմից՝ ժամանակին գործադրուած Եկեղեցու կեանքում, իսկ միւս կողմից վերարծարծւում էր վաղ Եկեղեցու՝ հիւանդներին ձեռք դնելով բժշկութեան փորձառութիւնը: Պէտք է նշել, որ Տաթեւացին այս հաստատումը կատարելիս երբեք էլ այն չի փաստարկում որպէս հիւանդներին օծելու հակադրութիւն, ինչը թիւրիմացաբար որպէս այդպիսին ներկայացւում է մեր Եկեղեցու փորձառութեան մէջ եւ ծիսական վարդապետական գրուածքներում:

Այսպիսով՝ հանրագումարի բերելով Հայ Եկեղեցու մեծագոյն սուրբերից մէկի եւ դաւանական հիմնադրոյթներն ամբողջացնողի՝ սուրբ Գրիգոր Տաթեւացու հայեացքների քննութիւնը՝ տեսնում ենք.

ա) Խորհրդի մեկնաբանման առումով նա մեծապէս ազդուել է լատինական դպրոցի մտածողներից, որոնց նմանողութեամբ՝ Հիւանդաց օծման նախնական իմաստով խորհուրդն այլեւս ընկալւում է որպէս Վերջին օծում՝ խորհուրդ մահուան պատրաստութեան.

169 «Գիրք հարցմանց», էջ 604
170 Անդ, էջ 604
171 Անդ, էջ 605

բ) Սկզբունքօրէն չի մերժւում Հիւանդաց օծման խորհուրդը.

գ) Խորհուրդն իրականացնողը Եկեղեցու օծեալ պաշտօնեան է.

դ) Խոստովանութիւնը պիտի չփոխարինուի իւղի վրայ յուսադրութիւն ունենալով, այսինքն՝ մերժւում է խորհրդի ներքին բովանդակութեան աղաւաղումը.

ե) Զգուշաւորութեան եւ Հայ Եկեղեցու անկախութիւնը հնարաւոր ազդեցութիւններից պաշտպանելու մեծագոյն մղումը, որը ցաւօք տեղի է տուել մի շարք աստուածաբանական ոչ ճիշտ մեկնաբանութիւնների, որոնք է՛լ աւելի խորացուեցին Հայ Եկեղեցու յետագայ մտածողների կողմից:

* * *

Բազմիցս անդրադարձել ենք, որ Հիւանդաց օծման խորհուրդը վերջնական ձեւակերպումներ ստացաւ սբ Գրիգոր Տաթեւացու կողմից՝ ըստ էութեան դառնալով Հայ Եկեղեցու դաւանաբանական, եկեղեցաբանական ընկալումն ու փորձառութիւնը ԺԴ դարից յետոյ:

Յետագայ բոլոր վերլուծումները, մեկնութիւնները, հետեւաբար, բխում են այս կէտին եւ բխում դրանից, որի արտայայտութիւնը գտնում ենք Հայ Եկեղեցու դաւանական կամ ծիսական վերջին ձեռնարկներում: Այստեղ փորձելու ենք խմբաւորել եւ որպէս վարդապետական դրոյթ ներկայացնել ու անդրադառնալ նրանց՝ խնդիրը վերջնական եւ ամբողջական պատկերացնելու համար: Այս նպատակով յատկապէս ուշադրութիւն ենք դարձնելու Արշակ Տէր-Միքելեանի «Քրիստոնէական», Սահակ քհն. Տէր-Սարգսեանի «Քննական կրօնագիտութիւն», Բարկէն կաթողիկոս Կիւլէսէրեանի «Քրիստոնէական», Դերենիկ եպս. Փոլատեանի «Հայց. Առաքելական Եկեղեցու եօթ խորհուրդները», Ղեւոնդ արք. Զեպէեանի «Հայ Եկեղեցւոյ եօթը խորհուրդները» գրութիւններին՝ որպէս խնդրոյ առարկայ նիւթի քննութեան առանցք:

Ա. Անուանումը

Համեմատելով Հայաստանեայց Եկեղեցու գրեթէ բոլոր քրիստոնէականներն ու ծիսական գրուածքները՝ խնդրոյ առարկայ խորհրդի անուանումը ճշտելու առումով ուրուագծւում է ոչ միաձայն ու միակերպ բացատրութիւնը, որը խօսում է Հայ Եկեղեցու յստակ դիր-

քորոշում չունենալու մասին: Այս իմաստով պատկերը հետեւեալն է. «Օծումն Հիւանդաց»[172], «Այցելութիւն կամ Օծումն հիւանդաց»[173], «Կարգ հիւանդաց»[174], «Կարգ հիւանդաց եւ Վերջին օծում»[175]: Պէտք է նշել, որ խորհրդի անուանումները բխում են նրանց վերլուծումներից: Սակայն մօտեցումները հիմնականում հին են կամ հնացած, որոնք յստակ լուսաբանութիւն չեն կարող տալ այսօրուայ, ժամանակակից հասկացողութեան վրայ: Բնականաբար թէ՛ Հիւանդաց օծման խորհրդի եւ թէ՛ Հայ Եկեղեցին յուզող զանազան հարցերի վերաբերեալ հարկաւոր են նոր մօտեցումներ եւ վերատեսութիւններ վերջնական դիրքորոշման յստակեցման առումով: Խօսքերիս ցցուն վկայութիւնը Հիւանդաց օծման խորհրդի վերաբերեալ Արշակ Տէր-Միքելեանի վերլուծումն է, որը քննադատութեան է ենթարկում Կաթոլիկ Եկեղեցուն խորհրդի իմաստի խեղաթիւրման համար. «Հռոմ. Եկեղեցին իւր մարմնասիրական ուղղութեան համեմատ գրեթէ առաւել մեծ նշանակութիւն է տալիս այս խորհրդին, քան թէ Ս. Հաղորդութեան հիւանդի համար.... նա այս խորհուրդը ոչ թէ բժշկութեան եւ ապաքինութեան խորհուրդ է համարում, այլ «վերջին օծման», որ եւ կատարում է մեռնող չափահաս հաւատացեալի վրայ»[176]: Բնականաբար, այս քննադատութիւնն այլեւս ժամանակավրէպ է, քանզի Հռոմէական Եկեղեցին Վատիկանի Բ ժողովում (1962—1965) վերատեսութեան է ենթարկել այս խորհրդի ըմբռնումը՝ վերադառնալով նրա նախկին եւ սկզբնական ընկալմանն ու ձեւակերպմանը, այսինքն՝ օծում հիւանդներին բժշկելու համար, այսպիսով խորհուրդը Վերջին օծումից դառնում է Հիւանդաց օծում[177]: Այսօր, փաստօրէն, համաքրիստոնէական կեանքում միայն Հայ Եկեղեցին, սխալաբար որդեգրելով լատինական դիր-

172 «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ», աշխ. Մսերայ վարժապետի Գրիգորեան Զմիւռնացւոյ, Մոսկուա, 1850, էջ 332:

173 Տէր Սահակ քահանայ Տէր-Սարգսեան, Քննական կրօնագիտութիւն, էջ 926

174 Արշակ Տէր-Միքելեան, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ Քրիստոնէական, էջ 457

175 Ղեւոնդ եպիսկոպոս Զէպէեան, Հայ Եկեղեցւոյ Եօթը Խորհուրդները, էջ 75, Բարկէն կաթողիկոս Կիւլէսէրեան, Քրիստոնէական, էջ 56, Դերենիկ եպիսկոպոս Փոլատեան, Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցու եօթ խորհուրդները, էջ 106

176 Արշակ Տէր-Միքելեան, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ Քրիստոնէական, էջ 463

177 Տես The Documents of Vatican II, Pillar Books, New York, 1975, Chapter 3, էջ 22, յօդ. 73—75, էջ 870, յօդ. 63:

քորոշումը, դեռեւս պահպանում է խորհրդի «Վերջին օծում» անուանումը եւ համապատասխան մեկնութիւնը: Մինչդեռ Հայ Եկեղեցին, ինչպէս փորձեցինք ներկայացնել, ունեցել է խորհրդի թէ՛ ուղղափառ ճշգրիտ անուանումը եւ թէ՛ նրա մեկնաբանութիւնը, որը կարիք ունի նոյնութեամբ վերականգնուելու:

Բ. Քրիստոս բնաւ իւղ չէր գործածում

Այս տեսութիւնը կարող ենք ամփոփել Դերենիկ եպիսկոպոս Փոլատեանի խօսքով, ըստ որի՝ «Հայց. Եկեղեցին հիւանդների բժշկութեան համար իւղի գործածութիւնը չի ընդունում, նախ նրա համար, որ Քրիստոս այն չի գործածել եւ նաեւ այն պատճառով, որ հաւատացեալն արդէն սուրբ Միւռոնով օծուել է դրոշմի ժամանակ եւ ստացել Սուրբ Հոգու կենդանարար շնորհը»[178]: Բոլորովին չի կարելի համաձայնել այս հաստատմանն ու փաստարկին, քանզի խորհուրդներից որեւէ մէկը, ի բաց առեալ Մկրտութիւնն ու Հաղորդութիւնը, Քրիստոս ոչ կիրառել է եւ ոչ էլ հաւասարազօր պատուիրան աւանդել: Այլ դրանք, հիմնադրուելով Նրա կողմից խորհրդանշական (սիմվոլիկ) կերպով, աւելի զարգացել են առաքեալների կողմից ու դարձել Եկեղեցու սեփականութիւնը՝ որպէս անհրաժեշտութիւն նրա ներքին խորհրդական կեանքի համար: Դերենիկ սրբազանը այս հատուածում իսկ հակասում է ինքն իրեն՝ շեշտելով, թէ «Քրիստոս այն չի գործածել եւ նաեւ այն պատճառով, որ հաւատացեալն արդէն սուրբ Միւռոնով օծուել է Դրոշմի ժամանակ եւ ստացել Սուրբ Հոգու կենդանարար շնորհը»: Մեր կարծիքով՝ սա չի կարող պատճառաբանութիւն լինել խորհուրդը մերժելու համար, քանի որ նոյն սկզբունքով կարելի է պնդել սուրբ Միւռոնի կամ Դրոշմի խորհրդի անտեղիութիւնը՝ պատճառաբանելով Քրիստոսի կողմից չգործածուած լինելու պարագան, ինչն իրական է բողոքական աստուածաբանութեան համար: Եւ երկրորդ՝ այս տրամաբանութեամբ աւելի առաջ գնալով՝ պէտք է մերժուի Ձեռնադրութեան խորհրդի օծման հանգամանքը եւս, քանզի իւրաքանչիւր քրիստոնեայ, ըստ բողոքական մեկնաբանութեան, համաձայն Պետրոս առաքեալի խօսքի՝

178 Դերենիկ եպս. Փոլատեան, Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցու եօթ խորհուրդները, էջ 106. հմմտ. Արշակ Տէր-Միքելեան, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ Քրիստոնէական, էջ 460, 466

«Դուք ազգ էք ընտիր, քահանայութիւն, թագաւորութիւն» (Ա Պետ. Բ 9), արդէն իսկ քահանայութիւն ունի: Եւ բացի դրանից, եթէ հետեւելու լինենք քիչ վերն առաջարկուած տրամաբանական յաջորդականութեանը, մէկ անգամ դրոշմուածին երկրորդն այլեւս անհրաժեշտ չէ կամ լաւագոյն դէպքում կարիք չկայ, որովհետեւ թեկնածուն արդէն իսկ օծուել է սուրբ Միւռոնով եւ ստացել Սուրբ Հոգու շնորհը:

Արշակ Տէր-Միքելեանը մեկնաբանում է, որ «Նոր Ուխտում գործադրուող հզօրագոյն միջոցներն են շնորհաբաշխ ձեռքը, սուրբ Խաչը եւ Սուրբ Գիրքը դնելը հիւանդի վրայ.... իւղը ներգործական միջոց է դառնում աղօթքի զօրութեամբ...»[179]: Իսկապէս, բոլոր նշուածները կարեւոր են Եկեղեցու խորհրդական կեանքում, սակայն եթէ աւելի իրական դատենք, թէ՛ քահանայի շնորհաբաշխ աջը, թէ՛ սուրբ Խաչը եւ թէ՛ Սուրբ Գիրքը, յաւելեալ նաեւ սրբալոյս Միւռոնը, սուրբ Պատարագի հացը եւ գինին, իրենց բուն խորհուրդը եւ զօրութիւնը ստանում են եւ ներգործական միջոց դառնում խորհրդական աղօթքով եւ օծմամբ, առանց որոնց նրանք կը լինեն սովորական երեւոյթներ, ինչպէս եւ իւղը առանց օրհնութեան կը մնայ սոսկական իւղ եւ ոչ աւելին: Ուստիեւ Եկեղեցու կեանքում նրանք եւս իրենց շնորհաբաշխիչ ուժը ստանում են օծման եւ աղօթքի զօրութեամբ: Այդ դէպքում ինչո՞ւ բացառել իւղի պարագան: Եւ նաեւ՝ մի՞թէ Աւետարաններում որեւէ դրուագ գոյութիւն ունի Քրիստոսի կամ առաքեալների աջի օծման կամ սուրբ Խաչով ու Սուրբ Գրքով բժշկութեան մասին: Մինչդեռ Սուրբ Մարկոսի Աւետարանի Զ 13 համարը պատմում է, թէ առաքեալները «եւ դեւս բազումս հանէին, եւ օծանէին իւղով զբազում հիւանդս եւ բժշկէին զնոսա», որը որպէս աստուածաբանական հիմնադրոյթ՝ նոյնութեամբ ընկալուած է Յովհան Մանդակունի հայրապետի կողմից: Հետեւապէս, եթէ աւելորդ է իւղի գործածութիւնը, ապա նոյն սկզբունքով աւելորդ են միւս շնորհաբաշխիչ միջոցները եւս, ինչպէս նաեւ ճիշտ է հակառակ համեմատականը:

Գ. Ցգիտենք, թէ ինչ հանգամանքներում ենք մահանալու

Իբրեւ միւս պատճառաբանութիւն՝ խորհուրդը մերժելու կամ մերժումն արդարացնելու համար, քրիստոնէականները սովորաբար դնում

179 Անդ, էջ 460

են այն հանգամանքը, որ «մարդիկ չգիտեն՝ երբ, որտեղ, ինչպէս պիտի հիւանդանան եւ մեռնեն.... Եւ որպէսզի հաւատացեալներն առանց բացառութեան չզրկուեն Վերջին օծումից, մեր Եկեղեցում այն միացուած է առաջին օծումին՝ Դրոշմին»[180]: Սա աւելի քան արհեստական հիմնաւորում է, որովհետեւ թէ՛ Ընդհանրական եւ թէ՛ Հայ Եկեղեցու փորձառութիւնը շեշտում է, յատկապէս այս դէպքում, որ երկու խորհուրդներն անպայմանօրէն պէտք է կատարուեն առանձին-առանձին, որովհետեւ նրանցից իւրաքանչիւրը որոշակի նպատակի համար է, եւ արդիւնագործութիւնն էլ՝ բնականաբար տարբեր: Բացարձակապէս անհիմն է վերստին ծննդեան կամ օծման խորհուրդը (Մկրտութիւն, Դրոշմ) առնչել կամ միաձուլել հիւանդութիւնից բժշկութեան կամ նրա այլափոխուած տարբերակի՝ մահուան պատրաստութեան հետ: Այսպիսով միաժամանակ մի քանի ցաւալի սխալ է գործւում. նախ՝ որ Հիւանդաց օծման խորհուրդը երբեք էլ չի եղել մահուան պատրաստութեան համար եւ իր բնոյթով ուղղուած է հիւանդի ապաքինմանը, եւ այն մտայնութիւնը, թէ մահանալու հանգամանքների կանխագէտ չլինելու պատճառով է այն միախառնւում Դրոշմի խորհրդին, արմատապէս դառնում է անհասկանալի: Եւ նաեւ՝ եթէ Հայ Եկեղեցում այսօրուայ ընկալմամբ եւ Գրիգոր Տաթեւացու մեկնաբանութեամբ «վերջին օծումը» կատարւում է միայն ննջեցեալ քահանաների վրայ, այս դէպքում ինչո՞ւ է այն կիրառւում անխտիր բոլորի հանդէպ: Վերջապէս, եթէ մահը նախապէս չիմանալու պատճառով է տեղի ունենում Դրոշմին միախառնուած օծումը, այդ դէպքում Դրոշմից յետոյ տեղի ունեցող Հաղորդութեան խորհուրդը եւս պիտի համարուէր «Վերջին թոշակ»՝ այդ կէտում սահմանափակուելով ամբողջ կեանքի եւ մահուան համար, եւ տրամաբանօրէն ծիսական համակարգից դուրս դրուէր կամ մերժուէր «Կանոն հաղորդ տալոյ» կարգը: Հետեւաբար, անիմաստ եւ անմեկնե-

180 Բաբկէն կաթողիկոս Կիւլէսէրեան, Քրիստոնէական, էջ 57, Ղեւոնդ եպիսկոպոս Զէյդէեան, Հայ Եկեղեցւոյ Եօթը Խորհուրդները, էջ 77:

լի է այսպիսի ձեւակերպումը, որը, մեր կարծիքով, բխում է Հիւանդաց օծման խորհրդի ոչ ճիշտ մեկնաբանութիւնից եւ կիրառութիւնից[181]:

Դ. Հայ Եկեղեցին ազդեցութիւնից զերծ պահելու մտահոգութիւնը

Մեր կարծիքով՝ Հիւանդաց օծման խորհրդի մերժման ամենակարեւոր հանգամանքը եղել է ընդդէմ լատինականութեան պայքարի բովում ձեւաւորուած հոգեբանութիւնն ու մտածողութիւնը: Այսպիսի եզրակացութեան յանգել ենք մեր մանրամասն ուսումնասիրութեան, սկզբնաղբիւրների հաղորդած տեղեկութիւնների, աւելի ուշ շրջանի մտածողների կողմից դրանց վերլուծութեան, ինչպէս նաեւ Ընդհանրական Եկեղեցու՝ Արեւելեան եւ Արեւմտեան մտածողութեան տեսակէտները համադրելու եւ հակադրելու արդիւնքում: Այս պարագան ուժգնութեամբ շեշտուել է յատկապէս ԺԹ դարից սկսած հայ-լատինական, ինչպէս նաեւ ներհայկական ուղղափառ-կաթոլիկ համայնքների յարաբերութիւններում: Ամենավառ ապացոյցն այս առումով Սահակ քահանայ Տէր-Սարգսեանի՝ 1897 թուականին Բ տպագրութիւն ունեցած «Քննական կրօնագիտութիւնն» է, որի նպատակը ոչ թէ Հայ Եկեղեցու դաւանանքին ծանօթացնելն է, այլ ընդդիմանալը ժամանակի Հայ Եկեղեցուն սպառնացող օտար ազդեցութիւններին: Հարցը լիովին պարզ է դառնում, երբ ընթերցում ենք սոյն գրքին որպէս առաջաբան եւ գնահատութիւն զետեղուած Կ. Պոլսի Ներսէս պատրիարք Վարժապետեանի խօսքը, ինչպէս նաեւ Գէորգ Դ հայրապետի սրբատառ կոնդակը:

Ներսէս պատրիարքը գրում է. «Կը ցանկանայի, որ մեզի դէմ հայհոյողներու նկատմամբ այդ խիստ լեզուն գործածած չ'ըլլայիք, զի անախորժ թուելու է մեզ մինչեւ անոնց ցած յատակն իջնել Հայոց Եկեղեցւոյ հոգեւոր բարձրութենէն, այն վսեմութենէն, որ մեր եկեղեցւոյ յատ-

181 Այս առումով՝ Եթովպական Եկեղեցում խորհրդի կիրառութեան մասին ուշագրաւ տեղեկութիւն է հաղորդում Donald Attwater-ը՝ նշելով, որ Եթովպական Եկեղեցում Դրոշմը եւ Հիւանդաց օծումն այլեւս կիրառութիւն չունեն. առաջինը՝ Մկրտութեան ժամանակ տեղի ունեցող օծումների չափից պատճառով, իսկ երկրորդը՝ որովհետեւ բաւարար կերպով չի մեկնաբանուել (տես Donald Attwater, The Churches of the East, էջ 202): Մեր կարծիքով՝ պարագան նոյնն է նաեւ Հայ Եկեղեցում, որտեղ երկու օծումները՝ երախայից եւ Հիւանդաց, բոլորովին վերացել են ճիշտ չմեկնաբանուած կամ ընդհանրապէս չմեկնաբանուած լինելու պատճառով:

կանիշն եւ բուն քրիստոնէական ոգին է եւ որուն չ'կրցին եւ չ'պիտի կրնան յաղթել օտարամոլից բանդագուշանքն եւ իրենց դատապարտութիւնն իրենց հայհոյութեանց մէջ պիտի գտնեն միշտ»[182]: *Նոյն մտքի եւ սկզբունքի շարունակութիւնն է այս գրքի 1875 թուականի հրատարակութեան առիթով տրուած Գեւորգ Դ կաթողիկոսի սրբատառ կոնդակը, որում ի մասնաւորի նշւում է. «...ի պաշտպանութիւն ուղղափառ Դաւանութեանս եւ Խորհրդոց Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ, ընդդէմ հակառակորդաց նորին կանգնել ախոյեան»*[183]: *Իսկ ինքը՝ հեղինակը, մեկնաբանելով կամ ներկայացնելով Հայ Եկեղեցու դաւանանքը Հիւանդաց օծման խորհրդի վերաբերեալ, զանազան «փաստարկներ» բերելով ընդդէմ նրա կիրառման, պարտաւորութիւն է զգում վերջաբանի կամ եզրակացութեան փոխարէն նշել. «...պարտաւոր է հարկաւորապէս իւրական ծիսիւք վարուիլ, եւ յոյժ ծանր կ'մեղանչէ եթէ ոք օտարին ծիսիւք վարուի»*[184]: *Այսինքն՝ յստակ է, որ դաւանական կամ աստուածաբանական լուծումներ, հերքումներ առաջադրելուց աւելի՝ խնդիրը եղել է ամէն գնով մերժել այս խորհուրդը՝ ազգի ամբողջականութեան եւ այս ելակէտից ստեղծուած եւ Հայ Եկեղեցու որդեգրած անորոշ վերաբերմունքի ջատագովութեան համար: Սակայն, մեր կարծիքով, ժամանակի թելադրանքով եւ հրամայականով պայմանաւորուած սխալը նոյն կերպ էլ պէտք է վերանայ:*

Ամփոփենք. նիւթի մանրակրկիտ եւ բազմակողմանի ուսումնասիրութեան արդիւնքում մենք յանգել ենք հետեւեալ եզրակացութեան:

ա) Հայ Եկեղեցին իր ծիսական համակարգում Դ դարից ունեցել եւ նաեւ կիրառել է Հիւանդաց օծման խորհուրդը, որն արտայայտուած է կանոնական ու մեկնողական որոշումներում եւ երկերում:

բ) Հայ Եկեղեցին իրականում ոչ թէ մերժել է, այլ ձեռնպահ է մնացել խորհուրդը մեկնաբանելուց եւ կիրառելուց՝ կաթոլիկ նմանութիւնից կամ ազդեցութիւնից զգուշանալու պատճառով:

գ) Հայ Եկեղեցու ուղղափառ ընկալմամբ՝ Հիւանդաց օծման խորհուրդը գործադրւում է մեղքերի թողութեամբ բժշկութիւն շնորհելու նպատակով, եւ այն որեւէ առնչութիւն չունի մահուան պատրաստու-

182 Տես Տէր Սահակ Քահանայ Տէր-Սարգսեան, Քննական կրօնագիտութիւն, Առաջաբան:
183 Անդ, Առաջաբան
184 Անդ, էջ 931

թեան հետ: Այս եղակէտից՝ լինելով բժշկութեան համար իրականացուող՝ խորհուրդը, բնականաբար, կրկնելի է:

դ) Վերոնշեալից բխում է նաեւ, որ հայոց վարդապետներն ընդդիմացել են խորհրդի «Վերջին օծում» անուանմանը եւ աղճատուած, այլափոխուած մեկնաբանութեանը՝ շեշտը յատկապէս դնելով մեղքից ազատագրուելու համար խոստովանութեան եւ ապաշխարութեան անհրաժեշտութեան վրայ, որպէսզի խոստովանութիւնը չփոխարինուի իւղի վրայ յուսադրութիւն ունենալով, այսինքն՝ խորհրդի ներքին բովանդակութիւնը չաղաւաղուի:

ե) Կարգապահական խնդիրների, յատկապէս եկեղեցականութեան ծուլութեան եւ ընչաքաղցութեան պատճառով խորհրդի կիրառութիւնը մատնուել է անտարբերութեան եւ այդպիսով դուրս մնացել թէ՛ ժողովրդական լայն ընդունելութիւնից եւ թէ՛ ժամանակների ընթացքում նաեւ Եկեղեցու ծիսական համակարգից:

զ) Խորհուրդն իր բովանդակութեամբ եւ խորհրդանշականութեամբ, ինչպէս նաեւ տեսանելի նիւթի՝ ձէթի գործածութեամբ նոյնացուել կամ միախառնուել է Դրոշմի խորհրդին, երախայից եւ դիւահալածութեան կարգերին, որոնց զանազանութիւնն ու իմաստային տարբերակումն ամբողջութեամբ չեն կատարուել:

Ե. «Կանոն գիշեր ժամու աղօթի՛ց», թէ՞ Օծումն Հիւանդաց

Թերեւս ամենակարեւոր փաստարկը՝ Հիւանդաց օծման խորհրդից հրաժարուելու կամ այն մերժելու առումով, Հայ Եկեղեցու ծիսակարգում «Կանոն գիշեր ժամու» կարգի առկայութիւնն է, որը շատ յաճախ բերւում է որպէս վկայութիւն առ այն, որ Հայ Եկեղեցում Հիւանդաց օծման խորհրդի արարողակարգ գոյութիւն չի ունեցել, այլ Հիւանդաց կարգը մշտապէս իրականացուել է այս կանոնի միջոցով: Սակայն մեր մանրազնին ուսումնասիրութիւնը եւ երկու արարողակարգերի պարզագոյն համեմատութիւնն այլ բան են վկայում, որ ներկայիս «Կանոն գիշեր ժամու» արարողութիւնը Հիւանդաց օծման խորհրդի մի ձեւափոխուած տարբերակն է, որում դեռեւս պահպանուել են տարրեր եւ յատկանիշներ, որոնք վերցուած են Օծման խորհրդի արարողակարգից: Անշուշտ, այս կանոնում մեծ բծախնդրութեամբ դուրս են թողնուել այն հատուածները, որոնք վերաբերում են իւղի օրհնութեանն ու հիւանդների օծմանը: Միգուցէ նաեւ հակառակը պնդուէր, որ Հիւանդաց օծման ծէսի համար հիմք է ընդունուել «Կանոն գիշեր ժամու» կարգը, սակայն ուշադիր քննութիւնն այլ բան է ասում: Նախ՝ որ Օծման ծէսի աղօթքներն աւելի երկար են, եւ «Կանոնի» բովանդակութիւնից յստակ երեւում է, որ հատուածները պարզապէս կրճատուած են, եւ երկրորդ՝ «Կանոնում» գոյութիւն ունեն այնպիսի սաղմոսներ կամ մաղթանքներ, որոնք դեռեւս պարունակում են հիւանդաց ծէսի մնացորդներն ու հետքերը, այսինքն՝ տարրեր, որոնք խօսում են իւղի գոյութեան մասին:

Այսպէս՝ փորձենք համեմատութեան մէջ տեսնել, թէ որո՞նք են այդ նոյնութիւններն ու նմանութիւնները[185]: Երկուսի համար էլ պաշտօնեան օծեալ եւ ձեռնադրեալ հոգեւորականն է, եւ, ըստ ցուցման, երկուսի համար էլ անհրաժեշտ է եօթ քահանաների ներկայութիւն[186]: Երկուսն էլ, բացի աղօթքներից եւ մաղթանքներից, ունեն եօթ սուրբգրային եւ աւետարանական ընթերցուածներ, իսկ ընդհանուր կառուցուածքը բերում ենք ստորեւ՝ ըստ սուրբգրային ընթերցուածների, աղօթքների, մաղթանքների, քարոզների, շարականների եւ ցուցումների:

185 «Կանոն գիշեր ժամու» կարգի համար որպէս օրինակ օգտագործել ենք 1961 թ. Երուսաղէմի Մաշտոցը, էջ 143—201, իսկ Հիւանդաց օծման արարողակարգը ՄՄ թիւ 7117 ձեռագրում պահպանուած եւ Թովմա Մեծոփեցու կազմած ծիսակարգն է, որն ամբողջութեամբ զետեղուած է սոյն գործի «Ցաւելուածում»: Զուգահեռաբար ներկայացնելու ենք Ղպտի Եկեղեցու Հիւանդաց օծման խորհրդի ծիսակարգից այն աղօթքները, քարոզներն ու մաղթանքները, որոնք ոչ միայն այս կամ այն կերպ նման են հայոց ծիսակարգում եղածներին, այլեւ գրեթէ նոյնն են: Մենք զուգահեռ անցկացնում ենք յատկապէս Ղպտի Եկեղեցու արարողակարգի հետ, քանզի այն Հայ Եկեղեցու հետ միեւնոյն ընտանիքն է ներկայացնում: Այս համեմատութիւնը միաժամանակ ընդգծելու է մեր այն տեսակէտը, որ «Կանոն գիշեր ժամու» կարգը նոյն Հիւանդաց օծումն է՝ այլ անունով եւ լուրջ միջամտութեան ենթարկուած:

186 Մաշտոց, էջ 197

Կանոն գիշեր ժամու	Հիւանդաց օծում
1. Սղմ. Առաքեա...	*1. Երկ ԲՁ. Նոյն եւ նման*
2. Մաղթանք. Անձն իմ...	
3. Սղմ. Ես ասացի ի վերանալ յինէն...	
4. Մաղթանք. Ցոյս կենդանութեան...	
5. Քարոզ. Վասն ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան անձանց մերոց... *Եւ եւս վասն հիւանդիս (այս անուն), որ յուսացեալ է կոչել զանուն Տեառն Աստուծոյ եւ զզօրութիւն նորա ի յօգնութիւն եւ ի բժշկութիւն հոգւոյ եւ մարմնոյ իւրոյ. որպէսզի ապրեսցի եւ կեցցէ եւ վերստին նորոգեսցի քահանայական աղօթիւք ձերովք եւ կարողութեամբն Աստուծոյ...* Զամենասրբուհի զԱստուածածին զմիշտ կոյսն Մարիամ, հանդերձ ամենայն սրբովք յիշելով...	*2. Քարոզ.* Վասն ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան անձանց մերոց... *Վասն օրհնելոյ զձէթս զայս զՏէր... Վասն ծառայիս (այս անուն) զՏէր... Ընկալ, կեցո եւ ողորմեա եւ պահեա զմեզ, Աստուած, Քոյին շնորհիւդ:* Զամենասրբուհի զԱստուածածինն եւ զմիշտ կոյսն Մարիամ հանդերձ ամենայն սրբովք յիշեսջիք եւ նոքօք զՏէր...
6. Աղօթք. Տէր, որ ողորմութեամբ քով բժշկես զբեկումն հոգւոց եւ մարմնոց մերոց. *բժշկեա զամենայն ախտս եւ զհիւանդութիւնս հոգւոյ եւ մարմնոյ (այս անուն) ծառայի քո.* զի փառաւորեսցի ամենասուրբ անուն քո. զի քո է ողորմել եւ կեցուցանել, Աստուած մեր: Եւ քեզ փառս *մատուցանեմք...*	*3. Աղօթք.* Տէր, որ ողորմութեամբ *եւ գթութեամբ* քո բժշկես զբեկումնս զանձանց եւ զմարմնոց մերոց, *Ինքնին, Տէր, սրբեա զձէթս զայս, որպէսզի լիցի օծանելոց ի սմանէ ի բժշկութիւն եւ ի փոխադրումն ամենայն ախտից հիւանդութեանց եւ ախտակրութեանց մարմնոյ եւ հոգւոյ եւ ամենայն պղծութեանց, զի եւ ի սմա* փառաւորեսցի Քո ամենասուրբ անունդ, քանզի քո է ողորմել եւ կեցուցանել, Աստուած մեր: Եւ Քեզ փառս *վերառաքեմք...*[187]

187 «Ողորմա՛ծ Տէր, բժի՛շկ մեր բեկուած հոգու եւ մարմնի. սրբի՛ր այս ձէթը, որպէսզի այն լինի բժշկութիւն հոգու ախտերի եւ մարմնական տառապանքների բժշկութիւն բոլոր նրանց, ովքեր օծւում են սրանով, եւ սրանով փառաւորուի Քո անունը, որովհետեւ Քոնն են փառքն ու փրկութիւնը, եւ Քեզ ենք մենք փառք վերառաքում՝ Հօրը եւ Որդուն...»: Տես Coptic Offices, tr. R. M. Wooley, London, Society for Promoting Christian Knowledge, 1930, էջ 94 (այսուհետ CO):

7. Քարոզ. Եւ եւս... Օրհնեա Տէր, *Օրհնութիւն եւ փառք...*	*4. Քարոզ.* Օրհնեա Տէր, *Օրհնութիւն Աստուծոյ ամենակալին...*
8. Սաղմոս Ծ	*5.* Սաղմոս Ծ
9. Շարական ԱՁ. Հայր բազումողորմ...	*6.* Շարական ԱՁ. Հայր բազումողորմ...
10. Քարոզ. Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ. ամենակալ...	*7. Քարոզ. Սուրբ զԱստուածածինն...*
11. Աղօթք. Ընկալ Տէր...	*8.* Աղօթք. Ընկալ Տէր...
12. Սղմ. Տէր, ողորմեա ինձ	*9.* Սղմ. Տէր, ողորմեա ինձ
13. Գիրք. Յակոբոս Զ 16—20[188] *Սղմ. Տէր, մի՛ սրտմտութեամբ քով... Ողորմեա ինձ, Տէր, զի հիւանդ եմ ես...*	*10.* Գիրք. Յակոբոս Զ 10—20
14. Աւետ. Մարկոս Զ 7—13	*11.* Աւետ. Մարկոս Զ 7—13
15. Հաւատամք... Իսկ մեք...	*12.* Հաւատամք... Իսկ մեք...
	13. Քրզ. Եւ եւս վասն հիւանդին... Աղօթք. Անսկիզբն Աստուած... Հայր մեր...
16. Սաղմոս Ծ	*14.* Սաղմոս Ծ
17. Շարական. Ով կենցաղոյս...	*15.* Շարական. Ով կենցաղոյս...
18. Քարոզ. Լուիցէ...	*16. Քարոզ. Սուրբ զԱստուածածինն...*
19. Աղօթք. Ընկալ...	*17.* Աղօթք. Ընկալ...
20. Սղմ. Տէր հովուեսցէ զիս... Օծեր իւղով զգլուխ իմ...[189]	*18.* Սղմ. Օծեր իւղով զգլուխ իմ... Տէր հովուեսցէ զիս...

188 Փաստօրէն վերցուած է Յակոբոս առաքեալի նոյն հատուածը, սակայն զարմանալիօրէն դուրս են թողնուած 14—15 համարները, որոնք ընդհանրապէս մեկնաբանուել են որպէս Հիւանդաց օծման խորհրդի հիմնաւորում: Ըստ էութեան՝ վերաբերմունքն ակնյայտ է. դուրս թողնել այն բոլոր հատուածները սուրբգրային ընթերցումներից, աղօթքներից կամ քարոզներից, որոնք ամենաչնչին կերպով իսկ կը խօսեն օծման մասին:

189 Այս սաղմոսի առկայութիւնը յուշում է օծման մասին, այլապէս բոլորովին անիմաստ կը լինէր այն զետեղել կարգի մէջ:

21. Գիրք. Ա Յովհ. Ա 8—Բ 6	*19.* Գիրք. Ա Յովհ. Ա 8—Բ 6
22. Սղմ. Զայնիւ իմով... Ցաւուր նեղութեան իմոյ	
23. Աւետ. Ղուկաս ԺԹ 1—10	*20.* Աւետ. Ղուկաս ԺԹ 1—10
24. Քարոզ. Վասն ի վերուստ խաղաղութեան...	*21. Քարոզ. Եւ վասն հիւանդիս (այս անուն), որ յուսացեալ է կոչել զանուն Տեառն...*
25. Աղօթք. Անսկիզբն Աստուած՝ սուրբդ սրբոց, որ զմիածին Քո Որդիդ առաքեցեր բժշկել զամենայն ախտս հոգւոց եւ մարմնոց մերոց. առաքեա զՀոգիդ քո սուրբ, եւ սրբեա (զայս անուն) ծառայս քո եւ ազատեա յամենայն մեղաց, զի ողորմած ես եւ գթած...[190]	*22. Աղօթք. Աստուած մեծ եւ սքանչելի...*
26. Սաղմոս Ծ	*23.* Սաղմոս Ծ
27. Շարական ԲՁ. Մեղաք մինչեւ...	*24.* Շարական ԲՁ. Մեղաք մինչեւ...
28. Քարոզ. Լուիցէ... Աղօթք. Ընկալ...	*25. Քարոզ. Սուրբ զԱստուածածինն...* Աղօթք. Ընկալ...
29. Սղմ. Բարձր առնեմ... Տէր Աստուած իմ, կարդացի առ քեզ...	*26.* Սղմ. Բարձր առնեմ... Տէր Աստուած իմ, կարդացի առ քեզ...
30. Գիրք. Բ Կոր. Զ 16—Է 2	*27.* Գիրք. Բ Կոր. Զ 16—Է 2
31. Աւետ. Մարկոս Ե 24—34	*28.* Աւետ. Մարկոս Ե 24—34 *Հաւատամք...*
32. Քարոզ. Վասն ի վերուստ...	*29. Քարոզ. Վասն ի վերուստ...*

190 Սա ծնթ. 191-ում նշուած մեծ աղօթքի առաջին փոքրիկ հատուածն է, որից դուրս է թողնուած ձէթի օրհնութեան մասը. տես «Ցաւելուածում», էջ 117:

33. Աստուած մեծ *եւ սքանչելագործ*, որ պահես զուխտս քո եւ տաս զողորմութիւն սիրելեաց քոց եւ զթողութիւն մեղաց ի ձեռն սրբոյ Որդւոյ քո՝ Յիսուսի Քրիստոսի, որ նորոգեաց զմեզ ի մեռելութենէ մեղաց մերոց: Դու ես, որ *լուսաւոր առնես զկոյրս եւ կանգնես զանկեալս:* Դու հաներ զմեզ ի խաւարէ եւ ի ստուերաց մահու՝ ասելով ցկապեալս՝ թէ ելէ՛ք, եւ որք ի խաւարին՝ թէ յայտնեցարո՛ւք. յորս ծագեաց լոյս գիտութեան օծելոյ քո, որ եկն երեւեցաւ յերկրի, եւ ընդ մարդկան շրջեցաւ, եւ որք ընկալան զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել: *Դու, Տէր,* փրկական աւազանին վերստին ծննդեամբն զորդեգրութիւն մեզ շնորհեցեր եւ հաղորդս արարեր զմեզ սուրբ անուան նորա: Դու ինքն, Տէր ամենայնի, նայեա *(յայս անուն) ծառայ քո,* զի փրկեալ ի մեղաց՝ եղիցի արդարացեալ ի քեզ՝ զգեցեալ զՏէր մեր Յիսուս Քրիստոս: Զի ողորմած եւ մարդասէր Աստուած ես...	Աստուած մեծ[191] *եւ սքանչելի,* որ պահես զուխտս քո եւ տաս զողորմութիւն սիրելեաց քոց եւ զթողութիւն մեղաց ի ձեռն սրբոյ Որդւոյ քո Յիսուսի Քրիստոսի, որ նորոգեաց զմեզ ի մեռելութենէ մեղաց մերոց: Դու ես, որ *լուսաւորես զկոյրս եւ վերականգնես զգլորեալս:* Դու հաներ զմեզ ի խաւարէ եւ ի ստուերաց մահու՝ ասելով ցկապեալսն թէ՝ ելէ՛ք, եւ որք ի խաւարին թէ՝ յայտնեցարո՛ւք. յորս ծագեաց լոյս գիտութեան օծելոյ քոյ, որ եկն երեւեցաւ յերկրի եւ ընդ մարդկան շրջեցաւ, եւ որք ընկալան զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել: Փրկական աւազանին վերստին ծննդեամբ զորդեգրութիւն մեզ շնորհեցեր եւ հաղորդս արարեր զմեզ սուրբ անուան նորա *եւ կանգնեցեր զմեզ ի կործանմանէ դիւացն, որ ի յանվախճան արքայութիւնն Իւր կոչեաց զմեզ:* Դու, *Նոյն* ինքն Տէ՛ր ամենայնի, նայեա՛ *ի մեզ, որ ոչ հաճեցար արեամբ ուխտի... որք օծանիմք յիւղոյս յայսմանէ՝ մերկանալ զամբարշտութիւն եւ զաշխարհական ցանկութիւնս,* զի փրկեալք ի մեղաց՝ եղիցուք ի քեզ արդարացեալք՝ զգեցեալք զՏէրդ մեր Յիսուս Քրիստոս... Զի ողորմած եւ մարդասէր Աստուած ես[192]...
	30. Աղօթք. Տէր Աստուած, աղաչեմք... Լուր, Տէր... Հայր մեր...
34. Սաղմոս Ծ	*31.* Սաղմոս Ծ
35. Շարական ԲԿ. Ցամենայն ժամ...	*32.* Շարական ԲԿ. Ցամենայն ժամ...
36. Քարոզ. Սուրբ զԱստուածածինն... Աղօթք. Ընկալ Տէր...	*33. Քարոզ. Սուրբ զԱստուածածինն...* Աղօթք. Ընկալ Տէր...

191 Այս աղօթքն ըստ շարակարգման թիւ 22-ն է. պարզապէս զետեղում ենք այստեղ զուգահեռ անցկացնելու համար: Ամբողջ աղօթքը տես «Ցաւելուածում», էջ 117:

192 «Գիշեր ժամու» կանոնում աղօթքն ամբողջութեամբ նոյնն է, միայն դարձեալ համառօտուած է, եւ իւղի հետ առնչուող հատուածները հանուած են:

37. Սղմ. Աստուած, յօգնել ինձ նայեաց... Ամաչեսցեն...	*34.* Սղմ. Աստուած, յօգնել ինձ նայեա... Ամաչեսցեն...
38. Գիրք. Եփեսացիս Դ 1—7	*35.* Գիրք. Եփեսացիս Դ 1—7
39. Սղմ. Դատ արա ինձ, Տէր...	*36.* Սղմ. Դատ արա ինձ, Տէր...
40. Աւետ. Մատթէոս ԺԵ 21—28	*37.* Աւետ. Մատթէոս ԺԵ 21—28 *Հաւատամք...*
41. Քարոզ. Վասն ի վերուստ...	*38. Քարոզ. Եւ վասն հիւանդին...*
42. Աղօթք. Բարերար եւ մարդասէր Տէր, որ զամենայն հիւանդութիւնս եւ զամենայն ախտս բժշկես, *բժշկեա* (զայս անուն) ծառայ քո. յարո զսա ի մահճաց ցաւոց. այց արա ողորմութեամբ *եւ գթութեամբ* քով. *փարատեա* ի սմանէ զամենայն տկարութիւն եւ զհիւանդութիւն, զի յարուցեալ քո կարող ձեռամբ՝ ծառայեսցէ քեզ հանդերձ ամենայն գոհութեամբ: Զի դու ես, Աստուած, Աստուած ողորմութեան եւ կեցուցիչ...	*39. Աղօթք. Տէր Աստուած, բարի եւ մարդասէր, բարի եւ բազումողորմ,* որ զամենայն հիւանդութիւնս եւ զամենայն ախտս բժշկես *եւ զծառայս քո* (զայս անուն) յարո զսա ի մահճաց ցաւոց. վերայցեա՛ ողորմութեամբ քո: *Հալածեա* ի սմանէ զամենայն տկարութիւն եւ զհիւանդութիւն, զի յարուցեալ ձեռամբ քո կարողա՝ ծառայեսցէ քեզ հանդերձ ամենայն գոհութեամբ: *Աստուած մեծ եւ բարձրեալ....* Զի դու ես, Աստուած, Աստուած ողորմութեան եւ կեցուցիչ... *Հայր մեր...*
43. Սաղմոս Ծ	*40.* Սաղմոս Ծ
44. Երկն. ԳՁ. Զանապական...	*41.* Երկն. ԳՁ. Զանապական...
45. Քարոզ. Սուրբ զԱստուածածինն... Աղօթք. Ընկալ Տէր...	*42.* Քարոզ. Սուրբ զԱստուածածինն... Աղօթք. Ընկալ Տէր...
46. Սղմ. Ցնծացէք արդարք... Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր...	*43.* Սղմ. Ցնծացէք արդարք... Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր...
47. Գիրք. Հռոմայեցիս ԺԵ 1—7	*44.* Գիրք. Հռոմայեցիս ԺԵ 1—7
48. Սղմ. Աստուած, յանուան Քում...	*45.* Սղմ. Աստուած, յանուան Քում...
49. Աւետ. Ղուկասու ԺԱ 5—13	*46.* Աւետ. Ղուկասու ԺԱ 5—13 *Հաւատամք...*
50. Քարոզ. Վասն ի վերուստ...	*47. Քարոզ. Եւ վասն հիւանդին...*

51. Աղօթք. Բազումողորմ եւ բարերար Տէր, որ զօրացուցեր զմեզ ի ձեռն սրբոց առաքելոցն քահանայական աղօթիւք զհիւանդս բժշկել, *աղաչեմք զքեզ, շնորհեա բժշկութիւն եւ փրկութիւն (այս անուն) ծառայիս քո. փարատեցո զամենայն հիւանդութիւնս եւ սրբեա զաղտեղութիւնս հոգւոյ եւ մարմնոյ սորա մարդասիրութեամբ քով...*	*48. Աղօթք. Տէր Աստուած, որ բազումունիս ողորմութիւն եւ գթութիւն եւ մեծատուն ես բարերարութեամբ, Դու նոյն Ինքն Տէր,* որ զօրացուցեր զմեզ ի ձեռն սրբոց առաքելոցն աղօթիւք քահանայական *ի ձեռն իւղոյ* զհիւանդս բժշկել, *շնորհեա զիւղս զայս ի բժշկութիւն եւ ի փրկութիւն այնոցիկ, որք օծցին ի նմանէ եւ ի փառս անուանդ քում սրբոյ, որպէսզի փարատեցուսցէ զամենայն հիւանդութիւնս եւ զաղտեղութիւնս հոգւոց եւ մարմնոց, բժի՛շկ եւ բաշխող պարգեւաց, մարդասիրութեամբ քո...* *Հայր մեր...*
52. Սաղմոս Ծ	*49.* Սաղմոս Ծ
53. Շարական ԳԿ. Քրիստոս Աստուած...	*50.* Շարական ԳԿ. Քրիստոս Աստուած...
54. Քարոզ. Լուիցէ... Աղօթք. Ընկալ...	*51. Քարոզ. Լուիցէ...*[193] Աղօթք. Ընկալ...
55. Սղմ. Ցարիցէ Աստուած...	*52.* Սղմ. Ցարիցէ Աստուած...
56. Գիրք. Հռոմ. ԺԲ 1—4	*53.* Գիրք. Հռոմ. ԺԲ 1—4
57. Սղմ. Զի բարի կամ զի վայելուչ... Որպէս իւղ, զի իջանէ ի գլուխ...	*54.* Սղմ. Զի բարի կամ զի վայելուչ... Որպէս իւղ, զի իջանէ ի գլուխ...
58. Աւետ. Մարկոսի ԺԱ 22—26	*55.* Աւետ. Մարկոսի ԺԱ 22—26 *Հաւատամք...*
59. Քարոզ. Վասն ի վերուստ...	*56. Քարոզ. Եւ եւս վասն հիւանդիս...*
60. Աղօթք. Տէր Աստուած մեր, որ նստիս ի վերայ քերովբէից եւ հայիս յանդունդս, հայեաց (յայս անուն) ծառայս քո *ի բարձրութենէ սրբութեան քո,* հեռացո ի սմանէ զամենայն ցաւս եւ զամենայն աղտեղութիւնս, *եւ տուր սմա զառողջութիւն* զամենայն աւուրս կենաց իւրոց...	*57.* Աղօթք. Տէր Աստուած մեր, որ նստիս ի վերայ քերովբէից եւ նայիս յանդունդս, հայեաց ի ծառայս քո (յայս անուն), *ծածկեա զսա մարդասիրութեամբ քո ի բարձրացեալ սրբութենէ քումմէ, անպատմելի զօրութեամբ քո:* Հեռացո ի սմանէ զամենայն ցաւս եւ զամենայն զաղտեղութիւն. եւ *վերականգնեա զսա առողջութեամբ* զամենայն աւուրս կենաց իւրոց... *Հայր մեր...*

193 Մինչեւ այս հատուածը քարոզը «Սուրբ զԱստուածածինն» էր, իսկ այստեղ արդէն՝ «Լուիցէ»:

61. Սաղմոս Ծ	*58.* Սաղմոս Ծ
62. Շարական ԴՁ. Անկանիմ...	*59.* Շարական ԴՁ. Անկանիմ...
63. Քարոզ. Սուրբ զԱստուածածինն... Աղօթք. Ընկալ Տէր...	*60.* Քարոզ. Սուրբ զԱստուածածինն. Աղօթք. Ընկալ Տէր...
64. Սղմ. Որ բնակեալն է...	*61.* Սղմ. Որ բնակեալ է...
65. Գիրք. Ա Յովհ. Բ 20—25	*62.* Գիրք. Ա Յովհ. Բ 20—25
66. Սղմ. Երանի ում թողութիւն եղեւ մեղաց...	*63.* Սղմ. Երանի ում թողութիւն եղեւ մեղաց...
67. Աւետ. Ղուկ. Է 36—50	*64.* Աւետ. Ղուկ. Է 36—50 *Հաւատամք...*
68. Քարոզ. Վասն ի վերուստ...	*65. Քարոզ. Եւ եւս վասն Հիւանդիս...*
69. Աղօթք. Գոհանամ զքէն, Տէր Աստուած մեր, որ ես բժիշկ բարի անձանց մերոց. որ զհիւանդութիւնս մեր բառնաս, որ քո վիրօք ամենեքեան բժշկեցաք: Որ հովիւդ ես բարի *եւ խնդրող մոլորեալ ոչխարին: Որ* անձանց *բեկելոց* տաս մխիթարութիւն եւ կեանս *մահացելոց:* Որ զաղբիւր *արեան* տեառատեսին *քզանցիւ հանդերձի քո* բժշկեցեր: *Որ զդուստր քանանացւոյն ի դժնդակ դիւացն ազատեցեր:* Որ զպարտս երկուց պարտապանացն չնորհեցեր եւ մեղաւոր կնոջն զթողութիւն ետուր...[194]	*66. Աղօթք.* Գոհանամ զքէն, Տէր Աստուած մեր, որ ես բարի բժիշկ անձանց մերոց. որ զհիւանդութիւնս մեր *անցաւս* բառնաս, որում վիրօք ամենեքեան բժշկեցաք: Որ հովիւդ ես բարի, *որ ի վերայ խնդրումն եկեալ ոչխարին, որ պակասեալ անձանց* տայցես մխիթարութիւն եւ կեանս *խորտակելոց:* Որ զաղբիւր տեառատեսին *երկոտասանամեայ* բժշկեցեր... որ զպարտս չնորհեցեր երկուց պարտականացն եւ մեղաւոր կնոջն զթողութիւն տուեալ...[195]

194 Շարունակութիւնը տես Մաշտոց, էջ 195—201 եւ մեր գործի «Ցաւելուածում»: Այս մեծ աղօթքին, Հիւանդաց օծման արարողակարգում, յաջորդում են իւղի օրհնութիւնը եւ օծման ու ձեռք դնելու կարգը:

195 Աննշան տարբերութիւններով գրեթէ նոյնութեամբ կրկնուած է զպտական կարգաւորութեան մէջ. «Օրհնեալ ես, սո՛ւրբ Տէր, բժի՛շկ մեր հոգիների... Բարի՛ Հովիւ, որ փնտրում ես մոլորեալ ոչխարին, որ մխիթարութիւն ես պարգեւում թոյլ հոգիներին... Որ բժշկեցիր հոսումն այն կնոջ, ով երկար ժամանակ տառապում էր այդ հիւանդութեամբ, որ անմաքուր հոգիներից փրկեցիր քանանացի կնոջ դստերը...» եւ այլն: Մնացածը նոյնութեամբ շարունակուած է. պարզապէս երկու աղօթքների բաւական երկար լինելու պատճառով նպատակայարմար չենք գտնում այստեղ ամբողջութեամբ ներկայացնել: Տես CO, էջ 99—100, զուգահեռը տես մեր գործի «Ցաւելուածում»:

Կարծում ենք, որ վերոբերեալ համեմատական տախտակն աւելի քան ցայտուն է դարձնում մեր այն տեսակէտը, որ «Կանոն գիշեր ժամու» կարգն այլ բան չէ, եթէ ոչ Հիւանդաց օծման խորհրդի արարողութեան ձեւափոխուած տարբերակը: Պարզապէս յաւելեալ ցանկանում ենք համեմատութեան մէջ ներկայացնել նաեւ երկու արարողութիւններում առկայ վերջին ցուցումը, որը վերաբերում է քահանաների կողմից կատարուող բժշկութեան բուն հատուածի կատարման ձեւին.

Ցայնժամ կէսքն ի քահանայից կալով յաջմէ հիւանդին եւ կէսք ի ձախմէ. եւ աւագերէցն եկեալ դնէ զԱւետարանն ի վերայ գլխոյ հիւանդին եւ ասէ...	*Եւ ապա գայցեն քահանայքն եւ կացցեն Գ ընդ աջմէ եւ Գ ընդ ձախմէ: Եւ յեօթնէն, որ առաջակայ քահանայ է, եկեալ դիցէ զսուրբ Աւետարանն ի վերայ գլխոյ հիւանդին՝ ջնացելոյն փրկիլ, եւ օծանէ:*

Մի կարեւոր հանգամանք եւս վկայում է «Կանոն գիշեր ժամու» կարգի կա՛մ Հիւանդաց օծման խորհրդի՝ իմաստային փոփոխութիւնների ենթարկուած կարգ լինելու մասին, կա՛մ էլ, որ այն պարզապէս խորհրդի առաջին մասն է կազմում, անշուշտ, դարձեալ ոչ զերծ փոփոխութիւններից: Մինչեւ վերոբերեալ ցուցումը երկուսն էլ ըստ էութեան նոյնն են թէ՛ կառուցուածքով եւ թէ՛ բովանդակութեամբ: Ապա «Կանոնը» շարունակւում է այս յաջորդականութեամբ. Աղօթք՝ Աստուած ամենակալ... Աստուած յաւիտենական, Քարոզ՝ Վասն հիւանդաց, Աղօթք՝ Փարատեա, Քարոզ՝ Խնդրեսցուք, Աղօթք՝ Թագաւոր խաղաղութեան, ապա Տէրունական աղօթք: Իսկ Հիւանդաց օծման վերոնշեալ կէտին յաջորդում են՝ Կարդ օծութեան հիւանդաց, որը յաջորդում է Հաղորդութեանը, Աղօթք՝ Տէր Աստուած... Հայր սուրբ, բժիշկ հոգւոց[196], *Արձակում, Աղօթք նախքան օծելը՝ Ամենակարող եւ յաւիտե-*

196 Ինչպէս մեզ մօտ, այնպէս էլ զպտական Հիւանդաց օծման խորհրդում, օծումից յետոյ նոյնութեամբ առկայ են սոյն աղօթքները. «Տէ՛ր բազումողորմ եւ զթած, որ չես կամենում մեղաւորի մահը, այլ նրա դարձն ու կեանքը: Եւ՝ մեղաւորս չէ՛, որ գրել եմ իմ ձեռքը նրա գլխին, ով եկել է դէպի Քեզ՝ աղօթելով մեղքերի թողութեան համար, մեր՝ քահանաներիս միջոցով, այլ Քո հզօր Աջը՝ Աւետարանի վրայ: Մենք աղօթում ենք Քեզ, մարդասէր եւ անյիշաչա՛ր Տէր, որ ընդունեցիր Դաւթի ապաշխարութիւնը Նաթան մարգարէիդ միջոցով...». եւ՝ «Աստուա՛ծ, բարի՛ Հայր, բժի՛շկ մեր հոգու եւ մարմնի, որ առաքեցիր Քո Միածին

նական, Օծում, Աղօթք՝ Գործք զօրութեան..., Ձեռք դնելու կարգ հանդերձ աղօթքով՝ Տէր Աստուած՝ Հայր ամենակալ, Տէրունական աղօթք:

Սակայն ինչո՞ւ է կանոնը կոչուել «Գիշեր ժամու»: Վաղ Եկեղեցում ապաշխարութեան կարգը կատարուել է ամբողջ գիշերային հսկման ժամանակ, ինչին անդրադառնում են թէ՛ սուրբ Գրիգոր Տաթեւացին[197] եւ թէ՛ ձեռագիր մաշտոցները, որոնցում կարգը բնութագրւում է որպէս «Կարգ զմեղուցեալսն յապաշխարութիւն կոչելոյ», եւ որոնք ունեն հետեւեալ ցուցումը. «Զկեալսն յապաշխարութիւն՝ տանի քահանայն ի դուռն եկեղեցւոյն ի գիշերի եւ կացուցանէ հանդէպ դրանն ընդ աջմէ, եւ ասեն զայսոսիկ է Գուբղայ Սաղմոս ի թիւ...»[198]: Ընչին տարբերութիւններով ճիշտ նոյն կարգադրութիւնն է պարունակում նաեւ Աւագ հինգշաբթի տեղի ունեցող Ապաշխարողաց կարգի հրահանգը, որի առաջին իսկ տողը թելադրում է. «Իսկ ի յերրորդ ժամուն ժողովեսցին ի դուռն եկեղեցւոյ վասն արձակելոյ զապաշխարողսն»[199]: Այսինքն՝ նախորդ ամբողջ գիշերը տեղի է ունեցել ապաշխարութեան կարգը, եւ ապա յաջորդ առաւօտեան կատարուել ապաշխարողներին արձակելու կարգը, այնուհետեւ մատուցուել է սուրբ Պատարագ, տրուել Հաղորդութիւն, եւ վերջում կատարուել Ոտնլուայի արարողութիւնը՝ ջրի եւ իւղի օրհնութեան կարգով[200]: Իսկ ի՞նչ է ներկայացնում «Կանոն գիշեր ժամու» կարգը: Մեր կարծիքով՝ այն գիշերային հսկման ապաշխարութեան կարգն է, որի մասին վկայում են նրանում տեղ գտած ապաշխարութեան օրհնութեան շարականներն ու ինքն իսկ կարգի անունը՝ «Գիշեր ժամու»: Մեր ձեռքի տակ գտնուող Թովմա Մեծոփեցու Հիւանդաց օծման ծէսը նկատելիօրէն բաժանուած է երկու մասի, որից առաջինն ապաշխարութեան կարգն է, իսկ երկրորդը՝ օծման, որոնք բաժանւում են սուրբ Պատարագով կամ Հաղորդութեան խորհուրդով: Սրանում, ըստ էութեան, նկատւում է Աւագ հինգշաբթի օրուայ կարգաւորութեան նկարագիրը: Եթէ փորձենք ուրուագծել, պատկերը մօտաւորապէս հետեւեալն է. Կարգ ապաշխարողաց, Արձակումն, սուրբ Պատարագ, Իւղի օրհնութիւն եւ այդ իսկ իւղով Հիւանդաց օծում[201]:

Վերոբերեալ նիւթերի ուսումնասիրութեան եւ վերլուծութեան հիման վրայ յանգել ենք հետեւեալ եզրակացութեանը:

ա. «Մաշտոց» ծիսարաններում առկայ «Կանոն գիշեր ժամու» կարգը Հիւանդաց օծման ծէսի առաջին մասում գտնուող ապաշխարութեան կարգի ձեւափոխուած տարբերակն է, որից զեղչուել են իւղին վերաբերող հատուածները:

բ. Հիւանդաց օծման ծէսն իր ամբողջութեան մէջ ուրուագիծ-պատկերն է Աւագ հինգշաբթի տեղի ունեցող ամբողջական կարգաւորութեան՝ ապաշխարողաց կարգից մինչեւ իւղի օրհնութիւնը:

գ. Հայկական Հիւանդաց օծման կարգը բազմաթիւ նմանութիւններ ունի եւ, կարելի է ասել, ըստ կառուցուածքի եւ բովանդակութեան վերցուած է Ընդհանրական Եկեղեցու փորձառութիւնից, որը փաստում է նրա ինքնուրոյն ծիսակարգ եւ ոչ թէ «Կանոն գիշեր ժամու» կարգից փոխառուած լինելու մասին:

Որդուն՝ Յիսուս Քրիստոսին, որ բժշկի բոլոր մեղքերից ու փրկի մահից: Բժշկի՛ր Քո (այս անուն) ծառային իր մարմնական հիւանդութիւններից եւ նրան նոր կեա՛նք պարգեւիր, որպէսզի նա կարողանայ փառաւորել Քո զօրութիւնը եւ գոհութիւն յայտնել Քո բարերարութեան համար, որպէսզի կարողանայ Քո կամքը կատարել Քո Քրիստոսի շնորհի, սուրբ Աստուածածնի բարեխօսութեան եւ Քո բոլոր սրբերի աղօթքների միջոցով, որովհետեւ Դու ես աղբիւրը բժշկութեան, եւ Քեզ ենք մատուցում փառք եւ պատիւ, եւ Քո Միածին Որդուն ու Սուրբ Հոգուն...»: Տես CO, էջ 106—107, զուգահեռը տես մեր գործի «Ցաւելուածում»:

197 «Ժողովիմք քահանայքս եւ պաշտօն առնեմք յերեկոյեայ մինչ ի լոյս եւ պատարագ եւ խաչ օրհնեմք, եթէ կենդանեաց եւ եթէ մեռելոց» («Գիրք հարցմանց», էջ 605):

198 Տես Նորայր արք. Պողարեան, Միսագիտութիւն, Նիւ Եորք, 1999, էջ 106:

199 Ճաշոց Գիրք Հայաստանեայց Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1872, էջ 191

200 Անդ, էջ 191—213

201 Նմանատիպ կարգաւորութիւն ունի Ը—Թ դարերից մեզ հասած Բարբերինեան ծիսարանը, որը՝ որպէս ամբողջական եւ կարգաւորուած մի ձեռնարկ, առաջիններից մէկն է ծիսական յուշարձանների թւում: Այս մասին տես Иеромонах Венедикт, Къ исторіи Православнаго Богослуженія, с. 105—111:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑՈՒ «ԿԱՐԳ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԻՒՂՈՅՆ ՀԻՒԱՆԴԱՑ» ԵՒ «ԿԱՐԳ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՀԻՒԱՆԴԱՑ» ԾԷՍԸ[1]

Մեր մատենագրութեանը յայտնի է, որ Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսը, մինչեւ գահակալելը, Կաֆայից վերադառնալիս իր հետ բերել է նաեւ մի արժէքաւոր ժողովածու, որը զանազան քերականական եւ մեկնողական նիւթերի կողքին պարունակում է նաեւ Հիւանդաց օծման արարողութեան մի տարբերակ, որը խմբագրել է Թովմա Մեծոփեցին եւ ապա ընդօրինակելու յանձնել Յովհաննէս Արճիշեցուն[2]: Մեր ուսումնասիրութեան ժամանակ հանդիպեցինք F. Conybeare-ի այն մատնանշումին, որ Հայ Եկեղեցու ծիսարան մաշտոցներն ընդհանրապէս չունեն Հիւանդաց օծման կարգը, որի փոխարէն առկայ են «Կանոն հաղորդ տալոյ» եւ «Կանոն գիշեր ժամու» աղօթքները, որոնք ոչ մի առնչութիւն չունեն Օծման կարգի հետ՝ թէ՛ կառուցուածքով եւ թէ՛ բովանդակութեամբ[3]: Սակայն հարկ է նշել, որ Մաշտոցեան Մատենադարանի առնուազն երկու ձեռագիր՝ թիւ 7117 եւ 577, որոշ տարբերութիւններով պարունակում են այս խորհրդի ծիսակարգը: Իսկ ինչ վերաբերում է տպագիր մաշտոցներին, մեր կարծիքով՝ «Կանոն գիշեր ժամու» անուանումով յայտնի կարգը Հիւանդաց օծման նոյն ծէսն է՝ անշուշտ ձեւափոխուած տեսքով[4]:

---

1 *Այս բնագիրը մեզ սիրով տրամադրել է Մաշտոցեան Մատենադարանի աւագ գիտաշխատող Արմէն սարկաւագ Սահակեանը, ում յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը— Բ.Գ.: (Սոյն հատորում ներկայացուող բնագիրը ՄՄ թիւ 7117 ձեռագրում եղածի հետ համեմատուել եւ վերջնական տեսքի է բերուել «Գանձասարի» խմբագրութեան կողմից— Խմբ.):*

2 *Տես Կարէն Մաթեւոսեան, Խոր վիրապի վանքը եւ նրա գրչութեան կենտրոնը, «Էջմիածին», 1997, Բ—Գ, էջ 177, տես նաեւ՝ ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լեւոն Խաչիկեան, Երեւան, 1955, Ա, էջ 597:*

3 *Տե՛ս Rituale Armenorum, ed. by F. Conybeare, Clarendon Press, Oxford, 1905, էջ 114, 190:*

4 *Այս մասին տես նախորդ գլուխը:*

Ներկայացուող Հիւանդաց օծման ծիսակարգը, կարելի է ասել, կատարւում է Արեւելեան Եկեղեցիների համապատասխան ծէսի նմանողութեամբ: Այն Հաղորդութեան խորհրդով բաժանւում է երկու մասի, որոնցից առաջինը ապաշխարողաց եւ իւղի օրհնութեան կարգն է, իսկ երկրորդը՝ բուն օծման ծէսը: Թէեւ ծէսը երկարաշունչ է, բայց թէ՛ խորհրդական բովանդակութեամբ եւ թէ՛ կառուցուածքային զարգացումներով՝ շատ գրաւիչ ու գեղեցիկ: Կատարւում է եօթ քահանաների ներկայութեամբ, թէպէտ ի պահանջել հարկին քահանաների թիւը կարող է լինել հինգ, երեք, երկու եւ նոյնիսկ մէկ: Պէտք է նշել, որ լատինական փորձառութեան մէջ այն ընդհանրապէս կատարւում է մէկ քահանայով: Քահանաների թիւը պատահականօրէն չի սահմանուած, այլ այն մտածումով, որ ամբողջ Եկեղեցին է մասնակցում հիւանդի՝ Եկեղեցու մէկ անդամի բժշկութեանը: Կարգը բաղկացած է 7 աղօթքից, 7 սուրբգրային ընթերցումից, 7 անգամ արտասանուող Ծ սաղմոսից, սուրբ Աստուածածնին ուղղուած քարոզից ու աղօթքից եւ անընդհատ կրկնուող «Հաւատամքից», որոնցից իւրաքանչիւրի աւարտին համապատասխանաբար քահանաների կողմից լուցւում է մէկ մոմ յատուկ այս նպատակով պատրաստուած: Միսակարգը հանգրուան առ հանգրուան հետեւեալն է. «Կարգ օրհնութեան սուրբ իւղոյն», որը ներառում է ապաշխարութեան կարգը, ապա Հաղորդութիւնը, իւղի օրհնութիւնը, որին յաջորդում են Աւետարանով օրհնութիւնը, ձեռք դնելու եւ արձակման կարգը: Ցաւարտ այս ամէնի տեղի է ունենում Օծման կարգը, որի ժամանակ օծւում են ենթակայի սիրտը, աչքերը, ականջները, հոտոտելիքը, շրթները, ձեռքերը, ճակատը: Եւ որպէս ամփոփում երկրորդ անգամ կատարւում է ձեռք դնելու կարգը, որը զուգակցւում է բժշկութեան աղօթքով:

Սոյն ծիսակարգը վերցրել ենք Մաշտոցեան Մատենադարանի թիւ 7117 ձեռագրից եւ ներկայացնում ենք առանց այլ ձեռագրերի կամ աւանդութիւնների հետ համեմատութեան՝ սոսկ որպէս մի նմուշ Հայ Եկեղեցում երբեւէ գործադրուած Հիւանդաց օծման խորհրդի: Բնագիրը կէտադրուած է, ակնյայտ ուղղագրական սխալները կամ վրիպակները՝ ուղղուած, «ո» հոլովման գոյականների թեքուած ձեւերի զեղչուած «ւ»-ը՝ վերականգնուած:

Ձեռագիր թիւ 7117

ԺՈՂՈՎԱԾՈՒ

1440թ.: Մեծոփա՞յ վանք: Գրիչ՝ Յովհաննէս Արճիշեցի, Թովմա Մեծոփեցի: Ստացող՝ Թովմա Մեծոփեցի, Մկրտիչ քհնյ (Յովհաննէս գրչի հայրը): Թերթ 347: Թուղթ 12.1x8.5: Միասիւն, երկսիւն: Բոլորգիր: Տող՝ 18—23: Մնրնկը.՝ կխ, ԼԶ: Կազմ կտդ.: Ցշտկրն՝ հեղինակի (Թովմա Մեծոփեցւոյ)՝ 345բ, գրչի՝ 93բ, 151բ, 305ա: Կնիք՝ 924բ (1734թ. Պետրոս):

(327ա) ԿԱՐԳ ԱՒՐՀՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԻՒՂՈՅՆ ՀԻՄՆԴԱՑ, ՅՈՐՈՒՄ ԱՒՈՒՐ ՀԱՆԴԵՐՁԻ ԻՒՂՈՅՆ ԱՒՐՀՆՈՒԹԵԱՆ

Ժողովին եւթն քահանայ եւ լցեալ ձէթ անապակ ի պտղոյ ծառոց ի կանթեղ՝ դնեն ի սուրբ ման ի մէջ ցորենոյ եւ եւթն պատրոյգք՝ առ նմին: Զգեստաւորին քահանայքն եւ առնուն ի ձեռս եւթն լապտեր եւ լուցանեն: Եւ սկսանին զշարականս զայս.

ԲՁ. Նոյն եւ նման [Հաւր եւ Որդւոյ].

Յայնժամ սկսեալ սարկաւագունքն ասեն: *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:*

Ժողովուրդն: *Տէ՛ր, ողորմեա՛:*

Սարկաւագն: *Վասն ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան [անձանց մերոց զՏէր աղաչեսցուք]:*

Վասն աւրհնելոյ զձէթս զայս՝ զՏէր [աղաչեսցուք]:

Վասն ծառայիս (այս անուան) զՏէր [աղաչեսցուք]:

Վասն առ ի յԱստուծոյ այցելութեամբ անձանց եւ վասն գալոյ ի վերայ սորա շնորհաց Սուրբ Հոգւոյն՝ զՏէր [աղաչեսցուք]:

Ընկալ, կեցո եւ ողորմեա եւ պահեա՛ զմեզ, Աստուած, Քոյին շնորհիւդ:

Զամենասրբուհի Աստուածածինն եւ զմիշտ Կոյսն Մարիամ հանդերձ ամենայն սրբովք յիշեսջիք, եւ (327բ) *նոքաւք զՏէր [աղաչեսցուք]:*

Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս զՏէր [աղաչեսցուք]:

Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Ողորմեա՛ց մեզ, Տէ՛ր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան Քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ՝ Տէ՛ր, ողորմեա, Տէ՛ր, ողորմեա, Տէ՛ր, ողորմեա:

Եւ քահանայն ասէ զաղաւթս: *Տէ՛ր, որ ողորմութեամբ եւ գթութեամբ Քո բժշկես զբեկմունս զանձանց եւ զմարմնոց մերոց, Ինքնին, Տէ՛ր, սրբեա՛ զձէթս զայս, որպէսզի լիցի աւծանելոց ի սմանէ ի բժշկութիւն եւ ի փոխադրումն ամենայն ախտից հիւանդութեանց եւ ախտակրութեանց մարմնոյ եւ հոգւոյ եւ ամենայն պղծութեանց: Զի եւ ի սմա փառաւորեսցի Քո ամենասուրբ անունդ, քանզի Քո է ողորմել եւ կեցուցանել, Աստուա՛ծ մեր: Եւ Քեզ փառս վերառաքեմք՝ Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ ապա գայ առաջին քահանայն մինչեւ ցեւթն քահանայս:

Եւ սարկաւագն ձայնէ: *Աւրհնեա՛, տէր:*

Եւ աւագերէցն ասէ: *Աւրհնութիւն Աստուծոյ ամենակալին՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:*

Սաղմոս Ծ

Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ, ըստ մեծի...

Տուն առ տուն ասի մինչեւ ի փոխն:

Եւ ապա ասի շարականս (328ա).

ԱՁ. Հա՛յր բազումողորմ...

Տէ՛ր, որ գթ[ացար]...

Տէ՛ր, որ դարձ[ուցեր]...

Յոյս եւ յարու[թիւն]...

Զչարչարանս...

Առ քեզ ապ[աւինիմք]...

Սարկաւագն: *Սուրբ զԱստուածածինն եւ զամենայն...*

Քահանայն: *Ընկա՛լ, Տէր, զաղ[աչանս]...*

Սաղմոս ԽԵ: *Ես ասացի...*
Փոխ. *Երանի որ խորհի...*

Յակոբու առաքելոյ ի Կաթուղիկեայց թղթոյն է ընթերցուած.

Աւրինակ առէք, եղբա՛րք, չարչարանաց եւ երկայնմտութեան զմարգարէսն, որք խաւսեցան յանուն Տեառն: Ահաւասիկ երանեմք համբերողաց. զհամբերութիւնն Յոբայ լուարուք եւ զկատարումն Տեառն տեսէք, զի բազմագութ է Տէր եւ ողորմած: Յառաջ քան զամենայն ինչ, եղբա՛րք իմ, մի՛ երդնուցուք՝ մի՛ յերկինս եւ մի՛ յերկիր եւ մի՛ յայլ ինչ երդումն, այլ եղիցի ձեր այոյն այո եւ ոչն ոչ, զի մի՛ ի կեղծաւորութիւն ինչ անկանիցիք: Վշտանայցէ՞ ոք ի ձէնջ, յաղաւթս կացցէ, բերկրեսցի՞ ոք, սաղմոս ասասցէ, հիւանդանայցէ՞ ոք ի ձէնջ, կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն, եւ արասցեն ի վերայ նորա աղաւթս, աւծցեն իւղով յանուն Տեառն, եւ աղաւթքն հաւատով (328բ) *փրկեսցեն զաշխատեալն: Եւ յարուցցէ զնա Տէր յաւուրն յետնում, եւ եթէ մեղս ինչ իցէ գործեալ, թողցի նմա: Խոստովա՛ն լերուք միմեանց զմեղս եւ աղա՛ւթս արարէք ի վերայ միմեանց, որպէսզի բժշկեսջիք, քանզի յոյժ զաւրաւոր են աղաւթք արդարոյ յաւգնականութիւն: Եղիա մարդ էր իբրեւ զմեզ չարչարելի. եւ յաղաւթս եկաց, եւ ոչ տեղաց յերկիր զերիս ամս եւ զվեց ամիս: Եւ դարձեալ եկաց յաղաւթս, եւ ետուն երկինք զանձրեւ, եւ բուսոյց երկիր զպտուղ իւր: Եղբա՛րք իմ, եթէ ոք ի ձէնջ մոլորեսցի ի ճշմարտութեան ճանապարհէ, եւ դարձուցէ ոք զնա, գիտասցէ, զի որ դարձուցանէ զմեղաւորն ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր ի մահուանէ եւ ծածկեսցէ զբազմութիւն մեղաց:*

Աւետարան ըստ Մարկոսի

Եւ կոչեաց առ Ինքն զերկոտասանսն եւ սկսաւ առաքել զնոսա երկուս-երկուս. եւ տայր նոցա իշխանութիւն ի վերայ այսոց պղծոց, եւ պատուիրեաց նոցա, զի մի՛ ինչ բարձցեն ի ճանապարհին, բայց (329ա) *միայն գաւազան. մի՛ հաց, մի՛ պարկ, մի՛ պղինձ ի գաւտիս, այլ ագանել հողաթափս, [եւ մի՛ զգենուցուք, ասէ, երկուս պարեգաւտս]: Եւ ասէ ցնոսա. «Որ տուն մտանիցէք, անդէն աւթեւանս կալջիք, մինչեւ ելանիցէք անտի: Եւ որ ոչ ընկալցին զձեզ եւ ոչ լուիցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի, թաւթափեսջիք զփոշի ոտից ձերոց ի վկայութիւն նոցա»: Եւ ելեալ քարոզէին, զի ապաշխարեսցեն, եւ դեւս բազումս հանէին եւ աւծանէին իւղով զբազում հիւանդս եւ բժշկէին զնոսա:*

Հաւատամք ի մի Աստուած...

Սարկաւագն: *Եւ եւս վասն հիւանդիս (այս անուան), որ յուսացեալ է կոչել զանուն Տեառն Աստուծոյ եւ զզաւրութիւն Նորա յաւգնութիւն եւ ի բժշկութիւն անձին իւրոյ եւ մարմնոյ, որպէսզի ապրեսցի եւ կեցցէ եւ վերստին նորոգեսցի՝ աղաւթիւք ամենայն սրբոց եւ սրբոց քահանայիցս, եւ կարողութեամբն Աստուծոյ եւ ազգակցութեամբ մարմնացելոյ Բանին Յիսուսի Քրիստոսի, զՏէր աղաչեսցուք:*

Զամենասրբուհի Աստուածա[ծինն]...

Եւ եւս միա[բան]...

Զանձինս...

Ողորմեա[ց]...

[Քահանայն]: *Անսկի՛զբն Աստուած եւ անտանելի, ամենաստեղծ եւ ամենունակ, ամենախնամ* (329բ) *եւ ամենատես, սո՛ւրբ սրբոց, որ զՄիածին Որդիդ Քո առաքեցեր բժշկել զամենայն ախտս անձանց եւ մարմնոց մերոց, առաքեա՛ զՀոգիդ Քո Սուրբ եւ սրբեա՛ զձէթս զայս եւ արա՛ զսա աւծելոյ ծառայիս Քո (այս անուան) ի կատարեալ ազատութիւն ամենայն մեղաց սորա՝ ի սրբութիւն անձանց եւ մարմնոց, ի յարքայութեանդ երկնից ժառանգութիւն: Զի Աստուած ողորմած ես եւ գթած՝ բարերար եւ մարդասէր գոլով, որ զանճառ գթութիւն ողորմութեան Քո՝ եւ զառատութիւն սիրոյ եւ քաղցրութեան նիւթական ձիթով ցուցեր առ ազգս մարդկան՝ մարգարէից, քահանայից եւ թագաւորաց, եւ զաստուածային եւ զիմանալի շնորհս պարգեւեցեր նոցա: Եւ ի ձեռն նոցին քարոզութեանց զԱստուածդ ամենեցուն՝ զՈրդիդ Միածին զՅիսուս Քրիստոս, Աւծեալ կոչեցեր բարձրաբարբառ գոչմամբ. «Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ աւծ իսկ զիս», եւ՝ «Հոգի երեսաց մերոց Տէր աւծեալ», եւ՝ «Եւ թափեալ է անուն Քո», որ ի բնութիւն մեր հեղար: Եւ Դու Ինքն զաւծութիւն սիրեցեալ եւ յարգանդի մաւր եւ կուսի Հոգւովդ* (330ա) *Սրբով աւծեալ, Աստուած եւ մարդ ամենայնիւ ճշմարտեալ: Եւ ի գետն Յորդանան վերստին Հոգւովդ Սրբով աւծեալ, ամենայնիւ Աստուած եւ Տէր եւ Քրիստոս եւ Աւծեալ անուանեալ եւ հայրական ձայնիւ ի յերկնից վկայեալ. «Դա՛ է Իմ Որդի եւ սիրելի ընտրեալ»: Եւ դարձեալ ի զղջացեալ կնոջէ աւծեալ եղեր եւ մեծագոյն երանութիւն նմա շնորհեցեր: Եւ ի վերայ քառաթեւ խաչին ատուածային արեամբ եւ կենարար ջրով աւծեցար՝ վայելուչ եւ գեղե-*

ցիկ երանգով ներկեալ: Եւ զանկեալն եւ զվիրաւորեալն յաւազակաց հոգւով եւ մարմնով ի յուս Քո բարձեալ եւ ի պանդոկի սուրբ Եկեղեցւոջ կացուցեր եւ ողորմութեամբ Քո աւծելոցն Քոց պատուէր տուեալ գինւով եւ ձիթով բժշկել զդառնացեալ եւ զախտացեալն՝ զանազան վիրաւք հարեալ, եւ ի չորեսին ընտրեալ նիւթոյ՝ ջրոյ եւ ձիթոյ, ցորենոյ եւ գինւոյ, զմեզ զամենեսեան յորդեգրութիւն Հաւրդ երկնաւորի կոչեցեր եւ զԵկեղեցիս քրիստոնէից այսու նորոգեալ:

Վասն որոյ եւ մեք՝ մեղուցեալ աւծեալքս եւ անարժան որդիք (330բ) *եւ հաւատս հաւատացեալ, ժողովեալքս ի գաւիթս պանդոկի սուրբ Եկեղեցւոյ Քո, հաճեալ ամենեքեան միաբան աղաչեմք պաղատանաւք եւ արտասուալից մաղթանաւք, զի առաքեսցես առ մեզ եւ զՍուրբ Հոգիդ, որ եկեալ աւրհնեսցէ զնիւթական եւղս զայս եւ տացէ սմա զիմանալի եւ զաստուածային շնորհս Քո: Զի ով ոք աւծցի սովաւ հաւատով, յուսով եւ սիրով, բժշկեսցի ի խոցուածոց ախտակրութեանց հոգւոյ եւ ի հիւանդութեանց մարմնոյ՝ ի քաւութիւն մեղաց եւ յարձակումն կապանաց, ի յոյս կենդանութեան եւ յառողջութիւն ուրախութեան՝ ըստ նմանութեան աստուածագործակ մեռոնին աւծութեան առ ի կնքել նշանաւ սուրբ խաչին եւ դրոշմել սրբազան իւղոյն աւծութեան, բարեխաւսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին եւ ամենայն աւծելոցն Քոց եւ երկնաւորացն դասուց, որ առ Քեզ հաւաքեալ կան ի մաղթանս աղերսալից եւ ի պաղատանս յաւիտենից: Եւ Քեզ փառս վերառաքեմք՝ Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշ[տ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն]:*

Հայր մեր *որ յե[րկինս]...*

(331ա) Եւ վառէ զմի պատրոյգն, եւ կատարի առաջինն: Գայ ի մէջ երկրորդ քահանայն: Եւ սարկաւագն ասէ.

Աւրհնեա՛, տէ՛ր:

Եւ քահանայն ասէ: *Աւրհնութիւն ամենակալին Աստուծոյ:*

Ժողովուրդն: *Ամէն:*

Եւ պատն զՄ սաղմոսն:

Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ, ըստ մեծի ողորմու...

Եւ զշարականս զայս.

Ա.Կ. Ծով կենցա[ղոյս]...
Մրրկեալ...
Նաւապ[ետ]...
Աղաչեցի զբազ[ումողորմ]...
Զթագաւորն...
Փութացի՛[ր]...

Սարկաւագն: *Սուրբ զԱստուած[ածինն եւ զամենայն սուրբս]...*
Քահանայն: *Ընկա՛լ, Տէր, զ[աղաչանս մեր]...*
Սաղմոս կց. [ԻԲ]: *Աւծեր իւղով զ[գլուխ իմ]...*
Փոխ. *Տէր հովուեսցէ...*

Յոհաննու առաքելոյ ի Կաթուղիկեայց թղթոյն է ընթերցուած

Եղբա՛ր, եթէ ասիցեմք, եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք, եւ ճշմարտութիւն ի մեզ ոչ գոյ: Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է Նա եւ արդար՝ առ ի թողուլ զմեղս մեր եւ սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ: Եթէ ասիցեմք, եթէ ոչ ինչ մեղաք, սուտ առնեմք զՆա, եւ բան Նորա ոչ է ի մեզ: Որդեա՛կք իմ, զայս գրեմ ձեզ, զի մի՛ մեղիցէք: Եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխաւս առ Աստուած (331բ) *զՅիսուս Քրիստոս՝ զարդարն եւ զանարատն. եւ Նա է քաւութիւն մեղաց մերոց. եւ ո՛չ եթէ մերոցն միայն, այլ ամենայն աշխարհի: Եւ յայսմիկ գիտեմք, եթէ ծանեաք զՆա, եթէ զպատուիրանս Նորա պահիցեմք: Որ ասիցէ եթէ՝ ծանեայ զՆա, եւ զպատուիրանս Նորա ոչ պահիցէ, սո՛ւտ է, եւ ճշմարտութիւն ի նմա ոչ գոյ: Իսկ որ պահիցէ զբան Նորա, արդարեւ ի նմա կատարեալ է սէրն Աստուծոյ. այսուիկ ճանաչեմք, եթէ ի Նմա եմք: Որ ասիցէ ի Նմա բնակել, այնպէս պաքտի գնալ, որպէս եւ Նայն գնաց:*

Սաղմոս կց. [ՃԽԱ]: *Սփռեցից առ...*
Փոխ. *Զայնիւ իմով...*

Աւետարան ըստ Ղուկասու.

Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով: Եւ ահա այր մի անուն կոչեցեալ Զակքէոս. եւ նա էր մաքսապետ եւ ինքն էր մեծատուն. եւ խնդրէր տեսանել, թէ ով իցէ Յիսուս, եւ ոչ կարէր ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւն: Եւ ընթացեալ յառաջն՝ ել ի Ժանտաթզենին, զի տեսանիցէ զՆա,

քանզի ընդ այն իսկ անցանելոց էր: Իբրեւ եկն ի տեղին, հայե(332ա)-ցաւ ի վեր Յիսուս եւ ասէ ցնա. «Զակքէ՛, փութա է՛ջ այսր, զի այսաւր ի տան քում արժան է Ինձ ագանել»: Փութացաւ էջ եւ ընկալաւ զՆա ուրախութեամբ: Իբրեւ տեսին զնա ամենեքեան, տրտնջէին եւ ասէին, թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել: Եկն եկաց Զակքէոս եւ ասէ ցՏէր. «Տէ՛ր, ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց, եւ եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին»: Ասէ ցնա Յիսուս. «Այսաւր եղեւ փրկութիւն տանս այսմիկ, քանզի եւ սա որդի Աբրահամու է: Զի եկն Որդի մարդոյ խնդրել եւ կեցուցանել զկորուսեալն»:

Հաւատամք ի մի Աստուած...

Սարկաւագն քարոզէ: *Եւ եւս վասն հիւանդիս (այս անուան), որ յուսացեալ է կոչել զանուն Տեառն Աստուծոյ եւ զզաւրութիւն Նորա յաւգնութիւն եւ ի բժշկութիւն անձին իւրոյ եւ մարմնոյ, որպէսզի ապրեսցի եւ կեցցէ եւ վերստին նորոգեսցի. աղաւթիւք ամենայն սրբոց եւ սրբոց քահանայիցս, եւ կարողութեամբն Աստուծոյ եւ ազգակցութեամբ մարմնացելոյ Բանին Յիսուսի Քրիստոսի, զՏէր աղաչեսցուք:*

Զամենա[սրբուհի Աստուածածինն]...

Եւ եւս [միաբան]...

Զանձինս...

Ողոր[մեաց]...

(332բ) Քահանայն: *Աստուա՛ծ մեծ եւ սքանչելի, որ պահես զուխտս Քո եւ տաս զողորմութիւն սիրելեաց Քոց եւ զթողութիւն մեղաց ի ձեռն սրբոյ Որդւոյ Քոյ Յիսուսի Քրիստոսի, որ նորոգեաց զմեզ ի մեռելութենէ մեղաց մերոց: Դու ես, որ լուսաւորես զկոյրս եւ վերականգնես զգլորեալս: Դու հաներ զմեզ ի խաւարէ եւ ի ստուերաց մահու՝ ասելով ցկապեալսն թէ՝ ելէ՛ք, եւ որք ի խաւարին թէ՝ յայտնեցարո՛ւք, յորս ծագեաց լոյս գիտութեան Աւծելոյ Քոյ, որ եկն եւ երեւեցաւ յերկրի եւ ընդ մարդկան շրջեցաւ. եւ որք ընկալան զՆա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել: Փրկական Աւազանին վերստին ծննդեամբն զորդեգրութիւն մեզ շնորհեցեր եւ հաղորդս արարեր զմեզ սուրբ անուան Նորա եւ կանգնեցեր զմեզ ի կործանմանէ դիւացն, որ ի յանվախճան արքայութիւնդ Իւր կոչեաց զմեզ: Դու նոյն Ինքն Տէ՛ր ամենայնի, նայեա՛ ի մեզ, որ ոչ հաճեցար արեամբ ուխտի զուարակացն զսրբու-*

թիւն մեր, այլ աւծմամբ սրբութեան Քո: Եւ (333ա) ետուր երկիւղածաց Քոց նշան զսուրբ եւ զսրբարար խաչդ եւ զկնիք Սրբոյ Քո Հոգւոյդ՝ առ ի լինել մեզ Աւծելոյ Քո հաւատս եւ ժողովուրդս, վերին արքայութեանդ ժառանգորդս, ազգ սուրբ՝ սրբեալ ջրով եւ մաքրեալ Հոգւովդ Քո Սրբով: Զնոյնդ եւ մե՛զ պարգեւեա շնորհս ի պաշտաւնս յայս, որպէս ետուր Մովսիսի ծառայի Քո եւ Սամուելի սիրելւոյ Քոյ եւ Յով-[հ]աննու ընտրելոյ Քոյ, եւ հաստատեա՛ զմեզ պաշտաւնեայս Նորոյ ուխտի Քոյ, որք աւծանիմք յիւղոյս յայսմանէ՝ մերկանալ զամբարշտութիւն եւ զաշխարհական ցանկութիւնս: Փրկեալք ի մեղաց՝ եղիցուք ի Քեզ արդարացեալք, զգեցեալք զՏէրդ մեր Յիսուս Քրիստոս՝ ըստ սրբութեանս այսմիկ, զի ողորմած եւ մարդասէր Աստուած ես, եւ Քեզ վայել է փառք, իշխանութիւն, պատիւ [այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն]:

Եւ ասեն՝ *Հայր մեր որ յերկ...*

Եւ վառէ զպատրոյգն երկրորդ քահանայն եւ կատարի: Դարձեալ՝ զայ երրորդ քահանայն եւ ասէ.

Աւրհնութիւն Աստուծոյ ամենակալին:

Ժողովուրդն: Ամէն:

Սաղմոս Ծ

Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ...

[Եւ զ]շարականս զայս.

ՐՁ. Մեղաք մինչեւ յե[րկինս]...

Իջաք մի[նչ]...

Հալածեա՛...

(333բ) *Զեզեկիային քե[զ]...*

Որ ի խաչ[ին]...

Որ յամենայն ազգ[աց]...

Սարկաւագն: *Սուրբ զԱստուածած[ինն եւ զամենայն սուրբս]...*

Քահանայն: *Ընկա՛լ, Տէր, զ[աղաչանս մեր]...*

Սաղմոս: *Բարձր առնեմ զՔեզ, Տէ՛ր, զի ընկ[ալար]...*

Պաւղոսի առաքելոյն ի Կորնթացւոց [երկրորդ] թղթոյն է ընթերցուած.

Եղբա՛ր, դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք, որպէս եւ ասաց Աստուած եթէ՝ «Բնակեցայց ի նոսա եւ գնացից ի նոսա. եւ եղէց նոցա Աստուած, եւ նոքա եղիցին Իմ ժողովուրդ: Վասն որոյ ելէ՛ք ի միջոյ նոցա եւ մեկնեցարո՛ւք,— ասէ Տէր,— եւ ի պիղծս մի՛ մերձենայք. եւ Ես ընկալայց զձեզ [եւ Ես եղէց ձեզ ի Հայր], եւ դուք եղիջի՛ք Ինձ յուստերս եւ ի դստերս,— ասէ Տէր ամենակալ»: Իսկ որովհետեւ զայս աւետիս ունիմք, սիրելիք, սրբեսցո՛ւք զանձինս մեր յամենայն պղծութենէ հոգւոյ եւ մարմնոյ. կատարեսցո՛ւք զսրբութիւն ահիւն Աստուծոյ:

Սաղմոս [Խ]
Երանի որ խորհի (ի լման)

Աւետարան ըստ Մարկոսի
Տէր մեր Յիսուս Քրիստոս

երթայր, եւ ժողովուրդ բազում զհետ Նորա եւ նեղէին զՆա: Եւ կին մի էր ի տեառատեսութեան արեան զերկոտասան ամ, եւ էր յոյժ վշտացեալ ի բազում բժշկաց եւ ծախեալ զինչս իւր զամենայն եւ չէր ինչ աւգտեալ, այլ (334ա) *ե՛ւս առաւել զայրացեալ: Իբրեւ լուաւ զՅիսուսէ, եկն ի մէջ ամբոխին յետոյ եւ բուռն եհար զհանդերձէ Նորա. քանզի խորհէր ի մտի թէ՝ միայն մերձեցայց ի հանդերձս Նորա, փրկեցայց: Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբեւր արեան նորա, եւ գիտաց կինն ի մարմին իւր, եթէ բժշկեցաւ ի տանջանացն: Եւ անդէն վաղվաղակի գիտաց Յիսուս յանձն Իւր զզաւրութիւնն, որ ել ի Նմանէ, դարձաւ յամբոխն եւ ասէ. «Ո՞ մերձեցաւ ի հանդերձս Իմ»: Եւ ասեն ցՆա աշակերտքն. «Տեսանես, զի ամբոխդ նեղէ զՔեզ, եւ ասես, թէ ո՞ մերձեցաւ ի հանդերձս Իմ»: Եւ Յիսուս շուրջ հայէր տեսանել, թէ ո՛ զայն արար: Եւ կինն զարհուրեալ եւ դողացեալ վասն որոյ գաղտն արար, քանզի գիտէր՝ զինչ եղեւն նմա, եկն, անկաւ առաջի Նորա եւ ասաց զամենայն իրսն ստուգութեամբ: Եւ Յիսուս ասէ ցնա. «Դո՛ւստր, հաւատք քո կեցուցին զքեզ. ե՛րթ ի խաղաղութիւն եւ եղիջի՛ր ողջ ի տանջանացդ քոց»:*

Հաւատամք...

Սարկաւագն քարոզէ: Եւ ե՛ւս վասն հիւանդիս (այս անուան), որ յուսացեալ է կոչել զանուն Տեառն Աստուծոյ եւ զզաւրութիւն Նորա յաւգնութիւն եւ ի բժշ(334բ)*կութիւն անձին իւրոյ եւ մարմնոյ, որպէսզի ապրեսցի եւ կեցցէ [եւ] վերստին նորոգեսցի աղաւթիւք ամենայն սրբոց եւ քահանայիցս, եւ կարողութեամբն Աստուծոյ եւ ազգակցութեամբ մարմնացելոյ Բանին Յիսուսի Քրիստոսի, զՏէր աղաչեսցուք:*

Զամենասրբու[հի]...

Եւ ե՛ւս միա[բան]...

Զանձինս...

Ողորմեաց...

Քահանայն ասէ: *Տէ՛ր Աստուած, աղաչեմք զՔեզ, եղիցի եւղս այս աւծումն ցնծութեան Հոգւովդ Սրբով. եւղ մաքրութեան, եւղ վերստին ծննդեան, եւղ սրբութեան, թագ արքայութեան, վահան զաւրութեան որ ընդդէմ ամենայն դիւական գործոց առ ի կործանել զնոսին, կնիք խորհրդոյ, ցնծութիւն սրտի եւ ուրախութիւն յաւիտենական: Զի որք ի սմանէ աւծցին, լիցի նոցա որպէս դրոշմ աւրհնութեան վերստին ծննդեան, աներկիւղ կացցեն եւ փայլեսցեն իբրեւ զաստեղս երկնից առանց աղտոյ եւ տգեղութեան եւ ի յաւիտենական հանգիստդ առցեն զբարբիոն փառաց ընդ ամենայն սուրբս ողորմութեամբ Քրիստոսի Քոյ: Ընդ որում Քեզ՝ Հաւր, եւ Սուրբ Հոգւոյդ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ [եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն]:*

(335ա) Եւ ասեն Գ *Լո՛ւր, Տէր, եւ ողորմեա՛:*

Հայր մեր որ...

Եւ վառէ երրորդ քահանայն զպատրոյգն: Դարձեալ՝ գայ չորրորդ քահանայն եւ ասէ.

Աւրհնութիւն Աստուծոյ ամենակալին:

Ժողովուրդն: *Ամէն:*

Սաղմոս Ծ
Ողորմեա՛ ինձ, Աստուած...

Եւ [զ]շարականն զայս.

Բկ. Ցամենայն ժամ աղաչ[անք]...
Ցանցա[նաց]...
Արտասուաց...
Անմա՛հ Թագաւոր...
Որ զառժամ[անակեայ]...
Անոխա[կալ]...

Սարկաւագն: *Սուրբ զԱստուածածՙ[ինն եւ զամենայն սուրբս]...*
Քահանայն: *Ընկա՛լ, Տէր...*

Սաղմոս [ԿԹ]: *Աստուա՛ծ, յաւգնել ինձ նայ[եա]...*

Պաւղոսի առաքելոյ յԵփեսացւոց թղթոյն է ընթերցուած.

Եղբա՛ր ք, աղաչե՛մ զձեզ ես, որ կապեալս եմ ի Տէր, արժանի գնալ կոչմանն, յոր կոչեցայք. ամենայն խոնարհութեամբ եւ հեզութեամբ եւ երկայնմտութեամբ անսալ միմեանց սիրով. փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյ յաւդիւ խաղաղութեան. մի մարմին եւ մի հոգի, որպէս եւ կոչեցարուք ի մի յոյս կոչմանն ձերոյ: Մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն, մի Աստուած Հայր ամենեցուն, որ ի վերայ ամենայնի եւ ընդ ամենեսին եւ յամենեսին ի մեզ: Այլ իւրաքանչ(335բ)իւր ումեք ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պարգեւացն Քրիստոսի:

Սաղմոս [Իե]: *Դա՛տ արա ինձ, Տէ՛ր, զի ես յանբծութեան իմում գնացի. ի Տէր յուսացայ, զի մի՛ եղէց հիւանդ:*

Աւետարան ըստ Մա[տ]թէոսի

Եւ ելեալ անտի գնաց ի կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի: Եւ ահա կին մի քանանացի, ի սահմանաց նոցա ելեալ, աղաղակէր եւ ասէր. «Ողորմեա՛ ինձ, Տէ՛ր, Որդի՛ Դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի»: Եւ Նա ոչ ետ նմա պատասխանի: Եւ մատուցեալ աշակերտքն Նորա՝ աղաչէին զՆա եւ ասէին. «Արձակեա՛ զնա, զի աղաղակէ զհետ մեր»: Նա պատասխանի ետ եւ ասէ. «Ո՛չ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի»: Եւ նա մատուցեալ երկիրպագանէր Նմա եւ ասէր. «Տէ՛ր, աւգնեա՛ ինձ»: Պատասխանի ետ նմա եւ ասէ. «Ո՛չ է բարւոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց»: Եւ նա ասէ. «Այո՛,

Տէր, քանզի եւ շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ Տեառն իւրեանց»: Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. «Ո՛վ կին դու, մե՛ծ են հաւատք քո. եւ եղիցի քեզ, որպէս եւ կամիս»: Եւ բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու:

Հաւատամք ի մի Աստուած Հայր...

(336ա) Սարկաւագն քարոզէ: *Եւ եւս վասն հիւանդիս (այս անուան), որ յուսացեալ է կոչել զանուն Տեառն Աստուծոյ եւ զզաւրութիւն Նորա յաւգնութիւն եւ ի բժշկութիւն անձին իւրոյ եւ մարմնոյ, որպէսզի ապրեսցի եւ կեցցէ եւ վերստին նորոգեսցի. աղաւթիւք ամենայն սրբոց եւ քահանայիցս, եւ կարողութեամբն Աստուծոյ եւ ազգակցութեամբ մարմնացելոյ Բանին Յիսուսի Քրիստոսի, զՏէր աղ[աչեսցուք]:*

Զամենասրբու[հի]...
Եւ եւս մի[աբան]...
Զանձինս...
Ողոր[մեաց]...

Քահանայն: *Տէ՛ր Աստուած, բարի՛ եւ մարդասէր, բարիաղէ՛տ եւ բազումողորմ, որ զամենայն հիւանդութիւնս եւ զամենայն ախտս բժշկես, եւ զծառայս Քո (զայս անուն)՝ յարո՛ զսա ի մահճաց ցաւոց, վերայցեա՛ ողորմութեամբ Քո: Հալածեա՛ ի սմանէ զամենայն տկարութիւն եւ զհիւանդութիւն, զի յարուցեալ ձեռամբ Քո կարողաւ՝ ծառայեսցէ Քեզ հանդերձ ամենայն գոհութեամբ: Աստուա՛ծ մեծ եւ բարձրեալ, յամենայն արարածոց Քոց երկրպագիս, որ իմաստութեան աղբեւրդ ես, եւ բարերարութիւն Քո՝ խոր եւ անսահման, գթութիւն Քո՝ անդորր: Դու նոյն Ինքն մարդասէր Տէր, որ յաւիտենական (336բ) եւ սքանչելի ես Աստուած, եւ ոչ ոք կարող է իմանալ եւ հասու լինել զաւրութեան Քո, նայեաց եւ լո՛ւր մեզ՝ անարժան ծառայիցս Քո, եւ ի լապտերքս, զոր յանուն Քո մատուցանեմք, առաքեա՛ ընդ պայծառութիւն լուսոյս զշնորհս բժշկութեան: Մաքրեա՛ զսոսա բազում ողորմութեամբ Քո ի թողութիւն մեղաց մերոց՝ բարեխաւսութեամբ անբիծ Տիրամաւրՙ սուրբ Աստուածածնիդ, եւ սրբոց հրեշտակապետաց եւ դասուց հրեշտակաց եւ յառաջընթաց Մկրտչին Յով[հ]աննու եւ սրբոց առաքելոցն եւ սրբոց բժշկացն Կոզմասու եւ Դամիանոսի, Կիւրակոսի եւ Յոհաննու Պանդաէլիմոնի եւ Երմոդայոսի, Սպիրիդոնի, Թալիլեայ եւ Դէոմիդեայ եւ ամենայն սրբոց: Զի Դու ես, Աստուած, Աստուած ողորմութեան եւ կեցու-*

ցիչ, եւ Քեզ մատուցանեմք զաւրհնութիւնս եւ զփառս՝ Հաւր եւ Որդւոյ [եւ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն]:

Եւ ասեն՝ *Հայր մեր [որ] յերկինս...*

Եւ չորրորդ քահանայն վառէ զպատրոյգն եւ կատարի: Դարձեալ՝ գայ հինգերորդ քահանայն:

Սարկաւագն: *Աւրհնեա՛, տէր:*

Քահանայն: *Աւրհնութիւն ամենակալին Աստուծոյ:*
(337ա) Ժողովուրդն: *Ամէն:*

Սաղմոս Ծ
Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըս[տ]...

Շարական.
ԳՁ. Զանազանական զհ[ոգեւոր]...
Զցանկ...
Ոստա[քանց]...
Հառաչեցի զ[անլուելի]...
Աւերեաց...
Աստուած է...
Զանարա[տն]...

Քարոզ: *Սուրբ զԱստուածած[ինն եւ զամենայն սուրբս]...*

Աղաւթք: *Ընկա՛լ, Տէր...*

Սաղմոս [ԼԲ]: *Ցնծացէ՛ք, արդարք...*

Պաւղոսի առաքելոյ ի Հռոմայեցւոց թղթոյն է ընթերցուած.

Պարտ է մեզ, եղբա՛ք, որ կարաւղքս եմք, զտկարութիւն տկարացն բառնալ եւ մի՛ անձանց եւեթ հաճոյ լինել, այլ իւրաքանչիւր ոք ի ձէնջ ընկերին հաճոյ լինիցի ի բարիս՝ վասն շինութեան: Քանզի եւ Քրիստոս ոչ եթէ անձին հաճոյ եղեւ, այլ որպէս եւ գրեալ է. «Նախատինք

նախատչաց քոց անկան ի վերայ իմ»: Բայց որ ինչ գրեցաւն, ի մեր վարդապետութիւն գրեցաւ, զի համբերութեամբ եւ միխիթարութեամբ Գրոց զյոյսն ընկալցուք: Այլ Աստուած համբերութեան եւ ամենայն միխիթարութեան տացէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս ըստ Յիսուսի Քրիստոսի, զի միաբանութեամբ ի մի բերան փառաւոր առնիցէք զԱստուած եւ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Վասն որոյ ընկալարո՛ւք զմիմեանս, որպէս եւ Քրիստոս ընկալաւ զձեզ ի փառս Աստուծոյ:

(337բ) Սաղմոս: *Աստուա՛ծ, յանուան Քում կեցո՛...*

Աւետարան ըստ Ղուկասու

Եւ ասէ ցնոսա Յիսուս. «Մ՞ ի ձէնջ, որոյ իցէ բարեկամ, եւ երթայցէ առ նա ի մէջ գիշերի եւ ասէ ցնա. «Բարեկա՛մ, տո՛ւր ինձ փոխ երիս նկանակս, զի բարեկամ իմ եկն առ իս յուղւոյ, եւ ոչ ինչ ունիմ դնել առաջի նորա»: Եւ նա ի ներքուստ տայցէ պատասխանի եւ ասիցէ. «Մի՛ աշխատ առներ զիս, զի դուրքս փակեալ են, եւ մանկունքս ընդ ինեւ կան յանկողնի. ոչ կարեմ յառնել եւ տալ քեզ»: Ասեմ ձեզ, եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա վասն բարեկամութեանն, սակայն վասն ժտութեանն յարուցեալ տացէ նմա զինչ եւ պիտոյ իցէ: Եւ ես ասեմ ձեզ. խնդրեցէ՛ք, եւ տացի՛ ձեզ, հայցեցէ՛ք, եւ գտջի՛ք, բախեցէ՛ք, եւ բացցի՛ ձեզ. զի ամենայն, որ խնդրէ, առնու, եւ որ հայցէ, գտանէ, եւ որ բախէ, բացցի՛ նմա: Ցո՞ ոք ի ձէնջ հայր խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փոխանակ ձկանն ա՞ւձ տայցէ նմա. եւ կամ խնդրեսցէ (338ա) *ձու, միթէ կարի՞ճ տայցէ նմա: Իսկ եթէ դուք, որ չարքդ էք, գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց, ո՞րչափ եւս առաւել Հայրն ձեր յերկնից տացէ բարիս այնոցիկ, որ խնդրեն ի Նմանէ»:*

Հաւատամք ի մի Աստուած...

Սարկաւագն քարոզէ: *Եւ եւս վասն Հիւանդիս (այս անուան), որ յուսացեալ է կոչել զանուն Տեառն Աստուծոյ եւ զզաւրութիւն Նորա յաւգնութիւն եւ բժշկութիւն անձին իւրոյ եւ մարմնոյ, որպէսզի ապրեսցի եւ կեցցէ եւ վերստին նորոգեսցի, աղաւթիւք ամենայն սրբոց եւ քահանայիցս, եւ կարողութեամբն Աստուծոյ եւ ազգակցութեամբ մարմնացելոյ Բանին Յիսուսի Քրիստոսի, զՏէր աղաչեսցուք:*

Զամենասրբու[հի]...

Եւ եւս միաբ[ան]...
Զանձինս...
Ողոր[մեաց]...

Քահանայն ասէ: *Տէ՛ր Աստուած, որ բազում ունիս ողորմութիւն եւ գթութիւն եւ մեծատուն ես բարերութեամբ, Դու նոյն Ինքն Տէր, որ զաւրացուցեր զմեզ ի ձեռն սրբոց առաքելոցն աղաւթիւք քահանայականաւ ի ձեռն իւղոյ զհիւանդս բժշկել, շնորհեա՛ զեւղս զայս ի բժշկութիւն եւ ի փրկութիւն* (338բ) *այնոցիկ, որք աւծցին ի նմանէ, եւ ի փառս անուանդ Քում սրբոյ, որպէսզի փարատեցուսցէ զամենայն հիւանդութիւնս եւ զաղտեղութիւնս հոգւոց եւ մարմնոց, բժի՛շկ եւ բաշխաւղ պարգեւաց մարդասիրութեամբ Քո: Եւ փառաւորեմք զՔոյին գթութիւնդ, որ Աստուածդ ես ողորմութեան եւ գթութեան, եւ Քեզ փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ [եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն]:*

Եւ ասի *Հայր մեր, որ յերկ....*

Եւ վառէ զպատրոյգն եւ կատարի: Դարձեալ՝ զայ վեցերորդ քահանայն:

Եւ սարկաւագն ասէ: *Աւրհնեա՛, տէր:*
Քահանայն: *Աւրհնութիւն ամենակալին Աստուծոյ:*
Ժողովուրդն: *Ամէն:*

Սաղմոս Ը
Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծ[ի]...

Շարական.
Գկ. Քրիստո՛ս Աստուած...
Անաւրէնութեամբ...
Վիրաւո[րեալ]...
Զեղեկիային Քեզ...
Որ անմահար[ար]...
Մաքուր եւ...

Սարկաւագն: *Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց...*
Քահանայն: *Ընկա՛լ, Տէր, զաղ[աչանս մեր]...*

Սաղմոս ԿԷ: *Ցարեաւ Աստուած, եւ ցրու[եսցին]...*

Պաւղոսի առաքելոյ ի Հռոմայեցւոց թղթ[ոյն է ընթերցուած].
Եղբա՛ր՛ք, աղաչեմ զձեզ գթութեամբն Աստուծոյ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, զխաւսուն պաշտաւնդ ձեր, եւ մի՛ կերպարանիք կերպարանաւք աշխարհիս այսորիկ, այլ նորոգեցարո՛ւք ի նորոգութիւն մտաց ձերոց՝ առ ի քննել ձեզ զլաւն եւ եթէ զինչ են կամք Աստուծոյ. բարին եւ հաճոյն եւ կատարեալն: Զայս ասեմ շնորհաւքն Աստուծոյ, որ տուեալ են ինձ, ամենայնի, որ է ի ձեզ, մի՛ առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ, այլ ի խորհելն զգաստանալ իւրաքանչիւր, որպէս եւ բաժանեաց Աստուած զչափ հաւատոց:

Սաղմոս [ՃԼԲ]: *Զի՛ բարի կամ զի՛...*

Աւետարան ըստ Մարկոսի
Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. «Եթէ ունիցիք զհաւատսն Աստուծոյ, ամէն ասեմ ձեզ, որ ոք ասիցէ լերինս այսմիկ՝ բարձիր եւ անկիր ի ծով, եւ ոչ երկմտիցէ ի սրտի իւրում, այլ հաւատայցէ, թէ զոր ասէն, լինիցի, եղիցի նմա, զոր ինչ եւ ասիցէ: Վասն այսորիկ ասեմ ձեզ. զամենայն ինչ, վասն որոյ աղաւթս արարեալ խնդրիցէք եւ հաւատայցէք, եթէ առնուցուք, եղիցի ձեզ: Եւ յորժամ յաղաւթս կայցէք, թողուցուք, եթէ ունիցիք ինչ զու(339բ)*մեքէ, զի եւ Հայրն ձեր, որ յերկինս է, թողցէ ձեզ զյանցանս ձեր»:*

Հաւատամք...

Սարկաւագն: *Եւ եւս վասն հիւանդիս (այս անուան), որ յուսացեալ է կոչել զանուն Տեառն Աստուծոյ եւ զզաւրութիւն Նորա յաւգնութիւն եւ ի բժշկութիւն անձին իւրոյ եւ մարմնոյ, որպէսզի ապրեսցի եւ կեցցէ եւ վերստին նորոգեսցի. աղաւթիւք ամենայն սրբոց եւ քահանայիցս, եւ կարողութեամբն Աստուծոյ եւ ազգակցութեամբ մարմնացելոյ Բանին Յիսուսի Քրիստոսի, զՏէր աղաչեսցուք:*

Զամենասրբու[հի]...
Եւ եւս մի[աբան]...
Զանձինս...
Ողորմեաց...

Քահանայն: *Տէ՛ր Աստուած մեր, որ նստիս ի վերայ քերովբէից եւ նայիս յանդունդս, հայեա՛ց ի ծառայս Քո (այս անուն), ծածկեա՛ զսա մարդասիրութեամբ Քո ի բարձրացեալ սրբութենէ Քումմէ անպատմելի զաւրութեամբ Քո: Հեռացո՛ ի սմանէ զամենայն ցաւս եւ զամենայն աղտեղութիւն եւ վերականգնեա՛ զսա առողջութեամբ զամենայն աւուրս կենաց իւրոց: Եւ Քեզ վայել [է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն]:*

Եւ ասեն *Հայր մեր [որ] յերկինս...*

Եւ վառեալ զպատրոյգն՝ վեցերորդ քահանայն կատարէ եւ կանգնի: Դարձեալ՝ գայ եւթներորդ քահանայն:

Սարկաւագն: *Աւրհնեա՛, տէր:*
Քահանայն: *Աւրհնութիւն Աստուծոյ ամենակալին:*
(340ա) Ժողովուրդն: *Ամէն:*

Սաղմոս Ը
Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ...

Շարական.
ԴՁ. Անկանիմ առաջի Քո եւ խ[նդրեմ]...
Աղաղակ[եմ]...
Ցաներե[ւոյթ]...
Ցո՛յս կենդանու[թեան]...
Որ կամաւոր մա[հուամբ]...
Առ քեզ ապ[աւինիմք]...

Սարկաւագն: *Սուրբ զԱստուածածինն...*

Աղաւթք: *Ընկա՛լ, Տէր, զաղաչ[անս մեր]...*

Սաղմոս [Ղ]: *Ո բնակեալ է յաւգ[նութիւն]...*

Յոհաննու առաքելոյ ի Կաթուղիկեայց [առաջին] թղթոյն է ընթ[երցուած].

Եղբա՛ր, եւ դուք աւծութիւն ունիք առ ի Սրբոյն եւ գիտէք [ամենեքին]: Մանկո՛ւնք, ոչ գրեցի ձեզ, եթէ ոչ գիտէք զճշմարտութիւնն, այլ թէ գիտէք զնա, եւ թէ՝ զի ամենայն ստութիւն ոչ է ի ճշմարտութենէ անտի: Իսկ ո՞ իցէ սուտ, թէ ոչ՝ որ ուրանայ, թէ Յիսուս չէ Քրիստոսն: Նա իսկ է նեռն, որ ուրանայ զՀայր եւ զՈրդի: Ամենայն, որ ուրանայ զՈրդի, եւ ոչ զՀայր ընդունի, իսկ որ խոստովանի զՈրդի, նա եւ զՀայր ընդունի: Դուք զոր լուարուքն ի սկզբանէ, ի ձեզ բնակեսցէ. զի եթէ ի ձեզ բնակեսցէ զոր ի սկզբանէն լուարուք, եւ դուք յՈրդի եւ ի Հայր բնակեսջիք: Եւ այս են աւետիքն, զոր աւետարանեաց Նա մեզ՝ զկեանսն յաւիտենականս:

Սաղմոս [ԼԱ]: *Երանի որում թողութիւն...*

Աւետարան ըստ Ղուկասու

(340բ) *Աղաչէր զՆա ոմն ի փարիսեցւոցն, զի կերիցէ ճաշ ընդ նմա. եւ մտեալ ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ: Եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր. իբրեւ գիտաց, թէ բազմեալ է ի տան փարիսեցւոյն, բերեալ շիշ մի իւղոյ ազնուի՝ կայր յետոյ առ ոտս Նորա եւ լայր եւ արտասուաւքն սկսաւ թանալ զոտս Նորա, եւ հերով գլխոյ իւրոյ ջնջէր. եւ համբուրէր զոտս Նորա եւ օծանէր իւղովն: Եւ տեսեալ փարիսեցւոյն, որ կոչեացն զՆա, ասէր ընդ միտս իւր. «Սա թէ մարգարէ ոք էր, ապա գիտէր, թէ ով կամ որպիսի ոք կին մերձենայ ի սա, զի մեղաւոր է»: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. «Սիմո՛ն, ունիմ ինչ ասել քեզ»: Եւ նա ասէ. «Ասա՛, վարդապետ»: Եւ ասէ. «Երկու պարտապանք էին ուրումն փոխատուի. մինն պարտէր հինգ հարիւր դահեկան, եւ միւսն՝ յիսուն. եւ իբրեւ ոչ գոյր նոցա հատուցանել, երկոցունցն չնորհեաց. արդ ասա՞ ո՞ առաւել սիրեսցէ զնա»: Ասէ Սիմոն. «Ինձ այսպէս (341ա) թուի, թէ որում զբազումն չնորհեաց»: Եւ Նա ասէ ցնա. «Ուղի՛ղ դատեցար»: Եւ դարձեալ ի կինն կողմն՝ ասէ ցՍիմոն. «Տեսանե՞ս զայս կին. մտի ի տուն քո, ջուր ոտից Իմոց ոչ ետուր, իսկ սա արտասուաւք իւրովք եթաց զոտս Իմ եւ հերով իւրով ջնջեաց. համբոյր մի ոչ ետուր Ինձ, սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ, ոչ դադարեաց ի համբուրելոյ զոտս Իմ. իւղով զգլուխ Իմ*

ոչ աւծեր, սա իւղով անուշիւ աւծ: Վասն որոյ ասեմ քեզ. թողեա՛լ լիցին սմա մեղք իւր բազում, զի յոյժ սիրեաց. զի որում շատ թողուցու, շատ սիրէ, եւ որում սակաւ՝ սակաւ»: Եւ ասէ ցնա. «Թողեա՛լ լիցին քեզ մեղք քո»: Եւ սկսան, որ բազմեալ էին ընդ Նմա, ասել ընդ միտս իւրեանց. «Մ՞վ է սա, որ եւ զմեղս թողու»: Եւ Նա ասէ ցկինն. «Հաւա՛տք քո կեցուցին զքեզ, ե՛րթ ի խաղաղութիւն»:

Հաւատամք ի մի Աստուած...

Սարկաւագն: *Եւ եւս վասն հիւանդիս (այս անուան), որ յուսացեալ է կոչել զանուն Տեառն Աստուծոյ եւ զզաւրութիւն Նորա յաւգնութիւն եւ ի բժշկու*(341բ)*թիւն անձին իւրոյ եւ մարմնոյ, որպէսզի ապրեսցի եւ կեցցէ եւ վերստին նորոգեսցի աղաւթիւք ամենայն սրբոց եւ սրբոց քահանայիցս, եւ կարողութեամբն Աստուծոյ եւ ազգակցութեամբ մարմնացելոյ Բանին Յիսուսի Քրիստոսի, զՏէր աղաչես[ցուք]:*

Զամենասրբու[հի]...

Եւ եւս միա[բան]...

Զանձինս...

Ողորմեաց...

Քահանայն ասէ զաղաւթս: *Գոհանամք զՔէն, Տէր Աստուա՛ծ մեր, որ ես բարի բժիշկ անձանց մերոց, որ զհիւանդութիւնս մեր անցաւս բառնաս, որում վիրաւք ամենեքեան բժշկեցաք: Որ հովիւդ ես բարի, որ ի վերայ խնդրումն եկեալ ոչխարին, որ պակասեալ անձանց տայցես մխիթարութիւն եւ կեանս խորտակելոց: Որ զաղբեւր տեառատեսին երկոտասանամեայ բժշկեցեր, որ զդուստր քանանացւոյն ի դժնդակ դիւաց ազատեցեր, որ զպարտս շնորհեցեր երկուց պարտականացն եւ մեղաւոր կնոջն զթողութիւն տուեալ, որ զբժշկութիւն անդամալուծին պարգեւեցեր հանդերձ թողութեամբ մեղաց նորա, որ զմաքսաւորն բանիւ արդարացուցեր,* (342ա) *որ զդուստր Յայրոսի քահանային եւ զորդի այրւոյն յարուցեր ի մեռելոց ի Նային քաղաքի, որ զՂազարոս չորեքաւրեայն կոչեցեր ի գերեզմանէն եւ զաւազակն ի վերջին նորա խոստովանութեան ընկալար: Որ զմեղս աշխարհի բարձեր եւ ի խաչին բեւեռեցար, զՔեզ աղաչեմք եւ Քեզ պաղատիմք, բարերարութեամբդ Քո ինքնին ներեա՛ եւ թո՛ղ հանդերձ թողութեամբ զանաւրէնութիւն եւ զմեղս ծառայի Քո (այս անուան), զյանցանս սորա զկամայ եւ զա-*

կամայ, զգիտութեան եւ զանգիտութեան, զյանցանս թուլութեան եւ զանլսողութեան, զոր ի գիշերի եւ ի տունջեան, կամ ընդ անիծիւք քահանայի, կամ հաւր կամ մաւր, կամ աչաւք յածեալ, կամ հոտոտելեաւք իգացեալ, կամ ափով ըստ ախտացեալ, կամ ճաշակելովք պոռնկեալ, կամ միով ոք զիջմամբ մարմնոյ եւ հոգւոյ աւտարացաւ ի Քոյին կամաց եւ ի Քոյին սրբութեանց, զոր ինչ մեղաւ սա եւ մեք, (342բ) *ինքնին Տէր, իբրեւ բարի եւ մարդասէր եւ անյիշաչար Աստուած, թողութի՛ւն շնորհեա՝ մի՛ թողլով զսա եւ զմեզ յաղտեղի կենցաղս անկանել, մի՛ իսկ ի բազմախորտակ ճանապարհս ընթանալ: Այո՛, Տէր Աստուած, լո՛ւր ինձ՝ մեղաւորիս, ի պահուս յայսմիկ վասն ծառայիս Քո (այս անուան), անտե՛ս արա իբրեւ անյիշաչար Աստուած զյանցանս սորա զամենայն, փոխադրեա՛ զսա ի յաւիտենական տանջանացն: Զբերան սորա Քոյին աւրհնութեա՛մբդ լցո, զշրթունս սորա բաց առ ի փառաբանութիւն անուանդ Քո, զձեռս սորա տարածեա առ ի գործս պատուիրանաց Քոց, զոտս*[5] *սորա առ յընթացս աւետարանի Քո ուղղեա՝ զամենայն սորա զանդամս եւ զմիտս Քոյին փակելով շնորհաւք:*

Դո՛ւ, Տէր Աստուած մեր, որ ի ձեռն սրբոց Քոց առաքելոցն պատուիրեցեր մեզ՝ ասելով եթէ՝ «Զոր կապեսջիք ի վերայ երկրի, եղիցի կապեալ յերկինս, եւ զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս», եւ դարձեալ՝ «Եթէ ունիք թողուցուք (343ա) *զմեղս, թողեալ լիցի նոցա»: Եւ որպէս լուար Եզեկիայի ի նեղութեան անձին իւրում, ի պահու մահու նորա, եւ ոչ անտես արարեր զաղաչանս նորա, եւ զի՛մ մեղաւորի եւ նուաստի եւ անարժան ծառայի Քո, լուր ի պահուս յայսմիկ: Քանզի Դու ես Տէր, որ եւթանասնեկին եւթն թողուլ, որքան անկանին ի մեղս, հրամայեցեր Քոյին մարդասիրութեամբդ եւ բարերարութեամբդ՝ ապաշաւելով ի վերայ չարեաց մերոց եւ խնդալով ի վերայ դարձի կարաւտելոց: Զի որպէս մեծութիւն Քո, այնպէս եւ ողորմութիւն Քո, Տէր Աստուած մեր, որ առաքեցեր զեւթն հրեշտակսն ի տուն Զակքէի, որ եւ մտեալ անդ՝ ասացեր. «Այսաւր եղեւ փրկութիւն տանս այսմիկ»: Դու Ինքն, նոյն մարդասէր, առաքեա՛ զսուրբ հրեշտակս Քո ի յարկս, որ պատրաստեաց զաստուածային սուրբ եւ զփառաւոր ընծայս եւ զսուրբ եւղս զայս, որ առաջի կայ ի պաղաբերութիւն առաջի սեղանոյ Քոյ: Եւ Դու, Տէր մեր Յիսուս Քրիստոս, ո՛ւնկն*

5 *Բնագրում՝ զգործս, որը, սակայն, ակնյայտ սխալ է, ուստիեւ ուղղուել է (ձեռ. 577-ում ճիշտ է՝ զոտս):*

դիր մեզ՝ որպէս Զակքէոսի՝ ողորմած առնն, աւրհնեա՛ զեւղս զայս, եւ որոց աւծանին (343բ) *սովաւ՝ տո՛ւր նոցին մեծ հաւատս եւ աւրհնութիւն անպակաս, զի հաճոյ լիցին Քեզ՝ միայնոյ ճշմարտիդ Աստուծոյ, աղաւթիւք եւ խնդրուածովք ամենասրբուհւոյ Աստուածածնիդ եւ սրբոց հրեշտակապետաց եւ դասուց հրեշտակաց, յառաջընթացին Յով[հ]աննու եւ ամենայն առաքելոցն եւ սրբոց անարծաթ բժշկացն Կոզմասու եւ Դամիանոսի, Կիրակոսի եւ Յոհաննու, Պանդալէիմոնի եւ Երմողայոսի, Սպիրիդոնի եւ Թալիլեայ եւ Գէորգեայ եւ Դէոմիդեայ եւ ամենայն սրբոց Քոց, զի Քո է արքայութիւն եւ զաւրութիւն եւ փառք յաւիտեանս յաւի[տենից. ամէն]:*

Եւ ասի *Հաւատամքն ի լման*:

Քարոզ: *Եւ եւս խաղ[աղութեան զՏէր աղաչեսցուք]:*
Եւ եւս հաւատով աղ[աչեսցուք]...

[Աղաւթք]: *Տէ՛ր մեր եւ Փրկ[իչ]...*

Եւ ասի.
Հայր մեր որ յերկինսդ ես, սուրբ եղիցի անուն Քո: Եկեսցէ արքայութիւն Քո: Եղիցին կամք Քո որպէս յերկինս՝ եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսաւր: Թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք զմերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն: Այլ փրկեա ի չարէն: Զի Քո է արքայութիւն եւ զաւրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Եւ ասեն: *Օրհնութիւն եւ փառք Հաւր եւ Որդւոյ*[6]...
Օրհնեսցի եւ սրբեսցի եւղս այս նշանաւ՝ սուրբ...

(344ա) *Եւ վառէ զեւթներորդ պատրոյգն եւ կատարի աւրհնութիւնն: Եւ կացցէ առընթեր կանթեղին, եւ եւթն պատրոյգ ի վերայ փայտի՝ բամբակով պատած, թանայ ի ձէթ: Եւ կացուցանեն զհիւանդն առաջի սուրբ իւղոյն եւ կանթեղին, անգաւտի եւ գլխիբաց: Եւ ապա գայցեն քահանայքն եւ կացցեն Գ ընդ աջմէ եւ Գ ընդ ձախմէ: Եւ յեւթնէն*

6 *Այս եւ յաջորդ տողի բառերը խաչաւորուած են:*

որ առաջակայ քահանայն է, եկեալ դիցէ զսուրբ Աւետարանն ի վերայ գլխոյ հիւանդին՝ ջանացելոյն փրկիլ, եւ աւծանէ: Իսկ եթէ ոչ կարիցէ գալ հիւանդն, երթիցեն առ նա քահանայքն եւ աւծանեն իւղովն, որպէս առաջիկայ արարողութիւնքդ ուսուցանեն:

Կարգ աւծութեան հիւանդաց, յորժամ կամենան աւծանել զհիւանդն

Զկնի սուրբ հաղորդութեանն զան քահանայքն առ հիւանդն՝ ունելով զաւրհնեալ ձէթ հիւանդացն ընդ իւրեանս եւ ասեն սաղմոս կց. [ճԻ]
Օգնութիւն ինձ ի...
Փոխ. *Համբարձի զաչս...*
(Ողբաձայն)

Եւ քահանայն ասէ զաղաւթս զայս: (344բ) *Տէ՛ր Աստուած, բարի՛ աղէ՛տ եւ բազումողորմ, որ ոչ կամիս զմահ մեղաւորին, որպէս զդառնալն եւ զկեալ նորա: Ոչ դիցեմ զի՛մ ձեռն մեղաւորիս ի վերայ գլխոյ ծառայիս Քո եւ խնդրել առ ի Քէն ի ձեռն մեր թողութիւն սմա, այլ զՔո՛յդ ձեռն՝ կարաւղ եւ հզաւր, դիր ի սուրբ յԱւետարանիս յայսմիկ, յորում պատարագակից եղբարք մեր ունիցին ի վերայ սորին գլխոյ: Եւ աղաչեմք հանդերձ սոքաւք եւ պաղատիմք՝ շնորհեա՛ սմա զթողութիւն մեղաց, անոխակա՛լ եւ անյիշաչար, մարդասիրութեամբ Քոյ:*

Աստուա՛ծ Փրկիչ մեր, որ ի ձեռն մարգարէին Քո Նաթանայ ապաշխարելով Դաւթի ի վերայ իւրում յանցանացն՝ թողութիւն պարգեւեցեր, ինքնին Դո՛ւ, Տէր, զծառայս Քո (զայս անուն) ապաշխարելով ի վերայ իւրոց յանցանացն՝ առընկա՛լ սովորական մարդասիրութեամբդ՝ անտես առնելով զսորին յանցանս, քանզի Դու ես Տէր Աստուած մեր, որ եւթանասնեկին եւթն թողուլ հրամայեցեր որոց անկանին ի մեղս: Զի որպէս մեծութիւն Քո անբաւ է, այսպէս (345ա) *ողորմութիւն Քո անչափ է եւ առատ է, եւ Դու ես, Աստուած, Աստուած ապաշխարողաց՝ ապաշաւելով ի վերայ ամենայն չարեաց մերոց: Եւ Քեզ վայել է փառք, իշ[խանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն]:*

Խաղաղութիւն ամենեցուն:

Հա՛յր սուրբ, բժի՛շկ հոգւոց եւ մարմնոց, որ առաքեցեր զՄիածին Որդիդ Քո՝ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, զի բժշկեսցէ զամենայն հիւանդութիւնս, բժշկեա՛ զծառայս Քո (զայս անուն), որ ունի զհիւանդու-

թիւն մարմնոյ, ի ձեռն Քրիստոսի Քո, եւ կենդանացո՛ ըստ Քոյին հաճութեանդ, զի զպարտս գոհութեանս լցուսցէ, որ ես բժիշկ հոգւոց եւ մարմնոց մերոց: Աղաչանաւք միշտ կուսիդ Մարիամու Աստուածածնիդ եւ ամենայն սրբոց Քոց: Եւ Քեզ վայել է ամենայն փառք, պատիւ եւ իշխանութիւն՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ, այ[ժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն]:

Եւ ասէ զարձակում[ն]ս զայս ի վերայ հիւանդին.

Որդեա՛կ իմ, եթէ պատահեալ ինչ իցէ քեզ յանցանք յայսմ յանցաւոր կեանս, զոր ծանեար եւ զոր յանցեար պատրանաւք ընդունայնութեան, հրամանաւ եւ իշխանութեամբ ամենակալին Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի եւ իշխանութեամբ առաքելական եւ քահանայական կարգիս, (345բ) *զոր ունիմ ես մեղուցեալս ի Նմանէ թէ՝ «Զոր արձակէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս», նովին բանիւն արձակեալ եմք զքեզ յամենայն մասնակցութենէ ինքնակապ կապից մեղաց քոց, զոր ի քո կամաց յաւժարութենէ գործեալ ես եւ զոր ի պատրանացն սատանայի, արձակեալ լինիցիս անուամբ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Եւ յամենայն ապաշխարութեանց եւ յամենայն բանադրանաց եւ յամենայն կապանաց լիցիս արձակեալ եւ հաճոյ եւ ընդունելի, ի լոյսն յաւիտենից փոխիլ արժանացիս, զոր Ինքն շնորհեսցէ քեզ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Աղաւթք յառաջ քան զաւծանելն.

Ամենակարաւղ եւ յաւիտենակա՛ն Աստուած, որ երանելւոյն Յակոբայ առաքելոյն Քո ասացեր. «Եթէ հիւանդանայցէ ոք ի ձէնջ, կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն, եւ աղաւթեսցեն ի վերայ նորա եւ աւծցեն զնա իւղով յանուն Տեառն: Եւ աղաւթքն հաւատովք կեցուսցեն զհիւանդն, եւ յարուսցէ զնա Տէր: Եւ եթէ մեղս ինչ իցէ (346ա) *գործեալ, թողցի նմա»: Արդ՝ զՔեզ՝ զխոնարհդ աղաչեմք, զի եւ սոյն ծառայիս Քոյ (այս անուն) վասն սպասաւորութեան մերոյ աւծութեանս տրաւք զթութեան Քո զամենայն մեղս թողցես եւ ի կեանսդ յաւիտենական ժամանել շնորհեսցես վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ամենասուրբ Հոգւոյդ, որում վայել է փառք, իշխանութիւն եւ [պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն]:*

Եւ ապա առնու քահանայն աջ բուրթովն զձէթն սուրբ ի բացեայ, կնքեսցէ ի վերայ հիւանդին եւ ասէ.

Վասն սմին իսկ աւծութեանս եւ Իւրոյ ամենառատ ողորմութեամբն թողցէ քեզ Տէր զոր ինչ յանցեար մտաւք, սրտիւք, տեսանելեաւք, լսելեաւք, հոտոտելեաւք, ճաշակելեաւք, շաւշափելեաւք: Եւ յամենայն չարէ ազատեսցէ զքեզ Տէր Յիսուս Քրիստոս. ամէն:

Եւ նախ աւծանէ զսիրտն՝ ասելով.

Օծանեմ զսիրտս քո իւղովս սրբութեան, զի զոր ինչ մեղար չար խորհրդով քոյին կամակցութեամբ եւ զոր ինչ ի սատանայէ, մաքրեալ եւ սրբեալ եղիցիս ի սկզբանէ մինչեւ ցաւր մահուան քո, շնորհաւք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Պատասխանեն՝ *ամէն:*

(346բ) Օծանէ զաչսն՝ ասելով.

Օծանեմ զաչսդ քո իւղով սրբով, զի զոր ինչ տեսութեամբ մեղար, սորին աւծութեամբ իւղոյս փրկեսցիս վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ժողովուրդն՝ *ամէն:*

Զականջսն՝ ասելով.

Օծանեմ զականջս քո այս իւղոյս հեղմամբս, եւ մտեալ ի քեզ դեղովս այս հոգեւորաւ՝ ամենայն ի բաց սրբեսցի վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ժողովուրդն՝ *ամէն:*

Զհոտոտելիսն.

Օծանեմ զհոտոտելիքս քո իւղովս աւրհնութեան, զի զամենայն յանցանք, զոր իմացաւ սա եւ կամ ախորժեաց եւ հոտոտեցաւ զհոտ մեղաց, սոյն դեղովս փրկութեան ի բաց մաքրեսցի վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ժողովուրդն՝ *ամէն:*

Զշրթունսն՝ ասելով.

Օծանեմ զշրթունս քո աւրհնութեամբ դեղոյս բժշկութեան, զի զամենայն, զոր ինչ չար խաւսիւք եւ ընդվայր զազրախաւսութեամբ, նաեւ զամենայն, զոր ինչ մեղար բանիւ, աստուածային զթութեամբն եւ ողորմութեամբն եւ սուրբ աւծութեամբս յամենայնէ մաքրեսցի ի յանցանաց վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ժողովուրդն՝ *ամէն:*

Զձեռսն.

Օծանեմ զձեռս քո ձիթովս աւրհնու(347ա)*թեան, զի զամենայն, զոր ինչ սովաւ եւ կամ իմացմամբ սորա յառաջ եկին մեղք անհաճոյք Աստուծոյ, սոյն աւծութեամբս ամենայն ի բաց մաքրեսցի վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:*

Ժողովուրդն՝ *ամէն:*

Զճակատն՝ ասելով.

Օծանեմ զճակատս քո ձիթովս աւրհնութեան՝ արիութեամբ կալ քեզ ընդդէմ փորձութեան չարին, յաղթող լինել ի պատերազմին՝ անուամբ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ եւ վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ժողովուրդն՝ *ամէն:*

Եւ քահանայն ասէ զաղաւթս.

Գործք զաւրութեան այսմ ստեղծուածոյս ձիթոյս աւրհնութեան գործեսցէ գործ սքանչելի՝ անուամբ Հաւր ամենակալի եւ Յիսուսի Քրիստոսի Որդւոյ Նորա՝ Տեառն մերոյ, եւ բխեցելոյն ի Հաւրէ Հոգւոյն Սրբոյ, զի մի՛ մերձեսցի յայրս յայս հոգի անսուրբ, եւ մի՛ յամենայն յաւդուածս անդամոց սորա, նաեւ ոչ ի խորհուրդս իւր: Այլ բնակեսցէ ի սա զաւրութիւն Բարձրելոյն Քրիստոսի եւ Հոգւոյն Սրբոյ: Եւ վասն զաւրութեան աղաւթիցս եւ աւրհնեալ ձիթոյս աւծութեան զպատրաստեալ առողջութիւնն արժանի (347բ) *լիցի առնուլ վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ամէն:*

Դարձեալ դնէ քահանայն զձեռն ի վերայ գլխոյ հիւանդին եւ ասէ զաղաւթս.

Տէ՛ր Աստուած, Հա՛յր ամենակալ, Թագաւո՛ր երկնաւոր, զսուրբ եւ զվերապատուեալ անուն փառաց Քոց կարդամք, որ արարեր զերկինս եւ զերկիր, զծով եւ զամենայն որ ի նոսա, Աստուա՛ծ Աբրահամու, Աստուա՛ծ Իսահակայ, Աստուա՛ծ Յակոբայ, Աստուա՛ծ, որ ի բարձունսդ բնակեալ ես եւ ի խոնարհս հայիս, հայեա՛ ի վերայ սորա, յոր եղեալ է ձեռք մեր, եւ զոր առնեմք ի վերայ ծառայիս Քո (այս անուան), յորս զձեռս մարմնաւոր մերձեցուցանեմք, հոգեւորապէս զաւրութիւն փառաց Քոց մերձեսցի ի՝սա: Տո՛ւր սմա զայսոսիկ, Տէր՝ առողջութիւն մարմնոյ, անբծութիւն մտաց, երկայնմտութիւն առ Քեզ եւ խորհել զհաճոյսն Քո: Հասանել առ Քեզ կարողասցի, եւ յամենայն նենգութենէ փրկեա՛ զսա, որպէս փրկեցեր զԱբրահամ ի փորձութենէ, զՂովտ ի Սոդոմայ, զորդիսն Իսրայելի յԵգիպտոսէ, զԴանիէլ ի գբոյ առիւծուցն, զՇուշան (348ա) *ի սուտ վկայութենէն, զերեք մանկունսն ի հրոյն բռնութենէ, զՅովնան ի խորոց ծովուն: Ողորմեցար քաղաքին Նինուէի, որ բնակեալ էին ի նմա աւելս քան զհարեւր եւ քսան բեւր մարդկան: Եղեր աւգնական մանկանն Դաւթի եւ փրկեցեր յամենայն նեղութենէն աշխարհի: Արձակեցեր զՊետրոս ի կապանաց եւ ի պահապանաց բանտին, զՊաւղոս ի կապանաց եւ ի վշտաց, զԹեկղիա ի միջոյ տեսողացն, եւ զամենայն սուրբս Քո պահես եւ զմեղուցեալսն մաքրես: Նոյնպէս ողորմեսցիս սմա եւ լե՛ր աւգնական եւ պաշտպան, զաւրավար եւ զաւրագլուխ, առաջնորդ եւ գործակից յամենայն գործս առաքինութեան: Եւ տո՛ւր կարողութիւն յաղթութեան եւ հանապազորդ խաղաղութեան, առողջութեան, փրկութեան եւ կենդանութեան, եւ հալածեա՛ ի սմանէ զամենայն խռովութիւն հոգեկան եւ մարմնական: Որպէսզի կարող լիցի եւ արժանաւոր մտանել ի սրբութիւնսդ յաւիտենական՝ շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառնդ մերոյ եւ Փրկչիդ Յիսուսի Քրիստոսի, որում վա[յել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն]:*

Հայր մեր *որ...*

(348բ) Արդ՝ յերեսանկեալ աղաչեմ զքրիստոսակիր եղբարքդ եւ զքաղաքալի ուսումնասէր մանկունքդ Եկեղեցւոյ, որք հանդիպիք նորընծայ աստուածային պարգեւաց գրոյս, յիշեսջի՛ք ի բարին Քրիստոս զճգնաւորն զԿիրակոսն կենդանաթաղ գերեզմանին Գրիգորի Լուսա-

ւորչին Վիրապայ, որ եբեր զգիրս զայս ի Հայս ի Կաֆա քաղաքէն: Եւ ես՝ մեղապարտս ի մանկունս Եկեղեցւոյ, սուտանուն վարդապետս Թովմա՝ առաջնորդս սուրբ ուխտիս Մեծոփայ, վերստին սրբագրեցի զսա եւ ետուս գրել զսա հոգեւոր որդւոյ իմոյ Յով[հ]աննէս սարկաւագի Արճիշեցւոյ: Որք աւգտիք ի սմանէ եւ սակս մասին ինչ պատահելով՝ ուղիղ սրտիւ «Աստուած ողորմի» ասացէք մեզ եւ ծնողաց մերոց, եւ Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն:

Բայց դուք ընկալարուք զսա իբրեւ զտախտակն Մովսիսի եւ զաւետարանն Քրիստոսի, եւ մի՛ ոք պախարակեսցէ զսա, զի ի վաղուց ժամանակաց նախատինս կրէաք յազգաց քրիստոնէից, եւ այսաւր ետ զսա Աստուած ի ձեռս մեր. եւ որ ոչ ընդունի զսա, պատասխանի ի՛նքն տացէ Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

ՁԵՌԱԳՐԵՐ

ՄՄ NN 576, 577, 1328, 1329, 2273, 2298, 2607, 2966, 3062, 7117

ՍԿԶԲՆԱՂԲԻՒՐՆԵՐ

Ճաշոց Գիրք Հայաստանեայց Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1872

Մաշտոց, Երուսաղէմ, 1961

Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ, Կ. Պոլիս, 1807

Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1729

Կորիւն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, աշխ. Ա. Մաթեւոսեանի, Երեւան, 1994

Կորիւն, Վարք Մաշթոցի ուղղեալ եւ լուսաբանեալ ի Գառնիկ Ֆենտզլեանէ, Երուսաղէմ, 1930

Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երեւան, 1991

Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի ճառք, Վենետիկ, 1860

Յովհաննու Իմաստասիրի Աւծնեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1953

Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց, Կ. Պոլիս, 1828

Խոսրով եպիսկոպոս Անձեւացի, Գիրք, որ կոչի մեկնութիւն աղօթից, Օրթագիւղ, 1840

Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն Տանն Սիսական, Մոսկուա, 1861

Պատմութիւն Նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, աշխ. Կ. Վ. Շահնազարեանց, Թիֆլիս, 1910

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1964

Կանոնագիրք Հայոց, աշխատասիրութեամբ Վազգէն Յակոբեանի, Ա հտ., Երեւան, 1964, Բ հտ., Երեւան, 1971

Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901

Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր Եպիսկոպոս Պողարեան, Երուսաղէմ, 1966, Ա

Ժե դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լեւոն Խաչիկեան, Երեւան, 1955, Ա

ՀԱՅԵՐԷՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աշոտ Աբրահամեան, Համառօտ ուրուագիծ հայ գաղթավայրերի պատմութեան, Երեւան, 1964

Արշակ Տէր-Միքելեան, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ Քրիստոնէական, Տփխիս, 1900

Բաբկէն կաթողիկոս Կիւլէսէրեան, Քրիստոնէական, Երեւան, 1994

Դերենիկ եպիսկոպոս Փոլատեան, Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցու եօթ խորհուրդները, Երեւան, 1992

Ղեւոնդ եպիսկոպոս Զէպէեան, Հայ Եկեղեցւոյ եօթը խորհուրդները, Անթիլիաս-Լիբանան, 1988

Մաղաքիա արք. Օրմանեան, Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղեմ, 1985

Մաղաքիա արք. Օրմանեան, Հայոց եկեղեցին, Մոնթրէալ, 2001

Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Պէյրութ, Ա, Բ,Գ, 1959—61

Մեր վարժապետ Գրիգորեան Զմիւռնացի, Հրահանգ Քրիստոնէական հաւատոյ, Մոսկուա, 1850

Նորայր արք. Պողարեան, Միսագիտութիւն, Նիւ Եորք, 1990

Շահէ արք. Գասպարեան, Տեսական Աստուածաբանութեան համառօտ դասընթացք, Անթիլիաս-Լիբանան, 2000

Սահակ քահանայ Տէր-Սարգսեան, Քննական կրօնագիտութիւն, Կ. Պոլիս, 1897

Սրբալուսյ Միւռոն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001

Վարդան Հացունի, Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին, Վենետիկ, 1965

Վազգէն սարկաւագ Գալստանեան, Խոսրով եպիսկոպոս Անձեւացի, Ս. Էջմիածին, 1994 (աւարտաճառ, անտիպ)

ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Nicene and Post-Nicene Fathers of the Christian Church, ed. by Philip Schaff, T&T Clark Edinburgh, 1889, vol. X

The Ante-Nicene Fathers, ed. by Rev. Alexander Roberts & James Donaldson, T&T Clark, Edinburgh, 1886, vol. VII

Nicene and Post-Nicene Fathers of the Christian Church, ed. by Philip Schaff, T&T Clark Edinburgh, 1889, vol. IX

Nicene and Post-Nicene Fathers of the Christian Church, ed. by Philip Schaff, T&T Clark Edinburgh, 1892, vol. VI, St. Jerome

Nicene and Post-Nicene Fathers of the Christian Church, ed. by Philip Schaff and Henry Wace, T&T Clark Edinburgh, 1889, vol. X, St. Ambrose

Patrologiae Graecae, Cyrilli Alexandriae, ed. J. P. Migne, Turnholti, 1844

P.L. ed. J.P. Migne, Paris 1857, XX 559

P.L. ed. J.P. Migne, Paris 1857, Posidius, Vita Augustini, XXXII

P.L. ed. J.P. Migne, Paris 1858, Pseudo-Abelard, Epitome theologiae Christianae, 178

Hilaire et Cesaire d'Arles, Migne, La peres dan la foi, Paris 1997

R.J. Defarrari, Hugh of St. Victor, On the Sacraments (De Sacramentis) of the Christian Faith, Cambridge 1951

The Oil of Gladness, ed. Martin Dudley and Geoffrey Powell, SPCK, London 1990

Albert, Comentaria in Librum IV Sententiarum, Florence 1916

The Summa Thelogica of St. Thomas Aquinas, Suplimentum Tertiae Partis, 2 rev., ed. by Kevin Knight, 1920 (էլ. Համացանց)

Thomas Aquinas, Contra Gentiles, Paris, Vivres 1874, IV, 73

Alexander Hales, Glossa in quattour libros sententiarum, Florence, Quarrachi, 1957, IV

Bonaventure, In quantum librum sententiarum, Paris, Vivres 1882—1902

Corpus Christianorum, ed. G. Morin, Turnout 1953

Catenae Graecaorum Patrum, ed. J. Cramer, Oxford 1840, I

Patrology, by Johannes Quasten, Christian Classics, INC., Westminster, Maryland 1990

Testamentum Domini. The Testament of Our Lord, tr. Cooper and Maclean, 1902

Coptic Offices, tr. R.M. Wooley, London, Society for Promoting Christian Knowledge, 1930

Rituale Armenorum, ed. by F. Conybeare, Clarendon Press, Oxford, 1905

Encyclopedia of Religion and Ethics, ed. James Hastings, Edinburgh, T&T Clark, vol. XII

Encyclopedia of Theology, A Concise Sacramentum Mundi, ed. by Karl Rahner, Burns & Oathes, 1993

The New Dictionary of Theology, ed. Joseph A. Komonchak, Mary Collins, Dermot A. Lane, A Michael Gazier Book, Minnesota 1987

The New International Dictionary of New Testament Theology, ed. Colin Brown, Paternoster Press, London 1986

Dictionary of Eastern Christianity, Blackwell, Oxford, 1999

The Oxford Dictionary of the Christian Church, ed. F.L. Cross, Oxford University Press, 1978

Catechism of the Catholic Church, Geoffrey Chapman, London 1994

The Documents of Vatican II, Pillar Books, New York 1975

Christian Worship, its Origin and Evolution, M.L. Duchesne, tr. M.L. Mcclure, London, Society for Promoting Christian Knowledge, 1931

Sacraments of Forgiveness, ed. Paul Palmer, Darton, Longman & Todd, London 1959

Michael Schmaus, Dogma: The Church as Sacrament, Sheed and Ward, London 1981

Adrian Fortescue, The Lesser Eastern Churches, Catholic Truth Society, London 1913

Panayiotis Nellas, Deification in Christ, St. Vladimir's Seminary Press, New York 1997

Edward Yarnold, The Awe-Inspiring Rites of Initiation, T&T Clark, Edinburgh, 1994

John D. Zizioulas, Being as Communion, Darton, Longman and Todd, London 1985

G.B. Howard, The Christians of St. Thomas and their Liturgies, Oxford, 1864

Bernard Poschmann, Penance and Anointing of the Sick, Burns & Oathes, London, 1964

Donald Attwater, The Christian Churches of the East, Geoffry Chapman, London 1961

Timothy Ware, Orthodox Church, Pengiun Books, Suffolk 1975

Jaroslav Pelikan, Reformation of Church and Dogma (1300—1700), The University of Chicago Press, Chicago and London, vol. 4

Tournebize H. F., Histoire Politique et Religieuse de l'Armenie, Paris 1910

Епископ Езник Петросян, Армянская Церковь, 4-ое издание, Святой Эчмиадзин, 2001

А. И. Успенскій, Таинство Елеосвященія, Москва, 1908

Іеромонах Венедикт, Къ исторіи Православнаго Богослуженія, Сергіевъ Посадъ, 1917

Макарій митрополит Московскій и Коломенскій, Православно-догматическое Богословіе, т. 2, С-Пб., 1883

Прот. Михаил Архангельскій, О тайне Св. Елея, С-Пб., 1895

Бенедетто Теста, Таинства в Католической Церкви, Москва, 2000

Протопресвитер Михаил Помазанский, Догматическое Богословие, "Христианская жизнь", Клин, 2001

Иеромонах Илларион Алфеев, Таинство веры, Братство Святителя Тихона, Москва-Клин, 1996

ԱՄՍԱԳՐԵՐ

«Արարատ», 1897 (Գալուստ Տէր-Մկրտչեան, Անանիա Մոկացի)

«Բազմավէպ», 1939 (Հ. Սամուէլ Արամեան, Հիւանդաց Օծման Խորհուրդը Հայ Եկեղեցւոյ մէջ, 89)

«Էջմիածին», 1994 (Վազգէն սարկաւագ Գալստանեան, «Բանք երանելւոյն Խոսրովայ առ վասն եկեղեցականսն», 90)

«Էջմիածին», 1997 (Կարէն Մաթեւոսեան, «Խոր Վիրապի վանքը եւ նրա գրչութեան կենտրոնը», 91)

The Journal of Theological Studies, 1892 (The Sacramentary of Seraphion of Thmuis, by F.E. Brightman)

Biblioteque Theologique, Edite en Suisse, 1959 (Paul Evdokimov, L'Orthodoxie)

Պարոյր Մուրադեան

ՆԻՒԹԵՐ ՊԱՐՍԻՑ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ (ՍԲ ԳՈՒԼԱՆԴՈՒԽՏԻ ՎԱՐՔԸ)

Վաղմիջնադարեան «Քրիստոնեայ Արեւելք» հասկացութիւնն իր մէջ բովանդակում է նաեւ հայկական աղբիւրների ճանաչած «Պարսից աշխարհը», ուր հաստատուել էին նշանակալի թուով եպիսկոպոսական աթոռներ[1]: Այս իրողութիւնը Պարսից տէրութեան սահմանների՝ դէպի Ասորիք ու Այսրկովկաս ընդարձակուելու հետեւանք չէ միայն. յետառաքելական շրջանում Մերձաւոր ու Միջին Արեւելքի շատ երկրներ քրիստոնէութեան քարոզչութեան ոլորտ էին ընդգրկուել՝ հակառակ նոր ուսմունքի դէմ գործադրուած արգելքների ու հալածանքների[2]: Բաբգէն կաթողիկոսի ստորագրած «Հաւատոյ նամակ»-ի հայերէն եւ պարսկերէն լինելու պարագան յուշում է, թէ այն պիտի ներկայացուէր Պարսից շահնշահի հաստատութեան[3]: Ուրեմն՝ խօսքը պաշտօնական կերպարանք ունեցող աթոռների ներկայութեան մասին է՝ թէկուզ այն վերապահութեամբ, որ նոր ուսմունքի հետեւորդների հիմնական զանգուածը ասորիներն էին կազմում[4]:

Քրիստոնէութիւն ընդունած պարսիկների վարքեր ու վկայաբանութիւններ կան հայկական, յունական, ասորական ու վրացական մատենագրութիւններում: Ցիշենք թէկուզ Մարութա Մայ-

---

1 Նրանք թուարկուած են, մասնաւորապէս, Հայոց Բաբգէն կաթողիկոսի (502—507 թթ.) օրօք գրուած «Թուղթ Հայոց ի Պարս, առ ուղղափառս» երկու վաւերական բնագրերում (տես «Գիրք թղթոց», երկրորդ հրատարակութիւն [ի ձեռն Նորայր արքեպս. Պողարեանի], Երուսաղէմ, 1994, էջ 147—162):

2 Պարսից քրիստոնէութեան ամփոփ պատմութիւնը տես J. Labourt, *Le christianisme dans l'empire Perse sons la dinastie Sassanide (224—632), Paris, 1904. Проф. В. В. Болотов, Из истории церкви Сиро-персидской. — "Христианское чтение", 1900, т. I.*

3 «Գիրք թղթոց», էջ 156, հմմտ. Երուանդ վարդապետ Տէր-Մինասեանց, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 1908, էջ 75:

4 Հմմտ. Ե. Տէր-Մինասեան, նշ. աշխ., էջ 75—76:

ֆարկերտցու «Վկայք Արեւելից» ասորերէն ժողովածուն, որի հայերէն թարգմանութիւնը կատարուել է Աբրահամ Խոստովանողի ձեռքով[5]*: Քրիստոնեայ պարսկուհի էր Վախտանգ Գորգասալի մայր Սագդուխտը, ում անուան հետ է աւանդութիւնը կապում Սամշուիլդէի Ս. Սիոնի հիմնարկութիւնը*[6]*, իրանական Գանձակից սերող պարսիկ Գուրոբանդակը Վիրքում քրիստոնէութիւն ընդունեց եւ կոչուեց Եւստաթիոս ու նահատակուեց յանուն նոր հաւատքի*[7]*:*

Քրիստոնեայ Արեւելքի մատենագրութիւնների մէջ լայն արձագանք գտաւ Հայաստանում հաստատուած Մախոչ մոգի նահատակութիւնը, որ տեղի ունեցաւ «ընդ ժամանակս թագաւորութեանն Խոսրովու որդւոյ Կաւատայ արքային Պարսից», երբ «առաւել զաւրացեալ լինէր խոստովանութիւն որ առ Քրիստոս, եւ ոչ սակաւք նահատակեցան յաշխարհին Պարսից եւ ի դրան արքունի»[8]*: Խօսքը 553 թ. Դուինում նահատակուած Ցիզտիբուզտի մասին է:*

Պարսից տէրութեան ներսում քրիստոնէութեան հետեւորդների թիւը ստուարացաւ, եւ նրանց կազմած համայնքների շփումները առաւել սերտացան Խոսրով Անուշիրուանի գահակալութեան տարիներին (531—579 թթ.): Բիւզանդիայի հետ ունեցած նոր ընդհարման հետեւանքով պարսիկները տիրացան արեւելեան քրիստոնէութեան կարեւոր յենակէտ Անտիոքին (542 թ.), որտեղից իրանական քաղաքներ վերաբնակեցուեցին բազում քրիստոնեայ արհեստաւորներ, իսկ Տիզբոնի մօտակայքում նրանց համար Բեհ-Անտիոք անունը կրող բնակավայրը հաստատուեց: Բայց նոյնիսկ այս պարագայում տեղական պաշտօնէութիւնը քիչ թէ շատ հանդուրժողական չդարձաւ. քրիստոնէութիւն ընդունող պարսիկը դարձեալ նահատակութեան էր ենթարկւում: Զմեղմացաւ նաեւ նուաճուած երկրներում վարուող

5 Աբրահամ Խոստովանողի՝ *Վկայք Արեւելից: Թարգմանութիւնք յասորականէն, աշխատասիրութեամբ* Գալուստ Տէր-Մկրտչեանի *1897—1900, Էջմիածին, 1921:* Լ. Տէր-Պետրոսեան, *Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արեւելից»-ը (բնագրագիտական հետազօտութիւն), Երեւան, 1976:*

6 ՀԱՐԹԼԻՍ ԳԱՅԵՒՈՒՄԸ, ՏԵՔՍՏԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՏՈՐ Ա, ԵՐԵՎԱՆ, 1955, ԵՐԿ. 142.

7 ՀԱՅԿԱԿԱՆ ԱԳԻՈԳՐԱՖԻԱՅԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԵՐԸ, ԳԻՐՔ Ա, ԵՐԵՎԱՆ, 1963, ԵՐԿ. 30—45.

8 Վկայաբանութիւն սրբոյն Ցիզտիբուզտեայ, տես ՕԼԻԱ ԱԲՈՒԼԱԺԻ, ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՍՈՒՐԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ IX—X ԴԱՐԵՐՈՒՄ. ԳԱՄՈՎԵԼԵՑԱ ԵՎ ՏԵՔՍՏԵՐԸ, ԵՐԵՎԱՆ, 1944, ԵՐԿ. 114.

քաղաքականութիւնը, որը բերեց 571/2 թուականի ապստամբութիւնը Հայաստանում եւ Վիրքում: Կացութիւնը նկատելիօրէն փոխուեց Հորմիզդ IV-ի (579—590 թթ.) եւ նրա յաջորդ Խոսրով II Փարուէզի (590—627 թթ.) տարիներին: Ըմբոստացող ազնուականութեան եւ զրադաշտական հոգեւորականութեան դէմ պայքարելիս Հորմիզդը փորձում էր յենուել նաեւ քրիստոնէութիւն դաւանող բնակչութեան վրայ: Ի դէպ, Մենանդրոսի տեղեկութեամբ՝ 562 թ. Բիւզանդա-պարսկական 50-ամեայ պայմանագրում առանձին յօդուածով արտօնւում էր քրիստոնէութիւն դաւանելը, արարողութեան ազատութիւն էր երաշխաւորւում, հանգուցեալին յուղարկաւորելու դժուարութիւն չէր յարուցւում[9]*: Սակայն Բահրամ Զուբինի ապստամբութիւնը եւ այլ հակազդեցութիւններ յանգեցրին գահընկէցութեան ու սպանութեան: Խոսրովը տարածքների զիջումների գնով բարւոքեց պարսկա-բիւզանդական յարաբերութիւնները Մաւրիկ կայսեր օրօք, հարթեց զրադաշտական հոգեւորականութեան հետ ունեցած տարաձայնութիւնները եւ վստահաբար յենուեց քրիստոնեայ համայնքների վրայ՝ նոյնիսկ պետական պաշտօններ վստահելով նրանց: Կ. Պոլսում գտնուած պահլաւերէն մի տապանագրի համաձայն՝ Պարսկաստանից Բիւզանդիոն եկած մէկը նպատակ է ունեցել ուսումնասիրել ճշմարիտ եւ պաշտելի սրբոց պատարագը*[10]*: Եւ այնուամենայնիւ, քրիստոնէութիւն ընդունող պարսկազգիներն իրենց մեծ փորձութեան էին ենթարկւում, ինչպէս դա երեւում է Գոլանդուխտ (Գոլինդուխտ, Գորանդուխտ) պարսկի՝ յուներէն, ասորերէն եւ վրացերէն լեզուներով պահպանուած վարքից*[11]*: Նրանում պատմւում է, թէ ինչպէս թմբիրի ժամին Գոլանդուխտը հանգուցեալ ծնողներին տեսնում է խաւարի ու կրակի մէջ տառապելիս, մինչդեռ քրիստոնեայ մկրտուածները լոյս ու երանութիւն են վայելում: Սթափուած պարսկուհին, որ մոգպետի կին էր, քրիստոնէութիւն է ընդունում, իսկ իրողութեանը տեղեկացած ամուսինը այդ մասին*

9 ԲԻԶԱՆՏԻՈՅԼԻ ՄՎԵՐԼԵՐԻՆԻՍ ՑՆՈՒՄԵՐԸ ՍԱՔԱՐԹՎԵԼՈՅ ՇԵՍԱԽԵՂ, ՏՈՄՈ ՄԵՍԱՄԵ, ԲԵՐԺՆՈՒԼԸ ՏԵՔՍՏԸ ՔԱՐԹՎԵԼՈՒ ԹԱՐԳՄԱՆԻՆԻՍ ԳԱՄՈՍՑԱ ԵՎ ԳԱՆՄԱՐՏԵՑԵՑԻՆ ԴԱՎՈՒՐԻՆ ՍԻՄՈՆ ԳԱՅԵՒՇՎԻԼՄԱ, ՏՓ., 1936, ԵՐԿ. 217.

10 М.Н. Боголюбов, Пехлевийская надпись из Константинополя.— "Палестинский сборник", вып. 23 (86), Лен-д, 1971, стр. 92—99.

11 Վարքի տարբերակների վերաբերեալ տես P. Peeters, *Sainte Golindouch, Martyre Perse (+ 13 jullet 591), «Analecta Bollandiana», t. LXII (1944), pp. 74—125.*

յայտնում է Թագաւորին, եւ Գոլանդուխտին տանում են «ի հեռաւոր եւ ի մոռանալի բանտն», ուր վիրապի մէջ մնում է 18 տարի: Այստեղ նա սովորում է ասորերէն եւ հմտանում սաղմոսներին[12]: Խոսրով Անուշիրուանի մահից յետոյ նրա որդի Հորմիզդը բազում չարչարանքների է ենթարկել տալիս նրան, ապա եւ հրամայում հանել բանտից, տանել հեռաւոր վայր եւ գլխատել: Հրեշտակի ներշնչմամբ դահիճները ճանապարհին արձակում են Գոլանդուխտին, եւ նա նախ մեկնում է Երուսաղէմ, ապա հաստատւում Մելիտինէ քաղաքում: Տեղիս Դոմետիանոս մետրոպոլիտի միջամտութեամբ Հորմիզդը Գոլանդուխտին արձակած դահճին ազատում է պատժից եւ հրամայում խաղաղութեան մէջ թողնել քրիստոնեաներին: Պարսկուհին մտնում է Սբ Սարգսի եկեղեցի եւ օրեր անց կնքում իր մահկանացուն մկրտութեան Մարիամ անունով:

Գոլանդուխտ-Մարիամի վարքի յայսմաւուրքային համառօտ խմբագրութիւնը, մասնակի տարբերութիւններով, ներկայացուած է մեր «Յայսմաւուրքի» գրեթէ բոլոր հրատարակութիւններում՝ Հրոտից 16 եւ Յուլիսի 22 ընթերցելիքով[13]: Ենթադրելի է, թէ յայսմաւուրքային այդ համառօտութիւնները պիտի քաղուած լինեն նրա Վարքի՝ հայերէնով երբեւէ գոյութիւն ունեցած, բայց այժմ անյայտ ընդարձակ բնագրից: Այդ թելադրող մի քանի պարագայ կայ. հազիւ թէ VI դարի վերջին տասնամեակներին Պարսկաստանի քրիստոնեաների միջավայրում տեղի ունեցած այս իրողութիւնն այդքան ճանաչելի լինէր ասորիներին ու յոյներին, ինչպէս նաեւ վրացիներին, իսկ Պարսից տիրապետութեան սահմաններ ընդգրկուած Հայաստանի եկեղեցականներին՝ ոչ: Յայսմաւուրքների ազգային խմբագրութիւնները կազմուել են XI դարից ոչ շուտ[14], ուրեմն մինչ այդ հայոց մատենագրութեան մէջ շրջանառող վարք է եղել, որից եւ համառօտուել է, թէեւ բացառուած չէ,

12 Պահլաւերէն Սաղմոսարանի եւ նրա եզրաբանութեան մասին տե՛ս Հ. Պ. Էսապլեան, Պահլաւերէն Սաղմոսարանը.— «Հանդէս Ամսօրեայ», 1942, թիւ 1—6, սիւն. 61—69:

13 Յայսմաւուրք, Կ. Պոլիս, տպ. Գր. Մարզուանցւոյ, 1706, էջ 876—887: Յայսմաւուրք Տէր Իսրայէլի, Կ. Պոլիս, երկրորդ մաս, էջ 36—37: Գիրք որ Կոչի Այսմաւուրք, Կ. Պոլիս, ի թիւն Հայոց ՌՃՀԹ, էջ ՁՃԿԶ: Le Synaxaire arménien de Ter Israel, Paris, 1930, pp. 260—263.

14 Հմմտ. Պարոյր Մուրադեան, Ուրուագիծ Հայոց սրբախօսական ժառանգութեան.— «Գանձասար», թիւ է, Երեւան, 2002, էջ 86—95:

որ այն կարող էր «Յայսմաւուրքի» կազմում թարգմանուած լինել յունարէնից: Խնդիրը պարզելուն օգնում է վրացերէն կիմենեան խմբագրութեան բնագրագիտական ուսումնասիրութիւնը: Աթոսի վրացական N 57(8) ձեռագրում նրա առկայութեան (էջ 358—368) փաստն արձանագրողն ու նախնական գնահատութեան փորձ կատարողը Ն. Մառն էր[15]: «Վարք սրբոց»-ի այդ գրչագրում (ըստ Ն. Մառի թուագրման՝ X դարի ընդօրինակութիւն է, ըստ Կ. Կեկելիձէի՝ XI դարի) ներկայացուած 61 յուշարձանների թւում բաւական շատ են հայերէնից կատարուած թարգմանութիւնները[16]: Սակայն Գոլանդուխտի վարքի պատկանելութիւնը թարգմանութիւնների այդ շարքին գիտնականին երկբայելի է թւում, որովհետեւ նկատուած հայկաբանութիւնները գործածական են եւ ինքնուրոյն երկերում, թերեւս բացառութեամբ երկուսի՝ «սենեկապանի» եւ «վանի»[17]: Ն. Մառի ամփոփմամբ՝ «եթէ թարգմանութիւնը հայերէնից էլ արուած չէ, ապա պիտի ենթադրել՝ այն պատկանում է վրաց գրականութեան վաղ շրջանին, երբ նրանում տակաւին տիրապետող էին հայկական նորմերը»[18]:

Ն. Մառը այլեւս առիթ չունեցաւ այս յուշարձանի քննութեանն անդրադառնալու եւ ի հրապարակումն իր ընդօրինակած բնագիրն ուղարկեց Քրիստոնեայ Արեւելքի հոգեւոր մատենագրութեան խոշորագոյն գիտակ Կ.Ս. Կեկելիձէին, ով եւ այն հրատարակեց եղած ձեռագրերի ու բոլոր խմբագրութիւնների հանգամանալի քննութեամբ[19]: Նրա ճշգրտմամբ՝ կիմենեան խմբագրութեան A—B ձեռագրերը XI դարի առաջին քառորդի գրչութիւն են, վրացերէն եւ յունարէն խմբագրութիւնները տարբեր հեղինակների գործեր են՝ նոյնական աղբիւր-

15 Н. Марр, Агиографические материалы по грузинским рукописям Ивера, ч. I. Описание пяти пергаментных рукописей, С-Петербург, 1900, стр. 69. Ռ. Բլեյկի նկարագրութեան մէջ ներկայացուած է N 8-ի տակ (R. Blake, Catalogue des manuscrits géorgiens de la Laure d'Iviron au Mont Athos, ROC, 28 (1931—1932), pp. 318—329).

16 Նրանց նախնական գնահատութիւնը տես Н. Марр, Из поездки на Афон, ЖМНПр., 1899, N 3, отд. 2. Տես նաեւ Պ. Մուրադեան, Ագաթանգեղոսի հին վրացերէն խմբագրութիւնները, Երեւան, 1982, էջ 115—120:

17 Н. Марр, նշ. աշխ., էջ 23:

18 Անդ:

19 პ. კეკელიძე, მარტვილობა გულანდუხტ სპარსისა (ტექსტი და გამოკვლევა).— პ.კეკელიძე, ეტიუდები ძველი ქართული ლიტერატურის ისტორიიდან, ტომი III, თბ., 1955, გვ. 197—250.

ներից քաղուած: Վրացերէնով առկայ խմբագրութեան հեղինակը Հիերապոլսի եպիսկոպոս Ստեփանոսն է, ով անձամբ ճանաչել է Գոլանդուխտին: Կ. Կեկելիձէն չի բացառում, որ Ասորիքի Հիերապոլսի եպիսկոպոսը այս վարքը կարող էր գրել ասորերէն, որից եւ կարող է թարգմանուած լինել վրացերէնը: Սակայն գիտնականը մասնաւորեցնում է՝ ո՛ր լեզուից թարգմանուած լինելը յատուկ քննութեան առարկայ է[20]: Դատելով ամսանունների զուգահեռ գործածութեան փաստից՝ թարգմանութիւնը կատարուած պիտի լինի VII դարի առաջին կէսից ոչ ուշ[21]:

Ակադ. Կ. Կեկելիձէից յետոյ, որքան մեզ յայտնի է, Գոլանդուխտի վարքի վրացերէն կիմենեան խմբագրութեան հետ կապուած հարցերը քննութեան առարկայ են դարձել պրոֆ. Ժ. Գարիտի յօդուածում[22]: Մասնաւորապէս որ լեզուից թարգմանուած լինելուն անուանի գիտնականը փաստօրէն չի անդրադարձել՝ գոհանալով Կ. Կեկելիձէի ենթադրութեամբ: Ինչպէս շատ այլ դէպքերում, այստեղ էլ խնդրի առեղծման ճանապարհը տեքստում լեզուական-բառական այնպիսի ինքնատիպութիւնների բացայայտումն է, որոնք կարող են պայմանաւորուած լինել թարգմանուող լեզուի նորմերով.

1. Ubrdanes tanjvaa misi cemita ZaapCoa miēr urōdōd *(216$_{1}$).— «Հրամայեցին տանջել նրան անխնայ ճիպոտներով»:*

Հին վրացերէնը գիտէ ճաՁՈՒԿՈ (երիտասարդ) բառը եւ նրա բառաբարդութիւնները, մինչդեռ այստեղ խօսքը խփելով ցաւ պատճառելու գործիքին (միջոցին) է վերաբերում՝ ճիպոտին: «Ճապուկ» եւ «ճիպոտ» բառերը անշուշտ իմաստաբանական աղերս ունեն, սակայն վրացերէնի «գործիք, գաւազան» նշանակութիւնը բացատրելի է հայերէնի «ճիպոտով»[23]:

2. և հլոցցոիդա մատ մՈՒՁԼ–ԴԱԲՆԵՅՈՈ *(213$_{27}$).— «եւ աղերսում (աղօթում) էր նրանց ծնկաչոք»:*

Նման պարագաներում հին վրացերէնը նախընտրում է մՈՒՁԼ–դադգմա, մՈՒՁԼ-մոդրեկա *յարադրութիւնները:* դաբնեվա-ն *«ընկնել»,*

20 Ժ. ԿԵԿԵԼԻՁԷ,. Նշ. աշխ., էջ 205:

21 Անդ, էջ 206:

22 Anal. Bolland., 74, fasc. 3—4, 1956:

23 Այդ բառերի վկայութիւնն ու ստուգաբանութեան փորձերը տես Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. III, Երեւան, 1977, էջ 187, 201:

«չոքել» է նշանակում եւ իբրեւ այդպիսին կարող է նկատուել «ծնկի ընկնել», «ծնկի չոքել» հայկաբանութիւնների պատճէնում:

3. գանրոսեեա մեՁՁ ոգո ՁրոաՁ մոսոՁն դա մոաՁլոոեեա որեո ՁՄՁՈԾՁՏՈԱԾԱՆԵԵՈ ԼՈՒՁՆՈՈ սոՁԿՁՈՒԱԾ մոսա դա ՀրՁՁա *(214$_{14-18}$).— «ուստի թագաւորը յոյժ զայրացաւ եւ ուղարկեց երկու լաւի՝ ողոքանօք խօսելու նրա հետ եւ ասաց»:*

4. դա մոս տանա սեՁՁանոցա մրաՁալեո ԴՈԴԴՈԴԵՈ դա մՁՈԾՁԵՅՈԱԾԱՆԵԵՈ կաՁեո *(226$_{13-17}$).— «նրա հետ [ուղարկեց] նաեւ բազում մեծամեծ եւ լաւ մարդիկ»:*

Ընդգծուած ՁՄՁՈԾՁՁՏՈԱԾԱՆԵԵՈ - մՁՈԾՁՁՏՈԱԾԱՆԵԵՈ *նոյնանիշ սոցիալական տերմինները հին վրացերէնում փաստական գործածութիւն չունեն, ուստի նոյնիսկ մէկ երկի շրջանակում նոյնական չեն: Նրանց փոխարէն վրացերէնում ընտանի է* դոդեՁՁՁո *(մեծաւոր, փառաւոր, պատուական), թէեւ սպասելի էր* ՁարՁո *տերմինը (Իւ. Ջաւախիշվիլին այն բերում է իբրեւ «լաւ»-ի թարգմանութիւն)[24]: Հետեւաբար վարքում եղած կիրառութիւնները թելադրուած պիտի լինեն թարգմանուող լեզուի պատճէնման հանգամանքով: Եւ յիրաւի, հայոց հին մատենագրութեանը քաջ ծանօթ է «լաւ» (ազնուական, պատուական) տերմինը[25]:*

Ի դէպ, երկրորդ նախադասութեան մէջ գործածուած դոդ-դոդեո *— «մեծամեծ» տերմինը եւս հայերէնի նմանողութեամբ է կազմուած, սակայն լայն կիրառութիւն ունի նաեւ ոչ թարգմանչական բնագրերում[26]:*

4. դա ՁՁրՁանա մոՁՁանեՁՁաԾ ոգո ՁՁՁՈՒՁՁՁՈՒՁՁՁՈՒ դա դԾՁոտո-դԾՁեդ ՁանՁՁՁաա ոգո *(214$_{22}$ – 215$_{4}$).— «եւ հրամայեց նրան տանել աքսոր, որն* Անյիշելի *են կոչում, եւ օրէցօր տանջել նրան»:*

Ռոմելեո ոՁՁեՁՁ ՁՁՁՁեՁՁՁՁՁՁ ադգոլսա մաս մՈՒՁՁՁեՁՁՁՁՁՁսա *(225$_{29}$).— «որոնք արգելուած էին* Անյիշելի *տեղանքում»:*

Ռոլոո մեՁՁեմաս արաՁոսո ՁրՁանա մոՁՁՁաա մատգանոսա,արամեդ

24 *Հմմտ.* ՁՁՁՁՁՁՁՁՁՁ ՁՁՁՁՁՁՁՁՁՁ

մոնչլաօ մատո ՝ղդաբնոդ ելիս՝ուրոադ,ռոմելսա ՝ել՝չան դաՅՈՎՎՅԵԵԲԱ —«Իսկ Թագաւորը նրանց ոչ ոքի հրամայեց սպանել, այլ նրանց գնալը աքսոր դէպի անապատ, որ Մոռացութիւն է կոչւում»:

Վրացերէն տեքստի մոՅՇՅՆՅՆԵԲԵԼ-ո - դաՅՈՎՎՅԵԵԲԱ կոչուածները միեւնոյն արգելանոցի (բանտի, ամրոցի) անուան թարգմանութիւնն են: Եթէ այդ անունը այլ աղբիւրներից վրացերէնի թարգմանչին ծանօթ լինէր, ապա «Անյիշելի» եւ «Մոռացութիւն» տարբերակներից մէկնումէկը պիտի ունենայինք: Խօսքը վերաբերում է այլալեզու, այդ թւում հայկական աղբիւրներից լաւ ծանօթ An + damišn ամրոցին, որ Փաւստոս Բուզանդի մօտ թարգմանուած է Անյուշն (IV, 54, V, 5), Մովսէս Խորենացին յիշում է Անուշ (III, ԼԵ) եւ Անյուշ տարբերակներով (III, ՄԵ. ծան.): Քրիստոնեաների միջավայրում Խուզիստանի այդ ամրոցը ահ ու սարսափ էր նշանակում, քանի որ այնտեղ բանտարկուածները այլեւս դուրս էին յիշողութիւնից (պահլաւերէն՝ ան + յուշ): Agabana անուամբ նրա գոյութիւնը գիտէ Ամիանոսը (XXVII, XII, 3), իսկ Պրոկոպիոսը այն կոչում է φρούριον της Λήθης (մոռացութեան ամրոց)[27]: Կարծում ենք՝ վրացերէնի «Անյիշելի» եւ «Մոռացութիւն» յորջորջումների աղբիւրը հայերէնի «Անյուշն» է, որ հաւասարապէս կարող է ընկալուել այդ երկու տարբերակով[28]:

Եթէ Գոլանդուխտի վարքի վրացական հնագոյն խմբագրութեան տեքստում մեր դիտարկած բառագանձային ինքնատիպութիւնները կարելի է որակել իբրեւ հայկաբանութեան դրսեւորումներ, ապա կարող ենք եզրակացնել, որ Ստեփանոս մետրոպոլիտի հեղինակած եւ բնագրով

27 Այս ամրոցին վերաբերող աղբիւրների եւ ուսումնասիրութիւնների լիակատար մատենագիտութիւնը տես Ջուստո Տրաինա, Բանտարկութեան վայր Սասանեան կայսրութիւնում. Անյուշ բերդը, «Պատմա-բանասիրական հանդէս», 2003, N 1, էջ 186-202: Հեղինակը ծանօթ է նաեւ Գոլանդուխտի վարքում եղած յիշատակութեանը (էջ 190-191): Նաեւ՝ Կլաուդիա Ա. Զիմակլինի, Հայերէն «Անյուշ» բերդ՝ Մոռացութեան ամրոց (ստուգաբանական ծանօթութիւն), ՊԲՀ, 2003, N 1, էջ 203-207: Ջ. Տրաինայի յօդուածի հայերէն թարգմանիչը անձնանունը գրադարձել է «Գոլինդուշ» ձեւով, որ վրիպակ է:

28 Գոլանդուխտի վարքի վրացական մետափրասեան խմբագրութեան տեքստում տեղանունը կոչուած է դաՅՈՎՎՅԵԵԲԱ ՝ոՅՈՎՎՅԵԵԲԱ (Մոռացութեան աշտարակ), սակայն պետրիծոնեցի թարգմանիչը այս դէպքում կարող էր ձեռքի տակ ունենալ իրենից շատ առաջ կատարուած վրացերէն կիմենեան խմբագրութիւնը եւ օգտուել նրանից, թէեւ ամենեւին բացառուած չէ յունարէն տեղանուան ինքնուրոյն մեկնաբանութիւնը:

կորած համարուող վարքը VI—VII դարերում թարգմանուած է եղել նաեւ հայերէն: Աւելին, հայերէնի միջնորդաւորմամբ այն թարգմանուել է վրացերէն: Ուրեմն վերստին հաստատւում է Ն. Մառի եզրակացութիւնը, թէ հայերէնից կատարուած վրացերէն «թարգմանութիւնների նշանակութիւնը մեր պատկերացումների մէջ սկսում է աճել, երբ հարկ է լինում արձանագրել, որ հայերէնից վրացերէն են թարգմանուել ոչ միայն ազգային սրբերին նուիրուած վարքագրական յուշարձաններ»[29]: Գոլանդուխտի վարքը ճիշտ այդ կարգի յուշարձան է: Ինչպէս երեւում է, Աթոսի N 57 (նոյն N 8) վրացերէն ձեռագրում գրչի թողած եւ Ն. Մառի ու Ռ. Բլեյկի նկարագրութիւնների ժամանակ տակաւին ընթեռնելի յիշատակագրութիւնը, թէ այս վարքերը հայերէնից են թարգմանուած, վերաբերում է նաեւ Գոլանդուխտի վարքին:

Կարելի է վստահ լինել, թէ վարքի հայերէն թարգմանութիւնը ծանօթ է եղել յայսմաւուրքները լրացնող-խմբագրողներին եւ անհետացել է համեմատաբար նոր ժամանակներում:

591 թ. վախճանուած Գոլանդուխտի վարքը փաստօրէն ականատես-ժամանակակցի գրառում է՝ ժանրին բնորոշ յաւելումներով ու կերպաւորումներով: Այն ունի որոշակի աղբիւրագիտական արժէք ինչպէս պարսից քրիստոնէութեան պատմութեան, այնպէս էլ պարսկա-բիւզանդական մշակութային-քաղաքական փոխյարաբերութիւնների համար VI դարի երկրորդ կէսին:

29 Н. Марр, Из поездки на Афон, стр. 23.

ԲՆԱԳՐԵՐ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՌՆԱԲԱՍԻ ՆԱՄԱԿԸ

Մինչեւ 1862 թ. Բառնաբասի նամակը յայտնի էր ութ ձեռագրով, որոնք ընդօրինակուել էին հնագոյն մի բնագրից, եւ որոնցից պակասում էին նամակի առաջին չորս եւ կէս գլուխները. իսկ սրանք յայտնի էին միայն Գ դարի լատիներէն մի թարգմանութիւնից, որից այս դէպքում պակասում էին ԺԸ—ԻԱ գլուխները: Այսպիսով՝ այն առաջին անգամ հրատարակուել է 1642 թ. Օքսֆորդում՝ անգլիկան եպիսկոպոս J. Usser von Armagh-ի կողմից: Նամակն ամբողջութեամբ յայտնաբերուեց Տիշենդորֆի կողմից Դ դարի հռչակաւոր սինայական ձեռագրում 1859-ին եւ հրատարակուեց 1862-ին Սանկտ Պետերբուրգում: Քիչ ուշ 1056 թուականի Երուսաղէմեան ձեռագրում Փիլոթէոս Բրիեննիոսը նոյնպէս գտաւ Բառնաբասի նամակը՝ սինայականից ունեցած բաւական տարբերութիւններով:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1. Նամակը

Ընդունուած է «Բառնաբասի նամակ» կոչել այն անանուն գործը, որն առաջին անգամ այն յիշատակող Կղեմէս Աղեքսանդրացին եւ ապա Որոգինէսն ու այլ եկեղեցական հեղինակներ վերագրել են Պօղոս առաքեալի ուղեկից Բառնաբասին, ով Նոր Կտակարանում նոյնպէս կոչւում է «առաքեալ» (Որոգինէսն այս նամակը կոչում է «ընդհանրական»): Հեղինակն իր նամակն ուղղել է մի անծանօթ քրիստոնէական համայնքի, որի անդամներին ինքն անուանում է «որդիներ ու դուստրեր», «ցնծութեան որդիներ», «սիրոյ որդիներ», «եղբայրներ» եւ այլն:

21 գլխից բաղկացած այս նամակը, բացի նախաբանից (Ա) ու վերջաբանից (ԻԱ), բաժանուած է երկու անհաւասար հատուածների, որոնցից առաջինում (Բ—ԺԷ) քննութեան է առնուած Հին Կտակարանի կարեւորութեան, իսկ երկրորդում (ԺԸ—Ի)՝ երկու ճանապարհների հարցը: Առաջին հատուածում հեղինակն ամբողջապէս իւրայատուկ եղանակով շարադրում է Հին Կտակարանի կարեւորութեան մասին իր հայեցակէտը: Ըստ նրա՝ Աստուծոյ կողմից հրեաներին տրուած ծիսական

օրէնքն ունէր ըստ էութեան այլաբանական նշանակութիւն. օրինակ՝ խոզի միսն ուտելու արգելքը պէտք չէ սոսկ բառացի հասկանալ, այլ նախեւառաջ որպէս ցուցում՝ խուսափելու այնպիսի մարդկանց հետ յարաբերուելուց, «որոնք նման են խոզի» (գլ. Բ). եւ երբ խօսք է լինում ծոմապահութիւնների ու զոհաբերութիւնների մասին, չպէտք է դրանք հասկանալ միայն նիւթական առումով, քանզի Աստուած «կարիք չունի ո՛չ զոհաբերումների, ո՛չ ողջակէզների, ո՛չ էլ ընծայաբերումների», այլ գլխաւորաբար պէտք է հասկանալ չար մտքերից, չար խօսքերից ու չար գործերից հեռու մնալու իմաստով (գլ. Բ եւ Գ): Իսկ երբ խօսք է լինում թլփատութեան մասին, ապա այն պէտք չէ հասկանալ որպէս սոսկ մարմնի թլփատում, այլ յատկապէս ականջների ու սրտի. այսինքն՝ խուսափել վատ դաստիարակութիւնից, չար մտքերից ու չար գործերից. եւ թլփատման հնութեան վերաբերեալ չպէտք է որպէս փաստարկներ առաջադրել «Մննդոց» գրքում (ԺԴ 14 եւ ԺԷ 27) Աբրահամի 318 ընդօծինների, այսինքն՝ ծառաների թլփատման մասին պատմուածները: Այդ ամէնը պէտք է ընկալել այլաբանօրէն: 318 թիւը պարզապէս Փրկչի՝ խաչելութեամբ մահուան խորհրդանիշն է, քանի որ 300 թիւը յունարէնում նշւում է T տառով, որը պատկերում է խաչը, իսկ 18 թիւը յունարէնում նշւում է IH տառերով, որոնք կազմում են յունարէն «Յիսուս» (Ιησους) անուան սկզբնատառերը (գլ. Թ): Մովսէսը եւս Աստուծոյ օրէնքը ստացաւ նախեւառաջ որպէս այլաբանութիւն եւ իբրեւ այդպիսին այն տուեց հրեաներին, ովքեր, սակայն, «արժանի չեղան» դրան (գլ. ԺԴ) եւ այն «խախտեցին, քանզի չար հրեշտակ էր նրանց խորհուրդ տալիս» (գլ. Թ), այնուհետեւ սկսեցին Օրէնքի տառացի կիրառումը՝ մոռացութեան տալով դրա հոգեւոր կիրառումը: Աւելորդ է ասել, որ Հին Կտակարանի մասին այս թղթի հեղինակի ընկալումն էապէս տարբեր է առաքեալների եւ հէնց Պողոսի ընկալումից: Ըստ առաքելական պատկերացման՝ ծիսակատարման օրէնքը հրեաներին տրուել է Աստուծոյ կողմից, եւ դրա գործադրումը նախաքրիստոնէական աշխարհում ունէր մեծ նշանակութիւն, որովհետեւ այն ծառայեց իբրեւ առաջնորդութիւն դէպի Քրիստոս: Մինչդեռ, թղթի հեղինակի ընկալմամբ, ծիսակատարման օրէնքն ըստ էութեան ունէր այլաբանական նշանակութիւն, եւ դրա տառացի կիրառումը սատանայական ներգործութեան արդիւնք էր (գլ. Թ) եւ աստուածային կամքի ոտնահարում:

Թղթի երկրորդ հատուածը (գլ. ԺԸ—Ի) բովանդակում է երկու ճանապարհների (լոյսի եւ խաւարի) մասին վարդապետութիւնը, որը շատ

նման է «Դիդախէին», անգամ երբեմն բառացի կրկնում է դրա համապատասխան հատուածը:

Այս թղթով հեղինակը ձգտում է՝ ա) համոզել յուդայականութեան յարող քրիստոնեաներին, որ վերջ տան Հին Կտակարանի տառին կառչելուն, որը ոչ թէ առաջնորդում է դէպի Քրիստոս, այլ պարզապէս քրիստոնէութեան ձեւն է, ստուերը եւ այլաբանութիւնը. բ) ուսուցանել նրանց առաքինութեան ճանապարհը եւ չարութեան ճանապարհից խուսափելը:

2. Հեղինակը

Կղեմէսը, Որոգինէսը եւ այլ եկեղեցական հեղինակութիւններ համարել են, որ թղթի հեղինակը Բառնաբաս առաքեալն է: Սակայն նորագոյն քննադատութիւնը կասկածի տակ է դնում այս փաստը՝ յենուելով տարբեր խորհրդածութիւնների վրայ, որոնցից կարեւորագոյնները հետեւեալն են: 1) Եթէ թղթի հեղինակը լինէր Բառնաբաս առաքեալը, ապա այն կը կազմէր Նոր Կտակարանի կանոնի մաս եւ չէր դասուի ոչ կանոնականների շարքը: 2) Հին Կտակարանի վերաբերեալ թղթի իւրայատուկ վարդապետութիւնը, որն օտար է առաքեալների եւ Պողոսի ընկալմանը, չի կարող լինել Բառնաբաս առաքեալի ընկալումը: 3) Դժուար թէ առաքելական կոչում ստացած ղեւտացի Բառնաբասը կարողանար ասել, թէ Փրկիչն ընտրեց իրենց՝ առաքեալներին, «ովքեր բոլոր մեղքերի մէջ առաւել անօրէններ էին» (գլ. Ե): Բացի դրանից, թղթի հեղինակը, թւում է, անտեղեակ է որոշ հրէական բարքերի: Այն կարծիքը, թէ Բառնաբասի թղթում նկատելի են երկու տարբեր հեղինակներ՝ մէկը՝ Հին Կտակարանն արհամարհող, եւ միւսը՝ Քրիստոսի մասին Հին Կտակարանի մարգարէութիւնները յիշատակող, ինչպէս եւ այն կարծիքը, թէ թուղթն իր ներկայ տեսքով մէկ այլ սկզբնականի վերամշակումն է, ամբողջապէս ենթակայական են եւ անհաւանական:

3. Գրութեան ժամանակը

Քանի որ այս գործն արդէն յայտնի էր Կղեմէս Աղեքսանդրացուն, ապա հաստատապէս կարելի է ասել, որ այն, բոլոր դէպքերում, գրուած է եղել 160 թ. առաջ: Գլ. ԺԶ-ի՝ Տաճարի վերակառուցման մասին խօսքերից ոմանք ենթադրել են, որ դրանք վերաբերում են Ադրիա-

նոսի ժամանակ Երուսաղէմի տաճարի վերականգնման տարուն (130—131 թթ.): Լիովին անպտուղ է գլ. Դ-ում բերուած Ենովքի խօսքի եւ այլ հատուածների հիման վրայ ժամանակը որոշելու փորձը, եւ մեծ համարձակութիւն կը լինէր մարգարէական յայտնութենական մութ հատուածներից ժամանակը որոշելու նպատակով հետեւութիւնների մակաբերումը: Հառնակը ճիշտ է ենթադրում, որ թղթի գրութեան ժամանակը պէտք է դրուի 80 եւ 130 թուականների միջեւ. 80-ից ոչ առաջ, քանի որ հեղինակը չի երեւում, թէ որեւէ անձնական կապի մէջ եղել է առաքեալների հետ (գլ. Ե), ոչ էլ 130-ից յետոյ, քանի որ հեղինակը ծանօթ չէ Մարկիոնին եւ գնոստիկեան մեծ ուղղութիւններին, ինչպէս եւ գնոստիկականութիւնից բխող վտանգներին, որոնք չէր կարող չիմանալ, եթէ գրած լինէր 130-ից յետոյ:

4. Գրութեան վայրը

Այս թղթի՝ Եգիպտոսում տարածուած եւ այնտեղ խիստ յարգուած լինելու հանգամանքից եւ դրանում տիրող այլաբանական մեկնութիւնից, ինչը մեծապէս ընդունուած էր Եգիպտոսում, կարելի է եզրակացնել, թէ թուղթը գրուած է եղել Ալեքսանդրիայում:

ԲԱՌՆԱԲԱՍԻ ՆԱՄԱԿԸ[1]

Գլուխ Ա

Ողջո՛յն ձեզ խաղաղութեամբ[2], որդինե՛ր եւ դուստրեր, Տիրոջ անունով, Ով սիրեց մեզ: Մեծ եւ առատ են Աստուծոյ արդարութիւնները[3] ձեր հանդէպ, ինչ պատճառով ես եւս առաւել ու գերազանց կերպով ցնծում եմ ձեր երանելի ու փառաւորեալ հոգիների[4] համար. այսպիսով[5] դուք ստացել էք Նրա հոգեւոր պարգեւի բնածին[6] շնորհը: Ուստիեւ առաւել մխիթարւում եմ՝ ներքուստ յուսալով փրկուել[7], որովհետեւ ճշմարտապէս տեսնում եմ, որ ձեզ վրայ հեղուել է Տիրոջ առատ սիրոյ հոգին[8]: Ինձ այնքա՜ն զարմացրեց ձեր ցանկալի տեսքը[9]: Արդ՝ ես համոզուած եմ դրանում եւ հաստատապէս գիտեմ, որ ձեր մէջ շատ բան խօսելով

1 Վերնագիրը համապատասխանում է Սինայի ձեռագրին: Վատիկանի ձեռագրի լատիներէն թարգմանութիւնն ունի՝ «Բառնաբաս առաքեալի նամակը»:

2 Թարգմանութիւնն այլընտրանքային է: ANF-ը (Ante-Nicene Fathers, Edinburgh, 1886, vol. 1) այս նախադասութիւնը թարգմանում է՝ «Ողջոյն ձեզ, որդիներ եւ դուստրեր, յանուն մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Ով սիրեց մեզ խաղաղութեամբ», իսկ ACW-ն (Ancient Christian Writers, Newman Press, New York, vol. 6)՝ «Ողջոյն... խաղաղութեան համար»:

3 Թարգմանութիւնը երկբայական է: Ցունարէն δικαίωμα բառը թարգմանւում է «պատուիրաններ», «դատաստաններ», «ողորմութիւններ», «արդարացման պարգեւներ» եւն: Մենք հետեւել ենք այն կարծիքին, ըստ որի՝ այս բառն այստեղ պէտք է թարգմանել «արդարութիւն», ինչպէս Հռոմ. Ե 18-ում:

4 Մարդուն վերաբերելիս πνεῦμα բառն արտայայտում է կեանք տուող մասը (Ղուկ. Ը 55) կամ այն բանական հատուածը, որը մտածում, կամենում եւ զգում է (Մատթ. Ե 3), կամ մարդկային հոգին՝ Սուրբ Հոգու ազդեցութեան ներքոյ (Հռոմ. Ը 16):

5 ANF-ում՝ «որովհետեւ»՝ ըստ հին լատիներէն թարգմանութեան:

6 Միւս հրատարակութիւններում՝ «խոր արմատացած»:

7 Հայրաբաններից Հեֆելէն կարծում է, որ հեղինակն այստեղ խօսում է մահուան ուրախալի սպասման մասին՝ որպէս մարմնական կապանքներից ազատագրման, իսկ ըստ Հիլգենֆելդի՝ իր փրկութեան յոյսի մասին, որը խթանւում է քրիստոնեաների մէջ իր կատարած քարոզութեամբ: Երկրորդ տեսակէտն աւելի ընդունելի է:

8 Լատիներէն թարգմանութեան մէջ՝ «Աստուծոյ ազնիւ աղբիւրից ձեր մէջ հեղուած Հոգին»: ANF-ում՝ «սիրոյ առատ Տիրոջ հոգին»: Հմմտ. Տիտ. Գ 5—7 «եհեղ ի մեզ առատութեամբ»:

9 Լատիներէն թարգմանութեան մէջ այս նախադասութիւնն ամբողջովին բաց է թողնուած:

էր, որ հասկացայ, թէ արդարութեան[10] ճանապարհին ինձ Տէրն է ուղեկցել. եւ անպայմանօրէն ես նոյնպէս[11] ստիպւում եմ[12] սիրելու ձեզ իմ անձից առաւել, քանզի ձեր մէջ բնակւում են մեծ հաւատ ու սէր՝ Նրա կեանքի յոյսով[13]: Արդ՝ խորհելով, որ եթէ ես աշխատեմ ձեզ հաղորդակից դարձնել իմ ստացածի որոշ մասին, եւ որը կը լինի իմ՝ այդպիսի հոգիներին ծառայողիս վարձը, շտապեցի մի քանի խօսք առաքել ձեզ, որպէսզի հաւատքի հետ միասին նաեւ ձեր իմացութիւնը կատարեալ լինի: Այսպէս՝ Տիրոջ հաստատումները երեքն են[14]՝ կեանքի Յոյսը՝ մեր հաւատքի սկիզբն ու վերջը[15]. Արդարութիւնը[16]՝ դատաս-

10 ACW-ում «սրբութեան»: Ցունարէն բառը նշանակում է «այն, ինչ ճիշտ է» կամ «անելն այն, ինչ ճիշտ է» (հմմտ. Մատթ. Գ 15):

11 «Ես նոյնպէս», այսինքն՝ Քրիստոսի նմանութեամբ. հմմտ. Յովհ. Գ 16, Ժ 11:

12 Լատիներէն տեքստն այստեղ բացարձակապէս տարբեր է եւ աղաւաղուած է համարւում:

13 ANF-ում «Նրա խոստացած կեանքի յոյսով»: Պրէոբրաժենսկու ռուսերէն թարգմանութեան մէջ՝ «այն (այսինքն՝ ապագայ) կեանքի յոյսով»: Հմմտ. Տիտ. Ա 2, Գ 7:

14 Ցունարէն տեքստն այստեղ բացարձակապէս անհասկանալի է: Հրատարակութիւնների մեծ մասը փորձում է ներկայացնել հետեւեալ կերպ. «Տիրոջ հաստատումներն, ուրեմն, երեքն են. ա) Կեանքը, Հաւատքը եւ Յոյսը՝ մեր սկիզբն ու վախճանը. բ) Արդարութիւնը՝ դատաստանի սկիզբն ու վերջը. գ) Սէրը, Երջանկութիւնը եւ ուրախութեան Վկայութիւնը արդարութեան գործերի համար»:

15 Հմմտ. Տիտ. Ա 2, Գ 7: ACW-ն թարգմանում է՝ «մեր հաւատքի առաջինն ու վերջինը»: Սոյն հրատարակութիւնն այս արտայայտութիւնը բացատրում է հետեւեալ կերպ. «առաջինը»՝ կեանքի յոյսի միջոցով մարդը մղւում է դէպի հաւատք, «վերջինը»՝ այս յոյսով քաջալերուած՝ մարդը հաստատուն է մնում հաւատքի մէջ: Ռուսերէն հրատարակութեան մէջ՝ «կեանքի յոյսի սկիզբն ու աւարտը»: Ռուսերէն թարգմանութիւնը չունի այս արտայայտութեանը յաջորդող երկու արտայայտութիւնները, ուստի փորձում է այն բացատրել հետեւեալ կերպ. Աստուծոյ կողմից հաստատուած են մարդկային փրկագործութեան երեք շրջաններ կամ աստիճաններ. մարգարէները յայտարարեցին կեանքի յոյսն ի Քրիստոս եւ կանխատեսեցին այն, ինչ այժմ կատարուեց (Քրիստոսի յայտնութիւնը կեանքի կամ Աստուծոյ արքայութեան սկիզբն է), եւ ապագայում կեանքի կատարելութիւնն ու Աստուծոյ արքայութեան լիակատար յայտնութիւնը: Ուստի քրիստոնեաները, իրենց առջեւ ունենալով մի կողմից՝ Քրիստոսի յայտնութեան մասին մարգարէութեան իրականացումը, իսկ միւս կողմից՝ նրանց առջեւ բացուած ապագայի սաղմերը, պէտք է աւելի կատարեալ դառնան աստուածճանաչողութեան ու աստուածպաշտութեան մէջ, ինչի կոչն էլ անում է հեղինակը:

16 Տեքստն այստեղ դարձեալ անորոշ է: ACW-ն թարգմանում է «սրբութիւն»:

տանի սկիզբն ու վախճանը. ցնծալի ուրախութեան Սէրը՝ արդար գործերի վկայութիւնը[17]: Քանզի Տէրը մարգարէների միջոցով մեզ յայտնեց անցեալն[18] ու ներկան եւ շնորհեց, որ ապագան[19] եւս նախաճաշակենք[20]: Եւ մէկ առ մէկ տեսնելով Նրա ասածների կատարումը՝ մենք պարտաւոր ենք առաւել առատութեամբ ու վեհութեամբ[21] մերձենալ Նրան երկիւղածութեամբ[22]: Իսկ ես ոչ թէ որպէս վարդապետ, այլ որպէս մէկը ձեզանից՝ մի քանի ցուցում կը տամ ձեզ, որոնցով ներկայ պայմաններում ցնծութիւն կ'ապրէք:

Գլուխ Բ

Արդ՝ քանի որ օրերը չար են[23], եւ գործողն[24] իշխանութիւն ունի, պարտաւոր ենք զգուշութեամբ հետամուտ լինել Տիրոջ պատուիրաններին: Քանզի մեր հաւատի օգնականներն են երկիւղն ու համբերութիւնը, իսկ մեր դաշնակիցները՝ երկայնմտութիւնն ու ժուժկալութիւնը: Երբ այս ամէնն անապական են մնում Տիրոջ հանդէպ, դրանց հետ միասին ցնծում են իմաստութիւնը, խելամտութիւնը, իմացութիւնը, գիտելիքը: Քանզի Նա մեզ բոլոր մարգարէների միջոցով յայտնեց, որ կարիք չունի ո՛չ զոհաբերութիւնների, ո՛չ ողջակէզների, ո՛չ ընծաների՝

17 ACW-ն թարգմանում է. «Սէրը մաքուր երջանկութիւն է ճառագայթում, որն արդար գործերի վկայութիւն է»: Հմմտ. Գործ. Բ 28, 46, Ա Պետ. Ա 8:

18 ACW-ն սա հասկանում է հրեաներին տրուած պատուիրանների իմաստով:

19 ACW-ն սա ընդունում է որպէս ապագայ կատարեալ արհաւիրքի արտայայտութիւն:

20 Սինայի ձեռագիրն ունի γεύσεως (ճաշակել), մինչ ուրիշներ այն փոխարինում են γνώσεως-ով (գիտելիք):

21 ANF-ը թարգմանում է՝ «հաւատքի աւելի մեծ առատութեամբ ու հոգու վեհութեամբ»:

22 Լատիներէն տեքստը, ի տարբերութիւն Սինայի ձեռագրի, «Նրան՝ երկիւղածութեամբ»-ի փոխարէն ունի «Նրա սեղանին», որն էլ արտայայտուած է ռուսերէն թարգմանութեան մէջ:

23 Հմմտ. Եփես. Ե 16:

24 Լատիներէն տեքստում՝ բառացի՝ «հակառակորդը»: ANF-ը թարգմանում է «սատանան», ACW-ն՝ «գործակալը», այսինքն՝ չարի գործակալը: Հիլգենֆելդը թարգմանում է՝ «նա, ով գործում է ընդդէմ»: Հմմտ. Եփես. Բ 2, Զ 12, Բ Թես. Բ 9, 11: Յայտ. ԺԲ 9-ում սատանայի ոչ պակաս քան հինգ անուն համադրուած է մէկ նախադասութեան մէջ:

մի առիթով ասելով. «Իմ ինչի՞ն է պէտք ձեր զոհերի բազմութիւնը,— ասում է Տէրը,— ես լիացել եմ ողջակէզներից եւ չեմ կամենում գառների ճարպ եւ ցուլերի ու նոխազների արիւն, ոչ էլ ձեր գալն ու Ինձ երեւալը: Քանզի ո՞վ պահանջեց այդ ամէնը ձեր ձեռքից: Իմ գաւիթը[25] ոտք դնելով՝ դուք չէք բազմանայ»: Երբեմն էլ ասել է. «Եթէ ալիւր մատուցէք, իզուր է. խունկն Ինձ համար պիղծ է. ձեր ամսագլուխներն[26] ու շաբաթները չեմ հանդուրժում»[27]: Արդ՝ այս ամէնը վերացրեց[28], որպէսզի մեր Տէր Յիսուս Քրիստոսի նոր օրէնքը[29], լինելով առանց ստիպողական լծի, ձեռակերտ ընծայաբերում[30] չունենայ[31]: Եւ դարձեալ ասում է նրանց[32]. «Մի՞թէ ես ձեր հայրերին, որոնք Եգիպտոսից դուրս

25 Տապանակի կամ տաճարի գաւիթը

26 Հրէական ամսագլուխը սկսւում է նորալուսնից, դրա համար էլ երբեմն թարգմանւում է «նորալուսին»: Տես Նամակ առ Դիոգնետոս, Դ 1:

27 Ես. Ա 11—14՝ Եօթանասնից համաձայն: Մէջբերումը կատարուած է Սինայի ձեռագրի հիման վրայ: Ռուսերէն թարգմանութիւնում մէջբերումն աւելի երկար է:

28 Ընդհանրապէս ընդունուած է, որ, Բառնաբասի կարծիքով, ծիսական օրէնքը սկզբից եւեթ բառացիօրէն չպէտք է ընկալուէր, այլ բացարձակապէս հոգեւոր դաս պէտք է դառնար: Որոշ գիտնականներ, սակայն, տարակարծիք են: «Վերացրեց» արտայայտութիւնը կարող է այն տպաւորութիւնը թողնել, որ այդ օրէնքը որոշ ժամանակ ուժի մէջ էր: Բառնաբասի հիմնական միտքը, որ Հին ու Նոր Կտակարանների յարաբերութիւնը «խոստման» ու «կատարման» կամ «նախատիպի» ու «իրականութեան» կապ է, իսկապէս ճշմարիտ է: Տես Երեմ. ԼԱ 31, Մատթ. Ե 17:

29 «Նոր օրէնքը» սիրոյ օրէնք է՝ Յովհ. ԺԳ 34, Ա Յովհ. Բ 7: Հեղինակի կարծիքով՝ ծիսական օրէնքը մի լուծ էր, որ պարտադրուած էր հրեաներին չար հրեշտակի կողմից (գլ. Թ): Ըստ Որոգինէսի (Comm. in Ex. hom. Դ 6)՝ Մովսիսական օրէնքը կարգապահական նպատակ ունէր եւ պատժի ու խստութեան միջոց էր: Քրիստոսի օրէնքն ազատութեան օրէնք է (Յակ. Ա 25):

30 Քրիստոնէական ընծայաբերումը «ձեռակերտ» (բառացի՝ «մարդակերտ») չէ, քանզի Ե՛ւ Մատուցողը, Ե՛ւ Ընծան աստուածային են: Հմմտ. Ա Կոր. Ե 7, Եբր. Թ 11:

31 Լատիներէն տեքստում «որպէսզի մարդկային ընծայաբերում ունենայ»: Շատ հրատարակութիւններում (ինչպէս ANF-ը եւ ռուսերէնը) նախընտրութիւնը տրւում է լատիներէնի տարբերակին՝ այն մեկնաբանութեամբ, որ Օրէնքի նախկին արտաքին զոհաբերութիւնների փոխարէն այժմ պահանջւում է մարդու կողմից լիակատար նուիրաբերում:

32 Այսինքն՝ հրեաներին:

էին գալիս, պատուիրեցի Ինձ ողջակէզներ ու զոհեր մատուցել: Այլ ես նրանց պատուիրեցի՝[33] ձեզանից իւրաքանչիւրն իր ընկերների հանդէպ չարութիւն թող չխորհի իր սրտում եւ սուտ երդում թող չսիրի»[34]: Ուրեմն մենք, քանի որ անմիտ չենք, պարտաւոր ենք հասկանալ մեր Հօր բարութեան իմաստը, երբ խօսում է մեզ հետ՝ կամենալով, որ մենք եւս նրանց նման[35] չմոլորուենք[36]՝ չիմանալով[37] ինչպէս մերձենալ Նրան: Արդ՝ Նա ասում է մեզ. «Աստուծոյ համար զոհը փշրուած սիրտն է»[38]: «Տիրոջ համար հաճելի բուրմունք է այն սիրտը, որը փառաբանում է իր Ստեղծչին»[39]: Ուստի, եղբայրնե՛ր, մենք պարտաւոր ենք կատարեալ լինել մեր փրկութեան հարցում, որպէսզի չարը, մոլորութեան միջոցով մեր մէջ սողանցք գտնելով, մեզ կեանքից դուրս չչպրտի[40]:

Գլուխ Գ

Եւ դարձեալ այս ամէնի մասին ասում է նրանց. «Ինչո՞ւ էք պահում այսօրուայ նման,— ասում է Տէրը.— որպէսզի ձեր բարձր ձայնը լսուի՞: Ես այդպիսի պահք չեմ հաւանում,— ասում է Տէրը,— ոչ էլ՝ իր անձը նուաստացնող մարդուն: Եւ եթէ ձեր պարանոցը կորացնէք օղակի պէս, քուրձ հագնէք եւ ձեր տակը մոխիր փռէք, դարձեալ ձեր պահքն ընդունելի չէք դարձնի»[41]: Իսկ մեզ ասում է. «Ահա՛ այն պահքը, որն Ինձ հաճելի է,— ասում է Տէրը.— լուծի՛ր անիրաւութեան բոլոր

33 Երեմ. Է 22—23

34 Զաք. Ը 17, հմմտ. Է 10:

35 Խօսքը վերաբերում է հրեաներին:

36 Բառնաբասի օրօք հրեաները եւ հաւանաբար որոշ յուդայական քրիստոնեաներ յոյս ունէին, թէ Տաճարի վերականգնումը կը վերակենդանացնէր հրէական կրօնը: Ուստի մոլորութիւնը այստեղ ըստ երեւոյթին Տաճարը վերաշինելու ցանկութիւնն է: Հմմտ. Գործ. ԺԵ 5, Գաղ. Բ 12, Եբր. Թ 11:

37 Լատիներէնում ժխտականի փոխարէն դրական է՝ «որպէսզի մոլորուելիս իմանանք»:

38 Սաղմ. Ծ 19

39 Աստուածաշնչում նման արտայայտութիւն չկայ, սակայն հմմտ. Իրենէոս, Adv. haer. 4. 29. 3:

40 Անգլերէն հրատարակութիւններում՝ «դուրս չհրի»:

41 Ես. ԾԸ 4—5

կապանքները, քանդի՛ր բռնի յարաբերութիւնների կծիկները, ազա՛տ արձակիր նեղեալներին եւ պատռի՛ր բոլոր անիրաւ մուրհակները[42]: Քո հացը կտրի՛ր քաղցածների համար եւ եթէ մերկ տեսնես, հագցրո՛ւ նրան. քո տունը տա՛ր անօթեւաններին. խոնարհ մարդու տեսնելիս մի՛ արհամարհիր նրան ո՛չ դու, ո՛չ էլ քո ընտանիքի անդամներից որեւէ մէկը: Այն ժամանակ քո լոյսը կանուխ է ծագելու, եւ քո բժշկութիւնը շատ արագ է գալու[43], քո առջեւից արդարութիւնն է գնալու[44], եւ Աստուծոյ փառքը գալու է քո ետեւից: Այդ ժամանակ դու կ'աղաղակես, եւ Աստուած կը լսի քեզ, եւ դու մինչ խօսելու լինես, Նա քեզ կ'ասի՝ ահա՛ ես: Եւ եթէ հեռացնես քեզանից կապանքները, ձեռք բարձրացնելն[45] ու տրտունջի խօսքերը եւ քաղցածին ի սրտէ տաս քո հացը եւ ողորմութիւն անես խոնարհ հոգուն...»[46]: Արդ՝ եղբայրնե՛ր, Երկայնամիտը կանխատեսեց այն ժամանակը, երբ Իր սիրեցեալի միջոցով պատրաստուած ժողովուրդն անկեղծութեամբ կը հաւատայ, ուստի մեզ կանխաւ ամէն ինչ բացայայտեց, որպէսզի նրանց օրէնքներին իբրեւ օտարներ չմօտենանք[47]:

42 Լատիներէն տեքստն այստեղ տարբերւում է յունարէնից:

43 Քայքայուած հրէական հասարակութիւնն արագօրէն վերանորոգուելու է: Եբրայագէտները նշում են, որ Եսայու գրքում օգտագործուած «բժշկութիւն» բառի եբրայական համարժէքը բառացի նշանակում է այն «նոր մարմինը», որը տարածւում ու աստիճանաբար փակում է հին վէրքը:

44 Ազգը, դէպի կենք իր ուխտագնացութեան մէջ, անապատում թափառող հրեաների նման վայելելու է Աստուծոյ յատուկ պաշտպանութիւնը: Հմմտ. Ել. ԺԳ 21, ԺԴ 19:

45 Եօթանասնիցի բնագրում χειροτονία-ն է, որը բառացի նշանակում է «ձեռք երկարացնել»: Հեֆելէն ենթադրում է, որ այստեղ խօսքը վերաբերում է կամ սուտ երդում տալու, կամ էլ որեւէ մէկին խփելու ու նեղելու նպատակով ձեռք բարձրացնելուն: ACW-ն թարգմանում է «բռնութիւն», սակայն նշում է, որ այն այլ բան չէ, եթէ ոչ «մատով ցոյց տրուելու ծաղր»-ը եւ համեմատութիւն է անցկացնում Առակ. Զ 13-ի հետ: Նամակի լատիներէն թարգմանիչը, սակայն, այս բառը թարգմանել է «վատ խորհուրդներ», հաւանաբար χείρ (ձեռք) բառը փոխարինելով χείρων-ով (վատ):

46 Եւ. ԾԸ 6—10

47 Ցունարէնն այստեղ խրթին է: Լատիներէն թարգմանութեան մէջ՝ «որպէսզի մենք նորադարձների նման նրանց օրէնքի վրայ չյարձակուենք»:

Գլուխ Դ

Արդ մենք, ներկայ բաների[48] մասին երկար մտորելով, պէտք է փնտրենք այն, ինչը կարող է մեզ փրկել: Ուստի լիովին հեռու մնանք ամէն տեսակ անօրէն գործերից, որպէսզի անօրէնութեան գործերը մեզ երբեք չնուաճեն. եւ ատենք ներկայ ժամանակի մոլորութիւնը[49], որպէսզի սիրուենք ապագայում: Մեր հոգին չտկարացնենք, որպէսզի այն չկարողանայ ընթանալ մեղաւորների ու վատերի հետ, եւ մենք մի օր չնմանուենք նրանց: Մօտ է վերջին գայթակղութիւնը[50], որի մասին գրուած է, ինչպէս ասում է Ենովքը[51]. «Քանզի այն նպատակով Տէրը կրճատեց[52] ժամերն ու օրերը, որ Նրա Սիրելին շտապի եւ հասնի Նրա ժառանգութեանը»: Այսպէս է ասում նաեւ մարգարէն. «Տասը թագաւորութիւններ[53] են թագաւորելու երկրի վրայ, եւ նրանցից յետոյ մի փոքր թագաւոր է բարձրանալու, որը մէկ անգամից խոնարհեցնելու

48 Այսինքն՝ ներկայ ժամանակը, նրա ուղղուածութիւնը՝ մեծ փորձութեան յատուկ արտայայտութեամբ, ուստի գրեթէ «ներկայ ճգնաժամը»: Ադրիանոսի գահակալութեան առաջին տարիներին Տաճարի վերականգնման հրէական յոյսերը կարծես թէ հասել էին իրենց գագաթնակէտին՝ կայսեր հաշտարար քաղաքականութեան շնորհիւ: ANF-ը թարգմանում է «մօտակայ բաները»:

49 Հեֆելէն «ներկայ ժամանակի մոլորութեան» տակ հասկանում է գլխաւորապէս յուդայականների ձգտումը քրիստոնէութեան մէջ պահպանելու հրէական ծէսերն ու սովորութիւնները՝ որպէս անհրաժեշտ պայման փրկութեան համար: Սակայն աւելի հաւանական է Հիլգենֆելդի ու Դրեսսելի կարծիքը, ըստ որի՝ սա առնչւում է հեթանոսների անմաքուր ու ստապատիր ուսմունքի հետ, քանզի սրանից անմիջապէս յետոյ հեղինակը խօսում է մեղաւորների ու վատերի, այսինքն՝ հեթանոսների հետ ունեցած յարաբերութեան մասին, իսկ հրէութիւնից զգուշացնում է աւելի ներքեւում:

50 Տաճարի վերակառուցումը գայթակղութեան քար էր, մի սուր փորձութիւն բազում հրեայ քրիստոնեաների համար. այն «վերջինն» էր, որովհետեւ Նեռը (Հմմտ. Դիդախէ, ԺԶ 4) աշխարհի վերջն էր նախանշելու: Թարգմանութեան մէկ այլ տարբերակ կարող է լինել «Մեծ գայթակղիչը»:

51 Մէջբերումն իր այս տեսքով գոյութիւն չունի Ենովքի պարականոն գրքում, սակայն հեղինակը կարող էր ի մտի ունենալ այդ գրքի որոշակի հատուածները, ինչպէս ՁԹ 61—64, Ղ 17: Լատիներէն թարգմանութեան մէջ Ենովքի փոխարէն դրուած է Դանիէլ: Հմմտ. Դան. Թ 24—27:

52 Մատթ. ԻԴ 22

53 Այսպէս է Եօթանասնիցում, իսկ եբրայական տեքստում ու Վուլգատայում «թագաւորներ»:

է երեք թագաւորների»[54]: [55]Դանիէլը դարձեալ խօսում է այդ մասին. «Եւ տեսնում էի չորրորդ գազանին՝ չար, հզօր եւ աւելի դաժան, քան երկրի բոլոր գազանները, եւ նրանից դուրս եկաւ տասը եղջիւր, եւ մի ուրիշ փոքր եղջիւր բուսաւ դրանց կողքին, որը երեք խոշոր եղջիւրները ենթարկեց մէկին»[56]: Ուրեմն դուք պարտաւոր էք հասկանալ. եւ քանի որ ես ձեզանից մէկն եմ եւ բոլորիդ սիրում եմ իմ անձից առաւել, հետեւաբար խնդրում եմ ձեզ՝ այժմ[57] հո՛գ տարէք ձեզ համար, մի՛ նմանուէք նրանց[58] եւ մի՛ աւելացրէք ձեր մեղքերը՝ ասելով. «Նրանց ուխտը նաեւ մերն է»[59]: Այն մե՛րն է, բայց նրանք, Մովսէսի ձեռքով ստացած լինելով, ի վերջոյ[60] կորցրին այն: Քանզի Գիրքն ասում է. «Եւ Մովսէսը լեռան վրայ էր՝ պահելով քառասուն օր եւ քառասուն գիշեր, եւ Տիրոջից ստացաւ ուխտը՝ քարէ տախտակների վրայ Տիրոջ ձեռքի մատով գրուած»[61]: Բայց նրանք, կուռքերին վերադառնալով, կորցրին

54 Դան. է 24-ի ոչ ճշգրիտ մէջբերումը:

55 Ռուսերէն թարգմանութիւնն աւելացնում է. «Նոյնը պէտք է իմանալ նաեւ թագաւորութիւնների մասին», այսինքն՝ դրանք նոյնպէս իրենց թագաւորների հետ պէտք է կործանուեն:

56 Դան. է 7—8՝ դարձեալ շատ անուղղակի մէջբերուած: Դանիէլի յայտնութենական հաստատումը բաւական բանավէճի նիւթ է եղել: Կասկածելի է, թէ արդեօ՞ք մէջբերումից կարելի է որեւէ որոշակի տեղեկութիւն քաղել նամակի թուականի մասին: Դժուար է արտայայտութիւնը վերագրել հռոմէական կայսրերից որեւէ մէկին:

57 Այսինքն՝ ներկայ ճգնաժամի ժամանակ:

58 Ակնյայտօրէն՝ հրէական ծագումով քրիստոնեաներին, ովքեր տատանւում էին քրիստոնէութեան նկատմամբ հաւատարմութեան մէջ:

59 Այսպէս է յունարէնում: Ուխտը մերն է այն իմաստով, որ նախատիպը վերածուել է իրողութեան (սինագոգը վերածուել է Եկեղեցու), եւ ոչ թէ այն առումով, որ նախատիպը դեռ վաւերական է իրողութեան յայտնութիւնից յետոյ եւս (հմմտ. Երբ. ժ 1, Մատթ. ե 17): Լատիներէն թարգմանութեան մէջ՝ «Ուխտը ե՛ւ նրանցն է, ե՛ւ մերը»: Թւում է, թէ այս տարբերակն աւելի ճիշտ է, քանզի յետագայում հեղինակը խօսում է հրեաների՝ այն կորցնելու մասին:

60 Εἰς τέλος արտայայտութեան թարգմանութիւնը երկբայելի է: Ոմանք թարգմանում են «վերջնականապէս», «յաւիտեան», «ամբողջովին»: Սակայն դժուար է ասել, թէ հրեաները ուխտը յաւիտենապէս կորցրին (Հռոմ. ԺԱ 25, Մատթ. ԻԳ 39, Ղուկ. ԺԳ 35, Յայտ. Է 1—8): Եթէ Բառնաբասն այստեղ մտածում է հրեաների վերջնական դարձի մասին, ապա «ի վերջոյ» թարգմանութիւնն աւելի տրամաբանական է: Այնուամենայնիւ, «յաւիտեան» կամ «ամբողջովին» թարգմանութիւնը ներդաշնակ է հրեաների մասին հեղինակի կարծիքին:

61 Ել. ԼԱ 18, ԼԴ 28

այն: Քանզի Տէրն այսպէս է ասում. «Մովսէ՛ս, Մովսէ՛ս, շտապ իջի՛ր, որովհետեւ մեղանչեց քո ժողովուրդը, որին հանեցիր Եգիպտոսից»[62]: Եւ Մովսէսը, ցած իջնելով, նետեց իր ձեռքից երկու տախտակները, եւ նրանց ուխտը փշրուեց, որպէսզի մեր սրտերում կնքուի սիրելի Յիսուսի ուխտը՝ Նրան հաւատալու յոյսով: Ես կը կամենայի ոչ թէ որպէս վարդապետ, այլ ինչպէս վայել է ձեզ սիրողին[63], շտապով գրել, որ վէճեր թոյլ չտաք ձեզ մօտ[64]. վերջին օրերին ուշադիր լինենք սրան[65]: Քանզի մեր հաւատքի ամբողջ ժամանակահատուածը մեզ ոչնչով չի օգնի, եթէ մենք այժմ անօրէն ժամանակներում եւ ապագայ արհաւիրքներում չդիմանանք, ինչպէս վայել է Աստուծոյ որդիներին: Ուրեմն՝ որպէսզի Խաւարը[66] չթափանցի, հեռու մնանք ամէն ունայնութիւնից եւ կատարելապէս ատենք չար ճանապարհի գործերը: Ինքներդ ձեր մէջ ամփոփուելով՝ մի՛ առանձնացէք[67] իբրեւ արդէն արդարութեան հասածներ, այլ, միատեղ հաւաքուելով[68], խորհրդակցէ՛ք հասարակաց օգտի մասին: Քանզի Գիրքն ասում է. «Վա՜յ նրանց, ովքեր իրենց աչքին իմաստուն են եւ իրենց առջեւ՝ գիտուն»[69]: Լինենք հոգեւոր, լինենք Աստուծոյ կատարեալ տաճարը[70]: Ինչքան որ հնարաւորութիւն

62 Ել. ԼԲ 7, Բ Օր. Թ 12

63 Տես Իգնատիոս, Առ Եփես. Ը 1:

64 Յունարէնում այս նախադասութիւնը քերականօրէն անորոշ է ու անյստակ, եւ լատիներէն թարգմանութիւնը բաց է թողնում այն: Ուստի մեր թարգմանութիւնը մօտաւոր է: Հիլդենֆելդը թարգմանում է. «Բայց քանի որ ձեզ սիրելով չենք կարող չտալ ձեզ այն, ինչ մենք ունենք, ուստի ես, թէեւ ձեր մէջ ամենանուաստն եմ, շտապեցի գրել ձեզ»:

65 Տես Դիդախէ, ԺԶ 1—3: Լատիներէնում «եկէք ուշադիր լինենք»:

66 Սատանայի անուններից մէկը, որը հասկանալի է դառնում այն իրողութեամբ, որ «սատանայի հրեշտակները» կառավարում են Խաւարի ճանապարհը: Նման արտայայտութիւններ տարածուած են վաղքրիստոնէական գրականութեան մէջ:

67 Արդեօ՞ք Բառնաբասը զգուշացնում է իր ընթերցողներին ընդդէմ միայնակեցութեան, որն արդէն սկսւում էր Եգիպտոսում դժուար է ասել: Հայրերը յաճախ խորհուրդ են տալիս կանոնաւոր կերպով յաճախել Եկեղեցու ժողովներին՝ որպէս արդիւնաւէտ միջոց հերետիկոսական ու հերձուածողական հակումների դէմ: Տես Կղեմէս, Լդ 7, Իգնատիոս, Եփես. Ե 3, Մագն. Է, Առ Պող. Զ 1:

68 Հմմտ. Երբ. ժ 24—25:

69 Ես. Ե 21

70 Քարէ տաճար կառուցել յուսալու փոխարէն ընթերցողները պէտք է ձգտեն ամբողջացնել «հոգեւոր տաճարը»: Տես Իգնատիոս, Եփես. Թ 1:

ունենք, խոկանք Աստուծոյ երկիւղով[71], *կատարենք Նրա պատուիրանները, որպէսզի ցնծանք Նրա դատաստանի ժամանակ*[72]: *Տէրն անաչառութեամբ է դատելու աշխարհը*[73]. *իւրաքանչիւրը զարդարուելու է իր արարքների համեմատ: Եթէ բարի է եղել, նրա արդարութիւնն առաջնորդելու է նրան. եթէ չար է եղել, չարութեան վարձը գնալու է նրա առջեւից: Երբեք չհանգստանանք, որպէս թէ կոչուածներ*[74] *լինելու պատճառով, եւ չքնենք մեր մեղքերի մէջ, որպէսզի չար տիրակալը, մեզ վրայ իշխանութիւն վերցնելով, մեզ դուրս չանի Տիրոջ թագաւորութիւնից: Մտածէք նաեւ այս մասին, եղբայրնե՛րս. երբ նման նշաններից ու հրաշքներից յետոյ տեսնում ենք Իսրայէլի մէջ կատարուած դէպքերը եւ նրա այդպիսի լքուածութիւնը, զգոյշ լինենք, չլինի թէ ընկնենք այն վիճակի մէջ, ինչպէս գրուած է. «Շատերն են կանչուածները, բայց քիչ՝ ընտրեալները»*[75]:

Գլուխ Ե

Քանզի Տէրը հանդուրժեց Իր մարմինը մահուան ենթարկել, որպէսզի մենք, մեղքերի թողութիւն ստանալով, մաքրուենք՝ Նրա արեամբ ցողուելու միջոցով[76]: *Քանզի Նրա մասին գրուած է՝ ուղղուած մասամբ Իսրայէլին, մասամբ՝ մեզ: Այնտեղ այսպէս է ասուած. «Նա վէրքեր կրեց մեր անօրէնութիւնների պատճառով եւ հարուածներ ստացաւ մեր մեղքերի պատճառով. Նրա վէրքերով մենք բուժուեցինք: Ոչխարի պէս Նա տարուեց մորթուելու եւ գառան նման անմրմունջ է Իրեն խուզողների առջեւ»*[77]: *Ուստի մենք պարտաւոր ենք խորապէս շնորհակալ լինել Տիրոջից, որ ե՛ւ անցեալում կատարուածները*[78] *յայտնեց*

71 *Ես. Լգ 18*

72 *Լատիներէն թարգմանութեան մէջ այս վերջին հատուածը չկայ, սակայն այն առկայ է նաեւ Կղեմէս Ալեքսանդրացու մօտ (Ցաճախապատում, Բ):*

73 *Հմմտ. Ա Պետ. Ա 17, Հռոմ. Բ 11, Գաղ. Բ 6:*

74 *Այսինքն՝ Եկեղեցու անդամներ. տես Հռոմ. Ա 6:*

75 *Մատթ. Ի 16, ԻԲ 14: Կարեւոր է նկատել, որ սա հայրերի գործերի մէջ առաջին օրինակներից է, երբ մէջբերում է կատարւում Նոր Կտակարանի գրքից եւ դրան նախորդում է հեղինակաւոր բանաձեւը՝ «գրուած է»:*

76 *Հմմտ. Եբր. ԺԲ 24, Ա Պետ. Ա 2:*

77 *Ես. ԾԳ 5, 7, Կղեմէս ԺԶ 7*

78 *Հաւանաբար վերաբերում է Քրիստոսի փրկչական մահուանը:*

մեզ, ե՛ւ ներկայ դէպքերին իրազեկ դարձրեց, ե՛ւ նաեւ ապագայի մասին[79] *անտեղեակ չթողեց: Գիրքն ասում է. «Իզուր չեն ցանցեր լարում թռչունների համար»*[80]: *Դա նշանակում է, որ իրաւացիօրէն է կործանւում այն մարդը, ով, իմացած լինելով արդարութեան ճանապարհը, ընթանում է խաւարի ճանապարհով: Եւ մի բան էլ, եղբայրնե՛րս. եթէ Տէրը հանդուրժեց չարչարուել մեր հոգիների համար՝ Նա, Ով համայն աշխարհի Տէրն էր, Ում Աստուած աշխարհաստեղծման ժամանակ ասաց. «Ստեղծենք մարդ ըստ Մեր պատկերի եւ Մեր նմանութեան»*[81], *արդ ինչպէ՞ս է, որ Նա հանդուրժեց մարդու ձեռքից չարչարանք կրել: Իմացէ՛ք. մարգարէները, ովքեր Նրանից էին շնորհ ստացել*[82], *մարգարէացան Նրա մասին: Քանի որ մահը վերացնելու*[83] *եւ մեռելներից յարութիւնը ցոյց տալու*[84] *համար Նա պէտք է Իրեն մարմնացած յայտնէր*[85], *ուստի հանդուրժեց դա, որպէսզի կատարի հայրերին տուած խոստումը*[86], *եւ Ինքն էլ, երկրի վրայ գտնուելով ու Իր համար նոր ժողովուրդ պատրաստելով, ցոյց տայ, թէ յարութիւն առնելով Ինքը դատելու է: Ի վերջոյ, այսպէս սովորեցնելով Իսրայէլին եւ այսքան մեծ հրաշքներ ու նշաններ գործելով՝ քարոզեց եւ չափազանց սիրեց նրան: Երբ ընտրում էր առաքեալներին, ովքեր քարոզելու էին Իր Աւետարանը, Նա*

79 *Այսինքն՝ գալիք դատաստանի մասին:*

80 *Առակ. Ա 17. մէջբերումը Եսթանասնիցից է:*

81 *Ծն. Ա 26: Բառնաբասը երեք նկատառում է առաջարկում՝ ցոյց տալու համար Մարդեղութեան առանձնայատկութեան անհրաժեշտութիւնը. ա) Իր մահով ու յարութեամբ Յիսուսը ոչնչացրեց մահուան զօրութիւնը. բ) մարդիկ կարող են ապահովաբար մօտենալ Նրան, Ում չսքօղուած տեսքը տանելի չէր նրանց համար. գ) Յիսուսը լրացրեց այն ամէնը, ինչ մարգարէներն ասել էին Նրա տառապանքների մասին: Հայրաբանների մեծ մասը համարում է, որ հեղինակն այս մէջբերման յոգնակիութեան մէջ տեսնում է Երրորդութեան ակնարկութիւնը:*

82 *Այսինքն՝ մարգարէանալը: Նոր Կտակարանում ընդհանուր առմամբ «շնորհ» թարգմանուած բառը երբեմն նշանակում է նաեւ «պաշտօն» կամ «կարողութիւն», որն Աստուծոյ շնորհով հեղուած է անձնաւորութեան վրայ՝ այլոց փրկութեան համար (հմմտ. Եփես. Դ 7, Ա Պետ. Դ 10):*

83 *Հմմտ. Բ Տիմ. Ա 10:*

84 *Հրեաները կա՛մ մերժում էին յարութեան հնարաւորութիւնը (ինչպէս սադուկեցիները), կա՛մ էլ դրա գիտակցութիւնը չունէին (Ա Կոր. ԺԵ 20):*

85 *Հմմտ. Ա Տիմ. Գ 16: Յունարէնի համատեքստում շեշտուած է Աստուծոյ հրամանից բխող անհրաժեշտութիւնը:*

86 *Այստեղից էր սկսւում յունարէն բնագիրը մինչեւ Սինայի ձեռագրի յայտնաբերումը:*

ընտրեց նրանց, ովքեր բոլոր մեղքերի մէջ առաւել անօրէններ էին[87], որպէսզի ցոյց տայ, որ «չի եկել արդարներին հրաւիրելու, այլ մեղաւորներին»[88]. եւ այնժամ բացայայտեց, որ Ինքն Աստուծոյ Որդին է[89]: Քանզի եթէ Նա չգար մարմնացած, մարդիկ էլ չէին փրկուի Նրան տեսնելով[90], քանի որ նրանք ի վիճակի չեն ուղղակի նայելու [անգամ] Նրա ձեռագործ արեգակի (որը դատապարտուած է կործանման) ճառագայթներին[91]: Զէ՞ որ Աստուծոյ Որդին մարմնացած եկաւ ա՛յն բանի համար, որ վերջնականապէս ի մի հաւաքի Իր մարգարէներին[92] մահուան հալածանքի ենթարկածների մեղքերը: Զէ՞ որ այդ պատճառով Նա հանդուրժեց: Քանզի Աստուած ասում է, որ Իր մարմնի վէրքը նրանցից է[93]. [94]«Երբ հարուածեն նրանց հովուին, այնժամ հօտի ոչխարները եւս կը կորչեն»[95]: Ինքը կամեցաւ այդպիսի չարչարանք կրել, քանզի պէտք է փայտի վրայ չարչարուէր: Քանզի Նրա մասին մարգարէացածն ասում

87 Այս խօսքը հեթանոս փիլիսոփայ Կելսոսին առիթ է տուել վարկաբեկելու քրիստոնէութիւնն ու նրա քարոզիչներին (տես Որոգինէս, Ընդդէմ Կելսոսի, Ա 63): Հեղինակի խօսքն, անշուշտ, չափազանցութիւն է: Բառնաբասը հաւանաբար նկատի ունի Մատթէոս մաքսաւորին, Պետրոսին (Ղուկ. Ե 8), Սաւուղ-Պօղոսին (Ա Կոր. ԺԵ 9, Ա Տիմ. Ա 15), Յուդային եւն: Յերոնիմոսը մէջբերում է այս հատուածը (Adv. Pel. 3.2), սակայն այն վերագրում Իգնատիոսին:

88 Մատթ. Թ 13, Մարկ. Բ 17, Ղուկ. Ե 32

89 Թերեւս այն հրաշքների միջոցով, որոնք ուղեկցում էին առաքեալների ընտրութեանը (Ղուկ. Ե 8, Յովհ. Ա 46, Բ 11, հմմտ. Բ Պետ. Ա 16—18): Սակայն «մեղաւորներից» «սուրբեր» արարելու զօրութիւնն ինքնին բաւարար ապացոյց է Քրիստոսի աստուածութիւնը հաստատելու համար:

90 Լատիներէն թարգմանութեան մէջ՝ «ինչպէ՞ս կարող էին մարդիկ փրկուել Նրան տեսնելով»:

91 Տարածուած արտայայտութիւն հայրերի մօտ, ինչպէս Թէոփիլոս, Ընդդէմ Աւտոլիկոսի, Ա 5, Մինուկիոս Ֆելիքս, Օկտաւիոս, ԼԲ 5, Կիւրեղ Երուսաղէմացի, Կոչումն Ընծայութեան, Ժ 7, ԺԲ 13:

92 Սինայի ձեռագրում «նրանց մարգարէներին», սակայն սա բացայայտ աղաւաղում է: Հմմտ. Ղուկ. ԺԱ 47:

93 Ես. ԾԳ 8-ի անուղղակի արտայայտութիւնն է: Լատիներէն թարգմանութեան մէջ՝ «Նրա մարմնի վէրքերով մենք ամէնքս բժշկուեցինք»:

94 Լատիներէն թարգմանութիւնն աւելացնում է՝ «եւ մէկ այլ մարգարէի մօտ»:

95 Զաք. ԺԳ 7, Մատթ. ԻԶ 31: Մէջբերումն ըստ Սինայի ձեռագրի է: Աստուածաշնչում՝ «Կը հարուածեմ հովուին, եւ հօտի ոչխարները կը ցրուեն»:

է. «Փրկի՛ր իմ հոգին սրից»[96] եւ[97] «գամի՛ր իմ մարմինը»[98], «քանզի չարերի խմբերը պաշարեցին ինձ»[99]: Եւ դարձեալ ասում է. «Ահա իմ թիկունքը դրեցի հարուածների տակ եւ իմ ծնօտը՝ ապտակների, իսկ իմ երեսը հաստատեցի ամուր քարի նման»[100]:

Գլուխ Զ

Արդ՝ երբ կատարեց պատուիրանը[101], ի՞նչ է ասում. «Ո՞վ է ինձ հետ վիճողը, թող կանգնի իմ դիմաց. կամ ո՞վ է ինձ մեղադրողը, թող մօտենայ Տիրոջ Որդուն[102]: Վա՜յ ձեզ, որովհետեւ դուք բոլորդ մաշուելու էք ձորձի նման, եւ ցեցն է ուտելու ձեզ»[103]: Եւ դարձեալ ասում է մարգարէն, թէ որպէս ամուր վէմ դրուել է փշրուելու[104]. «Ահա Սիոնի հիմքում դրել եմ թանկագին, ընտիր վէմ, անկիւնաքար փառաւոր»[105]: Այնուհետեւ ի՞նչ է ասում. «Եւ ով հաւատայ[106] նրան, յաւիտեան կ՚ապրի»[107]: Ուրեմն մեր յոյսը քարի վրա՞յ է. ո՛չ, այլ Տէրն ամրութիւնը հաստատել է Իր մարմնի մէջ: Քանզի ասում է. «Եւ ինձ հաստատեց որ-

96 Սաղմ. ԻԱ 21

97 Լատիներէն թարգմանութեան մէջ չկայ «եւ», ուստի երեք մէջբերումները միախառնուած են:

98 Սաղմ. ՃԺԸ 120

99 Սաղմ. ԻԱ 17

100 Ես. Ծ 6—7: Այսինքն՝ մնացի անայլայլ:

101 Այսինքն՝ մեռաւ մեր մեղքերի համար: Տես Ղուկ. ԻԴ 26:

102 Այսինքն՝ Քրիստոսին: Հմմտ. Մատթ. ԺԲ 18, Գործ. Գ 13, Դիդախէ Թ 2—3, Կղեմէս ԾԹ 2—4, Պողիկարպոսի Նահատակութիւնը, ԺԴ 1, Ի 2, Առ Դիոգնետոս Ը 9, 11:

103 Ես. Ծ 8—9

104 Ենթադրւում է, թէ հեղինակն անուղղակի մէջբերում է կատարում Ես. Ը 14-ի եբրայական տեքստից: Եօթանասնիցում արտայայտութիւնը ժխտական է: Վերջին բառի իմաստը, սակայն, յունարէնում լիովին յստակ չէ: Ոմանք այն ընդունում են որպէս Մատթ. ԻԱ 44-ի ակնարկութիւն, մինչ ուրիշներ թարգմանում են «յղկուելու»՝ այն ենթադրութեամբ, որ յունարէն τρίβω բառը նշում է հեղինակի այն միտքը, որ Քրիստոսը՝ որպէս «ամուր վէմ», պէտք է «յղկուի» յատուկ նպատակի համար: Թւում է, թէ այս գաղափարը ներդաշնակ է յաջորդ նախադասութեանը:

105 Ես. ԻԸ 16

106 Այսպէս է Սինայի ձեռագրում: Սակայն թարգմանիչների մեծ մասը նախընտրում է թարգմանել՝ «վստահել, յուսալ»:

107 Հմմտ. Ես. ԻԸ 16:

պէս ամուր վէմ»[108]: Եւ մարգարէն դարձեալ ասում է. «Այն վէմը, որ չինողներն արհամարհեցին, դարձաւ անկիւնաքար»[109]: Եւ դարձեալ ասում է. «Սա է մեծ ու սքանչելի օրը, որ Տէրն արարեց»[110]: Ես ձեզ առաւել պարզ եմ գրում, որպէսզի հասկանաք. ես ձեր սիրոյ մրուրն եմ[111]: Արդ՝ ի՞նչ է դարձեալ ասում մարգարէն. «Զարերի ժողովը պաշարեց ինձ»[112], «նրանք շրջապատեցին ինձ, ինչպէս մեղուները՝ մեղրամոմը»[113], եւ «իմ պատմուճանի վրայ վիճակ գցեցին»[114]: Արդ՝ քանի որ Նա պէտք է մարմնով յայտնուէր ու չարչարուէր[115], չարչարանքի մասին կանխաւ յայտնուեց: Քանզի մարգարէն ասում է Իսրայէլի մասին. «Վա՜յ նրանց հոգիներին, ովքեր իրենց մէջ չար խորհուրդ են խորհում[116]՝ ասելով. «Կաշկանդենք արդարին, քանի որ նա մեզ պիտանի չէ»[117]: Ի՞նչ է ասում նրանց միւս մարգարէն՝ Մովսէսը[118]. «Ահա Տէր Աստուած այսպէս է ասում. «Ներս մտէք այն բարերար երկիրը, որի համար Տէրը երդուել է Աբրահամին, Իսահակին ու Յակոբին, եւ ժառանգեցէ՛ք այն՝ կաթ ու մեղր բխող երկիրը»»[119]: Սովորեցէք, թէ ի՛նչ է այս գիտելիքը[120]: Ցուսացէք, ասում է, Յիսուսին, Ով մարմնով

108 Ես. Ծ 7
109 Սաղմ. ՃԺԷ 22, Մատթ. ԻԱ 42
110 Սաղմ. ՃԺԷ 24, Ա Պետ. Բ 6
111 Հմմտ. Ա Կոր. Դ 13: Իմաստը հաւանաբար սա է. «Իմ սէրն այնքան մեծ է ձեր հանդէպ, որ ես պատրաստ եմ ձեզ համար ամէն բան անել կամ լինել»:
112 Սաղմ. ԻԱ 17
113 Սաղմ. ՃԺԷ 12
114 Սաղմ. ԻԱ 19
115 Հմմտ. Ա Տիմ. Գ 16:
116 Ես. Գ 9
117 Այս մէջբերումը Ես. Գ 10-ն է ըստ Եօթանասնից բնագրի: Սակայն եբրայական տեքստը նախընտրողները սա համարում են մէջբերում Իմաստ. Բ 12-ից, քանի որ Եսայու եբրայական տարընթերցուածը տարբեր է: Եթէ այդպէս է, ապա սա երկրորդականոն գրքերից մէջբերում կատարելու առաջին դէպքերից է:
118 Լատիներէնում՝ «Եւ նաեւ Մովսէսն է ասում նրանց»:
119 Ել. Լ Գ 1, 3, Ղեւ. Ի 24
120 Այսինքն՝ հասկացէք այս խօսքերի իմաստը: «Գիտելիք»-ի բնագրային բառը γνῶσις-ն է, գիտելիք, որը յատուկ է վկայուած քրիստոնեաներին, որի միջոցով նրանք աւելի խորութեամբ են հասկանում աստուածաշնչական, մասնաւորապէս հինկտակարանեան խորհուրդներն ու աստուածային տնօրինութեան նպատակները: Գիտնականները նշում են նաեւ, որ «գիտելիքն» իր մէջ պարունակում է նաեւ Հին Կտակարանի այլաբանական մեկնութիւնը:

յայտնուելու է ձեզ: Քանզի անցողիկ «երկիրը» մարդն է[121], որովհետեւ Ադամի արարումը երկրի երեսից կատարուեց: Ուրեմն ի՞նչ է ուզում ասել. «Այդ բարերար երկիրը, կաթ ու մեղր բխող երկիրը»[122]: Օրհնեալ է, եղբայրնե՛ր, մեր Տէրը, որ մեր մէջ իմաստութիւն եւ ըմբռնողութիւն է դրել: Քանզի մարգարէն Տիրոջ առակն է ասում. «Ո՞վ կը հասկանայ, եթէ ոչ իմաստունն ու գիտունը եւ իր Տիրոջը սիրողը»[123]: Որովհետեւ Նա, մեղքերի թողութեամբ մեզ վերանորոգելով, այլ կերպարանք տուեց մեզ[124], որպէսզի մանկան հոգի ունենանք եւ Նրա միջոցով վերստեղծուենք[125]: Քանզի Գիրքը մեր մասին է խօսում, երբ ասում է Որդուն. «Արարենք մարդուն ըստ Մեր պատկերի ու Մեր նմանութեան, եւ թող նա իշխի երկրի գազանների, երկնքի թռչունների ու ծովի ձկների վրայ»[126]: Եւ տեսնելով մեր բարի արարումը[127]՝ Տէրն ասաց. «Աճեցէք, բազմացէք եւ լցրէք երկիրը»[128]: Այս ամէնը՝ Որդուն: Դարձեալ ձեզ ցոյց կը տամ, թէ Տէրն ինչ է մեզ ասում[129]: Երկրորդ արարումը Նա կատարեց վերջին ժամանակներում: Տէրն ասում է. «Ահա վեր-

121 Այստեղ, հեղինակի այլաբանական մեկնութեամբ, «երկիր»-ը նշանակում է Քրիստոսի մարդկային բնութիւնը: Այստեղ Քրիստոսի տառապանքի մասին կարելի է կրկնակի ակնարկութիւն տեսնել. Նրա՝ երկրից Երկրորդ Ադամ դառնալը եւ ֆիզիկական ցաւի ու մահուան միջոցով առաջին Ադամին ազատագրելը:
122 Այստեղ սկսւում է նոյն հատուածի մէկ ուրիշ այլաբանական մեկնութիւն: Կաթ ու մեղր բխող երկրի տակ հասկացւում են Փրկչի կողմից վերածնուած կամ վերստեղծուած քրիստոնեաները՝ Աստուծոյ որդիները:
123 Նման խօսք Աստուածաշնչում չկայ. հմմտ. Ես. Ի 13, Առակ. Ա 6, Սիր. Ա 10: Լատիներէն թարգմանութեան մէջ՝ «քանզի մարգարէն ասում է՝ ո՞վ կը հասկանայ Տիրոջ առակը...»:
124 Հմմտ. Եփես. Դ 22—24: ACW-ն «կերպարանք»-ը թարգմանում է «կնիք»: Այդ դէպքում տես Իգնատիոս, Մագն. Ե 2. «Հաւատացեալները, սիրով քաջալերուած, Յիսուս Քրիստոսի միջոցով կրում են Հայր Աստուծոյ կնիքը»:
125 Ցունարէնն այստեղ շատ թերի է ու անորոշ: Լատիներէն թարգմանութեան մէջ՝ «վերստեղծուել Սուրբ Հոգով»:
126 Ծն. Ա 26
127 Լատիներէնում՝ «բարի արարած մարդուն»:
128 Ծն. Ա 28
129 Լատիներէնում՝ «ինչ վերաբերում է մեզ»:

ջիններին դարձնում եմ[130] առաջիններին նման»[131]: Արդ՝ մարգարէն ա՛յս մասին[132] յայտարարեց. «Ներս մտէք կաթ ու մեղր բխող երկիրը եւ տիրեցէ՛ք դրան»[133]: Իմացի՛ր, ուրեմն, մենք վերստեղծուել ենք[134], ինչպէս մէկ ուրիշ մարգարէի մօտ ասուած է. «Ահա,— ասում է Տէրը,— կը հանեմ նրանցից (ում նախատեսել է Տիրոջ Հոգին) քարէ սրտերը եւ փոխարէնը կը դնեմ մարմնեղէն սրտեր»[135], այսինքն՝ որ Նա Իրեն յայտնելու էր[136] մարմնով եւ բնակուելու էր մեր մէջ: Քանզի մեր սրտի կացարանը, եղբայրնե՛ր, Տիրոջ սրբազան տաճարն է[137]: Որովհետեւ Տէրը դարձեալ ասում է[138]. «Ես որտե՞ղ երեւամ իմ Տէր Աստուծոյ աչքին եւ փառաւորուեմ»[139]: Նա ասում է[140]. «Ես իմ եղբայրների ժողովում[141] կը խոստովանեմ Քեզ եւ կը գովերգեմ Քեզ սրբերի ժողովում»[142]: Մի՞թէ այդ մենք չենք[143], որոնց Նա տարել է բարեբեր երկիր: Իսկ ի՞նչ է «կաթն ու մեղրը». այն, որ երեխան նախ մեղրով, ապա եւ կաթով է կենդանի մնում: Արդ՝ մենք եւս աւետեաց հաւատքով ու խօսքով[144] կենդանացած՝ ապրենք ու նուաճենք երկիրը: Վերեւում մենք ասացինք[145]. «Թող աճեն ու բազմանան եւ թող իշխեն ձկներին»[146]: Արդ՝ ո՞վ կարող է այժմ տիրել գազաններին կամ ձկներին եւ կամ երկնքի թռչուններին: Մենք պէտք է իմանանք, որ տիրելն իշխանութիւն է, որպէսզի

130 Լատիներէնում՝ «դարձնելու եմ»:
131 Այս տողերը չկան Աստուածաշնչում, սակայն հմմտ. Մատթ. ԺԹ 30, Ի 16, նաեւ Ես. ԽԳ 18—19, Բ Կոր. Ե 17, Եփես. Ա 10, Յայտ. ԻԱ 5:
132 Այսինքն՝ երկրորդ արարման, քրիստոնէական վերածննդի մասին:
133 Ել. ԼԳ 3
134 Հմմտ. Գաղ. Զ 15:
135 Եզեկ. ԺԱ 19, ԼԶ 26, հմմտ. Եփես. Գ 17:
136 Լատիներէնում՝ «Նա յայտնուելու էր»:
137 Հմմտ. Եփես. Բ 21:
138 Այսինքն՝ Դաւիթը՝ Աստուծոյ հրամանով ու ներշնչմամբ:
139 Հմմտ. Սաղմ. ԽԱ 3:
140 Սինայի ձեռագրում չկայ «Նա ասում է»:
141 Լատիներէնում՝ «իմ եղբայրների մէջ, ժողովում»:
142 Սաղմ. ԻԱ 23, ԽԱ 3, ՃԷ 4, Եբր. Բ 12
143 Այսինքն՝ Եկեղեցին:
144 Սա մեկնաբանւում է նաեւ Աւետարաններում գրուած խօսքի եւ Եկեղեցու ուսմունքի իմաստով:
145 Լատիներէնում՝ «Սակայն Նա վերեւում ասաց»:
146 Ծն. Ա 28

մարդը տիրի հրամայելով[147]: Եւ եթէ այժմ դա չի կատարւում, ապա Նա մեզ ասել է, թէ երբ է կատարուելու. երբ մենք այնքան կատարելագործուենք, որ դառնանք Տիրոջ ուխտի ժառանգներ[148]:

Գլուխ Է

Մի՞թէ չէք մտածում, ցնծութեա՛ն որդիներ, որ բարի Տէրն ամէն ինչ կանխաւ յայտնեց մեզ, որպէսզի իմանանք, որ ամէն բանի համար շնորհակալ լինելով՝ պատրաստ ենք գովաբանելու Նրան: Եթէ Աստուծոյ Որդին, լինելով Տէր, Ով «դատելու է կենդանիներին ու մեռեալներին»[149], չարչարուեց, որպէսզի Իր վէրքը մեզ կեանք պարգեւի, ուրեմն հաւատանք, որ Աստուծոյ Որդին չէր կարող չարչարանք կրել, եթէ ոչ՝ մեզ համար: Այլ նոյնիսկ խաչուելու ժամանակ քացախով ու լեղիով յագեցուեց[150]: Լսէ՛ք, թէ Տաճարի[151] քահանաներն ինչպէս են բացատրել գրուած պատուիրանը: «Նա, ով պահքի օրերին չի պահում, մահուամբ պիտի ոչնչացուի»[152],— պատուիրել է Տէրը. քանի որ Ինքը եւս Իր հոգու անօթը[153] պէտք է զոհաբերէր մեր մեղքերի համար, որպէսզի զոհասեղանին բերուած Իսահակի օրօք հաստատուած ծէսն իր լրումին հասնէր: Արդ՝ ի՞նչ է ասում մարգարէն. «Եւ թող ուտեն բոլոր մեղքերի թողութեան համար պահքի ժամանակ մատուցուող նոխազի մսից», լա՛ւ ուշադիր եղէք, «եւ միայն բոլոր քահանաները թող ուտեն

147 Ցարութիւնից յետոյ ու դատաստանից յետոյ, երբ ընտրեալները դառնան ուխտի կատարեալ ժառանգորդներ, նրանք այն իշխանութիւնն ու հեղինակութիւնն են ունենալու ողջ արարչութեան վրայ, որոնք Ադամն ունէր սկզբնական վիճակում (Ծն. Ա 28, Բ Պետ. Գ 13): Այս խօսքը կարելի է համեմատել «Մեսիական խաղաղութեան» գաղափարի հետ (Ես. ԺԱ 6, Հռոմ. Ը 19, Պապիաս, Պատարիկ Ա):
148 Սրանք «գնոսիսի» կամ վերեւում արտայայտուած սուրբգրային հատուածների թաքուն հոգեւոր իմաստների բացայայտման օրինակներ են: Նման մեկնաբանութիւններ դեռ յաջորդելու են:
149 Բ Տիմ. Դ 1
150 Հմմտ. Մատթ. ԻԷ 34, 48:
151 Լատիներէնում՝ «ժողովրդի»:
152 Հմմտ. Ղեւ. ԻԳ 29:
153 Այսինքն՝ Իր մարմինը:

անլուայ աղիքները՝ քացախով»[154]: Ցանուն ինչի՞: Որովհետեւ «Ինձ[155], որ պէտք է Իմ մարմինը մատուցեմ Իմ նոր ժողովրդի[156] մեղքերի համար, դուք լեղի ու քացախ էք տալու[157]. միայն դուք կերէք, մինչ ժողովուրդը պահելու եւ կոծելու է քուրձի ու մոխրի վրայ», որպէսզի ցոյց տայ, որ նրանց ձեռքով[158] Ինքը շատ չարչարանքներ է կրելու: Ուշադի՛ր եղէք, թէ ինչ է պատուիրել[159]. «Վերցրէք մի զոյգ ընտիր ու միանման նոխազ եւ մատուցէք, եւ քահանան թող դրանցից մէկը վերցնի՝ մեղքերի համար ողջակիզելու նպատակով»[160]: Իսկ միւսն ի՞նչ են անելու: Ասում է, թէ միւսն անիծեալ է[161]: Ուշադիր եղէք, թէ ինչպէ՛ս է բացայայտուում Ցիսուսի[162] կերպարը: «Եւ ամէնքդ թքէք, խոցէք ու կարմիր բուրդ կապէք նրա գլխին եւ այդ վիճակում նետէք անապատ»[163]: Այդպէս անելուց յետոյ նա, ով պահում է նոխազը, նրան տանում է անապատ, քանդում է բուրդը եւ այն դնում մամխեանի[164] կոչուած թփի վրայ, որի ընձիւղները[165] սովոր ենք դաշտում գտնելով ուտել: Այսպէս միայն[166] մամխենու պտուղներն են քաղցր: Իսկ սա ի՞նչ է նշանակում: Ուշադի՛ր եղէք: Մէկին՝ դէպի զոհասեղան, միւսն՝ անիծեալ,

154 Այս խօսքը չկայ ո՛չ Աստուածաշնչում, ո՛չ էլ Թալմուդում: Արդեօք հեղինակն անձամբ ծանօթ է եղել նման հրէական ծէսի՝ յստակ չէ: Հեֆելէն նշում է, որ «հրէական ծէսերին վերաբերող որոշ կեղծ աւանդութիւններ են գոյութիւն ունեցել Բ դարի քրիստոնեաների, ինչպէս Բառնաբասի, այնպէս էլ Ցուստինոսի (Երկխօսութիւն ընդդէմ Տրիփոնի, խ) ու Տերտուղիանոսի (Ընդդէմ հրեաների, ԺԴ, Ընդդէմ Մարկիոնի, Գ 7) մօտ»: Հմմտ. Թիւ. ԻԹ 7:

155 Խօսողը Քրիստոսն է:

156 Այսինքն՝ քրիստոնեաների: Հմմտ. Ղուկ. Ա 17:

157 Հմմտ. Սաղմ. ԿԸ 22, Մատթ. ԻԷ 34, 48:

158 Լատիներէնում՝ «նրանց համար»:

159 Լատիներէնում՝ «ինչպէս կատարել պատուիրանը»:

160 Հմմտ. Ղեւ. ԺԶ 7: Սինայի ձեռագիրն ունի՝ «մէկը որպէս ողջակէզ, միւսը՝ մեղքերի համար»:

161 Հմմտ. Ղեւ. ԺԶ 8, 10, նաեւ Դիդախէ, ԺԶ 5:

162 Սինայի ձեռագրում՝ «Աստուծոյ», սակայն ուղղուած է՝ «Ցիսուսի»:

163 Նման բան չկայ ո՛չ Աստուածաշնչում, ո՛չ Թալմուդում, սակայն նոյնը նշում են դարձեալ Ցուստինոսն ու Տերտուղիանոսը:

164 Սինայի ձեռագրում՝ ραχηλ, սակայն գիտնականների կարծիքով պէտք է լինի ράχος, որը մոչենու մի տեսակ է:

165 Լատիներէնում՝ «պտուղները»:

166 Լատիներէնում՝ «միայն այս»:

եւ անիծեալը պսակով է զարդարուած[167]: Երբ այդ օրը[168] Նրան տեսնեն կարմիր պատմուճանը[169] մարմնին հագած, ասելու են. «Սա նա չէ՞, ում մենք մի ժամանակ խաչեցինք՝ արհամարհելով, խոցելով եւ թքելով. ճշմարտապէս սա Նա է[170], Ով այն ժամանակ ասում էր, թէ Ինքն Աստուծոյ Որդին է»: Քանզի որքա՜ն նման է Նրան[171]: Այդ պատճառով էլ նոխազները պէտք է նման լինեն իրար՝ գեղեցիկ ու հաւասար, որպէսզի երբ տեսնեն, որ Նա գալիս է, ապշեն նոխազի հետ ունեցած նմանութիւնից[172]: Տեսէ՛ք ուրեմն, նոխազն[173] ապագայում չարչարանք կրած Ցիսուսի կերպարն է: Իսկ ինչո՞ւ են բուրդը դնում փշերի մէջ: Դա Եկեղեցում հաստատուած Ցիսուսի կերպարն է. [174]որպէսզի ցոյց տայ, որ նա, ով կը ցանկանայ կարմիր բուրդը վերցնել, պէտք է շատ չարչարանքների ենթարկուի, քանզի փուշը սոսկալի է, եւ դրան տիրացողը պէտք է վշտեր կրի: Ուստի ասում է. «Ինձ տեսնել եւ Իմ թագաւորութիւնը ճանաչել ցանկացողները պէտք է վշտի ու չարչարանքի միջոցով ստանան Ինձ»[175]:

167 Ակնարկւում է Տիրոջ փշէ պսակը:

168 Այսինքն՝ Տիրոջ երկրորդ գալստեան ու դատաստանի օրը. Հմմտ. Ա Կոր. Գ 13, Ա Թես. Ե 4:

169 Հմմտ. Ցայտ. Ա 13, նաեւ Մատթ. ԻԷ 28, Իմաստ. Ե 3, 5:

170 Բառացի՝ «Նա էր»:

171 Այսպէս է Սինայի ձեռագրում: Սակայն թարգմանիչների զգալի մասը համարում է, որ այստեղ տեքստային աղաւաղում գոյութիւն ունի, քանզի յստակ չէ, թէ խօսքը վերաբերում է Փրկչի հետ Ցիսուսի ունեցած նմանութե՞նը, նոխազների իրար հետ ունեցած նմանութե՞նը, թէ՞ Ցիսուսի նմանութեանը նոխազի հետ:

172 Այս հատուածի իմաստը հետեւեալն է. ժողովրդի մեղքերի համար մատուցուող նոխազների նմանութիւնը կանխատեսում էր Ցիսուս Քրիստոսի մէկութիւնը: Անիծեալ նոխազի վրայ դրուած կարմիր բուրդը նշանակում էր Քրիստոսի պսակումն ու փառաւորումը որպէս արքայի, եւ Նրա երկրորդ գալստեան ժամանակ հրեաները սարսափով նկատելու եւ ճանաչելու են, որ փառաւորուած Քրիստոսը Նա է, Ում իրենք անիծեցին ու խոցեցին (Յովհ. ԺԹ 37, Ցայտ. Ա 7): Խոցելն, անշուշտ, իրականում կատարուեց հռոմայեցիների կողմից, սակայն պատասխանատուն հրեաներն էին:

173 Լատիներէնը չունի «նոխազը»:

174 ANF-ն աւելացնում է. «Նրանք բուրդը դնում են փշերի մէջ, (որպէսզի...)»:

175 Փրկչի այս խօսքը հաւանաբար Մատթ. ԺԶ 24-ի այլափոխութիւնն է. Հմմտ. Մատթ. ԺԱ 12, Ղուկ. ԺԶ 16, Գործ. ԺԴ 22:

Գլուխ Ը

Եւ ո՞ւմ կերպարն է թւում ձեզ, որ պատուիրել է Իսրայէլին[176], *որ այրերը, որոնց մէջ մեղքերը կատարեալ են*[177], *երինջ մատուցեն եւ այն մորթելով այրեն. եւ ապա երեխաները մոխիրը հաւաքեն ու լցնեն անօթների մէջ, կարմիր բուրդն ու զոպան*[178] *փաթաթեն փայտի*[179] *վրայ (ահա դարձեալ խաչի կերպարը եւ կարմիր բուրդը*[180]*), եւ այդպիսով տղաները մէկ առ մէկ սրսկեն ժողովրդի վրայ, որպէսզի սրբուեն մեղքերից*[181]*: Հասկանո՞ւմ էք, թէ ինչ պարզութեամբ է ասում ձեզ*[182]*. երինջը*[183] *Յիսուսն է, երինջը զոհաբերող մեղաւոր այրերը Նրան մորթելու տանողներն են: Այնուհետեւ չկա՛ն այլեւս այրերը, չկա՛յ այլեւս մեղաւորների փառքը*[184]*: Սրսկող տղաները, որոնք մեզ մեղքերի թողութիւն ու սրտի մաքրագործում աւետեցին, եւ որոնց [Տէրը] տուել է Աւետարանը քարոզելու իշխանութիւնը, տասներկուսը պիտի լինէին՝*

176 Այն, ինչ յաջորդում է, Թիւ. ԺԹ-ի չափազանցուած վերարտադրութիւնն է:

177 ACW-ն թարգմանում է՝ «այրերը, ովքեր արդէն ճերմակել են մեղքից»: Այդ թարգմանութեան համաձայն՝ ծեր մարդկանց մասին Բառնաբասի ոչ այնքան գովելի բնորոշումը հաւանաբար բխում է այն «մեղաւորների» կերպարներից, ովքեր հանդէս են գալիս Մատթ. Իե 45-ում:

178 Զոպան մանրատերեւ ու մանրածաղիկ խոտաբոյս է, որի ցօղուններից էին պատրաստում սրսկման համար օգտագործուող մշտիկը:

179 Սինայի ձեռագրում «փայտերի»:

180 Սինայի ձեռագիրն աւելացնում է՝ «եւ զոպան»:

181 Սբ Պօղոս առաքեալը յիշում է երինջի մոխրով ու զոպայով սրսկման արարողութիւնը՝ ցոյց տալու համար Քրիստոսի զոհաբերութեան ազդեցութիւնները (Եբր. Թ 13, 19):

182 Հեղինակը, սակայն, դարձեալ նշում է Աստուծոյ խօսքի թաքուն, այլաբանական իմաստը:

183 Սինայի ձեռագրում «Օրէնքը Քրիստոս Յիսուսն է», սակայն թարգմանիչների մեծ մասը հակուած է լատիներէն տարբերակի կողմը:

184 «Զկան այլեւս այրերը» արտայայտութիւնը հաւանաբար նշում է այդ դաժան մարդկանց դուրս նետման մաքրագործութիւնը: Նրանց «փառքը» երինջի՝ Քրիստոսի կերպարի, զոհաբերութեան մէջ է: Բառնաբասը կարծես թէ ասում է՝ եկէք մոռանանք այս ցաւալի մարդկանց ու նրանց ցաւալի զոհաբերութիւնը: Այնպէս որ շատերի այն ենթադրութիւնը, թէ այստեղ տեքստն աղաւաղուած է, այնքան էլ ընդունելի չէ: Հեֆելէն այս նախադասութիւնը յետագայի յաւելում է նկատում, քանզի այն չկայ հին լատիներէն թարգմանութեան մէջ:

ըստ ցեղերի վկայութեան[185]*, քանի որ Իսրայէլի ցեղերը տասներկուսն էին: Իսկ ինչո՞ւ են սրսկողները երեք տղաներ. ըստ Աբրահամի, Իսահակի, Յակոբի վկայութեան*[186]*, քանզի սրանք մեծ են Աստուծոյ մօտ: Իսկ «բուրդը փայտի վրայ»-ն նշանակում է, որ Յիսուսի թագաւորութիւնը փայտի վրայ*[187] *է, եւ որ Նրան յուսացողները յաւիտեան կ'ապրեն: Իսկ ինչո՞ւ բուրդ ու զոպա*[188]*. որովհետեւ Նրա թագաւորութեան մէջ*[189] *լինելու են չար ու անմաքուր օրեր*[190]*, որոնց ընթացքում մենք պիտի փրկուենք. քանզի հիւանդ մարմինը զոպայի անմաքրութեամբ է բուժւում*[191]*: Այս պատճառով էլ այսպէս կատարուածները մեզ հա-*

185 Տես Մատթ. ԺԹ 28: Μαρτύριον-ը լայն առումով նշանակում է նաեւ «ներկայացնել»: Ուստի ACW-ն թարգմանում է՝ «ներկայացնելով ցեղերը»: Այս պարագայում ենթատեքստն այն է, որ նախքան Յիսուսի խաչելութիւնն առաքեալներն իրենց գործունէութիւնը սահմանափակում էին «Իսրայէլի տան կորուսեալ ոչխարների» մէջ (Մատթ. Ժ 5, Գործ. ԻԶ 7):

186 ACW-ն դարձեալ թարգմանում է՝ «ներկայացնելով Աբրահամին, Իսահակին ու Յակոբին»:

187 Քանի որ խաչափայտը Կեանքի ծառի յիշատակն է, ուստի այն յաւիտենական կեանքի գրաւականն է (Յայտ. Բ 7, Գաղ. Գ 13): Տես նաեւ Յուստինոս, Երկխօսութիւն, ՀԳ 4:

188 Հմմտ. Եբր. Թ 19, Յովհ. ԺԹ 29: «Ջրով, բրդով եւ զոպայով» սրսկումը նախատիպն էր Քրիստոսի չարչարանքների ու մահուան շնորհիւ մեղքից ազատագրման:

189 Այսինքն՝ Իր երկրային Եկեղեցում:

190 Այսինքն՝ մկրտութիւնից յետոյ գործուած մեղքերով պղծուած:

191 Մեղանչող քրիստոնեան «փրկւում» եւ մեղքից մաքրւում է «զոպայի անմաքրութեամբ»: Ցունկը սա բացատրում է հետեւեալ կերպ. Քրիստոսի չարչարանքների միջոցով, որոնք երինջի մոխրի պատճառով կեղտոտուած ջրի մէջ թաթախուած զոպայի հակապատկերն են: Հաւանաբար ջրին է խառնւում նաեւ զոպայի փոշին: Քրիստոնեան, ով մկրտութիւնից յետոյ ընկղմւում է մեղքի մէջ, մեղանչում է մարդկային մարմնի կամ բնութեան տկարութիւնից: «Մարմին» բառը յաճախ է օգտագործւում Նոր Կտակարանում՝ նշելու համար մարդկային տկար բնութիւնը (Հմմտ. Գաղ. Ե 19): Այս նախադասութիւնը կազմելիս գուցէ Բառնաբասը յիշել է Ա Պետ. Գ 21-ը, որտեղ օգտագործուած են բոլոր երեք կարեւոր բառերը («կեցուցանել», «մարմին» եւ «աղտ»), սակայն սբ Պետրոսն ասում է, որ քրիստոնէական մկրտութիւնը մարմնական կամ արտաքին անմաքրութիւնից չի մաքրում, մինչ Բառնաբասը նշում է, որ Քրիստոսի տառապանքը որեւէ մէկին մաքրում է մարդկային բնութեան տկարութեան հետեւանքներից: Նրա հաստատումն, այսպիսով, կարելի է ընդունել որպէս յետմկրտութեան ապաշխարութեան ակնարկութիւն: Այս անհասկանալիութեան պատճառով ANF-ն «անմաքրութիւնը» թարգմանում է «մաքրելու կարողութիւն»:

մար բացայայտ են, իսկ նրանց համար՝ մութ[192], որովհետեւ չլսեցին[193] Տիրոջ ձայնը:

Գլուխ Թ

Քանզի ասում է նաեւ ականջների մասին, թէ ինչպէս է թլփատել մեր սիրտը[194]: Տէրն ասում է մարգարէի միջոցով. «Ականջով լսելով հնազանդուեցին Ինձ»[195]: Եւ դարձեալ ասում է. «Հեռաւորներն ականջով կը լսեն եւ կ՚իմանան Իմ կատարած գործերը»[196]: Եւ՝ «Թլփատեցէք,— ասում է Տէրը,— ձեր սրտերը»[197]: Եւ դարձեալ ասում է. «Լսի՛ր, Իսրայէլ, թէ ինչ է ասում քո Տէր Աստուածը»[198]: Եւ դարձեալ՝ Տիրոջ Հոգին մարգարէանում է. «Մ՞ով է յաւիտենական կեանք ուզողը. թող նա ականջով լսի Իմ Որդու ձայնը»[199]: Եւ դարձեալ ասում է. «Լսի՛ր, ո՛վ երկինք, ակա՛նջ դիր, ո՛վ երկիր, որովհետեւ Տէրն[200] է այդպէս խօսում[201] վկայելով»[202]: Եւ դարձեալ ասում է. «Լսեցէ՛ք Տիրոջ խօսքը, ո՛վ այս երկրի իշխաններ»[203]: Եւ դարձեալ ասում է. «Լսեցէ՛ք, որդիներ, անապատի մէջ կանչողի ձայնը»[204]: Ուրեմն թլփատեց մեր ականջները,

192 Այսինքն՝ հրեաների համար, ովքեր կուրացած են ծիսական Օրէնքի նպատակի սխալ մեկնաբանութեամբ:

193 Այսինքն՝ լսեցին ու չհասկացան: Հմմտ. Մարկ. Դ 12:

194 Հմմտ. Բ Օր. ԻԱ 12, Ղեւ. ԺԹ 23, Առ. Դիոգնետոս, 4:

195 Սաղմ. ԺԷ 45

196 Ես. ԼԳ 13

197 Երեմ. Դ 4

198 Երեմ. Է 2

199 Սաղմ. ԼԳ 13. այս սաղմոսում գտնւում է մէջբերման միայն առաջին մասը, երկրորդ մասն այլ է: Ենթադրւում է, որ երկրորդ մասը Եզ. ԺԵ 26-ի անդրադարձն է:

200 ANF-ում՝ «Աստուած»:

201 Ես. Ա 2

202 Եսայու մօտ «վկայելով» բառը գոյութիւն չունի: Ուստի որոշ թարգմանիչներ այն անջատում են նախորդ նախադասութիւնից եւ թարգմանում՝ «սրանք վկայութիւններ են»:

203 Ես. Ա 10. աստուածաշնչական «սոդոմացիների իշխաններ»-ը փոխարինուել են «այս երկրի իշխաններ»-ով:

204 Ես. Խ 3. Սինայի ձեռագրում՝ «սա է անապատում կանչողի ձայնը»:

որպէսզի լսելով Նրա խօսքը՝ մենք հաւատանք[205]: Բայց եւ թլփատումը, որին հաւատում էին, վերացել է. քանզի ասուած է, որ թլփատումը մարմնական չլինի: Բայց նրանք խախտեցին, քանզի չար հրեշտակն էր նրանց խորհուրդ տալիս[206]: Նրանց ասում է. «Այսպէս է ասում ձեր Տէր Աստուածը (այսպէս[207] եմ հասկանում պատուիրանը[208])՝ մի՛ ցանէք փշերի մէջ, թլփատուեցէ՛ք Տիրոջ համար»[209]: Եւ ի՞նչ է ասում. «Ձեր սրտերի խստութիւնը թլփատեցէ՛ք եւ ձեր պարանոցները մի՛ խստացրէք»[210]: Դարձեալ[211]՝ «Ահա,— ասում է Տէրը,— բոլոր ազգերն անթլփատ են մարմնով, իսկ այս ժողովուրդն անթլփատ է սրտով»[212]: Բայց կարող ես ասել. «Ժողովուրդը թլփատւում է կնիքի համար»[213]: Սակայն բոլոր ասորիներն ու արաբները եւ կուռքերի բոլոր քրմերը թլփատւում են. ուրեմն սրանք եւս նրանց ուխտից են[214]. սակայն նաեւ

205 Սինայի ձեռագրում՝ «որպէսզի մենք կարողանանք լսել խօսքը եւ ոչ միայն հաւատանք», որն ակնյայտօրէն աղաւաղում է:

206 Սինայի ձեռագրում՝ «չար հրեշտակը կոտորեց նրանց», սակայն սա ընդունելի չէ: Այս հաստատումը դժուար թէ արուած լինէր որեւէ առաքեալի կողմից: Միեւնոյն ժամանակ դժուար է համաձայնել այն կարծիքին, ըստ որի՝ հեղինակը թլփատութեան հաստատումը միանշանակ վերագրում է չար ոգու ներշնչմանը: Այլ այն փաստը, որ հեղինակը մէջբերումներ է կատարում հինկտակարանեան մարգարէներից, ովքեր չէին մերժում թլփատութիւնը, այլ հրեաներից ներքին մաքրութիւն ու Աստուծոյ կամքի նկատմամբ հնազանդութիւն էին պահանջում, եւ նաեւ օրինակ է բերում հաւատքի հայր Աբրահամին, ցոյց է տալիս, որ Բառնաբասը բացարձակ կերպով չի մերժում մարմնական թլփատութիւնը, այլ դրան հրեաների յամառ կապուածութիւնն է համարում սատանայի ներշնչումը: Հաւանաբար, «չար հրեշտակ»-ն այլ բան չի էլ նշանակում, քան «չար խորհուրդ», ինչպէս որ բարի հրեշտակը նոյնացւում է բարի խորհուրդի հետ: Տես Հերմաս, Mand. 6. 2. 1. Լակտանտիոս, Inst. 2. 15. 8:

207 Իմաստն այստեղ շատ անորոշ է, սակայն այս թարգմանութիւնն ու կէտադրութիւնը նախընտրելի են թւում:

208 Հին լատիներէն թարգմանութեան մէջ՝ «նոր պատուիրան»:

209 Երեմ. Դ 3—4. Սինայի ձեռագրում՝ «Տիրոջ» փոխարէն «Աստուծոյ»: Զի կարելի քրիստոնէական վարդապետութեան «բարի սերմը» (Մատթ. ԺԳ 24) ցանել փշերի մէջ (Հմմտ. Մարկ. Դ 19):

210 Բ Օր. Ժ 16. հոգեւոր թլփատութեան գաղափարն անծանօթ չէ Հին Կտակարանին. Հմմտ. Երեմ. Դ 4, Ղեւ. ԻՁ 41, Երեմ. Է 26, տես նաեւ Գործ. Է 51, Հռոմ. Բ 25:

211 Սինայի ձեռագրում՝ «դարձեալ ստացիր»:

212 Երեմ. Թ 25—26

213 Այսինքն՝ Աստուծոյ հետ ուխտի կնիքի. Հռոմ. Դ 11:

214 Լատիներէն թարգմանութեան մէջ՝ «Նրա ուխտից»:

եգիպտացիներն են թլփատուում[215]: Ուրեմն, սիրո՛յ որդիներ[216], ամէն ինչի մասին հաստատապէ՛ս[217] իմացէք: Աբրահամը, առաջինը թլփատում կատարելով, հոգում կանխատեսեց եւ թլփատեց Յիսուսի համար՝ ստացած լինելով երեք տառերի վարդապետութիւնները[218]. «Եւ Աբրահամն իր տնից թլփատեց տասնութ եւ երեք հարիւր այրերի»[219]: Ի՞նչ էր, ուրեմն, նրան յայտնուած գիտելիքը: Նկատեցէք, որ սկզբում նշում է «տասնութը», որից յետոյ, ընդմիջում տալով[220], «երեք հարիւրը»: «Տասնութի» մէջ «տասը» I-ն է, «ութը»՝ H-ն[221]. այստեղ դուք ունէք Յիսուսին: Իսկ քանի որ[222] T-ով պատկերուած խաչը շնորհի աղբիւրն

215 Կոտելիերը Եկեղեցու հայրերի եւ այլ հին հեղինակների բազմաթիւ վկայութիւնների միջոցով ապացուցել է, որ եթովպացիները, յատկապէս նրանց քրմերը, եգիպտացիների քրմերը, արաբները, փիւնիկեցիները եւ այլ ազգեր իրապէս թլփատուել են: Բոլոր ասորիների թլփատութեան դէմ է խօսում Յովսեպոս Փլաւիոսի վկայութիւնը (Antiq. Ը 10, Contra Apion. 22), ուստի Բառնաբասի խօսքը պէտք չէ հասկանալ խիստ իմաստով, սակայն պէտք չէ նաեւ այս պատճառով կասկած յայտնել նամակի վաւերականութեան վերաբերեալ, ինչպէս անում են ոմանք:

216 Արտայայտութիւնն իր բնոյթով եբրայական է: Հմմտ. Ղուկ. ԺԶ 8, Յովհ. ԺԲ 36, Ա Թես. Ե 5, Բ Թես. Բ 3 եւն:

217 Սինայի ձեռագիրը «հաստատապէս»-ը դնում է «կանխատեսել»-ուց առաջ:

218 Dogma բառը դեռեւս ստոյիկների մօտ օգտագործւում էր փիլիսոփայական ճշմարտութիւնները նշելու նպատակով: Այստեղից էլ այն սկսեց իր մէջ պարունակել ընդհանրապէս սրբազան, խորհրդաւոր ուսմունքի իմաստ: Այդ պատճառով էլ ANF-ը թարգմանում է «խորհուրդներ»: Ինչ վերաբերում է տառերին, Բառնաբասը կարծես թէ մոռանում է, որ Տէրը Աբրահամի հետ յունարէն չէր խօսում: Յունարէնում, որտեղ նոյնպէս տառերն օգտագործւում են թուային արժէք նշելու համար, 18-ը համարժէք է IH-ին: Այդ տառերը «Յիսուս» անուան սկզբնատառերն են: Այստեղ մենք ունենք Յիսուսի անուան կրճատման ամենավաղ արտայայտութիւններից մէկը:

219 Այս խօսքը տառացի մէջբերում չէ Աստուածաշնչից, այլ հեղինակը Աբրահամի տան թլփատութեան հատուածը (Մն. ԺԷ 26—27) կամայականօրէն միացրել է մէկ այլ հատուածի հետ (Մն. ԺԴ 14), որտեղ ասւում է, թէ Աբրահամը, իմանալով Ղովտի գերութեան մասին, հաւաքեց իր տան անդամներին՝ թուով 318 հոգի, եւ շարժուեց թշնամու դէմ:

220 Լատիներէն թարգմանութեան մէջ չկայ «ընդմիջում տալով»:

221 Այս նախադասութիւնն ամբողջութեամբ բաց է թողնուած Սինայի ձեռագրում:

222 Այսպէս է Սինայի ձեռագրում: Որոշ ձեռագրեր այստեղ ունեն՝ «եւ ապա»:

էր լինելու, ասում է նաեւ «երեք հարիւր»[223]: Այսպէս՝ այդ երկու տառով յայտանշում է Յիսուսին, իսկ մի տառով՝ խաչը: Նա, Ով մեր մէջ դրել է Իր ուսմունքի բնածին պարգեւը[224], տեսել է սա: Ոչ ոք աւելի ճշմարիտ խօսք չի լսել ինձանից, բայց գիտե՛մ, որ դուք արժանի էք:

Գլուխ Ժ

Իսկ այն, որ Մովսէսն ասել է. «Մի կերէք ո՛չ խոզ, ո՛չ արծիւ, ո՛չ բազէ, ո՛չ ագռաւ, ո՛չ էլ այն բոլոր ձկները, որոնք թեփուկ չունեն»[225]: Հանդիպման ընթացքում նա երեք հրահանգ ստացաւ: Այնուհետեւ «Երկրորդումն Օրինաց» գրքում ասում է նրանց. «Եւ այս ժողովրդի վրայ Իմ օրէնքներն եմ հաստատելու»[226]: Ուրեմն՝ Աստուծոյ պատուիրանը չի եղել «չուտել». Մովսէսը հոգեւոր իմաստով[227] է ասել: Խոզի մասին հետեւեալ առումով է ասել. մի՛ յարիր, ասել է, այնպիսի մարդկանց, ովքեր խոզերի նման են, այսինքն՝ երբ հաճոյքների մէջ են, մոռանում են Տիրոջը, իսկ երբ զրկանքների մէջ են, ճանաչում են Նրան: Ինչպէս եւ խոզը, երբ ուտում է, իր տիրոջը չի ճանաչում, իսկ երբ քաղցած է, ճչում է, իսկ կեր ստանալուց յետոյ դարձեալ լռում: «Մի կերէք ո՛չ արծիւ, ո՛չ բազէ, ո՛չ ցին, ո՛չ էլ ագռաւ»: Երբեք, ասում է, մի՛ յարիր եւ մի՛ նմանուիր այնպիսի մարդկանց, ովքեր չգիտեն իրենց ապ-

223 Յունարէն T տառը համարժէք է 300 թուին, իսկ իր ձեւով խաչի խորհրդանիշն է: Ուրիշ հեղինակներ եւս նոյն այլաբանական ձեւով են մօտենում 318 թուին. հմմտ. Կղեմէս Ալեքսանդրացի, Strom. 6. 11. 84, Կեղծ Կիպրիանոս, De Pasch. comp. 10:

224 Հմմտ. Յակ. Ա 21: Լատիներէնը թարգմանում է «աւելի կատարեալ պարգեւ», որը վերաբերում է հաղորդակից եղողի գնոսիսին: Այստեղ Բառնաբասն իր գնոսիսին աստուածային ներշնչանք է վերագրում:

225 Հմմտ. Ղեւ. ԺԱ, Բ Օր. ԺԴ: Սինայի ձեռագիրը «թեփուկի» փոխարէն ունի «մասեր», սակայն առաջինն աւելի ճիշտ է: Թոյլատրուած ու արգելուած կերակրի մասին Բառնաբասի բացատրութիւնները մէջբերում է Կղեմէս Ալեքսանդրացին (Strom. Բ 15, Ե):

226 Հմմտ. Բ Օր. Դ 1, 5: Բառնաբասը յայտնում է սոսկ այս հատուածի էութիւնը: Նա ուզում է ասել, որ կերակրի մասին Մովսէսի պատուիրաններն Աստուծոյ պատուիրաններ են: Սակայն նրանք ունեն ե՛ւ տառացի, ե՛ւ աւելի բարձր՝ հոգեւոր իմաստ: Զգայուն հրեաները հասկացան միայն առաջինը. Դաւիթն ու քրիստոնեաներն ըմբռնեցին հոգեւորը:

227 Բառացի՝ «հոգով»:

րուստը հայթայթել աշխատանքով ու քրտինքով, այլ իրենց անօրինութեամբ յափշտակում են ուրիշների ունեցուածքը եւ, հանգիստ շրջողի տեսք ընդունելով, հետեւում են ու նայում, թէ իրենց ագահութեան համար ո՛ւմ կողոպտեն[228]: Ինչպէս եւ այս թռչուններն իրենք իրենց համար ուտեստ չեն հայթայթում, այլ ծոյլ նստած՝ ուրիշների միսն ուտելու առիթ են փնտրում. վնասակար մակաբոյծներ են դրանք: «Եւ մի՛ կերէք,— ասում է,— ո՛չ քարալէզ[229], ո՛չ պոլիպ[230], ո՛չ էլ սիպէք[231]»: Ուրեմն, ասում է, մի՛ նմանուէք ու մի՛ յարէք այնպիսի մարդկանց, ովքեր ծայրայեղօրէն սրբապիղծ են եւ արդէն դատապարտուած են[232] մահուան, ինչպէս եւ այս ձկնիկները, որոնք անիծեալ մենակութեան մէջ են մնում խորքերում՝ լող չտալով միւսների նման, այլ բնակւում են ծովի յատակին՝ տիղմի մէջ[233]: Բայց «նապաստակ էլ չուտէք»[234]: Ինչո՞ւ: Որպէսզի չդառնաք մանուկներ փչացնող. ոչ էլ նմանուէք այդպիսիներին[235], քանի որ նապաստակն ամէն տարի նոր յետանցք է աճեցնում, եւ դրանց քանակը համապատասխանում է տարիների թուին[236]: Սակայն «բորենի էլ չուտէք»[237]: Մի՛ եղէք, ասում է, ո՛չ շնացող, ո՛չ գայթակղիչ[238], ո՛չ էլ դրանց նմանուող: Ինչո՞ւ: Որով-

228 Սինայի ձեռագիրն ունի՝ «եւ հայեացքով փախուստի ճանապարհ են փնտրում իրենց ագահութեան պատճառով»: Վերեւի տեքստը նախընտրելի է թւում:

229 Օձանման ձուկ է, այլ անունով՝ քարադիաց:

230 Բուսական կեանք վարող ծովային կենդանի:

231 Ծովային կակղամորթների դասին պատկանող կենդանի:

232 Այսպէս է Սինայի ձեռագրում: Լատիներէնում չկայ «արդէն»:

233 Այս հատուածի եւ հին տեսակէտի համաձայն՝ այս ձկները պատկանում են կենդանիների ամենաստորին դասին:

234 Հմմտ. Ղեւ. ԺԱ 5:

235 Դրեսսելը «մանուկներ փչացնող» արտայայտութիւնը վերագրում է նրանց, ովքեր իրենց անառակ կեանքով վատնում են իրենց հարստութիւնը եւ այդպիսով կործանում բերում իրենց զաւակներին: Սակայն սա այնքան էլ ընդունելի բացատրութիւն չէ, քանզի ակնարկն աւելի քան թափանցիկ է: Հմմտ. Կղեմէս Ալեքսանդրացի, Paedag. Բ 10, Աելիանոս, De anim. Ա 25:

236 Նապաստակի այսպիսի յատկութեան մասին յիշում են նաեւ Պլինիոսը (Hist. nat. Ա 8) եւ Կղեմէս Ալեքսանդրացին: Վերջինս, Բառնաբասից վերցնելով նապաստակ չուտելու մովսիսական պատուիրանի մեկնութիւնը, այն վերագրում է միասեռական արատին:

237 Մէջբերման աղբիւրն անյայտ է:

238 Ոմանք թարգմանում են «վիժեցնող կաւատ», ոմանք՝ «ապականիչ»:

հետեւ այս կենդանին ամէն տարի փոխում է իր սեռը եւ մերթ արու է լինում, մերթ էգ[239]: Սակայն ատեց նաեւ «աքիսին»[240]: Մի՛ նմանուէք, ասում է, նրանց, որոնց մասին լսում ենք, թէ բերանով անմաքուր անօրինութիւն են կատարում վաւաշոտութեամբ, ոչ էլ յարէք բերանով անմաքուր անօրինութիւն անող փչացած կանանց[241]: Քանզի այս կենդանին բերանով է յղիանում[242]: Այսպէս Մովսէսը, կերակրի մասին երեք կարգադրութիւն ստանալով[243], խօսեց հոգեւոր իմաստով, իսկ նրանք, մարմնի ցանկութեան համաձայն, այն ընկալեցին կերակրին վերաբերելու իմաստով[244]: Այս երեք կարգադրութիւնները յայտնի են դառնում Դաւթին, ով նոյնպէս ասում է. «Երանելի է այն մարդը, ով չի քայլել ամբարիշտների խորհրդի մէջ»[245], ինչպէս այն ձկները, որ շարժւում են խորքերի խաւարում. «եւ չի կանգնել մեղաւորների ճանապարհի վրայ», ինչպէս նրանք, ովքեր կարծես թէ Տիրոջ երկիւղն ու-

239 Բորենու ֆիզիկական փոփոխութիւններին վերաբերող Բառնաբասի հաստատումը ցոյց է տալիս հին ժամանակներում տարածուած տեսակէտը. տես Պլինիոս, Hist. nat. Ը 30, Տերտուղիանոս De pall. 3: Այս հաստատման կեղծ լինելը ցոյց է տուել արդէն իսկ Արիստոտելը (Lib. 3. de generat. animal. c. 6): Կղեմէս Ալեքսանդրացին նկատում է այս սխալը, սակայն հաւանութիւն է տալիս մովսիսական պատուիրանի՝ հոգեւոր իմաստ ունենալուն:

240 Հմմտ. Ղեւ. ԺԱ 29, նաեւ Աելիանոս, De anim. Բ 55:

241 Հին լատիներէն թարգմանութիւնն այստեղ նկատի ունի նրանց, ովքեր լսում եւ խօսում են անմաքրութիւններ: Սակայն այստեղ խօսքը վերաբերում է սեռական սանձարձակութեանը:

242 Ոմանք թարգմանում են՝ «չեղւում է բեղմնաւորման ընդհանուր կանոններից»:

243 Լատիներէնում՝ «հրապարակեց»:

244 Դժուար է հասկանալ, թէ ինչպէս քրիստոնեան կարող է մերժել հրեաներին տրուած Օրէնքի որեւէ իրաւականութիւն եւ սոսկ նրան հոգեւոր դասի իմաստ հաղորդել: Ինչպէս երեւում է, հեղինակի անձնական տեսակէտն ընդունելութիւն չի գտել եւ այլեւս երբեք չի հանդիպում Եկեղեցու մէկ այլ աստուածաբանի մօտ: Սակայն Բառնաբասը թերեւս ոչ թէ ժխտում է պատուիրանների տառացի իմաստը, այլ ուզում է ասել, որ Աստուած արգելեց այդ կենդանիներին ուտել ոչ թէ առանց պատճառի, այլ նրանց վերոյիշեալ արատների համար, իսկ հրեաներն այս պատուիրանների զգայական արտայայտութեան յետեւում չէին տեսնում հոգեւոր իմաստը: Կղեմէս Ալեքսանդրացին (Paedag. Բ 10) բառացի կերպով մէջբերում է Բառնաբասի այլաբանական մեկնութիւնն արգելուած կերակրի մասին եւ, չհամաձայնելով բնական-պատմական սխալների հետ, Բառնաբասի խօսքերի մէջ մովսիսական պատուիրանների պատմական իմաստի ժխտում չի տեսնում: Հմմտ. Թուղթ առ Դիոգնետոս, Դ:

245 Սաղմ. Ա 1

նեն, սակայն մեղանչում են խոզի նման. «եւ ժանտերի[246] աթոռին չնստեց», ինչպէս որսին սպասելու նստած թռչունները: Այժմ դուք լիովին իրազեկ էք[247] նաեւ կերակրի հարցում: Մովսէսը դարձեալ ասում է. «Կերէք բոլոր երկկճղակաւորներին ու որոճացողներին»[248]: Սա ի՞նչ է նշանակում: Կերակուր ստացողը կը ճանաչի իրեն սնողին եւ հաճոյք կը զգայ նրան վստահելով[249]: Պատուիրանը նկատի ունենալով՝ լաւ է ասել: Քանզի ի՞նչ է ասում՝ յարեցէք նրանց, ովքեր Տիրոջ երկիւղն ունեն. յարեցէք նրանց, ովքեր իրենց սրտում խոկում են իրենց ստացած պատուիրանների վրայ. յարեցէք նրանց, ովքեր քարոզում եւ պահում են Տիրոջ օրէնքները. յարեցէք նրանց, ովքեր գիտեն, որ խոկումը ցնծութեան գործ է, եւ որոճում են[250] Տիրոջ խօսքերը: Իսկ ի՞նչ է երկկճղակաւորը. այն, որ արդարը ե՛ւ այս աշխարհում է քայլում, ե՛ւ ժառանգում է սուրբ յաւիտենութիւնը[251]: Տեսէք, թէ ինչպէս լաւ է օրինադրել Մովսէսը: Բայց նրանք որտեղի՞ց այս ամէնը մտածեն ու իմանան: Իսկ մենք, ճշմարտապէս հասկանալով պատուիրանները[252], քարոզում ենք այնպէս, ինչպէս Տէրն է կամեցել: Այդ պատճառով էլ Նա թլփատեց մեր ականջներն ու սրտերը, որպէսզի իմանանք այս ամէնը:

Գլուխ ԺԱ

Քննենք, թէ Տէրը հոգացե՞լ է ջրի եւ խաչի մասին կանխապէս յայտնելու մասին: Ջրի վերաբերեալ Իսրայէլի մասին գրուած է, որ ոչ թէ մեղքերի թողութիւն բերող մկրտութիւնն են ընդունելու, այլ իրենք իրենց համար մէկ ուրիշն են ստեղծելու[253]: Քանզի մարգարէն ասում է. «Երկի՛նք, զարմացի՛ր. իսկ երկիրը դրա վրայ աւելի թող սոսկայ[254], քանի որ այս ժողովուրդը երկու չարիք գործեց. Ինձ՝ կեանքի

246 ANF-ում «ծաղրողների»:
247 Կամ՝ «կատարեալ գիտելիք ունէք»:
248 Ղեւ. ԺԱ 3
249 Բառացի՝ «նրա վրայ հանգստանալով»:
250 Սինայի ձեռագրում՝ «որոճում է»:
251 Լատիներէն թարգմանութեան մէջ՝ «սպասում է սուրբ ժամանակին»:
252 Սինայի ձեռագրում «ճշմարտապէս» բառը կրկնւում է:
253 ANF-ում «հայթայթելու»: Բառնաբասն այստեղ նկատի ունի հրէական զանազան լուացումները: Հմմտ. Մարկ. Է 3—4 եւն:
254 Սինայի ձեռագիրն ունի՝ «թող բանտարկուի»:

աղբիւրիս, լքեց եւ իր համար մահուան գուբ փորեց»[255]: «Մի՞թէ Իմ սուրբ Սինայի[256] լեռն անապատ է. քանզի դուք թափառական կը լինէք բնազրկուած թռչնի ձագի նման»[257]: Եւ մարգարէն դարձեալ ասում է. «Ես գնալու եմ քո առջեւից, հարթեցնելու եմ լեռները, փշրելու պղնձէ դարպասները, կոտրելու երկաթէ նիգերը եւ քեզ տալու եմ խաւարում եղած[258] թաքուն ու աներեւոյթ գանձերը[259], որպէսզի իմանան[260], որ ես եմ Տէր Աստուածը»[261]: Եւ՝ «Բարձր եւ ամուր քարայրում ես բնակուելու»[262]: Եւ ապա ի՞նչ է ասում Որդու մասին[263]. «Նրա ջուրը հաստատ է[264]. թագաւորին իր փառքով էք տեսնելու, եւ ձեր հոգին խոկալու է Տիրոջ երկիւղի շուրջ»[265]: Եւ դարձեալ մէկ ուրիշ մարգարէի միջոցով ասում է. «Այս բոլորն անողը կը լինի ջրերի եզերքին տնկուած ծառի նման, որն իր պտուղները տալիս է ժամանակին, նրա տերեւը չի թափւում, եւ նրա արած ամէն ինչ յաջողւում է: Այսպէս չեն ամբարիշտները, այսպէս չեն. այլ յարդի մղեղի նման, որ քամին ցրում է երկրի երեսից: Այս պատճառով ամբարիշտները չեն կանգնելու դատաստանի օրը, ոչ էլ մեղաւորները՝ արդարների ժողովին: Քանզի Տէրը ճանա-

255 Երեմ. Բ 12—13: Այսպէս է Սինայի ձեռագրում, որը ցոյց է տալիս, թէ որքան ազատօրէն է մօտենում տեքստին Բառնաբասը: Միւս յունարէն ձեռագրերում գրուած է՝ «ջարդուած ջրհորներ»: Սակայն ենթադրւում է, որ բնագրային συντετριμμένους (ջարդուած) բառի փոխարէն պէտք է լինի συντετρημένους (ծակուած), որն աւելի մօտ է աստուածաշնչական բնագրին:
256 Եօթանասնից թարգմանութեան մէջ «Սիոն» է: Սա կարող է գրչական սխալ լինել:
257 Ես. ԺԶ 1—2
258 Այսպէս է Սինայի ձեռագրում: Ուրիշ ձեռագրերում՝ «խաւար», որը երբեմն թարգմանւում է «գաղտնի»:
259 Հեղինակը նկատի ունի մկրտութեամբ բաշխուող շնորհները:
260 Եօթանասնիցում՝ «որպէսզի իմանաս»:
261 Ես. Խե 2—3
262 Ես. ԼԳ 16: Այսպէս է Սինայի ձեռագրում: Միւս ձեռագրերում՝ «Նա է բնակուելու»: Հեֆելէի բացատրութեամբ՝ «Քրիստոսն այն չցամաքող աղբիւրն է, որը բխում է լեռան կատարից»:
263 Սինայի ձեռագրում չկայ այս արտայայտութիւնը:
264 Այսինքն՝ երբեք չի ցամաքում:
265 Ես. ԼԳ 16—18: Այս հատուածը Բառնաբասը բաւական ճշտութեամբ է մէջբերում Եօթանասնից թարգմանութիւնից: Ըստ Հեֆելէի բացատրութեան՝ «Քրիստոսի շնորհն անդադար հոսում է դէպի ձեզ, բայց կը գայ մի ժամանակ, երբ դուք կը տեսնէք Նրան փառքով եւ կը լցուէք ցնծութեամբ»:

չում է արդարների ճամփան, իսկ ամբարիշտների ճանապարհը կորչելու է»[266]: Տեսէք, թէ ինչպէս է ջուրը եւ խաչը միասին սահմանել: Սա նշանակում է՝ երանելի են նրանք, ովքեր, յոյսը դնելով խաչի վրայ, ջուրն են մտնում, քանի որ, ասում է, երբ «ժամանակը» գայ, այնժամ վարձը կը հատուցեմ: Իսկ այժմ այսպէս է ասում[267]. «Տերեւները չեն թափուելու»: Սա նշանակում է, որ ձեր բերանից հաւատքով ու սիրով ելած ամէն խօսք շատերի համար կը լինի դարձ եւ յոյս: Եւ դարձեալ մէկ ուրիշ մարգարէ ասում է. «Եւ Յակոբի երկիրը[268] գովելի էր ամբողջ աշխարհում»[269]: Սա՛ է ասում նա փառաբանում է Նրա Հոգու անօթը[270]: Յետոյ ի՞նչ է ասում. «Եւ գետ էր ձգւում աջ կողմից, եւ նրա միջից գեղեցիկ ծառեր էին բարձրանում. եւ նա, ով ուտի դրանցից, կ'ապրի յաւիտեան»[271]: Սա նշանակում է[272], որ մենք ջուրն ենք իջնում[273] լի մեղքերով ու աղտոտութեամբ, բայց բարձրանում ենք պտղաւորուած սրտով՝ մեր հոգում ունենալով երկիւղն ու յոյսը Յիսուսի հանդէպ: «Եւ նա, ով ուտի դրանցից, կ'ապրի յաւիտեան»: Սա՛ է ասում նա, ով լսի այս խօսքերը եւ հաւատայ, կ'ապրի յաւիտեան:

266 Սաղմ. Ա 3—6: Այս հատուածը Բառնաբասը մէջբերում է՝ ցոյց տալու համար այն շնորհը, որը հաւատացեալներին տալիս են ջուրն ու փայտը՝ մկրտութիւնն ու Քրիստոսի խաչափայտը:

267 Սինայի ձեռագրում «ի՞նչ նկատի ունի»:

268 Այսինքն՝ Քրիստոսի մարմինը:

269 Հմմտ. Սոփ. Գ 19, Եզեկ. Ի 6:

270 «Հոգու անօթ»-ի տակ պէտք է հասկանալ Քրիստոսի՝ խաչի վրայ չարչարուած ու փառաւորուած մարմինը: Մարգարէի խօսքերը Բառնաբասի բացատրութեան հետ միասին օգտագործում է Կղեմէս Ալեքսանդրացին (Strom. Գ 12)՝ ապացուցելու համար, որ մարմնականն ու նիւթականը ինքնին մեղք չեն, հետեւաբար նաեւ ամուսնութիւնը, գինու եւ մսի ճաշակումը: Մեր կարծիքով՝ սխալ է փառաբանողին նոյնացնել Քրիստոսի, իսկ Հոգու անօթը կրողին՝ մարգարէի հետ, ինչպէս ոմանք անում են, այլ ճիշտ իմաստն այն է, որ մարգարէն է փառաբանում Քրիստոսին:

271 Հմմտ. Եզեկ. ԽԷ 12: Վերջին մասը գուցէ Յովհ. Զ 51-ում:

272 Բաց է թողնուած Սինայի ձեռագրում:

273 Հմմտ. Գործ. Ը 38, Հերմաս, Sim. 9. 16. 6:

Գլուխ ԺԲ

Նմանապէս, խաչի մասին դարձեալ սահմանում է մէկ այլ մարգարէի միջոցով, ով ասում է[274]. «Եւ ե՞րբ է կատարուելու այս ամէնը. երբ, ասում է Տէրը, փայտը խոնարհուի եւ դարձեալ վեր կենայ[275], եւ երբ փայտից արիւն կաթի»[276]: Սա դարձեալ խաչի եւ ապագայ խաչելութեան մասին է: Դարձեալ ասում է Մովսէսի մօտ[277], երբ այլազգիները կուում էին Իսրայէլի դէմ[278]: Ցիշեցնելով նրանց, որ իրենց մեղքերի պատճառով պատերազմում մահուան յանձնուեցին՝ Հոգին խօսում էր Մովսէսի սրտում, որպէսզի ստեղծի կերպարը խաչի եւ[279] Նրա, Ով ապագայում չարչարանքներ էր կրելու: Եթէ, ասում է, Նրան չապաւինէք, յաւիտենապէս կը կործանուէք: Ուստի Մովսէսը բլրի վրայ զէնքեր դիզեց[280] եւ, բոլորից բարձր կանգնելով, պարզեց իր ձեռքերը[281], եւ այդպէս Իսրայէլը դարձեալ յաղթում էր. այնուհետեւ, երբ ցած էր իջեցնում, դարձեալ կոտրուում էին: Ինչո՞ւ. որպէսզի իմանան, թէ չեն կարող փրկուել, եթէ Նրան[282] չապաւինեն: Եւ դարձեալ մէկ այլ մարգարէութեան մէջ ասում է. «Ես ամբողջ օրն Իմ ձեռքերը տարածեցի դէպի անհնազանդ ու Իմ ճշմարիտ ճանապարհին հակաճառող ժողո-

274 Սինայի ձեռագրում այս նախադասութեան ենթական «Աստուած» է:

275 Գիտնականները կարծում են, որ այս տողերը վերցուած են որեւէ պարականոն գրքից:

276 Հմմտ. Գ Եզր. Դ 33, Ե 5: Հիլդենֆելդը համեմատութիւն է անցկացնում Ամբ. Բ 11-ի հետ:

277 Սինայի ձեռագրում «Նա խօսում է Մովսէսի հետ»:

278 Հմմտ. Ել. ԺԷ 8—16: Այլազգիներն ամաղէկացիներն էին: Յաջորդ տողերում շարադրուած դէպքը յաճախ վաղ շրջանի հայրերի կողմից նշւում է՝ ցոյց տալու համար խաչը եւ նրա վրայ մատուցուած Աստուածային Զոհը: Հմմտ. Յուստինոս, Dial. Ղ 4, ՃԺԱ 1, Տերտուղիանոս, Adv. Iud. 10, Կիպրիանոս, De exhort. mart. 8:

279 Սինայի ձեռագրում «եւ»-ը բաց է թողնուած:

280 Սինայի ձեռագիրն ունի πυγμῆς, որն այստեղ թարգմանւում է «շեղջ» կամ «դէզ»: Ըստ Հիլդենֆելդի, սակայն, πυγμή-ն այստեղ համարժէք է πυγμαχία-ին՝ «պայքար»: Այդ դէպքում, ինչպէս որոշ թարգմանութիւններում, «Մովսէսը զէնքերը դիզեց ճակատամարտի կենտրոնում» եւ ոչ թէ «բլրի վրայ»:

281 Այսպիսով կանգնեց խաչի տեսքով:

282 Ոմանք թարգմանում են «խաչին»:

վուրդը»[283]: Իսրայէլի անկման ժամանակ Մովսէսը դարձեալ Յիսուսի կերպարն է պատկերում, թէ Նա պիտի չարչարանք կրի եւ Նա էլ պիտի կեանք տայ[284]՝ Նա, Ում կորստի մատնուած էին համարելու նշանի վրայ[285]: Եւ քանի որ Եւայի զանցառութիւնը օձի միջոցով եղաւ, ուստի Տէրն օձերին թոյլ տուեց խայթել նրանց. եւ նրանք մեռնում էին, որպէսզի յանդիմանէր նրանց, որ իրենց յանցանքի համար են նրանք մահուան վշտին յանձնուել[286]: Վերջում Մովսէսը պատուիրում է նրանց. «Ոչ ձուլածոն եւ ոչ էլ կոփածոն ձեզ աստուած թող չլինեն»[287], իսկ ինքը պատրաստում է, որպէսզի ցոյց տայ Յիսուսի կերպարը: Մովսէսն, ուրեմն, պղնձէ օձ է շինում, տեղադրում այն փառքով[288] եւ քարոզով կոչում ժողովրդին: Արդ՝ ժողովուրդը, ի մի հաւաքուելով, խնդրում է Մովսէսից, որ իրենց կողմից պաղատանք[289] մատուցի եւ իրենց հիւանդութեան համար բուժում խնդրի: Եւ Մովսէսն ասում է նրանց. «Երբ,— ասում է,— ձեզանից որեւէ մէկը խայթուի, թող գայ փայտից կախուած օձի մօտ եւ թող հաւատալով յուսայ, որ այն, մեռած լինելով հանդերձ, կարող է կեանք պարգեւել, եւ իսկոյն կը փրկուի»[290]: Եւ այդպէս էլ անում էին: Այս ամէնի մէջ դարձեալ Յիսուսին նկատի ունի, քանզի ամէն ինչ Նրա մէջ է եւ Նրա համար[291]: Եւ դարձեալ՝ Մովսէսն ի՞նչ է ասում Նաւէի որդի Յեսուին՝ նրան՝ որպէս մարգարէի, այդ

283 Ես. կե 2: Այսինքն՝ ես խաչուեցի անհնազանդ ժողովրդի համար: Այսպէս է բացատրում այս հատուածը նաեւ Յուստինոսը (Apolog. I n. 35. Dial. c. Tryph. n. 97):

284 Սինայի ձեռագրում «Նա կեանք կը տայ նրան»:

285 Σημεῖον բառը, որը բառացի նշանակում է «նշան», խաչի իմաստով օգտագործւում է Յուստինոսի մօտ (Dial. c. Tryph. n. 72. n. 94):

286 Հմմտ. Թիւ. ԻԱ 6—9, Յովհ. Գ 14—18:

287 Բ Օր. ԻԷ 15: Ուրիշ ձեռագրերում «ո՛չ կոփածոն, ո՛չ էլ ձուլածոն»:

288 Սինայի ձեռագրում ἐνδόξως (փառքով) է, մինչ ուրիշ ձեռագրերում ἐν δοκῷ (հեծանի վրայ):

289 Որոշ թարգմանութիւններում «զոհ»:

290 Թիւ. ԻԱ 7—9: Աստուածաշնչում խօսողն Աստուած է եւ ոչ թէ Մովսէսը:

291 Հմմտ. Կող. Ա 16: Այսինքն՝ Քրիստոսը կիզակէտն ու նպատակն է հինկտակարանեան օրէնքի ու մարգարէների:

անունը տալով[292] միայն այն բանի համար, որ համայն ժողովուրդը լսի, որ Հայրը միշտ յայտնում է Յիսուս Որդու մասին[293]: Արդ՝ Մովսէսն ասում է Նաւէի որդի Յեսուին՝ նրան այդ անունով կոչելով այն ժամանակ, երբ նրան ուղարկեց երկիրը լրտեսելու. «Վերցրու գիրքը ձեռքդ եւ գրիր այն, ինչ Տէրն ասում է[294], որ վերջին օրերին Աստուծոյ Որդին արմատից պիտի կտրի Ամաղէկի ողջ տունը»[295]: Ահա դարձեալ Յիսուսը, ոչ թէ մարդու որդին, այլ Աստուծո՛յ Որդին՝ յայտնուած մարմնի կերպարանքով[296]: Եւ քանի որ ասելու էին, որ Քրիստոսը Դաւթի որդին[297] է, ուստի Դաւիթը, գիտակցելով մեղաւորների մոլորութիւնը եւ վախենալով դրանից, մարգարէանում է այդ մասին. «Տէրն ասաց իմ Տիրոջը. «Նստի՛ր իմ աջ կողմում, մինչեւ Քո թշնամիներին Քո ոտքերի համար պատուանդան դարձնեմ»[298]: Եւ դարձեալ Եսային այսպէս է ասում. «Տէրն ասաց իմ Տէր Քրիստոսին[299], Ում աջը ես բռնել եմ[300], որ Նրա առջեւ հնազանդուելու են ազգերը, եւ թագաւորների զօրու-

292 Սինայի ձեռագրում աւելի հրամայական է՝ «դնելով նրա վրայ»: «Յեսու» անունը համարժէք է «Յիսուս» անուանը: Նաւէի որդու անունը նախապէս Աւսէ էր, ապա Մովսէսի կողմից փոխուեց Յեսուի (Թիւ. ԺԳ 17): Յուստինոսը նոյնպէս Յեսու Նաւէի անուան մէջ տեսնում է Քրիստոսի կերպարը՝ նշելով այն հանգամանքը, որ նա իսրայէլացիներին առաջնորդեց Աւետեաց երկիր (Dial. c. Tryph. n. 113):

293 Այսպէս է Սինայի ձեռագրում: Ուրիշ ձեռագրերում «յայտնում է Յիսուս Որդու մասին Նաւէի որդուն»: Ուստի վերջիններս չունեն յաջորդ նախադասութեան առաջին մասը:

294 Բառնաբասը, Աստուծոյ՝ Մովսէսին ուղղուած խօսքերը մէջբերելով, դրանք վերագրում է Մովսէսին, ով, Յեսու Նաւէին հաղորդելով ամաղէկացիներին բնաջնջելու աստուածային հրամանը, Աստուծոյ մասին խօսում է երրորդ դէմքով:

295 Ել. ԺԷ 14

296 Հմմտ. Ա Տիմ. Գ 16:

297 Այսինքն՝ սոսկ մարդ: Ենթադրւում է, որ ակնարկը վերաբերում է էբիոնիտներին:

298 Սաղմ. ՃԹ 1, Մատթ. ԻԲ 43—45

299 Եօթանասնից թարգմանութեան մէջ (ինչպէս եւ Սինայի ձեռագրում) «Կիւրոս» է (պարսից արքան), որը Բառնաբասը փոխում է Κυρίῳ-ի (Տէր):

300 Սինայի ձեռագրում «Նա բռնել է»:

թիւնը թուլացնելու եմ»[301]: Տեսէ՛ք, որ Դաւիթը[302] նրան Տէր է անուանում[303] եւ ո՛չ թէ որդի[304]:

Գլուխ ԺԳ

Տեսնենք, թէ արդեօք այս ժողովո՞ւրդն է ժառանգում, թէ՞ առաջինը[305], եւ արդեօք ուխտը մե՞զ է վերաբերում, թէ՞ նրանց[306]: Ուրեմն, լսէ՛ք, թէ ժողովրդի մասին ինչ է ասում Գիրքը. «Եւ Իսահակն աղաչեց իր կին Ռեբեկայի համար, ով ամուլ էր, եւ նա յղիացաւ»[307]: Այնուհետեւ «Ռեբեկան գնաց հարցնելու Տիրոջը: Եւ Տէրը նրան ասաց. «Երկու ազգ կայ քո արգանդում եւ երկու ժողովուրդ՝ քո որովայնում. մէկը միւսից զօրաւոր է դառնալու, եւ աւելի մեծը ծառայելու է աւելի կրտսերին»[308]: Դուք պարտաւոր էք հասկանալ, թէ ո՛վ է Իսահակը, ո՛վ՝ Ռեբեկան, եւ ո՛ւմ է մատնացոյց անում որպէս մեծ ժողովրդի՝ մե՞զ, թէ՞ նրանց: Եւ մէկ այլ մարգարէութեան մէջ Յակոբն առաւել բացայայտ է ասում իր որդի Յովսէփին. «Ահա Տէրն ինձ չզրկեց քո դէմքից. ինձ մօտ բեր քո որդիներին, որպէսզի օրհնեմ նրանց»[309]: Եւ բերեց Եփրեմին ու Մանասէին եւ, կամենալով, որ Մանասէն[310] օրհնուի, քանի որ անդրանիկն էր, Յովսէփը նրան մօտեցրեց իր հայր Յակոբի աջ ձեռքի կողմը: Սակայն Յակոբը Հոգու միջոցով տեսաւ ապագայ ժողովրդի կերպարը: Եւ ի՞նչ է ասում. «Եւ Յակոբն իր ձեռքերի տեղը փոխեց եւ աջը դրեց Եփրեմի գլխին, ով երկրորդն էր ու կրտսերը, եւ օրհնեց

301 Ես. խե 1

302 Թերեւս պէտք էր աւելացնել նաեւ «Եսային», քանզի նրա խօսքերը նոյնպէս բերւում են: Ուստի հին լատիներէն թարգմանութիւնը գրում է «մարգարէները»:

303 Հմմտ. Մարկ. ԺԲ 37, Մատթ. ԻԲ 45:

304 Հրեաների համար Քրիստոս Մեսիան Դաւթի որդին էր, սակայն Դաւիթն ինքը Նրան «Տէր», այսինքն՝ «Աստուած» է անուանում:

305 Այսինքն՝ քրիստոնեաներ՞ը, թէ՞ հրեաները:

306 Իրականում երկուսին էլ. նրանց՝ սկզբնապէս, մեզ՝ նրանց մերժումից յետոյ:

307 Մն. Իե 21

308 Մն. Իե 22—23: Այս հատուածը, ինչպէս յայտնի է, վերաբերում է Եսաւին ու Յակոբին, սակայն Բառնաբասն այն վերագրում է հրեայ ու քրիստոնեայ ժողովուրդներին:

309 Մն. խԸ 11, 9

310 Սինայի ձեռագրում երկու անգամ կրկնւում է «Եփրեմ», որը բացայայտ գրչական սխալ է:

նրան: Եւ Յովսէփն ասաց Յակոբին. «Քո ձեռքը փոխիր եւ աջդ դիր Մանասէի[311] գլխին, քանզի նա է իմ անդրանիկ որդին»: Եւ Յակոբն ասաց Յովսէփին. «Գիտե՛մ, որդիս, գիտե՛մ, սակայն աւագը ծառայելու է կրտսերին, եւ սա նոյնպէս օրհնեալ կը լինի»[312]: Տեսնո՞ւմ էք, թէ նա ում որտեղ դրեց[313] եւ սահմանեց որպէս առաջին ժողովուրդ եւ ուխտի ժառանգորդ: Իսկ եթէ Աբրահամի միջոցով էլ է Նա դա յիշել, ապա մեր գիտելիքն արդէն կատարեալ է: Իսկ ի՞նչ է ասում Աբրահամին, ով մենակ հաւատալով՝ արդար համարուեց[314]. «Ահա քեզ, Աբրահամ, հայր կարգեցի այն ժողովուրդներին, ովքեր առանց թլփատութեան են հաւատում Աստծուն»[315]:

Գլուխ ԺԴ

Այո՛: Բայց տեսնենք, թէ հայրերի հետ կնքած ուխտը Նա տուե՞ց[316] ժողովրդին[317]: Տուեց, սակայն նրանք իրենց մեղքերի պատճառով արժանի չեղան այն ընդունելու: Քանզի մարգարէն ասում է. «Եւ քառասուն օր ու քառասուն գիշեր Մովսէսը պահեց Սինայի լեռան վրայ՝ ստանալու համար Տիրոջ կտակը ժողովրդին»[318]: «Եւ Մովսէսը Տիրոջից ստա-

311 Սինայի ձեռագրում դարձեալ գրուած է «Եփրեմ»:

312 Մն. խԸ 13—19: Բառնաբասը փոխում է բառերը, սակայն փոխանցում է բնագրի իմաստը: Ըստ Բառնաբասի՝ Մանասէն ներկայացնում է ընտրեալ ժողովրդին, որը «նոյնպէս օրհնեալ է լինելու», այսինքն՝ ուխտը չի կորցնելու «յաւիտեան ու վերջնականապէս»: Ցեղի մնացորդը փրկուելու է ժամանակի վերջում (Հռոմ. ԺԱ 25):

313 Կամ՝ «ում որտեղ կամեցաւ»:

314 Ուրիշ ձեռագրերում խօսքն ասւում է Աստուծոյ կողմից՝ «Դու հաւատացիր, եւ դա քեզ արդարութիւն համարուեց»:

315 Հմմտ. Մն. Ժե 6, Ժէ 5, Հռոմ. Դ 3, 11, Գաղ. Գ 6:

316 Սինայի ձեռագրում անիմաստ կերպով կրկնւում է «տալ» բայը:

317 Հմմտ. Ղուկ. Ա 72:

318 Ել. ԻԴ 18

ցաւ երկու տախտակները՝ գրուած Աստուծոյ ձեռքի մատով՝ Հոգով»[319]: Եւ ստանալով դրանք՝ Մովսէսը ցած բերեց՝ ժողովրդին տալու համար: Եւ Տէրն ասաց Մովսէսին. «Մովսէ՛ս, Մովսէ՛ս, չտապիր իջնել, որովհետեւ անօրինացաւ քո ժողովուրդը, որին հանեցիր Եգիպտոսից»[320]: «Եւ տեսաւ Մովսէսը, որ նրանք իրենց համար[321] դարձեալ կուռքեր են կերտել, իր ձեռքից ցած նետեց տախտակները, եւ փշրուեցին Տիրոջ ուխտի տախտակները»[322]: Մովսէսն ահա ստացաւ, սակայն նրանք արժանի չեղան: Իսկ մե՞նք ինչպէս ստացանք. իմացէ՛ք: Մովսէսն այն ստացաւ որպէս ծառայ[323], իսկ մեզ՝ ժառանգութեան ժողովրդին, այն տուեց Ինքը Տէրը՝ մեզ համար չարչարանք կրելով: Նա յայտնուեց, որպէսզի ե՛ւ նրանք մեղքերով կատարեալ դառնան[324], ե՛ւ մենք ուխտ ստանանք ժառանգութիւն տուող Տէր Յիսուսի միջոցով[325], Ով դրան պատրաստուել էր, որպէսզի յայտնուելով՝ խաւարից փրկի արդէն մահուամբ սպառուած ու մոլորութեան անօրէնութեանը յանձնուած մեր սրտերը եւ խօսքով ուխտ հաստատի մեր մէջ: Քանզի գրուած է, թէ Հայրը Նրան պատուիրեց, որ մեզ փրկի խաւարից[326] եւ Իր համար սուրբ ժո-

319 Ἐν πνεύματι («Հոգով») արտայայտութիւնը աւելացուած է հեղինակի կողմից: Հեֆելէն այս արտայայտութիւնն ածանցում է «Աստուծոյ ձեռքի մատով» արտայայտութեանը՝ ենթադրելով, որ Բառնաբասն այս յաւելմամբ ցանկանում է բացառել Տիրոջ ձեռքի մարդակերպ ընկալումը: Սակայն տարածուած կարծիքն այն է, որ, ինչպէս այլ տեղերում, այնպէս էլ այստեղ, հեղինակը ցանկանում է ընդգծել, որ քանի որ տախտակները գրուած են «Հոգով», մարգարէական ներշնչանքով, ուստի պատուիրանները պէտք է մեկնաբանուեն հոգեւոր իմաստով:

320 Եւ. ԼԲ 7, Բ Օր. Թ 12

321 Միւս ձեռագրերում չկայ «իրենց համար»:

322 Հմմտ. Եւ. ԼԲ 19, Բ Օր. Թ 17: Հեղինակը չի նշում, որ թէեւ տախտակները փշրուեցին, սակայն ուխտը վերանորոգուեց (Եւ. ԼԴ 1, Բ Օր. Թ 17). հետեւաբար ուխտի կորուստը բացարձակ չէր:

323 Հմմտ. Եբր. Գ 5, Կղեմէս Հռոմէացի, Դ 12, ԽԳ 1, ԾԱ 3, 5, ԾԳ 5:

324 Խօսքը վերաբերում է հրեաներին: Մարմնով յայտնուելով՝ Յիսուսն Իր ժամանակի հրեաներին հնարաւորութիւն տուեց «մեղքերով կատարեալ լինելու»՝ Իրեն մահուան դատապարտելու միջոցով (Հմմտ. Մատթ. ԻԳ 32): Այն ժամանակուանից «խոստման որդիները» համարւում են Աբրահամի ճշմարիտ շառաւիղները:

325 Սինայի ձեռագրում՝ «Նրա միջոցով, ով ժառանգեց»:

326 Սինայի ձեռագրից բացի, միւս ձեռագրերում փրկելու գործընթացը վերագրւում է Հօրը:

ղովուրդ պատրաստի[327]: Ուստի մարգարէն ասում է. «Ես՝ քո Տէր Աստուածը, կոչել եմ քեզ արդարութեամբ եւ կը բռնեմ քո ձեռքից ու կ'օգնեմ քեզ: Եւ քեզ ցեղերի ուխտ եւ ազգերի լոյս սահմանեցի, որպէսզի բացես կոյրերի աչքերը, կապանքներից արձակես կապուածներին եւ ազատես բանտի խաւարում նստածներին»[328]: Ուրեմն իմանանք[329], թէ մենք ինչպէ՛ս փրկուեցինք[330]: Մարգարէն դարձեալ ասում է. «Ահա քեզ ազգերի լոյս եմ կարգել, որպէսզի դու փրկութիւն լինես մինչեւ երկրի ծագերը: Այսպէս է ասում քեզ փրկած Տէր Աստուածը»[331]: Եւ դարձեալ մարգարէն ասում է. «Տիրոջ Հոգին ինձ վրայ է, որով Նա օծել է ինձ՝ նուաստներին շնորհ աւետելու. ինձ ուղարկել է փշրուած սիրտ ունեցողներին բուժելու, գերիներին ազատութիւն եւ կոյրերին տեսողութիւն հռչակելու, Տիրոջ համար ընդունելի տարին[332] ու հատուցման օրը յայտարարելու, բոլոր սգաւորներին մխիթարելու»[333]:

Գլուխ ԺԵ

Արդ[334]՝ շաբաթ օրուայ մասին նոյնպէս գրուած է Տասնաբանեայի մէջ, երբ Աստուած Սինայի լեռան վրայ երես առ երես խօսեց Մովսէսի հետ. «Եւ մաքուր ձեռքերով[335] ու մաքուր սրտով սրբէք Տիրոջ շաբաթը»[336]: Մէկ այլ տեղում ասում է. «Եթէ Իմ որդիները պահեն շա-

327 Սինայի ձեռագրում կրաւորական է՝ «պատրաստուի»: Վերեւի թարգմանութիւնն աւելի տրամաբանական է: Հմմտ. Ղուկ. Ա 17, 68, 79:

328 Ես. ԽԲ 6—7: Այս խօսքերը մարգարէն ասում է Հօր անունից Որդուն:

329 Սինայի ձեռագրում՝ «մենք գիտենք»:

330 Այսինքն՝ մեղքի ու հոգեւոր կուրութեան կապանքներից:

331 Ես. ԽԹ 6—7: Սինայի ձեռագրում տեքստն աղաւաղուած է. այն տրուած է ըստ Հեֆելէի:

332 Ակնարկութիւն է հրէական Յոբելեանական տարուայ (Ղեւ. Իե 8—10), որը քրիստոնէական ազատութեան նախատիպն է, որի ժամանակ մարդիկ ազատւում են մեղքի ու սատանայի ստրկութիւնից, եւ վերականգնւում են շնորհն ու արքայութիւնը:

333 Ես. ԿԱ 1—2, հմմտ. Ղուկ. Դ 18: Այստեղ խօսողը Որդին է:

334 Սինայի ձեռագրում «որովհետեւ», սակայն բոլոր թարգմանութիւններում ուղղուած է «արդ»:

335 Հեղինակի կողմից աւելացուած է հաւանաբար Սաղմ. ԻԳ 4-ից: Շաբաթը պէտք է սուրբ պահուի ցածր կարգի աշխատանքի բացակայութեամբ:

336 Եւ. Ի 8, Բ Օր. Ե 12: Մէջբերումը բառացի չէ:

բաթը, այնժամ ես իմ ողորմութիւնը կը հեղեմ նրանց վրայ»[337]: Շաբաթուայ մասին խօսում է արարչագործութեան սկզբում. «Եւ Աստուած վեց օրում ստեղծեց իր ձեռքի գործերը եւ եօթերորդ օրը վերջացրեց, եւ հանգստացաւ ու սրբեց այն»[338]: Ուշադի՛ր եղէք, որդիներս, թէ այդ ի՛նչ է ասում՝ «Վերջացրեց վեց օրում»: Դա նշանակում է, որ Տէրն ամէն ինչ կատարելու-վերջացնելու է վեց հազար տարվա ընթացքում[339], քանզի Նրա համար օրը հազար տարի է[340]: Այդ մասին ինքն է վկայում[341]՝ ասելով. «Ահա այս օրը[342] կը լինի հազար տարուայ նման»[343]: Այսպէս, որդիներ, վեց օրում, այսինքն՝ վեց հազար տարում է այդ ամէնը կատարուելու: «Եւ հանգստացաւ եօթերորդ օրը»: Իսկ դա նշանակում է, որ Նրա Որդին գալու եւ վերացնելու է անօրէնի ժամանակը[344], դատելու է ամբարիշտներին եւ փոխելու է արեւը, լուսինն

337 Հմմտ. Երեմ. ԺԷ 24—25, Եզ. ԼԱ 13—17: Բառնաբասն այստեղ ընդհանուր արտայայտութիւններով տալիս է սոսկ մարգարէական խօսքերի էութիւնը:

338 Ծն. Բ 2: Հեղինակը հետեւում է Աստուածաշնչի եբրայական տեքստին, քանզի եօթանասնիցում «եօթերորդ»-ի փոխարէն դրուած է «վեցերորդ», թէեւ իմաստը նոյնն է:

339 Արտայայտութիւնը տարակուսանք է առաջացնում, քանզի, անգամ ըստ Բառնաբասի, աշխարհի իրական վախճանը տեղի կ'ունենայ եօթերորդ հազարամեակի վերջին՝ նախքան «միւս աշխարհի» սկիզբը:

340 Սինայի ձեռագրում՝ «հազար տարի է նշանակում»:

341 Սինայի ձեռագիրն աւելացնում է «ինձ»:

342 Սինայի ձեռագրում՝ «Տիրոջ օրը»:

343 Սաղմ. ՁԹ 4, Հմմտ. Բ Պետ. Գ 8: Բառնաբասն աշխարհի պատմութիւնը բաժանում է վեց (կամ եօթ) հազարամեակների եւ դրանց յետեւում տեսնում արարչագործութեան վեց օրերը, որոնց յաջորդելու է եօթերորդ օրը, երբ Տէրը «հանգստանալու է»: Այստեղ հաւանաբար ակնարկ կայ քիլիազմի՝ Քրիստոսի հազարամեայ թագաւորութեան վարդապետութեան: Եթէ այո, ապա Բառնաբասն ու Պապիասը առաջին քրիստոնեայ հեղինակներն են, որ քիլիաստիկ գաղափարներ են արծարծում: Նրանց յաջորդում են Յուստինոսը, Իրենէոսը, Լակտանտիոսը եւ սկզբնական շրջանում Օգոստինոսը: Այս տեսակէտը լայնօրէն տարածուած էր առաջին երեք դարերում. ըստ դրա՝ ընդհանուր դատաստանից ու ընդհանուր յարութիւնից առաջ Քրիստոսը պէտք է գայ տեսանելի փառքով երկրի վրայ հազարամեայ թագաւորութիւն հաստատելու: Հրեաները նման գաղափարներ էին արտայայտում որոշ մեսիական տեքստեր մեկնաբանելիս (ինչպէս Յովէլ Գ 17, Ես. ԺԱ 6, ԿԶ 18): Քրիստոնեայ հեղինակներն ազդուած էին նաեւ Յայտ. Ի 4-ից:

344 Որոշ թարգմանութիւններում՝ «անօրէն մարդու ժամանակը»:

ու աստղերը[345]. եւ այնժամ Նա կատարելապէս հանգստանալու է եօթերորդ օրը: Իսկ վերջում էլ ասում է. «Սրբեցէ՛ք այն[346] մաքուր ձեռքով ու մաքուր սրտով»: Հետեւաբար, եթէ այժմ որեւէ մէկը, ամէն ինչի մէջ[347] սրտով մաքուր չլինելով, կարող է սրբել Աստուծոյ սրբագործած օրը, ապա մենք մոլորուած ենք[348]: Արդ՝ իմացէք[349], որ մենք կատարելապէս կը հանգստանանք եւ կը սրբենք դա միայն այն ժամանակ, երբ կարողանանք դա անել՝ ինքներս արդարացած եւ խոստացուած ուխտը ստացած լինելով, երբ այլեւս անօրէնութիւն չկայ, եւ ամէն ինչ Տիրոջ կողմից նոր է դարձել[350]. այնժամ մենք կը կարողանանք սրբել այն՝ նախապէս ինքներս մեզ սրբագործելով[351]: Իսկ վերջում էլ ասում է նրանց. «Ձեր ամսագլուխներն ու շաբաթները Ինձ հաճելի չեն»[352]: Տեսէք, թէ ինչպէ՛ս է ասում. ոչ թէ այժմեան շաբաթներն են Ինձ համար ընդունելի, այլ այն, որը ես եմ պատրաստել, երբ, ամէն ինչ դադարեցնելով, յայտնելու եմ ութերորդ օրուայ, այսինքն՝ միւս աշխար-

345 Սինայի ձեռագրում՝ «աստղերն ու լուսինը»:

346 Այսինքն՝ շաբաթը:

347 Սինայի ձեռագրում՝ «ամէն ինչ»-ի փոխարէն «դարձեալ»:

348 Իմաստը, ըստ Հեֆելէի, սա է. «Եթէ հրեաների շաբաթները ճշմարիտ շաբաթն են, ուրեմն մենք մոլորուած ենք Աստուծոյ կողմից, Ով մաքուր ձեռք ու մաքուր սիրտ է պահանջում»:

349 Սինայի ձեռագրում՝ «Բայց եթէ ոչ»: Հիլգենֆելդն այս աղաւաղուած հատուածը թարգմանում է հետեւեալ կերպ. «Ուրեմն ո՞վ կարող է սրբել այն օրը, որն Աստուած սրբեց, եթէ ոչ այն մարդը, ով սուրբ սիրտ ունի: Մենք մոլորուել ենք ամէն ինչում: Արդ՝ իմացէք...»:

350 Սինայի ձեռագրում՝ «Ճշմարտապէս հանգստանալով՝ մենք կը սրբենք այն՝ արդարացած եւ խոստումը ստացած լինելով, անօրէնութեան այլեւս գոյութիւն չունենալով, այլ ամէն ինչ Տիրոջ կողմից նոր դարձած լինելով»:

351 Սինայի ձեռագրում՝ «Ուրեմն մենք չե՞նք կարող...»:

352 Ես. Ա 13

հի սկիզբը[353]: Ուստի եւ մենք ցնծութեամբ ենք ընդունում ութերորդ օրը, որի ժամանակ եւ Յիսուսը յարութիւն առաւ մեռելներից[354] եւ[355] յայտնուելով համբարձուեց երկինք[356]:

353 Բառնաբասը «ձեր շաբաթները» նոյնացնում է «այժմեան շաբաթներ»-ի հետ: Հեղինակի արտայայտած միտքը երկու կերպ է բացատրւում: Ըստ առաջին բացատրութեան՝ եօթերորդ դարաշրջանը սկսւում է այն ժամանակ, երբ վերջանում է աշխարհը, եւ կը վերջանայ «միւս աշխարհի» սկզբին, որը ոչ թէ մէկ ուրիշ հազարամեակ է, այլ յաւիտենութեան օրը՝ «ութերորդ օրը»: Պատկերը հետեւեալն է. առաջին հինգ հազարամեակներն անցեալ են, ներկան վեցերորդ հազարամեակն է, եօթերորդ հազարամեակը Քրիստոսի թագաւորութեան շրջանն է (տես ծնթ. 343), ութերորդով սկսւում է յաւիտենութիւնը: Երկրորդ բացատրութիւնն աւելի տրամաբանական է. հին աշխարհի վեց հազար տարիները կը վերջանան վերջին շաբաթուայ եօթերորդ օրը, իսկ Աստուծոյ թագաւորութեան նոր՝ եօթերորդ հազարամեակը կը սկսուի յաջորդ, այսինքն՝ ութերորդ օրը (հին աշխարհի վերջին շաբաթուայ նկատմամբ):

354 Բառնաբասն այստեղ վկայում է վաղագոյն շրջանում կիրակի օրուայ տօնակատարութեան մասին (տես նաեւ Դիդախէ, ԺԴ 1): Վերեւում յիշուած առաջին տեսակէտի կողմնակիցները կարծում են, թէ Բառնաբասը «ութերորդ օր» արտայայտութիւնն օգտագործում է երկու բացարձակապէս տարբեր իմաստներով. ա) «ութերորդ օր»՝ արարչագործութիւնից սկսած, որը նոյնական է միւս աշխարհի՝ յաւիտենութեան օրուայ հետ, բ) «ութերորդ օր», որն առաջին օրն է նախորդ շաբաթուանից յետոյ (Մատթ. ԻԸ 1), ուստիեւ համապատասխանում է մեր կիրակի օրուան: Եւ քանի որ Յիսուսը յարութիւն առաւ «ութերորդ օրը» երկրորդ իմաստով, ուստի մենք նախապէս նշում ենք «ութերորդ օրը» առաջին իմաստով: Սակայն սա, ինչպէս ասացինք, խրթին է եւ անտրամաբանական:

355 Դրեսսելն այս երկու նախադասութիւններն անջատում է իրարից, որպէսզի այն տպաւորութիւնը չստեղծուի, թէ Տէրը յարութիւն է առել ու համբարձուել նոյն օրը:

356 Այս թարգմանութիւնը, որն աւելի հարազատ է բնագրին, այն տպաւորութիւնն է թողել թարգմանիչների վրայ, թէ Բառնաբասը հաւատում է, որ Տիրոջ համբարձումը տեղի է ունեցել յարութեան օրը: Ուրիշներ նշում են, որ հեղինակը կարող էր նկատի ունենալ այն, թէ համբարձումը տեղի է ունեցել յիսուներորդ օրը՝ Պենտեկոստէին, որը դարձեալ «ութերորդ օր» է: Ամէն դէպքում, յունարէն տեքստում ոչինչ չկայ, որ մեզ պարտադրի հաւատալ, թէ Բառնաբասն ընդունում էր, որ յարութիւնն ու համբարձումը տեղի են ունեցել միեւնոյն օրը:

Գլուխ ԺԶ

Նաեւ Տաճարի մասին կ'ասեմ ձեզ, թէ ինչպէս թափառական թշուառներն[357] ապաւինեցին կառոյցին՝ որպէս Աստուծոյ տան, եւ ոչ թէ իրենց Աստծուն, Ով ստեղծել էր իրենց[358]: Քանզի գրեթէ հեթանոսների նման Նրան Տաճարում պաշտեցին[359]: Բայց իմացէք, թէ ի՞նչ է ասում Տէրը՝ վերացնելով այն. «Ո՞վ է երկինքը չափել թզով, կամ երկիրը՝ ափով: Ո՞չ ես,— ասում է Տէրը»[360]: «Երկինքն Ինձ համար գահ է, իսկ երկիրը՝ ոտքերիս պատուանդան: Ի՞նչ տուն էք կառուցելու Ինձ համար, եւ ո՞րն է Իմ օթեւանը»[361]: Իմացէք, որ իզուր է նրանց յոյսը: Յետոյ Նա դարձեալ ասում է. «Ահա՛ այս տաճարն աւերողները. նրանք էլ կառուցելու են այն»[362]: Դա կատարւում է[363], քանզի նրանց դէմ պատերազմելիս թշնամին[364] քանդեց այն, իսկ այժմ նրանց թշնամու ծառաներն այն վերակառուցում են[365]: Եւ դարձեալ յայտնուեց, որ քաղաքը, տաճարը եւ Իսրայէլի ժողովուրդը յանձնուելու են: Քանզի Գիրքն ասում է. «Եւ վերջին օրերին այնպէս է լինելու, որ Տէրն արօտի ոչխարներին, փարախը եւ նրանց աշտարակը մատնելու է կործան-

357 Այսինքն՝ հրեաները:

358 Հմմտ. Երեմ. Է 4:

359 Բառացի՝ «նուիրաբերեցին», այսինքն՝ Նրա փոխարէն Տաճարը պաշտեցին եւ Նրա սրբութիւնը տարածեցին Տաճարի վրայ: Այստեղ ակնառու է Մատթ. ԻԳ 16—22-ի արձագանքը:

360 Ես. Խ 12

361 Ես. ԿԶ 1

362 Հմմտ. Ես. ԽԹ 17:

363 Սինայի ձեռագրում այս նախադասութիւնը չկայ:

364 Այսինքն՝ հռոմէացիները:

365 Այս հաստատումը մի շարք ենթադրութիւնների տեղիք է տուել: Ոմանք կարծում են, որ «թշնամու ծառաներ» անուանումը տրուած է քրիստոնեաներին, ուստի խօսքը վերաբերում է հոգեւոր տաճարի վերականգնմանը: Սակայն գիտնականների մեծ մասի կողմից ընդունուած է, որ դարձեալ կառուցուող տաճարը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Երուսաղէմի տաճարը: Հռոմէացիները կործանեցին այն 70 թուականին, իսկ հեղինակի կողմից նամակի գրութեան ժամանակ (հաւանաբար 117—132 թուականների միջեւ) հռոմէացիներն ու նրանց «ծառաները», այսինքն՝ հրեաները, վերակառուցում են այն: Հռոմի կայսր Ադրիանոսի՝ հրեաների նկատմամբ բարեացակամ քաղաքականութեան մասին յայտնի է:

ման»[366]: Եւ եղաւ այնպէս, ինչպէս խօսել էր Տէրը[367]: Տեսնենք, թէ ո՞րն է Տիրոջ տաճարը[368]: Դա այն է, որ Ինքն ասում է, թէ կառուցելու եւ կարգաւորելու է: Քանզի գրուած է. «Եւ երբ շաբաթը լրանայ, փառքով կը կառուցուի Աստուծոյ տաճարը՝ Տիրոջ անունով»[369]: Ես գտնում եմ, որ սա՛ է տաճարը: Արդ՝ ինչպէս է այն կառուցուելու Տիրոջ անունով՝ իմացէ՛ք: Նախքան Աստծուն հաւատալը, մեր[370] սրտի կացարանը՝ իբրեւ իսկական ձեռակերտ տաճար, եղծելի էր ու հիւանդ, քանի որ այն կռապաշտութեան բոյն[371] էր ու ոգիների կացարան՝ Տիրոջը հակառակ գործեր կատարելու պատճառով[372]: Եւ ուշադրութի՛ւն դարձրէք՝ «կը կառուցուի Տիրոջ անունով», որպէսզի Տիրոջ տաճարը «փառքով» կառուցուի: Ինչպէ՞ս՝ իմացէ՛ք: Մեղքերի թողութիւն ստանալով եւ Նրա անուանն ապաւինելով[373]՝ մենք դարձանք նոր՝ վերստին

366 Այս տողերը բառացիօրէն չկան Աստուածաշնչում: Բառնաբասը կամ փոխանցում է որոշ մարգարէութիւնների միտքը (ես. ե, երեմ. ԺԵ, ԻԵ, Միք. Դ), կամ էլ մէջբերում կատարում պարականոն Ենովքի գրքից (ԶԹ 56, 66):

367 Այս արտայայտութիւնը կարծես թէ չի համաձայնում այն հաստատմանը, թէ Տաճարը վերակառուցման ընթացքի մէջ է: Եթէ խօսքը վերաբերում է Տաճարի երկրորդ կործանման կանխագուշակմանը, ապա մենք գործ ունենք ապագան նշելու համար անցեալ ժամանակաձեւ օգտագործելու կիրառութեան հետ, որը հաւասարապէս տարածուած էր յոյների ու հրեաների մօտ: Սա ներդաշնակ է հրէական պատմութեան նկատմամբ Բառնաբասի դիրքորոշմանը:

368 Այսինքն՝ Երուսաղէմի տաճարի կործանումից յետոյ:

369 Հմմտ. Դան. Թ 24—27, Ամբ. Բ 10, Ենովք ՂԱ 13: Քրիստոսը մահացաւ, երբ «շաբաթը լրանում էր»: Նրա մահը վերացրեց հին Օրէնքը, եւ նոր տաճարի (մեսիական թագաւորութեան՝ Եկեղեցու) կառուցումն էր սկսւում «փառքով» (հմմտ. Գործ. Բ): Այն կառուցուեց «Տիրոջ անունով» (քրիստոնէական մկրտութեան ակնարկութիւն. տես Գործ. Բ 38): Հնարաւոր է, սակայն, որ «շաբաթը» լինի Դանիէլի «տարիների եօթանասուն շաբաթների» խտացուած արտայայտութիւնը: Տես նաեւ Երեմ. ԻԵ 12, ԻԹ 10:

370 Խօսքն ուղղուած է հեղինակին եւ նրա ընթերցողներին, անկախ նրանից, թէ նրանք մկրտութիւնից առաջ հեթանոսներ են եղել, թէ հրեաներ:

371 Բառնաբասի ամենազօրաւոր արտայայտութիւններից մէկն է՝ նկարագրելու համար մարդկանց վիճակը նախքան Քրիստոսի գալուստն ու Նրան հաւատալը: Սակայն Նոր Կտակարանում «կռապաշտութիւն» բառն օգտագործւում է աւելի լայն իմաստով (տես Կող. Գ 5, Եփես. Ե 5, նաեւ Գողիկարպոս, ԺԱ 2):

372 Այս խօսքը մէջբերում է Կղեմէս Ալեքսանդրացին (Strom. Բ 20):

373 Տես Իգնատիոս, Եփես. Բ 1, հմմտ. Գործ. Բ 38:

սկզբից արարուելով[374]. այդ պատճառով էլ մեր կացարանում՝ մեր մէջ, ճշմարտապէս Աստուած է բնակւում: Ինչպէ՞ս: Հաւատքի Նրա խօսքը[375], Նրա[376] ուխտի հրաւէրը[377], Նրա արդարութեան իմաստութիւնը, Նրա վարդապետութեան պատուիրանները. Նա է մեր մէջ մարգարէանում, Նա է մեր մէջ բնակւում. Նա մեր՝ մահուամբ ստրկացածներիս առաջ բացեց տաճարի դուռը, այսինքն՝ բերանը[378]. Նա մեզ, ապաշխարութիւն չնորհելով, մտցնում է անեղծ տաճարից ներս[379]: Քանզի նա, ով ցանկանում է փրկուել, նայում է ոչ թէ մարդուն[380], այլ նրա մէջ բնակուողին ու խօսողին՝ զարմանալով[381], որ այդ խօսքերը երբեք չի լսել՝ ասողի բերանից, ոչ էլ ինքն է ցանկացել լսել: Սա Տիրոջ համար կառուցուած հոգեւոր տաճարն է:

Գլուխ ԺԷ

Քանի որ կարելի չափով պարզ յայտնեցի ձեզ[382], ապա հոգիս յուսով է, որ, իմ ցանկութեանը համապատասխան, փրկութեանը վերաբերող[383] ոչինչ չեմ մոռացել: Քանզի եթէ ձեզ գրեմ ներկայի կամ ապա-

374 Մկրտութեան չնորհի հակիրճ նկարագրութիւն (Գաղ. Զ 15, տես Յովհ. Գ 3):

375 Յաջորդում է քրիստոնէութեան օրհնութիւնների մի հոյակապ ամփոփում: Հմմտ. Կղեմէս, ԼԶ:

376 Սինայի ձեռագիրը չունի «Նրա»:

377 Յաւիտենական փրկութեան հրաւէր:

378 Այսինքն՝ քրիստոնէական վարդապետութեան քարոզութիւնը (Եփես. Զ 19):

379 Այսինքն՝ Աստուծոյ թագաւորութիւնը, եկեղեցին, երկինքը: Ընդ որում, Սինայի ձեռագիրն այս բոլոր մտքերն առանձնացնում է՝ իւրաքանչիւրը գրելով առանձին տողով:

380 Խօսքը վերաբերում է Աւետարանը քարոզելուն նուիրուած մարդուն, ով զբաղուած է նորադարձներին ուսուցանելով:

381 Քրիստոնեայ լինելու երջանկութիւնը ճաշակելուց յետոյ նորադարձը զարմանում է իրեն վերապահուած օրհնութիւնների իրողութեան վրայ:

382 Հեղինակը յիշեցնում է ընթերցողներին իր հիմնական նպատակը, որն է՝ աւելի խոր «գիտելիք» հաղորդել հրէական ծիսական օրէնքի մասին («անցեալ»): Պէտք եղած դէպքում, այնուամենայնիւ, նա չօշափում է նաեւ ներկային ու ապագային վերաբերող հարցեր: «Ապագան» քաղաքակրթուած է առակների, կերպարների, այլաբանութեան մէջ, որը ճշգրիտ մեկնաբանութիւն թոյլ չի տալիս:

383 Ուրիշ ձեռագրերում «ներկայիս փրկութեանը վերաբերող»: Այդ դէպքում խօսքը վերաբերում է քրիստոնեաների կողմից հրէական ծէսերն ու օրէնքները պահելու անհրաժեշտութեան հարցին:

գայի մասին[384], դուք չէք հասկանայ, որովհետեւ այն թաքնուած է առակների մէջ: Այս ամէնն այսպէս է:

Գլուխ ԺԸ

Անցնենք նաեւ միւս գիտելիքին ու վարդապետութեանը[385]: Կայ ուսմունքի եւ զօրութեան[386] երկու ճանապարհ. մէկը լոյսի ճանապարհն է, միւսը՝ խաւարի[387]: Երկու ճանապարհների տարբերութիւնը մեծ է: Մէկի վրայ շարուած են Աստուծոյ լուսաբեր հրեշտակները, միւսի վրայ՝ սատանայի հրեշտակները[388]: Մէկը յաւիտեանս յաւիտենից Տէրն է, իսկ միւսը՝ ներկայ անօրէն ժամանակի[389] իշխանը:

Գլուխ ԺԹ

Արդ՝ լոյսի ճանապարհը սա է. եթէ մէկն ուզում է ճամփայ ընկնել դէպի որոշակի մի վայր, նա պէտք է շտապի իր գործերի մէջ: Արդ՝ այդ ճանապարհին քայլելու համար մեզ տրուած գիտելիքն այսպիսին է. սիրի՛ր քեզ Ստեղծողին, երկիւղի՛ր Նրանից, Ով քեզ ստեղծել է[390], փառաւորի՛ր Նրան, Ով մահից ազատել է քեզ: Եղիր սրտով պարզ եւ հոգով՝ հարուստ[391]. մի՛ յարիր մահուան ճանապարհով քայլողներին. ատի՛ր այն ամէնը, ինչ հաճելի չէ Աստծուն. ատի՛ր ամէն կեղծիք. մի՛ լքիր Տի-

384 Այսպէս է Սինայի ձեռագրում: Ուրիշ ձեռագրերում «գրում եմ ապագայի մասին»:

385 Հեղինակն այժմ չափազանց մօտենում է երկու ճանապարհների մասին Դիդախէի ուսմունքին՝ Ա 1—Զ 3:

386 Ցունարէն բառը (ἐξουσίας) յաճախ կիրառւում է հրեշտակների կամ դեւերի համար. հմմտ. Ա Պետ. Գ 22:

387 Այսինքն՝ կան ճշմարիտ եւ կեղծ վարդապետութիւններ, բարի եւ չար զօրութիւններ՝ հրեշտակներ ու դեւեր, որոնք տիրում են կեանքի երկու ճանապարհների վրայ: Այս հատուածը մէջբերւում է Որոգինէսի կողմից (De princip. Զ 2, Hom. 35 in. Luc.): Հմմտ. Հերմաս, Pastor. Mandat. Զ 1, 2:

388 Հմմտ. Բ Կոր. ԺԱ 14, ԺԲ 7:

389 Այսպէս է Սինայի ձեռագրում: Ուրիշ ձեռագրեր չունեն «ներկայ» բառը: «Ժամանակ» բառի յունարէն համարժէքն ընդհանրապէս նշանակում է ժամանակի սահմանափակ հատուած:

390 Միւս ձեռագրերը չունեն՝ «երկիւղիր Նրանից, ով քեզ ստեղծել է»:

391 Հմմտ. Հռոմ. ԺԲ 11, Գործ. ԺԸ 25:

րոջ պատուիրանները: Մի՛ բարձրացրու քո անձը, այլ ամէն ինչում[392] եղիր համեստ: Մի՛ փառաւորիր քեզ: Զար խորհուրդ մի՛ ունեցիր քո մերձաւորի դէմ. հոգիդ անպատկառութեան մի՛ տուր[393]: Մի՛ պոռնկացիր, մի՛ շնացիր, երեխաներ մի՛ փչացրու: Աստուծոյ խօսքը թող քեզանից դուրս չգայ անմաքուր բաների հետ[394]: Որեւէ մէկին մի՛ մեղադրիր զանցանքների համար: Եղիր հեզ, եղիր հանդարտ. դողա՛ քո լսած խօսքերի վրայ[395]. յիշաչար մի՛ եղիր քո եղբօր հանդէպ: Մի՛ տատանուիր այս կամ այն բանի մէջ[396]: Տիրոջ անունը[397] զուր տեղը չառնե՛ս[398]: Սիրի՛ր քո մերձաւորին քո անձից առաւել[399]: Մի՛ սպանիր երեխային արգ-

392 Միւս ձեռագրերը չունեն «ամէն ինչում»:

393 Ուրիշներ թարգմանում են՝ «թոյլ մի՛ տուր, որ անպատկառութիւնը մտնի քո հոգուց ներս»:

394 Ըստ Հեֆելէի բացատրութեան՝ «Աւետարանը քարոզելիս դու չպէտք է փչացած բարոյականութիւն ունենաս»: ACW-ը թարգմանում է. «Թող Աստուծոյ խօսքը դուրս չգայ քո բերանից որեւէ անմաքուր մէկի ներկայութեամբ»: Եթէ այդպէս է, սա կարող է լինել Մատթ. Է 6-ի սկզբունքի արտայայտութիւններից մէկը: Զգայական հաճոյքներով տարուելը տեղ չի թողնում աւետարանական ճշմարտութիւնների համար: Կարելի է յիշել այն դրուագը, երբ Փելիքսը լռեցրեց սբ Պօղոսին, երբ վերջինս խօսում էր «արդարութեան ու ժուժկալութեան» մասին (Գործ. ԻԴ 25): Բառնաբասն այստեղ գուցէ ակնարկում է Նիկողայոսեաններին (Հմմտ. Յայտ. Բ 6, 15):

395 Հմմտ. Ես. ԿԶ 2, Փլպ. Բ 2: Նախորդ բոլոր նախադասութիւնները Սինայի ձեռագրում գրուած են առանձին պարբերութեամբ:

396 Հմմտ. Յակ. Ա 8, Դիդախէ Դ 4: Ցունարէնն այստեղ երկիմաստ է: Այն կարող է նշանակել կա՛մ «քո որոշման մէջ մի տատանուիր», կա՛մ «մի՛ կասկածիր, թէ արդեո՞ք Տիրոջ խոստումները կատարուելու են, թէ ոչ»: Երկրորդ պարագայում խօսքը վերաբերում է ապագային, այսինքն՝ Քրիստոսի գալստեանը, դատաստանին եւ բարիների ու չարերի հատուցմանը:

397 Սինայի ձեռագրում՝ «քո անունը», սակայն սա բացայայտ սխալ է:

398 Ել. Ի 7

399 Սա, հաւանաբար, Յովհ. ԺԵ 13-ի անդրադարձն է: «Քո անձից առաւել» արտայայտութիւնը կարծես թէ գերազանցում է Աւետարանի պահանջը (Մատթ. ԺԹ 19), սակայն «անձ» թարգմանուած բառն օգտագործւում է նշելու համար մարդկային բնութեան ստորին հատուածը: Բառնաբասը կարծես թէ ուզում է ասել. «Թող անձնական կամ եսական հետաքրքրութիւնները քեզ հեռու չպահեն քո մերձաւորին քեզ նման սիրելուց»: Ուրիշ խօսքով ասած՝ «եսասէր մի՛ եղիր»: Սա կարծես թէ ներդաշնակւում է յաջորդ նախադասութիւնների հետ, որտեղ նշուածներն այս սկզբունքի ոտնահարումն են: Սինայի ձեռագրի հեղինակն ուղղել է՝ «ինչպէս քո անձը»:

գանդում եւ մի՛ սպանիր արդէն ծնուածին: Քո ձեռքը մի՛ վերցրու քո որդու կամ դստեր վրայից, այլ պատանեկութիւնից սկսած նրան Աստուծոյ[400] երկիւղը սովորեցրու: Քո մերձաւորի ունեցուածքին մի՛ ցանկացիր, ընչաքաղց մի՛ եղիր: Հոգով մի՛ յարիր բարձրերին, այլ շփուիր նուաստների ու արդարների հետ: Քեզ հետ պատահածներն[401] ընդունիր որպէս բարիք՝ իմանալով, որ առանց Աստուծոյ ոչինչ չի կատարւում[402]: Երկերեսանի մի՛ եղիր, ոչ էլ երկլեզու[403], քանզի երկլեզուութիւնը մահու որոգայթ է[404]: Ցարգանքով ու երկիւղով հնազանդուի՛ր տէրերին[405]՝ իբրեւ Աստուծոյ պատկերի: Զայրոյթով մի՛ հրամայիր քո ծառային կամ աղախնուն, ովքեր նոյն Աստծուն[406] են ապաւինում, որպէսզի չդադարեն[407] երկիւղելուց մեր եւ նրանց վերեւում եղող Աստծուց. քանզի Նա եկաւ կոչելու ոչ թէ արտաքին տեսքից դատելով[408], այլ նրանց, ում Հոգին է պատրաստել[409]: Ամէն ինչ կիսի՛ր քո մերձաւորի հետ եւ[410] մի՛ ասա, թէ դրանք քո սեփականն են[411]: Քանզի եթէ անապականին[412] հաղորդակից էք, ապա որքա՛ն առաւել ապականացու բաներին[413]: Լեզուիդ մի՛ տուր, քանզի բերանը մահու որոգայթ է: Որքան կարող ես, մաքո՛ւր[414] պահիր քո հոգին: Մի՛ եղիր այնպիսին, որ ստանալիս ձեռքդ պարզես, իսկ տալիս կծկես: Քո աչքի բիբի պէս[415] սիրի՛ր քեզ Տիրոջ խօսքն ասողին: Ցիշի՛ր դատաստանի օրը զո-

400 Ուրիշ ձեռագրերում՝ «Տիրոջ»:
401 «Դժուարութիւնները» կամ «աղէտները»:
402 Միւս ձեռագրերը չունեն այս նախադասութեան երկրորդ մասը:
403 Սինայի ձեռագրում՝ «չատախօս»:
404 Այս վերջին հատուածը չկայ Սինայի ձեռագրում: Հմմտ. Առակ. ԻԱ 6:
405 Միւս ձեռագրերում՝ «Տիրոջը եւ տէրերին»:
406 Միւս ձեռագրերը չունեն «Աստծուն»:
407 Միւս ձեռագրերում՝ «որպէսզի դու չդադարես»:
408 Հմմտ. Եփես. Զ 9, Դիդախէ Դ 10:
409 Հմմտ. Հռոմ. Ը 29—30:
410 Միւս ձեռագրերը չունեն «եւ»:
411 Հմմտ. Գործ. Դ 32, Constit. Apost. Է 12:
412 Միւս ձեռագրերում՝ «անեղծ բաներին»:
413 Սինայի ձեռագրում՝ «որոնք ենթակայ են մահուան»:
414 Ցունարէն բառը յաճախ սեռական մաքրութիւն է արտայայտում: Եթէ այստեղ նկատի է առնուած այդ իմաստը, ապա «որքան կարող ես» արտայայտութիւնը կարող է կամաւոր ժուժկալութեան յորդոր լինել, ինչպէս Մատթ. ԺԹ 12-ում:
415 Բ Օր. ԼԲ 10, Սաղմ. ԺԶ 8

րուգիչեր[416]: Ամէն օր փնտրիր սրբերի[417] դէմքերը[418]՝ կամ նրանց խօսքերով փորձելով, սփոփելու գնալով եւ քո հոգին խօսքի միջոցով փրկելու ձգտելով[419], կամ քո ձեռքերո՛վ վաստակիր քո մեղքերի փրկագինը[420]: Տալուց մի՛ երկնչիր եւ տալուց յետոյ մի՛ տրտնջա: «Ամէնքին, որ խնդրում են քեզանից, տո՛ւր»[421], եւ կ'իմանաս, թէ ով է բարի Վարձահատոյցը: Պահպանի՛ր այն, ինչ ստացել ես, առանց որեւէ բան աւելացնելու կամ պակասեցնելու[422]: Վերջապէս, ատի՛ր չարը[423], [424]արդարութեա՛մբ դատիր[425]: Հերձուած մի՛ ստեղծիր, այլ հաշտեցրո՛ւ վիճող-

416 Բառացի՝ «յիշեցրու քեզ դատաստանի օրը զօրուգիչեր»: Սակայն Հեֆելէն ու Դրեսսելը գտնում են, որ տեքստն այստեղ վնասուած է, եւ փոխում են ըստ մէկ այլ ձեռագրի. այս հատուածի համարժէքը գտնւում է Դիդախէում (Է 9):
417 Այսինքն՝ քրիստոնեաների: Հմմտ. Գործ. Թ 13, Հռոմ. ԺԲ 13 եւն:
418 Կամ՝ «սրբերի անձերը»: Սինայի ձեռագիրը չունի այս նախադասութիւնը, սակայն այն աւելացուած է սրբագրիչի կողմից:
419 Սինայի ձեռագիրը վնասուած է: Տեքստն այստեղ անորոշ է բոլոր հրատարակութիւններում: Պրէոբրաժենսկու ռուսերէն թարգմանութեան մէջ տրուած է. «Փորձիր ամէն օր հանդիպել սրբերի հետ զրոյցի համար. գնա նրանց մօտ նրանց սփոփելու՝ հոգալով այն մասին, որ քո խօսքով հոգին փրկես. օգտագործիր քո ձեռքերը, որպէսզի թողութիւն ստանաս քո մեղքերի համար»: ACW-ը թարգմանում է. «Դու հմո՞ւտ ես խօսելու մէջ. ուրեմն գնա սփոփելու եւ ջանա փրկել տանջուած հոգին: Դու աշխատո՞ւմ ես քո ձեռքերով. ուրեմն փրկագի՛ն վճարիր քո մեղքերի համար»: Իմաստային արտայայտութիւնը, սակայն, ընդհանուր գծերի մէջ նոյնն է: Բառնաբասը բարեկամ քրիստոնեաներին այցելելու երկու հնարաւորութիւն է գտնում. եթէ մէկն ունի ուսուցանելու շնորհ, ապա կարող է սփոփել միւսներին, իսկ եթէ աշխատաւոր է, կարող է օգնել կարիքաւորներին ողորմութեան միջոցով: Դիդախէն (Դ 2) նշում է մէկ այլ հնարաւորութիւն. մէկը կարող է թարմանալ սրբերի զրոյցներով: Մեր թարգմանութիւնն աւելի մօտ է Դրեսսելի ու Հիլգենֆելդի թարգմանութեանը:
420 Հմմտ. Դիդախէ Է 12:
421 Հմմտ. Մատթ. Ե 42, Ղուկ. Զ 30: Սինայի ձեռագիրը չունի այս մէջբերումը:
422 Հմմտ. Բ Օր. Դ 2, ԺԳ 1, ԺԲ 32:
423 Միւս ձեռագրերում՝ «ատիր չար մարդուն»:
424 Սինայի ձեռագիրն աւելացնում է «եւ»:
425 Հմմտ. Բ Օր. Ա 16—17, Առակ. ԼԱ 9:

ներին: Խոստովանի՛ր քո մեղքերը[426]: Զար խղճով մի՛ գնա աղօթելու: Այսպիսին է լոյսի ճանապարհը[427]:

Գլուխ Ի

Իսկ խաւարի[428] ճանապարհը կեղծ է եւ անէծքով լի: Քանզի այն յաւիտենական[429] մահուան ու պատժի ճանապարհն է, որի վրայ է գտնուում այն ամէնը, ինչ հոգիներին կորստեան է մատնում. կռապաշտութիւն, անպատկառութիւն, ուժի գերագնահատում, կեղծաւորութիւն[430], երկերեսանիութիւն, շնութիւն, սպանութիւն, յափշտակութիւն, գողզամտութիւն, օրինազանցութիւն[431], դաւ, չարութիւն, անհերեսութիւն, թունաւորում, կախարդութիւն, ընչաքաղցութիւն[432], Աստուծոյ երկիւղի բացակայութիւն: [Այս ճանապարհին են նաեւ] բարուն հալածողները, ճշմարտութիւնն ատողները, սուտը[433] սիրողները, արդարութեան վարձն անգիտացողները, բարուն չյարողները[434], արդար դատաստանով այրու եւ որբի մասին չհոգացողները, ովքեր աշխուժանում են ոչ թէ աստուածվախութիւնից, այլ չարի նկատմամբ հակումից, որոնցից հեռու են խոնարհութիւնն ու հանդուրժողութիւնը. ունայնասէրները[435], ովքեր ձգտում են վարձատրութեան, չեն կարեկցում աղքատին, չեն ցաւակցում ճնշուածին. չարախօսութեան յարողները, որոնք չեն

426 Հմմտ. Սիր. Դ 30: Այս արտայայտութիւնն ընդունւում է որպէս առաջին ակնարկներից մէկը՝ իբրեւ մեղքերի թողութեան միջոց խոստովանութեան կիրառութեան:
427 Սինայի ձեռագիրը չունի այս նախադասութիւնը:
428 Բառացի՝ «սեւ»:
429 Սինայի ձեռագիրը «յաւիտենական» բառը կցում է «ճանապարհին»:
430 Լայն հասկացութիւն է, որն ունի բազմաթիւ ընդգրկումներ (խաբէութիւն, սուտ, կեղծիք, երեսպաշտութիւն, ձեւապաշտութիւն, սեթեւեթանք, անուղղամտութիւն եւն): Հաւանաբար այստեղ բառը պարզապէս օգտագործուած է յուդայականութիւնը կամ «յուդայական հակումները» նշելու համար (տես Դիդախէ Ը 1): Այս վերջին ենթադրութիւնը ներդաշնակ է նամակի ընդհանուր ոգուն:
431 Սինայի ձեռագրում «օրինազանցութիւններ»:
432 Սինայի ձեռագրում չկայ «կախարդութիւն, ընչաքաղցութիւն»:
433 Այս բառը չկայ տեքստում: Այն վերականգնուած է ըստ Դիդախէի (Է 18):
434 Հմմտ. Հռոմ. ԺԲ 9:
435 Հմմտ. Սաղմ. Դ 3, Ես. Ա 23:

ճանաչում իրենց Արարչին. որդեսպանները[436], Աստուծոյ ստեղծածը փչացնողները[437], կարիքաւորից երես թեքողները, տանջուածին տանջողները, հարուստների պաշտպանները, չքաւորների անօրէն դատաւորները, ըստ ամենայնի մեղաւորները:

Գլուխ ԻԱ

Արդ[438՝] բարի է, Տիրոջ գրուած օրէնքներն իմանալով, դրանց ճանապարհով ընթանալ: Քանզի այս ամէնը կատարողը փառաւորուելու է Աստուծոյ արքայութեան մէջ, իսկ միւս ճանապարհն ընտրողը[439] կորչելու է իր գործերի հետ միասին: Դրա համար կայ յարութիւն[440], եւ կայ հատուցում: Դիմում եմ լաւերին. եթէ իմ այս խօսքերից որեւէ խորհուրդ ստանում էք, ուրեմն եղէ՛ք նրանց հետ[441], ում բարիք էք գործել. զանց մի՛ արէք սա: Մօտ է այն օրը, երբ ամէն չար կորչելու է: Մօտ են Տէրը եւ Նրա հատուցումը[442]: Դարձեալ ու դարձեալ դիմում եմ ձեզ. եղէ՛ք ձեր բարի օրէնսդիրները[443], մնացէ՛ք ձեզ համար հաւատարիմ խորհրդատուներ[444], ձեզանից հեռո՛ւ վանեցէք ամէն տեսակ կեղծիք: Իսկ Աստուած՝ համայն աշխարհի տիրակալը, ձեզ կը պարգեւի իմաստութիւն, խոհեմութիւն, գիտութիւն, Իր օրէնքների իմացութիւնը[445], համբերութիւն[446]: Եղէ՛ք[447] Աստուծոյ աշակերտներ[448], փնտրեցէ՛ք, թէ ինչ է Տէրը պահանջում ձեզանից, եւ կատարեցէ՛ք այն, որ-

436 Հմմտ. Իմաստ. ԺԲ 5:
437 Երեւի նկատի ունի արհեստական վիժումը: Տես Դիդախէ Ե 2:
438 Սինայի ձեռագիրը չունի «արդ»:
439 Այսինքն՝ խաւարի ճանապարհն ընտրողը:
440 Սինայի ձեռագիրն ունի «յարութիւններ», սակայն սա ակնյայտ սխալ է:
441 Հմմտ. Յովհ. ԺԲ 8, Գաղ. Զ 9, Բ Թես. Գ 13:
442 Հմմտ. Ես. Խ 10, Յայտ. Ա 3, ԻԲ 10:
443 Սինայի ձեռագրում «բարի բաների օրէնսդիրները»:
444 Այսինքն՝ խորհուրդ մի՛ հարցրէք հրեաներից («կեղծաւորներ»): Ամո՛ւր պահէք քրիստոնէական հաւատքը:
445 Միւս ձեռագրերում՝ «իմացութիւն համբերութեան հետ»:
446 Այս խօսքերը մէջբերում է Կղեմէս Ալեքսանդրացին (Strom. Բ 18):
447 Միւս ձեռագրերում՝ «դուք եղէք»:
448 Հմմտ. Ես. ԾԴ 13, Յովհ. Զ 45, Ա Թես. Դ 9, Ա Յովհ. Բ 27:

պէսզի պատրաստ լինէք դատաստանի օրուան[449]: Եթէ որեւէ մէկն ուզում է բարին յիշել, ապա յիշեցէ՛ք ինձ՝ սովորելով այս ամէնը, որպէսզի իմ ձգտումն ու արթնութիւնը ծառայեն բարուն: Դիմում եմ ձեզ՝ շնորհ խնդրելով: Քանի դեռ բարի անօթը ձեզ հետ է[450], ոչինչ զանց մի՛ առէք[451], այլ մշտապէս հետամուտ եղէք այս ամէնին եւ կատարեցէ՛ք բոլոր պատուիրանները, քանզի դրանք արժանի են[452]: Ուստի այս ամէնի մասին շտապեցի գրել, ինչպէս կարողացայ[453], որպէսզի ձեզ ուրախացնեմ[454]: Փրկուեցէ՛ք, սիրոյ եւ խաղաղութեա՛ն որդիներ: Փառքի եւ շնորհների Տէրը թող ձեր հոգու հետ լինի[455]: Ամէն[456]:

Հին յունարէնից թարգմանեց
Սիմոն Գրքաշարեանը

Խմբագրեց ու ծանօթագրեց
Միքայէլ եպս Աղջապահեանը

449 Սինայի ձեռագրում՝ «որպէսզի կարողանաք գտնուել դատաստանի օրը»:

450 Այսինքն՝ մարմինը: Սա նշանակում է՝ քանի դեռ դուք ապրում էք ներկայ կեանքով: Ուստի ոմանք թարգմանում են՝ «քանի դեռ դուք այս բարի անօթի մէջ էք»: Սբ Պօղոսը «անօթ» բառն օգտագործում է մարդկային մարմնի (Բ Կոր. Դ 7), մարդու (Հռոմ. Թ 22, հմմտ. Գործ. Թ 15), կնոջ (Ա Թես. Դ 4, հմմտ. Ա Պետ. Գ 7) համար: Καλός ածականը դասական շրջանում նշանակում էր «ազնիւ, գեղեցիկ». աւելի ուշ այն կարող էր նշանակել «բարի, լաւ», ինչպէս օրինակ՝ «բարի հովիւ» (Յովհ. Ժ 14):

451 Բառացի՝ «ոչնչի մէջ մի՛ ձախողէք»:

452 Սինայի ձեռագրում եզակի է:

453 Սինայի ձեռագրը չունի «ինչպէս կարողացայ»:

454 Հեղինակի նպատակի վերջին յիշատակումը: Նամակը սկսւում եւ աւարտւում է «խաղաղութեամբ»: Սա բնորոշ է պօղոսեան ոճին (Հռոմ. Ա 17, ԺԶ 12, Բ Կոր. Ա 2, ԺԳ 11):

455 Պօղոսեան է նաեւ «ձեր հոգու հետ» եզրափակիչ արտայայտութիւնը: Հմմտ. Գաղ. Զ 18:

456 Սինայի ձեռագիրը չունի «Ամէն», իսկ վերջում աւելացնում է՝ «Բառնաբասի նամակը»:

ՀՌՈՄԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԲ ԿՂԵՄԷՍԻ Բ ՆԱՄԱԿԸ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ[1]

Գլուխ Ա

Չի կարելի վատ մտածել Քրիստոսի եւ մեր փրկութեան մասին

Եղբայրնե՛ր, դուք Յիսուս Քրիստոսի մասին պէտք է մտածէք որպէս Աստուծոյ, որպէս ողջերի ու մեռեալների դատաւորի[2]: Եւ մեզ[3] չի կարելի թեթեւակիօրէն[4] մտածել[5] մեր փրկութեան մասին, քանզի եթէ մենք քիչ մտածենք Նրա մասին[6], նաեւ քիչ ստանալու յոյս ենք ունենալու: Եւ եթէ մենք այդ մասին լսում ենք որպէս փոքր բանի[7], ապա

1 Ալեքսանդրեան ձեռագիրն անվերնագիր է: 1056 թուականի ձեռագիրը տալիս է Առաջին նամակին համապատասխան վերնագիր՝ «Կղեմէսի Բ նամակը կորնթացիներին»: Ասորերէն բնագիրը Կղեմէսի առաջին նամակի վերջում տալիս է՝ «Նոյնի երկրորդ նամակը կորնթացիներին», իսկ վերջում՝ «Այստեղ վերջանում է Կղեմէսի երկրորդ նամակը կորնթացիներին»: (Նամակի հեղինակն իրականում Կղեմէս Հռոմէացին չէ, սակայն այն հրատարակում ենք նրա անունով, ինչպէս աւանդաբար այն հասել է մեզ: Սբ Կղեմէսի եւ նրա գործերի մասին տես "Գանձասար", 6 հտ., 1994 թ., էջ 98—113, անվաւեր համարուող այս նամակի մասին՝ անդ, էջ 107—108: — "Գանձասարի" խմբ.):

2 Յովհ. 6 22, 27, Գործ. Ժ 42, ԺԷ 31, Բ Տիմ. Դ 1

3 Բնագրում յաճախակի են յոգնակի երկրորդ դէմքից յոգնակի առաջին դէմքի անցումները:

4 Բառացի՝ «փոքր բաներ»: Lightfoot-ի թարգմանութեան մէջ (The Apostolic Fathers. Edited and trans. by J. B. Lightfoot, II edition, Part one, Clement, vol. 2, pp. 306-316)՝ «վատ բաներ»:

5 Ինչպէս հրեաներն էին երազում Մեսիայի՝ երկրի վրայ թագաւորութեան մասին:

6 Այսինքն՝ Յիսուս Քրիստոսի: Ոմանք կարծում են, թէ հեղինակն այստեղ նկատի ունի էբիոնիտներին, ովքեր Քրիստոսին ընդունում էին որպէս հասարակ մահկանացուի: Սակայն նրա խօսքերը Քրիստոսի մասին այնքան ընդհանուր են, որ նման հետեւութեան տեղիք չեն տալիս: Ընդհակառակը՝ հեղինակը նպատակ ունի ընթերցողին մղել Քրիստոսի նկատմամբ ճշմարիտ խոստովանութեան ու աշխարհի մերժման:

7 Lightfoot-ը, հետեւելով ասորերէնին, թարգմանում է. «Եւ նրանք, ովքեր լսում են կարծես վատ բաների մասին, սխալ են անում, եւ մենք ինքներս սխալ ենք անում՝ չիմանալով» եւն: Սակայն յունարէնն աւելի համառօտ է:

մեղանչում ենք՝ չիմանալով, թէ որտեղից ենք մենք, ում կողմից, դէպի ուր ենք կոչուած, եւ թէ Յիսուս Քրիստոսը որքա՛ն հաճեց կրել մեզ համար: Արդ՝ ինչպէ՞ս պէտք է վարձահատոյց լինենք Նրան կամ ինչպիսի՞ պտուղ մատուցենք՝ արժանի այն բանին, ինչ Նա պարգեւել է մեզ: Որովհետեւ[8]*, իսկապէս, որքա՛ն շատ են այն սրբութիւնները*[9]*, որոնց համար մենք Նրան ենք պարտական: Քանզի Նա մեզ լոյս պարգեւեց. որպէս Հայր՝ Նա մեզ որդիներ անուանեց. Նա փրկեց մեզ՝ կորստեան մատնուածներիս: Ուրեմն ինչպիսի՞ փառաբանութիւն առաքենք Նրան կամ ինչո՞վ փոխհատուցենք այն բաների դիմաց, որ մենք ստացանք*[10]*: Մենք, մտքով կոյր լինելով, երկրպագում էինք քարերին ու փայտերին, ոսկուն, արծաթին ու պղնձին, մարդկանց*[11] *ստեղծագործութիւններին, եւ մեր ողջ կեանքը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ՝ միայն մահ: Խաւարով շրջապատուած ու նման տեսողութեամբ մթագնած՝ մենք Նրա կամքով սկսեցինք տեսնել եւ մերժեցինք մեզ պատած մառախուղը: Քանզի Նա գթաց մեզ եւ Իր ողորմութեամբ փրկեց մեզ՝ տեսնելով, որ մենք գտնուում ենք խիստ մոլորութեան ու կործանման մէջ*[12]*, եւ որ մենք փրկութեան ոչ մի յոյս չունենք, բացի միայն Իրենից: Որովհետեւ Նա հրաւիրեց մեզ՝ անգոներիս, եւ կամեցաւ, որ չգոյութիւնից գոյութեան կոչուենք*[13]*:*

Գլուխ Բ

Նախապէս ամուլ Եկեղեցին հեթանոսների կոչման միջոցով չափազանց պտղաբեր դարձաւ

«Ցնծա՛, ամուլ, որ չէիր ծնում, գոչիր եւ աղաղակի՛ր, որ չէիր երկնում, որովհետեւ բազում են լքուածիդ որդիները, առաւել, քան ամուսին ունեցողինը»[14]*: «Ցնծա՛, ամուլ, որ չէիր ծնում» ասելով Նա ակ-*

8 *Ալեքսանդրեան ձեռագիրը չունի «որովհետեւ»:*
9 *Անգլերէնում (Lightfoot)՝ «օգուտներ», Գրէոբրաժենսկու ռուսերէն թարգմանութեան մէջ՝ «առաւելութիւններ»:*
10 *Հմմտ. Սաղմ. ճԺԵ 12:*
11 *Ռուսերէնում «մարդկային»:*
12 *Անգլերէնում «նկատելով այն շատ սխալները, որոնց մէջ խճճուած էինք, ինչպէս նաեւ այն կործանումը, որին վիճակուած էինք»:*
13 *Հմմտ. Հռոմ. Դ 17, Ովս. Բ 23, Հռոմ. Թ 25:*
14 *Ես. ԾԴ 1, Գաղ. Դ 27*

նարկեց մեզ[15]*, քանզի մեր Եկեղեցին ամուլ էր նախքան իրեն զաւակներ տրուելը: Իսկ երբ Նա ասաց. «Աղաղակի՛ր, որ չէիր երկնում», նկատի ունէր, որ մենք պէտք է մեր աղօթքներն առաքենք առ Աստուած անկեղծութեամբ եւ ո՛չ թէ չարութեամբ, ինչպէս ծննդականները*[16]*: Իսկ «որովհետեւ բազում են լքուածիդ որդիները, առաւել, քան ամուսին ունեցողինը» ասելով [Նա նկատի ունէր], որ*[17] *մեր ժողովուրդը կարծես թէ լքուած էր Աստծուց, իսկ այժմ, հաւատալու միջոցով, մենք դարձանք աւելի շատ, քան նրանք, ովքեր Աստծուն ունեցողներ էին համարուում*[18]*: Եւ միւս Գիրքն*[19] *ասում է. «Զեկայ կոչելու արդարներին, այլ մեղաւորներին»*[20]*: Սա նշանակում է, որ կորածները պէտք է փրկուեն: Քանզի իսկապէս վեհ ու հիասքանչ գործ է ոչ թէ կանգուն եղածներին, այլ ընկածներին հաստատելը: Այսպէս եւ Քրիստոսը կամեցաւ*[21] *փրկել կորածներին*[22] *եւ փրկեց շատերին՝ գալով ու կոչելով մեզ՝ արդէն կորածներիս*[23]*:*

Գլուխ Գ

Խոստովանենք Քրիստոսին՝ Նրա պատուիրանները կատարելով եւ ողջ սրտով Նրան պաշտելով

Արդ՝ Նա մեր նկատմամբ այսպիսի մեծ ողորմութիւն ցուցաբերեց: Նախ՝ որ մենք, որ կենդանի ենք, զոհ չենք մատուցում մեռած աստուածներին կամ երկրպագում նրանց, այլ Նրա միջոցով ճանաչեցինք ճշմարիտ Հօրը. ուստի ո՞րն է մեր գիտելիքը Նրա հանդէպ, եթէ ոչ այն,

15 *Այսինքն՝ հեթանոսներին: Իր եւ իր ընթերցողների մասին հեղինակի ունեցած արտայայտութիւններից երեւում է, որ նա եղել է հեթանոսութիւնից դարձած քրիստոնեայ:*
16 *Ռուսերէնում «ոչ թէ փոքրոգիօրէն, ինչպէս ծննդականները»:*
17 *Lightfoot-ը թարգմանում է՝ «Նա այսպէս խօսեց, որովհետեւ...»:*
18 *Այսինքն՝ հրեա ժողովուրդը: Սա նոյնպէս նշանակում է, որ հեղինակը եղել է հեթանոս:*
19 *Այսինքն՝ Նոր Կտակարանը:*
20 *Մատթ. Թ 13, Ղուկ. Ե 32*
21 *Հմմտ. Բ Պետ. Գ 9:*
22 *Հմմտ. Մատթ. ԺԸ 11, Ղուկ. ԺԹ 10:*
23 *Հմմտ. Յայտ. Գ 2:*

որ չուրանանք Նրան, Ում միջոցով մենք ճանաչեցինք Նրան: Քանզի Նա Ինքն էլ է յայտարարում[24]. «Ով կը խոստովանի Ինձ մարդկանց առջեւ, կը խոստովանեմ եւ ես նրան Իմ Հօր առջեւ»[25]: Ուրեմն սա՛ է մեր վարձը, եթէ մենք խոստովանենք Նրան, Ում միջոցով փրկուել ենք: Սակայն ինչպէ՞ս պէտք է խոստովանենք Նրան. կատարելով Նրա խօսքերը եւ չխախտելով Նրա պատուիրանները, այլ պաշտելով Նրան ոչ միայն շուրթերով, այլեւ ամբողջ սրտով ու ողջ մտքով[26]: Քանզի Նա ասում է[27] Եսայու մօտ. «Այս ժողովուրդն Ինձ շուրթերով է պաշտում, իսկ նրա սիրտը հեռու է մնում Ինձանից»[28]:

Գլուխ Դ

Ո՞վ է ճշմարտապէս խոստովանում Քրիստոսին

Ուրեմն՝ Նրան սոսկ Տէր չանուանենք, որովհետեւ դա չի փրկի մեզ: Քանզի Նա ասում է. «Ո՛չ ամէն ոք, որ կ'ասի Ինձ՝ Տէր, Տէր, կը փրկուի, այլ նա, ով արդարութիւն կը գործի»[29]: Ուստի, եղբայրներ, խոստովանենք Նրան մեր գործերով, փոխադարձ սիրով, չշնանալով, միմեանց չքամքասելով, ոչ թէ նախանձով, այլ ժուժկալութեամբ, ողորմածութեամբ, բարութեամբ: Մենք պէտք է կարեկցենք միմեանց եւ չպէտք է արծաթասէր լինենք: Այսպիսի[30] գործերով խոստովանենք Նրան[31] եւ ո՛չ թէ սրանց հակոտնեաներով: Եւ մենք չպէտք է մարդկանցից աւելի վախենանք, քան Աստծուց: Դրա համար էլ այդպէս գործողներին Տէրն ասել է. «Անգամ եթէ դուք հաւաքուած լինէք Իմ գրկում[32] եւ չկատարէք Իմ պատուիրանները, կը մերժեմ ձեզ եւ կ'ասեմ ձեզ[33]՝ հե-

24 Lightfoot-ի մօտ՝ «Նա Ինքն էլ ասաց»:
25 Մատթ. Ժ 32
26 Հմմտ. Մատթ. ԻԲ 37:
27 Ոմանք թարգմանում են՝ «Այժմ Նա ասաց նաեւ»:
28 Ես. ԻԹ 13
29 Հմմտ. Մատթ. Է 21:
30 Ալեքսանդրեան ձեռագրի վնասուածքը լրացւում է այս բառով:
31 Ոմանք ունեն՝ «Աստծուն»:
32 Կամ՝ «Ինձ հետ Իմ գրկում»:
33 Այս խօսքերը չկան Աստուածաշնչում: Դրանք նոյնիսկ չեն նոյնացուել որեւէ պարականոն հատուածի հետ:

ռո՛ւ գնացէք Ինձանից, չե՛մ ճանաչում ձեզ, թէ որտեղից էք, անօրէնութի՛ւն գործողներ»[34]:

Գլուխ Ե

Արհամարհենք աշխարհը եւ ձգտենք միւս կեանքի երանութեանը

Ուստի, եղբայրներ, թողնելով այս աշխարհի կեցութիւնը՝ կատարենք մեզ Հրաւիրողի կամքը եւ չվախենանք այս աշխարհից հեռանալուց: Քանզի Տէրն ասաց. «Կը լինէք ինչպէս գառներ գայլերի մէջ»[35]: Իսկ Պետրոսը պատասխանեց ու ասաց Նրան. «Իսկ եթէ գայլերը յօշոտե՞ն գառներին»[36]: Եւ Յիսուսն ասաց Պետրոսին. «Գառները չպէտք է վախենան[37] գայլերից իրենց մահից յետոյ[38], նմանապէս եւ դո՛ւք մի վախեցէք ձեզ սպանողներից, ովքեր ձեզ աւելին չեն կարող անել, այլ վախեցէք Նրանից, ով ձեր մահից յետոյ իշխանութիւն ունի ե՛ւ հոգու, ե՛ւ մարմնի վրայ՝ [դրանք] կրակի գեհեն նետելու»[39]: Եւ իմացէ՛ք[40], եղբայրներ, որ մեր մարմնի թափառումն այս աշխարհում անցողիկ է ու կարճատեւ, իսկ Քրիստոսի խոստումը՝ մեծ ու սքանչելի, այսինքն՝ գալիք արքայութեան հանգիստն ու յաւիտենական կեանքը: Ուրեմն վարքի ի՞նչ ընթացքով ենք մենք հասնելու այս բաներին, եթէ ոչ սուրբ ու արդար կենցաղավարութեամբ, աշխարհիկ [վայելքները] մեզ խորթ համարելով ու դրանք չցանկանալով: Քանզի, եթէ մենք ցանկանում ենք դրանք ձեռք բերել, շեղւում ենք արդար ուղուց:

34 Մատթ. Է 23, Ղուկ. ԺԳ 27
35 Մատթ. Ժ 16
36 Քրիստոսի ու Պետրոսի այս երկխօսութիւնը չի յիշւում Աստուածաշնչում:
37 Կամ՝ «Թող գառները չվախենան»:
38 Այս խօսքերը չկան Աստուածաշնչում:
39 Մատթ. Ժ 28, Ղուկ. ԺԲ 4—5
40 Կամ՝ «Հաշուի առէք»:

Գլուխ Զ

Ներկայ ու ապագայ ժամանակները՝ երկու թշնամիներ:
Արհամարհելով առաջինը՝ սիրենք վերջինը:
Այլապէս փրկութեան յոյս չկայ:

Տէրն ասում է. «Ոչ մի ծառայ չի կարող երկու տիրոջ ծառայել»[41]*: Եթէ մենք ցանկանում ենք ծառայել ե՛ւ Աստծուն, ե՛ւ մամոնային, դա մեզ համար անօգուտ կը լինի: «Քանզի ի՞նչ օգուտ, եթէ մէկն ամբողջ աշխարհը շահի եւ իր անձը կորցնի»*[42]*: Այս դարն ու ապագան երկու թշնամիներ են: Մէկը քարոզում է անառակութիւն ու ապականութիւն, արծաթասիրութիւն եւ սուտ, իսկ ապագայ դարը ժխտում է դրանք: Հետեւաբար, մենք չենք կարող երկուսի էլ բարեկամը լինել. այլ անհրաժեշտ է սա թողնել եւ կառչել*[43] *միւսին: Մտածենք, որ աւելի լաւ է ատել այստեղինները, քանի որ դրանք չնչին են, վաղանցիկ ու ապականացու, եւ սիրել նրանք, որոնք բարի են ու անապական: Քանզի Քրիստոսի կամքը կատարելով՝ մենք հանգիստ կը գտնենք. այլապէս ոչինչ չի փրկի մեզ յաւիտենական պատժից, եթէ արհամարհենք Նրա պատուիրանները: Քանզի այսպէս է ասում նաեւ Եզեկիէլի գիրքը. «Եթէ յարութիւն առնեն Նոյը, Յոբն ու Դանիէլը, չեն փրկի իրենց գերի որդիներին»*[44]*: Ապա եթէ անգամ այս արդարները չեն կարող իրենց արդարութեամբ փրկել իրենց որդիներին, ուրեմն ի՞նչ վստահութեամբ ենք մենք մտնելու Աստուծոյ արքայութիւնը, եթէ մեր մկրտութիւնը սուրբ եւ անբիծ չպահենք. կամ ո՞վ կը լինի մեր բարեխօսը, եթէ մենք բարեպաշտ ու արդար գործեր կատարած չլինենք:*

41 *Մատթ. Զ 24, Ղուկ. ԺԶ 13*
42 *Մատթ. ԺԶ 26*
43 *Lightfoot-ը թարգմանում է՝ «Այլ պէտք է հրաժեշտ տալ մէկին եւ յարաբերութիւն հաստատել միւսի հետ»:*
44 *Եզեկ. ԺԴ 14, 20*

Գլուխ Է

Պէտք է գործենք, որ հասնենք յաջողութեան

Ուրեմն, իմ եղբայրներ, պայքարենք[45]*՝ իմանալով, որ պայքարի դար է*[46]*, եւ որ շատերը երկար ճանապարհորդութիւններ են կատարում ապականացու պարգեւի համար մրցելու, սակայն ո՛չ բոլորն են պսակաւորւում, այլ միայն նրանք, ովքեր մեծ ջանք են թափել ու փառաւորապէս պայքարել: Իսկ մենք պայքարենք այնպէս, որ բոլորս էլ պսակաւորուենք: Ուստի ուղիղ ընթացքով մտնենք անապական պայքարի մէջ եւ համատեղ անցնելով պայքարենք այնպէս, որ պսակի արժանանանք: Եւ եթէ այժմ ամէնքս չկարողանանք պսակի արժանանալ, ապա գոնէ թող մօտ լինենք դրան*[47]*: Մենք պէտք է իմանանք, որ նա, ով մրցում է ապականացու պայքարի մէջ, եթէ վնաս է պատճառում, գանակոծւում եւ վռնդւում է ասպարէզից: Ուրեմն ի՞նչ էք կարծում, ի՞նչ պէտք է կրի նա, ով չի դիմանում անապական մրցման մէջ: Քանզի նրանց մասին, ովքեր չպահպանեցին կնիքը*[48]*, ասուած է. «Նրանց որդը չի մեռնելու, նրանց հուրը չի հանգչելու, եւ նրանք խայտառակութիւն կը լինեն ամէն մարմնի առջեւ»*[49]*:*

Գլուխ Ը

Քանի դեռ այս աշխարհում ենք,
պէտք է ապաշխարենք
ու մարմինը մաքուր պահենք

Ուրեմն, ապաշխարենք, քանի դեռ երկրի վրայ ենք, քանզի մենք կաւ ենք արհեստաւորի ձեռքում: Որովհետեւ ինչպէս բրուտը, երբ անօթ է պատրաստում, եթէ այն ձեռքի մէջ ծռւում կամ փշրւում է, դարձեալ կարող է վերականգնել այն, իսկ եթէ նա շտապի այն դնել այրուող հնոցի մէջ, այլեւս ոչնչով չի կարող օգնել նրան, այդպէս եւ մենք, մինչ

45 *Ոմանք թարգմանում են՝ «աշխատենք»:*
46 *Ոմանք* αἰών*-ի (ժամանակ) փոխարէն կարդում են* ἀγών *(սխրանք):*
47 *Այստեղ խօսւում է մարտիրոսութեան պսակի մասին, որն, անշուշտ, ամէնքին չի վիճակուած:*
48 *Այսինքն՝ մկրտութեան կնիքը: Տես Եփես. Ա 13, Գործ. ԺԹ 6:*
49 *Ես. ԿԶ 24*

այս աշխարհում ենք, ամբողջ սրտով պէտք է ապաշխարենք այն չար գործերի համար, որ կատարել ենք այս մարմնի մէջ, որպէսզի կարողանանք փրկութիւն ստանալ Տիրոջից, քանի դեռ ապաշխարութեան հնարաւորութիւն ունենք: Քանզի աշխարհից հեռանալուց յետոյ մենք այնտեղ այլեւս չենք կարող խոստովանել կամ ապաշխարել: Ուրեմն, եղբայրներ, մենք յաւիտենական կեանք կը ստանանք, երբ կատարենք Հօր կամքը, մարմինն անարատ պահենք եւ հետեւենք Տիրոջ պատուիրաններին: Քանզի Տէրն ասաց Աւետարանում. «Եթէ դուք փոքրը չէք պահել, ո՞վ ձեզ մեծը կը վստահի: Քանզի ասում եմ ձեզ, փոքրի մէջ հաւատարիմը մեծի մէջ էլ հաւատարիմ կը լինի»[50]: Սա նշանակում է՝ մարմինն անարատ պահենք եւ կնիքը՝ անբիծ, որպէսզի մենք[51] յաւիտենական կեանք ստանանք:

Գլուխ Թ

Մենք դատուելու ենք մարմնով. ուրեմն ժամանակին պատրաստուենք

Եւ ձեզանից ոչ ոք թող չասի, թէ այս մարմինը չի դատուելու եւ ոչ էլ կրկին յարութիւն է առնելու: Նկատի ունեցէք[52]՝ ինչի՛ մէջ փրկուեցիք, ինչի՛ մէջ տեսողութիւն ստացաք, եթէ ոչ՝ այս մարմնի մէջ: Ուստի մենք պէտք է պահպանենք մարմինը Աստուծոյ տաճարի պէս: Քանզի ինչպէս որ կանչուեցիք մարմնով, այնպէս էլ [դատաստանի] էք ներկայանալու մարմնով: Ինչպէս[53] մեզ փրկող Տէր Քրիստոսը, թէեւ նախկինում Հոգի էր[54], մարմնացաւ եւ այդպէս կոչեց մեզ, այնպէս էլ մենք պարգեւ ենք ստանալու այս մարմնի մէջ: Ուրեմն սիրենք մի-

50 Ղուկ. ԺԶ 10—11

51 Թարգմանիչների մեծ մասն առաջին դէմքը փոխում է երկրորդ դէմքի:

52 Թարգմանիչների կարծիքներն այստեղ զանազանւում են: Ոմանք թարգմանում են՝ «հասկացէք», ուրիշներ՝ «հաշուի առէք» եւն:

53 Ձեռագրում գրուած է εἷς (մէկ), այսինքն՝ մէկ Քրիստոս: Սակայն գիտնականների մեծ մասն այն ուղղում է ὡς (ինչպէս), որն աւելի է համապատասխանում նախադասութեան ընդհանուր իմաստին:

54 Հոգու տակ այստեղ պէտք է հասկանալ Քրիստոսի աստուածային բնութեան հոգեղինութիւնը: Հմմտ. Ա Պետ. Ա 11, Հերմաս, Հովիւ, Առակներ, ե 5: Ոմանք «Հոգի» բառը փոխարինում են «Լոգոսով», որը լայն ընդունելութիւն չի գտել:

մեանց, որպէսզի ամէնքս մտնենք Աստուծոյ արքայութիւն: Քանի դեռ բուժման հնարաւորութիւն ունենք, մեզ յանձնենք բժշկող Աստծուն եւ Նրան վարձահատոյց լինենք: Ի՞նչ ձեւով: Անկեղծ սրտի ապաշխարութեամբ: Քանզի Նա կանխաւ գիտի ամէն ինչ եւ ծանօթ է մեր սրտում եղած ամէն ինչին: Ուստի Նրան փառաբանութիւն[55] մատուցենք ոչ միայն բերանով, այլեւ սրտով, որպէսզի Նա ընդունի մեզ ինչպէս որդիների: Քանզի Տէրն ասել է. «Իմ եղբայրները նրանք են, ովքեր կատարում են Իմ Հօր կամքը»[56]:

Գլուխ Ժ

Թողնելով արատը՝ ձգտենք բարեգործութեան եւ խոստացուած պարգեւները գերադասենք աշխարհիկ վայելքներից

Ուստի, իմ եղբայրներ, կատարենք մեզ կեանքի կոչող Հօր կամքը, անկեղծօրէն ձգտենք առաքինութեան եւ հրաժարուենք չարութիւնից՝ որպէս մեր մեղքերի նախակարապետից. հեռու փախչենք անպատկառութիւնից, որպէսզի չարիքները չհասնեն մեզ: Քանզի եթէ մենք ջանանք բարիք գործել, մեր մէջ խաղաղութիւնը բնակութիւն կը հաստատի: Այս պատճառով այդ խաղաղութիւնը չեն կարող գտնել նրանք, ովքեր մարդկային վախ են կրում՝ գերադասելով այստեղի վայելքն ապագայ խոստումներից[57]: Քանզի նրանք անգիտանում են, թէ ինչպիսի

55 Ալեքսանդրեան ձեռագիրն ունի՝ «յաւիտենութիւն», մինչ 1056 թ.-ինն ու ասորերէնը՝ «փառաբանութիւն»: Lightfoot-ն առաջարկում է՝ «յաւիտենական փառաբանութիւն»:

56 Մատթ. ԺԲ 50

57 Հատուածն ակնյայտօրէն աղաւաղուած է: Ցունարէն 1056 թ. ձեռագիրն ու ասորերէն թարգմանութիւնը պարզութիւն չեն մտցնում: Lightfoot-ը թարգմանում է. «Այս պատճառով մարդը չի կարող երջանկութիւն ձեռք բերել՝ տեսնելով, որ նրանք կոչում են մարդկանց երկիւղների մէջ»: Ոմանք այստեղ տեքստը պակասաւոր են համարում եւ ներդնում երկու գլուխ, որոնք ուրիշ հեղինակների կողմից մէջբերւում են որպէս կղեմէսեան հատուածներ: Առաջին եւ աւելի երկար հատուածը Յովհան Դամասկացուց է, միւսը՝ Կեղծ-Յուստինոսից (Հարցեր ուղղափառներին, ՀԴ): Սա սկզբում վերագրւում էր Կղեմէսի առաջին նամակում եղած ԾԸ գլխի բացթողմանը, սակայն վերջինիս գտնուած հատուածում նման տեղ չկար: Lightfoot-ը կարծում է, որ կեղծ-յուստինոսեան հատուածը պէտք է դրուի այս նամակի ԺԶ գլխում:

տանջանք է ներկայ վայելքը, եւ ինչքան քաղցր է ապագայի խոստումը: Եւ եթէ միայն իրենք այդպէս վարուէին, ապա դա տանելի կը լինէր. սակայն այժմ նրանք յամառում են անմեղ հոգիներին իրենց վատ ուսմունքներով ներշնչելու մէջ[58] *չիմանալով, որ կրկնակի դատապարտութիւն են ընդունելու ե՛ւ իրենք, ե՛ւ իրենց լսողները:*

Գլուխ ԺԱ

Հաւատալով աստուածային խոստումներին՝ ծառայենք Աստծուն, եւ յաւիտենական երանութիւն կ'ունենանք

Արդ՝ ծառայենք Աստծուն մաքուր սրտով եւ արդար կը լինենք. իսկ եթէ չծառայենք՝ չհաւատալով Աստուծոյ խոստմանը, դժբախտ կը լինենք: Քանզի նաեւ մարգարէական խօսքն է ասում. «Դժբախտ են երկմիտները, սրտով տատանուողները, ովքեր ասում են՝ այս ամէնը մենք նախկինում լսել ենք մեր հայրերից, իսկ մենք, օրէցօր սպասելով, այդպիսի ոչ մի բան չտեսանք: Անմիտնե՛ր, համեմատէք ձեզ ծառի հետ, [օրինակ] վերցրէք որթատունկը. սկզբում նա տերեւաթափ է լինում, ապա ձեւաւորւում է բողբոջը, ապա սրանից յետոյ ազոխը, եւ վերջապէս հասուն խաղողը[59]*: Այսպէս եւ իմ ժողովուրդն անհանգստութիւն ու վիշտ կրեց, իսկ յետոյ բարիքներ կը ստանայ»: Ուստի, իմ եղբայրներ, չերկմտենք, այլ յուսանք եւ համբերենք, որպէսզի մեր վարձը ստանանք: Քանզի հաւատարիմ է Նա, Ով խոստացել է վարձահատոյց լինել իւրաքանչիւրին նրա գործերի համեմատ: Ուրեմն եթէ մենք Աստուծոյ առջեւ արդարութիւն գործենք, կը մտնենք Նրա արքայութիւն եւ կը ստանանք Նրա խոստացած բարիքները, «որոնք ականջը չի լսել, աչքը չի տեսել եւ մարդու սիրտը չեն ընկել»*[60]*:*

58 Lightfoot-ը թարգմանում է. «Սակայն այժմ նրանք շարունակում են չարիք ուսուցանել անմեղ հոգիներին»:

59 Այս խօսքերին հանդիպում ենք Կղեմէսի Ա նամակում գլուխ ԻԳ:

60 Ա Կոր. Բ 9

Գլուխ ԺԲ

Մշտապէս սպասենք Աստուծոյ արքայութեանը

Արդ՝ ամէն ժամ սպասենք Աստուծոյ արքայութեանը՝ սիրով ու արդարութեամբ, քանզի չգիտենք Աստուծոյ յայտնութեան օրը: Որովհետեւ երբ Տիրոջն ինչ-որ մէկը հարցրեց, թէ երբ է գալու Նրա արքայութիւնը, պատասխանեց. «Երբ երկուսը մէկ դառնան, արտաքինը՝ ներքին, եւ արականը իգականի հետ լինի ո՛չ արու, ո՛չ էգ»[61]*: Սակայն երկուսը դառնում են մէկ, երբ մենք միմեանց ճշմարտութիւնն ենք ասում, եւ երբ երկու մարմիններում անկեղծօրէն մի հոգի է բնակւում: Եւ «արտաքինը՝ ինչպէս ներքին» նշանակում է հետեւեալը. Նա հոգին «ներքին» է անուանում, իսկ մարմինը՝ «արտաքին»: Դրա համար էլ ինչպէս որ քո մարմինն է տեսանելի, այդպէս էլ քո հոգին թող երեւելի լինի բարի գործերի մէջ: Իսկ «արականն իգականի հետ ո՛չ արու, ո՛չ էգ», սա....*[62] *նշանակում է, որ եղբայրը քրոջը տեսնելիս չի դիտելու*[63] *նրան որպէս էգի, ոչ էլ [քոյրն]*[64] *է դիտելու նրան որպէս արուի: Եթէ դուք կատարէք սրանք, ասաց Նա, Իմ Հօր արքայութիւնը կը գայ:*

61 Այս խօսքը վերցուած է ոչ թէ Նոր Կտակարանի կանոնական գրքերից, այլ պարականոն Եգիպտացիների Աւետարանից, ինչպէս եւ վկայում է Կղեմէս Ալեքսանդրացին (Ցաճախապատում, Գ 13): Փրկչին տրուած հարցը վերագրւում է Սաղոմէին:

62 Այստեղ աւարտւում է Ալեքսանդրեան ձեռագրով մեզ հասած բնագիրը: Մնացեալը երբեմն վերականգնում են ըստ Կղեմէս Ալեքսանդրացու (Ցաճախապատում, Գ 9): Շարունակութեան մէջ մենք ներկայացնում ենք նոր յայտնաբերուած հատուածը, որը տարբերւում է Կղեմէս Ալեքսանդրացու մէջբերումից:

63 Բոլոր թարգմանիչներն այստեղ սրբագրում են կատարում, որովհետեւ բնագրային տարընթերցուածն անիմաստ է:

64 Թարգմանիչների մեծ մասն այստեղ մտցնում է իգական «նա»՝ նախադասութիւնն աւելի իմաստալից դարձնելու համար:

Գլուխ ԺԳ

Անհնազանդութիւնն Աստուծոյ անունը հայհոյութեան է ենթարկում[65]

Ուրեմն, եղբայրներ[66], եկէք այժմ վերջապէս ապաշխարենք, շրջուենք դէպի բարութիւն, քանզի մենք մեծապէս լի ենք ծուլութեամբ ու չարութեամբ: Սրբենք մեզանից մեր նախկին մեղքերը եւ փրկուենք ի սրտէ զղջումով, մարդահաճ չլինենք[67] եւ մեր արդարութեամբ ձգտենք հաճելի լինել ոչ միայն միմեանց, այլեւ այն մարդկանց, որ դրսում են, որպէսզի Անունը[68] չհայհոյուի մեր պատճառով: Քանզի Տերն ասում է. «Իմ անունը շարունակ հայհոյւում է բոլոր հեթանոսների մէջ»[69], եւ դարձեալ՝ «Վա՜յ նրան, ում պատճառով Իմ անունը հայհոյւում է»[70]: Իսկ ինչպէ՞ս է հայհոյւում: Երբ դու չես անում այն, ինչ Ես եմ կամենում[71]: Քանզի հեթանոսները, երբ մեր բերանից լսում են Աստուծոյ խօսքերը[72], սքանչանում են դրանց հոյակապութեան ու մեծութեան վրայ, իսկ այնուհետեւ, երբ իմանում են, որ մեր կատարած գործերն արժանի չեն մեր ասած խօսքերին, սկսում են հայհոյել՝ ասելով, որ դրանք առասպել են ու մոլորութիւն: Քանզի երբ նրանք մեզանից լսում են, որ Աստուած ասում է. «Երախտիք չէ ձեր կողմից, եթէ դուք սիրում էք նրանց, ովքեր ձեզ են սիրում, այլ երախտիք է ձեր կողմից, եթէ սիրում էք ձեր թշնամիներին ու նրանց, ովքեր ատում են ձեզ»[73], երբ նրանք լսում են այս բոլորը, հիանում են բարութեան գերազան-

65 Գլխակարգումը տրուած է ANF-ի (Ante-Nicene Fathers, Edinburgh, vol. II) խմբագրի կողմից:

66 Այստեղ սրբագրուած է ըստ ասորերէն բնագրի:

67 Ըստ Lightfoot-ի՝ «չգտնուենք»:

68 Հմմտ. Գործ. Ե 41:

69 Ես. ԾԲ 5

70 Այս երկրորդ մէջբերման տեղը որոշելը դժուար է: Հմմտ. Եզեկ. ԼԶ 20—23: Lightfoot-ը կարծում է, որ հեղինակն օգտագործում է Ես. ԾԲ 5-ի երկու տարբեր ձեւեր:

71 Այս նախադասութիւնը մէջբերման մաս չէ, այլ բացատրութիւն՝ ասես Աստուծոյ կողմից ասուած: Ասորերէնը կարծես թէ փորձում է հարթել այս դժուարութիւնը հետեւեալ տարբերակով՝ «մեր ասածը չկատարելով»:

72 Այստեղ այս արտայայտութեան տակ հասկացւում է Աստուածաշունչը եւ յատկապէս Նոր Կտակարանը:

73 Ղուկ. Զ 27, 32՝ ազատօրէն շարադրուած: Հմմտ. Մատթ. Ե 44, 46:

ցութեան վրայ, իսկ երբ տեսնում են, որ մենք չենք սիրում ոչ միայն նրանց, ովքեր ատում են մեզ, այլ անգամ նրանց, ովքեր սիրում են մեզ, նրանք ծիծաղում են մեզ վրայ, եւ Անունը հայհոյւում է:

Գլուխ ԺԴ

Կենդանի Եկեղեցին Քրիստոսի մարմինն է

Ուստի, եղբայրներ, մեր Հայր Աստուծոյ կամքը կատարելով՝ մենք կը լինենք առաջին, այսինքն՝ հոգեւոր Եկեղեցուց, որն արարուել է արեգակից ու լուսնից էլ առաջ[74], սակայն եթէ չկատարենք Տիրոջ կամքը, կը լինենք այն, ինչի մասին Գրքում ասուած է. «Իմ տունն աւազակների որջի վերածուեց»[75]: Ուրեմն ընտրենք կեանքի Եկեղեցին, որպէսզի փրկուենք: Զեմ կարծում, թէ դուք անգիտանում էք, որ կենդանի Եկեղեցին Քրիստոսի մարմինն է[76], քանզի Սբ Գիրքն ասում է. «Աստուած մարդուն արու եւ էգ արարեց»[77]: Արուն Քրիստոսն է, էգը՝ Եկեղեցին: Եւ Գրքերն ու Առաքեալները[78] [յստակօրէն յայտարարում են][79], որ Եկեղեցին ներկայից չէ, այլ է ի սկզբանէ[80]: Քանզի նա հոգեւոր էր, ինչպէս նաեւ մեր Ցիսուսը, սակայն վերջին օրերին յայտնեց, որ Ինքը[81] փրկելու է մեզ: Եւ Եկեղեցին, հոգեւոր լինելով, յայտնուեց Քրիստոսի մարմնի մէջ՝ ցոյց տալով մեզ, որ եթէ մեզանից որեւէ մէկը պահում է նրան մարմնի մէջ եւ չի պղծում նրան, դարձեալ կը ստանայ

74 Հմմտ. Սաղմ. ՀԱ 5, 17:

75 Երեմ. Է 11, հմմտ. Մատթ. ԻԱ 13, Մարկ. ԺԱ 17, Ղուկ. ԺԹ 46:

76 Հմմտ. Եփես. Ա 23 եւ այլ նման հատուածներ:

77 Ծն. Ա 27, հմմտ. Եփես. Ե 31—33:

78 «Գրքեր»-ն այստեղ հաւանաբար վերաբերում է Հին Կտակարանին, մինչ «առաքեալներ»-ը կարող է նշանակել Նոր Կտակարանը՝ ամբողջութեամբ կամ մասամբ: Աւելի ուղղակի արտայայտութիւնը հաւանաբար կը վերաբերի Ծննդոց գրքին ու առ Եփեսացիս թղթին:

79 Փակագծում եղածը Lightfoot-ի յաւելումն է: Ուրիշներ առաջարկում են՝ «Դուք գիտէք, որ Գրքերը եւն ասում են, որ...»: Ոմանք առաջարկում են «Գրքեր»-ի փոխարէն դնել «Եկեղեցին»: Ամէն դէպքում ստորոգեալ պէտք է դրուի, ինչպէս է ասորերէնում:

80 Ցունարէնում օգտագործուած բառն ունի տեղային ու ժամանակային իմաստ: Վերեւում կիրառուածն ակնյայտօրէն աւելի նախընտրելի է:

81 Նախադասութեան վերջին մասի ենթական «Ցիսուսն» է:

նրան[82] Սուրբ Հոգով, քանզի այս մարմինը հոգու պատկերն է: Ուրեմն ոչ ոք, ով պղծում է պատկերը, մաս չի ունենայ նախօրինակից[83]: Ուրեմն, եղբայրներ, սա է այն, ինչը Նա նկատի ունէր՝ «պահպանեցէ՛ք Եկեղեցին[84], որպէսզի հոգուց մաս ունենաք»: Եւ եթէ մենք ասում ենք, որ մարմինը Եկեղեցին է, իսկ հոգին՝ Քրիստոսը[85], ապա մարմինը հայ-հոյողը հայհոյում է Եկեղեցուն: Նման, ուրեմն, մաս չի ունենայ հոգուց, որը Քրիստոսն է: Այս մարմինը[86] կարող է հաղորդակից լինել նման անապական կեանքի, երբ Սուրբ Հոգին է միացած նրան: Ոչ ոք չի կարող ասել կամ պատմել, թէ «ինչ է Տէրը պատրաստել» Իր ընտրեալների համար[87]:

Գլուխ ԺԵ

Հաւատքն ու սէրը՝ պատշաճ հատուցում Աստծուն

Ես չեմ կարծում, թէ ձեզ որեւէ թեթեւ խորհուրդ եմ տուել ժուժկալութեան մասին[88]. դրան հետեւողը չի զղջալու, այլ կը փրկի ե՛ւ իրեն, ե՛ւ ինձ՝ խորհրդատուիս: Քանզի փոքր վարձ չէ մոլորեալ ու տառապեալ հոգին կրկին դէպի փրկութիւն շրջելը[89]: Քանզի սա այն փոխհատուցումն[90] է, որ մենք պէտք է վերադարձնենք մեզ ստեղծող Աստծուն, եթէ խօսողն ու լսողը հաւատքով ու սիրով են ե՛ւ խօսում, ե՛ւ լսում: Հաստատապէս արդար ու սուրբ մնանք այն բաների մէջ, որոնց մենք հաւատացել ենք, որպէսզի համարձակութեամբ կարողանանք խնդրել

82 Բայը համապատասխանում է յաջորդ նախադասութեան «մաս ունենալ»-ուն:
83 «Պատկեր»՝ հմմտ. Եբր. Թ 24, Ա Պետ. Գ 21: Բնագրի «անտիտիպ» բառն այստեղ օգտագործւում է «բնօրինակ» կամ «նախօրինակ» իմաստով: Վերեւի խորհրդական մեկնութիւնն ունի պլատոնական հիմք:
84 Հմմտ. գլուխ Ը-ի վերջը:
85 Lightfoot-ը ուշադրութիւն է հրաւիրում փոխաբերութիւնների փոփոխութեան վրայ:
86 Այստեղ «մարմին» բառն ունի երկդիմի իմաստ:
87 Ա Կոր. Բ 9
88 «Զգաստութիւն»՝ նորկտակարանեան լայն իմաստով: Lightfoot-ի մօտ՝ «ողջախոհութիւն». այն ժամանակներում մշտական վտանգ էին ներկայացնում ցանկասիրական մեղքերը:
89 Հմմտ. Յակ. Ե 19-20:
90 «Սիրուած բառ հեղինակի կողմից, յատկապէս այս առումով» (Lightfoot):

Աստծուն, Ով ասում է. «Երբ աղաղակես, ես կ՚ասեմ՝ ահաւասիկ ես այստեղ եմ»[91]: Եւ այս խօսքը մեծ խոստման նշան է, քանզի Տէրն ասում է Իր մասին, որ Ինքն աւելի՛ յօժար է տալու, քան խնդրողը: Ուրեմն՝ նման մեծ արժանիքների բաժնեկիցներ լինելուց յետոյ նախանձոտ չլինենք միմեանց[92] նկատմամբ՝ այդքան շատ բարիքներ ձեռք բերելու մէջ: Քանզի որքան մեծ հաճոյք են այս խօսքերը պատճառում դրանք կատարողներին, այնքան մեծ է անհնազանդների դատապարտութիւնը:

Գլուխ ԺԶ

Ողորմութեան գերազանցութիւնը

Ուստի, եղբայրներ, ապաշխարութեան համար ոչ փոքր առիթ ու ժամանակ[93] ստացած լինելով, քանի դեռ հնարաւորութիւն[94] ունենք, շրջուենք դէպի մեզ կանչող Աստծուն, քանի դեռ Նա ընդունում է մեզ: Քանզի եթէ մենք ուրանանք այս վայելքները եւ յաղթենք մեր հոգուն՝ նրա չար ցանկութիւնները չկատարելով, բաժնեկից կը լինենք Ցիսուսի ողորմութեանը: Սակայն դուք գիտէք, որ դատաստանի օրն արդէն «գալիս է որպէս բորբոքուած հնոց»[95], «երկինքներից մի քանիսը հալչելու են», եւ ողջ երկիրը կապարի նման հալչելու է կրակի վրայ[96]. եւ այն ժամանակ մարդկանց ծածուկ ու բացայայտ գործերը յայտնի են դառնալու: Արդ՝ ողորմութիւնը լաւ է, ինչպէս ապաշխարութիւնը. պահեցողութիւնն աւելի լաւ է, քան աղօթքը, իսկ ողորմութիւնը երկուսից էլ [լաւ է][97]. «բայց սէրը ծածկում է մեղքերի բազմութիւնը»[98]: Իսկ մաքուր խղճմտանքից [բխած] աղօթքը փրկում է մահից: Երանի՛

91 Ես. ԾԸ 9
92 Այստեղ նոյնպէս երկդիմի իմաստով է, ինչպէս ԺԳ գլխում:
93 Հմմտ. Հռոմ. Է 8, 11:
94 Lightfoot-ի մօտ՝ «տեսնելով, որ մենք ժամանակ ունենք»: Սակայն «հնարաւորութիւնն» աւելի ճշգրիտ է:
95 Հմմտ. Մաղ. Դ 1:
96 Հմմտ. Ես. Լդ 4, որը նման է նախորդ պատկերին, եւ Բ Պետ. Գ 7, 10, որտեղ նոյն պատկերներն են օգտագործուած:
97 Հմմտ. Տոբիթ ԺԲ 8, 9:
98 Ա Պետ. Դ 8, հմմտ. Առակ Ժ 12, Յակ. Ե 20:

նրան, ով լիովին այս վիճակում կը լինի, քանզի ողորմութիւնը թեթեւացնում է մեղքերի լուծը[99]:

Գլուխ ԺԷ

Չապաշխարելու վտանգը

Ուրեմն ապաշխարենք ողջ սրտով, որպէսզի մեզանից որեւէ մէկը չկորչի: Քանզի եթէ մենք մարդկանց կուռքերից հեռացնելու եւ նրանց ուսուցանելու պատուիրաններ ունենք[100] եւ կատարում ենք դրանք, որքան առաւել պէտք է, որ արդէն Աստծուն ճանաչած հոգին չկորչի: Ուրեմն օգնենք միմեանց, մեզ հետ վերցնենք նաեւ տկարներին եւ առաջնորդենք դէպի բարին, որպէսզի ամէնքը կարողանան փրկուել, եւ դարձի բերենք ու յորդորենք միմեանց[101]: Եւ չմտածենք միայն այժմ այնպէս երեւալու մասին, թէ հաւատում ենք եւ ուշադրութիւն դարձնում մեր երէցների յորդորներին, այլ նաեւ երբ վերադառնանք տուն[102], յիշենք Տիրոջ պատուիրանները եւ չհրապուրուենք աշխարհիկ կրքերից, այլ առաւել միահամուռ իրար մօտ գալով[103]՝ փորձենք յաջողութեամբ կատարել Տիրոջ պատուիրանները, որպէսզի բոլորս միախորհուրդ լինելով[104]՝ կարողանանք միասին հաւաքուել կեանքի մէջ: Քանզի Տէրն ասաց. «Ես գալիս եմ ժողովելու բոլոր ազգութիւնները, ազգերն ու լեզուները»[105]: Նա ասում է սա Իր յայտնութեան օրուայ մասին, երբ Ինքը գալու եւ փրկելու է մեզ՝ իւրաքանչիւրին ըստ նրա գործերի: Իսկ անհաւատները «տեսնելու են Նրա փառքն»[106] ու զօրութիւնը եւ զար-

99 Բառացի՝ «դառնում է մեղքի թեթեւացուցիչ». հմմտ. Ժող. Գ 30:

100 Ոմանք թարգմանում են՝ «եթէ մենք պատուիրաններ ունենք եւ գործադրում ենք դրանք»:

101 Բրիենոսը հետեւեալ ձեւով է արտայայտում՝ «Որպէսզի ամէնքը կարողանան փրկուել եւ դարձի գալ»:

102 Ըստ Lightfoot-ի՝ սա յատակօրէն ցոյց է տալիս, որ գործն իրենից քարոզ է ներկայացնում: Քարոզիչն ինքը «երէցներից» մէկն է (հմմտ. գլ. ԺԹ): Հաւանական է, թէեւ ոչ անառարկելի, որ նա եղել է երէցների գլխաւորը, այսինքն՝ եպիսկոպոսը:

103 Ասորերէնում «աղօթելով», որը ոմանց կողմից ընդունւում է: Եթէ սա ընդունելի չէ, ապա խօսքը վերաբերում է պաշտամունքի գալուն. հմմտ. Եբր. Ժ 1, 22:

104 Բ Կոր. ԺԳ 11, Փիլ. Բ 2

105 Ես. ԿԶ 18, սակայն աւելացուած է «ազգութիւնները». հմմտ. Դան. Գ 7:

106 Ես. ԿԶ 18

մանալու են՝ տեսնելով աշխարհի թագաւորութիւնը[107] Յիսուսի մէջ, եւ ասելու են. «Վա՜յ մեզ, Դու էիր[108], իսկ մենք չիմացանք ու չհաւատացինք եւ չհնազանդուեցինք մեր երէցներին, երբ նրանք աւետում էին մեր փրկութեան մասին»: Եւ «նրանց որդը չի մեռնելու, նրանց հուրը չի հանգչելու, եւ նրանք զզուելի են լինելու բոլոր մարմինների համար»[109]: Դա կը լինի դատաստանի օրը, երբ տեսնելու են[110] ձեզ մօտ եղած անօրէններին եւ Յիսուս Քրիստոսի պատուիրաններն արհամարհածներին: Իսկ արդարները, ովքեր բարիք են գործել, տոկացել են տառապանքներին եւ ատել հոգու հեշտասիրութիւնները, երբ տեսնեն մոլորուածներին եւ Յիսուսին խօսքով կամ գործով մերժածներին, թէ ինչպէս են նրանք սոսկալի տանջանքներով պատժւում անմար կրակի մէջ, փառք են մատուցելու իրենց Աստծուն՝ ասելով. «Ո՜յս եղիր Աստծուն ողջ սրտով ծառայած մարդուն»:

Գլուխ ԺԸ

Քարոզիչը խոստովանում է սեփական մեղաւորութիւնը

Ուրեմն մենք եւս լինենք շնորհ ստացողների ու Աստծուն ծառայածների եւ ոչ թէ դատաստանի դատապարտուած անօրէնների թւում: Քանզի ես նոյնպէս, գերագոյն մեղաւոր[111] լինելով եւ խուսափած չլինելով փորձութիւնից, այլ դեռ գտնուելով սատանայի մեքենայութիւն-

107 Անգլերէնը թարգմանում է «ինքնիշխանութիւն», սակայն բառն աւելի ճիշտ նշանակում է «արքայական կառավարութիւն»: «Յիսուսով», այսինքն՝ «Յիսուսի ձեռքերով, զօրութեամբ»:

108 Թարգմանութիւններում դրւում է՝ «Դու Նա էիր», ինչպէս յաճախ Աւետարաններում է: Թւում է՝ Յովհ. Ը 24-ի եւ այլ նման հատուածների արձագանք է:

109 Ես. ԿԶ 24, հմմտ. գլ. Է:

110 Ասորերէնն այստեղ տարբերւում է:

111 Յունարէնում օգտագործուած բառը (πανθαμαρτωλός) հանդիպում է միայն այստեղ, սակայն նմանատիպ բառ հանդիպում է՝ Դիդախէ, Ե 2, Առաքելական հրահանգներ, Է 18 եւ Բառնաբաս, Ի:

ների[112] կենտրոնում եւ վախենալով գալիք դատաստանից, ջանում եմ արդարութեան ձգտել, որպէսզի կարողանամ դրան մօտ լինել[113]:

Գլուխ ԺԹ

Նա արդարացնում է իր յորդորը

Ուստի, եղբայրներ եւ քոյրեր, ճշմարտութեան Աստծուց յետոյ[114] ես աղերս[115] եմ կարդում ձեզ, որ ուշադրութիւն դարձնէք գրուածներին, որպէսզի փրկէք ե՛ւ ձեզ, ե՛ւ նրան, ով կարդաց ձեր մէջ: Զեզանից որպէս վարձ խնդրում եմ, որ դուք ամբողջ սրտով ապաշխարէք՝ ձեզ փրկութիւն ու կեանք պարգեւելով: Քանզի դա նպատակ դարձնելով մեզ համար՝ բոլոր կամեցող երիտասարդներին կը տրամադրենք աստուածային բարեպաշտութեամբ ջանադիր լինելու պիտանի գործերում[116]: Եւ անմիտներս, ինչպիսին ենք, չդժգոհենք ու չզայրանանք, երբ որեւէ մէկը մեզ խրատում է եւ անմաքրութիւնից չրջում դէպի արդարութիւն: Քանզի երբեմն վատ արարքներ կատարելիս մենք չենք գիտակցում մեր կրծքում եղած կեղծիքն ու անհաւատութիւնը եւ մեր միտքը մթնեցնում ենք մեր ունայն ցանկութիւններով: Ուրեմն արդարութիւն գործենք, որպէսզի վերջում փրկուենք: Երանի նրանց, ովքեր հնազանդ են այս պատուիրաններին: Եթէ անգամ կարճ ժամանակով նրանք տառապում են այս աշխարհում[117], քաղելու են յարութեան անմահական պտուղը: Ուրեմն թող բարեպաշտը չվշտանայ, եթէ դժբախտ է ներկայ ժամանակներում. երանելի ժամանակ է սպասում նրան: Նա, հայրերի հետ վերակենդանանալով, յաւերժ երջանիկ կը լինի անվիշտ դարում:

Գլուխ Ի

Սփոփանքի եզրափակիչ խօսք. փառաբանութիւն

Սակայն ձեր միտքը թող չխռովուի, երբ տեսնում էք, որ անարդարները հարստանում են, եւ Աստուծոյ ծառաները՝ նեղութիւններ կրում: Այլ հաւատա՛նք, եղբայրնե՛ր եւ քոյրեր. մենք պայքարում ենք կենդանի Աստուծոյ մրցման[118] մէջ, մենք կոփւում ենք այս կեանքում, որպէսզի պսակ ստանանք գալիք կեանքում: Արդարներից ոչ ոք արագօրէն պտուղ չի ստացել, այլ արժանացե՛լ է դրան: Քանզի եթէ Աստուած անմիջապէս հատուցէր արդարների վարձը, մենք առեւտուր արած կը լինէինք եւ ոչ թէ աստուածպաշտութիւն, քանզի մենք արդար կը համարուէինք ոչ թէ բարեպաշտութեան, այլ շահաւէտութեան ձգտելով: Եւ այս պատճառով աստուածային դատաստանը հարուածեց անարդար հոգուն եւ ծանրացրեց կապանքները[119]:

Անտեսանելի միակ Աստծուն[120], ճշմարտութեան Հօրը, Ով մեզ ուղարկեց Փրկչին ու անապականութեան Իշխանին[121], Ում միջոցով էլ

112 Հմմտ. Իգնատիոս, առ Հռոմայեցիս, Դ, որտեղ բառն օգտագործւում է «գործիքներ» իմաստով եւ վերաբերում ամֆիթատրոնի վայրի գազանների տոմարներին (Ante-Nicene Fathers, vol. 1, էջ 75): Lightfoot-ը թարգմանում է «մեքենաներ»՝ փոխաբերաբար ռազմական իմաստ ու երանգ հաղորդելով:

113 Արտայայտութիւնը ներառում է նպատակին հասնելու նկատմամբ կասկած՝ այս գլխում ներկայացուած խոնարհութեան երանգին համապատասխան:

114 Եթէ որեւէ կասկած է մնացել այս գործի բնոյթի նկատմամբ, այն կարող է փարատուել այս նախադասութեամբ: Աստուածաշունչն է կարդացուել, եւ դրա ունկնդրութիւնն ընդունւում է որպէս Աստուծոյ ձայնի ունկնդրութիւն: Ապա յաջորդում է յորդոր. հմմտ. Յուստինոս, Ա ներողութիւն, ԿԷ (Ante-Nicene Fathers, vol. 1, էջ 186): Նոր Կտակարանից վերցուած դասերի ներդրումն այս քարոզի մէջ բացարձակապէս որոշակի է. հմմտ. նորկտակարանեան արտայայտութիւնները Բ, Գ, Դ եւ այլ գլուխներում: Այստեղ ակնարկւում է նաեւ, որ այս քարոզը գրուել է եւ «կարդացուել»:

115 Բառն այստեղ նշանակում է միջնորդութիւն կամ պաղատանք (հմմտ. Ա Տիմ. Բ 1, Դ 5): Տես Յուստինոսի Ա ներողութեան առաջին նախադասութիւնը (նշ. հրատ., էջ 163):

116 Այստեղ ասորերէնը տարբերւում է յունարէնից: Թարգմանութիւնը հետեւեալն է. «Քանզի սա անելով՝ դուք նպատակ կը ստեղծէք բոլոր երիտասարդների համար, ովքեր մտադրուած են գործել բարեպաշտութեան ու Աստուծոյ բարութեան անունից»:

117 Ասորերէնը բաց է թողնում այս բառը:

118 Բառակապակցութիւնը դասական է եւ տարածուած յունական գրականութեան մէջ:

119 Ոմանք կարծում են, թէ հատուածը վերաբերում է այն քրիստոնեաներին, ովքեր հալածանքի ենթարկուեցին ո՛չ արդարութեան պատճառով: Հառնակը կարծում է, որ հեղինակը նկատի ունի սատանային՝ ագահութեան իշխանին, եւ նրան շղթայուած է համարում: Սա նախընտրելի բացատրութիւն է, սակայն իմաստն, այնուամենայնիւ, անորոշ է մնում:

120 Ա Տիմ. Ա 17

121 Գործ. Գ 15, հմմտ. Եբր. Բ 10:

Նա մեզ յայտնեց ճշմարտութիւնն ու երկնային կեանքը, Նրան փա՜ռք յաւիտեանս յաւիտենից: Ամէն[122]:

Հին յունարէնից թարգմանեց
Սիմոն Գրքաշարեանը

Խմբագրեց ու ծանօթագրեց
Միքայէլ եպս Աջապահեանը

122 Փառաբանութիւնը հետաքրքրական է, քանզի ցոյց է տալիս քարոզն աւարտելու հնագոյն ձեւերից մէկը: Պատկերը թէեւ տարբեր է, սակայն բնականաբար հեռուում է առաքելական թղթերի օրինակներին:

ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ

ՍԿԶԲՈՒՄ ԷՐ ԽՕՍՔԸ

Աւետարանների բոլոր խօսքերն առաւել մեծաշնորհ են Հոգու մնացած վարդապետութիւններից, քանի որ սրանց մէջ Տէրը մեզ հետ խօսեց մարգարէ ծառաների միջոցով, իսկ Աւետարաններում անձամբ խօսեց մեզ հետ: Եւ աւետարանական քարոզութեան մէջ ամենաբարձրաձայն, բոլորից առաւել լսելի եւ ամէն մտքից առաւել բարձր բարբառուածը Յովհաննէսինն է՝ Որոտման որդունը, ում աւետարանական գրքի նախաբանի ընթերցումն այժմ լսեցինք. «Սկզբում էր Խօսքը, եւ Խօսքն Աստուծոյ մօտ էր, եւ Խօսքն Աստուած էր» [Յովհ. Ա 1]: Գիտեմ նաեւ շատերի, ովքեր աշխարհական իմաստութեան մասին ճշմարտութեան խօսքից դուրս բարձր կարծիք ունեն, բայց զարմացել են սրանով եւ համարձակուել այն խառնել իրենց յօրինուածքներին. քանզի գող է Բանսարկուն եւ մերն առասպելաբանելով վերագրում է իր գուշակներին: Արդ՝ եթէ մարմնաւոր իմաստութիւնն այսքան հիացաւ այս խօսքի ուժով, ապա ի՞նչ պէտք է անենք Հոգու աշակերտներս. իմիջիայլոց լսենք եւ կարծենք, թէ նրա մէջ փո՞քր զօրութիւն կայ: Ո՞վ է այնպիսի անզգայութեամբ հիւանդացած, որ մտքի այսպիսի գեղեցկութեան եւ վարդապետութեան անհասանելի խորութեան վրայ չի զարմանում եւ չի փափագում նրանց ճշմարիտ ըմբռնումն ունենալ: Բայց դժուարը գեղեցիկով հիանալը չէ, այլ հիանալիի ճշմարիտ իմաստը հասկանալը. սա է դժուար եւ անհասանելի: Քանզի չկայ մէկը, որ գերազանցապէս չգովաբանի այս զգալի արեգակը՝ ընդունելով նրա գեղեցկութիւնը, ճառագայթների համաչափութիւնը եւ պայծառացնող լոյսը, բայց եթէ շատ նայի արեւի շրջանակին՝ նրան ուղղելով իր նայուածքը, ոչ միայն չի տեսնի ցանկալին, այլեւ կը կորցնի տեսողութեան հաւաստիութիւնը: Ինձ թւում է, թէ մտածողութեան հետ եւս նման բան է կատարւում, երբ այն յամառում է ասուած այս խօսքի ճշմարիտ քննութիւնը կատարելու մէջ: «Սկզբում էր Խօսքը»: Ո՞վ արժանապէս կ'իմանայ սկզբի մասին: Խօսքերի ինչպիսի՞ զօրութիւն համարժէք կը լինի այդ մտքին՝ նրա կողքին կանգնելու համար:

Պատրաստուելով աւանդել մեզ Աստուծոյ Որդու աստուածաբանութեան մասին՝ ոչ մի ուրիշ սկիզբ Խօսքին չտուեց, քան բոլորի սկիզբը: Սուրբ Հոգին գիտէր, թէ ովքեր պիտի հակառակէին Միածնի փառքին. նախապէս գիտէր նրանց, ովքեր մեզ պիտի բերէին իմաստակութիւնները, որոնք յօրինուած են նրանց լսողներին կործանելու համար. այն, որ եթէ Նա ծնուեց, ապա չկար, ծնուելուց առաջ չկար եւ ոչնչից գոյութիւն առաւ: Այսպէս են խօսում նրանք, ովքեր, իրենց խօսքերը հաւանել տալու համար, իրենց լեզուն սրել են երկսայրի սրից առաւել: Որպէսզի ոչ ոք այդպիսի խօսք չասի, Սուրբ Հոգին Աւետարանի միջոցով կանխում է՝ ասելով. «Սկզբում էր Խօսքը»: Եթէ այս խօսքն ըմբռնես, չար արուեստներից ոչ մի դժնդակ ախտի չես ենթարկուի: Քանզի եթէ նա ասի՝ եթէ ծնուեց, ուրեմն չէր, դու ասա. «Սկզբում էր»: Իսկ եթէ ասի՝ ծնուելուց առաջ ինչպիսի՞ն էր, դու մի՛ թող «էր»-ը, մի՛ լքիր «սկզբում»-ը: Հնարաւոր չէ պատկերացնել սկզբի մէկ այլ վերին սահման. սկզբից անդին ոչինչ չկայ:

Քեզ ոչ ոք թող չխաբի բառի բազմանշանակութեամբ: Քանզի այս կեանքում շատ բաների սկիզբներ կան, բայց բոլորի վրայ մէ՛կ սկիզբ կայ: Առակն ասում է. «Բարու ճանապարհի սկիզբը» [Առակ. ԺԶ 7]. սակայն ճանապարհի սկիզբն առաջին շարժումն է, որտեղից սկսում ենք ընթացքը, որին նախորդածը կարելի է գտնել: Եւ «իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է» [Սաղմ. ՃԺ 10]. այս սկզբից առաջ էլ է գտնւում մէկ ուրիշը, քանզի արուեստների իւրացման սկիզբը հիմունքները սովորելն է, եւ իմաստութեան հիմքը Տիրոջ երկիւղն է: Բայց կայ նաեւ այս սկզբից մեծը՝ այն հոգու դրութիւնը, որը դեռեւս չի իմաստնացել եւ չի ստացել Աստուծոյ երկիւղը: «Սկիզբ» կոչւում են նաեւ քաղաքական իշխանութիւնները, բարձրագոյն պաշտօնները: Բայց այս սկիզբները ոմանց համար են սկիզբ, եւ իւրաքանչիւրը՝ ինչ-որ բանի համար: Քանզի գծի սկիզբը կէտն է, մակերեւոյթի սկիզբը գիծն է, եւ մարմնի սկիզբը՝ մակերեւոյթը, բարդ բառի սկիզբն էլ տառերն են:

Սակայն այս Սկիզբն այդպիսին չէ: Քանզի ոչ մի բանի հետ կապուած չէ, ոչ ոքի չի ծառայում, ոչ ոքի հետ չի երեւում, այլ ազատ է, առանց մէկին ենթակայ լինելու, մէկ ուրիշի հետ յարաբերութիւնից զերծ, անգերազանցելի, որին մտքով անհնար է հասնել եւ նրանից այն կողմ հնարաւոր չէ անցնել: Քանզի եթէ մտքի երեւակայութեամբ [փորձես] առաջ անցնել սկզբից, դու նրան կը տեսնես քեզ-

նից առաջ վազելիս եւ քո խորհուրդներից առաջ ընթանալիս: Թող քո միտքն ընթանայ, ինչքան կամենում է եւ ինչքան ձգտում է, դէպի վեր, սակայն քեզ կը գտնես բիւր անգամ մոլորուած, ունայնօրէն շատ ընթացած եւ ինքդ դէպի քեզ վերադարձած՝ սկիզբը քեզանից առաւել ցածրացնել չկարողանալուդ պատճառով: Քանզի սկիզբը միշտ իմացումից անդին է: Արդ՝ «Սկզբում էր Խօսքը»: Ո՞վ հրաշք, ինչպէ՛ս բառերը համապատուաբար լծակցուեցին. «էր»-ը համարժէք է «սկզբում»-ին: Ո՞ւր է հայհոյիչը. ո՞ւր է քրիստոսամարտ լեզուն, որն ասում է. «Կար ժամանակ, երբ չկար»: Լսի՛ր Աւետարանին՝ «Սկզբո՛ւմ էր»: Իսկ եթէ սկզբում էր, ապա ե՞րբ չկար: Նրանց ամբարշտութեան համա՞ր հառաչեմ, թէ՞ նրանց անուսումնութիւնից գարշեմ, [որ ասում են]. «Սակայն նախքան ծնուելը չկար»: Իսկ իմացե՞լ ես, թէ երբ է ծնուել, որպէսզի կարողանաս գտնել նախընթաց ժամանակը: Քանզի «նախքան»-ը ժամանակային բառ է, [որը նշանակում է] մէկի՝ միւսից առաջ լինելը հնութեամբ: Իսկ ժամանակի արարիչն ի՞նչ դատողութեամբ ժամանակային սահմանումներին ենթակայ ծնունդ կ'ունենայ: Եթէ չհրաժարուես «էր»-ից, ապա չար հայհոյանքի համար ոչ մի մուտք չես թողնի: Քանզի ինչպէս որ նաւորդները, երբ տարուբերուում են երկու խարիսխների վրայ, արհամարհում են ալիքները, այդպէս եւ դու, եթէ քո հոգին ապաւինել է այս խօսքերի անսխալականութեանը, կը ծիծաղես կեանքում չարութեան ոգիների առաջացրած այս չար խռովութեան վրայ, որը սասանում է շատերի հաւատը:

Արդ՝ մեր միտքը փնտրում է, թէ ի՛նչն էր սկզբում: «Խօսքը»,— ասում է: Ո՞ր խօսքը. մարդկայի՞նը, թէ՞ հրեշտակներինը: Քանզի առաքեալն ակնարկում է, թէ հրեշտակները յատուկ լեզու ունեն. նա ասում է. «Եթէ մարդկանց ու հրեշտակների լեզուներով խօսեմ» [Ա Կոր. ԺԳ 1]: Սակայն «խօսք»-ը երկու իմաստ ունի: Մէկը ձայնով արտաբերուողն է, որն արտաբերուելուց յետոյ օդում կորչում է, իսկ միւսը ներսում դրուածն է, որը գոյութիւն ունի մեր սրտում. մէկն արուեստական է, իսկ միւսը՝ իմացական: Տե՛ս, որ քեզ չշփոթեցնի բառի համանունը: Քանզի ինչպիսի՞ն էր մարդկային խօսքը, երբ մարդու լինելութիւնն ուշ է սկիզբ առել: Մարդուց առաջ [են ստեղծուել] գազանները, անասունները, բոլոր սողունները, բոլոր ցամաքայիններն ու բոլոր ջրայինները, երկնքի թռչունները, աստղերը, արեգակը, լուսինը, բոյսերը, սերմերը, երկիրը, ծովը, երկինքը: Ուրեմն՝ սկզբում չի եղել ոչ մարդկային, ոչ իսկ հրեշտակների խօսքը: Քանզի ամբողջ արար-

չութիւնը յաւիտեաններից յետոյ է գոյութեան սկիզբ ստացել Արարչից: Եւ սրտում եղած խօսքը նոյնպէս բոլոր իմանալիներից կրտսեր է:

Բայց լսիր այս խօսքն աստուածավայելչաբար: Քանզի Միածնի մասի՛ն քեզ հետ խօսելիս սա ասաց: Զորօրինակ, քիչ յետոյ եւ «լոյս» կ'ասի, եւ «կեանք», եւ «յարութիւն», եւ [ինչպէս որ] «լոյս» լսելիս այն չես զգում եւ աչքերով ցած բերում, իսկ «կեանք» լսելիս ընդհանրապէս հասկանում ես այն, ինչով նաեւ անբաններն էլ են ապրում, այսպէս նաեւ «Խօսք» լսելիս զգո՛յշ եղիր, չլինի թէ քո մտքի տկարութեան պատճառով տարուես ցածր խորհուրդներով: Այլ քննի՛ր խօսքի իմաստը: Ինչո՞ւ Խօսք: Որովհետեւ անախտ ծնուեց: Ինչո՞ւ Խօսք: Որովհետեւ Մնողի պատկերն է՝ Իրենով ամբողջապէս Մնողին ցոյց տուող, Նրանից ոչինչ չպակասեցրած եւ Ինքն Իրենով կատարեալ էացած, ինչպէս եւ մեր խօսքն է պատկերում մեր ամբողջ միտքը: Որովհետեւ ինչ որ սրտում իմանում ենք, այն ենք խօսքով արտաբերում, եւ ասուածը սրտում եղած մտքի պատկերումն է. քանզի սրտում աւելացածից է խօսքն արտաբերւում: Մեր սիրտն աղբիւրի է նման, իսկ արտաբերուող խօսքը՝ այդ աղբիւրից հոսող առուակի, եւ դուրս հոսողն այնքան է, ինչքան նախապէս եղածը, եւ ինչպիսին որ ծածկուածն է, նոյնպիսին եւ երեւացողն է: Արդ՝ «Խօսք» ասաց, որպէսզի Հօրից ծնունդը քեզ անախտ ներկայացնի, Որդու կատարեալ գոյութիւնը քեզ աստուածաբանի եւ դրանցով ցոյց տայ Որդու միաւորութիւնը Հօր հետ: Քանզի մեր խօսքը մտքի ծնունդ է՝ անախտաբար ծնուած. ոչ հատւում է, ոչ բաժանւում, ոչ էլ հոսում. այլ ամբողջ միտքը, մնալով իր ուրոյն գոյացութեան մէջ, առաջացնում է ամբողջական եւ կատարեալ խօսք, որն առաջ գալով՝ իր մէջ բովանդակում է ծնած մտքի ամբողջ զօրութիւնը: Ուստի ինչ որ բարեպաշտ է, «Խօսքից» ա՛յն վերցրու Միածնի մասին աստուածաբանելիս: Իսկ այն, ինչ կը գտնես, որ անպատշաճ է եւ անյարմար, հրաժարուի՛ր դրանից եւ ամէն հնարքով զա՛նց առ:

«Սկզբում էր Խօսքը»: Իսկ եթէ ասէր. «Սկզբում էր Որդին», ապա «որդի» անունը տալը քեզ կրքի մասին մտածել կը տար. որովհետեւ մեզ մօտ ծնուածը ժամանակի մէջ է ծնւում եւ ծնւում է կրքով: Այդ իսկ պատճառով կանխելով՝ «Խօսք» ասաց՝ սկզբնապէս ուղղելով անվայելուչ կարծիքները, որպէսզի քո հոգին առանց խոցելու ապրեցնի:

«Եւ Խօսքն Աստուծոյ մօտ էր»: Դարձեալ «էր»-ը հայհոյիչների համար է, [ովքեր ասում են, թէ] «չէր»: Որտե՞ղ էր Խօսքը: Ո՛չ որեւէ տեղ. քանզի տեղը չի կարող բովանդակել աննկարագրելին: Սակայն

որտե՞ղ էր. «Աստուծոյ մօտ»: Ոչ Հայրը, ոչ էլ Որդին չեն վկայուած, թէ գտնւում են որեւէ վայրում, որեւէ պարունակութեան եւ նկարագրութեան մէջ, այլ անսահման է Հայրը, եւ անսահման է Որդին: Այն ամէնն, ինչ ճանաչես, եւ ուր էլ գնաս քո հոգով, Աստուծով լցուած կը գտնես եւ ամէն տեղ [Հօր հետ] միասին կը տեսնես Որդու անձնաւորութեան ներկայութիւնը:

«Եւ Խօսքն Աստուծոյ մօտ էր»: Հիացի՛ր իւրաքանչիւր բառի ճշգրտութեամբ. չի ասուած «Խօսքն Աստուծոյ մէջ էր», այլ «Աստուծոյ մօտ», որպէսզի Նրա գոյութեան առանձնայատկութիւնը պատկերի: Չի ասուած «Աստուծոյ մէջ», որպէսզի անձնաւորութեան շփոթութեան առիթ չտայ: Քանզի չար է նաեւ ամէն ինչ խառնակողների հայհոյանքը, ովքեր ասում են, թէ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին մէկ ենթակայ են, եւ միեւնոյն իրը տարբեր անուններով է կոչւում: Ոչ պակաս չար ու խուսափելի ամբարշտութիւն է հայհոյիչների նաեւ այն ասածը, թէ Աստուծոյ Որդին եւ Հայր Աստուածն ըստ բնութեան նման չեն:

«Եւ Խօսքն Աստուծոյ մօտ էր»: Ապա, օգտագործելով «խօսք» բառն անախտութեան լինելութիւնը պատկերելու համար, անմիջապէս զերծ է պահում մեզ «խօսք» [բառի] վնասակար ընկալումից եւ ասես այն յափշտակելով հայհոյիչների զրպարտութիւնից՝ ասում է, թէ ինչ է Խօսքը: «Խօսքն Աստուած էր»: Մի՛ արուեստաբանիր ինձ խօսքի ինչ-որ տարբերութիւնների մասին եւ քո չար արուեստով որեւէ հայհոյանք մի՛ խառնիր Հոգու վարդապետութեանը: Հրամանն ունես, հնազանդուի՛ր Տիրոջը: «Խօսքն Աստուած էր»:

«Նա սկզբում Աստուծոյ մօտ էր»: Դարձեալ կարճ խօսքով ի մի է բերում իր ամբողջ աստուածաբանութիւնը, որն աւետարանիչը մեզ աւանդեց Միածնի մասին: Ո՞վ է Նա: Նա Խօսք Աստուածն է: Քանզի երբ քո մէջ ուղղեց Նրա մասին ընկալումը, քո հոգում վարդապետութեան միջոցով տպաւորեց չիմացուած բաները եւ Քրիստոսի Խօսքը հաստատեց քո սրտում, ասաց՝ Նա՛: Ո՞վ է Նա: Դուրս մի՛ նայիր քեզ ուղղութիւն տուող բառից՝ մատնանշուողին փնտրելով, այլ մտիր քո հոգու գաղտնարանները եւ այն Աստծուն, Ում մասին դու սովորեցիր, թէ սկզբում էր, Նրան, Ով իբրեւ Խօսք ծագեց [Հօրից], Ով Աստուծոյ մօտ էր, Նրան ճանաչելով հիացի՛ր ու երկրպագի՛ր իբրեւ քո Տիրոջ, Ով քո մէջ հաստատուեց վարդապետութեան միջոցով, եւ ճանաչի՛ր Նրան, որովհետեւ սկզբում Նա էր, այսինքն՝ միշտ Իր Հօր մօտ, Աստուծոյ մօտ:

Իմ այս նուազ խօսքն ամբո՛ղջ պահեցէք՝ որպէս կնիք դնելով ձեր յիշողութեան մէջ: Այն անկործան պարիսպ կը լինի չարամտողների ներխուժումների դէմ, այն հոգիների փրկութեան պահպանակ է՝ նրանց վրայ յարձակուողների դէմ: Եթէ մէկը քեզ մօտենայ ու ասի. «Մնուեց, որովհետեւ չկար, քանզի եթէ կար, ինչպէ՞ս ծնուեց», դու, ինչպէս դեւերի ձայնից, հեռո՛ւ փախիր Միածնի փառքի դէմ եղած հայհոյանքից: Վերստին գնա դէպի Աւետարանների խօսքը. «Սկզբում էր Խօսքը, եւ Խօսքն Աստուծոյ մօտ էր, եւ Խօսքն Աստուած էր: Նա սկզբում Աստուծոյ մօտ էր»: Եւ չորս անգամ ասելով «էր»-ը՝ կը խափանես նրանց «չէր»-ը: Այսպէս անխախտ թող լինեն հաւատքի սիւները: Սրանց վրա՛յ կառուցենք տունը. մնացածն Աստուած կը տայ: Քանզի չենք կարող ամէն ինչի մասին միանգամից խօսել, որ չլինի թէ խօսքի անչափութեամբ անպէտք դարձնենք ձեզ համար աշխատասիրաբար ընտրուածները: Քանզի միտքը, տկարանալով բոլորը միասին ըմբռնելուց, հիւանդանում է ինչպէս որովայնը, որը գերյագեցուածութեան պատճառով ներսում ամբարուածները չի կարողանում մարսել: Արդ՝ մաղթում եմ ձեզ քաղցրանալ ճաշակելիքով եւ օգուտ ստանալ մարսողութեամբ: Իսկ ես պատրաստ կանգնած եմ մնացեալի համար ձեզ սպասաւորելու մեր Տէր Յիսուս Քրիստոսով, Ում փա՛ռք եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԳՈՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Լսեցիք առաքեալի խօսքը, որով խօսում է Թեսաղոնիկեցիների հետ՝ օրինադրելով ամբողջ կեանքի համար: Այս վարդապետութիւնն ուղղուած է նրանց, ովքեր հանապազ հանդիպում էին նրան, իսկ սրանից եղած օգուտը տարածւում է մարդկային ամբողջ կեանքի վրայ: «Ամէն ժամանակ ուրա՛խ եղէք,— ասում է,— անդադար աղո՛թք արէք, ամէն ինչում գոհացէ՛ք» [Ա Թես. Ե 16—18]: Արդ՝ թէ ի՛նչ է այս ուրախ լինելը, ի՛նչ է դրանից եղած օգուտը, եւ ինչպէ՞ս կարելի է անդադար աղօթք ուղղել եւ ամէն ինչի համար գոհութիւն մատուցել Աստծուն, քիչ յետոյ կը պատմենք: Բայց քանի որ մեզ պատահող ընդդիմակայողները հայհոյում են, թէ [այս] օրինադրութեան [իրագործումն] անկարելի է, ուստի նախ անհրաժեշտ է սրանով զբաղուել: «Այդ ի՞նչ առաքի-

նութիւն է,— ասում են,— գիշեր ու ցերեկ հոգով հրճուելով ու ցնծալով անցկացնել: Եւ ինչպէ՞ս կարելի է դա յաջողեցնել, երբ մեր կամքից անկախ [առաջ եկող] բիւրաւոր չարիքներ կան մեր շուրջ, որոնք անհրաժեշտաբար տրտմութիւն են բերում հոգուն, եւ որոնց պատճառով այլեւս անկարելի է ուրախանալ ու բարեմտել, կամ տապակուողն ինչպէ՞ս կարող է ցաւ չզգալ եւ խոցուողը՝ չտառապել»:

[Հաւանաբար] այստեղ ներկայ գտնուողներից մէկը, այսպիսի հիւանդ խորհուրդներից տկարացած, իր մեղքերի համար այսպիսի պատճառաբանութիւն է բերում՝ պատուիրանները պահպանելու գործում իր ծուլութեան համար փորձելով մեղադրել օրինադրին՝ որպէս անկարելին սահմանողի: Եւ ասում է. «Ինչպէ՞ս կարող եմ ամէն ժամ ուրախանալ, երբ ինձ համար ուրախանալու պատճառներ չկան: Քանզի ուրախութեան պատճառները դրսից են եւ ո՛չ թէ մեր մէջ. սիրելիի գալուստը, ծնողներին երկար ժամանակ անց հանդիպելը, հարստութիւն գտնելը, մարդկանցից պատուի արժանանալը, ծանր հիւանդութիւնից յետոյ առողջանալը եւ կեանքի այլ բարօրութիւններ՝ ըստ ամենայնի լաւ տուն, առատ սեղան, ուրախութեան պատշաճ հաղորդակիցներ, հաճոյք պատճառող լսելութիւններ ու տեսարաններ, հարազատների առողջութիւն եւ նրանց կեանքի այլ բարեբախտութիւններ: Քանզի տրտմեցնում են ոչ միայն մե՛զ հասնող ցաւերը, այլեւ որոնք տրտմեցնում են [մեր] սիրելիներին ու ազգականներին: Այս ամէնն է անհրաժեշտ՝ հոգու ուրախութիւն ու բարեմտութիւն ունենալու համար: Այս ամէնից բացի, երբ տեսնում ես թշնամիների անկումը, դաւաճանների պարտութիւնը, բարեգործների պարգեւատրումը, պարզապէս երբ ոչ մի դժուարութիւն չկայ ու ոչ էլ սպասւում է, որը կը կարողանար մեր կեանքը խռովել, այդժա՛մ հոգում կարող է խնդութիւն լինել: Արդ՝ ինչո՞ւ է մեզ այնպիսի հրաման տրուել, ինչի կատարումը յաջողւում է ոչ թէ յօժարութեամբ, այլ վերոնշեալների հետեւանքն է: Եւ ինչպէ՞ս անդադար աղօթեմ, երբ անհրաժեշտաբար հոգին մտածում է մարմնի կարիքների մասին, քանի որ անկարելի է միտքը երկու հոգսերի միջեւ բաժանել: Իսկ ինձ հրամայուած է ամէն ինչում գոհանալ: Գոհանամ, երբ տանջո՞ւմ եմ, վիրաւորո՞ւմ, անուի վրայ պրկո՞ւմ, երբ աչքերս հանո՞ւմ են: Գոհանամ, երբ ատողն անարգ հարուածնե՞ր է հասցնում, երբ սառչո՞ւմ եմ ցրտից, տանջո՞ւմ սովից, կապուա՞ծ եմ ծառից, երբ յանկարծօրէն անզաւակ եմ դարձել եւ կամ նոյնիսկ կնոջի՞ց զրկուել, երբ նաւաբեկութեամբ յանկարծ ունեցուա՞ծքս կորցրի, երբ ծովում ծո-

վահէնների կամ ցամաքում աւազակների՞ պատահեցի, վէրքե՞ր ստացայ, զրպարտուեցի՞, աղքատացա՞յ, երբ զնդանի մէ՞ջ եմ բնակւում»:

Այսպիսի եւ տակաւին սրանցից շատ աւելի մեղադրանքներով բամբասում են օրինադրողին՝ ջանալով արդարացնել իրենց մեղքերը՝ անկարելի համարելով մեզ հրամայուածները: Արդ՝ ի՞նչ ասենք: Ա՛յն, որ առաքեալն ուրի՛շ բան նկատի ունի եւ փորձում է մեր հոգին բարձրացնել եւ տեղափոխել երկնային կեանքի մէջ, իսկ նրանք, ովքեր անկարող են օրինադրողի մեծ խորհրդին հասու դառնալ, մարմնական ախտերում թաղուած, ինչպէս տղմաշաղախ որդերը՝ հողում ու մարմնի մէջ, պահանջում են առաքելական հրամանների կարելիութիւնը: Բայց առաքեալն առաջարկում է ամէն ժամ ուրախ լինել ոչ թէ ամէն պատահածի, այլ նրան, ով այնպիսին էր, ինչպիսին ինքը, այլեւս մարմնով չէր ապրում, այլ իր մէջ կենդանի Քրիստոսին ունէր: Որովհետեւ ծայրագոյն բարիքներին մերձ լինելը երբեք չի ընդունում մարմինն ամբոխող ախտակցութիւնը, այլ նոյնիսկ եթէ մարմինը կտրատւում է, միաւորման բաժանումը մնում է մարմնի չարչարեալ մասում, եւ ցաւը չի կարողանում հասնել մինչեւ հոգու բանական [զօրութիւնը]: Քանզի եթէ մահացրել ենք մեր անդամները երկրի վրայ՝ ըստ առաքեալի պատուիրանի [հմմտ. Կող. Գ 5], եւ «Յիսուսի մահն ենք կրում մեր մարմնում» [Բ Կոր. Դ 10], հարկաւորաբար մեռեալ մարմնի վէրքի [ցաւը] չի հասնի [մարմնի հետ] միաւորութիւնից բաժանուած հոգուն: Պատուազրկումները, վնասներն ու մերձաւորների մահերը չեն բարձրանայ դէպի միտքը եւ հոգու բարձրութիւնը չեն իջեցնի դէպի այստեղինի հանդէպ կարեկցութիւնը: Քանզի եթէ դժուարութիւնների մէջ ընկածներն այնպէս մտածեն, ինչպէս առաքինին, ապա ընկերոջը տրտմութիւն չեն պատճառի եւ իրենք եւս տխրութեամբ չեն տանի վտանգները: Իսկ եթէ ապրեն մարմնով [հմմտ. Հռոմ. Ը 12], այդ դէպքում եւս չեն տրտմեցնի, սակայն ողորմելի կը համարուեն՝ ոչ այնքան հանգամանքների բերումով, որքան արժանին չնախընտրելու պատճառով: Ընդհանրապէս հոգին, որը ցանկութեամբ մի անգամ կապուել է Արարչին եւ սովոր է այնտեղի գեղեցկութիւններով ուրախանալ, իր խնդութիւնն ու բարեմտութիւնը չի փոխի մարմնական ախտերի զանազան փոփոխութիւնների հետ, այլ ուրիշների համար տրտմական բաները կ՚աւելացնեն նրա ուրախութիւնը: Այսպիսին էր առաքեալը. գոհանում էր տկարութիւնների, նեղութիւնների, հալածանքների, կարիքների մէջ, պակասութիւններն իր համար պարծանք էր համարում [Բ Կոր. ԺԲ 9—10],

երբ սոված էր ու ծարաւ, ցրտի մէջ ու մերկ, հալածանքների ու նեղութիւնների մէջ [Բ Կոր. ԺԱ 27]. սրանցից ուրիշները վշտանում են եւ կեանքից հրաժարւում, իսկ նա սրանցով ցնծում էր: Արդ՝ ովքեր սխալ են հասկանում առաքեալի միտքը եւ չգիտեն, որ նա մեզ աւետարանական կեանքի է հրաւիրում, յանդգնում են մեղադրել Պողոսին՝ որպէս մեզ համար անկարելին սահմանողի:

Այլ թող իմանան, թէ ուրախանալու ինչքան բանական պատճառներ են մեզ տրուել Աստուծոյ մեծապարգեւութիւնից: Անէութիւնից բերուել ենք լինելութեան, ստեղծուել Արարչի պատկերի համաձայն, ունենք մեր բնութիւնը կատարեալ դարձնող միտք եւ խօսք, որոնցով Աստծուն ճանաչեցինք: Եւ արարչութեան գեղեցկութիւններն արուեստաբար սովորելով՝ դրանց միջոցով, ասես ինչ-որ գրերով, ընթերցում ենք բոլորի նկատմամբ Աստուծոյ մեծ նախախնամութիւնն ու իմաստութիւնը: Զանազանում ենք բարին ու վատթարը, բնութիւնից սովորել ենք ընտրել օգտակարն ու խուսափել վնասակարից: Մեղքի պատճառով Աստծուց օտարացած լինելով՝ վերստին ընտանութեան ենք կոչուել՝ Միածնի արեամբ ազատագրուելով անպատիւ ծառայութիւնից: Ցարութեան յոյս, հրեշտակային բարիքների վայելում, երկնային թագաւորութիւն, խոստացուած բարիքներ, որոնք գերազանցում են մտքի եւ խօսքի զօրութեանը. ինչպէ՞ս այս ամէնը չհամարենք անդադար խնդութեան ու մշտական ուրախութեան բաւարար պատճառ:

Այլ [փոխարէնը] կարծում են, թէ որովայնամոլը, փափուկ մահճակալի վրայ ընկողմանածն ու մէջքի վրայ խումփացնողն են արժանի ուրախութեամբ ապրելու: Իսկ ես ասում եմ, որ վայել է, որ նրանց վրայ ողբան միտք ունեցողները, իսկ երանեն նրանց, ովքեր կեանքը հանդերձեալ յաւիտեանի յոյսով են ապրում եւ ներկան փոխանակում յաւիտենականով: Եթէ անգամ կրակի միջով են անցնում Աստծուն միացածները, ինչպէս երեք երիտասարդները՝ Բաբելոնում [Դան. Գ 22], անգամ եթէ արգելափակուած են առիւծների հետ [Դան. Զ 18], անգամ եթէ կէտ ձկից կուլ են տրուած [Յովն. Բ 1], նրանք պէտք է մեր կողմից երանուեն եւ խնդութեամբ ապրեն ոչ թէ ներկայիս համար ցաւելով, այլ յետագայում ուրախութեան մէջ գտնուելու յոյսով: Քանզի ինձ թւում է, որ լաւ մարտիկը, մի անգամ բարեպաշտութեան ասպարէզ մտնելուց յետոյ, պարտաւոր է առաքինութեամբ տանել հակառակորդների հարուածները՝ փառքի պսակներին արժանանալու յոյսով: Ինչպէս որ մարզական մրցումների ժամանակ վարժուած մերկամարտիկ-

ները մրցավայրում ոչ թէ խորշում են հարուածի ցաւից, այլ, առկայ վտանգն անտեսելով, մօտենում են հակառակորդին՝ գովեստի արժանանալու ցանկութեամբ, այնպէս էլ եթէ առաքինիին որեւէ դժուարութիւն է պատահում, այն չպէտք է ստուերի նրա ուրախութիւնը: Քանզի «նեղութիւնը համբերութիւն է գործում, համբերութիւնը՝ փորձառութիւն, փորձառութիւնը՝ յոյս, իսկ յոյսն էլ չի ամաչեցնում» [Հռոմ. Ե 3]: Այդ պատճառով մի ուրիշ տեղ էլ Պօղոսից սովորեցինք նեղութեան համբերել եւ յոյսով խնդալ [Հռոմ. ԺԲ 12]: Արդ՝ յոյսն է, որ ուրախութիւնը բնակեցնում է առաքինի մարդու հոգում:

Բայց նոյն այս առաքեալը մեզ հրամայում է նաեւ «լաց լինել լացողների հետ» [Հռոմ. ԺԲ 15] եւ գաղատացիներին* գրելիս լաց էր լինում Քրիստոսի խաչի թշնամիների համար [Փլպ. Գ 18]: Իսկ ի՞նչ ասել լացող Երեմիայի մասին [Ողբ Ա 1], Աստուծոյ հրամանով իշխանների վրայ ողբ գրող Եզեկիէլի [Եզեկ. ԺԲ 10] եւ ողբացող բազմաթիւ սրբերի մասին. «Վա՜յ ինձ, մա՜յր իմ, ինչպիսի՞ն ծնեցիր ինձ» [Երեմ. ԺԵ 10]: «Վա՜յ, որովհետեւ բարեպաշտը կորաւ երկրի երեսից, եւ մարդկանց մէջ ուղիղը չկայ» [Միք. Է 2]: Եւ՝ «Վա՜յ ինձ, որ հունձքի ժամանակ ճռաքաղ եղայ» [Միք. Է 1]: Եւ ընդհանրապէս, քննի՛ր արդարների խօսքը, եւ եթէ որեւէ տեղ տխուր ձայն արձակուած գտնես, կը համոզուես, որ բոլորն այս աշխարհի ու այս դժուարին կեանքի վրայ են հառաչում: «Վա՜յ ինձ, որովհետեւ իմ պանդխտութիւնը երկարեց» [Սաղմ. ՃԺԹ 5], քանզի [Դաւիթը] փափագում է [այս աշխարհից] ազատուել եւ Քրիստոսի հետ լինել [Փլպ. Ա 23]: Ուստի վշտանում է խնդութեան խոչընդոտ այս պանդխտութեան երկարելուց: Դաւիթը նաեւ իր երգերի մէջ մեզ համար թողեց ողբ իր սիրելի Յովնաթանի մասին, ում հետ ողբաց նաեւ իր թշնամուն. «Ցաւում եմ քեզ համար, եղբա՜յր իմ Յովնաթան», եւ՝ «Իսրայէլի՛ դուստրեր, ողբացէ՛ք Սաւուղի վրայ» [Բ Թագ. Ա 26, 24]: Մէկին ողբում է իբրեւ մեղքի մէջ մահացածի, իսկ Յովնաթանին՝ որպէս ամբողջ կեանքում իրեն հաղորդակցի: Ուրիշ ի՞նչ պէտք է ասել: Բայց Տէրը եւս արտասուեց Ղազարոսի վրայ [Յովհ. ԺԱ 35], արտասուեց նաեւ Երուսաղէմի վրայ [Ղուկ. ԺԹ 4] եւ երանում է սգաւորներին ու լաց եղողներին [Մատթ. Ե 4, Ղուկ. Զ 21]:

Իսկ ինչպէ՞ս, ասում են, այս ամէնը համաձայնեցնել «ամէն ժամ ուրախ եղէք» խօսքին, քանզի արցունքը եւ ուրախութիւնը միեւնոյն

* Պէտք է լինէր «փիլիպեցիներին»:

պատճառից չեն գոյանում: Որովհետեւ առաջինը սովորաբար առաջանում է ակամայ հարուածից, որը, ինչպէս վէրքի դէպքում, հոգին խոցում է ու կծկում՝ ճնշելով շունչը սրտի շուրջ, իսկ ուրախութիւնը [մարդու] կամքին ախորժելի հոգու խայտանք է: Այս պատճառով էլ մարմնին պատահածները եւս տարբերւում են: Քանզի տրտմածների մարմինը գունատ, կապտաւուն եւ սառն է, իսկ ուրախացածների մարմնի վիճակը ծաղկուն է ու կարմրագոյն, հոգին հրճուանքից համարեա ցատկում ու դուրս է մղւում: Սրա առնչութեամբ ասենք, որ սրբերի ողբն ու արցունքները լինում էին Աստուծոյ սիրուց: Ուրեմն՝ միշտ նայելով Սիրելիին եւ Նրանից աւելացնելով իրենց ուրախութիւնը՝ տնօրինում էին ծառայակիցների մասին՝ սգալով մեղանչողների համար եւ արցունքների միջոցով ուղղելով նրանց: Ինչպէս որ ծովափին կանգնածները ծովում ընկղմուողներին կարեկից լինելիս իրենց սեփական անվտանգութիւնը չեն կորցնում վտանգուածների համար հոգալու պատճառով, այդպէս էլ մերձաւորների յանցանքների համար տրտմողներն իրենց սեփական ուրախութիւնը չեն ոչնչացնում: Ընդհակառակը՝ եղբօր համար եղած արցունքներով արժանանում են Տիրոջ ուրախութեանը: Այս պատճառով «երանի՜ լացողներին» [Ղուկ. Զ 21] եւ «երանի՜ սգաւորներին, որովհետեւ նրանք կը մխիթարուեն» [Մատթ. Ե 4] եւ «կը ծիծաղեն» [Ղուկ. Զ 21]: «Ծիծաղ» ասում է ոչ թէ արեան եռալուց այտերից ելնող աղմուկը, այլ անապական եւ որեւէ տխրութիւնից անխառն զուարթութիւնը: «Ուրեմն լացողների հետ լացէ՛ք» [Հռոմ. ԺԲ 15],— թոյլատրում է առաքեալը. որովհետեւ այդ արցունքը դառնում է խնդութեան սերմ եւ փոխատուութիւն: Եւ մտքովդ բարձրացիր ու տես հրեշտակների վիճակը, թէ ուրիշ ի՛նչ վիճակ է վայել նրանց, բացի խնդալուց եւ հրճուելուց. որովհետեւ նրանք արժանի են Աստուծոյ մօտ լինելու եւ վայելելու մեզ Արարողի փառքի անճառելի գեղեցկութիւնը: Արդ՝ առաքեալը մեզ դէպի այդ կեանքը կողմնորոշելով է հրամայում ամէն ժամանակ ուրախ լինել:

Իսկ Ղազարոսի ու քաղաքի վրայ Տիրոջ արտասուելու մասին [Հմմտ. Յովհ. ԺԱ 35, Ղուկ. ԺԹ 41] կ՛ասենք, որ Նա կերաւ ու խմեց ոչ թէ դրա կարիքն ունենալու պատճառով, այլ որպէսզի քեզ թողնի քո հոգուն անհրաժեշտ կրքերի չափն ու սահմանը: Նա այդպէս արտասուեց ողբացողների ու սգացողների խիստ սաստկացած եւ նուաստացած կիրքն ուղղելով: Քանզի ինչպէս այլ բաները, արտասուելը նոյնպէս կարօտ է չափաւորութեան. թէ ո՛ւմ վրայ է անհրաժեշտ, որ

լինի, ինչքա՜ն, ե՛րբ եւ ինչպէ՛ս: Այն, որ Տիրոջ արցունքը ոչ թէ կրքից էր, այլ ուսուցման նպատակով, յայտնի է այս խօսքից. «Ղազարոսը՝ մեր բարեկամը, քնեց. բայց գնամ, որ արթնացնեմ նրան» [Յովհ. ԺԱ 11]: Մեզանից ո՞վ է ողբում քնած ընկերոջը, ում յոյս ունի քիչ յետոյ արթնացնելու. «Ղազարո՛ս, դո՛ւրս եկ» [Յովհ. ԺԱ 14]. եւ մեռեալը կենդանացաւ, ու կապեալը քայլեց. հրա՛շք հրաշքի մէջ: Զնայած ոտքերի՝ փոկերով կապուած լինելուն՝ շարժումը չխափանուեց: Քանզի Զօրացնողն աւելի մեծ էր խափանողից: Արդ՝ Նա, ով այս գործերը պէտք է կատարէր, ինչո՞ւ դէպքն արցունքի արժանի համարեց: Մի՞թէ պարզ չէ, որ ամէն կողմից մեր տկարութիւնը տեսնելով՝ որոշ չափերի ու սահմանների մէջ անհրաժեշտ կիրքն ընդունեց. անկարեկցութիւնը՝ որպէս գազանային բան, մերժեց, իսկ տրտմութիւնից ու ողբասիրութիւնից՝ որպէս ոչ լաւ բանից, հրաժարուեց: Այդ պատճառով, սիրելիի վրայ արտասուելով, Նա ե՛ւ մարդկային բնութեանն Իր հաղորդակցութիւնը ցոյց տուեց, ե՛ւ մեզ ազատեց երկուսի չափազանցութիւնից, որպէսզի կրքերից չթուլանանք եւ տրտմեցուցիչ բաներն անզգայութեամբ չընդունենք: Արդ՝ ինչպէս Տէրն ընդունեց քաղցը, երբ կոշտ կերակուրը սպառուեց նրա մէջ, ծարաւ զգաց, քանի որ մարմնի խոնաւութիւնը ծախսուել էր, եւ յոգնեց, քանի որ մկաններն ու ջղերն ուղեգնացութիւնից գերձգուել էին (ոչ թէ աստուածութիւնը յոգնութիւնից սանձուեց, այլ մարմինն ընդունեց բնութեանը յատուկ պատահմունքները), այդպէս էլ արցունքը պատշաճ համարեց՝ թոյլ տալով, որ մարմնի մէջ բնականը կատարուի: Այն կատարւում է, երբ ուղեղի խոռոչները, լցուելով տրտմութեան գոլորշիներով, ջրատարների նման խոնաւութեան ծանրութիւն են բերում աչքերին: Ուստի աղմուկ, գլխապտոյտ եւ մթագնում են լինում անսպասելի տրտմաբեր լուր ստանալուց, գլուխը թմրում է գոլորշիներից, որոնք վերեւ են առաքւում խորքում եղած ջերմութեան կծկումից: Եւ ապա, կարծում եմ, ինչպէս ամպը՝ ցօղի, այնպէս էլ գոլորշիների թանձրութիւնն արցունքի է վերածւում: Այստեղից էլ ողբալու մէջ ինչ-որ հանգստացում կայ տրտմեալների համար, երբ լաց լինելու ժամանակ նրանցից դատարկւում է ծանրութիւնը: Խօսքի ճշմարտութիւնը հաստատում է եղածների փորձը: Քանզի շատերին գիտենք, որ դաժան պարագաներում բռնի զսպել են իրենց արցունքի հոսքը, եւ ապա ոմանք ընկել են անտանելի ախտերի մէջ՝ խելագարուել կամ անդամալուծուել, իսկ ուրիշներ էլ բոլորովին ցամաքել են, եւ ինչպէս տկարացած յենարան՝ նրանց զօրութիւնը

տրտմութեան ծանրութեան տակ խորտակուել է: Ովքեր նայել են բոցին, որն իրեն յատուկ ծխից խեղդւում է առանց դուրս ելնելու, ինքն իր շուրջ գալարուելով, ասում են, թէ այդպէս է լինում նաեւ կենդանութիւնը տնօրինող զօրութեան հետ: Քանզի այն թօշնում եւ հանգչում է դժուարութիւններից, երբ դէպի դուրս ոչ մի ելք չի ունենում:

Բայց տրտմասէրներն իրենց կրքի արդարացման համար թող չներկայացնեն Տիրոջ արցունքը: Քանզի ինչպէս որ կերակուրը, որ Տէրը կերաւ, հեշտասիրութեան առիթ չէ մեզ համար, այլ, ընդհակառակը, ժուժկալութեան ու սակաւապէտութեան բարձրագոյն սահման, այդպէս էլ արցունքը ողբալու օրինադրութիւն չէ, այլ սահմանուած է որպէս ամենաբարեաւեւ չափ եւ ճշգրիտ օրինակ, ըստ որի պատշաճ է, որ բնութեան սահմաններում պարկեշտօրէն ու գեղեցկապէս մնալո՛վ տանենք տրտմութիւնները: Արդ՝ ո՛չ կանանց եւ ո՛չ էլ այրերին չի հրամայուել սգասիրութիւն եւ առատ արցունք, այլ վշտի ժամանակ տխրել եւ մի փոքր արցունք թափել, եւ այն էլ՝ հանդարտութեամբ, առանց կականելու, աղաղակելու, հանդերձները պատառոտելու կամ գլխին մոխիր ցանելու, կամ առանց որեւէ ամօթալի նման արարքի, որ սովոր են կատարել երկնայինի մէջ տգէտները: Քանզի աստուածային վարդապետութեամբ մաքրուածը ճշմարիտ խօսքով պէտք է ամուր պարսպի նման ամրանայ եւ արիաբար ու ժուժկալութեամբ պաշտպանուի նման կրքերի հարուածներից եւ ոչ թէ, ինչ-որ տեղ նստած, հոգու տկարութեամբ ու նուաստութեամբ ընդունի վրայ հասնող կրքերի բազմութիւնը: Քանզի անարի հոգուն եւ Աստուծոյ յոյսը կորցրածին է յատուկ սաստկապէս վայր ընկնելն ու տրտմութիւններին ենթարկուելը: Որովհետեւ ինչպէս որդերն առաւելապէս կակուղ ծառերի մէջ են ծնւում, նոյնպէս եւ տրտմութիւնները թուլացած բարքի տէր մարդկանց մէջ են աճում: Մի՞թէ Յոբի սիրտն ադամանդեայ էր, մի՞թէ նրա աղիքները քարից էին պատրաստուած: Նրա տասը զաւակները ժամանակի կարճ վայրկեանում մէկ հարուածով կործանուեցին ուրախութեան տանը, վայելքի պահին, երբ սատանան նրանց վրայ փլեցրեց բնակարանը: Տեսաւ սեղանն արեամբ շաղախուած, տեսաւ տարբեր ժամանակներում ծնուած իր զաւակներին կեանքի միեւնոյն վախճանով ընկած: Նա ոչ հառաչեց, ոչ մազերը փետեց, ոչ էլ տգեղ ձայն արձակեց, այլ ասաց բոլորին յայտնի եւ բոլորի գովաբանած այս գոհութիւնը. «Տէրը տուեց եւ Տէրն առաւ. ինչպէս Տէրը որոշեց, այդպէս էլ կատարուեց. Տիրոջ անունը թող օրհնեալ լինի» [Յոբ Ա 21]: Մի՞թէ այդ մարդն անգութ էր: Եւ ինչպէ՞ս. նա, ով

իր մասին ասում է. «Ես լացել եմ ամէն մի ճնշուածի համար» [Ցոբ Լ 25]: Բայց արդեօ՞ք նա ստում էր դա ասելիս: Նրա մասին վկայում է ճշմարտութիւնը, որ նա ամէն ինչում առաքինի ու ճշմարիտ էր. «Եւ այն մարդը,— ասում է,— անպարսաւելի էր, արդար, աստուածապաշտ, ճշմարիտ» [Ցոբ Ա 1]: Իսկ դու տրտմութիւնների համար յօրինուած ինչ-որ ողբական երգերով պատրաստ ես ողբալու եւ մաշելու քո հոգին: Ինչպէս որ ողբերգակներին է յատուկ կերպարանափոխուելն ու հանդերձանքը, որով հանդէս են գալիս, այդպէս եւ, [մտածում ես], որ սգացողին է վայել պատշաճ ձեւ՝ սեւ զգեստ, գզգզուած մազեր, տանը խաւար, կեղտ ու մոխիր եւ տխուր նուագ, որը վշտի վէրքը միշտ նորոգում է հոգում: Թոյլ տուր այդ անել նրանց, ովքեր յոյս չունեն: Քանզի դու սովորել ես ի Քրիստոս ննջեցեալների մասին, որ «սերմանւում է ապականութեամբ եւ յառնում անապականութեամբ. սերմանւում է տկարութեամբ եւ յառնում զօրութեամբ. սերմանւում է շնչաւոր մարմին, եւ յառնում հոգեւոր մարմին» [Ա Կոր. ԺԵ 42—44]: Արդ՝ ինչո՞ւ ես լալիս վախճանուածի համար, ով [ընդամէնը] հագուստն է փոխել: Ոչ ինքդ քեզ ողբա որպէս կեանքում օգնականից զրկուածի («Քանզի աւելի լաւ է,— ասում է,— Տիրոջը յուսալ, քան մարդկանց» [Սաղմ. ՃԺԷ 8]), ոչ էլ նրան ողբա որպէս չարչարանք կրածի: Քանզի սակաւ ժամանակ յետոյ երկնային փողը կ՚արթնացնի նրան, եւ կը տեսնես նրան Քրիստոսի բեմի մօտ կանգնած: Թո՛ղ, ուրեմն, այդ նուաստ եւ անկիրթ խօսքերը. «Վա՛յ, ինչ անսպասելի չարիք». «Ո՞վ կը կարծէր, թէ այսպիսի բան կարող էր պատահել», եւ՝ «Ե՞րբ էի մտածում, թէ հողով կը ծածկեմ իմ սիրելիի գլուխը»: Քանզի եթէ անգամ այս ամէնն ուրիշ ասողից լսէինք, պատշաճ էր, որ չիկնէինք՝ թէ՛ անցեալի յիշատակութիւնից եւ թէ՛ ներկայի փորձից սովորած լինելով բնութեան ախտերի անհրաժեշտութիւնը:

Արդ՝ ոչ տարաժամ մահը, ոչ էլ յանկարծահաս ուրիշ դժբախտութիւններ երբեք չեն կարող զարհուրեցնել մեզ՝ բարեպաշտութեան խօսքով դաստիարակուածներիս: Այսպէս՝ ես երիտասարդ որդի ունէի՝ կեանքիս միակ ժառանգը, ծերութեանս մխիթարութիւնը, տոհմիս զարդը, հասակակիցների ծաղիկը, տան յենարանը. նա շնորհալի տարիքի էր, բայց խլուեց-տարուեց եւ հող ու մոխիր դարձաւ, նա, ով փոքր-ինչ առաջ ախորժելիօրէն խօսում էր իմ լսելիքին, հաճելի տեսարան էր ծնողիս աչքերին: Ուրեմն ի՞նչ անենք: Պատառոտենք պատմուճանները եւ գետնին ընկնելով թաւալուե՞նք, ողբանք, դժգոհենք եւ մերձաւորներին ցոյց տանք մեզ որպէս մի մանուկ, ով վայում եւ դէսուդէ՞ն է ընկնում հարուածների տակ: Թէ՞ եղածի անհրաժեշտութիւնը գիտակցելով, որ մահուան օրէնքն անխուսափելի է եւ ամէն տարիքի մէջ էլ հաւասարապէս գործում է ու ամէն ինչ կարգաւ քայքայում՝ չզարմանամ պատահածով: Եւ մի՞թէ պիտի միտքս խանգարուի՝ անսպասելի հարուածից տապալուելով, երբ վաղուց գիտեմ, որ մահկանացու լինելով՝ մահկանացու զաւակ ունեցայ, եւ որ մարդկային ոչինչ հաստատուն չէ, արարածներից ոչ մէկը յաւերժ մնալու համար չի ստեղծուել: Այլ խոշոր ու երեւելի քաղաքները՝ իրենց պայծառ կառոյցներով ու բնակիչների զօրութեամբ, երկրի ամէն բարիքով ու շուկայի առատութեամբ, այժմ աւերակների մէջ իրենց նախկին շքեղութեան նշաններն են սոսկ կրում: Նաւը, որ բազմիցս ծովից փրկուել եւ բիւր անգամ արագօրէն ընթացել էր, վաճառականներին անհաշիւ բեռներ բերել, քամու մէկ յարձակումից անհետացաւ: Եւ զօրքը, որը պատերազմում բազմիցս յաղթել էր թշնամուն, բարօրութեան փոփոխման հետեւանքով ողորմելի տեսարան ու պատմութիւն դարձաւ: Բովանդակ ազգեր ու կղզիներ՝ մեծ զօրութեամբ առաջացած եւ ցամաքի վրայ ու ծովերում բազում յաղթանակներ տարած, աւարներից մեծ հարստութիւն կուտակած, կամ ժամանակի ընթացքում վատնուեցին, կամ նիզակով նուաճուելով՝ ազատութիւնից ծառայութեան փոխուեցին: Եւ ընդհանրապէս, ինչ մեծ ու անտանելի ցաւեր էլ որ կան, կեանքն արդէն մեզ դրանց օրինակները տուել է: Ինչպէս որ ծանրութիւնը կշռի թեքուելով ենք որոշում եւ ոսկին՝ փորձաքարին շփելով, այդպէս էլ Տիրոջ կողմից մեզ համար սահմանուած չափերը վերյիշելով՝ ոչ մի տեղ ողջախոհութեան սահմաններից դուրս չենք գայ:

Արդ՝ եթէ երբեւէ քեզ վրայ հասնի որեւէ անախորժ բան, մտքով նախապատրաստուած լինելով՝ խռովութեան մի՛ մատնուիր եւ ապագայի յոյսով ներկան առաւել թեթեւ կը դարձնես: Քանզի ինչպէս որ աչքերի տկարութիւն ունեցողները, իրենց նայուածքը խիստ պայծառ [առարկայից] հեռացնելով, ծաղիկներով ու կանաչ խոտերով են հանգստանում, այնպէս էլ պէտք է որ հոգին միշտ տխուրը չտեսնի եւ ներկայ դժուարութիւնների մէջ չընկնի, այլ իր նայուածքը շրջի՝ բարիքները դիտելու: Այդպէս քեզ կը յաջողուի ամէն ժամ խնդալ. եթէ քո կեանքը մշտապէս առ Աստուած նայի, ապա հատուցման յոյսը կը թեթեւացնի կեանքի տրտմութիւնները: Անպատուութի՞ւն կրեցիր. հայեացքդ համբերութեամբ ուղղիր երկնքում նուաճուող փառքին: Տուժեցի՞ր. նայիր

երկնային հարստութեան այն գանձին, որն ամբարել ես քո բարի գործերով: Հայրենիքից վտարուեցի՞ր. բայց երկնային Երուսաղէ՛մն ունես հայրենիք: Զաւա՞կ կորցրիր. բայց հրեշտակների՛ն ունես, որոնց հետ պարելու ես Աստուծոյ աթոռի շուրջ եւ զուարճանալու յաւիտենական ուրախութեամբ: Այսպէս՝ ներկայ տրտմութիւններին հակադրելով ակնկալուած բարիքները՝ կը պահպանես հոգուդ անտխրութիւնն ու անխռովութիւնը, ինչին է մեզ կոչում առաքեալի օրինադրութիւնը: Ոչ մարդկային գործերի հրճուանքը անչափ ուրախութեամբ թող լցնի քո հոգին, ոչ էլ տրտմութիւնն ու ճնշումը թող նուաստացնեն քո հոգու վեհութիւնը: Եթէ այսպէս չես նախապատրաստուած կեանքում, ապա չես կարող անվտանգ ու անխռով ապրել: Իսկ դա քեզ հեշտութեամբ կը յաջողուի, եթէ քեզ տնկակից ունենաս պատուիրանը, որը քեզ խորհուրդ է տալիս միշտ խնդալ՝ հեռու վանելով մարմնի ճանձրոյթը եւ աւելացնելով հոգու զուարթութիւնը: Ներկայիս զգայութիւնները յաղթահարելով՝ միտքդ ուղղիր յաւիտենականի յոյսին, որի պատկերացումն անգամ բաւական է հոգին զուարթութեամբ լցնելու եւ հրեշտակների ցնծութիւնը մեր սրտում բնակեցնելու համար՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսով, Ում փա՛ռք եւ զօրութիւն յաւիտեանս: Ամէն:

Հին յունարէնից թարգմանեց
Սիմոն Գրքաշարեանը

ՍՈՒՐԲ ԵՒԱԳՐ ՊՈՆՏԱՑԻ

Հայոց սրբազան Պատարագի մէջ՝ անապատական ու ճգնաւոր հայրերի շարքում, յիշատակւում է նաեւ մի անուն, որը յանիրաւի մերժուած է քրիստոնէական Եկեղեցիների մեծ մասի սրբաբոյլից: Դա սբ Եւագր Պոնտացին է՝ Դ դարի եգիպտական անապատների երկու համանուն մեծ հայրերի՝ Մակարների արժանի աշակերտը՝ «Անապատի միտք»-ը, ինչպէս կոչեցին նրան յետագայում: Եւագրի գործերում որոգինէսեան ինչ-ինչ հայեացքներ յայտնաբերելու պատճառով քաղկեդոնական Եկեղեցին, իր հինգերորդից եօթերորդ տիեզերական ժողովներում (553, 680 եւ 787 թթ.) Որոգինէսին ու նրա հետեւորդներին դատապարտելով, ծայրայեղ զգուշութեան տուրք տալով, նաեւ Եւագրին է նզովքի ենթարկել՝ իբրեւ որոգինէսականի: Սակայն, չնայած սրան, այնքան մեծ են եղել նրա գործերի արժէքն ու հմայքը, ուսուցողական նշանակութիւնը՝ յատկապէս նրանց համար, ովքեր իբրեւ իրենց կեանքի ճանապարհ ընտրել են կրօնաւորական ու ճգնաւորական կեանքը, որ նրա գործերից դժուար է եղել իսպառ հրաժարուել: Ուստի դրանցից որոշներ կամ դրանց խմբագրութիւններ պահպանուել են կամ հէնց իր՝ Եւագրի անունով, այնպիսի ժողովածուներում, ինչպիսին է, օրինակ, «Ֆիլոկալիան», կամ այլ հեղինակների անուններով, օրինակ՝ Նեղոսի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու եւն (տես սբ Եւագրի «Աղօթքի մասին» գործը՝ Նեղոսի անունով, «Գանձասար», հտ. Ա, 1992 թ., էջ 180—196): Բարեբախտաբար, Հայոց Առաքելական Եկեղեցին Եւագրի հարցում առաւել արդարացի ու ճշմարտատես է գտնուել եւ դասել նրան իր սրբերի շարքում (ըստ յայսմաւուրքների՝ յիշատակութեան օրը փետրուարի 11-ն է)[1]: Ասորի Ուղղափառ Եկեղեցին էլ, թէեւ Եւագրի յիշատակութեան համար չունի յատուկ օր, սակայն չի դիտել նրան իբրեւ որոգինէսականի, նրա վարքը տեղ է գտել որոշ ասորի միջնադարեան վարքագրական ժողովածուներում[2], եւ նրա գործերը

1 Վերջին շրջանում Կաթոլիկ Եկեղեցում վերանայուել է սբ Եւագրի հարցը, եւ նա այնտեղ նոյնպէս դասւում է սրբերի շարքը, բայց ո՛չ պարտադիր յիշատակութեամբ (օրը՝ դարձեալ փետ. 11):

2 Տե՛ս, օրինակ, նրա ասորական վարքը *Acta martyrum et sanctorum (Syriac), vol. VII, Edited by Paulus Bedjan, Paris, 1897, pp. 231—236*: Այս եւ մի քանի այլ տեղեկութիւնների տրամադրման համար շնորհակալութիւն ենք յայտնում Ասորի Ուղղափառ Եկեղեցու մետրոպոլիտ Եւստաթէոս Մաթթա Ռոհամին:

մեծ հռչակ են ունեցել ասորի վանական շրջանակներում: Այս պատճառով էլ Եւագրի շատ գործեր, կորած լինելով իրենց յունարէն բնագրով, պահպանուել են ասորերէն եւ հայերէն թարգմանութիւններով: Կան նաեւ գործեր կամ դրանցից պատառիկներ, որոնք պահպանուել են նաեւ արաբերէն, լատիներէն, դպտերէն, եթովպերէն, վրացերէն[3] թարգմանութիւններով:

Հաւանաբար սխալ չի լինի ասել, որ սբ Եւագրին է պատկանում ճգնաւորական խորհրդապաշտութեան հիմնադիրը լինելու պատիւը: Նա Եգիպտական անապատի ամենաբեղուն ու հետաքրքրական հոգեւոր հեղինակն է, որից դարերի ընթացքում ազդուել են բազմաթիւ եկեղեցական հայրեր, ովքեր գրել են հոգեւոր ներանձնական, ներհայեցողական կեանքի վերաբերեալ գործեր:

Սբ Եւագրի մասին պահպանուած կենսագրական տուեալներն այնքան էլ հարուստ չեն: Նրա վարքագիրը՝ անապատում նրան աշակերտած Պալադիոսը, սակաւախօս է, կենսագրական որոշ տուեալներ էլ մեզ հասել են այլ աղբիւրներից (Սոկրատ պատմիչ, Սոզոմեն, Հռուփինոս): Եւագրը ծնուել է Պոնտոսում՝ այժմեան Թուրքիայի հիւսիսային մասում գտնուող մի երկրում, Իբորա քաղաքում, շուրջ 345 թուականին: Եւագրի ծնողների մասին յայտնի է միայն, որ հայրը սբ Բարսեղ Կեսարացու կողմից ձեռնադրուել է քորեպիսկոպոս՝ գիւղական հոգեւոր առաջնորդ: Սբ Եւագրն իր եկեղեցական ծառայութիւնը սկսել է նոյն Բարսեղ հայրապետի ձեռքի տակ՝ ծառայելով նրա մօտ եւ հէնց նրանից էլ ստանալով գրակարդացի աստիճան: Եւագրն իր ուսուցչին չի լքել ընդհուպ մինչեւ նրա վախճանը 379 թ.-ին, որից յետոյ մեկնել է Կոստանդնուպոլիս, ուր Նախախնամութիւնը նրան դարձրել է հաւատարիմ աշակերտն ու գործակիցը մէկ այլ կապադովկացի մեծ հօր՝ սբ Գրիգոր Նազիանզացու, ով ճիշտ այդ թուականին բարձրացել էր Կոստանդնուպոլսի եպիսկոպոսական աթոռին: Սբ Գրիգորը Եւագրին ձեռնադրում ու կարգում է սարկաւագապետ: Եւագրը դառնում է սբ Գրիգորի ուղեկիցը Կոստանդնուպոլսի Բ տիեզերաժողովում (381 թ.), որից յետոյ, երբ սբ Գրիգորը հարկադրուած է լինում հեռանալ մայրաքաղաքից՝ թողնելով իր պաշտօնը, Եւագրը մնում է այնտեղ՝ նորընտիր Նեքտարիոս հայրապետի մօտ՝ շարունակելու սբ Գրիգոր Նազիանզացու գործը, այն է՝ հզօր խօսքով պայքարելու ընդդէմ այդ ժամանակներում խիստ տարածուած արիոսական աղանդի: Ինչպէս վկայում է Պալադիոսը, Եւագրը, «փորձառու լինելով ամէն տեսակ աղանդի դէմ հակաճառութեան մէջ..., խօսքով յաղթում էր հերձուածողներին, եւ չէին կարողանում հակառակել այն իմաստութեանն ու հոգուն, որով խօսում էր»: Սբ Գրիգորը, Կոստանդնուպոլսի աթոռը թողնելուց յետոյ գրած իր կտակում յիշատակելով նաեւ իր «Եւագրիոս սարկաւագի» անունը, մեծ դրուատանքով է խօսում նրա մասին՝ իբրեւ եռանդուն գործընկերոջ, եւ իբրեւ երախտագիտութիւն՝ նրան կտակում իր որոշ զգեստներ եւ մի ոսկեայ փոքրիկ քսակ:

Պէտք է նշել, որ որոշ միջնադարեան աղբիւրներ սբ Գրիգոր Նազիանզացու փոխարէն իբրեւ Եւագրի ուսուցիչ եւ ձեռնադրիչ տալիս են սբ Գրիգոր Նիւսացու անունը, սակայն գիտնականներն ընդունելի են համարում սբ Գրիգոր Նազիանզացու տարբերակը: Այնուամենայնիւ, քանի որ Նիւսացին Բարսեղ Մեծի հարազատ եղբայրն էր, ուստի դժուար չէ կռահել, որ Եւագրը Գրիգոր Նիւսացու հետ նոյնպէս կարող էր սերտ յարաբերութիւններ ունենալ եւ նրանից սովորել:

Եւագրի կեանքում շրջադարձային նշանակութիւն է ունենում մի ազնուական կնոջ հանդէպ սաստիկ սիրահարուածութիւնը, ինչի դէմ Եւագրի պայքարը եւ տեսիլքով նրան երեւած հրեշտակի կարգադրութիւնը նրան ստիպում են մէկընդմիշտ լքել մայրաքաղաքն ու հեռանալ Պաղեստին, հաւանաբար 382 թ.-ին: Այստեղ նա հանդիպում է մէկ այլ ազնուական հռոմէացի տիկնոջ, ով սակայն ոչ թէ երիտասարդին դէպի մեղքն է դրդում, այլ է՛լ առաւել օգնում թողնելու աշխարհիկ սնոտի կեանքն ու ապրելու ճգնաւորական կեանքով: Այդ կինը, ում հետ Եւագրի նամակագրական կապը շարունակուել է մինչեւ վերջինիս կեանքի երկրային վախճանը, մի կուսանաց վանքի մեծաւորուհին էր՝ Մելանիան: Տասնհինգ տարեկանում նա ամուսնացել էր, դարձել երեք որդու մայր եւ ընդամէնը 22 տարեկան հասակում կորցրել ամուսնուն ու զաւակներից երկուսին: Այս մեծ վիշտը նրան դրդել էր թողնել աշխարհիկ կեանքն ու հեռանալ Եգիպտոս, ուր աշակերտելով այնպիսի մեծանուն ճգնաւորների, ինչպիսին էին Պամբոն, Սերապիոնը, Իսիդորոսը եւ այլք՝ այնուհետեւ Երուսաղէմում Զիթենեաց լեռան վրայ, հիմնել էր կուսանաց վանք՝ դառնալով դրա մեծաւորուհին: Այնուհետեւ նոյն լեռան վրայ արանց վանք էր հիմնել Հռուփինոսը: Ահա այս վերջին վանքում էլ հանգրուանում է Եւագրը՝ գալով Երուսաղէմ:

3 Թէեւ Վրաց Եկեղեցու տօնացոյցում Եւագրը տեղ չի գտել, սակայն վրացական յայսմաւուրքում յիշատակւում է:

Սակայն անմիջապէս չէ, որ որոշում է կայացնում ճգնաւորական կենցաղն ընտրելու: Ըստ Պալադիոսի՝ «լինելով կրքոտ երիտասարդ՝ նա դարձեալ կասկածների մէջ ընկաւ ու հոգով տարակուսեց, ինչ պատճառով ոչ ոքի հետ չէր խօսում: Դարձեալ փոխեց հագուստը, եւ նրա միտքը կլանուեց հռետորական սնափառութեամբ»: Ներքին մեծ պայքարը Եւագրին գցում է ծանր հիւանդութեան մէջ, որը տեւում է շուրջ վեց ամիս: Այս ընթացքում էլ նա բարեկամանում է Մելանիայի հետ, նրա աղօթքներով կրկնակի բժշկութիւն ստանում՝ մարմնի եւ հոգու, վանահայր Հռուփինոսի ձեռքից ընդունում կրօնաւորական կարգը (հագուստը՝ կրօնաւորելու օրհնութեամբ հանդերձ) եւ այս երկու վանական առաջնորդների օրհնութեամբ մեկնում Եգիպտոս՝ վանական կեանքի օրրանը: Եւագրի յետագայ ամբողջ կեանքը՝ շուրջ 16 տարի, անցնում է եգիպտական անապատներում, թէեւ յայտնի է, որ ժամանակ առ ժամանակ գնացել է Ալեքսանդրիա՝ հերետիկոսների հետ բանավիճելու համար: Առաջին մի քանի տարին անցկացնում է Նիտրիայի անապատում (լեռան վրայ), ապա Կելլիայում, ուր աշակերտում է Ալեքսանդրացի կոչուած Մակարին, այնուհետեւ նաեւ Մակար Մեծին, ով ճգնում էր Սկիտէում, եւ ում Եւագրը յաճախ այցելում էր: Սրանց վարքին ու խստակեցութեանը հետեւելով՝ նրանց պէս նաեւ հրաշագործութեան շնորհ է ստանում՝ ըստ Սոկրատ պատմիչի («Եւ նրա ձեռքով այնքան բազում ու կարեւոր հրաշքներ էին գործւում, որքան նրա ուսուցիչների»): Եւագրն իր հացը վաստակում էր գրքերի արտագրութեամբ, քանի որ ունէր գեղեցիկ ձեռագիր, ինչպէս վկայում է նրա վարքագիր Պալադիոսը, օրուդիշեր անցկացնում էր աղօթքով ու սաղմոսերգութեամբ, իր սակաւիկ քունն առնում գետնին, ուտում այնքան քիչ, որ փոքր քանակութեամբ հացն ու ձէթը բաւականացնում էին նրան 5 ամիս: Սակայն, սրանով հանդերձ, ծայրայեղութիւնների չէր դիմում՝ նախընտրելով չափաւորութիւնը՝ իր իսկ ձեւակերպած հետեւեալ սկզբունքով. «Այն, ինչ անչափ է, կարճժամանակեայ է, իսկ կարճժամանակեան վնաս է հասցնում եւ ոչ թէ օգուտ տալիս»:

Սրտի խոնարհութեամբ ու հեզութեամբ զարդարուած նրա այսպիսի ճգնաւորական կեանքի եւ Եկեղեցու մեծ հայրերի իմաստութեամբ լուսաւորուած մտքի զուգակցումն էր, որ ծնունդ տուեց այն մեծութեանը, որին իրաւամբ կոչել են «Անապատի միտքը»: Եւագրը, կենդանեաց երկրի փափագով, պանդխտութեան այս երկրին հրաժեշտ է տալիս 54 տարեկան հասակում, 399 թ.-ին՝ իր աշակերտներին ու յետագայ սերունդներին թողնելով իր ինքնատիպ մտքի ու աստուածանուէր հոգու պտուղները՝ հիմնականում ճգնաւորական ու ներհայեցողական կեանքին նուիրուած գրական գործերը:

Ինչպէս արդէն նշել ենք, մեծ է եղել սբ Եւագրի գործերի ազդեցութիւնը յետագայ ճգնաւոր ու խորհրդապաշտ հեղինակների վրայ: Բաւական է նշել ճգնաւորական գրականութեան մէջ լայն տարածում գտած մոլեկան ուղղութեան աստերի կամ խորհուրդների դրութիւնը, որի հեղինակը կամ գոնէ այն առաջինը գրով մատուցողը սբ Եւագրն է: Հետազօտութիւնները ցոյց են տուել, որ Եւագրի ազդեցութիւնը նկատելի է ոչ միայն Արեւմուտքի հոգեւոր հեղինակների գործերում սկսած նրա աշակերտ Պալադիոսից եւ շուրջ մէկ դար յետոյ ապրած Յովհաննէս Կասիանոսից, այլեւ Բիւզանդական Արեւելքի, օրինակ՝ Մարկոս Ճգնաւորի, Դորոթէոսի, Յովհաննէս Դամասկացու, Յովհաննէս Սանդուղքի, Հեսիքիոսի, Մաքսիմոս Խոստովանողի, Թէոդորոս Ստուդիտէսի, Պետրոս Դամասկացու, Սիմէոն Նոր Աստուածաբանի, աւելի ուշ շրջանի հեսիքաստ հայրերից Գրիգոր Սինայեցու, Գրիգոր Պալամասի եւ այլոց: Եւագրի ազդեցութիւնը նկատելի է նաեւ ասորական շրջանակի հայրերի գործերում՝ Փիլոքսենոս Մաբուգեցու, Իսահակ Նինուէացու, Յովհաննէս Բար Կալդունի, Գրիգոր Բար Հեբրէոսի եւ այլն: Հայ Եկեղեցու հոգեւոր հայրերը նոյնպէս ազդեցութիւն կրել եւ օգտուել են Եւագրի գործերից, ինչպէս ցոյց է տալիս Հ. Բարսեղ վրդ. Սարգիսեանը՝ օրինակներ բերելով սբ Սահակ Պարթեւից, Եզնիկից, Թաթուլի խրատներից եւ աւելի ուշ շրջանի հայ մատենագիրներից[4]: Պէտք է նշել, որ Եւագրի գործերի (գոնէ զգալի մասի) հայերէն թարգմանութիւնը կատարուել է հայոց Ոսկեդարում՝ հաւանաբար առաջին թարգմանիչների ձեռքով, ինչպէս ցոյց է տալիս դրանց լեզուաոճական քննութիւնը: Քանի որ Եւագրեան ոճը յաճախ առակաւոր ու խորհրդապաշտական է, ինչ պատճառով եւ ոչ միշտ դիւրըմբռնելի, միջնադարում թէ՛ ասորական, թէ՛ հայ մատենագրութեան մէջ ստեղծուել են Եւագրի որոշ գործերի «լուծմունքներ»՝ մեկնութիւններ: Այսպիսի լուծմունքներ հեղինակել են, օրինակ, ասորիներից Յակոբ Սարուգեցին, Բաբա Աբբան, Դիոնե-

4 Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնք՝ թարգմանեալք ի յունէ ի հայ բարբառ ի հինգերորդ դարու, աշխատասիրութեամբ եւ ծանօթութեամբք ի լոյս ընծայեաց Հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Վենետիկ, 1907 թ., էջ ճեե—ճէԱ:

սիոս Բար Սալիբին, հայ մատենագիրներից՝ Գրիգոր Գ (Փոքր Վկայասեր) Պահլաւունին, Կիրակոս Երզնկացին, Գէորգ Երզնկացին եւ այլք:

Իսկ ինչ վերաբերում է նրա գործերում արտացոլուած որոգինէսեան որոշ թիւր հայեացքների (մասնաւորապէս՝ մարդկային հոգու նախագոյութիւնը եւ ապոկատաստասիսը, այսինքն՝ ամէն ինչի՝ Քրիստոսով վերջնական վերականգնումը), ապա դրանք բնաւ չունեն իբրեւ համոզմունք, հաստատուն վարդապետութիւն ներկայացուելու յատկութիւն, այլ ընդամէնը տեսակէտներ են Եւագրի ժամանակ դեռեւս վերջնական լուծում չստացած աստուածաբանական խնդիրների շուրջ: Այսպիսի սխալ հայեացքներից զերծ չեն եղել նաեւ ուրիշ հայրեր, նոյնիսկ եկեղեցու կողմից սրբացուած վարդապետներ (օրինակ՝ սբ Գրիգոր Նիւսացին), սակայն սա պատճառ չի եղել հերետիկոսութեան մէջ նրանց կասկածելու եւ մեղադրելու: Այնպէս որ նշուած հանգամանքն ամենեւին չի նսեմացնում Եւագրին՝ իբրեւ եկեղեցական հօր եւ սրբակենցաղ անձնաւորութեան, մանաւանդ որ նրա ժամանակակիցներից ոչ ոք չի յիշատակում նրան իբրեւ որոգինէսականի, նոյնիսկ նրա ուղղափառութեան կասկած չի յայտնում: Ընդհակառակը՝ Սոկրատը յայտնում է, որ Ալեքսանդրիայի Թէոփիլոս հայրապետը ցանկանում է Եւագրին եպիսկոպոս ձեռնադրել, սակայն վերջինս, միայնակեցական կեանքը նախընտրելով, առաջարկը մերժում է, իսկ յայտնի է, որ Թէոփիլոսը որոգինէսականների ոխերիմ թշնամին էր եւ պայքար է սկսել նրանց դէմ. բնականաբար, նա չէր ցանկանայ մի սարկաւագի, որպիսին Եւագրն էր, եպիսկոպոս դարձնել, եթէ վերջինս որոգինէսականութեան հետեւորդ լինէր:

Բացի ութ խորհուրդների դրութեան հեղինակը լինելուց, Եւագրն առաջին եկեղեցական գրողն է, ով իր մտքերը ներկայացրել է աֆորիզմների տեսքով: Նա է հիմնադիրը նաեւ այսպէս կոչուած հոգեւոր «հարիւրեակների» գրական ոճի, որը տարածում գտաւ յետագայի բիւզանդական հոգեւոր գրականութեան մէջ: Նրա «Վեց հարիւրեակներ»-ը նոյնպէս կազմուած են աֆորիզմներից, որոնք անդրադառնում են թէ՛ աստուածաբանական, թէ՛ ճգնաւորական տարբեր թեմաների: Սրանք հիմնականում շարադրուած են Եւագրին բնորոշ խորհրդապաշտական այլաբանական ոճով՝ խորհրդանշանների լեզուով, եւ յաճախ մթին են ու դժուարհասկանալի:

Միայն հայերէն ու ասորերէն է պահպանուել նրա մի հետաքրքրական գործի ամբողջական բնագիրը՝ «Անտիհեւետիկոս»-ը (նշանակում

է «հակաբանական». հայերէն վերնագիրը՝ «Ընդդէմ պատասխանի ի Գրոց Սրբոց առ դեւսն որ փորձեն զմեզ»), որի մասին յիշատակում են Սոկրատն ու Գենադիոսը: Այս գիրքը, որ բաժանուած է ութ մասի՝ ըստ ութ մոլեկան խորհուրդների, ներկայացնում է, դեւերի յարուցած իւրաքանչիւր խորհուրդին իբրեւ պատասխան, աստուածաշնչեան խօսքեր՝ ըստ Տէր Յիսուսի օրինակի, Ով անապատում սատանայի խորհուրդներին պատասխանում էր սուրբգրային խօսքերով: Ըստ Եւագրի գործերի հայերէն թարգմանութիւնների հրատարակիչ Հ. Բարսեղ վրդ. Սարգիսեանի դիտարկման՝ այս գործի պահպանուած հայերէն թարգմանութիւնն աւելի ամբողջական է, քան ասորերէնը:

Եւագրի կարեւոր գործերից է «Մոնախոն»-ը (ըստ Սոկրատի վկայութեան. նշանակում է «միայնակեաց»): Սա կազմուած է երեք մասից՝ «Պրակտիկոս», «Գնոստիկոս» (գրաբարեան թարգմանիչն այս բառերը թարգմանել է «արդիւնաւոր» եւ «գիտնաւոր») եւ «Վեց հարիւրեակներ», որոնցից առաջինը նրանց համար է, ովքեր ապրում են պարզ ճգնաւորական կենցաղով, իսկ երկրորդն ու երրորդը՝ նրանց, ովքեր հասել են աստուածգիտութեան եւ ճգնաւորական կենցաղին զուգակցում են հայեցողական կեանքը: Այս գործի երեք մասերն էլ ամբողջութեամբ պահպանուել են միայն ասորերէն եւ հայերէն: Յունարէն բնագրով պահպանուել է միայն առաջին մասը, երկրորդ մասից պահպանուել են միայն հատուածներ Սոկրատ պատմիչի եւ Մաքսիմոս Խոստովանողի՝ Եւագրից կատարած մէջբերումների տեսքով, իսկ երրորդից միայն 28 գլուխ-նախադասութիւն՝ ընդհանուր 600-ից:

Եւագրի միւս գործերից մեզ հասել են կրօնաւորներին ու կրօնաւորուհիներին ուղղուած երկմասանի «Հայելին» կամ «Ստիքեան» (կրօնաւորուհիներին ուղղուած մասը հայերէնում դժբախտաբար թերի է եւ ներկայացուած է Եւագրի նամակների շարքում՝ թուղթ ԻԲ), արդէն նշուած «Աղօթքի մասին» հանրայայտ գործը, որը միջնադարում Նեղոսի անունով էր յայտնի, դարձեալ վերջինիս վերագրուած մի քանի գործ եւս, Գրիգոր Նազիանզացու անունով յայտնի մի գործ՝ «Նշանակ յԵզեկիելէ» (հայերէնում այն կրում է իր իսկական հեղինակի՝ Եւագրի անունը) եւ այլն: Եւագրից պահպանուել են նաեւ Սաղմոսների, Առակաց գրքի, Յոբի, Ղուկասի Աւետարանի մեկնութիւններից հատակոտորներ՝ ցրուած այս կամ այն ժողովածուում. սրանցից շատերը ներկայացուել են Որոգինէսի անունով, սակայն գիտնականների ջանքերով արդէն ապացուցուած է, որ դրանք պատկանում են Եւագրի գրչին: Մեծ

հետաքրքրութիւն են ներկայացնում հիմնականում միայն ասորերէնով եւ մասամբ հայերէնով պահպանուած նրա նամակները՝ ուղղուած սբ Գրիգոր Աստուածաբանին, Եւստաթէոս կրօնաւորին, Մելանիային, Հռուփինոսին եւ այլոց (շատ նամակների հասցէատէրերի անուններ չեն պահպանուել): Ասորերէնով մեզ հասել է 67 նամակ, հայերէնով՝ մօտ երկու տասնեակ: Նրա նամակներից միայն մէկն է պահպանուել յունարէն բնագրով, այն էլ սբ Բարսեղ Կեսարացու անունով՝ վերջինիս նամակների մէջ (թիւ 8): Այս ծաւալուն նամակը՝ Եւագրի վաղ շրջանի գործերից մէկը, որ մի կարեւոր աստուածաբանական գրութիւն է, զգուշացնում է արիոսական աղանդի դէմ, բացատրում Երրորդութեան վարդապետութիւնը, ըստ Սուրբ Գրքի ցոյց տալիս Հօր եւ Որդու համագոյութիւնը եւ ապացուցում Սուրբ Հոգու աստուածութիւնը:

Հայերէն թարգմանութեամբ Եւագրի անունով պահպանուել է նաեւ երկու հոգեւոր երգ՝ մէկը նուիրուած Ցարութեանը, միւսը՝ մարտիրոսներին:

«Գանձասարի» ներկայ հատորում ներկայացնում ենք սբ Եւագրի գործերից մի քանիսի արեւելահայերէն թարգմանութիւնը՝ կատարուած Հ. Բարսեղ վ. Սարգիսեանի հրատարակութեան գրաբար բնագրերից: Գործերն ընտրուած են այնպէս, որ ներկայացնեն Եւագրի գործածած տարբեր ժանրերից մէկական նմուշ (աֆորիզմներ, ուղերձ, հոգեւոր երգ, ճգնաւորական-ներանձնական բնոյթի աշխատութիւն եւ դաւանական գործ):

Օգտագործուած գրականութիւն

Սրբոյ Հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնք, Վենետիկ, 1907
Johannes Quasten, Patrology, vol. III, Evagrius of Pontus, Christian Classics, Inc., Westminster, Maryland, 1994
Творения аввы Евагрия, Аскетические и богословские трактаты, перевод А. И. Сидорова, «Мартис», 1994

Ս. Ստամբոլցեան

ՍՈՒՐԲ ԵՒԱԳՐ ՊՈՆՏԱՑԻ

ԽՐԱՏԱԿԱՆ ԽՕՍՔ[1]

Կալիս ու հնձանիս երախայրիքը[2] մատուցում եմ Քրիստոսին եւ ողկոյզների կողով՝ Բարեխօսին[3]:

1 Այս գործը գրաբարեան թարգմանութեան մէջ ներկայացուած է միազանգուած՝ առանց բաժանումների, սակայն քանի որ կազմուած է առանձին աֆորիզմ-առակներից (ստեղծուած Սողոմոնի առակների նմանութեամբ), նպատակայարմար գտանք դրանք ներկայացնել բաժանաբար: Ինչպէս նշում է Հ. Բարսեղ Սարգիսեանը, այս գործի «յոյնն եւ անոր լատին թարգմանութիւնը ոչ միայն հայերէնէ գլխովին տարբեր բաներ են, այլ եւ ոչ իսկ կրնան Գենադիոսի Sententiae valde obscurae-ներուն հետ նոյնանալ, վասնզի շատ պարզ են եւ դիւրահասկանալի. իսկ հայերէնները տիրապէս այլաբանական են եւ ծածկիմաստ: Հետեւաբար՝ ասոնց յոյն բնագիրն անյայտացած է, որուն համար ալ յոյժ հետաքրքրական են» (Սրբոյ Հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնք, Վենետիկ, 1907 թ., էջ 125): Հարկ է աւելացնել, որ այս գործից 18 նախադասութիւն պահպանուել է յունարէն բնագրով, սակայն Եւագրի գործերից քաղուած այլ նախադասութիւններին կցուած (տես Творения аввы Евагрия, Аскетические и богословские трактаты, перевод А. И. Сидорова, «Мартис», 1994; «Мысли», с. 127—128): Ի թիւս եւագրեան այլ գործերի, այս մէկը եւս արժանացել է մեկնութեան: Այսպիսի մի մեկնութեան հեղինակ է Գրիգոր մեկնիչը (հաւանաբար Գրիգոր Գ Պահլաւունի հայոց կաթողիկոսը՝ սբ Ներսէս Շնորհալու աւագ եղբայրը): Մենք ծանօթագրութիւններում երբեմն նշել ենք նաեւ Գրիգոր մեկնիչի բացատրութիւնները (ըստ ՄՄ Մատենադարանի N 1418 ձեռագրի, թթ. 222ա—319բ): Իսկ այնտեղ, ուր նրա անունը չենք յիշատակել, բացատրութեան փորձը մերն է՝ կատարուած աստուածաշնչեան համապատասխան խորհրդանիշների հետ զուգորդման սկզբունքով:

2 Կալի ու հնձանի արդիւնքը ցորենը եւ խաղողն են, որոնցից պատրաստուող հացից ու գինուց Հին Ուխտում բաժին էր տրւում Տիրոջ տանը (Թիւ. ԺԸ 25—30): Երախայրիքն առաջին պտուղը կամ բերքն է, որը եւ ընդհանրապէս ամէն ինչի անգրանիկը նուիրւում էր Աստծուն (Բ Օր. ԻԶ 1—10, Ել. ԻԲ 29—30, Թիւ. ԺԵ 20, Եզեկ. Ի 40): Ըստ Գրիգոր մեկնիչի (այսուհետ՝ ԳՄ)՝ կալով նկատի են առնուած մարմնական առաքինութիւնները, իսկ հնձանով՝ հոգու եւ խորհուրդների առաքինութիւնները: Ըստ մէկ այլ՝ անանուն մեկնութեան (որը, դժբախտաբար, թերի է եւ միայն մի քանի նախադասութեան բացատրութիւն է ներկայացնում)՝ ինչպէս հնում էին առաջին կալից ու հնձանից Աստծուն նուէր տալիս քահանաների ձեռքով, այսպէս էլ մենք պէտք է Քրիստոսին նուիրենք մեր առաքինութեան պտուղներն ու մարմնական առաքինութիւնները, որոնց խորհրդանիշն այստեղ կողովն է (ըստ ՄՄ Մատեն. N 728 ձեռագրի):

3 Նկատի ունի հէնց Տիրոջը՝ Քրիստոսին (Ա Յովհ. Բ 1, Հռոմ. Ը 34, Եբր. Է 25) կամ գուցէ Սուրբ Հոգուն, Ով աղօթքի ժամանակ մեզ համար «բարեխօսում է անմռունչ հեծութիւններով» (Հռոմ. Ը 26—27):

Մ՞վ է նա, որ ջրհորներից է ջուր խմում, եւ ո՞վ է տեսնում երկնքի ներքոյ գտնուող աղբիւրները[4]:

Ով փակում է աղբիւրի ակունքը, նման է նրան, ով կորցնում է իր հոգին. իսկ ով բացում է այն, կ՚ուրախանայ նրանով[5]:

Ծուռ աղեղը չի դիպչի երէին, եւ անմիտի կապարճներից կը կորչեն նետերը[6]:

Գիտութիւնը չի պատշաճում անմիտին, եւ անարգ քարը՝ ոսկեայ թագին:

Ովքեր օրհնում են Տիրոջը, լոյս[7] *կը տեսնեն. տգիտութիւնը կը պաշարի ամբարիշտների հոգին:*

Վա՛յ մերկ անդամներին պատերազմի օրը[8], *մերկերը կը մեռնեն ձմեռային օրերին:*

Հաւատացեալ մարդուն գիտութիւնն[9] *ազատութիւն կը շնորհի, իսկ ով անհաւատ է, յաւիտեան կը ծառայի*[10]:

Անօրէն մարդիկ հացով չեն յագենայ, իսկ ով արդար է, բազում գանձերի կը տիրանայ[11]:

---

4 *Ըստ ԳՄ-ի՝ թէ՛ ջուրը կամ աղբիւրը, թէ՛ յաջորդ նախադասութիւններում յիշուելիք այլ խորհրդանիշներ (որոնք իրենց տեղում պիտի նշենք) գործածուած են աստուածային գիտութեան իմաստով, իսկ քանի որ ջրհորում ջուրը, անշարժ լինելու պատճառով, հոտում է եւ վնասակար է, ապա նրանում եղած ջուրը խորհրդանշում է բանսարկուի գիտութիւնը. հմմտ. Երեմ. Բ 13 (տես նաեւ Առակ. Ե 15, Երեմ. ԺԷ 13, Յովհ. Դ 14, Յայտ. Է 17): Այստեղ համեմատութիւն է անցկացուում բանսարկուի գիտութիւնից «խմող» եւ աստուածգիտութեան աղբիւրներին հասած անձանց միջեւ:*

5 *Հմմտ. Առակ. ԺԴ 27: Աղբիւրի (աստուածգիտութեան) ակունքը մեր միտքն է, որը եթէ խցանուած է չար խորհուրդներով, մարդուն կործանման է տանում, իսկ եթէ մէկն իր միտքը մաքրի դրանցից, դա նրա համար յաւիտենական ուրախութեան պատճառ կը դառնայ (ըստ ԳՄ-ի):*

6 *Երէն սատանան է, որին չենք կարող յաղթել, եթէ մեր աղեղը (միտքը) ծռուած է չար խորհուրդներով կամ ծուլութեամբ (ըստ անանուն մեկնիչի եւ ԳՄ-ի): Կապարճները միտքն ու խորհուրդներն են, նետերը՝ առաքինութիւնները (ԳՄ):*

7 *Իմա աստուածգիտութեան լոյսը, որը կը տեսնեն նրանք, ովքեր իմաստութեամբ ու հեզութեամբ են Տիրոջն օրհնում (ԳՄ):*

8 *Տես Եփես. Զ 10—17 հոգեւոր պատերազմի եւ սպառազինութեան մասին: Ըստ ԳՄ-ի՝ խօսքն աստուածգիտութիւնից մերկ լինելու մասին է:*

9 *Այսինքն՝ աստուածային ճշմարտութեան գիտութիւնը (Ա Տիմ. Բ 4):*

10 *Հմմտ. Յովհ. Ը 34, Գաղ. Դ 1—7, Հռոմ. Զ 16—20:*

11 *Հացը դարձեալ աստուածային գիտութիւնն է, գանձերը՝ նոյնպէս (ԳՄ):*

Ինչպէս գետի յորդառատ հոսանքը դժուարութեամբ է պատնէշուում, այդպէս անօրէն մարդու ագահութիւնն անյագ է:

Ինչ որ որդն է ծառի սրտում, նոյնը ոխակալների խօսքերն են նրանց հոգում[12]:

Իմաստունների որդիները հաճելի չեն անզգամին[13], *եւ նա կ՚անարգի նրանց:*

Երկար ժամանակը չէ՛, որ գիտութիւն է բերում. երկար տարիները չէ՛, որ իմաստութիւն են շնորհում:

Եթէ սէր ձեռք բերես, կը հասկանաս իմաստունների խօսքերը, խաղաղութիւն կը փնտրես եւ չես անարգի նրանց որովայնի պտուղը[14]: *Բարկասիրտ մարդը չի ճանաչի այն*[15], *եւ պիղծը չի հասկանայ:*

Ճշմարտութեան ջուր կը խմի հեզ ու հանդարտ մարդը, իսկ ստի ջուրը[16] *կը տրուի բարկացող մարդուն:*

Ինչպէս մրջիւնը քաղցածին է զայրացնում, այդպէս մեղուն՝ Նրա գիտութիւնը փնտրողին[17]:

Ամենայն պահպանութեամբ պահի՛ր հայրական գանձը եւ մի՛ մոռացիր քո ծնողին[18]:

Քնած ծառան կորցնում է իր ծոցում պահած ոսկին, իսկ հարբեցողը[19] *իր կեանքը:*

---

12 *Հմմտ. Առակ. Իե 20:*

13 *Իմաստունները մարգարէներն ու առաքեալներն են, նրանց որդիները՝ սուրբ հայրերը. կամ՝ իմաստունները սուրբ հայրերն են, իսկ նրանց որդիները՝ նրանց խօսքերին հնազանդ աշակերտները (ԳՄ):*

14 *Այս նախադասութիւնն, ըստ ԳՄ-ի, լրացումն է նախորդի, որովհետեւ ցոյց է տալիս, թէ ինչն է իրականում աստուածգիտութեան արժանացնում՝ ոչ թէ երկար տարիները, այլ սէրը: Իմաստունները, ինչպէս նշուեց, մարգարէներն ու առաքեալներն են, նրանց որովայնի պտուղը՝ դարձեալ աստուածգիտութիւնը (ԳՄ):*

15 *Որովհետեւ ոչինչ աւելի չի խաւարեցնում աստուածային գիտութիւնը, որքան բարկութեան կիրքը (ԳՄ):*

16 *Այսինքն՝ բանսարկուի գիտութիւնը (ԳՄ):*

17 *Հմմտ. Առակ. Զ 6—8:*

18 *Ծնողն Աստուած է, իսկ հայրական գանձը՝ Հին եւ Նոր Կտակարանները, եւ կամ՝ ծնողը հոգեւոր ուսուցիչն է, իսկ գանձը՝ նրա տուած խրատները (ԳՄ):*

19 *Ըստ ԳՄ-ի՝ խօսքը սատանայական գիտութեամբ հարբածի մասին է:*

Տեսայ ես մարդիկ, ովքեր թռել-բարձրացել էին ինչպէս անգղների ձագերը, սակայն դիակների հոտից դարձեալ երկիր իջել[20]*:*

Ողորմած մարդը կը պահի իր գանձը[21]*, իսկ անզգամն իր բաճկոնակը կը դնի նրա վրայ*[22]*:*

Ով գիտութիւն է փափագում, զայրացնում է իր թշնամիներին[23]*, եւ ով իմաստութիւն է փնտրում, տրտմեցնում է նրանց:*

Անօրէն որդիները ցրում են ունեցուածքը, եւ անզգամները չեն տեսնի իրենց հօր գանձերը[24]*:*

Մի՛ ասա քո Հօրը. «Վտարի՛ր բոլոր նրանց, ովքեր իմ ժառանգութեանն են ձգտում», քանզի Նա չունի այն, ինչով նրանց վտարի[25]*:*

Երբ արարածներին [մատուցողը] պաշտամունքը[26] *խափանւում է, արդարներն ուրախանում են, իսկ անօրէնները՝ սգում իրենց ներսում:*

Գիշերը յետ դարձնելով՝ [նա] խաւար կը բերի եւ կը տապալի հայհոյչին ու հեթանոսներին[27]*:*

20 *Դիակները կարող են խորհրդանշել երկրային ունայն ու մարմնաւոր ցանկութիւնները: Ըստ ԳՄ-ի՝ անգղները նրանք են, ովքեր արդիւնական (գործնական) կեանքի՝ ճգնակեցութեան միջոցով հասել են աստուածգիտութեան, բայց գործերի մէջ թուլանալով՝ նորից դիմել են աշխարհի (երկրի) գարշելի հոտին:*

21 *Այսինքն՝ աստուածգիտութիւնը (ԳՄ):*

22 *Իսկ անզգամ կրօնաւորը ոչ միայն գիտութիւնից կը զրկուի, այլեւ վրայից կը հանի բաճկոնը, այսինքն՝ կը հրաժարուի կրօնաւորական կարգից (ԳՄ):*

23 *Այսինքն՝ սատանային եւ դեւերին (ԳՄ):*

24 *Ունեցուածքը դարձեալ աստուածգիտութիւնն է, իսկ հայրը՝ կամ Աստուած, կամ խրատատու հայրերը, որոնց գանձը խրատներն են (ԳՄ):*

25 *Ըստ ԳՄ-ի՝ մի՛ ասա Աստծուն («Հօրը»). «Ինձնից հեռացրո՛ւ բանսարկուի պատերազմը, որի նպատակն ինձ զրկելն է Քո գիտութիւնն ու արքայութիւնը ժառանգելուց»: Նա սա չի անի, քանզի գիտի, որ միայն այս միջոցով կարող ես դրանք ժառանգել: ԳՄ-ի մեկնութեան մէջ այս խօսքի վերջին մասը փոքր-ինչ տարբեր է մեր գործածած հրատարակութեան մէջ եղած համապատասխան հատուածից. ԳՄ-ի մօտ՝ «...զի ոչ գոյ Աստուծոյ զայս առնել» փխ. «...զի ոչ գոյ նորա որով հանէ զնոսա»:*

26 *«Արարածներին մատուցուող պաշտամունքը» ուսել-խմելն ու մարմնական այլ հաճոյքներն են (ԳՄ):*

27 *Գիշերը սատանայի փորձութիւնն է, որը կրօնաւորը յետ է դարձնում՝ շրջում սատանայի գլխին եւ խաւարեցնում նրան, իսկ հայհոյիչը՝ սատանան, եւ հեթանոսները դեւերն ու սրանց կամքը կատարող մարդիկ են (ԳՄ):*

Հեզերի գաւազաններն ընկոյզ կը պտղաբերեն, եւ նրանց հոգին պճղնաւոր կը հագնի[28]*:*

Արդարների մաղերը խորսխով կը լցուեն, եւ վայրի բրէտները կ'ուտեն ամբարիշտների մեղրը[29]*:*

Աղքատները կը բաժանեն հարուստների գանձերը, եւ խոնարհները՝ նրանց հարստութիւնը[30]*:*

Մեծ աշխատանքով են կոփւում արձանները եւ քարեղէն սրտերը՝ ընդունում Աստուծոյ օրէնքը:

Խորին են խօսքերը, ինչպէ՞ս կը կարողանանք դրանք հասկանալ[31]*:*

Վէ՛մ կանգնեցրու, գլխին ձէ՛թ լցրու[32] *եւ նրա ծոցում գանձ կը գտնես:*

28 *Գաւազանի համար հմմտ. Թիւ. ԺԷ 5—8, Երեմ. Ա 11, Եզեկ. Է 10: Ահարոնի գաւազանը ծաղկեց ու ընկոյզ պտղաբերեց, եւ սա նշանն էր Աստծուց նրա՝ իբրեւ քահանայապետ ընտրութեան: Իսկ պճղնաւորը երկար, մինչեւ ոտքի թաթերը հասնող զգեստ է, որը մասն էր կազմում նաեւ Ահարոն քահանայապետի եւ ընդհանրապէս քահանաների հանդերձանքի (Ել. ԻԸ 4): Ես. ԿԱ 6, ԿԶ 20, Ա Պետ. Բ 5, 9, Յայտ. Ի 6 եւ այլ տեղիներում «քահանայ» են կոչւում նաեւ ընդհանրապէս սրբերը կամ ճշմարիտ քրիստոնեաները՝ «ընտրեալները»: Հաւանաբար հէնց այս նշանակներն են գործածուած Եւագրի այս խօսքում: Ըստ ԳՄ-ի՝ գաւազանը խրատն է, ընկոյզը՝ աստուածային գիտութիւնն ու սրա լոյսը, պճղնաւորը՝ աստուածային շնորհը:*

29 *Մաղը միտքն ու խորհուրդներն են, խորխսը՝ աստուածգիտութիւնը, բրէտը, որ վայրի մեղուն է՝ իշամեղուն, խորհրդանշում է դեւերին, ամբարիշտների մեղրը՝ ամբարիշտների չար գործերը (ԳՄ):*

30 *Աղքատներն աշխարհից աղքատացածներն են՝ խոնարհները, հարուստների գանձերը սատանայի ու դեւերի նախկին կայեաններն ու երբեմնի փառքն են, որոնք կորցրին մեղանչման հետեւանքով, եւ որոնք պիտի ժառանգեն արդարները (ԳՄ): Սա համաձայն է եկեղեցական այն աւանդութեանը, ըստ որի՝ արդարները լրացնելու, գրաւելու են տեղը հրեշտակների այն մէկ երրորդ մասի, որն ապստամբութեան հետեւանքով սատանայի հետ վտարուեց երկնքից՝ ըստ Յայտ. ԺԲ 4-ի:*

31 *Հմմտ. Առակ. Ա 6, Երեմ. ԺԷ 9:*

32 *Սա յիշեցնում է Մն. ԻԸ 10—22 հատուածը: Յակոբն այնտեղ, ուր սանդուղքի տեսիլքը տեսաւ, վէմ կանգնեցրեց, վրան իւղ լցրեց, այդ տեղի անունը կոչեց «Աստուծոյ տուն», որը «երկնքի դուռն է», եւ այնտեղ Աստուծոյ հետ ուխտ կնքեց: Հաւանաբար Եւագրը նկատի ունի մեր անձն Աստուծոյ տուն դարձնելը՝ Աստծուն մեր մէջ բնակեցնելը՝ Սուրբ Հոգու շնորհի գործակցութեամբ (ձէթը սովորաբար խորհրդանշում է Սուրբ Հոգին կամ ողորմութիւնը): Ըստ ԳՄ-ի՝ վէմը մարմնական եւ հոգեկան գործերն են, ձէթը՝ աստուածային շնորհը, գանձը՝ աստուածգիտութիւնը:*

Անմիտ տէրը լցնում է իր ծառայի փորը, իսկ ով իմաստուն է, նրան սովամահ է անում[33]:

Քաղցած գայլը հետապնդում է խաշներին, իսկ պոռնկութեան պիղծ այսը՝ նրանց, ովքեր իրենց փորն են լցնում:

Արծաթասէրների տները բարկութեան գազաններով կը լցուեն, եւ տրտմութեան թռչունները նրանցում բոյն կը դնեն:

Խոնարհը տեսաւ աղօթքի աստղը, եւ հաւատացեալը խորտակեց սրտի կուռքերը[34]:

Բարին բխեցնող միտքը կը փախչի չար խօսքերից[35]:

Ով խորհրդով է պատասխան տալիս, յաղթում է թշնամական խօսքերին: Օգուտ չկայ ուտողին ու հարբեցողին հակաճառելուց:

Հեզն ու հանդարտը կը կատարեն Աստուծոյ խօսքերը:

Վայրի բրէտները մեղր կ'ուտեն[36], *եւ ամէնքը կը յագենան քաղցր խորսխով:*

Միայնակեացների սիրտը կը հասկանայ իմ խօսքերը[37] *եւ դրանցում նրանց*[38] *խորամանկութեան հնարները կը գտնի:*

---

33 *Կարծում ենք՝ այստեղ տէրը մեր հոգին է կամ միտքը, իսկ ծառան՝ մեր մարմինը, որը պէտք է ճնշել, նրա մեղսական ցանկութիւնները սպանել՝ ըստ առաքեալի (Կող. Գ 5, Ա Կոր. Թ 27), եւ ոչ թէ դրանք կատարել: Խօսքն այստեղ յատկապէս որկրամոլութեան մասին է:*

34 *Իբրեւ խորհրդանիշ կարող է գործածուած լինել մոգերի տեսած աստղը, որը ցոյց տուեց Տիրոջ տեղը, եւ մոգերը, որ հեթանոս էին, տեսան ու երկրպագեցին ճշմարիտ Աստծուն (Մատթ. Բ 9—10): Նոյն կերպ եւ այս աշխարհում «Աստուծոյ տեղը ցոյց տուող», առ Աստուած հասցնող, Նրա հետ հանդիպեցնող գլխաւոր միջոցը ճշմարտապէս խոնարհ սրտից բխած աղօթքն է: Ըստ ԳՄ-ի՝ խոնարհի մտքում աղօթքի ժամին աստղի պէս պայծառանում է աստուածային լոյսը, իսկ սրտի կուռքերը զանազան հաճոյքներն են (հեշտութիւնները):*

35 *Ըստ ԳՄ-ի՝ նկատի են առնուած թէ՛ մարդկանց, թէ՛ դեւերի չար խօսքերը:*

36 *ԳՄ-ը նշում է, որ այլք բրէտների տակ հասկանում են մենակեացներին, ովքեր աշխարհից օտարացած լինելու պատճառով «վայրի» են, իսկ մեղրը համարում են աստուածգիտութիւնը, սակայն ինքը կարծում է, որ բրէտները սատանան ու դեւերն են, իսկ մեղրը՝ ամբարիշտների գործերը:*

37 *Այսինքն՝ թէ բանսարկուն ու դեւերն ինչպէ՛ս են ուտում ամբարիշտների գործերը (այս խօսքն առնչւում է նախորդի հետ) (ԳՄ):*

38 *Այսինքն՝ դեւերի: Այս նախադասութեան գրաբարեան բնագրում թերեւս կայ ինչ-որ բացթողում կամ աղաւաղում:*

Անզգամների համար ճանապարհները նեղ չեն դառնում, քանզի նրանք լայնն առաւել սիրեցին[39]:

Ով նախանձում է [եղբօր] գիտութեանը, խաւար կը տեսնի, իսկ ով ուրախանում է իր եղբօրով, յոյժ կը փառաւորուի:

Պաշտի՛ր Երրորդութիւնը եւ կը ճանաչես Նրան, երկրպագի՛ր Նրան, եւ կը շատանան կեանքիդ օրերը:

[ԽՐԱՏԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ][40]

Եթէ քո ենթակայութեան տակ եղբայրներ ունես, իբրեւ ուսուցիչ մի՛ հպարտացիր նրանց վրայ, այլ փութա ջանք թափել նրանց հոգիները շահելու: Սովորեցրու նրանց առանձին լինել, բացի կերակրի սեղանին եւ սաղմոսներով պաշտամունքին [մասնակցելուց]: Քնելիս իւրաքանչիւրը թող իր հագուստով մնայ, եւ հագնուած թող ննջեն՝ սաղմոսներով եւ աղօթքների պաշտամունքով տքնելուց յետոյ: Ցաճա՛խ կանգնիր աղօթքի, բայց մի՛ յամեցիր[41] *աղօթքի մէջ կամ մի՛ աղաղակիր: Մանուկներին լռութեա՛մբ ուսուցանիր: Խանութներ ամենեւի՛ն մի յաճախիր. իսկ եթէ պատահի, որ օտարութեան մէջ յայտնուես եւ ինչ-որ բանի խիստ կարիքն ունենաս, մա՛րդ ուղարկիր, գնի՛ր եւ գնածիցդ կեր որեւէ խցիկում կամ եկեղեցում: Իսկ եթէ այդպիսի կարիք ունենաս, երբ խանութի ես պատահել, մտիր այնտեղ, ուր կին չկայ: Այս պատուէրը վանականների, նաեւ Աստծուց երկիւղած այլ քրիստոնեաների համար է:*

Եթէ քահանաներից մէկը կամենում է ճշմարի՛տ քահանայ լինել, բացի նախապէս նշածս պատուէրներից, [թող կատարի նաեւ հետեւեալը]. լինի զգոյշ, անմեղ, ջանասէր, անարատ, քաղցր, որբասէր, օտարասէր, հիւրասէր, բարեսէր, հանդարտ, հաստատուն հաւատով, խորհուրդներով ու խօսքերով, կնոջից հեռացած: Թող հեղգ չլինի իր հօտի

---

39 *Հմմտ. Մատթ. Է 13—14:*

40 *Այս գործի յունարէն բնագիրը նոյնպէս չի պահպանուել: Գործի բովանդակութիւնը յուշում է, որ այն ինչ-որ մէկի խնդրանքով գրուած խրատական նամակուղերձ է՝ ուղղուած թէ՛ վանականներին, թէ՛ աշխարհում ապրող հոգեւորականներին, թէ՛ աշխարհականներին: Ըստ ԳՄ-ի՝ այն նոյնպէս ուղղուած է յաջորդ «Միայնակեաց» գործում յիշուած Անատոլիոսին:*

41 *յամենալ— երկար մնալ*

հանդէպ, ոչ ոքից չգարշի, չլինի արհամարհող, բամբասող, հարուածող, բարկացկոտ, աչառու, ամէնքի առաջ յանդիմանող: Թող իր հօտի ոչխարներին չտայ քոստոտել, այլ ապաշխարութեամբ մաքրի եւ ապա ժողովի իր փարախը: Թող իմանայ, թէ իւրաքանչիւրին ի՛նչ պատուէր է պատշաճ տալ՝ այրիներին, մենակեացներին, աշխարհականներին, եւ ինչ հրամաններ՝ երախաներին: Մանաւանդ կանանց պէտք է պատուիրել, որ եկեղեցում ամենեւին չխօսեն, այլ ամէն ինչում լուռ լինեն ու աղօթեն եւ աւելի սրանով զարդարուեն, քան ոսկով ու հագուստով, իրենց դէմքը բնաւ չցուցադրեն եւ տղամարդկանց ձեռքն ամենեւին չհամբուրեն: Երախաներին [պէտք է պատուիրել] առանձին կանգնել աղօթքի կամ վարագոյրից դուրս[42], եւ ամբողջ ժողովրդին՝ որ ահով ու երկիւղով ունկնդրեն Տիրոջ խօսքը: Քանզի ոչ միայն յանցաւորներն են դատապարտւում, այլեւ ովքեր ուրախանում են յանցաւորների յանցանքների վրայ:

Քահանան առաւել զգաստ ու զգոյշ պիտի լինի ընծաների առնչութեամբ. եթէ դրանք ընդունի հարստահարողից, սպանողից, երդմնահար վաճառականից, զրկող հարուստներից, դեռ [անիրաւ] գործը շարունակող մաքսաւորից, վաշխառուից կամ ցորենը թերակշռով վաճառողից, կամ որեւէ յանցաւոր մարդուց, եթէ քահանան այսպիսիներից վերցնի, կը լինի նրա նման, ով կոյրն ու կաղն է զոհ մատուցում Աստծուն[43]:

Բայց քեզ, որ աշխարհական ես, պատշաճ չէ դատել քահանային, այլ եթէ տեսնես, որ նա պատուիրանը խախտում է, փախի՛ր նրանից: Իսկ եթէ այս ամէնը կատարի եւ զգոյշ լինի, իր հոգու համար աստիճան եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի հանդէպ մեծ համարձակութիւն կը ստանայ:

Սրանք են պատուէրներն ու կարգադրութիւնները հաւատացեալներին: Եթէ մէկը կատարի [դրանք], կը լինի մեր Տէր Յիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտ: Նրանով փա՛ռք Հօրը՝ Սուրբ Հոգով հանդերձ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Իսկ եթէ մէկն ընդդիմանայ սրանց, Աստծո՛ւն հակառակած կը լինի. [որովհետեւ] այս ամէնի մասին Սուրբ Գիրքն է պատուէր տուել, իսկ մենք նրա վկայութիւնները չբերեցինք, որպէսզի երկայնաբան չլինենք:

42 Նկատի է առնուած գաւիթը, որը երախաների (դեռ չմկրտուած, բայց մկրտութեան պատրաստուող անձնաւորութիւնների) եւ ապաշխարողների կանգնելու վայրն էր եկեղեցում սբ Պատարագի ժամանակ:

43 Հմմտ. Ղեւ. ԻԲ 22:

ՄԻԱՅՆԱԿԵԱՑ[44]

Մաս Ա

ԱՐԴԻՒՆԱՒՈՐ[45]

Քանի որ սրանից առաջ դու ինձ [նամակ] ուղարկեցիր, սիրելի

44 Ստորեւ ներկայացնում ենք «Միայնակեացի» առաջին երկու մասերի թարգմանութիւնը, որն իրականացնելիս նկատի ենք ունեցել նաեւ սրա առաջին մասի յունարէն բնագիրը (Sources Chrétiennes, N 171, Paris, Cerf, 1971, pp. 482—715 եւ Migne, PG, t. 40, 1220—1276) եւ նրանից կատարուած ռուսերէն եւ անգլերէն թարգմանութիւնները (Творения аввы Евагрия, «Мысли», с. 94—118; Fr Luke Dysinger-ի թարգմ.՝ www.ldysinger.com/Evagrius), երբ հարկ է եղել ճշտել այս կամ այն խրթին հատուածի իմաստը: Սակայն նոյնիսկ մեծ կամ էական տարբերութիւնների առկայութեան պարագայում հաւատարիմ ենք մնացել գրաբարեան թարգմանութեանը՝ միայն երբեմն, ըստ անհրաժեշտութեան, ծանօթագրութիւններում նշելով որոշ տարբերութիւններ: Իսկ երբ յստակ նկատելի էր, որ գրաբարեան բնագիրն աղաւաղուած է եւ պարզապէս այն անկարելի է թարգմանել, ստիպուած ենք եղել դիմելու յունարէն բնագրի եւ նրանից եղած թարգմանութիւնների օգնութեանը, սակայն ուրիշ դէպքերում, նոյնիսկ առկայ մեծ տարբերութիւնների, ինչպէս նշեցինք, ներկայացրել ենք գրաբարեան տարբերակը, քանի որ որոշ դէպքերում էլ գրաբարեան թարգմանութիւնն է սկզբնագրին աւելի հարազատ թւում: Ցիշեցնենք, որ գրքի միայն առաջին մասն է պահպանուել յունարէն բնագրով, իսկ երկրորդն ու երրորդը՝ ամբողջութեամբ միայն ասորերէն ու հայերէն, իսկ յունարէնը՝ հատուածաբար: Գիյյոմոնը տարբեր տեղեր ցրուած հատուածներից վերականգնել է գրքի երկրորդ մասի յունարէն բնագրի կէսից աւելին (A. et C. Guillaumont (Sources chrétiennes, N 356), Paris, 1989, էջ 52—84), իսկ Ֆրանկենբերգը կատարել է երկրորդ մասի ամբողջական բնագրի՝ ասորերէնից յունարէն վերաթարգմանութիւնը (W. Frankenberg, Evagrius Pontikus, Berlin, 1912, էջ 546—553):

45 Առաջին մասի վերնագիրը գրաբարեան բնագրում բացակայում է, իսկ երկրորդ մասը կրում է առաջին եւ երկրորդ մասերի անունները միաժամանակ՝ «Գիտնաւոր եւ արդիւնաւոր» («գնոստիկոս» եւ «պրակտիկոս»): Վերնագրերում սրանք գոյական են եւ ցոյց են տալիս հայեցողական (գիտնաւոր) եւ միայն ճգնաւորական գործնական (արդիւնաւոր) կեանքով ապրող կրօնաւորներին: Գրաբարեան «արդիւնաւոր» («պրակտիկ»՝ իբրեւ գոյական եւ ածական) բառը մեր թարգմանութեան մէջ որոշ դէպքերում պահել ենք իբրեւ յատուկ եզր:

Անատոլիոս[46], *երբ դեռ բնակւում էի Նիտրիայի լեռան վրայ*[47], *եւ խնդրեցիր քեզ յայտնել Եգիպտոսի միայնակեացների խորհրդակիր զգեստների մասին, ինձ աղաչեցիր ցոյց տալ [դրանց նշանակութիւնը], քանզի մտածեցիր, որ իզուր չէ, որ նրանք մարդկանց այլ զգեստներից տարբերուող զգեստներ են հագնում, ուստի եկ պատմենք քեզ ինչ որ հաստատապէս իմացանք դրանց մասին սուրբ հայրերից:*

Այն քուսիթան[48], *որն ունեն, խորհրդանշում է մեր Փրկիչ Աստուծոյ շնորհը, որը ծածկում է մեր [մարմնի] գլխաւոր մասը*[49] *եւ խնամք*

46 *Այս Անատոլիոսը հաւանաբար Զիթենեաց լեռան վրայ հաստատուած վանքի կրօնաւորներից է, քանի որ յուն. բնագրում գրուած է «Սուրբ լեռից գրեցիր ինձ»:*

47 *Գրաբար բնագրում «Տրին»՝ «Նիտրիա»-ի փոխարէն, իսկ Գրիգոր մեկնիչի մօտ՝ «Տրիա»: Նիտրիան Տրիա է գրուած նաեւ Եւագրի վարքում (Գիրք որ կոչի Այսմաւուրք, ՌՃՀԹ (1730), կ. Պոլիս (Գրիգոր Մարզուանեցու տպարան), էջ 363—4): Ըստ յուն.-ի՝ «Նիտրիայի լեռան» փոխարէն՝ Սկիտէ: Սակայն քանի որ Եւագրի կենսագրութիւնից յայտնի է, որ նա սկզբում բնակուել է Նիտրիայի լեռան վրայ, եւ գրաբարեան «Տրին» եւ «Տրիա» ձեւերը Նիտրիայի աղաւաղուած ձեւերն են, մեր թարգմանութեան մէջ դրանք ուղղեցինք «Նիտրիա»-ի: Այլեւ Եւագրի կենսագրութիւնից յայտնի է, որ նա Սկիտէում մշտական բնակութիւն չի հաստատել, այլ Նիտրիայից յետոյ մշտական բնակութիւն հաստատելով Կելլիայի անապատում ժամանակ առ ժամանակ այցելել Սկիտէ՝ Մակար Եգիպտացուն:*

48 *Գլխանոցի տեսակ, որը տարբեր է կնգուղից կամ վեղարից. բոլորաձեւ է, այսինքն՝ կլոր կտրուածքով, եւ ո՛չ սրածայր (այս մասին խօսում է նաեւ սբ Գրիգոր Տաթեւացին կրօնաւորական հագուստի տեսակները նկարագրելիս. տես Գիրք քարոզութեան որ կոչի Ամառաւ հատոր, Քարոզ վասն միայնակեցաց, կ. Պոլիս, ՌՃՂ (1741) թ., էջ 175): Յովհաննէս Կասիանոսը, Եւագրից միայն մէկ դար յետոյ նկարագրելով եգիպտական կրօնաւորական հագուստը, նշում է, որ քուսիթան մանկական գլխարկ է յիշեցնում, ինչը խորհրդանշում է մանկական պարզութիւնն ու անմեղութիւնը (տես John Cassian,* On the Institutes of the Coenobia, *Chapter III, Nicene and Post-Nicene Fathers, II series, vol. 11, 1994, p. 202), ինչին ակնարկում է նաեւ Եւագրի խօսքը: Առ այսօր այդպիսին է մնացել եգիպտական կրօնաւորական գլխանոցի ձեւը, որի առաջին գործածութիւնը, ըստ աւանդութեան, պատկանում է Անտոն անապատականին: Այդ գլխանոցը յետեւի կողմից փոքր-ինչ երկարում ու կախւում է (ինչպէս մեր վեղարը), իսկ վզի տակ, ճիշտ ծծկեր մանուկների գլխարկի նման, կապիչ թելերով կապւում:*

49 *Այսինքն՝ գլուխը:*

տանում Քրիստոսով մանկութեանը՝ ընդդէմ նրանց, ովքեր մտածում են խայթել ու խոցոտել: Արդ՝ նրանք, ովքեր մի անգամ այն առնում են իրենց գլխին, միշտ օրհնութեան երգեր են հզօրապէս երգում, ինչպէս ասում է [սաղմոսերգուն]. «Եթէ Տէրը չի շինում տունն ու պահում քաղաքը, իզուր են աշխատում այն շինողներն ու տքնում նրա պահպանները» (Սաղմ. ՃԻԶ 1): Այսպիսի խօսքերը խոնարհութիւն են տնկում եւ արմատախիլ անում այն առաջին չարի ամբարտաւանութիւնը, որը երկնքից երկիր գցեց առաւօտեան ծագող Արուսեակին[50]:

Բազուկների մերկութիւնը[51] *ցոյց է տալիս նրանց անխարդախ կեանք ունենալը. քանզի չար է ամբարհաւաճութիւնը, թաքցնում-ծածկում է առաքինութիւններն*[52] *ու միշտ ընկնում մարդկային փառքի յետեւից, ինչը յատկապէս հաւատն է հալածում, քանզի [Տէրն] ասում է. «Ինչպէ՞ս կարող էք հաւատալ, որ ձգտում էք մարդկանցից փառք ստանալ, իսկ միակ Աստուծոյ փառքը չէք փնտրում» (Յով. Ե 44). քանզի Բարին պէտք է աւելի փնտրել ո՛չ այլ բանի, եթէ ոչ հէնց Նրա՝ [Բարու] համար: Եթէ սա տրուի, յայտնի կը դառնայ, որ բարի գործերի համար մեզ ստիպող-արթնացնողն աւելի լաւն է, քան լինելիքը. որովհետեւ անպատշաճ է, որ մէկը կամենում է ճանաչել կամ ասել, թէ ինչ-որ բան աւելի լաւ է, քան Աստուած:*

Ուսերը խաչի տեսքով պատող անալաքը[53] *խորհրդանշում է Քրիստոսի հանդէպ հաւատը, որ պարուրում է հեղերին ու խոնարհներին, նրանցից հեռացնում բոլոր խոչընդոտներն ու կեանքն անխափան նուիրել տալիս բարի գործերին:*

50 *Ես. ԺԴ 12. խօսքը սատանայի մասին է:*

51 *Եգիպտացի վանականների հագուստի թեւերը հասել են միայն մինչեւ արմունկները՝ ըստ Յովհաննէս Կասիանոսի վկայութեան (տես նշ. հրատ., գլ. IV, էջ 203):*

52 *«Թաքցնում-ծածկում է»՝ բացասական իմաստով:*

53 *Յունարէնում՝ անալաբոս, որը գրաբար թարգմանուել է «Թեզանեացն ամբառնալիքն», այսինքն՝ թեզանիքները (թեւերը) բարձրացնողը՝ պահողը (յուն. անալամբանո-ն ունի վերցնել, բարձրացնել իմաստը): Գրիգոր մեկնիչն այս արտայայտութիւնը բացատրում է՝ ասելով. «Հագուստի թեզանիքնե՛րը նկատի չունի, քանի որ այն թեզանատ էր. այլ ուսերը շրջապատող թեզանիքով նկատի ունի կրօնաւորական սքեմը: Որովհետեւ [վերջինս] այնպիսին չէր, ինչպիսին մերն է, այլ հագցւում էր վզով, սքեմի [մի] ծայրը լանջքի (=կրծքավանդակը՝ վզից սկսած) վրայ էր, միւս ծայրը՝ պարանոցի յետեւի կողմում: Սքեմը լանջքի առջեւից բաժանւում էր չորս մասի, որոնցից երկուսը լանջքից, իսկ [միւս] երկուսը*

Գօտին կապւում է երիկամներին եւ հեռացնում բոլոր պղծութիւնները, [ինչպէս որ առաքեալն է] պատուիրում կին մարդու ամենեւին չմերձենալ[54]:

Նրանց մաշկեակը[55] [խորհրդանշում է] ամէն ժամ Քրիստոսի մեռելութիւնն իրենց մարմնի մէջ կրելը[56], որով սանձում ու կաշկանդում

պարանոցից [խաչաձեւ] գալիս էին անուրի տակ, միւս անուրի տակ միանում եւ հագուստով մարմինը գրկում» (ՄՄ ձեռ. թիւ 1418): Այսպիսի մանրամասն նկարագրութիւն տալու համար Գրիգոր մեկնիչը պէտք է այս սքեմը սեփական աչքով տեսած լինէր (հաւանաբար, Գրիգոր Գ Պահլաւունին նոյնպէս, ինչպէս Գրիգոր Բ Վկայասէրը, եղել է Եգիպտոսում): Գրիգոր մեկնիչի «սքեմ»-ը հասկանալու համար պէտք է նկատի ունենալ, որ «սքեմ»-ը միջնադարում գործածուել է ո՛չ այն իմաստով, որով այժմ է գործածւում կամ ոչ լիովին ու ոչ յստակ բացատրւում հայոց լեզուի բառարաններում: Գ. Տաթեւացին, յիշատակելով կրօնաւորական երկու կարգերը՝ պարզ մոնոզոններին եւ սքեմաւորներին (վերջիններս առաւել խստակեաց կրօնաւորներն են. ռուս. схимники), իբրեւ սքեմաւորների հագուստի մաս (եւ ոչ թէ կրօնաւորական հագուստն ինքնին) նշում է խաչաձեւ «սքեմ»-ը («այլեւ ունի զսքեմն ի վերայ ուսոյն խաչանման», տես ծնթ. 48-ում նշ. հրատ., էջ 175): Վ. Հացունին Տաթեւացու գործածած յիշեալ սքեմը կոչում է նաեւ «անաղափ» (Հ. Վարդան վ. Հացունի, Պատմութիւն հին հայ տարազին, Վնտ., 1923, էջ 431), իսկ եւագրեան «Թեզանեաց ամբառնալիք»-ը համարում հէնց Հայ Եկեղեցում ժամանակին կիրառուող խաչաձեւ սքեմը, որը կոչւում էր նաեւ «խողոխի» (այս բառի հնագոյն վկայութիւնը վերցուած է ԺԱ դարի հնագոյն «Մաշտոցից». այս մասին եւ հայկական «սքեմի» արտաքին նկարագրութիւնը տես Հացունու յիշեալ գրքում, էջ 302, 332, 416): Հետաքրքիր է, որ այն անալաբը, որն այժմ գործածում են եգիպտացի սքեմաւորները, նոյնպէս կոչւում է «սքեմ» («սխիմա»): Այն պատրաստւում է կաշուէ փոկերից, որոնք խաչաձեւ կապւում են մարմնին՝ հագուստի վրայից (ըստ Հացունու յիշեալ գրքում բերուած մի վկայութեան՝ վախճանուած հայ վարդապետներից մէկի վրայ եղած խաչաձեւ սքեմը նոյնպէս կաշուէ է եղել. տես նոյն տեղում): Այդ փոկերը հիւսածոյ են, եւ հիւսուածքի մէջ ներառուած ու կախուած են դարձեալ կաշուէ հիւսածոյ խաչեր՝ սքեմի տարբեր մասերում: Յովհաննէս Կասիանոսը (տես նշ. հրատ., գլ. V, էջ 203) նոյնպէս ներկայացնում է «անալաբն» իբրեւ փոկեր, սակայն ոչ թէ կաշուէ, այլ բրդեայ, եւ դրանց կապուելու ձեւի նրա նկարագրութիւնն ընդհանուր առմամբ նման է Գրիգոր մեկնիչի բերած նկարագրութեանը, թէեւ երկու նկարագրութիւններն էլ մտովի շատ դժուար է պատկերացնել:

54 Ա Կոր. Է 1

55 Այծի կամ ոչխարի կաշուից («մաշկ»-ից) թիկնոց. ինչպէս կաշին է կենդանու մի մեռած մասը, այդպէս էլ մաշկեակն է մեռելութիւն խորհրդանշում:

56 Բ Կոր. Դ 10

են մարմնի տարատեսակ բոլոր արատները եւ բարուն հաղորդուելով՝ հոգու չարութիւնը զատում-հեռացնում, սիրում են աղքատութիւնը եւ փախչում ագահութիւնից՝ իբրեւ կռապաշտութեան մօրից[57]:

Իսկ ցուպը, որ միշտ կրում են ձեռքում, «կեանքի ծառն է՝ այն ամէնքի համար, որ փնտրում են այն, եւ ով յենւում է նրա վրայ, ասես ամուր յենւում է Տիրոջ վրայ» [Առակ. Գ 18]:

Արդ՝ ըստ այս իրերի՝ համառօտաբար ներկայացրինք նրանց հագուստի խորհուրդը, իսկ այն խօսքը, որը հայրերը միշտ ասում են նրանց, սա է. «Հաւատը, որդեակ, հաստատուն է դառնում Տիրոջ երկիւղով, երկիւղը՝ ժուժկալութեամբ[58], իսկ ժուժկալութիւնն անշարժ է պահւում համբերութեամբ եւ յոյսով[59]: Սրանց թոռը սէրն է, սիրոյ դուռը՝ գիտութիւնը, որը բնութեամբ ընդունում է աստուածխօսութիւնը[60] եւ այնուհետեւ երանութիւնը»:

Արդ՝ սրբերի հագուստի եւ ծերերի վարդապետութեան մասին այնքանն էլ, որքան ասացինք, բաւական է: Այժմ կը պատմենք արդիւնական[61] կեանքի եւ հայեցողական իրերի մասին, ոչ թէ որքան տեսանք կամ լսեցինք, այլ որքան նաեւ ուրիշներին պատմելու պատուէր ստա-

57 Կող. Գ 5

58 Ժուժկալութիւնն ընդհանրապէս պահեցողութիւնը կամ չափաւորութիւնն է կերակրի, քնի եւ մարմնի այլ կարիքների բաւարարման մէջ, բայց Եւագրն առաւելապէս նկատի ունի կերակրի մէջ ժուժկալութիւնը. հմմտ. սոյն գործի գլ. 89:

59 Ըստ յուն.-ի՝ «...համբերութեամբ եւ յոյսով, որոնցից ծնւում է անկրքութիւնը, որից էլ ծնւում է սէրը...»: Ըստ այսմ իսկապէս համբերութեան եւ յոյսի «թոռ»-ը դառնում է սէրը, ինչպէս գրաբարեան թարգմանութեան մէջ: Սակայն պարզ չէ, թէ ինչու անկրքութեան՝ միջանկեալ այս վիճակի՝ սիրոյ «ծնողի» մասին խօսքը բացակայում է հայերէնում: Գուցէ հայ թարգմանիչը կամ յետագայի գրիչներն են վրիպակաբար բաց թողել. բացառուած չէ նաեւ, որ պահպանուած յունարէն բնագրերում այս բացը խմբագրի ձեռքով է լրացուել (գուցէ ըստ սոյն գործի 81-րդ գլխի)՝ անհասկանալին առաւել հասկանալի դարձնելու նպատակով:

60 Այս բառը նշանակում է կամ Աստուծոյ՝ մարդու հետ խօսելը, կամ աստուածայինի մասին խօսքը՝ ուսմունքը, այսինքն՝ աստուածաբանութիւնը, կամ էլ մարդու՝ Աստուծոյ հետ խօսելը:

61 Այսինքն՝ գործնական, կապուած գործնական կեանքի, տուեալ դէպքում՝ ճգնակեցութեան հետ:

ցանք: Արդիւնականները՝ հարիւր, իսկ հայեցողականը[62]՝ վեց հարիւր յիսուն գլխով[63] համառօտաբար [կը մատուցենք]՝ մի մասը ծածկելով, ամբողջապէս թաքցնելով, մի մասն էլ յայտնելով, որպէսզի սրբութիւնը չտանք շներին եւ մարգարիտները չգցենք խոզերի առաջ[64]: Սա յստակ է նրա համար, ով հասու է դարձել նոյն շաւիղներին:

1. Քրիստոնէութիւնը մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի օրէնքն է՝ կազմուած գործնական, բարոյական եւ աստուածաբանական [պատուիրաններից][65]:

2. Երկնքի արքայութիւնը հոգիների անբծութիւնն է՝ ճշմարիտ ու գովելի գիտութեամբ հանդերձ[66]:

3. Աստուծոյ արքայութիւնը Սուրբ Երրորդութեան գիտութիւնն է, որը տարածւում է մտքի հաստատութեամբ եւ աճում նրա անապականութեամբ:

4. Ով ինչ սիրում է, դրան էլ հասնում է, եւ ինչին հասնում է, դա էլ բռնել է ջանում:

62 *Իմա «գիտնաւոր»:*

63 *Յիսուն գլուխը կազմում են գրքի երկրորդ՝ «Հայեցող» մասը, իսկ վեց հարիւրը՝ երրորդը՝ «Վեց հարիւրեակը»:*

64 *Մատթ. Է 6: Հաւանաբար միտքն այն է, որ «ծածկելու եւ ամբողջապէս թաքցնելու» միջոցով ներկայացուած մտքերը (խօսքը, կարծում ենք, առաւելապէս «Վեց հարիւրեակ»-ի մասին է) ամէնքի համար չեն, այլ նրանց, ովքեր հոգեւոր իմաստութեան շնորհն ունեն եւ հասել են ներհայեցողական կեանքի այնպիսի աստիճանի, որ կը կարողանան թաքնուածն ի յայտ բերել՝ հասկանալ: Յաջորդ նախադասութիւնը կարծէք հէնց սա է յուշում:*

65 *Մատթէոս վրդ. Ջուղայեցին, ըստ Եւագրի այս դասակարգման, գրում է, որ առաքինութիւնները երեք խմբի են բաժանւում: Դրանք են՝ գործնական (արդիւնական), որը մեր կամքով ենք ստանձնում գործել. բարոյական, որը լինում է բնութիւնից, ինչպէս որ տատրակը բնութեամբ ողջախոհ է, առիւծը՝ արի, կամ մէկը բնութիւնից ներքինի է կամ չի կարող միս ուտել, գինի խմել եւ այլն. եւ աստուածային շնորհից հաստատուած, ինչպէս Տէրն Ինքն ասաց. «Առանց Ինձ ոչինչ չէք կարող անել» (տես նրա Գիրք ուղղութեան խորհրդոց մեղաց, կ. Պոլիս, 1750 թ., էջ 3—4):*

66 *Ըստ յուն.-ի՝ «էակների (գոյերի) ճշմարիտ գիտութեամբ հանդերձ»:*

5[67]. Ամէն տեսակ հաճոյք ցանկութիւնից է առաջ գալիս, իսկ ցանկութիւնը ծնում են միտքն ու զգացումները, քանզի ում զգացումները մաքուր են, արատից զերծ է նա:

6. Միայնակեացների հետ դեւերը մերկընդմերկ[68] են մարտնչում, իսկ առաքինութիւններ գործող միաբանների կամ ընկերաւորների[69] դէմ հանում են եղբայրների մէջ եղած ծոյլերին: Բայց այս երկրորդ պատերազմն աւելի թեթեւ է, քան առաջինը, քանզի հնարաւոր չէ երկրի վրայ գտնել դեւերից աւելի դաժան մարդկանց, ովքեր կարող են միանգամից նրանց (դեւերի) բոլոր չարագործութիւններին ընդունակ լինել:

7. Ուղղափառ են ամենահզօր [մոլեկան] խորհուրդները[70]: Առաջինը որկրամոլութեան [խորհուրդն] է, նրանից յետոյ՝ պոռնկութեանը, երրորդը՝ արծաթասիրութեանը, չորրորդը՝ տրտմութեանը, հինգերորդը՝ բարկութեանը, վեցերորդը՝ ձանձրոյթինը, եօթերորդը՝ սնափառութեանը,

67 *Յունարէն եւ այլալեզու հրատարակութիւններում այս խօսքը նախորդի շարունակութիւնն է, ուստի այստեղից սկսած՝ հայերէն եւ յունարէն բնագրերում թուահամարները մէկով տարբերւում են մինչեւ 42-րդ գլուխը: 43-ից համարները դարձեալ համընկնում են:*

68 *Այսինքն՝ ուղղակիօրէն, առանց միջնորդի, հէնց իրենք:*

69 *Այստեղ ներկայացուած են ժամանակի եգիպտական անապատներում առկայ կրօնաւորական կեանքի երեք կերպերը: Միայնակեացները բոլորովին մենակ եւ առանձնացած էին ապրում, միաբանները՝ վանքերում՝ մեծ եղբայրութեան հետ, իսկ ընկերաւորները՝ իրարից որոշ հեռաւորութեան վրայ գտնուող խցերում՝ մի քանի հոգով (սովորաբար՝ երկու՝ ծերն իր աշակերտի հետ):*

70 *Սխալ չի լինի հաստատել, որ մոլեկան ութ խորհուրդների դրութիւնը հիմնուած է տէրունական խօսքի վրայ (Մատթ. ԺԲ 43—45), այսինքն՝ ունի աստուածաշնչեան հիմնաւորում, թէեւ ինքը Եւագրն այս մասին ուղղակիօրէն չի նշում: «Երբ պիղծ ոգին մարդուց դուրս է գալիս... այնժամ գնում եւ իր հետ վերցնում է եօթ ուրիշ՝ իրենից առաւել չար ոգի եւ մտնում բնակւում այնտեղ: Եւ այդ մարդու վերջն աւելի վատ է լինում, քան սկիզբը»: Այստեղ պարզ տեսնում ենք մարդու մէջ բնակութիւն հաստատող ութ դեւերի, որոնք ի վերջոյ կործանման են նրան տանում: Այս մասին վկայութիւն կարելի է գտնել, օրինակ, հայ մատենագրութեան մէջ. Յովհաննէս Մորձորեցին (ԺԳ—ԺԴ դդ.) Մատթէոսի Աւետարանի իր մեկնութեան մէջ (հրատ.՝ Սբ Էջմիածին, 2009 թ.), բացատրելով վերոնշեալ աւետարանական հատուածը, խօսում է նաեւ ութ մոլեկան խորհուրդների մասին (նա նշում է նաեւ, որ այն առաջին պիղծ ոգին, որն իր հետ բերում է եօթ այլ ոգիներ, որկրամոլութեան դեւն է՝ ութ խորհուրդներից առաջինը):*

ութերորդը՝ ամբարտաւանութեանը[71]: Արդ՝ մեր կամքից չի կախուած նրանց բոլորի՝ մեր հոգին նեղելը կամ չնեղելը, սակայն [մեր մէջ] նրանց երկար մնալը կամ չմնալը կամ էլ որեւէ բիծ, կիրք եւ ախտ [առաջ բերելը] մեր կամքից է կախուած:

8. Որկրամոլութեան խորհուրդները դրդում են կրօնաւորին արագ թողնելու ճգնողական վարքը՝ նրան պատկերացնել տալով կամ ստամոքսի, լեարդի, աղիքների եւ ջրգողութեան [ցաւեր], կամ երկարատեւ [ուրիշ] հիւանդութիւններ, կամ էլ կերակուրների կարօտութիւնն ու բժիշկների բացակայութիւնը: Նաեւ յաճախ յիշեցնում են այս ցաւերի մէջ ընկած եղբայրների նեղութեան մասին: Լինում է նաեւ, որ այս ցաւերի մէջ ընկածներին մղում են գայթակղեցնելու ժուժկալներին՝ պատմել տալով իրենց տրտմութիւնը, իբրեւ թէ ճգնողութիւնից են այդպիսին դարձել:

71 Եւագրի հայ բնագրում եօթերորդ խորհուրդը կոչւում է նորափառութիւն՝ երբեմն փոխարինուելով հպարտութիւն եզրով, մինչդեռ աւելի ուշ շրջանի հայ մատենագրութեան մէջ հպարտութիւնը գործածւում է իբրեւ ութերորդ՝ ամբարտաւանութեան խորհրդի անուն, իսկ եօթերորդ խորհուրդը կոչում են նաեւ սնափառութիւն (օրինակ՝ Կիրակոս Երզնկացին իր «Ցաղագս ութ խորհրդոցն Եւագրեայ» գործում, ՄՄ ձեռ. 6832, թթ. 403ա—442ա): Գրիգոր Տաթեւացին այն կոչում է «ամբարհաւաճութիւն, որ է փառասիրութիւն» («Գիրք հարցմանց», Կ. Պոլիս, ռճհը (1729), էջ 560), Մատթէոս Ջուղայեցին՝ նորափառութիւն, սակայն այս խորհրդին նուիրուած գլխում խօսում նաեւ սնափառութեան մասին՝ նշելով, որ տարբեր են նորափառութիւնն ու սնափառութիւնը, եւ երկար բացատրում է դրանց տարբերութիւնները (տես ծնթ. 65-ում նշ. հրատ., էջ 109—110): Խորհուրդներից ութերորդը Տաթեւացին կոչում է հպարտութիւն, Մատթէոս Ջուղայեցին՝ «հպարտութիւնն, որ է ամբարտաւանութիւնն», իսկ սրան նուիրուած գլխում ասում. «Իսկ ամբարտաւանն եւ ամբարհաւաճն եւ հպարտն երբեմն մի են, բայց զանազանին», այնուհետեւ բացատրում սրանց իմաստային տարբերութիւնները (էջ 129—130): Այսպիսով՝ եօթերորդ խորհրդի համար ունենք նորափառութիւն-հպարտութիւն (Եւագր) -սնափառութիւն (Կիրակոս, Մատթէոս) - ամբարհաւաճութիւն-փառասիրութիւն (Տաթեւացի) եզրերը, իսկ ութերորդ խորհրդի համար՝ ամբարտաւանութիւն (Եւագր, Կիրակոս, Մատթէոս) - հպարտութիւն (Եւագր, Տաթեւացի, Մատթէոս): Մենք սոյն թարգմանութեան մէջ նորափառութիւն եզրը փոխարինել ենք սնափառութիւնով, որն առաւել հասկանալի է ժամանակակից ընթերցողին:

9. Պոռնկութեան դեւը[72] տարբեր մարմինների ցանկութեան տագնապ է առաջ բերում՝ աւելի սաստիկ վրայ հասնելով ժրպինդ կրօնաւորների վրայ, որպէսզի [կարծելով, թէ] անօգուտ են ջանք թափում՝ [ճգնելուց] դադարեն: [Այն], հոգին ցանկութեամբ պղծելով, դրդում է [մեղքը] մարմնի գործով կատարել, [անմաքուր բաներ] խօսել եւ ապա լսել՝ [դրանց նիւթը] ներկայացնելով այնպէս, ասես աչքով տեսանելի են:

10. Արծաթասիրութիւնը [կրօնաւորի] մտքին պատկերացնել է տալիս երկարատեւ ծերութիւնն ու ձեռքով աշխատելու անկարողութիւնը, սպասուելիք սովն ու հիւանդութիւնները եւ իբրեւ նախատինք ցոյց տալիս կարիքները հոգալու համար ինչ-որ մէկից բան վերցնելը:

11. Տրտմութիւնը երբեմն պատահում է ցանկութիւնների անկատար մնալուց: Այսպէս՝ պատահում են խորհուրդներ, որոնք յիշեցնում են տան, ընտանիքի, նախկին կեանքի մասին, եւ երբ տեսնում են, որ [կրօնաւորը] չի պայքարում, այլ տուրք է տալիս դրան, ըստ նրա մտքի [փոփոխուող] ցանկութեան՝ միմեանց փոխարինելով իսկոյն նրան տրտմութեան մէջ են ընկղմում՝ [մտածել տալով մերթ], թէ բնաւ չեն եղել նախկին բաները, [մերթ էլ]՝ թէ հնարաւոր չէ այդուհետեւ ապրել այն կեանքով, որ սպասւում է: Եւ որքան հոգին տառապում է առաջին խորհուրդներից, նոյնքան խեղճանում է երկրորդից:

12. Բարկութիւնը մի բարկ ախտ է, որը կոչել են «սրտմտութեան եռք»: Այն [մարդու հանդէպ] մեղանչածների կամ իբր մեղանչել կամեցողների դէմ առաջացող յուզմունք է, որն ամբողջ օրը պաշարում է մարդու միտքը. մանաւանդ աղօթքի ժամանակ միտքը գրաւում եւ նրա առաջ ցոյց է տալիս նրան բարկացրածի դէմքը: Եւ պատահում է, որ երբ մշտատեւ ոխակալութիւն է սերմանում, գիշերը խռովեցնում, մարմինը մաշեցնում ու դժգոյն է դարձնում եւ ցոյց տալիս՝ իբր գազաններ են յարձակւում: Մէկն այս պատկե՛րը կը գտնի ոխակալութեամբ լցուած ժամանակ, երբ բազմաթիւ խորհուրդներով է պաշարւում:

13. Ձանձրոյթի դեւը, որը նաեւ «միջօրեայ» է կոչւում, բոլոր դեւերից աւելի ծանր է: Այն միայնակեացի վրայ հասնում է երրորդ ժամին

72 Մոլեկան խորհուրդները ներկայացւում են նաեւ իբրեւ դեւեր, որոնք եւ առաջ են բերում, մարդու սրտի մէջ սերմանում այս կամ այն խորհուրդը:

եւ մինչեւ իններորդ ժամը[73] *պաշարում նրա հոգին: Նախ ցոյց է տալիս, թէ արեւն իրը դանդաղ է շարժւում կամ ընդհանրապէս չի շարժւում, եւ օրն էլ յիսունժամեայ է: Նաեւ դրդում է ստէպ-ստէպ նայել պատուհանից եւ ջանալ խցիկից դուրս գալ, յաճախ արեգակին հայեացքն ուղղել՝ հպասկանալու, թէ որքան է մնում մինչեւ իններորդ ժամը, եւ այստեղ-այնտեղ նայել՝ [տեսնելու], թէ կ'երեւա՞յ եղբայրներից մէկը: Այլեւ ատելութիւն է սերմանում այդ վայրի, մինչեւ իսկ [ճգնաւորական] կեանքի եւ ձեռքի աշխատանքի հանդէպ, եւ [միայնակեացն] ասում է, թէ պակասել է եղբայրների սէրը, եւ չկայ մէկը, որ մխիթարի: Իսկ եթէ կայ եղբայրների մէջ այնպիսին, ով միայնակեացին տրտմեցրել է*[74]*, սա էլ է դեւն աւելացնում՝ ատելութիւնն աճեցնելու համար: Նաեւ օտար վայրերի ցանկութեամբ առնում-տանում է նրան այնտեղ, ուր կարող է հեշտութեամբ իր պէտքերը հոգալ եւ աւելի հեշտ ու աւելի մեծ հնարաւորութիւններ ունեցող արհեստով զբաղուել: Եւ ասում է, թէ միայն մի տեղում չէ, որ հաճելի են լինում Տիրոջը, այլ Տիրոջ անունը բոլոր տեղերում էլ օրհնւում է: Սրան բերում-կցում է նաեւ ընտանիքի եւ նախկին կեանքի յիշողութիւնը, նրա ճգնողական կեանքի տեւողութիւնը երկար ցոյց տալիս եւ նրա աչքերի առաջ բերում [ճգնողական կեանքի] չարչարանքը: Ամէն ինչով, ինչպէս մէկը կ'ասէր, հնարներ է ստեղծում, որ միայնակեացն իր խցիկը թողնի ու այդ ասպարէզից փախչի՝ լքելով պատերազմի դաշտը: Արդ՝ այս դեւին մի ուրիշ դեւ չի հետեւում, այլ այս պատերազմում [յաղթելուց] յետոյ պայքարողները գտնում են հաստատուն խաղաղութիւն ու անճառ խնդութիւն:*

14. Իսկ սնափառների մէջ պայքարող խորհուրդն անօսր[75] *է եւ հեշտութեամբ պատահում է [ճգնաւորական կեանքում] յաջողակներին՝ կամենալով յայտնի դարձնել նրանց վարած պատերազմը եւ մարդկանցից փառք որսալ [նրա համար]: [Սնափառը երեւակայում է], թէ դեւերն աղաղակելու են, [երբ ինքը նրանց հանի], կանայք գալու են իր մօտ բժշկուելու, եւ բազմաթիւ մարդիկ դիմելու են՝ դիպչելու իր հագուստին: Այնուհետեւ ցնորւում է՝ [մտածելով], թէ իրեն կամենալու են քահանայ դարձնել, ինքն էլ նրանց դէմ դուռը փակելու է՝ իբրեւ թէ չկամենալով [քահանայանալ], նոյնիսկ եթէ մէկն իրեն կապելով տանի: Եւ այսպէս [սնափառութեան դեւերը], դատարկ երեւակայութիւններով բարձրացնելով, թոցնում-տանում են [նրա միտքը]: [Այդ-ժամ] թոյլ է տրւում, որ ամբարտաւանութեան դեւը փորձի նրան, կամ էլ տրտմութեան դեւը նրա վրայ բերի նրա մտքի երեւակայութիւններին հակառակ խորհուրդներ: Պատահում է նաեւ, որ [սնափառութեան դեւը] պոռնկութեան դեւին է յանձնում իրեն դրանից առաջ քահանայ եւ սուրբ համարողին:*

15. Ամբարտաւանութեան դեւը հոգու ամենաչար կործանման պատճառն է դառնում, որովհետեւ թելադրում է նրան Աստծուն օգնութեան չկանչել, այլ ամէն յաջողուած բանի մէջ իր անձը դնելով՝ իրեն [դրա] պատճառ համարել եւ հպարտանալ եղբայրների վրայ՝ իբրեւ անմիտների, որոնցից ոչ ոք իր մասին [իբր] ճիշտը չգիտի: Այս [վիճակին] հետեւում են բարկութիւնն ու տրտմութիւնը եւ յետին չարիքը՝ մտքի յիմարացումն ու մոլեգնութիւնը եւ օգում բազմաթիւ դեւեր տեսնելը:

Ութ խորհուրդների մասին

16. Մոլորուած միտքը հաստատուն են դարձնում ընթերցանութիւնը, տքնութիւնն ու աղօթքը: Եռացած-թանձրացած ցանկութիւնը մարում են քաղցը, աշխատանքն ու միայնակեցութիւնը: Բորբոքուած բարկութիւնը հանդարտեցնում են սաղմոսերգութիւնը, համբերատարութիւնն ու ողորմածութեան գութը: Բայց այս [ամէնը պիտի կատարուի] պատշաճ ժամանակի եւ չափաւորապէս, քանզի այն, ինչ անչափ է, կարճժամանակեայ է, իսկ կարճժամանակեան վնաս է հասցնում եւ ոչ թէ օգուտ տալիս:

17. Երբ տեսակ-տեսակ կերակուրների ցանկութիւն ենք ունենում, հէնց այդ ժամանակ պէտք է հացով ու ջրով նեղութիւն կրել, որպէսզի չնորհկալ լինենք նոյնիսկ միայն մէկ պատառի համար. քանզի բազմատեսակ խորտիկներով յագեցումը նպաստում է ցանկութեանը, իսկ քաղցը երանելի է համարում նոյնիսկ չոր հացով բաւարարումը:

73 *Այսինքն՝ մեր ժամանակով՝ ժամը առաւօտեան իններից մինչեւ ցերեկուայ երեքը, երբ եգիպտական կրօնաւորները սովորաբար կերակուր էին ճաշակում: Ցուն. տարբերակներում՝ ժամը երեքից մինչեւ իններ փոխարէն՝ ժամը չորսից տասը կամ չորսից ութը (հայերէն ձեռագրերից մէկում նոյնպէս ժամը երեքի փոխարէն ժամը չորսն է նշուած, բայց ժամը ինը պահպանւում է):*

74 *Գրաբ.՝ «ոչ է տրտմեցուցեալ», սակայն ժխտական բայով նախադասութիւնն անտրամաբանական իմաստ է ստանում:*

75 *Այսինքն՝ ցանցառ, բարակ, թեթեւ, նուրբ:*

18. Մաքրութեամբ զգաստութեան[76] համար խիստ օգտակար է ջրի կարօտութիւնը, եւ թող քեզ համոզեն դրանում Գեդէոնի հետ եղած այն երեք հարիւր իսրայէլացին, ովքեր Մադիամին պարտութեան մատնեցին[77]:

19. Ինչպէս որ անհնար է, որ կեանքն ու մահը պատահեն միանգամից բոլոր մարդկանց, այդպէս էլ անհնար է սէրը եւ ունեցուածքը միասին ձեռք բերել. որովհետեւ սէրը հեռու պիտի լինի ոչ միայն ունեցուածքից, այլեւ նոյնիսկ մեր այս ժամանակաւոր կեանքից:

20. Ով փախչում է աշխարհի բոլոր ցանկութիւններից, հզօր ու անմատոյց աշտարակ է տրտմութեան դեւի դէմ: Որովհետեւ տրտմութիւնը ցանկութեան առկայ կամ ակնկալուող [առարկայից] զրկումն է: Անհնար է այս թշնամուն վանել, եթէ տեսնում է, որ երկրաւոր ինչ-որ բանի հանդէպ կապուածութիւն ունենք. որովհետեւ այդտեղ է իր որոգայթները կազմում՝ ներսում տրտմութիւնն իբրեւ խայծ դնելով, մանաւանդ երբ դէպի [ցանկութեան առարկան] մեզ հակուած է տեսնում:

21. Տրտմութիւնն ու ատելութիւնն աճեցնում են բարկութիւնը, իսկ ողորմութիւնն ու հեզութիւնը մարում են նոյնիսկ ներսում գտնուող [բարկութիւնը]:

22. «Արեգակը թող չմտնի ձեր բարկութեան վրայ» [Եփես. Դ 26], որպէսզի դեւերը գիշերը վրայ հասնելով՝ չպաշարեն ու պատուիրանի դէմ մեղանչել չտան ձեր հոգուն՝ առաւօտեան [պատրաստուող] պատերազմում միտքը վեհերոտ դարձնելով: Որովհետեւ ահեղ տեսիլքները բարկութեան խռովութիւնից են սովորաբար լինում, եւ ոչինչ այնքան չի դրդում մտքին փախուստի մատնուել՝ նիզակը վայր գցելով ու թիկունքը թշնամուն դարձնելով, որքան յուզուած բարկութիւնը:

23. Երբ որեւէ պատճառ գտնելով՝ դեւերը հոգու ցասմնական մասը[78] խռովեցնում են, այդժամ իբրեւ գեղեցիկ բան են ցոյց տալիս մեր

76 Այսինքն՝ ողջախոհութեան:

77 Դատ. Է 5—7

78 Ըստ յունական անտիկ մարդաբանութեան մէջ ընդունուած եւ քրիստոնէութեան կողմից որդեգրուած դասակարգումներից մէկի (Պլատոն, սբ Գրիգոր Աստուածաբան)՝ հոգին եռամասնեայ է. ունի երեք մաս (կամ զօրութիւն)՝ բանական, ցասմնական եւ ցանկական: Բանականը բանականութիւն ունեցող, մտածող կողմն է, որը պայմանականօրէն տեղակայում են գլխում. ցասմնականը կապուած է մարդու զգացմունքների ոլորտի հետ՝ տեղակայուած լինե-

անձի մերժումը[79], որպէսզի տրտմութեան պատճառները չվերացնենք ու այդ խռովքից մեր հոգին չազատենք: Իսկ երբ ցանկութիւնն են բորբոքում, այդժամ [կամենալով] մեզ [իբր] աւելի մարդասէր դարձնել՝ «խիստ» եւ «վայրենի» են կոչում, որպէսզի [օտար] մարմինների հանդէպ ցանկութիւն ունենանք եւ [մեր] մարմինն [ուրիշ] մարմինների հպենք: [Այս խորհուրդներին] պէտք չէ հնազանդուել, այլ հեռանալ նրանցից:

24. Մի՛ տրուիր բարկութեան խորհուրդներին՝ առանձին կռիւ տալով քեզ տրտմեցրածի հետ, նաեւ մտքովդ մի՛ անցկացրու պոռնկութեան ցանկութիւնը: Քանզի մէկը մթնեցնում է հոգին, իսկ միւսը՝ չար բորբոքման պատճառով տագնապեցնում: Եւ երկուսն էլ միտքդ աղտեղացնում են, ուստի աղօթքի ժամանակ դատարկ բաներով ցրւում ես եւ Աստծուն մաքուր աղօթք չես մատուցում: Այստեղ իսկոյն ձանձրոյթի դեւն է ձեռքերը կապկպում, աւելին՝ եղջերուի ձագի վրայ յարձակուող շան պէս ընդառաջ վազում այսպիսի բաներին՝ հոգին յափշտակելու համար:

25. Ցասմնական [մասի] բարքը դեւերի դէմ մարտնչելն է, եւ ինչ պատճառ էլ որ լինի, պէտք է ջանալ [սա անել]: Քանզի հրեշտակները հոգեւոր ցանկութիւն ու դրա երանութիւնն են մեր մտքի մէջ գցում, եւ դրանով մեզ պատրաստում մեր բարկութիւնը դեւերին ուղղելու, իսկ վերջիններս էլ, դարձեալ այս աշխարհի ցանկութեանը [մեզ հակելով], ջանում են [ցասմնականի] բնական բարքին հակասող բարկութեան մէջ [գցել]՝ մարդկանց հետ բանակռիւ տալու համար, որպէսզի մեր միտքը խաւարի եւ [հոգեւոր] գիտութիւնից զրկուի՝ առաքինութիւնների մատնիչ դառնալով:

26. Զգո՛յշ եղիր հոգուդ հանդէպ, նայի՛ր քեզ, դուցէ բարկանալով՝ փախուստի մատնես որոշ եղբայրների: [Այդուհետեւ] չես կարողանայ

լով սրտում. ցանկականը ցանկութիւնների արտադրիչն է եւ տեղակայուած է երանքում երիկամների հատուածում: Իսկ ըստ մէկ այլ դասակարգման (Արիստոտել), որը նոյնպէս գործածում է Եւագրն իր այս գործում՝ հոգին ունի բանական եւ անբան մասեր: Անբան մասը, փաստօրէն, ներառում է առաջին դասակարգման ցասմնական ու ցանկական, այսինքն՝ մարդու հոգու ոչ բանական մասերը: Եւագրի գրաբարեան բնագրում հոգու երեք մասերը նշելու համար գործածուած է «կողմն» եզրը (փխ. «մաս»-ի կամ «զօրութեան»):

79 Այսինքն՝ ճգնաւորական կեանքը:

փրկուել կեանքիդ ընթացքում, քանի որ աղօթելիս տրտմութեան դեւին միշտ խոչընդոտ ու գայթակղեցնող կ'ունենաս:

27. Ոխակալութիւնը վերացւում է նուէրներով, եւ թող քեզ համոզի սրանում Յակոբը, ով ընծաներով «խաբեց» Եսաւին, երբ նա չորս հարիւր հոգով ընդառաջ ելաւ [Մն. ԼԲ—ԼԳ]: Իսկ մենք՝ տկարներս ու աղքատներս, այս կարիքը բաւարարենք [եղբօրը] սեղանի հրաւիրելով:

28. Երբ դուրս ենք գալիս ձանձրոյթի դեւի դէմ, այդժամ արտասուքով բաժանում կատարենք աղօթքի մէջ եւ մեր հոգու աղաչած բարիքների յոյսը սերմանենք[80]: Երանելի Դաւթի պէս ասենք. «Ինչո՞ւ ես տրտում, հոգի՛ իմ, կամ ինչո՞ւ ես ինձ խռովում. յոյսդ Աստուծոյ վրա՛յ դիր, որպէսզի խոստովանեմ Նրան. իմ Փրկիչն ու իմ Աստուածն է Նա» [Սաղմ. ԽԱ 6]:

29. Փորձութեան ժամանակ պէտք չէ լքել խուցը ինչ-որ պատճառաբանութեամբ, այլ նստել ներսում, ընդունել եւ քաջութեամբ համբերել յարձակուող բոլոր դեւերին, յատկապէս ձանձրոյթի դեւին, որը բոլոր դեւերից աւելի ծանր է, սակայն հոգին աւելի փորձառու եւ ընտիր է դարձնում: Իսկ այսպիսի պատերազմից փախչելն ու խոյս տալը դարձնում է միտքը տկար, վախկոտ եւ փախուստ տուող:

30. Այսպէս էր ասում մեր սուրբ ու բազմարդիւն ուսուցիչը[81]. «Միայնակեացն այնպէս պէտք է պատրաստի իրեն, ասես վաղը մեռնելու է, եւ մարմնի հետ այնպէս պէտք է վարուի, ասես նրա հետ երկար է ապրելու: Որովհետեւ առաջինը ձանձրոյթի խորհուրդներն է կարճում եւ միայնակեացին աւելի ժրապինդ դարձնում, իսկ միւսը մարմինն առողջ է պահում՝ նպաստելով, որ [նա] մասնակից լինի ճգնութեանը»:

31. Դժուար է խուսափել փառախնդիր հպարտութիւնից. ինչ որ անում ես նրան վերացնելու համար, հէնց դա սկիզբն է դառնում մէկ ուրիշ հպարտութեան[82], քանզի մեր ո՛չ բոլոր բարի խորհուրդներին են դեւերը հակառակում, այլ [բարի խորհուրդներից] որոշներին [հակառակում է] նաեւ չարի մէջ մեր մնալը:

80 Ըստ յուն.-ի՝ «այդժամ մեր հոգին արտասուքով բաժանելով [երկու մասի՝ մխիթարողի եւ մխիթարուողի՝ բարի յոյսեր սերմանենք մեր մէջ»:

81 Մակար Եգիպտացին կամ Ալեքսանդրացին:

82 Յուն.-ում «սնափառութեան» համապատասխան եզրն է գործածուած «փառախնդիր (փառք փնտրող) հպարտութեան» կամ պարզապէս «հպարտութեան» դիմաց:

32. Տեսայ ես, թէ ինչպէս է այդ հպարտութեան խորհուրդը գրեթէ բոլոր դեւերից հալածւում եւ հալածիչների վրայ յանդգնաբար յարձակւում՝ կործանելու համար, ինչը միայնակեացին իբրեւ մեծ առաքինութիւն է ցոյց տալիս:

33. Ով բռնել է [հոգեւոր] գիտութիւնից եւ պատրաստւում է անուշ ու ցանկալի պտուղ քաղել նրանից, այլեւս չի հետեւի ու չի հնազանդուի սնափառութեան դեւին, թէկուզ [վերջինս] այս աշխարհի բոլոր հաճելի ցանկութիւնները մատուցի նրան: Քանզի ուրիշ ի՞նչ աւելի մեծ բան կարող է խոստանալ մատուցել, քան հոգեւոր գիտութիւնը: Սակայն քանի դեռ չենք ճաշակել այդ հոգեւոր գիտութիւնից, յօժարութեամբ ընդունենք արդիւնականը՝ իբրեւ նպատակակէտ ունենալով Աստուծոյ առաջ ներկայացնել, որ այն ամէնն, ինչ գործում ենք, աստուածգիտութեան համար է:

34. Ցիշի՛ր քո նախկին վարքն ու նրա յանցանքները եւ թէ ինչպէս էիր հիւանդ ու առողջացար Քրիստոսի ողջութեամբ[83], եւ ինչպէս ելար աշխարհից, որը քեզ շատ անգամ եւ բազում [վշտերով] էր կորացնում: Բայց մտածիր նաեւ այն, թէ ով է Նա, Ով քեզ պահում էր անապատում, եւ կամ ով էր, որ քեզանից քշում էր դեւերին, որոնք քեզ վրայ ատամներն էին կրճտում: Որովհետեւ այսպիսի խորհուրդները [հոգու մէջ] խոնարհութիւն են տնկում՝ ներս չթողնելով ամբարտաւանութեան դեւին:

35. Այն ախտերի յիշողութիւնն ենք միշտ բծախառն կրում մեր մէջ, որոնց հանգամանքները նոյնպէս նախապէս կրքոտութեամբ ենք ընդունել մեր մէջ, եւ ինչ բիծ որ մի անգամ ընդունում ենք, սրա յիշողութիւնը նոյնպէս կրքոտութեամբ կ'ունենանք. զօրաւոր դեւերին յաղթողն արհամարհում է նաեւ նրանց յարուցած կրքերը, որովհետեւ պատերազմի փողն աւելի ահարկու է [թւում], քան ինքը պատերազմը:

36. Հոգեկան կրքերն[84] իրենց ծնունդներին ունեն մարդկանցից, իսկ մարմնական [կրքերը] հէնց մարմնից են ստացւում: Արդ՝ մարմ-

83 Այսինքն՝ Քրիստոսի շնորհով եւ օգնականութեամբ (ԳՄ):

84 Հոգեկան (հոգու) կրքեր են հպարտութիւնը, բարկութիւնը, ատելութիւնը, ոխակալութիւնը, տրտմութիւնը եւն, իսկ մարմնական (մարմնի) կրքեր են որկրամոլութիւնը, ցանկասիրութիւնը, արծաթասիրութիւնը եւն: Սրանց մասին տես՝ Յովհան Մանդակունի, Ճառք, Վենետիկ, 1860, էջ 216—217:

նական կրքերը վերանում են հաւատքի ժուժկալ [կեանքով], իսկ հոգեկանը՝ հոգեւոր սիրով:

37. Հոգեկան կրքերի վերակացու [դեւերը] մինչեւ մահ բնակւում են հոգում, իսկ մարմնականինը շուտով հեռանում նրանից (մարմնից): Այլ դեւեր նման են արեգակի ծագելուն ու մայր մտնելուն, քանի որ [միայն] մի կողմից են (որն էլ որ լինի) հոգու վրայ յարձակւում, իսկ միջօրեայ դեւը[85] սովոր է ամբողջ հոգին պաշարել եւ ներսում իսկոյն խեղդել միտքը: Ուստի միայնանալը[86] քաղցր է կրքերից ազատուելուց յետոյ. քանզի այդ ժամանակ [կրքերի] լոկ մերկ յիշողութիւնն է [մնում], եւ այդուհետեւ [հոգեւոր] մարտը պատերազմական գործի չի վերածւում, այլ հանդիսարանում[87] պատրաստում է միայնակեացին [հոգեւոր] հայեցողութեանը:

38. Արդեօք մի՞տքն է կրքերը շարժման մէջ դնում, թէ՞ կիրքը՝ միտքը: Ոմանք համարեցին, թէ առաջինն է [ճիշտ], ոմանք էլ՝ երկրորդը:

39. Արդ՝ կրքերը սովոր են յուզուել զգայութիւններից, ուստի եթէ կան սէր ու հաւատքի ժուժկալ [վարք], կրքերը չեն կարող շարժուել, որովհետեւ [հոգու] ցասմնական [մասը], ցանկականից առաջ անցնելով, սա է փափագում իբրեւ դեղ[88]: Այն պատճառով է սէրը մեծ համարւում, որ բարկութեան բերանին սանձ է դառնում: Քանզի Մովսէսը հէնց սա[89] է անուանում պատերազմող օձամարտ[90], երբ օրինակներ է բերում [կենդանիների] բարքի մասին:

40. Դեւերի հետ բնակւում է թարախային զարշահոտութիւն, որը սովոր է արձակուել խորհուրդների հետ, երբ մարդն ընդունում է դրանք եւ իսկոյն զգում այն կրքերը, որոնք մարտնչում ու նեղում են իրեն:

85 Այսինքն՝ ձանձրոյթի դեւը:

86 Քանի որ միջօրեայ, այսինքն՝ ձանձրոյթի դեւը, առաւելապէս միայնակեացների եւ ոչ թէ եղբայրութեան մէջ բնակուողների վրայ է յարձակւում:

87 Հանդիսարանը (գրաբ.՝ հանդէս) մրցարանն է, այսինքն՝ այստեղ՝ ճգնողական կեանքը:

88 Այսինքն՝ ցասմնական մասը ցանկականից աւելի կարիքն ունի այս դեղի:

89 Այսինքն՝ սէրը:

90 Օձամարտը Ղեւտ. ԺԱ 22-ում յիշուած սուրբ, այսինքն՝ ուտելի, թռչող կենդանիներից է, որը հաւանաբար մորեխի մի տեսակ է (բառը նշանակում է «օձերի դէմ մարտնչող»):

41. Ամէն ժամանակ չէ, որ հնարաւոր է [ճգնողական] կարգը կատարել, այլ պէտք է նայել ժամանակին եւ պատուիրանի իրագործելի լինելուն, [այսինքն]՝ թէ ինչպէս է պատշաճ իրագործելի պատուիրանները կատարել: Քանզի դեւերը նոյնպէս տեղեակ չեն սրանց [կատարման ճիշտ] ժամանակին. որովհետեւ երբ բորբոքւում են, հնարաւորի իրագործումը խափանում են եւ անհնարն են մեզ առաջարկում ու յօժարեցնում գործել: Խափանում են տկարացածների՝ իրենց ցաւերի համար գոհանալն ու խնամողներին համբերելը եւ նուաղածներին դարձեալ ծանր ճգնողութեան մէջ են դնում՝ յօժարեցնելով ոտքի կանգնել եւ սաղմոսներ ասել:

42. Երբ քաղաքներում կամ գիւղերում միաւժամանակ [մնալով]՝ ինչ-որ մէկի պատճառով տագնապում ենք, այդժամ աւելի խիստ ճգնողութեան պիտի դիմենք: Ջնմանուե՛նք աշխարհականներին՝ խառնուելով [նրանց]. գուցէ մեր միտքը, թանձրանալով եւ [քաղաքում կամ գիւղում անցկացուած] այդ ժամանակի պատճառով սովորական կենսակերպից [մեր] հեռանալու հետեւանքով, գործի այն, ինչ կամքը չի ցանկանում, եւ փախուստի մատնուի՝ դեւերից յաճախ խոցոտուելով: Ձեզ կարողանայ աղօթել, երբ փորձութեամբ [մէկ այլ] փորձութեան մէջ ես ընկել, մինչեւ մի ցասկոտ խօսք չասես քեզ պատահած [դեւի] հասցէին[91]. գուցէ նրա խորհուրդներից թուլացած հոգիդ մաքուր աղօթք չկատարի[92]: Իսկ եթէ բարկութեամբ ինչ-որ բան ասես թշնամուն, կը հանգցնես նրա խորհուրդները: Այսպիսի բարկութիւն կարող են ցուցաբերել նաեւ նրանք, ովքեր լաւ խորհուրդներ ունեն:

43. Բայց պէտք է նաեւ դեւերի ժամանակները ճանաչել եւ դրանց հետ կապուած խորհուրդները: Քանզի կան դեւեր, որ հազուադէպ են [յարձակւում], բայց ծանր են, կան դեւեր էլ, որ յաճախադէպ են, սակայն թեթեւ, կան էլ, որ յանկարծ յարձակւում եւ միտքը հայհոյութեան մէջ են գցում: Այս ամէնը ճանաչելը խիստ անհրաժեշտ է, որպէսզի երբ խորհուրդները սկսեն իրենց մեքենայութիւնները նիւթել, քանի դեռ մեր [ճգնողական] կարգը չենք թողել, խօսենք նրանց հետ

91 Գրիգոր մեկնիչն իբրեւ այսպիսի խօսքի օրինակ է տալիս «Թող սաստի՛ քեզ Տէրը» սուրբգրային արտայայտութիւնը (Յուդա 9):

92 Գրաբ. թարգմանութեան մէջ այս նախադասութիւնը դրական իմաստով է գործածուած (այսինքն՝ որպէս «աղօթք կատարի»), որն անդէպ է թւում:

եւ ներկայացնենք ինչ որ կայ[93]: Որովհետեւ այսպէս եւ մենք Աստուծոյ կամքով հեշտութեամբ կ'առաջադիմենք, եւ նրանց, զարմացնելով, ահաբեկելով ու տագնապեցնելով, [մեզնից] կը վտարենք:

44. Միայնակեացի հետ մարտնչելիս պարտութեան մատնուելով՝ դեւերը մի փոքր տեղի են տալիս. ապա վերադառնում են եւ եթէ առաքինական գործում թերացած են նրան գտնում, անմիջապէս յանկարծօրէն վրայ տալով՝ տառապեալ հոգին չարչարում են:

45. Չար դեւերն իրենց հետ վերցնում են իրենցից աւելի չար դեւերի[94], եւ թէեւ կամքով հակառակ են միմեանց, սակայն միաբանւում են, երբ պատրաստւում են մարդկանց հոգիները կորստեան մատնել:

46. Թող մեզ չխռովեցնի այն դեւը, որը ձգտում է յափշտակել [մեր միտքը]՝ Աստուծոյ անունը հայհոյել տալու եւ մանաւանդ այն անպատմելի երազանքների մէջ գցելու համար, որոնք ես չհամարձակուեցի գրել անգամ, եւ սրանով թող չհատի ձեր յօժարութիւնը: Քանզի Աստուած սրտագէտ է եւ գիտի, որ նոյնիսկ երբ դեռ աշխարհում էինք, այդպիսի մոլորութեան մէջ չէինք ընկնում, այլ դեւերը, որ նպատակ են դրել մեզ աղօթքից հեռացնել, [մեզ այդ փորձութիւնների մէջ են գցում], որպէսզի մտքով այդպիսի գործ արած լինելու պատճառով Աստուծոյ առաջ չկանգնենք:

47. Հոգու կրքերը յայտնի են դառնում արտաբերուած խօսքից կամ մարմնի ինչ-որ շարժումներից[95]: Սրանցի՞ց են թշնամիները հասկանում՝ ներսում իրենց խորհո՞ւրդն ունենք, թէ [այն] մեզանից թաքնուած ու հեռացրած՝ մտահոգւում ենք մեր հոգու փրկութեան մասին: Քանզի [մեր] միտքը միայն մեզ ստեղծած Աստծուն է յայտնի, եւ Նրան հարկաւոր չեն խորհրդակիցներ, որ Նրան յայտնեն, թէ ինչ կայ մեր սրտում ծածկուած:

48. Աշխարհականների հետ դեւերը մերկընդմերկ կռւում են նրանց իրերի միջոցով[96], իսկ միայնակեացների հետ՝ յաճախ ներքուստ՝

93 Այսինքն՝ նրանց խորհրդին հակառակ խորհրդով պատասխանենք եւ բացայայտենք նրանց խորամանկութիւնը:

94 Հմմտ. Մատթ. ԺԲ 45:

95 «Երբ ինչ-որ խօսք ենք ասում կամ ցոյց տալիս, աչքով ակնարկութիւն անում, ձեռքերը շարժում կամ այտերի միջոցով ցոյց տալիս [մեր ներսում եղածը, օրինակ՝ դեղնում կամ կապտում ենք, ինչպէս բարկացած ժամանակ» (ԳՄ):

96 Այսինքն՝ ունեցուածքի, նրանց պատկանող առարկաների (ԳՄ):

նրանց խորհուրդների հետ, քանզի [արտաքին] գործերը բացակայում են անապատում [բնակուելու] պատճառով: Եւ որքան աւելի հեշտ է խորհուրդներով մեղանչել, քան գործերով, նոյնքան աւելի դժուար է խորհուրդների դէմ պատերազմը, քան կատարուած գործերի, որովհետեւ միտքն արագաշարժ ու թեթեւ է նաեւ անօրէն անպատեհ երազանքների հանդէպ:

49. Ամէն ժամ գործ անելու, պահք պահելու եւ տքնելու հրաման չունենք, սակայն յաճախ աղօթելը օրինաւոր հրամանով է հաստատուած[97]: Քանզի սրանով (աղօթքով) հոգու տկար մասն է բժշկւում, իսկ առաջինները հարկաւոր են մարմնի գործերը կատարելու համար, որպէսզի իր տկարութեան պատճառով մարդը չծուլանայ ջանք թափել: Աղօթքը սովոր է միտքը կատարեալ ու մաքուր դարձնել՝ պատերազմի պատրաստելով, նոյնիսկ առանց մարմնի [գործակցութեան]: Այս ամէնից բացի, դեւերի դէմ պատերազմում են նաեւ հոգու զօրութիւնները[98]:

97 Ղուկ. ԺԸ 1, Ա Թես. Ե 17

98 Ըստ ԳՄ-ի՝ «հոգու զօրութիւններ»-ի տակ պէտք է հասկանալ մեզ պահպանող հրեշտակներին: Սակայն, նկատի առնելով այն հանգամանքը, որ այս արտայայտութիւնը 73 եւ 79 գլուխներում գործածւում է մարդկային հոգեկան ուժերի կամ կարողութիւնների իմաստով, այստեղ եւս կարող ենք «հոգու զօրութիւններ»-ի տակ հասկանալ նոյնը: Թէ որոնք են այդ զօրութիւնները, կարող ենք հասկանալ 93-րդ գլխից, ուր յիշւում է «յիշողական զօրութիւնը», քանի որ «հոգու զօրութիւններ»-ի տակ կարելի է տարբեր բաներ հասկանալ, ինչպէս օրինակ՝ հոգու երեք մասերը, որոնք նաեւ «զօրութիւններ» են կոչւում: Սբ Գրիգոր Տաթեւացին «Գիրք հարցմանց»-ում ներկայացնում է հոգու զօրութիւնների բազմաթիւ բացատրութիւններ կամ դասակարգումներ: Ըստ դրանցից մէկի՝ հոգին երկու տեսակ զօրութիւն ունի՝ «գիտնական» եւ «կենդանական», որոնցից իւրաքանչիւրը հնգական զօրութիւն ունի: «Գիտնական» կոչուած զօրութիւններն են՝ միտք, տրամաբանութիւն, կարծիք, երեւակայութիւն եւ ընդհանուր զգայութիւն: Իսկ «կենդանականներն» են՝ կամք, ընտրողութիւն, յօժարութիւն, բարկութիւն, ցանկութիւն: Սրանց մի մասը բանական է, միւս մասը՝ անբան: Բանական են միտքը, տրամախոհութիւնը, կարծիքը, կամքը, ընտրողութիւնը, իսկ անբան՝ վերոյիշեալներից մնացածը: Տաթեւացին բերում է նաեւ Մաքսիմոս Խոստովանողի տեսութիւնն այս մասին, ըստ որի՝ մարդու հոգին երկու զօրութիւն ունի՝ միտք եւ բան (բանականութիւն), որոնցից իւրաքանչիւրն իր հերթին ունի հնգական զօրութիւն: Մտքինն են՝ իմաստութիւն, տեսողու-

50. Եթէ որեւէ միայնակեաց կամենում է վայրենի դեւերին փորձով ճանաչել եւ սրանց մեքենայութիւնների հանգամանքներին վերահասու դառնալ, թող ուշադրութիւն դարձնի խորհուրդներին. նկատի նրանց յարձակուելը, նայի [նրանց] թուլութիւններին, նաեւ տեսնի նրանց խառնած խորհուրդներն ու ժամանակները, եւ թէ դեւերից որոնք են սա անում, կամ որ դեւը որին է հետեւում, կամ որը որին չի հետեւում, եւ թող Տիրոջից խնդրի նրանց խօսքերն իմանալ[99]:

51. Դեւերը խիստ բարկանում են հայեցողների[100] վրայ, ովքեր կամենում են նաեւ գործնական [ճգնաւորական] կարգով կենցաղավարել, եւ ցանկանում են խաւարեցնելով խոցոտել նրանց, ովքեր ուղիղ են սրտով: Երկու առաւել արագահաս ու բարկ դեւ կայ, որոնց եթէ հետեւես, կը կարողանաս տեսնել, որ համարձակօրէն, նոյնիսկ մեր մտքից էլ արագ, ամէնից առաջ դրանք են վրայ հասնում՝ պոռնկութեան դեւը եւ այն, որը կամենում է մեզ յափշտակել աստուածհայհոյութեան համար: Քանի որ երկրորդը կարճժամանակեայ է, առաջինը, եթէ կրքով չշարժի խորհուրդները, չի կարող մեզ խրտնեցնել աստուածգիտութիւնից:

52. Մարմինը հոգուց կարող է բաժանել միայն Նա, Ով դրանք իրար միացրեց, իսկ հոգին՝ մարմնից՝ նա, ով հասել է առաքինութեանը, քանի որ [աշխարհային կեանքից] հեռանալը մեր հայրերն անուանել են «մահուամբ կրթութիւն» եւ «մարմնից փախուստ»:

53. Ովքեր մարմինը չարաչար պարարտացնում են՝ այն խնամելով իրենց ցանկութեան կատարման համար, մարմնին են մեղադրում, որովհետեւ չգիտեն Արարչի շնորհը, [ինչպէս նրանք], ովքեր հոգու

Թիւն, ուսողութիւն, անմոռացութիւն եւ իբրեւ սրանց լրումը՝ ճշմարտութիւն: Բանինն են՝ խոկում, գործ, առաքինութիւն, հաւատ եւ իբրեւ սրանց լրումը՝ բարին: Տաթեւացու բերած այլ դասակարգումներից նշենք եւս մէկը. հոգին ունի զօրութիւններ, որոնք յատուկ են նաեւ անասուններին (մասնաւոր զգայութիւն, ընդհանուր զգայութիւն), ինչպէս նաեւ՝ երեւակայութիւն, կարծիք, տրամախոհութիւն եւ յիշողական զօրութիւն: Այս մասին առաւել մանրամասն տես «Գիրք հարցմանց», էջ 248—249:

99 Այսինքն՝ թէ այս կամ այն խորհուրդը կամ դիւային «խօսքը» (տես Մատթ. Դ 3—11) ինչ ծածուկ նպատակով է այցելում:

100 Հայեցող — գրաբ.՝ դիտնաւոր. աստուածային գիտութեան, իմաստութեան հասած, հայեցողական կեանքով ապրող անձ

անկրքութիւնն այս մարմնի միջոցով են ձեռք բերում եւ քննութեամբ շատ անգամ են [սա] հաստատել[101]:

Քնած ժամանակ երազ տեսնողների մասին

54. Երբ քնած ժամանակ [հոգու] ցանկական մասին ենք հակւում՝ երազում հանդիպելով ինչ-որ ծանօթների, ազգականների հետ գինարբուքի, կանանց պարի կամ ուրիշ այսպիսի բանի, որ բաւարարում է ցանկութիւնը, եւ գրգռւում ենք դրանցով, այդ կրքերը զօրանում են մեր մէջ: Իսկ երբ [երազում դեւերը] մեզ բարկութեամբ խռովեցնում են կամ ցոյց տալիս ճանապարհներ՝ ահ պատճառող բարձունքներով, որոնցից տագնապով հեռանալ են մեզ տալիս, կամ զինուած մարդկանց, թունաւոր ու գիշակեր ինչ-որ գազաններ, եւ այդ ճանապարհներից կամ գազաններից զարհուրում ենք կամ էլ մարդկանցից փախչում՝ [հոգու] ցասմնական մասի գրգռմամբ, այդժամ մեր անձի պաշտպանութեան համար Քրիստոսին օգնութեան կանչենք, եւ սա կը լինի մեր վերոնշեալ ցաւերի դէմ հակաթոյն:

55. Մարմնի բնական շարժումներն առանց երազների պատկերների[102]՝ ցոյց են տալիս, որ հոգին առողջ է, իսկ երբ անպատկեր երազները կերպաւորւում են, [սա հոգու] հիւանդութեան նշան է: Երազում [երեւացող] անյստակ պատկերները հնում [ունեցածդ] կրքի նշան են, իսկ յստակը համարիր ներկայում եղած խոցուածութեան նշան:

56. Անկրքութեան նշանը ցերեկը մտքի խորհուրդներով ենք ճանաչում, իսկ գիշերը՝ երազներով: Արդ՝ անկրքութիւնը հոգու առողջու-

101 Մարմնի մասին մեծ խնամք տանողները «չգիտեն, որ Աստուած այս մարմինը չարչարելի անելով՝ սա մեզ իբրեւ մեծ շնորհ է պարգեւել. որովհետեւ երբ մեղանչում ենք, մարմինը քաղցով, ծարաւով եւ այլ բաներով չարչարում ենք եւ [այս] ամէնից մեր հոգու անկրքութիւնը ձեռք բերում: Քանզի ահա երբ դեւերը մեղանչեցին, չարչարելի մարմին չունէին, որ իրենց մեղքերը մաքրէին չարչարանքի միջոցով» (ԳՄ, ՄՄ ձեռ. 1418):

102 Այս գլուխն առնչւում է նախորդ գլխի առաջին հատուածի հետ, ուր խօսւում է հոգու ցանկական մասին յատուկ անմաքուր կրքեր առաջացնող երազների վերաբերեալ: Այսինքն՝ երբ միտքդ մաքուր է ցանկասիրական պատկերներից, մարմնի շարժումները դեռ նշան չեն, թէ կրքից յաղթուած ես եւ հոգուդ ցանկական մասը «հիւանդացել» է: Այս գլխի գրաբարեան թարգմանութիւնը բաւականին խրթին ու դժուարհասկանալի է եւ առանց յուն. տարբերակի պարզապէս անկարելի է ճիշտ թարգմանել:

թիւն եւ գիտութիւն ենք կոչում, որովհետեւ միայն դա է սովոր մեզ պատրաստել սուրբ զօրութիւններին հաւասարուելու, իսկ այս անմարմին հաղորդութեանը պատրաստուել հնարաւոր է նոյն սիրոյ[103] նմանութեամբ:

Այն վիճակի մասին, որը մօտ է անկրքութեան

57. Հոգու խաղաղութեան երկու վիճակ գիտեմ: Մէկը բխում է բարոյական գիտութիւնից[104], երկրորդը լինում է դեւերից խուսափելուց: Առաջինին հետեւում են խոնարհութիւնը՝ զղջմամբ, արտասուքով, Աստուածութեան հանդէպ մեծ խանդաղատանքով, եւ գործի մէջ անչափ ջանքը, իսկ երկրորդին՝ հպարտութեամբ լի սնափառութիւնը, որն ուրիշ դեւերի ընտրելով՝ [նրանց հետ] մարտնչում է՝ միայնակեացին անդարձ կերպով հրապուրելու համար: Ով պահպանում է առաջին վիճակը, դեւերի յարձակմանը կանխապէս է տեղեակ դառնում:

58. Հպարտութեան[105] դեւը հակառակ է պոռնկութեան դեւին, եւ անհնար է, որ այս երկուսն էլ միանգամից յարձակուեն հոգու վրայ. քանզի եթէ մէկը պատիւ է խոստանում, միւսն առիթ է դառնում պատուից [զրկման]: Արդ՝ սրանցից ո՞րն է, որ քեզ մօտենալիս կարող է ապրել, երբ հակառակորդ դեւը գալով քեզ մօտ՝ իր խորհուրդները հիւսի: Ուստի եթէ կարողանաս, ինչպէս ասում են, սեպով սեպը հանել[106], ապա իմացիր, որ մօտ ես անկրքութեան սահմաններին, որովհետեւ միտքդ յաղթեց դեւերի աներեւոյթ խորհուրդներին: Բայց այն

103 Այսինքն՝ առ Աստուած այն սիրոյ (գրաբ. բնագրում՝ «զթոյ»՝ զթութեան), որ կայ սուրբ զօրութիւնների (հրեշտակների) մէջ:

104 Բարոյականն այստեղ դարձեալ նշանակում է բարքի՝ բնութեան, բնաւորութեան հետ կապուած: «Բարոյական գիտութեամբ» նկատի է առնուած սեփական բնութեան, նրա տկարութիւնների դէմ պայքարի արդիւնքում սեփական բնութեան ճանաչումն ու վարքի ուղղութիւնը: Յուն.-ը սրա փոխարէն ունի «բնական սերմեր» արտայայտութիւնը, որը նոյնքան եւ նոյնիսկ աւելի անհասկանալի է:

105 Յուն.-ում «սնափառութեան»:

106 Այսինքն՝ «երբ գալիս է պոռնկութեան [դեւը], հպարտութի՛ւնն առաջ բեր, թէ՝ կամենում եմ սուրբ մնալ եւ չարհամարհուել անարգ ախտերով, եւ կը վտարի պոռնկութեան [դեւին]: Իսկ երբ հպարտութեան դեւը գայ, բեր պոռնկութեանը՝ յիշելով գործածդ [պոռնկութեան] մեղքերը, եւ ասա՝ ո՞ր բարի գործիս նայելով պիտի հպարտանամ...» (ԳՄ):

[յաղթանակը], որ խոնարհութեամբ[107] է տարուում ընդդէմ [հպարտութեան] ու պոռնկութեան, մեծ անկրքութեան [հասած լինելու] նշան է[108]: Այսպէս վարուել փորձիր միմեանց հակառակ բոլոր [խորհուրդների] հետ, եւ այդ ժամանակ կը հասկանաս, թէ որ կրքի հանդէպ աւելի հակում ունես: Սակայն, որքան հնարաւոր է, Աստծուց խնդրիր երկրորդ՝ առաջինից աւելի լաւ, պատերազմը մղել[109]:

59. Որքան հոգին առաջադիմում է, այնքան աւելի շատ հակառակորդներ են [իրար] փոխարինելով պատահում նրան, քանզի ես չեմ ընդունում, որ նոյն դեւերն են [միշտ] բնակւում նրա մէջ: Եւ սա գիտեն առաւելապէս նրանք, ովքեր աւելի սուր փորձութեան են յօժարաբար մատնուել եւ դեւերի՝ պատրանքներով խաբէութեան դիմաց [դռնափակ] նիգ դնելով՝ տեսել են [այդ դեւերին] փոխարինելու եկածների [խաբէութեան] մերձեցումը:

60. Կատարեալ անկրքութիւնը հոգում բնակութիւն է հաստատում բոլոր հակառակորդ դեւերի դէմ [մարդու] յաղթանակ տանելուց յետոյ: Իսկ նրան, ով [դեռ] անկատար է անկրքութեան մէջ, դեւերի դէմ կռուող մարտիկ են համարում ու կոչում:

61. Ուստի միտքը չի կարող առաջադիմել, գեղեցիկ շաւիղներով ուղիղ գնալ ու անմարմինների տեղը հասնել, եթէ իր ներսում եղածը կարգի չի բերել: Որովհետեւ [նրա] ընտանիքում[110] եղած խռովութիւնը շարունակ վերադարձնում է նրան այնտեղ, որտեղից ելնելով ճանապարհ ընկաւ:

62. Մարդուն կուրացնում են հաւասարապէս թէ՛ առաքինի գործերը, թէ՛ թուլութիւնները: Առաջինը [կուրացնում է], որպէսզի [մարդը] չտեսնի [իր] թուլութիւնները, իսկ միւսը՝ որպէսզի չտեսնի առաքինութիւնը:

107 Եւ ոչ թէ հակառակով հակառակի դէմ պայքարելու միջոցով:

108 Այս հատուածի գրաբարեան ոչ յստակ թարգմանութիւնը կարող է աւելի հասկացուել իբրեւ «այն [յաղթանակը], որ պոռնկութիւնից առաջ եկած խոնարհութեամբ է...» («Իսկ այն որ խոնարհութեամբն է զպոռնկութեանն թանձրութենէ...»): Ըստ յուն.-ի՝ «Երբ խոնարհութեամբ վտարւում է սնափառութեան խորհուրդը, իսկ ողջախոհութեամբ՝ պոռնկութեան խորհուրդը, ապա դա խոր անկրքութեան նշան է»: Հայերէնում խօսք չկայ ոչ սնափառութեան (հպարտութեան), ոչ էլ ողջախոհութեան մասին:

109 Այսինքն՝ խոնարհութեամբ մղուած պատերազմը:

110 Ըստ Եւագրի՝ միտքը տան կամ ընտանիքի գլխաւորն է. տես նաեւ 64-րդ գլուխը:

Անկրքութեան նշանների մասին

63. Երբ միտքը սկսում է անցրիւ աղօթք մատուցել, այդժամ հոգու ցասմնական մասն օրուգիշեր պատերազմում է:

64. Անկրքութեան նշանը սա է. միտքը սկսում է իր լոյսը[111] տեսնել, [իր] տան մոլորութիւններից[112] խաղաղւում է, եւ նրան նաեւ այլ կարգի բաներ են երեւում[113]:

65. Առողջ է այն միտքը, որն աղօթելիս չի երազում այնպիսի բանի մասին, որն ատում է աշխարհում:

66. Միտքը, ճգնակեցական գործերն Աստուածութեան [օգնութեամբ] իրականացնելուց եւ [աստուած]գիտութեանը մերձենալուց յետոյ, սակաւ է հոգում կամ բնա՛ւ չի հոգում հոգու անբան մասի համար[114]. որովհետեւ [աստուած]գիտութիւնը յափշտակում է [միտքը] եւ փոխադրելով հեռացնում զգայական բաներից:

67. Հոգու անկրքութիւնը ոչ միայն այն է, որ [հոգին] չի խռովւում առարկաների պատճառով, այլեւ որ անգամ դրանք յիշելիս առանց որեւէ խռովքի է մնում:

68. Կատարեալը չի ժուժկալում, իսկ անկիրքը չի համբերում, քանզի կրքոտին է պէտք համբերութիւնը, եւ [դեւերից] նեղութիւն կրողին՝ ժուժկալութիւնը:

69. Մեծ բան է [Աստծուն] անպակաս օրհնելը[115], սակայն աւելի մեծ է անցրիւ աղօթելը[116]:

---

111 Այսինքն՝ այն լոյսը, որ սկզբում ստեղծել է Աստուած, իսկ մենք կրքերով այն ծածկել ենք (ԳՄ):

112 Ըստ ԳՄ-ի՝ տունը հոգին ու մարմինն են, իսկ մոլորութիւնները՝ նրանց խորհուրդները:

113 Միտքը, մաքրուելով ու մօտենալով աստուածգիտութեանը, տեսնում է հոգեւոր այլ իրականութիւններ, որոնք մինչ այդ կրքերի պատճառով չէր կարող տեսնել (ԳՄ): Այս գլուխն ըստ յուն.-ի հետեւեալ իմաստն է արտայայտում. «Անկրքութեան նշանն այն է, որ միտքը սկսում է տեսնել իր լուսաւորութիւնը, երազների տեսիլքների հանդէպ հանդարտութիւն ցուցաբերում եւ խաղաղութեամբ նայում [բոլոր] բաներին»:

114 Հոգու անբան (ոչ բանական) մասը ներառում է ցասմնական եւ ցանկական մասերը:

115 Օրհներգելու՝ օրհնութիւններ երգելու իմաստով:

116 Ըստ յուն.-ի՝ «Մեծ բան է անցրիւ աղօթելը, սակայն աւելի մեծ է անցրիւ սաղմոսերգելը»: Ըստ ԳՄ-ի գործածած բնագրի՝ «...սակայն ոչ պակաս է անցրիւ աղօթելը»:

70. Ով առաքինութիւններն իր մէջ հաստատուած ունի, [այլեւս] չի մտահոգւում օրէնքի, պատուիրանների եւ [գալիք] տանջանքների մասին, այլ մնում է նոյն [վիճակում]՝ խօսելով եւ գործելով, ինչպէս հրամայում է [նրա] առաքինի բարքը:

71. Դիւային երգերը գրգռում են մեր ցանկութիւնները եւ մեր հոգին գցում պիղծ երազանքների մէջ: Իսկ սաղմոսները, օրհնութիւններն ու հոգեւոր երգերը մտքին միշտ հրաւիրում են առաքինութիւնը յիշելու, մեր բորբոքուած բարկութիւնը մարում են եւ ցանկութիւնը ցամաքեցնում:

72. Ինչպէս մենամարտիկներն են նեղութիւն կրում [իրարից] ու նեղում իրար, այդպէս էլ մեզ հետ մարտնչող դեւերը, երբ նեղում են մեզ, արդարեւ իրենք էլ են նեղութիւն կրում մեզնից[117]:

73. Հանգիստը լծակցուած է զգօնութեանը, իսկ ջանքը՝ իմաստութեանը, որովհետեւ ոչ ոք չի կարող զգօնութիւն ձեռք բերել առանց ջանքի, եւ հնարաւոր չէ պատերազմ վարել առանց զգաստութեան: Քանզի վերջինիս է յանձնուած դեւերի բարկութեանն ընդդիմակայելը, հոգու զօրութիւններին ստիպելը, որ բնութեան հետ ներդաշն լինեն, եւ արդարութեան ճանապարհները նախապէս հարթելը:

74. Միայնակեացի համար փորձութիւն է, երբ հոգու կրքոտ մասով [անցնող] չար խորհուրդը յարձակւում ու միտքը մթնեցնում է:

75. Միայնակեացի համար մեղք է, երբ իր խորհուրդները յարում է [նախապէս] մերժուած ցանկութիւններին:

76. Հրեշտակներն ուրախանում են չարիքների նուազման վրայ, իսկ դեւերը՝ բարի բաների նուազման: Որովհետեւ առաջիններն սիրոյ, գթութեան ու մարդասիրութեան մատակարարներ են, իսկ վերջինները՝ բարկութեան ու ատելութեան արբանեակներ: Երբ առաջիններն են մեզ մօտենում, հոգեւոր խորհուրդներով ու գիտութեամբ են մեզ լցնում, իսկ երբ վերջիններն են մօտենում, մեր հոգին գցում են պղծալից երազանքների մէջ:

77. Առաքինութիւնները ոչ թէ դեւերի յարձակումներն են խափանում, այլ այս աշխարհում մեզ անարատ են պահում:

---

117 Յուն.-ում այստեղ աւելացւում է. «Ինչպէս ասում է», եւ բերւում է երկու նախադասութիւն սաղմոսներից (ԺԷ(ԺԸ) 39 եւ ԻԶ(ԻԷ) 2):

78. Արդիւնական վարքը[118] հոգու կրքոտ մասը ջնջող ու մաքրող հոգեւոր միջոց է:

79. Պատուիրանների գործերը բաւական չեն հոգու զօրութիւնները կատարելագործելու համար, եթէ մտքի զանազան արդիւնքները չփոփոխուեն:

80. Մենք չունենք կարողութիւն հասու դառնալու հրեշտակների՝ մեզ ներշնչած բոլոր խորհուրդներին: Բայց դեւերի բոլոր խորհուրդներն էլ գրի առնելով ցոյց ենք տալիս: Առաջինների [խորհուրդներին] հետեւում է խաղաղութեան վիճակ, իսկ դեւերի [խորհուրդներին]՝ խռովալից ամբոխում:

81. Անկրքութեան թոռը սէրն է[119], իսկ սէրը՝ ճգնաւորական գործերի ծաղիկը[120]: Ճգնաւորական գործերը կատարւում են պատուիրանապահութեամբ, եւ այս ամէնի պահապանը Տիրոջ երկիւղն է, որը ծնունդն է ուղիղ հաւատքի: Իսկ հաւատքը գթութեան բարիքն է[121], որը սովոր է բնակուել նաեւ նրանց մէջ, ովքեր [դեռ] հաւատալու են Աստծուն:

82. Ինչպէս որ զօրացած հոգին զգում է տկարացած մարմինը, այդպէս էլ զօրացած միտքը ճանաչում է իր կարողութիւնն ու զօրութիւնը եւ իր համար գտնում բժշկիչ պատուիրանն ընդդէմ նրա, ինչը խափանում է առաջ բերում:

83. Կրքերի դէմ պատերազմող միտքը չի կարող հասկանալ պատերազմի խօսքերը[122], որովհետեւ նման է գիշերը մարտնչողի: Իսկ ան-

118 Այսինքն՝ ճգնաւորական կենցաղը:

119 «Երբ [կրօնաւորը] գործնականն անթերի է կատարում, որը պահքն է, աղօթքը, գետնախչտութիւնը, քաղցը, ծարաւը, խոնարհութիւնը, հեզութիւնը, սէրը, երկայնմտութիւնը, անոխակալութիւնը, անյիշաչարութիւնը, ողորմութիւնը... եւ հասնում անկրքութեան, երբ դեւերն այլեւս չեն կարողանում նեղել ու չարչարել նրան, այդժամ մտնում է աստուածգիտութեան մէջ, իսկ այդ գիտութիւնից ծնւում է Աստուծոյ հանդէպ անչափ սէրը: Ահա ուրեմն սէրն անկրքութեան թոռն է» (ԳՄ):

120 «Որովհետեւ ինչպէս նախ ծառն է լինում, ապա ոստը՝ նրա վրայ, եւ ապա՝ ծաղիկը, այդպէս էլ նախ գործնական [ճգնաւորութիւնը] պիտի լինի՝ իբրեւ ծառ, եւ ապա սէրը՝ իբրեւ ծաղիկ» (ԳՄ): Այստեղ ոստը, ուրեմն, նախապէս յիշուած անկրքութիւնն ու աստուածգիտութիւնն են:

121 Ըստ ԳՄ-ի՝ այս գթութիւնը աղքատների հանդէպ եղած գութն ու ողորմութիւնն է: Ըստ յուն.-ի՝ «Հաւատը ներքին բարիք է»:

122 Հմմտ. գլ. 50-ի հետ եւ տես նրա ծանօթագրութիւնը:

կրքութիւն ձեռք բերած միտքը հեշտութեամբ է հասկանում պատերազմի հանգամանքներն ու ընթացքը:

84. Արդիւնական կեանքի վախճանը սէրն է, իսկ հայեցողական կեանքինը՝ աստուածաճառ[123] խորհուրդները, եւ երկուսի սկիզբը հաւատքն ու բնաբոյս գիտութիւնն են[124]: Դեւերից նրանք, որոնք մօտենում են հոգու կրքոտ մասին, ճգնաւորական գործերին են հակառակում, իսկ որոնք խորհրդական[125] գիտութեանն են խոչընդոտում, ամենայն ճշմարտութեան թշնամի են կոչւում եւ հակառակ են իմաստութեանը:

85. Չկայ ոչինչ, որ մաքրի մարմինը եւ դրանից յետոյ դուրս չմնայ մաքրուածից, իսկ առաքինութիւնները եւ մաքրում են հոգին, եւ բնակւում մաքրուածի հետ:

86. Բանական հոգին բնութեան համաձայն է աճում, երբ [հոգու] ցանկական մասը առաքինութեան է ձեռնարկում, ցասմնականը՝ ջանք թափում դրա համար, իսկ բանականը՝ հասու դառնում արարածների գիտութեանը:

87. Ով առաջադիմում է ճգնաւորական գործերում, մաշեցնում է կրքերի արատները, իսկ ով [հոգեւոր] գիտութիւնն է ձեռք բերում, արարածների անգիտութիւնն է ցոյց տալիս: Կրքերը կարող են ամբողջապէս ոչնչանալ, իսկ գիտութեանը կարող է վախճան հասնել[126], կարող է եւ օգուտ բերուել:

88. Բարի եւ չար բաները գործածւում են առաքինութիւններ եւ մոլութիւններ [ծնելու] համար, բայց այդուհետեւ նաեւ իմաստութիւն պիտի բանեցուի՝ գործադրելու [այդ բարի եւ չար բաները] երկու ուղղութեամբ՝ [կամ առաքինութեան, կամ մոլութեան]:

89. Ըստ մեր իմաստուն ուսուցչի[127]՝ մտաւոր բանական հոգին երեք[128] [մաս] ունի: Երբ մեր առաքինութիւնը հոգու բանական մա-

123 Աստուածաճառ — Աստուծոյ մասին պատմող

124 Այսինքն՝ հաւատքն առաջինի սկիզբն է, իսկ բնաբոյս գիտութիւնը՝ երկրորդի: Բնաբոյս, այսինքն՝ Աստծուց ի սկզբանէ մեր բնութեան մէջ տնկուած՝ դրուած. բնածին:

125 Խորհրդական- հոգեւոր ու աստուածային խորհուրդների հետ առնչուող

126 Ըստ ԳՄ-ի՝ կարող է վախճան հասնել, երբ կրօնաւորը դադարում է ճգնաւորական գործերը կատարելուց, իսկ օգուտ է բերւում, երբ շարունակում է դրանք անթերի կատարել:

127 Իմա սբ Գրիգոր Աստուածաբանին:

128 Գրաբարեան թարգմանութեան մէջ՝ «ընդ երի», ուր «երի»-ն պիտի վերականգնուի իբրեւ «երիս»:

սում է, կոչւում է [զգաստութիւն], իմաստութիւն [եւ զգօնութիւն]: Երբ ցանկական մասում է՝ ողջախոհութիւն, սէր եւ ժուժկալութիւն: Իսկ երբ ցասմնական մասում է՝ արիութիւն եւ համբերութիւն: Իսկ երբ այն բովանդակ հոգում է, [կոչւում է] արդարութիւն: Զգաստութեան գործը թշնամու ուժերի դէմ զօրք ժողովելը[129], առաքինութիւններին զգաստութեամբ թիկունք կանգնելն ու մոլութիւնների դէմ պատերազմելն է եւ ինչ որ [բարու եւ չարի] միջինն է[130], մատակարարելն ըստ [պատշաճ] ժամանակի: Իմաստութեան գործը պատշաճօրէն մատակարարելն է այն ամէնը, որ անհրաժեշտ է վերոնշեալ գործի համար, իսկ զգօնութեանը՝ մարմինների[131] խօսքերը քննելը: Ողջախոհութեան գործն առանց կրքի զննումն է այն բաների, որոնք մեզ գրգռելով [մատնում են] անմիտ երազանքների: Սիրոյ [գործը] Աստուծոյ բոլոր պատկերներին[132] տեսնելն է այնպիսին, ինչպիսին Սկզբնատիպի[133] պատկերն է, նոյնիսկ եթէ դեւերը յանդգնում են աղաւաղել այն: Ժուժկալութեան [գործն] ամէն տեսակ հաճելի [կերակուրներից] որկորը խնդութեամբ ազատելն է: Պատերազմներից չվախենալը եւ ցաւերին յօժարութեամբ համբերելն էլ միայն համբերութեան եւ արիութեան գործն են: Իսկ արդարութեան [գործը] հոգու մասերի միջեւ միաբանութիւն ու յօդակապութիւն ստեղծելն է:

90. Սերմերի [տուած] պտուղը բերքն է, իսկ առաքինութիւնների՝ [աստուած]գիտութիւնը: Ինչպէս սերմանելուն ուղեկցում է արտասուքը, այդպէս բերքահաւաքին՝ խնդութիւնը[134]:

129 Ըստ ԳՄ-ի՝ հոգու երեք մասերն իմացական մտքի հրամանատարութեան տակ ժողովելով՝ թշնամու դէմ ելնելը:

130 Ըստ յունական անտիկ իմաստասիրութեան՝ միջինն այն է, որն ինքնին ոչ բարի է, ոչ չար, այլ ըստ հանգամանքների՝ կարող է դառնալ բարի կամ չար կամ նպաստել բարուն կամ չարին: Օրինակ՝ հարստութիւնը կամ առողջութիւնն ինքնին ոչ բարի բան են, ոչ չար, սակայն կարող են դառնալ բարի կամ չար՝ կապուած նրա հետ, թէ ինչպէս են դրանք գործածւում՝ բարու համար, թէ չարի:

131 Ըստ յուն.-ի՝ «մարմնաւորների եւ անմարմինների»:

132 Այսինքն՝ մարդկանց, ովքեր ստեղծուած են «Աստուծոյ պատկերով»:

133 Այսինքն՝ Աստուծոյ:

134 Հմմտ. Սաղմ. ՃԻԵ 6:

91[135]. Սակայն անհրաժեշտ է նաեւ առաջին միայնակեացների ճանապարհները քննել եւ ըստ նրանց շաւիղների սեփական շաւիղները հարթել, քանզի բազմաթիւ բարի բաներ ասուեցին եւ գործուեցին նրանց կողմից: [Օրինակ]՝ նրանցից մէկն ասաց. «Խիստ ու կանոնաւոր սննդակարգը, լծակցուած սիրոյ հետ, միայնակեացին արագ հասցնում է անկրքութեան նաւահանգիստ»: Քանզի նոյն ինքը վախից ազատեց մի ուրիշ [կրօնաւորի], ով գիշերը տագնապներ էր ունենում, եւ հրամայեց պահքով սպասաւորել հիւանդներին: Եւ երբ նրան հարցրին [իր հրամանի մասին], ասաց. «Ոչինչ այնպէս չի ազատում այդպիսի [վիճակից], ինչպէս ողորմութիւնը»:

92. Իմաստասէրներից մէկը, մօտենալով արդար Անտոնին, հարցրեց. «Ինչպէ՞ս ես կարողանում զգօն մնալ, հայրիկ, երբ զրկուած ես գրքերի ընթերցանութիւնից [առաջ եկող] մխիթարութիւնից»: Անտոնը պատասխանեց. «Իմ գրքերը հէնց ստեղծուածների խօսքերն են, որոնք միշտ ինձ հետ են, եւ կամենում եմ Աստուծոյ այդ խօսքերը միշտ ընթերցել գրքի բերանով»[136]:

93. Ընտրութեան անօթ եգիպտացի Մակար ծերը հարցրեց ինձ. «Ինչո՞ւ երբ մարդկանց հանդէպ ենք ոխ պահում, կորցնում ենք հոգու յիշողական զօրութիւնը, իսկ երբ դեւերի հանդէպ ենք ոխակալ գտնւում, անվնաս ենք մնում»: Երբ ես դժուարացայ պատասխանել, սկսեցի աղաչել, որ սովորեցնի այդ մասին, եւ ասաց. «Որովհետեւ առաջին կիրքը[137] համաձայն չէ [հոգու] ցասմնական [մասի] բնութեանը»[138]:

94. [Մի անգամ] միջօրեայ տօթ ժամի գնացի մեր սուրբ հայր Մակարի[139] մօտ: Մարաւից խիստ տոչորւում էի, ուստի խմելու համար

135 Այս գլխից սկսած՝ բերուող օրինակները Սոկրատը ներառել է իր «Եկեղեցական պատմութեան» մէջ (Դ 23)՝ նշելով, որ դրանք վերցրել է Եւագրից (տես Սոկրատայ Աքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն, Վաղարշապատ, 1897 թ.):

136 Ըստ յուն.-ի՝ «Իմ գիրքը, իմաստասէ՛ր, ստեղծուած բաների բնութիւնն է, եւ այն առընթեր է, երբ կամենում եմ կարդալ Աստուծոյ խօսքերը»: ԳՄ-ի մօտ՝ «մտքի բերանով» փխ. «գրքի բերանով»:

137 Այսինքն՝ մարդկանց հանդէպ ոխակալութիւնը:

138 Իմաստն այն է, որ ցասմնական մասի բնական՝ ճիշտ գործունէութիւնը պիտի ուղղուած լինի ոչ թէ մարդկանց, այլ դեւերին: Ըստ Սոկրատի եւ յուն.-ի՝ աւելացւում է. «Իսկ երկրորդը համապատասխանում է ցասմնականի բնութեանը»:

139 Մակար Ալեքսանդրացու, ով յայտնի է իր մեծ խստակեցութեամբ:

ջուր խնդրեցի: Նա ինձ ասաց. «Այն ստուերը, որում նստած ես, բաւական է քեզ. քանզի շատ ուղեւորներ կամ նաւավարներ դրան էլ են կարօտ»: Սկսեցի նրա հետ խօսել պահեցողութեան մասին, եւ ասաց ինձ. «Բարի բան մտածեցիր, որդեակ. կեանքիս բոլոր օրերին յազենալու չափ ոչ ջուր եմ [խմել], ոչ հաց կերել: Որովհետեւ հացս կշռելով էի ուտում, ջուրս չափելով խմում եւ այն պատին յենուելով՝ սակաւ քունս առնում»:

95. Մի անգամ մի միայնակեացի[140] գուժեցին հօր մահուան մասին, եւ նա ասաց գոյժը բերածին. «Լռի՛ր, հայհոյութիւն մի՛ խօսիր, իմ Հայրն անմահ է»:

96. Պատահեց, որ եղբայրներից մէկը եկաւ եւ հարցրեց ծերերից մէկին, թէ թոյլ տալի՞ս է իրեն, որ հաց ուտի իր մօր կամ քրոջ հետ, երբ տուն գնայ: Ծերը պատասխանեց. «Կին մարդու հետ ամենեւի՛ն հաց մի կեր»:

97. Մի եղբայր միայն մէկ Աւետարան ունէր: Վերցրեց այն եւ վաճառեց, գինը տուեց քաղցածներին եւ սրա վրայ ասաց յիշման արժանի մի խօսք. «Կատարեցի նրանում գրուած պատուիրանը, որն ասում է. «Վաճառի՛ր ունեցուածքդ եւ տո՛ւր աղքատներին»[141]:

98. Ալեքսանդրիայի կողմերում՝ ծովից հիւսիս, մի կղզի կայ՝ Մարէա անունով: Այստեղ բնակւում էր մի միայնակեաց՝ բոլոր միայնակեացների մէջ ընտիր մի մարդ, ով այսպէս ասաց. «Այն բոլոր գործերը, որ կատարում են միայնակեացները, կատարւում են հետեւեալ հինգ պատճառով. Աստուծոյ համար, բնաւորութիւնից, սովորութիւնից, վտանգից, սեփական ձեռքով աշխատելու համար»: Նաեւ ասում էր. «Առաքինութիւնն ինքնին մի բնութիւն է, որը մէկն իր համար կորզում է աղօթքի զօրութեամբ: Քանզի արեգակի լոյսն անձեւ է եւ երկարութիւն չունի, սակայն երբ մտնում է պատուհանով կամ երդիկով, ձեւ ու երկարութիւն է ստանում[142]»:

140 Ըստ Պալադիոսի (Եւագրի վարքագրի)՝ այս միայնակեացը հէնց Եւագրն է:

141 Այդ եղբայրը սբ Սերապիոնն է, ինչպէս կարելի է տեսնել Սերապիոնի վարքից, իսկ ըստ Պալադիոսի՝ աբբայ Բեսարիոնը:

142 Ըստ յուն.-ի՝ «Ըստ [իր] բնութեան՝ առաքինութիւնը մէկն է. նա հոգու զօրութիւններում տարբեր ձեւեր է ստանում այնպէս, ինչպէս արեւի լոյսը, անձեւ լինելով, սովորաբար ընդունում է այն անցքերի ձեւը, որոնցով մտնում է»: Սոկրատեան մէջբերումը համաձայն է սրան:

99. Դարձեալ՝ միայնակեացներից մէկն ասում էր. «Այն պատճառով եմ ինձ զրկում հաճելի բաներից, որ բարկութեան պատճառն ամբողջովին ջնջեմ մէջտեղից: Որովհետեւ գիտեմ, որ [հոգու ցասմնական մասը] միշտ կռիւ է տալիս ցանկութիւնների համար՝ խռովելով միտքս եւ ինձնից հալածելով գիտութիւնը»: Մեր միայնակեացներից մէկն էլ ասում էր. «Սէրը կերակուրների կամ ունեցուածքի աւանդ պահել չգիտի[143]»: Նոյն ծերը նաեւ ասում էր. «Ձեմ յիշում, որ դեւերի նոյն փորձութեան մէջ կրկին ընկած լինեմ»:

100. Հնարաւոր չէ բոլոր եղբայրներին հաւասարապէս սիրել, քանզի հնարաւոր չէ ամէնքին վերաբերուել առանց կրքերի, եթէ մէկը չի ազատուել[144] ոխակալութիւնից եւ ատելութիւնից[145]: Իսկ քահանաներին պէտք է սիրել յանուն Տիրոջ, որ սուրբ Խորհուրդով մաքրում են մեզ եւ աղօթում մեզ համար: Մեր ծերերին էլ պէտք է պատուենք իբրեւ հրեշտակների, քանզի նրանք են, որ մեզ պատերազմի են պատրաստում եւ վայրի գազանների [հասցրած] վէրքերը բուժում:

Ահա՛ քեզ ուղղուած խօսքերը, սիրելի եղբայր, գործնական կեանքի մասին, որքան Սուրբ Հոգու շնորհներով, սերմերի [աճման] ընթացքում, հաստատուն խաղողի պտուղներից կարողացանք քաղել: Եւ եթէ նաեւ բերքահաւաքի ժամանակ ծագի Արդարութեան Արեգակը[146], եւ ողկոյզը հասած լինի, մարդու միտքն ուրախացնող գինին նոյնպէս կը խմենք՝ աղօթքներով արդար տէր Գրիգորի[147] եւ այժմեան սուրբ հայրերի, ովքեր ունեն այն խորհուրդներն ու զօրութիւնը, որոնք աճեցնում են մեզ մեր Տէր Յիսուս Քրիստոսով: Նրան փա՛ռք եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

143 Սա պէտք է հասկանալ ոչ թէ այն մտքով, թէ սէր ունեցող մարդը չի կարողանում պահել իրեն իբրեւ աւանդ տրուածը (ուղղակի իմաստը հէնց սա է), այլ որ ողորմած եւ աննիւթասէր լինելով՝ կերակուր կամ ունեցուածք կուտակել եւ պահել չի կարողանում:

144 Գրաբարում՝ «ազատացեալ», առանց «ոչ» ժխտականի:

145 Ըստ յուն.-ի՝ «...հաւասարապէս սիրել, սակայն հնարաւոր է բոլորի հետ անկրքոտ կերպով վարուել՝ ազատ լինելով յիշաչարութիւնից ու ատելութիւնից»:

146 Այսինքն՝ Տէր Յիսուսը. տես Մաղ. Դ 2:

147 Այսինքն՝ սբ Գրիգոր Նազիանզացու՝ Եւագրի ուսուցչի բարեխօսութեամբ:

ՄԻԱՅՆԱԿԵԱՑ

Մաս Բ

ՀԱՅԵՑՈՂ[148]

1. Հայեցողների խօսքերին խելամուտ կը լինեն գործնական [ճգնակեցութեամբ] ապրողները[149], եւ հայեցողները կը հասկանան գործնականին վերաբերող հարցերը:

2. Գործնական [ճգնակեցութեամբ] ապրողները նրանք են, ովքեր հոգու կրքոտ մասն անկրքութեան են հասցնում:

3. Հայեցողները նրանք են, ովքեր պիղծերի համար աղ են դառնում եւ լոյսի նման լուսաւորում սրբերին[150]:

4. Մեզ տրուող արտաքին գիտութիւնը խօսքերով է փորձում ցոյց տալ իրերի նիւթը, իսկ ներսում տնկուած Աստուծոյ շնորհը նոյն բաները պարզաբար ցոյց է տալիս մտքի խորհուրդներով: Միտքը, նայելով սրանց, հաստատապէս ընդունում է խօսքերի իմաստները: [Գիտութեան] առաջին [տեսակին] խոչընդոտում է մոռացութիւնը, իսկ երկրորդին՝ սրտմտութիւնը, բարկութիւնը եւ սրանց նման այն կրքերը, որ սովոր են հետեւել սրանց:

5. Հայեցողների համար առաջնորդ են բոլոր առաքինութիւնները, սակայն բոլորից առաւել՝ անբարկութիւնը: Քանզի ով մօտեցել է [աստուած]գիտութեան, բայց դիւրաւ է բարկութեան մէջ ընկնում, նման է նրան, ով երկաթեայ գամերով խոցոտում է սեփական աչքերը:

6. Ուստի թող զգոյշ լինի աստուածգիտութեան հասածը. նրա բնաւորութիւնը պիտի լինի ներելն ու զիջելը, եւ ամէն ժամանակ պիտի կրթուի՝ իր մէջ բովանդակելով հաւասարապէս [բոլոր] առաքինու-

148 Այս մասի 50 տները (ինչպէս եւ Եւագրը նշել էր նախորդ մասի սկզբում) գրաբարում նշուած չեն. բնագիրը տրուած է առանց բաժանումների, որոնք ներկայ թարգմանութեան մէջ կատարել ենք ըստ այլալեզու հրատարակութիւններում ընդունուած բաժանումների:

149 Այսինքն՝ արդիւնաւորները:

150 Հմմտ. Մատթ. Ե 13—14:

թիւնները (որովհետեւ դրանք բոլորն էլ մէկը միւսի յետեւից են ընթանում) եւ [որեւէ առաքինութեան մէջ] թերացումից տկարացած միտքը հաստատելով նախկին [վիճակի] մէջ:

7. Հայեցողը միշտ պիտի կրթի իրեն ողորմութեամբ եւ պատրաստ լինի բարիք գործելու: Իսկ եթէ [ինքն] էլ որեւէ ինչքի կարիքն ունի, թող հոգո՛ւ գործի մէջ եռանդուն լինի, որովհետեւ ամէն պարագայում էլ կարող է ողորմութիւն գործել[151], ինչում թերի գտնուեցին հինգ [յիմար] կոյսերը, եւ նրանց լապտերները մարեցին[152]:

8. Զար է հայեցողի համար բողոքաւոր լինելը թէ՛ երբ իր հանդէպ են անիրաւ գտնուում, թէ՛ երբ ինքն է անիրաւութիւն թոյլ տալիս. անիրաւուելու դէպքում՝ որովհետեւ չկարողացաւ համբերել, իսկ անիրաւութիւն թոյլ տալու դէպքում՝ որ կամեցաւ անիրաւութեամբ յաղթել:

9. Զգուշութեամբ պահպանուող գիտութիւնը սովորեցնում է իրեն հաղորդակցուողին, թէ ինչպէս ինքը պիտի պահպանուի զգուշութեամբ եւ առաւել մեծ չափով լուսաւորուի:

10. Մանաւանդ ուսուցանելիս հայեցողը մաքուր ու ազատ պիտի լինի բարկութիւնից, ոխակալութիւնից, հոգեկան կրքերի պատճառած տրտմութիւնից եւ մտահոգութիւններից:

11. Ուսուցանումը սկսելուց առաջ նա շատերի հետ յարաբերութիւն պիտի չունենայ եւ պիտի չսովորի շատերին ընդունել, որպէսզի միտքը ճիւաղների խորհուրդներին ճարակման չտայ:

12. Գործնական, բարոյական եւ աստուածաբանական [առաքինութիւններից] ինչ որ մի անգամ օգուտ է բերում մեր փրկութեանը, այն արդէն պատշաճ է ասել եւ անել մինչեւ մահ, իսկ ինչ որ [սրանց] միջինն է, գայթակղութիւնների պատճառով ոչ պէտք է ասել, ոչ արծարծել եւ ոչ հեշտութեամբ ու համարձակ կատարել[153]:

151 Այսինքն՝ ողորմած լինելու եւ ողորմութիւն գործելու համար բնաւ պարտադիր չէ նիւթական միջոցներ ունենալ, առանց դրա էլ կարելի է թէ՛ հոգեւոր եւ թէ՛ մարմնաւոր ողորմութիւն գործել:

152 Հմմտ. Մատթ. Իե 1—13:

153 «Միջին»-ի մասին տես «Արդիւնաւորի» 89-րդ գլխի համապատասխան ծանոթագրութիւնը: «Գայթակղութիւնների պատճառով» որովհետեւ մարդիկ կարող են գայթակղուել՝ ճիշտ չհասկանալով միայնակեացի կողմից «միջին» բառերի գործածութիւնը:

13. Երիտասարդ [կրօնաւորների] ու աշխարհականների հետ պէտք է ջանք թափել առաքինի վարքի համար եւ ներկայացնել բարոյական ու աստուածաբանական հոգեւոր հրամանները, որովհետեւ առանց այս ամէնի ոչ ոք չի կարող [հոգեւոր] պատերազմ մղել:

14. Բայց միայն քահանաների՛ն պատասխանիր, այն էլ՝ նրանց մէջ եղած առաւել երկիւղածներին, ում կատարած գործերը կամ խորհուրդներն են, [կամ այլ նման գործեր, որոնք] ներքին մարդուն[154] մաքրելու կարողութիւնն ունեն, երբ [նրանք քեզ] հարցնեն [դրանց մասին][155]: Այն վայրը, որը կարողանում է ընդունել [խորհուրդները], հոգու կրքոտ մասն[156] է, ինչպէս նաեւ մտաւոր ճանաչողութիւնը, [որը] ցոյց է տալիս, թէ անհամար միակցութիւններում[157] ինչեր կան իւրաքանչիւր [խորհրդանշական] օրինակի կատարման համար: Նաեւ յայտնի դարձրու այս [ամէնը] Կատարողի խորհրդի մասին, եւ թէ ովքեր են Նրա հետ[158], որ սրբութեան վարքից հալածում են խափանիչներին:

15. Քանի որ շնչաւոր անասունների մի մասն ուշիմ է, մի մասն էլ՝ ապուշ[159], [նրանց] հանգամանքներից իմացիր նաեւ [մարդկանց] վարքին եւ գործերին [վերաբերող] պատմութիւնները, խօսքերն ու օրէնքները, որպէսզի կարողութիւն ունենաս խօսելու այն, ինչ օգտակար է իւրաքանչիւրին:

16. Պէտք է նիւթ վերցնել նաեւ ասուած խօսքերի բացայայտումից եւ [սա] բաւական համարել բոլոր դէպքերի համար, թէկուզ ինչ-որ մաս ծածուկ մնայ քեզնից, քանի որ միայն հրեշտակներին է յատուկ երկրի վրայ [կատարուող] ամէն ինչ իմանալ:

17. Նաեւ հարկ է գիտենալ իրերի սահմանումները, մանաւանդ առաքինութիւնների ու մոլութիւնների, քանզի այս երկուսն աղբիւր են գիտութեան եւ տգիտութեան, երկնքի արքայութեան եւ դժոխքի տանջանքի:

154 Բ Կոր. Դ 16, ուր արտաքին մարդը մարմինն է, իսկ ներքինը՝ հոգին կամ միտքը:
155 Այսինքն՝ եկեղեցական խորհուրդների:
156 Այսինքն՝ ցասմնական եւ ցանկական մասերը:
157 Գրաբարում «յանբաւ խառնակութիւնքն»:
158 Նկատի ունի հաւանաբար հրեշտակային զօրութիւններին:
159 «Ուշիմ» եւ «ապուշ» բառերը կարող են հասկացուել նաեւ իբրեւ «յիշողութիւն ունեցող» եւ «յիշողութիւն չունեցող» («ուշ»-ը «յուշ»-ի, «յիշողութեան» արմատն է):

18. Պէտք ու պատշաճ է գիտենալ նաեւ պարզ եւ դժուարիմաց[160] այն հարցերի մասին, [որոնք վերաբերում են] գործնական, [բարոյական] եւ աստուածաբանական [պատուիրաններին]: Եթէ գործնականին [վերաբերող հարց է], պատշաճ է խորհել, թէ խօսքը [հոգու] ցասմնական [մասի] եւ դրանից ծնուող [կրքերի՞] մասին է, ցանկական [մասի] եւ սրանից ծնուողների՞, թէ՞ մտքի եւ նրանից շարժուող ու արծարծուող [խորհուրդների] մասին: Եթէ հարցը [վերաբերում է] բարոյականին, հարկաւորաբար պէտք է նայել, թէ այն բարոյական բնական հրամաններից որի՞ հետ է առնչւում եւ ինչպիսի՞ն է դա: Իսկ եթէ հարցում աստուածաբանական խնդիր կայ, կարողութեան սահմաններում պէտք է քննել [այն], մանաւանդ եթէ Սուրբ Երրորդութեանն է վերաբերում: Այլապէս այն պարզ [հարց] է, որը, սակայն, [ինչ-որ] խորհուրդ է ցոյց տալիս:

19. Բայց լաւ է գիտենալ նաեւ Սուրբ Գրքին յատուկ սովորական [արտայայտութիւնները] եւ այս [ամէնը] դրանց վկայութիւններով ներկայացնել:

20. Պէտք է գիտենալ այստեղից նաեւ այն, որ [սուրբգրային] սովորական խօսքերն [իմանալը դեռ չի նշանակում] իմանալ նաեւ սուրբգրային խորհուրդները եւ բարոյական գիտութիւնը, եւ ոչ էլ բարոյական [գիտութեանը] քաջածանօթ լինելը [նշանակում է] նաեւ աստուածաբանական [գիտելիքներ ունենալ]: Որովհետեւ այն [խօսքերը], որ խօսում են Երուսաղէմի պոռնկանալու եւ շնանալու մասին[161], կամ ոստոստող շնչաւորների, ջրային կենդանիների ու թեւաւոր թռչունների, դրանց մէջ եղած անսուրբների ու սուրբերի[162], կամ արեգակի ծագելու, մտնելու եւ դարձեալ իր տեղը գնալու մասին[163], սրանցից մէկը վերաբերում է աստուածաբանութեանը, միւսը ներկայացնում վարքի աստուածային կարգը, իսկ երրորդն էլ [առնչւում] բնութեան հետ: Ուրեմն՝ մէկը խօսք է բարոյական գիտութեան վերաբերեալ, իսկ [միւս] երկուսը՝ բնական բաների:

160 «Պարզ»-ն ու «դժուարիմաց»-ն այստեղ կարող են նշանակել ուղղակի եւ փոխաբերական իմաստ ունեցող:
161 Եզեկ. ԺԶ 15—34
162 Ղեւ. ԺԱ 2—19
163 Ժող. Ա 5

21. Սրանցից այն խօսքերը, որոնք արտաքուստ պարսաւելի են երեւում, համարձակ մի՛ մեկնիր եւ հոգեւորը մի՛ փնտրիր դրանցում, այլ [խօսիր նրանց մասին], որոնցում խորհրդանշական կերպով Աստուած յայտնել է ինչ-որ իրողութիւններ, ինչպէս Բաղաամի եւ Կայիափայի [օրինակների դէպքում], որոնցից առաջինը մարգարէացաւ Փրկչի ծննդեան, իսկ միւսը՝ մահուան մասին[164]:

22. Հայեցողը չպէտք է լինի խոժոռ, տրտում եւ անբարեհամբոյր, որովհետեւ կարող է թուալ, թէ չունի արարածներին վերաբերող գիտութիւնը, կամ էլ նրա խօսքն այնպիսի տպաւորութիւն կարող է թողնել, թէ չի ցանկանում, որ «բոլոր մարդիկ փրկուեն ու ճշմարտութեան գիտութեանը հասնեն» [Ա Տիմ. Բ 4]:

23. Բայց արժէ նաեւ, հարկ եղած դէպքում, անգիտութիւն ցոյց տալ անարժան լսողների ու հարցնողների առաջ, եւ արդար կը լինես, քանի որ [իրօք էլ] մարմնաւոր ես եւ բոլոր բաներին ստուգապէս այժմ հասու չես դարձել:

24. Նայի՛ր քեզ, զգո՛յշ եղիր. գուցէ ինչ-որ շահի, անցողիկ բարիք կամ փառք գտնելու նպատակով խօսես անճառելի բաների մասին եւ մերժուես ու դուրս գցուես աստուածային սրահներից, ինչպէս նա, ով Տաճարում աղաւնու ձագեր էր վաճառում[165]:

25. Ով գիտութիւն չունենալով է հակաճառութեան մէջ մտնում, պէտք է նրան ճշմարտութեանը մօտեցնել ոչ թէ վերջում, այլ հէնց սկզբից: Սակայն մատաղահասների ու մանուկների հետ պէտք չէ հայեցողական բաների մասին խօսել եւ նրանց պէտք չէ թոյլ տալ նման գրքերի մօտենալ, քանի որ չեն կարողանայ կանխել այն անկումները, որոնք առաջ են գալիս այդպիսի գիտութիւնից: Ուստի նրանց առաջ, ովքեր աշակերտում են եւ [դեռ] պաշարուած են կրքերի ցաւերից, խաղաղութեան մասին չեն խօսում, այլ խրատում են, որ նախ դիմակայեն եւ յաղթեն թշնամուն, քանզի, ինչպէս ասում է Ժողովողը, «Պատգամաւորութիւն չկայ պատերազմի օրը» (Ժող. Ը 8): Նրանք, ովքեր նեղութիւն են կրում կրքերի ցաւերից, բայց քննում են մարմնաւորներին ու անմարմիններին վերաբերող խօսքեր, նման են հիւանդութիւններով լի մարդկանց, ովքեր իմաստասիրում են առողջութեան մասին: Այլ երբ հոգիները մեծ նեղութիւն են կրում կրքերից, պէտք է

164 Թիւ. ԻԲ 17—19, Յովհ. ԺԱ 49—51
165 Մատթ. ԻԱ 12—13

ճաշակեն այն անհրաժեշտութիւններից, որոնք իրենց մէջ բարիք են պարունակում:

26. Նոյնը չեն ուսուցանման եւ բանավէճի ժամանակները. նաեւ պէտք է սաստել այն հակաճառողներին, ովքեր ժամանակից շուտ են խորհում [հայեցողական բաների մասին], որովհետեւ սա յատուկ է հերետիկոսներին եւ հակառակասէրներին:

27. Աննպատակ կերպով մի՛ խօսիր աստուածային բաների մասին եւ Աստուածութիւնը սահմանման ենթակայ երբեք մի՛ համարիր, որովհետեւ սահմանումները պատշաճում են նրանց, որոնք արարուած են ու բարդ:

28. Թիշի՛ր լքուածութեան[166] հինգ կարգերի մասին, որպէսզի կարողանաս իրենց տրտմութեան պատճառով ընկած կարճամիտներին կանգնեցնել: Ծածկուած առաքինութիւնը լքուածութեամբ է յայտնի դառնում, լքուածութիւնն էլ տանջանքով է վերանում ու փրկութեան պատճառ դառնում, եւ առաքինութիւնը, լքուածութիւնից առաջնորդուելով, իրեն կցորդուածներին խոնարհութիւն է սովորեցնում, եւ չարիքների միջով անցածն ատում է չարութիւնը: Փորձութիւնը լքուածութեան թոռն է, իսկ լքուածութիւնը՝ կրքերի դուստրը:

29. Սովորողները միշտ քեզ կ'ասեն. «Բարեկա՛մ, բարձրացի՛ր» (Ղուկ. ԺԴ 10), սակայն դժուար է բարձրացածներին դարձեալ ասել, որ ցած իջնեն:

30. Արծաթասէր է ոչ թէ նա, ով ունեցուածք ունի, այլ նա, ով ցանկանում ու փափագում է ձեռք բերել այն. որովհետեւ ով բաշխելիս առատաձեռն է, նրան «հոգեւոր քսակ» են կոչում:

31. Մերերին խրատիր յաղթել բարկութեանը, իսկ երիտասարդներին պատուիրիր յաղթել իրենց որովայնին. առաջիններին շնչաւոր [դեւերն] են տիրում, երկրորդներին՝ մարմնաւոր դեւերը:

32. Փակի՛ր այն բերանները, որոնք չարախօսում են քո ականջին, եւ մի՛ զարմացիր, որ շատերն են քեզ բամբասում, քանզի սա դեւերի փորձութիւն է: Հայեցողի միտքն ազատ պիտի լինի ատելութիւնից եւ ոխակալութիւնից՝ նրանց հանդէպ, ովքեր չեն ախորժում նրան, որովհետեւ թերեւս չկարողացան հասու դառնալ այն բժշկութեանը, որով Տիրոջ համար բժշկում էր մարդկանց:

166 Խօսքն Աստծուց լքուած լինելու վիճակի մասին է:

33. Երբ հայեցողը բժշկութիւն է մատուցում, արդարեւ ոչ միայն ընկերոջն է բժշկում, այլեւ սեփական անձը:

34. Ամէն ինչ խառն մատուցելով մի՛ բացատրիր, այլ միայն այն, ինչ անհրաժեշտ է տուեալ իրավիճակի համար: Որովհետեւ եթէ այսպէս չվարուես, շատ ժամանակ կը վատնես՝ դեգերելով Յովնանի նաւի վրայ եւ մէկ առ մէկ պատմելով [նաւի] մասերի մասին, որով բոլոր լսողների մօտ, որ նստած են քո շուրջ, առաւել ծիծաղ կ'առաջացնես, քան օգուտ [կը տաս նրանց], ովքեր ինչ-որ մասի վերաբերեալ կը յիշեցնեն [քեզ] եւ մոռացածդ ծիծաղելով մէջտեղ կը բերեն:

35. Յորդորիր այն միայնակեացներին, ովքեր կը դիմեն քեզ, խօսելու սովորական բաների մասին եւ ոչ ոքի մի՛ քաջալերիր [զբաղուելու հայեցողական] առարկաների [քննութեամբ], որպէսզի [նրանցից] ոչ ոք չյօժարի այսպիսի նիւթեր [քննել]:

36. Աշխարհականներն ու երիտասարդները մոռանում են [յաւիտենական] տանջանքների մասին բարձրագոյն խօսքերը, որոնք հեշտութեամբ արհամարհանք են ծնում [նրանց մէջ], քանզի չգիտեն տգիտութեամբ պատժուած բանական հոգիների ցաւերը:

37. Եթէ Պօղոսը, որ սուրբ էր, մարմինը ճնշում ու ծառայութեան մէջ էր պահում, ապա դու ե՛ւս քո կեանքում մի՛ ծուլացիր առաքինութիւն գործելու եւ մի՛ արհամարհիր ու անարգիր անկրքութիւնը, որին քո ստուարացած մարմնով նսեմացնում ես:

38. Մի՛ հոգա կերակուրների ու հագուստի մասին, այլ յիշիր Աբեդդար Գեթացուն[167], ով շատ աղքատ լինելով՝ Տիրոջ տապանակն ընդունեց եւ փառաւորուեց անարգների կողմից[168]:

39. Հայեցողի հոգու դառն ամբաստանող է հէնց նրա խիղճը, որը չպէտք է սուտ համարել, որովհետեւ հէնց ներսից ճանաչում է նրա սրտի գաղտնիքները:

40. Զգո՛յշ եղիր, գուցէ եղած բաներից իւրաքանչիւրը ոչ թէ մէկ խօսք լինի, այլ բազում, եւ ըստ իւրաքանչիւրի չափի՝ սուրբ զօրութիւններն օգնում են դրանց [հասու դառնալ]՝ ճշմարիտ խօսքերը գրելով, բացի առաջին [խօսքից], որը վերաբերում է Քրիստոսի գիտութեանը, որից են կախուած բոլոր գիտութիւններն ու տեսակները:

167 Գրաբ. բնագրում «Տաբեթաբ Ղեւտացի»:
168 Բ Թագ. Զ 10—12

41. Ամէն նախադրոյթ իբրեւ ստորոգութիւն ունի կամ սեռը, կամ տարբերութիւնը, կամ տեսակը, կամ յատկութիւնը, կամ պատահմունքը, կամ էլ այն, ինչ կազմուած է սրանցից[169]: Սակայն անընդունելի է որեւէ բան ասել Սուրբ Երրորդութեան մասին. անճառ խորհրդին պէտք է լռութեամբ երկրպագել:

42. Հայեցողի համար փորձութիւն է մտքում սուտ կարծիք ունենալը, որը վերաբերում է [ինչ-որ բաների] լինելուն եւ չլինելուն, երբ [սրանք] իբրեւ [չեղած եւ] եղած են [ընդունւում], եւ երբ ինչ-որ բան այնպէս չի ընդունւում, ինչպէս կայ [իրականում]:

43. Հայեցողի համար վնաս է ինչ-որ [առարկայի] կամ դրա հայեցողութեանը վերաբերող սուտը՝ ծնուած ինչ-որ արատից, կամ էլ երբ առարկան քննւում է ո՛չ բարի նպատակով:

44. Արդար ու սուրբ Գրիգորից[170] սովորել ենք առաքինութիւնների եւ դրանց քննութեան չորս տեսակ՝ խոհականութիւն, քաջութիւն, արդարութեան պարկեշտութիւն եւ արդարութիւն: Խոհականութեան գործը առանց խօսքերի խոկալն է հոգեւոր ու սուրբ զօրութիւնների մասին, որովհետեւ նրանց կարելի է տեսնել միայն իմաստութեամբ: Քաջութիւնն այն է, որ համբերում են ճշմարտութեան մէջ, որքան էլ պատերազմ վրայ հասնի, եւ չեն հետապնդում չեղած բաները, այլ սերմերն ընդունում են առաջին Սերմանողից՝ վտարելով յետին սերմանողին[171]: Արդարութեան պարկեշտութեան [գործի մասին] ասաց, որ [հասկացւում է] հէնց իր անունից: Իսկ արդարութեան [գործն] այն է, որ արժանապէս են պատասխանում խօսքերից իւրաքանչիւրին: Կայ բան, որ պիտի սովորեցնեն մթին ոճով, կայ՝ որ պիտի ներկայացնեն այլաբանա-

169 Այս նախադասութիւնը գրաբարեան թարգմանութեան մէջ աղաւաղուած է. հաւանաբար թարգմանիչը, անծանօթ լինելով թարգմանուող նիւթին, այն է՝ Պորփիւրի փիլիսոփայութեանն ու համապատասխան եզրերին, չի կարողացել ճիշտ թարգմանութիւն ներկայացնել: Մենք այն թարգմանել ենք ըստ յունարէն բնագրի՝ օգտուելով նրա ռուս. եւ անգլ. թարգմանութիւններից, քանի որ, բարեբախտաբար, այս մասը մէկն է «Հայեցողի» այն հատուածներից, որոնք յունարէն պահպանուել են այս կամ այն հեղինակի գործերում եղած եւագրեան մէջբերումների տեսքով:
170 Իմա սբ Գրիգոր Աստուածաբանին:
171 Հմմտ. Մատթ. ԺԳ 25—30, ուր «յետին սերմանողը» թշնամին է՝ սատանան, իսկ առաջինը՝ Աստուած:

կան եղանակով, կայ էլ՝ որ յայտնապէս պիտի ցոյց տան՝ պարզամիտ լսողների օգտի համար:

45[172]. Գամիրքի ճշմարիտ սիւն Բարսեղն ասում է, որ մարդկանցից եղած գիտութիւնը ամրապնդւում է զգուշալից խոկմամբ ու կրթութեամբ, իսկ Աստուծոյ շնորհից եղածը՝ արդարութեամբ, անբարկութեամբ եւ ողորմութեամբ: Առաջինը կարող են նաեւ կրքերին ենթակայ անձինք էլ ընդունել, իսկ երկրորդը՝ միայն անկրքութեան հասածները, ովքեր աղօթքի ժամանակ իրենց շուրջ փայլեցնում են իրենց մտքի լոյսի ճաճանչումը:

46. Եգիպտացիների սուրբ լուսաւորիչ Աթանասն ասում է, որ Մովսէսը հրաման ստացաւ Սեղանը դնել [Վկայութեան խորանի] հիւսիսակողմում[173]: Թող հայեցողները հասկանան, թէ [դեւերից] ով է, որ փչում է իրենց վրայ, եւ բոլոր փորձութիւններին քաջաբար համբերեն ու յօժարութեամբ կերակրեն [իրենց] մօտ եկողներին:

47. Թմուիտցիների Եկեղեցու հրեշտակ Սերապիոնն ասում էր, որ հոգեւոր ըմպելիքով[174] արբած միտքը կատարելապէս մաքրւում է: Սէրը բժշկում է [հոգու] բորբոքուած ցասմնական մասը, իսկ պահեցողութիւնը ցամաքեցնում է ցանկական [մասի] չար հոսքերը:

48. Մեծ եւ գիտնական վարդապետ Դիդիմոսն[175] ասում է. «Աստուածութեան եւ դատաստանի մասին խօսքերո՛վ միշտ կրթուիր եւ սրանց վերաբերող նիւթերը յաճա՛խ յիշիր, որովհետեւ գրեթէ ամէնքը մեղանչում են սրա դէմ: Դատաստանի վերաբերեալ խօսքերը կը գտնես մարմինների եւ աշխարհների տարբերութեան մէջ, իսկ Նախախնամութեանը վերաբերողները՝ նրանում[176], ինչը մեզ վատից կամ տգիտութիւնից դէպի առաքինութիւն կամ աստուածգիտութիւն է առաջնորդում»:

172 Այս գլխից մինչեւ 48-րդ գլուխը ներառեալ՝ թարգմանութիւնը կատարելիս օգտուել ենք նաեւ Սոկրատի բերած եւագրեան հատուածներից (տես նշ. հրատ., էջ 344—345), քանի որ Եւագրի գրաբարեան բնագիրը տեղ-տեղ աղաւաղուած է եւ անհասկանալի:

173 Ել. ԻԶ 35

174 Ըստ Սոկրատի մէջբերման՝ «հոգեւոր գիտութեամբ»:

175 Դիդիմոս Կոյրը Դ դարի ալեքսանդրեան հռչակաւոր հայրերից է, ով նոյնպէս իբրեւ որոգինէսական հալածուել է կեանքի վերջում եւ մերժուել յետագայ դարերում:

176 Այսինքն՝ այնպիսի վարքի մէջ:

49. Որովհետեւ գործնական կեանքի նպատակակէտը մեր միտքը մաքրելն ու ամէն բծի ու արատի դէմ այն պատրաստելն է: Բարոյական [գիտութեան նպատակը] բոլոր թաքնուած բաներում ծածկուած ճշմարտութիւնը ցոյց տալն է: Իսկ միտքը նիւթական բաներից ձերբազատելն ու դէպի Առաջինը վերադարձնելը աստուածգիտութեան զօրութեան պարգեւն է:

50. Նայիր Առաջնատիպի կերպարանքին եւ այդ օրինակի միջոցո՛վ պատկերացրու կերպարանքները՝ [նրանց] կատարելապէս չահելու համար ձեռքն ընկած ոչինչ բաց չթողնելով[177]:

ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐԻՆ[178]

Քրիստոսի նահատակ ծառաներին պատուենք ամէնքս եւ երրորդութիւնը փառաւորենք:

Թափուած իւղ է սրբերի յիշատակը, նրանց յիշատակը [ձգւում է] սերնդէսերունդ:

Որ իշխանութիւններին ու պետութիւններին վանեցիք, բարեխօսէ՛ք մեզ համար:

Քո փառքով, Քրիստոս, սրբերդ կը պարծենան եւ կը ցնծան Քեզնով, Փրկի՛չ մեր:

Քո տէրութեան բոլոր վայրերում, Քրիստոս, սրբեր տնկեցիր, նրանց աղօթքներով ողորմի՛ր մեզ:

Առաջին մարտիրոս Ստեփանոսին օրհնենք, քանզի Քրիստոսը պսակեց նրան:

Քո վկաները, Տէր, իրենց մարմինը [մահուան] մատնեցին, որպէսզի արքայութեանդ ժառանգորդ լինենք:

Քո պատուիրանները, Տէր, սիրեցի, սրբերիդ հե՛տ կարգիր իմ հոգին:

Մանկութիւնիցս ընթացայ Քո ճանապարհներով, յիշի՛ր ինձ, Տէր, Քո արքայութեան մէջ:

177 Խօսքը հաւանաբար այն մասին է, որ աստուածային պատկերով ստեղծուած մարդկանց, որքան էլ որ նրանցում այդ պատկերն աղաւաղուած լինի, պէտք է նայել՝ յիշելով եւ նրանցում ամէն կերպ վերականգնելով նրանց առաջին աստուածային պատկերը:

178 Այս գործի յունարէն բնագիրը չի պահպանուել:

Մահկանացու մարմինը երկրում թողեցին, եւ երկնքում նրանց հոգիներն Աստուած ընդունեց:

Իր հրեշտակներին պատուիրել է քեզ համար, եւ տանջանքը չի՛ մերձենայ քո յարկերին:

Երկրից երկինք ընդունեցիր ինձ, Քրիստոս, համարձակութի՛ւն տուր ինձ Քո սրբերի հետ:

Լուսոյ հրեշտակներ են շրջում քո առաջ եւ քեզ կը մատուցեն երկնքի արքայ Քրիստոսին:

Հոգիս Քո ձեռքում է, Տէ՛ր, եւ օրէնքդ ես չմոռացայ:

Քաղցր քնով ննջեցիր դու, Քրիստոսի՛ ծառայ, ընթացքդ աւարտին հասցրիր:

Ցանկացայ, Քրիստոս, արքայութիւնդ տեսնել. արժանացրո՛ւ ինձ, Տէր, Քո արքայութեանը:

Հաւատով ծառայեցի Քեզ եւ փոխադրուեցի Քրիստոսի մօտ, Ով ընտրեց ինձ:

Համարձակութի՛ւն ունես, բարեխօսի՛ր մեզ համար:

Որ ընդունում ես հեզերին, Տէր, մեծ է զօրութիւնդ, Տէ՛ր:

Կը բնակուեմ Քո յարկերում, Տէր, յաւիտեան:

ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՒԱՏԱՄՔԻ ՄԱՍԻՆ[179]

Հաւատում ենք մէկ Աստուծոյ՝ երկնքի եւ երկրի, տեսանելի եւ անտեսանելի արարածների ամենակալ Արարչին: Եւ մէկ Տէր Յիսուս Քրիստոսին՝ Աստուծոյ Որդուն՝ միածին, այսինքն՝ Հօր էութիւնից, որով ամէն ինչ ստեղծուեց: Աստուած է Աստծուց, Լոյս, որն այն Լոյսից ծնուել է եւ ո՛չ արարուել: Հօրը համագոյ, Ով մարդկանց համար իջաւ եւ մարմին հագաւ, չարչարուեց, երրորդ օրը յարութիւն առաւ, երկինք ելաւ եւ յաջորդ անգամ գալու է՝ դատելու մեռեալներին ու ողջերին: [Հաւատում ենք] նաեւ կենդանի Սուրբ Հոգուն:

Իսկ ովքեր ասում են, թէ կար ժամանակ, երբ [Որդին] չկար, նախքան ծնուելը չկար եւ անգոյութիւնից գոյութեան եկաւ՝ մի ուրիշ էութիւնից կամ գոյութիւնից, կամ փոփոխական է, կամ եղծական, այդպիսիներին նզովում ենք:

179 Նոյնանուն գրուածք պահպանուել է նաեւ ասորերէն թարգմանութեամբ:

[Նզովում ենք] նաեւ Սաբելիոսի հերետիկոսութիւնը, որն ասում է, թէ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին նոյնն են: Իսկ մենք Հօրը Հայր ենք ճանաչում, Որդուն՝ Որդի եւ Սուրբ Հոգուն՝ Հոգի՝ իբրեւ մէկ թագաւորութիւն, մէկ տէրութիւն, մէկ ընութիւն, մէկ աստուածութիւն:

Նաեւ նզովում ենք Փոտինոսի հաւատքը, որն ասում է, թէ եթէ Յիսուսը Մարիամից է ծնուել, ապա ինչ-որ ժամանակ գոյութիւն չունէր, ուստի Որդին չէր: Քանզի մշտնջենական է Հայրը, մշտնջենական է Որդին, եւ մշտնջենական է աստուածային Հոգին:

Սուրբ Հոգին կատարեալ է, բարեխօս ու անստեղծ եւ [միշտ] կար: Նա խօսեց Օրէնքում, մարգարէների եւ առաքեալների [գրուածքներում] եւ իջաւ Յորդանան գետ:

Իսկ Որդու՝ մարդկութեանը միաւորուած աստուածութեան մասին այսպէս ենք հաւատում: Սուրբ Հոգով հագաւ կատարեալ մարդուն Աստուածածին Մարիամից իբրեւ ճշմարի՛տ մարմին ու հոգի[180] եւ ո՛չ թէ երեւութական: Որովհետեւ այդպէս վախճանին հասնելով՝ եկաւ փրկելու մարդուն եւ ճշմարտապէս չարչարուեց, թաղուեց եւ երրորդ օրը յարութիւն առաւ, երկինք բարձրացաւ, Հօր աջ կողմում նստեց եւ գալու է դատելու մեռեալներին եւ ողջերին:

Նաեւ նզովում ենք Արիոսին եւ նրա ամբողջ հերետիկոսութիւնը, որն ասում է, թէ Աստուծոյ Որդին արարած է:

Իսկ հաւատքի կենսագործման համար հաւատում ենք ապաշխարութեամբ մէկ մկրտութեան, մէկ եկեղեցու, մարմնի յարութեանը, երկնքի արքայութեանը եւ յաւիտենական դատաստաններին:

Ինչ վերաբերում է Աստծուն, խոստովանում ենք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն իբրեւ Սուրբ Երրորդութիւն եւ մէկ աստուածութիւն: Քանզի Աստուած Հոգի է, սակայն Իր կամքով երեւաց եւ խօսեց Իր արդարների հետ՝ Ադամի, Նոյի, Աբրահամի, Իսահակի, Յակոբի, Մովսէսի, Յեսուի, Դաւթի, Սամուէլի, Եղիայի, Եսայու եւ միւս բոլոր սրբերի:

Իսկ ինչ [վերաբերում է նրան], որ Գիրքն ասում է Տիրոջ կամ «աչք», կամ «ականջներ», կամ այսպիսի [այլ] բան, ապա [կարող ենք միայն ասել], որ մենք հաւատում ենք այն ճշմարտութեանը, որ [Տէրն] անհաս ու անճառելի է եւ ամէն մարդու ստեղծել է [Իր՝] Աստուծոյ պատկերի համաձայն: Սակայն թէ ինչն ինչ է եւ ինչպէս, սա Տիրոջը թողնենք իմանալ, եւ [ներկայացնենք] հաւատացեալների, յատկապէս

180 Գրաբար բնագրում՝ չունչ (յունարէն «փսիխէ»-ի թարգմանութիւնը):

կրօնաւորների վարքի կարգը: Սա՝ այն պատճառով, որ [թէեւ] շնորհով ենք փրկուած, բայց շնորհը նաեւ [մարդու] անձնիշխանութիւնն է պահանջում՝ գործակից լինելու բարուն, որ [մարդը] նախանձախնդիր լինի եւ գործի բարին: Ուստի այս ճշմարիտ հաւատքին մարդն իրեն արժանի պիտի դարձնի:

Նախ՝ [Տէրն] ասում է. «Պիտի սիրես քո Տէր Աստծուն քո ամբողջ սրտով... եւ ընկերոջդ՝ քո անձի պէս» [Ղուկ. Ժ 27]: Մի՛ սպանիր, մի՛ շնացիր, արուամոլ մի՛ եղիր, հեռու մնա ամէն խեղդուած կենդանու արիւնից[181] եւ պոռնկութիւնից: Զգո՛յշ եղիր, գուցէ մէկը հեռացնի քեզ այս հաւատից, եւ օտարացուած լինես Աստծուց:

Արդ՝ պարտ եւ պատշաճ է, որ կրօնաւորներն ու հաւատացեալները միշտ հեռու մնան կանանցից՝ անգամ խօսքով ու տեսակցութեամբ, որպէսզի չպղծեն իրենց հոգին:

Պիտի չլինեն երկմիտ, երկբան, երկխորհուրդ, ստախօս, չարախօս, [աշխարհային ունայն բաներով] զբաղուած, հայհոյող, յանդիմանող, բամբասաէր, խեղկատակ[182], վաւաշոտ, անամօթ, զազրախօս, թշնամանող:

Պիտի չլինեն երդուող, այլ միայն այսքանն ասեն. «Դո՛ւ իմացիր», կամ՝ «Ճիշտ եմ ասում», կամ՝ «Ջեմ ստում», կամ՝ «[Աստծս] ճիշտ է»: Իսկ [Աստուծոյ] սուրբ ու ահեղ անունը երդման վրայ մի՛ տուր, ինչպէս Փրկիչն էլ սովորեցրեց[183], քանզի այս ամէնը սպանում է:

Նաեւ պէտք չէ որեւէ մէկի առաջ մերկանալ, բացի տագնապալի իրավիճակից՝ հիւանդ ժամանակ, բաղնիքում:

Եւ մարդուն չկոչել «յիմար» կամ «խելագար»[184]:

Հեթանոսների տարեկան դիւապաշտ տօներին չմասնակցել: Ցատուկ շաբաթներ չպահել[185]: Կախարդների եւ հարցուկների[186] մօտ չգնալ, հմայական միջոցների չդիմել:

Զգո՛յշ եղիր ամէն պղծութիւնից ու աղտեղութիւնից:

Մի՛ պահիր տանտիկին:

181 Գործ. ԺԵ 29, ԻԱ 25
182 Գրաբար բնագրում՝ ցնորեալ:
183 Մատթ. Ե 34—37
184 Մատթ. Ե 22
185 Հմմտ. Գաղ. Դ 10:
186 Հարցուկները հարցուկ ոգով բռնուած մարդիկ են, ովքեր այդ ոգու միջոցով գուշակութիւններ են անում:

Ոչ մէկի հանդէպ մտքումդ ոխակալ մի՛ եղիր:

Մի՛ հաղորդակցուիր հերետիկոսների ու հեթանոսների հետ:

Մի՛ խախտիր չորեքշաբթի կամ ուրբաթ օրուայ պահքը, բացի պենտեկոստական օրերից[187] եւ Սբ Մնդեան [տօնին յաջորդող ուտիքից]: Սբ Զատկի քառասնորդական պահքն ու [Աւագ] շաբաթը ճշմարտապէս եւ ճշտութեա՛մբ պահիր: Եղբօր այցելութեան ժամանակ պահքդ լուծիր[188], բացի ընտրուած ու սահմանուած պահքերից: Շաբաթ եւ կիրակի օրերը պահք մի՛ պահիր, բացի Սբ Զատկի շաբաթ եւ կիրակի օրերից: Պահքդ թող լինի մինչեւ ինն երորդ ժամը[189]: Իսկ եթէ այս [ժամից] էլ ես անցնում, լաւ ես անում, բայց պահքդ պահելիս զգո՛յշ եղիր, չլինի թէ հպարտանաս:

Կիրակի օրը մի՛ ծնրադրիր, ոչ էլ պենտեկոստական օրերին:

Տօն օրերի [պաշտամունքային] ժողովներին մասնակցելու մէջ հեղգ մի՛ գտնուիր եւ քեզ արժանի՛ դարձրու [սուրբ] Խորհրդին:

Նոյնիսկ եթէ եպիսկոպոս լինես, եղբայրների ոտքերը լուա՛:

Մի՛ եղիր արծաթասէր, ագահ, վաճառական, տոկոսով գումար մի՛ հաւաքիր, քանզի այսպիսիներն Աստծուն հաճելի լինել չեն կարող:

Արժէքնից պակաս գնով ոչինչ մի՛ առ:

Սիրի՛ր ամէնքին եւ ամէնքի հետ խաղաղութի՛ւն պահպանիր:

Տալիս առատաձե՛ռն եղիր, իսկ փոխ տալիս տոկոս մի՛ վերցրու:

Խոնարհ եւ լո՛ւռ եղիր:

187 Այսինքն՝ Սբ Զատկից մինչեւ Հոգեգալուստ ընկած շրջանը՝ Ցինունքը: Մեր եկեղեցում չորեքշաբթի եւ ուրբաթ օրերի պահքը սկսւում է Համբարձման տօնից յետոյ՝ շուրջ մէկ շաբաթ աւելի շուտ, քան Հոգեգալստեան տօնը, սակայն սա հին աւանդութիւն չէ, քանի որ «Հայոց կանոնագրքում» եւս վկայւում է, որ «Զատկից մինչեւ Պենտեկոստէ բոլոր օրերը որպէս կիրակի են» (Կանոնք Յովհ. Մանդակունւոյ, Ե), «Եթէ մէկը ճգնութեան նպատակով պահք պահի կիրակի օրը եւ պենտեկոստական օրերին, նզովեալ թող լինի» (Կանոնք Բ Նիկիականք, ԿԸ): Տես Վ. Յակոբեան, Կանոնագիրք Հայոց, Ա հտ., Ե., 1964, էջ 497, Բ հտ., Ե., 1971, էջ 84: (Ղպտի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներում դեռեւս պահպանւում է այս հին աւանդութիւնը, որով չորեքշաբթի եւ ուրբաթ օրերի պահքը սկսւում է Հոգեգալուստից յետոյ):
188 Խօսքը կամաւոր պահքի մասին է:
189 Սա նշանակում է մինչեւ ժամը տասնհինգը (այսօրուայ ժամահաշուարկով) ոչինչ չուտել, այսինքն՝ կերակրից «պահուել», եւ ապա ճաշակել պահքի կերակուրը:

Մարդուն ծեծ մի՛ տուր, բացի վատ բնաւորութեան տէր երեխայից՝ խրատելու նպատակով, եւ սա էլ՝ չափաւորապէս:

Ոչ մի մարդու մի՛ արհամարհիր եւ ոչ ոքի [միայն] աչքի տեսածով մի՛ մերժիր:

Զգո՛յշ եղիր հագուստիդ հանդէպ. եթէ սգաւոր ես եւ կամենում ես մազեղէն ու կաշուեղէն հագնել, ներսի՛ց հագիր, իսկ կաշուէ հագուստով մի՛ շրջիր, որպէսզի չփառաւորուես:

Գլխիդ մազերն ամենեւին մի՛ հաւաքիր, մի՛ ածիլուիր, [մօրուքիդ] ծայրերը մի՛ կտրիր:

Պահքդ մի՛ ցուցադրիր. մսից հրաժարուիր ոչ թէ իբրեւ պղծութիւնից, այլ մարմինդ ճնշելու նպատակով եւ կերակրին քեզ անարժան համարելով. քանզի ամէն ոք, ով կերակուրներից [հրաժարուելով] նեղութիւն է կրում, օգնութիւն է մատուցում մարմնին:

Գինի ամենեւի՛ն մի ըմպիր, բայց եթէ [փոքր-ինչ] ճաշակես, օրհնի՛ր Արարչին, իսկ եթէ հիւանդ ես, չափաւո՛ր քանակութեամբ [ըմպիր]՝ ըստ հարկաւորութեան, այնքան, որքան պէտք է:

Եթէ հնարաւոր է, միայն բակո՛ւն շրջիր, իսկ եթէ ոչ՝ երկու զոյգ [կօշիկ] մի՛ ունեցիր ու քեզ մի՛ զարդարիր. որքան կայ, այդքանո՛վ բաւարարուիր:

Երբ օտար տեղ գնաս, [այնտեղ գտնուող] եղբայրների կարգո՛վ շարժուիր, իսկ երբ վերադառնաս, վերստին քո նախկին կարգի՛ն անցիր:

Մերկ գետնի՛ն քնիր:

Եթէ առողջ ես, ջանք թափիր աշխատելու, որպէսզի չսովորես հացդ գատարկապորտութեամբ ուտել, այլ մանաւանդ՝ քո աշխատանքի [արդիւնքից] նաեւ ուրիշներին բաժին հանես:

Եթէ հայրական հող ունես, մշակի՛ր այն եւ երախայրիքը մատուցիր նախ քահանաներին, ապա այրիներին ու որբերին եւ յետո՛յ քեզ: Բայց եթէ վանքում ես բնակւում, անարգում ես վանքը՝ [միաժամանակ] հողատէր եւ վանական լինելով: Եթէ վանքում ես բնակւում, անգործ մի՛ մնա՝ ուրիշներից կերակրուելով, այլ ի՛նքդ կերակրիր քեզ:

Եւ մարդասէր Քրիստոսին փա՛ռք յաւիտեանս: Ամէն:

Գրաբարից թարգմանութիւնն
ու ծանօթագրութիւնները՝
Սեդա Ստամբոլցեանի

Յակոբ Քէոսէեան

ՍԱՄՈՒԷԼ ԿԱՄՐՋԱՁՈՐԵՑՈՒ ԴԱՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ՀԱՅՈՑ ՈՍԿԻՁԵՌՆ ԻՇԽԱՆԻՆ

Ժ—ԺԱ դդ. հայ եկեղեցական մատենագրութեան ոչ անյայտ դէմքերից մէկն է Սամուէլ Կամրջաձորեցի վարդապետը: Լայն հմտութեամբ, ներհուն իմացականութեամբ աչքի ընկնող այս հայրը կարեւոր դեր է կատարել ժամանակի հայ-բիւզանդական եկեղեցական յարաբերութիւններում: Այսպէս՝ Սամուէլ Կամրջաձորեցուն լուրջ դեր էր վիճակուած իրականացնելու 1007 թ. Ծռազատկի կապակցութեամբ ծայր առած տոմարական վէճերի մէջ: Երբ յոյն կղերականները չեն բաւարարւում այս խնդրի առիթով Յովսէփ Ընծայեցու եւ Յովհաննէս Կոզեռնի՝ Վասիլ կայսերը յղած բացատրական թղթով՝ գրուած «ամենայն խորին քննութեամբ», յորդորում են կայսերը, եւ նա «մեծաւ խնդրանօք ետ բերել առ ինքն զհայոց վարդապետն զՍամուէլ, այր կորովի եւ յաղթող, եւ կացուցանէր զնա յատենի խօսել ընդ վարդապետացն Յունաց: Իսկ իմաստունքն Յունաց շարժեցին ի վերայ Սամուէլի զամենայն գրեանս տանն Յունաց, եւ ոչ կարացին շարժել զնա ի ճշմարտութեանց անտի: Եւ սկիզբն արար Սամուէլ ի յառաջին աւուրն արարչութենէն, եւ գայր հասանէր մինչեւ ցվերջին պատկեր աւուրն եւ զամենայն պատճառ պատճենից սուրբ արանց յառաջին իմաստնոցն հաստատուն կացուցանէր: Եւ հաճոյ լինէր թագաւորին ամենայն բանք նորա, եւ ասէին իմաստունքն Յունաց ընդ թագաւորն. «Ո՛վ տէր արքայ, հրամայեա եւ ած այսր զմեծ վարդապետն երբայեցւոց, որ բնակեալ է ի կղզւոջն Կիպրացւոց, այր կորովի եւ հմուտ տումարի եւ ամենայն արուեստից ի մանկութենէ իւրմէ»: Եւ յուղարկեալ թագաւորն ի Կիպրոս եւ ածէր զՄուսի վարդապետն երբայեցւոց: Եւ նա կացեալ յատենի առաջի թագաւորին Վասլի, այր ճարտարաբան եւ հզաւր, եւ սկսանէր խաւսել զարուեստս տումարին եւ յամաւթ եւ սուտ արար զամենայն իմաստունս տանն Յունաց եւ գովէր զբանսն Սամուէլի Հայոց վարդապետին: Իսկ թագաւորն յոյժ տրտմեալ ի վերայ վարդապետացն Յու-

նաց եւ զքաղու

համոզումների հակասական ու սխալական լինելը: Այդ հարցումները հեղինակը յանձնարարում է Ոսկիձեռն իշխանին, որպէսզի վերջինս դրանք հասցէագրի հակառակորդին: Ահաւասիկ առաւել ներկայանալի հարցադրումներից մէկը, որը վերաբերում է Քրիստոսի բնութեանը կամ բնութիւններին տրուելիք երկրպագութեանը:

«Դարձեալ հարցից ցքեզ, որ Բ(2) բնութիւն սահմանես ի Քրիստոս, երկու բնութիւնքն երկրպագելի՞ք են, թէ՞ ոչ. զի եթէ երկուցն երկրպագես, հանդիպի քեզ Երրորդութիւն՝ չորրորդութեան լինել երկրպագող, իսկ եթէ միում բնութեան յատուկ, ապա հանդիպի մինն արհամարհելի լինել ի քէն: Դարձեալ հարցանեմ. զԲ(2) բնութիւնդ ասելով Քրիստոսի՝ ասա՛ ինձ՝ ո՞ր բնութեամբ մեռաւ վասն փրկութեան աշխարհի՝ մարդո՞յն, եթէ Աստուծոյն: Եթէ զԱստուծոյն ասես, ընդ աստուածասպանսն դաւանիս, իսկ եթէ զմարդոյն՝ զիա՞րդ մարդովն փրկեցան արարածք՝ յասել մարգարէին թէ՝ «Սուտ է փրկութիւն մարդոյ»:

Դաւանաբանական այս աշխատութեան մէջ դրսեւորւում են Սամուէլ Կամրջաձորեցու աստուածաբանական հմտութիւնն ու անտիկ փիլիսոփայութեան իմացութիւնը, ինչն օգնում է նրան թափանցել երեւոյթի խորքը, դաւանական ճշմարտութիւնները հաստատել իմաստասիրական փաստարկներով: Այդ է ցոյց տալիս հետեւեալ վերլուծութիւնը: Մատնանշելու համար երկաբնակութեան դաւանական անկատարութիւնն ու սխալականութիւնը՝ հեղինակն արձանագրում է հիմքում արատաւոր այն սկզբունքը, որով նրանք բաժանում են բնութիւնները: Վկայակոչելով Արիստոտելի այն միտքը, թէ գոյութիւնը նախորդում եւ պայմանաւորում է բնութիւնը՝ Սամուէլ վարդապետն իր մէջ պատասխան ենթադրող տրամաբանական հարցումով դիմում է երկաբնակ հակառակորդին. եթէ դու բաժանում ես «բնութիւնները», ապա ինչո՞ւ չես բաժանում նաեւ նրանց համապատասխանող «գոյութիւնները»: Այս յարաբերութեան մէջ «գոյութիւնը» ներկայացնում է կերպ ու տեսակ ունեցող իրողութիւնները, իսկ բնութիւնը՝ պարզը, անկերպը եւ անտեսանելին: Այս հիմամբ «գոյութիւնը» դրսեւորումն է «բնութեան»: Եթէ նրանց մէջ բացակայեն համապատասխանութիւնն ու ներդաշնակութիւնը, ապա կը բացառուի եւ որեւէ յարաբերակցութիւն, ինչպիսին, ասենք, արալէզների եւ եղջերուաքաղների պարագան է, որոնք թէպէտ անուանւում են, սակայն անգոյ են: Ճիշտ այդպէս էլ Քրիստոսի բնութիւններից իւրաքանչիւրն ունի իրեն համապատասխան գոյութիւն: Մինչդեռ երկաբնակները բնութիւնները բաժանելու

նպատակով Տիրոջ չարչարանքները վերապահում են բացառապէս Նրա մարմնին: Այստեղից կարող է օրինական հարց առաջանալ. «Արդ՝ Աստուծոյ բնութիւն առանց գոյութեան, ըստ քեզ, յորո՞ւմ տեղւոջ պարածածկեալ է, որ ոչ երեւի, եւ եթէ մտաւք ասես իմանալ ի ներքս ի մարդկային անձինն, որ պրկեալ կայր ի վերայ խաչին, ապա առանց գոյութեան զիա՞րդ իցէ էական գոյականութիւն եւ Բանն Հաւր, որ կատարեալ էր անձամբ եւ դիմաւք Հաւր հաւասար եւ համագոյ Սուրբ Հոգւոյն: Զի եթէ առանց գոյութեան ասես զԱստուածութեան բնութիւն, Պաւղոսի Սամուստացւոյ հայհոյութեան լինիս կցորդակից, քանզի նա առանց անձին դանդաչեալ ասէր զԱստուած Բանն նախ քան զմարմնանալն, զոր եւ ի Մարիամայ ասէր լինել սկիզբն աստուածային անձնաւորութեան»: Այսպիսով՝ բացայայտւում է երկաբնակների դաւանած սկզբունքների խոցելիութիւնը եւ անուղղակիօրէն հաստատւում բնութիւնների առանձնաւորական ինքնութիւնը (գոյութիւնը) Քրիստոսի աստուածմարդկային միաւորեալ բնութեան անձի եւ դէմքի մէջ:

Բնագիրը հրապարակւում է ըստ յայտնի միակ ընդօրինակութեան՝ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց մատենադարանի թիւ 1303 ձեռագրի[6], որը ժողովածոյ է. վայր՝ Արմէն անապատ (1297թ.), Խորին անապատ (1301թ.), Սբ Թորոսի անապատ (1307թ.): Գրիչ՝ Թումաս վանական քհն.: Էջք՝ Բ + 566: Պրակք՝ Ա—Ո: Գիր՝ բոլորգիր: Գրութիւն՝ միասիւն: Բնագիր՝ էջ 367—387[7]:

Բնագրի զեղչուած «յ»-երը վերականգնել ենք առանց համապատասխան նշման. օրինակ՝ տարրանա - տարրանայ, դուզնաքեա - դուզնաքեայ եւն:

6 Ձեռագրի համապատասխան թերթերի լուսանկարը ստացել եմ օժանդակութեամբ Երուսաղէմի հայոց պատրիարքարանի, ինչի համար յայտնում եմ խորին շնորհակալութիւն:

7 Նկարագրութիւնն ըստ Նորայր եպս. Պողարեանի, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Դ, Երուսաղէմ, 1969, էջ 531—537:

Պատասխանի մեծի եւ փառաւոր իշխանին, որոյ մականուն Ոսկիձեռն կոչի, յաղագս Հարցման ընդ Սամուէլի վարդապետին, եթէ որպէս կարասցուք պատասխանի առնել անաւրէն Հերձուածողաց երկաբնակացն, որք Բ(2) բնութիւնս եւ Բ(2) կիրս եւ Բ(2) ներգործութիւնս ասեն ի վերայ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, եւ ոչ երբէք թոյլ տան մեզ, այլ Հանապազ խոցոտեն զմեզ՝ նետիւք ստայաւդ պարծաբանութեամբն[8] իւրեանց Հարցանելով, թէ ընդէ՞ր ոչ ընդունիք զդաւանութիւն խոստովանութեան մեծ ժողովոյն Քաղկեդոնի, որ քարոզի յեկեղեցիս ամենայն ուղղափառաց:

Զառն վսեմականի եւ զպատուական իշխանի, զխոհեմական հմտաւորի եւ զխորհրդական հանճարեղի եւ զաստուածահաճոյ հաւատս դաւանողի, զարդարութիւն եւ զսրբութիւն սիրողի եւ յանաւրէն գործոց հրաժարողի, եւ ի տիս մանգութեան ապաշխարողի, զմեծահարկի եւ զհզաւր իշխանի, զեղբաւր մերոյ// սիրելւոյ զհարցուածս ընկալայ, որ յաղագս երկաբնակացն էիք հարցեալ կիսակրաւն[9] քրիստոնէիցն, որք զճշմարտութիւն անիրաւութեամբ ունին՝ ըստ առաքելոյ բանին. «Քանզի տգէտ են Աստուծոյ արդարութեան եւ զիւրեանցն խնդրեն կացուցանել»[10], որ պերճաբանութեամբ սնոտի եւ տգիտութեամբ բռնազբաւսութեամբ փքացեալ եւ փքուն նետիւք հակառակին ընդդէմ ճշմարտութեան, որ եւ արդարեւ «նետք տղայոց են վէրք նոցա»[11], եւ «սուսերք նոցա մտցեն ի սիրտս նոցա»[12], զի ընդդէմ խթանի աքացեալ են[13]:

367

Արդ հարց ընդ երկաբնակսն, որ Բ(2) բնութիւն ասեն Քրիստոսի, եթէ յԲ(2) բնութիւնք զո՞ր խոստովանիք ի Քրիստոս: Երկուքեանն երկրպագելիք են, եթէ ///[14] [երկր]պագելիք գտանին նոք[ա] երկրպագող Բ(2) բնութեան այն, որով լինի երրորդութիւն չորրորդութիւն:

8 Զիք ՆԲՀ:
9 Զիք ՆԲՀ:
10 Հռոմ. Ժ 3
11 Սաղմ. ԿԳ 9
12 Սաղմ. ԼԶ 15
13 Հմմտ. Գործք ԻԶ 14:
14 Ստորին տողը նորոգման ժամանակ թղթի չերտով սոսնձուած, ծածկուած:

Ապա եթէ ասէ՝ մինն երկրպագելի է եւ միւսն՝ ոչ, գտանի ինքն յաղթեալ յինքենէ, զի զբնութիւնքն, զոր խոստովանի ի Քրիստոս, ապա զմինն պատուէ եւ զմիւսն արհամարհեալ անարգէ:

Դարձեալ հարց ցնոսա, թէ ո՞ր ի բնութեանցն մեռաւ վասն մեր՝ Աստուծո՞յ, թէ՞ մարդոյն: Եթէ ասեն՝ Աստուծոյն, ասասցես ցնոսա, թէ ո՞րպէս հնար էր Աստուծոյ մերկ մեռանել: Ապա եթէ ասիցեն, եթէ մարդոյն, ասասցես՝ եթէ ըստ քո բանիդ, ապա մարդոյ արեամբ փրկեցար եւ ո՛չ Աստուծոյ, եւ եթէ՝ «Սուտ է փրկութիւն մարդոյ»[15]:

Դարձեալ հարց ցնոսա, եթէ որո՞յ բնութեան՝ ///[16]// մարդո՞յն: Եթէ ասիցեն՝ Աստուծոյն, ասասցես, եթէ զայս եւ յիւրեանց աշխարհին կարող էին առնել: Ապա եթէ ասիցեն, եթէ՝ մարդոյն, ասասցես, թէ եւ այս կարի մեղադրելի է եւ ոչ գովելի, որպէս ասեն զնոցանէ Գիրք, զի զայնչափ աշխարհս հոսին անցին եւ եկին յերկրպագութիւն լոկոյ մարդոյ միայն եւ ոչ Աստուծոյ: Արդ՝ ըստ այսմ իմաստիցս Բ(2) բնութեանցն բաժանումն, ըստ ձեզ, անկատար մնաց ի վերայ Քրիստոսի, զի որով բաժանմանցն հոգ տարայք եւ պատշաճ թուեցաւ բաժանել զՔրիստոսի զանճառ եւ զանքակ միաւորութիւն, զի մի՛ չփոթումն ինչ լինիցի ի Քրիստոսի տնաւրէնութեան, ապա կիսամասնեայ մի՛ խառներ զբաժանումն, որ ոչ մնան նշմարանք ինչ այլայլ ի Քրիստոս: Վասն զի զերկուսեանն ա//սել բնութիւնս, ըստ բաժանման Բանին ի մի բնութիւն, մանաւանդ եթէ գոյացութիւն ի բաց լինի բարձեալ, քանզի Գ(3) են բնութիւն՝ Աստուածն Բանն եւ հոգին եւ մարմինն: Եւ զայս յայտնի ցուցին կիրք. քանզի կիրք եռակի ասին ի Քրիստոս: Եթէ այսպէս՝ եւ բնութիւնք: Եւ զի յայտնապէս ծանուցից քեզ. հոգւոյն՝ հոգալն, տրտմելն, երկնչելն, մարմնոյն՝ քաղցնուլն եւ ծարաւելն, վաստակիլն, իսկ Աստուածութեան՝ հրաշափառապէս ի վերայ ծովուն գնալն, սաստելն հողմոյն, ապաքինելն զցաւս հիւանդացն, զմեռեալսն յարուցանելն, եւ որ ինչ այսպիսիք տեսանես: Զի ահա Բ(2) ասել զբնութիւնքն Քրիստոսի՝ զմինն բառնաս ի միջոյ յերիցն բնութեանց: Զի եթէ զհոգին՝ Ապաւղինարի լինիս հանգու//նակից, եթէ զմարմին՝ Եւտիքի դիւաբերանի եւ խելացնորի, որ զմարմինն ոչ ճշմարտութեամբ, այլ նմանութեամբ ասէր, ապա եթէ զԱստուածութիւն՝ հրէիցն լինիս դասակից եւ մարդադաւան ըստ Նեստորի եւ նորին նմանակցացն:

368

369

370

15 Սաղմ. ՃԷ 13
16 Տես ծնթ. 14:

Դարձեալ հարցից ցքեզ, որ Բ(2) բնութիւն սահմանես ի Քրիստոս. երկու բնութիւնքն երկրպագելի՞ք են, թէ՞ ոչ. զի եթէ երկուցն երկրպագես, հանդիպի քեզ Երրորդութիւն՝ չորրորդութեան լինել երկրպագող, իսկ եթէ միում բնութեան յատուկ, ապա հանդիպի մինն արհամարհելի լինել ի քէն:

Դարձեալ հարցանեմ. զԲ(2) բնութիւնդ ասելով Քրիստոսի, ասա՛ ինձ, ո՞ր բնութեամբ մեռաւ վասն փրկութեան աշխարհի՝ մարդո՞ յն,
371 *եթէ Աստուծոյն: Եթէ// զԱստուծոյն ասես, ընդ աստուածասպանսն դաւանիս, իսկ եթէ զմարդոյն՝ զիա՞րդ մարդովն փրկեցան արարածք՝ յասել մարգարէին թէ՝ «Սուտ է փրկութիւն մարդոյ»*[17]*:*

Դարձեալ եւ այլ ինչ հարցանեմ. յո՞ր բնութիւն մկրտիս, որ Բ(2) ասես Քրիստոսի բնութիւնս՝ յաստուածայի՞ն, եթէ ի մարդկայինն: Արդ՝ եթէ յաստուածայինն ասես, ապա հակառակ գտանի քեզ սուրբ առաքեալն Պաւղոս, որ ասէ թէ՝ «Որք մի անգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս՝ ի մահ անդր նորա մկրտեցաք»[18]*, ապա զԱստուծոյ բնութիւն ընդ մահուա՞մբ արկանես: Իսկ եթէ ի մարդկայինն, ապա ի զուր եւ ի տարապարտուց մկրտիս, զի ի մարդ մկրտիս եւ ո՛չ յԱստուած, որ տայ կեանս եւ անմահութիւն:*

Եւ արդ, ասա՛ ինձ զոր հարցանեմ. որ յերկուս բնութիւնս բաժա-
372 *նես զՔրիստոս որոշմամբ // եւ բնութեանցն յերկուց առաջինն յատկութիւն ասես զանազան ի միմեանց, հանդերձ կրաւնիւք իւրաքանչիւր եւ ներգործութեամբք, եւ անձն եւ դէմ մի սահմանես երկոցունց բնութեանցն, ընդէ՞ր ապա եւ զգոյութիւն ոչ բաժանես, ո՞չ ահա ըստ Արիստոտելի քո գոյութիւն նախկի[ն] է քան զբնութիւն, եւ բնութիւն ի գոյութենէ է, եւ գոյութիւն հարկաբառնայ*[19] *զբնութիւն եւ ոչ շարաբառնի ի բնութենէ, վասն զի եւ գոյութիւն բաղկացուցանէ զբնութիւն եւ ոչ բաղկանայ ի բնութենէ: Դարձեալ եւ գոյութիւն պարունակէ զբնութիւն, զի զոր ինչ գոյութիւն է, հարկ է բնութիւն գոլ, այլ ո՛չ որպէս բնութիւն է*[20]*, նոյն եւ գոյութիւն, վասն զի բնութիւն զպարզն*
373 *ցուցանէ, զան//կերպարանն եւ զանտեսականն, իսկ գոյութիւն՝ զձեւացեալն եւ զտեսակացեալն: Նա զի եւ իմաստասիրականն եւ վարժն գծի՝*

17 *Սաղմ. ՃԷ 13*
18 *Հռոմ. Զ 3*
19 *Զիք ՆԲՀ:*
20 *Բն.՝ բնութենէ փխ. բնութիւն է*

գոյութիւն ընդ նիւթոյ ինչ ասէ եւ կամ ըստ ձեւացեալ ինչ իրի կերպարանի: Իսկ բնութիւն ոչ ունելով զգոյութիւն եւ ոչ իսկ ասի բնութիւն, քանզի անգոյ համբաւն ասի յիմանալիս եւ ի զգալիսս, որպէս արալէզն եւ եղջերուաքաղն, վասն զի անգոյք են սոքա եւ միայն անուամբ կոչին, եւ ոչ գոյիւ տեսանես, զի բաժանեալ զբնութիւնսն եւ զգոյութիւնսն անկարդ խորհուրդ է: Բայց արդ՝ զայս եւս տեսցես, զի զմարդկային զբնութիւնսն Քրիստոսի գիտացաք եւ ծանեաք ի ձեռն գոյութեան, զոր մարմնաւոր աչաւք իսկ տեսանէին եւ շաւշափէին սպասաւորք Բանին, ըստ ասելոյ առաքելական բանին, // զոր ինքն Քրիստոս 374
ասէր ցհրեայսն. «Զի՞ խնդրէք զիս սպանանել»[21]*՝ «զմարդ, որ զճշմարտութիւն ընդ ձեզ խաւսեցայ»*[22]*: Զնոյն դարձեալ եւ հրէայքն ասէին եթէ՝ «Դու մարդ ես»*[23]*: Տեսանե՞ս, թէ որպէս եւ դու թաքուցանես զգոյութիւն, զի մի՛ երկու անձինք լինիցին ըստ դիմացն եւ ըստ տեսակին: Բայց ըստ քննութեան բանի ոչ ծածկի: Բայց դու ցոյց զաստուածային աներեւոյթ բնութիւն, զոր առանց գոյութեան ասես, թէ ո՛ւր իցէ ծածկեալ: Քանզի յաղագս այնորիկ առնես բաժանումն բնութեանցն, զի զչարչարանսն մարմնոյ բնութեան միայն տաս, եւ որ չարչարեցաւ՝ մի անձն էր եւ մի դէմ մարդկային: Արդ՝ Աստուծոյ բնութիւն առանց գոյութեան, ըստ քեզ, յորո՞մ տեղւոջ պարածածկեալ է, որ ոչ երեւի,*
եւ եթէ // մտաւք ասես իմանալ ի ներքս ի մարդկային անձինն, որ պր- 375
կեալ կայր ի վերայ խաչին, ապա առանց գոյութեան զիա՞րդ իցէ էական գոյականութիւն եւ Բանն Հաւր, որ կատարեալ էր անձամբ եւ դիմաւք Հաւր հաւասար եւ համագոյ Սուրբ Հոգւոյն: Զի եթէ առանց գոյութեան ասես զԱստուածութեան բնութիւն, Պաւղոսի Սամուսատացւոյ հայհոյութեան լինիս կցորդակից, քանզի նա առանց անձին դանդաչեալ ասէր զԱստուած Բանն նախ քան զմարմնանալն, զոր եւ ի Մարիամայ ասէր լինել սկիզբն աստուածային անձնաւորութեան: Զնոյն եւ Փոտի[ն]ոս, եւ Մարկեղոս Գաղատացի, ի նոյն յանգի եւ մանիքեցւոցն, որ թուեաւք (՞) եւ կարծեաւք միայն ասեն զերեւեին (՞) Քրիս-
տոս եւ ոչ իրաւ գոյութիւն // ճշմարիտ: Ապա եթէ զայս ոչ կարէ ասել 376
պատկառելով ի Յոհանէ Որդւոյն Որոտման, որ ասէ. «Ի սկզբանէ էր

21 *Յովհ. Է 20*
22 *Յովհ. Ը 40*
23 *Յովհ. Ժ 33*

Բանն եւ Բանն էր առ Աստուած եւ Աստուած էր Բանն»[24], եւ այս զառանձնաւորութիւն ցուցանէ, նա զի էական Բանին Հաւր գոյական զգոյութիւն ոչ կարէ ժխտել եւ զլանալ, որով ամենայն գոյք նովաւ գոյացան, ի հարկէ ապա ընդ երկուց գոյութեանցն, որով յայտնի եղեն Բ(2) բնութիւնքն քո, զոր որոշմամբ սահմանեցեր ի վերայ Քրիստոսի քո, Բ(2) անձինք լինին եւ Բ(2) դէմք: Բայց ապա ըստ աստուածային անբերեւոյթ բնութեան կամ գոյութեան, որ ոչ երեւի ըստ մարմնաւոր աչաց տեսութեան, այսպէս թուի որպէս մաւտակայ առ ընթեր եւ խաւսակից
377 եւ կամ // թէ ի ներքս ի մարմինն իբրեւ սուր ինչ ի պատեանս արկեալ, եւ կամ զոմն մարդ ի տաճարի բնակեալ եւ ի տաղաւարի: Եւ ահա եղեր որդի հարցն քոց առաջնոցն, եւ հաւատոց նոցին ժառանգակից՝ Դիոդորի ասեմ եւ Թէոդորիտոսի եւ Նեստորի անիծելոյ: Քանզի եւ նոքա իբրեւ ի տաճարի ասացին բնակեալ զԲանն Աստուած յիւրում մարդկութեան իբրեւ կալմամբ եւ ունակութեամբ եւ ոչ խառնմամբ միացեալ զԱստուածն Բանն եւ միաւորեալ եւ մարդ լեալ եւ ի մարդումն բնակեալ: Եւ դու ահաւադիկ նոցին դաւանակից գտար ի հարկէ եւ ոչ կամաւ: Վասն զի կամ ասել պիտի անգոյ եւ անանձն զԱստուած Բանն եւ հաւասարել նախասացեալ աւանդիցն Պաւղոսի Սամուստացոյ եւ Փո-
378 տինոսի // եւ նոցին համափառացն եւ կամ ըստ Բ(2) կատարեալ անձնաւորութեանցն, որ ստուգեալ հաստատեցան նոցին Թէոդորիտեանցն եւ Նեստորականացն լինել հաղորդ եւ հաւասար:

Բայց եւ այսց բանիցս տացես ինձ պատասխանի, թէ զիա՞րդ Բ(2) բնութեանցն, մանաւանդ թէ Բ(2) գոյացութեանցն եւ տեսակացն ըստ քում բաժանմանցդ մի անձն ասելով եւ մի դէմ, եւ շփոթումն ոչ ասէք լինել դիմացն եւ անձինն, եւ մեզ, որ միութիւն ասեմք ըստ միութեան, զոր ի վեր քան զմիտս եւ իմացումն ներգործեաց Բանն Աստուած, շփոթումն ասէք լինել եւ խառնակումն: Արդ՝ եթէ դիմացն հաւատաս առանց խառնակութեանց եւ շփոթմանց լինել, հաւատա եւ բնութեանցն Բ(2)
379 մի լինել բնութիւն՝ ոչ բառնալով զիրեարս, // այլ միաւորելով, քանզի դու կատարեալ մարդ ասես եւ կատարեալ Աստուած, եւ զբնութիւն բաժանեալ, եւ անձն եւ դէմ մի, եւ առանց խառնակութեան եւ շփոթման հաւատաս լինել դիմացն եւ անձինն: Զի եթէ կատարեալ անձինքն եւ դէմքն, զոր ասեն Աստուած եւ մարդ, եւ մի դէմ եւ մի անձն եկեալ չխառնակին եւ ոչ բառնան զմիմեանս, ապա եւ առաւել՝ բնութիւնքն,

24 Յովհ. Ա 1

մանաւանդ զի եւ բնութիւն ոչ ուրեք գտանի յԱստուածաշունչ գիրս առնուլ Աստուածն Բանի, բայց միայն՝ մարմնացեալ եւ մարդացեալ, եւ լեալ ըստ հոգւոյն եւ ըստ մարդկութեան:

Տացես դարձեալ եւ այսմ ինձ պատասխանի. Բ(2) բնութիւն սահմանէք ի վերայ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ դարձեալ մի// 380
անձն եւ մի դէմ եւ մի Որդի ասէք: Արդ՝ մի դէմն որո՞յ բնութեան իցէ դէմ՝ աստուածայի՞ն բնութեան, եթէ մարդկային. զի թէ աստուածային բնութեան ասիցես, ահա լուծեր զսահման աստուածային բնութեան, զանսպահման եւ զանվայրափակ բնութիւն ընդ յեղյեղմամբ եւ ընդ փոփոխմամբ արկեր յոսկր եւ ի մարմին յեղաշրջել ընդ ըմբռնմամբ եւ ընդ շաւշափմամբ, եւ ապականիլ եւ բեւեռիլ եւ խոցումն եւ մահ, որ է աստուածաչարչարութիւն: Եւ սոփորնացւոց եւ պանդուրացւոց գտանիս աղանդակից, որք զԱստուած Բանն ի յեղեալ ասացին եւ ի փոփոխեալ, եւ այլայլեալ: Ապա եթէ յայսմանէ փախեալ սարսիցես իբրեւ ի սարսա-
փելի հայհոյութեանց եւ մարդկային բնութիւն ա//սիցես, եւ ա՛յս դար- 381
ձեալ անդունդք հայհոյութեան եւ մարդապաշտութեան պատրանք, եւ հաւասար Սիմոնի եւ Պաւղոսի Սամուստացւոյ, որ Բ(2) Որդի սահմանեցին՝ զերեւելին մարդ եւ զաներեւոյթն Աստուած:

Դարձեալ հարց ցնոսա. Մարիամ զբնութիւն մարդո՞ն ըստ ինքեան գոյացութեան ծնաւ, եթէ զբնութիւն Որդւոյն Աստուծոյ ըստ ինքեան կատարելութեան ի ձեռն մարմնոյն: Զի եթէ ըստ ինքեան գոյացութեան մարմնոյն ծնաւ, ըստ որում եւ բնութիւն, ապա չէ Աստուածածին: Իսկ եթէ զերկուսեան բնութիւնսն ըստ ինքնակայութեանն ծնաւ՝ երկրորդամայր[25] եւ ո՛չ Միածնամայր:

Դարձեալ զԲ(2) զբնութիւնսն խոստովանելով հարկաւոր է եւ յեր- 382
կուսե//անն մկրտիլ՝ յարարած բնութիւն եւ յանարար, որ է ամբարշտութիւն: Իսկ եթէ ի Հայր եւ ի յՈրդի եւ ի Սուրբ Հոգի ի մի բնութիւն մկրտիմք, յայտ է, եթէ եւ ի մի խոստովանեալ բնութիւն ոչ մկրտիմք, որ է ուրացութիւն փրկութեան մերոյ. «Զի որք մի անգամ ի Քրիստոս մկրտեցաք՝ ի մահ անդր նորա մկրտեցաք»[26]: Եթէ մկրտեցաք յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Եւ դարձեալ՝ ապականութիւն ի մասանց ի բնութենէ մարմնոյն է: Եւ զի՞նչ մասն այն է՝ միացոյց զսա իւր յարգանդի Կուսին, եւ այժմ ապականացու է, զի զմնացեալն ոչ եթող,

25 Զիք ՆԲՀ
26 Հռոմ. Զ 3

իսկ եթէ եթող ըստ քեզ յետ յարութեան, կիսամարդ է եւ ո՛չ կատա-
383 ռեալ մարդ: Իսկ եթէ դատապարտութիւն յանցանացն //արկուածաւք
բնաւորեցաւ, իսկ Յիսուս ոչ անկաւ ըստ բանսարկուին իշխանութեան,
ուստի յիւրոցն, ասէ, «յիս ինչ ոչ գտանէ»[27], ապա զիա՞րդ տնաւրինէ
ապականութեամբ զփրկութիւն ապականելոցն, այլ եւ «մարմին նորա
ոչ ետես զապականութիւն»[28],— մարգարէն կնքեաց բանիւ:

Դարձեալ՝ եթէ ծնելութիւն, եւ կաթին դիեցութիւն, եւ թլփատու-
թիւն, եւ աճելութիւն հասակի, եւ կիրք արհամարհանաւք, եւ չարչարա-
նաւք խոցումն, եւ մեռելութիւն, ըստ ձերում աղանդաբանութեանդ[29],
եւ աշխարհի փրկութիւն ի ձեռն այսոցիկ մատակարարեցաւ, ապա յայտ
է, եթէ ոչ ինչ է առ մեզ Աստուծոյ երախտիք փրկութեան, այլ ապա-
384 կանութիւն զայս մեզ առգործեաց յիշատակել ի բանս//արկուին յիշ-
խանութենէն, զսա մեզ պաշտելի եւ երկրպագելի զապականութիւնս
եւ սմա առկարդալ Փրկիչ:

Աւա՜ղ յիմարութեանս. մարդկային ապականացու բնութիւնս եւ
յառաջխաղաղացութիւն[30], հայր զսերմն ծանեաք ի ձեռն կնոջ, իսկ
ապականութիւն մարմնոյ՝ Բանին ծնելութիւն, զո՞ ոք ասէք գոլ Հայր
ի ձեռն մարմնոյ, զի ի Հաւրէն ծանիցուք զապականութիւն:

Դարձեալ՝ Մարիամայ ըստ ինքեան գոյացութիւն բնութեան իւ-
րո՞յ ասէք անապական գոլ, եթէ զբնութեան զԲանն Աստուած մարմ-
նացեալ ծնելութեամբն: Եթէ ըստ բնութեան գոյացութիւն ասելի էր,
ապա ոչ իմանի ի մերմէ բնութենէս Մարիամ, իսկ եթէ ըստ ծնելու-
385 թեան անապական է // եւ ասի, զիա՞րդ ծնեալն ի նմանէ ապականացու:

Դարձեալ՝ անապականութիւն բնութի՞ւն ունի ըստ ինքեան, եթէ
ոչ, զի բնութիւն է ստեղծուած, եւ Ստեղծիչն զայս առնուլ ասելի է եւ
միացուցանել ընդ ինքեան, ոչ ասի ստեղծուած Ստեղծչին, այլ ի պատ-
րանաց թշնամոյն ներգործեցաւ ի մարդն յանձնիշխանութենէ գոր-
ծոյն կշտամբութիւն ունել ի Տեառնէ: Իսկ Աստուածն Բան զինքեանս
ստեղծուածն էառ եւ միացոյց ընդ իւր եւ ո՛չ զբանսարկուին ներգոր-
ծութիւն: Զայսոսիկ խուզեն եւ ի հարցաքննութիւն արկանեն, որք ի
սահման դուզնաքեայ մարդոյ իջուցանել զնա խոկան, եթէ որպէս զմի

27 Յովհ. ԺԴ 30
28 Գործ. Բ 31
29 Զիք ՆԲՀ:
30 Զիք ՆԲՀ:

ոք ի հասարակաց գոյացելոց է, ըստ որում եւ ոչ լեալ մարդ խոստովա-
նին, այլ ի // մարդում բնակեալ, աստուստ եւ Մարիամու տարրանայ 386
գոլ աստուածային: Եւ այս Պաւղեայ դիւաբերանի նախասացութիւն
է: Սահմանք որք ըստ այսմ ձայնակից նախկիք եւ այժմուքս անուս-
մունք եւ յողդողդք, որք զմի Տէր մեր ուրացեալք ածեն ի վերայ ան-
ձանց զարագահաս կորուստն՝ ըստ նախասաց առաքելոցն Աստուծոյ:
Զայսպիսի խորհողսն եւ զգործուն[ե]այսն տարագրէ կաթողիկէ առա-
քելական եկեղեցի եւ նզովէ, եւ եղիցի նզովեալ:

Եւ արդ՝ քանզի յոլով եւ բիւրապատիկ են այսպիսի բանք ըստ տու-
չութեան Հոգւոյն Սրբոյ՝ ընձեռեալ եկեղեցւոյ սրբոյ ընդդէմ այնոցիկ,
որք հակաճառեն անուսումնութեամբ եւ լրբենի երեսաւք ընդդէմ ճշ// 387
մարտութեան, այլ այս բանք թէպէտ եւ սակաւք ի բազմաց ասացան,
սակայն բաւական է քեզ պատասխանի առնել այնոցիկ, որք ոչ ուղղա-
պէս խոստովանին զՏէր մեր Յիսուս Քրիստոս:

Ո՛ղջ լեր, եղբայր իմ պատուական եւ գլուխ եւ փառք ամենայն իշ-
խանաց Հայաստանեացս:

ՊՕՂՈՍ ՏԱՐՕՆԱՑՈՒ «ԲԱՑԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ ԺԱՄՈՒՑ ԱՂՕԹԻՑ» ԳՈՐԾԸ

ԺԱ—ԺԲ դարերի հայ մեծանուն ու բազմարդիւն վարդապետ Պօղոս Տարօնացու գրչին պատկանող մեկնողական գործերից է հայոց ժամակարգութեան «Բացայայտութիւնը», որը հիմնականում անդրադառնում է ժամերգութիւններում տեղ գտած սաղմոսներին ու երգերին՝ այսպիսով խուսափելով կրկնել իրենից առաջ արդէն Խոսրով եպիսկոպոս Անձեւացու՝ «Գիրք, որ կոչի մեկնութիւն աղօթից»-ում կատարած քարոզների ու աղօթքների մեկնութիւնը: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ կարող ենք ասել, որ Տարօնացին այս գործը գրել է ոչ այլ նպատակով, քան Անձեւացու մեկնութիւնը լրացնելու՝ այսպիսով մի անհրաժեշտ ձեռնարկ պատրաստելով վանական ուսանողների համար: Գուցէ սա է պատճառը, որ «Բացայայտութիւնն» այնքան տարածում չի գտել, ինչպէս Անձեւացու յիշեալ աշխատութիւնը:

Տարօնացու «Բացայայտութիւնը» երկար ժամանակ անյայտ է եղել հայագիտական շրջանակներին: Առաջին անգամ այն յիշատակւում է Լ. Մելիքսեթ-Բեկի «Պօղոս Տարօնեցի ԺԱ—ԺԲ դարերի հայ մատենագիրը եւ Թոնդրակեցի ու ծայթ հայերը» յօդուածում[1]: Մեկնութեան առաջին բնագրային քննութիւնը կատարուել է Դանիէլ վրդ. Ֆինդիկեանի կողմից, ով նկատել է, որ նմանութիւններ կան սոյն մեկնութեան եւ կեղծ Օձնեցու միջեւ[2]: Այս նմանութիւնների առաւել ուշադիր եւ մանրազնին քննութիւնը ցոյց է տալիս, որ Տարօնացին կեղծ Օձնեցու հեղինակած մեկնութիւններից կախում չի ունեցել, դրանց մի մասը գրուել է շատ աւելի ուշ, քան Տարօնացու երկը, եւ վերջինս լիովին ինքնուրոյն ստեղծագործութիւն է:

Տարօնացու «Բացայայտութիւնը» կարեւոր է նրանով, որ արտացոլում է ԺԲ դարում առկայ հայոց ժամակարգութեան պատկերը: Տարօնացին առաւելապէս խօսում է Գիշերային, Առաւօտեան եւ Երեկոյեան ժամերգութիւնների միաւորների մասին՝ միայն թեթեւակի անդրադարձ կատարելով Արեւագալի, Ճաշու երեք եւ Խաղաղական ժամերգութիւններին:

«Բացայայտութեան» մէջ ենք առաջին անգամ հանդիպում Գիշերային ժամերգութեան մէջ «Տէր ողորմեա»-ի բազմակրկնութեանը, որը Տարօնացու գործում բոլոր օրերի համար տրւում է միայն 100 թուով, եւ չկայ, ինչպէս ներկայիս հայոց ժամագրքում ենք տեսնում, տարբերակում տէրունական, մարտիրոսաց կամ պահոց օրերի համար՝ համապատասխանաբար 3-ական, 50-ական, 100-ական «Տէր ողորմեա»-ով:

Տարօնացու գործում ենք առաջին անգամ հանդիպում կանոնագլուխներին յաջորդող եւ յետագայում կիրառութիւնից դուրս մղուած աստուածաշնչային օրհնութիւն-երգերի աստուածաշնչային յղումներին, թէեւ անուղղակիօրէն՝ ներկայացուած տուեալ աստուածաշնչեան հատուածի ընդհանուր բովանդակութեամբ կամ դրա արտայայտած խորհրդով: Աստուածաշնչային օրհնութիւններից յետոյ Տարօնացին խօսում է, դարձեալ առաջին անգամ, նաեւ օրհնութիւն-շարականների մասին: Նրա այս երկում ենք հանդիպում նաեւ «շարական» եզրի առաջին կիրառութեանը, ինչը ժամանակին նկատել է նաեւ Ս. Ամատունին[3]: Օրհնութիւն-շարականը, ինչպէս երեւում է «Բացայայտութիւնից», Տարօնացու ժամանակներում երգւում էր միայն կիրակի եւ սրբոց օրերին՝ զանց առնելով պահոց օրերը:

«Բացայայտութեան» մէջ ենք առաջին անգամ հանդիպում Գիշերային ժամերգութեան «Թագաւոր յաւիտեան» եւ «Ալէլուիա» սկսուածքներով երգերի առաջին յիշատակութեանը: Այս երգերի՝ Տարօնացու գործում ներկայացուած ձեւերը ցոյց են տալիս, որ Անձեւացուց միայն շուրջ 150 տարի յետոյ են դրանք արդէն ստացել իրենց վերջնական տեսքը: «Բացայայտութիւնից» երեւում է, որ «Թագաւոր»-ները Տարօնացու ժամանակ դեռեւս միայն սրբոց տօներին են երգուել, եւ պահոց օրերի «Թագաւոր»-ները դեռ գոյութիւն չունէին:

Այս երկու տեսակ երգերի մասին խօսելուց յետոյ Տարօնացին անդրադառնում է աստուածաշնչեան ընթերցումներին, եւ յատակ է դառնում, որ նրա ժամանակ սրանցից բացի ընթերցուել են նաեւ «աստուածաբանութիւնք սրբոցն եւ վարք ճգնողացն եւ խրատք իմաստնոց»:

«Բացայայտութեան» մէջ Գիշերային ժամերգութիւնից Առաւօտեան ժամերգութեան անցման կերպը ցոյց է տալիս, որ Տարօնացու

1 «Էջմիածին», 1960 թ., թիւ Դ, էջ 38—44

2 Տես M. Findikyan, The Liturgical Explanations Attributed to Catholicos Yovhannes Otsnetsi: Problems and Inconsistency, *Acta of a Conference at the PIO in honour of His Holiness Karekin I, December 12, 1996:*

3 Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912 թ., էջ 511

ժամանակ, գէթ Սբ Առաքելոց վանքում, այս ժամերգութիւնները կատարուել են անմիջապէս մէկը միւսի յետեւից, եւ Առաւօտեան ժամերգութեան սկզբի «Լցաք առաւօտու ողորմութեամբ քով» սաղմոսաքաղուածը (Սաղմ. ՁԹ 14—17) բացակայել է: «Մեծացուսցէն» դեռեւս ասուել է միայն կիրակի օրերը, «Իւղաբերից Աւետարանը» դեռեւս չի կոչուել «Իւղաբերից», այլ պարզապէս՝ «Յարութեան»: Այս Աւետարանի ընթերցանութեան մասին խօսելիս Տարօնացին երկու Աւետարանի մասին է յիշատակում, ինչպէս նրանից շատ առաջ՝ Ստեփանոս Սիւնեցին[4]: Տարօնացին գրում է. «Եւ առաջին Աւետարանն զառաջին գալուստն Տեառն յայտնէ, իսկ երկրորդն՝ զհանդերձեալն»: Ուստի հաւանաբար այս Աւետարանը այժմ միայն Մաղկազարդին «Սուրբ Աստուած»-ից յետոյ ընթերցուող Յովհ. ԺԱ 1—46 հատուածն է, որը թէ՛ Սիւնեցու, թէ՛ Տարօնացու ժամանակ ընթերցւում էր հաւանաբար իւրաքանչիւր կիրակի, գերեզմանոցում, ինչպէս ցոյց է տրւում Սիւնեցու մեկնութեան մէջ եւ «Ճաշոց» գրքում[5]: Պէտք է նշել, որ վանքի պայմաններում այսպիսի կիրառոյթն անյարմար լինել չէր կարող: Ուստի այս վանական սովորութիւնը յետագայում մտել է «Ճաշոց» գիրք՝ կիրառուելով միայն Մաղկազարդի կիրակի օրը:

Յիշատակման արժանի փաստ է նաեւ այն, որ Տարօնացին բնաւ չի խօսում հարց, մեծացուսցէ, ողորմեա եւ Առաւօտեան ժամերգութեան մէջ այսօր գործածուող միւս շարականների մասին, ինչը նշանակում է, որ նրա ժամանակ սրանք վերջնականապէս դեռ չէին ներմուծուել հայոց ժամակարգութիւն իբրեւ կայուն միաւորներ:

Երեկոյեան ժամերգութեան մասին կարող ենք ասել, որ այն ներկայացնում է հիմնականում այն նոյն պատկերը, որը ներկայացնում են Տարօնացուն նախորդած հայրերն իրենց մեկնութիւններում: Միակ տարբերութիւնն այն է, որ միայն Տարօնացու մօտ ենք հանդիպում այս ժամերգութեան մուտք-սաղմոսաքաղուածին (Սաղմ. ԾԴ 17—18): «Բացայայտութիւնից» հասկանում ենք նաեւ, որ Տարօնացու ժամանակ Ղ սաղմոսը եւ նրան յաջորդող քարոզն ու աղօթքը դեռեւս երեկոյեան ժամերգութիւն չէին ներմուծուած:

---

4 Ժամակարգութեան մեկնութիւն ընդարձակ եւ համառօտ Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ նորին պատճառ հիմնարկութեան սրբոյ եկեղեցւոյ, Ս. Էջմիածին, 1917 թ., էջ 58

5 Անդ, էջ 59: Նաեւ՝ Ճաշոց գիրք, Վենետիկ, 1686 թ., էջ 269, 272:

Ներկայացուող բնագիրը պատրաստուած է երկու ձեռագրի հիման վրայ՝

Ա. Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց մատենադարանի թիւ 1272 ձեռ. («Տօնապատճառ», 1290 թ., թթ. 226ա—252բ).

Բ. Վիեննայի Մխիթարեան միաբանութեան ձեռագրատան թիւ 324 ձեռ. (Ժողովածոյ, 1305 թ., թթ. 38ա—50ա):

Բնագիրը պատրաստուած է հետեւեալ սկզբունքներով:

ա) Ուղղուել է բ-պ, գ-կ, դ-տ բաղաձայնների ուղղագրութիւնը, բառավերջի ա-ից եւ ո-ից յետոյ եկող աւելորդ յ-ն՝ հանուել, իսկ բացակայող յ-ն աւելացուել է:

բ) Ձեռագրերից մէկում բառի կամ արտայայտութեան բացակայութիւնը բնագրում նշուած է < նշանով, իսկ տարընթերցումների բաժնում՝ <>: Ուղիղ փակագծերը՝ [], նշանակում են, որ տառը, բառը կամ արտայայտութիւնը չկայ երկու ձեռագրերից ոչ մէկում:

գ) Իբրեւ ծանօթագրութիւն նշուած են աստուածաշնչեան մէջբերումների կամ ակնարկների տեղիները եւ հայրաբանական աղբիւրները:

դ) Ընդգծուած են այն հատուածները կամ միաւորների անունները, որոնք կան նաեւ այժմեան ժամագրքում:

Ներածութիւնը պատրաստուած է
խմբագրութեան կողմից ըստ
Միքայէլ եպս. Աջապահեանի
հետեւեալ ուսումնասիրութեան՝
Poghos Taronatsi (c. 1040—1123) and his
"Exposition of the Order of Liturgical Hours"

Գործական եւ արդիական[1] վարդապետին
>Հայոց մեծին[2] Պաւղոսի >Ղազարու վանից վանականի[3]

ԲԱՑԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ[4] ԺԱՄՈՒՑ ԱՂԱՒԹԻՑ

Ազդարարութիւն[5] ժամուն նշանակ է հրեշտակացն >լուսաւորութեանն[6] գոչման[7] փողոյն:

Իսկ թողուլ զմարմնաջան վաստակս եւ զհանգստարան մահիճս եւ հասանել փութով ի տեղի աղաւթիցն, այս՝ թողուլ զհողաթաւալ եւ զմարմնական ջան եւ համաւրէն յարութեամբ հասանել ի դատաստանին ատեան:

Իսկ ի Քրիստոս հաւատացելոց երկրպագութիւն յարեւելս ըստ սուրբ առաքելոցն կանոնի[8] աւանդութեան, զի ի համբառնալ Փրկչին, ասէ աւետարանագիրն, «երկրպագեալ նմա սրբոց առաքելոցն դարձան յԵրուսաղէմ»[9]: Եւ զի ընդ արեւելս է տեղին, ուստի վերացաւ Քրիստոս, Կիւրեղ Երուսաղէմի հայրապետն ասէ, եթէ որ «յայսմ Գողգոթայէ էջ ի դժոխս, յարեւելից[10] կուսէ ի լեռնէ Զիթենեաց վերացաւ առ Հայր»[11]: Եւ եղիսէ մարգարէ նշանակեաց յարեւելս երկրպագութիւն յասելն[12] առ Ցովաս արքայ Իսրայէլի[13]. «Բաց զպատուհանդ ընդ յարեւելս[14]», որ նշանակէ զոգւոյ[15] եւ զմարմնոյ աչս բանալ ընդ յարեւելս եւ լարել զաղեղն լեզուի եւ նետաձիգ լինել աստուածային[16] բանիւք ի զաւրս ասորոց, որ են դիւաց հոյլք[17]:

Իսկ բազում աւուրս խոր[18] ի կործան լինել՝ այս ըստ առաջին մարդոյն անկմանն[19] ծունր կրկնելով նմանիմք:

Իսկ >ի[20] կիւրակէի ոչ խոր, այլ որպէս ընդ Քրիստոսի յարուցեալք[21] կանգուն[22] կալով կատարել զաղաւթսն, որպէս թէ յարութեամբ Տեառն >մերոյ[23] նորոգեալք, որ ի վերջին աւուրն հանդերձեալ է կատարել, զի յոտնաւոր երկրպագութիւնն[24] ակնկալութիւն երկնային[25] բարձրութեանն է սրբոցն[26]:

Իսկ ժողովումն ի մէջ գիշերին՝ ըստ Տեառն առակին եթէ՝ «Ի մէջ գիշերի եղեւ բարբառ. «Արի՛ք, ահա եկն փեսայ[27]»[28]: Եւ մարգարէն թէ[29]՝ «Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել»[30]: Եւ Եսայի՝ «Ի գիշերաց կանխէ հոգին իմ խոստովան,— ասէ,— լինիլ[31] առ քեզ»[32]: Եւ Պաւ-

ղոս եւ Շիղաս ի մէջ գիշերի աւրհնէին զԱստուած[33]: Եւ Փրկչին յարութիւնն ի գիշերի պատշաճեցուցանէ յառնել յաղաւթս ի մէջ գիշերի:

Իսկ առաջի սուրբ նշանին անկումն[34] ընդ արեւելս՝ որպէս Քրիստոսի բեւեռելոյն ի նմա երկիրպագանելով:

Եւ ի գուճս անկեալ[35]՝ իբրեւ առաջի ահաւոր դատաւորին[36]՝ ըստ մարգարէին եթէ՝ «Հեղում առաջի Տեառն զաղաւթս իմ, զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից»[37], եւ եթէ՝ «Զկեանս իմ պատմեցից քեզ եւ եղից զարտասուս իմ առաջի քո»[38]: Ասէ. «Տէր, եթէ զչրթունս իմ բացցես[39], բերան իմ երգեսցէ զաւրհնութիւնս քո»[40]:

Այսինքն՝ որ կապեցաւ մեղաւք, որպէս նախաստեղծիցն ի ճաշակս պտղոյն: Եւ առեալ համարձակութիւն յողորմած[41] դատաւորէն, որ եւ վասն մեր կրեաց զվիշտս մարմնով, ընդ մեր պաղատի՝ ասելով.

«Տէր, զի՛ բազում եղեն նեղիչք իմ, բազումք յարեան ի վերայ իմ»[42]:

Այսու բանիւք իբր ի դիմաց նախաստեղծիցն առ Հայր կարդալով զյախուռն[43] յարձակումն բազմատեսակ ախտիցն յանպատրաստից ի վերայ[44] բնութեանս ամբաստանէ: Այլեւ զթշնամեաց եկեղեցւոյ գուշակէ, որք նոյն նմանութեամբ յայտնի եւ ծածուկ խարդախանաւք անպակաս պատերազմին մինչեւ ցայժմ: Բայց զաւրութեամբ Տեառն տկար եւ անզաւր լինին յասելն եկեղեցւոյ.

«Դու, >Տէր[45], աւգնական իմ, փառք[46] իմ եւ բարձրացուցիչ գլխոյ իմոյ»[47]: Եւ զի գլուխ Քրիստոս է եկեղեցւոյ, որ մեռաւ վասն[48] մեր, ասէ.

«Ես ննջեցի եւ ի քուն եղէ»[49]:

Առ որս պաղատի եկեղեցի՝ ասելով.

«Արի, Տէր, աւգնեա ինձ, զի դու հարեր զամենայն թշնամիս իմ»[50]:

Եւ «զատամունս մեղաւորաց փշրելն»[51] զբանսարկութիւն դիւացն եւ զհայհոյութիւն[52] հալածչացն եւ հերձուածողացն, որք յաղդմանէ նոցա շարժեալ ի վերայ իբր ատամամբք զմեզ խոցոտէին, ասէ: Որ եւ յայսմ ամենայնէ ի Տեառնէ փրկութեան եւ աւգնութեան հանդիպեալք աղաւթեցաք շնորհաւք:

Եւ ապա Զէ սաղմոսիւն նշանակէ կատարելաբար զՓրկչին կիրս, որ վասն մեր, եւ զաղէտ վտանգի մարդկութեանս, զոր յապստամբէն[53] Բելիարայ[54] ի ձեռաց հոմախոհից նորա կրեաց: Զոր եւ ասէ Քրիստոս որպէս գլուխ մարմնոյ >եկեղեցւոյ[55] առ Աստուած եւ Հայր.

«Տէր Աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարդացի»[56] այլաւքն[57] հանդերձ: Եւ թէ[58]՝ «Լցաւ չարչարանաւք հոգի իմ»[59]:

Այսինքն մարտիւք ի ներքուստ պատերազմաց ոգի ազգի մարդկան, զորս իբր ի գուբ արկեալ՝ խեղդամահ առնել ջանային:

«Եղէ ես որպէս մարդ առանց աւգնականի, որպէս վիրաւորս, որ ննջեն[60] ի գերեզմանի»[61]:

Իբրու թէ ոչ գոյր աւգնութիւն ուստեք, այլ սոսկապէս իբրեւ զմարդ անտերունչ յանցանացն վիրաւք անկեալ[62] դնէաք:

«Եդին զիս ի գբի ներքնումն, ի խաւարի եւ ի ստուերս մահու»[63]:

«Գուբ» *զ'ի վայր ի դժոխսն իջանել[64] ոգւոցն ասէ: Եւ «խաւար» զաղջամուղջ տոռունս մեղաց կոչէ, որովք[65] կապեալ չարաչար կաշկանդաւք վտանգէին[66] ի նոյն:*

Իսկ «տնանկ[67] եւ վաստակաւոր»[68] *եւ այլն՝ այն ինքն է, որ իբր լուծեալ ի տուն, այնպէս անկարաբար տնանկութեամբ[69] անկաւ[70] բնութիւնս ի նոյն, եւ յախտս զանազանս եւ ի վաստակս տաժանելիս կապեցաւ: Եւ ապա ի նոյն յարել զբազմութիւն վնասակարացն ասէ.*

«Շրջեցան զինեւ որպէս ջուրք[71], զաւր ամենայն պաշարեցին զիս ի միասին»[72]: *Եւ թէ՝* «Հեռի արարեր[73] յինէն զբարեկամս իմ»[74]:

Այսինքն զհրեշտակացն աւգնութիւնս եւ այլն ամենայն նոյնպէս[75] էր: Բայց է ինչ, որ ի Տէրն պատշաճի[76], եւ է[77] >ինչ[78], որ >ի[79] մարդոյս բնութիւն:

Իսկ ՃԳ սաղմոսն *գոհութիւն է բազմապատիկ միխիթարութեամբ յաղագս յոգնակի վշտացն եւ մեծակական հեծեծանացն լռութեան որ յառաջագոյն՝ յասելն.*

«Աւրհնեա, անձն իմ, զՏէր»[80]: *Եւ դարձեալ թէ՝*

«Աւրհնեա եւ մի՛ մոռանար զամենայն տուրս նորա»[81]: *Եւ թէ՝*

«Նա քաւէ զմեղս քո»[82]: *Եւ թէ՝*

«Գթած ողորմած է Տէր եւ ոչ ի սպառ բարկանայ»[83]: *Եւ թէ՝*

«Որպէս գթայ[84] հայր յորդիս, այնպէս գթայ[85] Տէր երկիւղագին[86] յաղաչողս[87] իւր»[88]:

Որ եւ գիտէ, ասէ, զտկարութիւն բնութեանս եւ թողու զյանցանս:

Եւ ապա յիշեալ զանմարմնոցն աւրհնութիւնսն՝ յարակցէ առընթեր այնմ եւ զմեզ ի նոյն՝ ասելով.

«Աւրհնեա, անձն իմ, զՏէր»[89]:

Եւ դարձեալ զկնի այսմ ապա եւ աղերսարկու մաղթանս ի նոյն յարեալ ասէ. «Տէր, լուր աղաւթից իմոց, ունկն դիր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով»[90]:

Եւ որպէս ի սկսմանն ասէր[91]. «Տէր, եթէ զչրթունս իմ բացցես»[92], սոյնպէս եւ աստ նախ զաստուածայինն գթութիւն բանալ հայցէ՝ ասելով.

«Տէր, լուր աղաւթից իմոց եւ մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քո, զի ոչ արդարանայ[93] առաջի քո ամենայն մսեղի»[94]:

Եւ յետ այսորիկ ապա զչարչարանսն ի թշնամեացն պատմէ՝ ասելով.

«Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս >իմ[95], նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից»[96]:

Բարձրագոյնն անախտութիւն եւ լուսազարդն երկիր էր, ասէ, բնակութիւն եւ կայան իմ[97]: Իսկ նախանձոտն թշնամի յայնմանէ ի ստորեւ կացուցեալ՝ ի խաւարաբնակս յայս վտարեաց երկիր: Եւ այնպէս ըմբոստանայ եւ սնոտի յուսով >[ճ]խայ եւ[98] հրճուի ի վերայ իմ, իբրու թէ անսահման ժամանակաւ անկենդանական մեռելութեամբ կալոց եւ մնալոց եմ ի նոյն:

Իսկ «անձն իմ» *յայսմանէ* «ճանձրացեալ խռովեցաւ, եւ յիշեցի զաւուրս զառաջինս»[99]:

Այսինքն զծնանիլն մկրտութեամբ ի Հոգւոյն, թէ զիարդ վաղվաղակի գտայ ազատ եւ սուրբ ի մեղաց: Եւ փափագեալ ցանկայ[100] «անձն իմ» *փրկութեան մեղաց եւ սուրբ եւ ազատ[101] կենաց այնպէս,* «որպէս երկիր» *ցամաքեալ, որ* «ծարաւի» *իցէ ջրոյ[102]: Եւ խնդրէ* «լսել» *ի մեծի* «առաւաւտուն զողորմութեան»[103] *քո լուր >ի[104] յարութեան մեռելոց՝ առ ի* «փրկիլ» *ի դիւացն մարտէ եւ* «ուսանելով զկամս Տեառն առնել»[105]:

Նա եւ «զՀոգին Սուրբ» *աղաչէ* «առաջնորդ լինել յերկիր ուղղոց»[106] *եւ* «սատակումն» *գործել դիւացն եւ կորուստ, որ հալածիչք են եւ* «նեղիչք անձանց[107] մերոց»[108]: *Եւ ապա ասէ դարձեալ, թէ ես ո՛չ նոցա եմ հնազանդ եւ հլու, այլ քո ստեղծուած եւ* «ծառայ» *արեամբ քո սրբով[109] գնեալ:*

Եւ ապա ի մէջ անցեալ սարկաւագն[110], ի խորհուրդ Փրկչին միջնորդ Աստուծոյ եւ մարդկան, քարոզէ եւ զգուշացուցանէ ամենայն «եկեղեցն[111] յաւրհնաբանութիւն ահիւ կալ առաջի» *այնմ, որ* «նմանութեամբ անմարմնոց» *կարգեաց իւր աւրհնաբանութիւն զմարդիկ,* «հաւատով, աներկմիտ» *սրտիւ* «խնդրել» *ի Տեառնէ* «զքաւութիւն», *գոհանալ զնմանէ վասն առաջին երախտեացն, հայցել զառաջիկայ ժամանակս ըստ Տեառն կամաց կրաւնաւորիլ եւ* «արժանի լինել յաւիտենական խոստացելոց» *բարեացն:*

Եւ աղաւթիւք խնդրել յԱստուծոյ զպէտսպէս աւգուտս[112] *հոգւոյ եւ մարմնոյ՝ ասելով Ճ «Տէր ողորմեա» ըստ վերին դասուցն, զորոց Տէրն ասաց զթիւ իննսուն եւ ինն ոչխարացն, զորս եթող Հովիւն քաջ >յերկինս*[113] *եւ էջ առ մոլար ազգն*[114] *մարդկան:*

Ապա քահանայական աղաւթք «գոհութեամբ» յաւրինակ Քրիստոսի, վասն «հանգստեան» գիշերականի, եւ գալ «արթնութեամբ յաւրհնաբանութիւն» Արարչին, եւ հայցելով «բարերարին» յաղաւթս եւ «յերկրպագութիւն» ժողովելոցն խոնարհիլ քաղցրութեամբ եւ «զհրեշտակ խաղաղութեան» տալ յաւգնութիւն եւ ի պահպանութիւն նոցա:

Իսկ սաղմոսացն կանոն եւթն գուբղայ ասացեալ Զ ըստ գործոց կատարման եղելոցս աւուրց, եւ եւթն՝ աւրհնել Արարչին յեւթներորդն աւուր զեղեալսս եւ ի նմա հանգչել յամենայն գործոց: Եւ դարձեալ Յեսու խորհուրդ Տեառն իւրոյ վեց աւր լռութեամբ գայր շուրջ պատելով զԵրիքով[115]*. այս վեց գուբղայիցն նուաստերգութիւն: Իսկ եւթներորդին աղաղակ եւ փողոցն հնչումն*[116] *կործանէ զպարիսպն, որպէս եւ Յիսուս նմանապէս զաւրավարելով մեզ՝ յեւթներորդ գուբղային գոչումն կործանէ զամուրսն սատանայական, ուստի եւ յաղթողին կցէ ի նոյն՝ >ասելով<*[117] *«ալէլուիա»:*

Իսկ ութերորդն «Աւրհնութիւն» ասացեալ, որ ի հանդերձելումն ակնարկի: Եւ զի աւրն այն ուրախութեան արդարոց է եւ կործանման[118] *ամբարշտաց:*

Նոյնպէս ութերորդ գուբղայս[119] *երգ, ուրախութիւն Իսրայէլի, սուգ Եգիպտոսի:*

Երկրորդն[120]*. նոյն խնամակալութիւն իսրայէլացւոցն եւ կշտամբութիւն յանդիմանութեան:*

Երրորդն[121]*. հրոյ սպառնութիւն եւ սատակումն, եւ դարձեալ աւետեաց հրաւէր:*

Չորրորդն[122]*. պարծանս գոհութեան վասն հրաշից փոփոխմանց եւ ոմանց ամաւթ պատկառութեան:*

Հինգերորդն[123]*. բարձումն ամբարշտաց եւ հրոյ կիզումն հակառակորդաց: Եւ ոմանց բժշկութեան ցաւղ ի Տեառնէ ցաւղեալ եւ մտանել >ի*[124] *շտեմարանս փրկութեան, մինչեւ անցցէ խրատն*[125]*:*

Վեցերորդն[126]*. չարչարանաց պատիժ չարացելոց եւ ապաշխարելոց թողութիւն յասելն «ընկեցեր յետս զամենայն մեղս*[127] *իմ» եւ «ոչ դադարեցից աւրհնել զքեզ զամենայն աւուրս»:*

Եւթներորդն[128]*. աւրհնութիւն հրեշտակաց եւ փրկութիւն >մարդկան*[129]*, եւ դարձեալ ընկղմութիւն ի դժոխս, հեղուլ ուղխից*[130] *մեղաց մինչեւ յանձն. «որք պահեն զունայնութիւն եւ զստութիւն, ի յողորմութենէ զրկին»*[131] *ի յաւուր հատուցման ամբարշտաց:*

Ութերորդն[132]*. նոյնպէս զերկուց կողմանց յայտնէ զփրկելոց եւ զկորուսելոց: «Աւրհնութեամբ նորա լցան տիեզերք»*[133]*, արդարք >ամենայն*[134]*: «Բարկութեամբ զարթիցես ի վերայ երկրի, դողութեամբ կալցի զհեթանոսս: Երեւեցար ի փրկութիւն ժողովրդեան, նետաձիգ*[135] *եղեր ի գլուխս մարդկան >ամբարտաւանից*[136]*»*[137]*:*

Ահա փրկութիւն եւ պատիժ այս աւրհնութիւն եւ անէծս ամբարշտաց եւ արդարոց: Իսկ կիւրակէի եւ ի մարտիրոսաց[138] *յիշատակս խնկարկութեամբ եւ շարականաւ, զի ի յարութեանն համաշխարհական, որք անոյշահոտ*[139] *գործովք ճգնեցան, նոքա բարեբանակցին հոգեղինացն*[140]*՝ ըստ ասացելոյն. «Սաղմոս ասացէք Տեառն, սուրբք նորա»*[141]*:*

Իսկ յապաշխարութեան աւր՝ ոչ, զի յայտարարութիւն է, եթէ ոմանց ոչ գոյ պատասխանատուութիւն[142] *անգամ առաջի բեմին Տեառն:*

Իսկ քարոզն ուսուցանէ խնդրել թողութիւն, որպէսզի «մի՛ խոտան գտանիցիմք յաւրն[143] *պատասխանատուութեան», եւ «մի՛ ունայն» >եւ ընդ վայր*[144] *«լիցին վաստակք» առաքինութեան, եւ «ուղղել» զհոգեւորս «գնացք» յերկնային քաղաքն եւ «գտանել շնորհ եւ ողորմութիւն ի բարերար Տեառնէն»:*

Իսկ «Թագաւորն» ասել մաղթանք են ապրիլ[145] *ի տանջանացն*[146] *եւ սրբոցն աղաչանաւք արժանի լինել նոցին հատուցմանցն:*

Իսկ ի յարութեանն եւ ի տաւնս տէրունիս «Ալէլուիա[147]*», վասն զի ոչ պիտոյանամք*[148] *բարեխաւսից եւ ոչ մաղթանաց, այս երգս սրովբէականս*[149] *եւ բարեբանութիւնս հրեշտակաց եւ մարդկան միացեալս ընդ իրեարս: Վասն որոյ եւ ի կատարման նորին փառաբանութիւնս եւ գոհութիւնս*[150] *եւ աւրհնութիւն վերառաքեմք այսպիսում պարգեւաց տուողին:*

Իսկ ընթերցումն աստուածայինք ի մէջ սաղմոսացն յայտարարութիւն է Տեառն ուսուցանել որդւոց արքայութեանն զբնաւն, որ ոչ կարէին մահացու մարմնովս[151] *յայսմ աշխարհի տանել:*

Իսկ կանոնացն ապացուցի այս է եւ վերծանութիւն գրոց սրբոցն լրտես առաքեալ[152] *Մովսէս եւ Յեսու, որպէսզի տեղեակ արասցեն զորդիսն Իսրայէլի բարեացն*[153] *տենչմամբ յաղթել հակառակորդացն, որոց երթեալ դիտէին եւ եկեալ զրուցատրութեամբ խելամիտ առնէին զհո-*

մացեղսն յաղագս մարտիցն առ Թշնամիսն եւ պարարտութեան յուռթի եւ անհամեմատ երկրին[154]:

Նոյնպէս առաքեալ ի ճշմարիտ յԵրուսաղէմէ սրբոցն գունդք, որք յաղթեցին բանսարկուին զաւրութեամբ Տեառն իւրեանց եւ ուսուցին եղբարց իւրեանց որդւոց աւազանին զաւրինակ յաղթութեան: Որպէս եւ զիարդ, որպէս հմտացեալն յամենայնի մեքենայից Թշնամւոյն գրէ Պաւղոս. «Զեմք անհմուտ խորհրդոցն նորա»[155]*: Եւ աստուածաբանութիւնք սրբոցն եւ վարք ճգնաւղացն*[156] *եւ խրատք իմաստնոց եւ սպառնալիք տէրունականք եւ յորդորումն աւետեաց կենացն անվախճանից: Արդ այսոքիկ յընթերցումն եկեալ ուսուցանեն՝ յաւժարեցուցանելով զեկեղեցի ի մարտ ընդ սատանայի:*

Իսկ Մանկանցն[157] *Աւրհնութիւն՝ բժշկութիւն ախտիցն որ ցանկութեամբ նախկի[ն] վիրաւորեցան նախաստեղծքն: Իսկ երանելի մանկանցն իբրեւ աւրինաւոր զինուորք*[158] *ի հոգեւոր մարտին ամրացուցեալ զամենայն զգայութիւնս*[159] *երեւելի եւ ոչ երեւելի, ընդ որս զհրացեալ սլաքս ցանկութեան մուծանէ բանսարկուն, յաղթեցին անբարի պատրող բռնաւորին եւ ոչ անկան գունակ առաջի մարդոյն, այսինքն խաբեալ նախաստեղծիցն*[160]*: Ընդ որս չարեալ իմանալի արքայն Բաբելոնի Բելիար՝ արկ զնոսա ի մէջ չորեքնիւթեայ*[161] *բոցոյն: Իսկ նոքա որդիք անդրանիկք գոլով Ադամայ՝ անմեղութեանն ծնունդք՝ ոչ զկնի անիծընկալն Կայէնի խոտորեցան, այլ կանգնումն կործանմանն*[162] *Ադամայ յարդարեցին: Եւ ոչ կրկնելով ծունր ուրուականի Թշնամւոյն՝ մտանէին ի բոցն: Որոց լծորդ լեալ Միածինն Հաւր՝ զբոցն առագաստացուցեալ ոչ տալով հպիլ ի նոսա: Եւ ամենասուրբ Հոգին հողմաւրէն ցաւղացան զտապն զովացուցանէր՝ ապացոյց տալով ազատութեան Ադամայ ի դժոխոց: Որոց յաղագս Ադամայ պաղատելով՝ ողբաձայն աւրհնութիւն առ Հայրն բարձրեալ գոչէին՝ իրաւունս եւ արդարութիւն տալով Դատաւորին՝ ասելով.*

«Դատաստան արդարութեան ածեր ի վերայ մեր», «Մեղաք, անաւրինեցաք, ոչ պահեցաք եւ ոչ արարաք զոր պատուիրեցեր մեզ: Արդ զամենայն, զոր արարեր եւ զոր ածեր ի վերայ մեր, արդարութեամբ արարեր»[163]:

Եւ եթէ՝ ոչ եմք արժանի «բանալ զբերանս մեր»[164]:

Զայս խոստովանեալ արտաւարաձայն երգովք[165] *առ Հայր երկնաւոր՝ տեսանէին*[166] *զՈրդին Աստուծոյ ի միջի իւրեանց: Վասն որոյ ուրախացեալ հայցէին ողորմութիւն համազգեացն, յիշել «զուխտ սիրելոյն իւրոյ Աբրահամու»*[167]*, զխոստումն*[168] *Սահակայ, զողորմութիւն իւր [յ]Իսրայէլ, պաղատելով առ Որդին Աստուծոյ՝ ասէին.*

«Եւ արդ, Տէր, նուաղեցաք >եւ[169] տառապեցաք վասն մեղաց մերոց»: «Ոչ գոյ ի ժամանակիս յայսմ»[170] *ըստ աւրինացն մատուցանել ընծայս: Եւ ապա մարգարէական ակամբ զնորոյ ընծայիս*[171] *տեսեալ զպատուականութիւն*[172]*, որով եկեղեցի յառաջեալ հաճոյանայ «անձամբ խոնարհութեամբ եւ հոգւով տառապիլ ընդունելի գոլ»*[173] *քան զզուարակս*[174] *եւ զխոյս եւ զգառինս, գնալ զկնի Տեառն, «խնդրել զերեսս նորա»*[175]*, փրկիլ սքանչելեաւք Տեառն եւ տալ փառս անուան նորա:*

«Եւ յամաւթ լիցին, որք ցուցան չարիս ծառայից քոց, զաւրութիւնք նոցա խորտակեսցին»[176]»[177]:

«Եւ ծանիցեն զՏէր Աստուած միայն փառաւորեալ»[178] *զՅիսուս Քրիստոս:*

Եւ պսակապարծ փրկութեամբ բերկրեալ, ծանուցեալ զՍուրբ Հոգին հովանացեալ ինքեանց՝ գովէին զՍուրբ Երրորդութիւնն, աւրհնաբանէին զՀոգին կենդանարար՝ ասելով.

«Աւրհնեալ ես դու, Տէ՛ր Աստուած հարցն մերոց»:

«Եւ աւրհնեալ է անուն >սուրբ[179] փառաց քոց»:

Եւ «աւրհնեալ ի տաճարի փառաց»:

Եւ «աւրհնեալ ի վերայ աթոռոյ արքայութեան»:

«Աւրհնեալ, որ նստիս ի քրովբէս եւ նայիս յանդունդս»:

Եւ «աւրհնեալ ի վերայ հաստատութեան երկնից»[180]:

Եւ աստ, առ ամենասուրբ Հոգին գովեստ ընծայեալ[181] *ամենայն արարածովք, զհամագոյ Երրորդութիւնն աւրհնելով բարձրացուցանէին:*

Ուստի եւ եկեղեցի, նոցին մանկանց[182] *նմանութեամբ անհնազանդ քաղդէացւոց*[183] *թագաւորին սատանայի, հրաժարէ ի նորա կամարարութենէ բոլորովին: Իսկ նա բորբոքէ զամենակէզ ցանկութիւնս պատրանաց հնազանդիլ նմա, որպէս առաջին մարդն ճաշակմամբ*[184] *>պտղոյն*[185]*: Իսկ եկեղեցի, որդի գոլով անսկիզբն Հաւրն եւ մարմին երկրորդ Ադամայ Քրիստոսի, ոչ խաբի մասնաւոր անցաւուրքս անկանիլ*[186] *երկրպագութեամբ եւ առնել զկամս նորա երկրաւորս եւ ի վերուստ ի վայր կործանողս: Եւ նա շուրջ բորբոքեալ է զվարումն*[187] *քառասուն եւ ինն կանգուն*[188] *եւ ոչ կարէ հասուցանել մինչեւ ի յիսունն, որ է արքայութեանն պարիսպ: Իսկ եկեղեցի, որպէս մարմնոյ արմատ ունելով զհինն*

Ադամ եւ յանցանաց նորա կցորդ գոլ զինքն, խոնարհութեամբ, որպէս սուրբ մանկունքն, զամենայն աւուրս պաղատին խոստովանութեամբ.

«Մեղաք, անաւրինեցաք[189], ոչ պահեցաք եւ ոչ արարաք, որպէս[190] պատուիրեցեր մեզ»[191] *ի դրախտին եւ առյապայ:*

Եւ թէ՝ «Արդարութեամբ ածեր ի վերայ մեր՝ վասն մեղաց մերոց»[192]:

Վասն որոյ գթացեալ Հայրն, որ առաքեաց վասն մեծի ողորմութեանն[193] իւրոյ զՈրդին իւր՝ խաչիւ փրկել զմարդիկ, նոյնպէս եւ այժմ ի սատանայի պատրանաց փրկէ զեկեղեցի խաչիւ եւ արեամբ Որդւոյ[194] իւրոյ յասելն.

«Մի՛ մատներ[195] ի սպառ վասն անուան քո, մի՛ ցրեր զուխտ քո, մի՛ բացէ առներ[196] զողորմութիւն >քո[197] ի մէնջ»[198]:

Ուստի եւ ծնունդ էական Հաւր, որ թափեաց զինքն ի մեր կերպարանս, յիշելով միշտ զխոստումն հարցն զսրբոց աշակերտացն, թէ «ընդ ձեզ եմ մինչ ի վախճան աշխարհի»[199]: Առ որ մաղթեմք թէ՝

«Արդ՝ նուաղեցաք մեք վասն մեղաց մերոց, եւ ոչ գոյ ի ժամանակիս իշխան, մարգարէ եւ առաջնորդ»[200], *այսինքն մաքուր հոգի եւ աստուածընկալ միտք, հոգւոյն շնորհաւք առաջատես եղեալ եւ աստուածահաճոյ եւ անզբաղ աղաւթս իբրեւ զերախայրիս առաջի Տեառն մատուցող: Այլ «պատարագ Աստուծոյ» այժմ[201] «ոգի խոնարհ եւ սիրտ բեկ[եալ]»[202]: Այսու հաճեա, միայն բարեգութ, եւ արա ընդ մեզ ըստ քաղցրութեան[203] քում եւ ըստ բազում ողորմութեան քում, եւ տուր փառս անուան քում եւ ամաչեցուցեալ յամաւթ արա զբանակս դիւացն[204] եւ խորտակեա[205] զզաւրութիւն[206] նոցա, որպէսզի ծանիցեն, թէ ստուգապէս Յիսուս Քրիստոս է Տէր Աստուած: Եւ ապա զՀոգին Սուրբ գովելով ասէ.*

«Աւրհնեալ, գովեալ, բարձրացեալ»[207], *երգաբանեալ:*

Եւ այսու զբազմապատիկ շնորհացն, որ բաշխեաց յեկեղեցւոյ, լրութիւն յիշեալ, գոտանայ >եւ[208] աւրհնէ եւ փառաւորէ զՀոգին Սուրբ Աստուած:

Իսկ «ի տաճարի փառաց»[209] *Որդի >ի[210] մարմինն:*

Եւ «ի վերայ աթոռոյ արքայութեան»[211] *Յիսուս ի խաչին:*

Իսկ «նստեալ ի քերովբէս[212]»[213] *Հայր:*

Եւ «ի վերայ հաստատութեան»[214] *յեկեղեցի Հոգին Սուրբ:*

Իսկ ամենայն արարածովք[215] աւրհնել զԱրարիչն[216] վասն մեծի պատուոյն, որ տուեալ է մարդկան իբրեւ գլխոյ արարածոց ճանաչել

զԱրարիչն եւ նմա մատուցանել փառս, վասնզի նովաւ փրկեալ ազատեցաւ յարարածոց պաշտելութենէ:

Եւ ապա քարոզն ի մէջ անցեալ ուսուցանէ աղաւթել, արժանաւոր վարուք[217] փրկութեան հասանել խոստացելոց:

Եւ ապա զկնի քահանայական աղաւթք կատարի:

Իսկ ի կիւրակէ «Մեծացուսցէն»[218] *զբնաւ տնաւրէնութեան[219] յայտնէ[220] զխորհուրդ, զի եթէ ոչ էր ծնեալ, ոչ էր խաչեալ, եւ ոչ մեք փրկեալ: Վասն այսորիկ, զի անախտ եւ կուսական ծնունդ եւ կամաւ[221] խաչիլ եւ թաղումն առ յանձն, յարեաւ,* «Մեծացուսցէ»[222] *ասեմք:*

Իսկ ողբաձայն սաղմոս՝ ըստ կանանց[223] սովորութեան ի վերայ գերեզմանաց ողբալ:

Իսկ ասելն «Արի, Տէր»[224] *զհրեշտակաց աւետարանութիւնն կանանց[225] յայտնէ, իսկ* «Թագաւորեսցէ Տէր >յաւիտեան[226]»[227]՝ *պատահելն Տեառն կանա[ն]ցն[228], եւ նոցա խնդութեամբ մատչելն առ նա:*

Իսկ Աւետարանն յարութեան քարոզութեամբ հրեշտակաց առ կանայսն՝ այս քարոզ Աւետարանին յաշխարհ վասն յուսոյ յարութեան մերոյ:

Իսկ կացուրդն հրամայական «ի գիշերի[229] համբառնալ զձեռս >ձեր[230] ի սրբութիւն»[231]՝ այս նշանակ գործոց բարեաց, որով վերաւրհնեալ փառաւորի Աստուած:

Եւ քարոզն խրատէ աղաւթիւք եւ հաճոյ վարիւք հանդիպել յարութեան արդարոցն եւ պարգեւաց յարուցելոյն Քրիստոսի գտանիլ[232] արժանի:

Եւ քահանայական աղաւթքն ցուցանէ զսրբոց աւրհնութիւնս ի յարութեանն: Իսկ վարումն զամբարացն առաջի Աւետարանին զլուսաւորութիւն արդարոցն ցուցանէ, եւ բուրումն խնկոցն՝ զանուշահոտ եւ զպարկեշտ վարս նոցա:

Իսկ զամբարակալքն զհրեշտակաց սպասաւորութեանն Տեառն գալստեանն ունի[ն] ակնարկումն:

Եւ առաջին Աւետարանն զառաջին գալուստն[233] Տեառն յայտնէ, իսկ երկրորդն՝ զհանդերձեալն:

Իսկ «Ողորմեայն»[234] *որպէս հարցն յաղագս Ադամայ յանցաւորութեանն պաղատանք, խոստովանութիւն զղջման, նոյնպէս եւ* «Ողորմեայն» *վասն առաջին կնոջն մաղթանս եւ որոց ի նմանէ:*

Իսկ ի գուճս արկանիլ[235] ըստ կործանման մեղանացն եւ որպէս եւ ի պատերազմի կանա[ն]ց զկուրծս բախել բնաւորեալ[236] է եւ ողբալ:

Եւ Գ «Աստուած, քաւեա» ասելն առ երեքսրբեան Երրորդութիւնն խնդրուածք, որպէս Տէրն ուսոյց զմաքսաւորն արդարացեալ այսու[237]: Ուստի խրատեալ եկեղեցի խոնարհութեամբ՝ բարձրութեան գտանի[238] արժանի՝ ասելով. «Աստուած, քաւեա զմեղաւորս»: Ոչ թուելով[239] զարդարութիւնս ըստ աւրինականին մեծամտութեան, այլ մարգարէին զղջմամբ գոչել՝ ասելով.

«Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում», *եւ թէ՝*

«Զանաւրէնութիւնս իմ >ես[240] ինձէն գիտեմ», *եւ թէ՝*

«Ցաւղեա[241] յիս մշտկաւ», *եւ՝*

«Սիրտ սուրբ հաստատեա յիս, Աստուած»

«Եւ զՀոգի Սուրբ մի՛ հաներ յինէն», *եւ՝*

«Փրկեա[242] զիս յարենէ»[243], *եւ այլն ամենայն մի ըստ միոջէ:*

Եւ որպէս ի տաճարի ելանել իւրաքանչիւր աղաւթել ըստ առաքելոյ թէ՝ «Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ[244] էք»[245]: Եւ դարձեալ թէ՝ «Տաճար Աստուծոյ սուրբ է»[246], որ էք[247] դուք:

Իսկ «Աւրհնեցէք զՏէր յերկինս»[248]՝ այս >է[249] ընդ դասս հրեղէնս[250] յարակցեալ եկեղեցի՝ ըստ Փրկչին վկայելոյ թէ՝ «Ամենայն, որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրասցի»[251]: Քանզի խոնարհընկէց[252] եղեալ ասաց. «Աստուած, քաւեա[253] զիս զմեղաւորս[254]»[255], նմին վասն[256] ընդ զաւրս հրեշտակաց դասեցաւ, եւ ձայնակցեալ սուրբ մանկանցն[257]՝ արարածովք աւրհնել զարարածոց արարիչն, եւ Գ փոխեան սաղմոսիւք զՍուրբ Երրորդութիւնն հրամայէ:

Առաջինն[258] *ակնարկէ հրանութիցն աւրհնել զՀայրն վասն ամենայն էից արարչագործութեան, խնամոց եւ կարգաց:*

Եւ երկրորդն[259]՝ զծոցածին Բան նորին զՈրդի, վասն որոյ առ նոր եկեղեցի, որ Քրիստոսիւ հաստատեցաւ ի սրբոց, չինեալ ի վերայ առաքելոց եւ մարգարէից, որոյ հիմն Տէր մեր Յիսուս Քրիստոս եղեւ, ասէ.

«Աւրհնեցէք զՏէր յաւրհնութիւն նոր», *եւ՝*

«Ուրախ եղեւ Իսրայէլ յարարիչն[260] իւր»[261],

«Որդիք Սիովնի[262]», *այս է մանկունք[263] եկեղեցւոյ,* «ցնծասցեն յարքայն[264] իւրեանց»[265] *Յիսուս Քրիստոս: Եւ թէ՝*

«Հաճի Տէր ընդ ժողովուրդս սուրբս»[266], *այսինքն ընդ մաքրեալս աւազանին մկրտութեամբ: Եւ «պարծեսցին սուրբքն փառաւք»[267], >այսինքն[268] նոքիմք իսկ պարգեւաւք Հոգւոյն, զոր ընկալան[269]:*

«Սուր երկբերան եղ ի ձեռս նոցա առնուլ հատուցումն ի հեթանոսաց»[270], *այս է զի չնորհաւքն Քրիստոսի եւ Սուրբ Հոգւոյն զաւրութեամբ վրէժ[271] առին հաւատացեալք ի դիւաց՝ կապելով զբանսարկուն՝ զթագաւորն մեղսասէր:*

«Առնել նոցա դատաստան ըստ գրոց»[272], *այսինքն յաւուր հատուցման ամբարշտաց:*

Իսկ երրորդն[273] զՀոգին պարգեւաբաշխ ուսուցանէ պէսպէս արուեստական գործարանաւք բարեբանել յաղագս անզուգական եւ բազմազան չնորհս տարածելոյ[274] յեկեղեցիս[275]:

Եւ զտունս[276] որոշեալ երրորդի փոխոյս երկոտասանաւ թիւ նոցա բաժանէ աւրհնութիւնս: Թուի[277] թէ ըստ առաքելոցն երկոտասանիցն[278] բերեն այսոքիկ նմանութիւն, որք ընկալան իշխանութիւն ի Սուրբ Հոգւոյն լինել պարագլուխ եկեղեցւոյ: Վասն որոյ ասէ.

«[Ի] ձայն գոհութեան, ամենայն հոգիք, աւրհնեցէք >զՏէր[279]»[280]:

Զայժմուս[281] եւ զհանդերձելոցն գոհութիւն պարփակեալ ակնարկէ վախճան սաղմոսիս եզակի անուամբ աւրհնութեան աւրհնել զՏէր[282]:

Եւ յետ այսորիկ ըստ դասս հրեշտակաց ձայնակցեալ զԲանն մարմնացեալ գովէ՝ ասելով.

«Փառք ի բարձունս Աստուծոյ»[283]:

Եւ առ Որդի միտ՝ ասելով. «Աւրհնեալ եկեալ անուամբ Տեառն»[284]: Ապա ի Հայր ամենակալ՝ ասելով. «Փառաւորեալ Հայր Սուրբ»:

Ապա առ Որդին ասէ.

«Տէր Աստուած գառն Աստուծոյ»:

Ապա առ Հոգին Սուրբ՝

«Տէր եւ Հոգի Սուրբ ի փառս Աստուծոյ»:

Եւ ապա ի միութիւն Երրորդութեանն ածեալ՝ ասէ.

«Արժանի արա, Տէր, զաւրս խաղաղութեամբ եւ առանց մեղաց պահիլ», *եւ ասելով* «Աւրհնեալ >ես[285] Տէր աստուած հարցն» *եւ Գ «յաւիտեանն»՝ երից միութեանն:*

Ապա ի Հայր ածեալ՝ ասէ.

«Աւրհնեալ Տէր, ուսո[286] ինձ զարդարութիւնս քո: Տէր, ապաւէն եղեր մեր յազգէ յազգ»,

«Տէր, ողորմեա ինձ, բժշկեա զանձն իմ»,

«Ցոյց մեզ, Տէր, զողորմութիւնս[287] >քո[288]»,

«Տէր, ողորմութիւն քո յաւիտեան»,

«Տէր, ես զքեզ յոյս եւ ապաւէն ինձ արարի, ուսո[289] զիս, զի դու ես Աստուած իմ». *այսոքիկ ի[290] Հայր:*

«Ի քէն է, Տէր, աղբիւր[291] կենաց»՝ *ի Հաւրէ բղխումն Հոգին Սուրբ:*

«Լուսով քո տեսանեմք զլոյս». *Որդւոյ լուսափայլ տնաւրէնութեամբ առ ի Հաւրէ ծագել տեսաք զլոյս աստուածգիտութեան:*

Եւ ապա առ Սուրբ Երրորդութիւնն[292] *մաղթանք՝*

«Ծագեա զողորմութիւն քո, որք ճանաչեն զքեզ»: *Ապա Առաւաւտու երգ*[293] *հանդէպ խաչին, որպէս թէ վասն խաչելոյն խոստովանութիւն յայտնապէս:*

Եւ քարոզին հրամանական խրատք հայցել ի հասարակաբաշխ շնորհացն զպէսպէս պարգեւս:

Եւ ապա միջնորդն Աստուծոյ մատուցեալ գոհանայ վասն հանրական ձրիցն:

Իսկ «իմանալի լոյս» ասելով՝ զգիտութիւն Քրիստոսի հաւատացելոց ասէ: Եւ Գ սրբասացութեամբ «խաչեցար»-ն ասելով՝ որպէս հրեղէն պարսպաւ քաղաքականութիւն եկեղեցւոյ շուրջ արկեալ պարփակի գիշերական եւ առաւաւտին համբարեալ[294] *աղաւթք, եւ փոխանակ աւրինական գառանցն*[295], *որ առաւաւտուց*[296] *եւ երեկոյից մատչէին, այս ի նոցունց ժամսն մատչի յեկեղեցւոջ պտուղ շրթանց խոստովանել զչարչարանս Փրկչին:*

Իսկ ՃԺԴ[297] *սաղմոսն մանկացելոց մկրտութեամբ աւրհնեալ Հաւր որդէգրելոց հրամայէ.*

«Աւրհնեցէք, մանկունք, զՏէր[298]»[299], *այսինքն որդիացեալք շնորհաւք՝ զՊարգեւատուն:*

«Եւ զանունն[300] Տեառն»[301], *այսինքն՝ որ բազմատուն վասն մեր կոչի:*

«Եղիցի անուն Տեառն աւրհնեալ յայսմհետէ մինչեւ յաւիտեան»[302]: *Այս զանզրաւ եւ զանսահմանելի յաւիտեանն յայտնէ:*

«Բարձր է ի վերայ ամենայն ազգաց Տէր»[303]:

Այս ի խաչին զվերամբարձութիւնն ցուցանէ, որով >եւ[304] *ազատեալ բարձրացոյց զամենեսեան, որք ընկալանն:*

«Եւ յերկինս են փառք նորա»[305]:

Ցորժամ գայ[306] *նովին մարմնով եւ խաչիւն եւ փառաւք Հաւր, եւ ամենայն երկնային զաւրքն ընդ նմա:*

«Ո՞վ որպէս Տէր Աստուած մեր ի բարձունս բնակեալ, եւ զխոնարհս տեսանէ»:

Այսինքն զազգս մարդկան անկեալ նախկի[ն] յանցանաւք ի գուբս կորստեան, զորս կանգնեաց անճառելի խոնարհութեամբն խաչիւ եւ թաղմամբն իւրով Քրիստոս:

«Ցարուցանէ զաղքատս յերկրէ եւ զտառապեալս յաղբեւաց»[307]: *Զքովանդակ մարդկային բնութիւնս, եւս առաւել զհեթանոսս զստուգապէս յաստուածգիտութենէ անտի աղքատացեալս*[308]: *Եւ «տառապելոց» յիշատակաւ զբազմաթախիծ նոցա վիշտս ասէ, որ իբրեւ յիմարեալս՝ այնպիսի յոգնակի գարշութեամբ յաղբիս կռամոլութեան յանխնայ թաւալէին, զորս մեծապէս հրաշագործեալ այնքան գերամբարձեալ բարձրացոյց եւ պայծառացոյց շնորհաւք, մինչեւ զի եւ յանճառելիսն հանեալ աստուածացոյց իսկ:*

Եւ «նստոյց» ընդ աբրահամեանսն եւ ընդ >եւս[309] *երկնակեացսն՝ «բնակեցուցանելով», ըստ գրեցելումն, «զամուլ» զհեթանոսք եւ զամենայն անպտուղսն «ի տան»*[310], *զոր դարձուցեալ յամլութենէ անտի՝ բազմապտուղս եւ յոգնածինս*[311] *յարդարեաց լցեալ պտղովք արդարութեան*[312], *«բերկրեալ» անմահ մանկանց բազմութեամբք ի տան Տեառն բնակեալ, ուր Տէրն աւթեւանս յոքունս եւ բազմագունակս արտայայտեաց: Իսկ յարակցեալ յայսմ եւ յԱրեւագալն սաղմոսել: Այս ըստ գրեցելումն թէ՝ «Աւրհնեցէք զԱստուած մեր, սաղմոս ասացէք այնմիկ*[313], *որ նստի յերկինս երկնից ընդ արեւելս, վասն զի Տէր է»*[314]: *Եւ զի սկզբնաչարն աւձ ի ծագել լուսոյն սկիզբն արար խաբէութեան պատրանաց նախաստեղծիցն մինչեւ ցերրորդ ժամն, վասն որոյ արժան է ի նոյն ժամու աղաւթել առ Տէր, զի մի՛ յանպատրաստ կալով՝ գունակ նորա պատրանաւք կործանիցիմք ի նենգաւորէն, այլ արդարութեանն Արեգական լուսով պայծառացեալք*[315] *վերականգնեսցուք շնորհաւք ի նոյն ժամու վասն մեր ծագողին զլոյս:*

Եւ դարձեալ, զի յայսմ ժամու համաւրէն ազգք[316] *մարդկան, հասեալ յատեան անաչառ եւ ահաւոր դատաւորին, սպասեալ յաւիտենականն հատուցման ըստ գործոց, եւ յաղագս այսորիկ աղաւթելի է ի ժամուն յայնմիկ*[317], *որպէսզի ողորմութեամբ հատուցման խոստացեալ անճառ բարեացն հասանել եւ ապրել*[318] *յաններելի սպառնութեանցն, զոր մարգարէին ասէ. «Ընդ առաւաւտս սպանանին*[319] *ամենայն մեղաւորք»*[320]:

Իսկ յԵրրորդ ժամն առաւելապէս աղաւթելի է շնորհ ունել կենագործողին պատկառաբար, վասն զի յերրորդ ժամու հաւանեալ աւձին՝ ճաշակեաց կինն ի հրաժարեցուցեալ ծառոյն, վասն որոյ Որդին Աստուծոյ յերրորդ ժամուն խաչեցաւ ըստ գրեցելոյ սրբոյն Մարկոսի[321]: *Ուստի եւ Սուրբ Հոգին յերրորդ ժամուն էջ յառաքեալսն յաւրն Պենտէկոս-*

տէից[322]: Եւ կանոնեցաւ ի նոցունց յերրորդ ժամու պատարագել զՔրիստոս, զի յայն ժամու հատանի վճիռ յարդար դատաւորէն ի վերայ մեղաւորաց, յորում հատին զվճիռ[323] մահու անմահ դատաւորին: Ցայս պատճառի աղաւթել պարտ է փրկիլ ի պատժոց անիրաւացն եւ գտանել ողորմութիւն ի դէպ ժամանակի յայմանէ, որ է աւրհնեալ յաւիտեան:

Իսկ Վեց ժամուն, վասն զի ճաշակեալ նախաստեղծիցն ի սահմանեալ պտղոյն եւ մերկ խաւարասփած[324] տերեւովն պակուցեալ մնային՝ դատապարտեալք ի խղճէ մտաց իբրեւ զծառայք մեղաց: Ցաղագս այսորիկ իշխանն մահու ի վեց ժամու աւուրն հասանէ պատերազմաւ առ ամենայն ոք եւ յաղթել փութայ այնոցիկ, որք[325] գունակ նախնեացն անպահպանաբար մերկանան զպատուճանն սրբութեան: Վասն որոյ եւ Տէրն փառաց ի նոյն ժամու ուրբաթուն մերկացեալ ի վերայ փայտին եւ քղանցազգած[326] եղեալ՝ ճաշակեաց զլեղին [եւ] ի խաւար զլուսաւորացն շրջէ զծագումն[327]: Ցայն սակս աղաւթել հարկաւոր է ի նոյն ժամու, որպէսզի մի՛ քատակ Ադամայ խաւարամած յամաւթ մերկութեան արտաքինն ըմբոշխնիցէ խաւար, այլ պայծառ եւ յստակ լուսով[328] լցեալ ի մշտածագ լուսոյն, առատ իւղով[329] զվարումն լապտերացն անշէջ պահելով ըստ զգաստասէր[330] եւ խոհեմ կուսիցն[331]՝ մտցուք սրբութեամբ առ փեսայն երկնաւոր Քրիստոս, որում փա՛ռք յաւիտեան:

Իսկ Իններորդ ժամն ըստ այնմ առադրի, վասն զի ի ժամուն, յորում յանցեաւ Ադամ եւ յետ մեղանացն յամեաց ի դրախտն, նոյնչափ եւ յաւր փառաւորութեան[332] իւրոյ Քրիստոս չարչարեցաւ ի վերայ խաչին, որպէս եւ ասէ Եւսեբի Եմեսացի[333]: Եւ յորժամ վասն անզղջական խոստովանութեան դատապարտեցան ի հրամանէն ելանել ի փափկութեան[334] վայրէն, ի նոյն ժամու Ստեղծիչն եւ Տէրն արարածոց արձակեաց զմարդկային հոգին աստուածացեալ, եւ լուծեալ զզաւրութիւն[335] մահու, արձակեաց զարգելեալ եւ զկապեալ հոգիսն ի բռնութենէ մահու: Եւ ի ժամուն[336], յորում փակեցաւ դրախտն[337], փշրեցան ախք դժոխոց[338]: Եւ յորժամ ծածկեցաւ ծառն կենաց, բացաւ աղբիւրն[339] կենաց ի կողէն: Եւ ի ժամուն, յորում մերժեցաւ Ադամ յԱդինայ, յայնմ ժամուն[340] աւազակն վասն խոստովանութեանն եմուտ ի նոյն կարապետ որոց անդ են դառնալոց: Վասն որոյ աղաւթելի է ի նոյն ժամու, զի մտցուք փառաւք անդ[341], ուր Տէրն հորդեաց ճանապարհ մեզ կենդանութեան:

Իսկ Ժ-երորդ ժամուն, յորում Տէրն կենաց ընդ մեռեալս էջ ի շիրիմ մահացելոցս, անապականութեան[342] հաստատեաց մարդկան[343] սեռի: Եւ ի ժամու առաջին մարդոյն մաշկասփած լինելոյ պատի պաստառակալաւք բնակեալն ի լոյս անհպելի: Եւ յորում ժամու Ադամ հեռացաւ ի դրախտէն, խոնարհեալ էջ ի սիրտ երկրի ընդ աջմէ Հաւր գահակալեալն: Ուստի արժան եւ պարտ է ի նմին ժամու աղաւթել, որպէսզի որ էջն ի ստորին կողմ երկրի, ընդ իւր տարցէ եւ զմեզ՝ հանելով ի վերին աշխարհն՝ անմահ եւ անապական մարմնով նորոգեալ:

Իսկ Երեկոյին միայնութիւն աղաւթից գոհութիւն վասն զտիւն կատարելով ժամաւքն լցեալ ըստ ժամուցն: Նաեւ պաճարացն[344] հասեալ ի խոնարհել լուսաւորին մեծի[345]՝ աւելի փոյթ ունին ի լրութիւն որովայնի յաղագս պակասութեան գիշերոյն[346]: Վասն որոյ առաւելապէս եւ[347] զխափան գիշերոյն զմտաւ ածեալ աղաւթէ եկեղեցի՝ ըստ մարգարէական ձայնին ասելով.

«Ես առ Աստուած կարդացի... ընդ երեկոյս»[348]:

Եւ սկսանի զսաղմոսն Զե[349]:

«Խոնարհեցո[350], Տէր, զունկն քո եւ լուր ինձ, զի աղքատ եւ տնանկ[351] եմ»[352]:

Այսինքն՝ որպէս կնոջն յանցաւոր ծնունդ գոլով՝ պաղատի զտարագրական աղքատութիւն եւ զաղէտսն տնանկութեան[353]:

«Ցաւր նեղութեան կարդացի առ քեզ»[354], եւ

«Մեծ եղեւ ի վերայ իմ ողորմութիւն քո»[355]:

Այս է Միածնի Որդւոյն առաքմամբ, որով լուծան դատակնիք մահու եւ բարձան[356] անէծքն տրտմագին յազգէ մարդկան: Եւ թէ՝

«Անաւրէնք յարեան ի վերայ իմ»[357], եւ թէ՝

«Դու, Տէր Աստուած >իմ[358], գթած >ես[359] եւ ողորմած»[360],

«Կեցո[361] զորդի աղախնոյ քո»[362] Եւայի այլաւքն հանդերձ:

Եւ ապա[363] ՃԼԹ[364] սաղմոսիւն ի նախահաւրն դէմս մաղթէ՝ ասելով.

«Ապրեցո[365] զիս, Տէր, >ի[366] մարդոյ չարէ»[367]:

Այսինքն ի բանսարկու թշնամւոյն[368], որ նախանձեալս չարացաւ եւ խորհեցաւ զանաւրէնութիւն ի սրտի[369] եւ պատրեալ եհան զմեզ ի կենաց[370] վայրէ:

Եւ այսպէս զբազում վտանգից արարեալ յիշատակ՝ երգէ զՃԽ[371] սաղմոսն.

«Տէր, կարդացի առ քեզ, եւ լուր ինձ»[372]:

Եւ[373] «պատարագ երեկոյի զհամբարձումն ձեռացն» *լինել մաղթէ, եւ* «խունկ ընդունելի զաղաւթսն»[374] *յիշել զհամբառնալ ձեռաց Տեառն*[375] *եւ ի Հաւրէ խնդրել զթողութիւն խաչողացն, զոր հանապազ առնել պարտիմք եւ մեք:*

Եւ «դնել պահապան բերանոյ եւ ամրութիւն շրթանց եւ անխոտոր մնալ սրտիւ»[376] >*եւ այլն ամենայն*[377]*:*

Եւ[378] *զկնի այսմ* ՃԽԱ[379] *սաղմոսիւն* «ձայնիւ կարդալ[380] առ Տէր» *եւ* «հեղուլ զաղաւթս եւ զնեղութիւնս պատմել առաջի նորա» *եւ* «նուաղիլ[381] >ի[382] հոգւոյն»[383] *պարգեւաց ի յերեւելի եւ յաներեւոյթ թշնամեաց եկեղեցւոյ Քրիստոսի:* «Հանել» *մաղթէ* «ի բանդէ զոգին», *այսինքն ի չարեացն*[384] *կապանաց, որ են մեղք, եւ* «սպասել արդարոցն հատուցման»[385]:

Գ սաղմոսիւք եկեղեցի հայցէ յերից Միութեանցն առ ի զփրկիլն եւ աւրհնել զարարիչն լուսաւորացդ, որ ի տիւ եւ ի գիշեր ծագին:

Եւ ապա առ իմանալի «լոյս» *գովեալն, որ է ինքն, յորմէ սարսէ աղջամողջ ոգւոց, դարձեալ եւ հայցէ* «ծագել սրտին» *եւ* «միաբան գոհութիւն մատուցանել» *երից անձամբ Միութեանն:*

Եւ ապա ըստ հնոյն նուիրելոյ[386] *Դ մասն դորակի գինոյ*[387]*, որ մեզ պատկանի վկայիցն խոստովանական համարձակախաւսութիւն, որք մեծաւ յաւժարութեամբ զարիւնս*[388] *անձանց իւրեանց Տեառն նուիրեցին, որոյ հանգէտ մեսեղին երգեալ առ ի մէնջ կայ վկայ առաջի խաչին:*

Եւ «ուղիղ[389] աղաւթք խնկոցն[390]»[391] *նմանութիւն պատարագից ճշմարիտ ճգնողացն կատարման, որով հրճուեալ զուարճանայ եկեղեցի: Զի եթէ բանականն ամենայն պատարագ ասի ի Պաւղոսէ*[392]*, ապա ի սաղմոսացն, որ ի մէնջ երգի, ոմն նաչիհ, ոմն եւղ, ոմն գինի, ոմն խունկ ընդունելի եղիցի: Որպէս եւ խնկարկու հաշտարարն եւ սաղմոսն ցուցանէ եւ* «համբառնալ ձեռաց պատարագ»*:*

Եւ ժողովեալ զիրին միտս յինքն՝ քահանայն միջնորդ Աստուծոյ եւ մարդկան, ի մէջ անցեալ, զաղաւթս ամենեցուն ընծայ[393] *մատուցանէ Աստուծոյ՝ ասելով.*

«Լուր ձայնից մերոց, Տէր Աստուած մեր, սրբեա զպատարագս ի հոտ[394] անուշից ի հաճոյս քեզ»:

Եւ տայ «զխաղաղութիւն ամենեցուն»՝ *ընդունելով յամենեցուն* «եւ զիւր ոգւոյն»:

Հրամայէ «երկրպագել Աստուծոյ» *եւ լսէ զյաւժարական*[395] *սրտիցն կամս թէ՝* «Առաջի քո, Տէր»:

Գոհանայ «յաղագս խաղաղութեան տուընջեանն» *եւ մաղթէ նոյն գունակ* «առանց մեղաց եւ գայթակղութեան[396] զգիշերն անցուցանել եւ հաստատուն եւ անշարժ կալ ի հաւատս» *եւ այնպէս* «միշտ» *եւ հանապազ* «զվայելչական[397] փառաբանութիւն վերառաքել Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ[398]»: *Եւ ապա* «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր»*: Եւ այսու, որ ի ծննդենէն Փրկչին մինչեւ ի յարութիւնն զբոլոր տնաւրէնութեանն յայտնէ զխորհուրդ՝ ողորմութիւն ինքեանց հայցելով*[399]*, զոր ամրութիւն անսասանելի եւ պարիսպ հրեղէն ասացին եկեղեցւոյ >սրբոյ*[400] *զխոստովանութիւնս զայս աստուածաբանիցն ջոկքն:*

Եւ ապա յետ այսմ հաշտարար պատարագի խոստովանութեան քաջայոյս եղեալ, հոգւոյն ակամբ ի վեր կոյս նայելով՝ ասէ. «Համբարձի զաչս իմ ի լերինս»[401]*:*

Այսինքն[402]՝ *յերկինս*[403] *ակն ունել* «աւգնութեան ի Տեառնէ՝ յարարողէն երկնի եւ երկրի», *եւ* «պահիլ աջոյ ձեռամբ Տեառն»[404]:

Եւ «արեւու ի տուէ եւ լուսնի[405] ի գիշերի ոչ մեղանչելն», *այսինքն ոչ գործել զչար, այլ* «պահիլ» *հաւատացելոց* «անձանց» *անսասան* «յամենայն չարէ»[406] *զտիւ եւ զգիշեր զաւրութեամբ Որդւոյն Աստուծոյ եւ ամենայաղթ խաչին նշանաւ:*

«Տէր պահեսցէ զմուտ քո»[407]:

Այսինքն է ծնունդ մարմնական, որ է մուտ մեր յաշխարհ, եւ աւազան[ի]ն ծնունդ ոչ նոյնպէս, այլ վերստին անապական:

Իսկ «ելն[408]»[409]՝ *մահն մարմնական, որ է ելք հոգւոյ ի մարմնոյ: Եւ դարձեալ* «ել» *յարութեամբն ի հողոյ՝ վերելանելով յերկնայինսն:* «Ցայսմհետէ մինչեւ յաւիտեան»[410]*, որ է ի ներկայումս եւ անորիշ յապառնոյն*[411] *պահել Սուրբ Երրորդութեանն եկեղեցի մինչեւ յանապառ*[412] *յաւիտեանս*[413]*:*

Իսկ Խաղաղականին, որ է սկիզբն գիշերոյն, ասեն.

«Ի կարդալ իմում լուար ինձ, Աստուած»[414]:

Եւ բազմագունակ սաղմոսիւք մաղթեն[415] *զփրկութիւն անձանց եւ խնդրեն միագումար ձայնիւ զերկնայինն զխաղաղութիւն*[416] *տալ ի գիշերի եւ պահպանիլ եւ ամրանալ յաներեւոյթ զաւրաց չարին, որ շրջին ընդ խաւար, որպէս ասէ.* «Ի նմա շրջին գազանք անտառի[417]»[418]*, ամենայաղթ եւ պատուական խաչիւն՝ ասելով.* «Ցամենայն սատանայական խռովութենէ[419] խաղաղացոյ զմիտս եւ զխորհուրդս ի գիշերիս յայսմիկ եւ յամենայն ժամանակի»:

Վասն որոյ պարտ եւ արժան է կնքել զգայութիւնսն, >եւ[420] որպէս ի գերեզմանն կնքով >խաչին[421] մտանեն հաւատացեալք, նոյնպէս եւ ի մահիճսն մտանելն նովին կնքովն ամրանալ: Նմանապէս եւ ի յառնելն ի հանգստենէ քնոյ նովին իսկ խաչին կնքովն վաղվաղակի ամրանալ, եւ հրեշտակաց նմանութեամբ յաւրհնութիւնս եւ գովեստս Տեառն զարթուցեալ՝ փառաւորելով զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

1 Ա սրբազան
2 Ա ><
3 Ա ><
4 Ա բացայայտութիւն
5 Ա ասդարարութիւն, Բ աստարարութենէ
6 Բ ><
7 Բ գոչմանն
8 Վ. Ցակոբեան, Կանոնագիրք հայոց, Ա, Երեւան, 1964 թ., էջ 27—28
9 Ղուկ. ԻԴ 52
10 Ա յարեւից
11 Երանելւոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան, ճառ Դ, Վիեննա, 1832, էջ 56
12 Ա յասել
13 ԱԲ Իսրայէղի
14 Ա արեւելս
15 Բ զոգւո
16 ԱԲ աստուածային
17 Դ Թագ. ԺԳ 17
18 Բ ի խոր
19 Բ անգմանն
20 Ա ><
21 Ա յարուցեալ
22 Ա կանկուն
23 Բ ><
24 Ա երկրպագութիւն
25 Բ երկնային
26 Ա սրբոց
27 ԱԲ փեսա
28 Մատթ. ԻԵ 6
29 Ա եթէ
30 Սաղմ. ՃԺԸ 62
31 Ա առնիլ
32 Ես. ԻՁ 9
33 Գործ. ԺՁ 25
34 Բ անգումն
35 Բ հարեալ
36 Բ դատաւորի
37 Սաղմ. ՃԽԲ 2
38 Սաղմ. ԾԵ 9
39 Ա բացես
40 Սաղմ. Ծ 15
41 Բ ի յողորմած
42 Սաղմ. Գ 1

43 Բ զախուռն
44 Բ ի վերա
45 Բ ><
46 Բ եւ փառք
47 Սաղմ. Գ 3
48 յաղագս
49 Սաղմ. Գ 5
50 Սաղմ. Գ 7
51 Սաղմ. Գ 7
52 Ա զըհայհոյութիւն
53 Ա յապստամբէն
54 ԱԲ Բելիարա
55 Ա ><
56 Սաղմ. ՁԷ 2
57 Բ այլաւք
58 Ա թե՞՞՞
59 Սաղմ. ՁԷ 4
60 Ա ննջեն
61 Սաղմ. ՁԷ 5—6
62 Բ անգեալ
63 Սաղմ. ՁԷ 7
64 Ա իջանել ի դժոխս
65 Բ որով
66 Ա վտանգին
67 Ա տնանգ
68 Սաղմ. ՁԷ 16
69 ԱԲ տնանգութեամբ
70 Բ անգաւ
71 Բ ջուր
72 Սաղմ. ՁԷ 18
73 ԱԲ արարէր
74 Սաղմ. ՁԷ 19
75 Բ սոյնպէս
76 Ա պատշաճ է
77 Ա էր
78 Ա ><
79 Ա ><
80 Սաղմ. ՃԲ 1
81 Սաղմ. ՃԲ 2
82 Սաղմ. ՃԲ 3
83 Սաղմ. ՃԲ 9
84 ԱԲ գթա
85 Ա գթասցի. Բ գթա
86 Բ յերկեղագին
87 Ա աղաչողս
88 Սաղմ. ՃԲ 13
89 Սաղմ. ՃԲ 22
90 Սաղմ. ՃԽԲ 1
91 Ա ասէ
92 Ա բացես
93 Բ արդանա
94 Սաղմ. ՃԽԲ 1—2
95 Բ ><
96 Սաղմ. ՃԽԲ 3
97 Բ բնակութիւն իմ եւ կայան
98 Բ ><
99 Սաղմ. ՃԽԲ 4—5
100 Բ ցանգա
101 Ա ազատն
102 Սաղմ. ՃԽԲ 6
103 Սաղմ. ՃԽԲ 8
104 Ա ><
105 Բ ներկայացնում է Ցովհ. Օձնեցու «Ցաղագս կարգաց Եկեղեցւոյ» գործից մի հատուած (տես Տեառն Ցովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք, Վնտ., 1834, էջ 184). «Եւ այսպէս սրբեալ եւ ամրացեալ եւ սգաստացեալ ե սաղմոսիւքն յաղագս ե սգայութեանցն մաքրութեան խնդրեաց յԱստուծոյ զՍուրբ Հոգւոյն շնորհսն յաւգնականութիւն առաջնորդ լինել յերկիր բարութեանցն, ուստի ելաք մախանաւք չարին, յասելն թէ՝ «Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղեղ»: Սաղմ. ՃԽԲ 9—10
106 Սաղմ. ՃԽԲ 10
107 Բ անձնանց

108 Սաղմ. ՃԽԲ 12
109 Ա սրբով քո
110 Ա քաղհանձայն
111 Ա եկեղոց
112 Բ աւգուտ
113 Բ ><
114 Ա ազգ
115 Յեսու Զ
116 Բ հնչիւն
117 Բ ><
118 Ա կործաննման
119 Ելք ԺԵ 1—19
120 Բ Օր. ԼԲ 1—21
121 Բ Օր. ԼԲ 22—43
122 Ա Թագ. Բ 1—10
123 Ես. ԻԶ 9—20
124 Բ ><
125 Ա խրատ
126 Ես. ԼԸ 17, 20
127 Բ զմեղս
128 Յովն. Բ 3—10
129 Ա ><
130 Բ ուխից
131 Յովն. Բ 9
132 Ամբ. Գ 1—19
133 Ամբ. Գ 3
134 Բ ><
135 Ա նետաձիգք
136 Ա ><
137 Ամբ. Գ 12—13
138 Ա մարտիրոսաց
139 Բ անուշահոտ
140 Բ հրեշտակաց
141 Սաղմ. ԻԹ 5
142 Ա պատասխանատուութիւն
143 Բ յաւր
144 Բ ><
145 Ա ապրելն
146 Ա տանջանաց
147 Ա ալելուիայ
148 Ա պիպոյանամք
149 Բ սրոբէականս
150 Ա գոհութիւն
151 Ա մարմնս
152 Ա առաքեաց
153 Բ բարեաց
154 Թուոց ԺԳ
155 Բ Կոր. Բ 11
156 Ա ճգնաւղաց
157 Բ մանկանց
158 Բ զինուորք
159 Բ սգայութիւնս
160 Բ նախաստեղծից
161 ԱԲ չորեքնիւթայ
162 Բ կործամանն
163 Դան. Գ 27—31
164 Դան. Գ 33
165 Բ ողբովք
166 Բ տեսանէին
167 Դան. Գ 34—35
168 Ա զխոստումն
169 Բ ><
170 Դան. Գ 37—38
171 ԱԲ ընձայիս
172 Ա պատուականութիւն
173 Դան. Գ 39
174 ԱԲ զւարակս
175 Դան. Գ 41
176 Բ խորտակեսցի
177 Դան. Գ 44
178 Դան. Գ 45
179 Ա ><
180 Դան. Գ 52—56
181 ԱԲ ընձայեալ
182 Բ մանգանց
183 Բ քաղթեսցոց
184 Բ ճաշակմամբն
185 Բ ><
186 Բ անկանել
187 Բ զվարումն

188 Դան. Գ 47
189 Ա անաւրէնեցաք
190 Ա զոր
191 Դան. Գ 29—30
192 Դան. Գ 29
193 Բ ողորմութեան
194 ԱԲ որդոյ
195 Ա մատել
196 Ա առնել
197 Ա ><
198 Դան. Գ 34
199 Մատթ. ԻԸ 20
200 Դան. Գ 37—38
201 Բ աժմ
202 Սաղմ. Ծ 17
203 Բ հեզութեան
204 Բ դիւաց
205 Բ խորտեա
206 Բ զզաւրութիւնս
207 Դան. Գ 52
208 Բ ><
209 Դան. Գ 53
210 Ա ><
211 Դան. Գ 54
212 Բ քրովբէս
213 Դան. Գ 55
214 Դան. Գ 56
215 Ա արածովք
216 Դան. Գ 57—86
217 Բ վարիւք
218 Ա մեծացուսցէն
219 Ա տնաւրէնութիւն
220 Ա որում է
221 Բ կամ
222 Բ մեծացուսցէ
223 Ա կանաց
224 Բ ներկայացնում է Օձնեցու «Վասն մեծի աւուր միաշաբաթին» գործից մի հատուած (տես նշ. հրատ., էջ 228) «Քանզի մինչ-չեւ եւս զԱւետարանն կարդացեալ դեռեւս ի Թաղման վարկանելով զՏէրն, արտաքուստ ի ներքս ի գերեզմանն աղաղակեն ողբերգագին ձայնիւ թէ՝ «Արի, Տէր, աւգնեա մեզ եւ փրկեա զմեզ վասն ան[ուան քո]»: Եւ լսեն պատասխանի ի մարգարէէն աւետեաց եթէ՝ «Թագաւորեսցէ Տէր յաւիտեան, Աստուած քո, Սիոն, ազգէ յազգ»: Այլ միտք «Արի, Տէր»... Սաղմ. ԽԳ 27
225 Բ կանացն
226 Բ ><
227 Սաղմ. ՃԽԵ 10
228 Բ կանացն Տեառն
229 Ա գիշեր
230 Բ ><
231 Սաղմ. ՃԼԳ 2
232 Ա գտանել
233 Բ գալուստն
234 Ա ողորմայն
235 Բ հարկանիլ
236 Ա բնաւորել
237 Ղուկ. ԺԸ 13
238 Ա գտանի
239 Բ թեւլով
240 Ա ><
241 ԱԲ ցաւղեայ
242 Ա փրեա
243 Սաղմ. Ծ 3, 5, 9, 12, 13, 16
244 Ա կենդանուոյ, Բ կենդանոյ
245 Բ Կոր. Զ 16
246 Ա Կոր. Գ 17
247 է
248 Սաղմ. ՃԽԸ 1
249 Բ ><
250 Բ հոգեղէնս
251 Մատթ. ԻԳ 12
252 Բ խոնարհընդէց

253 Բ քաւեայ
254 Ա մեղաւորս
255 Ղուկ. ԺԸ 13
256 Բ վասն որոյ
257 Բ մանգանցն
258 Սաղմ. ՃԽԸ
259 Սաղմ. ՃԽԹ
260 Ա յարարածս
261 Սաղմ. ՃԽԹ 1—2
262 Բ Սիոնի
263 Բ մանգունք
264 Բ յարքա
265 Սաղմ. ՃԽԹ 2
266 Սաղմ. ՃԽԹ 4
267 Սաղմ. ՃԽԹ 5
268 Բ ><
269 Բ ընգալան
270 Սաղմ. ՃԽԹ 6—7
271 Բ վրէժս
272 Սաղմ. ՃԽԹ 9
273 Սաղմ. ՃՄ
274 Բ տարածել
275 Բ յեկեղեցի
276 Ա տուն
277 Բ թւի
278 Ա երկոտասանիցն
279 Ա ><
280 Սաղմ. ՃՄ 5—6
281 Բ զաժմուս
282 Ա զՏէր աւրհնել
283 Ղուկ. Բ 14
284 Մատթ. ԻԱ 9
285 Բ ><
286 ԱԲ ուսոյ
287 Ա զողորմութիւն
288 Ա ><
289 ԱԲ ուսոյ
290 Ա ինձ
291 Ա աղբեր
292 Ա երբորդութիւնն
293 Ա առաւաւտուն երգք
294 Բ պարփակեալ
295 Բ գառնանցն
296 Բ առաւտուց
297 Ա ճ եւ ԺԴ երորդ
298 Բ մանգունք
299 Սաղմ. ՃԺԳ 1
300 Բ զանուն
301 Սաղմ. ՃԺԳ 1
302 Սաղմ. ՃԺԳ 2
303 Սաղմ. ՃԺԳ 4
304 Ա ><
305 Սաղմ. ՃԺԳ 4
306 ԱԲ գա
307 Սաղմ. ՃԺԳ 7
308 Բ աղքատացեալսն
309 Բ ><
310 Սաղմ. ՃԺԲ 9
311 Բ յոքնածինս
312 Ա արդարութեան
313 Բ այնմ
314 Սաղմ. ԿԷ 33—34
315 Բ պայծացեալք
316 Բ ազգ
317 Ա յայնմ
318 Բ ապրեալ
319 Բ սպանանէին
320 Սաղմ. Ճ 8
321 Մարկ. ԺԵ 25
322 Գործ. Բ 15
323 Բ վճիռ
324 Ա խաւարափած
325 Բ որ
326 Բ քղանցասգած
327 Մատթ. ԻԷ 34, 45
328 Բ վարիւք
329 Ա եղով
330 Բ սգաստասէր
331 Մատթ. ԻԵ 4
332 Բ փառաւորութեանն

333 Եւսեբիոս Եմեսացի, ճառ չարչարանաց (L'héritage littéraire d'Eusèbe d'Émèse, Bibliothèque du Muséon, XXIV, Louvain, 1949, էջ 56)
334 Ա փափգութեան
335 Ա զաւրութիւն
336 Ա ժամու
337 Բ դուռն
338 Բ դժոխոցն
339 Ա աղբերն
340 Ա ժամու
341 Բ անտ
342 Բ անապական յարութեան
343 Ա անմարդկան, Բ յոյս մարգկան
344 Ա պատճարացն
345 Բ մեծին
346 Ա գիշերոն
347 Բ եւս
348 Սաղմ. ԾԴ 17—18
349 Բ Հե
350 Ա խոնարհեցոյ
351 Ա տնանդ
352 Սաղմ. Զե 1
353 ԱԲ տնանգութեան
354 Սաղմ. Զե 7
355 Սաղմ. Զե 13
356 Ա բարձաւ
357 Սաղմ. Զե 14
358 Բ ><
359 Ա ><
360 Սաղմ. Զե 15
361 ԱԲ կեցոյ
362 Սաղմ. Զե 16
363 Բ ապայ
364 Ա ճ եւ Լ եւ Թ, Բ ճԼ եւ Թ
365 Ա ապրեցոյ
366 Բ ><
367 Սաղմ. ճԼԹ 1
368 Բ թշնամոյն
369 Բ սիրտի
370 Ա կենացն
371 Ա զճ եւ խ
372 Սաղմ. ճխ 1
373 Ա եւ եւ
374 Սաղմ. ճխ 2
375 Ա Տեառնն
376 Սաղմ. ճխ 3
377 Բ ><
378 Բ եւ այլ որ եւ
379 Ա ճ եւ խ եւ մի, Բ ճխ եւ Ա
380 Ա կարդալն
381 Ա նուաղել
382 Բ ><
383 Սաղմ. ճխԱ 2, 3, 4
384 Բ ի չարէ
385 Սաղմ. ճխԱ 8
386 Բ նեիրելո
387 Ա ի գինոյ. Թուոց ԻԸ 14
388 Ա զարդիւնս
389 ԱԲ ուղեղ
390 Ա խնգոցն
391 Սաղմ. ճխ 2
392 Հռոմ. ԺԲ 1
393 Ա ընձայ. Բ ընծա
394 Բ Հուտ
395 Բ զաւժարական
396 ԱԲ գայթագղութեան
397 Ա վայելչական, Բ զվաելչական
398 Ա Սուրբ Հոգւոյն
399 Բ խնդրելով
400 Ա ><
401 Սաղմ. ճի 1
402 Ա այս է
403 Ա ի լերինս
404 Սաղմ. ճի 2, 5
405 Ա լուսին
406 Սաղմ. ճի 6—7
407 Սաղմ. ճի 8
408 Ա եկ

409 Սաղմ. ՃԻ 8
410 Սաղմ. ՃԻ 8
411 Բ ի յապառնոյն
412 Բ անսպառ
413 Բ յաւիտեան
414 Սաղմ. Դ 2
415 Բ հայցեն
416 Ա խաղաղութիւն
417 ԱԲ անդառի
418 Սաղմ. ՃԳ 20
419 Ա խռութենէ
420 Ա ><
421 Ա ><

Բնագիրը պատրաստեց
Միքայէլ եպս. Աջապահեանը

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ

ՅԱՂԱԳՍ ՆՇԱՆԱԿԻ ՀԱՒԱՏՈՅ ՆԻԿԻԱԿԱՆ ՅԺԸ-ԻՑՆ*

<Բ>

ՆՈՐԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՔԱՀԱՆԱՅԻ Ի ԽՆԴՐՈՅ ԳԱԳԿԱՅ ԿՐԱՒՆԱՒՈՐԻ ՅԱՂԱԳՍ ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆԱՅՆ ԳԼՈՒԽ ԺԸ

Վասն մի եւ ո՛չ երկուս ասել զՏէր մեր Յիսուս Քրիստոս

I. [1]Յայս ուրթուտասան մասունս գլխաւորեալ զհարցմունս քո՝ համառաւտիւ բովանդակեսցուք ըստ կարողութեան: [2]Նախ՝ վասն զմի գոլ Քրիստոսի՝ ըստ առաքելական աւանդութեանն եւ հարցն ճայնակցութեանց, զի ոչ ի մարդ բնակեալ զԲանն ուսաք, որպէս Նեստորի թուի, եւ նախ քան զնա հերձուածողաց եւ որոց զկնի նորա, որովք երկու իմանին որդիք եւ դէմք եւ բնութիւնք յետ միաւորութեանն, այլ զԲանն մարմին եղեալ, այսինքն՝ մարդ ճշմարիտ: [3]Որպէս զի ոչ գոլ այլ Որդի զ՚առ ի Հաւրէ Բանն ըստ բնութեանն եւ այլ՝ ըստ յարակցութեան զոր ի Մարիամայն, որպէս նո//քայն աղճատին՝ բաժանելով երկաքանչիւրոցն յատուկս ըստ ինքեանց, այլ զնոյն ինքն անժամանակաբար ի Հաւրէ ծնեալն Որդի ի լրման ժամանակի ի կնոջէ ծնեալ՝ անփոփոխելի եւ անայլայլելի կալով մնալով ըստ իւրում բնութեանն: [4]Քանզի ինքն է Որդի Աստուծոյ եւ ինքն է Որդի Մարդոյ, ինքն՝ անբովանդակելի եւ 217ա

---

* *«Գանձասար» հանդէսի Զ եւ Է հատորներում հրատարակուել են Յովհաննէս Սարկաւագի «Յաղագս նշանակի հաւատոյ ՅԺԸ-իցն» ժողովածուի Ա, Ե, Զ, Է եւ ԺԱ գլուխները: Սոյն հատորով ներկայացուող գլուխներով ամբողջանում է հայ աստուածաբանական մտքի այս կարեւորագոյն սկզբնաղբիւրի հրապարակումը: Մօտ ապագայում ծրագրւում է ժողովածուի ամբողջական լոյսընծայումը:*

ինքն՝ ի մարմնի բովանդակեալ, չարչարական եւ անչարչարելի, մահկանացու եւ անմահ, միանգամայն իսկ Աստուած եւ մարդ: [5]*Բայց նոքա զ Գնողն զնոսա ուրանան ստուգապէս՝ ըստ մասին որոշելով զբնութիւնս, ըստ որում՝ կամս եւ աջողութիւնս, որ են գործք, զորոց մանրամասնաբար յեղանակս տարբերութեանցն ուսցիս որպէս ի հարցն սրբոց եւ յայնմ մատենէ*, զոր ժողովեալ է մեր յաստուածայնոց Գրոց առատագոյնս եւ ոչ դժուարահաս ինչ կարի:*

Վասն տաւնից միաբանութեան եւ բաժանման

II. [1]*Այլ՝ վասն տաւնից աստուածայնոց:* [2]*Թէպէտ եւ մոլորեցան ի հաւատս, ոչ կարացին այլայլել զամենայն, եւ տաւնեմք նմանապէս*
217բ *ամենեքեան, բայց վասն Աւետեացն եւ Մնդեան // ոչ պարտիմք հակառակել, քանզի տաւնեմք եւ մեք, թէպէտ եւ ոչ ընդ նոսա:* [3]*Ի թիւս աւուրցն սխալ են նոքա, որպէս երեւի, զի ոչ յամսոցն քանիս հանդիպիմք միմեանց տաւնիւքն, սակայն տաւնէին առաջինքն նոյնպէս. թէպէտ եւ ոչ ամենայն քաղաք:* [4]*Վասն որոյ գտանեմք ի բանս հարցն այլազգ ի Մկրտութիւնն եւ այլազգ ի Մնունդն ըստ իւրաքանչիւրոցն խորհրդոյ առնել զխաւսն, որպէս եւ Գրիգորն Անձիանձու մեծն ցուցանէ յերկոսին տաւնականսն բանս:* [5]*Բայց քաղաքն երուսաղէմացւոց, ըստ նախնեացն սովորութեան զկարգն պահեալ, ոչ փոփոխեցին մինչեւ ի հուսկ վերջին աւուրս, յորոց ընկալաք իբր ի նախագահ Աթոռոյ եւ քաղաքէ մեք զկարգս տաւնից եւ պահեմք անշարժ:* [6]*Եւ թէպէտ այլք ի քաղաքաց ոչ ընդ երուսաղէմացիս զտաւն Ցայտնութեան եւ Մնդեանն միանգամայն կատարէին, սակայն խաղաղութիւն ունէին ընդ միմեանս վասն ի բան հաւատոյ միաբան գոլոյն:* [7]*Բայց մեք, զաւուրսն փոփոխելով տաւնիցն, զԱստուածամաւրն ասեմ եւ զՄաչին նաւակատեաց,*
218ա *է ուրեք եւ՝ զվկայիցն յիշատակս, ոչ բարւոք առնեմք // եւ յայսմ տեղի տալ պարտիմք նոցա, քանզի ո՞ ի սրբոցն աւանդեաց զփոխաձեւութիւնս զայս. այլ է ամբուշ կարծեաց այս եւ սոյնպիսիք ինչ այլ գիւտք:*

---

* *Հաւանաբար նկատի ունի սոյն ժողովածուի Ա թուղթը, որն աչքի է ընկնում սուրբգրային առատ մէջբերումներով: Սակայն խօսքը կարող է վերաբերել նաեւ Ե, ԺԱ եւ ԺԲ թղթերին, ուր քննւում են նոյն խնդիրները եւ համեմատաբար շատ են սուրբգրային վկայակոչութիւնները:*

Վասն յիշատակաց վկայից ճշմարտութեանն

III. [1]*Իսկ զվկայս ճշմարիտս զգուշութեամբ ընտրել արժան է ի կատարմունս յիշատակացն, մանաւանդ թէ ոչ իսկ այլ, քան զոր այժմ ճանաչեմք, անուն աւտար եւ անծանաւթ ի ներքս մուծանել:* [2]*Քանզի բազում անգամ զանսուրբս ոմանս եւ զհերձուածողս սուրբս կոչեն նոքա եւ յիշատակի արժանի առնեն, որպէս զամբարիշտն Մարկիանոս եւ զԼեւոն Հռոմայեցի, յորոց յիշատակաց փախչել պարտ է իբրեւ ի դատապարտելոց նզովիւք:* [3]*Արդ, զքաջայայտս սրբոց կամ անսրբոց, թէ զիարդ արժան է պատուել կամ անարգել, երկայն ինչ բանից պէտք ոչ են, իսկ որոց երկբայութիւն ինչ եւ կարծիք հուպ են, ոչ պատուել եւ ոչ թշնամանել եւ ոչ՝ զպատուիրանաղիրս նոցա երբեք:*

Վասն մկրտութեան եւ թէ զիարդ իցէ

<IV>. [1]*Այլ վասն անկատար մկրտութեան նոցա բազում են բանք,*
բայց մեզ ի յոլովիցն սակաւք // բաւականասցին: [2]*Կանոնեցին հարքն* 218բ
սուրբք զհերձուածեալսն ի հերձուածսն Ապողինարի վերստին մկրտել: [3]*Արդ, եթէ որ ասացն չունչ մարդկային եւ միտս ոչ ունել Քրիստոսի, եւ յայնպիսի խոստովանութիւնն զմկրտեալսն մկրտել արժան է դարձեալ, իսկ սոքա, զի զմարդն իսկ բովանդակ աւտարացուցանեն ի Բանէն, զիա՞րդ իշխեն մկրտութիւն ճշմարիտ ասել եւ կոչել զիւրեանցն:* [4]*Լուիցեն առաքելոյ<ն>. «Որք միանգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս,— ասէ,— ի մահ անդր նորա մկրտեցաք»**: [5]*Եւ մեծն Պետրոս նոյնպէս՝ «Մկրտեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ յանուն Յիսուսի Քրիստոսի»*†,— *ասէ:* [6]*Արդ, եթէ ի մահ մարդոյ իցէ մկրտութիւնն, ո՞ւր է փրկութիւնն, եւ եթէ մերկ Բանին ասիցեն զմահն, զտանին ամենեւին ամբարշտեալ եւ ի դասու կարգեալ աստուածասպանիցն:* [7]*Եւ եթէ յերկուցն անուն, որպէս բաժանեն յինքեանք՝ ի մարդ առանձինն եւ յԱստուած յատուկ, որպէս մասնաւորեն եւ զտնաւրինականսն ամենայն եւ զբանս Գրոց, սուտ առնեն զճշմարտութիւնն, որ ասաց ցառաքեալսն մկրտել*
յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ‡: [8]*Եւ չասաց յերկուց որդ։//* 219ա

---

* *Հռոմ. Զ 3*
† *Գործ. Բ 38*
‡ *Տես Մատթ. ԻԸ 19:*

ոց անուանս էակցելոց, որպէս ասեն, ի միոյ՝ ըստ բնութեան Որդւոյ, եւ միւսոյ՝ ըստ շնորհի, քանզի այս զԱրարիչ եւ զարարած համապատիւ ցուցանէ եւ զԵրրորդութիւնն՝ չորրորդութիւն, իսկ զԵկեղեցի՝ կիսապաշտաւն զարարած եւ զԱստուած: [9]Իսկ զիա՞րդ արարածք ի պաշտամանէ ազատեցան եւ յառժամայն աստուածոց. ճշմարտապէս առասպելք եւ անուրջք ասացուածքն են եւ իմացուածքն: [10]Արդ, մկրտիմք ի մահ Աստուծոյ մարմնացելոյ եւ յանուն Երրորդութեանն եւ ոչ աւելւոյ, զի եղիցուք կատարեալք եւ մաքրեալք, իսկ ի նոցայն այն հրաժարիմք յիւղոյ աւծութենէն, եւ ի մարմնական լուացմանէն եւ ի չորրորդին յաւելուածոյ:

Վասն քահանայութեան եւ քահանայից

<V>. [1]Զի թէեւ ուղիղ իսկ զհաւատոցն համարս պահանջէին յեկեղոցն առնուլ կնիք, զիա՞րդ ոչ անարժան էր յայնպիսեաց քահանայից առնուլ ձեռնադրութիւն կնքոյ, որք ի բնութենէն թշնամանեալք եւ թշնամանիչք՝ զնոյն յապաւեալք եւ կրճատեալք ի մասանց անտի, զոր
219բ ստեղծ Արարիչն զ//նոյն ինքն՝ աղարտելով ի ձեռն այնր զհաստիչ բնութեանն՝ որպէս զոչ գիտող պատշաճաբար արարչագործել. զորոյ անտեղութեան առաւելութիւն ուսցիս ի բանէն*, զոր յաղագս այդորիկ արարեալ է մեր: [2]Բայց ոչ այնքան եւեթ զամբաստանութիւն արժանի են տանելոյ, այլ եւ վասն անխտրութեան մեղաց այլոց եւ անձանց: [3]Արդ, անկատարքն մարմնով եւ հոգւով զիա՞րդ կամ զայլս ոմանս կարեն կատարել. յայտ է, թէ ոչ արժան ումեք է իբրեւ առ քահանայս հայել ի նոսա, որք ամենեւին եւ ամենայն ուրեք զհակառակսն ունին պարկեշտ մերոյս աւրինաց քահանայութեան:

Վասն աշխարհականաց ժողովրդոց

<VI>. [1]Բայց զզինուորսն եւ զռամկական ժողովուրդսն այսպէս է տեսանել, թէ աննենգ եւ պարզամտաւք զհետ երթայցեն կանխակալ սովորութեան, զմեր ճշմարտութիւն ոչ բամբասեալ ծաղր առնիցեն, թէպէտ եւ ոչ առժամայն աշակերտից<ե>ն, ընդ նոսին խնամով եւ սիրով խաւսել արժան է եւ ի Գրոց Սրբոց ամենայն հեզութեամբ: [2]Թերեւս զզ-

* Ցատակ չէ, թէ որ աշխատութիւնն է ակնարկւում:

ջացեալ եւ ծ//անաւթացեալ մերոցն՝ ընտրեսցեն զբարին, ապա թէ յանդ- 220ա
գունք եւ հայհոյիչք մերոցն պատահիցին, հրաժարել յայնպիսեացն յետ միանգամ եւ երկիցս խրատելոյ եւ ոչ մաքառել բանիւք այլ եւս:

Վասն տաճարաց աղաւթարանաց, որ են եկեղեցիք

VII. [1]Այլ թէ յորս արժան է աղաւթից տունս մտանել եւ աղաւթել, եւ ի սովորութենէ իսկ յայտ է, քանզի յառաքելոցն եւ ի սրբոց մարտիրոսացն վկայարանս այնպէս մտանել եւ աղաւթել ունիմք ի սկզբանէ սովորութիւն, որպէս եւ ի սուրբ եկեղեցիսն Երուսաղէմի: [2]Իսկ եթէ զանազանն զուրուք ունիցին զառակոչութիւնս եկեղեցիքն անուանեալ եւ վկայարանք, ո՛չ մտանել ի նոսա իբրեւ ի սուրբս, բայց թէ դէպ լինիցի մտանել, այնպէս զաղաւթսն կատարել պարտ է՝ Աստուծոյ ճշմարտի եւ միայնոյ երկրպագելով, որպէս ի հասարակաց տունս կամ այլ ուրեք յանպատեհ տեղիս: [3]Սակայն, որչափ հնար է, հեռանալ պարտ է ի հերձուածողացն աղաւթակցութենէ, քանզի արտաքսեալք են յԵկեղեցւոյ եւ դատապարտեալք ի հարցն, եւ չէ ումեք իշխանութիւն յուղղափառաց
եւ ի տ//ան անգամ լինել նոցա կցորդ աղաւթից. եւ այս սահմանեցաւ 220բ
ի հարցն: [4]Բազում ուրեք երգէ եւ Դաւիթ. «Հաղորդէի ես ամենայն երկիւղածաց Քոց, որոց պահեալ է զպատուիրանս Քո»*, եւ որ այլք այսպիսի բանք աստուածայինք՝ հրաժարեցուցիչք ի կցորդութենէ չարաց, եթէ ոչ խոստանայցեն հեռանալ յաղանդոցն եւ ի մեղաց պղծութենէն:

Վասն վկայարանացն սրբոց եւ անուանելոցն միայն

<VIII>. [1]Սովորութիւն է հաւատացելոց երթալ ի մատրունս վկայից առ ի նախանձ բարեպաշտութեան նոցա եւ ունել բարեխաւս առ Տէրն իւրեանց վասն փրկութեան եւ բարութեան հոգւոց եւ մարմնոց, ոչ եթէ պաշտել զնոսա եւ երկրպագել փոխանակ Տեառն: [2]Կոչեն եւ հերձուածողք զշիրիմս եւ զդիրս մեռելոց իւրեանց վկայարանս, յորոց վերայ պարտ է հասանիլ ստուգութեամբ մեծաւ, խուզիւ եւ քննութեամբ, զի մի՛ զանսուրբս փոխանակ սրբոց պատուեալ՝ բարկացուցանիցեն զԱրարիչն եւ ընդունիցին մեղս եւ տանջանս փոխանակ արդարութեան եւ փրկութեան: [3]Եւ ոմանք, որ եւ հրեշտակաց աղաւթս մատուցանի-

* Սաղմ. ՃԺԸ 63

221ա ցեն եւ յիշատակս կամ տաւ//նս կատարեն, զի եւ զայս յիշել բարւոք եւ
ի դէպ թուեցաւ, զոր խոտեալ անարգեցին սուրբ հարքն՝ որպէս զան-
յայտ կռապաշտութիւնն, եւ եթէ հրեշտակաց եւ կամ սրբոց արանց
եւ վկայից պաշտաւն եւ երկրպագութիւն ոչ արժան է մատուցանել,
այլ մերձ առ նոսա Աստուծոյ զաղաւթսն եւ զերկրպագութիւնն առ-
նել, բարեխաւս զնոսա ունել, ո՛րչափ եւս պատկերաց ոմանց: [4]Ահա եւ
հրեշտակն արգելոյր զՅովհաննէս յիւրմէն երկրպագութենէ. «Մի՛,—
ասէ,— ծառայակից քո եմ եւ ընկերաց քոց»*, եւ մեծն Պետրոս՝ զԿուռ-
նելիոս. «Ոտն կաց,— ասէ,— զի եւ ես ինքնին մարդ եմ»†, եւ ոք ի սր-
բոց զայս ոչ հրամայէ:

Վասն սրբոյ խաչին

<IX>. [1]Զարմանամ ընդ մարդկան իմացուածոց տգեղութիւն, թէ
զիա՛րդ վասն նոցին իրաց մարտնչին զանազանապէս. յաղագս ճշմար-
տութեանն իմաստասիրելով՝ զհակառակս խաւսին եւ վասն կենաց զմա-
հու արբուցանեն դեղ, զճառս լուսոյ ստուերացուցանեն խաւարաւ: [2]Որք
ոչ են անկեալ ի մտաց, քաջայայտ ունին զխաչին խորհուրդ: [3]Ես եւ
221բ յանտառի ուրեք կամ ի նկարս հանդերձից // եւ գրի զնշան չարչարա-
նաց Տեառն իմոյ տեսանելով՝ սոսկամ ճշմարտապէս եւ անխայեմ յան-
ստուգութենէ: [4]Իսկ որք պահեն զերկիւղ ի սնոտիս եւ որ ոչն է արժան՝
երկնչին, զ՛առ ի յիշատակ մերոյն փրկութեան ձեւացեալ եւ կանգնեալ
նշանն հայհոյեն, եւ յոլովք ի նոցանէ, ի վայր իսկ արկեալ, կոխան առ-
նեն, թէ վասն զի ի հերձուածողաց ձեւացեալ եւ կանգնեալ իցէ. եւ վասն
այնորի՞կ խղճիցիս ինչ դու, որ զուղիղն խորհիս, կալ յաղաւթս առաջի
նորա: [5]Ո՛չ անգոսնեմ, վասն զի նշանակ է առաւել ատելութիւն ունել
առ չարափառսն, սակայն հայհոյել եւ անարգել ոչ է պարտ, զի Տեառն
քո է նշանն: [6]Նաեւ մեք, յորժամ երկրպագեմք առաջի նորա, ոչ եթէ
նիւթոցն զերկրպագութիւն մատուցանեմք կամ զնոյն ինքն աստուա-
ծացուցանեմք զնիւթն, այլ նովաւ ի յիշատակել չարչարանաց Փրկչին
մերոյ առ ի <յ>Աստուծոյ զաղաւթսն եւ զերկրպագութիւն մատուցա-
նեմք՝ խնդրելով ի նմանէ զնոյն նշան ի փրկութիւն եւ ի պահպանու-
թիւն մեզ, վասն որոյ եւ յաճախ իսկ զդէմս կնքեմք նովաւ եւ զբովան-

* Յայտ. ԻԲ 9
† Գործ. Ժ 26

դակ մարմինն նոյնպէս՝ աղաչելով զխաչ//ալն ի փրկութիւն անձանց 222ա
նովաւ: [7]Եւ յորժամ նմին ինքեան խաչին երբեք երկրպագիցեմք՝ առ
սէր Տեառն մերոյ եւ զի նովաւ կեցոյց զմեզ, այլ ո՛չ վարկանելով Ա-
ստուած եւ որպէս Աստուծոյ զերկրպագութիւն առնելով: [8]Ըստ որում եւ
աստուածայնոյ գերեզմանին եւ մսրոյն եւ սրբոյ Աւետարանին երկր-
պագեմք ի փառս Տեառն, քանզի նոքաւք կորուսեալ բարձաւ իշխանու-
թիւն բանսարկուին. հակառակ նմա եւ ի փրկութիւն մեզ՝ պատուեալ
մեծարեմք զնշանն պարծանաց: [9]Իսկ կորստական աղանդոյն Նեստորի
հետեւողքն եւ ժողովոյն Քաղկեդոնի զնոյն ինքն զխաչեալն ուրանան
Աստուած գոլ եւ զխաչն պատուել կեղծաւորին, ընդ որ ոչ փոքր ինչ
հիանամ, զորս հարցանեմ, թէ իբրեւ զմարդո՞յ սրբոյ տանջանաց գոր-
ծով դուք մեծարէք զխաչդ: [10]Ընդէ՞ր ոչ ապա ե՛ւ զհնոցն Բաբելովնի,
ե՛ւ զգուբն առիւծուց կամ զքարինսն Զաքարիայ պաշտէք, զի զայլսն
թողից. զսուրն, որով գլխատեցաւ մեծն ի ծնունդս կանանց մարգարէ,
եւ զմահու անաւթսն, որով Յեզաբել ջնջեաց զԱստուծոյ մարգարէսն:
[11]Ապա թէ Աստուծոյ իցէ խաչն, հի՞մ զխաչեալն // աւետարացուցանէք 222բ
յիւրմէ Աստուածութենէն՝ իբր զարհուրեալք լինել ուղղափառք, կամ
թէ՝ գուցէ ախտ եւ չարչարանք յանչարչարելի եւ յանախտ բնութիւն
Բանին մերձանայցէ, որ իւրով մարմնովն չարչարեցաւ ճշմարտապէս՝
ոչ ինչ զանչարչարութեանն Բանն վնասե<ա>լ. բայց զի ինքն է Տէր
մեր Յիսուս Քրիստոս, այսինքն է՝ Բանն մարմին եղեալ, եւ ոչ երկուք
դէմք եւ բնութիւնք, որ չարչարեցաւն եւ ոչ վնասեցաւ: [12]Նմա տան
Գիրք Սուրբք եւ հարցն աւանդութիւնք զամենայն զիւրսն, զի այսպէս
ասացուք զչարչարանսն եւ զանչարչարութիւնն, զկիրս եւ զքանչե-
լագործութիւնս, զխոնարհութիւն եւ զբարձրութիւն, զպատիւ եւ զան-
պատուութիւն, զմահն եւ զանմահութիւն. այսպէս եւ ոչ ըստ մասին բա-
ժանելով՝ զխոստովանութիւն առնել ուսաք:

Ի մի Տէր մեր Յիսուս Քրիստոս

<X>. [1]Արդ, որովք բաժանեալ զատանիմք ի նոցանէ, սակաւուք
ասացաւ, իսկ եթէ որովք հաւասարեմք նոցա, աւելի է: [2]Եւ են այսոքիկ՝
տաւնիւ Յայտնութեան Տեառն եւ Յարութեան եւ այլովք ոմամբք տաւ-
նիւք եւ յիշատակովք վկայից ոմանց եւ զնոյն գիրս առաքելականս // 223ա
եւ վարդապետականս վարդապետելով, թէպէտ զբազումս կամակորեն
նոքա հակառակասիրութեամբ, յոլովս եւ ի սրբոց հարցն բանից այլայ-

լեցին՝ քարշելով ի խոտորնակ իւրեանց կարծիսն յոյժ անտեղութեամբ, յորս զգուշանալ պարտ է ամենեւին:

<XI>. [1]*Այլ զպարզամտագոյնս ի նոցանէ, որպէս վերագոյնն իսկ ասացի, եւ զաննենգն, որք գթանն ի մեզ եւ ոչ այպանեալ նախատեն, այլ եւ խնամով եւս հային եւ ակն ածեն ի մէնջ, ընդունիլ ոչ յեկեղեցի կամ ի հաւասարութիւն աւրինաց, այլ խաւսել ի Գրոց Սրբոց, թերեւս աւգտեալք ապրեսցին, իսկ ի հակառակս խորհողացն եւ թշնամանողաց հեռանալ ի բաց:*

<XII>. [1]*Մի՛ ումեք ի նոցանէ անսալ ի լուծումն պահոց՝ կարգելոցն յեկեղեցւոջ, զոր արհամարհեն յաղագս որովայնամոլութեան հագածեալք ի փափուկ կերակուրս եւ մանաւանդ ի գինի:* [2]*Եւ յաղագս ձկանց եւ ի ձէթ եւ ի սոյնպիսիսս նաեւ յարձակ իսկ աւուրսն ոչ յամենայն ճաշակել համարձակ, զոր ուտեն նոքա, զի անխտրաբար զբա-*
223բ *զումս յանսրբոց կենդանեաց յաւդագնաց//ից եւ ի ջրայնոց եւ ի հետեւակաց ցամաքայնոց բարբարոսաբար ուտեն եւ զսուրբ կերակուրսն պղծել մեռելովք զեռնովքն ոչ խորեն:* [3]*Այլ զամենայն միրգ ի նոցանէ եւ զունդ եւ զհաց անխիղճ պարտ է ուտել, իսկ վասն գինւոյ եւ ձիթոյ <յ>իւրաքանչիւր կամս թողուցումք, քանզի երկիւղածութեամբ եւ հաւատովք ի փառս Աստուծոյ ճաշակողացն համարձակութիւն է, մանաւանդ եթէ որք տանն երկիւղածագոյնք իցեն:*

<XIII>. [1]*Են, որպէս լսեմք, եւ ուղղափառք ի նոսա՝ զաւղեալք եւ թաքուցեալք վասն ահի չարեացն:* [2]*Բայց դու մի՛ վաղվաղակի յանձն առնուցուս հաղորդիլ ընդ նոսա հարցափորձութեանն, եւ մի՛, թէ զուղղափառութեան խոստովանութիւն ի չրթունս ունիցին, անդէն եւ անդ հաւատարմացին քեզ:* [3]*Քանզի բազումք ի նոցանէ զջուր եւ զխմոր՝ զապականութեան տարացոյցս, ի մեծ խորհուրդն վնաս եւ հերձուած ոչ համարին, յորոց աւտարանալ պարտ է որպէս ի հրէից, քանզի եւ նոքա անապական եւ կենդանարար զՄարմին եւ զԱրիւնն Տեառն ոչ*
224ա *համարին, ընդ որս հաղորդել եւ սիրով անգամ անպատեհ է, որպէս // եւ յայլում ցուցաք մատենի՝* վասն նոցա եւ վասն խորամանկ խորհրդոցն նոցա առաստագոյն:

<XIV>.† [1]*Բայց որպէս պատուիրէ Պաւղոս, պարտիմք իմաստութեամբ գնալ առ նոսա ամենայն զգուշութեամբ՝ որպէս առ արտա-*

* *Նկատի ունի այն Ժողովածուի Դ Թուղթը:*

† *լուսանցքում ԺԵ*

քինսն՝, զի մի՛ տացուք պատճառս, որոց զպատճառսն կամիցին: [2]*Այլ յամենայնի ի բանս եւ ի գործս այնպէս լինիլ ի մէջ նոցա, որպէս լուսաւորս յաշխարհի, որպէս զի պատկառեսցին ի մէնջ. «Ամաչեսցէ,— ասէ,— աշխարհ ի գնացից ձերոց»†, զի եւ նոքա աւգտեսցին ի մէնջ:*

<XV>.‡ [1]*Եւ զխաւսս առնել առ նոսա ի Գրոց Սրբոց ոչ դոյզն հանճարով. ապա թէ չիցես բաւական տալ պատասխանի, ոչ գովեմ զաներկայսիրութիւնն, սակայն ոչ պարտիս բնաւ մատչիլ ի խնդիրն:* [2]*Թէ իցէ ի քեզ բան, տո՛ւր պատասխանի, ապա թէ ոչ՝ ափ քո ի վերայ բերանոյ քոյ լիցի:*

<XVI>. [1]*Այլ վասն ըմպելեացն եւ կերակրոցն անաւթոց, քանզի զպղծեալսն ոչ խորեն, զգուշանալ պարտ է, մանաւանդ ի խեցեղինաց. իսկ ի պղնձեաց եւ յորոց նոյնպիսիք կամ ի փայտեղինաց, զորս աւրէնքն սրբեն, ոչ այնպէս ինչ հարկ ի վերայ կայ:*

Վասն պատկերաց

XVII.§ // [1]*Զ Փրկչին կենդանագրութիւն նկարեալ յեկեղեցիս եւ* 224բ
կամ զբուն իսկ՝ որ երբեմն <յ>եղեսացւոց քաղաքին, եւ կամ զոր տեռատես կինն եւ քաջահաւատ կանգնեաց ի Պեննադա, յորժամ տեսանիցեմք, առ մարմնացեալ Բանն, որ վասն մեր զծառայի կերպարանս առ, որում զգծագրութիւնն տեսանելով առաւել եւս գամք ի յիշատակ, աղաչել պարտիմք եւ գոհանալ սրտի մտաւք եւ երկրպագելով սրտի մտաւք նմին ինքեան Փրկչին՝ առաջի նորա զպաղատանսն առնել: [2]*Իսկ առաջի Աստուածածնին պատկերի կամ որ ի սուրբ եկեղեցիս քանդակեալք իցեն, Որդւոյ նորա երկրպագել եւ աղաչել զծնողն ի բարեխաւսութիւն:* [3]*Այլ եթէ զառաքելոցն եւ զմարգարէիցն եւ զյայտնեաց վկայիցն տեսանիցեմք յեկեղեցիսն եւ ի վկայարանս զդրոշմեալ կենդանագրութիւնս, աւրհնել պարտիմք զայն, որ ընտրեացն զնոսա. եւ նմա երկրպագելով՝ գոհանալ զսիրոյն առ ազգս մարդկան, իսկ զսոսա ի բարեխաւսութիւն ածել, այլ ոչ նիւթապաշտ եւ պատկերապաշտ լինել:*

* *Տես Կող. Դ 5:*

† *Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնք, Ճառ Գրստեայ, Վենետիկ, 1907թ., էջ 55*

‡ *լուսանցքում ԺԶ*

§ *լուսանցքում ԺԸ*

225ա [4]Բայց զհայհոյիչսն, զանարգիչս այնպիսի պատկ//երաց յիմարս կարդասցուք եւ շամբչեալս, որք եւ յարձանս ամբարշտաց գրեսցին: [5]Են եւ անյայտք ոմանք սուրբք, որոց զպատկերսն բերեն տունք եւ տախտակք եւ անդրիանդք: [6]Առաջի նոցա ոչ համարձակ առ Տէր աղաւթել, վասն որոյ երկբայութիւն է, այլ զորս անուանենն նոքա սուրբս, որոց հերձուածն եւ պղծութիւնն ցարդ եւս յայտնի է, զնոսա նզովել եւ ի բաց փախչել. «Եթէ մեք,— ասէ,— կամ հրեշտակ յերկնից կամ այլ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի, քան զոր առէքն, նզովեալ լիցի»*: [7]Բայց բազմութիւն պատկերաց ոսկեղինաց եւ արծաթեաց եւ այլոց նիւթոց, զորս շրջեցուցանեն ընդ ինքեանս կամ ի տունս հասարակաց, ոչ հաճեցայ, մանաւանդ զաննշանից ոմանց: [8]Էր ժամանակ, զի հպարտացան կենդանագիրք ի վերայ գրչաց Գրոց Աստուծոյ եւ պատմութեանց այլոց, որպէս թէ նախապատուագոյն իցէ նոցայն արուեստ, քան զգրչաց: [9]Զի դուք, ասեն, զբանս գրելով ի լսելիս ածէք ի հին ինչ իրաց, իսկ մեք աչաց յայտնի կացուցանեմք հաւատարմագունիցն զգայութեանց եւ իմաստասիրի՝ զիրագործութիւնս եւ զպատճառս նոցա: [10]Իսկ
225բ սոքա // զընդդէմսն վիճէին՝ իրաւաբանելով բազում իրաւք. եւ եղելոյ ժողովոյ եւ քննութեան առաւել ցուցաւ գրչութիւն Գրոց: [11]Ցայնմանէ ոմանք պատճառս առեալ՝ անարգէին զամենայն պատկերս՝ անգիտանալով զպատճառսն, որք եւ անարգեցան իսկ: [12]Իսկ դու ըստ տուեցելումդ վարեսցիս առ տէրունականն եւ առ սրբոցն կենդանագրութիւնս, իսկ զանսրբոցն անարգ եւ խոտան համարեսցիս, բայց զերկբայելիսն ո՛չ պատուել եւ ո՛չ անարգել. եւ վասն բազմութեան պատկերացն դրաւշելոց առ այժմ լուռ եղէց:

<XVIII>. [1]Ի թիւս երկուց քուէից առանձնակաց գլխաւորեալ զհարցուածսդ բաժանեցի, որք են միանգամայն եւ քառանկիւնիք եւ քառանկիւնոյն երրորդք ի միակէ, որոց իւրաքանչիւր ոք զաւրութիւն ունի հաճելի՝ երբեակն վասն լին գոլոյ եւ տատրսկեալ եւ հոծ՝ մէջ ունելով եւ սկիզբն եւ վախճան, թէեւ այլ բանք են սորա: [2]Իսկ քառեակն հաստատաչափութեան ի ձեւսն սկիզբն եւ առաքինութեան սահման եւ
չափ կատարելագունին՝ ծնող տասնեկին թուոյ, տարերց եւ յեղանակաց
226ա եւ ի բազմաց գոյացելոց նիւթականաց, // որքանութիւն եւ անբանից կենդանեաց կատարելոցն, ասեմ, ընթացից գործի, զի զայլսն թողից: [3]Իսկ քուէայն առաջին տասնեկին՝ դրացի իններորդ կարգի եռանկիւ-

* Գաղ. Ա 8—9

նոյն թուոյ խե-ին, որ քաջայարմարն է ի ծնունդս մանկանց գոյացուցիչ, որ եւ երիցսն երիւք ճոխանայ եւ եռապատկեալ՝ ծնանի զքսան եւ զեւթնն՝ զերրորդն քուեայ եւ զչորրորդ եւթնեակ, բայց վասն եւթանցն մերձակայ ժամս ոչ ունի բնախաւսել:

<9>

ՆՈՐԻՆ ՎԱՍՆ ՄԱՍԱՆՑ ՊԱՏՈՒՈՅ, ՅՈՐՈՒՄ ԵՒ ՎԱՍՆ ՊԱՏԿԵՐԱՑ ԴԱՐՁԵԱԼ

I. [1]Ցանտեղիսն ճարտարագոյնք եւ հանճարեղք յանբանութիւն ոմանք խառնակել զպարզագոյնս յիրաց եւ ի բանից ոչ վեհերին եւ զզանազանութիւն ընտրելեացն այնքան չփոթեն անարգաբար, մինչ զի ոչ դիւրատես գոլ եւ ճաշակելոյ յիմաստութենէ, բազում անգամ եւ զաստուծոյսն իսկ կամ խառնակեն եւ կամ ընծայեն արարածոց, որոց ոչ դժուարին ինչ է զեղանելի ոմն յանեղ բնութիւն Երրորդութեանն յաւելել եւ ի կատարեալն զանկատարն: [2]Քանզի ոչ այլ ինչ, քան եթէ զայս
աւրինադրեն, // որք ի մարդ բնակիլ Բանին, այլ ոչ մարդ լինել աւան- 226բ
դեն, որք զմիոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յերկուս զտնաւրինականս բաժանեն եւ զատուցանեն գործ եւ բան, զոմանս անախտանալի Բանին եւ բնութեամբ Որդւոյն Աստուծոյ եւ զոմանս ախտակրի մարդոյ եւ չնորհաւք որդւոյ սահմանեն, զԲանն մարմին եղեալ ոչ խոստովանողք, այլ՝ ի մարդ բնակեալ, որոց կատարածն եղիցի ըստ գործոց իւրեանց: [3]Արդ, թէպէտ եւ հոմանուանաբար գոյացութիւն ասի ամենայն, սակայն իսկ տիրապէս էութիւն արարչականն, ըստ որում եւ էն ասացի, իսկ այլք երկրորդ եւ երրորդք եւ որ քան հեռաւորք խոստովանեսցին ընդ նոսին, եւ պատիւն եւ պաշտաւն հարկաւորապէս մասնաւորեսցի, որպէս զի արարչականն միայն զծայրագոյնն տարցի պաշտաւն եւ երկրպագութիւն եւ զամենայն բարեպաշտիկ պատուոյ գեղեցկակարգ սպասաւորութիւն, որք անկարողութիւն է զանազանապէս լինելոյ բնութեան, վասն զի արժանաւորութեանն յոյժ դժուարին է հանդիպիլ, զի մի՛ ասացից անհնարին: [4]Իսկ արարեալքն զատցին ի կեն-
դանի եւ յանշունչ, // անշունչքն զպէտս իւրեանց պաշտեսցեն հան- 227ա
դերձ զգայական եւ անբան կենդանեաւք, քանզի ոչ վասն նոցա է խնդիրս, բայց կենդանին, զի բաժանի յանբան եւ ի բանաւոր: [5]Ստորա-

բաժանեսցուք դարձեալ զբանականն յանմարմին արարեալ եւ ի մարմ-
նաւոր, եւ ի սոցանէ նախ առաջին, զի ըստ կարգի է, վասն հրեշտա-
կաց տեսցուք՝ թողեալ զանսուրբսն: [6]Արդ, նոքա թէպէտ եւ վեհագու-
նի քան զմարդիկ վիճակեցան եւ բնութեան եւ պատուոյ, սակայն պաշ-
տաւն եւ երկրպագութիւն առնուլ յումեքէ ոչ գրեցան: [7]Զի Աբրահամ
վասն հիւրասիրութեան ընդ առաջ ընթացեալ՝ երկրպագեաց այլ Մի-
ումն, որում արժանն էր, առ որ եւ զբանսն առնէր, իսկ Ղաւտ նոյնպէս
զաւտարասիրութեանն լնոյր կանոն երկրպագելովն եւ ոչ զպաշտելոյ
ուրուք հատուցանէր արդարակս, նաեւ՝ յորժամ մատուցանել ոմն ու-
մեմն հրեշտակի կամեցաւ զոհ, ոչ հաւանեալ յանձն առ որում մատու-
ցանէր, այլ ասէ. «Տեա՛ռն մատուսջիր»*: [8]Եւ Դաւիթ, թէպէտ եւ զհրեշ-
տակն ետես, այլ Աստուծոյ զերկրպագութիւնն, որում զողջակէզն մա-
տուցանէր, իսկ Զաքարիա եւ Եզեկիէլ բնաւ ոչ գրեալ է, թէ երեւեցելոց
227բ սրբոցն զուարթնոց կրկնեցին ծունր, եւ Դանիէլ // խոստովանէր Մի-
ոյն զկարիս բնութեանս ի տագնապելն, լինէր Գաբրիէլի եւ զ՚առ յա-
պայսն ուսանել դիմէր, եւ ոչ վասն Հեղիու կամ Իսրայիղի կամ միոյ
ուրուք ի տեսանողացն գրեալ է այնպիսի ինչ: [9]Այլ եւ յետ այսորիկ ի
յայտնել ճշմարտութեանն մի՞թէ Պետրոս զսքանչելին կամ Փիլիպպոս
կամ քրիստոսասէր կանայքն մատուցին ինչ պաշտաւն կամ երկրպա-
գութիւն երեւելոցն հրեշտակաց: [10]Եւ եթէ կենդանի եւ սուրբ զաւրու-
թեանցն ոչ տուեալ է պաշտաւն եւ երկրպագութիւն, զի՞նչ ասասցեն,
որք պատկերս իմն նոցա եւ որակութիւնս ստեղծանեն անձեւ եւ անո-
րակ բնութեանց եւ պաշտաւնատարք լինին. ոչ ընկալաւ զայս ի հարցն
Եկեղեցի, բայց վասն մարդկան գրեալ է, զի երկրպագեցին միմեանց, եւ
սուրբքն իսկ, այլ ո՛չ իբրեւ Աստուծոյ, զորոյ զպատճառն եթէ ուսցուք
հաւաստեաւ, ո՛չ սխալեսցուք: [11]Աբրահամ երբեմն որդւոցն Քետայ,
վասն ըստ արժանի պատուելոյն զնա եւ ասելոյ թէ՝ «Թագաւոր յԱստու-
ծոյ եւ ի միջի մերում յընտիրս չիրմաց մերոց թաղեա՛ զմեռեալ քո»†, ի
վերայ երեսաց իւրոց երկիր պագանէր՝ զանչափ սէրն առ մարդիկն եւ
զխոնարհութիւն բարուցն յայտ առնելով, միանգամայն եւ շնորհահա-
տոյց լինէր: [12]Իսկ Յակոբ եւթն անգամ երկիր եպագ Եսաւայ, զի զէթ
այնու զխստութիւն եւ զդառնութիւն եղբաւրն սրտի կակղացուցեալ
228ա քաղցրացուս//ցէ եւ մոռացի զզրկումն աւրհնութեան եւ անդրանկու-

* Տես Դատ. ԺԳ 16:
† Ծն. ԻԳ 6

թեան ի մտաց Եսաւայ, եւ ինքն կանամբք եւ մանկտով <ի> սատակ-
մանէ ապրեսցի: [13]Նաեւ Մովսէս, ընդ որում բերան ի բերան խաւսե-
ցաւ Աստուած եւ ոչ տեսլեամբ քնոյ եւ հիացմամբ, որպէս այլոց մար-
գարէիցն, որոյ եւ երեսքն պայծառացան փառաւք Տեառն, որ եւ հաւա-
տարիմն էր յամենայն տան նորա, իբրեւ զծառայ աներոյն իւրոյ մա-
դիանացւոյ երկիր եպագ ի վերայ երեսաց իւրոց, զի գիտէր զայն իբրեւ
մարդոյ մատուցեալ եւ ոչ որպէս թէ առաւել ումեք, եւ զանբարտաւա-
նութեան այտումն նախատէր այնու, եւ թէ պատուեցելոց յԱստուծոյ
եւ բարձրագունից առաւել ընտանի է խոնարհութիւն: [14]Ուսուցանէր եւ
Նաթան մարգարէ, մարգարէին Դաւթայ երկրպագէր՝ զիշխանութեանն
պատիւ հատուցանելով, սրբոցն պատուադիր լինիլ միմեանց բարւոք
գոլ եւ գովելի յոյժ քարոզելով: [15]Ըստ որում եւ ինքն իսկ Տէր եղ աւ-
րէնս՝ մեծին լինել ամենեցուն ծառայ եւ պաշտաւնեայ եւ առաջնոյն՝
վերջին, զինքն յարացոյց ի միջի եղեալ եւ ուսումն կենդանի, երբեմն
թէ՝ «Եկն Որդի Մարդոյ ո՛չ պաշտաւն առնուլ, այլ պաշտել»* եւ երբեմն՝
«Ես Տէրս եւ վարդապետս եմ,— ասէ,— ի միջի ձերում իբրեւ զպաշտաւ-
նեայ»†, որ եւ մտադիւրն ծառայեաց բազմաց ըստ մարգարէութեանն:

// II. [1]Արդ, սոքա եւ այսպիսիք ինչ առ ի սրբոցն կատարեալ եւ 228բ
ասացեալ զախտ հպարտութեան առողջացուցանել ախորժելով գրեցան,
բայց զգերեզմանս կամ զպատկերս ոմանց, թէեւ սուրբք իցեն, պաշտել
ոչ հրամայեցաք, եւ ոք ցուցանել ոչ կարէ: [2]Պատուել զսուրբ նշխարս
երանելեացն ոսկերաց բարւոք սովորութեամբ եւ գեղեցիկ աւանդու-
թեամբ ուսեալ է Եկեղեցի եւ աղաչել զնոսա ի բարեխաւսութեան առ
Տէրն իւրեանց, այլ փոխանակել զնոսա ընդ Փրկչին եւ Տեառնն անսը-
բութիւն է: [3]Եւ ոչ ինքեանք վկայքն ճշմարտութեան յանձն առնուն եւ
ներեն զանպատուութիւնն եւ զթշնամանս, զի այսպէս արդարեւ վարկա-
նիմ զաստուածացուցանելն, որպէս ընթեռնումք յերկրորդ գիրսն Ղու-
կասու վասն Պաւղոսի եւ Բառնաբայ ի լիւստրացւոց քաղաքին զպա-
տուելեացն եւ լաւաց: [4]Արժան է իմանալ եւ որոշել զզանազանութիւն
աննենգութեան աջողակ մտաւք եւ իրաւանց զպատիւն տալ, զի մի՛ ի
տգիտութենէ վնասեալք՝ անզուգութիւն եւ աննմանութիւն եւ այլայ-
լութիւն ի զուգութեան եւ ի նմանութեան կամ ի նոյնութեան երեւե-
ցուցանել աղճատիցիմք, այսինքն՝ առանց ընտրութեան եւ իմաստու-

* Մատթ. Ի 28, Մարկ. Ժ 45
† Յովհ. ԺԳ 14

թեան զմեծ գործ բարեպաշտութեան վճարել կարծելով՝ զանբաղդատա-
229ա կան պատիւ // Աստուածութեանն ծառայից նորա կամ ումեք յարարա-
ծոցս տայցեմք, եւ ոչ զԱրարիչն եւեթ, այլ եւ զծառայս նորա պատուել
կարծելովն տրտմեցուցանեմք: [5]Զայս ասելով՝ ոչ զպատիւ սրբոյն կա-
միմ փոքր կացուցանել, քա՛ւ լիցի, զի լուայ ի Տեառնէ զասելն առ սի-
րելիսն իւր, թէ՝ «Որ զձեզ անարգէ, զիս անարգէ, եւ որ զիս անարգէ,
զԱռաքիչն իմ անարգէ»*, այլ զոմանց պատկերապաշտաց զչարամտու-
թիւն եւ զսխալանս կամիմ զգաստացուցանել: [6]Արդ, ի պատուելեացն
է ինչ, որ վասն ինքեան է պատուելի, որպէս ինքն Աստուած, զի ըստ
բնութեան ունի զանճառելի եւ զանիմանալի պատիւն, զորոյ զպաշ-
տաւն եւ զպատիւ ոչ վայել է տալ ումեք, եւ է ինչ, որ վասն այլոյ, որ-
պէս տէրունական եւ սուրբ նշան խաչին, [7]քանզի ինքն ըստ ինքեան ի
սկզբանն տանջարան եւ մահու գործի եւ ոչ անաւթ երկրպագելի էր. եւ
վասն զի Բանն Արարիչ մարմնովն չարչարեցաւ ի նմա, որով ազատե-
ցաք ի կրկնատեսակ մահուց, երկրպագեմք նմա յաղագս պատճառին՝
զանպատմելի շնորհացն երախտիս Փրկչին մերոյ նովաւ յիշատակեալ
ի խորհուրդս եւ ի դէմս, երկրպագեմք առաջի նորա եւ թագաւորակա-
նի Սրբոյ Երրորդութեանն՝ գոհանալով զՀաւրէն փառաց, զի այնքանս
229բ // սիրեաց զմեզ, մինչեւ զՈրդին իւր Միածին ետ նովաւ, իսկ նա մա-
տոյց զինքն պատարագ ի հոտ անուշից Հաւր իւրում ի ձեռն յաւիտե-
նականի Հոգւոյն՝ ըստ Պաւղոսի ձայնին՝ փոխանակ մեր եւ վասն մեր
մեռանելով†: [8]Իսկ զսուրբս, վասն զի յաղագս չարչարանաց Տեառն իւ-
րեանց չարչարեցան եւ ընտրեալքն Աստուծոյ, վկայարանաւք եւ յի-
շատակաւք պայծառապէս մեծարեմք զնոսա ի փառս Տեառն եւ ի փր-
կութիւն Եկեղեցւոյ: [9]Եւ այս յայտնի ունի զպատճառն. պարծիմք ազ-
գակցաւքն, նոցայնովքն բերկրիմք արեամբք, զՀաւրացուցիչն փա-
ռաւորեմք, տանջանացն պատմութեամբք հեշտանամք, առ Տէրն մեր
զմտերմութիւնն ցուցանեմք՝ զծառայսն նորա պատուելով, մասնաւո-
րիմք նահատակութեանցն ի ձեռն սիրոյն եւ աշխատութեանցն, զհրա-
հանգս առ ի նոցանէ վարդապետեմք բարեպաշտութեանն Քրիստոսի,
յոսկերս նոցա երկիրպագանել՝ բնութեանս աւգնել աղաչեմք, ազգին
վերակացու լինել, զպաղատանս փոխ տալ, մաղթանաւք զԱրարիչն
հաշտեցուցանել, զլորելոցս ձեռն տալ եւ կանգնել, համարձակութիւն

* Ղուկ. Ժ 16
† Տես Հռոմ. Ե 9:

հայցել ամաչեցելոցս եւ տկարութեան՝ զաւրութիւն, դանդաղանաց լք-
ման՝ ջիղս եւ կազդուրութիւն, բժշկութիւն իշխ//անականին ի վիշա- 230ա
պին խածմանէ, չարեաց եւ չարին ընդդիմակացութիւն: [10]Է երբեք, զի
եւ հարկաւորաց մարմնոյ պիտոյից անկարաւտութիւն եւ եթէ այլ ինչ
շուրջանակելոց դժնդակութեանց զհանդարտութիւն եւ զփրկութիւն եւ
բիւրս գտանել առ ի Տեառնէ վասն նոցա բարութիւնս եւ խնդրոյ նո-
ցա ժողովիմք, նոյնպէս եւ յորժամ զկենդանագրութիւն նոցա պատկե-
րաց տեսանեմք յեկեղեցիս եւ ի վկայարանս՝ երկրպագելով Աստուծոյ,
զճգնութիւն նոցա միջնորդ եւ աւժանդակ մեզ առ նոյն ինքն մատչելոյ
առնումք՝ աղաչել նոքաւք, որոց գծագրութիւնն, եւ ոչ եթէ գունովք
երանգոցն եւ կամ զինչ եւ նիւթովք եւ իցէ, զՏէրն մեր եւ զԱստուած
ի հաշտութիւն ածել: [11]Այլ զյաճախութիւն պատկերաց աւտարոտուց
ոմանց եւ անծանաւթից՝ անուանացելոց սրբոց, մանաւանդ՝ որոյ զկ-
նի հակառակք Քրիստոսի ժողովոյն Քաղկեդոնի, ոչ արժանի եւ տեսա-
նելոյ անգամ արասցուք: [12]Լսեմ զոմանց առ Եւքսինոս ծովու եղերքն
պոնտացւոց, թէ աստուածացուցին զնչան խաչին՝ զնոյն ինքն զԽա-
չեալն մեծապէս անգիտանալով, եւ աղճատանաց իմն համբաւէ զնո-
ցանէ՝ խնջոյս եւ խաղս եւ արբեցութիւնս՝ լի անառակութեամբ եւ զե-
խութեամբ, // այլ եւ զինուք, որ մշտապէս խաղս հանդերձ արեամբ եւ 230բ
սպանութեամբ եւ յամատաւնս կատարեն: [13]Եւ զարմացայ ընդ խորա-
մանկութիւնն Բէլլիարայ, թէ զիա՞րդ հնարեցաւ ընդ բարձչի, կորուա-
չի հեթանոսութեանն ուսման եւ աւանդութեան խառնել զհեթանոսու-
թիւն, եւ զտաւրացուցոցն կամ զլակոնացոցն մարդախանձութիւնն ի հե-
զութեան վարդապետութիւնն մեր յամենապարկեշտ սպրդեալ ի ներքս
եմոյծ եւ յանուն Քրիստոսի: [14]Զատելին նմա գործեն զԴեմետրի եւ Ափ-
րոդիտեայ, ամաչեմ ասել, խորհրդատաւնս կատարեն եւ զԱտտինի, այ-
սինքն՝ զԴիովնիւսա, կափարսն եւ գործս՝ իբր աւրինաւք հաստատեալ
ունին այնր կողման բնակիչք:

III. [1]Արձակեցաւ ստուգապէս վիշապն եւ քարշէ ի ստորեւ զաս-
տեղս*: [2]Ժամանակ յայտնութեան որդւոյն կորստեան եւ անաւրէ-
նութեան մարդոյն†, որպէս թուի, մերձեցաւ, որում յոլովս, ըստ Գրոց
վկայելոյ, տեսանի նշանս, բայց զի արտաքոյ այժմու բանիս եւ գոր-
ծոյ մեծի է, լռեսցուք եւ ի կարգ բանիս երթիցուք: [3]Երկնչիմ զառաւե-

* Տես Յայտ. ԺԲ 4:
† Տես Բ Թես. Բ 3:

լութիւն սիրոյ պատկերագործութեանն, գուցէ ի բանսարկուին խաբէ-
ութենէ արտաքոյ իրաւանցն, որպէս ահա ճառեցաւ վասն ոմանց հիւ-
231ա սիսական//աց մարդոց, անկանիցին: [4]Քանզի սովորութեան յամումն ի
բարս գտեալ՝ ի բնութեան անկանի կարգ եւ տայ խորհել աւտարաւտիս
իմն եւ այլանդակս՝ որպէս բարւոքն զ՚առ ինքն յանկագոյնսն, վասն
զի եւ կռոցն պաշտաւն ոչ մերկ ընդ մերկ վաղվաղակի ի ներքս եմուտ
յաշխարհ, այլ, ըստ որում գրեալն է, տարաժամ սգով թախծեալ՝ հայր
վաղամեռիկ որդւոյն արար պատկեր: [5]Եւ ոմանք ի թագաւորաց նախ-
նեաց, փառամոլութեան ախտիւ գերեալք, ըստ քաղաքաց առնապատ-
կերս զիւրեանցն ի վերայ սեանց բարձրագունից եւ նշանաւոր տեղիս
բարձանցն տային կացուցանել՝ հրամայելով պատուել ներբողինիւք,
երբեմն եւ՝ նուիրաւք խնկոց եւ տերեւովք ոստախիտ ծառոց: [6]Եւ յայն-
մանէ եւ յայսպիսի անպատեհ եւ անկարգ սովորութենէ եկին մարդիկ
ի պաշտաւն դից եւ դիւցազանցն անուանելոց, յոր հայեցեալ անհա-
սանելի եւ անճառ Աստուծոյ իմաստութեանն՝ պատուէր տայր Մովսէ-
սիւ տանն Իսրայէլի մի՛ ամենեւին պատկեր ինչ զուրուք դնել ի քա-
ղաքս իւրեանց կամ նկարել յորմս տանցն, թէպէտ եւ զերկուս քերով-
բէսն ոսկիս զայն այլոյ խորհրդոյ ծայրագունի հրամայեաց առնել եւ
կանգնել առ տապանակաւն, զի թէ զպատկերաւ աւձին պաշտեաց Իս-
231բ րայէլ, // զոր եւ Նէեսթա անուանեցին, յիրաւի զգուշացուցանէր զնո-
սա Տէր ի ձեռագործ պատկերաց: [7]Բայց մեզ զսրբոցն պատկերս, ըստ
որում ասացաւդ վերագոյն, չափով սրբութեան եւ յաղագս պատճառին
պատուել ի գովեստ Աստուծոյ եւ յիշատակ քաջութեան նոցա, այլ ոչ
որպէս արտաքոյ սահմանին հեղուլ մտաւք: [8]Իսկ զտուեալն ի Տեառն-
էէ իւրն անպարագրութեան ամենասուրբ եւ աստուածային պատկեր
բարեպաշտին Աբգարու՝ երկրպագել նմին՝ որպէս ինքեան մարմնա-
ցելոյ Բանին, եւ զնոյն նկարագրեալս յեկեղեցիս ի մարդկանէ տեսա-
նելով եւ երկրպագելով Քրիստոսի՝ անկանիլ առաջի եւ աղաչել վասն
փրկութեան զայն, որ ի չափ եւ ի նմանութիւն ծառայի վասն ծառայից
գոլ անչափ խոնարհութեամբ արժանի արար. [9]այլ զսրբոյ եւ զաստուա-
ծածնի Կուսին ամենաշնորհ պատկեր՝ զտուեալն, որպէս ասի, հաստա-
տութեամբ խնդրողացն զայն երանելի առաքելոցն, առաւել ամենե-
ցուն սրբոցն համարել եւ երկրպագութեամբ՝ որպէս զՄաւր Տեառն
պատուել զտիպ պատկերի՝ աղաչելով լինել բարեխաւս վասն մեր առ
որ մարմնացաւն ի նմանէ վասն թշուառութեանն մերոյս բնութեան եւ
առ Մնող Բանին եւ Միածնին Որդւոյ, որ առաքեացն զնա ի խնդիր մո-

լորելոյ բնութեան մարդկութեանս, եւ առ Հոգին // Սուրբ, որ աւետա- 232ա
բանեցաւ նմա ի Գաբրիէլէ ի սպաս եւ ի յարդարումն անճառելի մարմ-
նաւորութեան Բանին:

IV. [1]Արդ, ցուցաւ ասացելովքդ, թէ այլ պատիւ է այնր, որ ըստ բնու-
թեան ունի զանգուգական փառսն եւ ճշմարիտ թագաւորութիւնն, որ է
Երանելին եւ միայն Հզաւրն, եւ այլ պատիւ՝ առ ի նմանէ եղելոցն: [2]Եւ ի
նոսա դարձեալ զանազանութիւն, որպէս՝ բնութեանց եւ պատուոց, իսկ
ի մարդկանէ սրբոցն՝ չափ պատուոյ եւ արժան, եւ թէ զիա՞րդ զսուրբ
ոսկերս նոցա պատուեսցուք, եւ կամ թէ զո՞րս արժան է ընդունել կեն-
դանագրութիւնս եւ զո՞րս՝ ոչ, եւ թէ՝ ո՞րպիսի զանազանութիւն ընկա-
լելոցն է եւ վասն Տէրունական պատկերին մտածութեան եւ սրբոյ Աս-
տուածածնին, եւ վասն այդոցիկ շատ լիցի այսքանն: [3]Բայց կարեւոր
համարիմ յիշել եւ վասն որոյ բազում անգամ կրեն ի միմեանց մար-
դիկ երկրպագութիւն, զի միտք բազում անգամ ինքնին մտեալ՝ խնդրեն
վասն այսր, եւ թէ արժան իցէ կամ ոչ՝ համարաձակապէս առնել զվճիռ
կալան: [4]Բայց ինձ այսպէս բարւոք գոլ թուի, զի թէ էր արդեաւք հնար
ոչ այլ ումեք երկրպագել, բայց Աստուծոյ միայն, հաճեալ եմ յոյժ. այլ
վասն զի տեսանեմ հին զիրացդ պատմութիւն, որպէս ցուցաւ, եւ ան-
հնարագոյն զխափանումն, // յաւելցուք զայս, եթէ իմաստութեամբ 232բ
պարտիմք եւ զգործն եւ զիրացն քննութիւն առնել: [5]Եւ է իսկ այս-
պէս, զի Աստուծոյ՝ որպէս միայնոյ եւ արարչի եւ թագաւորի եւ մեծի,
ամենայնին պատճառի եւ պատճառաց արարչագործի, նախախնամո-
ղի եւ կրողի, զամենայն զպաշտաւնն եւ զերկրպագութիւնն առանձ-
նական մատուցանել, որպէս արարած՝ Արարչի: [6]Զայլ ամենայն բարու-
թիւնսն առ մեզ եւ վասն մեր թողից, յորս ոչ կարէ ումեք մտաւք ըստ
արժանին հուպ երթալ եւ ոչ ճառել: [7]Իսկ իշխանաց ազգակցաց ոմանց՝
իբր բռնաւորաց առ երկիւղի, զոր ոչ ընդունիմ հաւանել, եւ այլոց՝ որ-
պէս երախտաւորաց կամ պատիւն ինչ ունողաց, կիսոց՝ վասն սիրոյ եւ
մտերմութեան, եւ դարձեալ ոմանց՝ վասն զԱստուած յինքեանս ունո-
ղաց, զոր մանաւանդ գովեմք, ըստ որում Նաբուգոդոնոսորն երկրպա-
գէր Դանիէլի, ի սոյն յարի եւ վասն խոնարհութեան գովելւոյ, որ յա-
ղագս Քրիստոսի երկրպագէ եղբաւրն:

V. [1]Արդ, ի փառս Աստուծոյ եղեալ ամենայնդ եւ առանց վնաս ինչ
առնելոյ յամենայն աստուածայինսն եւ յիրս առաքինութեան՝ հաճե-
լի է, իսկ եթէ առ երկիւղի տանջանաց կամ սպանման յաղագս կրաւ-
նից մերոց կամ պաշտաման բարեպաշտութեան // նախապատիւ զնո- 233ա

տիսն արարեալ եւ զայն առնիցէ ընդ առ Աստուած, մահու չափ մեղուցելոցն դատաստանաւ է: [2]Տեսանեմ եւ այլ ինչ, ոչ հեռի յայսմանէ, ողբոց արժանի իրս, զի թղթոց բռնաւորաց եւ անշունչ պատկերաց նոցա սուտակասպասութեան աղագաւ, իսկ երբեմն եւ առ ահի անկեալ երկիր պագանեն, բայց մեր ամենայն ինչ պարկեշտութեամբ եւ ըստ կարգի եղիցի, որպէս զի ամաչեսցէ աշխարհ ի գնացից մերոց: [3]Եւ հայելով ի գործս մեր բարիս՝ մարդիկ յաւիտենիս փառաւորեսցեն զՀայր մեր յերկինս ընդ Որդւոյ իւրում Միածնի եւ ընդ Հոգւոյ իւրում Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

<Դ>

ՆՈՐԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՔԱՀԱՆԱՅԻ ԱՌ ՈՐՍ ՊԻՂԾ ՁՄԻՍ ՎԱՐԿԱՆԻՆ ԵՒ ՁԱՆՁԻՆՍ ՈՉ ԱՐԳԵԼՈՒՆ

I. [1]Նորք ոմանք փարիսեցիք եւ առանց դպրութեան այժմ ի մէջ մեր ընծայեցան, դժուարակիրս եւ ծանունս զդիւրըմբերսն եւ թեթեւագոյնս ստեղծանելով յանձանց՝ բառնալ առանց աւրինաց հրամայեն, ոչ միայն զի մատամբ ոչ կամին երթալ յայնոսիկ ինքեանք մերձ, այլ եւ
233բ գործել զանարժանս՝ զլցեալսն ամենայն անիրաւութեամբ, // աւրինաւոր ինքեանց համարին՝ զգերան յական ոչ տեսանելով յիւրում: [2]Բամբասէ եւ որ ոչ զդուզնաքեան ծանեաւ չիւղ, եւ ոչ միայն զի ոչ չիւղ, այլ եւ սահման աստուածային եւ յԱստուծոյ առ արդարս եւ անարատս կարգեալ: [3]Անկեալք ի հաւատոց արհամարհեն զհաւատացեալս, զհիմն ոչ ունելով՝ կործանեալք ի հեղեղաց եւ հողմոց կամ, զիսկն ասել եւ ճշմարիտ, առանց իրիք բնութեան ցողուն եւ փայտ ի կերակուր հրոյ ժողովեն, իսկ զհիմամբ հաստատեալս առանց վթարութեան եւ հերքելոյ եւ սուղ ինչ նուազ չինող ոսկի եւ արծաթ եւ պայծառ քարինս քամահեն փոնգալով: [4]Վասն զի պիղծ է յաչս ամբարշտի աստուածապաշտ, եւ մոլեգնեալ անգիտանալով զանձն՝ զողջամիտ ոք ախտիւն նախատէ, <որպէս> ծարաւի է արեան յԱբէլի՝ Կայէն:

II. [1]Արք քաղդէացիք չարախաւս զԱնանիանց եւ զԴանիէլին: [2]Սիրեմ, թէ ոչ գազանք եւ ոչ հուր պատերազմեսցին ընդ ատելիս ատելեացն: [3]Բաղայամ անիծանել զԻսրայէլ յանդգնի, սակայն ոչ տուե<ա>լ նմա լինի: [4]Եւ թէպէտ անիծանեն նոքա, Տէր աւրհնեսցէ, եւ զամաւթ

յարուցեալքն ի վերայ կրեսցեն, վասն զի ախորժեն զկուրութիւն, եւ
լուսաւորութիւն խաւար նոցա կարծի, ոչ զան//գիտեն անլուսաւորք 234ա
անուանել զտեսանողս: [5]Եւ թէ այնպէս ի հաւատ վնասեալք են, սքանչանամ եւ ոչ մի վասն անառակութեան գնացից նոցա, քանզի որ ոչ զինքնաշարժն ունիցի շարժող, զիա՞րդ ինչ ի պիտանեաց եւ ի կարգաւորաց կարասցէ գործել: [6]Մ՞ոչ անզգամք զիմաստունս թշնամանեն, ո՞չ անաւրէնք՝ զքաջաւրինաւք դաստիարակեալս, զբարեպաշտս՝ ամբարիշտք, զարդարս՝ անիրաւք, զմաքրասէրս եւ զգաստս՝ վաւաշոտք եւ գէջք, ագահք եւ կապեալք ուժգնութեամբ՝ զողորմածս եւ զսփռողս աղքատաց: [7]Քանզի զիա՞րդ ներհակք միաբանեսցին բայց ի տարերց: [8]Մ՞ զառաքեալս, ո՞ զմարգարէս, զմարտիրոսս, ոյք ոչ չարք եւ մեղաւորք, հալածեցին եւ սպանին: [9]Զի եթէ զտանուտէրն, ո՞րչափ եւս առաւել՝ զընտանիս նորա: [10]Այլ խրախ լինիմ, զի յաղագս բարեպաշտութեան վտանգիմ, թէպէտ եւ ոչ նոցա այսպէս երեւի, [11]վասն զի եւ որոց շրջեալ են խելք կամ անապակաւ այլայլեալ, ըստ էութեան ոչինչ կարեն տեսանել, բարբաջեն անզգայաբար եւ իմանան զյիմարութիւն, եւ ըստ բանի թուեցեալքն նոցա ծիծաղելիք են առողջաց եւ զբնութիւնն ամ-
բողջ ունողաց: [12]Լուիցեն եւ ն//ոքա ի մէնջ զառաւել քան զհաւասարն 234բ
պատասխանիս՝ ոչ ըստ ոսոխասիրաց եւ վիճողաց, այլ զիրաւունս պահանջողաց, ոչ յաղագս ատելութեան ընդդիմադրողաց, այլ զթիւրութիւն ընտրութեան նոցա ի դատաստան արդար ածողաց:

III. [1]Արդ, զի թէպէտ եւ բազում ինչ առ ի մէնջ յաղագս բանի հաւատոյ ասացաւ հակառակ նոցա, դարձեալ գլխաւորելով փոքր ինչ իբրեւ զյիշատակարան ճառել ոչ աւելորդ ինչ, այլ յարմարական գոլ երեւի, [2]որպէս զի եւ յայսմ իսկ ուսանիցիմք՝ անհաւատարիմս զնոսա ի մեծամեծսն, ըստ որում եւ ի փոքունսն այնքան կարճամտաց եւ խորհրդով դուզնաքեայց յաստուածաբանութիւնս: [3]Զի զարմանք իցեն եւ առ այլս երեւել անհանճարաբար առդնիլ, ոյք ոչ զԲանն մարմին եղեալ, որ է մարդ ըստ ճշմարտութեան լինել խոստովանել յանձն առնուն՝ Յովհաննու հաւանելով: [4]Այլ մարդ զոմն՝ ապականացու եւ անկատար, ունայն ի փառաց Աստուածութեան, յառաջ գոլ ի Մարիամայ ստեղծանեն, մահկանացու միայն՝ ըստ մեզ, եւ չարչարելի, անխառն եւ անմիաւոր գերագոյին՝ ըստ բնութեան, մինչեւ չարչարեսցի խաչիւ ի մահ եւ գերեզման եւ յարուցեալ մարդ՝ փառաւորեսցի ապա Աս-
տուծով: // [5]Իսկ ոմանք ի պատահելոցն գլորման եւ գայթակղութեան 235ա
քարին եւ վիմի կարծելով լաւագոյն քան զնոսա խոստովանիլ, եւ յա-

ռաջ իսկ քան զխաչն ասեն Բանիւ զմիաւորութիւնն՝ ոչ ճշմարտապէս եւ ըստ բնութեան, այլ արժանաւորութեան հանգանակաւ իմն եւ չափովք, եւ զայս՝ կա՛մ նախակազմեալ յորովայնի, որումն համբակի, եւ կա՛մ զկնի ծննդեանն սքանչելւոյ: [6]Երկուց դիմաց կատարելոց եւ անձնաւորութեանց յարակցութիւն զմիաւորութիւնն զայն ասեն, զի թէպէտ ջանան թաքուցանել արուեստաւոր ճոռոմաբանութեամբ զերկուց դիմացն դաւանութիւն, այլ ոչ կարեն՝ ամենայն իւիք զնոյն զեկուցանելով: [7]Վասն զորոշեալ կամաց երկուց եւ երկուց բնութեանց եւ ներգործութեանց կամ կրից առանձին մարդոյ ճառք եւ տրամաբանութիւնք՝ զի՞նչ այլ, եթէ ոչ երկուս նշանակեն դէմս. խառնմանն եւ միաւորութեան յեղանակի գոլով անհմուտք՝ փորձին եղծանել զԵկեղեցւոյ ճշմարիտ աւանդութիւնս:

IV. [1]Արդ, ի նահատակաց բանին կշտամբեալք նոքա, առաւելապէս եւ՝ խոցոտեալք, թէպէտ եւ ոչ զգան՝ մեռեալք գոլով: [2]Առաջիկայս մեզ
235բ քննեսցի աշխատութիւն ինչ բարձրագու//նի եւ խորագունի: [3]Յայտոսիկ ոչ ինչ պիտոյանամք քաջայայտ ունել անմտութեանն զամբաստանութիւն ինքեան, զորոց եւ առաքեալ նախախնամաբար յաղագս իւրոցն Հոգւով Սրբով արտադրեաց զհակառակաձայնութեանն առ ինքն հերձուած՝ մարդոց ապականելոց մտաւք եւ ի հաւատս անպիտանից գոլ զիւտ զայնպիս<ի> նորաձեւութիւնս: [4]«Այլ Հոգին Սուրբ յայտնապէս ասէ, թէ ի ժամանակս յետինս քակեսցին ոմանք ի հաւատոց»*, ուրացութեան հաւատոց լինել ծնունդ՝ զխարդախ մտածութիւնն եւ զանաւրէն դրութիւնն զայնգունակ ասէ, դիւաց եւ մոլար հոգւոց անկրաւն եւ եղծեալ իմաստութիւն, [5]քանզի յարեալ՝ ի նոյն յաւելու ասել այսպէս. «Հայեսցեն յայսս մոլորութեան եւ ի վարդապետութիւն դիւաց՝ կեղծաւորութեամբ. ստաբանք, խարեալք իւրեանց խղճիւն մտաց. [6]որ արգելուցուն յամուսնա<նա>լոյ եւ մեկնիցեն ի կերակրոց, զոր Աստուած հաստատեաց ի վայելումն հաւատացելոց, եւ ոյք հասեալ իցեն ի ճշմարտութեանն վերայ. [7]զի ամենայն արարածք Աստուծոյ բարի են, եւ չիք ինչ խոտան, մանաւանդ որ զոհութեամբն ընդունիցին, զի սրբի բանիւ Աստուծոյ եւ աղաւթիւք»†:

236ա *V.* //[1]Եւ արդ, ո՞չ յայտնապէս հակառակաբար ունին Հոգւոյն Սրբոյ եւ հաւատոցն որ ի Քրիստոս Յիսուս. [2]զի եթէ հոգւոց մոլորութեան

* Ա Տիմ. Դ 1
† Ա Տիմ. Դ 1—5

եւ դիւաց վարդապետութիւն ցնորականն այն իցէ վատթար եւ դառն ուսումն, չիք ի նոսա գիտութիւն ըստ Քրիստոսի, [3]քանզի՝ «Զի՞նչ հաղորդութիւն է Քրիստոսի ընդ Բէլիարայ, կամ զի՞նչ բաժին հաւատացելոյ ընդ անհաւատի»,* եւ թէ՝ «Ի վայելս հաւատացելոց եւ գիտակաց ճշմարտութեանն կերակուրք յԱստուծոյ հաստատեցան»†: [4]Թշնամանեն զԱրարիչն, ոյք զարարած նորա գարշեցուցանեն, հեռի եւ ինքեանք անկանին <յ>ուղիղ հաւատոց եւ ի ճշմարտութենէ: [5]Քանզի ասեն զբարին չար եւ ոչ բարի, զառաւել դժնդակս իբրեւ զաւրինաւորս եւ կանոնեալս ամենայն յաւժարութեամբ գործեն, զսահման ճշմարիտ հաւատոյ լքին, թողին եւ զարժանաւոր վարուց՝ իբրեւ զատելիս կամակարութեամբ առանց իրիք բռնութեան եւ ընդդիմութեան վնասեալք ի բանականն յոյժ, եւ հակառակաւքն զուարճանան:

VI. [1]Վա՛յ, որ դնէ զխաւարն լոյս եւ զլոյսն՝ խաւար, զքաղցր՝ դառն եւ զդառնն՝ քաղցր, զչարն՝ բարի եւ զբարին՝ չար: [2]Արդարե՛ւ, մոլորելոց են այսպիսի անխորհրդականութեան ընտրութիւնք եւ բանք:
// [3]Հայեա՛ եւ ընդ միւս եւս զառանցութիւն մտաց նոցա եւ յիմարու- 236բ
թիւն հոգւոց. ոչ է արգել նոցա եւ ոչ մի յաւուրց եւ ի ժամանակաց նոքումբք կերակրովք զմայլել ամենայն շուայտութեամբ եւ անլիր ագահութեամբ, [4]եւ զորս գոհութեամբն մերժենան եւ աղաւթիւք յաւուրս երեւելիս եւ նշանաւորս, հաւատովք եւ վարուք պարկեշտք, հայհոյել ոչ պատկառեն: [5]Զի եթէ չար է ինձ, ընդէ՞ր քեզ բարի. եւ եթէ ինձ ի մեղս, վասն է՞ր քեզ յարդարութիւն: [6]Կամ մի՛ ուտեր, կամ մի՛ դատապարտեր, քեզ՝ բովանդակ տարոյն ժամանակ, իսկ ինձ՝ եւ ո՞չ մի աւր պայծառ եւ աստուածային, քեզ՝ առանց պատճառի, իսկ ինձ՝ ոչ եւ ի տկարութիւն: [7]Եւ ո՞ զայս որոշեալ սահմանեաց, զի՞նչ է հակառակ աւրէնսդրութիւնս. քեզ արբեցութեամբ եւ որովայնամոլութեամբ զեղխել եւ եղծանել զկեանս ի մանկութենէ մինչեւ ի կատարած առանց խղճի մտաց, եւ որ զաստուածայինն հանապազ իմաստասիրէ, նմա եւ ո՞չ մասն ինչ ի պատճառ կելոյ, թէ երբեք հանդիպեսցի ի բարւոք աւուր: [8]Յարենէ եւ ի մեռելոտոյ հրաժարել տուեալ է. «Զմիս արեամբ շնչոյ մի՛ ուտիցես»‡, այլ զարիւն յերկիր հեղուցուս, քանզի «ամենայն շնչոյ

* Բ Կոր. Զ 14
† Բ Կոր. Զ 14
‡ Ծն. Թ 4

կենդանոյ չունչ արիւնն իւր է»*, զոր եւ առաքեալքն Տեառն հաստա-
237ա տեցին // թղթովն՝ որ առ հաւատացեալս ի հեթանոսաց: [9]Քեզ ո՞ հա-
մարձակեաց ուտել զհեղձուցիկս արեամբ կամ յո՞րս թռչնոց եւ երէց,
ո՞ սպանդագործ քեզ զչունսն հրամայեաց, զի զխզելն ձեռաւք եւ խեղ-
դանաւս կռելն լուռ եղէց, կամ զանմաքուր կենդանեացն ըստ աւրի-
նացն անխտիր ճաշակս թողացուցի՞ն քեզ սպասաւորք բանին անծա-
1ա նաւթիդ եւ զաներկբայ մաքրոցն պէտս բացասահմանեցի՞ն ի ստոյգ //†
բանին ընդունողաց: [10]Թողում զապականութեան վարդապետացն քոց
խառնակ եւ անսուրբ կեանս եւ որքան ինչ այլ՝ մի՛ բաւական համա-
րելով զ՚առ նոսա ի մէնջ յայլում ժամու ասացեալս: [11]Եւ միւս եւս, զի
ոչ է դիտաւորութիւնն այժմու բանիս մեծ խնդիրն այն, սակայն ունիմ
շնորհ հռովմայեցւոցն աւրինաց վերջնոց՝ սատակել իբրեւ զթշնամիս
հասարակաց բնութեան մարդկան զխզիչս արականացն հրամայողաց:
1բ VII. // [1]Արդ, յայսպիսեաց եւ այնպէս խրատեալք՝ զպղծեալս աւ-
րինացն կենդանիս, որ ի ծովու եւ ի ցամաքի եւ յաւդս շրջին, ուտեն
առանց խտրութեան եւ մեզ զհրամայեալս եւ համարձակեալս անուամբ
սրբութեան յԱստուածոյ ի գործ համարին մեղաց: [2]Այլ ասեն, զի թէ-
պէտ եւ սուրբ է եւ աւրինաւոր, սակայն ոչ է արժան զձեւ պարկեշտու-
թեան եւ կրաւնաւոր ժուժկալութեանն ընկալելոց եւ որոշելոց ի սովո-
2ա րութենէ հասարակաց այլովք վարուք հաւա//սարեալ մարդկան: [3]Ասեմ
եւ ես զդոյն, եւ ոչ հաճելի է ինձ յայնպիսի կերակուրս շուայտութիւն
ոմանց, մանաւանդ կարողաց ուժով մարմնոյ եւ առողջաց յախտէ հիւ-
անդութեան, եւս առաւել մանկագունաց ի նոսա եւ կարաւտից թառա-
մեցուցանել ընդ ծաղկի մարմնոյն եւ զախտս բնաւորականս, եւ որոց
պարտն է արեամբ չափ պատերազմաւ կալ հակառակ մեղաց՝ միայն ոչ
2բ յայնպիսի կերակրոց եւ ի գինոյ զանձինս արգելլով, //այլ եւ յամենայն
փափկութենէ եւ յագեցմանէ դոյզն եւս կերակրոց: [4]Սակայն ոչ դատա-
պարտեմ զբարեձեւութեամբ մերձեցեալսն ի տկարագունից՝ իբրեւ ի

* Ղեւ. ԺԷ 11, 14

† Ինչպէս արդէն ծանուցել էինք, այս երկի սկզբից պակասուոր մի հատուած հասել է մեզ ՄՄ N 777 ձեռագրով, որն, ըստ գրչի յիշատակարանի, ընդօրինակուած է Սարկաւագի ինքնագրից (Մեսրոպ քհն. Արամեան, Յովհաննէս Սարկաւագի «Ցաղագս նշանակի հաւատոյ նիկիականն ՅԺԸ-ից» ժողովածուն, Գանձասար Զ, էջ 64—65): Սա է սկիզբը ՄՄ N 777-ի հատուածի, եւ այստեղից սկսեալ՝ բնագիրը ներկայացւում է ըստ ՄՄ N 777-ի: Բնագրի վերջում արուած են ՍՂ 504-ի (=Բն.) տարբերութիւնները:

դեղ ցաւոց եւ ի պատճառ կելոյ, եւ ոչ բամբասեմ որպէս զգործաւոր
անաւրէնութեան եւ դժնդակագունի ապիրատութեան եւ ոչ տեղի որո-
շեմ զչարագործաց եւ ժամանակ երկայն ի ներքս ածելոյ զկնի եւ խառ-
նելոյ ընդ եղբարս ի կցորդութիւն աղաւթից // եւ Սեղանոյն երկնաւոր: 3ա
[5]Իսկ դու յանըստգտանելւոջն չարապէս դատիս զիմն եւ պարսաւս
դառնութեամբ, որպէս որոց ոչ գուցէ փրկութիւն եւ դեղ բժշկու-
թեան: [6]Բայց զքոյսն, զի մի՛ ասացից զկողման չարին կամ ճախու, զմա-
հու չափ ի մեղանչականս ե՛ւ առ Աստուած, ե՛ւ առ բնութիւն վաղվա-
ղակի առանց եւ դոյզն միոյ ժամանակի որոշման մերձեցուցանես յա-
նուանեալն քո սեղան, խառնակ եւ չփոթեալ հացին եւ բաժա//կին ըն- 3բ
դունակ լինել արժանի առնես: [7]Թուի ինձ՝ գիտելով, թէ ոչ ի դատաս-
տան անձին առնու զարհամարհեալ կերակուրն: [8]Զի զոր այպանեցերն
թշնամանելով՝ բամբասեալք եւ թշնամանեալք կերիցեն եւ արբցեն,
զապականեալն՝ ապականեալք, եւ զարտաքինն կանոնաց Եկեղեցւոյ՝
աւտարք առաքինութեան վարուց, նախատիչք Քրիստոսի՝ զնախա-
տեալն: [9]Ո՛վ ամբարշտութեանն. // զիա՞րդ ոչ ակն ածեն ծաղր առնել 4ա
զխորհուրդն մեծ եւ դողութեան արժանաւոր, զիա՞րդ եւ ոչ յանձանց
տան զիրաւունս, ուստի՞ դիմեալ սպրդեաց մտանել ի ներքս անշիջա-
նելի ճարակ չարի այսր հրդեհութեան, յորպիսի՞ յանդգնեցան մարդիկ՝
մանկունք չարին, աւտար առաւել եւ նորաձեւ ամբարշտութիւնս: [10]Եւ
քոյքն այսպէս, վասն զի համառաւտել տեղիս պահանջէ: // [11]Իսկ մարդ- 4բ
կաւրէն ինչ ոք յիմոցն ախտացեալ՝ արժանաւոր բժշկեալ դեղովք լինի,
քանզի ունին զսկիզբն կենդանութեան, ոչ իսպառ մեռան, թէ ոչ բժշ-
կեսցին. եւ ոչ խաբէութեամբ կեղծաւորին մտանել՝ ցուցանելով զին-
քեանս յԵկեղեցւոյ գոլ՝ ոչ ելով: [12]Այլ զուսումն առաքելական ի վարս
եւ ի կրաւնս անշարժ ունելով՝ հնազանդին լծոյ ապաշխարութեան, ող-
բան, խոնարհին, տրտմին ընդ Դաւթայ, զաւրհանապազ ընդ Պե//տրո- 5ա
սի լան դառնապէս, ցուցանեն զփտութիւն վիրացն գթածի Բժշկին, ոչ
կան ի բաց, մինչեւ առնուցուն զնեխուածոցն հաստատուն առողջու-
թիւն, երկասէրք են, աշխատին առ եւ զսպիսն ջնջելոյ, ոչ յանդգնին
մտանել, մինչեւ լցցի ժամանակն սահմանեալ: [13]Նաեւ յայնժամ եւս ի
խղճէ մտաց յաղթահարեալք բազմաց ստգտանելով զանձինս՝ յորոշ-
մանն մնալ աղաչեն, երկնչին, գուցէ ոչ իբրեւ զձիւն սպիտակացան, // 5բ
այլ եւ ոչ ոմանք իբրեւ զասր եւ զկտաւ, թէպէտեւ յոլովս վաստակե-
ցին: [14]Եւ յորդորեալք ի վարդապետաց՝ ողոքեն մաղթանաւք զնոսա
տեղի տալ աղաչանացն. [15]«Գիտակցութիւն մտաց ո՛չ,_ ասեն,_ համար-

ձակեցուցանէ, թո՛ղ տառապեցայց առ դրունս Շնորհողի ստուգապէս
մաքրութեանն. <մեղա՛յ, զի քնով դանդաղիմ>*, չիշխեմ վաղվաղա-
կի յակն անկանել որում զայրացուցին, զարհուրեալ եմ յարդարադա-
6ա տութենէն, թէպէտ եւ գիտեմ զնա ող//որմած»: [16]Եւ զի մի՛ անհաւանք
եւ անհնազանդք առ հարս ցուցցին, հազիւ ուրեմն զդէմս խոնարհե-
ցուցանելով յանձն առնուն մտանել, սակայն եւ ոչ յետ այնորիկ յան-
հոգս եղեալ խրախանան մտաւք եւ մարմնով՝ որպէս ի բաց վճարեալք
յերկիւղէ տանջանաց: [17]Այլ զմնացեալ եւս նշխար կենացն յաւելուա-
ծով ճգնութեան Քրիստոսի ընծայեն. զայն՝ բժշկութեանն վարձ Բժշ-
6բ կին, զայն՝ շնորհակալութեան // նուէր եւ պատիւ Ընդունողին: [18]Իսկ
սահման սորա ոչ ժամանակ որոշեալ թուով, այլ կատարած կենաց:

VIII. [1]Ասա՛ եւ դու ինձ զքոյսն եւ զ՚առ ի նոցանէ ընծայաբերեալսն
ոչ Աստուծոյ, վասն զի զմաքրութիւն սիրէ: [2]Ասա՛, դատապարտի՛ էդ
զանմեղս եւ զրպարտի՛ է իմաստուն եւ ճարտարաբան, զո՞րս ի պոռն-
կոցաց՝ զիգացեա՞լս եւ զարուագէ՞տս, զյափշտակո՞ղս, զշո՞ւնս, զաւա-
զա՞կս, զարբեցո՞ղս, զորովայնամո՞լս, զծաղրածուս եւ զծիծաղկո՞տս,
7ա զարծաթասէ՞րս, որով ոչ ոք կարասցէ զԱստուած սի//րել, [3]առ այսոքիւք
եւ զամբարտաւա՞նս, զսնապա՞րծս, զսո՞ւտս, զհպա՞րտս, զանողո՞րմս,
զոխակա՞լս, զաղտեղի՞ս լեզուաւ, զդատարկ եւ շատախաւս բերանով
պարտաւորեա՞լս, զամպարհաւաճս եւ զվէ՞ս զաչաւք եւ զվաւաշո՞տս,
զերդմնահա՞րս եւ, համանգամայն ասել, զաւտա՞րս ամենայն առա-
քինի որակութեան եւ զպատարո՞ւնս չարութեամբ, այսպիսի՞ք ներ-
7բ քին քո եւ խորհրդոյ արժանաւորեալք: [4]Որ մտանէ <ընդ բերան>†, //
յայտ է աւրինաւոր եւ մաքուր կերակուր, ոչ պղծէ զմարդ, այլ կարգե-
լոցդ ազգ վերագոյն: [5]Ընդէ՞ր ոչ թշնամանես եւ խոտես, զորս՝ եւ Աս-
տուած, հի՞մ զհրամայեալս Աստուծոյ ի դատապարտութիւն դնես սր-
բոց եւ զհրաժարեցելովքն պատեալ դու փարիս, զատելիս Տեառն սի-
րես յարգանաւք եւ զսիրելիս նորա անարգես թշնամանաւք: [6]Որո՞յ ար-
դեաւք մասն իցէ ասողն բարի զչար<ն> եւ ընդդէմ նմին չար՝ զբարին,
8ա զլոյսն՝ խաւար եւ զխաւարն՝ // լոյս, զայնպիսի դառնութիւն՝ քաղցր եւ
զքնութիւն քաղցրութեանն՝ դառն. մորոսաց եւ մտաց անկելոց, այլ եւ
մոլեգնոտաց են ձախողակի այդոքիկ ընտրութիւնք եւ կարծիք: [7]Մ՞ի
լուար զասելն՝ կերողի ոչ դատել զոչն կերող, եւ ոչ նմա՝ զայն, որ ու-

* Ըստ Բն.-ի
† Ըստ Բն. -ի

տէն*, քանզի գոհանալ երկոքին պարտին զԱստուծոյ, ոյք նմա ուտեն
եւ ոչ: [8]Դու զի՞ դատիս եւ անգոսնես զայլոյ ծառայ, վասն զի Քրիս-
տոսի կամք եւ անկանիմք, բայց ոչ անկցուք, այլ կացցուք կարողու-
թեամբ //զաւրութեան նորա, որ հաստատէն զմեզ: 8բ

<Վասն բաղարջին>†

IX. [1]Դու առ յաղթասիրելն ինձ ախորժելով՝ յանդգնիս կամակորել
եւ զԳիրս եւ հակառակս խաւսել Հոգւոյն Սրբոյ, անամաւթանաս եւ ոչ
զարհուրիս: [2]Զածես զմտաւ՝ որքան ինչ յաղագս այնորիկ աւրէնք եւ
պատուիրանք զգուշութեան, եւ որում վայել էր լնուլ զամենայն արդա-
րութիւնս, զիա՞րդ զմեծագունաւն քամահեալ զանցանէր: [3]Զիա՞րդ եւ
ոչ չարասէր հրէայքն գտանիցին // ըստ քեզ իրաւամբք դատել, զի եթէ 9ա
ի գովելիսն եւ բարձրագոյնս<ն> յարել բիծ եւ հայհոյութիւն ոչ ակնա-
ծէին պատկառեալք, զի՞նչ ոչ զաւրէնազանցութենէն բաղբաղէին զհռ-
չակաւորն տաւնից նոցա եւ զամենամեծ, եթէ տեսանէին եւ լսէին աւ-
րինացն ջատագովք՝ այլովք արհամարհեալ կարգաւք եւ անաւրէն կե-
րակրովք, զիա՞րդ ոչ առաւել կատաղութեամբ զհայհոյութիւնն բարձ-
ր բացուցանէին, եւ եթէ ստութիւն վկայիցն անաւր//ինաց հաւատարմա- 9բ
ցաւ նոցա, ճշմարիտ ամբաստանութիւնն ո՞րչափ եւ քա՞նի արկանէր ի
մէջ խռովութիւն: [4]Դու, որ զխմորն ինձ եւ զձուկն՝ առանց հանճարոյ
եւ զգաւնութեան յամենամաքուրն մատուցանես սեղան, զի՞նչ առ այ-
սոսիկ կարասցես գտանել բարբանաց յաւդուածս, զի թէպէտ եւ պատ-
բաստ ես յամառութեամբ, եւ դիւրին առ ստութիւն ըմբռնեալ ամենայն
ուստեք լինիս: [5]Առաջին, զի ոչ արտաքոյ ինչ // աւրինաց գործէր՝ որ 10ա
ոչ եկն լուծանել զաւրէնս կամ զմարգարէս եւ որ կատարած եւ լրումն
աւրինացն էր, վասն զի իշխանութիւն ունեք յիսրայելէ ոչ էր ի Պաս-
քային եւ յաւուրս բաղարջակերացն ուտել խմորեալ կամ ունել ի տունս,
մանաւանդ առ երկիւղին մահու, եւ ոչ յերեկորւոջն Զատկի զգաւրինն
արհամարհել զենումն եւ կերակուր: [6]Եւ երկրորդ, այլազգւոյ մտանել
ի քաղաքն Երուսաղէմ ի փառաւորեալ աւուրսն այնոսիկ չէր համար-
ձակութիւն ամենեւին, // եթէ վաճառեսցէ ինչ, որպէս ասեն ապշեալք: 10բ
[7]Երրորդ, զի ինքն եւեթ լինէր պատճառ իւրոյ մատնութեանն եւ մահու

* Տես Հռոմ. ԺԴ 3:
† Ըստ Բն.-ի

Տէրն՝ գործելով ինչ, զոր ոչ աւրէնք հրամայէին ի տաւնին: [8]Զորրորդ,
զի մատնիչն պատրաստ առ ձեռն ունէր զչարախաւսութեանն պատ-
ճառ առ քահանայապետսն եւ իշխանս տաճարին, եւ նոքա դատաւո-
րին ընդէ՞ր ոչ զայնմանէ եղեն ամբաստան, քանզի ոչ ծածկէր ի նոցա-
11ա նէ Յուդաս՝ առ կարաւոյն ագահութեան եւ զնա պարտաւ//որ առա-
ւել ցուցանելոյ: [9]Հինգերորդ, եթէ կամէր Յիսուս զպասեքն ոչ ըստ աւ-
րինացն կատարել, վասն է՞ր բնաւ եւ զերեկոյն զայն իբրեւ զմեծ ինչ
պատուէր եւ խնդրէր տեղի ըստ արժանի, ուր ուտիցէ զզատիկն: [10]Մ՛ոչ
ասաց՝ ասել ցտանուտէր տանն ուտել առ նմա ձուկն եւ խմորեալ, այլ
թէ՝ «Առ քեզ առնեմ զզատիկս աշակերտաւքս հանդերձ»*, եւ զատիկ ոչ
11բ ձկամբ եւ խմորելով կատարէր, այլ գառամբ եւ բաղարջով // ընդ եղե-
գի: [11]Վեցերորդ, զի թէպէտ եւ նա այնպէս իսկ կամէր, որ է անհնար,
ոչ նմա յանձն առնոյր այրն աւրինապահ, զի մի՛ եւ ինքն ընդ նոսին
կորիցէ ի քահանայապետիցն չարաց: [12]Եւթներորդ, զի որոյ էր տունն,
նմա իսկ պարտ էր զամենայն պէտս տաւնին պատրաստել, վասն որոյ
եւ հրամայեացն <Տէր> իսկ ասել. «Առ քեզ ուտեմ զպասեքս աշակեր-
12ա տաւքս հանդերձ»†, որպէս զի ուսեալ նորա՝ մի՛ ինչ ի պիտո//յիցն նուա-
զեցուսցէ տաւնին, քանզի ոչ էին աշակերտացն գառինք եւ բաղարջ եւ
գինի, որպէս եւ ոչ տուն յԵրուսաղէմ, եւ զիա՞րդ ոք աշակերտի աւրի-
նացն առն համարձակէր տալ հրաման զհակառակս աւրինացն եւ զայն՝
ի տաւնին մեծի: [13]Ութերորդ, զմէ՞ ոչ եւ աւետարանիչքն գրեցին, որք
սովոր էին յամենայնի զճշմարտութիւն խաւսել, եւ յաղագս իրաց այն-
12բ պիսեաց: [14]Իններորդ, զի եւ յանդիմանեալ վասն մեղացն լինէր, // որ
ազատեաց զանձն բանիւք եւ արդեամբք ի բծոյ մեղաց:

X. [1]Արդ, ամենեքումք սոքաւք եւ այլովք բազմաւք ցուցանի, եւ
քաջայայտ է ստել եւ ամպարշտել՝ որոց կարկատելն զոչ գրեալս եւ զոչ
աւրինաւորս ի վերայ Տեառն: [2]Եւ եթէ եկեր նա եւ աշակերտք նորա
զմիս գառին, զհաւատացեալս ի նա ամենայն ուղիղ դաւանութեամբ
եւ դուն ուրեք զոմանս ի նոցանէ հաղորդեալս սրբոյ կերակրոյն յա-
13ա ղագս հարկաւոր պատճառաց, // վասն է՞ր յանդգնիցիս հայհոյել յղ-
փացեալդ ժանտութեամբ գարշութեանց: [3]Մ՛ուր արդեւք եւ զնախ մարմ-
նաւորութեանն առ հաւատացելոյն Աբրահամու դնիցես զուտելն նո-
րա երկու հրեշտակաւքն ի մսոյ որթուն: [4]Թուիս ինձ եւ ոչ զՀեղիաս

* Մատթ. ԻԶ 18
† Մատթ. ԻԶ 18

զմեծն՝ յագռաւուց կերակրեալ մսաւք եւ հացիւ ի հեղեղատին Քոռա-
թու՝՝ թողուլ ազատ ի թշնամանաց. ո՛չ եւ զՄովսէս եւ զԱհարովն եւ
զորդիս նորա՝ մասամբք // զոհից ժողովրդեանն պարարեալս: [5]Եւ զի 13բ
յոյժ դիւրին է որոց կամիցին ի յանդիմանութիւն այնպիսեաց հակա-
ռակողաց ժողովել ի Գրոց դրուագս բանից, բաւական առ այդ զասա-
ցեալսդ համարեսցուք: [6]Իսկ զմիւսն առ դմին ի նոցանէ կարգեալ ստու-
թիւն, հաւասար դմին եւ եւս առաւել, յիշեսցուք վերստին զնոյն ինքն
առընթեր դնելով զԳրոյն բան, որ յաղագս խմորոյ, զի ծանիցես զան-
հաստատութիւն իմա//ցուածոց եւ բանից նոցա: [7]Որպէս եւ յայնմ եւս՝ 14ա
յաւրէնս Զատկին ի Գիրս Ելիցն ասէ նոյն ինքն Աստուած այսպէս. «Եւ
եղիցի ձեզ արիւնդ ի յիշատակ, եւ տաւնեցէ՛ք զդա տաւն Տեառն յազգս
ձեր: [8]Օրէն յաւիտենական տաւնեցէք զդա: [9]Զեւթն աւր բաղարջ ու-
տիցէք, յառաջնմէ աւրէ անտի անհետ առնիցէք զխմոր ի տանց ձե-
րոց: [10]Ամենայն, որ ուտիցէ խմորեալ, սատակեսցի անձն այն յԻսրայե-
ղէ: [11]Յառաջնմէ աւրէ անտի մինչեւ // յաւրն եւթներորդ մի՛ ուտիցէք 14բ
խմորեալ»†՝ աւր առաջին կոչելով զաւրն, յորոյ սպառուածին զենեալ
գառն լինէր‡: [12]Եւ զկնի փոքու միոյ ասէ դարձեալ այսպէս. «Եւ առ-
նիցէք զաւրս զայս յազգս ձեր աւրէն յաւիտենական: [13]Ի սկսանել չո-
րեքտասաներորդի աւուր ամսոյն առաջնոյ յերեկորեայ բաղարջ ուտի-
ցէք մինչեւ ցքսան եւ մի աւր ամսոյն ցերեկոյ: [14]Զեւթն աւր մի՛ գտցի
խմորեալ ի տունս // ձեր. ամենայն, որ ուտիցէ խմորեալ, սատակեսցի 15ա
անձն այն ի ժողովրդենէն, յեկաց եւ ի բնակաց երկրին խմորեալ մի՛
ուտիցի. յամենայն բնակութեան ձերում ուտիցէք բաղարջ»§: [15]Եւ զի-
՞րդ անցանէր Տուիչն աւրինացս այսոցիկ զիւրովք պատուիրանաւք
այսպիսովք նախ քան զլնուլն զնա, կամ զիա՞րդ ոչ իցէր մահապարտ
ըստ աւրինացն, եթէ քամահեաց զնոքաւք, եւ ո՞ւր իցէ կամաւորու-
թեամբ գալ նմա ի չարչարանս, // որպէս եւ ճշմարիտ իսկ է, եւ ոչ իբ- 15բ
րեւ զաւրինազանց բռնաբար ձգիլ ի հրէից:

XI. [1]Սոյնպէս իմա՛ ինձ եւ յաղագս ջրոյն ստել նոցա սովորաբար,
վասն զի կամ ոչ ուսան կամ «ուսանին հանապազ եւ երբեք ի գիտու-

* Տես Գ Թագ. ԺԷ 6:
† Ել. ԺԲ 15—16
‡ Տես Ել. ԺԲ 1—15:
§ Տես Ել. ԺԲ 17—20:

թիւն ճշմարտութեանն ոչ ժամանեն»*, «զի շնչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Աստուծոյ»†: [2]Փախչի ի նենգութենէ Հոգին Սուրբ իմաստութեան եւ անջատանի յանաւրէն խորհրդոց եւ ոչ բնակէ ի մարմնի՝ վարեցելոյ մեղաւք: [3]Ցապականութենէ իսկ վարուց եկին ի սատակիչ իմաստս ամենայն ջոլիրք հերձուածողաց եւ անջատեալ հեռացան ի Հոգւոյն շնորհաց: [4]«Մեղքն ձեր որոշեն ի մէջ ձեր եւ Աստուծոյ»‡,— ասէ Եսայի ի տեսլենէ իսկ իրացն, որոց անբաժ ի խորհրդոյ իմաստութեան ոչ են, յայտնապէս տեսանի ոչ միայն ի կրաւնից աւանդութիւնս Եկեղեցւոյ, այլ եւ որքան ինչ յաղագս գործականին: [5]Բայց դարձեալ անդրէն // զերասանակ բանիս ձգեալ՝ դարձուցուք յոր դիմեացն ի սկսմանէ երթալ: [6]Ցորժամ կարծրութեամբ բանից առ ի մէնջ քարկոծեալ՝ զգայցեն տկարութեանն անձանց յաղագս կերակրոյն սրբոյ յԱստուծոյ, յոր եւ Տէր եւ ամենայն ծառայք իւր ոչ ըստգիւտ համարեցան մերձենալ ի ժամանակի, ոյք ի հրաժարելիսն ամենայն գործս եւ կերակուրս համարձակութեամբ եւ առանց խտրելոյ յարձակին յանաւրէնն եւ յանսուրբ՝ իբր // յաւրինաւոր եւ մաքուր, եւ յանհրամանն՝ որպէս ի հրամայեալ եւ ոչ հրաժարեցուցեալ, այսպիսիս մատուցանեն անխորհրդապէս ընդդիմադրութիւնս բանիւք: [7]Եթէ այդոքիւք, ո՛վ դուք, եւ Տեառն եւ սրբոց նորա կամիք լինել նմանողք, զիա՞րդ ոչ եւ սքանչելեաց գործովքն. յարուսջի՛ք մեռեալս, շնորհեցէ՛ք կուրաց տեսանել եւ խլից լսել, զդեւս եւ զախտս ամենայն հալածեցէ՛ք ի մարդկային մարմնոց: [8]Միանգամայն եւ զորս կատար//էր Փրկիչն աստուածաբար, Աստուածութեան նորա ոսոխք եւ ընդ ակամբ հայեցողք կատարել եւ մեզ հրամայեն՝ կարծելով յաղթութիւն գոլ զպարտութիւնն անձանց իւրեանց, որպէս թէ ոք ումեք յաղթել ի պատերազմի կամելով՝ սուր ընդ ինքեանն մղիցէ սիրտ: [9]Քանզի հարցցուք զնոսա այսպէս եւ ըստ սմին յեղանակի. «Մեք միով, որպէս դուդ ահա ասես, նմանողք եւ նախանձաւորք Տեառն մերոյ լինիմք, իսկ միւսով՝ նշանացն գործ//ողք՝ ոչ: [10]Ցոյց ինձ եւ զքոյսն, զո՞րս արդեւք լնուս հրաշագործութիւնս, որո՞վ միով եւ դու բերես առ նա զնմանութիւն, եւ որո՞ց սքանչելեաց հանդիսական երեւմունք ետուն քեզ համարձակութիւն ասել զոր ինչ կամիսդ առանց ամաւթոյ: [11]Երկնչիմ ի հայհոյութենէն,

16ա
16բ
17ա
17բ
18ա

* Բ Տիմ. Գ 7
† Ա Կոր. Բ 14
‡ Ես. ԾԹ 2

որ ծնանի ի քումմէ առաջարկութենէդ, քանզի «նա մեղս ոչ արար, եւ ոչ գտաւ անիրաւութիւն ի շրթունս նորա»*: [12]Մի՞ ուսոյց քեզ չարագործել եւ անիրաւել, մի ըստ միոջէ // ասել դանդաղիմ, քանզի խնայեմ ի քեզ, ո՞՛ զամենայն աւր պայթուցանել զորովայն մսոց եւ գինեաց զանազանութեամբք, [13]քանզի եւ ձկանցդ մարմին ոչ հեռի ինչ է ի գոլոյ միս, որպէս մեծն վկայէ նախամարգարէ՝ առ նոյն ինքն Աստուած եւ Տէր ասելով յորժամ հրամայեաց տալ միս որովայնամոլ ժողովրդեանն, որ լայինն եւ խնդրէին. «Ուստի՞ տաց, միթէ բաւակա՞ն իցէ ամենայն ձուկն ծովու լինն//ել սոցա կերակուր»†: [14]Մեք, թէպէտեւ սքանչելեաւք՝ ոչ, պահովք զնմանութիւն քառասուն աւուրց պահողին ըստ մարդկան կարողութեան բերեմք, իսկ դու ո՛չ ուտելով եւ ո՛չ չուտելով կարասցես պարծել նմանութեամբ, քանզի չուտելոյ աւուրք ոչ են քոյ, իսկ ուտելն՝ հեռի ի բարեպաշտելն կարողաց եւ սովորից: [15]Արդ, ասա՛, սքանչելագո՛րծդ եւ իմ հայհոյի՛չ, զի՞ քեզ մասն նմանութեան առ Տէր: [16]Զնապաստա՞կն, լուռ վասն // խոզի լինիմ. եւ վասն ոչ առաքելոցն որոշելոյ զայսպիսի յանցանել Հնոյն՝ թէպէտ եւ պահելն է գովելի, [17]բայց վասն զհեղձուցիկն ուտելոյ եւ զարիւն, յորոց եւ առաքեալք Տեառն ըստ Հնոյ օրինացն հրամայեցին պահել զանձինս հաւատացելոց հեթանոսաց, զի՞նչ կամիցիս տալ պատասխանի, կամ զանմաքուր զեռնովք պղծեալ կերակուրս եւ ըմպելիս ուտել եւ ըմպել վստահութեամբ: [18]Մի՞ քեզ հրամայեաց եւ ինձ զմաքուրն տարա//սահմանեաց: [19]Սքանչելիս ոչ առնեմ, վասն զի հող եմ եւ մոխիր եւ ոչ ի վեհագոյն բնութենէն կամ առաքեալ ոք եւ մարգարէ, այլ զսքանչելագործն Քրիստոս, զոր դուն մարդ ապականացու ասես հայհոյելով, Աստուած ես փառաւորելով ուղղապէս խոստովանիմ: [20]Նշանս ոչ կարեմ, որպէս եւ ոչ դու առնել, այլ զստեղծեալ Աստուծոյ կերակուրս ի վայելս հաւատացելոց պիղծ ումեք ոչ վարկանիմ, ի ժամանակի պիտոյից արգելում զբազումս, // բայց ոչ իբր ի պղծութենէ հրամայեմ յոլովից, վասն զի գիտեմ զժամանակ համարձակելոյն եւ յաղագս երկոցունց իմաստասիրեմ ուղիղ եւ հաւանական բանիւ: [21]Իսկ դու ոչ եւ զմի յայսցանէ եւ ի սոյնպիսեաց կարասցես ինձ յանտեղեաց տալ անփորձ եւ վիժած բանից քոց անկրթութեամբ. մեք՝ յառաքելոց եւ յԱւետարանաց եւ ի Հնոց Աւրինաց, իսկ դու՝ ի մտաց քոց անզգամութեամբ խաւարելոց, այլ մեռեալ կոչիս

19ա
19բ
20ա
20բ

* Ես. ԾԳ 9
† Թիւ. ԺԱ 22

21ա եւ // ես իսկ, ասէ, այդպիսի ձեւով: 22Մեռանել ուսայ, այո՛, ոչ յուրաստ
լինիմ, այլ ախտի՛ց եւ ո՛չ անաւելորդ եւ հարկաւոր կերակրոց, իսկ ապա
թէ իբրու ըստ բնութեան մեռելոյ հրամայես ինձ, մի՛ թողացուսցես եւ
զպէտս հացի եւ ջրոյ եւ որքան ինչ այլք իցեն այսգունակք, յորս եւ
ոչ դու հպիս, մեռեա՛լդ աշխարհի եւ ամենայն ախտից: 23«Կեղծաւո՛ր,
հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ,— հրամայեաց Տէր,— եւ ապա՛
21բ հայեսցիս // հանել զչիղ յականէ եղբաւր քո»*: 24Զի թէ մաքուր էր աւ-
րինադրութիւնդ քո, գովէի արդեւք զամբաստանութիւնդ զմէնջ, հա-
ւանէի ընդունել, ի բաց կալ՝ իբրեւ յաւելորդաց եւ ոչ ի հարկաւորաց
կերակրոց, ի մսոյն պիտոյից: 25Բայց տեսանեմ լի հերձուածով կորս-
տեան, քանզի զշնութիւն եւ զարուագիտութիւն ոչ տանջես եւ զագա-
հութիւն, որովք գայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ որդւոցն անհա-
22ա ւանութեան, իսկ զսուրբս գոհութեամբ ի // պատշաճ ժամանակի մերձե-
ցեալս յաղագս տկարութեան մարմնոյ, իբր բժշկականաւ վարեցեալ դե-
ղով՝ մաքուրն կերակրով, դատապարտե՞ս՝ որպէս զ'ան Աստուած զմա-
հու չափ զմեղուցեալս, եւ դու կաս մնաս ազատ եւ անպարտաւո՞ր, ոչ
եւ ի միոջէ խորշելով՝ փախչել ի յանիրաւութենէ: 26Զմտաւ ո՞չ ածես
զառաքելականն աւրէնս, թէ՝ եւ ոչ բամբասողք եւ թշնամանիչք, մա-
22բ նաւանդ յոր իրս ոչ է արժան, զարքայութիւն Աստուծոյ // ժառանգել
ոչ կարեն†, զի «որ ուտէ, Տեառն ուտէ եւ գոհանայ զԱստուծոյ, որպէս
եւ որ ոչն ուտէ»‡: 27Եւ դու, դատապարտ գոլով, դատի՞ս զայլոյ ծառայ,
յորմէ ակն ածեն եւ անմեղութեամբ վկայեալք: 28Տո՛ւր ինձ ի Գրոց զա-
պացոյց այսր պարտաւորութեան: 29Քանզի զքոյդ արհամարհեմ նոր
եւ խոտելի աւրէնս եւ հաճեցայց զղջանալով՝ յորս մեղայն, ապա թէ ոչ,
23ա ցուցից ես անտուստ բազմաւք եւ հաստատուն վկայութեամբք զընդ//
դէմսն քեզ յաղագս բազմամասն եւ յոքնաւրինակ ամպարշտութեան
քո: 30Եթէ իցէ ի քեզ բան իմաստութեան, տո՛ւր պատասխանի, ապա
թէ ոչ՝ ապ քո եղիցի ի վերայ բերանոյ քո: 31Զայսոսիկ ասելով՝ ոչ եթէ
աւրէնս դնեմ վարիլ ամենեցուն այնու կերակրով, քանզի եւ ոչ ինձ
հաճելի է, եւ ցանկամ, եթէ հնար իցէ, եւ ի հարկաւորսն հազիւ երբեք
մերձանալ ամենեցուն, որք մերոյս իցեն խոստովանութեան, ի հաց եւ
23բ ի ջուր լոկ // եւ անպաճոյճ: 32Այլ ըստ նախատեսութեանն առաքելոյ

* Մատթ. Է 5
† Տես Ա Կոր. Զ 10:
‡ Հռոմ. ԺԴ 6

զվերերեւեալ այժմ հերձուածոյն անիրաւաբար զերկպառակ լեզուա-
գարութիւնն ամաչեցուցանել կամիմ եւ ցուցանել, թէ յորոց արժան է
խորշել առաւել անկարգութեանց եւ խոտորնակ գնացից, կամ զորս ոչ
պարսաւել եւ ոչ գովել եւ որոց իրաց շարագրել կամ դնել առժամայն
պարսաւանս բանիւք, իսկ գովութեամբք, ներբողականաւք եւ // ար- 24ա
ժանաւոր պատուով զոյս ոմանս պսակել:

XII. 1Արդ, գովեսցին ազատ բարբառով անբիծքն հաւատով եւ
առանց հերձուածոյ, ոյք լծակից եւ զարժանաւոր վարուց մաքրու-
թեան ունիցին զծագումն ի փառս Աստուծոյ: 2Իսկ պարսաւեսցին, որ-
պէս ունի կարգն յերկոսին յայսոսիկ, այլ եւ ի մին միայն, ոչ առողջք,
յորոց եւ խորշել եւ հեռանալ ամենեւին յետ միագամ եւ երկիցս խրա-
տու հրամայէ առաքեալ՝՝ ըստ ուղիղ բանի. // զի թէ ի ստահակ միայն 24բ
եղբաւրէ, որչա՞փ եւս յերկոքումք ապականեցելոյ: 3Իսկ որք ոչն ու-
նիցին առաքինութիւն ինչ կամ չարութիւն, որպէս որ ո՛չ հիւանդք
իցեն եւ ո՛չ առողջք, ո՛չ գովելիք իսկապէս են եւ ո՛չ պարսաւելիք:
4Բայց յանգիտութենէ եւ ի հին դժնդակ սովորութենէ մոլորելոցն սի-
րով խրատս մատուցանել վայելչականս, եւ որովք առթի փրկութիւն,
մանաւանդ որոց ախորժելովն ընդունիցին՝ որպէս // ցանկացեալք կե- 25ա
նաց, 5անձանց վարուք ուղղութեան՝ նախ, եւ ապա բանից վարդապե-
տութեամբ, քաղցր եւ ձգողական յորդորմամբ, առանց խրատուցանե-
լոյ եւ մի՛ նախատանաւք թշնամանաց, որպէս սովոր են առնել անտե-
ղեակք որոշման կարգի իրաց եւ բանից, առանց ձանձրանալոյ առաջի
հանապազ արկանել զճշմարիտ գիտութեանն աստուածային եւ աննենդ
կերակուրս, հանել յանարդէ զպատու//ականն՝ լինելով իբրեւ զբերան 25բ
Աստուծոյ: 6Զի եթէ յանձն առցէ հաւանեալ մերոյ լինել դաւթի եւ սե-
ղանոյ, չնո՛րհ Աստուծոյ, որ կամի ընդ կեալ ամենայն մարդոյ եւ ի գի-
տութիւն ճշմարտութեան հասանել: 7Իսկ եթէ լսող միայն եղեալ եւ գո-
վիչ մերոցն, յառաջնմէն ոչ ի բաց կարել կալ պատճառեսցէ ըստ յաւ-
ժարութեան սրտին՝ առաջի արկանելով զխափանմանն զանազան բա-
բուրս, սակայն հայհոյիչ լեզուաց զմէնջ // ոչ որպէս կանխաւն հաւա- 26ա
սարեալ հաղորդեսցի, եւ լինի այս ոչ դոյզն ինչ նպաստ նմա առ ի փր-
կութեան սկիզբն եւ մեզ՝ ի հանդարտութիւն հանդստեան:

XIII. 1Եւ սկսանելի է այսպէս: 2Պահանջես յինէն զմիդ զայդ, զոր
տալ ինձ ոչ դժուարին ինչ է եւ ոչ ակամայ, քանզի ընդունիմ յաւժա-

* Տես Տիտ. Գ 10:

րութեամբ եւ կատարեմ, թէպէտ եւ հերձուածոյն ոչ տամ տեղի: [3]Տո՛ւր
26բ եւ դու զոր հայցեմն եւ ես զբազումս, քանզի անիրաւութիւն է ի հանկ//
անակս պարտապահանջութեան առնուլ ջանիւ զդատախազութեան
զփոքրն եւ զմի, իսկ զբազումսն եւ զմեծամեծս նորայոցն աւանդից ոչ
տալ ի ձեռն: [4]Արդ, զի մի՛ զրկող եւ զլացող բամբասիցիս յառնուլն եւ
ի չտալ, հատո՛ ինձ զպարտսն, որ է քեզ յաւելուած փարթամութեան
եւ գանձ անճառելի, ճոխացո՛ զաղքատութիւն քո ինքեան անձին, մի՛
27ա երեւեսցիս յաչաղկոտ, ո՛վ սիրելի, քոյին գլխոյ: //[5]Եւ տացես առաջին
ինձ անյաւելուած զխոստովանութիւն Սրբոյ Երրորդութեանն եւ Մի-
ոյ Բնութեան, մի՛ անուսումնաբար յաւելուածով մարդոյն քո ապա-
կանացուի աճեցուցաներ զկատարեալ եւ զանաճականութիւն: [6]Քան-
զի զիա՞րդ Կատարեալն եւ Աննուազ աճեսցի: [7]Լե՛ր դաւանակից ինձ
ուղիղ այսու բարբառով, զոր ուսաք ի Տեառնէ եւ յառաքելոց նորա:
27բ [8]Զաշխատութիւն հարցն երանելեաց յաղագս սորին պատուեա՛: //[9]Զայ-
նին լո՛ւր Յովհաննու, որ համարձակեցաւ անբաւ սիրով զԹոյ անկա-
նել զլանջաւքն տերունականաւք, զոր ոչ մարդ հասարակական գիտէ
եւ քարոզէ, այլ Բան մարմին եղեալ: [10]Եւ դու մի՛ ժամանակաւ որոշեսցես տնաւրէնութեանն զնա յինքենէ՝ ասելով յետ յարութեանն միաւո-
րութիւն գոլ Բանին ընդ մարմնոյ: [11]Վասն զի, թէ այս, ոչ ապա Բանն
28ա եղեւ, ըստ նմա, մարմին, այլ ի մարդ, ըստ քեզ, բնակեաց, որ//պէս զի
մի՛ Աստուած մարդացեալ եւ մարմնացեալ Աստուած եւ մարմնովն,
ըստ որում նայն որոտայ, այլ մարդ ոմն աստուածացեալ՝ ըստ այդմ
անուսումնութեան հաւատասցի: [12]Բայց նմա հետեւելով՝ Եկեղեցի
Քրիստոսի ուսաւ ըստ ճշմարտութեան խոստովանել մի բնութիւն Բա-
նին Աստուծոյ մարմնացելոյ, քանզի ոչ այլոյ ուրուք, այլ իւր իսկ նո-
րա էր առ ի մէնջն եւ ի մերմէ բնութենէ մարմինն անձնաւոր եւ բա-
28բ նական: [13]Վասն որոյ յուղիղ եւ ըստ ճշմար//իտ բանի խոստովանո-
ղաց ոչ ոք իշխեաց բաժանել ըստ բնութեան եւ կամաց կամ գործոց
եւ կրից զմին Տէր մեր Յիսուս Քրիստոս, այլ Աստուած գիտեն զԽա-
չեալն եւ չարչարեալ կամաւորապէս յաղագս մեր: [14]Վասն զի միաւո-
րութիւնն եւ մին գոլ ըստ անճառելւոյ տնաւրէնութեանն ոչ բաժա-
նեալ որոշի ի զանազան առանձնականս եւ յատուկս, թէպէտ եւ ճար-
29ա տասր իցէ ոք բեւրս անգամ եւ բեւրս, ոչ փոքունս եւ սակաւս, // այլ
բազումս եւ մեծամեծս զսրբոցն ունիս այսոցիկ եւ ազգակցաց սոցունց
հաւատարմացուցիչս եւ քարոզողս, ուստի այսքան ասել առ այս շատ
է ըստ այժմուս խնդրոյ:

XIV. [1]Երկրորդ, զխորհուրդն անապական եւ գերաշխարհիկ զփր-
կութեան մերոյ գրաւականն ընդէ՞ր ձաղեա՝ յապականութիւն իջուցա-
նելով եւ յամենեւին արհամարհանս նուաստութեան նենգանաւք ի կի-
բառեցելոյ խ//մորոյն եւ ջրոյ: [2]Ցայտնապէս ուրանալ ոչ կարացեալք 29բ
սկզբնահաւք այնպիսի դառն եւ աստուածամարտ աղանդոյ զխորհր-
դոյն ի Տեառնէ աւանդութիւնս ի վերջնում եւ յառաջնում գիշերին ի
Վերնատանն սրբում ի ձեռն այպանութեանն այնորիկ ընդ հրեայսն
մարդ ապականացու զնա նկարագրեցին, [3]յորմէ բարւոք խորհողաց հե-
ռանալ փախստեամբ, իբր ի չար հերձուածոյ, յոյժ է իրաւացի եւ սուրբ.
ունիս եւ առ այդ//ոսիկ զերբեմն ասացեալ մեր բան: [4]Երրորդ, ոչ բար- 30ա
ւոք էր զառաջաստ ամենամաքուր Փեսային եւ զկատարման մեծին
խորհրդոյ տաճար՝ զժողովեցողն հաւատացելոց սրբոց կացուցանել, ըստ
կորնթացւոցն, տեղի ճաշոյ եւ ընթրեաց եւ հանկանակաւ գինարբու-
թեան* [5]կամ զասացեալն յարմարապէս առակաւ՝ ուղտուց եւ իշոց վա-
րարից հանգրուանս եւ ձիոց վրնջողաց եւ մատակախազից, // զի քեզ 30բ
պարկեշտս բարբառեցայց, թողում ասել զանխտրաբար այդպիսեացն
հաղորդիչ այնպիսի կերակրոյ եւ սեղանոյ. [6]Թուի ինձ՝ գիտելով այպա-
նեալ գոլ՝ ոչ զանգիտեն պատկառելով իբր յաստուածայնոյ եւ ի սքան-
չելի սեղանոյ: [7]Զորրորդ, խորհրդածուք տգէտք եւ անմաքուրք, դա-
տարկք եւ ունայնք յամենայն իմաստութենէ, արհամարհեալ քահա-
նայութիւն՝ անուամբ եւեթ եւ ոչ ըստ աւրինի կանոն//ելոյ: [8]Հինգե- 31ա
րորդ, ապաշխարութիւն անտես եղեալ, զղջումն՝ եւ ոչ մի, այլ եւ ծո-
վացեալ եւս առանց լրման ամենատեսակ անաւրէնութիւն, գողութիւն,
աւազակութիւն, սպանութիւն ի խաղաղութեան եւ առանց պատերազ-
մի, գաղջ եւ տգեղ աղտեղութիւն գիշութեան: [9]Ո՞ւր դիցես եւ զհեթա-
նոսական անխտրութիւն ամուսնութեանց կամ զանսուրբ եւ զապակա-
նեալ կերակրոց եւ ըմպելեաց անակնածաբար ի // ներքս ընդունելու- 31բ
թիւնս: [10]Եղիցին եւ սոքա սորին գլխոյ, թէպէտ եւ ոչ կարգ բանին ըն-
դունիցի, վասն զի համառաւտութեան շարագրութիւնդ ճեպոյ աղա-
գաւ է, զյոյժ կարի առաւել եւ զանխտիր դարձուածս մոլորութեանն՝
զընկալեալ յանձինս կամ զոր ընդունելոցն են յայնժամ, լուռ անցա-
նեմ կամ: [11]Վեցերորդ, զանսրբոց ոմանց եւ զանծանաւթից ճշմարտու-
թեանն սիրողաց եւ եղելոց կենդանագրութիւնս // եւ ստեղծուածս ո՞ 32ա
ուսոյց երկրպագութեամբ պաշտել եւ մեծացուցանել: [12]Ո՞չ բաւական

* Տես Ա Կոր. ԺԱ 20—22:

են ճշմարտիցն եւ առաքինեաց ի Տէր՝ զարթուցանել զմեզ ի նախանձ
բարեպաշտութեան ի ձեռն տեսլեան երեսաց, որոց զսկզբնատիպս եւ
ցոյցս կամ, որպէս զոյ ասել, նախագաղափարս եւ տիրագոյն ենթա-
կայս ի բարեխաւսութիւն միայն Տեառնն մաղթել միջնորդաբար իրա-
32բ ւացի եւ պատկանաւոր էր: 13Մ՞ի փոխանակ Աստուծոյ ուն//ել անգի-
տաբար նախաշաւիղ իմն կռապաշտութեան: 14Ընդէ՞ր քեզ փոքրկա-
ցաւ խաչին փրկականի պատուական եւ զարհուրելի դիւաց նշան, եւ
պատկերք ոմանց անգիտից իմաստնոց նախադասեալ մեծարեցան: 15Ընկա՛լ ինձ զտէրունականն եւ զորոց վկայինն ի բարեփառաց եւ զայն
նկարեալ յեկեղեցիս եւ մի՛ բազմեցուցաներ ըստ հնոյ սովորութեանն
զգայթագղութեան յոլովից երեւոյթս. 16պարծեսցո՛ւք ընդ Պաւղոսի ի
33ա չարչար//անս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի խաչին փայտիւ* եւ մի՛
ի ձուլածոյս ոմանս, զորս ոչ գիտէին հարքն մեր: 17Ի նկարու զարբոցն
տեսանել աւգտէ զմիտս հանճարեղս եւ ուղղախոհս, իսկ բարձեալ շրջեցուցանել կամ ետեղակալ ունել ի ներքս զոսկեղէնս եւ զարծաթեղէնս ո՛չ պատճառ ուղղափառութեան գոլ վարկանիմ, կամ յայլմէ կազմեալ նիւթոյ. ստայաւղութեան ոմանց զանազան ձեւով խաբկանաց
33բ բանիւք ունկն դնել չամ//բուշ մտաց է եւ անբարեփոքձ խորհրդոց:
18Եւ թեր որդ, զի զառաջամայնսն առանց աւծման եւ աջոյ քահանայութեան աստուածացուցեալս նախապատիւ համարելով՝ պսակէք երկրպագութեամբ պատկերս եւ զերկոքումբք ըստ աւրինի Եկեղեցւոյ եւ կանոնի հարցն առ ի մէնջ շնորհաւորեալս յԱստուծոյ պանծալի եւ կենագործակ նշան, յորում երկրպագի Քրիստոս, անարգել եւ խորտակել
34ա ո՛չ զանգիտէք: 19Հեթանոսական արդարեւ է գործն: 20Իսկ մեք, թէ //
պէտ եւ գիտեմք դատարկ ի զաւրութենէ եւ նիւթ լոկ զ՚առ ի ձէնջն
մանկաբար ստեղծեալ եւ դրաւշուած, վասն ձեւոյն փրկականի պատուեմք եւ, յիշելով զկենարարին մերոյ չարչարանս գործւով այնպիսեաւ, առ նոյն ինքն Քրիստոս յաղաւթս առաջի նորա կամք երկրպագելով: 21Իսկ թշնամանելով դուք զխաչեալն Աստուած՝ իրաւունս համարիք ոչ եւ զառանձին նորա նշան մերոյ փրկութեան եւ կենաց թո-
34բ ղուլ անպարսաւ եւ առանց նախ//ատանաց, զհրէիցն ապարասանութեան եւ յանդգնութեան պակասութիւն ի Տէր այդու յեղանակաւ լնուք ստուգապէս՝ առանց թերութեան եւ նուազութեան: 22Մ՞ի երկաթեղէն բեւեռեցաւ բեւեռաւք յոտս եւ ի ձեռս եւ ի պարանոցս, ո՞չ արդ նա տի-

* Տես Գաղ. Զ 14:

գաւ խոցեցաւ մարմին եղեալ Բանն անչարչարելի եւ մի Տէր յերկաքանչիւրս ի սուսա՝ զմածուցեալ երկաթով նշանն սքանչելի արհամարհանաց քոց նախատանաւք եւ ի բաց խլելով նորին աղագաւ, ոչ հե-
ռան//աս ինչ զբեւեռեալն ի խաչի Աստուած եւ աշտէիւ խոցեալ յան- 35ա
պատուողաց հրէիցն: 23Ընդէ՞ր ապա ոսկեղէն եւ արծաթեղէն քեզ ձեւանան խաչք յերկրպագութիւն, որովք ոչ բեւեռեցաւ Քրիստոս կամ խոցեցաւ: 24Կատականաց ճշմարտապէս իմաստքդ են եւ վնասելոց մտաւք, զոր ի Տէրն եւ ի խաչին՝ անարգե՞ս, եւ զորս ոչն անդ՝ երկրպագե՞ս: 25Ուստի՞ քեզ նորոյ այդորիկ բարեպաշտութեան, զի մի՛ ասացից ամպարշտութեան, աւանդութիւն, խաղկտոց արարէք զեկեղեցական
գեղեցկա//կարգութիւնս, 26կամ ընդէ՞ր զձեռս եւ զգործիս հիւսանց ամ- 35բ
բառնաս զքահանայական խորհրդածութեամբ քաջ ի բաց՝ զոսկեգործաց եւ զարծաթաձուլից եւ որոց նկարելն հաճոյ եղեւ ուսումն: 27Մի արդեաւք թշնամանի՞ աջով քահանայութեան եւ իւղովն սրբով երկրպագելին քեզ՝ եթէ պատկերն եւ եթէ խաչ: 28Եւ եթէ այդպէս իցէ, ընդէ՞ր բնաւ առնուս ի նոցանէ լուսաւորութիւն կնքոյ կամ հաղորդու- 36ա
թիւն աւրինաց եւ պսակ ամուսնութեան եւ զայլս, որքան ինչ նոքաւք մատակարարեալ տնաւրինի: 29Քեզ արուեստագէտք յայնոսիկ առհասարակ եղիցին պարգեւատուք: 30Մ՞ի գիտես, զի կռապաշտութեան է անտեղի եւ անբան սովորութիւնդ այդ: 31Այլ ասեն՝ Քրիստոսիւ կատարեցաւ խաչին խորհուրդ՝ բեւեռելովն ի նմա, ուրեմն էին ի նմա բեւեռք երկաթեղէնք եւ ոչ փայտեղէնք: 32Ի բանից քոց պարտաւորեսցիս, // թէպէտ եւ զերծանել ճարտարէիր: 33Ցի՞մ իմիք եւ պատկերք 36բ
ստեղծեալք եւ նկարագրեալք. գարձեալ եւ նոքա ի Տեառնն կերպագրութեան եւ Կուսին Մարիամու, թերեւս, ասիցես: 34Թէպէտ եւ գովեմ զբանդ, զի ոչ կամելով խոստովանեցեր Աստուած զխաչեալն՝ անկար գիտելով զմարդ սուսկ այսպիսւոյ զաւրութեան եւ գործոյ, սակայն լուծանել զառաջարկութիւնդ ճեպիմ: 35Մկրտեցաւ Տէր՝ սրբելով զազգս
հաւատացելոց եւ // զջուրց բնութիւն միանգամայն: 36Ընդէ՞ր այժմ 37ա
մկրտես կամ առնուս մկրտութիւն յետ այնպիսւոյ կատարելութեան: 37Մի՛ ինչ բան գոհութեան եւ աղաւթից եղիցի քո ի մատուցման պատարագի Մարմնոյ եւ Արեանն Տեառն, վասն զի յերեկոյին, յորում ի խորհուրդ զաշակերտսն ածէր ի Վերնատանն, Ամենակատար<ն> զգոհութիւնն մեծ աւանդեաց: 38Թուիս ինձ վասն այնորիկ չապաշխարել,
զի ապաշխարեցին այլք. քո եղիցին // եւ այնոքիկ: 39Եթէ կամիս եւ մի՛ 37բ
բնաւ ի մեռելոց յարիցես յարուցելոյ Քրիստոսի, մի՛ եւ զարքայութիւնն

ժառանգեսցես՝ պատրաստեալ ի սկզբանէ աշխարհի սրբոց նորա, վասն
զի տուաւ նոցա: [40]Եւ այլ եւս յոլովք են ի նիւթս ձեւք խաչի յոստայ-
նանկաց կամ ի քրէական արուեստագիտաց տպաւորեալք, կրեսցեն եւ
այնոքիկ զ՚առ ի քէն պաշտամանն պատիւ: [41]Գոցես եւ ի տունկս <եւ>*
38ա ի բոյսս եւ ի ծաղիկս բազում անգամ զնոյն ձեւ՝ ոչ // նուազ ինչ սոցա.
[42]այլ եւ ի շնչաւորս՝ զհանգէտն, քանզի բովանդակ իսկ թռչնոց ազգք
ցուցանեն ճշգրտիւ յինքեանս, ի թռիչս ընդ աւդ գնալով՝ ճախր առեալ,
զայնգունակ նմանութիւն, ոչ միայն հերձաթեւքն անուանեալ, այլ եւ
յանաւսրաթեւոցն բազումք եւ ի պատենաւորացն անուանակոչելոց:
[43]Զի՞նչ զմարդոյ ասիցես ձեռաւք տարածեցելոյ, յորոյ իսկ նմանու-
38բ թիւն եղեւ իմացեալ ձեւ այն ի պատուհաս չարա//գործաց, եւ զիա՞րդ
հնարեսցիս դնել արտաքոյ բնաւորականին մասունս ի սոսա ամենե-
սին զառաջնոցն եւ հնոց, զի պաշտեսցին: [44]Կամ ընդէ՞ր ոչ դումայից
եւ ասարաց պղնձեաց եւ ոսկւոց դահեկանաց, որք այժմ զկնի Քրիս-
տոսի ի հրամանէ թագաւորաց բարեպաշտից յարուեստէ ընկալան զայն-
պիսի ձեւ գծոյ, երկրպագեսս: [45]Զտեսանե՞ս, զի ե՛ւ ի ձորձս, ե՛ւ ի հան-
դերձս, վասն զի ոչ է ի նոսայն երկրպագելի յաղագս Քրիստոսի տիպ
39ա ձեւոյ, կոխ//ի ի մարդկանէ եւ յայլոց կենդանեաց բազում անգամ:
[46]Խորհուրդ եւ զաւրութիւն մեծացուցանէ, եւ ոչ եթէ ըստ ինքեան եւ
բնութեամբ ունի զպատիւ երկրպագութեան նիւթ անչունչ: [47]Իսկ յորս
եւ ուր ոչ խորհրդոյն եւ զաւրութեանն աներեւութի եւ անմարմնակա-
նի վերակոչեսցի աղաւթիւք առ ի յԱստուծոյ շնորհս ընծայութեան,
ընդ ազգակիցս համարելի է: [48]Ապա թէ ոչ, յամբայր եւ յախուռն եւ
39բ դեւք զաւա//ղութիւն այսպիսի ընկալան <եկեղեցի եւ>† հաւատա-
ցեալք:

XV. [1]Զերկոտասան աւուրս նաւակատեաց խորանին վկայութեան
յանապատին Սինա ոչ ի դէպ է<ր> առանց աղաւթից պատշաճականաց
իրին եւ զաւրաւոր պաղատանաց Մովսէսի կատարել, [2]վասն որոյ եւ
սրբակամբ արեան կտակին կահ սպասուն ամենայն եւ նոյն ինքն խո-
րանն ներքին հանդերձ տապանակաւն եւ քրովբէիքն ոսկեղինաւք եւ
40ա արտաքին // խորանաւն լինէր աւծեալ, եւ ապա լնուին փառք Տեառն
զխորանն, եւ ծածկէր ամպն արտաքուստ: [3]Սոյն եւ առ Սողոմոնիւ լի-
նէր արքայիւ, քանզի յետ մեծի եւ արժանաւոր աղաւթից եւ աւրհնե-

* Ըստ Բն.-ի
† Ըստ Բն.-ի

լոյ զժողովուրդն լինէր առաքեալ յԱստուծոյ պայծառութիւն այնքան
լուսոյ շնորհաց՝ վկայութիւն ընդունելութեան պաղատանացն, մինչ
զի ոչ կարել քահանայիցն մտանել ի տաճարն: [4]Իսկ առանց խնդրե-
լոյ ոչ լինի տուեալ, եւ ոչ գտեալ // կամ բացեալ՝ առանց բախելոյ եւ 40բ
հայցելոյ*: [5]Մի՛ բաւական զմի անգամն եղեալ յիրս ամենայն վարկա-
նիցիս, վասն զի մի անգամ ծագելոյ արեգական եւ լուսնոյ եւ աստե-
ղաց ի սկզբանն թերեւս ոչ դարձեալ փայլէին զկնի առաջնոյն, ոչ եւ
պտղոց՝ եւ կամ բուսոց պէտք: [6]Երկրորդ անգամ, ի լրումն կարաւտու-
թեան համաւրէն կենդանեաց ի բնութենէս լինէր պարգեւեալ՝ անձրե-
ւաց, յեղանակաց տարեւորականաց, ծննդոց // ապականացուաց կեն- 41ա
դանեաց: [7]Բայց քո նոր աւրէնսդրութիւն, պարտ իցէ ասել եւ եթէ տա-
րաւրէն հանճարոյ գիւտ, զսպեալ ամփոփէ զյաճախածաւալ Աստուծոյ
պարգեւացն անհամեմատ առատութիւն, որպէս զի նիւթ ապականա-
ցու եւ անչունչ կրեսցէ երկրպագութիւն՝ ունայն գոլով ի խորհրդա-
կան եւ յաստուածային զաւրութենէ: [8]Մի՞ չ այդր աղագաւ թշնամանի
անմտութիւն մարդկան դարուցն առաջնոց, որոց չէին անգիտացեալ
արդարա//պէս պատուադրութիւն անէից, զայն ի յոյժ վնասամտութե- 41բ
նէ, առանց իրաւանց մատուցանէին: [9]Մո՛ւտ յանտառս եւ որոց զ՚ըստ
բնութեանն ունին զարդ եւ գեղաւորութիւն հաճելի, եւս եւ՝ ձեւ բա-
զում այդպիսի, եւ երկրպագեա՛ս: [10]Ընդէ՞ր հատելոց եւ անջատելոց ի
բնաւորական զարդուէ կանաչասաղարթութեանն գաւսացելոց փայ-
տից եւ ոչ զաստուածայինն ունողաց կատարումն զայդպիսիդ ընձե-
ռեսս պատիւ: [11]Մարդ, // որ է պատկեր Աստուծոյ եւ արեամբ Որդւոյ 42ա
նորա ի փառս վերստին ածեալ, ոչ կարասցէ քահանայել առանց կա-
տարման եւ աւծման Հոգւոյն: [12]Իսկ զիա՞րդ բնութիւն փայտի եւ քա-
րի կամ նիւթոյ այլոյ առանց զլրումն մեծի խորհրդոյն ընդունելոյ ի
ձեռն աւծութեան աւծելոց կարասցէ գոլ անաւթ փրկութեան եւ երկր-
պագելի: [13]Ընդէ՞ր ձեզ աղաւթիցն իմաստութիւն եղեւ անտես կամ խո-
տեալ եւ ի բաց ընկեցեալ, յո՞ր արդեւք իրս եւ // ժամանակս կամ տե- 42բ
ղիս ուսար զաղաւթս եւ զգոհութիւնս լինել վնասաբեր եւ արհամար-
հեալ Աստուծոյ, [14]կամ զի՞նչ յեղա<նա>կք† եւ կարդք դասու առաքե-
ցին զնա ի բաց եւ ընկեցին արտաքս. ո՞ր պատճառք, որպիսի՞ ներհա-
կութիւնք, ո՞ աւանդիչ եւ աւրինագիր: [15]Կամ ցոյց, զի հաւանեցայց,

* Մատթ. է 7, Ղուկ. ԺԱ 9—10
† Ըստ Բն.-ի

կամ ընկալ, զի գովեցից եւ հաղորդեցայց, քանզի ոչ զաւտարութիւն եւ
զատելութիւն ախորժեմ: [16]Ինքնն իսկ, որ աւծանէ Հոգւով զորս կամի
43ա եւ // գոյացոյց զամենայն, անուանեցաւ, այլ եւ եղեւ Աւծեալ, եւ դու
արհամարհես զաւծութիւն: [17]Զեռնադրեցաւ ի մարդոյ՝ Աստուած գո-
լով ըստ ճշմարտութեան, եւ դու ոչ կամիս յանուն նորա ընդունել նիւ-
թոյն ձեռնադրութիւն: [18]Մի՞ քան զնա անկարաւտ, ո՞ գերագոյն սրբու-
թեամբ, որ աղաւթէրն. «Հա՛յր, փառաւորեա՛ զՈրդի քո» եւ դարձեալ
անդրէն. «Զի եւ Որդի քո փառաւորեսցէ զքեզ»*: [19]Նա վասն անձին եւ
43բ վասն Հաւր, որ//ոց բնաւորական է փառաց եւ պատուոյ գերապայծա-
ռութիւն եւ ոչ արտաքուստ յարելութեամբ, աղաւթէր զընդունելութիւն
փառաց, [20]եւ քո կարճմտութիւնդ ի վերայ սորին նիւթոյ անպատշա՞ճ
վարկանի զզաւրութիւն ընդունելոյ եւ շնորհի խորհրդոյն զաղաւթս:
[21]Զի զյաղագս առաքելոցն եւ համաւրէն հաւատացելոց բանիւ նոցա
ի նոյն եւ որքան ինչ այլ՝ թողից:

44ա XVI. [1]«Ցամենայնի գոհանալ եւ անդադար // աղաւթս առնել»†,—
առաքեալ հրամայէ: [2]Եւ քեզ յայսմ իրի եւ ժամու, յորում եւ վասն որոյ
քաջայարմար սոքա, որոց ոչ անբաժ ի խորհրդոյ իմաստութեան իցեն,
երեւի, ո՞չ բանալ զբերան առ Աստուած եւ բանիւ նորա կամ զձեռս
բառնալ ի վեր թուի հաճոյ եւ իրաւացի: [3]Ցոյժ է շամբուշ քո իմաստու-
թիւնդ եւ աւրէնադրութիւն՝ առասպել պառաւանց եւ խաղ մանկտւոյ
44բ կամ աղճատանք հինաւրեայ ծերոց՝ անկելոց ի մտաց: [4]Ընդէ՞ր // ոչ եւ
զմկրտութիւն արգելուս՝ պարտաւորելով զմկրտիչս, որպէս զի մի՛ մա-
սամբ, այլ բոլորովին եղիցես արտաքոյ Քրիստոսի: [5]Արդ, այսպիսեաց
եւ այսքանից բերողաց զվատթարութիւն չարութեան յինքեանս՝ ըստ
կրաւնից եւ վարուց, դատապարտել զանբիծս ի հաւատս եւ սուղ ինչ
նուազ զբարոյականաւք կատարեալս առաքինութեամբ, ո՞չ ապաքէն
յետնոյ է մոլորութեան եւ սատանայական շարժման: [6]Ոյց զհրէականն
45ա ախ//տացեալ կամաւոր մորոսութիւն եւ նախանձ յաչաղանաց զմարդ-
ասպանին ի սկզբանէ, բարւոյ իրի եւ անուան պարսաւանս դնել եւ
հայհոյութեան դառնութեամբ թշնամանել ոչ պատկառեն: [7]Քանզի եւ
նոքա յէապէս բարոյն վայելեալք յամենազան եւ ի բիւրապատիկ ձիրս
շնորհաց արդեամբք եւ բանիւք, յորս արժան էր ստանալ զգաւնութիւն,
թէեւ ազամանտեայ եւ վիմեղէն ոք ունէր հոգի, սիրել եւ գոհանալ, եր-

* Ցովհ. ԺԷ 1
† Ա Թես. Ե 17—18

կիր պագ//անել փոխանակ մեծամեծաց եւ անթուելեացն բարերարու- 45բ
թեանց, եւ զկնի չարաչար եւ զարհուրելի թշնամանացն եւ հայհոյու-
թեանց «բառնա՛լ եւ խա՛չ հանել»* աղաղակէին: [8]Զո՞. զԲանն մարմնա-
ցեալ՝ զամենայնին հաստիչ եւ կրաւղ բանիւ զաւրութեան իւրոյ†, զոր
եւ դուն թշնամանես՝ մարդ սոսկ անուանելով: [9]Եւ արդ, զի՞նչ մեծ իցէ
կրել եւ մեզ՝ նուաստից եւ փոքունց ի ծառայս նորա, լուտանս բամբա-
սանաց ի թշնամեաց Տեառն մերոյ, // «զի թէ ընդ փայտ դալար զայն 46ա
արարին եւ առնեն, ընդ չորն զի՞նչ ոչ գործիցի»‡: [10]Եւ եթէ ի տանու-
տէրն զանարժանս բարբառեցան յանզգայութենէ մոլութեան, ո՞րչափ
եւս յընտանիս նորա: [11]Որոց թէպէտ եւ երախտիս բարեաց ինչ ոչ արա-
րաք՝ ըստ մեծին եւ բաւականի, այլ գրեթէ եւ իւիք ոչ մեղաք երբեք:
[12]Եւ ինչ առ ի մէնջ բնաւ ուրեք ոչ կրեցին վնաս: [13]Եւ ոչ այսքան եւեթ.
այլ եւ սիրեմք եւ բաղձամք զմիաւորութիւն Հոգւոյ, ողբամք // դառնու- 46բ
թեամբ լցեալք զլծակցութեանն բաժանումն, արտասուաւք թացեալ լի-
նիմք՝ յիշելով զձայն<ա>կցութիւնն յերբեմն ժամանակի: [14]Նաեւ այժմ
իսկ փարիմք՝ իբրեւ զհարազատ եղբարքք՝ ի բաց առաքեալք, զհամաշն-
չութիւնն ողջունեմք ի հեռաստանէ եւ, զայնքան լսելով ի մեզ մեծա-
բանութիւնս եւ բասրանս, ոչ զհաւասարն ախորժեմք դարձուցանել
փոխարէնս: [15]Այլ զի՞նչ. «Տէ՛ր, մի՛ համարիր նոցա զայս մեղս»§: [16]Եւ
պատ//ահեալ մարմնով՝ խնդամտութեամբ ընդունիմք, զուարթանամք 47ա
գիմաւք՝ զ'ի խորւոջն զեկուցանելով մտադիւրութիւն: [17]Ոչ դանդա-
զիմք, անիրաւ համարելով, համբուրիւ սրբութեան ողջագուրել: [18]Իսկ
նոքա զզուեն՝ հանդիպեալ երբեք ուրեք, եւ արտաքսելով՝ ծանրապէս
հայհոյեն: [19]Զհասարակացն քրիստիանոսաց աւրինաւորեալ մեր՝ ոչ
հաղորդին, տեղի պաշտաման եւ նշան: [20]Թուի ինձ ոչ անխորհուրդ եւ
արտատեղի, ըստ նշանակութեան, գործ//եցեալն: [21]Քանզի դիւաց բնու- 47բ
թիւն ոչ զաւրէ բերել զ'ընդ սուրբս լինել՝ խոշտանգանաց գիտելով իր
զոչն գնալ հեռի. [22]եւ գարշք հոգւով, խարեալք մտաց խղճիւ, զղջման
անընդունակք, որպէս գոյ ասել, ծածկել կարծեն զտգեղութիւն ան-
ճանց հայհոյութեամբ սրբոց: [23]Եւ չար ամպարիշտք, որպէս ահա տե-
սի բազում անգամ, զպաշտաւն բարի եւ զորս այնր վիճակի եւ մասին

* Ցովհ. ԺԹ 15
† Եբր. Ա 3
‡ Ղուկ. ԻԳ 31
§ Գործ. Է 59

դրսովեն անամաւթաբար ի նոյն միտս: [24]Քանզի յանձանց ոչ ունելով
48ա // տալ ումեք երեւութիւն բարեպաշտութեան եւ հաճելի վարուց՝ յար-
ձակին թշնամանել զայնպիսիս իբր լաւք՝ ի կեղծաւորութենէ առան-
կեալք ի բիբս անմտաց:

XVII. [1]Ունիս ոչ սակաւս եւ աննշանս այդոցիկ յարացուցական աւ-
րինակս: [2]Հայեա՛ց ընդ յաւիտենից սուրբսն, զորս ո՛չ արժէ աշխարհ.
յո՛րպիսեաց ատեցան եւ թշնամանեցան, ո՛րչափ հայհոյութիւնս, քա-
48բ նի՛աւն տանջանս եւ կտտանս յանողորմից անտի եւ ի գազա//նաց մար-
դակերպից կրեցին յաւժարութեամբ: [3]Եւ մեք, թէպէտ եւ վարուց նոցա
զնմանութիւն գոնեա դուզնաքեաւք ոչ կամեցաք բերել, զի մի՛ ասացից
անկարացաք, սակայն զոյգ եւ հաւասար եւ յաղագս նոցին իրաց զթշ-
նամանսն կրեմք: [4]Դատապարտիմք յատենի անիրաւաց: [5]Լեզուք չարք
եւ շրթունք պարսաւասէրք խաւսին զմէնջ ոչ իբրու վայել է բարեաց
եւ ճշմարտից ի հաւատս, այլ զանձանց իւրեանց անկս եւ պատկանա-
49ա ւորս. // [6]սուտք՝ զսուտս, փիծք՝ զանարժանս, թեւրք եւ խոտորեալք ի
ճշմարտութենէ՝ զծամածուռս եւ զոչ բնաւս յուղղութիւն մերձ: [7]Բայց
մեք մի՛ միայն համբերեսցուք զոհութեամբ՝ իբրեւ յանիրաւի նախա-
տեալք եւ թշնամանեալք, այլ եւ աւրհնեսցուք զհակառակն, կերակ-
րեսցուք՝ տեսանելով քաղցեալ, ծարաւի հանդիպեալ՝ արբուսցուք, զգե-
ցուսցուք զմերկութիւնս, լիցուք բարեգործք առ ատելիս՝ որպէս աշա-
49բ կերտք // Հեզոյն եւ Մարդասիրին, [8]ցուցցուք մի՛ անուամբ եւեթ զոլ
քրիստոնեայս զմեզ եւ ճշմարիտ դաւանութեամբ, այլ եւ այսպիսեաց
հրամանաց հնազանդութեամբ եւ կատարմամբ, վասն զի ի պտղոյ ան-
տի իւրաքանչիւր ոք ճանաչի ի ծառոց*: [9]Տացուք մշակողին հոգւոց
մերոց եւ տնկողի, որպէս այդի քաջաբեր եւ բարետոհմ, մի՛ փուշ, այլ
խաղող: [10]Մի՛ նախանձեսցուք ընդ ոմանս այգեաց՝ հակառակ յուսոյն
50ա պտղաբերեալս, մի՛ // մասամբ եւեթ ի մեզ բերկրեսցի ուրախ եղեալ տն-
կագործն: [11]Հատուսցուք զաշխատութեանցն համաւրէն պտղոցն բե-
բրիւք: [12]Իսկ առաջին է պտղոցս այսոցիկ զկնի բարեպաշտութեան սէր
անկեղծաւոր եւ սերտ՝ ի սուրբ սրտէ եւ <յանկեղծաւոր հաւատոց եւ>† ի
մտաց բարեաց առ եղբարս ճշմարիտս եւ համախոհս՝ իբրեւ առ անդամս
Քրիստոսի, առ ատեցողս եւ թշնամիս եւ որոց դիւրին է զամենայն ինչ
50բ ի կսկծելեաց ասել եւ առնել մեզ վասն բարե//պաշտութեան՝ որպէս առ

* Տես Մատթ. ԺԲ 33:

† Ըստ Բն.-ի

երախտաւորս ի մեծամեծս եւ գեղեցկագոյնս, քան զոր ասաս: [13]Քան-
զի յաղագս այնորիկ եւ Աստուծոյ լինիմք նմանողք, որ հասարակա-
բար տեղայ զանձրեւ եւ ծագէ զարեգակն իւր ի վերայ չարեաց եւ բա-
րեաց, արդարոց եւ մեղաւորաց*: [14]Այլ եւ այնպէս սիրեաց զաշխարհ՝
հեռացեալ յինքենէ եւ յանծանաւթս եղեալ, զարդարակս նմա եւ զար-
ժանաւոր պաշտաւն եւ պատիւ՝ արարածոց եւ պատ//կերաց անշնչից 51ա
նուիրելով, մինչեւ զՈրդին իւր Միածին ետ զաւտարս, զպանդուխտս,
զկարաւտեալս հարկաւորացն: [15]Վասն զի նա տարագրեալս զմեզ յուխ-
տիցն աւետեաց եւ յինքենէ հեռացեալս արար բնակիցս եւ մերձաւորս
սրբոց ի ձեռն Յիսուսի Քրիստոսի՝ Տեառն մերոյ, որում փառք եւ զաւ-
րութիւն <եւ պատիւ>† այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն‡:

<Ը>

ՅԱՐԱՑՈՅՑՔ ՅԱՂԱԳՍ ՄԻ ԶՔՐԻՍՏՈՍ ԱՍԵԼՈՅ ԵՒ ԱՆԲԱԺԻՆԵԼԻ

I. [1]Խոստովանեալք զբնութիւնն ունող անչարչարելի զԲանն իւ-
բացուցանելովն չարչարեալ մարմնովն եւ մնացեալ անչարչարելի որ-
պէս Աստուած, յարացուցիւք, թէպէտ եւ կարի յոյժ փոքումբք առ ճշ-
մարտութիւնն, հաւատարմացուցանել անպատշաճ ոչ վարկանիմ: [2]Ոչ
միայն յաստուածայնոց գիտացաք Գրոց, ըստ որում ի մեծէն առաքե-
լոյ կրկին զմարդն ի հոգւոյ բանականէ եւ ի մարմնոյ, ոչ ի պակասից,
այսինքն՝ յանկատարից, այլ ի կատարելոց զոլ կատարեալ եւ սակայն
մի, այլ եւ ի բնախաւսից ոմանց հաւաստապատում արանց, [3]որք թէ-

* Մատթ. Ե 45

† Ըստ Բն.-ի

‡ <Ցիշատակարան գրչի:> /51բ/ Այս բանք քերդողականք ասացեալ մեծի Գուէտիկոսին Սարկաւագին՝ որ ի տիեզերահռչակ ուխին Հաղբատ, գտի ես նուաստս ոմն ի մանկունս եկեղեցւոյ: Արդ, մի՛ ոք յանդգնեալ իշխեսցէ յաւելուլ կամ պակասեցուցանել ի բանից կամ ի տանց եւ յարուեստից, զի եւ մեք ոչ իշխեցաք յաւելուլ կամ պակասեցուցանել զոր ինքնին իւրով ձեռամբն գրեալ էր: Եւ ըստ այսմ աւրինակի էր կտակն, յորում էր սա. սկիզբն եւ կատարածն եղծեալ: Եթէ գոցես ուրեք զբովանդակն, գրեա՛ եւ զմեզ յիշեա՛ ի Տէր:

պէտ եւ վասն էութեան հոգւոյ եւ մտաց եւ նոցուն ընդ միմեանս եւ
273ա ընդ մարմնոյ խառնման // այլ եւ այլ կարծեաց յեղանակաւք հակա-
ռակս խաւսեցան: [4]Սակայն թէ մի է կենդանին, ամենեքեան վկայեն,
այլ եւ զայն վասն անձին եւ մտաց, թէ անմարմնոց, թէ եւ իցեն կա-
տարեալք, ոչ է անկարելի խառնմամբ մի գոլ ճշմարտապէս եւ ամբողջ
մնալ՝ ըստ երկաքանչիւրոցն էութեանց՝ զմիոյ ունելով ներգործութեան
եւ անուան զաւրութիւն եւ տեսութիւն ըստ մտածութեան եւ ճշմար-
տութեան՝ որպէս մարդ: [5]Ուստի եւ առին զսա ոմանք ասել «աշխարհ
փոքր» յաղագս բերելոյ յինքեան զամենայն, որ ինչ յաշխարհի տե-
սակս, այսինքն՝ զերկնի եւ զերկրի եւ զորոց ի միջոցիդ կամ վասն նիւ-
թոյ եւ տեսակի, որպէս կարծեմ, եւ այլ երկնային եւ երկրային, ժամա-
նակեայ եւ անմահ, մարմին եւ հոգի:

II. [1]Արդ, վասն այսպէսն գոլոյ զմարդն, եւ զայս մի՞թէ արժան իցէ
տրամատել, եւ ո՞յ հաւանեսցի. մի ամենեքին իմաստութեանն ջատա-
գովք եւ ծնաւթք ախորժեցին ասել եւ միոյ՝ զ'առ ի նմանէսն եւ զնո-
րայսն գործս եւ կիրս՝ զբնաւորականս եւ զարտաքուստս, եւ նորին, որոց
մանաւանդ է հաւանել արժան: [2]Այլ եւ ի նոցանէ ոմանք բաժանելով
զմարդն ասացին ես եւ իմն եւ իմոյքն՝ նշանակելով զհոգի եւ զմարմին
եւ զստածուացս երրորդն, բայց զեսն եւ զիմն ասելոյ ոչ ոք զմարդ բա-
273բ ժանէ, թէպէտ եւ // մտածութիւն իմն նկատէ, եւ ոչ ոք խորհեցաւ, թէ-
պէտ զիտէին ի զանազանից միացեալ եւ յաննմանից բնութեանց: [3]Նաեւ
մարմին եւ ամենայն եւ մարդոյ ի բազմաց շարակայի, եւ ոչ ասին բա-
զումք, զի մի՛ զութամասնեայ եւ զեռամասնեայ ասացեալ հոգին եւ զոչ
յայսքանսն ասացից որոշեալ: [4]Ուրեմն, ոչ է արժան զմի Տէր մեր Յի-
սուս Քրիստոս, թէպէտ եւ ի զանազանից, յետ միութեանն բաժանել եւ
ոչ զնորայսն կիրս եւ ներգործութիւնս, [5]վասն զի որպէս ինքն համա-
նգամայն ասի եւ ոչ ըստ մասին մարդ եւ Աստուած, եւ նորայքն ասաս-
ցին միոյ Աստուծոյ, համանգամայն եւ մարդոյ: [6]Դարձեալ եւ զլուսոյս
զգալւոյ էութիւն յառաջնումն ասել լինել աւուր աստուածային բանն,
իսկ զարեգակնն եւ զայլսն, որ ի յերկրի լուսաւորս, ի չորրորդումն, [7]եւ
անմարթ է կարծել, թէ եղծաւ յառաջնումն գոյացեալ միատեսակ լոյսն,
եւ այլ ի չորրորդումն աւուր հաստատեցաւ քան զայն նոր, վասն զի
այն ոչ եղծման, այլ արարչութեան էր ժամանակն: [8]Եւ զիա՞րդ զորոշիչ
ժամանակի զլոյսն, որովք եւ այլքն ընտրեալ որոշին արարածք ի ժա-
մանակի եղեալք, ընդ որս եւ աստեղք, լուսին եւ արեգակն, է՞ր վայե-
լուչ անդէն ի սկսմանն եղծանել զվկայութեամբ գովեալն յԱրարչէն,

թէ բարի է. ի դէպ ապա ճշմարիտ է ասելն, // թէ է տեսակ երիցագոյն, 274ա
քան զնիւթն, թէպէտ ոչ հասարակաբար: [9]Թէպէտ եւ ամենայն տեսա-
կաց նիւթոյն պարտ էր նախ ենթակայանալ, իսկ գեղեցկագունին էիցս
տեսակաւն նախ պատուիլ, զի ցուցցի ոչ միայն սքանչելի արարչակա-
նին Բանի զաւրութիւն ի նորա գործելն, այլ եւ ի նախապատուութիւն
գեղեցկին, որ է հրաշափառագոյն, [10]արդ, զնոյն լոյս կանխաւն եղեալ
առանց նիւթոյ՝ ժողովեաց ի նիւթ արեգականդ ի չորրորդումն աւուր.
[11]զի զմեծագունին լուսոյ եւ աննիւթականի եւ քան զամենայնս երի-
ցագունի, մանաւանդ սկզբան ամենեցուն եւ պատճառի նկարագրեա-
ցէ ի նիւթական միանալ բնութիւն ի լրման ժամանակաց: [12]Վասն որոյ
եւ եղանիլ ի Գրոց ասի՞, եւ ըստ որում ոք ասել ոչ կարասցէ այլ զլոյսն
զկանխաւ եղեալն եւ այլ՝ զնիւթն յետ միաւորութեան, բայց մի արե-
գակն: [13]Այդպէս վարկանիմ ոչ ասել երկուս ունեք արժան գոլ զկնի ան-
ճառ միաւորութեանն ընդ մարմնոյ զՄիածին Որդին Աստուծոյ, եւ որ-
պէս արեգական՝ իւր ասեմք զլուսոյն ճառագայթս եւ իւր դարձեալ, թէ
կրեսցէ ինչ խաւարումն՝ որպէս ի պատուական խաչելութեանն աւուր,
կամ գիշերաւ ծածկիլ ի ներքնումն գոլով կիսագնդին, կամ զխո//նար- 274բ
հիլն զմիջաւրեայ եւ զբարձրանալն ի սայլն կողմ: [14]Այսպէս եւ զքան-
չելագործութիւնսն եւ զմարդկաւրէն կիրսն եւ զչարչարանսն միոյ ասել
ուսաք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ոչ որոշել առանձին Ա-
ստուծոյ եւ առանձին մարդոյ բնութեան, վասն զի միացոյց անբաժա-
նաբար ընդ ինքեան զմերս եւ անդստին յորովայնէ Բանն Աստուած:
[15]Ուստի եւ զչարչարանս եւ զանչարչարութիւն ըստ բնութեանցն մի-
աւորութեան ի մի հաւաքեմք՝ ասելով նմա պահեալ զիւրոյն քան զա-
մենայն զերազանցելոյ բնութեան զանչարչարութիւն՝ Աստուած ըստ
բնութեան գոլով, եւ զնոյն ինքն չարչարեալ վասն իւրութեան չարչա-
ռականին բնութեան եւ զայն՝ կամաւորապէս, [16]այսինքն չարչարեալ
ճշմարտապէս իւրով մարմնովն եւ անչարչարելի մնացեալ՝ որպէս Ա-
ստուած ըստ բնութեան, զի Աստուածութեանն առաւելապէս իւր է ան-
չարչարութիւն, զոր ամբողջ պահեալ խոստովանիմք: [17]Սակայն զի
զչարչարելին իւրացոյց ըստ ճշմարտութեան զբնութիւն, ըստ որում
եւ զնորայսն ամենայն ստուգապէս իւրացուցանել հաւատամք առանց
երկբայութեան՝ Աստուծոյ զամենայնն ասելով՝ ե՛ւ զխաչն, ե՛ւ զոր յա-
ռաջ քան զխաչն, [18]որպէս եւ մարմնոյն զքանչելիսն անբաժանաբար

* Մտ. Ա 14

275ա ասեմք՝ Աստուած զմարդացեալ Բանն գիտելով, // որոշելով <ոչ> ուսեալք զմարմնագործութիւնսն Բանին միայն եւ զմարդկայինսն մարմնոյն եւեթ, քանզի մի է Քրիստոս. բազում անգամ զնոյն ասեմք կապակծելով ի քումմէդ դարանակալութենէ:

III. [1]Զմարգարտէ ոմանք ասեն ի փայլակնէ եւ ի ջրոյ զգոյացութիւն ունել, եւ զկնի ոչ է ընտրութիւն ինչ ի միումն զանազանութեան. եւ եթէ ճշմարիտ իցէ այս, ոչ գիտեմ, սակայն յարացոյց ճշմարտութեան եթէ ոք առցէ, ոչ է անտեղի: [2]Արդ, որպէս իւրաքանչիւր ուրուք ի մէնջ իւր է եւ ասի մարմինն, այսպէս եւ վասն մարմնացելոյ Որդւոյն Աստուծոյ՝ ոչ <յ>աստուածային բնութենէն ստեղծեցելոյ եւ կամ յայլմէ ուստեք, յորոց յերկինս, այլ ի Կուսէն: [3]Վասն որոյ եւ մարդ լինել ասի, քանզի անտի զմարմինն կարծել ունելն՝ նախ զի յետ անտեղութեանն անբարշտութիւն է, եւ ապա մարմին, այսինքն՝ մարդ կատարեալ, Բանն ոչ իմասցի եւ ասասցի լինել, եւ ըստ որում մարդն եղեւ Աստուծոյ Բանն եւ այլն, այլ ոչ մարդն աստուածացաւ եւ ի Բանին հաւասարութիւն, որպէս ասեն ոմանք, վերացաւ: [4]Ըստ այնմ եւ ճշմարտապէս չարչարեալ ասի եւ կրեալ զամենայն որ ինչ ըստ մեզ՝ առանց մեղաց, վասն զի այսպէս յարմարի, [5]եւ եթէ ոչ մարդն պատուեցաւ շքով Աստուա-
275բ ծութեանն, այլ Բանն մարմին եղեւ, եւ ոչ ուն//այնն լցաւ, այլ լին ունայնացաւ չափով մարդանալոյն, եւ ոչ աղքատն փարթամացաւ, այլ ճոխն աղքատացաւ, եւ ոչ ծառային կերպարան զԱստուծոյն առ կերպարան, այլ Աստուծոյն՝ զծառայի: [6]Ցայտ է այսոքիւք եւ որովք ըստ սոցունց, թէ անաշխատն աշխատեցաւ մարմնովն, եւ նոյն ինքն, որ տայն կերակուր որոց ի նայն հային եւ յուսան աչք, քաղցեաւ, եւ որ խմաստութիւնն Հաւր եւ զաւրութիւն է, անգիտացաւ եւ երկեաւ, նմանապէս եւ անչարչարելին չարչարեցաւ, եւ անմահն մեռաւ, զամենայն որ ինչ առեցելոյն՝ իւրացուցեալ եւ զիւրսն ոչ խափանեալ կամ այլայլեալ, ոչ եւ զմարմինն ըստ բնութեան փոխարկեալ: [7]Վասն զի թէպէտ եւ միութիւն եղեւ բնութեանցն ճշմարտապէս, այլ չփոթումն եւ խառնակութիւն՝ ոչ, զի ոչ Բանն ի մարմնոյ փոխեցաւ արար եւ ոչ մարմինն ի Բանին փոխադրեցաւ էութիւն, [8]այլ մնացին բնութիւնքն չփոթումն ոչ կրեալք, սակայն միացեալ անիմանալի իմն եւ անհասանելի յեղանակաւ, վասն որոյ «մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» հարքն ասացին: [9]Քանզի յետ միութեանն ոչ է իմանալ ամենեւին կամ ասել զանազանութիւնս բնութեանց ի Քրիստոս,[10] որպէս եւ ի մեզ ինքեանս՝ ո՛չ վասն մին գոլոյ եւ ասելոյ զհոգին բանական մարմին կարծեմք շա-

բադրական եւ ո՛չ դարձեալ զյոքնմասնակ//ան մարմինն՝ պարզ հոգի 276ա
բանական, այլ ի զանազանից կատարելոց գոյացութեանց՝ մի կենդանի բանաւոր զմարդն: [11]Այսպէս իմա՛ ինձ զՔրիստոս՝ պահեալ զբնութիւնսն անշփոթս եւ ստուգապէս միաւորեալս, մինչ զի ոչ ումեք կար լինել յուղղակի խորհել սովորելոցն իմանալ առանձնականս երկաքանչիւրոցն ներգործութիւնս կամ կիրս, որպէս բազում անգամ ասացաւ: [12]Թէպէտ եւ բազում անգամ ասեմք աստուածավայելուչս գործել եւ խաւսել՝ նմա երբեմն, իսկ երբեմն մարդկաւրինագոյնս եւ կրել եւ խաւսել, զայս ոչ որոշելով յատկապէս ասեմք, այլ համանգամայն ըստ ինքեան, [13]զի որում զաստուածայինսն տալ պարտիմք, նմին եւ՝ զմարդկայինսն, վասն զի կրկին էր ոչ այլ եւ այլ ոք, այլ նոյն ինքն՝ Աստուած գոլով եւ մարդ միանգամայն, որում փառք յաւիտեանս. ամէն:

<Թ>

ՆՈՐԻՆ ՀԱԿԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԴԴԷՄ ԱՆԳԻՏԱԿԱՑ ՈՄԱՆՑ ՅԻՐՍ ԳԻՏՈՒԹԵԱՆ, ՈՐՔ ՍՏԱՅԱԻԴ ՃԱՌԻՒՔ ՀԱՒԱՆԵՑՈՒՑԻՆ ԶՈՄԱՆՍ Ի ՎԱՅՐԱԳԱՑ ԵՒ ՊԱՐԶԱՄՏԱՑ ՀԱՒԱՏԱԼ ԱՆՀԱՒԱՍՏԻ ԻՒՐԵԱՆՑ ԿԱՐԾԵԱՑ*

I. [1]Թէպէտ եւ զդիտաւորութիւն իրին առաջիկայի բազում անգամ
ի մակագրութենէ բանին դիւրածանաւթապէս կարէ ոք ի միտ առնուլ
համառաւտագոյն, սակայն առանց զժամ//անակն գիտելոյ եւ զտեղին 276բ
ոչ պահի աւրէն հաւաստութեանն յեղանակին եւ պատճառին հանդերձ դիմաւքն առաջի կացելոյ: [2]Ցաղագս որոյ կամեցայ քեզ եւ զայս ընձեռել, սիրելի՛, եւ տալ տեղեկութիւն, թէ յորո՛ւմ արդեաւք ժամանակի կալաւ սկիզբն հայհոյութիւն ժողովոյն Քաղկեդոնի, եւ կամ ո՛յ նախահաւաք եւ գտիչ կորստականին այնորիկ ուսման, եւ ո՛յք աղան-

* Բնագրում յատուկ անունները ներկայացուած են մի քանի զուգահեռ ձեւերով եւ տարբեր հնչիւնագրական աղաւաղումներով: Մենք բոլոր յատուկ անունները միօրինականացրել ենք՝ օտար անունների հայերէն հնչիւնագրութեան կանոնների համաձայն:

դապետացն այնոցիկ ընդդիմասացք յաւուրս իւրեանց ի սրբոցն, կամ զի՛նչպիսի յայտնութիւն զառաջինն յԱստուծոյ եղեւ առ իմանալ ամենեցուն զդառնութիւն հերձուածոյն ի մէջ այսոցիկ: [3]Զբաջաղկոտաց ոմանց խայտառակեսցուք զգիտութիւն եւ զառասպելական կարծիս՝ զճշմարտութիւն անդստին իսկ յանդիման ի Գրոցն կացուցանելով եւ զժամանակին հեռաւորութիւն ի ներքոյ դրոշմելով, անմոլար զխորհուրդս բազմաց ի հաւաստուոյն ուսմանէ կացուսցուք եւ զկնի այսոցիկ զհամաձայնութիւն միմեանց առ ստութիւնն հետեւողաց նոցին՝ Նեստորի ասեմ եւ Լեւոնի եւ ժողովոյն Քաղկեդոնի եւ այլոց ոմանց վատափառաց, զորոց քակտեալ կործանեսցուք զաւրութեամբ Աստուծոյ ի հարցն բանից եւ աւանդութեանց՝ զանաւրէն իմացմունս:

277ա II. // [1]Բայց զարմանալ ինձ եւ կարի յոյժ, թէ զիա՞րդ ոչ զարհուրին ստութիւն ոմանք ի վկայութիւն ճշմարտութեան ի ներքս բերել եւ այն յոչ ունողացն փառս գիտութեան յիր եւ ի բան, յոր ձեռնարկել համարձակ եւ ոչ կատարելոցն անդամ է բոլորովիմբ գիտութեամբ, յորմէ եւ հրեշտակք սարսափին. [2]կամ զիա՞րդ անուամբ ուղղափառութեան պաճուճին խառնակ եւ տգէտ խոստովանութեամբ, մանաւանդ եթէ հերձուածողականաւ: [3]Վասն զի ոչ ժամանակացն միայն եւ զարանց, այլ եւ զհաւատոյն բան ստեն յանդգնութեամբ յաղագս անուանի բանիւ գոլ տալոյ կարծիս. [4]եւ եթէ յանդիմանեսցի ոք երբեք ուրեք, կամ տրտունջ յումեքէ այնպիսին կրեսցէ, որ յոչ եւեթ բանիւ, այլ եւ գրով արձան թերութեանն կանգնեաց, [5]բազումք սաստեն, եւ նա ըմբոստանայ յայտմանէ հպարտութեան, [6]վասն որոյ մեք մի՛ չրթամբք, այլ գրով տացուք արձան ընդդէմ արձանի եւ ճշմարտութեամբ ընդդէմ ստութեան: [7]Արդէն իսկ չնորհաւք ճշմարտութեանն միայնոյ եւ մեծի մերձ դիցուք ի գումարութենէ զ՚առ ի սրբոցն բանս. եւ նախ՝ թէ յո՞ր ժամանակս եւ կամ առ որո՞վ ողիմպիադաւ արտեմոնականն սկսաւ աղան-
277բ դոյ բոց // տոչորել, եւ ո՞յք ի ժամանակին թագաւորք եւ կամ քաղաքաց եպիսկոպոսք. եւ սկսցուք այսպէս:

III. [1]Առ ՄԽ ողիմպիադաւն՝ յառաջնումն ամի թագաւորէ հռոմայեցւոց Կոմոդոս ամս ԺԳ, որ հինգետասաներորդ էր ի Ցուղղեայ կայսերէ, յորմէ եւ ուստի կայսերք հռոմայեցւոցն, որ ըստ նմանէ թագաւորք անուանեցան, որ զառաջին կալաւ միահեծան զհռոմայեցւոց իշխանութիւնն ամս Դ եւ ամիսս Դ: [2]Սա եւ Գայիոս կոչէր եւ կայսր առաջին, զկնի որոյ՝ Օգոստոս, որ եւ Սեբաստոս Հոքտաւիոսն, թագաւորէ ամս ԾԶ եւ ամիսս Զ, յորոյ ԽԲ ամի ծնանի Որդին Աստուծոյ՝ Ցի-

սուս Քրիստոս ի Բեղղեհէմ Հրէաստանի, եւ լինին աստի մինչեւ ի թագաւորեալն Կոմոդեայ ողիմպիադք ԽԶ, ուստի ժողովին ամք ՃՁԴ: [3]Ի սորա տասներորդ ամին յաջորդէ զեպիսկոպոսութիւն Եկեղեցւոյն Հռոմայեցւոց Բիկտոր, որ էր յառաքելոյն Պետրոսէ ԳԺ-աներորդ, ի սոյն աւուրս էր եւ Նարկէսոս սքանչելի, Լ-ներորդ ի Յակոբայ եպիսկոպոսէ Եկեղեցւոյն երուսաղէմացւոց: [4]<Եւ> կալեալ զեպիսկոպոսութիւն Եկեղեց<ւոյն> Հռոմայեցւոց Բիկտորի զամս ԲԺ-ան մինչեւ իններորդ ամն Սեւերեայ՝ Զեփիւրինոս կալաւ զկնի նորա զեպիսկոպոսութիւնն: [5]Եւ առնին ի ծննդենէ Փրկչին մինչեւ յամն իններորդ Սեւերեայ // եւ 278ա
ցյաջորդել զեպիսկոպոսութիւնն Հռոմայեցւոց Զեփ<իւ>րինոսի ամք ՄԶ: [6]Եւ յայնմ ժամանակի հերձուածոյն Արտեմոնի սկիզբն: [7]Եւ զի՞րդ ի ստոց ոմանց եւ յիրահամարձակաց արանց իշխի ասել աշակերտ Յովհաննու աւետարանչի գոլ Արտեմոն. եւ այն, զի ոչ նա, այլք ոմանք առ Բիկտոր. [8]եւ եղեն գլուխք այնր հայհոյութեան, զորս ընկէց Բիկտոր ի հաւասարութենէ Եկեղեցւոյ, թէպէտ եւ կրէ զրպարտութիւն առ ի նոցանէ զկամակցութեան աղանդոց, որպէս հնոյ եւ սկզբնականի ուսման եւ առաքելականի եւ ի Զեփ<ի>ւրինոսէ միայն այնուհետեւ արհամարհեցելոյ, որպէս եւ ի գրոց անտի գոյ ուսանել: [9]Իսկ Արտեմոնի զկնի ուրեմն գոյ աշակերտեալ աղանդոյն մարդադաւանութեան զՔրիստոսէ այսր, քան զժամանակն Բիկտորի, աճեցոյց զնոյն, որպէս Մարկիոն զԿարդոնին զնոյն իսկ զբանսն, որ զնոցանէ առընթեր եղից:

Եւսեբեայ Կեսարու «Յեկեղեցւոյ պատմութենէ» ի հինգերորդ դպրութենէ*

Վասն այնոցիկ, որ եղեն ի սկզբանէ յաղանդոյ անտի Արտեմոնի, եւ որով աւրինակաւ էին նոքա, եւ թէ որպէս համարձակեցան նոքա եղծանել զԳիրս Սուրբս

* Տես Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն Եկեղեցւոյ, Վենետիկ, 1877 թ. (= ԵԿ), էջ 405—406: Հրատարակուած բնագրի հետ համեմատութեամբ՝ խմբագրական եւ ոճական բազմաթիւ տարբերութիւններ կան, որոնք չենք նշում: Բոլոր անհրաժեշտ ուղղումները եւ յաւելումները կատարուած են ըստ հրատարակութեան: Սակայն հարկ է նշել, որ շատ տեղերում Սարկաւագի բնագիրն աւելի հաւաստի է եւ համընկնում է յունարէնի հետ, քան հրատարակուածը:

IV. [1]Եւ յիմաստնոց աստի յայսցանէ, վասն որոց ասացաք մեք <ի>
278բ խաւսս, զոր եղեալ է // մեծաւ հոգաբարձութեամբ <ի միոջ ուրումն ի
նոցանէն> ընդդէմ աղանդին Արտեմոնեայ. այն, որ հնարեցաւն նորոգել զնա ընդդէմ մեր, Պաւղ Սամոստացի: [2]Գոյ ի նմա պատմութիւն, որ պիտոյ է այսմ ճառիւ, զոր արկեալ է մեր. զի այս աղանդ ասէ վասն Փրկչին մերոյ, թէ մարդ է դուզնաքեայ: [3]Բայց յանդիմանեալ՝ կշտամբէ զնա, թէ ոչ յառաջ քան զբազում ժամանակս սպառեաց յԵկեղեցւոյ: [4]Քանզի հպարտացեալ պարծէին այնոքիկ, որ վերակացուն են նորա, թէ կանխագոյն է նա: [5]Եւ եդ նա եւ այլ բազում վասն յանդիմանութեան սուտ բանից հայհոյութեան նոցա: [6]Պատմէ իսկ բանիւք իւրովք այսպէս. «Ասեն,— ասէ,— եթէ ամենայն առաջինքն եւ նոքա յառաքելոցն ընկալան եւ ուսան զսոյն զայս, զոր ասացաքս. [7]եւ պահեցաւ,— ասէ,— ճշմարտութիւնն մինչեւ ի ժամանակս Բիկտորի, որ էր նա եպիսկոպոս երեքտասաներորդ ի Հռոմ քաղաքի յետ Պետրոսի. ի Զէփիրինէ իսկ, այն, որ կալաւ զկնի նորա, գործեցաւ ստութիւն ի վերայ ճշմարտութեան»:

V. [1]Բայց այս թերեւս արժանի էր հաւանութեան, եթէ ոչ զի նախ Գիրք Սուրբք կան հակառակ ընդդէմ նոցա: [2]Բայց են եւ գիրք ոմանց յեղբարց մերոց, որ հին են եւ քան զժամանակս Բիկտորի,
279ա որք գրեցին ընդդէմ հեթանոսաց վասն ճշմարտութեան // եւ ընդդէմ աղանդից, որ էին յայնմ ժամանակի. [3]ասեմ իսկ Յուս<տ>ինոսի եւ Միղատեդոսի եւ Տետիանոսի եւ Կղեմենտեայ եւ այլոց բազմաց, զի ամենեքեան սոքա ասեն վասն Աստուածութեանն Քրիստոսի: [4]Իսկ զԻրենոսի եւ զՄեղիտովնի եւ զայլոց, ո՞վ է, որ ոչ գիտէ զգիրս նոցա, որ քարոզեն վասն Քրիստոսի, թէ Աստուած է եւ մարդ: [5]Բայց վարդապետութիւնք եւ երգք, որ գրեցան ի հաւատացեալ եղբարց անտի ի սկզբանէ, փառաւորեն զՔրիստոս զԲանն Աստուծոյ եւ ասեն վասն Աստուածութեան նորա: [6]Արդ, զիա՞րդ իբրեւ յայս ամենայն ամս աւետարանի ճշմարտութիւն Եկեղեցւոյ, մարթ ինչ է լինել այսմ, զոր ասեն նոքա, թէ մինչ ի ժամանակս Բիկտորի քարոզէին այս միտք. [7]կամ զիա՞րդ ոչ ակն ածեն զրպարտել զԲիկտոր այսուիկ, իբրու գիտեն ճշմարտութեամբ, եթէ Բիկտոր զԹէոդոտոս, որ էրն գլուխ եւ հայր այսր խոտորման, որ ուրանայ Աստուծոյ, տարագրեաց զնա ի հաղորդութենէ կցորդութեան, որ նախ նա ասէր վասն Քրիստոսի, թէ մարդ էր դուզնաքեայ: [8]Զի եթէ Բիկտոր, որպէս ասեն, հաւատայր ըստ ուսմանն հայհոյութեան նոցա, զի-

ա՞րդ ընկենոյր նա զԹէոդոտոս, այն, որ նա եղեւ գտիչ այսր աղանդի: [9]Եւ զայս ասաց վասն Բիկտորի:

VI*. [1]Իսկ իբրեւ եկաց ի պաշտաման իւրում զԺ ամ, կալաւ զկնի
նորա Զեփիւրինոս յամին Թ-երորդի <թագաւորութեան> Սեւերեայ: // 279բ
[2]Եւ յաւելու եւ ասէ. այն, որ եդ զայս խաւսս վասն այնորիկ, որ սկսաւ յայս աղանդ, վասն որոյ ասացաք զնմանէն եւ այլ միւս եւս գործ, որ եղեւ յամս Զեփիւրինոսի: [3]Եւ գրէ այսու բանիւք այսպէս. «Ցիշեցուցից,— ասէ,— եղբարց իրս մի, որ յաւուրս մեր գործեցաւ, այն, որ ակն ունիմ, որ եթէ գործեալ էր ի Սոդոմ, թերեւս իմաստնացուցանէր զնա: [4]Այր մի էր, զի անուն էր նորա Անտեղիոս, եւ էր նա խոստովանեալ, բայց ոչ յառաջագոյն էր նա, այլ ի մեր ժամանակս: Զսա մոլորեցուցին երբեմն Ասկղեպիդոտոս եւ Թէոդոտոս միւս եւս, եւ էր սա տրապիզիտ: [5]Եւ էին իսկ երկոքին նոքա աշակերտք Թէոդոտոսի, այն, որ ասացաքն զնմանէ յառաջագոյն, թէ վասն այսր մտաց յիմարութեան որոշեաց զնա ի հաղորդութենէ կցորդութեան Բիկտոր եպիսկոպոս (որպէս կանխեցի ասացի), հաւանեցուցին իսկ զԱնտեղիոս, զի եղիցին նմա տալ յայտնի սակ եւ կոչեսցի եպիսկոպոս այնր աղանդի, եւ եղիցի նա առեալ ի նոցանէ հարիւր եւ տասն դահեկան: [6]Իսկ իբրեւ ընտանեցաւ նոցա, բազում ժամանակս ի ձեռն տեսլեան խրատեալ լինէր նա ի Տեառնէ իւրմէ: [7]Զի Աստուած ողորմած եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս ոչ կամեցաւ,
թէ լիցի նա արտաքս // քան զԵկեղեցի եւ կորիցէ, քանզի եղեւ նա վկայ 280ա
չարչարանաց նորա: [8]<Բայց> քանզի լքեալ մտաւք հայէր նա ընդ տեսիլն քան զոր ասացեալ լինէր նա ի ձեռն գլխաւորութեանն որ առ նոսա եւ զաւշաքաղութեանցն, որ կորուսանէ զբազումս: [9]Իսկ ի յետոյ տանջեցաւ ի հրեշտակաց սրբոց եւ զամենայն <գիշերն> չարչարեցաւ մեծապէս: [10]Եւ նոյնժամայն կանխեաց ընդ առաւաւտն եւ զգեցաւ քուրձ եւ ցանեաց զիւրեւ մոխիր եւ բազում փութով պնդութեամբ եւ անգին արտասուաւք անկաւ առ ոտս Զեփիւրինոսի եպիսկոպոսի: [11]Եւ ընկենոյր զանձն իւր առաջի ամենայն մարդոյ, ո՛չ առաջի այնոցիկ միայն, որ էին յաշտիճանի անդ Եկեղեցւոյ, այլ եւ առաջի ժողովրդեանն, եւ հեղոյր նա զարտասուս <իւր եւ> առաջի ողորմած Եկեղեցւոյ Քրիստոսի <ողորմածի> եւ յոյժ աղաչէր եւ խնդրէր ի նոցանէ եւ ցուցա-

* Այս պարբերութեան սկզբում գրչագրի կողմից դրուած է ԺԲ պարբերութեան համարը, մինչդեռ ԵԳ-ու հրատարակուած բնագրում այն համապատասխանում է Է համարին:

նէր զկեղս վիրացն, զոր ընկալաւ, եւ հազիւ ետուն նմա զհաղորդութիւն կցորդութեան»:

VII. [1]Եւ ընդ այս բանս յարեալ են եւ այլ բանք սորին այս աւրինակագրի, զի են այսպէս. «Զ Գիրս,— ասէ,— Սուրբս աներկիւղ համարձակ եղծին, ապականեցին եւ զկանոնս զառաջին հաւատոցն զրկեցին եւ զ Քրիստոս ոչ ճանաչեն եւ ոչ քննեն, եթէ զինչ ասեն Գիրք Աստուծոյ, այլ թէ որպիսի կերպարան մաքառման գտցեն, որ զրկէ զ Աստուածութիւնն Որդւոյ, եւ թեւակոխին ի նմա փութով պնդութեամբք: [2]Եւ եթէ ոք հարցանէ զնոսա բան ի Գրոց Աստուծոյ, նախ նոքա հարցանեն, թէ այս բանս զո՞րպիսի կերպարանս մաքառման կարէ առնուլ՝ խառնո՞ւմն, թէ՞ որոշումն: [3]Բայց թողին զ Գիրս Սուրբս Աստուծոյ եւ կրթեն եւ ուսանին զչափս երկրի, իբրու թէ որդիք իցեն երկրի եւ յերկրէ խաւսին. եւ զայն, որ եկն ի վերուստ, ոչ գիտեն: [4]Զի Աւկղիդէս առ ոմանս ի նոցանէ փութով պնդութեամբ ուսանի, Արիստատիղէս եւ Թէոփրատոս յոյժ սքանչելի են առ նոսա, զի Գաղիոս առ ոմանս ի նոցանէ իբր այն թէ երկրպագելով երկրպագի: [5]Իսկ նոքա յարուեստգիտութիւնն այնոցիկ, որ ոչն հաւատան, պաշտին ի խորհուրդս աղանդին նոցա, եւ ի խորամանկութիւն այնոցիկ, որ առանց Աստուծոյն են, խառնեալ են ընդ պարզ հաւատսն Գրոց Աստուծոյ, իբր ոչ մերձենալով մերձենային նոքա առ հաւատսն, զի՞նչ պիտոյ է մեզ ասել ի նոցանէ: [6]Վասն այսորիկ աներկեւղ համարձակ ձեռնամուխ եղեն ի Գիրս Աստուծոյ եւ ասեն բան՝ ուղղելով ուղղեմք զնոսա: [7]Եւ զի ոչ զրպարտելով զրպարտեմ ինչ զնոսա, այն որ կամին՝ կարէ ուսանել: [8]Եթէ ոք կամի հանել զաւրինակ զմիոյ միոյ ի նոցանէ եւ ընթեռնուլ զնոսա
281ա ընդ միմ//եանս, գտանէ զնոսա, զի երկմտեալ եւ բաժանեալ են ի միմեանց. զի բաժանեալ են Ասկղոպիդայն ի Թէոդոտոսեայն: [9]Բազում իսկ գտանին ի գրոց անտի նոցա, քանզի փութով պնդութեամբ գրեն զնոսա աշակերտք նոցա՝ զուղղեալսն միոյ միոյ ի նոցանէ, որպէս եւ նոքա կոչեն զնոսա, բայց են նոքա եղծեալք եւ ապականեալք: [10]Բայց դարձեալ Հերմապաւլսին սոցա ոչ միաբանին, իսկ Ապողինիդեայն եւ ոչ նոքա նոցայնոցն միաբանին: [11]Զի եթէ ոք ընթերցցի զայնոսիկ, որ յառաջագոյն ուղղեցան ի նոցանէ, ընդ այնոսիկ, որ յետոյս ապականեցին, գտանէ, թէ ոչ միաբանին ընդ միմեանս: [12]Այլ թէ քա՛նի է ժպրհութիւն այսր մեղաց, թուի թէ եւ նոքա ճարտար գիտիցին. կամ թէ ոչ հաւատան, թէ ի Հոգւոյ Սրբոյ ասացան Գիրք Սուրբք, եւ են նոքա առանց հաւատոց կամ զանձինս իւրեանց համարին իմաստուն քան

զՀոգին Սուրբ: [13]Զի՞նչ եւս այլ ինչ են նոքա, բայց եթէ դիւահարք, զի ոչ կարեն նոքա ուրանալ, եթէ չիցէ նոցա յայս ժպրհութիւն. իբրու ձեռաւք իւրեանց գրեն յայնցանէ, ուստի աշակերտեցան նոքա, ոչ ընկալան նոքա զգիրս այսպէս, եւ չիք նոցա ցուցանել, եթէ ուստի գրեցին նոքա զաւրինակսն իւրեանց: // [14]Իսկ ոմանք ի նոցանէ ոչ զի փո- 281բ
խելով փոխել զնոսա կամեցան միայն, այլ սպառսպուռ ուրացան յաւրինաց եւ ի մարգարէից ուսմամբն իւրեանց՝ այն, որ առանց ուսման աւրինաց եւ առանց Աստուծոյ է, եւ ի պատճառս մոլորութեան ընկեցան»: [15]Եւ վասն այսորիկ մինչ ցայս վայր»*:

VIII. [1]Արդ, այս յանուն Արտեմոնի անուանել աղանդ անագան է քան զժամանակս առաքելոցն՝ երկերիւր ամաւք սուղ ինչ նուազ, որպէս ճառեցաւդ վերագոյն, իսկ նոյն ինքն Արտեմոն եւս անագան եւ չիշեալ եղծաւ ի հաւատսէր եւ յառաքինի հովուաց Եկեղեցւոյ Քրիստոսի, եւ առաջին՝ ի Բիկտորէ Հռոմայեցւոյ մինչեւ ի ժամանակս Պաւղոսի Սամոստացւոյ: [2]Արդ, լինին ի ծննդենէ Փրկչին մինչեւ յամն չորրորդ Կոմոդեայ կայսեր ամք ՄԴ, իսկ ի չարչարանաց եւ ի յարութենէ Տեառն մինչեւ ցնոյն ամ ՃՀԳ ամք եւ ցԲիկտոր եպիսկոպոս Հռոմայեցւոց, առ որով գլուխ եւ հայր մոլորութեան արտեմոնեացն Թէոդոտոս երեւէր, զոր մերժեաց <ի> կցորդութենէ Եկեղեցւոյ Բիկտոր, ամք ՃԶ, որ կալաւ եպիսկոպոսութիւնն մինչեւ ցիններորդ ամն Սեւերեայ, իսկ ըստ այլոց մինչեւ ցեւթներորդն, զկնի որոյ Զեփիւրինոս
կալաւ զեպիսկոպ//ոսութիւնն զերկոտասան ամ, զորոյ ամբաստանեն 282ա
արտեմոնեանքն՝ իբր թէ նա առաջին սկսաւ խոտել զուսումն նոցա: [3]Զի յետ երեքտասան ամին Կոմոդեայ թագաւորեաց Եղեւիոս Պերտինաքս ամ մի, եւ ապա Սեւերոս՝ ամս Ը առ տասամբ միով, յորոյ իններորդ ամի ասի զաթոռն ունել Հռոմայեցւոց Եկեղեցւոյն զեպիսկոպոսութեան նմա, այսինքն՝ երկերիւր քառասուն եւ հինգ ողիմպիադին կացին թագաւորք Հռոմայեցւոց Վաղերիանոս եւ Գաղղիենոս: [4]Եւ յերրորդ ամի անդ չոքաւ գերի ի Պարս Վաղերիանոս յաղագս յարուցանելոյ հալածանս ի վերայ քրիստոնէից: [5]Իսկ ի վեցերորդ ամին Գաղղիենոսի եկաց եպիսկոպոս Հինգետասաներորդ յԵկեղեցւոջն անդիրոքացւոց Պաւղոս Սամոստացի, որ զառողջ կանոնն որոշեաց եւ զ Արտեմոնի հերձուածն նորոգեաց եւ որպէս բանն է արտաքոյ Եկեղեցւոյ Ա-

* Այստեղ աւարտւում է Եւսեբիոս Կեսարացու «Պատմութեան» հինգերորդ գլուխը:

տուծոյ: [6]Խորհեցաւ ի վերայ Քրիստոսի խորհուրդ տնանկութեան եւ
աղքատութեան, իբրեւ ի վերայ դուզնաքեայ եւ իջեալ յերկնից, եւ այս
ոչ դուզնաքեաւք ասացաւ մարդոյ, ոչ կամի խոստովանել Որդի Աս-
տուծոյ եւ ի նմանէ, այլ ի խաւսից անտի, զոր առաքեաց, ճանաչի, թէ
քանիցս անգամ ասաց վասն Յիսուսի Քրիստոսի, թէ ի ներքուստ է, յա-
282բ ւելուն ի թղթի // անդ եւ ասեն: [7]Իսկ զայն, որ ձաղեցաւն զխորհուրդ
Եկեղեցւոյ եւ խայտառակեաց զնա պիղծ աղանդովն Արտեմոնեայ, զի
պիտոյ է ցուցանել զհայրն նորա, ոչ այսուհետեւ պիտոյ է յետ այսր
ամենայնի պահանջել ի նմանէ զայս: [8]Ցայտ է, թէ վասն գործոցն պղ-
ծութեան ակնարկելով ասեն եւ դարձեալ, իբրեւ անկաւ Պաւղէ ի հա-
ւատոց անտի ճշմարտութեանն եւ ընդ նմին եւ յեպիսկոպոսութենէ
անտի, որպէս յառաջագոյն կանխեցաք ասացաք, Դոմնոս կալաւ զե-
պիսկոպոսութիւն Եկեղեցւոյն անդիոքացւոց: [9]Եւ երեւի չարին այնո-
րիկ կալեալ Պաւղոսի զանուն եպիսկոպոսութենն զէ ամ՝ ի Զ-երորդէն
Գաղղիենոսի թագաւորութենն մինչեւ ցերկոտասանն Մկա ողիմպի-
ադին ցչորրորդ ամն, եւ լինին ի ծննդենէն Փրկչին ողիմպիադք ԿԷ, որ
են ամք ՄԿԸ: [10]Իսկ ի տասներորդ ամէն Կոմոդեայ կայսեր, յորում Բիկ-
տոր կալաւ զպաշտաւն Եկեղեցւոյն Հռոմայեցւոց, որ զԹէոդոտն մեր-
ժեաց զնախնի աղանդոյն արտեմոնական, ողիմպիադք Ի պակաս մի-
ով ամաւ, իսկ ամք ՀԹ, եւ ց Պաւղոսի հերետիկոսի զաթոռն եպիսկոպո-
283ա սութեան սկիզբն ամք ՀԲ ի Բիկտորեայ: // [11]Առ Սամոստացւովն զԵկե-
ղեցին Հռոմայեցւոց Դիոնիսիոս հովուէր, որ քսաներորդ չորրորդ էր ի
Պետրոսէ առաքելոյ եւ կալաւ զեպիսկոպոսութիւն զԹ ամ:

IX. [1]Արդ, գրեցան սոքա ո՛չ վայրաբար ինչ, կամ ժամանակ, կամ
անուանք առաքինեաց արանց եւ վատթարաց, այլ եւ թագաւորաց
ոմանց՝ հանդերձ ողիմպիադեաւք, բայց զի գիտասցես, թէ կարի յոյժ ի
տգիտութենէ ստեն, ոյք ասեն զԱրտեմոնն զայն լինել աշակերտ աւե-
տարանչին Յովհաննու: [2]Եւ ծանիցես դարձեալ, թէ կանխագոյն է հեր-
ձուածդ երկաբնակաց եւ քան զժամանակս երանելւոյն Յուլեայ Հռոմայ
եպիսկոպոսի, որ առ Կոստանդնիւ կայսերբ լեալ ասի, քանզի ոմանք
անտի կարծեն եւ յայնմ հետէ զբաժանական հերձուածդ: [3]Հանդերձ
այսոքիւք, զի եւ զՆեստորի եւ զվարդապետաց նորա եւ զժողովոյն
Քաղկեդոնի իմացիս զհերձուածապետս եւ զառաջնորդ<ս>, [4]քանզի
խմորն ապականագործ եւ չար՝ լռեալն ի զաւրութենէ յաւուրցն Բիկ-
տորի, զաւրութիւն վերստին սաստկագոյն առնոյր ի ձեռն Սամոստաց-
283բ ւոյ գազանին եւ տարածանէր դժնդակապէս ի յոլովս եւ ըստ փ//ոխան-

ցութեան կարգի արժանաւոր ժառանգաւք գայր հասանէր ի Նեստորի-
ոս՝ մշակող որոմանն սերմանեցելոյ, զի ընդունել սմա ասեն յումեմնէ
Մոփսիեստացւոյ Թէոդորոս կոչեցելոյ, որ էր աշակերտ Դիոդորի: [5]Իսկ
ի տարագրիլ անարժանին Աստուծոյ Նեստորի սուղ ինչ ի վերայ ան-
ցելոյ ժամանակի Փղաբիանոս ումն՝ համախոհ ի նորին եւ ծանաւթ չա-
րի նորայն աւանդութեան, ունի զաթոռ եպիսկոպոսութեան քաղաքին
Կոստանդինու: [6]Եւ ի լինիլ հակառակութեան Եւտիքի վանապետի քա-
ղաքին առ նա, վասն չառնլոյ յանձն ընդ նմա լինել դաւանակից եր-
կու բնութեանց ի վերայ Քրիստոսի եւ ոչ իւր ուղղապէս խոստովանե-
ցելոյ, քանզի առ աչաւք եւ ոչ ճշմարտապէս Բանին մարմին լինել դա-
ւանէր, եւ չար չարի ախոյան եւ ընդդիմամարտ պատահեալք՝ ոչ ի հա-
ւանակցութիւն միմեանց խոնարհէին: [7]Յաղագս որոյ եւ ժողով երկրորդ
յԵփեսոս եղեալ ի Թէոդոսէ արքայէ գլխաւորութեամբ մեծին Դէոսկո-
րոսի Աղեքսանդրացւոցն եպիսկոպոսի, որպէս քաջայայտ իսկ է, խո-
տեցան կողմանք երկոքին: [8]Բայց նախ քան զայս զպատճառն վիճա-
բանութեանն գրէ Փղաբիանոս առ ամբարիշտն Լէոն՝ առնելով վճիռ ի
նմանէ՝ խնդրելով // ի նահանջումն հակառակութեանցն զթոյնս կարճի՝ 284ա
աւձի կամեցեալ բժշկել թունիւք: [9]Իսկ նորա զախորժելին նմա գրեալ
հայհոյութիւն ի բաժանեալ չորեքտասան գլուխսն՝ առաքէ առ նա, զոր
նզովեցին աւանդողաւն եւ աւանդառուաւն հանդերձ ժողովեալքն յԵ-
փեսոս: [10]Սակայն պահեցաւ կտակ չար ի չարաց աշխարհի ի գլորումն
կործանման, քանզի ժողով ամբարշտացն, որ ի Քաղկեդոնի բիւթենաց-
ւոց, քարոզեցին զանաւրէնութեանն եւ անաստուածութեան հաւատոյ
արձան, յորոց բանից եւ իմացուածոց հանդերձելոց ելանել ի մատեան
գրոյդ համառաւտիւ ճանաչելոց ես զլրբութիւն յանդգնելոցն հակա-
ռակ Աստուծոյ եւ Աւծելոյ նորա եւ որոց Հոգին Սուրբ կարգեաց տե-
սուչս եւ վարդապետս Եկեղեցւոյ սրբոյ:

X. [1]Արդ, զիա՞րդ ոչ եւ չափաւորաց եւ պարզամտաց քաջայայտ
ամբարշտութեան ժողովոյն Քաղկեդոնի իցեն իրք, զի հարք նոցա կա-
շառաւք կամեցան գողանալ ճշմարտութիւնն, [2]որպէս երբեմն ծերք հրէ-
իցն զբան յարութեանն եւ ի սքանչելի տեսլեանցն, որ առ կշտամբանս
անհաւանութեան նոցա խցին զդրունս աչաց եւ ականջաց, եւ միջինք
նոցա առ բան//իւք հայհոյութեանց ստգտեալ են եւ գործովք զազրու- 284բ
թեան: [3]Եւ նոքին ինքեանք ի պտղոյ անտի, այլ եւ յարմատոցն ճանա-
չին, ըստ որում ի սոցանէ՝ նոքա, քանզի յորդիս իւր ծանիցի այր, եւ
ծառ՝ ի պտուղ իւր, եւ զի նոյն կամք եւ ձայնակցութիւն ամենեցուն

նոցա են, ոչ կարեն ստել, թէպէտ եւ կախարդական բանիւք եւ հաւանեցուցանողաւք, որպէս եւ են իսկ սովոր, բազում անգամ հնարիցին՝ մարդ ստորին եւ հասարակական Սամոստացին հայհոյելով համարձակապէս զՔրիստոս անուանել, նմանապէս եւ որք զկնի նորա՝ Թէոդորիտեանքն եւ այլք նոցին համախոհք: [4]Որոց վարժեալ ուսմամբ Նեստորիոս, ընդարձակագոյն զհերձուածսն լնոյր, տարածանէր յոգիս բազմաց, իսկ Լէոնն այն, եթէ՛ ի սոցանէ ընկալեալ եւ եթէ՛ ի գրոց անտի արտեմոնեանցն, որ ի քաղաքին, որ ի վաղնջուց արմատեցելոյ ի հասարակաց ամենեցուն նոցա հիմանէ եւ սկսմանէ, տաղաւար Բանին զմարմինն կոչէ եւ չորեքտասանեքումբք գլխովք մատենին իւրոյ հայհոյութեանն բաժանել զմիաւորութիւնն եւ քակտել նկրտի, [5]զոր ընկալեալ զկնի ժամանակի դուղնաքոյ ժողովելքն ի Քաղկեդոն արձան հաւատոյ անուանեցին՝ չինելով // ի վերայ այնր ապականիչ եւ հայհոյական հիման զնիւթ իւրեանց իմացուածոց, եւ աւարտեալ՝ կանգնեցաւ անագան ուրեմն աստուածամարտութեանն աշտարակ ի միաշուրթն ամբարշտաց: [6]Եւ ոչ ծիծաղելի չարաց եղեն, այլ եւ սուգ անբերելի եւ անհնարին բարեպաշտիկ աւանդութեանն եւ զԱստուած սիրողաց անձանց եւ ժողովոց ի վերայ տարածեցին մինչեւ ցայսաւր ժամանակի, որոց ոչ դատարկացի ի բնէ դատաստան:

285ա

<ԺԲ>

ՆՈՐԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՁԱՆԱՁԱՆ ՀԵՐՁՈՒԱԾՈՑ ՅԱՅԼ ԵՒ ՅԱՅԼ ԺԱՄԱՆԱԿՍ ԱՐՄՆՑ ԲՂՁԱԽՈՀԱՑ

305ա

I. //[1]Ասի յոմանց հերձուածողաց, թէ ապականութիւն ի Քրիստոս էր: [2]Քաղցն եւ ծարաւ եւ աշխատութիւն եւ այլ մարդկային կիրք՝ զայդոսիկ ապականութիւն ասել յիմարաց է, որք ոչ գիտեն զԳիրս եւ ոչ զզաւրութիւն Աստուծոյ բնաւ իսկ: [3]Զապականութիւն ասել ի վերայ Քրիստոսի ամբարշտութիւն է, յիշել՝ եւ դառն հայհոյութիւն, անթոզլի եւ յաւիտենական մեղք. կամաւոր կիրքն այնոքիկ վասն մերոյ փրկութեան ոչ են եւ ոչ ասին ապականութիւն: [4]Մի՛ խաբիր, սիրելի՛, եւ մի՛ կցորդ լինիր աւտար եւ անբժշկելի մեղացն այնոցիկ: [5]Փրկական

կիրք են Աստուծոյ մարմնացելոյ եւ ճշմարտապէս մարդացելոյ եւ ո՛չ ապականութիւն, եւ ո՛չ ի հարկէ զայնոսիկ կրէր որպէս մարդ ոք հասարակական, այլ իւրովք կամաւք, որպէս մարդացելոյ Աստուծոյ վայել է: [6]Քանզի ինքն շարժէր զինքն յայսոսիկ, թոյլ տայր մարմնոյն զգալ բնաւորական կրիցն եւ անպարսաւ. վկայէ Աւետարանն, զի ասէ. «Յետ քառասուն աւուր պահոցն լնլոյ՝ ապա քաղցեաւ»*: [7]Քանզի յայնժամ կամեցաւ թէ քաղցնուցու, նոյնպէս եւ յամենայն կիրսն եւ ի չարչարանս խաչին: [8]Վասն որոյ ասէր ինքն. «Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ եւ իշխանութիւն ունիմ առնուլ զսա»†, եւ եթէ՝ «Ոչ ոք կարէ հանել զնա յինէն»‡: [9]Ասեն հակառակողքն, թէ մինչեւ ցյարութիւնն ի գերեզ//մանէն իբրեւ զմի ոք էր ի մարդկանէ ապականացու: [10]Եթէ այնպէս իցէ, ապա գերեզմանն եւ ո՛չ կոյսն Մարիամ է աստուածածին, եւ ընդէ՞ր բնաւ լեզուաւ խաբէ զպարզամիտս ի մարդկանէ՝ Աստուածածին ասելով զսուրբ Կոյսն: [11]Կամ որո՞վ գտանի առաւելեալ Քրիստոս քան զմարդ հասարակական, վասն զի եւ մարդիկ փոփոխելոց են յանապականութիւն յետ յարութեանն, եւ «արդարքն ծագեսցին յայնժամ իբրեւ զարեգակն»§,— ասէ ինքն Պարգեւիչն անապականութեան՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս: [12]Դարձեալ, թէ յետ յարութեանն աստուածացաւ Քրիստոս, որպէս ասեն հայհոյիչքն, ապա այլայլելի եւ փոփոխելի է բնութեամբ, զոր եւ ոչ դեւք յանդգնին զմտաւ ածել ի վերայ անփոփոխելի եւ անայլայլելի բնութեանն: [13]Քանզի ոչ եթէ աստուածազգեաց մարդ էր Քրիստոս, որպէս զՍամուէլ եւ զՄովսէս կամ զմի ոք զայլս ի սրբոցն, որպէս երեւի ասել այնպիսեաց հերձուածողաց, այլ Աստուած էր մարմնացեալ՝ ըստ Յովհաննու ձայնին, որ ասէ. «Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ»¶: [14]Եւ եթէ՝ «<ի> սկզբանէ էր Բանն եւ Աստուած էր նոյն ինքն Բանն»**, եւ՝ «Ի լրման ժամանակաց առաքեալ ի Հաւրէ՝ եղեւ մարդ ի կնոջէ»††, որպէս ուսուցանէ ամենիմաստն Պաւղոս, զիա՞րդ իշխեն ասել զնա ապականացու: [15]Ո՛վ ամբարշտութեանն, ո՛վ անհամեմատ մոլեգնութեանն, այնպէս եւ պարսիկք կար-

305բ

* Մատթ. Դ 2
† Յովհ. Ժ 18
‡ Յովհ. Ժ 18
§ Մատթ. ԺԳ 43
¶ Յովհ. Ա 14
** Յովհ. Ա 1
†† Գաղ. Դ 4

306ա ծեն, որպէս եւ բազում անգամ լուայ ի // բերանոյ նոցա, եւ զիա՞րդ
անուանեսցի բնաւ քրիստոնեայ այնպիսին: [16]Մ՞ի Սամոստացին Պաւ-
ղոս վասն այնպիսի կարծեաց նզովեցաւ, զի նորոգեսցէ զհերձուածն
Արտեմոնի, ո՞չ այդ բանք են Դիոդորի Տարսսացւոյ եւ Թէոդորիտայ՝
համախոհաց Նեստորի, զի զ՚առ ի Մարիամայ Կուսէ ծնեալն սոսկ մարդ
համարելով՝ զայլ եւս բանս հայհոյութեան ի վերայ այնպիսի կարծեաց
չինեցին: [17]Բայց նոքա յորովայնի Կուսին զմիաւորութիւնն ասէին Բա-
նին եւ մարմնոյն, թէպէտ եւ ըստ շնորհի եւ ըստ արժանաւորութեան
աղճատաբանէին, իսկ սոքա յետ յարութեանն ի կատարումն եւ ի փառս
յանապականութիւն փոխադրիլ ասեն, զոր եւ Թէոդորոտոս ոմն յա-
ւուրս յետինս, բազում ամաւք զկնի ժողովոյն Քաղկեդոնի, այլ եւ Կոս-
տանդինուպալսի հինգերորդին անուանեցելոյ՝ առ Աթանասիւ պատ-
րիարգաւ Անտիոքայ, յայտնապէս յաւդէր անամաւթաբար: [18]Քանզի
ըստ երից ժամանակաց փոփոխումն ընդունել Քրիստոսի ասէր, որպէս
թէ ի ծննդենէն մինչեւ ի մկրտութիւնն այլ ազգ ունել, իսկ ի մկրտու-
թենէն մինչեւ ի խաչն՝ այլ ազգ, եւ ապա յետ յարութեանն զկատարե-
լագոյնն առնուլ, այսինքն՝ զփառս, զկատարելութիւն եւ զանապակա-
նութիւն: [19]Առ որ ասասցուք, զիա՞րդ ժամանակաւ եւ ըստ յաւելման
306բ կատարեալ յառաջատելով իցէ Աստուած, եւ կամ ո՞րպէս Եկեղ//եցի Աս-
տուծոյ անուանեսցի եւ եղիցի քրիստոնեայ՝ նոր եւ առժամայն «աս-
տուած» երկրպագելով եւ պաշտելով, ուր Դաւիթ հրաժարեցուցանէ՝
յերգելն ասելով. «Մի՛ եղիցին քեզ աստուածք առժամայնք եւ մի՛ եր-
կիր պագանիցես դու աստուծոյ աւտարի»*: [20]Մ՞ի ապաքէն աւտար է
յանկատարութենէ ի կատարումն եկեալն, եւ յապականութենէ՝ յանա-
պականութիւն եւ ի փառս՝ յանփառութենէ: [21]Աստուածք ապա ասին
ըստ էութեան Եղիա եւ Ենովք, քանզի են այժմ յանապականութեան
եւ ի փառս եւ ի կատարելութեան մինչեւ ի ժամանակն սահմանեալ:
[22]Եւ կամ նա ասասցի իբրեւ զսոսա, տակաւին կիսակատարումն մարդ,
թէպէտ եւ ստացեալ ժամանակաւ ունի զերեսին, այլ եւ Երրորդութիւնն՝
չորրորդութիւն՝ զմարդն յաւելուած ընդունելով, եւ արարածն՝ թուակից
եւ պատուակից արարչացն, եղեալն՝ անեղ ի բնութեան, եւ ժամա-
նակեայն՝ անժամանակէին, փոփոխելին եւ այլայլելին ըստ նոցա՝ ան-
փոփոխելւոյն եւ անայլայլելւոյն, մարդն՝ Աստուծոյ ճշմարտի, պի-
տակն՝ իսկականի եւ էականի, մարմնականն ոմն եւ այլ քան զ՚«ի սկզ-

* Սաղմ. Զ 10

բանն»՝ անմարմնոյ եւ իսկականի: [23]Զի զհետեւողս սոցին յանտեղեաց
թողից ի կարգէ բանիս, զապականացուն, զանկատարն, զանփառաւորն՝
անապականի եւ կատարելոյ եւ գերազանցի փառաւորութեամբ եւ անի-
մանալի պատուոյ // առաւելութեամբ: [24]Դարձեալ, թէ յետ յարութեանն 307ա
ընկալաւ Քրիստոս զկատարելութիւն եւ զփառս եւ զանապականու-
թիւն, ըստ որում Թէոդոտոսն այն ասէր, զիա՞րդ Պաւղոս յ՚առ Եբրայեց-
ւոց թղթի անդ ասէ. «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսաւր, նոյն եւ յաւի-
տեանս»*: [25]Երէկ կոչէ զանցեալն, իսկ այսաւր՝ զներկայն, եւ յաւիտեան՝
զապառնին՝ անվճար ժամանակ: [26]Զի այսպէս ասացից, քանզի երէկն
ասէ, մինչ դեռ ոչ էր զգեցեալ մարմին եւ ունէր զաստուածավայելուչ
փառսն եւ զանապականութիւն, սոյնպէս եւ այսաւր, յորժամ մարդ ըստ
ճշմարտութեան եղեւ, եւ ոչ ինչ ի բնութիւն վնասեցաւ եւ ոչ ապակա-
նութիւն զգեցաւ կամ անկատարութիւն կամ անփառութիւն, այլ եկաց
մնաց որ ինչ էրն ի զգենուլն մարմին. կացցէ եւ յաւիտեանս յաւիտե-
նից որպէս եւ Աստուած ճշմարիտ եւ Որդի Աստուծոյ: [27]Քանզի մարդ-
վայելուչքն ի նմա տեսեալք ոչ է ապականութիւն, այլ կիրք կամաւո-
րականք, եւ ոչ է ըստ մեզ մարդ լոկ, թէպէտ եւ հաճեցաւ լինել մարդ,
այլ է Աստուած մարմնացեալ: [28]Մ՞ի նախ ստեղծեալ մարմին կամ մա-
նուկ յարգանդի Կուսին եւ ապա բնակեալ, զի մի՛ աստուածազգեաց
մարդ ասասցի եւ եղիցի, այլ ինքն նախաժամանեալ ի Կուսին յարգանդ՝
խառնէ ընդ ինքեան զմարդկայինն բնութիւն, զորոյ խառնմանն յեղա-
նակ ոչ ոք կարասցէ հաւաստապէս //ճառել: [29]Հաւաստամք, զի ի Հոգ- 307բ
ւոյ Սրբոյ կազմութիւն մարմնագործութեան այնորիկ եղեւ՝ ըստ հրեշ-
տակին առ Կոյսն աւետեաց, այլ քննել եւ հետազաւտել անբարեպաշ-
տապէս ոչ իշխեմք եւ ոչ քան զգրեալսն աւելի իմանալ, որպէս ուսաք
ի Պաւղոսէ: [30]Լո՛ւր՝ զինչ ասէր առ աշակերտսն ինքն յարուցեալ ի մե-
ռելոց. «Տեսէք զձեռս իմ եւ զոտս, զի ես նոյն եմ»†: [31]Եւ չասաց, թէ այլ
եմ, զի փոխեցայ յանապականութիւն յապականացուէ, այլ թէ նոյն եմ՝
ըստ որում յառաջ քան զխաչն, որում տեղեակ իսկ էք դուք եւ գիտէք
առանց երկբայութեան: [32]Եկեր եւ արբ ընդ նոսա յետ յարութեան իւ-
րոյ, զի ուսցուք, թէ նոյն է եւ ոչ փոփոխեցաւ: [33]Պետրոս ասէ մեծն.
«Որք կերաք եւ արբաք ընդ նմա յետ յարութեանն»‡, եւ յԱւետարանի

* Երբ. ԺԳ 8
† Ղուկ. ԻԴ 39
‡ Գործ. Ժ 41

անդ յորժամ հարցանն ի Տեառնէ մանկունքն, թէ՝ «Ունի՞ք ինչ ուտելոյ»*, գրեալ է, թէ՝ «Ետուն նմա ձկան խորովելոյ մասն եւ խորիսխ մեղու, զոր առեալ եկեր առաջի նոցա, զմնացորդսն ետ նոցա»†: [34]Արդ, եթէ ուտելն եւ ըմպելն ապականութիւն է, որպէս ասեն, ընդէ՞ր զկնի յարութեանն ուտէր եւ ըմպէր, զի յանապականութիւն փոփոխեալ էր ըստ նոցայն կարծեաց: [35]Ապա թէ ոչ է ապականութեան գործ կամ կիրք յետ յարութեանն ուտել եւ ըմպել նորա, յայտ է, թէ եւ ոչ նախ քան
308ա զյարութիւն, եւ եթէ ոչ ուտելն եւ ըմպել իցէ գործ ապակ//անութեան, ոչ ապա եւ այլն ամենայն մարդկային կամաւոր կիրք, զոր ի փրկութիւն մեզ տնաւրինաբար կրէր, ապականութիւն: [36]Մե՛զ տնկակից է եւ ամենայն կենդանեաց եւ աճականաց, որոց եւ նուազելն չարժակցի: [37]Իսկ որ ոչն ունի հայր ըստ մարմնոյ, քանզի ի Կուսէ միայնոյ ծնաւ, զիա՞րդ կարասցէ ապականութիւն հետեւել այնր մարմնոյ: [38]Աղէ՛, հարցցուք զԹէոդոտոսն ցայն, թէ մարթ իցէ՞ յանապականէ ապականացու ծնանել, զի եթէ անապական էր Կոյսն նախ քան զծնունդն, քանզի զայր ոչ գիտէր, անապական եւ յետ ծննդեանն, վասն զի կուսութեանն կնիք անշարժ եւ անլոյծ եկաց մնաց: [39]Մ՞րպէս արդեաւք Պաւղոս իցէ ապականակիր, եւ այն, զի «Հոգի Սուրբ եկն ի նա,— ըստ հրեշտակին ձայնի,— եւ զաւրութիւն Բարձրելոյն հովանի եղեւ նմա»‡, այլ եւ զՄնեալն առ ի նմանէ սուրբ ասաց եւ Որդի Աստուծոյ§: [40]Եթէ Որդի Աստուծոյ է, որ ի Մարիամայն կուսէ ծնեալ, քանզի «Բանն մարմին եղեւ»¶,— Յովհաննէս որոտաց, զիա՞րդ ոչ իցէ ամբարշտութիւն ասելն ապականացու զՈրդին Աստուծոյ, քանզի մի է Միածինն Հաւր, թէպէտ եւ մարդ եղեւ: [41]Ապականութիւն արմատ ունի եւ ծնող զմեղս, իսկ «Նա մեղս ոչ արար, եւ ոչ գտաւ նենգութիւն ի շրթունս Նորա»** ըստ կանխասացութեան մարգարէին եւ ըստ նորուն ինքեան Փրկչին եւ Կենարարի, թէ՝ «Մ՞ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց»††, եւ դարձեալ՝
308բ «Գայ // իշխան աշխարհիս այսորիկ եւ յիս ինչ ոչ գտանէ»‡‡: [42]Արդ,

* Ղուկ. ԻԴ 42
† Ղուկ. ԻԴ 43
‡ Ղուկ. Ա 35
§ Տես Ղուկ. Ա 35:
¶ Յովհ. Ա 14
** Ես. ԾԳ 9, Ա Պետ. Բ 22
†† Յովհ. Ը 46
‡‡ Յովհ. ԺԴ 30

որոյ ծնունդն ի Հոգւոյն Սրբոյ է եւ ոչ ի սերմանէ առն, եւ որ արդարացաւ մարմնով, յայտ է, թէ միայն ի մարմնազգեաց բանականս, ապականութիւն հեռի փախուցեալ է ի նմանէ:

II. [1]Աթանասիոս Աղեքսանդրի հայրապետն՝ ամենահռչակն եւ սուրբ, ասէ այսպէս. «Վասն զի մարմնանալն Քրիստոսի յանմուտանութենէ եւ առանց մեղաց էր, ոչ գտաւ ի նմա ապականութիւն, զի ոչ կարէ բնակել մահ ընդ կեանս, եւ ոչ ապականութիւն ընդ անապականութեան բնակէ»*: [2]Զի թէպէտ եւ խաբելով զպարզամիտս եւ զանուսմունս՝ ասէր Թէոդոտէ. «Ոչ զ՚առ ի մեղացն եւ կամ ի գերեզմանի ընդունել զապականութիւն»†: [3]Սակայն ապականութիւն անուանելով զհոգեկան եւ զմարմնական կիրսն, զոր ի վերայ մեր առնուլ դիպողագոյն թերեւս իցէ, մարդ սոսկ եւ հասարակական զնա ասէ: [4]Եւ թէ այնպէս իցէ ըստ նմա, ապա ի գերեզմանին եւ ամենայն ուրեք մերձ առդիցէ նմա զչարաչարն իմացեալ իւր ապականութիւն, քանզի այս հետեւել բնաւորեալ է մարդոյ հասարակականի: [5]Նաեւ ինքն իսկ Թէոդոտէ յայտնապէս զուրացութեանն խոստովանութիւնն զգայրի՝ անփառ եւ անկատար եւ ապականացու մինչեւ ցյարութիւնն զնա անուանե-
309ա լով, եւ ապա // փոփոխեալ ի հակառակն զնա՝ յանապականութիւն եւ ի կատարելութիւն եւ ի փառաց ընդունակութիւն: [6]Զոր զամենիմաստն Պաւղոս առնու ի վերայ բնութեան հասարակականի մարդկան, քանզի «սերմանի,— ասէ,— ապականութեամբ եւ յառնէ առանց ապականութեան, սերմանի տկարութեամբ եւ յառնէ զաւրութեամբ, սերմանի անարգութեամբ եւ յառնէ փառաւք, սերմանի մարմին շնչաւոր, եւ յառնէ մարմին հոգեւոր»‡: [7]Եւ ո՞ւր իցէ առաւելութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ եւ անուանեցելոյ Յիսուս Քրիստոս եւ «Ընդ մեզ Աստուած», թէ եւ նա նմանապէս մեզ զկնի յարութեանն փոխադրեցաւ յանապականութեան եւ յայլն ամենայն: [8]Եւ զիա՞րդ ոչ մարդապաշտ եւ մարդադաւան Թէոդոտոսն իցէ. ահա եւ զԵրրորդութիւնն կատարեալ յԵրից կատարելոց չորրորդութիւն անկատար ասող, վասն զի անկատար ումն մարդ, ժամանակաւ ի կատարումն եկեալ, թուակից կատարե-

* Գարեգին վ. Յովսէփեան, Խոսրովիկ Թարգմանիչ. Երկասիրութիւնք Խոսրովկայ Թարգմանչի, Վաղարշապատ, 1899 թ. (= ԽԹ), էջ 118, 132. «Գանձասար» Բ, էջ 201
† ԽԹ, էջ 107, 116
‡ Ա Կոր. ԺԵ 42—44

լոց անժամանակ էիցն եղեւ: [9]Եւ նորաձեւութիւն ի սկզբանէ Աստուածութիւնն ի ներքս եմուտ եւ բաժին յանբաժանելի բնութիւնն, քանզի մարդ ոմն աւտարաբուն յերանելի ազգակցութիւն եկն յարեցաւ, եւ երկրպագեն զերաշխարհիկ ամենայն զաւրութիւնք ընդ Երրորդութեանն Սրբոյ պիտակի եւ նորոյ «աստուածոյ». արդարեւ զարմանք կա-
309բ լան զճշմարիտս ի վերայ այսոց//իկ: [10]Ասէ եւ զայս, որ զխոտորնական վարդապետէ, թէ զկնի յարութեանն ի բաց բարձեալ եղեն ի փրկչական մարմնոյն անուանք մարդկային բնութեանս: [11]Բայց տե՛ս ինձ աստանաւր. եւ զխարդախութիւն կեղծաւորութեանն պարսաւէ, որպէս երեւի նենգութեամբ զՅուլիոս Աղիկառնացի, որ ի ծննդենէ Փրկչին ուրանայր զմարդկային անուանս ի վերայ նորա, վասն որոյ խոտեալ անարգեցաւ, որպէս առ աչաւք ասող զմարդեղութիւնն Տեառն. [12]եւ ինքն յետ յարութեանն զնոյն ասէ, սակայն կարծիք երկոցունց չեն ի միմեանց բաժանեալ, զի զկնի յարութեանն զայն իմանալ եւ ասել զայլ ինչ ոչ, քան եթէ առանց ճշմարտութեան զմարդանալն նշանակէ կամ երկնային ոմն ունիլ մարմին:

III. [1]Արդ, եթէ յետ յարութեան եղեւ միաւորութիւն Բանին ընդ մարդոյն, որպէս ասեն, զիա՞րդ ոչ զՆեստորին խորհին, քանզի նա մարդ սոսկ եւ առանձնակի զՔրիստոս ասէ, բայց ո՛չ յարէ զապականացուն, թէեւ կամի: [2]Այլ եւ ի ծննդենէն առյապա զնոյն արժանաւորութիւն ունել երկուցն ասէ, զոր ինքն իմանայ, զնոյն ճոխութիւն եւ պատիւ՝ ոչ ըստ միութեան եղելոյ, այլ ըստ արժանաւորութեան՝ ընդունայն խորհելով, սակայն զտանի հանդարտա//զոյն քան զԹէոդոտէ յամբարշտութեանն, քանզի սա ումեմն չնորհէ եւ զոմն կողոպտէ ի պատուոյ՝ հակառակ նմին: [3]Իսկ նա ի ծննդենէն մինչեւ յաւիտեան ըստ արժանաւորութեան մի զոլ զերկոսին ասէ, այսինքն՝ թէ արժանաւոր զտաւ ոմն մարդ ի պատիւ Բանին ելանել աւաղ թշնամանացն, սակայն Թէոդոտոս դժնդակագոյն քան զնա իւրովքն երեւի հայհոյութեամբ:
310ա
[4]Այլ եւ առ այսոքիւք անգիտանայ զոր ինչ ասեն. զՄարիամ Աստուածածին ասէ եւ զՄնեալն ի նմանէ՝ անկատար եւ անփառաւոր եւ ապականացու մինչեւ ցյարութիւնն: [5]Եւ այսոքիկ մարդոյ լոկոյ յարմարին ճշմարտապէս, զի թէ Աստուած ըստ ճշմարտութեան է մարմնացեալ ի Մարիամայ, Բանն որ յԱստուծոյ Հաւրէ եւ առ նմին, ընդէ՞ր ապականացու եւ անկատար եւ անփառունակ հայհոյի, իսկ եթէ մարդ սոսկ է, որպէս ժողովի ի բանից նորա, վասն է՞ր Աստուածածին զՄարիամ անուանէ: [6]Եթէ յետ յարութեանն եղեւ միաւորութիւն Բանին եւ մարմ-

նոյն, եւ տուաւ նմա անապականութիւն եւ կատարումն եւ փառաւորութիւն, զգերեզմանն ասացէ «աստուածածին» եւ մի՛ զՄարիամ, եւ սուտ գտանի սուրբ զուարթունն Գաբրիէլ, որ ոչ գերեզմանին ետ զա-
ւետիս՝ ծնանիլ զՈրդի Աստուծոյ, // այլ Մարիամու: [7]Հայեա՛ եւ ընդ 310բ
կրկնակի հայհոյութիւն ամբարշտին, թէ զիարդ եւ զԲանն իսկ ցուցանէ տկար, քանզի ի հարկէ եւ ի հոգոց ասէ պաղատանաւք զայնոսիկ ընկալեալ՝ խոստովան լինել զանձին անկարութիւն յաղագս միայնութեան. ի գերեզմանի ո՛չ ասեմ, ասէ, զապականութիւնն ընկալեալ մարմնոյն Քրիստոսի: [8]Եթէ ի գերեզմանի մեռեալ ըստ մարմնոյ գոլով՝ ոչ կարաց տիրել նմա ապականութիւն, զի՞նչ պատճառք իցեն նախ քան զմահն կրել նմա զապականութիւն: [9]Քանզի յապականացուէ գոյացելոյ հետեւի ապականութիւն եւ ի սերմանէ արուի սկիզբն կալելոյ. [10]իսկ այն յղութիւն ի Հոգւոյն Սրբոյ տնկագործեցաւ, որպէս ուսաք ի հրեշտակէն Գաբրիելէ՝ ասացեալ առ Կոյսն Մարիամ. «Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զաւրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո»*, եւ ցՅովսէփ, թէ՝ «Որ ի նմայն ծնեալ է, ի Հոգւոյն Սրբոյ է»†. եւ Յովհաննէս «Բանն մարմին եղեւ»‡ ասէ: [11]Եւ զիա՞րդ իշխեսցէ կամ զաւրեսցէ ապականութիւն յայնպիսի ծնունդ մերձենալ, քանզի Աստուած ըստ ճշմարտութեան է, եւ Մնեալն մարմնով ի Մարիամայ Կուսէ՝ Բանն Հաւր, եւ որպէս ծնաւն առանց բնութեան հարկի եւ իրիք բռնադատութեան, այսպէս եւ կրեաց զմարդկային կիրս առանց մեղաց: [12]Կամաւոր
էր ծնունդն, կամ//աւոր՝ եւ կիրքն ամենայն. մի՛ ոք անուանել իշխեսցէ զկամաւորական կիրսն ապականութիւն, վասն զի ի փրկութիւն մեզ զամենայն կրէր տնաւրինաբար, կարող էր ոչ կրել, վասն զի Աստուած էր եւ հանդերձ մարմնովն, բայց զի ոչ առ աչաւք էր մարդեղութիւնն, որպէս թուեցաւ մանիքեցւոց եւ Եւտիքեայ վանապետի: [13]Կրել հաճեցաւ, վասն այնորիկ իսկ եւ մարդ եղեւ, որ ի սկզբանէն Աստուած, զի կրեսցէ վասն մեր, ընդ մեզ լինելով, զմերս: [14]«Աստուած զՈրդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց եւ վասն մեղաց, եւ դատապարտեաց զմեղս ի մարմնի»§,— ասէ առաքեալն: [15]Արդ, որպէս դատապարտեաց զմեղս՝ ոչ մեղանչելով, դատապարտեաց եւ զապակա-

---

* Ղուկ. Ա 35
† Մատթ. Ա 20
‡ Յովհ. Ա 14
§ Հռոմ. Ա 3

նութիւն՝ ոչ կրելով զնա, եւ որպէս գնեաց զմեզ յանիծից աւրինացն՝ եղեալ վասն մեր անէծք՝ հեռի գոլով <յ>անիծից եւ բաշխիչ աւրհնութեան, կամեցաւ յապականութենէ փրկել զմեզ՝ առ յոյս զիւրն տալով մեզ առհաւատչեայ զանապականութիւն:

IV. [1]Գիտել պարտ է եւ զայս, որում ճշմարտութիւնն է ցանկալի եւ ոչ իցէ կամակար մտաւք յանցաւոր եւ նենդիչ բանին վարդապետութեան, եթէ այլ է բնութեանն բան եւ տեսութիւն եւ այլ՝ միաւորութեանն. [2]քանզի այլ է աստուածայինն եւ այլ՝ մարդկայինն գոյացութիւն ըստ ինքեան, քանզի է ոմն անեղանելի // եւ անվախճան արարիչ ամենայնի, իսկ մարդկային բնութիւնս՝ արարած եւ մահկանացու, որպէս ամենայն բուսականք եւ կենդանիք: [3]Եւ ի խառնման Բանին Աստուծոյ ընդ մարդկայնում էութեան, նորաձեւ եղեն բնութիւնքն, այսինքն՝ ի Քրիստոս յՈրդի Աստուծոյ: [4]Արդ, ի նմա զմիաւորութիւնն ոչ է արժան յերկուս բաժանել, այլ զամենայն միոյ եւ նորին ասել՝ եթէ՝ մարդկայինք իցեն եւ եթէ՝ աստուածայինք, [5]եւ ճանաչել զհերձուածողացն թերաբանութիւն եւ զանմիաբանութիւն ընդ ճշմարտութեանն եւ ընդ միմեանս եւ զուղիղն այսպէս խոստովանիլ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ եթէ էր ըստ բնութեան անմահ Բանն Աստուծոյ, իսկ ըստ միաւորութեան տնաւրէնութեանն յանձն առ զմահ, որ զբնութեամբ մահկանացու մարմինն իւրացոյց ի ձեռն առ ինքն միաւորութեանն եւ արար անմահ եւ անապական: [6]Եւ որ անբովանդակելին էր ըստ բնութեան, բովանդակեցաւ ըստ մարմնոյն միաւորութեամբ, եւ զբովանդակելի ըստ բնութեան մարմինն անբովանդակելի էութեանն արար հաղորդ՝ միաւորելովն ոչ փոփոխեալ կամ այլայլեալ զբնութիւնսն, այլ ըստ անճառ եւ անպատմելի միաւորութեանն
312ա խառնեալ զգոյացութիւնն: [7]Արդ, եթէ ոչ ճանաչ//իցեմք զյեղանակս բնութեան եւ միաւորութեանն, զիա՞րդ կարասցուք իմանալ զանմահին ասել մահ եւ զմահկանացուի մարմնոյն՝ անմահութիւն, անչարչարելոյն՝ զչարչարանս եւ չարչարականին ըստ բնութեան՝ կենագործակ եւ անչարչարելի գոլ: [8]Ոչ ինչ յանչարչարական բնութիւն Բանին մերձեցեալ ի կրիցն եւ չարչարեալ ճշմարտապէս, անմահ մնացեալ եւ մեռեալ՝ զմին ըստ բնութեան եւ զմիւսն ըստ միաւորութեան խորհելով եւ ընդ միտ ածելով: [9]Եւ յորժամ ասիցեմք չարչարել Բանին Աստուծոյ, ոչ ըստ բնութեան, այլ ըստ միաւորութեան զայն ասեմք, քանզի Արիոսի եւ ձայնակցաց նորա է բնութեամբ չարչարելի զԲանն ասել վասն արարած բաշաղելոյ, եւ Ապողինարի Ղաւոդիկեցւոյ զնորայսն խոր-

հողի, որ ոչ խոստովանի հոգի եւ միտս մարդկային ունել Քրիստոսի, այլ փոխանակ այսոցիկ զԲանն դնէ, որպէս զի անզգայ ունելով մարմին յիւր բնութիւն, զԲանն Աստուծոյ ասասցէ ընդունել չարչարանս: [10]Եւ յորժամ լսիցէ ոք զմարմին նորա անչարչարելի ասացեալ ըստ միաւորութեանն եւ համարեսցի ըստ բնութեան այնպէս գոլ մարմնոյն, յուղիանիտ է, իսկ զմիաւորութիւնն եթէ ըստ արժանաւորութեան // ոք 312բ
ասասցէ եւ ո՛չ ըստ բնութեան Բանին, Նեստորի է ձայնակից եւ դատապարտակից: [11]Քանզի որ այսպէս կարծէ, մարդ սոսկ ասէ զՔրիստոս եւ հաւասար ըստ բնութեան միայն սրբոց արանցն, որք ըստ արժանաւորութեան կոչեցան աստուածայինք եւ աստուածազգեացք, եւ է այս Նեստորի: [12]Քանզի ասի դարձեալ ի վերայ Քրիստոսի մի բնութիւն, ասի եւ երկուս. [13]եթէ ոք զմին ըստ բնութեան, այլ ոչ ըստ միաւորութեան ասասցէ ի Քրիստոս, կա՛մ Արիոսի եղիցի դաւանակից, որ զԲանն Աստուած արարած ըստ մարմնոյ ասէ եւ վասն այնորիկ ըստ միոյ գոլ բնութեան զԲանն եւ զիւրն մարմին՝ զմարդկային կազմածն, որ ի հոգւոյ եւ ի մարմնոյ, բերեալ ապացոյց, կա՛մ եւտիքէանիտ եւ մանիքեցի կոչեսցի, քանզի Եւտիքէս, թէպէտ եւ անստացական զԲանն խոստովանի, սակայն առ աչաւք զմարդեղութիւնն ասէ եւ ո՛չ ճշմարտութեամբ եւ վասն այնորիկ միոյ բնութեան զՔրիստոս գոլ: [14]Զնոյն եւ մանիքեցիք, դարձեալ երկուս ասելով բնութիւնս ի Քրիստոս, եթէ ըստ միաւորութեանն եւ ոչ ըստ բնութեանցն, ուստի եղեւն միաւորութիւն, ասասցէ, այլ անջատումն եւ որոշումն ի միաւորութիւնն մուծանելով, [15]եւ ոչ ըստ մտածութեան միայն Պաւղոսի Սամոստացւոյ եւ Դիոդորի Տարսոնացւ//ոյ եւ Թէոդորիտեայ եղեւ համախոհ, որք մարդ դուզ- 313ա
նաքեայ զՔրիստոս կարծելով՝ միայն յարակցութիւն եւ մերձաւորութիւն առ Բանն ունել ասացին՝ ոչ ուսեալք ի Յովհաննէ զԲանին լինել մարմին անշփոթաբար եւ առանց խառնակութեան եւ այլայլութեան:

V. [1]Իսկ վասն երկուց կամաց եւ ներգործութեանց զնոյն է իմանալ եւ ասել, ոչ ի միաւորութեան, այլ ըստ բնութեան զկրկնակսն, որպէս զի մի՛ ընդ Գայիոսի, ուստի գայիանիտք, եւ մի՛ ընդ Թէոդոսի ոք գլորեսցի, որք անզգայ եւ անկրական ունել մարմին Քրիստոսի եւ առանց ներգործութեան, զոր ի Կուսէն ընկալեալ, յանդգնեցան ասել: [2]Ապա թէ ոք միաւորեցելումն եւ մի եղելումն՝ նմին ինքեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի իշխեսցէ տալ երկուս կամս եւ երկուս ներգործութիւնս ըստ յատկութեան եւ առանձնաւորութեան, աւտար է ճշմարտութենէն եւ անծանաւթ բնաւին եւ դատապարտեալ ընդ Մաքսիմոսի չարափառի,

որ զայնոսիկ ընկալաւ ասել: [3]Քանզի եթէ ճշմարտապէս մի Տէր մեր Յիսուս Քրիստոս յաստուածային էութենէն եւ ի բնութենէ մարդկայնոյ, ըստ որում Գիրք Սուրբք ուսուցանեն, զիա՞րդ մարթիցի յետ միաւորութեանն տալ նմա երկուց դիմաց եւ առանձնաւորութեանց յատուկս: [4]Քանզի իւր է Բանին Աստուծոյ մարմինն եւ մտաւոր մարդկային հոգի,
313բ վասն որ//ոյ եւ կիրքն իւրոյ հոգւոյն մարդկայնոյ, այսինքն կամքն եւ տրտմութիւն եւ հոգք, եւ մարմնոյն իւրոյ՝ նորա ըստ միաւորութեան են եւ ասացան: [5]Քանզի կրական մարմինն եւ խորհեցող միտք եւ կամեցող Բանին ըստ միաւորութեան եղեւ, քանզի ոչ եթէ ի նախաստեղծելում յարգանդի մանկան բնակեաց, որպէս այլ յայլում, եթէ առանձնասցին ի միմեանց կամաւք եւ ներգործութեամբ, եւ ոչ յարակցեաց իւրոյ մարմնոյն ինքն, որպէս ումն ումեմն, եթէ բաժանեսցին ի վերայ նորա գրեալքն յԱւետարանս եւ յԱռաքեալս: [6]Այլ որպէս կամեցաւ ինքն եւ գիտէ, Բանն գոյացոյց իւր մարմին մարդկային յարգանդի Կուսին՝ ոչ առանց ինքեան երբեք մնացեալ, եւ գիտեմք եւ հաւատամք, զի ի Հոգւոյն Սրբոյ եկելոյ առ Մարիամ ըստ Գաբրիէլի ձայնին՝ մարմնագործեցաւ փրկչականն, իսկ յեղանակ իրագործութեանն անհասանելի է մեզ եւ ամենայն արարածականի բնութեան: [7]Արդ, զբովանդակն առնու մարդկային բնութիւն, այսինքն՝ հոգի եւ մարմին եւ միտս, բայց զի իւր է մարմինն, որ բնաւորեալն է ներգործել եւ կրել, նորա են կիրք եւ ներգործութիւնք մարդկայինք, որոյ մարմինն: [8]Եւ զի իւր ինքեան
314ա Բանին է միացեալն ընդ նմա հոգի մարդ//կային, յորում կամելն բնաւորեալ է, նորա եւ կամքն եղիցին եւ ասասցին, որոյ եղեւ մտաւոր մարդկային հոգին: [9]Եւ այսր աղագաւ սահմանեցին ասել հարքն մի բնութիւն Բանին մարմնացելոյ ըստ ճշմարիտ միաւորութեանն, այլ եւ մի կամս եւ մի ներգործութիւն: [10]Քանզի ինքն շարժէր եւ թոյլ տայր իւրոյ մարդկութեանն զկիրսն եւ զկամսն բնաւորականս, քանզի մի է իշխանական Բանն, որ մարդկայնովն՝ որպէս գործեաւ, տնաւրինէր զմարդկայինսն: [11]Քանզի «վեհագունին յաղթելով», որպէս ասէ ոմն ի սրբոցն*, ոչ լինին երկու իշխանականք՝ ասացեալ ի միում դիմի եւ բնութեան: [12]Ոչ ապա ըստ այսմ երկու կամք եւ ներգործութիւնք, այլ երաժշտապետաբար Բանն Աստուած զիւրոյ անձնաւոր մարմնոյն յաւրինէր եւ կազմէր զամենայն առ քաջահնչութիւն եւ գեղեցկաձայնութիւն, որպէս զի ամենայն ինչ տէրունեան մարմնոյն ինքեան Բանին ասասցին

* Սբ Գրիգոր Աստուածաբան (ԽԹ, էջ 119)

մարմնացելոյ եւ ո՛չ ուրումն մարդոյ առանձնակի տեսեցելոյ: [13]Եւ բազում են վկայութիւնք հարցն սրբոց առ ի զայսպիսի բանս հաւատարմացուցանելոյ, զորոց եւ առաք իսկ զմիտսն: [14]Բայց առ այժմ թողաք, մինչեւ քննիցէք զհամառաւտիւ գրեալսդ:

VI. [1]Իսկ զՅուլիոս Աղիկառնացի, վասն զի յիշեցաք // յառաջագոյն, ցուցցուք զհերձուածոյ նորա բանս եւ եթէ յորո՛ւմ ժամանակի երեւեցաւ, եւ կամ զիա՛րդ Սեւերոս Անդիոքացի հակառակ նմա եգիտ հերձուած: [2]Զենոն եւ Անաստաս թագաւորք հռոմայեցւոց արարին գիր շրջաբերական ընդ ամենայն տիեզերս՝ ի բաց կալ եւ խոտել զժողովն Քաղկեդոնի, եւ իբրեւ հաստատեցաւ այս յաւուրս նոցա, եւ ընկալաւ խաղաղութիւն զԵկեղեցի Աստուծոյ, ոչ ոք իշխէր խորհել ընդդէմ հրամանաց նոցա: [3]Իսկ Յուստինոս թագաւորեալ՝ ետ հրաման քարոզել վերստին զսահման ժողովոյն Քաղկեդոնի: [4]Եւ եթէ յեպիսկոպոսաց ոք ոչ հնազանդեսցի հրամանին, ի բաց կացցէ ի վիճակեալ նմա աթոռոյ իշխանութեան: [5]Ընդ այլս ոմանս եւ Յուլիանէ Աղիկառնոս քաղաքի եպիսկոպոս եւ Սեւերոս, անհաւանեալ հրամանին, թողին զիւրաքանչիւր քաղաքս եւ չոգան յԵգիպտոս, բնակեցան մերձ առ Աղեքսանդր քաղաքի: [6]Բայց հաւանեալքն հրամանաց թագաւորին ոչ խախտեցան յաթոռոյ իւրեանց: [7]Եւ ժամանակի ինչ անցելոյ եղեւ հակառակութիւն ի մէջ նոցա՝ Սեւերեայ Անդիոքացւոյ եւ Յուլեայ Աղիկառնացւոյ, յաղագս բանի հաւատոյ, եւ ճեղքեալ որոշեցան ի միմեանց հակառակ դաւանութեամբք: //[8]Քանզի Յուլիանէ ասէր անչարչարելի զմարմինն Քրիստոսի եւ անմահկանացու՝ ի ծննդենէ Կուսին մինչեւ ցյարութեան, եւ յաւելոյր պատճառ այսպիսի՝ չարչարելի եւ մահկանացուն ասել ապականացու զնա առնէ, ի ձեռն որոյ հարկաւորապէս ասացեալ լինին ի Քրիստոս երկուս բնութիւնք: [9]Իսկ Սեւերոս ասէր հակառակ նմին՝ չարչարելի եւ մահկանացու զմարմինն Քրիստոսի ի ծննդենէն մինչեւ ցյարութիւնն, քանզի անչարչարելի եւ անմահկանացու ունել մարմին Քրիստոսի մինչեւ ցյարութիւնն թէ ոք ասիցէ, սուտ առնէ զմարդեղութիւն նորա եւ առ աչաւք: [10]Այսպէս երկոքին սոքա այսպիսի բանիւք մարտուցեալ ընդ միմեանս՝ ոչ եւ ճշմարտութեան հաւանեցան, վասն զի ոչ կամեցան յառել ի Գիրս Աստուածային՝ առնուլ լոյս մտաց աչացն, զի մի՛ ընդ խաւար գնայցեն: [11]Այլ իւրաքանչիւր ոք ի նոցանէ, յանձնահաճութեան ամբարձեալ կառս, գտան անկեալք ի ճշմարիտ խոստովանութենէ ուղղափառ հաւատոյ, եւ զնահապետական կամեցեալք առնուլ պատիւ եւ անուն՝ յիւրեանց զհաւանելոցն փո-

խաղրեցին անուն կոչման յուլիանիտս եւ յասովրիտս՝ փոխանակ քրիս-
315բ տոնեայ անուան: [12]Եւ այսու անուանակոչութեամբ յոլովս անցուց//ին
ժամանակ, գրեթէ սուղ ինչ նուազ քան զերկերիւր ամ: [13]Բայց զՅակո-
բիկն անուն դարձեալ զի՞ եդին սոցա: [14]Մի՛ կարծեր զպատուականին
եւ սրբոյ իմաստնոյն Յակոբայ հայրապետին Մծբնայ, որպէս ինքեանք
այժմ համբաւեն: [15]Այլ է այսպէս. Յակոբ ոմն, զոր Արդարայն անուա-
նեն, միաբանեալ ընդ Սեւերեայ Անդիոքացւոյ, ձեռնադրեցաւ եպիս-
կոպոս ի նմանէ՝ ոչ ի փրկութիւն ժողովրդոց, այլ յապականութիւն եւ
անուան Սեւերեայ ի սպասաւորութիւն տարածման: [16]Քանզի հրաման-
նաւ նորա, որպէս հրդեհ ինչ վաղվաղակի ընթացեալ ընդ ամենայն աշ-
խարհն ասորւոց, լնոյր քահանայիւք եւ սարկաւագաւք եւ եդեալ նո-
ցա հրաման՝ որպէս զհիմն ինչ խոստովանութեան հաւատոյ դաւանել
զՍեւերեայն հաւատ, բայց կոչել ի վերայ իւրեանց զանուն Յակոբայ.
եւ զայս նոցա ուսուցանել ամենեցուն, զորս մկրտիցեն եւ որոց քա-
րոզեսցեն: [17]Եւ այսու կոչմամբ խաբեալք՝ վարեցան մերձ յամս երկե-
րիւր կամ թէ եւս առաւելագոյն, ապա ընդ մեծին Գրիգորի Լուսաւոր-
չին հայոց նախանձեալք եւ յաւժարեալք, զի կոչեսցին յանուն նորա,
316ա ի բաց կացին յառաջնոցն, ո՛չ յաղանդոյ, այլ յանուանց միայն, // [18]որ-
պէս զի պաճուճեալք վարդապետին ունողի զփառս՝ անուամբք թուեսցին ուղղափառք գոլ ըստ երկաչաւիղ սամարացւոցն աղգաց, ոյք երկրպագէին դիցն իւրեանց եւ երկնչէին ի Տեառնէ Աստուծոյ: [19]Պարտ էր սոցա ըստ անուանն Գրիգորի եւ զխոստովանութիւնն սիրել, բայց «ոչ կարէ ծառ չար պտուղ բարի առնել, եւ ոչ կարասցէ ոք ի փշոյ քաղել խաղող կամ ի տատասկէ՝ թուզ»:*

VII. [1]Բայց տեսցուք առ այսոքիւք, թէ վասն զի հակառակ միմեանց ունին բանք Յուլիանեայ եւ Սեւերեայ, ընդէ՞ր ապա հարքն սուրբք երկոքումք սոքաւք վարեցան հաւասարապէս յամենայն խոստովանութիւնս իւրեանց, ի ճառս հաւատոյ, [2]կամ թէ վասն զի՞նչ պատճառի Սեւերոս եւ Յուլիանէ զմի մի ի սոցանէ ընտրեցին ընդունել յանձինս եւ ոչ երկաքանչիւրք զերկոսին, կամ թէ մեզ պարտ իցէ՞ արդեւաւք միւսմ ումեք ի նոցանէ ձայնակցել, թէ՞ նմանապէս յերկոցունց հրաժարել, կամ թէ զերկոսին միանգամայն բարբառել: [3]Եւ արդ, եթէ առանձնաբար ասացեալ լինիցին այսոքիկ բառք, բազումս ունին վնասու եւ հայհոյութեան միտս եւ կարծիս, բայց հանդերձ միմեամբք ասել եւ իմա-

* *Ղուկ. Զ 43*

նալ զասացելոցն զաւրութիւն՝ չինէ զլսողացն միտս, այսպէս եւ ըստ
այսմ աւրինակի ուղիղ համ//առաւտել զբանն: [4]Եթէ մարմինն Քրիս- 316բ
տոսի ոչ երկնային է ըստ բնութեան, քանզի ի Մարիամայ հաճեցաւ Բանն մարմին լինել, բայց վասն միաւորութեան Աստուածն Բանի ասի երկնային, եւ ոչ անմահ է ըստ բնութեան մարմինն, վասն զի ի մահկանացու էութենէ եղեւ անշփոթաբար խառնումն, սակայն յաղագս ընդ անմահականի գոյացութեան միաւորութեանն ասացեալ եղեւ ի հարցն անմահ: [5]Նմանապէս եւ այլն ամենայն, յորմէ ժողովին այսոքիկ. ըստ բնութեան երկրային՝ Տէրունականն մարմին, իսկ ըստ միաւորութեանն՝ երկնային, ժամանակեայ՝ ըստ բնութեան, իսկ ըստ միաւորութեան տնաւրինականի՝ անժամանակ, մահկանացուն՝ անմահ, եւ բովանդակելին՝ անպարագիր ըստ միաւորութեանն: [6]Քանզի ի վերայ անմարմին եւ անըմբռնելի Բանին եւ որքան ինչ է տեսանեմք զիւրոյ մարդկութեանն ասացեալ ի սրբոցն: [7]Լո՛ւր Աստուածաբանին Գրիգորի. «Անմարմինն մարմնանայ, Բան<ն> թանձրանայ, անչաւշափելին շաւշափի, անժամանակն սկսանի, անտանելին տարեալ լինի, Որդին որդի լինի, այսինքն Աստուծոյն՝ մարդոյ»: Եւ է մին ըստ բնութեան Բա-*
նին, իսկ միւսն՝ ըստ միաւորութեան // ընդ մարմնոյն, քանզի ի վերայ 317ա
Բանին մարմնացելոյ ոչ ինչ ըստ որոշման եւ առանձնաբար ի Գրոց Սրբոց ասի: [8]Դարձեալ, նոյն ինքն հայրն սուրբ ի նմին բանի Տաւնականի ասէ. «Ո՛վ նոր խառնմանն, ո՛վ սքանչելի խառնուածին, որ էրն՝ լինի, եւ ստացիչն ստացանի, եւ անտանելին տարեալ լինի»†: [9]Քանզի ի Յովհաննէ ուսաւ այսպէս ասել երանելին. «Որ էրն,— ասէ,— ի սկզբանէ, զորմէ լուաք, որում ականատեսն իսկ եղաք, ընդ որ հայեցաք, եւ ձեռք մեր շաւշափեցին ի վերայ Բանին կենաց»‡: [10]Տեսանե՞ս, զի

* *Ի Ծնունդն Քրիստոսի (ՄՄ N 946, թ. 177բ, N 948, թ. 177աբ. Անանիա Սանահնեցի, «Գանձասար» Ա, էջ 211—212): Տես St. Gregory Nazianzen, On the Theophany, or the Birthday of Christ, Nicean and Post-Nicean Fathers, Vol. 7, p. 345. Святитель Григорий Богослов, Слово 38, На Богоявление или на Рождество Спасителя; Собрание творений, т. 1, Свято-Троицкая Сергиева лавра, 1994, с. 522:*

† *Ի Ծնունդն Քրիստոսի (ՄՄ N 946, թ. 184ա, N 948, թ. 183բ): Տես St. Gregory Nazianzen, On the Theophany, or the Birthday of Christ, p. 349. Святитель Григорий Богослов, Слово 38, На Богоявление или на Рождество Спасителя, с. 529:*

‡ *Ա Յովհ. Ա 1*

զմարմնոյսն ի վերայ Բանին առնու վասն անճառ միաւորութեանն.
«Եւ Կեանքն յայտնեցան, եւ տեսաք եւ վկայեմք եւ պատմեմք ձեզ զյա-
ւիտենական կենացն, որ էրն առ Հաւր եւ երեւեցաւ մեզ»*: [11]Արդ, որ-
պէս մարմնականքն Քրիստոսի Բանին յարմարին ճշմարիտ միաւորու-
թեանն աղագաւ, այսպէս եւ որ ինչ Բանին է, մարմնոյ նորա լինին կար-
գաւորաբար ասացեալ վասն գեղեցկապէս եւ հաւաստի միաւորու-
թեանն. [12]ապա թէ ոչ, զիա՞րդ ինքն Տէր ասէ. «Ոչ ոք ել յերկինս, եթէ
ոչ որ էջն յերկնից՝ Որդին Մարդոյ, որ էն յերկինս»†: [13]Քանզի մարդ
յերկնից ոչ էջ, այլ Բան<ն> անմարմին, եւ Որդի Մարդոյ յերկինս ոչ
317բ էր յասելն զայս, այլ ընդ Նիկոդեմ//եայ յերկրի խաւսէր: [14]Իսկ եւ Պաւ-
ղոս զնոյն ստորին կողմ երկրի ասէ. «Որ էջն՝ նոյն է եւ որ ելն ի վերոյ
քան զամենայն երկինս»‡. եւ էջ Բան<ն> մերկ, բայց ել մարմնով մարդ-
կայնով ըստ բնութեան: [15]Դարձեալ վասն մարմնոյն իւրոյ Տէրն. «Այս
է հացն յերկնից իջեալ»§: [16]Այսպիսիքս ամենեքեան զանպատմելի մի-
աւորութիւնն յայտ առնեն: [17]Իսկ յորժամ մարդկաւրէնս ինչ բարբա-
ռիցի կամ կրիցէ՝ զ'առ ի մարդկանէ ըստ բնութեան ունել մարմին եւ
հոգի եւ միտս: [18]Եւ յորժամ աստուածաբար միայն հրամանաւ գործի-
ցէ՝ սաստելով ի դեւս կամ ասելով զբորոտն. «Կամի՛մ, սրբեա՛ց»¶ եւ
«Ղազարէ՛, ե՛կ արտաքս»**, զբնութեամբ Աստուած գոլ Բանին ուսա-
նիմք: [19]Ապա թէ զմեծամեծս եւ հրաշափառագոյնս գործակցութեամբ
մարմնոյն կատարեսցէ, որպէս մինչ ձեռն տալ զոքանչին Սիմովնի եւ
յարուցանել ի սաստիկ տապոյն կամ զնոյն ինքն զՊետրոս՝ հանդեր-
ձեալ ընկղմիլ ի սաստկութենէ ալեացն եւ հողմոյն, փրկել ձեռամբ եւ
զմատունսն արկանել ի խլացելոյն ականջս եւ զլեզուոյ համերն բուն
հարկանել, եւ որքան սոցա իցեն ազգակիցք, զմիաւորութեան անքա-
կութիւն յայտնապէս ցուցանէ: [20]Վասն որոյ ասէ երանելին Բասիլիոս
318ա ի տրամաբանելն, // թէ՝ «Բնութեամբ է մարդկային մարմինն Քրիստո-
սի, իսկ միաւորութեամբ տնաւրէնութեան՝ աստուածային»††: [21]Իսկ

* Ա Յովհ. Ա 2
† Յովհ. Գ 13
‡ Եփես. Դ 10
§ Յովհ. Զ 50, 59
¶ Մատթ. Ը 3
** Յովհ. ԺԱ 43
†† Կնիք հաւատոյ ընդհանուր սբ Եկեղեցւոյ, Անթիլիաս, 1998 թ. (= ԿՀ), էջ 86—87. ԽԹ, էջ 125, 158

իմաստունն Գրիգորիոս՝ «Ամենեքեան սոքա, որք մի անգամ երկնային
զտէրունական մարմինն անուանեն,— ասէ,— յաղագս առ Աստուածն
Բան միաւորութեանն ասեն»*: [22]Իսկ միաւորութիւնն այն ոչ շփոթու-
թիւն եւ լուծումն ընդունի: [23]Որպէս վկայէ ձայնակցելով սրբոցն ամե-
նեցունց Ոսկեբերանն Յովհաննէս. «Մի՛ շփոթեսցուք եւ մի՛ անջրպետ
ի մէջ արկցուք, քանզի միութիւնն խոստովանիմ եւ ոչ քայքայումն
ինչ կամ լուծումն այսր բնութեան յայն կամ այնր՝ յայս, այլ միացեալ,
մի եղեալ»†: [24]Քանզի թէպէտ եւ խոստովանիմք զԲանն մարմին եղեալ՝
ըստ Յովհաննու ձայնին, ոչ շփոթութիւն կրել Բանին իշխեմք ասել,
բայց միայն զիւրն ամբողջ ըստ բնութեան պահեալ էութիւն եւ անքա-
կաբար միացեալ ըստ ճշմարտութեան ընդ իւրումն մարդկութեան:
[25]Որպէս իմաստունն ասէ Կիւրեղ՝ հայրապետ Աղեքսանդրացւոց քա-
ղաքին ի խոստովանիլն իւրում, թէ՝ «Եղեւ Բանն մարմին, ոչ եթէ շփո-
թութիւն ասեմք բնութեանցն, այլ կացեալ մնացեալ անքակաբար եւ
անշփոթապէս ի վեր քան զմիտս եղելոց»‡: // [26]Եւ Պրոկղոս Կոստան- 318բ
դինու հայրապետն. «Ի միասին,— ասէ,— եկին բնութիւնքն, եւ առանց
շփոթութեան եկաց միաւորութիւնն»§: [27]Եւ այլ բիւրք վկայութիւնք
են ի գիրս հարցն սրբոց անշփոթ եւ անայլայլելի ճշմարիտ միաւորու-
թեանն այնորիկ՝ անանջատականի եւ անքակելոյ, յորոց գոյ իմանալ
ուսումնասիրաց եւ ցանկացողաց ճշմարտութեանն, թէ ոյք են ըստ
բնութեան ասացեալքն եւ ոյք՝ ըստ միաւորութեան, որովք երկոքումբք
համանգամայն պարտ էր Սեւերեայ եւ Յուլիանեայ ուղեւորիլ ի միա-
սին առ հաւատոյն բան, յորմէ մոլորեալք եւ ըստարտուղեալք իւրա-
քանչիւր ոք ի նոցանէ՝ գտան հակառակ ճշմարտութեանն եւ միմեանց:
[28]Քանզի Սեւերոս, անգիտացեալ ամենեւին զեղանակ անճառելւոյ մի-
աւորութեանն, զհասարակականի մարդոյ իրս եւ իմաստս իշխեաց առ-
նուլ ի վերայ Տեառն՝ զմարմին նորա զկենարար փոփոխելի ասելով եւ
ապականացու մինչեւ ցյարութիւնն եւ զմարդկային կամաւորաբար եւ
անպարսաւ կիրսն ապականութիւն անուանէ որպէս Թէոդոտոսն, զորս
պարտն էր ասել տնտեսութիւն անճառելի եւ խորհուրդ սքանչելի ի

* ԽԹ, էջ 158
† ԽԹ, էջ 159
‡ ԽԹ, էջ 159
§ ԽԹ, էջ 159

319ա փրկութիւն ամենայն հաւատացելոց՝ // ըստ առաքելոյ բանին*: [29]Իսկ
Ցուլիանէ ոչ իմացեալ զԲանին Աստուծոյ ի մարդկային բնութենէն Ա-
ստուծոյ մարդեղութիւն՝ յանդգնեցաւ ասել մարմին հրեշտակական եւ
երկնային ունել նմա: [30]Զոչն է եւ զոչն անուանելի, քանզի ոչ միայն
ասաց անչարչարելի եւ անմահկանացու զՓրկչին մարմինն, այլ եւ
անեղ եւ անսկիզբն եւ անժամանակ՝ ոչ զգուշացեալ, եթէ պատճառս
տայ անպատճառ եւ հերձուածողական կարծեաց, վասն զի անեղ ասել
եւ անժամանակ կամ անսկիզբն՝ Աստուածութեան Երրորդութեանն
վայել է: [31]Իսկ վասն Բանին Աստուծոյ մարմնացելոյ ասէ առաքեալ
այսպէս. «Իբրեւ եկն լրումն ժամանակաց, առաքեաց Աստուած զՈր-
դին իւր, որ եղեւ ի կնոջէ եւ եմուտ ընդ աւրինաւք»†: [32]Զի թէ անսկիզբն
իցէ մարմինն եւ անեղանելի կամ առանց ժամանակի, այն, որ ի լրման
ժամանակաց գործեցաւ անճառելի տեսչութեամբ աստուածայնով, ապա
եղիցի չորրորդութիւն Երրորդութիւնն. [33]իսկ եթէ մարդ սոսկ իցէ ծնեալն
ի Մարիամայ Կուսէ սրբոյ եւ ապականացու մինչեւ ի յարութիւնն,
ապա ամենեքեան, որ յետ յարութեանն զգենլոց են զանապականու-
թիւն, եղիցին քրիստոսք եւ յիսուսք: [34]Եւ ո՞ւր է Միածինն. եւ դար-
319բ ձեալ՝ ոչ // Բանն մարմին եղեւ, այլ ոմն մարդ աստուածացաւ, եւ ոչն
ըստ բնութեան «աստուածն» եղեւ աստուած ըստ շնորհի: [35]Եւ չորրոր-
դութիւն դարձեալ պաշտիցի յեկեղեցւոջ՝ յԵրիցն ըստ բնութեան Ա-
ստուածոց անբնաւոր ոմն «աստուած» եւ պիտակ՝ եղեալ աթոռակից եւ
համաստուած, շնորհաւք որդիացեալ որպէս մարդիկ եւ ոչ ըստ բնու-
թեան, անուանեալ միայն եւ ոչ էապէս Աստուած, սկսեալ գոլ եւ անուա-
նել «աստուած», եւ ոչ անեղանելի եւ ի բնէ Աստուած՝ ընդ ամենայն
հաւատացեալս կոչելով ըստ շնորհի Հայր Աստուած եւ ոչ ըստ բնու-
թեան, մարդ ոմն աստուածազգեաց ըստ Մովսէսի եւ Սամուէլի եւ այ-
լոց սրբոցն, եւ ոչ Աստուած ըստ ճշմարտութեան, ոչ Տէր տանն, այլ ի
տանէն ինքն որպէս Մովսէս, ոչ տանն արարիչ, այլ արարած ըստ տանն:
[36]Ստեաց ապա Յովհաննէս՝ «Բանն մարմին եղեւ»‡, քանզի պարտ էր
ասել ըստ մոլորելոցն, թէ մարդն Աստուած եղեւ: [37]Զայսոսիկ Պաւղոս
Սամոստացի, զայսոսիկ եւ Դիոդորոս Տարսացի, եւ Մոփսուեստացին
Թէոդորոս, զայս եւ ամբարիշտն Նեստորիոս: [38]Զի թէ ըստ աւրինակի

* Տես Հռոմ. Ա 16:
† Գաղ. Դ 4
‡ Յովհ. Ա 14

այլոց էր ծնունդն՝ ի ցանկութենէ եւ ի քնոյ եղելոյ եւ ի կամաց մարմ-
նոյ, այսինքն յամուսնութենէ, ասասցի ապականակիր, իսկ եթէ աւ-
րէնք բնութեանն // քակտեցան ի ծննդեան նորա միայն, ո՞ւր երեւեսցի ի նմա հետ ապականութեան: [39]Լուա՞ր զԱթանասին, զի ասէ. 320ա
«Մարմնանալն Քրիստոսի յանամուսնութենէ եւ առանց մեղաց էր, եւ
ո՛չ գտաւ ի նմա ապականութիւն»*, քանզի Աստուած էր՝ մարմնացեալ
ի Կուսէ, Քրիստոս: [40]Ասէ դարձեալ նոյն Աթանասիոս. «Զի թէ Այն, որ
եկն նորոգել իւրով մարմնով զմարմինս մահկանացու, ըմբռնեցաւ յա-
պականութենէ, իսկ զիա՞րդ կապեաց զհզաւրն եւ փրկեաց ի նմանէ
զանձինս որդւոց մարդկան, եւ եթէ զմեզս աշխարհի ասաց բառնալ, որ
է մայր ապականութեանն, իսկ զիա՞րդ ասիցեն մոլորեալքն, եթէ ապա-
կանացու էր մարմինն Քրիստոսի»†: [41]Ասէ եւ Գրիգոր Սքանչելագործ՝
եպիսկոպոսն Նէոկեսարու. «Որ ոչ խոստովանի զնա անյեղլի հոգւով,
անապականելի մարմնով, որպէս եւ գրեալ է, նզովեա՛լ եղիցի»‡: [42]Եւ
դարձեալ, զի ասէ. «Մարմին նորա ոչ ետես զապականութիւն»§: [43]Եւ
այդոքիկ սրբոցն:

VIII. [1]Բայց տեսցուք եւ այսպէս, սիրելի՛, եթէ յետ յարութե՞ան
եղեւ անապական Քրիստոս: [2]Մ՞ էր, որ նախ քան զչարչարանսն զա-
պականեալ ի գերեզմանի մարմինն Ղազարու առանց ապականութեան
այրէն դարձոյց, եւ զի՞ թողից զայլն ամենայն մեծամեծս, // զոր առ- 320բ
նէր յառաջ քան զյարութիւնն, անապական ասացեալ յոմանց Քրիս-
տոս, եւ ըստ մերում դաւանութեան՝ Աստուած ճշմարիտ նոյն ինքն: [3]Մ՞
դարձեալ, որ ի խաչին բեւեռեալ գոլով՝ զբազմաժամանակեայ ապակա-
նութեամբ հողացեալ մարմինս սրբոցն յարոյց, որք եւ յետ յարութեան
նորա մտին ի քաղաքն սուրբ եւ երեւեցան բազմաց: [4]Բայց սքանչելին
Պետրոս ոչ պատկառէր ասել «Որդի Աստուծոյ»¶: [5]Այլ մեք խոստովանեա-
ցուք զնա Աստուած ճշմարիտ անդստին յորովայնէ Կուսին նախ քան
զխաչն եւ զյարութիւնն եւ մինչեւ յաւիտեանս յաւիտենից, վասն զի

* Եթ, էջ 118, 132. «Գանձասար» Բ, էջ 201
† «Գանձասար» Բ, էջ 201
‡ «Գանձասար» Բ, էջ 198. Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Ալեքսանդրեայ Հա-
կաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի, Ս. Էջմիածին, 1908
թ. (= Տկ), էջ 190
§ Գործ. Բ 31, ԺԳ 35
¶ Մատթ. ԺԶ 16

«Յիսուս Քրիստոս երէկ եւ այսաւր, նոյն եւ յաւիտեանս»*: [6]Իսկ զկամաւորաբար մարդկային կիրսն՝ զքաղցն եւ զծարաւն եւ զայլն ամենայն մի՛ ոք իշխեսցէ անուանել ապականութիւն, այլ տնտեսութիւն փրկական, քանզի էր համանգամայն ե՛ւ Աստուած, ե՛ւ մարդ նոյն ինքն եւ ոչ երկու դէմք: [7]Իսկ մարմին նորա թէպէտ եւ էր ըստ բնութեան մարդկային, այսինքն ի մերմէ մարդկային էութենէ եւ մահկանացու եւ ոչ երկնային մարմին ինչ կամ հրեշտակական, այլ ըստ միաւորութեանն եղեւ աստուածային, վասն զի իւրացոյց Բանն զոր ի Մարիամայն
321ա է//առ՝ մտաւոր եւ անձնական մարմին, եւ է իւր նորա յատուկ մարմինն, որպէս իւրաքանչիւր ուրուք մարդոյ իւր ասի մարմինն իւր: [8]Քանզի ճշմարտապէս միաւորեաց Բանն ընդ ինքեան զմարդկութիւնն, եւ այսր աղագաւ ասացին հարքն. «Մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ»†: [9]Զի յերկուս անձնական բնութիւնս որոշել զՔրիստոս եւ յերկուս կամս եւ ներգործութիւնս՝ երկուց դիմաց ունի նշանակութիւնս, որով լինի չորրորդութիւն Երրորդութիւնն, որպէս վերագոյնն ասացաք: [10]Երկոքումբք սոքաւք վարել պարտ է միանգամայն՝ բնութեան իրաւք եւ միաւորութեան ի վերայ Քրիստոսի, զի էր մարմինն անձնաւոր մարդկային, քանզի մարդ էր Մարիամ, յորմէ մարմինն, իսկ ըստ միաւորութեանն՝ աստուածային, որպէս յոլովակի ցուցաւ: [11]Յապականացու բնութենէ առեալ՝ եղեւ անապական, ի մահկանացուէ՝ անմահ ըստ միաւորութեան տնաւրինականի, այլ մեռեալ ճշմարտապէս վասն մեր իւրովն մարմնով՝ կամաւ եւ ոչ ի հարկէ՝ Բանին յիւրն բնութիւն ըստ էութեան ոչ ինչ կրեալ վասն անչարչարականն գոլոյ ըստ էութեան: [12]Սակայն վասն իւրութեան մարմնոյն նորա ասին չարչա-
321բ րանքն եւ մահն եւ այլն ամենայն, զոր կրեացն մարմն//ով, քանզի մահուամբ մարդոյ փրկութիւն լինել մարդկան անհնար էր: [13]Աստուծով փրկեցաք, քանզի Աստուած է խաչեալն եւ ի չարչարանսն անչարչարելի մնացեալ, եւ ոչ է պարտ զբանս Գրոց կամ զկիրս, զոր ինքն կրեաց, եւ զգործս, զոր գործեաց, յերկուս բաժանել եւ դնել զոմանս Աստուծոյ լոկոյ եւ զոմանս՝ մարդոյ առանձին, [14]այլ զամենայն՝ թէ՛ բարձրա-

* Երր. ԺԳ 8

† Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899 թ., Աթանասի ասացեալ արտադրութիւն առաքելական՝ յաղագս աստուածայնոյն մարմնաւորութեան Աստուծոյ Բանի (= Աթանաս), էջ 281

գոյնք իցեն եւ թէ՛ խոնարհագոյնք, Բանին Աստուծոյ մարմնացելոյ, որպէս յառաջնում քան զայս թղթին ցուցաք, ուր եւ զԿիւրղի զերկոտասան գլուխսն յաղագս այդորիկ գրեալ առ Նեստոր կարգեցաք*: [15]Իսկ զի Եւտիքէս ասաց. «Խոստովանիմ զԲանն Աստուած՝ յարգանդի Կուսին կերպացեալ, տպաւորեալ ի պատկեր մարդոյ, այլ ոչ եթէ յարարածական բնութենէս յինքն խառնեաց, զի անխառն է Աստուածութիւնն եւ անյաւդական»†: [16]Ուրանայ սա յայտնապէս զմարդեղութիւն Բանին Աստուծոյ՝ առ աչաւք եւ նմանութեամբ իմն ասելով եւ իբրեւ ընդ ցնցուղ անցեալ ընդ Մարիամ, որպէս ջուր ի փողոյ կամ ոսկի ի կաղապարէ եւ այլ ինչ նոյնպիսի. ձեւ միայն եւ ոչ բնութիւն գոյացութեան առնու որպէս սահմանելով: [17]Սակայն զայսպիսի գործիս ուղղադա-
322ա ւանն Գրիգոր Աստուած//աբան յառաջ քան զնա յոլովիւք ամաւք կշտամբեաց՝ ասելով այսպէս. «Եթէ ոք իբրեւ ընդ խողովակ անցեալ ասէ, այլ ոչ ի նմանէ ստեղծեալ իւր մարմին աստուածաբար, միանգամայն եւ մարդկաւրէն՝ աստուածաբար, զի առանց առն, եւ մարդկաւրէն, զի աւրինաւք ծննդեան, նզովեսցի»‡: [18]Արդ, պարտ է ոչ ուրանալ Բանին մարմնացելոյ՝ կրեալ զմերս տնաւրինաբար, բայց զապականութիւն մեր, որ ի կրիցն եղեալ ի մեզ, ոչ կրեաց անապականագործն Քրիստոս, որում փառք յաւիտեանս:

<ԺԳ>

ՆՈՐԻՆ ԴԱՐՁԵԱԼ

I. [1]Յառաջնում քան զայս, զոր խնդրեցեր, մատենի, ըստ կարողութեան արարի, ըստ բանին հաւատոյ, ըստ սրբոց հարցն աւանդութեան, ժողովումն: [2]Բայց զի վասն չարափառացն դժնէութեան զվկայութիւն Սրբոց Գրոց, որ յաղագս խաչելութեանն փրկական Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հրամայեցեր սակաւուք տալ առ ի յանդիմա-

* Ակնարկում է [ԺԴ XXIV 1 — XXVII 3], ուր Կիւրեղի որոշ նզովքներ բացակայում են՝ ըստ երեւոյթին ձեռագրական աղաւաղումների պատճառով:

† ԽԹ, էջ 174

‡ ԽԹ, էջ 174

նութիւն անհանճարութեան նոցա, առաքեցի ձեզ համառաւտագոյն՝ մերձ եղեալ եւ զհարցն ուղղափառաց, որքան դիպողագոյն ժամուս եւ ձեր խնդրոյ էր բան: [3]Բայց կարեւոր է նախ զկարծեաց նոցա յայտնել դարձեալ զամբարշտութիւն, ոչ զի ՉԱՏԱԳՈՎ ԱՍՏՈՒԱԾԱՅՆՈՅՆ ԼԻ-
322բ նիցին բնութեան՝ ուրանալ//ով զչարչարանսն, այլ զի յառանձնական մարդ զչարչարանսն, որպէս զբնաւ իսկ զտնօրինականսն կրթեսցեն եւ եղծանիցեն զփրկութեան մերոյ խորհուրդ, որ ի ձեռն չարչարանաց Որդւոյն Աստուծոյ, զսերմանեալն ի Նեստորէ եւ անպատկառապէս քարոզեալ ի ժողովոյն Քաղկեդոնի զերկակացն բան ի վերայ միոյն Քրիստոսի: [4]Յոյժ հռչակեցուցանեն յիմարաբար յարակցութիւն միայն մարդոյ առ Աստուածն Բան եւ ոչ Բանին մարմին լինել ըստ Յովհաննու խոստովանին:

II. [1]Արդ, զի բաւականապէս տուան ձեզ յաղագս երկուց բնութեանց յատկապէս ի նոցանէ ասելոյն լուծմունք եւ հակաբանութիւնք, ի հայցելին ձեզ եկեսցուք: [2]Ասեմք չարչարեալ զԲանն ոչ ըստ ինքեան եւ յիւր բնութիւն, այլ իւրով մարմնովն, եւ ոչ այլոյ ուրուք զմարմինն գիտեմք, այլ իւր Բանին, քանզի յատուկ նորա էր: [3]Զի թէպէտ եւ անչարչարել <ի> էր ըստ ինքեան Բանին բնութիւն, սակայն յաղագս անբաժանելի միաւորութեանն ընդ մարդկայնոյն բնութեան իւր ինքեան ասին ամենայն տնաւրինականքն կիրք: [4]Եթէ ոչ մարդացաւ Բանն ըստ ճշմարտութեան, այլ ի մարդ բնակեաց, ոչ ապա չարչարեցաւ: [5]Իսկ
323ա եթէ անճառ միաւ//որութեամբ ճշմարտապէս մարդ եղեւ՝ զԱստուածութեանն ոչ այլայլեալ բնութիւն ամենեւին, ուրեմն ինքն չարչարեցաւ՝ յանչարչարութիւն ոչ վնասեալ: [6]Եւ եթէ երկու իցեն որդիք՝ ոմն՝ յԱստուծոյ Հաւրէ եւ ոմն՝ ի Մարիամայ, ոմն՝ ըստ բնութեան եւ ոմն՝ ըստ շնորհի, որպէս ասեն նոքա, ապա ոչ Աստուծոյ են չարչարանքն, այլ մարդոյ միայն՝ առասութեամբ անուան որդւոյ պատուեցելոյ, որով ոչ եղիցի փրկութիւն: [7]Այլ վասն զի մի է Միածինն, թէ եւ մարմնացաւ, նորա չարչարանաւքն փրկեցաք: [8]Լո՛ւր նմին ինքեան, որ ասացն. «Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զՈրդին իւր Միածին ետ»*. յայտ է, թէ ի չարչարանս եւ ի մահ խաչի: [9]Յորմէ ուսաւ եւ Պաւղոս. «Հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա»†. [10]ոչ երկրորդ եւ ըստ շնորհաց որդւոյ, քանզի ոչ այնպէս գիտէ Պաւղոս եւ ոչ քարո-

* Յովհ. Գ 16
† Հռոմ. Ե 10

զէ այսպէս, այլ Միածնի եւ ըստ բնութեան Որդւոյ՝ մարդ եղելոյ յԱստուածածնէն Մարիամայ, զորմէ ասէ վասն Հաւր, թէ՝ «Ցիւր Որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա»*:

III. [1]Զի՞նչ առ այսոսիկ կարասցեն ասել ոչ փրկեալքն կամ ո՞ւր դիցեն զասելն Յովհաննու վասն Բանին մարմնացելոյ եւ չարչարելոյ. «Սա է ճշմարիտ Աստուած եւ կեանք յաւիտենական»†: [2]Մ՚յր ի
// մարդկանէ մահ կարաց կամ կարասցէ տալ փրկութիւն աշխարհի: 323բ
[3]Եւ եթէ յանուն Քրիստոսի կոչիմք քրիստիանոսք, եւ նա է ծնեալն ի Կուսէ եւ չարչարեալն, որպէս ասէ մեծն Պետրոս. «Քրիստոսի չարչարելն մարմնով վասն մեր»‡, զի՞րդ կոչեն զանուն նորա ի վերայ ինքեանց, թէ սոսկ մարդ իցէ, աւտարացեալքն ի Բանէն մարմնացելոյ, քանզի յանուն մարդոյ անուանեալքն ոչ են աստուածապաշտք: [4]Իսկ մեք Աստուծոյ խոստովանիմք զմահն, որպէս զամենայն գործս եւ կիրս նորա, եւ յանուն Աստուծոյ անուանիմք, վասն զի ուսաք ի Թովմայէ զբեւեռեալն ի խաչին եւ աշտէիւ խոցեալն Տէր եւ Աստուած խոստովանել մեր§: [5]Զորմէ եւ Յովհաննէս աստուածաբանէ. «Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուաքն, որում եւ ականատեսն իսկ եղաք, ընդ որ հայեցաք, եւ ձեռք մեր շաւշափեցին ի վերայ Բանին կենաց»¶: [6]Արդ, ո՞րպէս ականատեսի անտեսանելին, եւ Բանն շաւշափիլ ձեռաւք ասի: [7]Յաղագս ընդ մարմնոյ միանալոյն. այսպէս չարչարի Անչարչարելին եւ մեռանի Անմահն, ոչ ինչ յիւրոցն եւ զիւր, զի այսպէս ասացից, եւ զինքն այլայլեալ կամ փոփոխեալ. [8]զի որպէս ոչ յեղաւ այլայլեալ մարմինն յանմարմնութիւն ըստ բնութեան, այլ աստուածացաւ միաւորութեամբն ընդ Բանին, այսպէս եւ Բանն ոչ փոփոխ//եցաւ յինքն- 324ա
նէ եւ յիւրոցն բնաւորականաց, թէպէտ եւ մարդ ըստ ճշմարտութեան եղեւ եւ չարչարեցաւ: [9]Յաղագս այսորիկ ասեմք զնա Աստուած Համանգամայն եւ մարդ զնոյն, անտեսանելի եւ տեսանելի, անշաւշափելի եւ ըմբռնելի, անչարչարելի եւ չարչարելի, Հաւր իմաստութիւն եւ զաւրութիւն՝ անգիտացեալ առ տկարանալովն, Որդի Աստուծոյ եւ Որդի Մարդոյ, քաղցեալ եւ լցուցիչ քաղցելոց, ծարաւի եւ աղբիւր կե-

* Հռոմ. Ը 32
† Ա Յովհ. Ե 21
‡ Ա Պետ. Դ 1
§ Տես Յովհ. Ի 28:
¶ Ա Յովհ. Ա 1

նաց, այլ եւ աղբիւրացուցիչ զծարաւիս: [10]Եւ ոչ ինչ ըստ մասին բաժանելով դնեմք առանձին Աստուծոյ եւ առանձին մարդոյ, քանզի «մի Տէր մեր Յիսուս Քրիստոս»*: [11]Մի՞ արդեաւք անգիտացաւ Պաւղոս՝ «զՏէրն փառաց ի հրէից խաչեալ»† ասելով, եւ ոչ զոր ի հրէից մարդ նոքա անուանեն, եթէ Տէր փառաց է խաչեալն, ոչ է ապա մարդ յատուկ: [12]Ասէ եւ երանելին Գրիգորիոս. «Արիւն Աստուծոյ եւ չարչարանս լսելով՝ մի՛ անաստուածաբար ի վայր անկցիս, իբրեւ Աստուծոյ ջատագով»‡: [13]Անաստուածութեան ուրեմն է գայթակղելն ի չարչարանս Փրկչին: [14]Որոց դիւրին է, զոր ինչ կամիցին՝ ասել եւ զախորժակս մտաց իւրեանց աւրէնս սահմանել հակառակ աւրինաց Հոգւոյն Սրբոյ եւ հարցն աւանդութեան: [15]Լո՛ւր եւ միւսոյ բանի նորին առն սրբոյ՝ «Աստուած խաչեալ,— ասէ,— արեգակն խաւարեալ... արիւն եւ ջուր
324բ ի կող//ից հեղեալ. մին՝ իբրեւ մարդոյ եւ միւսն՝ առաւել քան զմարդոյ»§: [16]Յայտնապէս զանամաւթութիւն նոցա խայտառակելով՝ ցուցանէ զՉարչարեալն Աստուած գոլ, զի ոչ զվայելչականն միայն մարդոյ զարիւնն, այլ եւ ջուրն հոսեալ ի կողից տեսանեմք, որով ցուցանի ճշմարտութիւն Աստուածութեան նորա: [17]Ոչ ասեմք չարչարելի զԱստուածութիւն ըստ բնութեան եւ ոչ մարդ սոսկ զՉարչարեալն, այլ զբովանդակն՝ Աստուած ճշմարիտ: [18]Քանզի անչարչարականի էութեան բնաւորապէս միացեալ ընդ չարչարականին՝ իւրացոյց զնորայն, վասն որոյ միոյ եւ նորին զամենայն խոստովանիմք եւ ըստ մասին ոչ ինչ բաժանեմք զՔրիստոսի ո՛չ գործս եւ ո՛չ բանս եւ ո՛չ կիրս, զի «մի է Տէր մեր Յիսուս Քրիստոս»¶: [19]Վկայեն եւ տարերք անշունչք եւ մարմինք սրբոց յարուցեալք ի գերեզմանաց Աստուածութեան խաչելոյն. [20]զի ի վեց ժամէ աւուրն խաւարեցաւ արեգակն մինչեւ յինն ժամն, երկիր շարժեցաւ, վէմք պատառեցան, վարագոյր տաճարին ցելաւ յերկուս, եւ յարուցեալքն ի գերեզմանաց յետ յարութեան նորա մտին ի քաղաքն եւ երեւեցան բազմաց, եւ յայտնութիւն կամաւոր եւ աստուածային չարչարանաց նորա, զոր ուրանան հերձուածողք: [21]Քանզի որ-

* Ա Կոր. Ը 6

† Ա Կոր. Բ 8

‡ Սբ Գրիգոր Աստուածաբան, Ի սուրբ Պասքայ, ՄՄ 946, թ. 116բ. ԿՀ, էջ 352 (որոշ խմբագրութեամբ). ՏԿ, էջ 142 (այլ խմբագրութեամբ)

§ Սբ Գրիգոր Աստուածաբան, Ի սուրբ Պասքայ, ՄՄ 946, թ. 126ա. ԿՀ, էջ 353 (աննշան խմբագրութեամբ)

¶ Ա Կոր. Ը 6

պէս լսելոց ահա ի մաւտոյ էք զհայհոյութեան նոցա բարբառս համ// 325ա
առաւտիւ: [22]Զհակառակս խորհելով Գրոց Սրբոց եւ հարցն աւանդութեան եւ նախ առաջին՝ Աստուծոյ ինքեան՝ մարդ սոսկ չարչարեալ ասեն, զոր եւ տաճար Բանին եղեալ անուանեն եւ ոչ զԲանն մարմին եղեալ առանց յեղման եւ այլայլութեան եւ զՈրդին Աստուծոյ յՈրդի Մարդոյ խոստովանեն, զԱնսահմանելին՝ սահմանեալ եւ զԱնտանելին՝ տարեալ մարմնով, զնոյն ինքն չարչարեալ կամաւորութեամբ, թաղեալ եւ յարուցեալ եւ ամբարձեալ յերկինս եւ հանդերձեալ գալ՝ դատել զկենդանիս եւ զմեռեալս, որպէս ուսաք եւ հաւատամք:

Հինգերորդ գլուխ հայհոյութեան ի թղթոյն Ղէովնեայ

IV. [1]«Քանզի ներգործէ երկաքանչիւր կերպ ընդ միւսումն հաւասարութեամբ, որ յատուկ ընկալաւ, զի Բանին գործողի զայն, որ է Բանին, իսկ մարմնոյն կատարողի, որ է մարմնոյն, քանզի ոմն նոցա բացափայլէ սքանչելագործութեամբ, իսկ ոմն ընդ թշնամանաւք ստորանկի»*: [2]Այս Ղէովն Հռոմայեցի՝ աշակերտ ուսմանն Նեստորի, զնորայն հաստատել կամելով, գրէ առ Փղաբիանոս աղանդակից իւր՝ եպիսկոպոս Կոստանդինուպաւլսի, զտասն եւ չորս գլուխս իւրոյ հայհոյութեանն, հակառակ Եւտիքոսի վանապետի, որ առ աչաւք զմարմնաւոր//թիւն Տեառն ասէր՝ զհայհոյութիւնն հայհոյութեամբ խափանել 325բ
կամելով. [3]զոր ընթերցեալ յերկրորդ ժողովին Եփեսոսի՝ նզովեցին միաբան զթուղթն եւ զորս այնպէսն խորհին եւ լուծին ի պատուոյ քահանայութեան եւ զայլս ոմանս համախոհս նորին: [4]Իսկ յետ մահու թագաւորին Թէոդոսի ժողովեալքն ի Քաղկեդոն ընկալան զթուղթն կործանական եւ զլուծեալսն ի քահանայութենէ զԹէոդորիտոս եւ զՓղաբիանոս եւ զայլսն, քանզի աչառանաւք ամբարշտին Մարկիանոսի ուրացան զճշմարիտ Թագաւորն: [5]Եւ յոլովք յերկեղէ ըմբռնեալք սպառնալեաց գլորեցան ի ժողովոյն, բաժանեցին ըստ խոտեալ թղթոյն զմին Քրիստոս յերկուս, կերպ եւ կերպ՝ ըստ որոշման անուանելով եւ ի վերայ երկաքանչիւրոցն զանազանապէս բաժանելով զգործսն եւ զբանս եւ զոմն ումեմն կցորդելով, որպէս այլ այլում: [6]Եւ տե՛ս՝ զիարդ ձայնակիցք են ամենեքեան մոլորեալքն յամբարշտութիւն:

* Տկ, էջ 78 (աննշան խմբագրութեամբ. որ- որպէս (Տկ), կատարող- կատարել (Տկ))

Նեստորի հերձուածողի վեցերորդ հայհոյութիւն

V. [1]«Զայս Յիսուս յարոյց Աստուած»*,— ասէ. զերեւելիս եւ զայս զտեսանելիս աչաց, զբեւեռեալն ի փայտի, զշաւշափեալն ի ձեռացն Թովմայի՝ զ'առ նա աղաղակիչն: [2]«Շաւշափեցէք զիս եւ տեսէք, զի
326ա ոգի մարմին եւ ոսկերս // ոչ ունի, որպէս զիս տեսանէք ունել»†: [3]Եւ այսոցիկ աշակերտն հաւանեալ ձայնից եւ շաւշափմամբ խաչեցելոյն մարմնոյ հաւանեալ յաղագս յարութեան՝ զսքանչելագործն փառաւորէր զԱստուած՝ «Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ»‡՝ ո՛չ զշաւշափեալն ասելով Աստուած, քանզի ո՛չ շաւշափմամբ գտանի Աստուած»§: [4]Զսոյն զայս եւ որ սոյնպիսիք իցեն սահմանեցին եւ ի Քաղկեդոն ժողովեալքն՝ առատքն ի չարութիւն:

Նորին Նեստորի յերրորդ մատենէն ի տասներորդ գլխոյն

VI. [1]«Արդ, եթէ միայն զոյր Աստուած, պարտ էր ասել Ապողինարիէ. «Զի՞ զիս խնդրէ<ք սպանանե>¶՝ զԱստուած, որ զճշմարտութիւնն ձեզ խաւսեցայ»**: [2]Սա, որ զի փշոցն ընկալաւ պսակ, սա ասողն՝ «Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ընդէ՞ր զիս ի բաց թողեր»††, սա երեքաւրեայ թաղմանն համբերեաց»‡‡:

---

* Գոբծ. Բ 32
† Ղուկ. ԻԴ 39
‡ Յովհ. Ի 28
§ Տկ, էջ 79: Թէպէտեւ տառացիօրէն հետեւում է Տկ-ին, սակայն խմբագրուած եւ մաքրուած է յունաբանութիւններից (բեւեռեալ- աւրեւեռեալ (Տկ), շաւշափմամբ- որոնմամբ (Տկ), ասելով- առասելով (Տկ), սքանչելագործ- հրաշագործ (Տկ)):
¶ Ըստ Տկ-ի
** Յովհ. Է 20, Ը 40
†† Մատթ. ԻԷ 46
‡‡ Տկ, էջ 79: Տառացիօրէն հետեւում է Տկ-ին աննշան ուղղումներով (երեքաւրեայ- եռաւրեայ (Տկ)):

Թէոդորիտեայ հերձուածողի ի հակաճառութենէ Բժ-երորդ նզովիցն հայհոյութիւնք

VII. [1]«Կիրք կրելոյն յատուկ, քանզի <Ան>կրելին կրիցն է վերագոյն: [2]Կրեաց այսուհետեւ ծառային կերպ՝ ընդ նմա գոլով, յայտ է զի՝ Աստուծոյ կերպին»*:

Եւ դարձեալ

VIII. [1]«Ուրեմն ո՛չ Աստուած ախտակրեալն, այլ ի մէնջ առեալն յԱստուծոյ մարդ, վասն որոյ երանելին Եսայիաս գոչէ. «Մարդ ի հրուածս»†: [2]Եւ ինքն Տէրն Քրիստոս առ հրեայսն ասէր. «Զի՞ զիս սպանանել խնդրէք՝ զմարդ, որ զճշմարտութիւն ընդ ձեզ խաւսեցայ»‡: [3]Արդ, սպանանի ո՛չ ինքն կենդանութիւնն, այլ զմահկանացուն ունող բնութիւն: [4]Եւ զայս ուսուցանելով այլուր Տեառն՝ առ հրեայսն ասէր. «Քակեցէ՛ք զտաճարս // զայս եւ յերիր աւուր յարուցանեմ զդա»§: 326բ
[5]Ուրեմն քակեցաւ ի Դաւթայն, իսկ յարոյց զսա զքակեալս ի Հաւրէ անախտաբար ծնեալն՝ նախ քան զյաւիտեանս ի Հաւրէ ծնեալն միածին Աստուածն Բան»¶:

Ի սահմանէ ժողովոյն Քաղկեդոնի հայհոյութիւնք

IX. [1]«Զմին եւ զնոյն Քրիստոսն Յիսուսն՝ զՈրդին եւ զՏէրն, զՄիածինն յերկուս բնութիւնս անխառնաբար, անյեղապէս, անբաժանաւրէն, անջատակի ծանուցեալ»: [2]Եւ արդ, տես՝ զիարդ ձայնակից են միմեանց ժողովն Քաղկեդոնի եւ Նեստոր, նմանապէս եւ այլքն հայհոյիչք: [3]Որպէս յորժամ ասէ Նեստոր. «Անորիշ է յերեւելոյն Աստուած, յաղագս

---

* Տկ, էջ 79—80: Տառացիօրէն հետեւում է Տկ-ին:
† Ես. ԾԳ 3
‡ Յովհ. Ը 40
§ Յովհ. Բ 19
¶ Տկ, էջ 80: Տառացի: Սուրբգրային վկայակոչութիւնները խմբագրուած են ըստ Աստուածաշնչի ընդունուած խմբագրութեան, մաքրուած են որոշ յունաբանութիւններ՝ բառեր եւ ոճական ձեւեր, օրինակ՝ միածին- մէնածին (Տկ), զբագին- զտաճար (Տկ): Բնագրի «զի Հաւրէ» սխալ ձեւը ուղղուած «ի Հաւրէ»՝ ըստ Տկ-ի:

այսորիկ որոշեցելոյն զպատիւն ոչ որոշեմ, զատուցանեմ զբնութիւնսն, այլ միաւորեմ զերկրպագութիւնն պատճառին», [4]եւ ժողովն Քաղկեդոնի զմի եւ զնոյն Քրիստոս Որդի եւ Տէր խոստովանել, եւ բաժանեն դարձեալ անամաւթաբար յաւելուածով երկուց բնութեանցն՝ մարդ ասելով շարայարեալ Աստուծոյ Բանին եւ Որդի կոչեցեալ համանուանաբար, եւ արժանաւորութեամբ զունակական միաւորութիւնն ստացեալ, բայց որոշեալ բնութեամբ: [5]Որպէս զի մի՛ ըստ ճշմարտութեան մարդ եղեալ հաւատացի Որդին Աստուծոյ՝ մնալովն Աստուած, քանզի թէ յերկուս բնութիւնս անջատանի մին Տէր Քրիստոս, զիա՞րդ երկաքանչիւրքն
327ա կարասցէ մի գոլ կամ ասիլ: [6]Վասն զի // երկուցն եւ այլագոյիցն յատկապէս եւ դէմք երկու, որպէս եւ բնութիւնք: [7]Զ՚առ ի Նեստորէ ասացեալսն չինեն վերստին չարաչար՝ զՔրիստոսն եւ զՈրդին եւ զՏէրն անուն ի վերայ երկուց բնութեանցն սահմանելով եւ ոչ ուրեք Աստուած զմաչեալն խոստովանելով՝ նորին դատապարտութեան եւ նզովից եղիցին արժանաւոր ժառանգորդք: [8]Քանզի ոչ ինչ ընդհատ Նեստորի եւ Թէոդորիտեայ սահմանեաց ժողովն ամբարշտեալ Քաղկեդոնի՝ զԼեւոնի* չար եւ դառնագոյնի ծերունոյն Դ-ան գլուխս հայհոյութեանն ի սահմանն հաւատոյ ընդունելով: [9]Քանզի ձեւանան ասել մի Տէր եւ դառնան բաժանեն յերկուս առանձնացեալ բնութիւնս անխառնաբար, անյեղապէս, անբաժանաւրէն, անանջատակի ծանուցեալ, [10]ըստ որում աւրինադրեաց նոցա Նեստորիոս յասելն իւրում այսպէս. «Ասա՛ զվերառողն թէ Աստուած՝ յաւել զվերառեալն թէ ծառայի կերպ, ի վերայ ա՛ծ յետ այսոցիկ զշարայարութեանն արժանաւորութիւնն, թէ երկուցն ճոխութիւն հասարակական, երկուցն նոյն արժանաւորութիւն բնութեանց մնացելոց. խոստովանեա՛ զարժանաւորութեանն միաւորութիւն»: [11]Եւ դարձեալ նոյն ինքն ասէ. «Ոչ իսկ դարձեալ այլ որդի եւ դարձեալ միւս.
327բ նոյն ինքն Որդի է կրկնապատ//իկ ո՛չ արժանաւորութեամբ, այլ բնութեամբ»: [12]Եւ այլուր դարձեալ նոյն Նեստորիոս՝ «Զկրկնապատիկն առ Քրիստոս զատուցանեմ բնութիւնս, քանզի կրկնապատիկք ահա բնութեամբ, իսկ արժանաւորութեամբ՝ միականք: [13]Քանզի բնութեանցն ճոխութիւն սակս շարայարութեան մի, բնութեանցն ահա ընտանի կարգաւորութեան յամենայն ժամ մնացելոց, իսկ արժանաւորութեանն յարակցելոյ առ ճոխութիւն՝ միական, որպէս ասացի»: [14]Զայսոսիկ զոյգսն անմիջոցաբար աւանդելով յիւրեանցն սահմանի՝ ժողովեալքն ի Քաղկեդոն յաւելելով ասեն այսպէս. «Ոչ ուրեք երկուց բնութեանց զանազանութեանց ի բաց բարձեցելոց յաղագս՝ միաւորութեանն, այլ ապրեցելոյ մանաւանդ յատկութեանն երկաքանչիւրոց բնութեանց եւ ի մի դէմ եւ <ի> մի ենթակայութիւն* շարընթացելոց»: [15]Զայնակիցս այսոցիկ եւ ամբարիշտն Լէոն աղանդեաց՝ յ՚առ Փղաբիանոս թղթին ասելով. «Ապրեցելոյ այսուհետեւ յատկութեան երկաքանչիւրոց բնութեանցն եւ ի մի դէմ շարակցելոյ վերառեցաւ յԱստուածութենէն նուաստութիւն եւ ի զաւրութենէն՝ տկարն եւ յանմահէն՝ մահկանացուն»: [16]Զայսոսիկ եւ առաջնորդ ժողովոյն Քաղկ//եդոնի՝ վայրաքակեալն Թէոդորիտոս, յիւրում հայհոյութիւնսն արտադրեաց իմաստս եւ բանս, որք եւ ի սահմանի ապստամբութեան նոցա չարադրին, որք թէպէտեւ եւ ընդ նմին ինքեան յԵփեսոս ի բաց կործանեցան, ի ժողովոյն Քաղկեդոնի ընկալեալ եղեն, որպէս եւ թուղթն Ղէովնի†: 328ա

* Բնագրում առաւել յաճախ գործածւում է Ղէովն ձեւը:

Թէոդորիտեայ հերձուածողի հայհոյութիւնք

X. [1]«Եթէ այսուհետեւ ոչ եղեւ մարմին Բանն, այլ մարմին բանական էառ, ոչ ինքն բնութեամբ ի Կուսէ ծնանի՝ սաղմնացեալ եւ ստեղծեալ եւ կերպացեալ եւ սկիզբն անտուստ գոլոյն առեալ, որ նախ քան զյաւիտեանս Էակն եւ Աստուած գոլով եւ ընդ Հաւր ելով եւ ընդ Հաւր ծանուցեալ եւ երկրպագեալ, [2]այլ իւր տաճար ի կուսական որովայնի ստեղծելով էր ընդ ստեղծեցելումն եւ սաղմնառեցելում եւ կերակրեցելում եւ ծնիցելում: [3]Որոյ աղագաւ եւ զսուրբն զայն Կոյս Աստուածածին առասեմք՝ ո՛չ իբրեւ զԱստուած բնութեամբ ծնող, այլ իբրեւ զմարդ՝ ստեղծողին զնա միաւորեալ Աստուծոյ»‡:

* ԵՆԹԱԿԱՅՈՒԹԻՒՆ բառը տառացի փոխադրութիւնն է յունարէն ὑπόστασις բառի: Ճիշտ թարգմանութիւնն է «անձ» կամ «անձնաւորութիւն»: Սա ցոյց է տալիս ՏԿ-ի թարգմանութեան որակը, սակայն տարօրինակ է, որ այն խմբագրուած չէ Սարկաւագի կողմից:

† IX պարբերութիւնը որոշ կրճատումներով եւ խմբագրութիւններով մէջբերուած է ՏԿ-ից, էջ 199—201:

‡ ՏԿ, էջ 54, 201: Էջ 54-ի եղծուած մասերը կարելի է լրացնել էջ 201-ից:

Եւ յետ այլոց

XI. [1]«Մ՛ի զմարդածին, այլ Աստուածածին զԿոյսն առասեմք, զոմն՝ ստեղծութեամբ եւ կերպութեամբ եւ միաւորութեամբ, իսկ զոմն միաւորութեան եդեալ առաստութիւն»: [2]Առ այսոսիկ ասացաւ ի սահմանէ ժողովոյն Քաղկեդոնի՝ յետ ի բաց թուելոյ զՍուրբ զԵրրորդութիւնն
328բ եւ Տեառնն զներմարդութիւն, որք հաւատով ընդունին եւ առընթ//եր դնեն ո՛չ Աստուծոյ Բանին մարմնաւորութիւն, որպէս ի Նիկիայ սուրբ հարքն ասացին, այլ իբր մարդոյ Ստեղծողին զնա յարակցելոյ ունակաբար: [3]Այսպէս անգոսնեն եւ որք զաստուածային զձայնն խտրեն՝ ոչ որպէս զԱստուած ծնիչ զԿոյսն, այլ որպէս զմարդ բնակիչ ունելով եւ ընդ նմա գոլով զԱստուածն Բան: [4]Քանզի մարդ զչարչարեալն քարոզեն, որպէս թուեցաւ Թէոդորիտեայ եւ Նեստորի, եւ ոչ զմարմնացեալն Աստուած Բանն, որպէս քարոզեցին ի Նիկիա սուրբ հարքն*:

Նորին Թէոդորիտէ

XII. [1]«Ախտակրեաց այսուհետեւ ծառային կերպ՝ ընդ նմա գոլով, յայտ է, թէ Աստուծոյ կերպին»†: [2]Եւ դարձեալ ասէ. «Ուրեմն ոչ է Աստուած ախտակրեալ, այլ առ ի մէնջն յԱստուծոյ առեալ մարդն»‡: [3]Եւ յետ սակաւուց՝ «Սպանանի ոչ ինքն կենդանութիւնն, այլ զմահկանացուն ունող բնութիւն»§:

Նորին¶

XIII. [1]«Մ՛ի է այսուհետեւ երկոքիւք առաքինութեանն կատարեալն եւ ոչ բնութեամբ կատարեալ գոլով: [2]Մ՛ի փորձիւ ուսաւ զհնազանդու-

* Տկ, էջ 201—202: Հմմտ. էջ 54: Խմբագրութիւններ՝ յարակցելոյ- յարեցելոյ (Տկ), ընդ նմա գոլով- ընդ նմա եղով (Տկ), զչարչարեալն- ախտակրեալն (Տկ):

† Տկ, էջ 202, 79—80

‡ Տկ, էջ 202, 80, 137

§ Տկ, էջ 202, 20—21

¶ Տկ, էջ 202, 137: Այս հատուածը Տկ-ի մօտ առկայ է երկու տարբեր խմբագրութեամբ: Սարկաւագն օգտուում է 202 էջի տարբերակից՝ որոշակի խմբագրութիւններ կատարելով, թէպէտ 137 էջի տարբերակն աւելի ստոյգ է իմաստային առումով: Տե՛ս տարբերութիւնները:

թիւնն զայս՝ անգիտանալով նախ <քան զ>փորձութեանն*: [3]Մ՛ի Աստուածն Բան՝ անախտակիրն, անմահն, անմարմինն, այլ ի սերմանէն Դաւթի, առեալն ի նմանէ մահկանացուն, չարչարելին, զարհուրեալն ի մահուանէ»:

Դարձեալ

XIV. [1]«Իսկ ի փորձութեան եղեւ մերոցն ախտակրութեանց առանց մեղաց՝ ի մէնջն յաղագս մեր առեալ բնութիւնն, ո՛չ այսորիկ առողն մերոյ սակս փրկութեան»: // Եւ առ այսոսիկ ասացին ի սահմանի ժողո- 329ա
վոյն Քաղկեդոնի: [2]«Իսկ ոմանք խառնութիւն ի ներքս ածին եւ մի գոլ բնութիւն մարմնոյն եւ Աստուածութեանն վերաստեղծեն եւ ախտակրելի զՄիածնին զաստուածային բնութիւնն խառնմամբն ճոռոմաբանեն»: [3]Քանզի ո՛չ զմարմնացեալն Աստուած ծնաւ ասեն Կոյսն եւ ո՛չ Աստուած զչարչարեալն մարմնով վասն մեր պարտ վարկանին քարոզիչ, որքան ի բանս ամբարշտութեան նոցա է, այլ մարդ՝ զախտակրեալն ըստ մոլար վարդապետութեան ամբարշտին Թէոդորիտեայ: [4]Քանզի յայտնապէս զբանս եւ զիմաստս նենգութեան սահմանեաց ժողովն Քաղկեդոնի, որպէս եւ յաղագս յատկութեան երկուց բնութեանցն ցուցցի: [5]Քանզի ասաց այսպէս Թէոդորիտոս. «Մ՛րպէս արդեւաք ամբարշտութիւն, որք զյատկութիւնս բնութեանցն բաժանեն զնախայաւիտենին Աստուծոյ եւ զ՛առ վերջնաւք աւուրքքս վերառեցելոյ մարդոյն»†:

Նորին

XV. [1]«Ապա ուրեմն հաւատարութեամբ անուանն վարեցեալք՝ իբր զմի Որդի երկրպագեմք զառողն եւ զառեալն, իսկ զբնութեանցն զանազանութիւնս ճանաչեմք»‡:

* Հմտ Տկ 137 էջի

† Տկ, էջ 202—203: Սարկաւագն օգտուում է՝ զգալիօրէն խմբագրելով: Սակայն երբեմն հետեւողական չէ. օրինակ՝ մէկ տեղում ախտակրեալ գործածում է չպչպանալ, իսկ մէկ այլ տեղում թողնում ախտակրեալ:

‡ Տկ, էջ 203, 65

Նորին

XVI. [1]*«Ուրեմն երկաքանչիւրոյ բնութեանն զյատկութիւնսն ասելով զՏէրն խոստովանիմք Քրիստոս»**:

329բ // Նորին

XVII. [1]*«Ոչ ի մարմնոյ բնութիւն անյեղլին յեղաւ բնութիւն, այլ մարդկային վերառեաց բնութիւն եւ զայս ի վեր, քան զհասարակական քահանայապետս կացոյց»*†:

Նորին

XVIII. [1]*«Մի, ահա, որպէս բազում անգամ ասացի, զփառաբանութիւնն մատուցանեմք Տեառն Քրիստոսի եւ զնոյն համանգամայն Աստուած եւ մարդ խոստովանեմք:* [2]*Քանզի զայս մեզ միաւորութեանն ուսոյց բան, իսկ զբնութեանցն յատկութիւնս ոչ խորեմք ասել»*‡: [3]*Այսոքիկ եւ այսպիսիք հայհոյութիւնք ժողովոյն Քաղկեդոնի սակաւուք համառաւտեալ՝ թողլով զբազումս, որոց ոչ եւ մի ոք ի սրբոցն ձայնակցէ հարցն, այլ մանաւանդ դատապարտեալ նզովեն զասողսն երկուս բնութիւնս յետ միաւորութեանն ի վերայ միոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:* [4]*Եւ քարոզեն «մի բնութիւն Աստուծոյ մարմնացելոյ», զնոյն ինքն խաչեալ եւ թաղեալ եւ յարուցեալ յերրորդ յաւուր եւ յերկինս համբարձեալ նովին մարմնով, որ եւ դատելոց է զկենդանիս եւ զմեռեալս, յորժամ եկեսցէ միւս անգամ փառաւք Հաւր իւրոյ եւ հրեշտակաց իւրոց բազմութեամբ:* [5]*Ցայնժամ ողորմեա՛ ինձ, Տէր:*

* *ՏԿ, էջ 203, 65*
† *ՏԿ, էջ 203, 65*
‡ *ՏԿ, էջ 203*

<ԺԴ>

// ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՑՆ, ԵԹԷ ՄԻ ԲՆՈՒԹԻՒՆ Է ԲԱՆԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՐՄՆԱՑԵԼՈՅ 330ա

Երանելին Յուղեայ՝ եպիսկոպոսապետին Հռովմայ
յ'առ Դիոնիսիոն թղթոյն*

I. [1]*Զարմանամ՝ լսելով յաղագս ոմանց, խոստովանելով Աստուած ներմարմին*† *զՏէրն, բայց դեղեւելով ի հերձուած չարապէս ի պաւղիանոսացն ներծանիցելոցն:* [2]*Քանզի նոքա Պաւղոսի Սամոսատացւոյ ծառայեալք՝ այլ զ'յերկնուստն ասեն՝ Աստուած խոստովանելով զնա, իսկ այլ՝ զ'յերկրէ մարդ ասեն.* [3]*զոմն՝ անսուտացական, իսկ զոմն՝ ստացական, զոմն՝ յաւիտենական, իսկ զոմն՝ երեկեան, զոմն՝ Տէր, իսկ զոմն՝ ծառայ՝ ամբարշտեալք, եթէ երկրպագեն զոր ասեն ծառայ եւ արարած, եւ եթէ ոչ երկրպագեն զ Գնողն զմեզ իւրով Արեամբն:* [4]*Իսկ որք զ'յերկնուստն Աստուած խոստովանին ի Կուսէ մարմնացեալ եւ մի զոլ մարմնովն, սարսափարս ամբոխին ի բանս նոցայն ամբարշտութեան արտաբերեալք, քանզի ասեն եւ սոքա երկուս բնութիւնս, որպէս լսեմ, եւ զայս Յովհաննու հաւատաստակէս մի ցուցեալ զՏէրն՝ ասելովն. // «Բանն մարմին եղեւ»,*‡ *եւ Պաւղոսի՝ յասելն. «Մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն»*§: [5]*Արդ, եթէ մի ի սրբոյ Կուսէն ծնեալն անուանեցաւ, եւ ինքն է, որով ամենայն եղեւ, եւ մի բնութիւն է, վասն զի եւ դէմ մի, ոչ ուներ<ով> յերկուս բաժանումն, վասն զի եւ ոչ առանձին բնութիւն մար-* 330բ

* *ՏԿ, էջ 259—262, 186—187, 132, 8—10: Անանիա Սանահնեցի, «Գանձասար» Բ, էջ 207—209: Սարկաւագը հետեւում է ՏԿ 259—262 էջերի, իսկ Սանահնեցին ունի մօտ է 186—187 էջերի խմբագրութեանը, սակայն ունի զգալի տարբերութիւններ:*
† *Ներմարմին բառը բացակայում է ՆՌՀԼ-ում, սակայն գասելով ՏԿ-ի խիստ յունաբան թարգմանութիւնից եւ համեմատելով Սանահնեցու բնագրի հետ՝ ներմարմինը կարելի է հասկանալ «մարմնի մէջ», այսինքն՝ «Տիրոջը խոստովանում են Աստուած մարմնի մէջ»:*
‡ *Յովհ. Ա 14*
§ *Ա Կոր. Ը 8*

մինն եւ առանձին բնութիւն Աստուածութիւնն՝ ըստ մարմնա<նա>լոյն:
[6]Այլ որպէս մարդ մի բնութիւն է, այսպէս եւ ի նմանութիւն մարդկան
եղեալն Քրիստոս: [7]Իսկ եթէ ոչ ճանաչեն զ՚ըստ միաւորութեան մին,
կարեն եւ ի բազումս բաժանել զմին եւ յոլով ասել բնութիւնս, վասն
զի յոքնատեսակ է մարմին՝ յոսկերաց եւ ի ջղաց եւ յերակաց եւ ի մսոյ
եւ ի մորթոյ, յեղնգաց իսկ եւ ի մազոյ եւ յարենէ եւ ի շնչոյ, որք ամե-
նայն<քն> զանազանութիւն ունին ի միմեանց: [8]Բայց մի բնութիւն է,
որպէս զի եւ Աստուածութեանն ճշմարտութիւն հանդերձ մարմնովն
մի եւ յերկուս բնութիւնս ոչ բաժանի, քանզի եւ ոչ հնար իսկ էր զբո-
լորն Որդի Մարդոյ կոչել զիջեալն յերկնից եւ Որդի Աստուծոյ՝ ծնեալն
ի Կնոջէ, եթէ երկուց բնութեանց բաժանումն առընդունէր: [9]Այլ ստո-
րիջեալն յերկնից կոչիւր արդեաւք Որդի Աստուծոյ եւ ոչ Որդի մարդոյ,
331ա // իսկ ծնեալն ի Կնոջէ կոչիւր արդեաւք Որդի Մարդոյ եւ ոչ Որդի Աս-
տուծոյ. եւ այս հետեւանայ պաւղիական հերձուածոյն: [10]Իսկ զմեզ ու-
սուցանեն Աստուածային Գիրք յաղագս միոյ Տեառն խորհել ըստ յերկ-
նից իջանելոյն եւ ի Կնոջէ ծննդեանն: [11]Որք այսուհետեւ այսպէս խոր-
հին, մի՛ ի հոմաձայնութիւն զամենայն ընդդէմ խորհողացն արտաքս
ելցեն, զի մի՛ մտաւք գովելով բանիւքն հայհոյիցին: [12]Քանզի հարկ է
նոցա երկուս ասելով բնութիւնս՝ միումն երկրպագել, իսկ միւսումն ոչ
երկրպագել, յաստուածականն մկրտել, իսկ ի մարդկայինն ոչ մկրտել:
[13]Իսկ եթէ ի մահն Տեառն մկրտիմք, մի խոստովանիմք բնութիւն անաղ-
տակիր Աստուածութեանն եւ աղտակիր մարմնոյն, զի այսպէս յԱ-
ստուած իցէ մկրտութիւնն մեր եւ ի մահն Տեառն կատարեալ: [14]Քանզի
ոչ երկնչիմք ի զրպարտողացն՝ բաժանողաց յերկուս դէմս զՏէրն, եթէ
մեր զմիաւորութիւն խոստովանելով զհրեշտակական եւ առաքելական՝
հայհոյեն զմեզ՝ որպէս զմարմինն ասողս յերկնից, յորժամ ընթեռնումք
զԱստուածային Գիրս՝ Որդի Մարդոյ ասելով զ՚յերկնուստն, քանզի եւ
331բ ոչ յորժամ ասեմք զՈրդին Աստուծոյ եղեալ ի Կն//ոջէ, կամիմք հայ-
հոյել՝ որպէս զԲանն յերկրէ ասելով եւ ոչ յերկնից: [15]Իսկ ասեմք զեր-
կախումքն՝ ե՛ւ յերկնից զբոլորն վասն Աստուածութեանն, ե՛ւ ի Կնո-
ջէ զբոլորն վասն մարմնոյն՝ ոչ գիտելով բաժանումն միոյ դիմին եւ ոչ
ի բաց հատանելով յերկնայնոյն զերկրայինն եւ ոչ յերկրայնոյն՝ զերկ-
նայինն, քանզի ամբարիշտ է բաժանութիւնն: [16]Մի՛ այսուհետեւ պատ-
ճառս տայցեն բաժանողացն ասողքն երկուս բնութիւնս, քանզի եւ ոչ
մարմինն ըստ ինքեան բնութիւն, վասն զի եւ ոչ կենագործակ ըստ ին-
քեան եւ ոչ բաժանիլ կար զոլ առանց կենագործակին, եւ ոչ Բանն ըստ

ինքեան յիւրն բաժանի բնութիւն, զոր ունի ըստ անմարմնութեան: [17]Եւ
վասն զի ի մարմնի Տէրն եւ ո՛չ անմարմնաբար եկն յաշխարհ, ոչ զա-
տացական մարմինն զատուցանեմ յանստացական Աստուածութենէն,
թէ որոշեսցէ ոք բնութիւն ստացական, այլ եւ ոչ անստացական Բանն
եկն առանց մարմնոյ, թէ բաժանիցէ ոք անստացական բնութիւն: [18]Իսկ
եթէ մի երկաքանչիւրն է ըստ միաւորութեան՝ ե՛ւ ժողովն, ե՛ւ բարդու-
թիւն մարդատեսակն, մի եւ զանուն բարդեցելումն յարմար//իլ՝ յԱս- 332ա
տուածութենէն զանստացականն, իսկ ի մարմնոյն՝ զստացականն, եւ
յԱստուածութենէն՝ զանախտն, իսկ ի մարմնոյն՝ զախտակրելին: [19]Եւ
որպէս լուաք ի Պաւղոսէ զՔրիստոս ախտակիր, ո՛չ մասնաբար լուաք
եւ ո՛չ զԱստուածութիւնն ախտակրական կարծեցաք: [20]Այսպէս եւ արա-
բեալն եւ ծառայն ո՛չ մասնաբար ասի եւ ո՛չ զԱստուածութիւնն առ-
նէ եղանելի եւ ծառայական: [21]Եւ դարձեալ՝ անստացականն ո՛չ զմար-
մինն անեղ առնէ եւ ո՛չ ըստ մասին ի վերայ Աստուածութեանն միայ-
նոյ ասի: [22]Իսկ զայս այսպէս խորհեցողքն կացցեն ի լռութեան՝ յաւե-
լորդ խնդրոյ ի բաց խոտորեալք յաղանդոյն. ձայնակցեալ է եւ ձայ-
նակցաբար խոստովանեալ մարմինն ի Կուսէն, Աստուածութիւնն՝ յերկ-
նից, մարմինն՝ ստեղծեալ յորովայնի, Աստուածութիւնն՝ անստեղծ, յա-
ւիտենական, զի միաւորեցելոյ Բանին մարմնոյ անբաժանելի մնասցէ
Աստուածութիւնն: [23]Իսկ եթէ Գրոց սովորութիւն է զբոլորն աստուա-
ծաբանել եւ զբոլորն մարդաբանել, հետեւեսցո՛ւք եւ մեք բանիցն աս-
տուածայնոցն եւ մի՛ բաժանեսցուք զանբաժանելին եւ մի՛ զԱստուա-
ծութիւնն որոշեսցուք ի մարմնոյն՝ իբր առ բարեհամբաւութիւն, յոր-
ժամ մարմինն ստեղծեալ յոր//ովայնի ասա<ս>ցի, եւ մի՛ զմարմինն բա- 332բ
ժանելով յԱստուածութենէն, որպէս յաղագս խոստովանութեան Գալա-
տեացն, յորժամ Աստուածութիւնն անստացական փառաւորիցի: [24]Որ-
պէս արդեաւք չիցէ տրտմական զայսոսիկ այսպէս բարւոքն խոստո-
վանողսն կամ խորհողս, որպէս եւ ընկալաք, հակառակել առ միմեանս
բանիւքն, եթէ ոմանք մարմնոյն անուամբ վարին ի վերայ Բանին, որ-
պէս Յովհաննէս մարմին ասաց եղանել զԲանն, իսկ ոմանք զԱստուա-
ծութեանն անուն առնուն ի վերայ բոլորի ծառայի, որպէս Պաւղոսն
ասաց. «Երկրորդ Ադամ ի հոգի կենդանարար»*: [25]Երկրպագելի խոս-
տովանի Քրիստոս ըստ մարմնոյ զՀայր՝ ասելով. «Մեք երկիր պագա-

* Ա Կոր. ԺԵ 45

նեմք՝ որում գիտեմքն», <եւ ոչ բաժանի աստուածութիւն. երկրպագի ըստ աստուածութեանն> եւ ո՛չ բաժանի մարմինն Աստուածութեանն երկրպագութեամբ: [26]Եւ ո՛չ որոշեմք զմարմինն, յորժամ երկրպագեմք, քանզի եւ ո՛չ կարելի է մարմնոյն ախտակրելն, եւ ո՛չ որոշի Աստուածութիւնն, քանզի միացեալ է, քանզի պարտ էր յաղթիլ մահու յԱստուծոյ, եւ յաղթեալ է:

Նորին†

II. [1]Ապա ուրեմն ապրեցուցանելն Աստուծոյ է եւ նորոգելն զաշխարհս՝ ո՛չ միւսոյ ուրումն, իսկ ապրեցուցանէ Մնիցեալն եւ խաչեցեալն: // [2]Ո՛չ մարդ էր զոր ծնաւն Մարիամ, եւ ո՛չ մարդ զոր խաչեցին հրէայքն, այլ Աստուա՛ծ՝ ծնեալն ի Կնոջէ, Աստուա՛ծ՝ խաչեցեալն ի հրէից: 333ա

Երանելւոյն Աթանասի՝ հայրապետին Աղեքսանդրի‡

III. [1]Խոստովանիմք զՈրդին Աստուծոյ զնախ քան զյաւիտեանս մշտնջենաբար ծնեալ ի Հաւրէ, իսկ ի վերջին աւուրս վասն մերոյ փրկութեան ի Մարիամայ ծնեալ ըստ մարմնոյ, որպէս աստուածազան առաքեալն ուսուցանէ՝ ասելով. «Յորժամ եկն լրումն ժամանակաց, առաքեաց Աստուած զՈրդին իւր, որ եղեւ ի Կնոջէ»§: [2]Եւ գոլ զնոյն Աստուած եւ Որդի Աստուծոյ՝ ըստ Հոգւոյ, իսկ Որդի Մարդոյ՝ ըստ մարմնոյ, ո՛չ երկուս բնութիւնս՝ զմին Որդի, զմին՝ երկրպագելի եւ զմին՝ աներկրպագելի, այլ մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ եւ երկրպագեալ հանդերձ մարմնով իւրով միով երկրպագութեամբ, այլ եւ ոչ երկուս որդիս:

* Յովհ. Դ 22

† ՏԿ, էջ 266 (տող 24—29)

‡ ՏԿ, էջ 133, 269. Աթանաս, էջ 281: Միանշանակ օգտւում է ՏԿ-ի 269 էջի բնագրից, թէպէտ Աթանասի 281 էջի բնագրից տարբերութիւնները շատ չեն:

§ Գաղ. Դ 4

Նորին*

IV. [1]Արդ, եթէ այլոյ է մարմինն, նորա՞ արդեաւք ասացին կիրքն, իսկ եթէ Բանին՝ մարմինն, քանզի «Բանն մարմին եղեւ», հարկ է եւ զմարմնոյն կիրս ասել նորին, իսկ որոյ ասին կիրքն, նորին եւ ճահագործութիւնն եւ չնորհն է:

Նորին†

V. [1]Ուստի եւ ծնիցելոյ մարմնոյն յԱստուածածնէն // Մարիամայ ինքն ասի ծնանիլ՝ այլոց ծնելութեան առ ի գոլ տուիչն, զի զմերոյն յինքն փոխեսցէ ծնելութիւն: 333բ

Նորին‡

VI. [1]Զիա՞րդ իսկ եւ երկբայանալ համարձակեցան անուանեալ քրիստոնեայքն, եթէ ի Մարիամայ յառաջ եկեալ Տէրն: [2]Որդի ահա գոյացութեամբ եւ բնութեամբ Աստուծոյ է, իսկ ըստ մարմնոյ՝ ի զաւակէ Դաւթի եւ ի մարմնոյ՝ սրբոյն Մարիամայ: [3]Եւ ո՞յք արդեաւք այսպէս յանդգնունք եղեն, իբր զի ասել զՔրիստոս՝ զմարմնով ախտակրեալն եւ խաչեցեալն, ոչ գոլ Տէր եւ Փրկիչ եւ Աստուած եւ Որդի Հաւրն: [4]Կամ զիա՞րդ կամիցին քրիստոնեայք անուանիլ ասացողքն ի մարդ սուրբ, որպէս առ մի ի մարգարէիցն եկեալ զԲանն եւ ո՛չ զնոյն մարդ եղեալ՝ առնելով ի Մարիամայ զմարմինն, այլ միւս գոլ զՔրիստոսն եւ միւս՝ զԱստուծոյ Բանն զյառաջ քան զյաւիտեանս՝ Որդին ելով Հաւր:

* ՏԿ, էջ 83

† ՏԿ, էջ 76

‡ ՏԿ, էջ 76. կՀ, էջ 59 (այլ խմբագրութեամբ). Կիւրեղ Ալեքսանդրացի, Գիրք պարապմանց, կ. Գոլիս, 1717, էջ 493 (բոլորովին այլ խմբագրութեամբ). Աթանաս, էջ 327 (այլ, սակայն աւելի հաւաստի թարգմանութիւն): Սարկաւագը հետեւում է ՏԿ-ի բնագրին:

Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի*

VII. [1]*Այսաւր որ էրն ծնանի եւ որ էրն եղանի, որպէս ոչն էր, քանզի գոլով Աստուած՝ եղանի մարդ՝ ոչ ի բաց կացեալ ի գոլոյն Աստուած:*

Երանելոյն Տիմոթէոսի՝ հայրապետի Աղեքսանդրի
ի Հակաճառականէ խոտեալ տոմարի Ժանդին Լէովնի†

VIII. [1]*Քանզի «Որ էրն ի սկզբանէ,— ասէ երանելին Յովհաննէս*
334ա *Աւետարանիչ,— զորմէ լու//աք»*‡՝ *նշանակելով զնախ քան զյաւիտեանս Բանն Հաւր, «Սա,— ասէ,— եւ տեսաք աչաւք մերովք, եւ ձեռք մեր շաւշափեցին»*§: [2]*Եւ զի մի՛ ոք ի հերձուածողացն զրպարտեսցէ զ՚առ ի նմանէ աստուածաշնչաբար ասացեալսն, ցուցանէ հաւաստապէս մի դէմ մարմնացելոյ Աստուծոյ Բանին, ասէ ի վերայ Բանին կենաց եւ երկրորդէ զնոյնն՝ ասելով. «Եւ տեսաք եւ վկայեմք եւ պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն»*¶: [3]*Զո՞ր, ասա՛ յայտնապէս, ո՛վ աւետարանիչ. [4]«Որ էրն,— ասէ,— առ Հաւր եւ երեւեցաւ մեզ»***. *եւ եռապատկէ զբանն յաղագս տեսանելոյ զմարմնացեալն անյեղապէս մի բնութիւն Բանին Աստուծոյ՝ ոչ ուրեք երկուս կերպս ուսուցանելով ի վերայ Քրիստոսի եւ ոչ երկուս դէմս, այլ մի եւ զնոյն:* [5]*Եւ նմա առաքաչխեաց միումն Քրիստոսի զաստուածավայելուչսն եւ զմարդկայինսն, քանզի եւ ի կատարածի թղթին ուսոյց դարձեալ յաղագս Քրիստոսի՝ ասելով.* [6]*«Եւ գիտեմք, եթէ Որդին Աստուծոյ եկն եւ ետ մեզ միտս, զի ծանիցուք զճշմարիտն Աստուած, եւ եմք ի ճշմարտի Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի. սա՛ է ճշմարիտն Աստուած եւ կեանք յաւիտենական»*††: [7]*Իսկ եթէ Բանն գործէ զոր է իւր, որպէս նորումս Նեստորի թուի, աւտար Աստուածու-*
334բ *թեանն եւ անարատ բն//ութեանն է տեսանիլ եւ շաւշափիլ, եւ յատուկ առաւել մարդկայնոյն այն է բնութեան այսպիսիս. նմանապէս աւտար*

* *Նորին յաղագս աստուածային ծննդեան, եւ ասէ վասն սրբոյ Կուսին, ՏԿ, էջ 28, 77*
† *ՏԿ, էջ 81—82*
‡ *Ա Յովհ. Ա 1*
§ *Ա Յովհ. Ա 1*
¶ *Ա Յովհ. Ա 2*
** *Ա Յովհ. Ա 3*
†† *Ա Յովհ. Ե 19—20*

է մարդոյ ասիլն Աստուած ճշմարիտ եւ է յատուկ միայնոյ Աստուծոյ: [8]*Իսկ արդեաւք ստեա՞ց աստուածազան աւետարանիչն Յովհաննէս. քա՛ւ լիցի, այլ մանաւանդ հերձուածողացն ժողով լպրշաբար ընդդիմանան Աստուածաշունչ Գրոց, ոչ հաւատան, եթէ «յերկրի երեւեցաւ Աստուած եւ ընդ մարդկան շրջեցաւ»՝ ըստ մարգարէին ձայնի*: [9]*Ո՛չ հաւատան, եթէ «Բանն մարմին եղեւ»*†՝ *մնացեալ յանյեղլի բնութեան, ո՛չ ընդունին զկամաւոր թափումն եւ զաղքատութիւն Աստուծոյ Բանին, զտնաւրինաբար գործեցեալսն յաղագս մերոյ փրկութեան, ո՛չ ընդունին Աստուածածին խոստովանել զսուրբ Կոյսն.* [10]*բացափայլել կամին զմի դէմն Քրիստոսի, այս է՝ զԱստուածն Բան, ո՛չ ներեն կենագործ գոլ զպատուական Մարմինն Քրիստոսի. ո՛չ ընդունին զոր ի զաւակէն Դաւթի թագաւորել ի վերայ տանն Յակովբայ ցյաւիտեանս, եւ թագաւորութեան նորա վախճան ոչ գոլ՝ յանդգնաբար ընդդիմացեալք հրեշտակին Գաբրիէլի:* [11]*Քանզի ախտակրութեանն միայնում ստորանկեալ զնա աւանդեն, եւ թէպէտ մարդոյ բնութեան աւտար է ամենեւին թա-*
335ա *գաւոր//ել ընդ ձեռամբ անկելոյն յաւիտեանս, եւ է այս միայնոյ Աստուծոյ յատուկ եւ յարմարական:* [12]*Ապա ուրեմն եւ ո՛չ երկուս կերպս ի վերայ Միոյ Քրիստոսի ի սրբոցն ուսաք ի ձեռն Աստուածաշունչ Գրոց եւ ո՛չ ներգործութեամբ առանձնացեալս երկակաւք կերպիւքն եւ ո՛չ ունակական հաւասարութիւն եւ կամ շարայարութիւն, զոր իւրաքանչիւր ոք ի մէնջ ունել ասի առ մերձաւորն, ո՛չ իւրաքանչիւր դէմ յատուկ եւ առանձինն, ոմն բացափայլեալ սքանչելեաւքն, իսկ ոմն՝ ախտակրութեան ի ներքոյ անկեալ, այլ մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ անյեղապէս ե՛ւ ուսաք, ե՛ւ հաւատամք:*

Սրբոյն Աթանասի‡

IX. [1]*Իսկ եթէ ոք քան զայս յԱստուածայնոց Գրոց ուսուցանէ՝ միւս ասելով զՈրդին Աստուծոյ եւ միւս՝ զ՚ի Մարիամայն ըստ շնորհի որդի գործեցեալ՝ որպէս մեք, իբր զի գոլ երկուս որդիս, զմին՝ ըստ բնութեան*

* *Բար. Գ 38*
† *Յովհ. Ա 14*
‡ *ՏԿ, էջ 133 (գրեթէ տառացի հետեւում է): Տես Աթանաս, էջ 283: Այս ճառի թարգմանութիւնն աւելի ստոյգ է եւ զերծ յունաբանութիւններից, որոնք առկայ են ՏԿ-ի մեջ: Սարկաւագը միանշանակ օգտւում է ՏԿ-ից, եւ թէպէտ բնագիրը մաքրում է յունաբանութիւններից, սակայն դրանք ակնյայտորէն մնում են:*

Որդին Աստուծոյ՝ զ՝յԱստուծոյն, եւ զմիւսն՝ ըստ շնորհի՝ զ՝ի Մարիամայն մարդ, [2]կամ եթէ ոք զՏեառն մերոյ զմարմինն ի վերուստ է ասէ եւ ոչ ի կուսէն Մարիամայ կամ յեղեալ զԱստուածութիւնն ի մարմին կամ խառնակեալ կամ այլայլեալ կամ ախտակրելի զՏեառն զԱստուածութիւնն կամ անտրկրպագելի զՏեառն մերոյ զմարմինն, որպէս մարդոյ եւ ոչ երկր//պագելի, որպէս Տեառն եւ Աստուծոյ մարմինն, զնա նզովէ սուրբ եւ ընդհանրական Եկեղեցի՝ հաւանեալ առաքելոյ ասողի. «Եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր ընկալարուքն, նզովեա՛լ եղիցի»:*

335բ

Նորին ի Տաւնականէն մետասաներորդ†

X. [1]*Ուստի Փրկիչն, որք լայինն եւ հետեւէին նմա յերթեալն նորա ընդդէմ մահու, սաստէր՝ մի՛ լայք‡: [2]Ասելով զայս՝ զայս ցուցանել կամեցեալ, զի ո՛չ սգոյ, այլ խնդութեա՛ն էր մահն Տեառն, եւ զի թէպէտ եւ վասն մեր մեռցի, կեցցէ, քանզի ոչ յոչէից, այլ ի Հաւրէ <է>:*

Նորին յաղագս Խաչին§

XI. [1]*Քանզի եւ այս ոչ նոցա, այլ կախեցելոյ Փրկչին էր գործ, եւ զի կախեցեալ որպէս զմարդ՝ զիշխանութիւնս հալածէր, իսկ զբանսարկուն ըմբռնէր, զդահիճսն երկեցուցանէր՝ ոչ պատառել զպատմուճանն, զի այսորիկ մնացելոյ մնասցէ. եւ հրէիցն յանդիմանութիւն եւ յետ ոչ յոլովից եղեալ, զի վարագոյրն պատառեցաւ, իսկ պատմուճան Փրկչին եւ ոչ ի դահճացն բաժանեցաւ, այլ մնաց ամբողջ, քանզի մնաց Աւետարանն ամբողջ՝ ստուերացն բաժանելոց:*

* Գաղ. Ա 9
† ՏԿ, էջ 134
‡ Ղուկ. ԻԳ 28
§ ՏԿ, էջ 134. ԿՀ, էջ 346

Նորին ի Տաւնականէ երկրորդում Դիոկղէտիանոսի*

XII. [1]*Քանզի կենդանութիւն գոլով՝ մեռաւ, զի զմեզ // կենագործեսցէ, Բան ելով՝ ի մարմնի եղեւ, զի զմարմին Բանիւն ազատեսցէ, աղբիւր գոլով՝ ծարաւեցաւ, զի զմերն ծարաւ արբուսցէ, զի այսուիկ եւ ի տաւնն յառաջ կոչեսցէ մեզ՝ ասելով. «Եթէ ոք ի ծարաւի է, եկեսցէ առ իս եւ արբցէ»†:* 336ա

Նորին ի Ե-երորդ տաւնականէն‡

XIII. [1]*Քանզի ոչ եւս ոչ ժողովուրդ Աստուծոյ եւ ոչ ազգ սուրբ, այլ իշխանք սոդոմացւոց եւ ժողովուրդ գոմորացւոց անուանին՝ յաղթելով յայսոսիկ եւ սոդոմականացն չարութեան, որպէս մարգարէն ասէ. «Արդարացաւ Սոդոմ ի Քէն»§: [2]Քանզի սոդոմականքն ի հրեշտակս յանդգնեցան, իսկ սոքա՝ ե՛ւ զՏէրն, ե՛ւ զԱստուած, ե՛ւ զԹագաւորն ամենայնի, ե՛ւ զամենեցուն հրեշտակացն Տէր սպանանել ձեռնարկեցին՝ ոչ գիտելով, եթէ կենդանութիւն է սպանեալն ի նոցանէ Քրիստոս, իսկ մեռան, որք նենգեցինն հրեայքն զՏէր:*

Նորին ի ԺԱ-երորդ տաւնականէն¶

XIV. [1]*«Ընդէ՞ր պանծացան իշխանք, եւ ժողովուրդք պարապեցին ունայնս»**, քանզի ունայն էր խորհուրդ հրէիցն՝ մտածողաց մահ զկենդանութենէն եւ խորհողացն անբանս զԲանէն Հաւր:*

Նորին††

XV. [1]*Փրկութիւն՝ արեամբն, իսկ մաքրութիւն՝ ջրովն, բայց այս ո՛չ ըստ կամաց բանսարկուին պատ//ահէր, քանզի զոր երկնչէր եղանելն* 336բ

* ՏԿ, էջ 140. ԿՀ, էջ 345
† Յովհ. Է 37
‡ ՏԿ, էջ 140. ԿՀ, էջ 346
§ Ողբ Դ 6
¶ ՏԿ, էջ 140. ԿՀ, էջ 346
** Սաղմ. Բ 1
†† ՏԿ, էջ 141. ԿՀ, էջ 347

մահ, մեռաւ Տէրն, եւ նա կողոպտեցաւ եւ կարծեալ ըմբռնիլ զ Քրիստոս ի մահուանէ՝ յաւէտ ինքն ցուցաւ մեռեալ, եւ կարծեցեալ մարդ նենգել՝ արար ճանաչել Աստուած: [2]Քանզի համանգամայն մեռաւ, եւ ար<ար>ծք* անարեգակն եղեն, իսկ վարագոյր տաճարին ցելոյր, եւ երկիր սասանեցաւ, վէմք հերձան, զինաւորն հանդերձ <դռնատեսաւք>† դժոխոց դաւղեցին, յորոց էր տեսանել ոչ մարդ, այլ Աստուած ճշմարտապէս ի մարմնի. յաղագս որոյ եւ տեսողքն ասէին. «Ճշմարտապէս սա՛ է Որդի Աստուծոյ»‡, քանզի եւ բազում շիրիմք բացան, եւ յարեան ի նոսա մեռեալքն:

Երանել<ւոյն> Գրիգոր<ի> Նէոկեսար<իոյ> եպիսկոպոս<ի>§

XVI. [1]Եթէ ոք ասէ՝ այլ է չարչարեալն, եւ այլ՝ ոչ չարչարեալն, եւ ոչ խոստովանէ զնոյն անչարչարելի Աստուածն Բանն մարմնովն իւրով չարչարեալ, որպէս եւ գրեալ է, նզովեա՛լ լիցի:

Նորին¶

XVII. [1]Սա է, որ վաղ երբեմն որպէս ոչխար զենեալ եւ յոչխարի նշանակեալ, իսկ յետոյ ապա ինքն զենեալ վասն մեր, «քանզի զատիկ մեր զենաւ Քրիստոս»**:

Գրիգորի Աստուածաբանի††

XVIII. [1]Եթէ ոք ոչ երկրպագեսցէ Խաչելոյն, նզովեա՛լ եղիցի եւ կարգեսցի ընդ աստուածասպանսն:

* Ուղղումը՝ ըստ ՄՄ N 6453-ի եւ 2751-ի:
† Ուղղումը՝ ըստ ՄՄ N 6453-ի: ՄՄ N 2751-ում՝ դռնատեղ:
‡ Մատթ. Իէ 54
§ ՏԿ, էջ 141—142. ԿՀ, էջ 73
¶ ՏԿ, էջ 142
** Ա Կոր. Ե 7
†† ՏԿ, էջ 25, 142

Նորին Յաղագս առաքինութեան բանի*

XIX. // [1]Այլ յորժամ տեսցեն զԱւրինադիրն զձեռս կարկառեալ, 337ա
յայտ է զի խաչեցեալ վասն մեր, ի բաց վճարին ի չարին ընդակցութենէ:

Նորին†

XX. [1]Արիւն Աստուծոյ եւ չարչարանս լսելով եւ մահ՝ մի՛ ի վայր անկցիս անմտաբար իբր եւ Աստուծոյ ջատագով, այլ առանց ամաւթոյ եւ յերկուանալոյ կե՛ր զՀացն, ա՛րբ զԱրիւնն, եթէ կենաց փափագիցես:

Նորին‡

XXI. [1]Կարաւտացաք Աստուծոյ մարմնանալոյ եւ մեռանելոյ:

Նորին§

XXII. [1]Վասն այնորիկ մերով ախտիւս չարչարի Աստուած՝ եղեալ մարդ:

Նորին¶

XXIII. [1]Ո՛վ Քրիստոս եւ Բան եւ չարչարանք Անչարչարելւոյն:

Երանելւոյն Կիւրղի յ'առ Նեստորիոս թղթոյն**

XXIV. [1]Այլ Աստուածազանն Գիր մարմին ասէ լինել զԱստուծոյ Բանն††, այս է՝ միանալ ի մարմնի անձն ունողի բանական: [2]Եւ հետեւեալ աւետարանական քարոզութեանց սուրբ եւ մեծ ժողովն զնոյն ասացին

* ՏԿ, էջ 142
† ՏԿ, էջ 142
‡ ՏԿ, էջ 142
§ ՏԿ, էջ 142
¶ ՏԿ, էջ 142
** ՏԿ, էջ 143
†† Տես Յովհ. Ա 14:

ի գոյացութենէն Աստուծոյ եւ Հաւր ծնեալ Միածին՝ զայն, յորում ամենայն եւ որով ամենայն, վասն մեր՝ մարդկան, եւ վասն մերոյ փրկութեան վայրաբուսեալ յերկնուստ, մարմնանալ եւ մարդանալ, չարչարել եւ յառնել, եւ զի ի ժամանակի եկեսցէ Դատաւոր, անուանէին զԱստուծոյ Բանն մի Տէր Յիսուս Քրիստոս:*

Նորին†

337բ *XXV.* [1]*Եթէ ոք զմի Տէր // Յիսուս Քրիստոս բաժանեսցէ յերկուս դէմս յետ միանալոյն, եւ զնոյն մերձաւորութիւն յարելութեան ասիցէ իբրեւ պատուով եւ կամ ճոխութեամբ եւ զաւրութեամբ, եւ ոչ միութիւն բնութեամբ, նզովեա՛լ լիցի:* [2]*Դ. Եթէ ոք յերկուս երեսս եւ կամ յերկուս զաւրութիւնս զաւետարանչացն եւ կամ զառաքելոցն զգրեալսն եւ զբարբառսն բաժանիցէ եւ կամ զՔրիստոսի ասացեալսն սրբովք իւրովք եւ կամ զոր իւր իսկ վասն իւր էր ասացեալ, եւ զոմանս՝ իբրեւ զմարդոյ ուրոյն ի Բանէն Աստուծոյ, իբրեւ յարելութեամբ իմանայցէ եւ զոմանս դարձեալ՝ իբրեւ աստուածաբար միայն Բանին որ յԱստուծոյ Հաւրէ, նզովեա՛լ եղիցի:* [3]*Եթէ ոք ասիցէ իշխել աստուածազգեաց մարդ զՔրիստոս եւ ոչ յաւէտ Աստուած զոլ ըստ ճշմարտութեան, իբր Որդի մի բնութեամբ, ըստ որում եղեւ մարմին Բանն եւ հաւասարեաց նմանապէս մեզ արեան եւ մարմնոյ, նզովեա՛լ եղիցի:* [4]*Եթէ ոք ոչ խոստովանի զԲանն Աստուծոյ չարչարեալ մարմնով եւ խաչեալ մարմնով եւ զմահ ճաշակեալ մարմնով եւ եղեալ անդրանիկ ի մեռելոց, ըստ որում կենդանութիւնն է եւ կենդանարար՝ իբրեւ զԱստուած, նզովեա՛լ եղիցի:*

Նորին‡

338ա *XXVI.* [1]*Զի այսուհետեւ եւ ընդ//դէմ դարձուցանեն զտնաւրինութեանն բանս եւ տարագծեն զճշմարտութիւնն, ամենեցուն ընդդէմ*

* *Տես Ա Կոր. Ը 6:*

† *ՏԿ, էջ 165—167. ԿՀ, էջ 229—241. Գիրք պարապմանց, էջ 477—490: Սարկաւագը այլ՝ աղաւաղուած, վատ խմբագրուած կամ թարգմանուած բնագրից է օգտւում: Այստեղ բացակայում են որոշ նզովքներ, որոնց ամբողջական լինելու մասին ակնարկութիւն կայ [ԺԲ VIII 14]-ում: Ներկայացուած նզովքներն ունեն հետեւեալ յաջորդականութիւնը՝ Գ, Դ, Ե, ԺԲ:*

‡ *ՏԿ, էջ 134—135*

յարուցեալք Աստուածաշունչ Գրոց, որք Աստուած զոլ ճանաչեն եւ ներմարդացեալ զՈրդին, մի զնա անուանեն ամենայն ուրեք, քանզի <յ>աշխարհարարութեանն մատենի գրեաց <Մով>սէս՝ որպէս անցոյց աստուածազանն Յակոբ ընդ հեղեղատն Յոբոկայ զմանկունս իւր, «եւ մնաց միայն, մարտնչէր ընդ նմա մարդ մինչեւ յառաւաւտն»: [2]«Եւ կոչեաց Յակոբ զանուն տեղի այն տեսիլ Աստուծոյ»...† իսկ «Յակոբ կաղայր ի զիստէն իւրմէ»‡: [3]Քանզի յառաջագոյն ցուցանէր հայրապետին Աստուած, զի եւ ներմարդացի ի ժամանակի Բանն Աստուծոյ Միածին եւ հակամարտ կալցի զմեզ: [4]Եւ զի յաղագս նորա ոչ ուղղոտնեսցեն, կաղան չաւղաւք, որպէս Յակոբ կաղայր ի բարձիցն իւրոց: [5]Ըստ որում ասէ ինքն ի ձեռն երգողին քնարաւ. «Որդիք աւտարաց ստեցին ինձ, որդիք աւտարք հնացան եւ կաղացան ի շաւղաց իւրեանց»§. քանզի զայս կարծեմ զեկուցանել առ ի խ<ոշ>տալն¶ Յակովբայ բարձիւքն իւրովք: Բայց զայն տես, մարդոյ մարտուցելոյ ընդ նմա՝ տեսանել զԱստուած դէմ յանդիման ասէ, եւ տեսիլ զնա // անուանեաց: [6]Քանզի մնաց 338բ
Աստուծոյ Բանն եւ մարդ եղեալ ի կերպի Հաւր՝ ըստ իմանալւոյն ասեմ պատկերի եւ ըստ ամենայնի, որ ինչ անտար<ա>փոխաբար ունի, քանզի ասէ առ Փիլիպպոսն կ<ատարել>ութիւն** էութեանն Հաւր զինքն ցուցանեալ է մարմնով՝ «Տեսողն զիս ետես զՀայր»††:*

Նորին‡‡

XXVII. [1]*Երանելի մարգարէն Եսայիաս, զներմարդացեալն Աստուած մարմնով ախտակրեալ գիտելով, ասէ յաղագս նորին. «Որպէս ոչխար ի զենումն ածաւ, իբրեւ գառն առաջի կտրչի անձայն կայ, այնպէս ոչ բանայ զբերան իւր:* [2]*Առ խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ, եւ զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ, զի բառնան յերկրէ կեանք*

* *Մտ. ԼԲ 23—24*

† *Մտ. ԼԲ 30*

‡ *Մտ. ԼԲ 31*

§ *Սաղմ. ԺԷ 47*

¶ *Ըստ ՄՄ N 6453-ի եւ 2751-ի*

** *Ըստ ՄՄ N 6453-ի: Ըստ ՄՄ N 2751-ի՝ նկարագրութիւն:*

†† *Յովհ. ԺԴ 9*

‡‡ *ՏԿ, էջ 135—136*

նորա»: [3]Եւ եթէ մարդ ոք էր առանձնաւորապէս իմացեալ Որդի եւ յարակցեալ Աստուծոյ, ըստ որում ասեն անսուրբ աղանդոց գտիչք, ո՞րպէս տակաւին դժուարագիւտ էր, որ զազգաւորութիւն նորա զրուցել կարիցէ, քանզի եղեւ ի սերմանէ Յեսսեայ եւ Դաւթի: [4]Իսկ զԱստուծոյ Բանին ծնունդ կամ զծննդեանն յեղանակ ո՞յ ասել կարիցէ, քանզի բառնայ յերկրէ կենդանութիւն նորա, այս է գոյութիւնն, քանզի <եղ փոխանակ գոյութեան զկենդանութիւնն ի բարձունս, ընթանայ եւ բարձրանայ քան զորս յերկրիս, քանզի անիմանալի է>†:

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

<Բ>

<IX>.8 Բն. բանսարկուին + աւարին
XVII.1 Բն. զփրկիչն (1)
<XVIII>.2 Բն. տասնեկին + ծն՞

<Գ>

I.4 Բն. ոչ + է
III.4 Բն. սովորութիւն
V.3 Բն. ամէն: + Աղաչե՛մ, զասացող բանից զերանելի վարդապետն՝ զՍարգաւագն եւ զհայցողն ի Նմանէ յիշեա՛:

<Դ>

II.1 Բն. Դանիէղելին
II.4 Բն. յաւուցեալքն
II.6 Բն. մաքաւորս փխ. զմաքրասէրս
VI.10 Բն. զապականութիւն / զանսուրբ / ասացեալն
VI.11 Բն. զփառաւորութեան

* Եւ. ՄԳ 7—8
† Ըստ ՄՄ N 6453-ի

VII.1 Բն. յաւդոյ
VII.2 Բն. ժուժկալութեան
VII.4 Բն. դատապարտեմ իբրեւ զգործաւորս փխ. բամբասեմ որպէս զգործաւորս
VII.6 Բն. — մի՛ / — ի / զմեղանչականն / — միոյ / յանուանելն
VII.9 Բն. շրջ. եւ ոչ / դիմեաց սպրդեալ / ամբարշտութեանս
VII.11 Բն. զսկիզբն
VII.14 Բն. տեղ
VII.18 Բն. սահմանս որոյ
VIII.2 Բն. — եւ (3) / ծիծաղելկոտս / զարբասէրս փխ. զարծաթասէրս
VIII.3 Բն. չարախօս փխ. շատախօս / ներքինիք փխ. ներքին
VIII.4 Բն. — եւ մաքուր
VIII.5 Բն. — եւ (2) / զհրամայեալսն / դու պատեալ / զսիրելիսն / թշնամանաւք
IX.2 Բն. — ինչ
IX.3 Բն. ոչ եւ չարասէրքն հրեայք / ի բարձրագոյնսն / արհամարհեալք / զհայհոյութիւն / հաւատարմաւ / խռովութիւնն
IX.4 Բն. զձուկնն / պարուրանաց / պատրաստական է փխ. պատրաստ ես
IX.5 Բն. ոչ ինչ արտաքոյ աւրինացն / — եւ (2) / ոչ էր իշխանութիւն ումեք յիսրայիղի / յերեկոյուղն / թէ
IX.6 Բն. ազգոյ
IX.7 Բն. — եւեթ / Տէր / — գործելով ինչ / աւրէնքն
IX.8 Բն. զչարախաւսութեան / Ցուդա / կարասիցն / առնել փխ. առաւել
IX.9 Բն. Քրիստոս փխ. Յիսուս / — եւ (1)
IX.10 Բն. զատիկս
IX.11 Բն. — իսկ / յանձնոյր փխ. յանձն առնոյր
IX.12 Բն. հրամայեաց Տէր / — իսկ / առնեմ փխ. ուտեմ / տաւնին նուազեցուսցէ
IX.13 Բն. են փխ. էին / ճշմարտութիւն
IX.14 Բն. եւ ի բծոյ մեղաց
X.1 Բն. ամենեքումբք / ամբարշտել / կարկատէնն
X.2 Բն. գառինն / եղուն փխ. եւ դուն / հաղորդեալ / յանդգնիցի / ժանդութեամբ
X.4 Բն. թշնամեաց / ոչ փխ. ոչ եւ
X.9 Բն. յառաջնմէ իսկ
X.10 Բն. — խմորեալ / յիսրայէլէ
X.11 Բն. յառաջնմէ իսկ / յորում փխ. յորոյ / գառնն
X.13 Բն. յերեկոյեայ
X.14 Բն. մի՛ ուտիցիք փխ. մի՛ ուտիցէք / — ուտիցէք

XI.15 Բն. զլնուլ / զիա՞րդ նա / ՄՄ N 777 զաւրէն ազանց փխ. զաւրինազանց
XI.1 Բն. հասանեն
XI.2 Բն. բնակի
XI.3 Բն. շրջ. Սատակիչ յապականութենէ իսկ վարուց եկին / որոշեալ փխ. անջատեալ / Սրբոյ փխ. շնորհաց
XI.4 Բն. եւ ասէ Եսայի / շրջ. այլ որքան ինչ եւ
XI.5 Բն. ելեալ փխ. երթալ
XI.6 Բն. տկարութեան / կերակրոցն սրբոց / — յԱստուծոյ / կերակուրս + ամենայն / խորհելոյ փխ. խտրելոյ / յանսուրբն իբրեւ
XI.7 Բն. — եւ (2) / լինիլ / զսքանչելեաց / մարմնոյ
XI.8 Բն. հրամայէ / գոչել փխ. գոլ / պարտութիւնն / յաղթէ / ինքեան
XI.9 Բն. ընդ նոսա փխ. զնոսա / — մերոյ
XI.10 Բն. շրջ. առ նա բերես / զսքանչելեաց
XI.11 Բն. — ի (2) / առողջութենէդ փխ. առաջարկութենէդ / նենգութիւն փխ. անիրաւութիւն
XI.12 Բն. պայթեցուցանել / մսեաց
XI.13 Բն. նախամարգարէն / տալ նոցա փխ. լինել սոցա / զկերակուրս եւ զըմպելիս
XI.16 Բն. զայսպիսիս
XI.17 Բն. առաքեալքն / զեռնով
XI.19 Բն. դու փխ. դուն
XI.20 Բն. իմաստասիրիմ
XI.22 Բն. եթէ իբրեւ փխ. ապա թէ իբրու / — ինձ / քան փխ. որքան
XI.23 Բն. Տէրն / զչիւղ
XI.24 Բն. եթէ / — քո / ՄՄ N 777 գոլ եւ փխ. գոլէի / Բն. ամբաստանութիւնդ / — կերակրոց
XI.25 Բն. զսուրբ / անիրաւութենէ
XI.26 Բն. թշնամանողք / զարքայութիւնն
XI.27 Բն. զայլոց / յորմէ + եւ
XI.29 Բն. ամբարշտութեան
XI.30 Բն. զպատասխանի
XI.31 Բն. — ինձ / թէ եւ փխ. եթէ / մերձենալ
XI.32 Բն. զվեր երեւալ / զհերձուածոյն / շրջ. առաւել խորշել / պարտաւանս առժամայն / զայս փխ. զոյս
XII.1 Բն. ազատաբար բառով փխ. ազատ բարբառով / հերձուածոց / ՄՄ N 777 դարժանավարուց փխ. զարժանաւոր վարուց / Բն. մաքրութիւն
XII.2 Բն. յայնոսիկ / խորշիլ / եթէ / յերկոքումբք

XII.4 Բն. առիթ ի փխ. առթի
XII.5 Բն. վարուց / զճշմարտութեան փխ. զճշմարիտ
XII.6 Բն. գաւթէ / հասանիլ
XII.7 Բն. կարէ կեալ փխ. կարել կալ / այս ոչ + որպէս
XIII.2 Բն. պահանջէ
XIII.3 Բն. — եւ (2) / անիրաւութենէ փխ. անիրաւութիւն է / հանգանակս / ջանի / դատախազութեան / — եւ մեծամեծս / նորայնոցն / ձեռս
XIII.5 Բն. տայցես / — առաջին
XIII.6 ՄՄ N 777 աճեսցէ
XIII.7 Բն. չէր փխ. լեր
XIII.9 Բն. շրջ. գթոյ սիրով / — եւ քարոզէ
XIII.10 ՄՄ N 777 տնաւրութեանն / Բն. մարմնոյն
XIII.11 Բն. մնացեալ փխ. մարմնացեալ
XIII.12 Բն. հաւատալով փխ. հետեւելով
XIII.13 Բն. ի փխ. ըստ / զմի
XIII.14 Բն. անճառելոյն / բիւր անգամ եւ բիւրս / քարոզս
XIV.1 Բն. ձախլեսս փխ. ձաղեսս
XIV.2 Բն. սկզբնահոգ / աւանդութիւն / վերջնումն / յառաջնումն / որ քում փխ. սրբում / հրէայսն
XIV.3 Բն. — եւ (2)
XIV.4 Բն. հանգանակաւ
XIV.5 Բն. զարարից փխ. վարարից / կամ ձիոց փխ. եւ ձիոց / հաղորդիլ
XIV.6 Բն. շրջ. այպանել գոլ գիտելով / զանգիտելով պատկառեն
XIV.7 Բն. դատարկ / անիմաստք փխ. ունայնք / արհամարհել
XIV.9 Բն. զապականել
XIV.10 Բն. շարադրութեանդ / զի յոյժ փխ. զյոյժ / ընդունելոց / անցանել
XIV.12 Բն. առաքինեացն
XIV.14 Բն. փրկեցաւ փխ. փոքրկացաւ
XIV.15 Բն. բարի փառաց փխ. բարեփառաց
XIV.16 Բն. — ի
XIV.20 Բն. ստեղծեալ դրաւշուած / գործիով
XIV.21 Բն. որպէս թերութեան փխ. առանց թերութեան
XIV.22 Բն. պարանոց / երկաքանչիւրս / նորին + իրի
XIV.24 Բն. — եւ զորս ոչն անդ՝ երկրպագես
XIV.25 Բն. ամբարշտութեան
XIV.26 Բն. — եւ (1)
XIV.27 Բն. պատկեր
XIV.28 Բն. այդպիսի փխ. այդպէս
XIV.29 Բն. յայսոսիկ
XIV.30 Բն. տեղի փխ. անտեղի

XIV.31 Բն. բեւեռելով / շրջ. բեւեռք ի նմա
XIV.33 Բն. եւ դարձեալ եւ / Տեառն
XIV.35 Բն. հաւատացելոյ
XIV.37 Բն. Մի՛ + ամենեւին / բանք / արեան / շրջ. զաշակերտսն ի խորհուրդ / զգոհութիւն
XIV.40 Բն. ձեւ
XIV.42 Բն. թուչնոցդ / յանաւարութեացն / պատենաւորեացն / անուանակոչելոցն
XIV.43 Բն. շրջ. ասիցես զմարդոյն / եռաւք / տարածելոյ / շրջ. իմացեալ եղեւ ձեւն / նոյն փխ. այն / յամենեսին / հնոցն / պաշտիցին
XIV.44 Բն. լոմայից / — եւ ասարաց / ոսկոց / շրջ. ի հրամանէ թագաւորաց բարեպաշտից զկնի Քրիստոսի
XIV.45 Բն. — վան
XIV.46 Բն. զպատկեր փխ. զպատիւ / Նիւթն
XIV.47 Բն. շնորհ
XIV.48 Բն. համբոյր փխ. յամբայր / ընկալաւ
XV.1 Բն. Սինայ / — եւ
XV.2 Բն. քերովբէիւքն փխ. եւ քրովբէիւքն / շրջ. աւծեալ լինէր
XV.5 Բն. լուսնի / առաջնոցն / կամ փխ. եւ կամ
XV.6 Բն. ի կենդանութեան փխ. կարաւտութեան / յանձրեւաց / ապականացուած
XV.7 Բն. առատութիւնն / աստուածային
XV.9 Բն. ըստ / բնութեան / բազում + անգամ
XV.10 Բն. հատելոյ / անջատելոյ / բնական
XV.12 Բն. շրջ. քարի եւ փայտի / յայլոյ / ի խորհրդոյն / աւծելոյ
XV.14 աւրէնսդիր
XV.15 Բն. շրջ. զատելութիւնն եւ զաւտարութիւն
XV.16 Բն. ինքնին / զաւծութիւնն
XV.17 Բն. զանուն
XV.18 Բն. — եւ (2)
XV.19 Բն. ընդունելութիւն
XV.20 Բն. կարճամտութիւնդ / ստորին փխ. սորին
XVI.1 Բն. առաքեալն
XVI.2 Բն. բան փխ. բանիւ
XVI.3 Բն. աւրէնդրութիւնդ / ծերոյ / անկելոյ
XVI.4 Բն. բոլորովիմբ / եղիցիս
XVI.6 Բն. պատկառես
XVI.7 Բն. էապէս / բարւոյն / անդամանդեայ / հոգի եւ / մեծամեծացն / բարութեանց փխ. բարերարութեանց / զկնի փխ. եւ զկնի
XVI.8 Բն. զամենայնի / կարող փխ. կրաւղ / դու

XVI.9 Բն. եթէ
XVI.10 Բն. մոլորութեանն: Բն.՝ գրուած է եղել մոլորութեան, բայց յետոյ «որ»-ը ջնջուել է:
XVI.13 Բն. զձայնակցութիւնն
XVI.14 Բն. զհարազատաւք
XVI.15 Բն. համրիր
XVI.17 Բն. համարել
XVI.18 Բն. արտաքոյ ելով փխ. արտաքսելով
XVI.21 Բն. Քանզի + եւ / ի խոշտանկանաց
XVI.22 Բն. անընդունակք + գոլով / շրջ. կարծել ծածկեն
XVI.23 Բն. չարաբարիշտք փխ. չար ամպարիշտք / դսրովեն
XVI.24 Բն. զայնպիսիսն / լուաք փխ. լաւք
XVII.2 Բն. յաւիտենական / արժան փխ. արժէ / ոչ թշնամանեցան / կտուտս փխ. կտտանս
XVII.3 Բն. զվարուց / նմանութիւն / գոնէ / իրաց + ըստ
XVII.5 Բն. շրջ. պարսաւասէր շրթունք / սրբոց փխ. բարեաց / ճշմարտասէր փխ. ճշմարտից / անձանց / պատկական աւուրս փխ. պատկանաւորս
XVII.6 Բն. սուտաւք փխ. սուտք / բնաւ
XVII.7 Բն. — մի՛ / մարդասիրի
XVII.8 Բն. շրջ. զմեզ քրիստոնեայս
XVII.13 Բն. չարաց
XVII.14 Բն. շրջ. պատիւ եւ պաշտաւն
XVII.15 Բն. աւտարացեալս փխ. հեռացեալս / բնակս / քաղաքակիցս փխ. մերձաւորս

<Ը>

Վերնագիր Բն. անբաժանելի: Թ (ըստ երեւոյթին՝ Թ գլուխ, սակայն ինչու՝ պարզ չէ):

<Թ>

I.2 Բն. նախահաւակ
III.9 Բն. եղիցս: + Մեղա՛ Տեառն Աստուծոյ:
IV.1 Բն. Շրմըշտացի փխ. Սամոստացի
VI.3 Եկ գոյ փխ. գրէ / Եկ իր փխ. իրս
VI.4 Բն. Ասկոպիդոտեա / Բն՝ Թէաղոտոս / Բն՝ տրապիզոտ
VI.8 Բն. քանզի որ փխ. քան զոր
VII.1 Բն. կրէ փխ. զրկէ

<ԺԲ>

VIII.2 *Բն. թողիցն*

<ԺԳ>

I.1 *Բն. արարի ըստ + բան*

VII.2 *Բն. ընդնմանելով* փխ. *ընդ նմա գոլով,* իսկ ՏԿ-ի մօտ՝ *ընդ նմա ելով:* ՆԲՀԼ-ն չունի *ընդնմանելով* բառը: *Ընդ նմա գոլով- ընդ նմա ելով* տարընթերցումը յաճախակի է հանդիպում, իսկ *ընդնմանելով- ընդ նմա ելով* տարընթերցումը՝ մէկ անգամ:

IX.12 *Բն. կրկնապատիկ քահանայութեամբ* փխ. *կրկնապատիկք ահա բնութեամբ* (ուղղուած ըստ ՏԿ-ի)

IX.14 *ՏԿ աղանդելով* փխ. *աւանդելով*

IX.15 *ՏԿ երգակիցս* փխ. *ձայնակիցս* / *ՏԿ կարութենէն* փխ. *զաւրութենէն* / *ՏԿ անկարելին* փխ. *տկարն*

XIII.1 *ՏԿ ելով (էջ 202)* փխ. *գոլով*

XIII.2 *ՏԿ զունկնդրութիւն եւ (էջ137)* փխ. *զհնազանդութիւնն* / *ՏԿ զլսաւորութիւն (էջ 202)* փխ. *զհնազանդութիւնն*

XIII.3 *ՏԿ զաւակէն (էջ137)* փխ. *սերմանէն* / *ՏԿ ախտանալին (էջ 137)* փխ. *չարչարելին* / *ՏԿ ախտակրելին (էջ 202)* փխ. *չարչարելին* / *ՏԿ երկուցեալն (էջ 137)* փխ. *զարհուրեալն*/ *ՏԿ սարսափեալն (էջ 202)* փխ. *զարհուրեալն*

XIV.2 *Բն. բնութիւն (1) + ի ներքս ածեն*

<ԺԴ>

I.1 *Բն. աստուածն էր մարմին* փխ. *ներմարմին* (ուղղումը՝ ըստ ՏԿ-ի) / *դե...ելով* փխ. *դեղեւելով*

I.3 *ՏԿ անարարելի (էջ 259)* փխ. *անստացական* / *ՏԿ անառնելի* փխ. *անստացական (էջ 186, նոյնը՝ Սանահնեցի)* / *ՏԿ արարելի (էջ 259)* փխ. *ստացական* / *ՏԿ առնելի (էջ 186, նոյնը՝ Սանահնեցի)* փխ. *ստացական*

I.4 *ՏԿ ծփին (էջ 259)* փխ. *ամբոխին* / *ՏԿ ապացուցեալ (էջ 260)* փխ. *ցուցեալ*

I.7 *Բն. զսա* փխ. *զ'ըստ* / *ՏԿ հագագէ (էջ 260)* փխ. *շնչոյ*

I.11 *ՏԿ Համաձայնութիւն (էջ 260)* փխ. *հոմաձայնութիւն* (ՆԲՀԼ-ում այս բառը չկայ)

I.15 *Բն.՝ տարատութիւնն* փխ. *բաժանութիւնն (տարատութիւն* բառը չկայ ՆԲՀԼ-ում: Նոյնն է ՏԿ-ի մօտ եւ ՄՄ N 6453 ձեռագրում: ՄՄ N 2751 ձեռագրում այս հատուածը բացակայում է ամբողջութեամբ: Սակայն յաջորդ նախադասութեան մէջ ՏԿ-ի *տարատողաց* բառը Սարկաւագի մօտ ուղղուած է *բաժանողաց:* Հետեւաբար՝ ըստ Սարկաւագի՝ *տարատեմ=բաժանեմ):*

I.24 *Բն. եղանելի* փխ. *եղանել*

II.1 *Բն. որումն* փխ. *ուրումն*

VIII.6 *Բն. ճշմարիտ* փխ. *ճշմարտի*

XIII *Բն. ԱԾ* փխ. *ԺԱ*

XXV.1 *Բն. ճոխութեան եւ զաւրութիւն անել եւ* փխ. *ճոխութեամբ... ոչ*

XXVI.1 *Բն. Ցաբովկայ* փխ. *Ցոբոկայ*

Բնագիրը պատրաստեց
Մեսրոպ քհն. Արամեանը

ՄԽԻԹԱՐ ՍԱՍՆԵՑԻ

ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱՒԱՏԻ ԵՒ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ[1]

Աստուածային սուրբ հայրերի ու առաջին վարդապետների ասած ու շարադրած բոլոր նրբահայեաց պատմութիւններին առընթեր գրուել են նաեւ նրանց մասին յիշատակարաններ, [ուր նշուել է], թէ ո՛ր ազգից են, ո՛ր երկրից եւ ո՛ր բնակավայրից, նաեւ թէ նրանց վարդապետութեան աստուածային խօսքերը ի՛նչ ժամանակ են խօսուել ու յօրինուել: Ուստի կարեւոր համարեցինք մենք եւս սակաւ-ինչ գրի առնել մեր երանելի սուրբ հայր, տիեզերալոյս վարդապետ Մխիթարի կեանքի սկզբի ու վախճանի մասին, թէ ո՛ր ժամանակներում [ապրեց], ո՛ւմ ձեռքի տակ ուսում առաւ, ովքե՛ր էին նրա ուսումնակիցները, ինչպէ՛ս անցկացրեց միջին տարիքի ժամանակը եւ ինչպիսի՛ առաքինութեամբ ու արիութեամբ աւարտին հասցրեց իր ընթացքը:

Նետողաց ազգի[2] թագաւորներ ամբարիշտ ու հալածիչ Խարբանդի եւ նրա որդի Բուսայիդի[3], Կիլիկիայի հայոց երկրի թագաւորներ Օշինի եւ նրա որդի Լեւոնի օրօք, ինչպէս նաեւ Տէր Յակոբ Անաւարզեցի կա-

1 *Այս վարքը գրուած է Մխիթար Սասնեցու ճառերի ժողովածուի յիշատակարանում նրա աշակերտ Մկրտչի ձեռքով (հրատարակուած Corpus Scriptorum Orientalium-ի 542-րդ հատորում (Scriptores Armeniaci, tomus 21).* Mxit‘ar Sasnec‘i’s Theological Discourses, *edited by S. Peter Cowe. Lowanii, In Aedibus E. Peeters, 1993, pp. 177—182): Մխիթար Սասնեցու մէկ այլ վարք՝ գրուած Դանիէլ վարդապետի կողմից, տեղ է գտել հայոց յայսմաւուրքում (Գիրք որ կոչի Այսմաւուրք, ՌՃՀԹ (1730), կ. Գոլիս (Գրիգոր Մարգուանեցու տպարան), էջ 364—366): Այստեղ նրա յիշատակը նշւում է փետ. 11-ին, եւ Սասնեցին ներկայացւում իբրեւ Սուրբ Հոգով լցուած մի մեծ ու իմաստուն աստուածաբան, «սուրբ», «երիցս երանեալ երջանիկ հայր», ում «սիրտն սուրբ եւ մաշեալ, հոգին՝ խոնարհ եւ հանդարտ, ցած եւ պարկեշտ գնացիւք», «սէրն անկեղծական... խոնարհութիւն բարուցն անչափական»:*

2 *Հայոց մատենագրութեան մէջ այսպէս կոչւում են Թաթար-մոնղոլներին:*

3 *Ըստ Մ. Չամչեանի՝ Խորասանի ոստիկան Ղարբանդա խանը տիրել է 1303—1317 թթ., իսկ նրա որդի Բուսայիդը՝ 1317—1334 թթ. («Պատմութիւն հայոց», հտ. Գ, Վնտ., 1786 թ., էջ 299, 324):*

Թողիկոսի ու Աղթամարի աթոռի Տէր Զաքարիայի առաջնորդութեան շրջանում՝ ահա սրանց ժամանակներո՛ւմ [ապրեց] մեր երիցս երանեալ սուրբ հայր եւ աստուածաշնորհ մեծ վարդապետ Մխիթարը, ով Քաջբերունեաց գաւառի Կերմանից գիւղից էր եւ բարեպաշտ ծնողների զաւակ[4]: Երբ հօր եւ մօր վախճանից յետոյ երանելի Մխիթարը, որ աւել կամ պակաս քսան տասը տարեկան մի պատանի էր, [որը] է մնում, Անդրէաս անունով նրա ազգական մի կրօնաւոր նրան [իր խնամքի տակ] է առնում եւ սովորեցնում գիր ու դպրութիւն: Բայց նա [այլ] մանուկների պէս չէր զբաղւում աշխարհական բաներով ու զուարճութիւններով, այլ չափազանց մեծ ուշադրութեամբ ու յօժարութեամբ ընթերցում էր Սուրբ Գիրքը, ուստի տարիքով դեռ անկատար լինելով՝ հասու է դառնում [աստուածային] գիտութեան իմաստներին:

Այդ գաւառի իմաստուն ու անախտական առաջնորդ Տէր Խաչատուր եպիսկոպոսը, տեսնելով նրա՝ ամէն շնորհով լեցուն առաջադիմութիւնը, նրան քահանայ է ձեռնադրում: Իսկ նա, ըստ իրեն տրուած իմաստութեան, սկսում է ուսումնասիրել Աստուածաշունչ Գիրքը: Սրանից նրա մէջ բորբոքւում է աստուածային սիրոյ կրակը, որը չէր մարում, ինչի մասին հէնց ինքը պատմեց մեզ, եւ նրա հոգին եռում է նրա մէջ եւ փնտրում ուսուցիչ ու վարդապետ, որպէսզի նրանց միջոցով կրթուի, որովհետեւ այդ ժամանակ վարդապետ չկար Քաջբերունեաց գաւառում, իսկ ինքն էլ պատանի հասակի եւ անկատար լինելու պատճառով ամաչում էր մի ուրիշ տեղ գնալ, քանի որ դեռեւս մօրուք չէր բուսել նրա դէմքին: Սակայն քաջալերուելով իր ուսումնակիցներից, որոնց անուններն են Ստեփանոս ու Յովհաննէս եւ որոնց նա յիշում է այս գրքում[5], եւ առաջնորդ ունենալով Սուրբ Հոգուն՝ գնում է Այրարատեան նահանգ՝ այն սուրբ ուխտը[6], ուր Միածին Որդին իջաւ եւ ոսկեայ մուրճով բախեց անդունդների սանդարամետին: Այստեղ

4 *Դանիէլ վարդապետի հեղինակած վարքում գրուած է. «Նա բուն Սասուն գաւառից էր, մի ամբարիշտ, անասնամիտ ու գազանաբարոյ, արիւնահեղ մարդու որդի: Հօր մահից յետոյ մօր եւ մի քրոջ հետ եկաւ բնակուեց Ապահունեաց գաւառի Կերմանց կոչուող գիւղում» (Յայսմաւուրք, էջ 365):*

5 *Յիշեցնենք, որ այս վարքը գրուած է Մխիթար Սասնեցու ճառերի ժողովածուի վերջում իբրեւ յիշատակարան:*

6 *Խօսքը Սբ Էջմիածնի տաճարի եւ վանքի մասին է, որը Սասնեցու ժամանակ դեռեւս չէր վերստացել Մայր Աթոռի, այսինքն՝ կաթողիկոսական նստավայրի կարգավիճակը:*

սրբատեղիներին յարգանք ընծայելուց յետոյ գնում է Վայոց ձոր կոչուող գաւառի այն վանքը, որն այժմ կոչւում է Գլաձոր, գերակատար ու սուրբ վարդապետ Ներսէսի[7] մօտ: Երբ այստեղ երեք տարի մնում է նրա հետ, գալիս հասնում են Մխիթարի ուսումնակիցները, որոնց մասին վերեւում ասացինք, եւ երանելին յոյժ ուրախանում է իր ընկերների գալստեան եւ իրեն օգնական ու լծակից դառնալու համար բոլոր բարի գործերում եւ աստուածաշնչեան գրքերի վերաբերեալ քննութիւններում: Քանզի այդ քննութիւններից աստուածային իմաստութեան խորութիւնը ոչ միայն յայտնի է դառնում ու երեւում, այլեւ եւ մա՛նաւանդ հաստատւում մտքում ու հոգում եւ միանում [դրանց]. քանզի ուր չկայ քննութիւն, չկայ եւ կատարեալ իմաստութիւն:

Երբ սուրբ վարդապետ Ներսէսը մեծաջան ճգնութեամբ ու բարի վարքով [ապրելուց յետոյ] մահուամբ տեղափոխւում է Քրիստոսի մօտ, վարդապետական աթոռին նրան յաջորդում է նրա աշակերտ մեծ Եսային[8], ում ձեռքի տակ [Մխիթարն ու նրա ուսումնակիցները] կրթւում են երկար տարիներ: Բայց երանելի Մխիթարը, ով Հին եւ Նոր Կտակարանների գիտութեան իմաստութեան մէջ բոլորից բարձր էր, փիլիսոփայական գիտութիւնների մէջ յոյժ հմուտ եւ գիտութեան շնորհներով շատերին գերազանցող, սրտում դնում է հեռանալ այդ վայրից ու առանձնական կեանքով ապրել եւ ոչ թէ վարդապետական անուամբ ճոխանալ. այս մասին մենք հէնց նրանից իմացանք:

Ուստի գալիս է իր գաւառ եւ այդպէս ինչ-որ ժամանակ մնալուց յետոյ հանդիպում է Թադէոս անունով ոմն վարդապետի, ով տեսնելով, որ նա աստուածային իմաստութեան գանձի ընդունարան է, խրատելով ու աղաչելով նրան հարկադրում ու հրաման է տալիս կեանքի խօսքն ուսուցանելու եկեղեցում: Բայց Մխիթարը, որոշ ժամանակ [այդտեղ] մնալով եւ պատահածից դժգոհ, քանի որ պէտք չէ եւ ճիշտ չէ, ասում էր, մէկի մօտ ուսանել, իսկ մի ուրիշից ուսուցանելու հրաման ստանալ, վերադառնում է մեծ ուսուցիչ Եսայու մօտ եւ նրանից ուսուցանելու

7 Ներսէս Մշեցի (+1284) — Խոր Վիրապի վանքում Վարդան Արեւելցու աշակերտը. իբրեւ բարեւնպաստ յաջորդել է նրան, յետագայում այդ վանքի դպրոցը տեղափոխել Մշոյ Սբ Առաքելոց վանք, ապա Վայոց ձորի Աղբերց վանք (Գլաձորի վանք): Նրա օրօք է կազմաւորուել Գլաձորի համալսարանը:

8 Եսայի Նչեցի (1260—1338) — հարուստ գրական ժառանգութիւն թողած մեծ ու սրբակենցաղ վարդապետ, բարեւնպաստ, ում աշակերտել են Յովհաննէս Արճիշեցին, Յովհան Որոտնեցին եւ այլք:

հրամանը ստանալով՝ դարձեալ գալիս իր հայրենի գաւառը՝ Քաջբերունիք, եւ մեծ պատուի արժանանում Արճէշի քաղաքացիներից ու գաւառի բնակիչներից իր լուսափայլ իմաստութեան պատճառով: Քանզի իր ուսուցանման խօսքով լուսաւորում էր ամէնքին եւ հայրաբար մխիթարում իր մօտ եկողներին՝ ամէնքին դէպի բարի գործեր մղելով:

Նա բնակութիւն է հաստատում գեղեցկատես ու աստուածաբնակ մի անապատում, որ Մեծոփավանք էր կոչւում, եւ կեանքի բոլոր օրերն այնտեղ անցկացնում՝ հրաժարուելով այս կեանքի բոլոր խաբէական կրքերից եւ զարդարուելով բոլոր առաքինութիւններով ու բարի գործերով: Եւ յատկապէս ձեռնամուխ է լինում օտարականների ու պանդուխտների հանդէպ ողորմածութեան [գործերին], որովհետեւ յոյժ հմուտ լինելով գրչութեան արուեստի եւ գրքերի նկարազարդման մէջ՝ իր ձեռքի վաստակն ու ինչ որ ուրիշներից ստանում էր՝ այդ ամէնը բաշխում է աղքատներին ու կարօտեալներին՝ մեր ժամանակներում դառնալով «որբերի հայր եւ այրիների դատաւոր»՝ ըստ մարգարէի [խօսքի][9]: Ուստի այս բարեբարոյ եւ աստուածասէր անձի օրօք ամէն տեղ կուսութիւնը յարգանք ու պատիւ ստացաւ, եւ այս աստուածպաշտութեանը նախանձախնդիր՝ շատերը կանչուեցին՝ սրբութեամբ ու մաքրութեամբ իրենց ընծայելու Քրիստոսին, եւ երկնաւոր Փեսայի առագաստը մտնելուն արժանացան:

[Սուրբ] Հոգու երկնային վտակներից ըմպելով եւ առաքեալների շնորհին արժանանալով՝ աղօթքներով ու խնդրուածքներով սկսեց ու աւարտին հասցրեց այս աստուածային գրքի [շարադրութիւնը] Աստուածաշունչ մատեանի վկայութիւններով: Խօսեց տասնհինգ ճառ[10] եւ այս տասնհինգ ճառում բովանդակեց բոլոր առաքինութիւններն ու [աստուածային] գիտութեան իմաստութիւնը՝ իբրեւ զանազան ծաղիկներով զարդարուած վայելուչ բուրաստան՝ սուրբ Եկեղեցու ուսումնասէր պատանիների օգտի ու շահի համար: Սրանից բացի, ունենք այս երանելու նաեւ ուրիշ ստեղծագործութիւններ՝ սուրբ եւ աստուածաբան աւետարանիչ Յովհաննէսի ընդհանրական երեք թղթերի, ինչպէս նաեւ նոյն Յովհաննէս աւետարանչի հանգստեան [պատմութեան] մեկնութիւնները, ունենք նաեւ Լեւոնի չարաբաստիկ տոմարի վերա-

9 Սաղմ. կէ 6

10 Սասնեցու գործերի նշուած հրատարակութեան մէջ ներկայացուած է տասնեօթ ճառ:

բերեալ նրա խօսքը՝ նրա արժանաւորութեան համաձայն բացատրաբար շարադրուած:

Իրենից յետոյ սրանք իբրեւ կենդանի յիշատակ թողնելով Քրիստոսի Եկեղեցուն եւ իր ընթացքը մեծ առաքինութեամբ աւարտին հասցնելով ալեւորեալ ծեր տարիքում՝ հեռացաւ միշտ ողջերի եւ անմահների քաղաքը, որին տենչում ու փափագում էր հոգով՝ տեսնելու անճառելի լոյսը եւ յաւիտեան ուրախանալու Յիսուսի խանդակաթ սիրով: Երբ մօտ էր վախճանման [օրուան], պատմեց մեզ իր տեսած երազները, որոնք նրա վախճանն էին ցոյց տալիս: Ասաց. «Գիշերը երազում տեսայ ինձ մի գետի եզրին [կանգնած]. գետը ահագնատեսիլ յորդառատութեամբ գալիս էր, եւ նրա վրայ մի մեծ ու գեղեցիկ ոսկեայ խնձոր կար: Շատ անգամ ջանք թափեցի այն հանելու, բայց չկարողացայ»: Մի քանի օր անց ասաց. «Երազում երկրից մինչեւ երկինք ձգուող մի սանդուղք տեսայ, ինչպէս սուրբ Յակոբի [տեսիլքում][11], շատերը բարձրանում էին դրանով, եւ ես՝ նրանց հետ»: Եւ իր տեսած մի ուրիշ երազ էլ պատմեց՝ բոլոր հաւատացեալներին ուրախացնելու եւ յոյսով հաստատելու համար: «Տեսայ, որ քրիստոնեայ բոլոր ազգերը ձեռքներին խաչ էին բռնել եւ հորդան տալով՝ խուռներամ ընթանում էին դէպի արեւելք՝ հանդիպելու երկնաւոր Փեսայ Քրիստոսին, եւ ինձ էլ էին իրենց հետ առած տանում»: Սրանից յետոյ մահուամբ տեղափոխուեց Քրիստոսի մօտ՝ հայոց ՉՉՉ [786] թուականի[12] հոռի ամսի 27-ին՝ ուրբաթ օրը[13]: Նրա պատուական մարմինը նոյնպէս Մեծոփավանքում է թաղուած՝ անապատի հարաւային կողմում գտնուող ընդհանուր գերեզմանոցում, ի փառս Քրիստոսի:

Նրա հոգեւոր հարազատ Ստեփանոս վարդապետին եւ ինձ՝ անարժան Մկրտչին, որ շարադրեցի այս փոքր պատմութիւնը, աղաչում եմ յիշել Տէր Յիսուս Քրիստոսի առաջ, որպէսզի [մեր] յանցանքները ների եւ մեղքերին թողութիւն շնորհի մեր Քրիստոս Աստուածը, Ում փառք եւ երկրպագութիւն՝ Հօր եւ Սուրբ Հոգու հետ, յաւիտեանս. ամէն:

11 Մն. ԻԸ 10—16

12 Համապատասխանում է Քրիստոսի 1337 թուականին:

13 Արդէն յիշուած յայտնաւորքը իբրեւ Մխիթար Սասնեցու վախճանման օր նշում է հոռի 25-ը (չորեքշաբթի օր), թէեւ յիշատակում փետ. 11-ին, իսկ Մ. Զամչեանը նշում է մեհեկի 25-ը՝ փետ. 11, երեքշաբթի օր («Պատմութիւն հայոց», հտ. Գ, էջ 275):

ՃԱՌ ՈՒԹԵՐՈՐԴ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԳԵՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ[14]

Այս ընդդիմաբանութիւնը վերաբերում է ոմանց կիրառած քահանայական զգեստներին:

Ոմանք [ասում են], որ պէտք է ըստ Հին Օրէնքի աւանդութիւնների զարդարուել՝ ըստ Ահարոնի, նրա որդիների եւ սրանց յաջորդածների քահանայութեան, քանի որ [այս մասին] Տիրոջից հրաման առան: Իսկ ուրիշներ էլ նրանց ասածներին հակաճառում են ըստ Նոր Օրէնքի աւանդութիւնների, որոնք սահմանուեցին Յիսուս Քրիստոսի ձեռքով՝ շնորհով եւ ճշմարտութեամբ՝ [յիշեցնելով], որ «հինն անցաւ, եւ ահա

14 Սոյն ճառը հետաքրքիր է նրանով, որ արտացոլում է Հայոց Եկեղեցում ծիսական զգեստների կիրառութեան դէմ երկար դարեր տեւած ընդդիմութիւնը բուն Հայաստանի տարածքում: Դեռեւս ԺԲ դարում սբ Ներսէս Շնորհալին քահանաների դասին ուղղած իր թղթում գրում է. «Թէպէտեւ ամէն տեսակ բարիքներով եւ առաքինութեամբ կատարեալ լինէք, սակայն անփոյթ մի՛ գտնուէք Եկեղեցու պայծառութեան եւ սուրբ Պատարագի պատուական ու մաքուր զգեստների հանդէպ, ինչպէս լսում ենք ոմանց մասին, թէ հասարակ զգեստներով եւ ազատոտ տրեխներով են բարձրանում սուրբ բեմ եւ ոչ խորհրդական զգեստներով կատարում սահմռկեցուցիչ խորհուրդը եւ սա իրենց անձերի համար պարկեշտութիւն են համարում ժողովրդին եկեղեցուց դուրս հանելով, դուռը նրանց երեսին փակելով, եւ ոչ միայն այս, այլեւ անմտաբար բամբասում են մի շարք եկեղեցիների եւ մեզ մօտ տիրող բարեպարդ կարգաւորութեան մասին» (Թուղթ ընդհանրական, «Գանձասար» հանդէս, 1991 թ., էջ 82): Սակայն, ինչպէս երեւում է, Պատարագի ժամանակ ծիսական զգեստների կիրառութեան հանդէպ բացասական վերաբերմունքը Հայաստանում միայն ոմանց քմահաճոյքը չի եղել: Այն եղել է հաստատուն համոզմունք, հաւանաբար նաեւ ընդվզում ընդդէմ Արեւմուտքից Հայոց Եկեղեցի ներթափանցող նորարարութիւնների, որոնք տեղ գտան յատկապէս հայոց պատմութեան կիլիկեան շրջանում: Սակայն այս պայքարն ի վերջոյ աւարտւում է կիլիկեան հայրերի համոզմունքի եւ կիրառութեան յաղթանակով, թէեւ չգիտենք, թէ Հայաստանում ծիսական զգեստների գործածութիւնը երբ է ընդհանրացել: Ցատակ է, սակայն, որ թէ՛ Սասնեցու ուսումնակից Յովհաննէս Արճիշեցին, թէ՛ նրանցից նոյնիսկ մէկ դար չանցած՝ սբ Գրիգոր Տաթեւացին խօսում են պատարագչի զգեստաւորութեան կարեւորութեան մասին (Յովհ. Արճիշեցի, Մեկնութիւն պատարագի, Սբ Էջմիածին, 1999 թ., էջ 24—25. Գ. Տաթեւացի, Գիրք քարոզութեան, Ամառաս հտ., Կ.Պոլիս, 1741 թ., գլ. ԽԱ, Վասն կարգի քահանայութեան, էջ 182—183):

ամէն ինչ նոր դարձաւ» [Բ Կոր. Ե 17], եւ «այն ամէնն, ինչ հնանում ու ծերանում է, մօտ է ապականութեան» [Եբր. Ը 13]: Որովհետեւ եթէ Հին Օրէնքի (որը ստուերն է այս ճշմարտութեան[15]) [հրահանգներից] մէկնումէկը կատարում ենք, պարտաւոր ենք բոլորը կատարել՝ ըստ Պօղոսի խօսքի. «Վկայում եմ[16] ամէն մարդու, ով թլփատւում է, որ պարտաւոր է ամբողջ Օրէնքը կատարել: Հեռու էք Քրիստոսից, որ Օրէնքով էք արդարանում, եւ զրկուած էք շնորհից» [Գաղ. Ե 3—4]: «Ամէն ինչ կղկղանք եմ համարում, որպէսզի Քրիստոսին շահեմ եւ Նրա մէջ գտնուեմ: Ոչ թէ Օրէնքից եղած արդարութիւն ունեմ, այլ Քրիստոսի հաւատքի, Ով Աստուծոյ արդարութիւն է» [Փլպ. Գ 8—9]:

[Մենք եւս] համաձայն ենք սուրբ առաքեալների ասած խօսքերին, [առաքեալների], ովքեր Սուրբ Հոգու գործակցութեամբ հաստատեցին Նոր Օրէնքի պահպանութիւնը: Կային Հին Օրէնքից բաներ, որոնք առաքեալների դասերը խափանեցին՝ աւելորդ համարելով, եւ կային բաներ, որ վերահաստատեցին՝ մարդկանց հոգիների փրկութեան համար հարկաւոր ու պիտանի գտնելով: Եւ սա համաձայն է Տիրոջ խօսքին. «Մի՛ համարէք, թէ եկայ Օրէնքը կամ Մարգարէներին խափանելու. խափանելո՛ւ չեկայ, այլ լրացնելո՛ւ» [Մատթ. Ե 17], ուստիեւ սպառնում է նրանց, ովքեր խափանում են այն. «Ով խափանի այս փոքր պատուիրաններից որեւէ մէկը եւ այդպէս սովորեցնի մարդկանց, երկնքի արքայութեան մէջ «փոքր» կը կոչուի» [Մատթ. Ե 19]: Վերահաստատում է նաեւ շատ աւելի մեծ [պատուիրանը]՝ «Պիտի սիրես քո Տէր Աստծուն քո ամբողջ սրտով ու քո ամբողջ հոգով, եւ ընկերոջդ՝ քեզ պէս... Քանզի այս երկու պատուիրաններից են կախուած ամբողջ Օրէնքն ու Մարգարէները» [Մատթ. ԻԲ 37—40], եւ այլ սրանց նման [պատուիրաններ]՝ մարդկանց բարի գործերի մէջ հաստատելու համար: Իսկ նրանք, ովքեր, Աստուծոյ խօսքին աշակերտելով, հետեւեցին ճշմարտութեանը, աւելորդն ու խոտանը դեն նետեցին՝ դրանք համարելով թոյլ եւ անկարող՝ մեր բնութեանն օգնելու կամ մեր հոգին մահուանից փրկելու, ինչպէս հաղուստների պաճուճանքները եւ սրանց նման բաները՝ համաձայն Հին Օրէնքի սկզբունքների. որովհետեւ պէտք չէէ յետ շրջուել՝ կատարելով աւելի թոյլ [օրէնքները], որոնք նաեւ քննադատութեան են արժանի: Ովքեր այդպիսի [օրէնքների մա-

15 Եբր. Ժ 1

16 Ճառի բնագրում՝ «Վկայ են», որը պիտի ուղղուի «Վկայեմ»:

սին են մտածում], նման են նրանց, ովքեր իրենց առաջ երեքօրեայ ճանապարհ ունեն կտրելու, առաջին [օրուանն] անցնում են, պէտք է նաեւ երկրորդ ու երրորդ [օրերինն] էլ անցնեն՝ պատրաստուած օթեւաններին [հասնելու համար], սակայն մէկ օրուայ [ճանապարհն] անցնելուց յետոյ շրջուելով յետ են դառնում՝ չժամանելով հանգստի օթեւանները, որոնք նրանց նպատակակէտն էին: Քանզի ովքեր միայն արտաքին կերպարանքն են զարդարում՝ անփոյթ գտնուելով հոգեւորի հանդէպ, բազում քննադատութեան են արժանանում, նախեւառաջ Տիրոջ խօսքերից. «Լայնացնում են,— ասում է,— իրենց գրապանակները եւ երկարեցնում իրենց հագուստի քղանցքները» [Մատթ. ԻԳ 5]: Սա մեղադրանքի եւ ոչ թէ գովեստի կամ պանծանքի [արժանի] կերպարանք է. որովհետեւ նրանք միայն մարմնաւորապէս էին զարդարանքներ գործածում, որոնք պէտք է հոգեւոր զարդի վերածենք՝ հոգեւոր սկզբունքով: [Այդ պատճառով էլ Տէրը] ողորմելի համարեց նրանց, ովքեր միայն արտաքինի մասին էին խնամք տանում՝ սեփական կամքով զրկուած լինելով հոգեւոր վայելչութիւններից: «Վա՛յ ձեզ,— ասում է,— որովհետեւ բաժակի եւ ամանի դուրսը մաքրում էք, իսկ ներսից լի էք յափշտակութեամբ ու անժուժկալութեամբ», այսինքն՝ պղծութեամբ: «Կո՛յր փարիսեցի, մաքրիր նախ բաժակի [եւ ամանի] ներսը, որպէսզի նրանց դուրսն էլ մաքուր լինի» [Մատթ. ԻԳ 25—26]: Ուրիշ աւելի խիստ յանդիմանութիւններ էլ է ուղղում այնպիսիներին, ովքեր աչք զարնող կերպարանքով ու չքեղ հագուստով են տեսնողներին ցուցադրում իրենց, մինչ նրանց ներքին մարդը մեղքերով եղծուած է եւ ոչ մի գովեստի արժանի չէ: «Նման էք,— ասում է,— սպիտակեցուած գերեզմանների, որոնք դրսից գեղեցիկ են երեւում, բայց ներսից լի են մեռելների ոսկորներով եւ ամենայն պղծութեամբ: Այդպէս էլ դուք դրսից արդար էք երեւում մարդկանց, բայց ներսից լի էք կեղծաւորութեամբ ու անօրինութեամբ» [Մատթ. ԻԳ 27—28], ինչպէս որ Պօղոսն էլ արտաքինից զարդարուած քահանայապետին «սպիտակեցուած որմ» կոչեց [Գործ. ԻԳ 3]: Արդարացիօրէ՛ն է [Տէրը] «կեղծաւոր» կոչում այսպիսիներին. որովհետեւ միշտ ուշադրութիւն են դարձնում ու զգուշութիւն ցուցաբերում նրա հանդէպ, ինչ որ մարդկանց է երեւում՝ իրենց բոլոր գործերը միշտ ի ցոյց մարդկանց անելով, իսկ ինչ որ Աստուած է տեսնում, դրա մասին երբեք հոգ չեն տանում:

Կան ոմանք, որ ասում են. «Պէտք է զարդարուել պայծառ ու մաքուր զգեստով եւ ապա՛ Տէրունական խորհրդի սպասաւորութեանը

մօտենալ, որովհետեւ [այդ զգեստը] պատկերում ու խորհրդանշում է հոգեւո՛ր պայծառութիւնը. [ահա] այդ խորհրդո՛վ ենք [մեր] արտաքին կերպարանքը զարդարում»: Այսպիսիները յանդիմանւում են նախ տէրունական հրամաններից, որովհետեւ թոյլ չտրուեց միայն արտաքինը զարդարել, իսկ մեղքերով աղտեղուած հոգին յանցանքների աղտից փոքր-ինչ մաքրելու ջանք չթափել: Երկրորդ՝ պէտք է հարցնել այսպիսիներին, թէ մաքո՞ւր հոգի ունեն, թէ մեղքերով աղտեղուած ու գարշելի դարձած: Եթէ ասեն, թէ ունեն մեղքից զերծ մաքուր հոգի, կը յանդիմանի նրանց Տիրոջ պատուիրանը, որը թելադրում է բարի գործերը ծածուկ պահել՝ միայն երկնաւոր Հօրը տեսանելի, [լինեն դրանք] ողորմութիւն, աղօթք, թէ պահք, որպէսզի, ասում է, [Հայրը] քեզ յայտնապէս հատուցի գալիք յաւիտեանում[17]: Իսկ եթէ ասեն, թէ մեղքերով եղծուած անմաքուր հոգի ունեն, կեղծաւորներին ու անհաւատներին կը նմանուեն, որովհետեւ միայն երեւացող կերպարանքով զարդարուելով՝ տեսնողներին կարծել են տալիս, թէ նաեւ հոգու մաքրութիւն ունեն: Այսպիսինի մասին Տիրոջից ասուեց, որ նրան մէջտեղից հանեն եւ անհաւատների ու կեղծաւորների վիճակին արժանացնեն[18]: Որովհետեւ աստուածային պատուիրաններն [ամփոփող] Գրքերում ոչ մի տեղ չի երեւում, թէ [պէտք է] միայն մարմինը զարդարել եւ հոգին առանց զարդարանքի թողնել: Գուցէ այն վկայաբերես, որը [Տէրն] ասաց անողորմ շնչաւոր [մարդու] մասին. «Մի հարուստ մարդ կար, ով բեհեզ ու ծիրանի էր հագնում եւ շարունակ մեծապէս զուարճանում» [Ղուկ. ԺԶ 19], սակայն առաքելական աւանդութիւններում երբեք [նման բան չես գտնի]: Քանզի եթէ [անգամ] կանանց, ում, տղամարդկանց համեմատ, փոքր-ինչ պատշաճում է հագուստների պաճուճանքներով զարդարուել, թոյլ չի տալիս [զարդարուել] մարգարտով ընդելուզուած ոսկեման հիւսերով կամ պաճուճազարդ հագուստներով, այլ միայն յորդորում յոյսը դնել աստուածպաշտութեան ու հոգու զգաստութեան վրայ՝ սա՛ վայել համարելով[19], եւ նոյնի մասին խօսում է նաեւ Հաւատքի Վէմը հետեւեալ ձեւակերպմամբ. «Նրանց զարդը թող լինի ոչ թէ արտաքին հիւսերով ու ոսկեհուռ ծամակալներով կամ պաճուճուած զգեստներով...» [Ա Պետ. Գ 3], ուրեմն եթէ կանանց հա-

17 Մատթ. Զ 1—18
18 Մատթ. ԻԴ 51
19 Ա Տիմ. Բ 9—10

մար այսպէս է [կարգադրուում], ապա ի՞նչ պէտք է ասել քահանայական դասերի մասին, որոնք պէտք է զարդարուեն հոգու սրբութեամբ ու մաքրութեամբ՝ ըստ Արարչի կամքի հաճութեան: Իսկ մարմնական զարդարանքի մասին բնաւ չպէտք է հոգան. «Մի՛ առէք այս աշխարհի կերպարանքը,— ասում է [Պօղոս առաքեալը],— այլ նորոգուէք ձեր մտքի՛ նորոգութեամբ» [Հռոմ. ԺԲ 2]:

Իսկ եթէ մէկն ասում է, թէ անմաքուր ու գարշելի տեսք ունեցող զգեստով չի կարելի մօտենալ ահաւոր Խորհրդին սպասաւորելու, պատասխանում ենք. «Արդեօք ի՞նչն է աւելի գարշելի եւ պղծութիւն համարւում, քան ներկուած մետաքսներն ու կերպասները. դրանք արհեստական միջոցներով ստացւում են գարշ որդերից»:

Եւ արդ՝ քանի որ Աստուածային Գրքերի վկայութեամբ յայտնեցինք, որ խոտելի եւ քննադատութեան արժանի են նրանք, ովքեր աչք զարնող կերպարանքով, միայն հագուստներով զարդարուելով են պճնւում՝ նման այն պղտակորոյս թզենուն, որը միայն իր սաղարթով էր ուրախանում եւ անէծքի տակ ընկաւ[20], իսկ հոգ չեն տանում հոգեւոր զարդի մասին, որով զարդարուելո՛վ կարելի է մտնել երկնաւոր Փեսայի առագաստը, ուստի այսուհետեւ պէտք է խօսել անկապուտ ու վայելչական զգեստների եւ այն բանի մասին, որը վեր է բանականների բնութիւնից:

Սա եւս [պէտք է կատարել Սուրբ] Գրքի խօսքերի վկայութեամբ, մանաւանդ աստուածային Պօղոսի, ով ասում է. «Հագէք Տէր Յիսուս Քրիստոսին եւ մարմնին խնամք մի՛ տարէք ցանկութիւնների համար» [Հռոմ. ԺԳ 14]: Նաեւ՝ «Ձեր վրայից հանել նախկին ընթացքով [ապրող] հին մարդուն՝ խաբէական ցանկութեամբ ապականուածին, եւ նորոգուել ձեր մտքի հոգով, հագնել նոր մարդուն, որ Աստծով հաստատուած է արդարութեամբ ու ճշմարիտ սրբութեամբ» [Եփես. Դ 22—24]: «Հանե՛ք ձեր վրայից հին մարդուն իր գործերով եւ հագէք նորը՝ գիտութեամբ նորոգուած՝ ըստ նրա Արարչի պատկերի» [Կող. Գ 9—10], որ պայծառ փառքով գերազանցում է [հնին] արարածների Ստեղծչի [պատկերն] իբրեւ անկողոպտելի զարդ հագած լինելով: Ըստ Եսայու՝ «Հոգիս կը ցնծայ Տիրոջով, որովհետեւ փրկութեան զգեստ եւ ուրախութեան պատմուճան հագցրեց ինձ, իբրեւ փեսայի՝ պսակեց ինձ եւ իբրեւ հարսի՝ զարդարեց ինձ» [Ես. ԿԱ 10]: Եւ մենք նոյնպէս զգես-

20 Մատթ. ԻԱ 19

տաւորուեցինք Նրանից՝ վարքի անարատութեամբ ու սրբութեամբ. «Կենդանի եմ Ես,— ասում է Տէրը.— Նրանց ամէնքին իբրեւ զգեստ կը հագնես[21]» [Ես. ԽԹ 18]: Պայծառ զգեստով առանց ամաչելու այս զարդարուելն ունի հոգեւո՛ր խորհուրդ ու նշանակութիւն եւ ոչ թէ զարդարուելն է մարմնապէս՝ արտաքինից, աչք զարնող կերպով, հոգեւոր բարի գործերից մերկ լինելով:

Իր վարդապետութեան խօսքն առաջ տանելով՝ [Պօղոս առաքեալն] ասում է. «Հագէ՛ք այսուհետեւ, իբրեւ Աստուծոյ սուրբ ու սիրելի ընտրեալներ, գութ, ողորմածութիւն, քաղցրութիւն, խոնարհութիւն, հեզութիւն, երկայնմտութիւն» [Կող. Գ 12]: Սա՛ է մաքուր ու պայծառ զգեստների տարբերութիւնը, եւ սրանցո՛վ են [արժանաւորները] ուրախանալու իմաստուն կոյսերի հետ անմահ կեանքի լուսեղէն հանդերձանքով: «Սրա երէցներին փրկութիւն կը հագցնեմ,— ասում է [Աստուած],— եւ սրա սրբերը ցնծալով կը ցնծան» [Սաղմ. ՃԼԱ 16]:

Իսկ եփեսացիներին ուղղուած թղթի վերջում [Պօղոս առաքեալը] հաւաստիաբար մէկառմէկ սովորեցնում է, թէ ինչպիսին են [մարմնի] բոլոր անդամների զարդարանքները, որոնցով «Աստուծոյ մարդը կատարեալ է դառնում՝ հաստատուելով բոլոր բարի գործերում» [Բ Տիմ. Գ 17]:

«Ամրացրէք ձեր մէջքը ճշմարտութեամբ» [Եփես. Զ 14],— ասում է ըստ Եսայու՝ «Մէջքին արդարութիւն կը կապի եւ կողերը ճշմարտութեամբ կը պատի» [Ես. ԺԱ 5]: Թելադրում է գօտեւորուել «ճշմարտութեամբ», որը ճանաչել ենք իբրեւ բոլոր գոյներից ու երանգներից ամենապատուականը եւ զուգակից՝ հաւատի արդարութեանը, որովհետեւ ցոյց է տալիս, որ մարդկանց համար անհնարին բաները հնարաւոր են աստուածային զօրութեան կարողութեանը:

«Եւ հագէք արդարութեան զրահը» [Եփես. Զ 14], այսինքն՝ գեղեցկացէք գործնական առաքինութեամբ, որի հաճելի խունկն Աստուած առաւել է հոտոտում, քան բոլոր անուշաբուրութիւնները:

«Ձեր ոտքերին հագէք խաղաղութեան աւետարանի պատրաստութիւնը» [Եփես. Զ 15]. սրանով ո՛չ աջ եւ ո՛չ ձախ խոտորուէք, այլ խաղաղութեան աւետարանչի գեղեցիկ ոտքով ընթացէք արքունական ճանապարհով[22]:

21 Մատենագրաբարեան բնագրում «զգեցայց» (կը հագնեմ):
22 Ես. ԾԲ 7, Առակ. Դ 27

«Այս ամէնի վրայ առէք հաւատքի վահանը, որով կը կարողանաք չարի բոլոր այրող նետերը հանգցնել» [Եփես. Զ 16]: Ամուր հաւատով զօրանալով աշխարհակալ խաւարի [յարուցած] բոլոր պատերազմներում՝ դրանով հանգցնել նրա ամբողջ չարութիւնը, «չվախենալ գիշերը տագնապից եւ ոչ ցերեկը՝ թռչող նետից» [Սաղմ. Ղ 5], որը մահացու հարուածներով խոցոտում է մարդկանց:

«Եւ դրէք փրկութեան սաղաւարտը» [Եփես. Զ 17], որը գլխի զարդն է՝ աստուածային փրկութեամբ [մեզ] պահպանելու համար՝ Տէր Յիսուս Քրիստոսով, Ում արեամբ ունենք փրկութիւն եւ Նրա մարմնի միջոցով՝ մեղքերի թողութիւն:

«Եւ Հոգու սուսերը, որն Աստուծոյ խօսքն է՝ ամէն տեսակ աղօթքներով ու խնդրուածքներով» [Եփես. Զ 17]: «Հոգու սուսեր» է կոչում աստուածային վարդապետութեան խօսքը, որը «հոգի եւ կեանք» է [Յովհ. Զ 64], որով [Աստուած] խօսեց մեզ հետ, եւ որով զօրանալով բոլոր ճգնաւորական պատերազմներում՝ զարդարւում ենք աղօթքներով ու խնդրուածքներով:

Ով եղբայր, սրանք եւ այսպիսի բաներն են քահանայական դասերի պայծառ զարդը եւ ոչ թէ աչք զարնող կերպարանքով պճնուելը՝ մարդկանց երեւալու համար, քանզի «այդ ամէնն աշխարհի հեթանոսներն են փնտրում» [Մատթ. Զ 32], իսկ մի դրքում էլ ասւում է. «Պճնուող կրօնաւորը» կամ քահանան «դեւերի ընդունարան է»[23]: Սրանց կողքին ճիշտ համարեցինք յիշատակել նաեւ մեծ Եւագր անապատականի վարդապետութեան խօսքերը քահանայական զարդերի եւ հագուստի կարգաւորութեան մասին՝ այս նոյն խորհրդով, որը [ցոյց տալու] համար էլ նա հոգ տարաւ փոքր-ինչ խօսել:

Գլխի զարդի եւ պերճ թագի մասին այսպէս է սովորեցնում. «Քահանայական պսակն անշարժ հաւատքն է, որը երկիւղ ամենեւին չի ունենայ»[24]:

Արդարութեան զգեստների մասին այսպէս է ասում. «Հոգու զգեստը բանական հոգու առաքինութեան հաստատութիւնն է, որով [հոգին] սովորել է բարի գործեր կատարել»[25]:

23 Եղնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երեւան, 1994, Եղնիկայ վարդապետի խրատք, էջ 248
24 Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնք, Վենետիկ, 1907 թ., «Զորրորդ հարիւրեակ», ԽԶ, էջ 184
25 Անդ, ԾԳ

Պճղնաւոր պատմուճանի մասին [ասում] է այսպէս. «Հոգու պճղնաւորը Աստուծոյ պատուիրանների գաղտնի գիտութիւնն է»[26]:

Հոգեւոր հագուստի մասին [ասում է] այսպէս. «Հոգու հագուստը հոգեւոր ուսումն է, որը հաւաքում է մոլորութեամբ մերկացածներին»[27]:

Կաշուեղէնով ծածկուելու խորհրդի մասին, որը կրքերի մեռուցման իրագործումն է, [ասում է] այսպէս. «Քահանայական վերարկուն բոլոր ախտաւոր ցանկութիւնների համար մեռնելն է Աստուծոյ գիտութեանը [հասնելու] նպատակով»[28]:

Պայծառ ու սպիտակափայլ բեհեզի մասին [ասում է] այսպէս. «Հոգեւոր բեհեզը հոգու արդարութիւնն է. [հոգին] դրանով է պայծառանում՝ գիտութեամբ ու Աստուծոյ հանդէպ հաւատով հանդերձ»[29]:

Գօտիով պնդուելու մասին էլ այսպէս է սովորեցնում. «Քահանայի ամրացրած գօտին նախանձախնդրութեամբ [զուգակցուած] խոնարհութիւնն է, որն ամրացնում է մտքի արիութիւնը՝ ըստ տէրունական խօսքի. «Թող ձեր մէջքը գօտեւորուած լինի» [Ղուկ. ԺԲ 35]»[30]:

Ուրեմն ինչո՞ւ առաւել նուաստ ու ցածր բաները պիտի գործածենք եւ չխօսենք տօնելի բարձրագոյն բաների մասին, որոնցով հոգիների փրկութիւնն ու անմահ կեանքի առհաւատչեան են յարդարւում: Քանզի եթէ նրանք, որոնցից աւելի կարեւոր ու պիտանի ոչինչ չկայ մեր բնութեան համար, մեծն Պօղոսը թողնելու արժանի համարեց. «Թողնելով Քրիստոսի սկզբի մասին խօսքը՝ վերջին դանք. այլեւս պէտք չէ հիմքը դնել այն մեռելոտի գործերի համար ապաշխարութեան, Աստուծոյ հանդէպ հաւատի, մկրտութիւնների ուսմունքի, ձեռնադրութեան, մեռելների յարութեան եւ յաւիտենական դատաստանի» [Եբր. Զ 1—2], ապա ինչո՞ւ պիտի առաւել թոյլ ու ծաղրական բաները յիշատակենք: Ուրեմն մանկական բաներ ու պառաւների ցնդաբանութիւն են ճշմարտութեան ջատագովութեան հակառակորդների [խօսքերը], թէ պէտք է աչք զարնող կերպարանքով զարդարուած մօտենալ տէրունական անճառ խորհրդի սպասաւորութեանը:

26 Անդ, կԲ, էջ 186
27 Անդ, կե
28 Անդ, կԸ
29 Անդ, հԱ
30 Անդ, հԴ, էջ 187

Պէտք է այն բաների մասին մտածել, ուր Քրիստոսը նստում է Աստուծոյ աջ կողմում, եւ ոչ թէ այն, ինչ այս երկրում է[31]: Քանզի «մեր առաքինութիւնը երկնքում է, որտեղից եւ սպասում ենք Փրկիչ Տէր Յիսուս Քրիստոսին, Ով նորոգելու է մեր խոնարհ մարմինն Իր փառաւոր մարմնի նմանութեամբ» [Փլպ. Գ 21]: Նաեւ [մտածել], թէ ինչպէս է այս արարչութիւնն իր վախճանը գտնելու առաջին Պատճառի մօտ, Ումից ստեղծուել է: Այլեւ [պէտք է մտածել] Աստուծոյ Որդի Յիսուս Քրիստոսի՝ հայրական փառքով, երկնքի ամպերով գալստեան մասին, արդարների ու մեղաւորների կատարած բարի ու չար գործերի հատուցման, երբ ամբարիշտներին թողութիւն չի տրուի եւ ահաւոր տանջանքներ կը պատրաստուեն [նրանց համար]՝ ըստ արդար դատաստանի, որին ինքնե՛րս մեզ արժանի դարձրինք՝ յօժարակամօրէն շեղուելով ճշմարտութեան վարքից: Իսկ արդարներն ու սրբերը մշտնջենաւոր ուրախութիւն ու անապական կեանք [կը ստանան]՝ պարակից լինելով հրեշտակային դասերին, որոնցից գոհաբանութեամբ փառաւորւում է արարածների Արարիչը՝ միածին Որդին՝ Իր հզօր Հօր եւ ճշմարիտ, Իրեն փառակից ու ահաւոր Սուրբ Հոգու հետ, յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Գրաբարից թարգմանեց եւ ծանօթագրեց
Ս. Ստամբոլցեանը

31 Հմմտ. Կող. Գ 2—3:

ՍԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՔԱՐՈԶՆԵՐԸ ՄԵՂՔԵՐԻ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Միջնադարի հայ մեծանուն վարդապետ սբ Գրիգոր Տաթեւացու գրական հարուստ ժառանգութեան մէջ կարեւոր տեղ է զբաղեցնում նրա քարոզգիրքը՝ իր «Զմեռան» եւ «Ամառան» հատորներով: Սրանք տպագրուել են 18-րդ դարում Կոստանդնուպոլսում (1740 եւ 1741 թթ.), եւ մինչ օրս չեն պատրաստուել ու հրատարակուել դրանց քննական բնագիրը եւ արդի հայերէն թարգմանութիւնը. վերջին տարիներին այստեղ-այնտեղ տպագրուել է դրանցից որոշների թարգմանութիւնը միայն: Սակայն այս քարոզների նշանակութիւնն ու կարեւորութիւնը, ինչպէս նաեւ անհրաժեշտութիւնը մեր ժողովրդի կրօնական եւ հոգեւոր-բարոյական դաստիարակութեան համար շատ մեծ են: Տաթեւացու քարոզգիրքը մի իւրօրինակ հանրագիտարան է, ուր կարելի է գտնել հանգամանօրէն պարզաբանուած պատասխաններ բազմաթիւ կրօնական հարցերի շուրջ: Քարոզգիրքը կազմուած է ըստ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու ծիսական տարուայ ընթացքի, ուստի «Զմեռան» հատորը ներառում է Սբ Մնդեան տօնից մինչեւ Հոգեգալուստ ընկած տօների, ինչպէս նաեւ զանազան կրօնական առարկաների վերաբերեալ քարոզներ, իսկ «Ամառան»-ը նոյն սկզբունքներով շարունակում է «Զմեռան» հատորը՝ քարոզգիրքը լրման բերելով սրբոց Աւագ տօներին վերաբերող քարոզներով, որոնց յաջորդում են եւս երկու քարոզ՝ նուիրուած միայնակեացներին եւ Եկեղեցուն: Ինչպէս քարոզգրքի յիշատակարանում նկարագրում է ինքը Տաթեւացին, այս զոյգ հատորներում ամփոփուած են քարոզներ «Նախ Հին Օրէնքի վերաբերեալ, ապա Նոր Շնորհի, եօթ առաքինութիւնների, Եկեղեցու խորհուրդների, բոլոր մեղքերի, ընդհանուր ապաշխարութեան եւ սրա մասերի» եւ որոշ այլ թեմաների վերաբերեալ: Քարոզները երկու հատորում միասին թուով 344-ն են: Դրանք այս երկու հատորում հաւաքուել են հէնց Տաթեւացու ձեռքով, հայոց 856 թ.-ին, այսինքն՝ Տիրոջ 1407 թ.-ին, Տաթեւի վանքում: Իսկ սա նշանակում է, որ քարոզգրքի կազմութիւնը տարիների փորձ, իմաստութիւն ու սրբութիւն ամ-

բարած Տաթեւացու մտքի ու գրչի վերջին արգասիքներից է, քանի որ սուրբը վախճանուել է նշուած թուականից երկու տարի յետոյ՝1409-ին: Գրքի յիշատակարանում Տաթեւացին նշում է այս գործին ձեռնամուխ լինելու պատճառները: «Նախ՝ հարկադրուած եղայ [սա անելու] եղբայրներից՝ [իմ] համաշունչ աշակերտներից: Երկրորդ՝ որովհետեւ մեր վարդապետների կողմից ստեղծուած քարոզգիրք չկար, այլ միայն իմաստուն խօսքեր: Եւ երրորդ պատճառն այն է, որ ես իմ տարտամ հոգով ու ծոյլ մարմնով չկարողացայ շատերին քարոզել, ուստի պատրաստեցի քարոզների այս գիրքը, որպէսզի ես եւս ձեզ հետ բարիքներին մասնակից լինեմ: Որովհետեւ սրանից առաջ երեքից մէկն էր լինում. կամ չքարոզել, կամ դժուարութեամբ դա անել, կամ էլ ուրիշների [քարոզները], անպարկեշտաբար վերցնելով, ասել»: Աւելացնենք, որ հրատարակուած քարոզգրքի «Զմեռան» հատորի վերջում կցուած է Տաթեւի վանքի գլխաւոր եկեղեցու կառուցման պատմութիւնը, իսկ «Ամառան» հատորի վերջում զետեղուած են Տաթեւացու ներբողեանը՝ նուիրուած իր ուսուցիչ սբ Յովհան Որոտնեցուն եւ գրուած նրա թաղման առիթով, հետեւաբար՝ 1386 թ.-ին, Տաթեւացու թողած յիշատակարանը, ինչպէս նաեւ սբ Գրիգոր Տաթեւացուն նուիրուած երկու գործ՝ Առաքել վարդապետի ներբողեանը եւ Մեսրոպ վարդապետի բանաստեղծութիւնը:

Քարոզգրքում կարեւոր տեղ են զբաղեցնում մեղքերին եւ դրանց խոստովանութեանը նուիրուած քարոզները, որոնցից 11-ի արեւելահայերէն թարգմանութիւնը ներկայացնում ենք «Գանձասարի» սոյն հատորում[1]: Ստորեւ փորձենք հակիրճ ներկայացնել այդ քարոզներում արծարծուած հարցերը:

Մեղքը, որը սկիզբ առաւ դրախտում աստուածային պատուէրին նախաստեղծների անհնազանդութեամբ, մարդկային կամքի աստուածատուր ազատութեան սխալ գործածութեան արգասիքն է: Ազատութիւնը ենթադրում է ընտրութեան հնարաւորութիւն: Ըստ այսմ, ինչպէս գրում է Տաթեւացին, «ամէն բանական [արարած] Աստծուց ստեղծուել է բնական ընտրողութեան [կարողութեամբ]» (Ամռ. ԽԷ), որը կատար-

1 «Ամառան» հատորի ՀԸ քարոզի («Խոստովանութեան մասին») թարգմանութիւնը կատարուած է Տ. Տաճատ արեղայ Մատուրեանի կողմից, իսկ մնացածը՝ մեր (Ս. Ս.):

ւում է մտքում: Միտքը նախ ճանաչում, ապա ընտրութիւն է կատարում բարու եւ չարի միջեւ: Ընտրելով չարը՝ մարդը մեղք է գործում լինի խորհուրդներով, լեզուով, թէ մարմնի այլ անդամներով: «Մեղքն այնպիսի թշնամի է մեզ համար, որ ոչ թէ մէկ բանի է վնաս ու պակասութիւն բերում, այլ ամէն ինչին՝ ունեցուածքին, կեանքին, փառքին, հոգուն եւ մարմնին»: Ուստի այն «պիտի ատուի»: Մեղքի պատճառը մարդկութեան թշնամին՝սատանան է, ով շարունակ խաբում է մեզ՝ չարը բարի ներկայացնելով, որպէսզի դրան հաւանութիւն տալով՝ այն ընդունենք: Մեղքը նախ լինում է խորհուրդի տեսքով, եւ այն մեր մէջ սատանան է գցում, սակայն մեզնից է կախուած այդ խորհուրդին հաւանութիւն տալը կամ չտալը, ընդունելը կամ մերժելը: Եւ ընդունելու դէպքում է, որ մեղանչում ենք: Տաթեւացին մեղքին նուիրուած քարոզներում ներկայացնում է մեղքի եւ մեղանչման տարբեր դասակարգումներ՝ դրանք հանգամանօրէն բացատրելով: Ըստ մի դասակարգման՝մեղանչումը լինում է՝ նախ՝ ակամայ եւ անգիտութեամբ, երկրորդ՝ գիտութեամբ, բայց ակամայ, եւ երրորդ՝կամովին եւ գիտութեամբ: Ըստ մէկ այլ դասակարգման՝ մեղքը երեք տեսակ է՝ սկզբնական, մահացու եւ ներելի: Ըստ երրորդ դասակարգման՝ մեղքը դարձեալ երեք տեսակի է բաժանւում՝ խորհուրդների, խօսքերի եւ գործերի:

Ակամայ եւ անգիտութեամբ մեղանչելը բնորոշ է մանուկներին, ովքեր չգիտեն՝ ինչն է մեղք, եւ ինչը՝ ոչ: Այսպիսի մեղքերն ինքնաբերաբար ներւում են եւ կարիք չունեն ապաշխարութեան կամ խոստովանութեամբ քաւութեան, ուստի սրանց մասին Տաթեւացին բացատրութիւններ չի տալիս եւ անցնում է մեղանչման միւս տեսակների լուսաբանմանը: Գրում է. «Զափահասների բոլոր մեղքերը երկու տեսակի են բաժանւում: Առաջինն այն է, որ մէկը մարմնով ակամայ է մեղանչում՝ գայթակղեցնելով [ուրիշներին], եւ սա գործում երկրորդ կամքով: [Իսկ երկրորդն այն է], որ մէկն առաջին կամքով եւ յօժարակամօրէն է մեղանչում, եւ սա առաւել չար է եւ ամբարշտութիւն» (Ամռ. խէ): Ինչպէս տեսնում ենք՝ այստեղ մարդու մէջ զանազանւում է երկու կամք, որոնք կոչւում են «առաջին կամք» եւ «երկրորդ կամք»: «Առաջին կամք»-ով Տաթեւացին նկատի ունի բանականութեանը կամ մտքին յատուկ կամային զօրութիւնը՝ գիտակցական կամքը, իսկ «երկրորդ»-ով՝ մեղքի հանդէպ հակում ունեցող «մարմնին» կամ հոգու անբան մասին յատուկ կամքը կամ ցանկութիւնը՝ անբան կամքը, որը լիովին կշռադատուած չէ, ընտրութեան արդիւնք չէ եւ յատուկ նպատակ չի հետապնդում կամ էլ պարտադրանքի արդիւնք է[2]: Այս մասին սբ Գրիգոր առաքեալն ասում է. «...Ես մարմնաւոր եմ՝ մեղքին ենթակայ: Որովհետեւ չգիտեմ, թէ ինչ եմ գործում. ոչ թէ անում եմ այն, ինչ կամենում եմ (իմ «առաջին» գիտակցական կամքով — Ս. Ս.), այլ գործում եմ այն, ինչ ատում եմ... ոչ թէ ես եմ այն գործում, այլ իմ մէջ բնակուած մեղքը» (Հռոմ. է 14—17. հմմտ. Եփես. Բ 3 «մարմնի եւ մտքի» կամք կամ ցանկութիւններ): Ուրեմն՝ առաքեալի նշած մեղքերն ակամայ մեղքերն են՝ բնորոշ չափահաս մարդուն, ով թէեւ գիտի մեղքերը, սակայն ակամայ՝ չուզելով է դրանք գործում, այսինքն՝ իր երկրորդ կամքով, քանի որ ունի մեղքին ենթակայ՝ մեղանչական բնութիւն: Տաթեւացին իր քարոզներում յաճախ է գործածում «ակամայ կամք» արտայայտութիւնը: Ուրեմն՝ այս «ակամայ կամքը» հէնց «երկրորդ կամքն» է կամ, մարդու պարագայում, առաքեալի ներկայացրած «մարմնի կամքը», որով է մեղանչում ակամայ, բայց գիտութեամբ մեղանչողը, ով մեղանչում է «իր թուլութիւնից կամ սատանայի դրդմամբ»: Նրան յատուկ է տրտմութիւնն իր արարքի համար, աստուածային պատուիրանների եւ պատիժների հանդէպ երկիւղը, զղջումը, եւ նա «իրեն օգնական ունի Աստծուն ու հրեշտակներին, պատուիրաններն ու քահանաներին. այս չորսն օգնում են զղջում ունեցող մեղաւորին եւ հանում մեղքի միջից» (Ամռ. խէ):

Խօսելով չափահասներին յատուկ միւս՝ կամովին եւ գիտութեամբ մեղանչման մասին՝ Տաթեւացին ներկայացնում է այն մեղաւորին, ով մեղանչում է յօժարակամօրէն, շատ լաւ գիտակցելով իր արարքի մեղանչականութիւնը: Նա չունի ոչ պատուիրանների երկիւղը, ոչ աստուածային պատիժների, ուստիեւ չունի նաեւ զղջում եւ դէպի փրկութիւն տանող այն օգնականներին, որոնք ունի ակամայ մեղանչողը:

2 Տաթեւացին, ինչպէս եւ նրան նախորդած այլ հայրեր եւս, Աստուծոյ համար եւս զանազանում է «առաջին» եւ «երկրորդ» կամքեր, սակայն, ի տարբերութիւն մարդու պարագայի, դրանք զանազանւում են իբրեւ «ողորմութեան» եւ «արդարութեան» կամքեր: Առաջինը ենթադրում է յօժարութիւն եւ սէր, իսկ երկրորդը՝ պարտադրանք, հարկադրուածութիւն: Աստուած թէեւ առաջին կամքով չի կամենում որեւէ մէկին պատժել, սակայն երկրորդ՝ «ակամայ» կամ «արդարութեան» կամքով պատժում է՝ մարդկանց անիրաւ գործերից հարկադրուած (տես Ամռ. գլ. ե, ՃՁԲ): Այս մասին տես նաեւ Յովհաննէս Մրջնորեցի, Մեկնութիւն Աւետարանին որ ըստ Մատթէի, Սբ Էջմիածին, 2009 թ., մեկն. Զ 10-ի եւ ԺԸ 14-ի, էջ 58, 365:

Տաթեւացին մի կարեւոր նկատողութիւն է անում այս թեմայի շուրջ խօսելիս: Վկայաբերելով աստուածաշնչեան խօսքեր՝ նա ցոյց է տալիս, որ կամովին մեղանչողը կորցնում է իր նախկին բարի գործերը, դրանք չեզոքացնում, ուստի զրկւում դրանց վարձատրութիւնից, եւ հակառակը՝ «կատարեալ արդարութիւնը նախկինում գործուած մեղքերն ու դրանց պատիժն է ի չիք դարձնում» (Ամռ. խէ):

Սկզբնական մեղքը, որը կոչում ենք նաեւ «աղամական մեղք», «կայ բոլոր մարդկանց մէջ», «հետեւում է բնութեանը», ուստի «ըստ բնութեան էլ անցնում է սերունդներին» (Ամռ. Ծ): Սկզբնական մեղքի հետեւանքով մարդկային բնութիւնը դարձաւ մեղանչական՝ մեղքի հանդէպ հակում ունեցող: Մեր բնութեան մէջ այս մեղքի հետեւանքները, որոնք Տաթեւացին «վէրք ու հարուած» է կոչում, հետեւեալն են՝ ցանկութիւն, տգիտութիւն, բարկութիւն, չարութիւն, որոնք «չունէր առաջին մարդը նախքան դրախտում յանցանք գործելը»: Սկզբնական մեղքը մէկն է, չունի տարատեսակներ եւ մեծ ու փոքր չի լինում, այլ բոլորի մէջ միատեսակ է: Աւելացնենք, որ սկզբնական մեղքը ջնջւում է սբ Մկրտութեան խորհուրդով:

Այս դասակարգմամբ ներկայացուող միւս մեղքերը մարդու «անձնական» մեղքերն են, որոնք երկուսն են՝ մահացու եւ ներելի: Սրանք, ի տարբերութիւն սկզբնականի, տարբեր որակ ու քանակ ունեն տարբեր անձերի մէջ, նաեւ բաժանւում են տարատեսակների: Մահացու եւ ներելի մեղքերին սովորաբար տալիս ենք «ներգործական մեղքեր» անուանումը: Տաթեւացին, նկատի ունենալով «մահացու» բառի «մահացուցիչ» նշանակութիւնը, նախ քննում է, թէ իրականում կարո՞ղ է լինել մահացնող, մեռցնող մեղք: Քանի որ «մահն ապականում ու լուծարում է այն, ինչին հանդիպում է», իսկ «մահացու մեղքը որքան էլ լինի հոգում, հոգին անմահ է մնում», նաեւ՝ քանի որ «մեռած մարդը չի գործում», իսկ մահացու մեղքի մէջ գտնուողը եւ զգում է, եւ գործում, ապա, այս իմաստով, չի կարող լինել մահացու մեղք: Սակայն, միւս կողմից, քանի որ «մահացու մեղքն ապականում է կեանքը, դարձնում անգործունեայ», ապա մահացու մեղք, այնուամենայնիւ, կա՛յ, եզրայանգում է Տաթեւացին: «Ինչպէս որ մարմինը հոգով է կենդանի, այդպէս էլ հոգին կենդանի է Աստծով, եւ ինչպէս որ հոգուց բաժանումը մահ է մարմնի համար, այդպէս Աստծուց բաժանումը մահ է հոգու համար: Իսկ Աստծուց բաժանման պատճառը մեղքն է» (Ամռ. ԾԱ):

Մահացու մեղքի հետեւանքների մասին խօսելուց յետոյ Տաթեւացին անդրադառնում է այն հարցին, թէ արդեո՞ք ճիշտ է եւ արդար, որ մեղքի կարճժամանակեայ հաճոյքի դիմաց մարդը պատժուի յաւիտենապէս: Եւ վկայակոչելով Եկեղեցու վարդապետներին՝ ասում է, որ «Աստուծոյ դէմ մեղանչողն անհուն չարիք է գործում.... եւ անհուն մեղքի պատճառով անհուն է դառնում նաեւ պատժի երկարութիւնը» (Ամռ. ԾԱ): Հոգու մահուան մասին էլ խօսելիս, դարձեալ ըստ Եկեղեցու վարդապետների, Տաթեւացին նշում է, որ հոգու երկու տեսակ մահ կայ՝ ըստ բնութեան եւ յանցանքների: Բնութեամբ հոգին մեռնել չի կարող, քանի որ անմահ է, իսկ յանցանքների պատճառով հոգին մեռնում է: Մահացու մեղք գործողի կատարած բարի գործերի առնչութեամբ էլ վարդապետներն ասում են, որ «մահացու մեղք գործողը չի կարող բարիք գործել, որովհետեւ մեղքերի հետ անընդունելի է նաեւ նրա բարեգործութիւնը» (Ամռ. ԾԱ): Մահացու մեղքը կամովին եւ գիտութեամբ կատարուած մեղքն է, ինչպէս երեւում է Յովհաննէս առաքեալի «Կայ մեղք, որ մահացու է» (Ա Յովհ. Ե 16) խօսքի՝ Տաթեւացու բացատրութիւնից՝ տրուած կամովին եւ ակամայ գործուող մեղքերի վերաբերեալ քարոզում (Ամռ. խէ):

Անդրադառնալով ներելի մեղքին՝ Տաթեւացին գրում է, որ մահացու մեղքը եւս կարող է դառնալ ներելի, եթէ զղջմամբ եւ խոստովանութեամբ սրբւում է: Սա ներելի մեղքի մի տեսակն է՝ մահացուից ներելիի վերածուող մեղքը: Երկրորդն այն է, որը մարդ գործում է տկարութիւնից կամ տգիտութիւնից: Եւ ներելի մեղքի երրորդ տեսակը բնութեա՛մբ ներելի մեղքն է. այսպիսի մեղք են «անչափ ծիծաղելը, արհամարհելը, դատարկ խօսքը եւ այլն»: Ներելի մեղքերը որոշակի թուաքանակ չունեն, անթիւ են: Նրանք յատուկ են բոլոր մարդկանց. «Մարդն առանց մահացու մեղքի լինել կարող է, բայց առանց ներելիի՝ ոչ»: Եւ «ներելի մեղքերը քաւում ենք ընդհանրական խոստովանութեամբ, կուրծքը բախելով, լեզուով աղերսելով, խաչակնքուելով, քահանայի խաչը համբուրելով, «Երեքսրբեան»-ը երգելով, Տէրունական աղօթքն ասելով» եւ այլն (Ամռ. ԾԲ): Սա նշանակում է, որ ներելի մեղքից մաքրուելու համար քահանայի առաջ անհատական խոստովանութեան պարտադրանք չկայ: Սակայն քանի որ գործնականօրէն յաճախ դժուար է տարբերազատել ներելի եւ մահացու մեղքերը, ապա անհատական խոստովանութեան ներկայացուելիք մեղքերը ճշտելու հարցում հաւատացեալը պիտի առաջնորդուի խոստովանահօր խոր-

հուրդներով ու թելադրանքներով եւ սեփական խղճով: Համեմատութեան համար նշենք, որ Կաթոլիկ Եկեղեցին նոյնպէս իբրեւ պարտադիր խոստովանութեան ենթակայ մեղքեր է դիտում միայն մահացու մեղքերը, սակայն նաեւ քաջալերում ներելի մեղքերի խոստովանութիւնը:

Ներելի մեղքի մասին քարոզին յաջորդող քարոզում Տաթեւացին խօսում է խորհուրդներով գործուող մեղքի մասին, որի հանդէպ մարդ շատ աւելի զգոյշ ու զգօն պիտի լինի, քան մեղքի միւս՝ խօսքով եւ գործով արտայայտուող տեսակների հանդէպ: Պատճառն այն է, որ «մեղքը խորհուրդների մէջ է արմատ գցում եւ ապա աճում մարմնով», եւ «եթէ մարմինը չեղուի, միտքը կարող է նրան ուղղել, իսկ եթէ միտքը չեղուի եւ մեղքի հաճոյքի մէջ ընկղմուի, մարմինը նրան չի կարողանայ ուղղել» (Ամռ. ԾԳ): Եւ խորհուրդներով գործուած մեղքերը եւս մաքրւում են աղօթքով եւ զղջմամբ խոստովանութեամբ: Այս դէպքում, «երբ մեր խորհուրդները մաքուր են մեղքից, մեր բոլոր գործերն ու աղօթքները հաճելի են Աստծուն, իսկ եթէ մեղքերով աղտոտուած են, [Աստուած] չի ընդունում եւ անարգում է մեզ» (Ամռ. ԾԳ):

Մեղքերի խոստովանութեան մասին քարոզներում խօսւում է ընդհանրապէս խոստովանութեան ինչ լինելու, նրա յաճախականութեան, կերպերի, արտաքին ձեւերի, ընդունելի եւ անընդունելի խոստովանութեան եւ ճշմարիտ խոստովանութեան բազմաթիւ օգուտների մասին: «Խոստովանութիւնն ապաշխարութեան խորհուրդի փուլերից մէկն է եւ առաջինը» (Ամռ. ՀԸ): Նրա օգուտներից են Քրիստոսի ատեանում խոստովանուած մեղքերի չյիշատակուելը, հոգու վէրքերի բժշկութիւնը, Աստծուն մեզ մօտեցնելն ու Նրան մեր հանդէպ բարեհաճ ու ողորմած դարձնելը: Խոստովանութիւնը լինում է՝ նախ՝ մտաւոր, երբ մեղքի համար զղջում եւ խոստովանում ենք Աստծուն, եւ ապա՝ խօսքով, երբ խոստովանում ենք քահանային, ով Քրիստոսի փոխանորդն է, քանի որ քահանային է Աստծուց տրուած մեղքերը կապելու եւ արձակելու իշխանութիւնը՝ ըստ Տէր Յիսուսի հրամանի (Մատթ. ԺԶ 19, ԺԸ 18, Յովհ. Ի 23): Տաթեւացին յստակօրէն նշում է Աստուծոյ առաջ իրական զղջման եւ քահանայի առաջ կատարուող խոստովանութեան տարբերութիւնը. «Սրտի զղջման արդիւնքում մեղքը ներւում է, իսկ աղնուօրէն խոստովանելու արդիւնքում վերացւում է [մեղքի] պատիժը» (Զմռ. ԿԹ):

Խոստովանութիւնն անընդունելի են դարձնում խոստովանութեան ժամանակ ստելը, ծանր մեղքն անյատակ կերպով յայտնելը, որպէսզի իրական մեղքը չհասկացուի, մեղքերի միայն մի մասն ասելը, միւսը թաքցնելը, կամ մի մասը մի քահանայի ասելը, միւս մասը՝ մի ուրիշ, ապաշխարութիւնից խուսափելու դիտաւորութեամբ տգէտ քահանայի դիմելը կամ կաշառք տալը եւ այլն: Տաթեւացին գտնում է, որ խոստովանութիւնը գաղտնի պիտի պահուի ոչ միայն խոստովանահօր կողմից, այլեւ խոստովանողի, եւ ճիշտ չէ սեփական մեղքերը մարդկանց յայտնելը, քանի որ սա կարող է մարդկանց գայթակղութեան պատճառ դառնալ:

Խոստովանահայրերին նուիրուած քարոզում ներկայացւում են այն պահանջները, որոնք պիտի բաւարարի խոստովանութիւն ընդունող քահանան: Այստեղից պարզ է դառնում, թէ որքան կարեւոր է խոստովանահօր գիտուն եւ պատրաստուած լինելը, եւ որքան վնասակար կարող է լինել նրա տգիտութիւնը: Խոստովանահայրը նմանեցւում է բժշկի, ով եթէ հիւանդութիւնից չի հասկանում կամ այն սխալ դեղով է բժշկում, կարող է բժշկելու տեղ առաւել վնասել: Խոստովանահայրն իրաւունք չունի խոստովանադրամ վերցնելու, ինչն «ընդդէմ է սուրբ Եկեղեցուն եւ սիմոնական ախտ. չի կարելի Սուրբ Հոգու շնորհները վաճառել» (Ամռ. ԽԳ): Խոստովանահայրը խոստովանութիւնը չպիտի յայտնի, նոյնիսկ եթէ նրան մասնատեն: Բազմաթիւ խոստովանահայրերի կողմից գաղտնապահութիւն չդրսեւորելու պատճառով է, որ, ըստ Տաթեւացու, «շատերը վախենում եւ այլեւս չեն խոստովանում, այդպէս էլ մեռնում են ու դժոխք գնում, եւ սրանց արիւնն Աստուած այնպիսի քահանաներից պիտի պահանջի, ովքեր խոստովանութիւնը յայտնում են» (Ամռ. ԽԳ): Աւելացնենք, որ, ըստ Եկեղեցու կանոնների, խոստովանութիւնը յայտնող քահանան ենթակայ է կարգալուծման (Լաւատրչի 22, Բ Դուին 19, Բարսեղ 61 կանոններ[3]):

Խոստովանահայրը, բացի դիտուն լինելուց, պիտի լինի նաեւ նրբանկատ ու բարեգութ. նրան յատուկ պիտի չլինի ծանր մեղք գործածին անմիջապէս անիծելը, բանադրելը կամ նրանից երես շրջելը, «այլ խնամք պիտի տանի, խրատի նրան եւ մեղքից հեռացնի»: Եւ միայն այս ջանքը թափելուց յետոյ, եթէ մեղաւորը յամառութիւն ցուցաբերի եւ դարձեալ նոյն ծանր մեղքը գործի, խոստովանահայրն իրաւունք ունի նրա հանդէպ խիստ միջոցներ կիրառելու: Նաեւ՝ «եթէ խոստովա-

3 Կանոնագիրք հայոց, աշխատասիրութեամբ Վ. Յակոբեանի, Երեւան. հտ. Ա, 1964 թ., էջ 248, 486, հտ. Բ, 1971 թ., էջ 116

նահայրը փորձել է, որ քաղցը խօսքով ու թեթեւ կանոններով կարող է մեղաւորին ուղղութեան բերել» (Ամռ. ԽԳ), թող այդպէս վարուի, եւ միայն այս մեղմ միջոցների անօգուտ լինելու դէպքում դիմի սաստկական խօսքի օգնութեանն ու ծանր ապաշխարութեանը:

Տաթեւացին խոստովանահօր պարտականութիւններից է համարում նաեւ այցելութիւնը մեղաւոր անձանց, նրանց հետ զրոյցը «հոգու հիւանդութեան» մասին, «մխիթարելն ու հաստատելը փրկութեան յոյսով, որովհետեւ երբ մարդ յուսահատուած է, ապաշխարանքը չի կարող նրան քաւել»: Խոստովանահօրը թելադրւում է նաեւ պահանջել այն մարդկանցից, ովքեր ոչ միայն իրենք են մեղանչել, այլեւ մեղքի մէջ ներքաշել ուրիշների, գտնել ու դարձեալ ուղղութեան բերել իրենց պատճառով խոտորուածներին: Այլապէս նրանց մեղքի քաւութեան համար բաւական չեն լինի ոչ պահքը, ոչ աղօթքը, ոչ էլ ողորմութիւնը:

Այստեղ կամենում ենք, իբրեւ յաւելում, որոշ պարզաբանումներ կատարել անհատական խոստովանութեան կարգի կատարման արտաքին ձեւի վերաբերեալ: Ըստ Տաթեւացու՝ հաւատացեալը խոստովանահօր առաջ մեղքերը խոստովանում էր եկեղեցում (ներկայացուող քարոզներում չի նշւում, թէ եկեղեցու որ հատուածում)՝ արտասանելով նաեւ «Հաւատամքը» (Ամռ. ՀԹ): Խոստովանութեան խորհրդի կատարման՝ հայերէնով պահպանուած հաւանաբար ամենահին կարգը Հայոց կանոնագրքում զետեղուած «Կոչումն ապաշխարութեան»-ն է, որի հեղինակը, ըստ այդ գրութեան խորագրի, Ե դարի հայոց կաթողիկոս սբ Յովհան Մանդակունին է[4]: Այստեղ ներկայացւում է մեղքերի մի ցանկ՝ նախաբանով ու վերջաբանով հանդերձ, որոնց ցուցումներից կարելի է հասկանալ, որ ցանկում թուարկուած մեղքերը քահանայի կողմից հարցի տեսքով էին տրւում խոստովանողին, եւ վերջինս միայն «այո» կամ «ոչ» էր պատասխանում դրանց: «Բազում զաղտնածիդ նետիւք վիրաւորէ զմեզ սատանայ, զոր ոչ կարեն բերել ի խոստովանութիւն, այլ դու որ օրինադիրդ ես, թուեա՛ զանուանս մեղացն, խոստովանողին միայն ասել զայոն՝ այո՛ եւ զոչն՝ ո՛չ»: Համեմատութեան համար նշենք, որ Բիւզանդական եկեղեցում պահպանուած ամենահին խոստովանութեան կարգը վերագրւում է Կոստանդնուպոլսի պատրիարք Յովհան-

4 Տես Կանոնագիրք հայոց, աշխատասիրութեամբ Վազգէն Յակոբեանի, հտ. Բ, Երեւան, 1971 թ., էջ 296—304:

5 Տես А. Алмазов, Тайная исповедь в Православной Восточной Церкви, Одесса, 1894, с. 67—87:

նէս Պահեցողին՝ ապրած Զ դարի երկրորդ կէսում[5]: Այս կարգը հասել է մեզ մի քանի խմբագրութեամբ, որոնցից ամենահինը համարուողը նոյնպէս, ինչպէս Մանդակունու կարգում, մեղքերը թուարկում է հարցերի տեսքով, իսկ աւելի ուշ շրջանի խմբագրութիւններում մեղքերի ցանկը ներկայացւում է առանց հարցատրութեան: Սակայն սբ Գրիգոր Տաթեւացին այսպիսի մեքենայական հարցատրութեան մասին ոչ միայն չի խօսում, այլեւ, ընդհակառակը, անհրաժեշտ է համարում մեղքերի հանգամանալից ներկայացումը քահանային: Մանդակունի կաթողիկոսի կարգում նշւում է նաեւ խոստովանութեան կատարման վայրը, որը եկեղեցու նախաշեմքն է՝ դռան առջեւ. «Երթայ քահանայն մեղուցեալովն ի դուռն եկեղեցւոյն... կացուցանէ զխոստովանողն հանդէպ դրանն եւ թուէ զանուանս մեղացն...»: Այստեղից երեւում է, որ խոստովանութիւնը կատարուել է յոտնկայս, ինչպէս կարելի է տեսնել նաեւ այսօր յունադաւան եկեղեցիներում, սակայն՝ եկեղեցու ներսում: Իսկ Տաթեւացու քարոզներից մէկից պարզ է դառնում, որ թէ՛ քահանան, թէ՛ խոստովանողը խորհրդի կատարման ընթացքում գտնւում են նստած դիրքում. «...նստած խոստովանահայրը խորհրդանշում է դատաստանի աթոռին նստած Քրիստոսին, եւ խոստովանողը նստում է նրա ձախ կողմում, ինչպէս մեղաւորները՝ Քրիստոսի ձախ կողմում, եւ գլուխը խոնարհեցրած, աչքերը փակած ու ձեռքերն իրար կցած է խոստովանում» (Զմռ. ԿԹ): Իսկ եթէ խոստովանութիւնը կատարւում է այսպիսի դիրքում, ենթադրելի է, որ կարգի կատարման վայրը եկեղեցու ներսն է եւ ոչ թէ նախաշեմքը: Մեղքերից արձակումն էլ, ըստ Տաթեւացու, քահանան տալիս է ոչ թէ մէկ, այլ երկու ձեռքերը խոստովանողի գլխին դնելով (Ամռ. ՀԹ):

Տաթեւացին խոստովանութեան յաճախականութեան մասին նշում է, որ ինչպէս որ շարունակ մեղանչում ենք, շարունակ էլ պիտի խոստովանենք. «...ուստի վանքերում սահմանուած է խոստովանել ամէն օր՝ առաւօտեան եւ երեկոյեան: Իսկ աշխարհականները պէտք է ամէն կիրակի խոստովանեն, քանի դեռ մեղքը թարմ է եւ յիշողութեան մէջ, այլապէս եթէ շատ ժամանակ անցնի, [մարդը] մեղքը կը մոռանայ եւ չի կարողանայ խոստովանել, ուստի մեղքը չի ներուի: Բայց եթէ [ամբողջ տարին] ամէն կիրակի հնարաւոր չլինի, ապա [գոնէ] Քառասնորդական պահքի ժամանակ ամէն կիրակի պէտք է խոստովանել: Իսկ եթէ սա էլ չեն կարող, պէտք է, ըստ կանոնների, մի անգամ խոստովանել պահքի սկզբում, մի անգամ էլ՝ վերջում Զատիկին մօտ»: Համե-

մատութեան համար նշենք, որ Կաթոլիկ Եկեղեցին, օրինակ, իր հաւատացեալներից պահանջում է տարուայ մէջ գոնէ մէկ անգամ պարտադիր խոստովանել քահանային: Ռուսաց Եկեղեցում առանց անհատական խոստովանութեան Հաղորդութիւն չի տրւում: Ղպտի Եկեղեցում Հաղորդութիւնն անմիջապէս չի կապւում խոստովանութեան խորհրդի հետ. անհատն առանց խոստովանութեան (խոստովանութեան՝ մեր Եկեղեցում առկայ ընդհանրական ձեւը գոյութիւն չունի այնտեղ) մօտենում է Հաղորդութեան, սակայն պէտք է ունենայ խոստովանահայր, ում ժամանակ առ ժամանակ խոստովանի իր մեղքերը:

Այստեղ կարեւոր է նաեւ մի անհրաժեշտ դիտողութիւն կատարել Յակոբոս առաքելի «Խոստովանէ՛ք միմեանց ձեր մեղքերը» (Յակ. Ե 16) յայտնի խօսքի վերաբերեալ, որը սբ Գ. Տաթեւացին գործածում է իբրեւ «Ամառան» հատորի՝ խոստովանութեան խորհրդին վերաբերող ՀԸ եւ ՀԹ քարոզների բնաբան: Թէեւ առաքելական այս խօսքը թելադրում է հաւատացեալներին մեղքերը միմեանց խոստովանել, սակայն Եկեղեցու հայրերը վաղ ժամանակներից ի վեր այն միշտ հասկացել են իբրեւ քահանայի առաջ կատարուող խոստովանութեան յորդոր: Այսպիսի մեկնաբանութիւնը հասկանալու համար պէտք է ուշադրութիւն դարձնել այն հանգամանքին, որ այս նախադասութիւնն անմիջապէս յաջորդում է այն հատուածին, որում Յակոբոս առաքեալը խօսում է հիւանդների մօտ երէց (քահանայ) բերելու եւ վերջինիս կողմից աղօթք եւ ձէթով օծում կատարելու մասին: Ուստի հասկանալի է, որ հետեւելով Եկեղեցու՝ իրեն նախորդած հայրերի մեկնաբանութեանն ու աւանդութեանը՝ Տաթեւացին նոյնպէս Յակոբոս առաքեալի վերոնշեալ խօսքը գործածում է քահանայի առաջ կատարուող խոստովանութեան խորհրդի իմաստով: Նկատի ունենալով, որ որոշ քրիստոնէական յարանուանութիւններ մերժում են քահանայի առաջ կատարուող խոստովանութիւնը՝ այն պատճառաբանութեամբ, թէ մարդու առջեւ կատարուող խոստովանութիւնն աստուածաշնչեան հիմնաւորում չունի եւ միայն Աստծուն կարելի է խոստովանել, արժէ վկայաբերել մեղքերի խոստովանութեան խորհրդի համար իբրեւ հիմք ընդունուող գլխաւոր աստուածաշնչեան տեղիները: Դրանք յստակօրէն ցոյց են տալիս, որ մեղքերի՝ մարդկանց առաջ կատարուող խոստովանութիւնը կիրառուել է թէ՛ Հին Ուխտի շրջանում, թէ՛ Նորում: Այդ տեղիները հետեւեալն են՝ Թիւ. Ե 6—7, Նեեմ. Թ 2—3, Սիր. Դ 26, Մատթ. Գ 5—6 (Մարկ. Ա 5), Գործ. ԺԹ 18, Յակ. Ե 16:

Եկեղեցին ուսուցանում է, որ մեղքերը ներողն Աստուած է եւ ոչ թէ մարդը, եւ մեղքերը ներւում են իրական զղջման արդիւնքում, սակայն թողութեան վաւերացումը կատարւում է քահանաներին Տէր Յիսուսից տրուած իշխանութեամբ. «...ինչ որ արձակէք երկրի վրայ, արձակուած կը լինի երկնքում» (Մատթ. ԺԶ 19, ԺԸ 18, Յովհ. Ի 23): Խոստովանութեամբ նաեւ ազատւում ենք, ինչպէս գրում է սբ Գրիգոր Տաթեւացին, «Եկեղեցու կանոնների հանդէպ [պարտաւորութիւնից]», ինչը կարող ենք հասկանալ այսպէս. քանի որ հաւատացեալը մկրտութեամբ անդամագրուել է Եկեղեցուն, դրանով իսկ ստանձնել է Եկեղեցու կանոնների պահպանութեան պարտաւորութիւնը: «Երբ սրտանց զղջում ենք, Աստուած ներում է մեղքը, երբ խոստովանում ենք քահանային, ազատւում ենք Եկեղեցու կանոնների հանդէպ [պարտաւորութիւնից], իսկ երբ գործով ապաշխարում ենք, հատուցում ենք ընկերոջ պարտքը: Ուստի թէեւ զղջմամբ ներւում են մեղքերը, սակայն մեղքերի խոստովանութիւնն անհրաժեշտ է» (Ամո. ՀԹ):

Ս. Ստամբոլցեան

ՍԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

ԱՄՍՈՒՆ ՀԱՏՈՐ

ՔԱՐՈԶ ՄԵՂՔԻ ՄԱՍԻՆ
(ԳԼՈՒԽ ԽԷ)

Կան մեղքեր, որ մեղք են, «եւ
կան մեղքեր, որ մահացու են»:
[Ա Յովհ. Ե 16]

Ամէն բանական [արարած] Աստծուց ստեղծուել է բնական ընտրողութեան [կարողութեամբ]: Բնական ընտրողութիւնը [կատարւում է] մտքում: Նախ՝ այն ճանաչում, ընտրում եւ միմեանցից տարբերում է բարին ու չարը, ինչպէս աչքը տեսնում ու զանազանում է սեւ ու սպիտակ գոյները: Սրանից յետոյ եկող երկրորդ ընտրութիւնն այն է, որ [մարդ] բարին կատարում ու պահպանում է, իսկ չարը մերժում: Առաջին ընտրութիւնը պատկանում է մտքին, որը բանական լոյսով ճանաչում է դրանք, իսկ երկրորդ ընտրութիւնը՝ կամքին, որ [մարդ] ինքնակամ կատարում է բարին, իսկ չարը մերժում, որովհետեւ չարն ըստինքեան մերժելի է ամէնքի կողմից, իսկ բարին՝ ամէնքի կողմից փափագելի: Ուստի ովքեր մտքով իմաստուն են, այսպէս են բարին ու չարն ընտրում. չարը մերժում են եւ բարին ընտրում. իսկ ինչպէս կոյր աչքը չի տեսնում գոյնը, այդպէս անմիտն ու անզգամը չի ճանաչում ու չի մերժում չարը, այլ չարամտօրէն գործում է անխտիր բոլոր մեղքերը:

Ցանցաւորները երեք կերպ են զանազանւում [միմեանցից]: Կան այնպիսիք, որ ակամայ եւ անգիտութեամբ են մեղանչում, ինչպէս մանուկները, եւ նրանց ներւում ու թողութիւն է տրւում, ինչպէս Դաւիթն է ասում. «Մանկութեանս ու անգիտութեանս մեղքերը մի՛ յիշիր» [Սաղմ. ԻԴ 7]: Կան այնպիսիք, որ թէեւ մեղքերը գիտեն, բայց ակամայ են մեղանչում: Եւ կան այնպիսիք, որ կամովին ու գիտութեամբ են մեղք գործում: Այն, որն ակամայ եւ անգիտութեամբ է, ինչպէս մանուկներինը, այժմ չենք յիշի, այլ կ՚ուսուցանենք չափահասների [մեղքերի մասին]:

Չափահասների բոլոր մեղքերը երկու տեսակի են բաժանւում: Առաջինն այն է, որ մէկը մարմնով ակամայ է մեղանչում՝ գայթակղեցնելով [ուրիշներին] եւ սա գործում երկրորդ կամքով: [Իսկ երկրորդն այն է], որ մէկն առաջին կամքով եւ յօժարակամօրէն է մեղանչում, եւ սա առաւել չար է եւ ամբարշտութիւն: Այսպիսին են այն չար մարդիկ, ովքեր հաճոյք են ստանում մեղքերից եւ անզեղջ կամքով մեղանչում, ինչպէս կռապաշտները, այլակրօնները, անկիրթ երիտասարդներն ու անխրատ անձինք, ովքեր կարծրացել են մեղքերի մէջ եւ չարն իբրեւ բարի բան են գործում: Սրանց մեղքերն է [Յովհաննէս առաքեալը] զանազանում՝ ասելով, որ կան մեղքեր, որ մեղք են, եւ կան՝ որ մահացու են:

Այս երկու մեղքերն այսպէս են տարբերւում: Առաջին՝ ակամայ [մեղանչածը] սայթաքել-ընկել է մեղքի մէջ, ինչպէս որ մէկը ճանապարհին սայթաքում-ընկնում է եւ դարձեալ ոտքի կանգնում: Իսկ կամովին [մեղանչածը] մեղքի մէջ գլորուել, գուբն է ընկել եւ չի կարողանում վեր կենալ:

Երկրորդ՝ ակամայ [մեղանչողն] ինքն է ճանապարհից մոլորուել եւ դարձեալ ուղղում է [իր ընթացքը], իսկ կամովին [մեղանչողի] ճանապարհն է ծուռ, որը չի կարող նա ուղղել, այլ քանի ընթանում է, այնքան առաւել է մոլորւում:

Երրորդ՝ ակամայ մեղանչողը հիւանդ է, ով կարող է հոգու ցաւը զգալ, իսկ կամովին [մեղանչողը] մեռել է, ուստի բնաւ ցաւ չի զգում մեղքից: Այս պատճառով էլ [առաքեալն] ասում է. «Կայ մեղք, որ մահացու է»:

Չորրորդ՝ հիւանդը հոգեւոր դեղով առողջանում է, իսկ մեռածը չի կարող առողջանալ. այս պատճառով էլ Դաւիթն աղաչում է. «Ողորմի՛ր ինձ, Տէ՛ր, քանզի հիւանդ եմ ես, բժշկի՛ր իմ հոգին, քանզի մեղանչեցի Քո հանդէպ» [Սաղմ. Զ 3, Ի 5]:

Հինգերորդ՝ հիւանդը կողքի վրայ ընկած է, բայց աչքով տեսնում է եւ իր ցաւի մասին խօսում. այսպէս ակամայ մեղանչողը մտքով տեսնում է եւ խօսում իր մեղքի մասին, որովհետեւ նրա խղճի լոյսը վառ է, ինչպէս ասում է Դաւիթը. «Դու լուսաւոր ես դարձնում իմ ճրագը» եւ այլն [Սաղմ. ԺԷ 29]: Իսկ կամովին [մեղանչածը] մեղքերի մէջ ննջել ու մեռել է, եւ ոչ նրա միտքն է տեսնում, ոչ էլ կարող է խօսել, որովհետեւ միտքը խաւարել ու կուրացել է: Այս պատճառով էլ Դաւիթն աղաչում էր. «Լո՛յս տուր, Տէ՛ր, իմ աչքերին, որպէսզի երբեք չննջեմ մա-

հուամբ» [Սաղմ. ԺԲ 4], քանզի չարի համար «Նրա խաւարն ինչպէս Նրա լոյսն է» [Սաղմ. ՃԼԸ 12]:

Վեցերորդ՝ [ակամայ մեղանչողը] տրտմութեամբ է մեղքը գործում գիտենալով, որ [գործածը] մեղք է՝ ըստ մարգարէի. «Մեղաւորների պատճառով տրտմութիւն պաշարեց ինձ» եւ այլն [Սաղմ. ՃԺԸ 53]: Իսկ կամովին [մեղանչողն] ուրախանում է մեղքի հաճոյքից եւ ծիծաղելով մեղանչում, ինչպէս ասում է առակը. «Ամբարիշտ մարդը ծիծաղելով է մեղանչում» [Առակ. Ժ 23]: Եւ այս երկու մեղքերի օրինակ է [հետեւեալը]. տրտմութեամբ մեղանչողը մեղքն իբրեւ խաւար է տեսնում, ինչպէս ասում է Դաւիթը. «Ասացի՝ խաւարը ծածկեց ինձ, եւ գիշերը՝ լոյսի փոխարէն» [Սաղմ. ՃԼԸ 11]: Խաւարն այն է, որ պակասում է աչքի լոյսը, իսկ գիշերը՝ որ պակասում է արտաքին լոյսը: Այդպէս էլ ակամայ մեղքը խաւար ու գիշեր է, որը խաւարեցնում է մտքի լոյսը, իսկ կամաւոր մեղքը, որն ուրախութեամբ է գործւում, հաճելի է, ինչպէս լոյսը, քանզի «Ամբարիշտների դամբարը մեղքն է»,— ասում է առակը [Առակ. ԻԱ 4], որովհետեւ մտքի բնական լոյսը, մեղքի «լոյսից» հաճոյք ստանալով, հաւանում է այն եւ այդպէս ուրախութեամբ ու ցնծութեամբ մեղանչում:

Եօթերորդ՝ ակամայ [մեղանչողի] միայն մարմինն է մեղանչում, իսկ ներսում կամքն ու միտքը մեղքին համաձայն չեն, այլ Աստուծոյ օրէնքն են հաւանում, ուստի ներքուստ մեղադրում են [իրենց] ու խղճից տանջւում: Իսկ կամովին [մեղանչողի] մարմինը մեղքից հաճոյք է ստանում, կամքը՝ հետեւում [մեղքին] ու ամուր մնում [դրա մէջ], եւ թէեւ խիղճը փոքր-ինչ դատում է, սակայն մարմինն ու կամքը մեղքի հաճոյքով ծածկում են խղճի լոյսը եւ խաւարեցնում, ինչից յետոյ այն եւս մարում ու ամբողջապէս խաւարում է:

Ութերորդ՝ երբ մէկը քաղցրութեամբ խրատում է ակամայ [մեղանչողին, վերջինս] լսում ու մեղքից հրաժարւում է, իսկ կամովին [մեղանչողն] ամենեւին ականջ չի դնում խրատին՝ ասելով այն դառը խօսքը՝ ըստ Յոբի. «Քո ճանապարհները ճանաչել չեմ կամենում» [Յոբ ԻԱ 14]: Այլեւ ատում է խրատն ու խրատողին՝ ըստ հետեւեալի. «Ատեցին իրենց դռան առաջ յանդիմանողներին» [Ամ. Ե 10]:

Իններորդ՝ ակամայ [մեղանչողն] ուրիշին չի ներքաշում մեղքի մէջ, այլ միայն ինքն է մեղանչում, իսկ կամովին [մեղանչողն] ուրիշներին էլ է [մեղքի մէջ] դցում խօսքով ու գործով, խաբելով ու բռնութեամբ, որպէսզի ոչ միայն իրեն կործանի, այլեւ ուրիշներին,

ինչպէս կռապաշտ ու այլակրօն չար թագաւորները, ովքեր [քրիստոնեաներին] դաւանափոխ են անում եւ իրենց կորստեան խաւարի մէջ գցում:

Տասներորդ՝ ակամայ [մեղանչողը] երկիւղում է [հատուցուելիք] տանջանքից եւ մեղքն ահով գործում հոգով տանջուելով պատուիրանների երկիւղից, մահուանից եւ Աստուծոյ դատաստանից, իսկ կամովին [մեղանչողը] չունի ո՛չ օրէնքի, ո՛չ մահուան երկիւղը, ո՛չ էլ դատաստանի կամ նրա պատիժների: Քանզի «անզգամն ասում է սրտում, թէ չկայ Աստուած» [Սաղմ. ԺԳ 1], ոչ էլ հատուցում. այդ պատճառով էլ առանց ահի է մեղքը գործում:

Տասնմէկերորդ՝ ակամայ մեղանչողը մեղքից յետ դառնալու եւ թողութիւն ստանալու դեռ յոյս ունի՝ չնայած նրան, որ այսօր իր թուլութիւնից կամ սատանայի [դրդմամբ] մեղանչում է: Իսկ կամովին [մեղանչողը] թողութիւն ստանալու յոյսը հատել է եւ մեղքերի ջրապտոյտի մէջ ընկղմուել՝ դարձի գալու եւ թողութեան ակնկալիք չունենալով: Այս մասին էր աղօթում մարգարէն. «Թող ջրապտոյտը չընկղմի ինձ, եւ ջրհորն իր բերանը չփակի ինձ վրայ» [Սաղմ. ԿԸ 16]: Այս երկու մեղքերի օրինակ են հնոցի կրակը եւ տաքացած ջուրը: Ինչպէս որ տաքացած ջուրը կարող է հովանալ ու սառչել, այդպէս էլ ակամայ մեղքը կարող է փոխուել: Իսկ հնոցի կրակն իր ջերմութիւնը չի փոխում. այդպէս էլ ով կամովին ու գիտութեամբ տաքացել է մեղքով, մեղքի մէջ չի հովանում ու չի փոփոխւում: Այլեւ՝ այս երկու մեղանչողներից նա, ով [մեղքը գործում է] պատահմամբ ու զղջմամբ, օգնական ունի Աստծուն ու հրեշտակներին, պատուիրաններն ու քահանաներին. այս չորսն օգնում են զղջում ունեցող մեղաւորին եւ հանում մեղքի միջից: Իսկ նա, ով սեփական կամքով է մեղքի մէջ ընկած, ոչ մի տեղից օգնութիւն չի ստանում. որովհետեւ ոչ քահանաներն են օգնում, ոչ պատուիրանները, ոչ հրեշտակներն են դէպի բարին յորդորում, եւ ոչ էլ Աստուած է նրան [մեղքից] յետ դարձնում, այլ լքում է նրան ու թողնում գնալու իր կամքի յետեւից՝ ըստ հետեւեալի. «Թողեցի նրանց գնալ իրենց սրտի ցանկութիւններով, որովհետեւ նրանք իրենց կամքով ընթացան» [Սաղմ. Զ 13]: Եւ եթէ մէկը հարցնի. «Ինչո՞ւ [Աստուած] բռնութեամբ չի քաշում մարդուն մեղքի միջից ու բերում դէպի արդարութիւն», կը պատասխանենք՝ երկու պատճառով: Նախ՝ եթէ բռնութեամբ քաշէր, կը զրկէր մեզ մեր անձնիշխան կամքից, ուստի թողնում է, որ մեր կամքով դանք ուղղութեան: Եւ երկրորդ՝ եթէ բռնութեամբ յետ բերէր, Իր աբ-

դարութիւնը խափանած կը լինէր, իսկ քանի որ Աստուած արդար է եւ ո՛չ անիրաւ, բնութեամբ չի բերում դէպի արդարութիւն:

Տասներկուերորդ՝ ակամայ [մեղանչողը] զղջում է գործած մեղքի համար, իսկ կամովին [մեղանչողն] անզեղջ կամքով է [մեղք] գործում, ինչպէս սատանան, ով զղջում չունենալու պատճառով չի գտնում թողութիւն, ինչպէս ասում է առաքեալը. «Կամովին մեղանչածներին մեղքի համար զոհ պէտք չէ, այլ [մնում են] դատաստանի ահեղ սպասումն ու կրակով վրէժխնդրութիւնը, որն ուտելու է հակառակորդներին» [Եբր. Ժ 26—27]: Այս մեղքի մասին է ասում աւետարանիչը. «Եթէ Տիրոջից ողորմութիւն ընդունելուց յետոյ կամովին դարձեալ մեղքի մէջ ընկնի, նախկին [մեղքի համար] էլ կը պահանջուի նրանից» [Ննջումն Յովհաննու, Գ]: Նաեւ մարգարէն է այս մեղքի մասին ասում. «Երբ մեղաւորն ամբարշտութիւն գործի, նրա գործած նախկին արդարութիւնները չեն յիշուի» [Եզեկ. ԺԸ 24]. այսինքն՝ կամովին մեղանչելն ի չիք է դարձնում նախկին բարի գործերը եւ վերստին կրել տալիս ներուած մեղքերի պատիժը: Ինչպէս որ կատարեալ արդարութիւնը նախկինում գործուած մեղքերն ու դրանց պատիժն ի չիք է դարձնում, այդպէս էլ կամովին գործուած մեղքը [նախկին արդարութիւնն է ի չիք դարձնում], «ինչպէս որ շունը վերադառնում է իր փսխածին, եւ լուացուած խոզը՝ տղմի մէջ թաւալւում» [Բ Պետ. Բ 22]:

Այսպիսին է տարբերութիւնը կամովին եւ ակամայ [գործուած] մեղքերի միջեւ, որոնց մասին առաքեալն ասում է, թէ կան մեղքեր, որ մեղք են, եւ կան՝ որ մահացու են:

Հարկ է գիտենալ, որ երբ չարիքների խորքն իջած մարդն Աստծուն է մեղքերի պատճառ համարում, իբր՝ մեզ ցանկասէր ստեղծեց, այդ պատճառով ենք պոռնկանում, բարկացող՝ այդ պատճառով ենք սպանում, կերակրի կարիք ունեցող՝ այդ պատճառով ենք ագահում, ասենք, որ սուտ է այս պատճառաբանութիւնը: Նախ՝ որովհետեւ Աստուած այն ամէնն, ինչ դրել է մարդու մէջ, բարի [նպատակով] է դրել, եւ մենք ենք այն չար դարձնում: Մեր մէջ բանականութիւն է դրել, որ ճանաչենք ու ընտրենք բարի Աստծուն, իսկ մենք չարն ենք ընտրում: Բարկութիւն է տուել, որ չարի վրայ բարկանանք, իսկ մենք, սա փոխելով, օրէնքի վրայ ենք բարկանում: Այդպէս էլ ցանկութիւն է տուել բարին [ցանկանալու] համար, իսկ մենք չարն ենք ցանկանում: Նաեւ կերակրի ու հագուստի կարիքն է տուել, որ [դրանք] գտնելու համար մշտապէս աշխատենք եւ պարապ մնալով չարը չգործենք: Այսպէս Աստուած

ամէն ինչ բարի [նպատակով] է դրել մեր մէջ: Նաեւ ամէն ինչ չափաւոր է մեզ տուել, իսկ մենք հասցնում ենք անչափութեան ու աւելորդութեան: Օրինակ՝ մեր կարիքը չափաւոր կերակրով բաւարարւում է, եւ մեր բնութիւնն էլ այդքանն է պահանջում, իսկ որկրամոլութեամբ այն շատացնելը մենք մեր կամքով ենք անում: Այսպէս էլ մի ձեռք հագուստը մարդուն բաւական է, եւ շատն աւելորդ է. մի ձի ենք հեծնում, շատն աւելորդ է. թէպէտ ջուր շատ կայ, սակաւն էլ է մեր ծարաւը յագեցնում. օդից էլ ենք սակաւ ներշնչում. եթէ աւելին ընդունենք, կը մեռնենք: Այսպէս տես նաեւ բոլոր մեղքերը. որովհետեւ ցանկութիւնը պիտի չափաւոր լինի, բարկութիւնը՝ չափաւոր, իմանալն իբրեւ չափ ունի ճշմարտութիւնը, իսկ շնանալը, սպանելն ու խորամանկելը յաճախ մեր կամքից են լինում: Ուրեմն անմեղադրելի է Աստուած, եւ մենք ենք մեր մեղքերի պատճառը:

Դարձեալ՝ այն մարդուն, ով այսպէս հասել է մեղքերի խորքը, անհաւատութիւնն է տիրում, եւ անհաւատութեամբ նա չորս բան է արհամարհում: Նախ՝ Աստծուն, որովհետեւ «անզգամը սրտում ասաց, թէ չկայ Աստուած» [Սաղմ. ԺԳ 1]. քանզի թէեւ լեզուով ասում է, թէ կայ Աստուած, բայց սրտով ուրանում է, այդ պատճառով էլ «ապականուեցին ու պղծուեցին իրենց անօրինութեան մէջ» [Սաղմ. ԺԳ 1]: Երկրորդ՝ արհամարհում է Աստուծոյ դատաստանն ու մեղաւորների հատուցումը: Երրորդ՝ արհամարհում է Աստուծոյ պատուիրանները՝ «մի՛ շնացիր»-ը, «մի՛ գողացիր»-ը եւ այլն: Չորրորդ՝ արհամարհում է իր մէջ եղած բարին. որովհետեւ բարին չի կամենում ո՛չ մտքով, ո՛չ լեզուով եւ ո՛չ մարմնով, այլ միտքն ու խորհուրդները թիւրում է դէպի չարն ու անհաւատութիւնը, լեզուն՝ դէպի սուտն ու հայհոյութիւնը, եւ մարմինը՝ դէպի զանազան չար գործերը: Այսպէս ամբարիշտն արհամարհում է այս չորս բաները: Այդժամ մեղաւորն ինքն էլ սրանցից է արհամարհւում ու անարգւում, ինչպէս ասում է առակը. «Ով արհամարհում է ինչ-որ բան, ինքն էլ կ՛արհամարհուի դրանից» [Առակ. ԺԳ 13]: Նախ՝ այդպիսին արհամարհւում է Աստծուց եւ Նրա հրամանով՝ մարդկանցից՝ իշխաններից եւ մարմնաւոր ու հոգեւոր առաջնորդներից, ովքեր Աստուծոյ հրամանով պատժում են չարերին ու անօրէններին կա՛մ սրով, կա՛մ գերութեամբ, կա՛մ սովով. [Աստուած] տանջում է կա՛մ այստեղ, կա՛մ այնտեղ՝ յաւիտենական հրով: Երկրորդ՝ դատաստանով է վրէժ խնդրում ըստ յանցանքի չափի եւ պատժում նրանց, որպէսզի [աստուածային] վրէժխնդրութեան ժամանակ յիշեն ու մտածեն,

որ արդար դատաստան կայ, որը չյիշեցին բարի գործ կատարելու համար: Երրորդ՝ պատժում է օրէնքով՝ թէ՛ բնական, թէ՛ գրաւոր, թէ՛ աւետարանական: Սրանք են դառնում տանջողները մարդկանց, ովքեր օրէնքն ընդունեցին ու չպահեցին. քանզի «ովքեր օրէնքի տակ են մեղանչում, օրէնքով էլ կը դատապարտուեն, եւ ովքեր օրէնքից դուրս մեղանչեցին, օրէնքից դուրս էլ կը կորչեն» [Հռոմ. Բ 12]: Չորրորդ՝ պատժւում են բարի գործերից, որոնք անարգում են իրենց ներսում եւ չարիք գործում թէ՛ մտքով, թէ՛ լեզուով եւ թէ՛ գործերով, որովհետեւ որ մասով որ մէկը գործում է չարը՝ հոգով թէ մարմնով, նոյն մասով էլ տանջանք կը կրի՝ հոգով թէ մարմնով: Երբ մարդը մարդուն որեւէ վնաս կամ պակասութիւն է բերում՝ կամ ունեցուածքին, կամ փառքին, կամ խօսքով, կամ որեւէ գործով, նրան ատում ու թշնամի են համարում: Իսկ մեղքն այնպիսի թշնամի է մեզ համար, որ ոչ թէ մէկ բանի է վնաս ու պակասութիւն բերում, այլ ամէն ինչին՝ ունեցուածքին, կեանքին, փառքին, հոգուն եւ մարմնին: Ունեցուածքի ու հարստութեան վնասիչ ու կորուսիչ է լինում, երբ [մեղաւորները] չարիքի մէջ գործակիցների հետ դրանք մսխում ու կորցնում են: Փառքի անարգիչ է, որովհետեւ [մեղաւորներն] Աստուծոյ աչքից ընկնում եւ մարդկանց ատելի են դառնում: Կեանքի կորուսիչ է, որովհետեւ այստեղ մարմնաւոր կեանքից է զրկում, այնտեղ էլ յաւիտենապէս հոգու եւ մարմնի պակասութիւն ու վնաս դառնում:

Նշանակում է՝ մեղքը պիտի ատուի եւ թշնամի համարուի, որովհետեւ ոչ միայն հոգուն, այլեւ մարմնին է շատ վնաս հասցնում: Նախ՝ որովհետեւ խիղճը շարունակ դատում է մեղաւորին եւ չարչարում ներքուստ: Երկրորդ՝ տխրութիւն ու ամօթ է բերում դէմքի վրայ, ինչպէս որ Կայէնի երեսը խոնարհուեց Աբելին սպանելուց յետոյ: Երրորդ՝ որովհետեւ պատժի ահն ու կասկածն ընկնում են մտքի մէջ, ինչպէս Եւայի ու Ադամի դէպքում, երբ մերկացան ու թաքնուեցին: Չորրորդ՝ որովհետեւ [մեղաւորները] բոլոր մարդկանց համար ատելի ու նախատելի են դառնում՝ ըստ այսմ. «Աստուծոյ աչքից ընկան եւ բոլոր մարդկանց համար ատելի դարձան» [Ա Թես. Բ 15]: Հինգերորդ՝ որովհետեւ մեղաւորի միտքը մոլորւում է եւ չի կարողանում խորհուրդները կարգի բերել, քանի որ ցրուած են զանազան մեղքերի մէջ, եւ [մտքի] տեսողութիւնը խաւարել է: Վեցերորդ՝ [մեղաւորը] համարձակութիւնը կորցնում է եւ Աստուծոյ հանդէպ ջերմ սէրը սառեցնում: Եօթերորդ՝ ցանկութեամբ շարունակ մաշւում է, որովհետեւ մեղքի գործն անյագ է,

եւ միշտ տոչորւում է՝ ըստ այսմ. «....որ ձեր ցանկութիւնների մէջ մաշուէք» [Յակ. Դ 3]: Ութերորդ՝ որովհետեւ մարմինը դառնում է ծոյլ, անարի եւ թուլամորթ: Իններորդ՝ որովհետեւ [մեղաւորները] զանազան մեղքերի պատճառով դատւում ու տանջանքի են ենթարկւում մարմնաւոր իշխանների կողմից. զրկանք պատճառելու համար տոյժի [են ենթարկւում], շնութեան համար՝ քարկոծութեան, արիւնահեղութեան համար՝ արիւնահեղութեան, անդամների հատման եւ այլն: Տասներորդ՝ [մեղաւորին հասնում են] մարմնաւոր պատիժներ, ինչպէս՝ սով, տարաժամ մահ, հիւանդութիւն, սիրելիների մահ, անասունների սատակում, երաշտ, խռովութիւն, գերութիւն, որոգայթ եւ ուրիշ տեսակ պատուհասներ, ինչպէս ջրհեղեղի եւ Սոդոմի կործանման ժամանակ: Սրանք մեղքերի դիմաց հասնող մարմնաւոր պատիժներն են:

Իսկ մեղքի հոգեւոր վնասները բազմաթիւ են: Նախ՝ [մեղքն] Աստուծոյ հանդէպ յանցաւոր եւ Նրա պատժին արժանի է դարձնում: Երկրորդ՝ արհամարհելով օրէնքը՝ [մեղաւորը] դառնում է օրինազանց: Երրորդ՝ Աստուծոյ պատկերն է կորցնում իր մէջ՝ այն շաղախելով մեղքերով: Չորրորդ՝ մեղքերով ապականում է Աստուծոյ տաճարը. առաքեալն ասում է. «Դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք» [Բ Կոր. Զ 16]: Հինգերորդ՝ սատանայի հանգստի եւ բնակութեան վայր է դառնում: Վեցերորդ՝ [մեղքը] մարդուց հեռացնում է շնորհի լոյսը: Եօթերորդ՝ կորցնել է տալիս առ Աստուած տանող ճանապարհը: Ութերորդ՝ հոգին մահուանն է կապում: Իններորդ՝ [մեղաւորը] դատաստանի ժամանակ յիմար կոյսերի պէս խայտառակուած ու ամօթահար, գլխահակ ու տրտմասիրտ հալածւում է Քրիստոսի ձայնից: Տասներորդ՝ [մեղաւորի] դատաստանն ահաւոր է, եւ տանջանքը, որ պատրաստուած է սատանայի եւ նրա հրեշտակների համար՝ յաւիտենական:

Եթէ մեղքն այդքան վնասակար է մարդու հոգուն ու մարմնին, մարդն ինչո՞ւ է այն գործում:

Պէտք է իմանալ, որ Աստուած մարդուն բարի եւ ուղիղ է ստեղծել՝ մարմնով, հոգով ու մտքով: Ինչպէս Աստուած Ինքն է բարի, այդպէս էլ Նրա ստեղծածներն են բարի, միայն թէ Աստուած անփոփոխ բարի է, իսկ մարդը փոփոխական է. փոփոխական կեանքում կարող ենք բարուց դէպի չարը փոխուել մարմնով ու հոգով եւ ուղիղ խորհուրդներից՝ դէպի թիւրը: Սա երկու պատճառով է լինում: Նախ՝ սատանայից, ով մեր թշնամին է եւ շարունակ կամենում է խաբել, որպէսզի բարուց դէպի չարը փոխի: Երկրորդ՝ սատանան մեր անձնիշխան կամքն է խա-

բում, որ չարը ներկայացնում է բարու կերպարանքով եւ գործել տալիս, որովհետեւ եթէ չար ցոյց տար, չէինք գործի, քանզի չարից ամէն մարդ փախչում է: Այլ չարը բարիով է զարդարում ու պաճուճում եւ դրանով մեզ խաբում, իսկ մենք էլ մեր անձնիշխան կամքով խաբւում ենք, երբ այն ընտրում ենք, որով գործում ենք այն, ինչ չար է, եւ գործելու ընթացքում մեր մարմինն ու հոգին հաճոյք են ստանում, ուստի չեն հասկանում [դրա չար լինելը]: Երբ այս մեղքը դեռեւս խորհրդի տեսքով է եւ չի գործուել, հեշտութեամբ կարելի է մերժել, բայց երբ մարդը երկար է մնում մեղքի մէջ, մարմինը հաճոյք է ստանում, զգայարանները մեղքի մէջ թմրում են եւ դրա ծանրութիւնը չեն զգում: Ինչպէս ճուկը, որ կարթը կուլ է տալիս, ջրում խաղում է ու [կատարուածը] չի հասկանում, մինչեւ ջրից դուրս չի նետուում, այդպէս էլ մարդը մեղքի չարութիւնը չի զգում, մինչեւ չի զղջում ու մեղքից հեռանում կամ մեռնում ու կեանքին հրաժեշտ տալիս: Այնուհետեւ տանջւում, հառաչում ու զղջում է, բայց թողութիւն չի գտնում, որովհետեւ այն կեանքում ամէն մեղաւոր տանջանքներից հարկադրուած է զղջում, ուստի չի բժշկւում:

Իսկ եթէ մէկն ասի, թէ Աստուած նոյն ողորմածն է, եւ մեղաւորն էլ է նոյնը, երբ [վերջինս] զղջում է, ինչո՞ւ թողութեան չի արժանանում, կ՚ասենք, որ սրան երեք պատճառ կայ: Նախ՝ այնտեղ չկայ մարմին, որով [մարդը կարող] է ապաշխարել՝ պահքով, աղօթքով, ողորմութեամբ կամ մի ուրիշ բանով, եւ թողութիւն գտնել: Երկրորդ՝ այն կեանքում եղած զղջումն ակամայ է եւ ո՛չ կամաւոր, ուստիեւ թողութիւն չի տրւում: Երրորդ՝ որովհետեւ ապաշխարելու ժամանակն անցել է, եւ [ողորմութեան] դուռը՝ փակուել, ինչպէս փակուեց յիմար կոյսերի առաջ, ովքեր թէեւ խնդրեցին ողորմութիւն, չընդունեցին իմաստուն [կոյսերից]: Հետեւաբար զղջումը պիտանի է ա՛յս կեանքում, որն իբրեւ գործիք ունի մարմինը, եւ [այս կեանքում] կամովին ենք զղջում, ժամանակն էլ ընդունելի է՝ ըստ առաքեալի. «Ահա՛ ընդունելի ժամանակը, ահա՛ փրկութեան օրը» [Բ Կոր. Զ 2]:

Եթէ մէկն ասի. «Թէպէտ ես չեմ ապաշխարում, մի ուրիշն ինձ համար կ՚ապաշխարի», կ՚ասենք, որ բարի են արդարի աղօթքը, նաեւ պաշտամունքը, պատարագն ու աղքատներին ողորմութիւնը, սակայն նրանց համար են օգտակար, ովքեր զղջացել են մեղքերն ու խոստովանել. մենք նրանց ենք աղօթքով օգնում եւ պարտքերը վճարում, իսկ անզեղջ մեռեալներին [սրանցից] ոչ մի օգուտ չկայ: Ինչպէս որ սրբերի աղօթքները կենդանութեան օրօք օգուտ են տալիս հաւատացեալ-

ներին եւ ոչ թէ անհաւատներին, այդպէս էլ օգուտ են տալիս զղջացած եւ ոչ թէ անզեղջ մեռելներին: Եւ ինչպէս որ մարմնաւոր հիւանդը կարող է դեղերով առողջանալ, իսկ մեռեալը՝ ոչ, ինչպէս վերեւում ասացինք, այդպէս էլ ով մեղքերով հիւանդ է, եթէ մեղքերի համար զղջացել է, օգուտ ունի [ուրիշների աղօթքներից], իսկ եթէ մէկը մեղքերի մէջ անզեղջ է մեռնում, օգուտ չունի: Ինչպէս որ շատ ջրից օգուտ չկայ չորացած ծառին, եւ շատ լոյսից՝ կուրացած աչքերին, այդպէս էլ շատ աղօթքներն օգուտ չեն տալիս նրանց, ովքեր կուրացած են անհաւատութեամբ եւ չորացած՝ մեղքերով: Եւ ոչ միայն օգուտ չեն տալիս, այլեւ է՛լ աւելի վնասում, ինչպէս մերկ ձեռքերին՝ չիկացած երկաթը: Կամ ինչպէս որ արեւի պայծառ լոյսը խաւարեցնում է ճպռակալած աչքի սակաւ լոյսը, այդպէս անհաւատի ու մեղքերով մեռածի համար անօգուտ է յետնորդների յիշատակութիւնը: Այս պատճառով էլ այսո՛ր է մեզ հարկաւոր հեռանալ մեղքերից եւ արժանանալ Աստուծոյ ողորմութեանը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսով, Ով օրհնեալ է յաւիտեանս. ամէն:

ԴԱՐՁԵԱԼ ՄԵՂՔԻ ՄԱՍԻՆ
(ԳԼՈՒԽ ԽԹ)

«Ցանկութիւնը յղանալով՝
մեղք է ծնում, եւ մեղքը
գործուելով՝ մահ»:
[Ցակ. Ա 15]

Օձը, որ խօսեց Եւայի հետ եւ խաբեց նրան, մեզ խաբող հաճելի ցանկութիւնն է խորհրդանշում՝ տասնչորս պատճառով: Նախ՝ օձը թունաւոր գազան է, եւ մեր մարմնի ցանկութիւնը՝ հոգու մահ. որովհետեւ «ցանկութիւնը յղանալով՝ մեղք է ծնում, եւ մեղքը գործուելով՝ մահ» [Ցակ. Ա 15]: Երկրորդ՝ օձը թաքուն է սողում, ցանկութիւնն էլ՝ թաքուն վրայ հասնում: Երրորդ՝ [օձը] երկրի վրայ է սողում, ցանկութիւնն էլ մարդուն դէպի երկիր է քաշում: Չորրորդ՝ [օձը] կրծքի ու փորի վրայ է սողում, ցանկութիւնն էլ նախ սրտով է կապում հաճոյքին, ապա մարմնով գործել տալիս: Հինգերորդ՝ [օձը] հող է ուտում, ցանկութիւնն էլ երկիրն է վայելում: Վեցերորդ՝ օձը հինգ տակ է պտտւում, ցանկութիւնն էլ զգայարաններում հինգ տեսակ է: Եօթերորդ՝ [օձը] խայտաբղետ է լինում, ցանկութիւնն էլ ըստ զգայութիւնների զանազան է: Ութերորդ՝ [օձի] գլուխը թոյլ է, ցանկութիւնն էլ տկար է: Իններորդ՝ [օձի] գլուխը ուր որ մտնում է, մարմինն էլ է տանում, եւ հաճելի ցանկութեանը գործն է հետեւում: Տասներորդ՝ [օձը] դժուարութեամբ է դուրս հանւում մաշկի պատճառով, ցանկութիւնն էլ դժուարութեամբ է մարմնից դուրս գալիս հաճոյքի պատճառով: Տասնմէկերորդ՝ [օձը] բազում ձագեր է հանում, եւ բազմածին են ցանկութեան դուստրերը: Տասներկուերորդ՝ [օձը որեւէ բանի մէջ] առաւելապէս բերանով է մտնում, ցանկութիւնն էլ ճաշակելիքով է առաւել տիրում: Տասներեքերորդ՝ [օձը] սպասում է գարշապարներին, ցանկութիւնն էլ տիրում է մեր [կեանքի] մարմնաւոր ընթացքում: Տասնչորսերորդ՝ [օձի] գլուխն ենք ջախջախում, եւ պէտք է ոչնչացնենք մեր մէջ ցանկութեան սկիզբը, որից յետոյ կը կարողանանք յաղթել կրքերին՝ ըստ Տիրոջ խրատի. «Դու նրա գլխին կը սպասես, իսկ նա՝ քո գարշապարին» [Մն. Գ 15]:

Նախ տեսնենք, թէ ինչով են միմեանցից տարբերւում ցանկութիւնն ու հաճոյքը: Հարկ է գիտենալ, որ չորս բանով են տարբերւում: Նախ՝

ցանկութիւնը հոգո՛ւ մի մասում է, իսկ հաճոյքը՝ մարմնում: Երկրորդ՝ ցանկութիւնն ինքն իրենից է, իսկ հաճոյքն՝ ուրիշ [աղբիւրից]: Երրորդ՝ ցանկութիւնը նախորդում է հաճոյքին: Չորրորդ՝ ցանկութիւնը կատարւում է, իսկ հաճոյքը՝ կրւում: Այսպէս չորս բանով են տարբերւում:

Նաեւ՝ փափագը վերաբերում է ապագային, փափկալից [յիշողութիւնը]՝ անցեալին, իսկ հաճոյքը՝ ներկային: Այսպէս էլ տարբերւում են ախտն ու աղտեղութիւնը: Ախտը մեր ներսից է, իսկ աղտեղութիւնը՝ դրսից: Այդպէս էլ բիծը հոգու մասերի մէջ է, իսկ արատը՝ մարմնի զգայարանների: Նաեւ՝ չարութիւնն այն է, որ սրտից է առաջ գալիս ու մարդուն պղծում, իսկ մեղքն այն է, որ ուրիշից ենք կրում ու մեղկանում:

Երկրորդ՝ տեսնենք, թէ ինչով են մեղքն ու անօրինութիւնը տարբերւում միմեանցից: Ասենք, որ վեց բանով են տարբերւում: Նախ՝ մեղքը կար նախքան օրէնքի դէմ մեղանչումը, իսկ անօրինութիւնն օրէնքի [հաստատումից] յետոյ ի յայտ եկաւ: Երկրորդ՝ մեղքն ընկերոջ հանդէպ յանցանքն է, իսկ անօրինութիւնը՝ Աստուծոյ: Երրորդ՝ մեղքը տգիտութեամբ մեղանչելն է, իսկ անօրինութիւնը՝ գիտութեամբ: Չորրորդ՝ մեղքը ներելի [յանցանքն] է, իսկ անօրինութիւնը՝ մահացու: Հինգերորդ՝ մեղքը մարմնի մեղանչումն է, իսկ անօրինութիւնը՝ հոգու: Վեցերորդ՝ մեղքը նախքան խոստովանութիւնը [մեղանչելն է], իսկ անօրինութիւնը՝ խոստովանութիւնից յետոյ դարձեալ մեղանչելը՝ շան պէս սեփական փսխածին դառնալով [Առակ. ԻԶ 11]:

Երրորդ՝ տեսնենք, թէ ինչ են մեղքը, մահը եւ մահացուն: Ասենք, որ մեղքն այն է, որ մէկն ինչ-որ կրօնի է պատկանում, մեղքով սայթաքում է եւ դարձեալ ապաշխարում: Մահն այն է, որ [մարդ] տգիտութեամբ է մեղանչում, սակայն, չնայած սրան, հոգին մեռնում է: Իսկ մահացուն այն է, որ մարդ գիտութեամբ է մեղանչում. սա՛ է յաւիտենական դառն մահը:

Եթէ մէկը հարցնի, թէ որն է գիտութեամբ մեղանչելը, ասենք՝ այն է, որ մէկը գիտի ճշմարիտը, բայց սուտն է գործում: Եւ սա երեք կերպ է լինում: Նախ՝ գործով ու պատժի [գիտակցութեամբ], երբ մէկը գիտի, որ այսինչ բանը մեղք է, բայց գործում է, եւ գիտի, որ այդ մեղքի պատիժը ծանր է: Երկրորդ՝ [մեղքը] գործողով, ով ինչ-որ ճշմարիտ կարգի մէջ է, սակայն այն թողնում եւ մեղք է գործում: Երրորդ՝ աստուածգիտութեամբ, երբ մէկը ճշմարիտ հաւատքն ունի, բայց այն թողնում ու մեղանչում է: Ուրեմն երեք տեսակ է գիտութեամբ մեղանչումը, ինչի մասին Յովհաննէսն ասում է. «Եթէ անգիտութեամբ մեղանչէք,

Աստուած կը ների ձեզ, իսկ եթէ Նրան ճանաչելով հանդերձ մեղանչէք, նախկին մեղքը նոյնպէս կը պահանջի» [Ննջումն Յովհաննու, Գ]:

Թէեւ մարդու գործած բոլոր մեղքերը չարի խաբէութեամբ եւ մարդու թոյլ ու հաճոյքասէր կամքից են լինում, սակայն կան մեղքեր, որ մարմնի չորս տարրերի խառնումից են առաջ գալիս, ինչպէս բարկութիւնը, գիջութիւնը, ծուլութիւնն ու հպարտութիւնը: Ինչպէս ասում է [սբ Գրիգոր] Նիւսացին, բարկացկոտ են դառնամաղձոտները, եւ սա [չորս տարրերից] կրակի հետ է առնչւում, ցանկասէր են [առատ] արիւն ունեցողները. [սա առնչւում է] օդի հետ. տրտմակեաց են սեւամաղձոտները. [սա առնչւում է] հողի հետ. ծոյլ ու հեղգ են նրանք, ում մէջ ջրի նիւթն է [շատ]: Նաեւ՝ օդը երկու տեսակ է. մէկը չոր ու հով է, միւսը՝ թաց ու տաք: Թացի մասն է մեր արիւնը, իսկ չորը, որ քամին [առաջ բերողն] է, մեր սրընթաց, թեթեւամիտ ու հպարտ լինելու պատճառն է: Եւ զարմանալի բան է տեղի ունենում: Մարդն իր մէջ ունի չարն ու բարին եւ ստեղծուած է իբրեւ հաղորդակցուող կենդանի [արարած], քանի որ ինչ որ ունի, դրանից ուրիշներին էլ է բաժին հանում, ինչպէս արեւը՝ [իր] լոյսը, եւ ծառը՝ [իր] պտուղը: Եթէ բարին պահում է իր մէջ եւ չի հաղորդում ուրիշներին, չար է, իսկ եթէ հաղորդում է, լինի գիտութիւն, առաքինութիւն թէ ունեցուածք, բարի է: Այդպէս էլ եթէ չարն է հաղորդում ուրիշներին, չար է, իսկ եթէ իր մէջ է պահում, բարի է, որովհետեւ այն կորչում է նրա մէջ: Եւ ինչպէս որ օձի թոյնն ու կարիճի խայթոցն իրենց համար բարի են, բայց ուրիշներին փոխանցուելով՝ չար են դառնում, այդպէս մեր մէջ ծածկուած ամէն չարութիւն չար չէ, օրինակ՝ ցանկութիւնը, բարկութիւնը [եւ այլն], բայց ուրիշների վրայ տարածուելով՝ չար է դառնում ե՛ւ ուրիշների համար, ե՛ւ մեր անձի:

Չորրորդ՝ տեսնենք, թէ ինչ է նշանակում Յոբի խօսքը. «Հաշուեցիր իմ քայլերը եւ անօրինութիւններս կնքեցիր քսակում» [Յոբ ԺԴ 17]: Ասենք, որ Աստուած մեր գործերն իմանալու համար դրանք չի հաշւում, այլ «հաշուել» ասւում է չորս պատճառով: Նախ՝ ով հաշւում է, գիտի, թէ որն է առաջինը, որը՝ երկրորդը, եւ այլն. այդպէս Աստուած մեր մանկութեան, երիտասարդութեան եւ ծերութեան բոլոր գործերն ըստ կարգի գիտի եւ ըստ կարգի էլ հատուցում է: Երկրորդ՝ հաշուելով ամէն ինչ անմոռաց ենք պահում, ուստի [Յոբի խօսքը] նշանակում է, որ Աստուած մեր գործերը չի մոռանում. թէեւ մենք գործում ու մոռանում ենք, սակայն Նա գիտի [մեր] թէ՛ խորհուրդների, թէ՛ խօսքերի եւ թէ՛ գործերի մասին, նաեւ՝ թէ դրանք գործում ենք կամովի՞ն, թէ ակամայ, գիտութեա՞մբ, թէ անգիտութեամբ: Երրորդ՝ հաշուելով ստոյգ ենք իմանում [ինչ-որ բանի] քանակութիւնը՝ տա՞սն է, թէ աւելի կամ պակաս. այդպէս էլ Աստուած մեր գործերը ստո՛յգ գիտի եւ ո՛չ աւելի կամ պակաս: Չորրորդ՝ ինչպէս որ հաշուող առարկան փոփոխական է՝ եթէ աւելացնենք, թիւն էլ կ՛աւելանայ, եթէ պակասեցնենք, [թիւն էլ] կը պակասի, այդպէս կարող ենք մեր մեղքերի թիւն աւելացնել գործով եւ պակասեցնել, որովհետեւ դրանց աւելին ու պակասը մեր ձեռքին է:

Իսկ «անօրինութիւններս կնքեցիր քսակում» խօսքը [նշանակում է]՝ նախ՝ ինչպէս որ [մէկն ինչ-որ բան] կնքում ու պահում է քսակում եւ պատշաճ ժամանակ հանում, այդպէս Աստուած [վարւում է] մեր գործերի, խօսքերի եւ խորհուրդների հետ, եւ երբ մեղքերից չենք հեռանում, բացայայտում ու ներկայացնում է դատաստանին: Երկրորդ՝ երբ գիտենք, որ մեր բոլոր գործերը Նա Իր քսակում է պահում, մեղքերի համար զղջում ենք, եւ Նա քսակից դրանք հանում ու ոչնչացնում է: Մովսէսը նոյնպէս ասում է [Աստուծոյ անունից]. «Մի՞թէ այս ամէնը հաւաքուած ու կնքուած չի պահւում Իմ գանձարանում. վրէժխնդրութեան օրը կը հատուցեմ նրանց» [Բ Օր. ԼԲ 34—35]: Ուստի պէտք է մտածենք ու զարհուրենք, որ մեր գործած բոլոր մեղքերը, թէեւ մենք մոռանում ենք, Աստուած մտապահում է եւ դրանց դիմաց հատուցում: Իսկ երբ խոստովանում ենք եւ յիշում մեղքերը, Աստուած դրանք մոռանում է եւ անյիշաչար լինում, քանզի մարդասէր ու ողորմած է: Եւ Նրան փա՛ռք յաւիտեանս. ամէն:

ՔԱՐՈԶ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՄԵՂՔԻ ՄԱՍԻՆ

(ԳԼՈՒԽ Ծ)

«Անօրինութեամբ յղիացաւ եւ
մեղքով ծնեց ինձ իմ մայրը»:
[Սաղմ. Ծ 6]

Մեղքը երեք տեսակ է լինում՝ սկզբնական, մահացու եւ ներելի: Եւ այս բաժանումն այնպիսին չէ, ինչպիսին սեռը տեսակների մէջ, տեսակը՝ անհատների եւ այլն, այլ այնպիսին է, ինչպիսին ամբողջն է մասերի մէջ: Սկզբնական մեղքը չորս տարբերութիւն ունի [մեղքի] միւս երկու [տեսակներից], այսինքն՝ մահացու եւ ներելի [մեղքերից]՝ ըստ միութեան, ընդհանրութեան, հաւասարութեան եւ որակի: Ըստ միութեան՝ որովհետեւ մէկն է սկզբնական մեղքը եւ չի բաժանւում [տեսակների], ինչպէս մահացուն՝ եօթի, եւ ներելին՝ երեքի: Ըստ ընդհանրութեան՝ որովհետեւ ընդհանրաբար ով էլ հաղորդւում է [մարդկային] բնութեանը, հաղորդւում է նաեւ նրան, այսինքն՝ սկզբնական [մեղքին]: Որովհետեւ մահացու մեղք չկար Երեմիայի եւ Յովհաննէսի մէջ, ովքեր մաքրուեցին [իրենց մօր] որովայնից, բայց զերծ չէին ներելի մեղքերից: Իսկ Կոյս Մարիամ Աստուածածինը զերծ էր թէ՛ մահացու, թէ՛ ներելի մեղքերից, սկզբնական մեղքից էլ մաքրուեց Սուրբ Հոգով, երբ Վերջինս նրան հովանի եղաւ: Միայն մեր Փրկիչ Քրիստոսն էր զերծ սկզբնական մեղքից, ինչի պատճառն այն է, որ մարմին առաւ ոչ թէ սերմից, այլ Կոյսի մաքուր արիւնից: Ըստ հաւասարութեան՝ սկզբնական մեղքը հաւասարապէս կայ բոլոր մարդկանց մէջ եւ մահացուի պէս մեծ կամ փոքր չի լինում, ինչպէս որ շնութիւնն աւելի մեծ մեղք է, քան պոռնկութիւնը, կամ մարդասպանութիւնն աւելի մեծ [մեղք] է, քան գողութիւնը: Իսկ ըստ որակների՝ նախ՝ սկզբնականը հարկադրաբար եւ մեր կամքից անկախ է տիրում, իսկ [մահացուն ու ներելին]՝ մեր կամքով: Երկրորդ՝ սկզբնականը հետեւում է բնութեանը, իսկ միւսները պատկանում են անձին, ուստի այն, որն ըստ բնութեան է մեղք, ըստ բնութեան էլ անցնում է սերունդներին, իսկ անձնական [մեղքերը]՝ ոչ, քանի որ գործով են ձեռք բերւում: Սա՝ այն մասին, թէ ինչպէս է սկզբնական [մեղքը] տարբերւում միւսներից:

Իսկ մահացու եւ ներելի մեղքերը միմեանցից տարբերւում են ըստ առաւելութեան եւ ըստ նուազութեան: Ինչպէս որ օձի խայթոցն առաւել սաստիկ է, քան լուինը, նետի [հարուածը]՝ քան փշինը, եւ սարսամ կամ նկարիս հիւանդութիւնն [առաւել ծանր] է, քան մասնաւոր անդամների [ցաւերը], այսպէս մահացուն առաւել [ծանր մեղք] է, քան ներելին: Նաեւ ըստ թուի են տարբերւում: Մահացուն բաժանւում է եօթ [տեսակի], որոնք գլխաւոր մեղքերն են՝ հպարտութիւն, բարկութիւն եւ այլն: Իսկ ներելին, թէպէտ ըստ մեծութեան եւ նուազութեան բաժանւում է երեք տեսակի՝ «փայտի, եղէգի եւ խոտի»՝ ըստ առաքեալի [Ա Կոր. Գ 12], սակայն մանր մասերով՝ ծիծաղ, դատարկաբանութիւն եւ այլն, անթիւ է:

Հարկ է գիտենալ նաեւ, որ մեր հոգին չորս հարուածի վէրք է ստանում սկզբնական մեղքից: Ինչպէս որ մարմնի ծանր հիւանդութեան դէպքում մնում են հիւանդութեան հետեւանքները՝ կամ ուժասպառութիւն, կամ ախորժակի կորուստ, այդպէս էլ մեր մէջ մնում են սկզբնական մեղքի հետեւանքները, որոնք հարուած ու վէրք են կոչւում եւ վերաբերում [հոգու] ցանկական ու ցասմնական մասերին, բանականութեանն ու կամքին: Առաջին [հարուածը] ցանկութիւնն է, որն անբժշկելի վէրք է եւ հոգու ծածուկ թշնամի: Ինչպէս որ երբ իդորոս կոչուող կենդանին, որը թշնամի է կոկորդիլոսին, կպչում է խոտին, եւ կոկորդիլոսը, խոտն ուտելով, կուլ է տալիս իդորոսին եւ նրա թոյնից սատկում, այդպէս էլ ցանկութիւնը փակչում է հաճելի բաներին, եւ հոգին, այն գործելով, մահանում է, ինչպէս որ Դանիէլն ասաց ծերերին, ովքեր վառուել էին Շուշանի ցանկութեամբ. «Դրա գեղեցկութիւնը խաբեց քեզ, եւ քո ցանկութիւնը շրջեց քո սիրտը» [Դան. ԺԳ 56]: Այն պատճառով է [ցանկութիւնն] անբժշկելի, որ երբ շրջում է սիրտը, նրա հետ շրջում է նաեւ բոլոր զգայարանները: Երկրորդ հարուածը տգիտութիւնն է, որը վէրք է հասցնում մտքին, ինչպէս ասում է սաղմոսը. «Աչքերիս լոյսը՝ եւ սա՛ չմնաց ինձ հետ» [Սաղմ. ԼԷ 11], իսկ երբ տեսողութիւնը կորչում է, կորչում են բոլոր տեսնուող բաները: Այս պատճառով էր Տոբիթն ասում. «Որտեղի՞ց ինձ ուրախութիւն, որ խաւարի մէջ եմ նստում եւ երկնքի լոյսը չեմ տեսնում»[1]: Իսկ բոլոր զգայարանների մէջ տեսողութիւնն ամենահաճելին է. բայց հոգու տեսողութիւնն առաւել է, քան մարմնինը, եւ այս հարուածը, որ ամէնքս շրջում ենք

1 *Տես Տոբ. Գ 1—6:*

մտքի խաւարի մէջ, մեղքերից է: Երրորդ հարուածը բարկութիւնն է, որ վիրաւորում է հոգին, ինչպէս հիւանդութիւնը՝ մարմինը: Բարկութիւնն իր [բնական] կարգը փոխում է եւ չարի դէմ բարկանալու փոխարէն բարկանում է բարու դէմ: Սա կարելի է համեմատել այն անդամալոյծի հետ, ով շարժւում է իր նախատեսածի հակառակ կողմով: Այս մասին է ասում առաքեալը. «Ոչ թէ գործում եմ այն բարին, որը կամենում եմ, այլ անում եմ չարը, որը չեմ կամենում» [Հռոմ. է 19]: Չորրորդ հարուածը չարութիւնն է, որը վիրաւորում է կամքը, թէկուզ կամքը ոչ մի մեղք չգործի սեփական չարութեամբ, ինչպէս ասում է սբ Դիոնեսիոս [Արեոպագացին] «Աստուածային անունների մասին» [գրքում]: Ոչ ոք չարը չի գործում նայելով [դրան], որովհետեւ չարը չի կարող ըստինքեան ցանկացուել: Ինչպէս որ վաշխառուի կամ յափշտակողի ջանքի նպատակն Աստուծոյ դէմ մեղանչումը չէ, այլ ջանում է արծաթը շատացնել, եւ բղջախոհը կամենում է մարմնի հաճոյքը եւ ոչ թէ Աստուծոյ դէմ մեղանչել, սակայն աւելի ցանկանում է մեղանչել Աստուծոյ հանդէպ, քան թողնել մարմնի հաճոյքը: Սրանք են սկզբնական [մեղքի] մեր հոգուն հասցրած վէրքերն ու հարուածները, որոնք չունէր առաջին մարդը նախքան դրախտում յանցանք գործելը: Այս մասին՝ այսքան:

ՔԱՐՈԶ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԻ ՄԱՍԻՆ
(ԳԼՈՒԽ ԾԱ)

Խօսուեց սկզբնական մեղքի մասին, այժմ խօսենք մահացուի մասին: Նախ հարկաւոր է իմանալ, թէ [իրականում] կա՞յ մահացու մեղք: Երեւում է՝ ոչ, քանի որ մահն ապականում ու լուծարում է այն, ինչին հանդիպում է, ինչպէս կենդանի [արարածների] պարագայում, սակայն մահացու մեղքը որքան էլ լինի հոգում, հոգին անմահ է մնում: Դարձեալ՝ մահը խափանում է գործը, եւ մեռած մարդը չի գործում, իսկ մեղաւոր հոգին, մնալով մահացու մեղքի մէջ, եռանդնաբար շատ բաներ է գործում եւ նրբապէս հասկանում, որտեղից էլ երեւում է, որ մահացու մեղք չկայ: Բայց որ [միաժամանակ] կա՛յ մահացու մեղք, յայտնի է նրանից, որ մահացու մեղքն ապականում է կեանքը, դարձնում անգործունեայ, թողնել տալիս [աստուածպաշտութեան] ճանապարհը եւ [մարդուն] կապում գեհենին:

Առաջին՝ մեղքն ապականում է կեանքը հետեւեալ կերպ: Ինչպէս որ մահը, որը մարմնի ապականուելն է, լինում է սրտի ջերմութեան պակասելուց, քանզի սակաւ առ սակաւ ջերմութիւնը պակասում է մարմնի ծայրանդամներից եւ մէկտեղւում կեանքի սկզբնաղբիւրում, այսինքն՝ սրտում, եւ երբ այնտեղից էլ է հեռանում, մարմինը մեռնում է, այդպէս Աստուծոյ սիրոյ սպառումից հոգին է մեռնում: Աստուծոյ սէրը երկու տեսակ է՝ Աստուծոյ հանդէպ, երբ սիրում ենք Աստծուն, եւ Աստուծոյ համար, երբ սիրում ենք ընկերոջը, ինչպէս ասում է Յովհաննէսը. «Ով սիրում է Աստծուն, կը սիրի նաեւ իր եղբօրը» [Ա Յովհ. Դ 21]: Իսկ Աստուծոյ հանդէպ սէրը սպառւում է մահացու մեղքից, օրինակ՝ հայհոյութիւնից, երդմնահարութիւնից, հերձուածից եւ այլ այսպիսի մեղքերից: Ընկերոջ հանդէպ սէրն էլ սպառում են սպանութիւնը, շնութիւնը, գողութիւնը, սուտ վկայութիւնը եւ այլն: Սակայն ինչպէս որ մարմինը հոգով է կենդանի, այդպէս էլ հոգին կենդանի է Աստծով, եւ ինչպէս որ հոգուց բաժանումը մահ է մարմնի համար, այդպէս Աստծուց բաժանումը մահ է հոգու համար: Իսկ Աստծուց բաժանման պատճառը մեղքն է:

Երկրորդ՝ մահացու մեղքն անգործունեայ է դարձնում. որովհետեւ մեղքի մէջ ինքնուրոյն ընկած մարդն ինքնուրոյն չի կարող նրանից ազատուել, եթէ ոչ՝ Փրկչի շնորհով, ինչպէս ասում է սաղմոսը.

«Հոգին, որ ելնում է, այլեւս չի վերադառնում» [Սաղմ. ՀԷ 39]: Այսինքն՝ մարդն ինքնուրոյն է գնում դէպի մեղքը, սակայն ինքնուրոյն նրանից դուրս գալ չի կարող (ինչպէս որ երբ մէկն իրեն կրակի մէջ է գցում, գցուելը նրա իշխանութեան տակ է, սակայն դուրս գալը՝ ոչ, կամ մարդն անձամբ [կարող է] գնալ դէպի մահ, բայց մահուանից անձամբ յարութիւն առնել չի կարող), որովհետեւ մեղքի մէջ ընկած հոգիները միտքն էլ են կորցնում:

Երրորդ՝ մահացու մեղքը թողնել է տալիս [աստուածպաշտութեան] ճանապարհը. որովհետեւ ամէն ոք սկսելով շտապում է իր սկսած ճանապարհի վերջին, որն, օրինակ, այսինչ անունով վայրն է: Իսկ ամէնքի սկիզբն ու վախճանն Աստուած է, ինչպէս [Ինքն] ասաց մարգարէի միջոցով. «Ես եմ ալֆան եւ օմեգան» [Յայտ. Ա 8, 10], այսինքն՝ սկիզբն ու վախճանը: Ուստի մարդն էլ, պատկերակցութեամբ Նրանից իր սկիզբը ստանալով, պէտք է լիակատար նմանութեամբ աւարտի Նրա մօտ: Սա իրականանում է «նեղ եւ անձուկ ճանապարհով, որը դէպի կեանք է տանում», ինչպէս ասում է Տէրը [Մատթ. Է 14]: Իսկ մեղք [գործողը], թողնելով այս ճանապարհը եւ այս ամէնի հակառակը սկսելով, հակառակով էլ աւարտում է, այսինքն՝ [ընթանում է] «լայն եւ ընդարձակ ճանապարհով, որը դէպի կորուստ է տանում» [Մատթ. Է 13]: Առաքեալն էլ ասում է. «Լալով եմ խօսում Քրիստոսի խաչի թշնամիների մասին, [որոնց վախճանը կորուստն է], որոնց աստուածն իրենց որովայնն է» եւ այլն [Փլպ. Գ 18—19]: Ահա այսպէս են տարբերւում միմեանցից մահացու եւ ներելի մեղքերը. ներելին մի փոքր խոտորեցնում է ճանապարհից, բայց նրանից դուրս գալ չի տալիս, իսկ մահացուն հեռացնում ու յետ է դարձնում, այդ պատճառով էլ վերջում է՛լ աւելի է հեռացնում, ինչպէս ասում է սաղմոսը. «Մեղաւորներից հեռու է փրկութիւնը» [Սաղմ. ՃԺԸ 155], այսինքն՝ Փրկիչը, Ով բոլոր մարդկանց վերջնակէտն է:

Չորրորդ՝ [մահացու մեղքը] կապում է դեհենին այսպէս. քանի որ մարդը մեղքերով կապւում է սկզբնաչարին՝ սատանային, ուստի նրա հետ՝ նաեւ նրա վայրերին, այսինքն՝ կրակին, ինչպէս ասում է Տէրը. «Գնացէ՛ք Ինձնից, անիծեալներ, յաւիտենական կրակը, որ պատրաստուած է սատանայի եւ նրա հրեշտակների համար» [Մատթ. ԻԵ 41]:

Սակայն կարծես թէ անպատշաճ է, որ մեղքի սակաւ հաճոյքի դիմաց մարդը յաւիտենապէս տանջուի: [Այս առնչութեամբ] վարդապետներն ասում են, որ մեղքի պատիժը չափւում ու սահմանւում է ըստ

մեղանչողների որպիսութեան, ինչպէս որ զինուորներին հարուածողն առաւել է մեղանչում, քան ռամիկներին հարուածողը, եւ թագաւորին հարուածողն՝ առաւել, քան զինուորին հարուածողը: Ուստի Աստուծոյ դէմ մեղանչողն անհուն չարիք է գործում եւ արժանապէս ընկնում անհուն տանջանքի մէջ՝ աստուածային մեծութեանը վնաս հասցնելու եւ արհամարհելու համար: Եւ անհուն մեղքի պատճառով անհուն է դառնում նաեւ պատժի երկարութիւնը: Ուրեմն՝ սրանցից յայտնի է դառնում, որ կա՛յ մահացուցիչ մեղք:

Իսկ որ ասւում է նախ, որ հոգին անմահ է եւ չի կարող մեռնել, վարդապետները պատասխանում են, որ կայ երկու տեսակ մահ՝ բնութեան եւ յանցանքների: Հոգին բնութեան մահով չի մեռնում, սակայն յանցանքների մահով մեռնում է, ինչպէս ասուեց, որովհետեւ մեղքերի պատճառով հոգին մեռնում է: Իսկ երկրորդ [փաստարկին], որ ասւում է, թէ մահը խափանում է առարկայի գործունէութիւնը, վարդապետները պատասխանում են, որ մահացու մեղք գործողը չի կարող բարիք գործել, որովհետեւ մեղքերի հետ անընդունելի է նաեւ նրա բարեգործութիւնը: Եւ յայտնի է, որ երբ [մեղաւորը] դարձի է գալիս ու ապաշխարում է, նախքան մեղանչելը նրա կատարած բարի գործերը յիշւում են, իսկ մեղք գործելու ժամանակ կատարած բարի գործերը՝ ոչ: Ուստի պարզ է, որ մեղքը խափանում է բարի գործերի վարձատրութիւնը: Մահացու մեղքի մասին՝ այսքան:

ՔԱՐՈԶ ՆԵՐԵԼԻ ՄԵՂՔԻ ՄԱՍԻՆ
(ԳԼՈՒԽ ԾԲ)

Խօսուեց մահացու [մեղքի] մասին, այժմ տեսնենք, թէ ինչ է ներելի մեղքը: Հարկ է գիտենալ, որ ներելի, այսինքն՝ թողութեան արժանացող [մեղքը] երեք բանով է ճանաչւում՝ պատահմամբ, պատճառով եւ իր բնութեամբ: Պատահմամբ ներելի է համարւում մահացու [մեղքը]՝ զղջման եւ խոստովանութեան միջոցով: Ըստ պատճառի՝ [մեղքը ներելի է համարւում մեղանչողի] տգիտութեան կամ տկարութեան պատճառով, [այսինքն]՝ երբ մէկը մեղանչում է եւ չի հասկանում, որ մեղք է գործել, ապա սա ներման արժանի է: Իսկ բնութեամբ [ներելի մեղք] են չափից դուրս ծիծաղելը, արհամարհելը, դատարկաբանելը եւ այլն: Սա՝ [այն մասին], թէ որն է ներելի մեղքը:

Իմացի՛ր, որ թէեւ ներելի մեղքերը որոշակի թուաքանակ չունեն, քանի որ շատ են, սակայն կարող են ըստ իրենց կերպարանքի դասակարգուել իբրեւ փայտ, խոտ եւ եղէգ[2], քանի որ հեշտութեամբ են այրւում ու վերանում: Փայտը խորհրդանշում է աւելի ծանր ներելի մեղքերը, եղէգը՝ աւելի թեթեւները, իսկ խոտը՝ միջին ծանրութեան մեղքերը: Այն պատճառով են [ներելի մեղքերը] երեք [խմբի բաժանւում], որ բոլոր արարածներին յատուկ է այս երեքը՝ էութիւնը, զօրութիւնը եւ գործը: Բոլոր գործերը երեք [փուլ] ունեն՝ սկիզբ, միջին մաս եւ վերջ: Մարդը երեք մասից է կազմուած՝ մարմնից, հոգուց եւ մտքից, միտքն էլ ունի յիշողութիւն, իմացականութիւն եւ կամք: Սկզբնական մեղքը երեքից բխեց՝ օձից կնոջը, կնոջից՝ տղամարդուն, [տղամարդուց՝ յետագայ սերունդներին]: Սրանից մաքրուելը երեք [Անձով] է իրականանում՝ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անուամբ մկրտութեան միջոցով, եւ մահացու մեղքը նոյնպէս մաքրւում է երեք բանով՝ զղջմամբ, խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ: Հոգու կատարելութիւնը երեք [առաքինութեամբ] է իրականանում՝ հաւատով, յոյսով ու սիրով:

Հարկ է գիտենալ, որ մարդն առանց մահացու մեղքի լինել կարող է, բայց առանց ներելիի՝ ոչ, ինչի պատճառն այն է, որ մարդ քանի կենդանի է, ներելի մեղքերի մէջ է ընկնում. այս մասին է Յովհան-

2 *Տես Ա Կոր. Գ 12:*

նէս [առաքեալն] ասում ընդհանրական [թղթում]. «Եթէ ասում ենք, թէ մեղք չունենք, ինքներս մեզ խաբում ենք, եւ ճշմարտութիւն չկայ մեր մէջ» [Յովհ. Ա 8]: Եւ ինչպէս որ ներելի մեղքերի մէջ տարբեր ձեւերով ենք ընկնում, այդպէս էլ տարբեր ձեւերով բժշկւում ենք, այսինքն՝ ներելի մեղքերը քաւում ենք ընդհանրական խոստովանութեամբ, կուրծքը բախելով, լեզուով աղերսելով, խաչակնքուելով, քահանայի խաչը համբուրելով, «Երեքսրբեան»-ը երգելով, Տէրունական աղօթքն ասելով եւ այլ սոյնպիսի միջոցներով:

Իսկ ի՞նչ վնասներ ենք ստանում առհասարակ բոլոր մեղքերից: Պէտք է իմանալ, որ մեղքը մեռցնում է կեանքը, անարգ դարձնում [յետմահու կեանքի] կայեանները, մշտնջենաւոր դարձնում տանջանքը եւ մթնեցնում տեսողութիւնը:

Նախ՝ մեռցնում է կեանքը, որովհետեւ նախքան [առաջին մարդկանց] մեղանչումը մարդկային մարմինը կազմող չորս տարրերը այնքան սիրով էին միացած, որ չէին կարող քայքայուել, եւ եթէ մեղքը չլինէր, մարդը մահկանացու չէր դառնայ, չէր հիւանդանայ, չէր ծերանայ եւ այլն: Սակայն մեղքի գալով՝ սիրոյ կապանքներն արձակուեցին, տարրերը՝ ջերմութիւնը, սառնութիւնը, թացն ու չորը, պայքարի մէջ մտան, եւ այս պայքարից առաջ եկան մարմնի քայքայումը, ցաւը, հիւանդութիւնը, փոփոխութեան ենթարկումն ու մահը, ինչպէս ասում է առաքեալը, թէ մարմինը մեղքի միջոցով մեռաւ [Հռոմ. Է 9—10]: Այս պատճառով են մեռնում թէ՛ մանուկները, թէ՛ ծերերը, եւ մահը ոչ ոքի չի խնայում:

Երկրորդ՝ մեղքն անարգ է դարձնում կայեանները, որովհետեւ տեսնում ենք, որ ամէն ազնիւ բանի ազնիւ տեղ է յատկացւում, ինչպէս կարելի է տեսնել մարդու աչքի օրինակով, որովհետեւ այն որքան աւելի ազնիւ է, քան մարմնի մնացած մասերը, այդքան աւելի բարձր մասում է տեղակայուած: Այսպէս անտաշ ու կարծր քարերը տան հիմքում են դրւում, իսկ փայտերը՝ առաստաղի մասում. այս աշխարհում հողը, որ առաւել անարգ է, ներքեւում է գտնւում, իսկ աստղերը, որ առաւել ազնիւ գոյացութիւններ են, երկնքում են դրուած: Այդպէս էլ մարդը միւսներից առաւել ազնիւ արարած է, ուստի անհրաժեշտ էր, որ նա աւելի բարձր տեղում դրուէր, սակայն մեղքի պատճառով անարգ է դառնում եւ դժոխք ընկնում, ինչպէս ասում է Աւետարանը. «Հարուստը մեռաւ եւ թաղուեց դժոխքում» [Ղուկ. ԺԶ 22]: Եւ սրա պատճառն այն է, որ ում ծնունդն առաւել ազնիւ է, նրա ապականութիւնն առաւել անարգ

է լինում: Սա երեւում է [արարածների] վախճանից. որովհետեւ մարդու դիակն առաւել անարգ է ու առաւել է նեխում, քան ուրիշ դիակները: Ինչպէս մարմնի ապականութիւնն է, այդպէս էլ հոգունը. այդ պատճառով էլ վարդապետներն ասում են, որ մեղաւորն արժանի չէ այն հացին, որն ուտում է: Նաեւ՝ մեղաւորը մեղանչում է ընդդէմ բնութեան սահմանածի, ինչպէս ասում է սբ Դիոնեսիոսը. «Մեղքը բնութեան դէմ լինելն է»: Ուստի մինչ ըստ բնութեան վայել էր մարդուն գերագոյն տեղը, ընկնում է ստորնագոյն տեղը:

Երրորդ՝ մեղքը մշտնջենաւոր է դարձնում տանջանքը, ինչը, թւում է, բնութեան դէմ է, սակայն պէտք է, որ տանջանքը մեղքին համապատասխանի: Զարմանալի է թւում, որ մեղքի ժամանակաւոր հաճոյքին յաւիտենական պատժով է պատասխան տրւում, բայց պէտք է ասել, որ դա կատարւում է Աստուծոյ արդար դատաստանով. որովհետեւ ով չկամեցաւ ազատուել մեղքերից, պիտի չազատուի տանջանքից: Իսկ եթէ մէկն ասում է, որ ով սպանութիւն է գործում, [այն կատարելուց յետոյ] չի կարող [նոյն] մեղքի մէջ լինել, ասենք, որ մարդը մահացու մեղքի միջոցով իրեն այնպիսի կայեանի մէջ է դնում, որից ինքնուրոյն դուրս գալ չի կարող: Օրինակ՝ եթէ մէկը քար է գցում, երբ նախքան գցելը իշխանութիւն ունի չգցելու, գցելուց յետոյ [այլեւս] չի կարող այն չգցել:

Չորրորդ՝ մեղքը խաւարեցնում է տեսողութիւնը, քանզի ինչը պտղաբեր չարիք է, բարի է երեւում, ինչպէս որ ջերմութիւն ունեցողին քաղցրը դառն է թւում, եւ հակառակը: Այս մասին է ասում Եսային. «Վա՛յ ձեզ, որ չարը բարի էք ասում եւ բարին՝ չար» [Ես. Ե 20] եւ այլն: Այս մասին՝ այսքան:

ՔԱՐՈԶ ՄԵՂՔԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ԳԼՈՒԽ ԾԳ)

Երեք են մեղքերի տեսակները, որ գործում են մարդիկ՝ խորհուրդների, խօսքերի եւ գործերի, որովհետեւ մարդը կազմուած է երեք մասից՝ հոգուց, մարմնից եւ մտքից, եւ դրանցից իւրաքանչիւրով էլ սխալւում է եւ մեղք գործում թէ՛ խորհուրդով, թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով: Բոլորից առաջ գործւում է խորհուրդների մեղքը, որը սատանան սերմանում է մարդու մտքի մէջ, յետոյ աճեցնում մարմնի միջոցով եւ մեղք գործել տալիս: Սա է պատճառը, որ վարդապետներն ասում են, թէ բաւական չէ միայն մարմինը մեղքերից պահել, պէտք է զգոյշ լինել նաեւ խորհուրդների հանդէպ: Եւ սա՝ տասը պատճառով:

Նախ՝ քանի որ մեղքը խորհուրդների մէջ է արմատ գցում եւ ապա աճում մարմնով, ուստի պէտք է խորհուրդները մաքուր պահել, որպէսզի չարը նրանցում արմատ չգցի եւ զգայարաններով չբուսնի:

Երկրորդ՝ խորհուրդների մեղքը տարածւում է ամբողջ մարմնով, ինչպէս իժի թոյնը, իսկ մարմնի մեղքը լինում է միայն այն մասում, որով [մեղքը] գործւում է՝ ձեռքում կամ ոտքում. հետեւաբար պէտք է առաւել զգոյշ լինել խորհուրդների հանդէպ:

Երրորդ՝ խորհուրդներն ու միտքը մարդու կառապանն ու առաջնորդն են: Ինչպէս երբ կառքը շեղւում է, կառապանն ուղղում է այն, իսկ եթէ կառապանը ննջի, կառքն ու կառապանը միասին կը կործանուեն, այդպէս էլ եթէ մարմինը շեղուի, միտքը կարող է նրան ուղղել, իսկ եթէ միտքը շեղուի եւ մեղքի հաճոյքի մէջ ընկղմուի, մարմինը չի կարողանայ նրան ուղղել:

Չորրորդ՝ չար խորհուրդով հաւանութիւն ենք տալիս սատանային եւ բարեկամանում նրա հետ: Քանի որ մեղքերի ութ խորհուրդ կայ, որ սատանան սերմանում է մարդու սրտի մէջ եւ գերում դէպի մեղքը, ասես նետերով ծածուկ հրապուրում դէպի [մեղաւոր] խորհուրդը, խոցոտում մարդու հոգին եւ սատակեցնում, ուստի պէտք է զգուշանալ մեղքի խորհուրդից:

Հինգերորդ՝ Աստուած հոգի է եւ ո՛չ մարմին եւ բնակւում է մեր իմացական մտքում ու հոգում՝ ըստ այնմ. «Դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք, եւ Աստուծոյ Հոգին է բնակւում ձեր մէջ» [Ա Կոր. Գ 16]: Եւ ինչպէս որ մեր մարմինը մեր հոգու տաճարն է, այդպէս մեր հոգին

էլ՝ Սուրբ Հոգու: Ուստի բաւական չէ միայն մարմինը [մեղքից մաքուր] պահել, այլ մարմնի հետ նաեւ հոգին, որպէսզի Աստուծոյ սուրբ տաճար լինի, այլապէս «իմաստութեան Սուրբ Հոգին փախչում է նենգութիւնից եւ անմիտ խորհուրդներից» [Իմաստ. Ա 5]:

Վեցերորդ՝ մեր իմացական միտքը հոգու լուսատու աչք ու ճրագ է. եթէ միտքը պայծառ ու մաքուր է, հոգին էլ է լուսաւոր ու պայծառ, իսկ եթէ [միտքը] մեղքերով աղտեղուած է, ապա հոգին մեղքերով մթնած ու խաւարած է՝ ըստ այսմ. «Մարմնի ճրագը աչքն է. եթէ աչքդ յստակ է, ամբողջ մարմինդ լուսաւոր կը լինի, իսկ եթէ չար է, ամբողջ մարմինդ խաւար կը լինի» [Մատթ. Զ 22—23]:

Եօթերորդ՝ միտքն Աստուծոյ հայելին ու պատկերն է, որով տեսնում ենք Աստծուն: Ինչպէս որ ժանգոտ հայելին [ասես] կոյր է, չի տեսնում, իսկ մաքուրը ցոյց է տալիս պատկերը, այդպէս եթէ մեր բանական միտքը, որն այն հայելին է, որով Աստծուն ենք տեսնում, մեղքերով ժանգոտուել է, կոյր է եւ չի կարող իր մէջ Աստծուն տեսնել, իսկ ովքեր սրտով մաքուր են, «նրանք Աստծուն կը տեսնեն»,— ասում է Տէրը [Մատթ. Ե 8]: Այս պատճառով էլ պէտք է խորհուրդները մաքուր ու սուրբ պահել:

Ութերորդ՝ մեր միտքը մեր հոգու եւ մարմնի վրայ կարգուած դատաւոր է՝ ըստ այսմ. «Մի քաղաքում մի դատաւոր կար» [Ղուկ. ԺԸ 2]: Երբ դատաւորը համարձակ ու անկաշառ է, ճշմարիտ ու արդար է դատում, իսկ երբ խարդախ է, նաեւ դատաստանի մէջ է խարդախում: Ուստի պէտք է միտքը սուրբ ու մաքուր պահել մեղքերից, որպէսզի կարողանայ ուղիղ ու արդար դատաստան անել իր եւ այլոց՝ մարմնի եւ հոգու հանդէպ:

Իններորդ՝ խօսքի եւ իմաստութեան աղբիւրը մեր մէջ միտքն է: Ինչպէս եթէ աղբիւրի ակունքը մաքուր է, ապա զուլալ, յստակ ու գեղեցիկ ջուր է բխում, իսկ եթէ աղբիւրի ակունքը պղտորւում է, դառն ու պղտոր ջուր է գալիս, այդպէս էլ մեր հոգին, եթէ մաքուր է մեղքերից, խօսքն ու գիտութիւնը պարզ ու յստակ են արտաբերւում ու մխիթարում են ուրիշներին, իսկ եթէ [հոգին] մեղքերով ապականուած է, խօսքը խառնակ ու ապականուած է լինում: Հետեւաբար պէտք է խորհուրդները սուրբ ու մաքուր պահել:

Տասներորդ՝ ով մեղքը խորհուրդների մէջ ունի, այդ մեղքն առաւել է սիրում ու ցանկանում, մինչեւ որ կատարում է: Իսկ ով մարմնով է գործում, յետոյ տրտմում, զղջում ու ապաշխարում է: Ուստի

այն մեղքը, որ խորհուրդների մէջ է, սիրով է կապուած [մարդուն], եւ վերջինս չի զղջում եւ չի համարում, թէ մեղք ունի: Իսկ մարմնի մեղքը բացայայտ է, եւ [այն գործողը] տեսնում է, որ ինքը մեղաւոր է, եւ զղջում է: Այս պատճառով էլ, որքան հնարաւոր է, պէտք է խորհուրդներն առաւե՛լ մաքուր պահել մեղքերից: Այս [բացատրութիւնները բերեցինք] ըստ [համեմատական] օրինակների:

Իսկ այժմ ըստ Սուրբ Գրքի վկայութիւնների տեսնենք, որ պէտք է խորհուրդները մեղքից պահել: Նախ՝ տէրունական խօսքն ասում է. «Ով ցանկասիրութեամբ է նայում կնոջը, արդէն շնացաւ նրա հետ իր սրտում» [Մատթ. Ե 28]: Սա արդար ու ճշմարիտ է. որովհետեւ ով ցանկասիրական մտքով է նայում, իր կամքով ու խորհուրդներով է շնութիւն գործում. քանզի տեղի, ժամանակի եւ անձնաւորութեան բացակայութեան պատճառով է, որ մարմնով գործելը խափանւում է, եւ նա իր սրտում է մեղքը գործում:

Երկրորդ՝ Տէրը նաեւ ասում է. «Սրտի աւելցուկից է խօսում բերանը. որովհետեւ բարի մարդն իր բարի գանձերից բարին է բխեցնում, իսկ չար մարդն իր չար գանձերից չարն է բխեցնում: Սրտից են առաջ գալիս շնութիւնը, պոռնկութիւնը եւ այլն, որոնք պղծում են մարդուն» [Մատթ. ԺԲ 34—35, ԺԵ 19]: Ուստի եթէ սրտի ծնունդը չար է եւ պղծում է մարդուն, ապա առաւել չար է ծնող սիրտը, որը չարութեան եւ մեղքի մթերանոցն էր: Հետեւաբար պէտք է զգոյշ լինել մտքի հանդէպ, բարին հաւաքել [այնտեղ] եւ բարին խօսել, քանզի [ինչպէս որ] «ծառն իր պտղից է ճանաչւում» [Մատթ. ԺԲ 33], այդպէս էլ միտքը՝ լեզուից ու խօսքից, որոնք նրանից են առաջ գալիս:

Երրորդ՝ Մովսէսը հրամայեց Օրէնքում. «Նայի՛ր քեզ, գուցէ չար խօսք լինի քո սրտում» [Բ Օր. ԺԵ 9], եւ Տէր Աստուած բարկանայ քեզ վրայ: Սրտի չարիք է ասւում խորհուրդների մեղքը, որովհետեւ երբ այն թաքցնում ենք մեր մէջ, Աստուած բարկանում է, քանզի ինչպէս որ ծածկուած կրակը յետոյ բորբոքւում է, այդպէս էլ խորհուրդներում ծածկուած մեղքը յետոյ վառւում է մարմնի մէջ եւ այրում այն: Այս պատճառով էլ պէտք է խորհուրդները մաքրել մեղքից:

Չորրորդ՝ երանելի Յոբն իր որդիների՝ մտքում գործուող [յանցանքների] համար ամէն օր Աստծուն զոհ էր մատուցում. թէեւ որդիները բարեգործ էին՝ իրենց հօր պէս բնական արդարութիւնն ունենալով, սակայն խորհուրդների յանցանքների պատճառով [հայրն] ամէն օր զոհի միջոցով քաւում էր դրանք առաւօտեան եւ երեկոյեան: Իսկ

մենք խորհուրդները մաքրելու համար նրա զոհերի փոխարէն աղօթք ու զղջմամբ խոստովանութիւն ենք [մատուցում Աստծուն]:

Հինգերորդ՝ մեր սիրտն ու խորհուրդները նման են սկուտեղի եւ տարայի, որոնցով ենք ամէն ինչ նուիրում Աստծուն: Ինչպէս եթէ տարան մաքուր է, թագաւորն ընդունում է աղերսն ու հաշտւում, եւ եթէ կեղտոտ է, անարգում է այն, այդպէս երբ մեր խորհուրդները մաքուր են մեղքից, մեր բոլոր բարի գործերն ու աղօթքները հաճելի են Աստծուն, իսկ եթէ մեղքերով աղտոտուած են, [Աստուած] չի ընդունում եւ անարգում է մեզ, ինչպէս ասում է Դաւիթը. «Եթէ [սրտիս մէջ] մեղք տեսնի, մի՞թէ Տէրն ինձ կը լսի» [Սաղմ. Կե 18]:

Վեցերորդ՝ Իմաստունն ասում է. «Իմաստութեան Սուրբ Հոգին փախչում է նենգութիւնից եւ անմիտ խորհուրդներից» [Իմաստ. Ա 5]: Ինչպէս որ նիւթական լոյսը միաւորւում է մեր աչքի լոյսի հետ, եւ տեսնում ենք արարածներին, այդպէս Սուրբ Հոգու շնորհի լոյսը միաւորւում է մեր մտքի հետ, եւ այդ լոյսով տեսնում ենք Աստծուն, երկնքի արքայութիւնը եւ հանդերձեալ կեանքը: Ուստի ով այսպէս հաւատքի լոյսը պայծառ է պահում եւ մտքում խոկում առաքինութեան բարի գործերի մասին, Սուրբ Հոգին միշտ նրա մէջ գիտութեան լոյսն է ծագեցնում: Իսկ եթէ մէկի խորհուրդները նենգաւոր են, այսինքն՝ նա թերահաւատ է եւ անմիտ, նայում ու սիրում է միայն տեսանելի բաները, այդպիսի մտքից փախչում է Սուրբ Հոգին, եւ ինչպէս որ արեւը կոյրին չի լուսաւորում, [այդպէս Սուրբ Հոգին] նրան չի լուսաւորում, եւ նա մնում է մեղքերի ու անհաւատութեան խաւարում: Այս պատճառով էլ պէտք է մեր միտքը մաքուր պահենք:

Եօթերորդ՝ Աստուած քննում է սիրտն ու երիկամները, որովհետեւ «մարդը երեսին է նայում, իսկ Աստուած՝ սրտին» [Ա Թագ. ԺԶ 7], ինչպէս ասում է առակը. «Աստուած նրա երիկամների վկան է, նրա սրտի ոստիկանը եւ նրա լեզուի ունկնդիրը» [Իմաստ. Ա 6]: Սա՝ որովհետեւ մեր Հոգին երեք մաս ունի՝ բանականութիւն, ցասում եւ ցանկութիւն: [«Իմաստութեան» գիրքը] «լեզու» է կոչում մեր մէջ եղած բանականութիւնը, որովհետեւ բանականութեան գործիքն է, «սիրտ»՝ ցասմնական մասը, եւ «երիկամներ»՝ ցանկականը: Ուրեմն՝ Սուրբ Հոգին վերակացու եւ ոստիկան է այս մասերի վրայ եւ ծածկապէս նայում է նրանց գործերին. երբ շեղւում ու մեղքերի չարիքի մէջ են ընկնում, չի ներում, այլ վկայում է, որ մեր ցանկութիւնը շեղուեց, բանականութիւնը սխալուեց, եւ սիրտը խռովուեց: Եւ այդ վկայութիւնը մեզ ուղիղ

վիճակի մէջ է պահում, ինչպէս ասում է Պօղոսը. «Հեթանոսները, որ Օրէնք չունեն, բնութեամբ են գործում Օրէնքի [պահանջները], որոնք գրուած են նրանց սրտում՝ նրանց մտքի վկայութեամբ» [Հռոմ. Բ 14—15]: Այսպէս Սուրբ Հոգին բոլոր մարդկանց սրտերի մէջ գրում է արդարութեան օրէնքը, եւ այս բնական օրէնքով արդարացան Օրէնքից եւ Աւետարաններից առաջ եղած նահապետները:

Իսկ եթէ մէկն ասի՝ եթէ Աստուած այդպէս վերակացու է լինում մեզ, ապա ինչպէ՞ս ենք մեղանչում, ասենք նախ՝ ինչպէս որ Աստուած վերակացու է մեր հոգու մասերի վրայ, այդպէս մեր Հոգին վերակացու է մեր մարմնի մասերի վրայ եւ մեր հոգի՛ն է թոյլ տալիս ու շարժում դէպի մեղքերը: Բացի դրանից, Սուրբ Հոգին վերակացու է մեզ վրայ եւ ո՛չ թէ բռնադատող. երբ անձնիշխան կամքով հետեւում ենք Հոգուն, մեզ պահպանում է չարից, իսկ երբ մեր կամքով խոտորւում ենք դէպի չարը, թոյլ է տալիս, որ այն գործենք, սակայն ներսից խղճի միջոցով դատում ու մեղադրում է մեզ: Այս պատճառով էլ պէտք է խորհուրդները մաքուր պահել եւ հետեւել Հոգու սրբութեանը:

Ութերորդ պատճառը, որ պէտք է խորհուրդները մաքուր պահել, հետեւեալն է: Ամէն հոգեկան մեղք խորհուրդներով է գործւում, ինչպէս՝ հպարտութիւնը, նախանձը, ատելութիւնը, քէնը, ոխը, նենգութիւնը եւ այլն, եւ սրանք բոլորն էլ մեծամեծ մեղքեր են: Քանզի հպարտութիւնն ու նախանձը սատանայի գործն է, ով հպարտացաւ ընդդէմ Արարչի եւ նախանձեց Ադամի փառքին, այսպէս նաեւ ատելութիւնը, ոխը, քէնը հաւասար են մարդասպանութեան՝ ըստ այսմ. «Ամէն ոք, ով ատում է իր եղբօրը, մարդասպան է» [Ա Յովհ. Գ 15]: Եւ՝ «Արիւնահեղ ու նենգաւոր մարդուց Դու գարշում ես, Տէ՛ր» [Սաղմ. Ե 7],— ասում է մարգարէն: Նաեւ՝ «Արիւնահեղ եւ նենգաւոր մարդիկ չեն հասնի իրենց օրերի կէսին» [Սաղմ. ԾԴ 24]: Ի՞նչ օրերի. այսինքն՝ [Աստուած նրանց] նենգութեան պատճառով մարմնաւոր կեանքից կը զրկի եւ յաւիտենական օրերից կը ջնջի նրանց, ինչպէս այլուր ասում է Դաւիթը. «Սակայն նրանց նենգութեան պատճառով նրանց կը զրկես կեանքից եւ կը կործանես» [Սաղմ. ՀԲ 18] յաւիտենական կեանքի մէջ: Այս պատճառով էլ պէտք է միտքը մաքուր պահել:

Իններորդ՝ պէտք է խորհուրդները մաքուր պահել, որպէսզի կեղծաւոր, թերահաւատ ու մարդախաբ չլինենք: Որովհետեւ միայն մարմինը [մեղքից] մաքուր պահելը լինում է մարդկանց ցուցադրելու համար, ինչպէս կեղծաւորների պահք պահելն ու աղօթք անելը, եւ ինչ-

պէս ասաց Տէրը, «Հէնց դա՛ է նրանց վարձը» [Մատթ. Զ 2]: [Միայն մարմինը մաքուր պահողը նաեւ] թերահաւատ է, որովհետեւ չի հաւատում, որ Աստուած գիտի սիրտն ու խորհուրդները: Իսկ մարդախաբը՝ [մարդուն խաբողը], աստուածախաբ է: Այս պատճառով էլ պէտք է ներքին խորհուրդները մաքուր պահել, որպէսզի դրսից մարմինն էլ մաքուր լինի, ապա թէ ոչ՝ կը նմանուենք «սպիտակեցուած գերեզմանների, որոնք դրսից գեղեցիկ ու զարդարուած են, իսկ ներսից լի են գարշահոտութեամբ ու մեռելների ոսկորներով» [Մատթ. ԻԳ 27]: Այդպէս էլ այն մարդը, ում խորհուրդները պղծուած են զազրելի մեղքերով, երբեմն գարշահոտութիւն է արձակում չար խօսքերով, եւ մարդիկ զզւում են: Այս պատճառով էլ պէտք է խորհուրդները մաքուր պահել մեղքերի չարիքներից:

Տասներորդ պատճառը, որ պէտք է խորհուրդները մաքուր պահել, այն է, որ առակն ասում է. «Ամբարիշտների խորհուրդները հարցուփորձի պիտի ենթարկուեն» [Իմաստ. Ա 9]: Հարցուփորձը երկու տեսակ է: Նախ՝ Աստուծոյ Բանի քննութիւնն է, որ մանրամասնաբար քննում ու փորձում է՝ «մինչեւ շնչի եւ հոգու զատորոշումը» [Եբր. Դ 12], այսինքն՝ քննում ու որոշում է մեր խորհուրդները, թէ որն է մեր կամքից ու գիտութեամբ, եւ որը՝ չար սատանայի սերմանածը, որովհետեւ բոլոր չար խորհուրդները սատանան է սերմանում մեր սրտի մէջ, սակայն մենք մեր կամքով ենք հետեւում ու հաճոյք ստանալով աճեցնում չարը մեր սրտում: Այս մասին է ասում մարգարէն. «Իմ գաղտնի [մեղքերից] մաքրի՛ր ինձ, Տէ՛ր, եւ օտարից պահի՛ր Քո ծառային» [Սաղմ. ԺԸ 13—14]: «Օտար»-ը սատանայի սերմանածն է, որին հետեւում ենք եւ նրանից հաճոյք ստանում. Աստուած դա քննում ու [դրա վերաբերեալ] որոշում է կայացնում: Երկրորդ հարցուփորձն այն է, որ մենք սրտում զղջում ենք եւ ատում մեղքերը, գնում քահանայի մօտ եւ խոստովանում՝ դատապարտելով մեզ: Այդժամ, երբ զղջում ենք, Աստուած տեսնում է, որ մենք անմեղ էինք եւ սատանան էր, որ պատրեց ու խաբեց մեզ, ուստի մեզ արդարացնում է, երբ խոստովանում ենք, իսկ սատանային դատապարտում իբրեւ մեր մոլութեան պատճառի: Ուրեմն՝ քանի որ այսպիսի հարցուփորձ պիտի լինի, պէտք է մեր խորհուրդները չարից մաքուր պահենք: Եւ Քրիստոսին փա՛ռք յաւիտեանս. ամէն:

ՔԱՐՈԶ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

(ԳԼՈՒԽ ԽԳ)

«Քահանայի շուրթերը գիտութիւն պիտի ունենան, եւ նրա բերանից օրէնք պիտի պահանջուի, որովհետեւ ամենակալ Տիրոջ հրեշտակն է»:
[Մաղ. Բ 7]

[Քահանան] գիտութիւն պիտի ունենայ չորս պատճառով: Նախ՝ որովհետեւ Աստուծոյ սպասաւորն է, ինչպէս որ «հրեշտակ» է կոչւում, իսկ Աստուծոյ սպասաւորները պէտք է իմաստուն լինեն, որպէսզի կարողանան Աստուծոյ կամքի համաձայն սպասաւորել: Ինչպէս ասում է Սողոմոնը, «Թագաւորի համար ընդունելի է իմաստուն սպասաւորը» [Առակ. ԺԴ 35]: Երկրորդ՝ քահանան միջնորդ է Աստուծոյ եւ մարդկանց միջեւ, ուստի պէտք է գիտուն ու իմաստուն լինի, որպէսզի Աստուծոյ կամքի համաձայն միջնորդի: Երրորդ՝ մարգարէն ասում է. «Ով անարգը հանում է պատուականի միջից, Աստուծոյ բերան կը կոչուի» [Երեմ. ԺԵ 19]: Ուստի [քահանան] պէտք է ներհմուտ լինի իմաստութեան մէջ, որպէսզի իբրեւ ճարտար թովիչ կարողանայ մեղքերը հանել մեղանչածի սրտից եւ [այսպիսով] Աստուծոյ բերան լինի: Չորրորդ՝ քանի որ [խոստովանութեան ժամանակ] մարդկանց մեղքերի անյայտ եւ ծածուկ գործերն են յայտնի դառնում, ուստի խոստովանահայրը գիտութիւն պիտի ունենայ, որպէսզի կարողանայ ճանաչել զանազան մեղքերը եւ մեղանչածի հոգին անսխալ բժշկել:

Հետեւաբար, փոքրիշատէ ճանաչենք խոստովանահայրութեան գիտութեան եղանակը, որպէսզի [խոստովանահայրն] ունենայ այս փրկալից գիտութիւնը, ինչպէս ասում է մարգարէն [Մաղ. Բ 7], եւ իմաստութեամբ փրկի իր եւ շատերի հոգիները:

Նախ՝ խոստովանահայրը, որ հոգեւոր բժիշկ է, պէտք է գիտուն եւ խոստովանութիւնը լսելուն պատրաստ լինի, այլապէս կը սպանի շատերին: Որովհետեւ եթէ չի կարողանում ճանաչել զանազան մեղքերը, չի կարող նաեւ նրանց դեղերը գտնել, եւ եթէ դեղ է նշանակում, առողջարարը չի նշանակում: Եթէ մէկը, օրինակ, իր հպարտութիւնը կամ բարկութիւնն է խոստովանում, իսկ խոստովանահայրը

նրա վրայ լուծ է դնում կերակրի մէջ ժուժկալութիւնը, սա հպարտութեան եւ բարկութեան համար առողջարար դեղ չէ, քանի որ հպարտութեան դեղը խոնարհութիւնն է, եւ բարկութեանը՝ համբերութիւնը, իսկ կերակուրների մէջ ժուժկալութիւնը որկրամոլութեան ու բղջախոհութեան դեղն է:

Երկրորդ՝ խոստովանահայրը պէտք է քննի մարդկանց բարքը, որ [իմանայ], թէ ինչպիսի բաների պատրաստի նրանց սիրտը՝ ապաշխարութեան լուծն ընդունելու համար: Եւ պէտք է իմանայ ժամանակների, ինչպէս նաեւ արուների եւ էգերի զանազանութիւնը: Որովհետեւ ուրիշ կանոն է պէտք նշանակել խոստովանորդիների վրայ նեղութեան ժամանակ եւ ուրիշ՝ խաղաղ վիճակում, ուրիշ՝ նեղուած աղքատների եւ ուրիշ՝ փափկակեաց հարուստների, ուրիշ կանոն պէտք է դնել սկզբում, երբ մեղքը նոր են սկսել գործել, եւ ուրիշ՝ յետոյ, երբ արդէն սովորութիւն են դարձրել, ուրիշ՝ երեխայի համար, ուրիշ՝ ծերի, ուրիշ՝ տղամարդու, ուրիշ՝ կնոջ, ուրիշ՝ առաջնորդների, ովքեր աչքերի դերն են կատարում, եւ ուրիշ՝ խառնիճաղանջ ժողովրդի, որը ոտքերի տեղն է դրաւում:

Երրորդ՝ մարմնաւոր բժիշկը մահուան դուռը հասած հիւանդին դեղ չի տալիս, որպէսզի նրա բնութիւնն առաւել չտկարանայ եւ նա չմեռնի. այդպէս էլ հոգեւոր բժիշկը, երբ տեսնում է, որ մեղաւորը հիւանդացել է մարմնաւոր ցաւերով, պիտի լսի նրա մեղքերը, բայց կանոն չդնի վրան, այլ նրա հոգին Աստծուն յանձնի՝ մեղաւորին ցոյց տալով նրա մեղքին համապատասխան կանոնը, որպէսզի երբ նա հիւանդութիւնից ապաքինուի, այն կատարի:

Չորրորդ՝ խոստովանահայրը պիտի իմանայ բոլոր ցաւերի դեղերը, որպէսզի մեղքերի դէմ [համապատասխան] դեղերը տայ, օրինակ՝ ամբարտաւանութեան դէմ՝ խոնարհութիւն ցուցաբերել, նախանձի եւ ատելութեան դէմ՝ սէր, բարկութեան դէմ՝ հեզութիւն, ծուլութեան դէմ՝ ժրաջանութիւն, ագահութեան ու արծաթասիրութեան դէմ՝ ողորմութիւն գործել, որկրամոլութեան դէմ՝ ժուժկալութիւն ունենալ՝ գինու եւ մսի գործածութեան չափաւորմամբ, բղջախոհութեան դէմ՝ պահք, աղօթք եւ մարմնի ճգնողութիւն, յիշոցների ու հայհոյանքի դէմ՝ «մեղա»-ն ու փառաբանութիւնը, ծիծաղի ու խեղկատակութեան դէմ՝ լացն ու միշտ հոգեւորի մասին խօսելը, բամբասանքի դէմ՝ լռութիւնը: Այսպէս նաեւ միւս [մեղքերի] դիմաց է ըստ դրանց չափի կանոն սահմանում. ներելի մեղքերի դիմաց՝ թեթեւ կանոն, իսկ մահացուի դիմաց՝ ծանր: Եթէ

մեղքի հիւանդութիւնը վաղուցուանից է՝ մէկը տասը կամ քսան տարի նոյն մեղքի մէջ է մնացել, [սրա կանոնը] պէտք է առաւել ծանր դնել, իսկ եթէ մէկը նոր է մեղքի մէջ ընկել՝ առաւել թեթեւ:

Հինգերորդ՝ պէտք է իմանալ, թէ մեղքի հիւանդութիւնը բաղադրեա՞լ է, թէ պարզ, այսինքն՝ եթէ մէկը տեսակ-տեսակ մեղքեր է գործել, պէտք է դեղն էլ բազմազան լինի, ինչպէս՝ պահք, աղօթք, ողորմութիւն եւ ապաշխարութեան այլ գործեր: Իսկ եթէ մեղքը պարզ է, ապաշխարութիւնն էլ պարզ պիտի լինի, օրինակ՝ եթէ մէկն ուրբաթ օրը պահք չի պահել, բայց ուրիշ [մեղք] չի գործել, ըստ կարողութեան՝ ստանձնում է ուրբաթ օրը հաց եւ ջուր ճաշակել: Իսկ եթէ պարզ մեղքի դեղն էլ բաղադրեալ լինի, աւելի լաւ:

Վեցերորդ՝ եթէ քահանան խոստովանադրամ է վերցնում, սա ընդդէմ է սուրբ Եկեղեցուն եւ սիմոնական ախտ է [Գործ. Ը 9—25]. չի կարելի Սուրբ Հոգու շնորհները վաճառել, եւ սա կանոններով է արգելուած. քանզի Քրիստոսն այսպէս է ասում. «Զրի առաք, ձրի՛ տուէք» [Մատթ. Ժ 8]:

Եօթերորդ՝ քահանան խոստովանութիւնը չպիտի յայտնի, թէկուզ մասնատեն [նրան], որովհետեւ [այս պատճառով] շատերը վախենում եւ այլեւս չեն խոստովանում, այդպէս էլ մեռնում են ու դժոխք գնում, եւ սրանց արիւնն Աստուած այնպիսի քահանաներից պիտի պահանջի, ովքեր խոստովանութիւնը յայտնում են: Որովհետեւ քահանայի սիրտը որպէս կողպուած սնդուկ է, որը պէտք է այնպէս պահել, որ [եթէ նոյնիսկ] սնդուկը կոտրուի, կողպէքը չբացուի:

Ութերորդ՝ երբ մեղքը մէկի սրտում թաքնուած է, պէտք է հոգեւոր բժիշկը երկար խրատելով տայ խոստովանութեան դեղը, որ բերանով խոստովանութեան միջոցով նրա սրտից դուրս հանի հոգու ցաւերը:

Իններորդ՝ երբ մէկը մեղքերով պնդացել ու քարացել է, պէտք է նրան խոստովանութեամբ հասունացնել եւ Աստուծոյ ողորմութեան յոյսով փափկեցնել՝ ասելով. «Մի՛ վախեցիր, որքան էլ շատ մեղք ունենաս, եթէ բոլորն ազնուութեամբ ասես եւ ամօթից կամ վախից չթաքցնես, դրանք իբրեւ ովկիանոսի մէջ գցուող կրակի կայծ՝ նոյն պահին կ՝անցնեն, որովհետեւ ովկիանոսն անսահման է, իսկ կայծը՝ սահմանաւոր: Այդպէս էլ Աստուծոյ ողորմութիւնն է անսահման, իսկ քո շատ մեղքերը՝ սահմանաւոր. երբ դրանք քահանայի առաջ ճշմարիտ խոստովանութեամբ գցում ես Աստուծոյ ողորմութեան ծովը, կրակի կայծի պէս իսկոյն անհետանում են»:

Տասներորդ՝ եթէ մէկը հոգեւոր փորկապութիւն ունի, քանի որ չի կամենում իրենից մեղքերը հեռացնել, պէտք է նրան դեղ տալ, որ հեռացնի, այսինքն՝ դժոխքի տանջանքներով վախեցնել նրան՝ ասելով ըստ Եսայու. «Մեղաւորների կրակն անշէջ է, եւ որդը՝ անքուն» [Ես. ԿԶ 24]: Քանզի կսկիծն անհատ է, չարչարանքը՝ անսահման, ցաւը՝ անբժշկելի, կապանքները՝ անարձակելի, չկան բանտից ազատում, սգոյ դէմ՝ մխիթարութիւն, եւ խաւարն անփարատելի է»: Սա լսելու վրայ [մեղաւորի] փորը կը թուլանայ, եւ նա կը յայտնի իր բոլոր անօրինութիւնները:

Տասնմէկերորդ՝ տե՛ս, որ եթէ մէկի զգայարանը սովորել է [մեղքին], այսինքն՝ աչքը՝ անմաքուր բաներ նայելուն, ականջը՝ չարը լսելուն, բերանը՝ դատարկաբանութեանը, եւ այսպէս՝ նաեւ միւսները, պէտք է որպէս կապող դեղ տալ Աստուծոյ դատաստանի երկիւղը, որ չսովորի մեղքին, քանի որ Դատաստանի ժամանակ մեծ երկիւղ է տիրելու: Առակն ասում է. «Եթէ արդարը հազիւ է փրկուելու, ապա ամբարիշտն ու մեղաւո՞րն ուր կը յայտնուեն» [Առակ. ԺԱ 31]: Պօղոսն էլ ասում է. «Խիստ ահաւոր է ընկնել [կենդանի] Աստուծոյ ձեռքը» [Եբր. Ժ 31]: Որովհետեւ ամէն դատարկ խօսքի համար հաշիւ է պահանջուելու, անմաքուր նայուածքի համար շնութեան ու պոռնկութեան պատիժն է տրուելու, եւ այսպէս [հաշիւ է պահանջուելու] նաեւ այլ բաների համար:

Տասներկուերորդ՝ եթէ մէկը հիւանդացել է մեղքերով, [խոստովանահայրը] պէտք է նրան առողջացնի ապաշխարութեամբ, եւ երբ հոգով առողջանայ եւ ուժ հաւաքի, պէտք է նրան դեղ տալ, որ առողջութիւնը պահպանի: Ինչպէս որ առողջ մնալու համար գնում են բաղնիք եւ տեսակ-տեսակ մերսումներ ընդունում, օծւում ու առողջ մնում, այդպէս էլ հոգեւոր առողջութիւնն է պէտք պահպանել բաղնիքով, այսինքն՝ արտասուքի ջրով եւ խոստովանութեան միջոցով մերսում ընդունելով, որը պահպանում է հոգեւոր առողջութիւնը:

Տասներեքերորդ՝ խոստովանահօր պարտականութիւնն է այցելել մեղաւորներին, հարցնել նրանց հոգու հիւանդութեան մասին, մխիթարել ու հաստատել փրկութեան յոյսով, որովհետեւ երբ [մարդը] յուսահատուած է, ապաշխարանքը չի կարող նրան քաւել. Ցուդան ոչ թէ մեղքի ծանրութիւնից մեռաւ, այլ անյուսութիւնից: Իսկ եթէ [հոգեւոր հիւանդի] յոյսը վերահաստատուի եւ նա մի փոքր զղջայ, ապաշխարութիւնը կարող է նրան քաւել:

Տասնչորսերորդ՝ երբ մէկը ծանր մեղք է գործում, խոստովանահայրը նոյն ժամին պիտի չկտրի նրան Եկեղեցու անդամակցութիւնից՝

անիծելով, բանադրելով կամ նրանից երես շրջելով, այլ խնամք պիտի տանի, խրատի նրան եւ մեղքից հեռացնի: Իսկ եթէ մեղքից չհրաժարուի, այլ անզեղջ կամքով դարձեալ ընկնի այդ մեղքի մէջ, այդ ժամանակ պէտք է բանադրանքով ու անէծքով հանել նրան Եկեղեցուց, որպէսզի ուրիշներին էլ չապականի, ինչպէս ասում է Մովսէսը. «Զարը վերացրո՛ւ մէջտեղից» [Բ Օր. ԺԳ 5, ԺԷ 7, ԻԱ 21, ԻԲ 22]:

Տասնհինգերորդ՝ եթէ խոստովանահայրը փորձել է, որ քաղցր խօսքով ու թեթեւ կանոններով [կարող է] մեղաւորին ուղղութեան բերել, թող [այդպէս] ուղղութեան բերի, իսկ եթէ չի կարող, ապա պէտք է սաստկական ու խիստ խօսքով վախեցնել նրան եւ ծանր ապաշխարութիւն դնել նրա վրայ, որպէսզի ծանր ապաշխարութեան վախից հրաժարուի մեղքի հաճոյքից:

Տասնվեցերորդ՝ [խոստովանութեան] սկզբում խոստովանահայրը պէտք է ասի. «Աստուծո՛յ առաջ ես խոստովանում եւ ո՛չ թէ մարդու: Աստուած ողորմած է եւ մեղաւորների համար է մարդացել: Աստուած ողորմել է Պետրոսին, Պօղոսին, Մարիամ Մագդաղենացուն եւ այլ մեղաւորների, երբ զղջացել են, ուստի քեզ էլ կ՚ողորմի, եթէ ճշմարտապէս խոստովանես»: Իսկ եթէ այս քաղցր դեղով խոցը չբացուի, այդժամ պէտք է նշտարով կամ շանթով կտրուածք անել, այսինքն՝ ահարկու եւ վախեցնող խօսքով եւ տանջանքների ահով նրան զարհուրեցնել, որպէսզի դրանով հեռանայ մեղքերից եւ զղջայ:

Տասնեօթերորդ՝ պէտք է գիտենալ, որ եթէ մէկը շատ մեղքեր է գործել, շատերին դէպի մեղքը դրդել ու բազմաթիւ հոգիներ կործանել՝ նրանց կամ չար օրինակ, կամ չար խրատ տալով, կամ առաջնորդ լինելով՝ ծուլացել է իր գործի մէջ, նրան բաւական չէ միայն զղջալն ու խոստովանելը նրանց համար, ում մեղքի մէջ է գցել, կամ այն բազմաթիւ հոգիների համար, ում կործանել է, որովհետեւ Աստուած նրանի՛ց է պահանջելու դրանք: Այստեղ հարց է առաջանում, թէ խոստովանահայրն ի՞նչ կանոն պէտք է դնի այնպիսինի վրայ, ով շատերին է կործանել. պահքն ու ողորմութիւնը բաւակա՞ն են նրան: Վարդապետները պատասխանում են, որ այդքանը բաւական չէ: Եթէ ցաւում է մէկի գլուխը, սակայն [բժիշկը] դեղը ոտքի վրայ է դնում, ապա յիմար է, որովհետեւ դեղը պէտք է այնտեղ դնել, ուր ցաւն է. ուստի ում կործանել է մէկը մեղքերով, նրանց եւս պէտք է զղջման բերի: Նաեւ պէտք է գիտենալ, որ երկու տեսակ զղջութիւն կայ՝ հոգեւոր եւ մարմնաւոր, որոնցից հոգեւորն առաւել ծանր է: Նա, ով մարդկանց դէպի

մեղքն է դրդում, գողութիւն է գործում, որովհետեւ մարդկանց յափշտակում է Աստուծոյ գանձատնից: Ուստի պահքը, աղօթքն ու ողորմութիւնը նրան բաւական չեն մեղքը քաւելու համար. նա պէտք է գտնի իր կործանած հոգիներին եւ դէպի բարին յորդորի՝ Աստուծոյ գանձատուն վերադարձնելով նրանց: Այլեւ՝ եթէ մարդը կողոպտել է մէկին ու մերկացրել, իսկ խոստովանահայրը հրամայում է նրան պահք պահել, սրանով չի առողջացնում նրան: Որովհետեւ հիւանդութիւնը նրա թիկունքի վրայ է՝ մարդկանց թիկունքը մերկացնելու պատճառով, իսկ խոստովանահայրը նրա կրծքին է դնում սպեղանին, այսինքն՝ պահքը, որը թուլացնում է սիրտը: Պէտք է դեղը ցաւի տեղում դնել, եւ քանի որ [մեղաւորը] մերկացրել է մարդկանց, դարձեալ պիտի հագցնի, եւ ինչ որ յափշտակել է, պիտի վերադարձնի: Եւ Քրիստոսին փա՛ռք Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ[3]
(ԳԼՈՒԽ ՀԸ)

*«Ձեր մեղքերը միմեանց խոստովանեցէ՛ք
եւ միմեանց համար աղո՛թք արէք»:
[Ցակ. Ե 16]*

Նախ՝ պէտք է իմանալ, որ խոստովանութիւնն անհրաժեշտ է, ինչպէս մկրտութիւնը. ինչպէս որ խորհուրդներից առաջինը մկրտութիւնն է, իսկ յետոյ միւս բոլորը, նոյնպէս էլ նախ խոստովանութիւնն է, իսկ յետոյ՝ միւսները՝ ապաշխարութիւնը, պահքը, աղօթքը եւ այլն: Վարդապետներն ասում են, որ խոստովանութիւնը թաքցուած մեղքերը թողութեան յոյսով յայտնելն է, որովհետեւ խոստովանութեան նիւթը մեղքն է, գործը՝ խօսքով յայտնելը, իսկ լրումը՝ թողութեան յոյսը: Խոստովանութիւնը երկու կերպ է լինում. մէկը՝ մտաւոր, քանզի մարդ իր մտքում միշտ պէտք է իր մեղքերը դնի Աստուծոյ առաջ, իսկ միւսը՝ խօսքով, եւ սա պէտք է յայտնել քահանային:

Քահանային խոստովանելն անհրաժեշտ է տասը պատճառով: Նախ՝ քանի որ մարդը հոգուց եւ մարմնից է կազմուած, դրա համար էլ պէտք է հոգով ու մարմնով կատարելապէս խոստովանի քահանային, ով հոգու հայրն ու մարմնի դայեակն է: Երկրորդ՝ նախքան Քրիստոսի մարմնանալը մարդիկ միայն մտքով էին Աստծուն խոստովանում, իսկ երբ մարդացաւ, պէտք է խոստովանեն մարդուն, այսինքն՝ քահանային, ով Քրիստոսի փոխանորդն է: Երրորդ՝ Աստուած քահանաներին կապելու եւ արձակելու իշխանութիւն տուեց: Սա ցոյց է տալիս, որ նրանք մեղքի դատաւորներ են, եւ պէտք է նրանց խոստովանել: Չորրորդ՝ քանի որ քահանան է կատարում Եկեղեցու եօթ խորհուրդները՝ մկրտութիւն, պատարագ, պսակ եւ այլն, հետեւաբար քահանան է դնում ապաշխարութիւնը, ուստի քահանային ենք խոստովանում, քանզի խոստովանութիւնը ապաշխարութեան խորհուրդի փուլերից մէկն է եւ առաջինը: Հինգերորդ՝ քահանան է մեղքերի քաւիչը, ինչպէս նրա անունն է յայտնում. «քահանայ» թարգմանւում է «քաւիչ». ուստի պէտք է քահանային խոստովանենք: Վեցերորդ՝ քահանան Աս-

3 Սոյն քարոզը թարգմանուած է Տաճատ աբեղայ Ծատուրեանի կողմից:

տուծոյ եւ մարդու միջեւ հաշտութեան միջնորդ ու բարեխօս է, այդ պատճառով պէտք է քահանային խոստովանենք, որպէսզի նա Աստծուն հաշտեցնի մեղաւորի հետ: Եօթերորդ՝ քահանան մեղաւորի առջեւ Քրիստոսի թարգմանն ու լեզուն է, որով խօսում է մեղաւորի հետ նրա զղջման ու դարձի մասին. «Եթէ անարգի միջից դուրս հանես պատուականը, կը լինես ինչպէս Իմ բերանը» [Երեմ. ԺԵ 19]: Ութերորդ՝ քահանան Քրիստոսի առաջ աղերսում է մեղաւորի զղջման համար եւ Նրանից թողութեան շնորհ իջեցնում զղջացողի վրայ, որպէսզի զղջացողի համար թողութիւն լինի: Իններորդ՝ քահանան, ըստ մարգարէական խօսքի, «ամենակալ Աստուծոյ պատգամաբեր հրեշտակն ու օրէնսդիրն է» [Մաղ. Բ 7], որովհետեւ հրեշտակի գործ է կատարում եւ օրէնք դնում, այս պատճառով էլ Աստուծոյ օրէնքների պահպանութիւնն է պահանջում: Տասներորդ՝ քահանան քննողն ու դատողն է մաքուրի ու պիղծի, անարատի ու արատաւորի, ինչպէս Օրէնքն է ասում. «Նրանք պիտի զատեն պիղծը մաքուրից» [Ղեւտ. Ժ 10]: Ուրեմն՝ պարզ է՝ ինչու է «տէր» կոչւում, այսինքն՝ դատող ու պատժող: Այդ պատճառով է քահանան դատաստանի աթոռին նստում, ինչպէս Քրիստոսը, իսկ մեղաւորը՝ ձախ կողմում՝ ձախակողմեան դասի օրինակով, եւ գլխիկոր ու ամօթահար, արտասուալից աչքերով ու սրտի հառաչանքով խոստովանում իր յանցանքները՝ իբրեւ Քրիստոսին: Իսկ քահանան իշխանութեան կարգով նրան թողութիւն է տալիս եւ ըստ դատաստանի քննութեան ու վճռի՝ ծանր կամ թեթեւ ապաշխարութիւն դնում: Այդ պատճառով պէտք է ոչ թէ ինչ-որ մէկի, այլ միայն քահանային խոստովանենք:

Իսկ եթէ մէկը հարցնում է, թէ ինչ է այն խորհուրդը, որ քահանային խոստովանելով՝ թողութիւն է տրւում, ասում ենք, թէ շատ բաներ կան, սակայն այժմ մի քանի եւ պարզ օրինակներով կ՚ասենք, որպէսզի դուք հասկանաք: Առաջին՝ երբ մեղք ենք գործում, Եկեղեցու կանոնների եւ Աստուծոյ պատուիրանների դէմ ենք յանցաւոր դառնում: Այն ժամանակ պէտք է գանք ու ասենք, թէ որ պատուիրանն ենք խախտել, եւ քահանան գիտի, թէ քանի պատուիրան ենք խախտել եւ որ մեղքը գործել: Նա, ով գալիս է քահանայի մօտ, հնազանդւում է կանոններին, իսկ ով ասում է. «Մեղայ Աստուծոյ», հնազանդւում է Աստուծոյ պատուիրաններին, եւ քահանան իշխանութեամբ եւ աղօթքներով արձակում է նրան: Կանոնների դէմ գործուած յանցանքները քահանան ներում է իշխանութեամբ, իսկ Աստուծոյ պատուիրանների դէմ գործուած յանցանքների համար աղօթքով Աստծուց է խնդրում նրա թողութիւնը եւ երկու պարտքից էլ ազատում: Սա առաջին խորհուրդն է:

Երկրորդ՝ ինչպէս երբ մարդ յայտնում է իր գանգատը, մի մեծ մէկի է յայտնում, թէ այս անունով մարդն այսպէս ինձ զրկանքի ենթարկեց ու վնաս պատճառեց, նոյնպէս էլ մենք քահանայի առաջ ենք գանգատւում սատանայից, թէ այս բանն արեց ու այն մեղքը գործել տուեց, ինձ միշտ ոտնատակ է անում ու յաղթում: Քահանան գանգատը բարձրացնում է [առ Աստուած], եւ նրա օգնութեամբ թշնամուն յաղթում են:

Երրորդ՝ ինչպէս որ գողն է գաղտնի մտնում տուն, բայց երբ աղաղակում են, տանից փախչում է, նոյնպէս մեղքն ու սատանան են գողի նման մտնում հոգու մէջ: Երբ քահանայի առաջ խոստովանութեամբ յայտնում ու աղաղակում ենք եւ քահանան օգնում ու խրատ է տալիս, մեղքի [յարձակումները] դադարում են:

Չորրորդ՝ խոստովանութիւնը քանդում է սատանայի դաշինքը. քանզի ինչպէս մարդը, որ դաշնակից է մարդուն, նրա գաղտնի խորհուրդը պահում է, նոյնպէս էլ մեղաւորը մեղքի մէջ դաշնակից է սատանային: Եւ երբ խոստովանում է, յայտնում է նրա գաղտնիքը եւ խայտառակում, այն ժամանակ սատանան հեռանում է եւ այլեւս մեղք գործել չի տալիս, որովհետեւ իր սիրելին թշնամի դարձաւ:

Հինգերորդ՝ ինչպէս երբ գազանի բերանն ընկած կենդանին աղաղակում է, մարդիկ գալիս են եւ ազատում գազանից, այդպէս էլ մեղքի մէջ ընկած մարդը ծածուկ բռնուած է սատանայի բերանում (ըստ այն խօսքի թէ՝ «Ձեր ոսոխը՝ սատանան, մռնչում է առիւծի պէս, շրջում ու փնտրում է, թէ ո՛ւմ կուլ տայ» [Պետ. Ե 8]), եւ երբ խոստովանում ու յայտնում է մեղքերը, ազատւում է սատանայի բերանից եւ կուլ չի գնում սատանայի որովայնի մէջ, որ դժոխքն է: Քանզի մեղք գործելիս մարդը սատանայի բերանում է, եւ յաջորդ տեղը դժոխքն է:

Վեցերորդ՝ ինչպէս որ կրակը, երբ մարդու ձեռքում կամ գոգին է, այրում է նրան, իսկ երբ [մարդն այն] նետում է, այլեւս չի այրում, նոյնպէս մեղքը հոգին այրող կրակ է, եւ քանի դեռ այն ներսում է, հոգին այրւում է, բայց երբ դուրս է նետւում, հանգչում է. ինչպէս Սողոմոնն է ասում. «Հնարաւո՞ր է արդեօք, որ մէկը կրակը պահի իր գոգի մէջ եւ շորը չայրի, կամ որեւէ մէկը բոբիկ քայլի կայծի ու կրակի միջով եւ ոտքերը չայրի» [Առակ. Զ 27—28]:

Եօթերորդ՝ ինչպէս որ ծածուկ պահուող խոցը չի բժշկւում, բայց երբ ցոյց ենք տալիս բժշկին, դեղ է դնում, եւ [խոցն] առողջանում է,

նոյն կերպ էլ մեղքը, որ հոգու խոցն ու վէրքն է, յայտնում ենք քահանային, եւ նա մեղքերի թողութիւն է տալիս ու ապաշխարութիւն դնում, որը ջնջում է մեղքի սպիները. եւ հոգին առողջանում է:

Ութերորդ՝ ինչպէս խոր փոսն ընկած մարդը, երբ աղաղակում է, գալիս ու այնտեղից հանում են նրան, նոյնպէս էլ մեղքի խորխորատն ու գուբն ընկած մեղաւորը, երբ աղաղակում է, քահանան ձեռքը մեկնում ու այնտեղից հանում է: Նախապէս աղաղակելը խոստովանութիւնն է, եւ երբ մարդը ձեռքը պարզում է քահանային՝ թողութիւն խնդրելով, այն ժամանակ քահանան ներում է մեղքերը եւ նրան հանում փոսից:

Իններորդ՝ խոստովանելով սրտի զղջումն ենք յայտնում, թէ մեղքն ինձ ատելի է, եւ զղջում եմ, հնար եմ փնտրում ազատուելու: Քանի դեռ չենք խոստովանում, սիրում ենք մեղքը: Այն ժամանակ էլ քահանան աստուածային հրամանով եւ իր իշխանութեամբ հեռացնում է մեղքերը, որոնք ատելի էին, եւ ապաշխարութիւն է տալիս, որը սիրելի է մարդուն:

Տասներորդ՝ մեղքերը երեք տեսակ են լինում՝ մտքով, խօսքով եւ գործով: Դրանք ոչնչացնում ենք այսպէս. մտքի մեղքը՝ զղջմամբ, գործերինը՝ բարի գործերով, իսկ խօսքերինը՝ բերանի խոստովանութեամբ, «որովհետեւ քո խօսքերով պիտի արդարանաս եւ քո խօսքերով պիտի դատապարտուես» [Մատթ. ԺԲ 37], քանի որ մեր խօսքն այնպէս է լինում, որ երբեմն դատապարտում է, երբ սուտ ենք խօսում, հայհոյում, ուրանում եւ այլն, երբեմն էլ արդարացնում, երբ աղօթում ենք, դաւանում Աստծուն, խոստովանում մեղքերը, բարեխօսում մարդկանց համար եւ այլն:

Իսկ ո՞րն է խոստովանութեան օգուտը: Ասենք, որ շատ են դրանք: Առաջին՝ [խոստովանութիւնն] այս աշխարհի ատեանի հակապատկերն է, որովհետեւ ով աշխարհիկ ատեանում է խոստովանում, դատապարտւում է, ինչպէս Քարմիի որդի Աքարը, երբ խոստովանեց եւ անմիջապէս դատապարտուեց[4]: Իսկ ով հոգեւոր ատեանում է մեղքերը խոստովանում, ազատ է արձակւում, եւ ով չի խոստովանում, դատապարտւում է: Ով այստեղ է մեղքերը յայտնում, Քրիստոսի ատեանի առաջ նրա մեղքերը կը ծածկուեն, իսկ ով այստեղ մեղքը թաքցնում է քահանայից, այնտեղ՝ Աստուծոյ հրեշտակների եւ մարդկանց առաջ, նրա մեղքերը յայտնի կը դառնան: Սա խոստովանութեան առաջին օգուտն է:

4 Տես Ցեռու է 1—26:

Երկրորդ՝ հոգու վէրքերն է բժշկում: Ինչպէս մարմնի խոցը մարդուն դէպի մահ է տանում, նոյնպէս էլ մեղքը հոգու եւ մտքի խոցն է, որը դէպի յաւիտենական մահ է տանում: Ինչպէս որ սպեղանին եւ դեղը բժշկում են խոցը, նմանապէս էլ խոստովանութիւնը վերացնում է մեղքը եւ բժշկում հոգին՝ ըստ այն խօսքի թէ՝ «Ով քաւութիւն է տալիս քո մեղքերին եւ բժշկում քո բոլոր ախտերը» [Սաղմ. ՃԲ 3], նաեւ ցաւերից բժշկում է միտքը եւ թեթեւացնում ծանրութիւնը:

Երրորդ՝ խոստովանութիւնը ջնջում է մեղքերը: Ինչպէս ջուրն է մարմնի աղտը լուանում, այնպէս էլ խոստովանութիւնն ու արտասուքն են հոգին լուանում ու մեղքերը ներում՝ ըստ հետեւեալ խօսքի. «Ասացի, թէ կը խոստովանեմ իմ մեղքերը, եւ Դու թողութիւն կը տաս իմ մեղքերի ամբողջ ամբարշտութեանը» [Սաղմ. ԼԱ 5]:

Չորրորդ՝ խոստովանութիւնը մարդու համար յայտնի է դարձնում Աստծուն, որովհետեւ երբ չենք խոստովանում, Աստուած մեզանից հեռու եւ ծածուկ է մնում. «Մեր մեղքերը բաժանում են մեզ Աստծուց» [Ես. ԾԹ 2]: Եւ խոստովանելիս մեղքերը լուծարւում են, եւ Աստուած մօտենում ու յայտնում է մեզ Իրեն, ինչպէս վարդապետներն են ասում. «Տէ՛ր, երբ չենք խոստովանում, ոչ թէ մեզ ենք թաքցնում Քեզանից, այլ Քեզ՝ մեզանից»:

Հինգերորդ՝ խոստովանութիւնը բացում է արքայութեան դուռը, քանի որ այն փակուած է մեղաւորի առաջ, ինչպէս յիմար կոյսերի: Սակայն երբ մեղաւորը բերանը բացում ու խոստովանում է, արքայութեան դուռը նրա համար բացւում է, եւ նա ներս է մտնում, ինչպէս աջակողմեան աւազակը, երբ Քրիստոսի մօտ բացեց բերանն ու խոստովանեց. «Տէ՛ր, յիշի՛ր ինձ Քո արքայութեան մէջ», նոյն պահին Քրիստոսը նրան պատասխանեց. «Այսօր ինձ հետ դրախտում կը լինես» [Ղուկ. ԻԳ 42]:

Վեցերորդ՝ խոստովանութիւնը բարեխօս է: Որովհետեւ քանի դեռ մեղքի մէջ ենք, չենք համարձակւում Աստուծոյ հետ խօսել, իսկ երբ խոստովանում ենք, քահանան միջամուխ է լինում եւ բարեխօսում մեզ համար: Այնժամ մենք էլ ենք համարձակւում մեզ համար բարի բան խնդրել եւ աղաչել Աստծուն: Եւ դարձեալ՝ մինչեւ խոստովանելը միայն մենք էինք աղօթում, իսկ երբ խոստովանում ենք, խոստովանահայրերն են բարեխօսում խոստովանորդիների համար: Բոլոր քահանաները խոստովանողների համար բարեխօսում են, եւ Աստուած լսում է նրանց աղօթքները, ինչպէս ասում է Յակոբոսը. «Արդարների աղօթքը յոյժ զօրաւոր է օգնելու համար» [Յակ. Ե 16]:

Եօթերորդ՝ խոստովանութիւնն Աստուծոյ ողորմածութիւնը փափկացնում է մարդու նկատմամբ: Մարդը որքան առանց խոստովանութեան է ապրում, Աստուած բարկութեամբ է լցուած լինում նրա նկատմամբ, իսկ երբ խոստովանում է, Աստուած քաղցրանում ու ներում է, ինչպէս ասում է սաղմոսը. «Մեղքերս ցոյց կը տամ Քեզ եւ անօրէնութիւնս չեմ ծածկի Քեզանից» [Սաղմ. ԼԱ 5], այսինքն՝ մենք ցոյց ենք տալիս մեղքերը, եւ Աստուած ներում է:

Ութերորդ՝ խոստովանութիւնն օգտակար է, որովհետեւ լրացնում է փոխհատուցման պակասը: Ինչպէս վարդապետներն են ասում, խոստովանութիւնը կազմուած է զղջումից, [մեղքերը] յայտնելուց եւ հատուցումից: «Մեղա»-ն զղջումն է, մեղքերը յիշելը՝ խոստովանութիւնը, իսկ ամօթն ու արտասուքը՝ տանջանքն ու պատիժը: Որքան շատ է ամօթը, այնքան աւելի է մեղքը սրբւում: Այդ պատճառով էլ, երբ լիակատար զղջումով եւ ճշմարտապէս խոստովանում ենք մեղքերը, նոյն օրն [արժանանում ենք] հաղորդուելու Քրիստոսի պատուական [Մարմնի եւ Արեան] խորհրդին:

Իններորդ՝ խոստովանութիւնը չարից զգուշացնում է: Ինչպէս որ փտած ատամը հանում են, որպէսզի միւսները չապականուեն, նոյնպէս էլ խոստովանում ենք անդամներից մի մասի մեղքը, որպէսզի միւսները նրանց չարութեամբ չապականուեն՝ [ըստ այն խօսքի թէ՝] «Նա, ով քո կեանքը փրկում է ապականութիւնից» [Սաղմ. ՃԲ 4]:

Տասներորդ՝ խոստովանութիւնը ցնծութեամբ է լցնում հոգին եւ թեթեւացնում խիղճը, ինչպէս Դաւիթն է ասում. «Ցնծութեամբ կը խոստովանեմ Քեզ» [Սաղմ. ԽԱ 5]: Մեղքը ծանր բեռի է նման. «Անօրէնութիւններս գլխիցս վեր բարձրացան, սաստիկ բեռան պէս ծանրացան վրաս» [Սաղմ. ԼԷ 5]. երբ խոստովանում ենք, խիղճը թեթեւանում է, եւ հանգստանում ենք նրա չարչարանքից, որ հոգին ներքուստ աւելի է չարչարում, քան բազմաթիւ արտաքին տանջանքները:

Իսկ եթէ մէկը հարցնի՝ ո՞րն է խոստովանութեան զօրութիւնը, կ՚ասենք՝ չա՞տ զօրութիւն ունի, որը ցոյց կը տանք Սուրբ Գրքից: Նախ՝ Աստուած օրէնք տուեց Մովսէսին, թէ երբ գողին բռնեն, մէկի դիմաց հնգապատիկ տոյժի ենթարկեն, բայց եթէ նա զղջայ եւ խոստովանի քահանային, միայն գողացածի դիմաց վճարի տիրոջը կամ քահանային. հինգ զգայարանների համար տուգանք է տալիս հինգից մէկ մասը, իսկ Աստծուն՝ մէկ խոյ նուէր եւ ազատւում: Մէկի դիմաց հինգ է տուգանքը, եւ խոստովանելով հինգից մէկը բերեց: Այն պատճառով էին տա-

լիս քահանային, ով ողջերի եւ մեռեալների միջնորդն է, որ վճարում էր տիրոջը, որպէսզի հաշտուէին: Նոյնպէս էլ մենք գողացածը պէտք է վճարենք տիրոջը կամ նրա ազգականներին կամ քահանային կամ աղքատներին: Իսկ խոյի փոխարէն պէտք է տանք սրանք՝ ապաշխարութիւն, պահք, աղօթք եւ ողորմութիւն, որոնք հոգին ու մարմինն են ընծայում Աստծուն: Երկրորդ՝ երբ խորանի դուռը զոհ էին բերում՝ խոյ, գառ կամ ուրիշ կենդանի, քահանան ձեռքը դնում էր զոհի գլխին, որ խորհրդանշում էր մեղքերը զոհի վրայ դնելը, ապա [կենդանին] մորթում էին, եւ մեղաւորն ազատւում էր մեղքից: Արդ՝ անարատ գառը, խոյը կամ այլ զոհը Քրիստոսն է՝ Անմեղը, Ով մեզ համար մեռաւ: Եւ մենք գալիս ենք քահանայի առաջ ու մեր մեղքերը խոստովանելով՝ տալիս ենք Քրիստոսին, իսկ քահանայի ձեռք դնելով՝ ազատւում մեղքերից: Երրորդ՝ բորոտի մաքրութեան օրինակով: Բորոտը եօթ օր բանակից դուրս էր մնում՝ պատռուած հագուստով, կապուած բերանով եւ ածիլուած գլխով, խոստովանում էր եւ զոհաբերութեամբ բանակ մտնում: Բորը մեր մեղքն է, որով պղծւում ու գարշելի ենք դառնում. եօթ օրն ապաշխարողի եօթ ժամանակն է՝ մեղքի եօթ զգայութիւնների պատճառով. բանակից դուրսն այն է նշանակում, որ մեղքի պատճառով դուրս ենք մնում Եկեղեցուց, ինչպէս Ադամը՝ դրախտից: Բերանը կապուած լինելը ցոյց է տալիս, որ [մեղաւորն] անպատասխան է, պատռուած հագուստը՝ որ շնորհներից է պատռուել, իսկ ածիլուած գլուխը՝ որ յստակ ու պարզ խոստովանի մեղքերը եւ յետոյ մտնի եկեղեցի: Այսպիսի զօրութիւն ունի խոստովանութիւնը:

Պէտք է իմանալ նաեւ, որ մեղաւորի ապաշխարութիւնն Աստծուն աւելի հաճելի է, քան հպարտ արդարների կեանքը, որ միայն արդարի տեսք ունեն, ինչպէս դպիրներն ու փարիսեցիները, ովքեր իրենք իրենց աչքին արդար էին երեւում, բայց արդար չէին: Մեղքի համար զղջացողը նրանցից աւելի լաւ է: Սա պարզ է երկու բանից: Նախ՝ «Մոլորուած ոչխարի» եւ «Կորած դրամի» տէրունական առակներից, որոնցում Տէրը կանչեց երկնային դասերի բարեկամներին, եւ բոլորն ուրախացան: Սրա համար Տէրն ասաց. «Այսպէս աւելի մեծ ուրախութիւն կը լինի երկնքում մի մեղաւորի համար, ով կ՚ապաշխարի, քան իննսունինն արդարների համար, որոնց ապաշխարութիւն պէտք չէ» [Ղուկ. ԺԵ 7]: Դարձեալ յայտնի է պոռնիկ կնոջից, «ով իւղը հեղեց Քրիստոսի գլխին, համբուրում էր ոտքերը եւ արտասուքով թրջում» [Ղուկ. Է 37], ինչի համար էլ մեղքերի թողութիւն ստացաւ: Իսկ փարսիսեցիներին Տէրը

նախատեց, ովքեր արդար էին երեւում, բայց այն կնոջ նման չզղջացին: Այդ պատճառով Տէրն ասաց. «Մտայ քո տունը, Ինձ մի համբոյր չտուեցիր, ոտքերս ջրով չլուացիր, ոչ էլ գլուխս իւղով օծեցիր» [Ղուկ. է 44—46]: Սողոմոնն էլ է այս մասին ասում. «Անուշահոտ իւղը բոլոր խնկերից աւելի լաւ է» [Երգ Ա 2], այսինքն՝ ապաշխարութեան հոտն աւելի ընդունելի է Աստծուն, քան բոլոր հպարտ արդարները, որ չեն ապաշխարում: Եւ պէտք է իմանալ, որ պոռնիկ կինն ամբողջութեամբ ցոյց տուեց ապաշխարութեան երեք մասերը, այսինքն՝ զղջումը, խոստովանութիւնն ու ապաշխարութեան հատուցումը, քանի որ զղջացող սիրտը կսկծում է, [որտեղից] ծուխ է բարձրանում դէպի գլուխը, եւ արտասուք է գալիս, խոստովանութիւնն այն է, որ շուրթերով համբուրում էր Յիսուսի ոտքերը, գլուխը ոտքերի մօտ խոնարհելը ցոյց էր տալիս նրա անձի մեղապարտ լինելը, իսկ ապաշխարութեան հատուցումը իւղն էր, որ հեղեց Քրիստոսի գլխին: Այդ պատճառով էլ մեղքերի թողութիւնը կատարելապէս ստացաւ:

Իսկ ի՞նչ է նշանակում «Տունը լցուեց իւղի բուրմունքով» [Յովհ. ԺԲ 3]: Նախ նշանակում է, որ երբ իւղը մօտեցրեց Տիրոջ օծեալ գլխին, այն անուշահոտ դարձաւ, ինչպէս խունկը, որ մօտեցնում է կրակին: Երկրորդ՝ տունը նշանակն է տիեզերքի, ուր նրա համբաւն աշխարհի բոլոր կողմերով տարածուեց: Իսկ մեզ համար այն է նշանակում, որ երբ մեղքերի համար զղջում ու ապաշխարում ենք, երկնքով ու երկրով մէկ անուշ հոտ է տարածւում, որը հաճելի է Աստծուն, հրեշտակներին եւ մարդկանց, ինչպէս արդէն ասացինք, որին թող մեզ եւս արժանի դարձնի Քրիստոս Աստուած, եւ Նրան փա՛ռք յաւիտեանս. ամէն:

ՔԱՐՈԶ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(ԳԼՈՒԽ ՀԹ)

«Խոստովանէ՛ք միմեանց
ձեր մեղքերը»:
[Յակ. Ե 16]

Ինչպէս որ երկար ժամանակուայ ընթացքում կեղտոտուած ոսկին կարիք ունի ճարտար արհեստաւորի, որ կրակի բովում վերստին այն ձուլի եւ մաքրի, այդպէս էլ մարդու բնութիւնը ոսկեայ է, քանի որ [մարդկային] հոգին անապական է եւ Աստուծոյ պատկեր, սակայն նաեւ ժանգոտւում ու կեղտոտւում է մարմնի զգայութիւնների, աշխարհի գարշելի հաճոյքների եւ սատանայի խաբէութիւնների պատճառով: Ինչպէս որ մաքուր ոսկին բնութեամբ անապական է, սակայն կրաւորական, [այսինքն՝] մօտ գտնուող աղտեղութիւններից իր վրայ նիւթ է առնում եւ կեղտոտւում, իսկ արհեստաւորը, որ կամենում է այն մաքրել, կրակի ու ջրի մէջ գցելով է վերստին մաքրում կեղտից, այդպէս էլ մեր բնութեան ճարտարապետն ու իմաստուն արհեստաւորը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսը, Իր մարդասիրութեամբ կամեցաւ վերստին մաքրել Իր ապականուած ու ժանգոտուած պատկերը՝ մեր մարդկային բնութիւնը: Փոքր-ինչ մաքրեց ժանգի փոշին նախ Օրէնքով, մարգարէների եւ հրեշտակների միջոցով ու խրատներով, սակայն նորահաստատ սուրբ Աւազանով ամբողջապէ՛ս մաքրեց մեղքի ժանգից: Կրակն ու ջուրը այն են, որ [Սուրբ] Հոգու կրակով եւ ջրի նիւթով մկրտւում ու մաքրւում ենք մեղքերից: Որովհետեւ ինչպէս ջուրը լուանում է մեր արտաքինը՝ մարմինը, այդպէս Սուրբ Հոգով զօրութիւն ստացած ջուրը մաքրում ու լուանում է մեր ներսը՝ հոգին: Սա մաքրման առաջին [միջոցն] է:

Իսկ իբրեւ մաքրման երկրորդ [միջոց]՝ մեր ճարտարապետ Քրիստոսը հաստատել է խոստովանութիւնն ու ապաշխարութիւնը: Քանի որ մկրտութիւնից յետոյ մեղքերով նորից ենք աղտոտւում, [մեր Տէրը] կամեցաւ դրանցից մաքրել մեր հոգին զղջման, խոստովանութեան ու ապաշխարութեան միջոցով: Ինչպէս որ հայելին, ինչ իրի որ մօտենում է, այն պատկերում է իր մէջ, այդպէս էլ կրաւորական բնութիւն ունեցող մեր մարդկային հոգին, թէ՛ չարին մօտենալիս, թէ՛ բարուն, այն կրում է իր մէջ: Այս պատճառով էլ, ինչպէս որ ժանգոտ հայելին

են մաքրում ձէթով, զմռնիտով[5] ու տրորելով, այդպէս աղտոտուած հոգու համար ձէթ է մեղքերի համար զղջումը, զմռնիտ է խոստովանութիւնը, եւ տրորում՝ ապաշխարութիւնը՝ պահքը, աղօթքը եւ այլն: Եւ այդուհետեւ վերստին երեւում է պայծառացած հոգին՝ Աստուծոյ պատկերը: Սա կատարւում է մեղքերի խոստովանութեան եւ ապաշխարութեան միջոցով:

Ժանգի մասին պէտք է գիտենալ նաեւ, որ այն խորհրդանշում է մեղքն իր տասը յատկութիւնների պատճառով: Առաջին՝ ժանգն ապականութեան նշան է, իսկ մեղքը՝ հոգու ապականութեան տարացոյց: Երկրորդ՝ ժանգը պատում է թէ՛ ներսից, թէ՛ դրսից. այդպէս մեղքերի մի մասը ներսից՝ մեր կամքից է լինում, միւս մասն էլ՝ դրսից՝ զգայարաններով կրելու միջոցով: Երրորդ՝ ժանգը յաւելուած է եւ ոչ թէ [նրանով պատուած] բուն առարկան. այդպէս մեղքը յաւելուած է եւ ոչ թէ [մարդու] բնութիւնը: Չորրորդ՝ [ժանգը] բոլորովին անպէտք է. այդպէս մեղքը, որ բարի [ոչինչ] չունի, բոլորովին անպէտք է: Հինգերորդ՝ ժանգը բորոտութեան ու խոցի նման զզուելի բան է. այդպէս էլ գարշելի են մեղքն ու մեղաւորը, որոնցից փախչում են [մարդիկ]: Վեցերորդ՝ ժանգը խափանում է [իրի] պայծառութիւնը. այդպէս էլ մեղքը հոգու գեղեցկութիւնն է ծածկում: Եօթերորդ՝ [ժանգն] ուտում ու փչացնում է նիւթը. այդպէս երբ մեղքը մնում է հոգում ու մարմնում, փչացնում է դրանք: Ութերորդ՝ ժանգը ժանտախտի պէս տարածւում է իր մօտ գտնուող առարկաների վրայ. այդպէս էլ մեղքն ու մեղաւորը ում հասնում են՝ մեղքերի ժանգով են պատում: Իններորդ՝ երբ ժանգը մաքրւում է, առարկան փայլ է ստանում. այդպէս էլ երբ մեղքը մաքրւում է հոգուց, վերջինս վերստանում է իր նախկին մաքրութիւնը: Տասներորդ՝ ժանգը չորս բանով է մաքրւում՝ լաթով, ինչպէս փոշին, ջրով, ինչպէս կեղտը, քերմամբ, ինչպէս երկաթը, և կրակով, ինչպէս արծաթը: Այդպէս էլ մեղքն է չորս բանով մաքրւում՝ ողորմութեամբ՝ որպէս լաթով, արտասուքով՝ որպէս ջրով, պահքով՝ որպէս քերմամբ, եւ աղօթքով՝ որպէս կրակով: Այլեւ՝ ժանգը կարող է ներսից սպիտակ լինել, դրսից՝ եր-

5 Զմռնիտ — յղկաքար, որի փոշին գործածում են ողորկելով մաքրելու, փայլեցնելու համար: Տաթեւացու բնագրում «սնփարայ» (արաբերէն «սանֆառա» բայը նշանակում է ողորկելով փայլեցնել, զմռնիտով կոկել):

կաթի նման, կամ ներսից ու դրսից՝ արծաթաւուն[6]: Այդպէս էլ զղջմամբ ու խոստովանութեամբ մաքրւում է մտքի ժանգը, ապաշխարութեան գործով ջնջւում՝ մարմնի ժանգը, իսկ ուրիշներից եկող փորձութեան միջոցով մաքրւում է հոգու եւ մարմնի ժանգը, որովհետեւ ինչպէս որ արծաթը բովում է փորձւում, այդպէս մարդն ընտիր է դառնում փորձութիւնների բովում, ինչպէս ասում է առակը. «Անօրէնը ջնջոց է դառնում արդարի համար» [Առակ. ԻԱ 18]:

Առակն ասում է նաեւ. «Ինչպէս չունն է ատելի դառնում, երբ վերադառնում է իր փսխածին, այդպէս էլ անզգամը, երբ վերադառնում է իր չար գործերին» [Առակ. ԻԶ 11], [այսինքն՝] իր փսխածին, որոնք զազրելի մեղքերն են: [Մեղքերը փսխում ենք] նաեւ, երբ [դրանցից] հրաժարւում ենք եւ խոստովանում: Փսխելու ժամանակ կարելի է երեք բան տեսնել: Նախ՝ ուտելը սակաւ առ սակաւ է լինում, իսկ փսխելը՝ միանգամից. այդպէս [մարդը] մեղքերը սակաւ առ սակաւ է գործում, սակայն բոլորը միանգամից խոստովանում: Երկրորդ՝ ուտելը հաճոյքով է, փսխելը՝ դառնութեամբ. այդպէս էլ մեղքը գործելիս հաճոյք ենք ստանում, իսկ խոստովանում ու ապաշխարում ենք դառնութեամբ: Եւ երրորդ՝ երբ [մարդ] փսխում է, սրտխառնուքի ծանրութիւնից թեթեւանում է. այդպէս երբ խոստովանում ենք, մեղքերի ծանրութիւնից ազատւում ենք եւ թեթեւանում:

Նախկին մեղքերին դառնալը զազրելի եւ ատելի է, ինչպէս Պետրոս առաքեալն է ասում նրանց մասին, ովքեր սուրբ պատուիրանը թողեցին եւ նախկին մոլորութեանը վերադարձան. «Աւելի լաւ կը լինէր նրանց համար, որ բնաւ չճանաչէին արդարութեան ճանապարհը, քան որ ճանաչեցին եւ յետ կանգնեցին իրենց աւանդուած սուրբ պատուիրանից: Նրանց է պատշաճում իմաստուն ու ճշմարիտ առակը, թէ շունը վերադառնում է իր փսխածին, եւ լուացուած խոզը՝ թաւալւում տիղմի մէջ» [Բ Պետ. Բ 21—22]: «Աւելի լաւ կը լինէր նրանց համար, որ բնաւ չճանաչէին». ինչո՞ւ լաւ կը լինէր: Նախ՝ որովհետեւ առաջ անգիտութեամբ ու ակամայ էին մեղանչում, իսկ այժմ՝ գիտութեամբ ու կամովին, ինչն առաջինից ծանր է: Նաեւ՝ մեղանչելուց յետոյ զղջացին եւ գիտեն զղջման դառնութիւնը, ուստի այժմ [մեղանչելն] աւելի ծանր է, քան նախկինում: Բացի դրանից, նրանց անմտութեան մէջ

6 Գրաբար բնագրում «Դարձեալ՝ ժանկն է ի ներքս որպէս սպիտակ, եւ է ի դուրս որպէս երկաթ. է ի ներս եւ ի դուրս որպէս խառն արծաթ»:

նրանց տգիտութիւնն է երեւում, որովհետեւ եթէ մեղքն ախորժելի ու քաղցր բան էր, ինչո՞ւ [այն ժամանակ] զզուեցիք ու դուրս թքեցիք: Եւ եթէ զզուեցիք ու դուրս թքեցիք, ինչո՞ւ էք դարձեալ ախորժելով ճաշակում նոյն թքածը: Որովհետեւ ինչպէս որ հագուստը լուանալուց յետոյ աւելի մաքուր է պէտք պահել, քան մինչեւ լուանալը, այդպէս էլ խոստովանութիւնից յետոյ պէտք է առաւել զգօն լինել, քան դրանից առաջ: Սակայն ա՛յն նկատի չունեմ, թէ կրկին գործուած մեղքը չպէտք է խոստովանել, այլ այն, որ խոստովանութիւնից ու լուացուելուց յետոյ այլեւս կամովին այն մի՛ գործէք: Իսկ եթէ սատանայի, տգիտութեան կամ թուլութեան պատճառով դարձեալ մեղքի մէջ ընկնէք, դարձեալ ոտքի՛ կանգնէք եւ խոստովանէ՛ք: Եթէ նոյնիսկ բազմաթիւ անգամ բիւրաւոր մեղքեր գործէք, բազմաթիւ անգամ էլ խոստովանէ՛ք եւ մեղքերից մաքրուէ՛ք: Որովհետեւ այս [շարունակ] փոփոխուող մեղքերից զերծ մնալ չենք կարող. թէեւ մեր միտքն ու հոգին հաւանում են Աստուծոյ օրէնքը, ինչպէս ասում է առաքեալը, սակայն մարմնի օրէնքը [մտքի օրէնքի] դէմ պայքարի մէջ է մտնում եւ գերում մեր հոգին[7]: Մարմնի օրէնքն ու անդամները մեղքերն են. «Հոգին ցանկանում է մարմնի հակառակը»՝ բարիքը, «իսկ մարմինը ցանկանում է հոգու հակառակը»՝ չարիքը [Գաղ. Ե 17]: Եւ այսպէս մենք այս երկուսի միջեւ տարուբերուում ենք «իբրեւ տառապեալ մարդ»: «Ո՞վ ինձ կը փրկի այս չար մարմնից, եթէ ոչ՝ Քրիստոսի շնորհը»,— ասում է [առաքեալը] [Հռոմ. Է 24—25]:

Իսկ Քրիստոսի շնորհի հանդէպ մեր յոյսը կրկնակի է: Նախ՝ այն [պայմանաւորուած] է [առաքեալի հետեւեալ] խօսքով. «Ուր շատացաւ մեղքը, այնտեղ նաեւ շնորհը շատացաւ» [Հռոմ. Ե 20]: Երկրորդ՝ [այդ յոյսը] Քրիստոսի մահուան եւ չարչարանքների շնորհն է, որովհետեւ թէեւ ըստ մեր գործերի, որ շարունակ մեղքի մէջ ենք ընկնում, զազրելի եւ ատելի ենք, սակայն ըստ Քրիստոսի շնորհի՝ սիրելի ենք: Եւ Քրիստոսի շնորհը նախ մկրտութեամբ է [տրւում], ապա՝ խոստովանութեամբ: Մկրտութիւնը մէկընդմիշտ մաքրում է ընդհանուր եւ սկզբնական մեղքից, իսկ խոստովանութիւնը՝ մեր ամենօրեայ ներգործական մեղքերից:

Կրկնակի է նաեւ Քրիստոսի մահը, եւ կրկնակի շնորհ կայ Նրա մահուանից: Քրիստոսի առաջին մահն այն է, որ Իր սեփական գոյացական մարմնով մի անգամ մեռաւ եւ այլեւս չի մեռնում, իսկ երկրորդ

7 Տես Հռոմ. Է 22:

մահն այն է, որ Իր պատարագի միջոցով մշտապէս մեռնում է [սբ] Սեղանի վրայ: Արդ՝ առաջին մահը մի անգամ տեղի ունեցաւ եւ մի անգամ մաքրեց աշխարհի բոլոր մեղքերը, ուստի մի անգամ ենք մկրտւում Քրիստոսի մահուամբ եւ մի անգամ մաքրւում սկզբնական մեղքից: Իսկ Քրիստոսի երկրորդ մահը պատարագն է, որով շարունակ մեռնում է եւ շարունակ մաքրում մեզ մեղքերից՝ ըստ այնմ. «Յիսուսի արիւնը մեզ մաքրում է բոլոր մեղքերից» [Ա Յովհ. Ա 7], ուստի մենք եւս շարունակ խոստովանում ենք մեր մեղքերը: Հետեւաբար, երբ խոստովանում ենք մեղքերը, արդարանում ենք, եւ մեր մեղքերի պատիժը հատուցւում է Հայր Աստուծոյ առաջ [մատուցուող] պատարագով՝ ըստ այնմ. «Տէրը կը հատուցի իմ փոխարէն» [Սաղմ. ՃԼԷ 8]: Ինչպէս որ մկրտութեան ժամանակ Քրիստոսի մահուամբ զօրացած շնորհն է մեզ մաքրում, այդպէս էլ Քրիստոսի զօրացած շնորհն է մեզ մաքրում խոստովանութեան ժամանակ: Այս պատճառով էլ պէտք է հաւատով ու յոյսով խոստովանել մեղքերը եւ արդարացուել:

Հարկ է գիտենալ, որ մկրտութիւնն ու խոստովանութիւնն ունեն միեւնոյն շնորհը՝ տասը կերպով: Առաջին՝ ինչպէս որ մկրտութեամբ են մաքրւում բոլոր մեղքերը, այդպէս էլ խոստովանութեամբ ենք մաքրւում բոլոր մեղքերից: Երկրորդ՝ ինչ որ մկրտութեան ժամանակ ջուրն է, խոստովանութեան ժամանակ արտասուքն է: Երրորդ՝ առաջինում մերկանում են, իսկ երկրորդում՝ գլուխը բացում[8]: Չորրորդ՝ առաջինում հրաժարւում են [սատանայից] եւ խոստովանում [ճշմարիտ հաւատքը], երկրորդում եւս, մեղքերը խոստովանելիս, պէտք է խոստովանել [«հաւատամքը»]: Հինգերորդ՝ ինչպէս որ առաջինում քահանայի երկու ձեռքերն են ապաստաւորում, այդպէս երկրորդում քահանան երկու ձեռքերն է դնում [խոստովանողի] գլխին: Վեցերորդ՝ ինչպէս առաջինում [քահանան] Երրորդութեան անունով է մկրտում, այդպէս երկրորդում եւս Երրորդութեան [անունով] է արձակում տալիս: Եօթերորդ՝ թէ՛ առաջինում, թէ՛ երկրորդում խորհրդակատարը քահանան է. եթէ մէկը քահանայ չէ, ոչ կարող է մկրտել, ոչ արձակում տալ: Ութերորդ՝ ինչպէս որ մկրտութիւնից յետոյ [քահանան] Հաղորդութիւն է տալիս, այդպէս էլ խոստովանութիւնից յետոյ են հաղորդւում, որովհետեւ մեղքերից մաքրուեցին: Իններորդ՝ [ինչպէս որ] մկրտութեան շնորհն է ընդունւում հաւատով, այդպէս էլ հաւատով է ընդունւում մեղքե-

8 Սա վերաբերում է միայն տղամարդկանց:

րի թողութիւնը: Տասներորդ՝ ինչպէս որ մկրտութիւնից յետոյ պահք ենք պահում, աղօթում ու մեզ հեռու պահում [մեղքերից], այդպէս էլ խոստովանութիւնից յետոյ ապաշխարութիւն է սահմանւում: Այսպէս են իրար նման մկրտութիւնն ու խոստովանութիւնը: Խոստովանութիւնը [մկրտութեան] հանդէպ այն առաւելութիւնն ունի, որ մկրտութիւնը մի անգամ է մաքրում, իսկ խոստովանութիւնը՝ շատ անգամ եւ շարունակ: Մկրտութիւնն էլ առաւել է նրանով, որ նախ մկրտւում ենք եւ ապա՛ խոստովանում, եւ [մկրտութիւնն] առանց խոստովանութեան անկատար է:

Եթէ ամօթն արգելում է [խոստովանել], պէտք է իմանալ, որ ամօթը երկու տեսակ է լինում. մէկը՝ բարի, միւսը՝ չար, ինչպէս ասում է առակը. «Կայ ամօթ, որ մեղք է բերում, ամօթ էլ կայ, որ [բերում է] փառք ու շնորհ» [Առակ. ԻԶ 11]: Պէտք է վերջինն ընտրենք եւ զգոյշ լինենք՝ [իմանալով], որ ամօթը լինում է չար եւ բարի: Բարի ամօթն այն է, որ նախքան մեղանչելը պատկերացնում ես այն ամօթը, որ պիտի ապրես, եւ քեզ պահում ես մեղքից. սա բարի ամօթ է եւ քեզ հեռու է պահում չարից: Իսկ չար ամօթն այն է, որ երբ մեղք ես գործում եւ ամօթահար լինում, ամաչելուդ պատճառով [մեղքդ] թաքցնում ես եւ չես խոստովանում: Սա չար է. այս ամօթից պէտք է խուսափել, որովհետեւ չար է եւ վնասակար: Այս երկու տեսակ ամօթի օրինակներ ունենք Սուրբ Գրքում: Յովսէփն ու Շուշանը, մեղքը գործով [կատարել] չհասցրած, ամօթով պահպանուեցին եւ չշաղախուեցին պոռնկութեան մեղքի զազրելի գործի մէջ, որին դառն ամօթը պիտի հետեւէր[9]: Այս պատճառով էլ Աստծուց ու մարդկանցից շնորհ ու փառք ստացան: Իսկ Աքարն ու Գեեզին գողութիւնից յետոյ ամօթի մէջ ընկղմուեցին եւ չխոստովանեցին, ուստի պատժուեցին. Աքարն իր ընտանիքով հանդերձ քարկոծուեց, իսկ Գեեզին իր սերունդներով հանդերձ բորոտացաւ[10]:

Մեղքը գործով կատարելուց առաջ եղած ամօթը [եւս] երկու տեսակ է: Առաջինն այն է, որ [մէկն] ամաչում է մարդուց, թէ՝ մեծ մարդ է, իշխան եւ պարոն, ինչ պատճառով եւ մեղքը չի գործում, եւ սա նոյնպէս չար ամօթ ու չար վախ է: Իսկ երկրորդն այն է, որ նախքան [մեղքը] գործով կատարելը [մարդ] մեղքի ամօթն ու Աստուծոյ պատժի երկիւղն իր մէջ է զգում, եւ սա՛ է բարի ամօթը:

9 *Տես Ծն. Լթ 7—12, Դան. ԺԳ:*

10 *Տես Յես. է, Դ Թագ. Ե 20—27:*

Մեղքի համար պէտք է ամաչել վեց կողմից: Նախ՝ մեր պահապան հրեշտակից, ով միշտ մեզ մօտ է եւ տեսնում է մեր գործերը: Երկրորդ՝ պէտք է ամաչել Աստծուց, Ով տեսնում է ոչ միայն մարմնով [կատարուած] գործերը, այլեւ քննում ու տեսնում սիրտն ու խորհուրդները: Երրորդ՝ պէտք է մտածել Քրիստոսի մեծ ատեանում դատաստանի ահաւոր ամօթի մասին: Իսկ մարդկանց հետ կապուած՝ նախ՝ պէտք է ամաչել մարդկանցից, երբ տեսնում ու լսում են մեր չար արարքը, «որովհետեւ չկայ ծածուկ բան, որ յայտնի չդառնայ» [Մատթ. Ժ 26]: Եթէ ուրիշները չգիտեն էլ [մեր մեղքի մասին], պէտք է խոստովանել քահանային. քահանայի առաջ եղած ամօ՛թը միտքդ բեր նախքան գործով մեղանչելը: Երկրորդ ամօթն ուղղուած է մեր անուանը կամ մեր ունեցած շնորհներին, որ քրիստոնեայ ենք, Աւազանով մկրտուած, Քրիստոսի եղբայր եւ Հայր Աստուծոյ որդի կոչուած եւ այլն: Երրորդ՝ պէտք է տանջուենք մեր խղճից, որը շարունակ դառն ամօթով ներսից հարուածում է մեզ ու ամաչել տալիս: Այս վեց կողմից պէտք է յիշել ամօթի մասին եւ մեղք չգործել:

Իսկ գործելուց յետոյ, եթէ մեղքից ամաչում ես եւ չես գնում խոստովանութեան, մի՛ ամաչիր, եւ դա նոյնպէս քեզ համար բարի կը լինի, որովհետեւ որքան ամօթխածութեամբ խոստովանես, այնքան աւելի կը մաքրուես մեղքից: Ինչպէս [որքան] ուժեղ է կրակը, [այնքան լաւ] է մաքրում ժանգը, այդպէս [որքան] մեծ է ամօթը, [այնքան աւելի] է մաքրում քո մեղքը քահանայի առաջ:

Եթէ մէկը հարցնի. «Եթէ սրտում զղջալու դէպքում մեղքը ներւում է, ինչո՞ւ ենք բերանով խոստովանում ու մարմնով ապաշխարում», կ՛ասենք, որ մեղաւոր մարդը, երբ մեղք է գործում, երեք դէմքի է պարտապան դառնում: Նախ՝ Աստծուն, որ [Նրա] օրէնքը խախտեց: Երկրորդ՝ Եկեղեցուն, որ նրա կանոնները չպահեց: Երրորդ՝ ընկերոջը, ում հանդէպ մեղանչեց չնութեամբ, գողութեամբ եւ այլն: Ուրեմն՝ երբ սրտանց զղջում ենք, Աստուած ներում է մեղքը, երբ խոստովանում ենք քահանային, ազատւում ենք Եկեղեցու կանոնների հանդէպ [պարտաւորութիւնից], իսկ երբ գործով ապաշխարում ենք, հատուցում ենք ընկերոջ պարտքը: Ուստի թէեւ զղջմամբ ներւում են մեղքերը, սակայն մեղքերի խոստովանութիւնն անհրաժեշտ է:

Եթէ մէկը հարցնի. «Եթէ խոստովանելով արդարանում ենք, այլեւս ապաշխարութեան ի՞նչ կարիք կայ», կ՛ասենք, որ թէեւ խոստովանութեամբ մեղքերը ներւում են, սակայն դրանից յետոյ ապաշխա-

բութիւնն անհրաժեշտ է վեց պատճառով: Նախ՝ ինչպէս երբ հերկուած հողի մէջ չենք սերմանում, աւելի շատ է փուշ բուսնում, այդպէս խոստովանութիւնը մաքրում է մեղքերի փուշը, իսկ ապաշխարութիւնը բարի սերմ է, ինչպէս ասում էր Տէրը. «Երբ [պիղծ] ոգին ելնում է մարդուց» եւ այլն [Մատթ. ԺԲ 43]: Երկրորդ՝ խոստովանութիւնը նման է աւելի, որը մեղքերից մաքրում է մեր հոգու տունը, իսկ ապաշխարութիւնը պատրաստում է մնացած բարիքները, որպէսզի Թագաւորը մտնի այնտեղ: Երրորդ՝ խոստովանութիւնը նման է էտուած որթատունկի եւ բուսած պարտէզի, իսկ ապաշխարութիւնը պարիսպ ու ցանկապատ է, որպէսզի օտարները չմտնեն պարտէզ: Չորրորդ՝ մեղքը խոստովանութեամբ ներւում է, իսկ ապաշխարութիւնը յաւիտենական պատիժը փոխարինում է ժամանակաւորով: Հինգերորդ՝ խոստովանութիւնը մաքրում է մահացու մեղքերը, իսկ ապաշխարութիւնը՝ ներելիները, որովհետեւ շատ են, եւ չենք կարող դրանք թուել ու յիշել: Վեցերորդ՝ խոստովանութիւնը մարդուն ազատում է մեղքերից, իսկ ապաշխարութիւնն աւելացնում է փառքն ու պսակները: Հետեւաբար խոստովանութիւնից յետոյ ապաշխարութիւնն անհրաժեշտ է, ինչպէս ասուեց:

Հարկ է գիտենալ, որ բոլորովին չար է այն կաշառքը, որ «խոստովանագրամ» են կոչում, որովհետեւ դրանով խեղաթիւրւում է խոստովանութեան խորհուրդը խոստովանահօր եւ խոստովանողի միջեւ: [Խոստովանագրամ վերցնող քահանան] չի կարող ուղիղ դատել մեղքերն ու ապաշխարութիւն դնել, այլեւ աղքատութեան պատճառով [մարդիկ] դադարում են խոստովանելուց: Կաշառքն այսպիսին է բոլո՛ր խորհուրդների կատարման պարագայում, լինի կնունքի դրամ, պսակի, Հաղորդութեան, թէ այլ բաների, որովհետեւ [կաշառք վերցնողները] վաճառում են Աստուծոյ շնորհները, մանաւանդ երբ հարկադրելով են պահանջում: Սակայն այն վճարը, որ տալիս են կնունքի կամ պսակի ժամանակ, կնիքի [կամ պսակի] դրամ չէ, այլ տալիս ենք լոյսի եւ խնկի գինը Եկեղեցուն եւ [հոգեւոր] սպասաւորների կարիքների համար, որպէսզի ովքեր այդ օրը սպասաւորեցին հոգեպէս, կերակրուեն մարմնապէս: Սա է պատճառը նաեւ այլ խորհուրդների պարագայում [վճարում կատարելու]: Սակայն երբ խոստովանութեան համար է [քահանան] դրամ վերցնում, սա բոլորովին չար է:

Տուրքը երբեմն բարի, երբեմն չար է լինում: Երբ հոգեւոր պաշտամունքի՝ [պատարագի], ժամերգութիւնների եւ աղօթքների համար տուրք են բերում, եւ [քահանաները], այն վերցնելով, տուողի խնդրանքը կատարում են աղօթքների պատարագով, այսպիսի [տուրքը] բարի եւ ընդունելի է: Իսկ եթէ այդ տուրքը վերցնելով՝ [քահանան] չի աղօթում, ինչպէս որ կամեցաւ տուողը, եւ վերցրածը ծախսում է իր մարմնի, փառքի եւ այլ անարգ բաների համար, տուողն Աստծուց ստանում է իր վարձը, իսկ քահանան կորստեան է մատնում իր հոգին, եւ [նրա արածը] զրկողութիւն է համարւում, ինչպէս ասում է մարգարէն. «Ովքեր ուտում էին իմ ժողովրդին կերակուր հացի պէս եւ Աստծուն չկանչեցին» [Սաղմ. ԺԳ 4]: Այսպիսին է զանազանութիւնը տուրքերի միջեւ. կայ, որ չար է, կայ՝ որ բարի: Եւ [բարի տուրքին] թող արժանացնի մեզ Քրիստոս Աստուած, Ում փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ ԴԱՐՁԵԱԼ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(ԳԼՈՒԽ Զ)

«Իսկ եթէ խոստովանենք մեր մեղքերը, հաւատարիմ է Նա եւ արդար՝ մեր մեղքերը ներելու»:
[Ա Յովհ. Ա 9]

Վարդապետներն ասում են, որ Աստուծոյ դատաստանն առաւել քաղցր է, քան այս աշխարհինը: Նաեւ Նոր օրէնքի դատաստանն է առաւել քաղցր ու դիւրին, քան Հին օրէնքինը: Իսկ այս աշխարհի դատաստանում որքան առաւել է մարդ թաքցնում իր մեղքը, այնքան առաւել է արդարանում, եւ իր մեղքը յայտնողն առաւել է դատապարտւում, ինչպէս գողերն ու աւազակները, ովքեր, խոստովանելով իրենց մեղքերը, չարաչար մեռնում են, ուստի այսպիսի խոստովանութիւնը դժուար ու դառն է: Այսպիսին էր նաեւ Հին օրէնքում եղած խոստովանութիւնը, ինչպէս գրուած է Յեսուի գրքի եօթերորդ գլխում Աքարի մասին, ով գողացաւ Երիքովի անիծուած ինչքից, եւ Աստուծոյ բարկութիւնն իջաւ ժողովրդի վրայ: Աքարին կանգնեցրին ատեանում, եւ Յեսուն նրան ասաց. «Փա՛ռք տուր Աստծուն, խոստովանի՛ր քո մեղքը եւ մի՛ ծածկիր»: Նա խոստովանեց իր մեղքը եւ թողութիւն ստանալու փոխարէն քարկոծուեց ժողովրդի կողմից: Բայց Աստուծոյ դատաստանը Նոր օրէնքում ա՛յլ է. ով խոստովանահօր առաջ թաքցնում է իր մեղքը, Աստծուց թողութիւն չի ստանում, այլ նրա մեղքը յայտնի է դառնալու Դատաստանի օրը Աստուծոյ եւ բոլոր արարածների առաջ: Իսկ ով ճշմարտութեամբ ու խոնարհութեամբ խոստովանում է իր մեղքը, Աստուած թողութիւն է տալիս ու ծածկում այն: Եւ այսպիսի խոստովանութիւնը երանելի է, ինչպէս ասում է [առաքեալը]. «Իսկ եթէ խոստովանենք մեր մեղքերը, հաւատարիմ է Նա եւ արդար՝ մեր մեղքերը ներելու» [Ա Յովհ. Ա 9]:

Արդ՝ խոստովանութեան խորհրդի մասին պէտք է իմանալ [հետեւեալը]: Նախ՝ տասներկու բան է հարկաւոր, որ խոստովանութիւնը կատարեալ լինի: Հարկաւոր են սրանք:

Առաջին՝ խոստովանութիւնը պէտք է իմաստութեամբ ու հմտութեամբ լինի, եւ իմաստութեամբ կատարուած խոստովանութիւնը երեք

տեսակ է: Նախ՝ [խոստովանողը] բոլոր մահացու մեղքերը յատուկ կերպով եւ առանձին պիտի խոստովանի: Դաւիթն ասում է. «Լուացի ամէն գիշեր իմ մահիճը» [Սաղմ. Զ 7]: Սա՛ է կամենում ասել. արտասուքի ջրով լուացի բոլոր մահացու մեղքերը, որոնք գիշեր են, անկողնում, այսինքն՝ խղճմտանքից: Եւ բաւական չէ միայն ընդհանրաբար խոստովանել եւ ասել թէ՝ «Շատ մեղքեր եմ գործել», բայց առանձին չնշել մեղքերի անունները: Երկրորդ՝ [խոստովանողը] պիտի ընտրի խոստովանահօրը, թէ ճանաչո՞ւմ է մեղքերը եւ ունի՞ կապելու եւ արձակելու իշխանութիւն: Եթէ մէկն իր կամքով գնում է տգէտ քահանայի մօտ եւ խոստովանում մեղքերը՝ մտքում ասելով. «Սա իմ մեղքերը չի հասկանայ եւ ինձ թեթեւ ապաշխարութիւն կը դնի», ապա այսպիսինի խոստովանութիւնն օգուտ չունի: Երրորդ՝ [մարդը] մահացու մեղքերն առաւել մեծ զղջմամբ պիտի խոստովանի, եւ որքան աւելի ծանր է [տուեալ] մահացու մեղքը, [մարդն] այնքան աւելի խոր զղջմամբ պիտի խոստովանի:

Երկրորդ՝ խոստովանութիւնը պիտի կամաւոր լինի եւ ո՛չ հարկադիր, ինչպէս ասում է Դաւիթը. «Ես իմ կամքով կը խոստովանեմ Քեզ» [Սաղմ. ԻԷ 7]: Ովքեր հարկադրուած են խոստովանում, նման են գողերին, ովքեր դատաւորի առաջ այն ժամանակ են խոստովանում, երբ [նրանց հանդէպ] չարչարանքի գործիք են բանեցնում: Այդպէս էլ ովքեր չեն խոստովանում մինչեւ այնժամ, երբ Աստուած մահ է ուղարկում, եւ այդ ժամանակ են խոստովանում դժոխքի ահից եւ ոչ թէ Աստուծոյ սիրուց, այսպիսիների [խոստովանութիւնն] օգտակար չէ, որովհետեւ պիտի կամաւոր լինի եւ Աստուծոյ սիրոյ համար:

Երրորդ՝ խոստովանութիւնը պէտք է մաքուր լինի եւ սեփական հոգու փրկութեան համար, ոչ թէ մարդկանց ցուցադրութեան:

Չորրորդ՝ [խոստովանողը] պիտի համարձակ խոստովանի եւ ամօթի պատճառով չթաքցնի իր մեղքերը:

Հինգերորդ՝ պէտք է ամօթխածութեամբ խոստովանի եւ ոչ թէ մարդկանց առաջ պարծենալով թէ՝ այսինչ մեղքն եմ գործել:

Վեցերորդ՝ պէտք է հաւատով, արտասուքով եւ ցաւագին զղջմամբ խոստովանի՝ հոգով եւ մարմնով: [Խոստովանութիւնն] այդ ժամանակ կատարեալ կը լինի, որովհետեւ հոգու հիւանդութիւնն արտասուքով արագ է բժշկւում: Երբ հիւանդը քրտնում է, եւ քրտինքը հաւասար է լինում [մարմնի բոլոր մասերում], նաեւ տաք ու հոտով, սա հիւանդի համար բարի նշան է, որովհետեւ այդպիսի քրտինքը ցաւը հանում է:

Այդպէս էլ, երբ մէկն իր մեղքերի համար արտասուում է, ջերմեռանդ սրտով խոստովանում, եւ նրա մեղքերը վատ հոտով ու գարշելի են թւում նրան, սա բարի նշան է, որովհետեւ նրա հոգեւոր հիւանդութիւնն ուզում է հեռանալ: Իսկ վատ նշան է, երբ ծանր հիւանդութիւն ունեցողը սկսում է ծիծաղել եւ չի կարողանում ճանաչել իր ցաւերը: Այսպէս երբ մէկը ծանր մեղք է գործել եւ խոստովանութեան ժամանակ ծիծաղում է, բարի նշան չէ:

Եօթերորդ՝ խոստովանութիւնը խոնարհութեամբ պիտի լինի, որ [մարդն] իրեն տկար, հիւանդ ու ողորմելի խոստովանի, խոստովանահօրը հնազանդ լինի, որ ինչ ապաշխարութիւն էլ [վերջինս] դնի, [խոստովանողը] խոնարհութեամբ ստանձնի եւ կատարի:

Ութերորդ՝ խոստովանութիւնը վաւերական պիտի լինի: Վաւերականութիւնն ապահովւում է երեք բանով: Առաջին՝ խոստովանողն ու խոստովանահայրը պիտի լինեն ուղղափառ, ընդհանրական սուրբ Եկեղեցուն հնազանդ եւ չլինեն հերձուածող: Երկրորդ՝ խոստովանութիւնը պիտի կատարուի թողութեան յոյսով եւ ո՛չ ինչպէս Ցուդայինը, ով խոստովանեց եւ փրկութեան յոյս չունենալով՝ խեղդամահ եղաւ: Անօգուտ է այսպիսի խոստովանութիւնը: Երրորդ՝ խոստովանութեան ժամանակ [խոստովանողը] սուտ պիտի չխօսի, այլ ճշմարտութիւնն [ասի], որովհետեւ խոստովանութիւնն Աստուծոյ առաջ է, եւ ծանր մեղք է Աստուծոյ առաջ ստելը եւ մեծ պատժի արժանի, ինչպէս ասում է Դաւիթը. «Ատեցիր նրանց, որ անօրինութիւն են գործում, կորստեան ես մատնում բոլոր նրանց, որ սուտ են խօսում» [Սաղմ. Ե 6—7], [մանաւանդ] խոստովանութեան ժամանակ, իսկ կորստեան մատնուելն աւելի մեծ պատիժ է, քան ատելի լինելը: Ուստի խոստովանութեան ժամանակ ստելը շատ աւելի մեծ մեղք է, քան [առհասարակ] մեղք գործելը: Այլեւ՝ չկայ այնպիսի մեղք, որ մարդուն կորստեան մատնի, եթէ [մարդը] ճշմարտապէս խոստովանի, սակայն խոստովանելիս ստելու պատճառով մարդը կորստեան է մատնւում, երբ ծանր մեղք է գործել եւ ուրանում է խոստովանահօր առաջ: Նաեւ չի կարելի խոստովանութեան ժամանակ ստել խոնարհութեան պատրուակով. որովհետեւ [խոստովանողը] կարող է ընդհանուր կերպով ասել՝ մեղաւոր եմ, սակայն չգործած մեղքերի համար պիտի չասի՝ գործել եմ:

Այստեղ պէտք է գիտենալ նաեւ, որ եթէ մէկը խոստովանում է իր բոլոր մեղքերը, սակայն ունի ցանկութիւն այդ մեղքերը դարձեալ գործելու, այսպիսի մարդու խոստովանութիւնն ընդունելի չէ, եւ նրան

պէտք չէ ո՛չ ընդունել, ո՛չ արձակում տալ, որովհետեւ մեղքի արմատը մնացել է նրա սրտում: Ինչպէս երբ փուշը քաշում են կորելով եւ ոչ թէ արմատից խլելով, եւ ինչպէս որ ածիլուող մազը յետոյ աւելի լաւ է աճում, այդպէս երբ մարդ խոստովանում է իր մեղքը՝ դրա արմատը պահելով սրտում, այդ չար արմատից շատ ճիւղեր են բուսնում: Այս պատճառով էլ պէտք է [մեղանչելու] ցանկութիւնը, որը մեղքի արմատն է, բոլորովին հեռացնել: Այստեղից պարզ է, որ ով Քառասնորդական պահքի ժամանակ պոռնկութիւնից եւ այլ մեղքերից իրեն հեռացնում է՝ ցանկութիւն ունենալով պահքից յետոյ նոյն մեղքերին վերադառնալու, այսպիսի մարդու խոստովանութիւնը կեղծ է: Որովհետեւ այսպիսիք դժոխային օձի միայն պոչն են կտրում, եւ նրանց [խոստովանութիւնը] կատարեալ չէ, քանի որ [այդ օձի] գլուխն ու մարմինը թողնում են հոգում: Իսկ օձն այսպիսի յատկութիւն ունի. եթէ նրա գլուխը մնում է, եւ մարմնից կտրում ես երկու կամ երեք մատ, կարող է [մահուանից] ազատուել: Օձի գլուխը չար խորհուրդն է, մարմինը՝ մեղքը հաւանելը, եւ պոչը՝ [մեղքը] գործով կատարելը: Այն մարդիկ, ովքեր մի որոշ ժամանակով են մեղքերից հեռու մնում, կտրում են պոչը, սակայն գլուխը, այսինքն՝ չար խորհուրդը, եւ մարմինը, այսինքն՝ մեղքը հաւանելը, պահում են իրենց կամքի մէջ: Կան մարդիկ, որ մարմնով ծեր ու տկար են, բայց [մեղքի] ցանկութիւնն ունեն եւ եթէ կարողանային, գործով կը կատարէին այն, [եւ եթէ այն խափանւում է], ապա խափանւում է միայն գործը: Այսպէս չպէտք է լինի. նախ պէտք է սիրտը մաքրել եւ ո՛չ թէ առանց սրտում զղջում ունենալու՝ խօսքով խոստովանել:

[Իններորդ]՝ նաեւ ամբողջապէս է պէտք զղջալ սրտում: [Այս մասին] վկայում է Դաւիթը՝ ասելով. «Կը խոստովանեմ Քեզ, Տէ՛ր, իմ ամբողջ սրտով» [Սաղմ. ՃԺ 1]: Որովհետեւ չպէտք է մեղքերի կէսն ասել, կէսը պահել կամ կէսն ասել մի քահանայի, կէսը՝ մէկ այլ: Ով այսպէս վարւում է ամօթից եւ ոչ թէ մոռանալու պատճառով, նրան թողութիւն չի լինի: Այլ մտապահուած ամէն ինչ պէտք է խոստովանել մէկ քահանայի, որովհետեւ Աստուած կիսատ չէ, այլ կատարեալ, կամ ամբողջապէս է ներում, կամ բնաւ չի ներում: Այսպէս [խոստովանողը] նորից պիտի սկսի խոստովանութիւնը եւ խոստովանի ամբողջը: Իսկ եթէ մէկը խոստովանում է իր մեղքերը եւ մի մահացու մեղք թաքցնում է ամօթից, նման է ծովի վրայ գտնուող եւ հարիւր անցք ունեցող նաւի, որի իններորդինը անցքը փակում են, բայց մէկը թողնում, եւ դրանով ջուր է մտնում եւ նաւն ընկղմում: Կամ նման է նրան, ով ունի իր

մարմնի վրայ ցցուած հարիւր նետ, բոլորը հանում է, բայց մէկը թողնում, եւ սա սպանում է նրան:

Այլեւ՝ ովքեր մեղքը յայտնապէս չեն խոստովանում, այլ ծանր մեղքն անյստակ են ներկայացնում, որպէսզի խոստովանահայրը չհասկանայ, [այսպէս վարուողների խոստովանութիւնը] կեղծ է, որովհետեւ այնպէս է պէտք մեղքը ներկայացնել, ինչպէս գործուել է, թէկուզեւ [խոստովանողը] խիստ ամաչի. որքան աւելի ամաչի, այնքան աւելի թողութիւն կը լինի: Իսկ եթէ ամօթից չի խոստովանում ծանր մեղքը, նրան կը պատահի այն, ինչ պատահել է մի այրի կնոջ: Մի հարուստ կնոջ, ով քահանայ որդի ունէր, սատանան գցեց մեղքի մէջ, եւ կինը պոռնկութիւնից երկու բիճ ծնեց, երկուսին էլ սպանեց եւ ամօթից այս մեղքը բնաւ չխոստովանեց, որպէսզի չպատուազրկուէր: Այս մեղքով մեռաւ եւ դժոխք իջաւ: Իսկ նրա քահանայ որդին աղօթք ու պատարագ էր մատուցում Աստծուն խնդրելով. «Ցո՛յց տուր ինձ իմ մօրը, թէ հրեշտակների ո՛ր դասում է կանգնած»: Պատարագի վերջում նրա մայրը խիստ ահարկու տեսքով երեւաց նրան: Երկու վիշապ փաթաթուել էին նրա վրայ, եւ վիշապների բերանները՝ մէկինը [կնոջ] մի կրծքին էր, միւսինը՝ միւս: Քահանան զարմացաւ եւ հարցրեց. «Ո՞վ ես դու»: Պատասխանեց. «Քո մայրն եմ»: [Որդին] հարցրեց. «Քեզ ի՞նչ է եղել»: Պատասխանեց. «Ինձել եմ դժոխքի յատակը»: [Որդին] ասաց. «Ես կարծում էի՝ հրեշտակների դասում ես կանգնած, որովհետեւ շատ բարի գործեր ես կատարել՝ պահք, աղօթք, ողորմութիւն: Ուրեմն ի՞նչն է պատճառը [այդտեղ գտնուելուդ], եւ ի՞նչ են նշանակում այդ վիշապները»: Մայրը պատասխանեց. «Ամօթի պատճառով ծանր մեղք թաքցրի եւ բոլոր բարի գործերն անում էի նրա համար, որ պատուազուրկ չլինէի, այդ պատճառով էլ այժմ խայտառակուել եմ յաւիտեանս յաւիտենից: Իսկ այս երկու վիշապները երկու սատանայ են, որ ծծում են իմ կրծքերն այն երկու որդիներիս փոխարէն, որոնց ծնեցի ու սպանեցի, եւ չկերան իմ կաթը: Այս պատճառով էլ տանջում են ինձ յաւիտեանս յաւիտենից»: Սա ասելով՝ [կինը] վերադարձաւ դժոխք: Հետեւաբար, պէտք չէ ամօթի պատճառով մեղքը թաքցնել: Երբ աղքատ ու հիւանդ մարդը, նստելով պատշաճ տեղում, ողորմութիւն է խնդրում, սովորաբար ցոյց չի տալիս [մարմնի] ողջ անդամը, այլ այն ծածկում եւ հիւանդ մասն է ցոյց տալիս, որպէսզի աւելի շատ ողորմութիւն ստանայ: Իսկ եթէ վիրաւոր մասը ծածկում է եւ առողջը ցոյց տալիս, անխելք է եւ ողորմութիւն չի ստանում: Այսպէս էլ խոստովանութիւնը երկնային Եկեղեցու դուռն

է, եւ մահացու մեղք ունեցող մարդու հոգին՝ վիրաւոր, ուստի պէտք է խիստ ծանր մեղքերը յայտնի խոստովանահօրը, ով երկնքի դռնապանն է, որպէսզի ողորմութիւն ստանայ Աստծուց եւ հրեշտակներից: Իսկ ովքեր ծածկում են վիրաւոր մասը, այսինքն՝ մահացու մեղքը, եւ ցոյց տալիս առողջ մասը, որը բարի գործն է, ողորմութիւն չեն ստանում, այլ յաւիտենական տանջանք ու նախատինք:

Տասներորդ՝ պէտք է խոստովանութիւնը միայն խոստովանողի անձին վերաբերի, այսինքն՝ նա միայն իր մեղքերը պիտի խոստովանի եւ ոչ թէ ուրիշների: Որովհետեւ պէտք չէ, որ կինը գանգատուի ամուսնուց եւ նրա մեղքերը յայտնի, ոչ էլ ամուսինը՝ կնոջ. [խոստովանողը] պէտք է իր մեղքերը յայտնի եւ ոչ թէ ուրիշների եւ իր թշնամիների: Նաեւ պէտք չէ, որ իր մեղքերն ուրանայ եւ ուրիշների վրայ գցի, այլ իրե՛ն պիտի դատապարտի: Այլ պէտք չէ խոստովանութեան ժամանակ [մեղքի] գործակցի անունը նշել, եթէ հնարաւոր է, որովհետեւ կարող ես առանց քո մեղքը [յիշատակելու] գործակցիդ մեղքը յայտնել:

Այստեղ պէտք է գիտենալ, որ ով խոստովանում է եւ ուրիշների հետ խառնած է ու չի կամենում հաշտուել, նրան չպէտք է արձակում տալ, մինչեւ հաշտուի: Որովհետեւ Քրիստոսը Մատթէոսի Աւետարանում հրամայում է. «Եթէ մարդկանց չներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն էլ ձեզ չի ների» [Մատթ. Զ 15]:

Տասնմէկերորդ՝ պէտք է խոստովանութիւնը ծածուկ պահուի թէ՛ խոստովանահօր, թէ՛ խոստովանորդու կողմից, որովհետեւ խոստովանողն իր մեղքերը յայտնապէս պիտի չասի մարդկանց. շատերը գայթակղուում են դրանից եւ դա պատճառ դարձնելով՝ մեղքի մէջ ընկնում: Եւ խոստովանահայրը նոյնպէս պէտք է ծածկի մեղքերը եւ չյայտնի, եթէ նոյնիսկ մասնատեն նրան: Իսկ եթէ նրան խիստ նեղեն, կարող է երդուել, թէ ինքը մեղքերը չգիտի: Այս երդումը ճշմարիտ է, որովհետեւ [խոստովանահայրը] չգիտի իբրեւ մարդ, գիտի իբրեւ Աստուծոյ երեսփոխան, քանի որ մեղաւորը քահանային չի խոստովանում իբրեւ մարդու, այլ Աստուծոյ փոխանորդի: Վարդապետներն ասում են. «Ոչինչ այնպէս սակաւ չգիտեմ, ինչպէս այն, ինչ խոստովանութեամբ գիտեմ. այլ այն, ինչ չգիտեմ, [դրա մասին] աւելին գիտեմ, քան խոստովանութեամբ գիտեցածիս մասին: Որովհետեւ այն, ինչ չգիտեմ, կարող եմ սովորել եւ ապա ուրիշներին ասել, սակայն ինչ որ խոստովանութեամբ գիտեմ, չեմ կարող իմանալ կամ ասել»: Խոստովանութիւնն այնպիսի ամուր փակ ու կողպէք է, որ Աստուծոյ բերանը փակում է, որովհետեւ

խոստովանուած մեղքն Աստուած չի յայտնում եւ այնպէս ամուր է փակում քահանայի բերանը, որ [քահանան] բնաւ պիտի չասի, եթէ նոյնիսկ սպանեն նրան: Եւ այն քահանան, որ սատանայութիւն է անում եւ խոստովանութիւնը յայտնում, կարգալոյծ պիտի արուի եւ մինչեւ մահ զնդանի մէջ դրուի, որ այլեւս արեւ չտեսնի: Որովհետեւ խիստ ծանր մեղք է խոստովանութիւնը յայտնելը եւ Եկեղեցու քակտում է: Պէտք չէ խոստովանել այն քահանային, ով [խոստովանութիւնը] յայտնում է, նաեւ պէտք չէ մնալ առանց խոստովանութեան, այլ պէտք է ընտրել այնպիսի խոստովանահայր, ով խոստովանութեան խորհուրդը մինչեւ մահ պահում է: Այստեղ պէտք է գիտենալ, որ խոստովանութեան խորհուրդը կար բոլոր քրիստոնեաների մէջ, սակայն վատթար խոստովանահայրերի պատճառով, ովքեր շատերի մեղքերն են յայտնել, [այս խորհուրդը] խափանուել է արեւելեան աշխարհում, ինչպէս ասորիների եւ յակոբիկների մօտ, ովքեր բնաւ չեն խոստովանում: Իսկ միւս ազգերը, որոնք խոստովանում են, սա անում են ահուդողով եւ վախենում են չար քահանաներին խոստովանել, որպէսզի չլինի թէ վերջիններս իրենց մեղքերը յայտնեն:

Տասներկուերորդ՝ խոստովանութիւնը յաճախ պիտի կատարուի: Սա երկու կերպ է պէտք հասկանալ: Առաջին՝ եթէ մէկը նոյն մահացու մեղքի մէջ յաճախ է ընկնում, պիտի յաճախ էլ խոստովանի. սա հրաման է եւ ոչ թէ խրատ: Երկրորդ՝ մէկ անգամ խոստովանուած մահացու մեղքը դարձեալ խոստովանելն օգտակար է, քանի որ երբ մարդ շատ է խոստովանում խոստովանուած մեղքը, նրա տանջանքը թեթեւանում է, եւ Աստուծոյ ողորմութիւնն առատապէս իջնում է [նրա վրայ]. բայց սա հրաման չէ, այլ խրատ: Որովհետեւ եթէ մէկը մահացու մեղքն ուղիղ է խոստովանում, սա բաւական է [այդ մարդու] փրկութեան համար: Բայց եթէ նոյն մեղքը յաճախ խոստովանի, բազմաթիւ պակներ [կ՚արժանանայ]:

Այստեղ երեք բան է պէտք իմանալ: Նախ՝ նախքան խոստովանութիւնը [մարդը] պէտք է իր բոլոր մեղքերի մասին խոկայ եւ դրանք վերյիշի, որպէսզի խոստովանահօր առաջ ամբողջն ասի: Կան շատեր, որ առանց պատրաստութեան են գալիս խոստովանութեան, [մեղքերը] մոռանում են ու ոչինչ չեն խոստովանում: Սա լաւ չէ: Որովհետեւ հիւանդին դեղից առաջ շաքարաջուր են խմել տալիս, որ ցաւը մեղմացնի ու պատրաստի [դեղն ընդունելուն], եւ ապա ընդունում է ծանր ու դառը դեղը, որը հանում է բոլոր ցաւերը: Այսպէս նախքան խոստովանութիւնը, որը դառը դեղ է, պէտք է շաքարաջուր խմել, այսինքն՝ [մեղքերի մասին] մտածել ու [դրանք] վերյիշել՝ խոստովանութեան ժամանակ ամբողջը դուրս թափելու համար:

Երկրորդ՝ պէտք է իմանալ, որ խոստովանութեանը չպէտք է խառնել խօսք ու պատմութիւն, որոնք խոստովանութեան նպատակ չունեն. պէտք է միայն մեղքերի մասին խօսել: Եւ պէտք չէ խոստովանութեան ժամանակ բարի գործերի մասին խօսել, այլ միայն չար: Որովհետեւ խոստովանութիւնը նման է երակահատութեան, որն օգտակար է այն ժամանակ, երբ վատառողջ արիւնն է դուրս գալիս, եւ առողջ արիւնը մնում տեղում եւ սնուցում մարմինը: Իսկ այն երակահատութիւնը, որով առողջ արիւնն է դուրս գալիս, եւ վատը մնում, լաւ չէ: Բարի գործը նման է առողջ արեան, իսկ չար գործը՝ վատ արեան: Ով խոստովանելիս իր բարի գործերը թաքցնում է եւ յայտնում չար գործերը, նրա խոստովանութիւնը լաւն է: Իսկ ովքեր խոստովանելիս յայտնում են իրենց բարի գործերը եւ թաքցնում չարերը, նրանց խոստովանութիւնը վնասակար է: Խոստովանահայրը նման է երակահատի, եւ նրա լեզուն՝ նշտարի, որով հարցեր տալով հարուածում է մեղաւորի սրտին, այսինքն՝ իմաստութեամբ հարցեր է տալիս [խոստովանողի] զանազան մեղքերի մասին: Երբ երակահատի աչքը լաւ չի տեսնում, եւ ձեռքը դողում է, վախ կայ, որ երբ հարուածի երակին, կը կպչի նեարդին եւ մեծ վնաս կը տայ: Այսպէս էլ տգէտ խոստովանահայրը կոյր է եւ չգիտի, թէ որն է մեղք, որը՝ առաքինութիւն: Որովհետեւ ինչ որ մահացու եւ ծանր մեղք է, այն մեղք չի համարում, իսկ ինչ որ մեղք չէ, մեղք է համարում եւ հարուածը դրան ուղղում, ձեռքն էլ դողում է, այսինքն՝ արդար դատաստան չի անում մեղաւորի համար, այլ կաշառքի պատճառով ուղիղ դատաստանը թիւրում է եւ մեղաւորին թոյլ տալիս մնալ մահացու մեղքի մէջ: Երկիւղալի է այսպիսի մէկին խոստովանելը:

Երրորդ՝ պէտք է իմանալ, որ հեշտ է բժշկել այն պալարը, որի ծայրը դրսում է եւ բաց, իսկ եթէ այն ներսում է, [պալարը] չի բժշկւում, այլ սպանում է մարդուն: Այսպէս՝ երբ մահացու մեղքի վէրքը խոստովանութեամբ յայտնի է դառնում, արագ է բժշկւում, իսկ երբ [մեղաւորն] այն թաքցնում է սրտում եւ չի խոստովանում, նրա հոգին մեռնում է: Պատահում է, որ պալարը ծայր է տալիս ու բացւում է, բայց անցքը նեղ է լինում, եւ ամբողջ թարախը դուրս չի գալիս: Այդ պատճառով էլ բժիշկը նշտարով բացում է անցքը, որ ամբողջ թարախը դուրս վայթի: Այսպէս էլ, եթէ մեղաւորն իր մեղքերի վէրքը յայտնում է քահանայի

առաջ, բայց պալարի անցքը նեղ է թողնում, քանի որ իր մեղքերի չափը չի յայտնում, խոստովանահայրը, ով հոգեւոր բժիշկ է, հարցեր տալու միջոցով պիտի մեծացնի պալարի անցքը: Ինչպէս պատմում են, մի մարդ գալիս է խոստովանահօր մօտ եւ ասում. «Մի կղերականի եմ հարուածել»: Խոստովանահայրը հարցնում է. «Փայտո՞վ ես հարուածել, թէ՞ թրով»: Պատասխանում է. «Թրով»: [Քահանան] դարձեալ հարցնում է. «Թրի բերանո՞վ ես հարուածել, թէ՞ կողքով»: [Մարդը] պատասխանում է. «Բերանով»: [Քահանան] դարձեալ հարցնում է. «Վիրաւորե՞լ ես, թէ սպանել»: [Մարդը] պատասխանում է. «Սպանել եմ»: Խոստովանահայրն ասում է. «Ո՛վ թշուառական, սպանել ես եւ ասում ես՝ հարուածել եմ. որքա՛ն աւելի ծանր է սպանելը հարուածելուց»:

Նաեւ պէտք է իմանալ, որ մեղաւորը պէտք է չուշացնի խոստովանութիւնը՝ բազմաթիւ պատճառներով:

Առաջին պատճառն այն է, որ երբ մէկի տուն կրակ է ընկնում, տանտէրը չի յապաղում, այլ արագ հանգցնում է կրակը ջրով կամ քացախով: Այսպէս մահացու մեղքը դժոխային կրակ է, որն այրում է հոգին, ուստի պէտք է այն արագ հանգցնել խոստովանութեան ժամանակ արտասուքի ջրով կամ Քրիստոսի չարչարանքների քացախով, այլապէս կ՚այրի յաւիտեան:

Երկրորդ՝ մահը շարունակ սպասում է մարդկանց, եւ չգիտենք մահուան տեղն ու ժամանակը, թէ երբ ենք մեռնելու, ուստի պէտք է խոստովանութեամբ պատրաստ լինել, որովհետեւ շատերն են ծուլանում խոստովանել եւ յանկարծակի մեռնում ու դժոխք են իջնում:

Երրորդ՝ յիմար է նա, ով բազմաթիւ վնասներ հասցնող թշնամուն երկար պահում է իր տանը: Այսպէս սատանան մեր թշնամին է, եւ ով նրան իր տանն է պահում, մեծապէս վնասւում է: Եւ սա խիստ սոսկալի է, որովհետեւ սատանան ոչ միայն մեր թշնամին է, այլեւ Աստուծոյ: Երբ մէկը թագաւորի թշնամուն պահում է, թագաւորը, իմանալով այդ մասին, դաժան մահուամբ կորստեան է մատնում սա անողին: Հետեւաբար, պէտք է արագ գնալ խոստովանահօր մօտ, ով Աստուծոյ փոխանորդն է, եւ մատնել թշնամուն:

Չորրորդ՝ ով մահացու մեղքի մէջ է, սատանայի բերանում է եւ եթէ ծուլանում է խոստովանել, չի կամենում ազատուել նրա բերանից: Այսպիսի մարդն աւելի յիմար է, քան անասունը. որովհետեւ անասունը, երբ ընկնում է գիշատիչ գազանի բերանը, աղաղակ է բարձրացնում եւ փրկութեան հնար փնտրում, իսկ անմիտ մեղաւորը, շատ տարիներ

սատանայի բերանում լինելով, երբեք չի աղաղակում կամ փրկութեան հնար փնտրում: Ուստի սատանան շատերին կուլ է տալիս եւ իջեցնում դժոխք, որը սատանայի փորն է եւ լի է մեղքերով:

Հինգերորդ՝ ով ծանր հիւանդութիւն ունի, պէտք է արագ գնայ բժշկի մօտ եւ ցոյց տայ նրան [իր հիւանդութիւնը], որովհետեւ մահուանից յետոյ բժիշկը չի կարող օգնել: Իսկ հոգեւոր հիւանդութիւնն աւելի ծանր է, քան մարմնաւորը, ուստի պէտք է արագ գնալ բժշկի մօտ, ով խոստովանահայրն է, եւ խոստովանել, որովհետեւ մահուանից յետոյ խոստովանութիւնը չի կարող օգնել. դժոխքում գտնուողները յայտնապէս խոստովանում են իրենց մեղքերը դժոխքում, բայց դրանից օգուտ չունեն:

Վեցերորդ՝ երբ մէկը բանտարկուած է մահապատժի ենթարկուելու նպատակով, բանտի փակ դռան դէպքում չի կարող փախչել, իսկ եթէ [դուռը] բաց է, կարող է փախչել: Այսպէս ով մահացու մեղքի մէջ է, բանտում է եւ մահապարտ, իսկ բանտի դուռը մեղաւորի բերանն է, որը փակ չունի. երբ [մեղաւորը] խոստովանում է իր մեղքերը, նոյն ժամին մեղքի բանտից դուրս է գալիս: Ուստի յիմար են նրանք, ովքեր ծուլանում են խոստովանել մեղքերը:

Եօթերորդ՝ եթէ դրամափոխը կամ վաճառականը բացէր իր դանձերը եւ ամէնքին աղաղակէր թէ՝ «Ովքեր փող ունէք, բերէք, որ ես ոսկու եւ արծաթի հետ փոխանակեմ, եւ ովքեր անտաշ քար ունէք, բերէք, որ ես թանկարժէք քարի հետ փոխանակեմ», ապա մարդիկ, սա լսելով, չէին ծուլանայ, այլ արագ կը գնային: Այս վաճառականը խոստովանահայրն ու վարդապետն է, ում գանձատունը Եկեղեցին է, որը լի է բազմաթիւ ակներով ու մարգարտով: Ամէն օր քարոզելիս ձայնում է. «Ո՛վ մեղաւորներ, բերէք ձեր մեղքերը, որ կեղծ փող է, եւ ես ձեզ տամ ոսկի ու արծաթ, այսինքն՝ թողութիւն: Բերէք ձեր մեղքերն ու խստասրտութիւնը, որ քարից ծանր ու կարծր է, եւ առէք ձեզ մարգարիտ ու թանկարժէք քարեր, այսինքն՝ հրեշտակների փառքը»: Եւ չափազանց ծոյլ են նրանք, ովքեր փողը չեն փոխանակում ոսկու հետ: Եթէ մահուան օրն այսպիսի կեղծ փողից լինի մարդու անդուկում, այսինքն՝ հոգում, [այդ մարդը] կ՚ուղարկուի դժոխք: Եթէ մէկը կեղծ ոսկի է հատում, երբ թագաւորը նրան գտնի, իսկոյն կը սպանի: Ուստի պէտք չէ պահել մեղքերը, որոնք կեղծ փող են, այլ պէտք է արագ փոխել:

Ութերորդ՝ քանի դեռ մարդը մահացու մեղքի մէջ է, Աստուծոյ բարկութիւնը նրա վրայ է, եւ Աստուած Իր ձեռքին նետ ու աղեղ է

պահում մեղաւորին սպանելու համար, ինչպէս ասում է Դաւիթը. «Իր սուրը սրել եւ աղեղը լարել է» [Սաղմ. Է 13], եւ որքան մեղաւորը յամենում[11] է մահացու մեղքի մէջ, այնքան աւելի է հեռանում Աստծուց, իսկ Աստուծոյ նետը, այսինքն՝ դատաստանը, աւելի է հարուածում, եւ մեղաւորը չի կարող փախչել այդ նետից, այսինքն՝ Աստուծոյ բարկութիւնից, որովհետեւ Աստուծոյ նետը հասնում է երկնքից մինչեւ դժոխք, արեւելքից մինչեւ արեւմուտք, հիւսիսից մինչեւ հարաւ: Ինչպէս ասում է Սիրաքը. «Մի՛ յապաղիր դառնալու դէպի Տէրը եւ մի՛ յետաձգիր մինչեւ վաղը, որպէսզի յանկարծակի չհասնի Նրա բարկութիւնը եւ քեզ կորստեան չմատնի վրէժխնդրութեան օրը» [Սիր. Ե 8—10]: Ուստի պէտք է արագ հրաժարուել մեղքերից, որպէսզի Աստուծոյ բարկութիւնը վրէժխնդիր չլինի, եւ Նրա հետ հաշտուել խոստովանութեամբ՝ խոստովանահօր առաջ, ով Աստուծոյ փոխանորդն է:

Ովքեր չեն խոստովանում նախքան հիւանդութիւն ձեռք բերելը, յիմար են հինգ պատճառով:

Առաջին՝ երբ [հիւանդ ժամանակ] յայտնում են իրենց մեղքերը հոգեւոր բժշկի առաջ, չեն կարողանում կատարել նրա սահմանած խրատն ու պատիժը, քանի որ տկար լինելու պատճառով ոչ կարող են պահք պահել, ոչ աղօթել: Նշանակում է՝ պէտք է նախքան հիւանդանալը խոստովանել:

Երկրորդ՝ յաճախ հիւանդ ժամանակ [խոստովանողի] լեզուն կապուում է եւ չի կարողանում խօսել, եւ նոյնիսկ երբ լեզուն բացուում է, շատ ու խիստ ցաւերից եւ ընտանիքի համար մտահոգուելու պատճառով չի կարողանում յստակ խոստովանել, ինչպէս առողջ ժամանակ:

Երրորդ՝ երբ յապաղում ու չի խոստովանում, մինչեւ ծանր հիւանդութեան մէջ է ընկնում ու նոր խոստովանում մահուան ահից, այսպիսի խոստովանութիւնն ընդունելի չէ Աստուծոյ առաջ, որովհետեւ հարկադիր է եւ ոչ թէ կամաւոր: Օրինակ՝ զմուռսը, ասում են, երկու կերպով է լինում. մէկն այն է, որ ինքն է ծառից դուրս գալիս, միւսը՝ որ ուժ գործադրելով են հանում, երբ սրով ծակում են [ծառը]: Այն, որն ինքն է դուրս գալիս, շատ գեղեցիկ ու անուշահոտ է, բայց համը՝ դառը, ուստի սպանում է որդերը և մարմինն անապական պահում: Սա խորհրդանշում է խոստովանութիւնը, որը յոյժ գեղեցիկ հոտ ունի Աստուծոյ առաջ, բայց համը դառն է, այսինքն՝ խոստովանողն

11 Ցեւ Ցեւ. է:

ամաչում է յայտնել իր աղտեղութիւնները: [Խոստովանութիւնը] նաեւ սպանում է որդերը, այսինքն՝ գործուած մեղքերը, եւ անապական պահում մարմինը գալիք մեղքերից: Այս հոգեւոր զմուռսը, որ խոստովանութիւնն է, երբ կամաւոր է լինում, յոյժ գեղեցիկ է առողջ ժամանակ, բայց երբ [մարդը] յապաղում է մինչեւ մահացու հիւանդութիւն ձեռք բերելը եւ ապա՛ խոստովանում, [այսպիսի խոստովանութիւնը] հաճելի չէ: Այս մասին է ասում Սիրաքը. «Եթէ ողջ ու առողջ ես, խոստովանի՛ր, Աստծուն փա՛ռք տուր եւ ցնծա՛ Նրա ուրախութեամբ» [Սիր. ԺԷ 26]:

Չորրորդ՝ ով դանդաղում է խոստովանել մինչեւ մահուան օրն ու ծերութիւնը, պատահում է, որ մոռանում է իր մեղքերը, սակայն Աստուած եւ սատանան Նրա մեղքերը երբեք չեն մոռանում: Նաեւ՝ նոյնիսկ եթէ չի մոռանում, ամաչում է ծեր տարիքում խոստովանել երիտասարդ տարիքում գործած մեղքերը: Ուստի մեղքը գործելուց անմիջապէս յետոյ է պէտք խոստովանել այն:

Հինգերորդ՝ երբ քահանան գնում է հիւանդի մօտ, երկու բանի համար է դա անում՝ խոստովանեցնելու և Հաղորդութիւն տալու: Տունը լցուում է մարդկանցով, եւ այդ ժամանակ դժուար է երկար խոստովանեցնել, որովհետեւ մարդիկ դժուարութեամբ են դուրս գալիս, եւ եթէ անգամ դուրս են գալիս, հիւանդն ամաչում է երկար խոստովանել: Այս պատճառով էլ խոստովանութեամբ պէտք է պատրաստուել առողջ ժամանակ, որպէսզի հիւանդութեան դէպքում, երբ քահանան գնայ հիւանդին տեսնելու, խոստովանութիւնն ամբողջապէս լսի եւ ապա Հաղորդութիւն տայ:

Այլեւ՝ ովքեր Քառասնորդական պահքի ժամանակ խոստովանութիւնը յետաձգում են մինչեւ վերջին շաբաթը, մեծ յիմարութիւն են գործում հինգ պատճառով:

Առաջին՝ նախ պէտք է ձեռքերը լուալ եւ յետո՛յ հաց ուտել, որովհետեւ անպատշաճ է աղտոտ ձեռքերով հաց ուտել եւ յետոյ լուացուել: Այսպէս պահքն ու աղօթքը հոգեւոր կերակուր են. պէտք է նախ խոստովանութեամբ լուացուել եւ ապա՛ դրանք ուտել. յիմար են նրանք, ովքեր նախ ուտում են հոգեւոր կերակուրը եւ յետոյ լուացուում, այսինքն՝ ովքեր պահք են պահում եւ ապա Զատիկին մօտ խոստովանում: Որովհետեւ նախ պէտք է կարասը լուանալ եւ ապա՛ գինին նրա մէջ լցնել:

Երկրորդ՝ որովհետեւ եօթ շաբաթուայ աշխատանքը կորցնում են մի պահ տեւող աշխատանքի պատճառով, քանի որ խոստովանութիւ-

նից յետոյ պահուած մէկօրեայ պահքն աւելի արժէք ունի, քան քառասնօրեան, երբ մեղք ունեն եւ չեն խոստովանել:

Երրորդ՝ որովհետեւ նախ Աստուած կերակուր է պահանջում, այսինքն՝ խոստովանութիւնը, եւ այն ստանալուց յետո՛յ [այլ բաներ], քանի որ նախ խոստովանութիւն է պահանջում եւ ապա՛ պահք ու աղօթք, ինչպէս ասում է Դաւիթը. «Խոստովանութեամբ ներկայանանք Նրան» եւ ապա «սաղմոսներով աղաղակենք» [Սաղմ. Ղ Դ 2]: Երբ այս կարգը փոխում ես, քո հոգեւոր հացկերոյթը հաճելի չի թւում Աստծուն:

Չորրորդ՝ ովքեր պահքից յետոյ են խոստովանում, նման են նրանց, ովքեր նախ արտը հնձում են եւ յետո՛յ քաղհանում կամ այգու բերքը հաւաքում են եւ յետո՛յ [հողը] բրում: Որովհետեւ պահքը, աղօթքն ու ողորմութիւնը հունձ են, իսկ խոստովանութիւնը՝ քաղհանում, էտում եւ բրում:

Հինգերորդ՝ ովքեր պահքից յետոյ են խոստովանում, նման են նրանց, ովքեր սպեղանի են դնում [խոցուածի] տեղում, երբ նետի սլաքը ներսում է. նախ պէտք է մեղքի սլաքը հանել խոստովանութեամբ եւ յետո՛յ պահքի ու աղօթքի սպեղանին դնել [վէրքի վրայ], որպէսզի արագ առողջանայ: Սրանից երեւում է, որ չպէտք է յապաղել խոստովանելու, այլ պէտք է արագապէս խոստովանել: Երբ ջերմութիւնից այրուող հիւանդի մազերն ածիլում են, ցաւերից արագ է թեթեւանում: Այդպէս երբ մահացու մեղքերից այրուող մեղաւորի հոգին մաքրւում է խոստովանութեան ածելիով, զօրանում է: Այս մասին է ասում Եզեկիէլի [մարգարէութեան] հինգերորդ գլուխը. «Մարդո՛ւ որդի, վերցրու յեսանով սրուած սուր, դրանով մաքրիր գլուխդ ու մօրուքդ, վերցրու կշեռք ու կշռիր մազերդ: Դրանց մէկ չորրորդ մասը կրակով այրիր եւ սուրդ քաշիր դրա վրայից: Դրանից մի փոքր վերցրու եւ ծրարիր հագուստիդ քղանցքում» [Եզեկ. Ե 1—3]: Մազն այլաբանօրէն ցոյց է տալիս մեղքերը, եւ ածելի սուրը՝ խոստովանութիւնը, խոստովանահայրն էլ վարսավիրն է, ով պէտք է գլուխը, այսինքն՝ մեղաւորի միտքը, մաքրի բոլոր մեղքերից: Այդ մեղքերը պէտք է չորս մասի բաժանել: Մի մասը մեղաւորների աղտեղութիւնն է. այդ մասը պէտք է կրակով այրել, այսինքն՝ մեղքերի աղտեղութիւնը մաքրել աստուածային սիրոյ կրակով: Երկրորդ մասը մեղքի գործն է. այս մասը պէտք է խոստովանութեան սրով մաքրել եւ պէտք է ոչ միայն մեղքի գործը խոստովանել, այլեւ բոլոր ծանրագոյն պարագաները: Օրինակ՝ գողութիւնը մահացու մեղք է, սակայն շատ պարագաներ ունի, որովհետեւ ով եկեղեցուց է ինչ-որ բան գողացել, սա աւելի մեծ [մեղք] է, կամ եթէ գողութիւնը կատարել է պահքի եւ տօնական օրերին: Կամ էլ շա՞տ է գողացել, թէ սակաւ, հարուստի՞ց, թէ աղքատից, շա՞տ անգամ է սա արել, թէ սակաւ. այսպէ՛ս պէտք է խոստովանել մեղքի պարագաները: Երրորդ մասը մեղքի հաճոյքն է, որն այլեւս պիտի չընկնի սրտի մէջ, իսկ եթէ սատանան անցած մեղքի հաճոյքը դարձեալ գցի [մարդու] մտքի մէջ, վերստին պէտք է խոստովանել եւ ամօթ ու նախատինք կրել: Չորրորդ մասը մեղքի գարշելի հոտն է: Այս մասը հարկաւոր է հագուստի մէջ ծրարել, այսինքն՝ յիշել մեղքի գարշելի հոտը եւ Աստուծոյ առաջ մեզ խոտան ու գարշելի համարել: Իսկ խոստովանութեան սուրը պէտք է սրել յեսանով, այսինքն՝ Աստուծոյ դատաստանի երկիւղով. որովհետեւ թէ՛ խոստովանողը եւ թէ՛ խոստովանութիւնն ընդունողը պէտք է երկիւղեն Աստծուց, որպէսզի չձանձրանան՝ խոստովանողը՝ ասելուց, իսկ խոստովանահայրը՝ հարցնելուց: Եւ մեր Քրիստոս Աստծուն փառք, պատիւ եւ զօրութիւն յաւիտեանս. ամէն:

ՁՄԵՌՆ ՀԱՏՈՐ

ՔԱՐՈԶ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ. ԱՍՈՒԱԾ ՔԱՌԱՄՆՈՐԴԱԿԱՆ ՊԱՀՔԻՑ ԱՌԱՋ

(ԳԼՈՒԽ ԿԹ)

«Լուացուէ՛ք, մաքրուէ՛ք, չարիքները հեռացրէ՛ք ձեր անձից»:
[Եսայի Ա 16]

Աղտեղութիւնից մաքրուելը ոչ միայն կենդանի մարդկանց մէջ ենք տեսնում, այլեւ աշխարհի անկենդան տարրերում: Ծովն ու գետերն աւելորդ ու աղտեղի նիւթերն իրենցից հեռացնում են՝ ալիքներով դէպի ափը մղելով, գինին կարասում եփւում ու պարզւում է, եւ կերակուրները, կրակով եփուելով, աւելորդը հեռացնում են իրենցից: Ուրեմն որքա՜ն առաւել մարդը պէտք է մեղքերի աւելորդ աղտեղութիւնները հեռացնի իրենից ու մաքրուի:

Որ մաքրութիւնը գեղեցիկ է, յայտնի է դառնում չորս օրինակով: Նախ՝ երբ կեղտոտուած հագուստը ջրով լուանում ենք, գեղեցկանում է: [Սրա համար] երեք բան է հարկաւոր՝ տաք ջուր, օճառ եւ ձեռքով տրորում: Այդպէս էլ մեր հոգին մաքրելու համար արտասուքը տաք ջուրն է, ողորմութիւնը՝ օճառը, [իսկ տրորումը՝ այն], որ մեր մարմինը նեղում ու չարչարում ենք պահքով ու աղօթքով եւ մեր հոգին մաքրում մեղքերից: Երկրորդ օրինակը ժանգոտ հայելին է, որ մաքրւում է զմռնիտով եւ ձէթով: Այսպէս մեր հոգին, որն Աստուծոյ պատկերն է եւ իր մէջ արտացոլում է բոլոր բարի բաները, մեղքերից ժանգոտուելով՝ կուրանում է: Զէթն Աստուծոյ շնորհն է, իսկ [զմռնիտը՝] պահքն ու մարմնի չարչարանքը, որոնք վերստին պայծառացնում են մեզ, եւ տեսնում ենք Աստծուն ու մեր մէջ կրում բոլոր բարի բաները: Երրորդ օրինակը սպիտակ արծաթն է, որը «դրամ» ենք կոչում: Նրա միջի ժանգը դուրս է գալիս երես, եւ արծաթը սեւանում է, բայց կրակի մէջ գցուելով՝ վերստին պայծառանում է: Այդպէս էլ մեր հոգին Աստուծոյ յատակ պատկերով [դրամի պէս] է, քանի որ դրամի վրայ թագաւորի պատկերն է դրոշմւում. այն սրտից առաջ եկած զանազան մեղքերից

սեւանում է, եւ Աստուծոյ պատկերը կորչում է նրա մէջ, իսկ երբ մեր մէջ բորբոքում ենք Աստուծոյ սէրը, մեղքերի ժանգն այրւում է մեր մէջ, եւ պայծառանում ենք: Չորրորդ օրինակը մեր տունն է, որի մէջ եղած աւելորդն ալւում ենք, փոշին թափում եւ անօթները լուանում: Այդպէս մեր հոգին Աստուծոյ տունն է. մեծամեծ ու աւելորդ մեղքերը պէտք է խոստովանութեամբ՝ իբրեւ աւելով, մաքրել, փոշետեսակ մանր մեղքերը զղջմամբ թօթափել, իսկ մարմնական աղտեղութիւններն ապաշխարութեամբ լուանալ, եւ այդուհետեւ Աստծուն ու սուրբ հրեշտակներին պիտանի կը լինենք:

Իսկ ինչպէ՞ս ենք մաքրւում մեղքերից: Մաքրուելու երկու եղանակ կայ: Մէկն այն է, որ մեզնից հեռացնում ենք աւելորդ չարն ու մեղքերը և պակասող բարին ու արդարութիւնն առնում մեր մէջ: Այսպէս՝ մտքից հանում ենք չար իմացումը եւ բերում բարի խոկումը, կամքից հանում ենք չարը եւ բարի կամքը ներս առնում, սրտից չար խորհուրդն ենք արտաքսում եւ բարի խորհուրդներ ժողովում, չար ցանկութիւնը հատում ենք եւ հոգեւոր ու բարի ցանկութիւն ձեռք բերում: Այսպէս լեզուից սուտն ենք կտրում եւ ճշմարիտը խօսում, հայհոյելը, անարգելը եւ անէծքը հանում ենք եւ օրհնութիւններ ու աղօթքներ մեր լեզուին առնում: Ամէն տեսակ չարութիւն, որ լեզուն խօսում է՝ յիշոց, սուտ վկայութիւն, սուտ երդում, խեղկատակութիւն, ծաղր, մատնութիւն, դատարկաբանութիւն եւ այլն, պէտք է լեզուից հեռացնել եւ բարիով փոխարինել: Նոյն կերպ [պէտք է վարուել] նաեւ միւս զգայարանների հետ: Աչքերն անմաքուր կերպով նայելուց պէտք է զսպել եւ [գործածել] բարի նայուածքների ու արտասուքի համար: Ականջով աստուածային պատուիրանները պէտք է լսել եւ այն բանալ եկեղեցում: Ոտքերը չարից խոտորեցնել եւ դէպի բարին ընթանալ տալ: Ձեռքը գողութիւնից ու զրկելուց պահել եւ [գործածել] աղօթքի ու աղքատներին ողորմութիւն տալու համար: Բերանը [զսպել] ուտելու եւ խմելու մէջ եւ [վարժեցնել] պահքի, քաղցի ու ծարաւի: Մնացած բոլոր [մեղքերը] նոյնպէս [պէտք է փոխարինել հակառակ առաքինութեամբ՝] ծուլութիւնը փոխել ջանասիրութեան, հպարտութիւնը՝ խոնարհութեան, ատելութիւնը՝ սիրոյ եւ հաշտութեան: Սա պահքի մաքրութեան առաջին եղանակն է, ինչպէս խրատում է մարգարէն. «Լուացուէ՛ք, մաքրուէ՛ք»:

Մաքրութեան երկրորդ եղանակը խոստովանութիւնն է: Այսօր՝ Մեծ պահքի սկզբում, իւրաքանչիւր մարդ պէտք է նախ խոստովա-

նի մեղքերը եւ ապա՛ Քառասնորդական պահքի մէջ մտնի: Եւ սա՝ չորս պատճառով: Նախ՝ որովհետեւ այս պահքը մեղքերի ապաշխարութեան համար է, իսկ ապաշխարութիւնը երեք մաս ունի. նախ՝ զղջում, երկրորդ՝ խոստովանութիւն, եւ երրորդ՝ մեղքերի հատուցում պահք, աղօթք, ողորմութիւն եւ այլն: Ուստի ամբողջ պահքը մեր գործած մեղքերի դիմաց հատուցում է: Այժմ պէտք է նախ մտքով զղջալ եւ բերանով խոստովանել, իսկ այնուհետեւ մարմնով ապաշխարել ու հատուցել: Որովհետեւ ինչպէս որ խորհուրդների մէջ նախ մկրտութիւնն է, եւ յետոյ՝ միւսները, այդպէս բարի գործերի մէջ առաջինը խոստովանութիւնն է, եւ յետոյ՝ միւսները: Երկրորդ՝ ինչպէս երբ մէկը թագաւորին ինչ-որ աղերսով դիմում է, սկուտեղը մաքրում ու յետոյ է [նրանով] նուէր մատուցում, այլապէս [թագաւորը] կ՚անարգի աղերսն ու կը բարկանայ, այդպէս մեր թագաւորն Աստուած է, աղերսը՝ Քառասնորդական պահքն ու աղօթքները, եւ սկուտեղը մեր սիրտն է. ուստի նախ պէտք է սիրտը զղջմամբ ու խոստովանութեամբ լուանալ եւ յետո՛յ պահք պահել կամ աղօթել, որպէսզի [սրանք] Աստծուն հաճելի լինեն: Որովհետեւ խոստովանութեամբ պահուած մէկօրեայ պահքն առաւել հաճելի է Աստծուն, քան քառասնօրեան առանց խոստովանութեան: Երրորդ պատճառ՝ երբ մէկն անօթը դրսից լուանում է, իսկ ներսից [կեղտոտ] թողնում, անարդելի է եւ ծաղրի արժանի, ինչպէս Տէրն ասաց փարիսեցիներին, ովքեր կեղծաւորաբար էին պահք պահում մարմնով [Մատթ. Ի Գ 25—26]: Այսպէս պահքը մարմնի մաքրութեան համար է, խոստովանութիւնը՝ հոգու, եւ զղջումը՝ մտքի: Ուստի պէտք է նախ խոստովանել ու հոգին մաքրել եւ ապա՛ պահք պահել ու մարմինը մաքրել: Չորրորդ՝ ինչպէս որ բժիշկը հիւանդին նախ ամբողջապէս զննում է եւ ապա՛ դեղ տալիս, իսկ յետոյ էլ վնասակար բաներից հեռու պահում, այսպէս հոգին մեղքերով է հիւանդ, ուստի նախ պէտք է մեղքերի համար զղջալ մտքում, ապա խոստովանելով՝ մեղքերից մաքրուել, իսկ յետոյ վնասակար մեղքերից հեռու մնալ ու բարին մեր մէջ առնել: Այս չորս պատճառով է պէտք նախ խոստովանել Քառասնորդական պահքի սկզբում եւ ապա մաքրութեամբ մտնել պահքի մէջ, ինչպէս ասում է [մարգարէն]. «Լուացուէ՛ք, մաքրուէ՛ք»:

Խոստովանութեան մասին երեք բան է պէտք ասել: Առաջին՝ թէ որն է խոստովանութեան ժամանակը, երկրորդ՝ որն է խոստովանութեան կերպը, երրորդ՝ որն է խոստովանութեան օգտակարութիւնը:

Առաջինի մասին պէտք է իմանալ, որ խոստովանութեան ժամանակի համար երեք ընտրութիւն կայ: Առաջինը կեանքի ժամանակն է, որովհետեւ խոստովանում ենք, քանի դեռ ողջ ենք՝ թէ՛ երեխայ ժամանակ, թէ՛ ծեր, մինչեւ վախճան՝ վերջին շունչը, եւ թողութիւն ենք ստանում, իսկ մահուանից յետոյ [թողութիւն չկայ]: Նախ՝ որովհետեւ այստեղ մեղաւորի համար ողորմութեան դուռն է բաց, իսկ մահուանից յետոյ՝ արդարութեան: Երկրորդ՝ որովհետեւ այստեղ [մարդը] կամովին է խոստովանում, իսկ այնտեղ՝ ակամայ, այն պատճառով, որ մօտեցել է տանջանքներին: Երրորդ՝ որովհետեւ այստեղ է [խոստովանութեան] պատշաճ ժամանակը, ինչպէս գրում է առաքեալը. «Ահա՛ ընդունելի ժամանակը, ահա՛ փրկութեան օրը» [Բ Կոր. Զ 2], իսկ այնտեղ ժամանակն անցել է, եւ չեն կարող խոստովանել, ինչպէս ասում է մարգարէն. «Ոչ թէ մեռեալները կը խոստովանեն Քեզ» [Եսայ. ԼԸ 18]: Սա առաջին ընտրութիւնն է. [խոստովանել], քանի դեռ ողջ ենք:

[Խոստովանութեան] երկրորդ ժամանակը մեղքը գործելուց յետոյ խոստովանելն է: Ինչպէս որ դեղը հիւանդանալուց յետոյ է անհրաժեշտ, եւ սպեղանին՝ վէրք ձեռք բերելուց յետոյ, այդպէս հոգին մեղքերից հիւանդանում ու վիրաւորւում է, եւ խոստովանութիւնը՝ բժշկում, իսկ մեղանչելուց առաջ խոստովանութեան կարիք չկայ:

Երրորդ ընտրութիւնն այն է, որ շարունակ խոստովանում ենք, քանի որ շարունակ էլ մեղանչում ենք, ուստի վանքերում սահմանուած է խոստովանել ամէն օր՝ առաւօտեան եւ երեկոյեան: Իսկ աշխարհականները պէտք է ամէն կիրակի խոստովանեն, քանի դեռ մեղքը թարմ է եւ յիշողութեան մէջ, այլապէս եթէ շատ ժամանակ անցնի, [մարդը] մեղքը կը մոռանայ եւ չի կարողանայ խոստովանել, ուստի մեղքը չի ներուի: Բայց եթէ [ամբողջ տարին] ամէն կիրակի հնարաւոր չլինի, ապա [գոնէ] Քառասնորդական պահքի ժամանակ ամէն կիրակի պէտք է խոստովանել: Իսկ եթէ սա էլ չեն կարող, պէտք է, ըստ կանոնների, մի անգամ խոստովանել պահքի սկզբում, մի անգամ էլ՝ վերջում՝ Զատիկին մօտ: Եւ սա՝ երկու պատճառով: Նախ՝ սկզբում խոստովանում ենք, որ Աստուած ամբողջ տարուայ մեղքերը ների, իսկ վերջում՝ որ ների Քառասնորդական պահքի [ընթացքում գործուած մեղքերը]: Երկրորդ՝ սկզբում խոստովանում ենք, որ պահքի մէջ մաքրութեամբ մտնենք, իսկ վերջում՝ որ սբ Հաղորդութիւնը ճաշակենք: Այստեղից պարզ է դառնում, որ այսօր՝ պահքից անմիջապէս առաջ, պէտք է բոլորը խոստովանեն,

ինչպէս Զատիկից առաջ: Սա՝ այն մասին, թէ որն է խոստովանութեան ժամանակը:

Երկրորդ՝ թէ որն է խոստովանութեան կերպը: Ասենք, որ խոստովանութիւնը կատարւում է չորս կերպ: Նախ՝ որ կամովին ենք խոստովանում: Երկրորդ՝ որ դատապարտում ենք մեզ: Երրորդ՝ որ յայտնում ենք բոլոր մեղքերը եւ չենք թաքցնում: Չորրորդ՝ որ տրտմութեամբ եւ արտասուքով ենք խոստովանում: Առաջինի մասին, որ մեր կամքով պիտի խոստովանենք, ինչպէս ասում է Դաւիթը. «Ես իմ կամքով կը խոստովանեմ Քեզ» [Սաղմ. ԻԷ 7], [պէտք է ասել], որ Աստուած, Ով կամենում է, որ «ամէն մարդ փրկուի եւ ճշմարտութեան գիտութեանը հասնի» [Ա Տիմ. Բ 4], պահանջում է, որ մեր կամքն օգնի մեր փրկութեանը: Եւ սա՝ չորս պատճառով: Նախ՝ որպէսզի չկորչի մեր անձնիշխան կամքը, որով ենք Աստուծոյ պատկեր եւ որով ենք տարբերւում բոլոր կենդանիներից: Երկրորդ՝քանի որ մեր կամքով ենք չարը գործել, մեր կամքով էլ պիտի գործենք բարին: Երրորդ՝ որովհետեւ կամովին կատարուածն է վարձատրելի, իսկ մեր կամքին հակառակ եղածը հարկադիր է եւ վարձատրելի չէ: Չորրորդ՝ որովհետեւ կամովին կատարուած գործը սիրելի է մեզ եւ հաստատուն է մնում, իսկ մեր կամքին հակառակ եղածն ատելի է եւ անհաստատ: Այս պատճառներով էլ Աստուած պահանջում է կամաւոր զղջում եւ կամաւոր խոստովանութիւն ու մեղքերից հեռացում: Ուստի բոլոր մարդիկ՝ ծեր թէ երեխայ, տղամարդ թէ կին, պիտի սովորեն խոստովանելու կերպը, իրենց կամքով զան քահանայի մօտ եւ իրենց լեզուով խոստովանեն: Որովհետեւ ճիշտ չէ այն, որ նրանք նստում են, քահանաները խոստովանութիւնն ասում, իսկ նրանք՝ կրկնում. այնպէս է ստացւում, թէ քահանան է նրանց առաջ խոստովանում: Այլ եթէ [խոստովանողը] տգէտ է կամ ամօթխած, քահանան նախ պէտք է սովորեցնի ընդհանրական խոստովանութիւնը, եւ այդ ժամանակ խոստովանողն ինքը միշտ կ՚ասի այն:

[Խոստովանութեան] երկրորդ կերպն այն է, որ պէտք է քահանայի առաջ ինքներս մեզ դատապարտենք եւ ոչ թէ ընկերոջը, մեր մեղքերն ասենք եւ ոչ թէ ընկերոջ, ինչպէս ասում է առակը. «Արդար մարդը չարախօսում է իր անձից» [Առակ. ԺԸ 17]: Այս խօսքը չորս իմաստ է արտայայտում: Առաջինն՝ երբ գալիս խոստովանում ենք քահանայի առաջ, մեր անձը պիտի դատապարտենք եւ ոչ թէ ուրիշների, որպէսզի մեր մեղքերին թողութիւն գտնենք: Եթէ ուրիշներին դատապարտենք, ուրիշների մասին չարախօսող ու բամբասող կը լինենք եւ թո-

ղութիւն չենք գտնի, ինչպէս որ Ադամը պատճառ բերեց Եւային, վերջինս էլ՝ օձին: Երկրորդ՝ [մեր անձից] չարախօսելը նա է, որ մեր մեղքերը ճշմարտութեամբ ենք ասում, որովհետեւ եթէ թաքցնենք ու սուտ խօսենք, թողութիւն չենք ստանայ եւ կրկնակի մեղքի պարտապան կը դառնանք. մէկը՝ մեր ունեցած մեղքի, միւսը՝ որ ստում ենք, ինչպէս որ մարմնաւոր դատաւորների առաջ նոյնպէս ստախօսին կրկնակի են դատապարտում: Մեղքն այսպէս է ներւում. մեղաւորն ունի մեղքն ու պատիժը, իսկ քահանան՝ իշխանութիւն եւ շնորհ. իշխանութեամբ ներում է մեղքը, իսկ շնորհով [ազատում է] պատժից: Երրորդ՝ բոլոր մեղքերն այսպէս են ներւում. երբ մէկը սրտում զղջում է եւ բերանով ազնուօրէն խոստովանում, սրտի զղջման արդիւնքում ներւում է մեղքը, իսկ ազնուօրէն խոստովանելու արդիւնքում վերացւում է պատիժը: Բայց երբ մեղքը թաքցնում են ու սուտ խօսում, եւ միտքը զղջում չի ունենում, այդ ժամանակ մեղքը չի ներւում, պատիժն էլ [չի վերացւում]: Որովհետեւ խոստովանութեան շնորհը սուտ խօսքի եւ անզեղջ կամքի վրայ չի ներգործում, ինչպէս որ լոյսը խաւարած աչքի վրայ չի ազդում: Չորրորդ՝ երբ [խոստովանողը] թաքցնում է իր մեղքը, ոսոխը, ասես դատաւորների առաջ, յանդիմանում է, եւ երբ [խոստովանողը] սուտ է խօսում, միւս ոսոխն է յանդիմանում: Իսկ ո՞րն է ոսոխը խոստովանութեան ժամանակ. մեզ յանդիմանող խղճմտա՛նքն է: Շնորհը չի ներգործում սուտ լեզուի վրայ նաեւ այն պատճառով, որ սուտը «սատանայ հօրից է» [Յովհ. Ը 44], իսկ թողութեան շնորհը՝ Աստծուց, եւ «չկայ առնչութիւն Քրիստոսի եւ Բելիարի միջեւ, ոչ էլ՝ լոյսի եւ խաւարի» [Բ Կոր. Զ 14—15]: Հետեւաբար, խոստովանելիս պէտք է ճիշտ խօսել եւ մեղքերը չթաքցնել քահանայից, այլ զղջմամբ ասել ամէն ինչ:

[Խոստովանութեան] երրորդ կերպն այն է, որ յայտնում ենք բո՛լոր մեղքերը եւ չենք թաքցնում [որեւէ մեղք]: Այս մասին է ասում առակախօսը. «Ով թաքցնում է իր մեղքերը, յաջողութիւն չի ունենայ, իսկ ով յայտնում է, սիրելի կը լինի» [Առակ ԻԸ 13]: Աստուած եւ բոլոր մարդիկ կամենում են, որ մեղաւորը զղջայ եւ մեղքը յայտնի, որովհետեւ խոստովանութեան մէջ երեք առաքինութիւն կայ. նախ՝ խոնարհութիւն, երկրորդ՝ ճշմարտութիւն, երրորդ՝ մեղքի հանդէպ ատելութիւն, եւ սրանք սիրելի են թէ՛ Աստծուն, թէ՛ մարդկանց: Մեղքի հանդէպ ատելութիւնը սրտով զղջալու մէջ է, ճշմարտութիւնը՝ խօսքով խոստովանելու, իսկ խոնարհութիւնը՝ [մեղքի] դիմաց հատուցում կատարելու: Սրանք երեքը երեւում են նաեւ [միայն] խոստովա-

նութեան ժամանակ, երբ մեղաւորը խոնարհւում է քահանայի առաջ եւ սրտի զղջմամբ ամէն ինչ ճշմարտութեամբ խոստովանում քահանային: Մեղքը թաքցնելու մէջ [եւս] երեք վնասակար բան կայ. նախ՝ հպարտութիւն, երկրորդ՝ սուտ ու խաբէութիւն, երրորդ՝ մեղքի հանդէպ սէր: Այս պատճառով [մարդը] չի խոստովանում, եւ նրան չեն ներում ո՛չ Աստուած, ո՛չ մարդիկ, որովհետեւ գործած մեղքերի վրայ աւելացնում է նաեւ այդ երեք մեղքերը, ինչպէս որ Աստուած չներեց ո՛չ Ադամին, ո՛չ Կայէնին, երբ ծածկեցին իրենց յանցանքը, եւ Ադամին դատապարտելով՝ հանեց փափկալից դրախտից, իսկ Կայէնին անիծեց երկրի վրայ[12]: Այդպէս նաեւ Աքարն իր գողութեան մեղքը թաքցրեց Յեսուից, ուստի քարկոծուեց[13]: Այլեւ Անանիան ու Սափիրան կալուածքի [գումարի] գողութիւնը թաքցրին եւ Պետրոսից դատապարտուեցին ու մեռան[14]: Մինչդեռ երբ Դաւիթ մարգարէն յայտնեց իր մեղքը եւ ասաց. «Մեղանչեցի, Տէր», Նաթանը պատասխանեց. «Տէրն էլ ներեց քո մեղքը, եւ չես մեռնի» [Բ Թագ. ԺԲ 13]: [Դաւիթն] այսպէ՛ս սիրելի դարձաւ Աստծուն: Առաքեալը մեղքի համար զղջացած կորնթացի երիտասարդի մասին գրում է. «Վերստի՛ն սէր հաստատէք նրա հանդէպ» [Բ Կոր. Բ 8], [եւ երիտասարդն] այդպէ՛ս սիրելի դարձաւ մարդկանց: Նմանապէս էլ ամէն ոք, ով խոստովանում է մեղքերը, սիրելի է դառնում Աստծուն ու մարդկանց, իսկ ով թաքցնում է, դառնում է ատելի եւ դատապարտւում Աստծուց ու մարդկանցից, ինչպէս ցոյց տրուեց: Այս պատճառով էլ պէտք է մեր բոլո՛ր մեղքերը խոստովանենք քահանայի առաջ:

[Խոստովանութեան] չորրորդ կերպն այն է, որ խոստովանում ենք տրտմութեամբ ու արտասուքով: Սա նոյնպէս չորս պատճառ ունի: Նախ՝ քանի որ ուրախութեամբ գործեցինք մեղքը, պիտի տրտմութեամբ խոստովանենք: Երկրորդ՝ տրտմութիւնը ցոյց է տալիս, որ [մեղանչած մարդը] զղջում է մեղքի համար եւ ատում այն: Երրորդ՝ տրտմութիւնը ցոյց է տալիս այն, որ մեղաւորները դատաստանի ժամանակ լինելու են Քրիստոսի ձախ կողմում եւ սրտաբեկ ու տրտմերես՝ չեն համարձակուելու վեր նայել Քրիստոսի երեսին: Որովհետեւ նստած խոստովանահայրը խորհրդանշում է դատաստանի աթոռին նստած Քրիստոսին, եւ խոստովանողը նստում է նրա ձախ կողմում, ինչպէս մեղաւորները՝ Քրիստոսի ձախ կողմում, եւ գլուխը խոնարհեցրած, աչքերը փակած ու ձեռքերն իրար կցած է խոստովանում: Իսկ արտասուքը խոստովանութեան ժամանակ ցոյց է տալիս [խոստովանողի] զղջացած սրտի ջերմութիւնը, որից գոլորշին, բարձրանալով դէպի գլուխը, արտասուք է հոսեցնում: Երկրորդ՝ արտասուքը լուանում է մեղքերը, ինչպէս տաք ջուրը՝ հագուստը, ինչպէս ասուեց վերեւում: Երրորդ՝ արտասուքի ջուրը հանգցնում է մեղքի կրակը: Ուրեմն՝[այս] չորսն են խոստովանութեան կերպերը:

Այժմ խօսենք երրորդ գլխի մասին, թէ որն է խոստովանութեան օգտակարութիւնը: Վարդապետներն ասում են, որ խոստովանութիւնը բազմաթիւ օգուտներ է տալիս, բայց ես տասը գլխով կը ներկայացնեմ դրանք: Առաջին՝ ինչ էլ գործում ենք՝ պահեցողութիւն, աղօթք, ողորմութիւն եւ այլն, խոստովանութեամբ է Աստծուն հաճելի դառնում, եւ առանց խոստովանութեան ոչ մի բարի գործ ընդունելի չէ Աստուծոյ առաջ: Երկրորդ՝ խոստովանութեամբ արժանանում ենք Աստուծոյ շնորհին, որովհետեւ առանց Աստուծոյ շնորհի մարդկանց մեղքը չի ներւում, ուստի առաքեալն ասում է. «Ուր շատացաւ մեղքը, այնտեղ նաեւ շնորհը շատացաւ» [Հռոմ. Ե 20], այսինքն՝ մեղքերի խոստովանութեամբ շնորհ ենք ընդունում: Երրորդ՝ խոստովանութեամբ տեսնում ենք Աստծուն՝ այսպէս. քանի որ մեղքը մեզ համար խաւար է, երբ խոստովանութեամբ մաքրում ենք մեր միտքը, տեսնում ենք Աստծուն՝ ըստ այսմ. «Երանի՜ նրանց, որ մաքուր են սրտով, քանզի նրանք Աստծուն կը տեսնեն» [Մատթ. Ե 8]: Չորրորդ՝ խոստովանութեամբ ծածկւում է մեր մեղքն Աստծուց, Ով ծածկագէտ է եւ տեսնում է սիրտն ու քննում երիկամները[15]: [Դաւիթ] մարգարէն ասում է. «Իմ չգործածները տեսան Քո աչքերը» [Սաղմ. ՃԼԸ 16], սակայն խոստովանուած մեղքերն Աստուած այլեւս չի տեսնում ու չի յիշում: Այս մասին է ասում Դաւիթը. «Երանի նրան, ում մեղքերին թողութիւն եղաւ, եւ ծածկուեցին նրա բոլոր յանցանքները» [Սաղմ. ԼԱ 1]: Հինգերորդ՝ [խոստովանութիւնը] յաւիտենական պատիժը դարձնում է ժամանակաւոր, որովհետեւ մեղքերը յաւիտեան տանջելու են մեզ, սակայն երբ խոստովանում ենք, քահանան մի փոքր ապաշխարութիւն է նշանակում՝ պահք, աղօթք եւ ողորմութիւն, եւ մարդն ազատւում է յաւիտե-

12 Տես Ծն. Գ, Դ:
13 Տես Յես. Է:
14 Տես Գործ. Ե 1—11:
15 Տես Սաղմ. Է 10:

նական տանջանքներից: Վեցերորդ՝ մեղաւոր մարդը երկու կապանքի մէջ է. մէկը [Եկեղեցու] հայրերի կանոններն են, միւսը՝ Աստուծոյ պատուիրանները. երբ խոստովանում է քահանային, նրա երկու կապանքներն էլ արձակւում են: Երբ [քահանան] ասում է. «Թող Տէր Աստուած ների քո յանցանքները», արձակում է Աստուծոյ պատուիրանների կապանքը, իսկ [երբ ասում է]. «Ես իմ կարգի իշխանութեամբ արձակում եմ քեզ», ազատում է նրան հայրերի կանոնների կապանքից ու անէծքից: Եօթերորդ՝ խոստովանութիւնը փակում է դժոխքի դուռը. որովհետեւ մեղքերի մէջ գտնուող մարդը կանգնած է դժոխքի դռան առաջ, ինչպէս ասում է Դաւիթը. «Կեանքս մօտեցաւ դժոխքի դռներին» [Սաղմ. ՁԷ 4], եւ շրջապատուած է դեւերով, որոնք նրան քաշում են դէպի դժոխք, ինչպէս ասում է մարգարէն. «Ամէն կողմից ամբարիշտներ են շրջում» [Սաղմ. ԺԱ 9]: Բայց երբ մեղաւորը բերանը բացում է քահանայի առաջ եւ ասում. «Խոստովանում եմ Աստուծոյ եւ սրբուհի Աստուածածնի առաջ» եւ այլն, նոյն ժամին դժոխքի դուռը փակւում է, եւ բոլոր դեւերը՝ կորչում, ուստի չեն կարող նրան պահել դժոխքում: [Խոստովանութեան] ութերորդ օգուտն այն է, որ բացում է արքայութեան փակուած դուռը մեղաւորի առաջ: Որովհետեւ արքայութեան դուռն այնպէս է փակ մեղաւորի առաջ, ինչպէս որ Ադամի առաջ փակուեց, նա արտաքսուեց դրախտից, եւ սերովբէները պահպանում էին Կեանքի ծառի ճանապարհը[16]: Իսկ երբ խոստովանում ենք մեր մեղքերը քահանայի առաջ, եւ նա արձակում է տալիս, իսկոյն արքայութեան դուռը բացւում է մեր առաջ, ինչպէս՝ աւազակի[17]: Օրհնեալ է այսպիսի բանալին, որ դժոխքի դուռը փակում է եւ արքայութեան դուռը բացում: Իններորդ՝ խոստովանութեամբ Աստուած հաշտւում է մեղաւորի հետ, որովհետեւ քանի դեռ մարդը մեղքերի մէջ է, անհաշտ խռովութիւն կայ Աստուծոյ եւ մարդու միջեւ, եւ ոչ հրեշտակները, ոչ էլ սրբերը չեն կարող հաշտեցնել նրանց: Սակայն երբ [մարդը] խոստովանում է, նոյն ժամին Աստուած հաշտւում է եւ սիրով ընդունում, գիրկն առնելով համբուրում մեղաւորին, ինչպէս անառակ որդուն, ով երբ ասաց. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի առաջ», երկնաւոր Հայրը ելաւ նրան ընդառաջ եւ համբուրեց նրան եւ այլն[18]: Տասներորդ օգուտն այն է, որ քանի

16 Տես Մտ. Գ 24:
17 Տես Ղուկ. ԻԳ 43:
18 Տես Ղուկ. ԺԵ:

դեռ մարդը մեղքերի մէջ է, Աստուծոյ Կեանքի գրքից մերժուած է եւ [նրա անունը] ջնջուած, ինչպէս ասում է Դաւիթը. «Նրանք կը ջնջուեն Քո կեանքի գրքից եւ Քո արդարների հետ չեն գրուի» [Սաղմ. ԿԸ 29]: Բայց երբ ճշմարտութեամբ խոստովանում է, [նրա անունը] նոյն ժամին գրւում է Կեանքի գրքում, ինչպէս ասում է Տէրը. «Նրա համար մի՛ ուրախացէք, որ դեւերը հնազանդւում են ձեզ, այլ ուրախացէք, որ ձեր անունները գրուած են Կեանքի գրքում» [Ղուկ. Ժ 20]: Ահա այս ամէնը եւ սրանից էլ աւելին է խոստովանութեան օգտակարութիւնը, ինչ պատճառով էլ [մարգարէն] ասում է. «Լուացուէ՛ք, մաքրուէ՛ք եւ խոստովանէ՛ք ձեր մեղքերը»: Եւ սրան, [այսինքն]՝ մաքուր սրտով մեր մեղքերը խոստովանելուն եւ Կեանքի գրքում [յիշուելուն], թող մենք եւս արժանի դառնանք մեր Տէր Յիսուս Քրիստոսով, Ով օրհնեալ է Հօր եւ Սուրբ Հոգու հետ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՎԱՐՔԵՐ ԵՒ
ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՈՒՐԲ ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ ԵՒ ՍՈՒՐԲ ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՅՍ

«Թադէոս» թարգմանաբար նշանակում է «Իմաստուն»: Այսպէս վերանուանեց Քրիստոսն Իր տասներկու առաքեալներից մէկին, ինչպէս վկայում է Սուրբ Գիրքը. «Ղեբէոս, որ կոչուեց Թադէոս» (Մատթ. Ժ 3): Թադէոս առաքեալին Աւետարանը կոչում է նաեւ Յուդա Յակոբեան եւ առաքեալների ցանկում թուարկում մատնիչ Յուդա Իսկարիովտացուց առաջ՝ նրան վերջինից տարբերելով:

Համաձայն հայոց պատմահայր սուրբ Մովսէս Խորենացու՝ Հայոց Աբգար թագաւորի պատգամաւորները Ծաղկազարդի օրը Երուսաղէմում հանդիպում են Յիսուս Քրիստոսին եւ Նրան փոխանցում Աբգարի խնդրանքը՝ գալու իր թագաւորանիստ Եդեսիա (յետագայում Ուռհա) քաղաքը եւ բժշկելու իրեն (Աբգար թագաւորի պատգամաւորների մասին անուղղակի կերպով ակնարկում է նաեւ Յովհաննէսի Աւետարանը. «Այնտեղ կային նաեւ հեթանոսներից ոմանք...» (Յովհ. ԺԲ 20)): Սակայն Յիսուսը յանձն չի առնում անձամբ գնալու, այլ նամակով պատասխանում է, որ երբ կատարի այն գործը, որի համար Ինքն աշխարհ է եկել, Աբգարի մօտ կ՚ուղարկի Իր աշակերտներից մէկին, ով եւ կը բժշկի նրան եւ կը սովորեցնի յաւիտենական կեանքի պատգամները (նամակի հետ միասին Տէրը Աբգար թագաւորին ուղարկում է նաեւ Իր անձեռակերտ պատկերը՝ Իր դէմքից դաստառակի վրայ գերբնական կերպով արտանկարուած): Տէրունական այս խոստումն իրականացաւ հետեւեալ կերպ:

Փրկչի համբարձումից եւ Սուրբ Հոգու գալուստից յետոյ տասներկու առաքեալները վիճակ գցելով աշխարհը բաժանեցին իրենց մէջ՝ Տիրոջ պատուէրի համաձայն գնալու եւ աշակերտ դարձնելու բոլոր ազգերին: Հայաստանը բաժին ընկաւ նրանցից մէկին՝ սուրբ Թադէոս առաքեալին, այդ պատճառով էլ նա համարւում է Հայոց գլխաւոր առաքեալը, իսկ Հայաստանը՝ կոչւում Թադէի վիճակ: Թադէոս առաքեալը ոչ միայն մէկն էր Քրիստոսի տասներկու առաքեալներից, այլեւ գլուխ եւ վարդապետ՝ եօթանասուն այլ աշակերտների: Այս պատճառով ոմանք չփոթելով նրան համարում են Քրիստոսի եօթանասուն կամ եօթանասուներկու աշակերտներից մէկը:

Այսպէս՝ Տիրոջ շուրջ 35 թ.-ին սուրբ Թադէոս առաքեալը եկաւ հասաւ Եդեսիա՝ իջեւանելով Տուբիա անուամբ մի հրեայի տանը: Աբ-

դիու անունով մի նախարար այս մասին տեղեկացրեց Աբգար Թագաւորին, եւ վերջինիս հրամանով առաքեալին ուղեկցեցին արքունիք:

Երբ Թադէոս առաքեալը մտաւ արքունի ապարանք, Թագաւորը նրա վրայ լուսեղէն սքանչելի մի նշան տեսաւ, գլխին՝ ոսկեայ Թագ, եւ մինչեւ գետին խոնարհուեց նրա առջեւ: Առաքեալը ձեռքը դրեց արքայի գլխին եւ աղօթքով բժշկեց նրան, բժշկեց նաեւ Աբդիուի կաղութիւնը, ինչպէս նաեւ ուրիշ շատերի: Աբգար Թագաւորը մեծամեծ նուէրներ մատուցեց առաքեալին, սակայն վերջինս մերժեց դրանք եւ ամէն օր համարձակօրէն քարոզելով սուրբ աւետարանը՝ դարձի բերեց Թագաւորին, արքունի իշխաններին, Եդեսիա քաղաքի բնակիչներին եւ մկրտեց: Քրիստոնէութիւնը հաստատուեց Եդեսիայում, քաղաքի կռատները փակուեցին, փոխարէնը Թադէոս առաքեալը մի եկեղեցի կառուցեց՝ այնտեղ զետեղելով նաեւ սուրբ դաստառակը, եւ քահանաներ ու սարկաւագներ ձեռնադրեց՝ այնտեղ ծառայելու համար: Յետագայում այս եկեղեցին կոչուեց սուրբ Աստուածածնի անուամբ:

Սուրբ Թադէոսը զգուշացուցիչ կանոններ գրեց ու տուեց Ադդէ կերպասագործին՝ իր եօթանասուն աշակերտներից մէկին, որին եւ եպիսկոպոս ձեռնադրեց ու վստահեց նորահաւատներին հովուելու գործը: Իսկ ինքը՝ առաքեալը, երբ տեսաւ, որ ամբողջ քաղաքն արդէն լուսաւորուած է Քրիստոսի հաւատքով, գոհացաւ Աստծուց, օրհնեց Թագաւորին ու հաւատացեալ ժողովրդին եւ գնաց քարոզելու Մեծ Հայքում հետն ունենալով Աբգար Թագաւորի հովանաւորչական գրութիւնը՝ ուղղուած իր քրոջ որդի Սանատրուկին, ով այդ ժամանակ որպէս արքունի զօրքի հրամանատար եւ Թագաւորի փոխանորդ նստում էր Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Արտազ գաւառի Շաւարշաւան կամ Շաւարշան քաղաքում: Այնտեղ հասնելով՝ Թադէոս առաքեալը, հրաշքներ գործելով եւ Սուրբ Հոգու զօրութեամբ կեանքի խօսքը քարոզելով ամէնքին, շատերին դարձի բերեց, այդ թւում նաեւ Սանատրուկին: Սակայն վերջինս ամբողջ սրտով չէ, որ հաւատաց. նա մտադրուել էր Թագաւորել Հայաստանում եւ հասկանում էր, որ կռապաշտ նախարարները հաւատացեալ Թագաւոր չեն հանդուրժի, այդ պատճառով էլ տեղ չտուեց Թադէոս առաքեալին՝ երկար ժամանակ իր մօտ մնալու: Ուստի եւ սուրբ առաքեալը, այնտեղ թողնելով իր աշակերտներից մէկին՝ Զաքարիա անունով, հեռացաւ այնտեղից եւ շրջելով Մեծ Հայքի մի գաւառից միւսը՝ քարոզում էր կեանքի խօսքը, մինչեւ Աղուանից սահմանը: Իր այդ երկարատեւ քարոզչական շրջագայութիւնների ընթացքում նա շարունակ շփւում էր տեղաբնակների հետ, ովքեր ընկղմուած էին հեթանոսական խորունկ խաւարի մէջ, այն աստիճան, որ նոյնիսկ ի վիճակի չէին ընդունելու աւետարանական քարոզչութիւնը, եւ միայն քչերն էին, որ յօժարակամօրէն եւ բարեհաճութեամբ ընդունեցին աստուածգիտութեան լոյսը: Բայց ուր էլ որ Աստուած Թադէոսին հեթեւորդներ էր տալիս, առաքեալը նրանցից քահանաներ էր ձեռնադրում, որպէսզի քրիստոնէութիւնը գոնէ ծածկաբար արմատանայ Հայաստանի այդ վայրերում: Այդ ընթացքում նա գնաց նաեւ հարեւան Կապադովկիայի Կեսարիա քաղաքը, այնտեղ աշակերտ դարձրեց շատերին եւ հիմնեց եկեղեցական աթոռ՝ իր Թէոփիլոս աշակերտին եպիսկոպոս ձեռնադրելով. այս նոյն Թէոփիլոսն է յիշատակուած Ղուկասի Աւետարանի եւ «Գործք առաքելոց»-ի սկզբում: Մօտաւորապէս երկուսուկէս դար յետոյ սուրբ Գրիգոր Լուսաւորիչը ձեռնադրուեց նոյն այս Կեսարիայում՝ տեղի Ղեւոնդիոս պատրիարքի՝ Թադէոս առաքեալի իրաւայաջորդի ձեռքով:

Շուտով Հայոց թագաւորական գահին բազմեց Սանատրուկը: Այդ ժամանակ, երբ Թադէոս առաքեալը երկրորդ անգամ եկաւ Միջագետքի սահմանի մօտ՝ այցելելու հաւատքի իր աշակերտներին, ճանապարհին նրան հինգ պատուական թագաւորազուն մարդիկ հանդիպեցին, որոնք պատգամաւորութեամբ Հռոմից գալիս էին Հայոց նոր արքայի՝ Սանատրուկի մօտ: Նրանցից գլխաւորի անունն էր Քրիւսի կամ Խրիւսի, որ թարգմանաբար նշանակում է Ոսկի: Ոսկեանք, երբ լսեցին առաքեալի քարոզութիւնը եւ տեսան նրա գործած հրաշքները, հաւատացին Քրիստոսին եւ մկրտուելով՝ աշակերտեցին նրան: Երանելի Ոսկին քահանայ ձեռնադրուեց առաքեալի ձեռքով: Որոշ ժամանակ ընկերակցելով Թադէոս առաքեալին նրա քարոզչական շրջագայութեան ընթացքում՝ Ոսկեանք այնուհետեւ առանձնացան Եփրատի (Արածանու) ակունքի մօտ՝ Մաղկաւէտ կոչուող լեռներում, ուր եւ յետագայում նահատակուեցին յանուն Քրիստոսի:

Սուրբ Թադէոս առաքեալը, գալով Արտաշատի բլուրը, հանդիպեց մէկ ուրիշ առաքեալի՝ տասներկուսից սուրբ Բարթողոմէոսին: Այդտեղ օթեւանեցին՝ գիշերն անցկացնելով աղօթքով, եւ իրենց հանդիպման վայրում կանգնեցրին Տէրունական խաչի նշանը: Ի յիշատակ նրանց հանդիպման՝ յետագայում այդ վայրը կոչուեց Օթեաց խաչ: Յաջորդ օրն առաքեալները հրաժեշտ տուեցին միմեանց՝ լցուած մեծ ուրախութեամբ, եւ Բարթողոմէոսը գնաց Հայոց Հէր եւ

Զարեւանդ գաւառները, իսկ սուրբ Թադէոսը դարձեալ եկաւ Արտազ գաւառ՝ հաւատքի մէջ վերահաստատելու Քրիստոսով իրեն աշակերտածներին: Առաքեալն իր հետ բերել էր այն գեղարդը, որով խաչի վրայ խոցել էին Քրիստոսի կողը, եւ դրանով մեծամեծ հրաշքներ էր գործում. մաքրում էր բորոտներին, քայլել էր տալիս կաղերին, բժշկում էր դիւահարներին, եւ շատերը հաւատացին Քրիստոսին: Արտազում՝ արքունի ամառանոցային Շաւարշան գիւղաքաղաքում էր այդ ժամանակ գտնւում Սանատրուկ Թագաւորը: Նա որոշ ժամանակ լռում էր, քանի որ տեսնում էր այն մեծամեծ հրաշքները, որ գործում էր առաքեալը՝ բժշկելով բոլոր ցաւերն ու հիւանդութիւնները, այն աստիճան, որ արքունիքից եւս շատերը գալիս լսում էին նրա աւետարանական քաղցրախոյժ քարոզութիւնը, սքանչանում նրա զօրաւոր հրաշագործութիւններով եւ հաւատում Քրիստոսին: Այս ամէնի մասին տեղեկացաւ նաեւ Սանատրուկի դեռատի դուստրը՝ գեղեցկատես ու վայելչագեղ Սանդուխտը. նա գիշերով եկաւ սուրբ առաքեալի մօտ, նստեց նրա ոտքերի առջեւ՝ լսելու սուրբ աւետարանի քարոզութիւնը: Մանկահասակ կոյսը շատ օրեր մնաց Թադէոս առաքեալի մօտ՝ գիշեր-ցերեկ ուսանելով նրանից աւետարանական ուսմունքը, քանզի նրա սրտում վառուել էր սէրը Քրիստոսի հանդէպ. սուրբ Թադէոսին նա կոչում էր իր հոգեւոր հայրը: Առաքեալը, տեսնելով նրա ջերմ սէրն առ Աստուած, մկրտեց նրան յանուն Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու: Երբ Սանդուխտը մկրտւում էր, երկնքից լուսաւոր նշան երեւաց նրա վրայ, եւ լոյսի միջից լսուեց հրեշտակային մի ձայն, որն ասաց.

—Զուարճացի՛ր եւ ուրա՛խ եղիր, գովելի՛ դուստր եւ բարի՛ հարս երկնաւոր Փեսայի:

Այս հրաշքը տեսնելով՝ շատերը հաւատացին Քրիստոսին, իսկ կռապաշտ քուրմերից ոմանք լուրը հասցրին Սանատրուկ ուրացող արքային: Անիրաւ արքան, չարացած, անմիջապէս հրամայեց բռնել եւ շղթայակապ անել Թադէոս առաքեալին, սրով սպանել նորադարձ հաւատացեալներին, իսկ գլխաւորներից ոմանց բրածեծ անել ու բանտ նետել, որոնց թւում եւ իր դստերը՝ Սանդուխտին:

Երբ նորահաւատներից շատերին սպանեցին, երկնային մի մեծ նշան եղաւ. սպանուածների վրայ պայծառ լոյս ծագեց, որը տեսնելով՝ դարձեալ շատերը հաւատացին Քրիստոսին, իսկ անհաւատների վրայ մեծ ահ ընկաւ: Նրանցից շատերը կուրացան լոյսի պայծառութիւնից

եւ չհամարձակուեցին դիպչել սուրբ առաքեալին: Այդժամ առաքեալին երեւաց Տէրն Ինքը եւ ասաց.

—Քաջալերուիր եւ ամո՛ւր եղիր, Թադէո՛ս, քանզի Ես քեզ հետ եմ:

Սուրբ Թադէոսը, Փրկչին տեսնելով, արտասուալից աղօթքով Նրա առջեւ ընկաւ ու ասաց.

—Տէ՛ր իմ եւ Աստուած, ինձ մենակ մի՛ թող, քանզի այս հեթանոս ազգի եւ թագաւորի մօտ եկայ Քո՛ իսկ հրամանով եւ զօրութեամբ: Դո՛ւ իսկ ասացիր, Տէ՛ր իմ. «Գնացէք եւ ամբողջ աշխարհում քարոզէ՛ք կեանքի խօսքը. ով հաւատայ եւ մկրտուի, կը փրկուի, իսկ ով չհաւատայ, կը դատապարտուի»: Արդ՝ ես եկայ այստեղ եւ սկսեցի քարոզել Քո սուրբ աւետարանի խօսքերը, որ դրեցիր իմ բերանում, սակայն չեն կամենում լսել, քանզի նրանց, ովքեր հաւատացին Քեզ, սրամահ արեցին, ոմանց էլ բրածեծ անելով բանտ նետեցին: Ինձ վրայ էլ էին կամենում ձեռք բարձրացնել, սակայն Քո սուրբ Աստուածութեան լոյսը վրայ հասնելով՝ հարուածեց նրանց, եւ այդ հարուածից չարաչար մահուամբ մեռան ու չկարողացան դիպչել ինձ:

Տէրը պատասխանեց.

—Ելի՛ր նրանց առջեւ եւ համբերի՛ր, քանզի բազում նեղութիւններ են գալու քեզ վրայ, եւ Իմ աւետարանի քարոզութիւնն այստեղ չեն ընդունելու, բացի շատ սակաւ ժողովրդից, որին Ես կը պահեմ ու ինձ մօտ կը տանեմ: Իսկ նրանց, ովքեր նահատակուեցին Իմ անուան համար, օթեւաններ կը տամ Իմ Հօր տանը:

—Տէ՛ր, ես էլ եմ շտապում հասնել Աստուածութեանդ լոյսին եւ լցուել երկնային սիրով Քո լուսեղէն փառքի մէջ,— ասաց Թադէոսը:

—Ուրախացի՛ր, քանզի քո փափագը կը կատարուի,— պատասխանեց Տէր Յիսուսը եւ օրհնելով նրան՝ երկինք ելաւ: Իսկ սուրբ առաքեալը գնաց այդտեղից՝ լցուած մեծ ուրախութեամբ:

Գիշերով սուրբ առաքեալը գնաց բանտ, ուր պահում էին սուրբ Սանդուխտին եւ միւս հաւատացեալներին: Դռներն իրենք իրենց բացուեցին, եւ սուրբ առաքեալը ներս մտնելով ասաց.

—Խաղաղութի՛ւն ձեզ, Քրիստոսի՛ սիրելիներ:

Սուրբ առաքեալին տեսնելով՝ բանտարկեալները զօրացան: Գալով սրբուհի Սանդուխտի մօտ՝ առաքեալը համբուրեց նրա շղթաները, որոնք գեռատի նուրբ կոյսն ընդունել էր թանկարժէք ոսկեայ զարդերի փոխարէն, եւ ասաց նրան.

—Երանի՛ քեզ, դո՛ւստր երկնաւոր Թագաւորի:

Իսկ սրբուհի Սանդուխտը, համբուրելով առաքեալի ոտքերը, ջերմ փափագով խնդրեց նրանից իրեն սփոփել կեանքի խօսքով, որպէսզի իր անձն անարատ պահուի մինչեւ վերջ: Եւ սուրբ առաքեալը բարեյորդոր խօսքերով դիմեց նրան.

—Զօրացի՛ր եւ մղի՛ր հաւատի բարի պատերազմը, քո սրտում դի՛ր Քրիստոսին, քո ամբողջ սրտով Նրա՛ն դիմիր, եւ Նա քեզ օգնութեան կը հասնի, կը զօրացնի քեզ եւ ամօթահար կ՚անի քո հակառակորդներին: Թող քեզ համար քաղցր չթուայ այս աշխարհի անցաւոր սէրը, որ այսօր կայ եւ վաղն անհետ կորչելու է, այլ Քրիստոսի հաւատով, յոյսով եւ սիրով ամրացրո՛ւ քեզ, եւ չարը չի մօտենայ քեզ, չարի հնարքները չեն կարողանայ սասանել քեզ յաւիտենականութեան յոյսից եւ անանց ուրախութիւններից, որոնք պատրաստուած են քեզ եւ միւս սուրբերի համար՝ կամաւոր նահատակութեան միջոցով, որն ընդունելու ես Յիսուս Քրիստոսի անուան համար:

Այսպէս նաեւ միւս բոլոր բանտարկեալներին զօրացնելով սուրբ աւետարանի խօսքերով եւ հաստատելով Քրիստոսի սիրոյ մէջ՝ առաքեալը նշան արեց, որ լռեն եւ աղօթեն: Եւ ինքը, ձեռքերը դէպի երկինք տարածելով, ասաց.

—Գոհանում եմ Քեզանից, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ Յիսուս Քրիստոս, միածին Որդի՛ Աստուծոյ, որ մարդկային ցեղի փրկութեան համար եկար երկիր, նայի՛ր այժմ երկնքից՝ Քո բնակութեան վայրից, Քո աղախին Սանդուխտին, ով իր մանկութիւնը Քեզ նուիրեց: Պահի՛ր նրան, Տէ՛ր իմ, եւ նրա ընկերների հետ զօրացրո՛ւ այս պատերազմում, ծագեցրո՛ւ Քո Աստուածութեան լոյսը սրանց վրայ եւ ամօթահա՛ր արա խաւարակուլ թշնամուն, քանզի միայն Դու ես աստուածների Աստուածն ու տէրերի Տէրը: Ցո՛յց տուր Քո զօրութեան նշանը մարմնով վտանգուածների վրայ, քանզի Քոնն են, եւ Քո ահեղ անուամբ թող զօրանան յաւիտեան:

Երբ սուրբն աղօթքն աւարտեց, սաստիկ թնդիւն եղաւ, եւ բանտի ձեղունը բարձրացաւ, երկնքից լոյս ծագեց, որն առաւել պայծառ էր, քան արեգակի ճառագայթների լոյսը, եւ լոյսի մէջ լսուեց երկնային աւետիսը, որն ասում էր նահատակներին.

—Քաջալերուէք եւ ամո՛ւր մնացէք, քանզի ես կը գամ եւ ձեզ Ինձ մօտ կը տանեմ: Իսկ դու, Սանդուխտ, որ եկար Իմ յետեւից, արհամարհեցիր երկրաւոր պատիւը եւ Ինձ Հայր կոչեցիր, քեզ կը տամ բարձրագոյն լոյսը՝ շատերից առաւել պայծառ:

Երբ այս երկնային ձայնը լսուեց, բանտարկուածների շղթաներն ընկան, նրանց մարմնի անդամները ողջացան, եւ նրանք վեր կենալով միաբան փառաւորում էին Քրիստոս Աստծուն ու ասում.

—Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Աստուա՛ծ մեր, գոհանում ենք Քո մարդասիրութիւնից, որ փնտրեցիր ու այցելեցիր մեզ՝ կորուսեալներիս, որ փրկեցիր մեզ կռապաշտութիւնից եւ յաղթանակ պարգեւեցիր ընդդէմ աներեւոյթ թշնամու, եւ որ սփոփեցիր մեզ Քո այս սքանչելի երեւմամբ: Մենք ի՞նչ կարող ենք հատուցել Քո Աստուածութեանը, բացի միայն մեր անձերը որպէս անուշահոտութիւն Քեզ մատուցելուց:

Բանտապահները, տեսնելով այս նշանները, ընթացան դէպի բանտի դռները եւ տեսան, որ դրանք բաց էին, իսկ սուրբ առաքեալն աղօթքի էր կանգնած բանտարկեալների մէջ: Նրանք սարսափահար ներս մտան եւ դողալով ընկան սուրբ Թադէոսի առջեւ ու ասացին.

—Մենք էլ ենք հաւատում քո Աստծուն, Ում դու քարոզում ես, սո՛ւրբդ Աստուծոյ: Մեզ է՛լ ընդունիր եւ միացրու հաւատացեալների խմբին:

Նրանք արտասուքով գրկում էին առաքեալի ոտքերն ու աղաչելով ասում.

—Թողութի՛ւն տուր մեզ, սո՛ւրբդ Աստուծոյ, քանզի Աստուծոյ այս ծառաներին մեր կամքով չէ՛, որ պահեցինք ծանր նեղութեան մէջ, այլ անօրէն թագաւորի ահից: Իսկ երբ տեսանք Բարձրեալի փառքը, Ում դու քարոզում ես, ճշմարտապէս իմացանք, որ Նա է երկնքի եւ երկրի արարիչը, եւ մենք հաւատում ենք Նրան ամբողջ սրտով ու մտքով եւ խոստովանում Նրա Աստուածութիւնը: Եւ այլեւս ոչ ոք չի կարող բաժանել մեզ Նրանից՝ ո՛չ կապանք, ո՛չ նեղութիւն: Ուստի փութա՛, մեզ եւ մեր ընտանիքներին խառնի՛ր Քրիստոսի գնդին. գուցէ մեռնենք քո Աստուծոյ փառքի ահաւորութիւնից:

Այնժամ սուրբ առաքեալը հասկացաւ, որ այդ մարդիկ Տիրոջից են կանչուած, եւ քաջալերեց ու զօրացրեց նրանց՝ ասելով.

—Մի՛ վախեցէք, եղբայրնե՛ր իմ, քանզի մեր Տէրը մարդասէր ու ողորմած է եւ կամենում է գտնել ամէնքին, որ կորած էին մեղքի մէջ, ինչպէս դուք: Նա սիրեց ձեզ ըստ Իր մեծ ողորմածութեան եւ Իր Աստուածութեան լոյսով ներազդեց ձեր սրտերին. ուրեմն ամո՛ւր մնացէք եւ զօրացէ՛ք Քրիստոս Աստուծոյ հաւատքի մէջ՝ մոռացութեան մատնելով ձեր նախկին սնոտի եւ դիւական մոլորութիւնները:

Ապա աւելացրեց.

—Եկէք աղօթէ՛ք:

Իսկ ինքը երկինք նայելով՝ հառաչելով ասաց.

—Հա՛յր մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Ում միջոցով սրանց կանչեցիր դէպի Քեզ, սուրբ աջովդ պահի՛ր սրանց եւ մի՛ տուր խոտորուել աջ կամ ձախ: Սրբի՛ր սրանց Քո երկնային ազատութեամբ, որպէսզի միաւորուելով բեւեռուեն Քո սիրելի Միածին Որդու սիրուն:

Եւ աղօթքն աւարտելով՝ մկրտեց նրանց հէնց այդ գիշեր: Նրանք երեսուներեք հոգի էին՝ բանտապահներն ու նրանց ընտանիքի անդամները:

Այս իրադարձութիւններից յետոյ Սանատրուկն առաւօտեան խորհրդակցութիւն հրաւիրեց, թէ ինչ անի իր դստեր հետ. նրա սիրտը մղկտում էր դստեր հանդէպ ունեցած հայրական գութից, եւ չէր կամենում նրան սպանելու հրաման տալ, քանի որ յոյժ սիրում էր եւ նրան յիշելիս լալիս: Ապա մարդիկ ուղարկեց, եւ նրանք բռնեցին սուրբ Թադէոսին, սրբուհի Սանդուխտին եւ միւսներին, որոնք նրանց հետ էին, կապեցին եւ տարան Թագաւորի առաջ:

—Ե՛կ ինձ մօտ, դո՛ւստր իմ Սանդուխտ,— կանչեց Սանատրուկը:

Սրբուհին չպատասխանեց, իսկ Սանատրուկը շարունակեց.

—Ուրացա՞ր ինձ, զաւա՛կս: Ինձ ատեցիր եւ այդ խաբեբայի՞ն սիրեցիր: Երդւում եմ բոլոր աստուածներով. եթէ չթողնես մոլորութիւնդ, չարաչար մահով կորստեան կը մատնեմ թէ՛ քեզ, թէ՛ նրան:

—Նա, ում խաբեբայ ես կոչում, ինձ խաբէութիւնից դարձրեց դէպի ճշմարտութիւն, անգիտութեան խաւարից բերեց դէպի աստուածգիտութեան լոյսը,— պատասխանեց սրբուհի Սանդուխտը:

Թագաւորը բարկացաւ եւ զանահարել տուեց իր դստերը: Թադէոս առաքեալն արտասուախառն աղօթում էր առ Աստուած՝ համբերութիւն խնդրելով Սանդուխտի համար եւ պատիժ չարագործներին: Իսկոյն ուժգին երկրաշարժ եղաւ. զարհուրելի մի ձայն լսուեց սաստիկ որոտման ձայնի պէս, սրբուհուն հարուածողները մեռած ընկան գետնին, եւ ահը պատեց բոլորին:

Արքայի մեծ իշխանը՝ Սամուէլը, որ Հայոց Թագաւորութեան երկրորդ անձն էր, այս դէպքերին ականատես լինելով, հաւատաց Քրիստոսին եւ մկրտուեց ընտանեօք հանդերձ: Թագաւորի զայրոյթն է՛լ աւելի սաստկացաւ, եւ նա տանջամահ արեց Սամուէլին՝ ոտքերի ներբաններին մեխեր գամելով, եւ նրա հետ եւս եօթ հոգու՝ սուրբ Թադէոսի աշակերտներից: Նահատակուածների վրայ պայծառ լոյս ծագեց, եւ սարսափը պատեց զինուորներին:

Զարմանդուխտ անունով մի իշխանուհի սրբուհի Սանդուխտի քարոզութեամբ հաւատաց Քրիստոսին եւ մկրտուեց իր ամբողջ տնով հանդերձ. նրանց թիւը երկու հարիւր հոգի էր: Թագաւորը, երբ իմացաւ, սպանել տուեց Զարմանդուխտին: Սրբուհու մարմնի վրայ եւս պայծառ լոյս իջաւ, եւ այս հրաշքն աւելացրեց Քրիստոսին հաւատացողների թիւը:

Թագաւորի բարկութիւնը սահման չունէր, քանզի համոզուած էր, թէ Սանդուխտն է բոլորին մոլորեցնում, եւ ի վերջոյ սպանել տուեց նաեւ իր դստերը: Դահիճը Սանդուխտին գլխատելու փոխարէն սուրը խրեց կոյսի ուղիղ սրտի մէջ, որտեղից արեան շիթ բխեց. անուշահոտութիւն տարածուեց, երկնքից լոյսի սիւն իջաւ սրբուհու վրայ եւ մնաց երեք օր ու երեք գիշեր: Սա տեսնելով՝ եւս երկու հազար հոգի հաւատաց Քրիստոսին: Նրանցից ոչ ոք այդտեղից չհեռացաւ, եւ սուրբ Թադէոս առաքեալը, ով նախապէս կարողացել էր ազատուել եւ թաքնուում էր մօտակայ ձորակում, եկաւ ու բոլորին մկրտեց այդ գիշեր: Իսկ սրբուհու մարմինը նա հողին յանձնեց հէնց նրա նահատակութեան վայրում, ապա դարձեալ գնաց իր աշակերտների մօտ եւ մխիթարեց նրանց: Այդժամ վրայ հասան արքունի երկու իշխաններ՝ մեծ բազմութեան հետ, եւ դարձեալ բռնեցին երանելի առաքեալին ու տարան Սանատրուկ արքայի առաջ: Վերջինս նայեց ու տեսաւ սուրբին լուսապայծառ, ահաւոր կերպարանքով, ուստի չկարողացաւ խստութեամբ խօսել նրա հետ, այլ մեղմօրէն ասաց.

—Ինչո՞ւ ինձանից հեռացրիր իմ չքնաղագեղ դստերը:

Առաքեալը պատասխանեց.

—Քեզանից հեռացրի եւ ընծայեցի Աստծուն. հեռացրի խաւարային գործերից ու ձեր չար պաշտամունքից եւ սուրբ Աւազանից վերստին ծննդեամբ հարսնացրի Քրիստոսին, իսկ քո կողմից նահատակուելով՝ նա մահուանից անցաւ դէպի կեանք:

Արքան բարկացաւ եւ հրամայեց սուրբ Թադէոսին գցել առիւծների առջեւ, որպէսզի յօշոտեն, սակայն առիւծները սկսեցին լիզել նրա ոտքերը: Երբ անօրէն գահիճները տեսան, որ գիշատիչները չվնասեցին սուրբին, կրակ վառեցին եւ չզթայակապ մէջը գցեցին նրան, իսկ նա աղօթում էր.

—Տէ՛ր Յիսուս, օգնութեա՛ն հասիր ինձ:

Անմիջապէս անձրեւախառն ուժգին քամի բարձրացաւ, առաւ կրակն ու լցրեց անօրէնների վրայ, նաեւ որոտման ահեղ երկնային ձայնը սպանեց անհաւատներից շատերին, իսկ Թագաւորը խուճապահար փախաւ իր ապարանքը:

Սուրբ Թադէոսը ողջ-առողջ դուրս եկաւ կրակից: Սա տեսնելով՝ հարիւրաւոր մարդիկ հաւատացին ճշմարիտ Աստծուն ու բացականչեցին.

—Մե՛ծ է քրիստոնեաների Աստուածը, եւ անյաղթ է Նրա զօրութիւնը:

Առաքեալն անմիջապէս մկրտեց այդ նորահաւատ մարդկանց եւ նրանց համար աղօթեց.

—Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, Աստուա՛ծ բոլորի, մի՛ թող սրանց, այլ հովուի՛ր եւ զօրացրո՛ւ Քո սուրբ սիրով: Եւ ի՛նձ էլ, Տէ՛ր, ընդունիր Քո ծառաների հետ:

Ապա, դիմելով նորահաւատներին, ասաց.

—Եկէք ելէ՛ք այն բարձրադիր վայրը եւ դիտէ՛ք իմ նահատակութիւնը: Իմ փոխարէն ձեզ հոգեւոր առաջնորդ եմ թողնում իմ լծակից Զաքարիային:

Հաւատացեալներն օրհնութիւն ստացան սուրբ առաքեալից ու գնացին, իսկ նա մնաց եւ աղօթքի կանգնեց: Եւ ահա արքայի հրամանով վրայ հասան դահիճները մի բազմամարդ ամբոխի հետ եւ, սուրբին բռնելով, ժայռը հանեցին: Դահիճը սուրն առաւ, որ սպանի նրան, սակայն հարուածեց ու սպանեց իր իսկ եղբօրը՝ Զեմենտոսին, ով արքունի հաւատարիմ իշխաններից էր: Զեմենտոսը բարի մարդ էր՝ ողորմած, հիւրասէր, կարօտեալների, այրիների ու որբերի հանդէպ հոգատար, ուստի սուրբ Թադէոսը խիստ տխրեց նրա մահուան համար, կանգնեց մեռեալի մօտ, երկինք նայեց ու աղօթեց.

—Ո՛վ Հայր մեր Տէր Յիսուս Քրիստոսի, նայի՛ր երկնքից՝ Քո սրբութիւնից, եւ կենդանացրո՛ւ այս մեռեալին, որպէսզի իմանան, որ Դու ես բոլորի Աստուածը՝ ողջերի եւ մեռածների Տէրը:

Ապա բռնեց մեռեալի ձեռքից ու ասաց.

—Քե՛զ եմ ասում, Յիսուս Քրիստոսի անունով վե՛ր կաց:

Մեռեալը յարութիւն առաւ եւ սուրբի ոտքերն ընկնելով՝ ասաց.

—Հաւատում եմ քո քարոզած Աստծուն, միայն Նա՛ է Աստուած:

Յարութեան այս դէպքի ականատեսներից հինգ հարիւր քսան հոգի դարձի եկան, իսկ յարութիւն առածը՝ Զեմենտոսը, այնուհետեւ

դարձաւ նրանց հոգեւոր առաջնորդը: Սուրբ Թադէոսն օրհնեց նրանց, համբուրեց եւ յանձնեց Աստուծոյ խնամքին.

—Գնացէ՛ք խաղաղութեամբ, եւ Տէրը թող ձեզ հետ լինի:

Ապա դարձաւ դահիճներին.

—Այժմ կատարէ՛ք ձեր թագաւորի հրամանը:

Դահիճը սրով հատեց երանելու գլուխը, եւ նոյն պահին անուշահոտութիւն տարածուեց, երկնքից պայծառ լոյս ծագեց սուրբի մարմնի վրայ, եւ մեծ երկրաշարժ եղաւ: Ժայռը պատռուեց, իր մէջ առաւ սուրբ առաքեալի մարմինն ու դարձեալ փակուեց:

Սուրբ Թադէոս առաքեալի եւ սրբուհի Սանդուխտ կոյսի նահատակութիւնը տեղի ունեցաւ առաջին դարում՝ Տիրոջ շուրջ 68թ.-ին, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Արտազ գաւառի Շաւարշաւան (յետագայի Մակու) քաղաքի մօտ:

Հինգերորդ դարի վերջում գտնուեցին սուրբ Թադէոսի, սրբուհի Սանդուխտի եւ նրանց հետ նահատակուած սուրբերի նշխարները՝ հետեւեալ հանգամանքներում: Կիրակոս անունով մի ճգնաւոր, ով բնակւում էր Շաւարշաւանին մերձակայ մի քարայրում, տեսիլք տեսաւ. ժայռի վրայ աքանչելի մի լոյս էր ծագել, եւ լոյսի մէջ՝ ոսկէ աթոռ՝ վրան բազմած լուսապայծառ մի մարդ, աթոռի շուրջ՝ եւս հինգ լուսազգեաց մարդիկ: Լոյսի մէջ յանկարծ երեւաց ոսկեհուռ հանդերձներով, ծիրանավառ լուսափայլ մի աղջիկ՝ գլխին պսակ: Նա մօտեցաւ աթոռին բազմած մարդուն, եւ վերջինս ողջունեց նրան: Տեսիլքը բացատրուեց հետեւեալ կերպ. աթոռին բազմածը սուրբ Թադէոս առաքեալն էր, նրա շուրջ հաւաքուած հինգ մարդիկ՝ նրա նահատակակից աշակերտները, իսկ աղջիկը՝ սրբուհի Սանդուխտը: Եռօրեայ աղօթքներից յետոյ Կիրակոս ճգնաւորը դարձեալ տեսիլք տեսաւ. սուրբ Թադէոսը դարձեալ նոյն լուսաւոր եւ ահեղ կերպարանքով երեւաց նրան եւ ցոյց տուեց իրենց նշխարների տեղը: Երեսնօրեայ պահքից եւ աղօթքներից յետոյ Կիրակոսը գնաց յայտնութեամբ ցոյց տրուած վայրը եւ սկսեց փորել: Նախ գտնուեցին սուրբ Թադէոսի աշակերտների նշխարները՝ լուսաւոր եւ անուշաբոյր: Ապա դարձեալ երկարատեւ պահքից ու աղօթքներից յետոյ գտնուեցին հէնց նրա՝ սուրբ Թադէոսի նշխարները. ժայռն ահաւոր թնդիւնով պատռուեց, ուժեղ անուշահոտութիւն տարածուեց ու լցրեց ամբողջ տեղանքը, եւ երեւացին սուրբ առաքեալի մարմնի նշխարները, որ շուրջ չորսուկէս դար մնացել էին ժայռի մէջ: Այնուհետեւ գտնուեցին սրբուհի Սանդուխտի անուշաբոյր նշխարները: Այդ դիշեր

երկնքից լոյս իջաւ սուրբերի նշխարների վրայ, եւ լսուեց առ Աստուած ուղղուած հրաշալի ու քաղցրաձայն օրհնութիւն:

Սուրբերի նշխարների համբաւը տարածուեց ամբողջ Հայաստանում, եւ մեծ տօնախմբութիւն կատարուեց այդ առիթով՝ մասնակցութեամբ ժամանակի կաթողիկոս սուրբ Յովհան Մանդակունու, մարզպան Վահան Մամիկոնեանի, եպիսկոպոսների, քահանաների, սարկաւագների եւ ժողովրդի մեծ բազմութեան: Բազմաթիւ դիւահարներ, կոյրեր, անդամալոյծներ, չորացած անդամներ ունեցողներ, բորոտներ ու զանազան ախտերից տառապողներ բժշկուեցին սուրբ նշխարների միջոցով:

Սուրբ Թադէոս առաքեալի գերեզմանը նոյն Արտազ գաւառում է՝ ներկայիս Իրանի տարածքում՝ Մակու քաղաքից չուրջ քսան կիլոմետր հեռու: Սուրբի գերեզմանի վրայ կառուցուած է հիասքանչ եւ զարմանահրաշ մի եկեղեցի՝ Թադէի վանքում, որը մեծ սրբավայր է եւ նշանաւոր ուխտատեղի: Իսկ սրբուհի Սանդուխտի նշխարները յետագայում ամփոփուեցին Նարեկայ վանքում, որի իսկական անունը հէնց Սուրբ Սանդուխտ է: Թադէոս առաքեալի մասունքներից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պահւում է նրա աջը, ինչպէս նաեւ՝ 1994թ.-ին Հռոմի պապի կողմից Հայոց Եկեղեցուն նուիրաբերուած մասունքը՝ Բարթողոմէոս առաքեալի մասունքի հետ միասին: Սուրբ Էջմիածնում է պահւում նաեւ քրիստոսամուխ այն գեղարդը, որը, ըստ եկեղեցական աւանդութեան, Հայաստան մեկնելիս միւս առաքեալները յանձնել էին սուրբ Թադէոսին՝ որպէս օգնութիւն նրա առաքելական քարոզութեանը (այդ գեղարդը երկար դարեր պահւում էր Այրիվանքում, որից եւ վերջինս ստացաւ Սուրբ Գեղարդավանք անունը): Գեղարդի հետ միասին առաքեալները Թադէոսին էին յանձնել նաեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով օրհնուած մեռոնը, եւ վերջինս այն եւս իր հետ Հայաստան էր բերել: Դարերի խորքից եկած սովորութեան համաձայն՝ Հայ Եկեղեցում մեռոնօրհնէքի ժամանակ հին մեռոնից մի մաս խառնւում է նորին, եւ այսպիսով՝ մեր այսօրուայ մեռոնի մէջ կայ մի մաս տէրունական մեռոնից:

ՍՈՒՐԲ ԲԱՐԹՈՂՈՄԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ

«Բարթողոմէոս» թարգմանաբար նշանակում է «Որդի Թոլոմէի»: Սուրբ Բարթողոմէոսը մէկն է Քրիստոսի տասներկու առաքեալներից, որոնց Նա ուղարկեց աշխարհով մէկ՝ քարոզելու սուրբ աւետարանը:

Նախքան մեր Տէր Յիսուս Քրիստոսին աշակերտելը Բարթողոմէոսը Սուրբ Գրքում յիշատակւում է Նաթանայէլ անուամբ: Յովհաննէս աւետարանիչը, նկարագրելով նրա առաջին հանդիպումը Տիրոջ հետ, ասում է, որ Գալիլեայում, Յիսուսի հետ ծանօթանալուց յետոյ, Փիլիպպոս առաքեալը գտնում է Նաթանայէլին ու ասում.

—Գտանք Նրան, Ում մասին գրել են Մովսէսը Օրէնքի մէջ եւ մարգարէները. Յիսուսին՝ Յովսէփի Որդուն՝ Նազարեթ քաղաքից:

—Հնարաւո՞ր է, որ Նազարեթից որեւէ լաւ բան դուրս գայ,— պատասխանում է Նաթանայէլը:

—Արի՛ եւ տե՛ս,— ասում է Փիլիպպոսը:

Երբ Յիսուսը տեսնում է Իր մօտ եկող Նաթանայէլին, նրա մասին ասում է.

—Ահա՛ արդարեւ մի իսրայէլացի, ում մէջ նենգութիւն չկայ:

—Որտեղի՞ց ես ինձ ճանաչում,— հարցնում է Նաթանայէլը Տէրոջը:

—Փիլիպպոսը քեզ դեռ չկանչած, երբ թզենու տակ էիր, տեսայ քեզ,— պատասխանում է Յիսուսը:

—Ռաբբի՛, Դո՛ւ ես Աստուծոյ Որդին, Դո՛ւ ես Իսրայէլի թագաւորը,— բացականչում է Նաթանայէլը:

—Նրա համա՞ր ես հաւատում, որ քեզ ասացի, թէ թզենու տակ տեսայ քեզ. դրանից շատ աւելի մեծ բաներ պիտի տեսնես,— պատասխանում է Յիսուսը, ապա աւելացնում.— Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, տեսնելու էք երկինքը բացուած եւ Աստուծոյ հրեշտակներին՝ Մարդու Որդու վրայ բարձրանալիս եւ իջնելիս:

Ահա այս աննենգ իսրայէլացին էր, որ սուրբ Թադէոս առաքեալին զուգընթաց եւ նրա նահատակութիւնից յետոյ Հայաստանում քարոզեց սուրբ աւետարանը: Քրիստոսին առաջինը Աստուծոյ Որդի դաւանելու պատճառով նա կոչւում է Նախագաւան առաքեալ, եւ հայ ազգը, որին նա քարոզեց, նոյնպէս նախագաւան դարձաւ ազգերի մէջ:

Քրիստոսի աշակերտներից գլխաւորները՝ տասներկու առաքեալները, երբ վերնատանը Սուրբ Հոգին հրեղէն լեզուների հողմաձայն հեղմամբ իջաւ նրանց վրայ, երկնագործելու համար վիճակուեցին զանազան ազգերի: Եւ ընդունած լինելով քահանայական ձեռնադրութիւն եւ իշխանութիւն՝ մեղքերը թողնելու եւ կապելու, նշաններ ու հրաշքներ գործելու, սատանային հալածելու եւ ապականութեան ծառայութիւնից մարդկանց ազատելու, Սուրբ Հոգու առաջնորդութեամբ սփռուեցին գնացին՝ քարոզելու կեանքի խօսքը բոլոր ազգերին եւ լուսաւորելու նրանց սուրբ Աւազանի ծննդեամբ ու Սուրբ Հոգու արարչական զօրութեան վերակացութեամբ:

Ի թիւս տասներկուսի գնաց նաեւ երանելի Բարթողոմէոսը առաքելական ընտրութեան իր վիճակը:

Այնպէս պատահեց, որ իր քարոզութեան սկզբում նա գնաց մարերի եւ ելամացիների, այսինքն՝ Պարսից եւ Պարթեւաց երկրները: Պարսից եւ Մոգուց կողմերում սկսեց քարոզել՝ գործածելով Մատթէոսի Աւետարանը (որն այդ ժամանակ արդէն գրի էր առնուել եւ որը սուրբ Բարթողոմէոսը հետը վերցրել էր՝ յօժանդակութիւն իր քարոզութեանը) եւ պարզաբանելով մոգերին վերաբերող հանգամանքները: Հասնելով նրանց պաշտամունքի վայրը՝ կրակարան, ուր մոգերը պաշտամունք էին մատուցում ըստ իրենց կրօնի, բարձրացրեց իր ձեռքերը դէպի արեւելք՝ ընդդէմ արեգակի, որը պաշտում էին, կանգնեցրեց այն եւ նրա ճառագայթների զօրութիւնը նուազեցրեց մինչեւ կէսօր: Եւ երկնքից հրէ սիւնով նշան եղաւ, որը կանգնեց կրակարանի մէջ՝ յանդիմանելով նրանց մոլորութիւնը: Սակայն, թէեւ այդքան մեծ եւ զարմանալի նշան ցոյց տրուեց ի վերուստ, այսուհանդերձ նրանք չհրաժարուեցին տարրերին երկրպագելուց, ուստի այնտեղ շատ հրաշքներ չգործեց: Նրանցից միայն քչերը՝ ընդամէնը ութ հոգի, հաւատացին Քրիստոսին եւ թողնելով այս աշխարհի ունայն կեանքը՝ հետեւեցին առաքեալին ամենուր, ուր էլ որ նա գնար: Այստեղից հեռանալով՝ սուրբը հասաւ Պարթեւների երկիրը եւ քարոզում էր կեանքի խօսքը: Պարթեւներից շատերն ընդունեցին զօրութիւնների Տիրոջը՝ այն նշանների, հրաշքների ու պէս-պէս բժշկութիւնների շնորհիւ, որոնք կատարեց սուրբ առաքեալը, եւ այնտեղ շատերին լուսաւորեց:

Այնուհետեւ մտաւ Եդեմ կոչուող քաղաքը՝ հնդիկների սահմանին մօտ (Թովմաս առաքեալի հետ միաժամանակ): Հասնելով քաղաքամէջ՝ նստեց մի աղբիւրի մօտ, որում տեղի էին ունենում դիւթական

հմայութիւններով ալեկոծութիւններ եւ դեւերի յայտնութիւններ՝ մոլար պաշտամունքի խաբէական պատրանքների ցնորքներով: Ուստի դիմում էին աղբիւրին իբրեւ մի աստուծոյ եւ այնտեղ բազում ընծաներ ու զոհեր էին մատուցում աղբիւրի անունով՝ առասպելաբանելով, թէ ինքնիշխանութեամբ է բխում եւ սնուցողական զօրութեամբ լցնում բոյսերը՝ պարգեւելով տեսակ-տեսակ համեր ու բոյրեր: Եւ աղբիւրի անունը դրել էին «Նեղոսի դուստր»: Մի օր, երբ քաղաքի բազմութիւնը եկել էր զոհ մատուցելու եւ ոսկու, արծաթի, պատուական քարերի, թանկարժէք ու փառաւոր հանդերձների ընծայաբերութիւններ անելու, դեւերը, աղբիւրի ակունքի միջից ձայներ արձակելով եւ ջուրը բարկ կրակի եռքով պղպջացնելով ու դէպի վեր մղելով, հողմի սաստիկ ձայնով ու փայլատակումներով ահ գցելով լսողների ու տեսնողների վրայ, մեծաձայն աղաղակ բարձրացնելով, տալիս էին աղբիւրի անունն իբրեւ աստուծոյ, որը կարող է օգնել եւ պարգեւներ տալ: Իսկ սուրբ առաքեալը, ապշած ու զարմացած եւ նրանց մոլորութեան պատճառով մեծ տրտմութեամբ լցուած, մօտեցաւ աղբիւրին, հանելով թիկնոցը՝ տարածեց ջրի վրայ եւ բարձրաձայն տալով Տէր Յիսուս Քրիստոսի անունը՝ ասաց.

—Այս ջուրը թող ցամաքի՛, եւ խոնաւութեան հե՛տք անգամ թող չմնայ:

Եւ յորդահոս ջրի վտակն իսկոյն ցամաքեց եւ դարձաւ ապառաժ վէմի պէս, հրի որոտման ձայնը եւ հողմի լուսակերպ փայլատակումներն անհետացան ու դադարեցին: Եւ դեւերն աղաղակելով վայնասուն բարձրացրին: Սաստիկ ողբալով հառաչում էին ու ասում.

—Ո՛վ Յիսուս Նազովրեցի, մինչեւ ե՞րբ պիտի խռովքի մատնես մեզ եւ թոյլ չտաս մնալու ջրերի անդունդներում եւ մեր բնակութեան վայրում: Ամբողջ երկրից մեզ հալածեցիր Քո խաչով եւ այժմ Քո աշակերտների ձեռքով ես հալածում, չարչարում ու նեղում ժամանակից առաջ, որ գալու է մեզ վրայ:

Այնժամ սուրբ առաքեալը, սաստելով նրանց, ասաց.

—Ո՛վ պիղծեր, դժնիներ ու մարդատեացներ, արդարութեան թշնամիներ եւ մոլորութեան ուսուցիչներ, ահա սաստում եմ ձեզ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով, չէ՛ք կարող մնալ այս վայրում:

Եւ դեւերն իսկոյն եւեթ կորան ու չքուեցին, ինչպէս մոմը, որ չի կարողանում դիմանալ կրակին, եւ այդպէս սպառուելով անհետացան: Իսկ հաւաքուած բազմութիւնը, սա տեսնելով, մեծ երկիւ-

ղով համակուած, մօտեցաւ սուրբ առաքեալին ու խոնարհուեց նրա առջեւ այն մեծ հրաշքի համար, որ գործուեց աղբիւրի մօտ: Մարդկանց մի մասն էլ, գնալով շրջակայ վայրեր ու գաւառներ, պատմեց այս դէպքի մասին:

Որոշ ժամանակ անց քաղաքի բնակիչները սկսեցին ծարաւից նեղուել, ուստի որոշեցին քարկոծել առաքեալին, սակայն արդիւնքում միմեանց սպանեցին. այդ քարկոծումից մօտ երեսուն մարդ սպանուեց: Իսկ սուրբ առաքեալը, մօտենալով մեռեալներին, ձեռքը դրեց նրանց վրայ, աղօթեց, եւ նրանք կենդանացան ու ողջանդամ ոտքի կանգնեցին: Ժողովուրդը սկսեց առաքեալի մօտ բերել հիւանդների ու այսահարների, անդամալոյծների, կոյրերի, կաղերի, խեղուածների, խուլերի ու համրերի, լուսնոտների, եւ առաքեալն ամէնքին բժշկեց: Այնժամ նրանց կարգաւորաբար սկսեց քարոզել Մատթէոսի Աւետարանը, եւ լսելով՝ ուրախութեամբ ընդունում էին նրա քարոզութիւնը: Իսկ սուրբ առաքեալը, գնալով քաղաքի եզրը՝ մի ապառաժ հարթ վայր, ծնրադրեց, աղօթքի կանգնեց եւ գոհանում էր Քրիստոսի շնորհից, որ բացեց ժողովրդի միտքը՝ լսելու, հասկանալու եւ ընդունելու կեանքի խօսքն ու հաւատալու Տէր Յիսուս Քրիստոսին, Ով ճշմարիտ Աստուած է եւ յաւիտենական կեանք: Առաքեալը խաչակնքեց ու բարձր ձայնով կանչեց, եւ ահա երկրաշարժ ու որոտման ահեղ թնդիւն եղաւ, այդ վայրը ցնցումից ճեղքուեց, քաղցրահամ ջրի մի յորդառատ աղբիւր բխեց եւ հանդարտ ու մեղմ ընթացքով իր շուրջ մի լճակ գոյացրեց: Մարդիկ մեծապէս ուրախացան, եւ առաքեալը, նրանց ջուրն իջեցնելով, մկրտեց եւ լուսաւորեց Սուրբ Հոգու լոյսով: Եւ կատարելով սուրբ պատարագի խորհուրդը՝ նրանց հաղորդեցրեց Աստուծոյ Որդու կենդանարար Մարմնին ու Արեանը՝ մեղքերի թողութեան եւ հոգեւոր կեանքում զօրանալու համար: Այնտեղ սուրբ առաքեալը երէցներ կարգեց այն սպանուածներից, ովքեր կենդանացան նրա ձեռքով, եւ ամէնքին հաստատեց ճշմարիտ հաւատքի մէջ:

Այնտեղից դառնալով՝ մտաւ Խորին Ասորիքի Բոստրա քաղաքը: Երբ քաղաք էր մտնում, վերցրած տանում էին տասներկու տարեկան մի մեռած պատանու՝ Անդրոնիկոսին, որ բոստրացիների հազարապետի որդին էր, եւ նրա դագաղի յետեւից փողերով ու քնարներով, լացուկոծով ընթանում էին խումբ-խումբ բազմութիւններ: Առաքեալն իսկոյն մտաւ բազմութեան մէջ, ձեռքը պարզեց, դիպաւ դագաղին, ուր մեռեալ պատանին էր, եւ ասաց.

—Ո՛վ պատանի, քե՛զ եմ ասում, յանուն մեր Տէր Յիսուս Քրիստոսի վեր կաց կանգնի՛ր:

Մեռեալն իսկոյն ոտքի կանգնեց, եւ նրանք, ովքեր նրան վերցրել տանում էին, կանգ առան: Բազմութիւնը նայեց սուրբ առաքեալի դէմքին ու տեսաւ, որ նրա բերանից կրակ ցոլաց, մտաւ պատանու բերանը, եւ պատանին կենդանացաւ: Ուստի բոլորը միաբերան աղաղակեցին.

—Մի աստուած է յայտնուել մեր մէջ:

Երիտասարդները բռնեցին ու իրենց բազուկների վրայ բարձրացրին սուրբ առաքեալին, իսկ միւսները շտապում էին զոհեր ու ընծաներ մատուցել նրան: Սա տեսնելով՝ սուրբ առաքեալը դուրս պրծաւ նրանց ձեռքից եւ հեռու փախաւ այդ ամբոխից՝ աղաղակելով.

—Ես ամենակալ Տիրոջ, Նրա Որդի Յիսուս Քրիստոսի եւ Սուրբ Հոգու ծառան եմ. Նրա՛ անունով յարութիւն առաւ այդ մեռեալ պատանին, իսկ ես ձեզ մօտ առաքուեցի՝ քարոզելու արքայութեան աւետարանը, որպէսզի, ընդունելով կեանքի խօսքը, փրկուէք՝ հրաժարուելով ձեր ընդունայն պաշտամունքից, որն ունէք ձեր տգիտութեան եւ անհաւատութեան պատճառով, եւ ճանաչէք միակ ճշմարիտ Աստծուն՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսին, Ով արարեց երկինքն ու երկիրը, ծովն ու սրանցում եղած ամէն բան:

Առաքեալն իր սովորութեան համաձայն քարոզեց եւ նրանց համար կրկնօրինակեց Մատթէոսի Աւետարանը, որն իր հետ վերցրել էր: Եւ երեք օրուայ ընթացքում հազիւ կասեցրեց ժողովրդին, որ զոհաբերութիւններ չմատուցեն իրեն: Այնժամ առաւ յարութիւն առած պատանուն, մկրտեց նրան Սուրբ Հոգու հրով ու մաքուր ջրով՝ պատանու հօր՝ հազարապետի եւ նրա ամբողջ ընտանիքի ու ազգականների հետ միասին: Պատանուն վերանուանեց Մատթէոս՝ ըստ սուրբ աւետարանչի անուան: Բարեյօժար կամքով եկան մկրտուեցին նաեւ շատ ուրիշներ, ովքեր պատանու յետեւից դուրս էին եկել քաղաքից, տեսել կատարուած հրաշքն ու հաւատացել առաքեալի քարոզութեանը: Աւելի ուշ՝ երբ այդ պատանին արդէն տասնութ տարեկան էր, առաքեալից ձեռնադրութիւն ստացաւ:

Այդ քաղաքում եօթ բագիններ կային, որոնցում կանգնած էին մարդու նմանութեամբ կոփածոյ եւ քանդակուած կուռքեր, որոնք հազարապետը առաքեալի պատուէրով փշրեց: Սուրբ առաքեալը բազմաթիւ հրաշքներ գործեց հիւանդների եւ տեսակ-տեսակ ցաւերից տառապողների վրայ, բազմաթիւ դեւեր հանեց եւ տեսանելի կերպով հալա-

ծեց քաղաքից: Ապա այնտեղ սուրբ Սեղան կանգնեցրեց եւ իր աշակերտներից մէկին ու իր մկրտած ու ձեռնադրած պատանուն՝ Մատթէոսին, թողեց այնտեղ՝ քահանայագործելու նրանց համար:

Սուրբ Բարթողոմէոսն այնուհետեւ գնաց գերմանիկեցիների երկիրը (Գերմանիկէն յետագայի Մարաշն է): Նրա հռչակը տարածուեց այդ ամբողջ երկրամասում, եւ առաքեալի ձեռքով կատարուող նշանների ու հրաշագործութիւնների համբաւն արեգակի ճառագայթների պէս սփռուելով տարածւում էր շուրջբոլորը: Ամէնքը շտապում էին գնալ նրա մօտ, տանում էին զանազան ցաւերով տառապող հիւանդների, եւ Տիրոջ զօրութիւնը բժշկում էր նրանց: Շատերը նստում սպասում էին նրա անցնելիք ճանապարհին, որպէսզի, երբ նա անցնէր, առողջութիւն գտնէին իրենց ախտերից ու դիւական տանջանքներից: Երբ նրանց թագաւորը լսեց նրա անչափ սքանչելիքների մասին, յոյժ չարացաւ եւ ուղարկեց իր ծառաներին ու հրամայեց նրան բանտ դնել հինգ օր: Երբ հինգ օրն անցաւ, իր մեծամեծերի՝ գերմանիկեցիների գլխաւոր իշխանների հետ ատեան նստեց եւ հրամայեց ներս բերել նրան: Երբ գնացին բանտ, տեսան, որ մեծ բազմութիւն էր հաւաքուել այդտեղ, որովհետեւ բանտից դուրս սաստիկ լոյս էր ծագել՝ միջօրէի արեգակի լոյսի պէս: Ահը պատեց նրանց, ովքեր եկել էին սուրբին ատեանում տանջելու, ուստի յետ դարձան եւ թագաւորին ու նրա իշխաններին պատմեցին այն հրաշքը, որ տեսել էին:

Այնժամ թագաւորն ու նրա հետ բազմած իշխանները մեծ ցասումով վեր կացան եւ հրամայեցին հրկիզել բանտը, որպէսզի Աստուծոյ սուրբն էլ հետն այրուի: Իսկ նա բանտում ամէն օր աղօթում էր, որ Աստուած գթայ Իր արարածներին, եւ դարձի գան անգիտութեան խաւարի, կորստեան անդունդի եւ սատանայական պատրանքների մոլորութիւնից, քանզի պաշտում էին արարածներին եւ իրենց ձեռքի գործերը: Եւ մինչ թագաւորն ու իշխանները մտածում էին այդպէս վարուել սուրբի հետ, յանկարծ ահեղ որոտում եղաւ, եւ ամպերը ճայթեցին շանթարձակ փայլատակմամբ. թագաւորն ու իշխաններն ապշահար ընկան գետնին եւ դարձան անխօս անասունների նման: Իսկ սուրբ առաքեալը բանտից ելնելով՝ ձեռքը մէկ առ մէկ դրեց նրանցից իւրաքանչիւրի վրայ, եւ սթափուելով զօրացան ու ոտքի կանգնեցին: Եւ սուրբ առաքեալին խնդրեցին ողորմել իրենց եւ գթութիւն հայցել Տէր Աստծուց, որ բժշկէր այն հարուածներից, որ վրայ էին հասել իրենց: Իսկ Աստուծոյ սուրբն ասաց.

—Նրանք, ում մարմնաւոր աչքերն են բաց, միայն այս աշխարհի լոյսն են տեսնում, բայց ոչ՝ ճշմարիտ Լոյսը, որ լուսաւորում է ամէն մարդու, որ աշխարհ է գալիս: Արդ՝ եթէ ընդունէք իմ խօսքերը եւ հաւատաք Աստուծոյ Միածին Որդու աւետարանի քարոզութեանը, կը բժշկուէք այդ հարուածներից, որ հայցում էք Տիրոջից իմ բարեխօսութեան միջոցով, եւ ձեր հոգիները կը փրկուեն ու կը դառնաք ժառանգորդները անստուեր լոյսի եւ անանց յաւիտենական կեանքի, որ Աստուծոյ Որդին՝ Յիսուսը, կը տայ ձեզ, եթէ հաւատաք Նրա անուանը աներկբայ դաւանութեամբ:

Պատասխանեցին.

—Հաւատում ենք քո Աստծուն, Ում քարոզում ես մեզ, միայն թէ մեր հոգիները փրկուեն, եւ լուսաւորես մեզ:

Եւ առաքեալը, ինչպէս ամէն տեղ, այնտեղ եւս քարոզեց ըստ Մատթէոսի Աւետարանի, ինչպէս նաեւ բացատրեց Եսայի մարգարէի եւ Առակաց գրքերի խօսքերը: Եւ թագաւորը, իշխաններն ու նախարարները խնդրեցին սուրբ առաքեալին.

—Ուրեմն մի՛ յապաղիր տալ մեզ այն շահը, որ մեր փրկութեան համար է, եւ ազատի՛ր մեզ այս պատուհասիչ խրատից, որ վրայ հասաւ մեզ, քանզի այժմ հասկացանք եւ ճանաչեցինք, որ քո Աստուածն է ճշմարիտ Աստուած, եւ Նրանից բացի ուրիշը չկայ: Եւ մենք Նրան կը ծառայենք ու կը հնազանդուենք:

Այնժամ սուրբ առաքեալը նրանց տարաւ դէպի այն առուակը, որ հոսում էր քաղաքի հարաւային կողմի փոքր ձորակով, եւ այնտեղ մկրտեց նրանց: Նրանց աչքերը բացուեցին եւ տեսան Սուրբ Հոգուն, որ ջինջ լոյսով շրջում էր ջրերի վրայ եւ լոյս հագցնում նրանց՝ որպէս զգեստ: Առաքեալն այդտեղ սուրբ Սեղան կանգնեցրեց, նրանց կերակրեց Աստուծոյ Որդու Մարմնով ու Արեամբ, եւ աղօթելով՝ ձեռքը դրեց նրանց վրայ, որպէսզի հաստատուն մնան այն հաւատքի մէջ, որն ընդունեցին՝ լուսաւորուելով Սուրբ Հոգու լոյսով: Գերմանիկեցիները խնդրեցին, որ սուրբ առաքեալը մնայ իրենց մօտ եւ հովուի իրենց, սակայն նա պատասխանեց.

—Այլ քաղաքների ե՛ւս պէտք է աւետարանեմ, ինչպէս ասաց Քրիստոսը. «Գնացէ՛ք բոլոր հեթանոսների մէջ, նրանց մկրտէ՛ք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով»: Արդ՝ Քրիստոսն Ինքը, Ում հաւատացիք եւ Ում Հոգով լուսաւորուելով կնքուեցիք, կը լինի ձեզ հետ, իսկ մենք անհնազանդ չգտնուենք Նրա պատուիրանի հանդէպ:

Հայոց Սանատրուկ Թագաւորի գահակալութեան քսանիններորդ տարում՝ շուրջ 67 թ.-ին, սուրբ Բարթողոմէոս առաքեալը Սուրբ Հոգու հրամանով մտաւ Մեծ Հայք: Նախ մտաւ Սիւնիք՝ սկսելով Որդուսա գիւղից, ապա անցաւ Հայոց Գողթն գաւառ եւ այնտեղ քարոզեց կեանքի խօսքը: Մարդիկ ուրախութեամբ եւ մեծ յօժարութեամբ ընդունեցին այն, հնազանդուեցին ու լուսաւորուեցին սուրբ Աւազանի մկրտութեամբ: Այնտեղ սուրբ առաքեալը նրանց համար երէցներ կարգեց այն մոգերից, ովքեր աշակերտել էին իրեն, եւ Աստուած բազմաթիւ զօրութիւններ էր գործում այդ մարդկանց ձեռքով ամէն տեղ, ուր եւ գնում էին:

Սուրբ առաքեալը, գալով Արտաշատի բլուրը, հանդիպեց տասներկու առաքեալներից մէկ ուրիշին՝ Թադէոսին: Այդտեղ օթեւանեցին՝ գիշերն անցկացնելով աղօթքով, եւ իրենց հանդիպման վայրում կանգնեցրին Տէրունական խաչի նշանը: Ի յիշատակ նրանց հանդիպման՝ յետագայում այդ վայրը կոչուեց Օթեաց խաչ: Յաջորդ օրն առաքեալները հրաժեշտ տուեցին միմեանց՝ լցուած մեծ ուրախութեամբ, եւ Թադէոսը գնաց Արտազ գաւառ, ուր եւ շատ չանցած՝ ստացաւ նահատակութեան պսակը, իսկ Բարթողոմէոսը եկաւ Հէր եւ Զարեւանդ գաւառները, ուր նշաններ ու հրաշքներ գործեց հիւանդների վրայ, բազում դեւեր հանեց եւ շատերին լուսաւորեց ու մխիթարեց սուրբ աւետարանի վարդապետութեամբ: Հէր եւ Զարեւանդ գաւառներից սուրբ Բարթողոմէոսն անցաւ Անձեւացեաց գաւառ, ապա, շրջելով Հայաստանի զանազան վայրերում, ի վերջոյ հասաւ Հայոց Ուրբիանոս կամ Արեբանոս քաղաքը: Նրա մօտ գալիս էին տեսակ-տեսակ հիւանդութիւններից ու տանջանքներից նեղուածներ, եւ բոլորին բժշկում ու լուսաւորում էր սուրբ Աւազանով մկրտութեամբ:

Նրա մասին լսեց Ոգուհին՝ քոյրը Սանատրուկ Թագաւորի, ով Աբգար Թագաւորի քրոջ որդին էր, եւ ծածկապէս եկաւ նրա մօտ ու նրանից լսելով կեանքի խօսքը՝ իր իւրայինների հետ հաւատաց Տէր Յիսուս Քրիստոսին, կուսութեան զգեստ հագնելով՝ խսպառ մերկացաւ այս աշխարհի փառքից եւ, աշակերտելով առաքեալին, նրա հետ էր շրջում: Թագաւորը, երբ լսեց կատարուածի մասին, մեծ ցասումով լցուեց, ինչպէս արիւնարբու կատաղի գազան, եւ ուղարկեց Տերենտիոս հազարապետին՝ նրան ենթակայ զինուորներով հանդերձ: Եւ երբ հազարապետն ըստ Թագաւորի հրամանի եկաւ Աստուծոյ սուրբի մօտ, նրան տեսնելով՝ զթաց, իսկ առաքեալը սկսեց նրան քարոզել արքայութեան

աւետարանը, եւ Տէրը բացեց նրա միտքը՝ անսալու առաքեալի խօսքերին: Տերենտիոսը տառապում էր բորոտութեան ախտով: Սուրբ առաքեալը գիշերով նրան տարաւ մկրտեց, եւ ահա լուսաւոր մի ամպ հովանի եղաւ այդ վայրի վրայ, եւ հրէ լոյսը պատեց սրբարար աւազանի շուրջ: Երբ Տերենտիոսը ջրից դուրս էր գալիս, յանկարծ նրա վրայից կոշտացած մաշկը ծառի կեղեւի նման ընկաւ, եւ իբրեւ զգեստ՝ նա լոյս հագաւ: Տեսնելով կատարուած հրաշքը՝ շատերը հաւատացին Տիրոջը: Երբ սրա լուրը հասաւ Թագաւորին, առաւել զայրացաւ եւ սաստիկ բարկութեամբ շտապ ուղարկեց մէկ ուրիշի՝ նախարարներից մէկին, որպէսզի անյապաղ սպանի նրանց, եւ թուլութիւն չցուցաբերեն՝ ձգձգելով եւ անսալով նրանց: Եւ սուրբ առաքեալին Ոգուհու, հազարապետի եւ միւս աշակերտածների հետ բռնեցին եւ բերեցին ատեան: Վեց մարդ մօտ մէկ ժամ փչոտ գուրզերով տանջեց սուրբ առաքեալին, եւ նրան մեռած էին համարում, ուստի քաշելով տարան գցեցին քաղաքից դուրս: Բայց սուրբ առաքեալը ողջ էր իր Տիրոջ զօրութեամբ: Երբ մօտ երեք ժամ այսպէս ընկած մնաց, եւ նրա շուրջ քաղաքից ու նրա սահմաններից յոյժ մեծ բազմութիւն հաւաքուեց, յանկարծ նրա ձեռքը շարժուեց. մարդիկ նրան օգնեցին, եւ ելաւ նստեց ու ձեռքերը դէպի երկինք բարձրացնելով՝ աղօթեց.

—Տէ՛ր Աստուած, Հա՛յր մեր Տէր Յիսուս Քրիստոսի, ձեռքիցդ մի՛ թող այս վիճակը՝ Թադէոսի, Թովմաս-Յուդայի եւ իմ Բարթողոմէոսի խնդրանքներով, որ հոգացինք այս երկրի համար: Թող ոտնակոխ չլինի թշնամուց, այլ տո՛ւր նրանց ողորմութեանդ շնորհը, եւ թող դարձի դան սնոտի կուռքերին երկրպագելուց, քանի որ մոլորուել են անհաւատութեան տգիտութեամբ: Տո՛ւր նրանց հովիւ եւ առաջնորդ, որպէսզի միայն Քեզ ճանաչեն ճշմարիտ Աստուած եւ Ում Դու առաքեցիր՝ Յիսուս Քրիստոսին: Ինձ ընդունի՛ր Քեզ մօտ, Տէ՛ր իմ, եւ Քեզ հաւատացողներին պահպանի՛ր:

Երբ սա ասաց, այդ վայրը շարժուեց, լուսեղէն կամար գոյացաւ սուրբի վրայ, եւ նա դէպի վեր՝ երկինք նայելով, հոգին աւանդեց: Բուրեց անուշահոտութիւն, եւ տեսիլքով յայտնուեց սուրբ Թադէոս առաքեալը, ընդառաջ եկաւ Բարթողոմէոսին, եւ գնացին այնտեղ, որտեղից եկել էր Աստուծոյ սուրբը՝ Թադէոսը: Ահը պատեց ամէնքին, այդ օրը երկու հազար հոգի եւս հաւատաց Քրիստոսին, եւ կատարուածի համար ամէնքը փառաւորում էին Աստծուն: Կամարաձեւ լոյսը սուրբ առաքեալի մարմնի վրայ մնաց տասներկու օր:

Երանելի Ոգուհուն, հազարապետին եւ նրանց հետ ուրիշ շատերի սրով սպանեցին: Սուրբ առաքեալի մարմինն ամփոփեցին այն նույն վայրում, ուր միւս սուրբ վկաների մարմիններն էին թաղուել: Այդ ժամանակ որոտում եղաւ, որը խուլերը լսեցին եւ բժշկուեցին, կոյրերը տեսան եւ լուսաւորուեցին, համրերը խօսեցին, եւ ամէնքը բժշկուեցին իրենց հիւանդութիւններից ու հաւատացին մեր Տէր Յիսուս Քրիստոսին՝ սուրբ Բարթողոմէոս առաքեալի միջոցով: Հաւատացեալները, միաբան բարձրացնելով իրենց ձեռքերը, միաբերան փառաւորում էին մեր Տէր Յիսուս Քրիստոսին:

Սուրբ Բարթողոմէոս առաքեալը նահատակուեց իր լծակցի՝ սուրբ Թադէոս առաքեալի նահատակութիւնից շատ չանցած՝ Տիրոջ 60-ական թթ. վերջերին կամ 70-ական թթ. սկզբներին՝ Մեծ Հայքի Կորճայք նահանգի Փոքր Աղբակ գաւառի Արեբանոս (յետագայում Աղբակ, այժմ Բաշքալէ) քաղաքի մօտ, ուր, ըստ աւանդութեան, գտնւում է նրա գերեզմանը, եւ որի վրայ յետագայում չորրորդ դարում, կառուցուել է եկեղեցի: 1994 թ.-ին Հռոմի պապը, ի նշան Հայոց Եկեղեցու առաքելականութեան ընդունման, Հայ Եկեղեցուն ընծայեց նրա առաքեալների՝ Թադէոսի եւ Բարթողոմէոսի մասունքներից, որոնք պահւում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Ըստ Հայոց Եկեղեցու աւանդութեան՝ սուրբ Բարթողոմէոսը միւս առաքեալներից նուէր է ստացել Տիրամօր հրաշագործ պատկերը՝ փայտի վրայ նկարուած, եւ իր հետ բերել Հայաստան: Այդ պատկերով նա կործանել է Անձեւացեաց գաւառի Դարբնաց քար կոչուող վայրում գտնուող Անահիտ դիցուհու մեհեանը եւ փոխարէնը կառուցել եկեղեցի եւ կուսանոց (Հոգեաց վանք), ուր եւ պահուել է այդ պատկերը:

ՍՐԲՈՒՀԻ ԹԵԿՂԻ ՎԱՐՔԸ

Քրիստոսի առաքելուհին եւ Պօղոսի աշակերտուհին, ով Թեկղ կամ Թեկղա է անուանւում, ի սկզբանէ մինչ այժմ մեծ հռչակ ունի Եկեղեցում: Սուրբ Գրիգոր Աստուածաբանը Յիսուսի առաքեալների ու աշակերտների հետ է դասում նրան՝ «Ընդդէմ Յուլիանոսի» ճառում գրելով այսպէս. «Չպատկառեցի՞ր Քրիստոսի [պատարագի] նման մատուցուած պատարագներից՝ Յովհաննէսից (Մկրտչից), Պետրոսից, Պօղոսից, Յակոբոսից, Ստեփանոսից, Ղուկասից, Անդրէասից եւ Թեկղից»: Նրա մասին պատմում են նաեւ Եկեղեցու ուրիշ հայրեր ու վարդապետներ, իսկ սուրբ վկաներն ու վկայուհիները յաճախ են նրան յիշատակում իրենց նահատակութեան ընթացքում: Եւ որովհետեւ մեծ էր նրա անունը եւ մեծամեծ էին նրա գործերը, նրա ժամանակներից սկսած՝ նրա մասին գրուել են բազմաթիւ հաւաստի եւ ոչ հաւաստի բաներ, ուստի մենք այստեղ արձանագրում ենք նախնիների ընդունածն ու աւանդածը:

Սրբուհի կոյս Թեկղը լիկայոնացիների Իկոնիոն քաղաքից էր, մի մեծահարուստ հեթանոս այրի կնոջ դուստրը, որ նշանուած էր մի իշխանի հետ, ում անունն էր Թեմերոս կամ Թամիւրիս: Պօղոս առաքեալը բազում հալածանքներից յետոյ եկել էր Իկոնիոն քաղաք եւ իջեւանել Ոնեսիփորոսի տանը, ուր գալիս էին տղամարդկանց ու կանանց բազմութիւններ՝ լսելու Աստուծոյ խօսքը: Քանի որ տունը մօտ էր Թեկղի տանը, կոյսը գալիս նստում էր իր սենեակի պատուհանի մօտ եւ, Պօղոսին լաւ չտեսնելով, լսում նրա խօսքը: Նա խօսում էր սրբութեան եւ հոգեւոր առաքինութիւնների մասին՝ ասելով.

—Լսէ՛ք ինձ, օտարականից խօսք լսելու համար հաւաքուածներ, քանզի արդարեւ ձեզ օտար եւ նոր, բայց միաժամանակ աստուածային ու փրկարար բան ունեմ ասելու, որը սովորեցի Նրանից իսկ՝ Աստուծոյ Խօսքից, Ով ծնուեց մարդկային կերպարանքով եւ բնութեամբ, երեւաց երկրում եւ մեզ ուսուցանեց հրեշտակային ու երկնային կենցաղավարութիւնը: «Երանի՛ նրանց,— ասում էր Նա,— ովքեր սրտով մաքուր են, որովհետեւ նրանք Աստծուն կը տեսնեն: Երանի՛ նրանց, ովքեր իրենց մարմինը սրբութեամբ են պահում, որովհետեւ նրանք Աստուծոյ տաճար կը կոչուեն: Երանի՛ նրանց, ովքեր ճնշում են իրենց անձն Աստուծոյ համար, որովհետեւ նրանց հետ Աստուած

կը խօսի: Երանի՛ նրանց, ովքեր արհամարհում են աշխարհը, որովհետեւ նրանք հաճելի կը լինեն Աստծուն: Երանի՛ նրանց, ովքեր կին ունեն, բայց այնպիսին են, իբրեւ թէ չունեն, որովհետեւ նրանք երկիրն ու երկինքը կը ժառանգեն: Երանի՛ նրանց, ովքեր իրենց սրտում Աստուծոյ երկիւղն ունեն, որովհետեւ նրանք հրեշտակ կը կոչուեն: Երանի՛ նրանց, ովքեր դողում են Աստուծոյ խօսքերից, որ լսում են, որովհետեւ Աստուած կը կանչի նրանց: Երանի՛ նրանց, ովքեր ընդունեցին Յիսուս Քրիստոսի իմաստութիւնը, որովհետեւ նրանք Աստուծոյ որդիներ կը լինեն: Երանի՛ նրանց, ովքեր պահում են մկրտութեան մաքրութիւնը, որովհետեւ նրանք հանգիստ կը գտնեն Հօր եւ Նրա սիրելի Որդու մօտ Սուրբ Հոգով: Երանի՛ նրանց, ովքեր հետեւում են Քրիստոսի օրինակին, որովհետեւ նրանք մեծ լոյսի մէջ կը լինեն: Երանի՛ նրանց, ովքեր Աստուծոյ սիրոյ համար ելնում են մարմնից, որովհետեւ նրանք կը ժառանգեն յաւիտենական կեանքը եւ մշտապէս կը լինեն Աստուծոյ Որդու աջ կողմում: Երանի՛ կոյսերի հոգուն ու մարմնին, որովհետեւ նրանք հաճելի կը լինեն Աստծուն, եւ չի կորչի նրանց սրբութեան վարձը:

Մինչ Գողոսն այս խօսքերն էր ասում, Թեկղ կոյսն ամբողջ սրտով ընդունում էր ասուածները եւ անյագ փափագով մտապահում ամբողջը: Նա երեք օր չհեռացաւ պատուհանից, քանզի առաքեալն անընդհատ քարոզում էր նրանց, ովքեր գալիս էին իր մօտ գիշեր ու ցերեկ: Թեկղի մայրը շատ ջանաց հեռացնել դստերը առաքեալի խօսքերը լսելուց, սակայն չկարողացաւ: Նա կանչեց Թեկղի նշանածին եւ ասաց նրան.

—Ասում եմ քեզ, Թեմերո՛ս, որ այն մարդն ապականեց Իկոնացիների քաղաքը. նրան աշակերտում են շատ կանայք ու երիտասարդներ, որոնց ուսուցանում է պաշտել մէկ Աստծուն եւ ապրել սրբութեամբ: Եւ Թեկղն էլ է հրապուրուել նրանով եւ լցուել նոյն ցանկութեամբ. չար ՀՀուկներին ուշադրութիւն դարձնելով՝ աչքը չի բարձրացնում տնից, ուր քարոզում է նա:

Թեմերոսը մտաւ Թեղկի մօտ եւ խրատեց հեռանալ պատուհանից.

—Շրջուի՛ր դէպի ինձ եւ պատկառի՛ր ինձնից, քանզի դու իմ նշանածն ես:

Սակայն Թեկղը նրան արժանի չհամարեց պատասխանի, որովհետեւ նրա միտքը կապուած էր առաքեալի խօսքերին:

Այնժամ Թեմերոսը լցուեց ցասումով, գնաց հրապարակ եւ, նայելով մարդկանց, ովքեր մտնում էին Գողոսի մօտ եւ ելնում այնտեղից, հարցրեց.

—Ո՞վ է այն մարդը, եւ ի՞նչ է ուսուցանում: Ես ձեզ շատ արծաթ կը տամ, եթէ ասէք ինձ:

Գղնձագործ Դեմասն ու դարբին Հերմոգինէսը, ովքեր ճշմարտութեան թշնամիներ էին, Թեմերոսին ասացին.

—Այդ մարդը մէկն է քրիստոնեայ կոչուողների գլխաւորներից: Նա երիտասարդներին հեռացնում է կոյսերից, կոյսերին՝ երիտասարդներից եւ ասում. «Ձէք կարող յարութիւն առնել մեռելներից, եթէ ձեր անձը սրբութեամբ չպահէք»:

Թեմերոսը, լսելով նրանց չարախօսութիւնը, ուրախութեամբ իր տուն տարաւ նրանց եւ այդ գիշեր պահեց: Առաւօտեան բրաւոր եւ անօրէն մարդկանց բազմութեամբ դիմեց դէպի Ոնեսիփորոսի տուն եւ Գողոսին տարաւ Կեստիղիոս դատաւորի ատեան՝ բերելով սուտ վկաների, ովքեր ասում էին, թէ Գողոսը կոյսերին թոյլ չի տալիս ամուսնանալ: Դատաւորը Գողոսին ասաց.

—Ասա՛ ինձ, ի՞նչ ես սովորեցնում, քանզի քիչ չեն քեզ չարախօսողները:

Առաքեալը պատասխանեց.

—Կ՚ասեմ քեզ, թէ ինչ եմ ուսուցանում: Լսի՛ր, դատաւո՛ր, ուսուցանում եմ բարձրեալ եւ ճշմարիտ Մի Աստծուն, ում ոչինչ պէտք չէ, բացի մարդկանց որդիների սրբութիւնից ու փրկութիւնից: Նա ինձ առաքեց՝ քարոզելու եւ աւետարանելու աշխարհին, որ փրկուեն կորստից, պղծութիւնից, մեղքի ու մահուան ամէն մի ցանկութիւնից, որ չմեղանչեն զեխութեամբ, այլ նրանց մէջ հաւատով հաստատուեն Աստուծոյ ահն ու երկիւղը, եւ ճանաչեն ճշմարտութիւնն ու սէրը պարկեշտութեամբ եւ հնազանդութեամբ: Արդ, եթէ ուսուցանում եմ այն, ինչ Աստուած ինձ սովորեցրեց, ինձ չարախօսողներին ի՞նչ պարտք ունեմ:

Երբ դատաւորը սա լսեց, հրամայեց բանտ տանել նրան, մինչեւ որ տեղ լինի նրան լաւ լսելու: Իսկ Թեկղը նոյն գիշերը վերցրեց իր ապարանջանները, տարաւ տուեց իրենց տան դռնապանին եւ այդպէս բացելով դուռը՝ գնաց բանտապետի մօտ, ով պահում էր Գողոսին: Նրան ոսկէ ուրիշ զարդեր տուեց, որպէսզի թոյլ տայ իրեն բանտ մտնել, եւ գնաց նստեց Գողոսի ոտքերի մօտ: Եւ լսում էր նրանից կեանքի խօսքեր եւ մեծ ուրախութեամբ համբուրում առաքեալի ոտքե-

րի ու ձեռքերի կապանքներն ու շղթաները: Երբ Թեկղի եւ Թեմերոսի ընտանիքներին յայտնուեց այս մասին, գնացին պատմեցին դատաւորին եւ նրա հրամանով Գողոսին ատեան բերեցին, բայց Թեկղը դեռեւս մնում էր բանտում եւ արտասուքով թրջում այն տեղը, ուր նստած էր կապուած Գողոսը:

Դատաւորը հրամայեց Թեկղին նոյնպէս ատեան բերել եւ, նայելով նրան, ասաց.

—Ինչո՞ւ չես դառնում քո նշանածի կինն ըստ մեր օրէնքի:

Իսկ Թեկղն անթարթ աչքերով նայում էր Գողոսին եւ դատաւորին բնաւ չէր պատասխանում: Այնժամ ամբոխն աղաղակեց Գողոսի եւ Թեկղի դէմ.

—Կորցրէ՛ք մոգերին:

Անգամ Թեկղի մայրը, մոլեգնելով դատեր դէմ, ճչում էր.

—Կորցրէ՛ք անմիտին, որպէսզի բոլոր կանայք, ովքեր նայում են դրան, սարսափեն եւ այլեւս չհետեւեն այդ չար ուսմունքին:

Դատաւորը հրամայեց ծեծել Գողոսին եւ հանել քաղաքից դուրս, իսկ Թեկղին սկսեց խրատել, որ հեռու մնայ Քրիստոսից ու Գողոսից, վերադառնայ մօր եւ նշանածի մօտ: Երբ մի քանի օր խնդրանքներով ու սպառնալիքներով չկարողացաւ համոզել նրան, կոյսի մասին վճիռ կայացրեց, որ այրուի հրապարակօրէն. «Այն բանի համար, որ լքեց իր նշանածին եւ միացաւ օտար տղամարդու»: Այնտեղ եկաւ նաեւ դատաւորը զինուորների բազմութեամբ, եւ մեծ ամբոխ հաւաքուեց: Այնտեղ, ինչպէս մոլորուած ոչխարն է փնտրում իր հովուի հետքը, այդպէս էլ Թեկղն էր փնտրում Գողոսին եւ նայում մարդկանց՝ նրանց մէջ նրան տեսնելու յոյսով: Եւ ահա նոյն պահին տեսաւ Տէր Յիսուս Քրիստոսին, Ով նստած էր իր դէմ-յանդիման՝ Գողոսի նմանութեամբ, բայց լուսափայլ ու անճառ փառքով, որից Թեկղի սիրտը լցուեց ուրախութեամբ, եւ քաջալերուելով՝ զօրացաւ: Եւ մինչ ապշած նայում էր, Տէրը վեր կացաւ այնտեղից, ելաւ երկինք, իսկ կոյսը զօրութեան հոգի առաւ՝ աներկիւղ մեռնելու Քրիստոսի սիրոյ համար:

Այնժամ բազմութիւնը, մինչեւ իսկ մանուկներն ու կանայք, Թեկղին այրելու համար բոլոր կողմերից փայտ բերեցին եւ դիզեցին հրապարակում: Ապա զինուորները բռնեցին նրան, որ բարձրանայ դիզուած փայտի վրայ: Եւ նա զուարթ մտքով առաջ գնաց: Կրակը վառեցին: Մինչեւ իսկ դատաւորն էր արտասուում եւ զարմանում այն զօրութեան վրայ, որ կար Թեկղի մէջ: Արդ, երբ երանելի կոյսը բորբոքուած

կրակի մէջ էր, ձեռքերը խաչաձեւ տարածած՝ աղօթում էր: Նրա գլխից մի մազ անգամ չէր խանձւում, քանզի Սուրբ Հոգին գթաց նրան: Եւ ահա անձրեւաբեր ամպը հովանի եղաւ նրան, եւ երկնքից ու երկրից գոչման ձայն ելաւ, կարկուտ ու անձրեւ տեղաց երկրի վրայ, եւ մահուան սարսափը պատեց ամբոխին: Կրակը հանգաւ, Թեկղը փրկուեց, եւ մինչ ամբոխը ցրւում էր, կոյսը ելաւ փնտրելու եւ գտնելու Գողոսին:

Իսկ Գողոսը Մնեսիփորոսի ու նրա ընտանիքի հետ թաքնուել էր քաղաքից դուրս՝ մի աղքատ այրու տանը: Երբ ոչինչ չունէին ուտելու եւ ոչ էլ դրամ կերակուր գնելու, Գողոսը հանեց իր վերարկուն եւ, տալով Մնեսիփորոսի պատանի որդուն, ուղարկեց հաց ու կերակուր գնելու եւ որեւէ լուր բերելու Թեկղի մասին: Պատանին, երբ վերադառնալիս տեսաւ Թեկղին, զարմացաւ եւ ասաց նրան.

—Թե՛կղ, ո՞ւր ես գնում:

Նա ասաց.

—Գողոսին եմ փնտրում, ով ազատեց ինձ այն կրակից:

Պատանին նրան ասաց.

—Ե՛կ, ես կը տանեմ քեզ նրա մօտ, քանզի ահա վեց-եօթ օր է՝ արցունքներով ու պահքով Աստծուն խնդրում է քեզ համար:

Թեկղը, մօտենալով այն տեղին, լսեց Գողոսի ձայնը. նա ծնկի իջած աղաչում էր Աստծուն Թեկղի համար՝ ասելով. «Հա՛յր մեր, որ երկնքում ես, խնդրում եմ Քեզ, կրակը թող չմերձենայ Թեկղին, հանգցրո՛ւ այն, քանզի նա Քոնն է»: Եւ Թեկղը մօտեցաւ եւ գոհութեամբ լեցուն ձայնով ասաց.

—Հա՛յր մեր, որ արարեցիր երկինքն ու երկիրը, Դու ես որբերի Հայրը, գոհանում եմ Քեզնից ամէն բանի համար, որ արեցիր ինձ համար եւ փրկեցիր ինձ, որպէսզի Գողոսին տեսնեմ:

Եւ առաքեալն ու բոլոր նրա հետ թաքստոցում գտնուողները շատ ուրախացան Թեկղին կենդանի տեսնելով: Պատանին նրանց համար ուտելիք էր բերել, եւ նրանք ճաշակեցին ուրախութեամբ ի Տէր: Ապա Թեկղը Գողոսին ասաց.

—Կը խուզեմ մազերս եւ կը գամ քո յետեւից, ուր էլ որ գնաս:

Գողոսն ասաց.

— Փորձութիւնները շատ են, իսկ դու գեղեցիկ կին ես: Գուցէ քեզ վրայ այլ փորձութիւն գայ, աւելի չար, քան առաջինը, եւ համբերել չկարողանաս:

Թեկղն ասաց.

—Միայն Քրիստոսի դրո՛շմը տուր ինձ, եւ ինձ չի մօտենայ փորձութիւնը:

Եւ առաքեալն ասաց.

—Համբերո՛ղ եղիր եւ կը ստանաս այն, ինչ խնդրում ես:

Այնժամ Պօղոսն արձակեց Ոնեսիփորոսին՝ ընտանիքի հետ միասին տուն վերադառնալու, եւ ասաց. «Իսկ մենք հեռանանք այս քաղաքից»: Եւ Թեկղին իր հետ վերցնելով՝ գնաց Ասորիքի Անտիոք, որտեղ հաւատացեալներն առաջին անգամ քրիստոնեայ կոչուեցին: Բայց այնտեղ էլ սատանան ելաւ կոյսի դէմ: Ալեքսանդրոս անունով մի երեւելի այր, որ արքայական փառք ունէր քաղաքում, երբ տեսաւ Թեկղին, սիրահարուեց նրան եւ խնդրեց Պօղոսին՝ իբրեւ նրա հօր եւ ազգակցի, նրան կնութեան տալ իրեն: Եւ բռնելով Թեկղին՝ կամեցաւ գրկել նրան: Իսկ մաքուր կոյսը մերժեց Ալեքսանդրոսին: Երբ վերջինս բռնացաւ, սուրբ կոյսը զօրանալով՝ պատռեց նրա պատմուճանը, նրա պսակակերպ խոյրը հանեց ու գետնին գցեց՝ նրան մերկ ու ամօթալից թողնելով հրապարակում:

Այնժամ Ալեքսանդրոսի սէրն ատելութեան փոխուեց: Նա շտապ գնաց եւ դատաւորին հրաման հանել տուեց՝ Թեկղին գազանների առաջ գցելու, եւ ինքն էլ յանձնեց՝ գցուելու գազանների առաջ: Այդ օրը Թեկղը պահուելու տրուեց մի մեծատուն տիկնոջ տանը, ում անունն էր Տրիփոնա կամ Տրիփենեա, ով սիրով ընդունեց նրան ի յիշատակ իր վախճանուած դստեր:

Յաջորդ օրը դատաւորը մի տախտակի վրայ գրեց Թեկղի դատավճիռը, որը ցոյց տրուեց հաւաքուած ժողովրդին: Ըստ դրա՝ Թեկղը դատւում էր մեծ իշխան Ալեքսանդրոսին անարգելու պատճառով: Եւ երբ Թեկղին տանում էին, նրա հետ եկաւ նաեւ Տրիփոնան, ով լաց էր լինում ասելով.

—Իմ դստրիկին գերեզման ուղարկեցի, իսկ հիմա քեզ եմ ուղարկում գազաններին կերակուր: Թող քո Աստուածը քեզ օգնակա՛ն լինի:

Եւ Թեկղն արտասուքով դիմեց Աստծուն.

—Դու ես իմ Տէրն ու Աստուածը, հաւատում եմ Քեզ, Ում ապաւինեցի, եւ փրկեցիր ինձ այն կրակից, բարի հատուցո՛ւմ տուր Տրիփոնա տիկնոջը, ով գթաց ինձ՝ Քո աղախնուն, եւ սրբութեամբ պահեց:

Այնժամ մերկացրին Քրիստոսի անարատ գառին եւ նրա վրայ կտաւի ծածկոց գցեցին: Թեկղը դարձեալ գոչեց առ Աստուած եւ ասաց.

—Հա՛յր մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Աստուա՛ծ մեր, Դու ես հալածուողների օգնականն ու որբերի վերակացուն, նայի՛ր Քո աղախնին, ով մերկ ու խայտառակ կանգնած է այսքան զինուորների առջեւ: Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, յիշի՛ր Քո աղախնին այս ժամին:

Այդժամ բազմութեան մէջ վայրենի աղմուկ-աղաղակ բարձրացաւ. մի մասը գրգռում էր գազաններին եւ անարգում Թեկղին՝ անուանելով նրան աստուածներին անարգող, իսկ միւս մասն էլ հակառակն էր ասում՝ բողոքում էր առ Աստուած այդ անօրինութեան համար, որը տեղի էր ունենում քաղաքում ընդդէմ անարատ ու անմեղ օտար օրիորդի: «Անիրաւ է դատաստանը, որով դատում էք նրան, կը քանդուի այս քաղաքն այս չարիքների պատճառով: Դատաւորը կամենում է կորստեան մատնել բոլորին: Դառն է այն տեսարանը, որի ականատեսն ենք», — ասում էին նրանք:

Բայց երբ դատաւորի զինուորները կոյսի վրայ արձակել տուեցին մի էգ առիւծի, նա, հասնելով Թեկղի մօտ եւ տեսնելով նրան, որ բազկատարած աղօթում էր, իր գազանութիւնը մի կողմ թողեց եւ, նստելով նրա ոտքերի մօտ, սկսեց դրանք լիզել: Արձակեցին մի արջ, բայց երբ այն մօտեցաւ Թեկղին, առիւծը՝ իբրեւ նրա պահապան, վեր կացաւ, յարձակուեց ու պատառոտեց արջին: Այդպէս երկու կէս եղաւ նաեւ ինձը, առիւծն առիւծի հետ ընդհարուեց, եւ Թեկղը Տիրոջով անվնաս պահուեց գազաններից եւ գոհանում էր Աստծուց: Դրանից յետոյ կոյսին նետեցին մերձակայ ջրափոսի մէջ, որը լեցուն էր թունաւոր զեռուններով: Թեկղը, համարելով, որ հասել է իր վախճանը, ասում էր.

—Ահա ժամանակն է մկրտուելու: Տէ՛ր Յիսուս Քրիստոս, ահա այսօր՝ իմ վերջին օրը, ջրում արեամբս եմ մկրտւում:

Եւ երբ բոլորը կարծում էին, թէ նա ազատուելու ոչ մի հնար չունի, տեսան սաստիկ լոյս, որը պատեց կոյսի շուրջբոլորը, եւ գազանները սատկեցին: Եւ Թեկղը դուրս ելաւ լոյս զգեցած, այնպէս որ չէր երեւում, թէ մերկ է: Հրապարակում գտնուող կանայք, կարծելով, թէ Թեկղն աստուածուհիներից մէկն է, երկիւղեցին, շտապեցին պատուել նրան զանազան անուշ խունկերով եւ նրան ազնիւ հագուստներ մատուցեցին: Իսկ Ալեքսանդրոսն, առաւել խստասիրտ դառնալով, Թեկղին կապել տուեց երկու եզների միջեւ եւ հրամայեց շիկացած շամփուրներով այրել նրա ազդրերը, որպէսզի այրուկները մեռցնեն կապեալին: Սակայն կոյսը ողջանդամ փրկուեց: Տրիփոնա տիկինն էլ,

տեսնելով անողորմ փորձութիւնները, որոնց ենթարկում էին Թեկղին, յանկարծակի ճչաց եւ մեռածի պէս ընկաւ: Ալեքսանդրոսը սարսափեց, չլինի թէ կայսեր կողմից իրեն չարիքներ հասնեն, քանզի Տրիփոնան նրա ցեղից էր, ուստի յորդորեց դատաւորին Թեկղին ազատ արձակել:

Դատաւորը կոյսին կանչեց եւ նրան ասաց.

—Ո՞վ ես դու. գազաններն ինչո՞ւ քեզ չմօտեցան:

Թեկղն ասաց.

—Ես աղախինն եմ Քրիստոսի՝ կենդանի Աստուծոյ, Ում վրայ եմ դնում իմ յոյսը: Նրա՛ պատճառով ինձ չեն մօտենում գազանները, քանզի միայն Նա՛ է սահմանը կեանքի ու փրկութեան եւ հաստատութիւնն անմահութեան, վտանգի մէջ գտնուողների ապաւէնը, նեղուածների սփոփիչը, անյոյսների յոյսն ու հովանին: Եւ արդ, ասում եմ քեզ, դատաւո՛ր, եւ բոլոր նրանց, ովքեր քո առջեւ են կանգնած, որ ով հաւատայ Աստծուն, Ում արած մեծամեծ գործերը տեսաք Իր աղախնու համար, կ'ապրի եւ չի մեռնի յաւիտենական մահուամբ: Իսկ ով չհաւատայ Նրան, չի ապրի, այլ կը մեռնի յաւիտեան:

Այնժամ դատաւորը հրամայեց ամբոխի առջեւ ասել, որ Թեկղին Աստուած ազատեց եւ տուեց նրանց: Եւ կանայք, որ նստած էին թատրոնում, սկսեցին բարձրաձայն ասել.

—Մէկն է Թեկղի Աստուածը, Ով պահպանեց նրան եւ փրկեց գազաններից:

Տրիփոնան վեր կացաւ, ուրախութեամբ գնաց փարուեց Թեկղին եւ ասաց.

—Դո՛ւստր իմ Թեկղ, այժմ հաւատում եմ, որ կենդանի է իմ աղջիկը: Ե՛կ իմ տուն, իմ ամբողջ ունեցուածքը քեզ եմ տալու:

Կոյսը գնաց նրա հետ եւ, ութ օր մնալով նրա տանը, սովորեցրեց նրան Աստուծոյ բոլոր պատուիրանները: Եւ Տրիփոնա տիկինն ու նրա աղախիններից շատերը հաւատացին Աստծուն, եւ մեծ ուրախութիւն եղաւ: Ապա Թեկղը տղամարդու հագուստով ելաւ՝ փնտրելու իր ուսուցչին՝ Պօղոս առաքեալին, եւ գալով Մեռոք (որն, ըստ այլոց, լիկիացւոց Միւռին է անուանւում)՝ այնտեղ գտաւ նրան: Նա նստած ուսուցանում էր Աստուծոյ խօսքը: Թեկղը պատմեց նրան այն ամէնի մասին, ինչ պատահել էր իրեն: Հաւանաբար նա հէնց այդ ժամանակ էլ մկրտուել է: Սրանից յետոյ Թեկղը լսեց, որ մեռել է իր նշանածը՝ Թեմերոսը, եւ վերադարձաւ իր քաղաք՝ Իկոնիոն՝ իբրեւ առաքելուհի քարոզելու Աստուծոյ աւետարանը խօսքով եւ անձնական օրինակով: Եւ

նախ գալով Ոնեսիփորոսի տուն՝ երեսի վրայ ընկաւ այն տեղում, ուր Պօղոսը խօսում էր Աստուծոյ խօսքը, եւ ասաց.

—Իմ եւ այս տա՛ն Աստուած, տուն, որտեղից իմ մէջ ծագեց լոյսը Յիսուս Քրիստոսի՝ Աստուծոյ Որդու, Ով օգնական եղաւ ինձ բանտում եւ դատաւորի առջեւ, փրկեց ինձ կրակից ու չար գազաններից, ինձ մկրտութիւն տուեց, Նա կը տայ ինձ սրբութիւն յաւիտեանս յաւիտենից:

Ապա, գալով տուն, մօրը ողջ տեսաւ եւ ասաց նրան.

—Մա՛յր իմ, եթէ կարողանաս հաւատալ, որ մէկ է բարձրեալ Աստուած, Ով երկնքում է, կ'ապրես: Իսկ եթէ սիրում ես ոսկի, արծաթ ու ինչք, որոնք մաշւում են, ահա դրանք տրուած են քեզ:

Եւ իր մօրն ու ընտանիքին երկար քարոզելուց յետոյ, երբ նրանց մէջ չտեսաւ Աստուծոյ՝ իր սերմանած խօսքի պտուղը, թողեց իր տունն ու քաղաքը եւ գնաց Սելեւկիա, ուր շատերին լուսաւորեց Աստուծոյ խօսքով եւ բազում հրաշագործութիւններով, մինչեւ իր կեանքի վախճանը: Նրա վախճանից յետոյ Սելեւկիա քաղաքը յոյժ նշանաւոր եղաւ սրբուհի կոյս Թեկղի նշխարներով:

Սելեւկիայում շատերին լուսաւորելուց յետոյ Թեկղն առանձնացաւ մօտակայ Միւսի կամ Միւրսիոնա կոչուող լեռան վրայ, որտեղ աղբիւր կար: Ամէն կիրակի նա դուրս էր գալիս քարայրից եւ բանջար քաղում, որով բաւարարւում էր ամբողջ շաբաթուայ ընթացքում: Նրա մօտ գալիս էին հեթանոսներ, որոնց լուսաւորում էր աստուածային խօսքով ու զօրութեամբ:

Յետոյ այդ վայրից գնաց Կաղամիոն կոչուող լեռը եւ այնտեղ նոյնպէս շատերին դարձրեց Քրիստոսի հաւատին, Նրա անուամբ բժշկեց բազում հիւանդների եւ հալածեց դեւերի: Եւ քանի որ Սելեւկիայի բժիշկներին խանգարում էր շահոյթ ստանալ, կանչեցին անառակ մարդկանց եւ, նրանց հարբեցնելով, հանեցին լեռը եւ ուղարկեցին Թեկղի ճգնարանը: Թեկղն Աստծուն աղաչեց փրկել իրեն անօրէնների ձեռքից: Նոյն ժամին երկնքից ձայն եղաւ. «Թե՛կղ, իմ ճշմարի՛տ աղախին, մի՛ վախենայ, Ես քեզ հետ եմ: Ահա այդ վէմը, որ քո առջեւ է, կը պատռուի եւ քեզ իր մէջ կ'առնի»: Այդպէս էլ եղաւ. սրբուհին խպառ անհետացաւ, եւ միայն նրա վերարկուի վերնամասը մնաց վէմից դուրս: Սա տեսնելով՝ մարդիկ սարսափեցին եւ, քաղաք գալով, պատմեցին իրենց տեսած հրաշքի մասին:

Ասւում է, թէ այդպէս եղաւ խոստովանող վկայի եւ մեծանուն կոյսի՝ Թեկղի նստելուն ու վախճանը: Ասում են, թէ նա վախճանուել է

ինչպես տարեկանում. տասնութ տարեկանում աշակերտել է Պողոսին եւ եօթանասուներկու տարի ապրել հալածանքների մէջ՝ լեռներում:

Սրբուհու գերեզմանի տեղում Սելեւկիա քաղաքից դուրս, վաղ ժամանակներում շինուել է մի գեղեցիկ վկայարան, հաստատուել սուրբ եւ աստուածային խորհրդի սեղան՝ սիւնապատ ու արծաթափայլ շրջանակի մէջ առնուած: Սբ Բարսեղ Կեսարացին ասում է, որ «այնտեղից՝ իբրեւ նրա կուսական բարերարութեան ակունքից, ընդդէմ բոլոր ցաւերի եւ հիւանդութիւնների բժշկարար աղբիւր է բխում: Այն տեղը դարձաւ դեղարան եւ ամբողջ աշխարհի քաւարան: Այդ պատճառով էլ նրա տաճարը, մանաւանդ քաղաքը, երբեք չես տեսնի առանց սելեւկիացի եւ օտար բազմութիւնների, որոնք բոլոր կողմերից դիմում են այնտեղ՝ պատուելու այդ վայրը եւ կատարելու իրենց ուխտը, ընծաներ նուիրելու սրբուհուն եւ ընդունելու բժշկութիւն իրենց հիւանդութիւններից ու ցաւերից, այսահարները՝ փրկութիւն այսերից: Եւ բոլորը, ստանալով իրենց խնդրածը, վերադառնում եւ օրհնութեամբ, գոհութեամբ եւ ուրախութեամբ խոստովանում են, որ իրենց ակնկալածից առաւե՛լ հրաշքներ ու բժշկութիւններ տեսան»:

ՍՐԲՈՒՀԻ ՎԱՌՎԱՌԱ ԿՈՅՍԻ ԵՒ ՅՈՒԼԻԱՅԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Մեծ ու պատուական վկայուհի, վարդագեղ ու շուշանափայլ կոյս սրբուհի Վառվառան Պափլագոնիայի Հելիոպոլիս քաղաքից էր, միամօրիկ դուստրը Դիոսկորոս կոչուող մեծ իշխանի, ով շատ հարուստ հեթանոս ազնուական էր: Նրա իմաստուն դուստրը ծածուկ դաւանում էր Քրիստոսին:

Ամբարիշտ Մաքսիմիանոսի թագաւորութեան օրերին քրիստոնեաների նկատմամբ հալածանքը զօրացաւ: Կայսրը դատաւորներ ու զօրագլուխներ էր ուղարկում իր տէրութեան բոլոր գաւառները՝ քրիստոնեաներին (եթէ նրանք զոհ չմատուցէին չաստուածներին) բռնելու, չարչարելու, կորստեան մատնելու եւ նրանց կրօնը վերացնելու համար: Հելիոպոլիս եկաւ Մարկիանոս կամ Մարտիանոս անաստուած ու վայրենամիտ դատաւորը, ով քաղաքի իշխանների գործակցութեամբ գտնում ու տանջում էր քրիստոնեաներին:

Նրան այդ գործում օգնում էր նաեւ Վառվառայի հայրը՝ Դիոսկորոսը, ով կուռքերի մոլի երկրպագու էր եւ չգիտէր իր դստեր՝ քրիստոնեայ լինելու մասին: Զգիտէր, թէ Աստուծոյ կարգաւորութեամբ ինչպիսի շնորհների էր արժանացել իր դուստրն առանձնութեան մէջ, ուր պահում էր նրան, որպէսզի մինչեւ նրա ամուսնութեան ժամանակը ոչ ոք նրան չտեսնի: Մինչդեռ երանելի Վառվառան, սրտում ունենալով Քրիստոսի սէրը, ցանկանում էր սրբութեամբ Քրիստոսին հարսնանալ եւ պարկեշտ վարքով անբիծ էր պահում իր հաւատն ու կուսական մաքրութիւնը:

Մի օր, երբ նրա հայրը հեռու երկիր էր գնացել, Վառվառան, իջնելով իր աշտարակից, տեսաւ, որ հայրը շինել է տալիս մի բաղնիք, որ երկու լուսամուտ ունի: Վառվառան ճարտարապետներին ասաց, որ երրորդ պատուհանը եւս բացեն. «Որովհետեւ լուսարանները երեքը պէտք է լինեն»,— ասում էր նա: Եւ փարատելով իր հօրից ունեցած նրանց վախը՝ կատարել տուեց իր ասածը: Երանելին մարմարեայ աւազանի մէջ նոյնպէս քրիստոնէութեան նշանը թողեց. իր ձեռքով նա տէրունական խաչի նշանը գծեց այնտեղ: Եւ մտնելով հօր ապարանքը՝ Վառվառան թքեց նրա կուռքերի երեսին եւ ասաց.

—Սրանց նման պիտի լինեն նրանք, ովքեր պատրաստեցին սրանք:

Բազում օրեր անց եկաւ նրա հայրը՝ Դիոսկորոսը, եւ մտնելով բաղնիք՝ երեք լուսամուտ տեսաւ այնտեղ եւ ասաց արհեստաւորներին.

—Ինչո՞ւ հրամանս արհամարհեցիք եւ այսպէս արեցիք:

Գործաւորները պատասխանեցին.

—Մեր կամքով չարեցինք, այլ քո սիրելի զաւակի հրամանով:

Այնժամ նա կանչեց երանելի կոյսին եւ զարմացած հարցրեց.

—Դո՞ւ հրամայեցիր այդ երեք պատուհանները բացել:

Կոյսը պատասխանեց.

—Այո՛, ես հրամայեցի, որովհետեւ երկուսը չունէր Երրորդութեան կատարեալ խորհուրդը, քանի որ եռակի լոյսով է լուսաւորւում իւրաքանչիւր մարդ, որ աշխարհ է գալիս, եւ Մի Աստուածութեամբ ժառանգում արքայութիւնն ու յաւիտենական կեանքը: Այդ պատճառով էլ լուսամուտներ սարքել տուեցի Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով:

Հայրն ասաց.

—Որդեա՛կ իմ, ցնորուե՞լ ես: Զեմ հասկանում՝ ինչ ես խօսում: Գա՛րզ ասա, որ հասկանամ ասածներդ:

Այնժամ կոյսը պարզ եւ համարձակ յայտնեց, որ ինքը քրիստոնեայ է՝ յօժար լինելով արեամբ վկայել Քրիստոսին: Նա ցոյց տուեց նաեւ խաչի նշանը, որն ինքը գծել էր աւազանի մէջ ո՛չ ճարտարութեամբ, այլ Տիրոջ զօրութեամբ, որովհետեւ նրա ձեռքերի հետքերը դրոշմուել էին աւազանի մէջ, ինչպէս կակուղ նիւթի կամ մոմի վրայ:

Երբ Դիոսկորոսը սա լսեց, չարութիւնից բորբոքուեց եւ մեծ ցասմամբ լցուեց, բարձրացրեց իր սուրն ու նոյն պահին կամեցաւ սպանել նրան: Երբ կոյսը գոչեց առ Տէր, հրաշք պատահեց. բաղնիքի դիմաց գտնուող վէմը խորանաձեւ երկու մասի բաժանուեց, եւ կոյսը ողջանդամ դուրս ելաւ լեռնակողմում: Իսկ նրա անօրէն հայրը չհասկացաւ Տիրոջ զօրութիւնը, այլ սովորական երկրաշարժ համարեց դա, ելաւ մօտակայ լեռը եւ այնտեղ երկու հովիւ տեսնելով՝ հարցրեց իր դստեր մասին: Նրանցից մէկը լռեց, իսկ միւսը նշանացի ակնարկով ցոյց տուեց նրա տեղը: Գտնելով նրան մի լեռնախորշում՝ Դիոսկորոսը սաստիկ ապտակեց նրան եւ, բռնելով մազերից, մինչեւ տուն քարշ տուեց եւ արգելափակեց մի նեմ սենեակում՝ ինչպէս բանտում առանց կերակրի թողնելով եւ իր մատանիով կնքելով դուռը: Եւ նրա մասին յայտնեց Մարկիանոս դատաւորին:

Մի քանի օր անց, իր հետ վերցնելով զօրագլուխների դասից մի անօրէն ու անաստուած մարդու, կոյսին հանեց բանտից եւ բերեց յանձնեց դատաւորի ձեռքը՝ երդուելով նրան կուռքերով եւ ինքնակալների բախտով, որ դառն ու անողորմ տանջանքներով կը սպանի իր զաւակին: Այնժամ Մարկիանոս դատաւորը, ըստ սովորութեան նստելով բարձր բեմի վրայ՝ բազմամբոխ հրապարակում, եւ նայելով պարկեշտ ու գեղեցիկ Վառվառա կոյսին, ասաց նրան.

—Ո՛վ ազնուական եւ կանանց մէջ վայելուչ դուստր իմ, գիտեմ, որ կարիք չունես զանազան հարցերի, քանի որ իմաստուն ես երեւում, հեզ ու հանդարտ: Արդ, հարցնում եմ քեզ, ասա՛ ինձ՝ ի՞նչ ես կամենում. կամենում ես կատարել ինքնակալի՞ կամքը, այսինքն՝ զոհ մատուցել չաստուածներին՝ նրանց քեզ հետ հաշտեցնելով, վայելել աշխարհի ցանկալի փառքը եւ թագաւորների դո՞ւստր կոչուել, թէ՞, գնալով Գալիլեացու կրօնի յետեւից եւ Աստուած խոստովանելով Նրան, Ով հրեաների ձեռքով մեռաւ, զրկուել այս քաղցր կեանքից եւ չարաչար տանջանքներով մեռնել մահապարտի պէս: Ես իմաստուն ու ազնուատոհմ կոյսիդ համար նախատինք եմ համարում կենդանի աստուածներին թողնելը, մի Մեռեալի յետեւից գնալը եւ դառը տանջանքների մատնուելը, որոնք անողորմաբար կը մաշեն քո գեղեցկութիւնը: Եւ մի՞թէ կարող է քեզ ազատեցնել այն Քրիստոսը, Ով այլոց ձեռքից չկարողացաւ փրկել նոյնիսկ Իրեն:

Քրիստոսի աղախինը պատասխանեց.

—Ես պատրաստուել եմ այսուհետ իմ անձը զոհ մատուցել կենդանի Աստծուն եւ մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսին՝ Նրան, Ով արարել է երկինքն ու երկիրը եւ այն ամէնը, ինչ նրանցում կայ, եւ Ով գթալով Իր արարածներին՝ խոնարհուեց, ճշմարտապէս մարդ դարձաւ եւ կամովին կրեց բոլոր մարդկային կրքերը, բացի մեղքից, մինչեւ իսկ խաչի մահուան մատնուեց եւ տիրաբար խորտակեց մահուան իշխանի զօրութիւնը՝ նրա խաւարային դասերի հետ միասին, որոնց դուք ձեր անգիտութեան եւ տգիտութեան պատճառով աստուածներ էք խոստովանում եւ հայհոյում այն, ինչն Իր յարութեամբ Նա շնորհեց մեզ՝ անսպառ եւ անանց բարութիւնն ու յաւիտենական կեանքը: Բարի է նաեւ այս աշխարհի կեանքը, քանի որ սա նոյնպէս մեծ Աստուծոյ ստեղծածն է, բայց չար է նրանց համար, ովքեր անառակ ցանկութեամբ եւ անաստուածութեամբ հետեւում են չարի խաբէութիւններին: Նրանք իրենց պաշտած չաստուածների հետ պիտի այրուեն անշէջ գեհենում: Ես փափագում ու սպասում եմ այն կեանքին, որն Իրեն սիրողների համար պատրաստեց Աստուած, Ում տէրութիւնը չի անցնում, եւ արքայութիւ-

նը չի փոխուում: Նրան եմ երկրպագում ու փառաւորում, Ով այն հանդիստն է շնորհում մեզ: Իսկ հեթանոսներիդ կուռքերը ոսկուց ու արծաթից են՝ մարդկանց ձեռքերի գործ, եւ կորչելու են երկնքի ներքոյ:

Այնժամ բարկացած դատաւորը հրամայեց, եւ կոյսին կապեցին, չոր արջառաջլերով անխնայ ծեծեցին ու նրա վէրքերը մազեղէններով շփեցին, մինչեւ որ նրա մարմինը շաղախուեց արեան մէջ: Ապա հրամայեց նրան բանտ տանել եւ ոտքերն ամրացնել կոճղերի մէջ: Այդպէս էլ արուեց: Եւ ահա գիշերուայ կէսին բանտում արեգակի ճառագայթների նման լոյս ծագեց, երեւաց Փրկիչն ու ասաց.

—Քաջալերուիր ու զօրացի՛ր, Վառվա՛ռա, Իմ անպարտելի ու սիրելի՛ վկայ: Քանզի քո նահատակութեան վկայութիւնը մեծ ուրախութիւն է հրեշտակների ու մարդկանց համար: Այսուհետեւ մի՛ վախենայ այդ դատաւորի սպառնալիքներից, քանզի քեզ հետ եմ՝ քեզ փրկելու համար բոլոր տանջանքներից, որ գալու են քեզ վրայ:

Սա ասելով եւ նրան խաչի նշանով կնքելով՝ Փրկիչն իսկոյն բժշկեց նրա մարմնի վէրքերը եւ հրեշտակների հետ միասին երկինք բարձրացաւ: Իսկ Քրիստոսի սուրբ վկայուհին ուրախանում ու ցնծում էր Փրկչի քաջալերութեան ու խոստումների համար:

Աստծուց երկիւղած եւ աստուածապաշտ մի կին կար՝ Յուլիա կամ Յուլիանէ անունով, ով շրջում էր սրբուհի Վառվառայի յետեւից եւ տեսնում նրա նահատակութիւնը: Եւ երբ նա բանտ եկաւ եւ տեսաւ նրան չարաչար հարուածներից յետոյ ողջացած, Աստուծոյ գործած անպատմելի սքանչելիքների պատճառով փառաւորեց Նրան եւ ցանկացաւ նահատակակից լինել սրբուհուն: Այդ պատճառով էլ յաջորդ օրը, երբ դատաւորը հրամայեց իր առաջ բերել Վառվառային, նրա հետ նաեւ Յուլիան եկաւ: Դատաւորը, երբ Վառվառայի վէրքերը ողջացած եւ նրան ուրախ դէմքով ու կայտառ տեսաւ, ապշած հարցրեց կոյսին.

—Տեսա՞ր աստուածների հոգատարութիւնը քո նկատմամբ, թէ ինչպէս արագօրէն բժշկեցին քեզ:

Երանելին պատասխանեց.

—Ո՛վ դատաւոր, քո աստուածները կոյր են ու համր եւ աւելի անմիտ, քան դու: Նրանք երբեք չեն զգում մարդկանց ցաւերը, այդ պատճառով էլ ոչ կարող են բարիք անել որեւէ մէկի, ոչ էլ չարիք: Եւ մենք, որ զգայարան ունենք եւ ճանաչում ենք Աստծուն, չենք կարող թողնել լոյսը եւ ընթանալ դէպի խաւարը: Բայց եթէ դու ճշմարտութիւնը

ճանաչես եւ ատես ու հեռանաս այդ սին խաբէութիւնից, ես քեզ ցոյց կը տամ ինձ Բժշկողին: Իմ ճշմարիտ Բժիշկը եւ աշխարհի Տէրն ու Փրկիչը իմ Քրիստոս Աստուածն է, Ում դու չես տեսնում, քանի որ դեւերի խաբէութեան եւ այս կեանքի սնոտի ու անցաւոր փառքի պատճառով խաւարել են հոգուդ աչքերը:

Այնժամ տրտմած դատաւորը, ատամները կրճտելով, հրամայեց, եւ նրան կախեցին, նրա կողերը քերեցին, նրա ոտքերի տակ կրակ վառեցին եւ կապարէ գնդերով հարուածեցին նրա գլխին: Քրիստոսի երանելի աղախին Յուլիան, սա տեսնելով, աղիողորմ արտասուքով դառնապէս լաց եղաւ: Դատաւորն ասաց զինուորներին.

—Ո՞վ է այդ կինը, որ այդպէս ջերմ արտասուքով լաց է լինում ու կոծում անօրէն Վառվառայի համար:

Պատասխանեցին.

—Քրիստոնեայ է եւ այդ պատճառով ցաւակից է լինում դրան եւ ողբում:

Դառնացած դատաւորը հրամայեց աւելի սաստիկ քերել կոյսին եւ որովայնի տակ բորբոքել կրակը:

Իսկ վկայուհին, աչքերը երկինք բարձրացնելով, ասաց.

—Դու, որ սրտագէտ Աստուած ես, Յիսո՛ւս Քրիստոս, անստուե՛ր լոյս, որ Քո արարածներին լուսաւորեցիր անուանազ ճառագայթներովդ, նայի՛ր Քո աղախնի տառապանքներին, տե՛ս իմ սրտի անձկութիւնն ու փափագը եւ մի՛ հեռացրու Քո օգնութիւնն ինձնից, այլ իմ ոտքերը դիր հաստատուն հաւատի վէմի վրայ եւ անսասա՛ն պահիր ինձ թշնամու որոգայթներից, որպէսզի մարմնիս տկարութեան պատճառով չվախենամ վկայական մահուանից: Զօրացրո՛ւ ինձ, որպէսզի անաստուած հեթանոսների առջեւ աներկիւղ քարոզեմ, խոստովանեմ Քո Աստուածութիւնը եւ չամաչեմ ըստ սուրբ մարգարէի սաղմոսի թէ՝ «Թագաւորների առջեւ վկայում էի Քեզ եւ չէի ամաչում» (Սաղմ. ՃԺԸ 46):

Բռնակալը, տեսնելով, որ երանելի կոյսը ժուժկալութեամբ համբերում է նաեւ այդ տանջանքներին, հրամայեց սուսերով կտրել նրա ստինքները: Երբ անողորմ դահիճները կատարեցին հրամանը, Վառվառան երկինք նայեց եւ ասաց.

—Տէ՛ր Յիսուս Քրիստոս, երեսդ մի՛ շրջիր ինձնից եւ Քո Սուրբ Հոգին մի՛ հանիր Քո աղախնուց, այլ տո՛ւր ինձ փրկութեան ցնծութիւնը եւ Քո զօրութեան Հոգով հաստատի՛ր ինձ» (Սաղմ. Ծ 14): Երանելին, սա ասելով եւ Սուրբ Հոգուց զօրութիւն ստանալով, քաջութեամբ

կրեց անտանելի ցաւերը: Նոյն դառը տանջանքներին ենթարկեցին նաեւ Յուլիային՝ Վառվառայի չարչարակցին:

Եւ երբ անօրէն դատաւորը չկարողացաւ փոխել նրանց միտքը, հրամայեց նրանց միմեանցից բաժանել եւ Յուլիային բանտ նետել տուեց, իսկ Վառվառային, մերկ ու խայտառակ վիճակով ծաղրուծանակի ենթարկելով, շրջել տուեց քաղաքում ու նրանից դուրս:

Երանելի վկան սկսեց աղօթել՝ ասելով.

—Ամենակա՛լ Աստուած, Հա՛յր մեր Տէր Յիսուս Քրիստոսի՝ Քո սիրելի Որդու, որ երկինքը զգեստաւորեցիր ամպերով եւ լոյս ես հագել որպէս օթոց, Դու Ի՛նքդ հագցրու Քո աղախնին եւ ծածկի՛ր մերկ մարմինս, քանի որ Քեզ համար ուրախութեամբ նախատինքներ ու չարչարանքներ յանձն առայ: Եւ ամբարիշտների ու անօրէնների առաջ ինձ մի՛ խայտառակիր:

Այդժամ նրան երեւաց Քրիստոս Փրկիչը քերովբէական կառքով եւ զուարթուններին հրամայեց ծածկել նրան լուսեղէն զգեստներով: Եւ այդպէս համարձակութեամբ շրջեց երանելին, մինչեւ որ նրան բերեցին մի գիւղ, որ կոչւում էր Գելասիս: Այնտեղ եկաւ նաեւ ինքը բռնակալը եւ կրկին հարցաքննեց կոյսին: Տեսնելով, որ նա անսասան է իր հաւատի մէջ՝ վճիռ կայացրեց գլխատել նրան: Նոյնպիսի վճիռ կայացրեց նաեւ Յուլիայի համար:

Այնժամ Վառվառայի հայրը՝ Դիոսկորոսը, որ եկել էր իբրեւ դատաւորի խորհրդակից, մոլեգին տրտմութեամբ լցուած, կամեցաւ ինքը լինել իր դստեր դահիճը: Եւ զինուորների հետ միասին նրան հանեց լեռը՝ նրա գլխատման վայրը: Իսկ բազմայաղթ վկան յօժարութեամբ մահուան էր գնում եւ ճանապարհին սա՛ էր աղօթում.

—Նախայաւիտեան Աստուած, անսկիզբ եւ անհասանելի լոյս, բոլորի Արարիչ ու Տէր եւ Քո սուրբերի պսակիչ Յիսո՛ւս Քրիստոս, շնորհի՛ր Քո աղախնին աւարտել իր նահատակութեան ընթացքը, որ Քո սիրոյ համար է, եւ գալ հասնել Քեզ մօտ պարզերես համարձակութեամբ եւ անտրտում ուրախութեամբ: Տո՛ւր եւ իմ ոսկորներին շնորհ՝ Քո փառաւորեալ անուան փառքի եւ Քո հաւատացեալների պարծանքի ու օգտի համար: Նաեւ իմ յիշատակը հաւատով տօնողների սրտերի հայցուածքնե՛րը կատարիր եւ փրկի՛ր նրանց բոլոր նեղութիւններից՝ սովից, սրից, հիւանդութիւններից, ծաղկից, տարաժամ մահերից եւ պարգեւիր նրանց յանցանքներին թողութիւն: Եւ խաղաղութեամբ ընդունի՛ր իմ հոգին իմ նահատակակից Յուլիայի հոգու հետ միասին:

Երբ Վառվառան հասաւ իր գլխատման վայրը եւ ասաց «ամէն», երկնքից մի ձայն լսուեց, որն ասաց.

—Ե՛կ, Իմ ճգնազգեաց ու անպարտելի՛ նահատակ, եւ Յուլիայի՝ իմ սիրելի կոյս աղախնի հետ այսուհետեւ հանգստացի՛ր Իմ արքայութեան մէջ: Եւ ինչ որ խնդրեցիր, թող կատարուի՛ քեզ համար:

Այդտեղ Վառվառայի անագորոյն ու անօրէն հայրը սրով կտրեց իր դստեր գլուխը, իսկ զինուորներից մէկը՝ Յուլիայի: Այդպէս Տիրոջ մօտ 300 թուականի դեկտեմբերի չորսին նրանք բարի խոստովանութեամբ նահատակուեցին ի Քրիստոս:

Երբ ամբոխն իջնում էր լեռան վրայից, ահագին փայլատակումով կրակ ընկաւ երկնքից եւ այրեց դատաւորին ու որդեսպան Դիոսկորոսին, որոնց փոշին անգամ անյայտացաւ: Տիրոջ երկիւղը կրող եւ բարեպաշտ մի մարդ՝ Վաղենտիանոս անունով (նրա յիշատակը թող օրհնութեամբ լինի), վերցրեց սուրբերի նշխարները, պատեց մաքուր կտաւներով, օծեց անուշահոտ խունկերով եւ պատուով թաղեց վերեւում յիշատակուած Գելասիս գիւղում: Մինչեւ այսօր էլ նրանց ոսկորների նշխարները հրաշքներ են գործում ի փառս Ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու. ամէն:

ԿԻՊՐԻԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՅՈՒՍՏԻՆԷ ԿՈՅՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Կիպրիանոս (մականուանեալ Թասկիոս Կիկիլիոս) սուրբ եպիսկոպոսն ու Քրիստոսի վկան ապրել է երրորդ դարում, եղել հեթանոս փիլիսոփայ, քաջ հռետոր, ճարտար մոգ եւ կուռքերի քուրմ: Նա իր ծնողների կողմից մանկուց նուիրուած է եղել կուռքերի սպասաւորութեանը, շրջել Աթէնքում, Եգիպտոսում, Անտիոքի Ասորիքում եւ քաղդէացիների մէջ: Այնքան հռչակուած է եղել իր կրօնի մէջ, որ գերազանցել է շատ մոգպետների ու կախարդների, նաեւ Յանէսին ու Յամբրէսին, ունեցել մեծ հարստութիւն ու փառք, մինչեւ իսկ ոչ ոք չի համարձակուել որեւէ բան ասել նրա դէմ կամ չարախօսել նրան, քանզի բոլորն ակնածել են նրա փառքից ու դիւական պատիր գիտութիւնից. նա համարձակօրէն հրամայում էր դեւերին՝ կատարելու իր կամքը, եւ շատերին էր գցում զանազան պատրանքների ու կորստեան տանող ցանկութիւնների մէջ:

Այն քաղաքում, ուր ապրում էր Կիպրիանոսը, կար մի աղջիկ՝ Յուստինէ անունով (որը նշանակում է «արդար օրիորդ»), ազնուական ընտանիքից, ազատի ու մեծատան դուստր, հռչակուած իր գեղեցկութեամբ եւ հոգու առաքինութեամբ: Յուստինէն քրիստոնեայ էր դարձել Պրուղոս սարկաւագի միջոցով եւ իր ծնողներին էլ էր դարձրել Քրիստոսի սուրբ հաւատին: Նրա հօր անունը Եդեսիանոս կամ Եդեսիոս էր (նա քրմապետ էր եղել), իսկ մօրը՝ Կղեդոնիա: Մկրտուելուց յետոյ նրանք իրենց ինչքերը բաժանել էին աղքատներին եւ ապրում էին առաքինութեամբ: Սակայն Յուստինէն ծնողներից առաւել էր փայլում մաքուր վարքով եւ Քրիստոսի ջերմ սիրով:

Նա յաճախ էր իր մօր հետ եկեղեցի գնում: Ագղաւիդոս անունով մի երիտասարդ, նրան տեսնելով, ցանկացաւ կնութեան առնել եւ, բազում պատգամաւորներ ուղարկելով եւ նուէրներ խոստանալով, շատ ջանաց համոզել նրան, սակայն չկարողացաւ, քանզի Յուստինէն ասում էր. «Ես Քրիստոսի հարսն եմ եւ երկրաւոր մարդու չեմ ցանկանում, ինձ համար լաւ է լինել Քրիստոսինը, քան յետ դառնալ սրբութեան ուխտից եւ որոշ ժամանակ վայելել մեղքերի մէջ. եթէ նա, ով մի մարդու իրեն խոստանում եւ ապա հրաժարւում է, անպատուհաս չի մնում, որքա՜ն առաւել նա, ով չի պահում Քրիստոսին տուած խոստումը»:

Մի օր, երբ կոյսն ըստ սովորութեան գնում էր եկեղեցի, Ագղաւիդոսը սպասեց նրան ճանապարհին եւ բռնեց նրան: Բայց Յուստինէն քաջութեամբ իրենից հեռու վանեց նրան, ամօթալից յետ դարձրեց եւ, մտնելով եկեղեցի, արտասուքով խնդրեց Փրկչին եւ ամենասուրբ կոյս Աստուածածնին իրեն օգնական ու վերակացու լինել եւ անարատ պահել փորձութիւնից:

Ագղաւիդոսը գնաց մեծանուն կախարդ Կիպրիանոսի մօտ եւ նրան երկու տաղանդ ոսկի ու արծաթ տուեց՝ խնդրելով հնար մտածել՝ կատարելու իր կամքը: Իսկ Կիպրիանոսը, ով լսել էր Յուստինէի գեղեցկութեան մասին, նախ կամեցաւ անձամբ տեսնել նրան: Եւ երբ տեսաւ նրան եկեղեցուց ելնելիս, ինքն Ագղաւիդոսից առաւել խոցուեց ցանկութեան նետով եւ խորհեց այնպէս անել, որ նա ցանկանայ իր կինը դառնալ: Այդ պատճառով էլ շուտափոյթ կախարդանքով հրաման տուեց իր դեւերին, որ գնան եւ խռովեն աղջկայ հոգին եւ իր հանդէպ ցանկութեամբ լցնեն:

Զարը կամենում էր կոյսի մաքուր միտքը պղտորել, սակայն Քրիստոսի զգաստ ու անարատ հարսը գեղեցիկ առաջնորդութեամբ անցաւ ալեկոծ խորհուրդների ծփանքների միջով եւ խարսխուեց Քրիստոս նաւահանգստին. իբրեւ յոյսի ապաւէն ու ամուր պարիսպ առաւ փրկչական խաչը եւ ապաստանեց երկնքի Թագուհու, Մօր եւ Կոյսի գրկում, իր անձն աղօթքների եւ տքնութեան տալով՝ պահքով մաշեց իր փափուկ մարմինը՝ ասես այն մեռցնելով մահուանից առաջ, թառամեցրեց իր գեղեցկութիւնը գետնատարած անկողնով եւ, Աստուծոյ Հոգով զինուած, հանգցրեց չարի նետերը: Դեւը, տեսնելով, որ չի կարողանում գաղտնի հնարներով յաղթել, երեւաց նրան, երբ կոյսը գիշերուայ երրորդ ժամի աղօթքն էր անում: Յուստինէն սուրբ խաչի նշանը տարածեց չարի ցնորքների դէմ, եւ դեւը տագնապած փախաւ եւ Կիպրիանոսին պատմեց ամէն բան:

Կիպրիանոսը սկսեց առաքել մէկը միւսից չարագոյն այլ դեւեր եւս, բայց սուրբ կոյսը նրանց նոյնպէս հալածեց սուրբ խաչի զօրութեամբ եւ Քրիստոսի անուամբ, մինչեւ դեւերը, շատ չարչարուելով եւ ոչինչ չկարողանալով անել նրան, ամաչելով ցրուեցին կրակից փախչող խռիւի պէս: Կիպրիանոսը զարմացաւ եւ, կշտամբելով դեւերին, սաստկութեամբ հարցրեց. «Ինչո՞ւ այդքան ուշացաք եւ առանց իմ կամքը կատարելու դատարկ վերադարձաք»: Նրանք ասացին. «Անհնար է համոզել այն աղջկան, որովհետեւ խաչեալի նշանը, որն ունի որպէս ան-

վանելի զէնք, ոչ միայն մեզ է հալածում, այլեւ մեր իշխանին, որը երբ իր աներեւոյթ բանակով գնում է նրա մօտ, դժոխային գնդերի հետ միասին ամօթահար փախչում է նրանից»:

Կիպրիանոսը, երբ սա լսեց, անիծեց դեւերին եւ ընտրեց մի այլ՝ աւելի չար դեւի՝ դեւերի հարիւրապետին, եւ նրան առաքեց Յուստինէի մօտ՝ պատուիրելով որոնել բոլոր հնարները՝ կոյսի միտքը որսալու համար: Նա, գալով կոյսի մօտ, սպառնաց նրան՝ ասելով. «Մի՛ կարծիր, թէ ես այլ տկար դեւերի նման եմ, ես դեւերի հարիւրապետն եմ»: Իսկ սրբուհին սաստեց նրան Քրիստոսի անուամբ եւ անյայտացրեց, մինչեւ չարը չհամարձակուեց վերադառնալ Կիպրիանոսի մօտ, այլ անդունդների մէջ սուզուելով՝ կորաւ:

Այնժամ իմաստուն Կիպրիանոսը, լուսաւորուելով Աստծուց, իրենից հեռացրեց բոլոր դեւերին՝ նրանց ասելով. «Ինչո՞ւ էիք մինչեւ հիմա խաբում մեզ՝ պարծենալով, թէ զօրաւոր էք Քրիստոսից: Որովհետեւ լոկ Նրա անունն ու խաչի նշանը յաղթում են ձեզ, իսկ յայտնի է, որ տկարը յաղթւում է ուժեղից, ինչպէս ճրագը՝ արեգակից, խաւարը՝ լոյսից: Ուրեմն անկասկած Նա ամենազօր է, ինչպէս Աստուած»:

Սա ասելով՝ հեռացաւ չարութեան արուեստից եւ սկսեց ապաւինել Փրկչին: Եւ քանի որ ճանաչում էր քրիստոնեայ ընտիր քահանաների, ինչպիսին էին Կեկիլիոսը, Եւսեբիոսը եւ Տիմոթէոսը, յարեց նրանց եւ, նրանցից լսելով սուրբ հաւատի խորհուրդը, օրէցօր եռաց նրա հոգին՝ դառնալու դէպի Քրիստոս: Ո՞վ կարող է պատմել, թէ խաւարային ընթացքի ո՛ր վիճակից էր ընթանում դէպի լոյսը: Այս մասին նաեւ սուրբ Պոնտիոսը, ով յետոյ սարկաւագ եղաւ եւ գրեց նրա վարքը, ասում է. «Զգրեմ Կիպրիանոսի՝ նախքան Տիրոջը դառնալը կատարած գործերի մասին: Իր դարձի սկզբում, մի կողմ դնելով արտաքին [գիտութիւնների] գրքերը, իր անձն ամբողջովին տուեց աստուածային Գրքերի ընթերցանութեանը, իր ունեցուածքն աղքատներին բաշխեց, թողեց իր փառքն ու մեծութիւնը եւ կրթեց իրեն խոնարհութեան գործերով: Նա իր դարձի ժամանակ այնպիսի եռանդ ցոյց տուեց, որ մինչեւ բարեպաշտութեան մասին իմանալը գրեթէ կատարեալ եղաւ բարեպաշտութեան մէջ: Միայն նա եղաւ, որ ցոյց տուեց, թէ որքա՛ն զօրաւոր են կատարեալ հաւատն ու փոյթը կատարեալ լինելու համար պահանջուող ժամանակի երկարութիւնից: Քննում էր առաջին սուրբերի կեանքը, թէ ինչպէս նրանք հաճելի եղան Աստծուն, շտապում ամբողջ սրտով հետեւել նրանց եւ նոյնը քարոզում էր ուրիշներին: Առաւելապէս օրինակ ունէր երանելի Յոբին՝ կատարեալ աստուածապաշտին»: Ըստ Յերոնիմոսի՝ նրա համար շատ օգտաշահ եղաւ Յովնան մարգարէի գրքի՝ ապաշխարութեան մասին հատուածը, «ապա թէ ոչ,— ինչպէս գրում է ինքը Կիպրիանոսը,— սկզբում յուսահատութիւնից կ'ալեկոծուէի»:

Մոլորութեան ու կախարդութեան բոլոր գրքերն այրելուց յետոյ երկար ապաշխարութեամբ եւ չարի դէմ բազում մրցանքներով մտաւ երախայութեան կարգի մէջ, տեղի եպիսկոպոսի կողմից մկրտուեց եւ Աստծով նորոգուելով՝ դարձաւ նոր մարդ: Եպիսկոպոսը, տեսնելով նրա առաքինի ընթացքը, նրան կարգեց Եկեղեցու դռնապան: Սուրբ Գրիգոր Աստուածաբանն ասում է. «Ինչպէս մէկից լսեցի, այդպիսի մարդը եկեղեցու աւելածու դարձաւ եւ նուաստ գործերի մէջ յաճախակի աղօթքներով կրթեց իր անձը, որ իմաստասէր մտքով քնի խոնարհութիւնը՝ նախկին ամբարտաւանութիւնը մաքրելու համար»: Սակաւ ժամանակ անց բարձրացաւ դպիրների եւ Եկեղեցու պաշտօնեաների կարգին եւ իրեն աւելի ու աւելի վարժեցրեց հոգեւոր ընթերցանութեան մէջ, մինչեւ ընտրուեց սարկաւագ եւ սկսեց ուսուցանել շատերին՝ իբրեւ Քրիստոսի մեծաձայն քարոզիչ: Եւ իր լեզուն, որ նախկինում հռետորական սնոտի պերճաբանութեամբ եւ մոլորութեան պատրանքներով դարձրել էր չարի գործիք, այժմ դարձրեց աստուածային փող եւ հոգու հատու սուսեր, որը, թափանցելով լսողների սրտերը, հաւատացեալներին մղում էր վարքի նորոգութեան, իսկ անհաւատներին տանում դէպի Քրիստոսի փարախ: Այնպէս որ եպիսկոպոսի վախճանուելուց յետոյ բոլորը միաբան հաւանութեամբ կոչեցին Կիպրիանոսին Եկեղեցու առաջնորդութեան:

Այս մասին Պոնտիոսը գրում է. «Երկար ժամանակ կը պահանջուի մէկ առ մէկ խօսելու Կիպրիանոսի գովելի ողջ կենցաղավարութեան մասին: Բաւական է ասել, որ դեռեւս Քրիստոսին նոր ընծայուած եւ հաւատի մէջ մատաղատունկ՝ աստուածային ընտրութեամբ եւ ամբողջ ժողովրդի հաճութեամբ ընտրուեց քահանայութեան եւ ապա եպիսկոպոսութեան, չնայած որ խուսափում էր՝ խոստովանելով, որ անարժան է: Նրա խոնարհութիւնն էր, որ նրան արժանի դարձրեց այդ աստիճանին, որովհետեւ ժողովուրդն ամէն կերպ ջանաց եւ բռնութեամբ նրան եպիսկոպոս դարձրեց: Նրա բարեպաշտութիւնն ու ողորմածութիւնը չափ չունէին. համարձակ էր ուղղուել չկամեցողներին յանդի-

մանելիս, հեզ էր խրատելիս, քաղցր եւ հոգերուխ՝ ուսուցանելիս, պատկառելի էր կերպարանքով եւ գովելի՝ վարքով»:

Վկայագիրներն աւելացնում են, որ երբ Կիպրիանոսը նստեց հայրապետական աթոռին, սուրբ Յուստինէ կոյսին ձեռնադրեց սարկաւագուհի՝ նրան պարկեշտ կոյսերի վանամայր նշանակելով: Այն ժամանակ բոլոր վայրերում սկսուեցին հալածանքներ քրիստոնեաների դէմ, եւ հեթանոսները, որոնց խռովեցրել էր Կիպրիանոսի դարձը, խորհեցին բռնել նրան եւ նետել առիւծների առջեւ: Այնժամ երանելի հայրապետը, եղբայրների ստիպմամբ եւ նրանց օգուտի համար, զգուշացաւ եւ միաւոժամանակ թաքնուեց, ինչ պատճառով էլ Հռոմում Եկեղեցու միաբանութիւնը սկսեց դանդատուել նրանից՝ ասելով. «Այսպիսի մի ժամանակ անտէր է թողել իր հօտը»: Բայց Կիպրիանոսը չէր դադարում խօսքով ու նամակներով հաւատացեալներին օգնելուց:

Այդ օրերին Աֆրիկայում ժանտախտի համաճարակ սկսուեց: Կիպրիանոսը եկաւ, ժողովեց առողջ հաւատացեալներին եւ ազդու խօսքերով համոզեց նրանց օգնել եւ դարմանել հիւանդներին՝ հոգալով նրանց բոլոր կարիքները:

Երբ համաճարակը դադարեց, կռապաշտները բռնեցին հայրապետին եւ տարան դատաւորի ատեան, ով Դեկոսի հրամանով եկել էր Կարքեդոն՝ քրիստոնեաներին քննելու: Երբ դատաւորը փորձեց զանազան հրապուրանքներով ու խոստումներով նրան համոզել, որ վերադառնայ իր նախկին կրօնին ու պատուին, Կիպրիանոսը պատասխանեց. «Եթէ ինձ փորձէր այլ մէկը, եւ ես չիմանայի, որ նա խաբեբայ է ու մոլորեցնող, թերեւս դու յոյս կ՚ունենայիր որսալու ինձ, բայց որովհետեւ նա բանսարկու փորձիչն է, որ բոլոր մոլորութիւնների չարապարտն է, որոնց ես ինքս քաջ գիտակ էի, եւ խորտակեցի նրա լուծը, աւելորդ է ձեր՝ ինձ փորձելը, որովհետեւ իրաւացի էլ չէ մոլորութիւնից հեռացածին նոյն խորխորատի մէջ գցել. անհնար է, որ դա լինի, եւ դու չպէտք է խորհէիր այն, ինչ անհնարին է»: Դատաւորն ասաց. «Զարիքի պատճառն ու արարիչը դո՛ւ ես»: Կիպրիանոսն ասաց. «Զարիքի արարիչը սատանան է, որին դուք պաշտում էք, որը նախանձեց մարդուն, քանի որ բոլոր արարածների մէջ միայն մարդն Աստուծոյ պատկերով ստեղծուեց, եւ Արարիչն այս աշխարհը տարածեց իբրեւ ասպարէզ՝ բանսարկուի՝ մեզ հետ պատերազմելու համար, որպէսզի նրա հետ պատերազմողները յաղթեն չարին եւ բարիքով պսակուեն: Իսկ մեր հաւատի եւ գործերի զօրագլուխն Ինքը Քրիստոսն է՝ մեր Փրկիչն ու Տէրը»: Դատաւորն ասաց. «Ինչո՞ւ է մարդը Քրիստոսին իբրեւ Աստուծոյ պաշտում»: Կիպրիանոսն ասաց. «Որովհետեւ Նա մեզ համար մարդացած Աստուծոյ Խօսքն է: Նա չարչարուեց մեզ համար, որ մեզ հաղորդակից դարձնի Իր աստուածային փառքին՝ Իր չարչարանքներին ու մահուանը կցորդ դարձնելով»: Դատաւորը սաստեց եւ ասաց. «Չե՛նք ուզում լսել սնոտի խօսքերդ ու բարբաջանքներդ, առանց յապաղելու պէտք է զո՛հ մատուցես աստուածներին»: Կիպրիանոսն ասաց. «Կուռքերին աստուած մի՛ ասա՝ դեւերի պաշտամունքով մոլորուած լինելով»: Այնժամ դատաւորը հրամայեց ծեծել եպիսկոպոսին ու բանտ նետել: Ապա բռնել տուեց նաեւ Յուստինէ կոյսին, որովհետեւ նրա պատճառով եղաւ Կիպրիանոսի դարձը, ինչի մասին բոլորը գիտէին, եւ նոյն կերպ նրան էլ փորձելով՝ առանձին պահել տուեց բանտում: Մի քանի օր անց հրամայեց երկուսին էլ իր առաջ բերել եւ սպառնաց նրանց կա՛մ դառնալ կուռքերի պաշտամունքին, կա՛մ չարաչար մահով մեռնել:

Երբ նրանք անարդեցին նրա խօսքերը եւ համարձակօրէն դաւանում էին Տէր Քրիստոսին, դատաւորը հրամայեց քերիչներով տանջել նրանց, ապա հանեց կպրով ու ճարպով տաքացուած տապակի մէջ: Սակայն Աստուծոյ զօրութեամբ նրանք անվնաս պահուեցին՝ փառաւորելով իրենց Փրկչին, իսկ դրանից յետոյ գլխատուեցին տարբեր ժամանակներում: Ոմանք ասում են, թէ երկուսով միասին են նահատակուել սրով, սակայն, ինչպէս երեւում է, Յուստինէն նահատակուել է Դեկոսի կամ նրա յաջորդի հալածանքների ժամանակ, իսկ Կիպրիանոսն այլեւայլ հալածանքներ կրելուց եւ աքսորուելուց յետոյ սրով նահատակուել է Վալերիանոսի ժամանակ:

Երբ Տիրոջ 251 թուականին քրիստոնեաների անողորմ հալածիչ Դեկոս կայսրը մեռաւ, դատաւորները փոխուեցին, եւ քրիստոնեաների համար որոշ ժամանակ դիւրութիւն եղաւ, նրանց հետ նաեւ Կարքեդոնի եպիսկոպոս մեծն Կիպրիանոսն ազատութիւն ստացաւ: Նա հաւաքեց իր հօտը եւ խնամք էր տանում նրան, սակայն մի քանի տարի անց, երբ թագաւորեց Վալերիանոս կայսրը՝ դահակից ունենալով իր որդուն՝ Գալիենոսին, վերսկսուեցին հալածանքները, եւ սուրբ Կիպրիանոսը միաբանութեան ու ժողովրդի հետ միասին բազում տառապանքներ կրեց՝ թաքնուելով գետնափորներում եւ գերեզմանոցներում:

Տիրոջ 257 թուականի օգոստոսի 30-ին Պատերնոս անունով ոմն բգեշխի փոխանորդ, Կարքեդոնի ատեանում նստելով, իր առաջ բերել տուեց Կիպրիանոս եպիսկոպոսին, սկսեց խօսել եւ ասաց. «Վալերիանոս

եւ Գաղիենոս դիւցազն ինքնակալներն արժանի համարեցին ինձ հրովարտակ ուղարկել, որում հրամայում են, որ նրանք, ովքեր չեն պաշտում հռոմէացիների կրօնը, պէտք է սթափուեն ու դարձի գան: Արդ՝ ես փնտրեցի քեզ՝ հարցուփորձելու եւ տեսնելու, թէ ինչ պատասխան կը տաս»: Սուրբ Կիպրիանոսը պատասխանեց. «Քրիստոնեայ եմ եւ եպիսկոպոս, այլ աստուածներ չեմ ճանաչում, այլ միայն միակ եւ ճշմարիտ Աստծուն, Ով արարեց երկինքն ու երկիրը, ծովը եւ այն ամէնը, ինչ նրանց մէջ կայ: Այդ Աստծուն ենք ծառայում մենք՝ քրիստոնեաներս, Նրան ենք աղօթում գիշեր ու ցերեկ մեզ եւ բոլոր մարդկանց, նաեւ ինքնակալների կեանքի համար»: Պատերնոսն ասաց. «Շարունակում ես նոյն մտքի՞ն մնալ»: Կիպրիանոսը պատասխանեց. «Ով ճանաչում է Աստծուն, անհնար է, որ փոխի իր բարի կամքը»: Իշխանն ասաց. «Կարո՞ղ ես Վաղերիանոսի եւ Գաղիենոսի հրամանով գնալ կուրուբացիների քաղաք»: Կիպրիանոսն ասաց՝ կը գնամ: Պատերնոսն ասաց. «Ոչ միայն եպիսկոպոսների, այլ նաեւ երէցների մասին արժան համարեցին գրել ինձ. արդ ուզում եմ քեզնից իմանալ, թէ ովքե՞ր են այս քաղաքի երէցները»: Կիպրիանոսը պատասխանեց. «Ձեր օրէնքներում լաւ եւ օգտակար կերպով սահմանեցիք չլինել մատնիչ, ուստիեւ չեմ կարող յայտնել եւ մատնել նրանց. նրանք իրենց քաղաքներում են»: Իշխանն ասաց. «Ես այսօ՛ր, այստե՛ղ եմ պահանջում նրանց»: Կիպրիանոսն ասաց. «Քանի որ օրէնքը թոյլ չի տալիս, որ որեւէ մէկը մատնի ինքն իրեն, նրանք իրենք իրենց չեն կարող մատնել, այլ դո՛ւ պիտի փնտրես ու գտնես»: Պատերնոսն ասաց. «Այո՛, ես կը գտնե՛մ նրանց»: Սա ասելով՝ վրայ բերեց. «Ինքնակալները նաեւ պատուիրեցին, որ ոչ մի տեղ ժողով չլինի, եւ չմտնեն գերեզմանոցները. եթէ որեւէ մէկն այս հրամանը չկատարի, գլխո՛վ պատասխան կը տայ»: Իսկ սուրբը պատասխանեց. «Արա՛ ինչ որ հրամայուած է քեզ»:

Այնժամ իշխանը հրամայեց նրան աքսորել: Բայց երանելի հայրապետն իր աքսորավայրից նամակներով օգնում էր հաւատացեալներին եւ բոլորին սպառազինում խոստովանութեան եւ վկայական մահուան համար, մինչեւ շատերն աներկիւղ իրենց անձը մարտիրոսութեան էին տալիս: Այդ օրերին բանտարկուն հալածանքների հրդեհ ու պատերազմ էր բորբոքել նաեւ Եկեղեցու մէջ, ինչ պատճառով Կիպրիանոսը շատ աւելի նեղութիւններ կրեց, քան մինչեւ աքսորուելը եւ աքսորում: Բանն այն է, որ քանի որ հալածանքների ընթացքում շատերը կամովին կամ հակառակ իրենց կամքի զոհեր էին մատուցել կուռ-

քերին, մեծ հարց ծագեց, թէ ինչ պէտք է անել նրանց, քանզի ոմանք ասում էին, թէ նրանց՝ իբրեւ աններելի մեղքերի մէջ ընկածների, չպէտք է Աստուծոյ Եկեղեցի ընդունել, իսկ ուրիշները պնդում էին, թէ պէտք է ընդունել բոլորին:

Սուրբ Կիպրիանոսը Սուրբ Հոգով հանդարտեցրեց այդ պատերազմը՝ սովորեցնելով գնալ միջին ճանապարհով. ոչ անխորհրդաբար ընդունել ընկածներին եւ ոչ էլ անգթաբար իսպառ մերժել: Եւ օրինակ էր բերում հաւատի վէմին՝ Պետրոսին, ով Քրիստոսից ընդունեց երկնքի բանալիները, թէ ինչպէս նա երեք անգամ ուրանալուց յետոյ, երեք անգամ խոստովանելով, որ սիրում է Քրիստոսին, առաջին պատուին բարձրացաւ՝ Քրիստոսից հրաման ստանալով արածեցնել Իր ոչխարներին: Եւ ասում էր. «Ովքեր մի անգամ, չարի պատրանքով խաբուած, ակամայ կամ տանջանքների ահից ընկան դեւի թակարդը, նրանց պէտք է ապաշխարութեան արժանի դարձնել, իսկ ովքեր ինքնակամ մոլորութեամբ անդարձ մնում են չարիքի մէջ, չընդունել՝ իբրեւ Աստուծոյ շնորհներին անարժան անձանց: Այն ժամանակ եղան նաեւ զանազան այլ խնդիրներ, եւ երանելի Կիպրիանոսը բոլորի միջով բարւոք ընթացաւ: Գայթակղութեան եւ նրանից հեռանալու պատճառ էին դառնում նրա այն խօսքերն ու նամակները, որոնցում նա կրկնակի մկրտութեան կարօտ էր համարում հերձուածողների կողմից մկրտուածներին, ովքեր դարձի էին եկել, եւ որոնցում Կեսարիայի Փիրմիլիանոս եպիսկոպոսի հետ միասին (ում հետ բարեկամական նամակագրութիւն ունէր) հռոմէացիների որոշ սովորութիւններ էր պախարակում: Նոյն պատճառով նաեւ հռոմէացիներն էին պատճառներ փնտրում վարկաբեկելու աֆրիկացիներին, սակայն այս գժտութիւններն ու երկպառակութիւնները երկար չտեւեցին, եւ Կիպրիանոսն իր սխալները սրբեց արեամբ նահատակութեամբ, քանի որ մէկ տարի անց աքսորից վերադարձաւ իր աթոռը եւ վախճանուեց: Նրա վախճանը եղաւ այսպէս:

Նրա սարկաւագը՝ Պոնտիոսը, գրում է. «Քաղաքի բարերարն աքսորուեց քաղաքից: Աքսորավայրը՝ Կուրուբան, գեղեցիկ վայր էր, եւ թէեւ անպիտան էր Կիպրիանոսի տեղը (քանզի, ասում են, արգելափակուած էր արեւազուրկ վիրապում), սակայն նրա՝ այնտեղ մնալու պատճառով պատուական անուն է ստացել: Նրան այցելում էին շատերը, տեղի բնակիչները նրա համար բերում էին անհրաժեշտը: Նրա հետ էի ես,— ասում է,— որովհետեւ նրա սէրը նաեւ ինձ արժանի համարեց մտերիմ բարձակիցների հետ ընտրելու իբրեւ կամաւոր աքսո-

րեալ: Երանի՜ նահատակութեանն էլ կցորդ դարձնէր: Աքսորավայրում գտնուելու առաջին օրը մեզ պատմեց այն տեսիլքի մասին, որն Աստուած ցոյց էր տուել իրեն, թէ պիտի նահատակուի, եւ որ ինքը խնդրել է Աստծուն մէկ օր հետաձգել իր մահը: Արդ՝ օրը նշանակեց տարի, քանի որ տարուայ աւարտին՝ տեսիլքը տեսնելուց ճիշտ մէկ տարի անց, վախճանուեց»:

Երբ բդեշխի փոխանորդ նշանակուեց Գաղերիոս Մաքսիմոսը, եւ Կիպրիանոս եպիսկոպոսին հրամայուեց վերադառնալ իր տեղը, նա լսեց սուրբ քահանայապետ Քսեստոսի վախճանման մասին, եւ ինքն էլ փափագեց արժանանալ նոյն երանելի վիճակին:

Նստած իր պարտէզում, ուր նրա շուրջ հաւաքուած էին քահանաները ու ժողովուրդը՝ ուսուցանում էր Աստուծոյ խօսքը եւ յայտնում նահատակուելու իր փափագը: Բարեկամները սկսեցին յորդորել նրան թաքնուել, ինչպէս նախկինում, մինչեւ անցնի հալածանքների մրրիկը, եւ թաքնուելու տեղ էին ցոյց տալիս նրան: Բայց նա չհամաձայնեց եւ նրանց նոյնպէս քաջալերեց վկայական մահուան գնալ՝ ասելով. «Փափագում եմ, որ հէնց հիմա՝ այս ժամին, երբ խօսում եմ այս բաները, գան եւ կտրեն իմ գլուխը»:

Մի օր յանկարծակի նրա տուն եկան զինուորներ իրենց զօրավարի եւ իշխանի հետ: Կիպրիանոսը ցնծութեամբ ընդառաջ ելաւ նրանց: Զօրավարը, նրան վերցնելով, կառքով տարաւ իր տուն, որը գտնուում էր քաղաքից դուրս՝ Սատուրնի կամ Քրոնոսի աւանում: Ամբողջ Կարքեդոնում լուր տարածուեց, որ բռնուել է Կիպրիանոս Թասկիոսը, եւ նրա յետեւից գնացին քրիստոնեաների ու հեթանոսների բազմութիւններ՝ տեսնելու նրա նահատակութիւնը:

Զօրավարը պատուով պահեց նրան՝ վախենալով ժողովրդից, եւ թոյլ տուեց նրա իւրայիններին, որոնցից մէկն էր Պոնտիոս սարկաւագը, խօսել եւ այդ գիշեր նրա հետ սեղան նստել: Իսկ ամբոխը դրսում հսկում էր, որ առանց իրենց գիտութեան չսպանեն հայրապետին:

Յաջորդ առաւօտեան սուրբին տարան բդեշխի փոխանորդի ապարանք եւ կանգնեցրին ատեանում: Բդեշխի փոխանորդը հարցրեց նրան. «Դո՞ւ ես Թասկիոս Կիպրիանոսը»: Սուրբն ասաց. «Ես եմ»: Իշխանը հարցրեց. «Դո՞ւ քեզ իբրեւ հայր ընծայեցիր այդ սրբապիղծ գողերին»: Վկան պատասխանեց. «Այո՛»: Իշխանն ասաց. «Սրբազան ինքնակալները հրամայեցին, որ զոհ մատուցես աստուածներին»: Կիպրիանոսն

ասաց. «Չե՛մ մատուցի»: Իշխանը կրկնեց. «Լա՞ւ ես մտածել անձիդ մասին»: Կիպրիանոս եպիսկոպոսը պատասխանեց. «Արա՛ ինչ որ քեզ հրամայուեց, քանզի մտածելու բան չկայ այստեղ»:

Այնժամ բդեշխի փոխանորդը, խորհրդակցելով իր ատենակալների հետ, սուրբին յայտնեց նրա դատավճիռը այսպիսի խօսքերով. «Երկար ժամանակ սրբապիղծ մտքով ապրեցիր, չարութեան մէջ քեզ համամիտ մարդկանց քեզ մօտ հաւաքեցիր եւ հռոմէացի աստուածներին ու մաքուր օրէնքները քեզ թշնամի դարձրիր, նոյնիսկ բարեպաշտ եւ դիւցազնափայլ ինքնակալները՝ Վաղերիանոսն ու Գաղիենոսը, չկարողացան քեզ աստուածների պաշտամունքին վերադարձնել: Եւ արդ՝ որովհետեւ չարիքների դրօշակակիր եղար, եղի՛ր խրատ բոլոր նրանց համար, ում քո ապիրատութեամբ քեզ մօտ հաւաքեցիր. թող քո արեա՛մբ հաստատուի օրէնքը»:

Սա ասելով՝ իշխանն ընթերցեց վճիռը. «Հաճելի թուաց Թասկիոս Կիպրիանոսին սրով սպանել»: Սուրբը վրայ բերեց. «Փա՛ռք Աստուծոյ»:

Երբ հաւաքուած հաւատացեալները լսեցին դատավճիռը, աղաղակեցին. «Մե՛զ էլ գլխատէք նրա հետ»: Սպասաւորները նրանց հեռացրին, իսկ Կիպրիանոսին վերցրին ու տարան: Նրա յետեւից գնում էր մեծ բազմութիւն, մինչեւ հասան գլխատման վայրը՝ մի ծառախիտ ու վայելուչ տեղ: Հաւաքուած բազմութիւնն այնքան մեծ էր, որ տեղը չէր բաւարարում, եւ շատերը բարձրացել էին ծառերը՝ տեսնելու մեծ մարդու նահատակութիւնը:

Այնժամ սուրբ եպիսկոպոսը հանեց իր հանդերձը, ծնկի իջաւ եւ սկսեց աղօթել Աստծուն, ապա հանեց բաճկոնը, տուեց սարկաւագներին եւ մնաց սոսկ շապիկով՝ սպասելով դահճին: Երբ դահիճը եկաւ եւ դանդաղում էր ի կատար ածել հրամանը, Կիպրիանոսը եղբայրներից վարշամակ եւ անձեռոց խնդրեց, ինքը կապեց իր աչքերը, եւ քանի որ չէր կարող իր ձեռքերը կապել, հրամայեց, եւ Յուլիանոս երէցն ու Յուլիանոս կիսասարկաւագը եկան եւ կապեցին: Այնժամ մօտեցաւ դահիճը եւ կտրեց սուրբի գլուխը:

Այսպէս Վաղերիանոս կայսեր օրերին՝ Տիրոջ 257 թուականի հոկտեմբերի 14-ին, նահատակուեց սուրբ հայրապետ Կիպրիանոսը:

Հին վկայաբանի աւանդութեամբ՝ սուրբ վկայի մարմինը միաւժամանակ դրուեց մօտիկ վայրում, իսկ յետոյ հաւատացեալները գիշերը մոմերով ու լապտերներով, մեծ ուխտով եւ յաղթականօրէն, բերեցին Մակրոպիոս անունով մի մարդու կալուածքը:

Երբ հալածանքները դադարեցին, սուրբի արեան հեղման տեղում կառուցուեց խորան, որը կոչուեց «Կիպրիանոսի սեղան» եւ յետոյ դարձաւ տաճար՝ հաւատացեալների ուխտատեղի՝ յոյժ պատուուած աֆրիկացիների կողմից:

Սուրբի զանազան նշխարները սփռուեցին Արեւմուտքում եւ Արեւելքում: Սուրբ Գրիգոր Նարեկացին, 983 թուականին գրած Խաչի ճառում խօսելով սուրբերի՝ Կոստանդնուպոլսից բերուած նշխարների մասին, իբրեւ ականատես յիշատակում է «Կիպրիանոս Կարքեդոնացու՝ սուրբ եւ երանելի եպիսկոպոսի եւ վկայի, եւ Յուստինէ իմաստուն եւ անարատ մարտիրոս կոյսի» մասին:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻ ՎԱՐՔԸ

Աստուածամերձ հայր, սուրբ վարդապետ, հաւատքի հաստատութեան սիւն եւ ուղղափառների պարծանք Գրիգոր Աստուածաբանը Երկրորդ Կապադովկիայից էր՝ Նազիանզ քաղաքից, որն առաջ Դիոկեսարիա էին կոչում: Ազգութեամբ յոյն էր, ծնուել էր չորրորդ դարի սկզբում: Նրա մայրը քրիստոնեայ էր եւ յոյժ բարեպաշտ, ում անունը յունարէն Նոննա էր, իսկ մեր լեզուով՝ Նունէ: Հայրը, ում անունը նոյնպէս Գրիգոր կամ Գրիգորիոս էր, հեթանոս հելլէն էր, նրանց աղանդից, ովքեր ոչ այնքան կուռքեր էին պաշտում, որքան սնոտիապաշտ էին, քանզի այլեւայլ կուռքերը եւ զոհամատոյց պաշտամունքն արհամարհելով՝ կրակն ու լոյսն էին պաշտում՝ ընդունելով նաեւ մէկ բարձրեալ Աստուծոյ, ուստի եւ «բարձրելապաշտ» էին կոչւում: Պահում էին նաեւ հրէական ինչ-ինչ աւանդութիւններ. պահում էին շաբաթները եւ խորութիւն դնում որոշ կերակուրների միջեւ, բայց մերժում էին թլփատութիւնը: Գրիգորիոսը բազում տարիներ ընթացաւ այս հաւատքով, մինչեւ որ բոլորեց նրա յիսուն տարին, որից յետոյ վերին տեսչութեամբ ընդունեց քրիստոնէական սուրբ հաւատքը՝ հետեւեալ կերպ:

Գրիգորիոսի բարեպաշտ կինը՝ Նունէն, աղօթքներով եւ արտասուքով անդադար խնդրում էր Աստծուց իր ամուսնու դարձը եւ հեզութեամբ հանապազ յորդորում նրան, մանաւանդ իր բարի վարքի օրինակով՝ ամուսնու մէջ կամաց-կամաց սէր բորբոքելով քրիստոնէական հաւատքի հանդէպ: Մի օր Գրիգորիոսը զարմանալի տեսիլք տեսաւ. գիշերուայ քնի մէջ նրան թուաց, թէ երգում է սաղմոսի այս խօսքը. «Ուրախացայ, երբ ասացին ինձ. «Գնանք Տիրոջ տուն» (Սաղմ. ՃԻԱ 1), որը նա երբեք չէր երգել: Այդ խօսքի պատճառով քրիստոնէութեանը դառնալու փափագը համակեց նրա սիրտը, եւ երբ արթնացաւ, երազը պատմեց կնոջը: Նունէն, մեծապէս ուրախանալով, թախանձեց նրան անփոյթ չդտնուել Աստուծոյ կանչի հանդէպ: Գրիգորիոսը, սրտում համոզուելով, սկսեց մկրտութեան նախապատրաստուել: Այնպէս եղաւ, որ այդ օրերին Նիկիայի սուրբ ժողովին մասնակցելու համար Նազիանզ քաղաքով բազում եպիսկոպոսներ պիտի անցնէին, որոնցից առաւել նշանաւոր էր Կեսարիայի սուրբ Ղեւոնդիոս եպիսկոպոսապետը, ում հոգեւոր իշխանութեան ներքոյ էր նաեւ Նազիանզը: Գրիգո-

րիոսը դիմեց նրան եւ յայտնեց մկրտուելու իր փափագը: Նրանք ուրախացան եւ երախայացրին* նրան, որպէսզի մկրտեն: Նոյն օրն այնտեղ հասան նաեւ մեր երանելի Արիստակէսը, ով Նիկիայի ժողով էր ուղարկուել սուրբ Լուսաւորչի փոխարէն, Յակոբ Մծբնայ մեծ հայրապետը, Եդեսիայի Եւթաղիոս եւ Պարսից Յովհան եպիսկոպոսները: Սրանք բոլորը, Գրիգորիոսի մկրտութեանը մասնակցելով, տեսան, որ երբ վերջինս ջրից դուրս ելաւ, նրա շուրջ լոյս տարածուեց:

Մի այլ բարեգուշակ նշան եւս պատահեց այդտեղ. մկրտութեան կարգը կատարելիս, որը միմեանց գործակցելով կատարում էին սուրբ Ղեւոնդիոսը եւ Նազիանզի եպիսկոպոսը՝ ներկայ եպիսկոպոսներով հանդերձ, յանկարծ մտքի յափշտակութեամբ սկսեցին նրա վրայ կարդալ նաեւ քահանայական եւ եպիսկոպոսական ձեռնադրութեան խօսքերը: Իսկ երբ իրենց արածից ուշքի եկան, ասացին միմեանց. «Սա զուր տեղը չարեցինք՝ անգիտաբար սխալուելով, այլ սա հաւաստի նշան է, որ նա սակաւ ժամանակ անց եպիսկոպոսական աստիճանի է հասնելու»: Սա իսկապէս կատարուեց. երկու տարի անց վախճանուեց Նազիանզի եպիսկոպոսը, եւ նրա փոխարէն Ղեւոնդիոս պատրիարքի կողմից տեղի եպիսկոպոս ձեռնադրուեց նոյն ինքը Գրիգորիոսը՝ Գրիգոր Աստուածաբանի հայրը:

Իսկ Գրիգոր Աստուածաբանի ծնունդը եղաւ իր հօր՝ քրիստոնէութեանը դառնալու սկզբում՝ այսպիսի մի հրաշքով: Նրա բարեպաշտ մայրը յաճախակի խնդրում էր Աստծուց, որ իրեն արու զաւակ պարգեւի, եւ նախքան յղիանալը խոստանում էր իր զաւակին նուիրել Տիրոջը՝ նրա տաճարում ծառայելու կամ էլ միայնակեացների ուխտի անդամ դառնալու: Երկար տարիներ նոյնը խնդրելով՝ մի օր երազում տեսաւ այն մանկանը, ում ծնելու էր, այնպէս որ նրա մտքում պարզորոշ կերպով տպուեցին մանկան արտաքինը եւ առաքինազարդ բարեմասնութիւնները, նաեւ իմացաւ դրուելիք անունը՝ Գրիգոր: Երբ տեսիլքը ճշտութեամբ իրականացաւ եւ մանուկը մեծացաւ աստուածպաշտական բարի կրթութեամբ, մայրը նրան պատմեց իր ուխտը՝ նրան Աստծուն նուիրելու մասին: Մանուկ Գրիգորը խնդամիտ յօժարութեամբ համաձայնեց սրան, որովհետեւ ամէն ինչում հնազանդութեամբ իրեն յանձնում էր քրիստոսասէր ծնողի հոգելից խրատներին:

* երախայացնել – անհրաժեշտ գիտելիքների ուսուցանմամբ նախապատրաստել մկրտութեան

Դեռ մատաղ հասակում էր, երբ երազում տեսաւ երկու պարկեշտ կոյսերի, ովքեր խոնարհադէմ՝ աչքերը գետնին յառած՝ լուռ կանգնած էին իր առջեւ: Գրիգորի հարցին, թէ ովքեր են նրանք, նրանցից մէկը պատասխանեց. «Ես Մաքրութիւնն եմ», իսկ միւսը՝ «Պարկեշտութիւնն եմ»: Յորդորում էին նրան, որ իրենց նմանուի, եւ ասում. «Մենք սիրելի եւ մերձաւոր ենք երկնաւոր Թագաւորին, եւ ովքեր մեզ նմանւում են, նրանց լուսեղէն զգեստներով ենք զարդարում եւ տանում կանգնեցնում Աստուածութեան Աթոռի առջեւ»: Սա ասելով՝ կոյսերն անհետացան նրա աչքից: Քնից արթնանալով՝ Գրիգորը խորհում էր հրեշտակային առաքինութիւնների պատուի մասին՝ փափագելով անթերի կերպով ունենալ դրանք իր մէջ: Երբ մեծացաւ, եւ ընդդէմ մաքրութեան ու պարկեշտութեան խորհուրդներ էին ծագում նրա մէջ, այդ տեսիլքը յիշելով՝ հոգով խաղաղւում էր: Եւ առաքինութեան ճանապարհն օրըստօրէ քաղցրանում էր նրա համար այնքան, որ ոչինչ էր համարում երկրաւոր բոլոր վայելչութիւնները եւ ինչպէս դառը թոյնից՝ խորշում հաճելի կերակուրներից ու զգեստներից, իր հասակակիցների բոլոր զուարճութիւններից ու դատարկ զբաղմունքներից:

Գրիգորը Կեսարիոս անունով եղբայր եւ Գորգոնիա անունով քոյր էլ ունէր՝ նոյնպիսի բարեպաշտ վարքով մեծացած: Բայց Գրիգորը գերազանց էր նրանցից եւ իր մատաղ հասակում առաքինասէր ջանասիրութեան եւ երկիւղածութեան սքանչելի օրինակ էր տալիս նրանց: Շատ անգամ բարեպաշտ մայրը Սուրբ Գիրքը տալիս էր Գրիգորին, ով բացելով սուրբ նահապետների պատմութիւնները՝ յորդորում էր նրանց աստուածահաճոյ ընթացքին նմանուող լինել: Այսպէս մանուկ Գրիգորը հոգով վառւում էր աստուածային Գրքի ուսումից, խորամուխ լինում դրա մէջ եւ դրանով ուրախանում, ինչպէս խրախճանքում:

Երբ պատանի դարձաւ, հոգին եռում էր նրա մէջ՝ ուսանելու ներքին (այսինքն՝ հոգեւոր) եւ արտաքին (այսինքն՝ աշխարհիկ) ամբողջ իմաստութիւնը: Եւ իր քաղաքում չգտնելով յարմար մէկին՝ խորհեց գնալ գիտութեամբ հռչակաւոր քաղաքներ, ինչի համար ծնողների համաձայնութիւնը ստանալով՝ նախ գնաց Կապադովկիայի Կեսարիա քաղաքը: Սակաւ ժամանակ անց իր ուսումնակիցներից մի քանիսի հետ ճանապարհ ընկաւ դէպի Պաղեստինի Կեսարիա քաղաքը եւ մնալով Թեսպեսա անունով մի մեծահռչակ հռետորի մօտ՝ կարճ ժամանակում յոյժ առաջադիմեց գիտութիւնների մէջ: Այնուհետեւ, աւելին ձգտելով, մեկնեց Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքը, որտեղի գիտական դպ-

բոցն առաւել հռչակաւոր էր: Եւ երբ այնտեղ էլ մեղուաջան աշխատութեամբ գիտելիքների մեծ պաշար ամբարեց, տենչաց հասնել Աթէնք, որն «իմաստութեան մայր» եւ «իմաստասէրների քաղաք» էր կոչւում:

Հոգու սաստիկ փափագման պատճառով չսպասեց նաւարկութեան յարմար ժամի, այլ փութալով նաւ նստեց անբարենպաստ եղանակին (ասում են՝ նոյեմբեր ամսին): Եւ ահա յանկարծակի մեծ մրրիկ բարձրացաւ ծովի վրայ: Նաւը վտանգի մէջ յայտնուեց, այն աստիճան, որ բոլոր նաւորդները յոյսը կտրեցին կեանքից եւ բարձրաձայն ողբում էին իրենց կորուստը: Բայց Գրիգորը մահուանից առաւել հոգու վտանգման մասին էր մտահոգւում, չլինի թէ առանց սուրբ Աւազանով լուացման հեռանայ այս կեանքից, քանզի ըստ ժամանակի տարադէպ սովորութեան, որ տարածուած էր շատերի մէջ, մտադրուել էր երիտասարդ տարիքում ընդունել մկրտութիւնը, ինչ պատճառով արտասուք հեղելով՝ դառնագին ողբում էր իր վրայ եւ ասում. «Մինչ սպասում էի կենդանի ջրին, մահառիթ ջուր հանդիպեց ինձ»: Եւ աղաղակում էր դէպի Տէրը. «Թող ինձ չկլանեն ծովի կորստաբեր ջրերը, քանի դեռ չեմ լուացուել սուրբ Աւազանի կենարար ջրով»: Եւ այնպիսի աղիողորմ ձայներ էր երկինք բարձրացնում, որ նաւորդները եւ նաւաստիները, սեփական վտանգի մասին մոռացած, կարեկցութեամբ հարցնում էին Գրիգորի անչափ ողբի պատճառը, իսկ նա, պատասխանելու փոխարէն, աւելի էր շատացնում իր լալագին հեծեծանքը՝ աղօթելով Նրան, Ով միակն էր, որ ի զօրու էր հրաշք գործելու: Եւ աղօթելով յիշում էր Աստուծոյ հրաշքները Եգիպտոսում ու Կարմիր ծովում եւ ասում. «Այժմ էլ, Տէ՛ր, կարող ես փրկել Քո բարեսէր կամքի համաձայն»: Նաեւ ուխտեց կործանումից ազատուելուց յետոյ այլեւս չհետաձգել մկրտութիւնը, խոստացաւ իրեն ամբողջովին ընծայել Փրկչին՝ մերկանալով աշխարհից եւ, ըստ իր մօր ուխտի, կրօնաւորութեամբ ծառայել միայն Տիրոջը:

Ալեկոծութեան այս լուրը Գրիգորի ծնողներին յայտնուեց տեսիլքով, ուստի նրանք էլ ուժգին աղաղակով աղօթում էին առ Աստուած, եւ նրանց ու Գրիգորի աղօթքները լսելի եղան: Եւ ահա նաւավարներից մէկը, ով Գրիգորի մտերիմն ու սիրելին էր, տեսաւ, որ նրա բարեպաշտ մայր Նունէն, ծովը մտնելով, գնաց ջրերի վրայով եւ նաւը բռնելով ցամաք հանեց: Գրիգորին պատմեց տեսիլքը, եւ այն իսկոյն իրականացաւ. ծովն անսպասելիօրէն հանդարտուեց, եւ խաղաղութեամբ հասան Հռոդոս կղզի: Նաւում գտնուող անհաւատները, սա տեսնելով, խոստովանեցին, որ միայն քրիստոնեաների Աստուածն է փրկիչ եւ օգ-

նական նրանց, ովքեր կանչում են Իրեն: Եւ նրանցից շատերը հաւատացին Քրիստոսին:

Սրանից յետոյ Գրիգորը համընթաց քամով նաւարկելով եկաւ հասաւ Աթէնք: Եւ անմիջապէս անյագ փափագմամբ իրեն նուիրելով իմաստասիրական գիտութիւններ ուսանելուն՝ իւրացրեց աթենացիների ողջ կրթութիւնը՝ գործելով Աթէնքում երկար տարիներ: Երբ Գրիգորն այնտեղ էր, Բիւզանդիայում եւ այլ քաղաքներում շրջելուց յետոյ ուսումնառութեան նոյն փափագով այնտեղ եկաւ նաեւ Բարսեղ Կեսարացին: Նրանք դարձան մէկ սիրտ եւ մէկ հոգի, միմեանց հացակից եւ բնակակից, մէկը միւսին սատարելով՝ հիանալի կերպով սովորեցին աշխարհիկ ողջ գիտութիւնը: Եւ ամենակարեւորը՝ անձնական օրինակով յորդորում էին միմեանց՝ ուսումից առաւել առաջադիմելու աստուածպաշտութեան մէջ՝ պահքի եւ աղօթքների մէջ ժուժկալելով, ինչպէս միայնակեացները, ըստ Սուրբ Գրքի ընթերցուածքների ընթանալով անարատ կենցաղավարութեամբ, այն աստիճան, որ սքանչելի եւ զարմանալի էին երեւում բոլոր աթենացիներին: Նրանց իմաստութեան եւ առաքինութեան համբաւը տարածուեց ամբողջ Հելլադայում ու հեռաւոր վայրերում, եւ ասում էին, թէ Աթէնքում Գրիգորի եւ Բարսեղի նման ուրիշ մէկը չկայ՝ կատարեալ առաքինութեամբ՝ կատարեալ գիտութեան հետ մէկտեղ: Այդ օրերին՝ Տիրոջ 354 կամ 355 թ.-ին, ուսանելու նպատակով Աթէնք եկաւ նաեւ Յուլիանոսը՝ Կոստանդիանոս Մեծի եղբօրորդին՝ մի ստահակ ու չարանենգ երիտասարդ, ում ընթացքը եւ վարքը տեսնելով՝ Գրիգորը կանխագուշակում էր այն չարիքները, որ նա սկսեց գործել սակաւ ժամանակ անց, երբ թագաւորեց: Եւ իր ուսումնակիցներին առանձին ասում էր. «Օ՜, ինչպիսի՜ չար կորիւն է սնուցում հռոմէացիների ինքնակալութիւնը: Բայց տա՛յ Աստուած, որ սուտ դուրս գան իմ խօսքերը»:

Սրանից յետոյ (355 կամ 356 թ.) Բարսեղը մտածեց Աթէնքից հեռանալ, քանզի այդ քաղաքը չգտաւ այնպիսին, ինչպիսին կարծում էր, եւ չյաջեցաւ կատարեալ իմաստութեան նրա ծարաւը: Տխրեց Գրիգորը նրա՝ մեկնելու որոշման համար եւ շատ ջանաց, որ խափանի այն, բայց չկարողացաւ: Ապա ուխտեցին իրար, որ պատեհ ժամանակ գտնեն եւ աշխարհից միաբան հրաժարուելով, անապատի միայնակեացների օրինակով Աստծուն պաշտելով՝ առանձնական կեանք վարեն: Իրարից բաժանուելուց յետոյ ամէն օր հառաչանքով յիշում էին միմեանց, այնպէս որ Գրիգորը չհամբերելով՝ մտածեց գնալ Բար-

սեղի յետեւից: Այդ իմանալով՝ աթենացիները եւ Գրիգորի ուսումնակիցները բազում թախանձանքով աղաչեցին նրան մնալ իրենց մօտ, քանզի ամէնքին ցանկալի էր վայելել նրա իմաստութիւնը եւ հրեշտակային վարքը: Կամենալով խափանել նրա մտադրութիւնը՝ շատ անգամ բռնադատեցին նրան դառնալու Արեոպագոսի օրէնսուսոյց: Գրիգորը, տեսնելով, որ իրեն չեն թողնում գնալ, միառժամանակ լռեց, ապա շատ օրեր անց մի պատրուակով հեռացաւ Աթէնքից եւ ցամաքով ուղղուեց Կոստանդնուպոլիս, որտեղ գտաւ իր Կեսարիոս եղբօրը, ով նոր էր վերադարձել Ալեքսանդրիայից, ուր գնացել էր ուսումնառութեան համար:

Ապա ծնողների թախանձանքին անսալով՝ գնաց իր հայրենի Նազիանզ քաղաքը եւ այնտեղ, ինչպէս կարծում են, նախ իր հօրից՝ Գրիգորիոս եպիսկոպոսից, ընդունեց մկրտութիւն, ապա իրենից թօթափելով աշխարհիկ հոգսերը՝ անապատ շտապեց: Բայց նրա ծնողները չուտով յետ դարձրին նրան եւ որոշ ժամանակ թոյլ չտուեցին հեռանալ իրենցից, ինչպէս եւ Բարսեղին՝ վերջինիս ծնողները: Այսպէս Գրիգորը, տանը փակուած, հոգում էր իր ծնողների կարիքները նրանց ծերութեան ժամանակ, միաժամանակ անդադար զբաղւում հոգեւոր կրթութեամբ ու Սուրբ Գրքի ընթերցանութեամբ, այնքան, որ բոլոր նրան տեսնողները զարմանում էին. քանզի իր հօր տան անհրաժեշտ գործերով զբաղուած լինելով հանդերձ՝ ունէր նաեւ միայնակեացների կատարեալ հանդարտութիւն: Ապրում էր մարդկանց մէջ, սակայն նրա կենցաղավարութիւնը երկնային էր, որովհետեւ ուխտել էր ամենուր լինել ինչպէս անապատում եւ հոգու կարիքներն ամէն ինչում նախապատիւ համարել մարմնի կարիքներից, զգուշանալ աշխարհի բոլոր պատրանքներից, հանապազ վերինը խորհել, չասել ոչ մի դատարկ խօսք, չերդուել եւ ոչ մէկին չերդուեցնել, երբեք պարապ չմնալ, այլ գիշեր-ցերեկ կրթուել Աստուածաշունչ գրքով: Այսպիսի կենցաղավարութեամբ ամբողջովին Աստուծոյ հետ միացած՝ գիշերային տեսիլքներում շատ անգամ յայտնապէս տեսնում էր Քրիստոսին՝ եւ մտերմօրէն զրուցում Նրա հետ:

Այդ ժամանակներում Կոստանդիանոսի որդի Կոստանդի թագաւորութեան օրօք, զօրացել էին արիոսականները: Բայց Գրիգորի հայրը՝ Նազիանզի եպիսկոպոսը, նրանց դէմ մեծ պայքար ծաւալեց՝ օգնութիւն գտնելով իր որդուց, ով աստուածային կատարեալ իմաստութեամբ եւ ճշմարիտ աստուածաբանութեամբ պարտութեան մատնում

ու դարձի էր բերում մոլորուածներին: Արիոսականները, տեսնելով, որ իրենց մոլորութիւնը յանդիմանւում է ուղղափառներից, հնարք բանեցրին խաբէութեամբ՝ մի տառի փոփոխման միջոցով, որսալ տգէտներից եւ գիտուններից շատերին՝ պատճառաբանելով, թէ ողջ աղմուկը «հոմոուսիոս» բառի պատճառով է, որը նշանակում է «համագոյ», եւ փոխարէնը ներմուծեցին «հոմիուսիոս» բառը, որը նշանակում է «նմանագոյ»՝ պատճառաբանելով, թէ այն ընդունելի է բոլորի համար եւ խաղաղութիւն հաստատելու միջոց կը լինի: Այսպիսի հնարքներով Սելեւկիայում եւ Արիմինայում ժողովներ գումարելով՝ աղաւաղեցին սուրբ հաւատքի նիկիական դաւանութիւնը եւ շինծու խօսքերով իրենց դաւանութիւնն արտաքուստ համաձայն ցոյց տալով նիկիականին՝ կայսեր հրամանով ստիպեցին եպիսկոպոսներից շատերին ստորագրելու իրենց ժողովների թիւր որոշումը, որն էլ արեցին անուանի մարդկանցից շատերը՝ չհասկանալով չարափառների դաւաճանութիւնը: Նոյն խաբէութեան զոհ դարձաւ նաեւ Գրիգորի հայրը՝ Գրիգորիոսը, եւ ինքնակալի կամքի համաձայն ստորագրեց Արիմինայի ժողովի որոշումը:

Իսկ նրա որդին՝ Գրիգորը, միառժամանակ հեռացաւ հօրից՝ օտարութիւն ցուցաբերելով նրա հանդէպ այդ պատճառով, բայց յետոյ ջանաց զանազան միջոցներով ճշմարիտ ճանապարհին բերել ծերունի հօրը եւ զատուածներին կրկին միացնել նրան, քանզի դժուարին խնդիրների, երկպառակութիւնների ժամանակ սուրբ Գրիգորը, ով զարդարուած էր ամենայն իմաստութեամբ եւ առաքինութեամբ, միջամտեց եւ օգտակար եղաւ թէ՛ հովուին, թէ՛ հօտին, քանի որ իր հօրն ազատեց հերձուածողների մոլորութիւնից, իսկ ժողովրդին հաշտեցրեց նրա հետ եւ շարունակ աստուածաբանելով՝ բոլորին հաստատեց նիկիական ուղղափառ դաւանութեան մէջ: Նրա խօսքն այնքան ազդու էր ու վսեմ, ճարտար ու վայելուչ, որ ձգում էր բոլորին եւ համոզում անգամ ամենանատարբերներին:

Երբ Ցուլիանոս Ուրացողը գահ բարձրացաւ, մեծ պատուի արժանացրեց Գրիգորի եղբօրը՝ Կեսարիոսին՝ դարձնելով նրան արքունի մեծամեծերից մէկը: Երբ երանելի Գրիգորն այս մասին լսեց, յանդիմանական մի խրատագիր յղեց իր եղբօրը, որպէսզի վերջինս զգուշանայ չար վիշապօձի թոյնից: Կեսարիոսն ականջ դրեց իր հարազատի՝ իր եղբօր ազդեցիկ ու հոգեշահ խօսքերին, ինքնակամ հրաժարուեց իր պաշտօնից եւ շտապ վերադարձաւ իր հայրենի քաղաքը: Սրա համար Գրիգորը շատ ուրախացաւ, մանաւանդ որ յետայդու հայրական տան կարիք-

ները կը հոգար Կեսարիոսը, իսկ ինքն արդէն ազատ կը լինէր՝ իր մտերիմ Բարսեղ Կեսարացու հետ առանձնանալու եւ ճգնելու:

Բայց մինչ պատրաստւում էր թողնել հայրական տունը, հայրը ստիպելով քահանայ ձեռնադրեց նրան, որպէսզի իր ծերութեան ժամանակ օգնի իրեն՝ հոգալու Եկեղեցու կարիքները: Նոյնպէս եւ Բարսեղը իւրայինների ճնշման տակ քահանայ ձեռնադրուեց: Այս մասին նա գրում է Գրիգորին. «Ինչպէս դու, այնպէս էլ ես. երկուսիս էլ ստիպելով ձեռնադրեցին»:

Սակայն կարճ ժամանակ անց, երբ Կապադովկեան Կեսարիայի եպիսկոպոս Եւսեբիոսն ու Բարսեղը գժտուեցին, վերջինս հեռացաւ անապատ՝ ճգնելու: Երբ Գրիգորն այս մասին իմացաւ, երկուսին էլ հաշտութեան գիր ուղարկեց եւ հաշտեցրեց միմեանց հետ: Այնուհետեւ ինքն էլ պատրաստուեց գնալ անապատ՝ Բարսեղի մօտ, սակայն հօր եւ մօր ծանր հիւանդութեան պատճառով (քանի որ մահամերձ էին) չկարողացաւ իրականացնել իր մտադրութիւնը, մինչեւ որ, աղօթքին ապաւինելով, Աստծուց վերստացաւ ծնողների առողջութիւնը եւ ապա կարողացաւ հեռանալ հայրական տնից ու գնալ Բարսեղի մօտ՝ Պոնտոսի կողմերը:

Այնժամ սկսեցին իրականացնել ինչ որ ուխտել էին, այսինքն՝ ապրել առաքինի վարքով, եւ միասիրտ նահատակութեամբ ճգնում էին կրօնաւորական խստամբերութեամբ՝ պահքով ու աղօթքով: Նրանք հանդարտում էին իրարից ոչ հեռու գտնուող առանձին խցերում եւ յաճախ միասին բազմաթիւ զրոյցներ ունենում քրիստոնէական հաւատքի եւ անարատ կենցաղավարութեան վերաբերեալ: Երանելի Գրիգորն ասում է. «Խիստ ուրախ եմ, քանզի յունական փիլիսոփայութիւնն ինձ ուրիշ բանի համար պիտանի չեղաւ, քան արհամարհելու այն եւ հասկանալու, թէ որքան քաղցր է աստուածային վարդապետութիւնը, քանզի Տիրոջ խօսքերն իմ քիմքին քաղցր են, ինչպէս մեղրի խորիսխ, եւ Սուրբ Գրքի միջոցով հասկացայ երկրաւոր իմաստութեան սնոտի եւ խաբէական լինելը, որը խօսքի արտաքին պաճուճանքներով արժէքաւոր է թւում, սակայն իրականում թերի է»:

Երբ ծանօթները Բարսեղին թախանձագին կանչեցին Կեսարիա, նա նամակով պատասխանեց նրանց. «Ինչպէ՞ս կարող եմ այդպէս շուտ թողնել մեր փափագած առանձնութիւնը, որին հասանք մեծ ջանքերի գնով: Աղաչում եմ, թո՛յլ տուէք, որ որոշ ժամանակ վայելեմ իմ գտած երջանկութիւնը, քանի որ հանդիպել եմ կենդանի ջրի մի խորունկ ջրհորի, մի ընտիր անօթի, երանաշնորհ մի անձի. նկատի ունեմ Գրիգորին, ով Քրիստոսի բերանն է»:

Անապատում ապրած ժամանակաշրջանում Գրիգորը մի յանդիմանական գրութիւն յղեց Ցուլիանոս Ուրացողին, ով արգելել էր քրիստոնեայ պատանիներին ուսումնասիրելու արտաքին (աշխարհիկ) գիտութիւնները, եթէ հեթանոսութիւն չընդունէին. Ցուլիանոսն ասում էր՝ իրենցը գիտեն, եթէ մերն էլ սովորեն, երկուսով զինուած՝ կը մարտնչեն մեր դէմ: Գրիգորն Ուրացողին հասկացրեց, որ քրիստոնեաները աշխարհիկ գիտութիւնների կարիքը չունեն, եւ փոխարէնը ինքը, իր աստուածիմաստ հանճարով, շարադրեց բազմաթիւ ճառեր, իմաստասիրական երկեր, հոգեւոր բանաստեղծութիւններ եւ տուեց քրիստոնեայ պատանիներին՝ ուսումնասիրելու: Վերջիններս սրանցով աւելի բարձրակարգ կրթութիւն էին ստանում, քան աշխարհիկ գիտութիւններով: Երբ Ցուլիանոսը տեսաւ, որ իր նպատակին չհասաւ, փոխեց իր նախկին հրամանը, քանզի տեսնում էր, որ Գրիգորի հանճարագրութիւնը շատ աւելի բարձրակարգ է, քան հելլենական իմաստասիրութիւնը, եւ ամենակարեւորը՝ Գրիգորը յստակօրէն ցոյց տուեց, որ աշխարհիկ գիտութիւնները, առանց Սուրբ Գրքի հետ համաձայնեցման, խաւար են՝ լոյսից ամենեւին զուրկ եւ անհեթեթութիւններով լի:

Այնուհետեւ Գրիգորը երբեմն գնում էր Նազիանզ՝ իր ծերացած ծնողների թախանձանքով, երբեմն էլ՝ անապատ՝ Բարսեղի հետ ճգնելու: Բայց երբ գահ բարձրացաւ արիոսական Վաղէսը, եւ արիոսականները սկսեցին աշխուժանալ, Գրիգորի հայրը որդուն պարտադրեց, որ իր մօտ գայ, եւ այդպէս ստիպուած վերադարձաւ անապատից եւ յոյժ օգտակար եղաւ Եկեղեցուն: Նաեւ ջանաց, որ Բարսեղն էլ անապատից իջնի Կեսարիա եւ օգնի ուղղափառներին: Գրութիւն ուղարկեց նաեւ Բարսեղի եղբօրը՝ Գրիգոր Նիւսացուն, ով այդ ժամանակ աշխարհիկ գիտութիւններ էր ուսումնասիրում, եւ համոզեց նրան, որ թողնի երկրաւոր իմաստութիւնը, խորանայ աստուածային գիտութիւնների մէջ եւ դրանցով հաւատացեալների մտքից ջնջի հերձուածողների ցանած որոմը: Այնժամ նրանք երեքը՝ որպէս եռալոյս ջահ, լուսաւորեցին Եկեղեցին:

Եկեղեցուն օգտակար լինելու այս ջանքերով հանդերձ, Գրիգորն ու Բարսեղը չէին դադարեցնում իրենց միայնակեցական ճգնութիւնը, քանզի յաճախակի առանձնանալով մերձակայ գիւղերում՝ նուիրւում էին խստամբեր ճգնութեան ու աստուածային խոկ-

ման, ապա եկեղեցական կարեւոր խնդիրների համար վերադառնում իրենց քաղաքները:

Երբ վախճանուեց Գրիգորի Կեսարիոս եղբայրը, Աստուածաբանը պատուեց նրան մի ներբողով, ուր վկայում է, թէ շատ անգամ է տեսիլքով տեսել նրա հոգին զուարթ եւ լուսափայլ: Ներբողեց նաեւ իր բարեպաշտ քրոջը՝ Գորգոնիային, երբ վերջինս վախճանուեց:

Այնուհետեւ անհրաժեշտ եղաւ, որ Գրիգորը տուն վերադառնայ, քանզի նրա ծնողները շատ էին ծերացել, եւ իր հօր փոխարէն, ով մօտ իննսուն տարեկան էր, սկսեց հոգալ Նազիանզի Եկեղեցու կարիքները:

Այդ ժամանակ վախճանուեց Կապադովկեան Կեսարիայի եպիսկոպոսապետ Եւսեբիոսը, եւ որպէս աթոռակալ՝ նրան յաջորդեց երանելի Բարսեղը, ով ձեռնադրութիւն էր ստացել Գրիգոր Աստուածաբանի հօրից՝ առաւելապէս Գրիգորի ջանքերով, ով լաւ գիտէր Բարսեղի առաքինութիւնը եւ այդ եկեղեցական աթոռին միայն նրան էր արժանի համարում՝ որպէս ժամանակի աղանդաւորների դէմ հզօր ախոյեանի: Սուրբ Բարսեղը, Կեսարիայի պատրիարք դառնալով, Գրիգոր Աստուածաբանին յաճախ իր մօտ էր կանչում Եկեղեցու զանազան կարիքներում օգնութիւն ցուցաբերելու համար՝ ասելով. «Քո ներկայութիւնն իսկ բաւական է հաւատքի թշնամիներին յաղթելու համար»: Այսպէս երանելի Գրիգորն օգնում էր Բարսեղ Կեսարացուն բարեկարգչական զանազան գործերում, մասնաւորապէս՝ աղքատների խնամքի հարցում, նոյնիսկ կառուցել տուեց հիւանդանոցներ ու հիւրատներ, աղքատասիրութեան մասին գրեց ճառեր:

Կարճ ժամանակ անց, երբ Բարսեղի թեմում իշխանատենչ մարդկանց պատճառով խժդժութիւններ եղան, նա ստիպուած եղաւ եպիսկոպոսարաններ հիմնադրել, եւ Գրիգորին եւս կամենում էր ստիպելով ձեռնադրել Սասիմ քաղաքի եպիսկոպոս, որպէսզի հոգեւոր իշխանութիւն ունենալով՝ կարողանար լաւագոյնս հովուել ժողովրդին իր աստուածային վարդապետութեամբ: Սակայն Գրիգորը կտրականապէս հրաժարւում էր, քանզի չէր ուզում զրկուել առանձնութիւնից եւ հոգեպարար հանդարտ կեանքից, որովհետեւ այդ վայրը լի էր աշխարհիկ հոգսերի խռովքով, չհաշուած այն, որ նախանձողների կողմից զանազան վարկաբեկիչ պատմութիւններ էին յօրինւում ու տարածւում ժողովրդի մէջ երկու սուրբերի բարեկամութեան մասին: Այդ բամբասանքի հետեւանքով եղաւ մի պահ, երբ Գրիգորի եւ Բարսեղի միջեւ

նոյնիսկ փոքր-ինչ գժտութիւն առաջ եկաւ: Սակայն սուրբ Բարսեղը, անտեսելով այդ ամէնը, անձամբ եկաւ Նազիանզ եւ այնտեղ Գրիգորին ձեռնադրեց Սասիմ քաղաքի եպիսկոպոս: Բայց երբ չարակամների պատճառով յուզումներ առաջ եկան, որոնք չէին թողնում Գրիգորին լիարժէքօրէն վարել հարկադրուած կերպով ստանձնած պաշտօնը, նա չկամեցաւ դահակալել այնտեղ, այլ, միայնակեցութեան փափագով, կամաւորաբար վերադարձաւ իր քաղաքը՝ Նազիանզ: Այնժամ նրա ծերունի հայրը ստիպեց նրան իր փոխարէն ընդունել Նազիանզի աթոռակալութիւնը, քանզի ինքն այլեւս անկարող էր հովուելու իր հոգեւոր հօտը: Երանելի Գրիգորը զանազան եղանակներով փորձեց ընդդիմանալ, սակայն ի վերջոյ, հնազանդութիւնից յաղթուած, յանձն առաւ աջակցել հօրը եկեղեցական գործերում, բայց միայն այն պայմանով, որ հօր վախճանից յետոյ իրեն չստիպեն ստանձնել Նազիանզի եպիսկոպոսութիւնը, այլ թոյլ տան առանձնակեաց կեանքով ապրել, ինչպէս շարունակ փափագում էր:

Այնուհետեւ, երբ նրա երանելի հայրը՝ Նազիանզի ծերունազարդ եպիսկոպոս Գրիգորիոսը, քառասունչորս-քառասունհինգ տարի եպիսկոպոսական պաշտօն վարելուց յետոյ՝ 373 թ., ննջեց ի Տէր մօտ հարիւրամեայ հասակում, սուրբ Գրիգորը նրան պատուեց դամբանական մի ճառով՝ Բարսեղ Մեծի ներկայութեամբ, եւ ճառի սկզբում Բարսեղին դիմելով՝ մեծ ու զարմանալի բաներ պատմեց հօր առաքինութիւնների մասին, եւ քանի որ դեռ կենդանի էր նրա բարեպաշտ մայրը՝ Նոնէն, նրան եւս ըստ արժանւոյն գովեց ու մխիթարեց: Կարճ ժամանակ անց, երբ վախճանուեց նաեւ մայրը, երանելի Գրիգորն այնուհետեւ, բոլոր հոգսերից ազատուած, յայտնեց Նազիանզի բնակիչներին. «Ես ձեր եպիսկոպոսը չեմ եւ երբեք յանձն չեմ առել Նազիանզի Եկեղեցու հովուութիւնը, ուրիշ մէկի ձեզ հովիւ ընտրէք եւ ինձ ազա՛տ թողէք»: Բայց տեսնելով, որ քաղաքացիներն ու շրջակայ գաւառների առաջնորդները թոյլ չեն տալիս իրեն գնալ, այլ ուրիշ աթոռակալ ընտրելու պատճառաբանութեամբ խնդրում են մինչ այդ մնալ որոշ ժամանակ եւս՝ իրականում ուրիշին ընտրելու ոչ մի մտադրութիւն էլ չունենալով, այլ կամենալով, որ միշտ Գրիգորը մնայ՝ երանելին լռելեայն հեռացաւ քաղաքից եւ գնաց Իսաւրիայի (յետագայում՝ Կիլիկիայի) Սելեւկիա քաղաքը: Այնտեղ դադար առաւ սրբուհի Թեկղի անունը կրող վանքում եւ լռութեամբ ապրեց բաւական ժամանակ՝ մտածելով. «Կը սպասեմ, մինչեւ որեւէ մէկին Նազիանզի եպիսկոպոս նշանակեն, յա-

տոյ կը վերադառնամ իմ քաղաք»: Սակայն անցաւ հինգ տարի, եւ Նազիանզացիք ոչ ոքի եպիսկոպոս չընտրեցին, մինչեւ իսկ առաջնորդներից ոմանք սկսեցին մեղադրել Գրիգորին իր հօտը լքելու համար, ուստի երանելին դարձեալ ստիպուած եղաւ գալ Նազիանզ (378 կամ 379 թ.) եւ հովուել իր ժողովրդին: Բայց ժամանակ առ ժամանակ դարձեալ պնդում էր. «Ե՛ս չեմ այս քաղաքի եպիսկոպոսը, ձեզ համար մի հովի՛ւ ընտրէք»:

Այդ ժամանակներում երանելին ծանր աշխատանքից ու ճգնութիւններից հիւանդացաւ: Այդպիսի նեղութեան մէջ էր, երբ լուր ստացաւ, որ Կեսարիայի Բարսեղ հայրապետը վախճանուել է, եւ խոր տրտմութեան մէջ ընկղմուեց: Մխիթարական գրութիւն յղեց հանգուցեալի եղբօրը՝ Գրիգոր Նիւսացուն, եւ երբ փոքր-ինչ ապաքինուեց, մի դամբանական գրեց Բարսեղի մասին՝ նկարագրելով սրբութեանը նախանձախնդիր նրա վարքը, եւ վկայեց, որ շատ անգամ գիշերային տեսիլքներում իրեն յայտնուել է Բարսեղ Մեծը եւ յորդորել ու քաջալերել հաստատակամօրէն շարունակել սպասաւորութիւնը եւ չնուազեցնել Եկեղեցու օգտին ուղղուած ջանքերը:

Այդ օրերին Անտիոքում եպիսկոպոսների ժողով գումարուեց Եկեղեցու խաղաղութիւնն ապահովելու միջոց գտնելու նպատակով եւ որոշուեց, որ իւրաքանչիւր թեմում նշանակուեն ուղղափառ եպիսկոպոսներ, որպէսզի արիոսականներն ամբողջովին տէր չդառնան դրութեանը: Ժողովական հայրերը նամակ յղեցին երանելի Գրիգոր Նազիանզացուն՝ խնդրելով, որ առանց որեւէ հակաճառութեան գնայ Թագաւորանիստ Կոստանդնուպոլիս եւ առաջնորդի ուղղափառ ժողովրդին, քանզի արիոսականներն այնտեղ առաւել էին զօրացել, տեսակ-տեսակ հերետիկոսութիւնների առաջացմամբ մեծ վտանգ էր ստեղծուել Եկեղեցու համար, եւ չէին կարողանում գտնել մէկին, ով կարողանար յաղթել այլադաւանների եւ ուղղափառներին հաստատուն պահել ճշմարիտ վարդապետութեան մէջ, բացի երանելի Գրիգորից, ում խմաստութեան ու սրբութեան համբաւը տարածուած էր ամենուրեք: Այնժամ երանելին, եկեղեցական հայրերի պարտադրանքով ու հաւատացեալների օգտի համար, իր կամքին հակառակ զիջեց եւ եկաւ-գնաց Կոստանդնուպոլիս Տիրոջ 379 թ.՝ այն ժամանակ, երբ վախճանուեց արիոսական Վաղէս կայսրը եւ նրան յաջորդեց բարեպաշտ Թէոդոս Մեծը:

Երբ Գրիգորը հասաւ կայսերանիստ Կոստանդնուպոլիս քաղաքը, արիոսականների պատճառով չկարողացաւ հրապարակաւ յայտնել իր ով լինելը, քանզի նրանք իշխում էին այնտեղ Վաղէսի, մինչեւ իսկ Կոստանդի գահակալութեան ժամանակներից ի վեր, իսկ Թէոդոս կայսրը դեռ չէր եկել այնտեղ: Ուստի իջեւանեց իր մի ծանօթի տանը, իսկ ուղղափառները ծածկաբար հաւաքւում էին նրա մօտ՝ լսելու նրա քարոզութիւնը: Այնուհետեւ այդ տունը դարձաւ ուղղափառների ժողովատեղի ու աղօթարան, արդարեւ մի վայր, որտեղից սկսեց վերականգնուել ուղղափառութիւնը, որն արդէն կործանուած էր համարւում, ուստի այդ վայրը կոչուեց Անաստասիա, որ թարգմանւում է «յարութիւն»: Յետոյ այդտեղ կառուցուեց մի գեղեցիկ եկեղեցի, եւ այնտեղ զետեղուեցին սրբուհի Անաստասիայի նշխարները:

Թէեւ սուրբի քարոզութեան վայրն անշուք ու անյայտ էր թւում, բայց այն օրուանից, երբ երանելին ոտք դրեց այնտեղ, քաղաքում սկսեց ծաղկել ուղղափառութիւնը, իսկ այլադաւանների զօրութիւնը գնալով նուազեց: Երանելի Գրիգորն այստեղ դրսեւորեց աստուածաբանութեան իր սքանչելի, աստուածատուր պարգեւը, քանզի հաւաքուած բազմութիւնների համար խորիմաստ ու ազդու խօսքերով օրնիբուն ուսուցանում էր համագոյ եւ միասնական Սուրբ Երրորդութեան հրաշափառ խորհրդի եւ Միածնի անճառելի տնօրէնութեան մասին, Բանի Աստուածութեան մասին՝ ընդդէմ քրիստոսամարտների, եւ Սուրբ Հոգու Աստուածութեան մասին՝ ընդդէմ հոգեմարտների, որով ուղղափառների դասերը հաստատւում էին ճշմարտութեան մէջ, իսկ հակառակորդները՝ ամօթահար լինում: Քանզի մէկ առ մէկ նշանակում էր ժամանակի աղանդաւորների սնոտի բարբաջանքները՝ արիոսականների թէ մակեդոնականների, եւնոմէականների թէ փոտինականների, մարկեղականների թէ սաբէլականների, ապողինարականների թէ նովատիականների կամ սրանց նմանների, ովքեր յաճախ գալիս էին վիճելու նրա հետ, սակայն գլխիկոր յետ դառնում, քանզի սուրբ Գրիգորը, Տիրոջով զօրացած, միայնակ վանում էր հակառակորդների հազարին: Կոստանդնուպոլսի բնակիչներն ապշած էին մնացել երանելի Գրիգորի շուրթերից բխող աստուածային իմաստութեան վրայ եւ նրան կոչում էին Աստուածաբան (յունարէն՝ «Թէոլոգոս»)՝ պատուելով նրան ըստ արժանւոյն վաստակած այդ անուամբ՝ Յովհաննէս Աստուածաբան աւետարանչից յետոյ:

Քանի որ Աստուածաբանի վարդապետութեամբ օրըստօրէ մոլորեալներից շատերը գտնում էին դէպի ճշմարիտ ճանապարհը, հաւատքի թշնամիների՝ արիոսականների եւ նրանց արբանեակների նախան-

ձը բորբոքուեց նրա դէմ, եւ չկարողանալով խօսքով դիմադրել՝ սկսեցին տեսակ-տեսակ չարախօսութիւններով վարկաբեկել նրան: Երբեմն քաղաքացիների առաջ ծաղրում էին նրան իբրեւ մի աննշան գիւղացու, երբեմն զգեստների համար էին անարգում, քանզի քրմազգեաց էր, երբեմն էլ արհամարհում էին անշուք դէմքի համար, որ հիւծուել էր կեանքի զանազան հարուածներից, մանաւանդ՝ տարիքից ու հիւանդութիւնից, եւ անարգում էին իբրեւ տգեղի: Լինում էր նաեւ, որ անպատկառ յանդգնութեամբ ծաղրում էին նրա խօսելաձը, քանի որ տեսնելով նրա սքանչելի հռետորութիւնն ու խօսքի անգերազանցելի պերճութիւնն ու վսեմութիւնը՝ այրւում էին նախանձից եւ նախատինքի նետեր արձակում նրա վրայ՝ նրան համեմատելով կատակերգակ կամ թափառաշրջիկ դերասանների հետ: Իսկ մի անգամ էլ, սաստիկ կատաղութիւնից ատամները կրճտացնելով, բրեր ու քարեր առած, յարձակուեցին սուրբի վրայ, բայց Տէրն անվնաս պահեց նրան: Մի ուրիշ անգամ էլ զրպարտութիւն հնարեցին սուրբի մասին, թէ իբր մեղանչել է կայսերական օրէնքների դէմ, եւ շղթայակապ անել տալով՝ մատնեցին հեթանոս դատաւորի ձեռքը, սակայն երբ երանելին հեզութեամբ ապացուցեց իր անմեղութիւնը, դատաւորը նրան ազատ արձակեց:

Այս ամէնի եւ այլ բիւրապատիկ նեղութիւնների ու հալածանքների մէջ երանելին հոգով միանգամայն խաղաղ էր, եւ որքան աւելանում էր նրա հակառակորդների գազանութիւնը, այնքան նա, անմեղ գառան պէս, սիրով ու քաղցրութեամբ էր խօսում նրանց հետ, որով եւ Թշնամիներից շատ-շատերին իր կողմը գրաւեց: Մանաւանդ որ ունէր նաեւ մի այնպիսի շնորհ, որ կախուած տուեալ պահից եւ ունկնդրի ընկալման կարողութիւնից՝ այնպէս էր կառուցում խօսքը, որ անհնար էր, գէթ մէկ անգամ լսելով, չյարել նրան, եթէ միայն ունկնդիրը կանխաբարամադրուածութիւն չունենար: Այսպէս անուղղելի համարուածներից շատերին դարձի բերեց եւ ուղղափառ հաւատքի հետ միասին այդ քաղաքում ծաղկեցրեց նաեւ բարեպաշտ կեանքը:

Երբ սուրբի համբաւը խիստ տարածուեց, նշանաւոր՝ մարդկանցից շատերը սկսեցին գնալ նրա մօտ եւ լսել նրա լուսաւոր վարդապետութիւնը: Երբ երանելի Գրիգորի առաքինութեան պտուղները խիստ առատացան, Կոստանդնուպոլսի ուղղափառ հաւատացեալները միասնաբար որոշեցին նրան ընտրել իրենց պատրիարք, քանզի այդ ժամանակ պատրիարքական գահը թափուր էր: Այս գաղափարին հաւանութիւն տուեց նաեւ Ալեքսանդրիայի հայրապետ Պետրոս Երկրորդը եւ գրաւոր կերպով հաստատեց նրա եպիսկոպոսութիւնը կայսերանիստ քաղաքում: Բայց սուրբ Գրիգորն ամէն կերպ ջանում էր խոյս տալ այդպիսի պատուից, մինչեւ իսկ արտասուախառն աղաչում ժողովրդի ղեկավարներին, որ ուրիշ մէկին՝ աւելի արժանաւորին ընտրեն, սակայն նրանք չհրաժարուեցին իրենց մտադրութիւնից եւ նրան սկսեցին կոչել իրենց հայրապետը: Եւ քանի որ եկեղեցիները դեռեւս արիոսականների ձեռքում էին, իսկ Թէոդոս ինքնակալ կայսրը, զբաղուած պատերազմներով եւ կայսերական այլ գործերով, հեռու էր գտնւում Կոստանդնուպոլսից, ապա արիոսականներին յաջողուեց մեծ յուզումներ առաջ բերել մայրաքաղաքում եւ բազում չարիքներ պատճառել ուղղափառներին: Սակայն երանելի Գրիգորը սիրով ու քաղցրութեամբ նուաճում էր հակառակորդներին՝ ամէն ինչում չարի փոխարէն բարին հատուցելով:

Երբ Թէոդոսը հասաւ Թեսաղոնիկէ, տեղեկացաւ Եկեղեցու դէմ կատարուող քայլերի եւ արիոսականների անպատկառութեան մասին ու հրովարտակ հրապարակեց, որ Կոստանդնուպոլսում չլինի մէկը, որ յանդգնի Նիկիական դաւանանքից տարբեր դաւանութիւն ընդունել, եւ բոլոր այլադաւանները թող կա՛մ վերադառնան Եկեղեցու գիրկը, կա՛մ հեռանան մայրաքաղաքից: Այս հրամանով թէեւ ուղղափառները զօրացան, սակայն այլադաւանները դեռեւս իսպառ չընկճուեցին, քանզի նրանցից ո՛չ բոլորը լքեցին քաղաքը, շատերն էլ բացայայտօրէն ընդդիմացան արքունի հրամանին՝ մինչեւ իսկ հրապարակաւ արիւն հեղելու աստիճան: Այս ամէնը տեսնելով՝ սուրբ Գրիգորը դարձեալ իր հեզահամբոյր վերաբերմունքն էր շարունակում գազանացած Թշնամիների հանդէպ եւ աշխատում քաղցրութեամբ գրաւել նրանց սիրտը: Նա շարունակ սիրալիր յորդորներով էր խօսում նրանց հետ եւ այնպիսի մարդասիրական վերաբերմունք դրսեւորում նրանց նկատմամբ, որ նրանցից շատերը, սուրբի սիրուց յաղթուած, յօժարութեամբ վերադառնում էին Եկեղեցու գիրկը եւ հնազանդւում նրա սկզբունքներին: Սակայն Աստուծոյ մարդու այս գովելի ընթացքը, որով դիւրութեամբ որսում էր ամէնքին Աւետարանի ուռկանով, անպատեհ թուաց ուղղափառներից շատերին, ովքեր երկար ժամանակ ճնշուելով արիոսականների կողմից եւ այժմ Թէոդոս Մեծի գահակալութեամբ համարձակութիւն ստանալով՝ ուզում էին փոխարէնը հատուցել նրանց, ուստի շշուկներ էին տարածում Աստուածաբանի դէմ:

Ժողովրդի այս տրտունջը մեծ յուզումների պատճառ դարձաւ, քանզի ոմանք, նախանձելով եւ իշխանութիւն տենչալով, ջանում էին

որեւէ պիտակ կպցնել սուրբին, որպէսզի կարողանան գահընկէց անել նրան եւ զբաղեցնել նրա տեղը: Նրանց մէջ աչքի էր ընկնում ոմն Մաքսիմոս Ալեքսանդրացի՝ խորամանկ եւ խռովութիւններ նիւթելու մէջ ճարտար մի անձնաւորութիւն, ով նախկինում աշակերտել էր Ցինիկ կամ Կինիկ (թարգմանաբար՝ «շնական») փիլիսոփայական դպրոցին եւ նաեւ զոհեր մատուցել կուռքերին, իր անզգամութիւնների համար աքսորուել եւ ապա փախել աքսորից. նա ինքն իրեն ներկայացնում էր իբրեւ Քրիստոսի համար հալածուած եւ կենդանի նահատակ: Ուրեմն այս անձը, խորամանկ կեղծաւորութեամբ շնորհ գտած լինելով երանելի Գրիգորի առջեւ եւ բազմաթիւ լաւութիւններ ընդունած լինելով նրանից, մինչեւ անգամ դառնալով նրա սիրելի պաշտօնեաներից ու աշակերտներից մէկի պէս, ապա նաեւ՝ մտերիմն ու սեղանակիցը, երբ լսեց ժողովրդի շշուկները սուրբի մասին, սկսեց ամբոխին հեռացնել Գրիգորից եւ իր կողմը գրաւել, քանզի իրեն ներկայացնում էր իբրեւ այլադաւանների երդուեալ հակառակորդ եւ «ոչ թէ,— ասում էր,— Գրիգորի պէս, ով համախոհ ու համակամ է ճշմարտութեան թշնամիներին»: Այսպիսի միջոցներով նա հաճոյացաւ շատերին՝ այնքան առաջ գնալով իր չարարուեստ հնարքներով, որ իր կողմը գրաւեց մինչեւ իսկ Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքին, ով, զղջալով, որ հաստատել է սուրբ Գրիգորի պատրիարքութիւնը, Եգիպտոսից եպիսկոպոսներ ուղարկեց, որպէսզի Կոստանդնուպոլսի աթոռակալ դարձնեն Մաքսիմոս Ալեքսանդրացուն: Վերջիններս, մայրաքաղաք գալով այլ պատրուակով, մեծ ընդունելութիւն ու մարդասիրութիւն գտան երանելի Գրիգորի կողմից: Երբ մի քանի օր շարունակ մտածում էին, թէ ինչպէս գործադրեն իրենց մտադրութիւնը, Գրիգորը հիւանդացաւ, եւ նրանք, դա համարելով յարմար առիթ, գիշերով հաւաքուեցին մի ռամկի կամ փողհարի տանը եւ Մաքսիմոսին եպիսկոպոս ձեռնադրեցին՝ կոչելով Կոստանդնուպոլսի պատրիարք, եւ քանի որ կայսրը քաղաքում չէր, շողոքորթութեամբ ու կաշառքով քաղաքի մեծամեծերին եւս գրաւեցին իրենց կողմը: Բայց քանի որ ամբողջ ժողովուրդը չէր, որ համամիտ էր նրանց, ապա, երբ այս ամէնը յայտնի դարձաւ, բազմութեան մէջ մեծ երկպառակութիւն առաջ եկաւ, եւ ամբողջ քաղաքն ալեկոծուեց:

Իսկ երանելի Աստուածաբանը, հիւանդութեան պատճառով միաժամանակ հեռացած լինելով քաղաքից, ոչ թէ իր մասին էր հոգ տանում, այլ Աստուծոյ ժողովրդի, եւ քանի որ պարզորոշ կերպով տեսնում էր, թէ յափշտակող գայլի պատճառով ինչպէս է ցրւում իր հոգեւոր հօտը, ջանաց վերացնել նրանց սպառնացող այդ վտանգը, ուստիեւ գրաւոր ու բանաւոր կերպով սկսեց բացատրել բոլորին, թէ ինչպիսի հոգեւոր վնասներ են առաջ գալիս Մաքսիմոսի բռնակալութիւնից: Սուրբի խօսքերն այնքան ազդեցիկ էին, որ սակաւ օրեր անց Մաքսիմոսի բոլոր համախոհները լքեցին նրան, եւ նա, մնալով մենակ ու անօգնական, գնաց Թեսաղոնիկէ՝ Թէոդոս կայսեր մօտ, սակայն նրա կողմից եւս ամօթահար լինելով մերժուեց եւ իրեն գցեց Ալեքսանդրիա, ուր սկսեց ստիպել Պետրոս հայրապետին, թէ՝ կամ կը հաստատես ինձ Կոստանդնուպոլսի աթոռին, կամ դու էլ կը զրկուես քո աթոռից: Բայց այդ ժամանակ վրայ հասաւ քաղաքապետը եւ վռնդեց նրան այդ քաղաքից:

Քանի որ մայրաքաղաքում յուզումները դեռեւս չէին դադարել, երանելի Գրիգորը որոշեց թողնել պատրիարքական աթոռն ու վերադառնալ իր տուն, ուստիեւ մի օր ելաւ եկեղեցու բեմն ու ասաց ժողովրդին.

—Մնացէ՛ք խաղաղութեամբ, քանզի ես այսուհետեւ խպատ հրաժարուում եմ հովուական գործից եւ մեկուսանում իմ առանձնութեան մէջ, որպէսզի իմ պատճառով պառակտում եւ բաժանումներ չընկնեն Քրիստոսի հօտի մէջ: Միայն աղաչելով ուզում եմ յիշեցնել ձեզ, որ անարատ պահէք ուղղափառ հաւատքը եւ ապարդիւն չդարձնէք ձեզ համար արած իմ աշխատանքը:

Ամբողջ բազմութիւնը, սա լսելով, սկսեց արտասուել եւ չհամակերպուելով բարի հովուի մեկնելու մտքին՝ միաբերան գոչեց.

—Դո՛ւ ես մեր հայրը, հովիւն ու ուսուցիչը, քեզ՝ մեր առաջնորդին, չե՛նք թողնի գնալ:

Սակայն տեսնելով, որ Աստուածաբանը չի կամենում իրենց լսել՝ սկսեցին բարձրաձայն հեկեկալով թախանձել ու բողոքել.

—Եթէ հեռանաս մեզանից, ո՛վ սուրբ հայր, կը հեռանայ նաեւ ճշմարիտ հաւատքը, եւ Սուրբ Երրորդութիւնն իսկ կ՚օտարանայ մեզանից: Ինչպէ՞ս ես անտեսում Տիրոջ ժողովրդին, որ Քրիստոսի արեան գինն է, կամ ի՞նչ պատասխան պիտի տաս Աստծուն:

Այնժամ սուրբը, զիջելով նրանց արտասուախառն թախանձանքին, խոստացաւ որոշ ժամանակ մնալ, մինչեւ միւս եպիսկոպոսները գան:

Այդ օրերին՝ 380 թ., Կոստանդնուպոլիս եկաւ աստուածասէր Թէոդոս կայսրը եւ, տեսնելով, որ Գրիգոր Աստուածաբանի ջանքերով քաղաքում ծաղկել է ուղղափառութիւնը, շատ ուրախացաւ, ապա սուրբի յորդորով ամբողջ մայրաքաղաքը մաքրեց աղտեղաւորներից եւ, արի-

ոական եպիսկոպոսներին վոնդելով, քառասուն տարուայ ընդմիջումից յետոյ, եկեղեցիները դարձեալ յանձնեց ուղղափառներին: Երանելի Գրիգորին՝ որպէս օրինական հայրապետի, հանդիսաւորապէս եւ պատուով տարաւ քաղաքի մայր եկեղեցին: Երբ կայսրն ու հայրապետը միասին եկեղեցի էին գնում, յանկարծ, օրը ցերեկով, երկինքը պատուեց սեւ, թանձր ամպերով, եւ օրը մթնեց: Հերձուածողները, սա տեսնելով, ցնծացին.

—Ահա՛,— ասացին,— սա բացայայտ նշան է, որ Աստուած չէր կամենում, որ մենք արտաքսուէինք մայրաքաղաքի եկեղեցուց, եւ խաւարը հէնց ա՛յդ պատճառով պատեց երկիրը:

Ուղղափառ ժողովրդի միջից շատ պարզամիտ մարդիկ տխրեցին՝ այդ հանդիսաւոր օրը մթնելը վատ նշան համարելով: Իսկ սուրբ Գրիգորը քաջալերում ու յորդորում էր նրանց ուշադրութիւն չդարձնել աղանդաւորների խօսքերին: Երբ նա կայսեր հետ մտաւ եկեղեցի, ամպերը ցրուեցին, եւ պայծառ լոյս ծագեց, որի համար ուղղափառներն ուրախացան, իսկ հակառակորդներն ամօթահար եղան: Կայսրը, Գրիգորին պատուելով, ասաց.

—Ահաւասիկ, սուրբ հայր, Տէրն Ինքն է քեզ յանձնում Եկեղեցին, որ քո քրտինքով ոռոգելով ծաղկեցրիր: Այսուհետեւ քոնն են այս հօտը եւ հայրապետական գահը:

Որքան էլ երանելի Գրիգորն ընդդիմացաւ, որպէսզի յանձն չառնի այդ լուծը, կայսրն այնուհանդերձ շարունակում էր ստիպել նրան դա անել, քանզի աստուածասէր Թէոդոսը մեծ յարգանք էր տածում Աստուածաբանի հանդէպ եւ ինչպէս հարազատ հոգեւոր հօր՝ հնազանդւում նրան ամէն ինչում: Ուստի յաճախ նրան արքունիք էր հրաւիրում, սակայն սուրբը խուսափում էր եւ տեղի չէր տալիս՝ ասելով. «Իմ գործը Քրիստոսի հօտին ծառայելն է, այլ ոչ թէ կայսրերի սեղաններից վայելելը»:

Երբ արիոսականներն ու ճշմարտութեան միւս հակառակորդները տեսան, որ իրենց աղանդները ջախջախողն այդքան պատուի արժանացաւ կայսեր կողմից, մեծ կշտամբանք տուեցին մի գազանաբարոյ զինուորականի եւ պատուիրեցին դաւադրութեամբ սպանել սուրբ հայրապետին: Զինուորականը, իր հետ առած մի քանի հոգու, յանկարծակի ներխուժեց այն սենեակը, ուր, հիւանդութիւնից թուլացած, սուրբը պառկած էր մահճին: Աւազակներին տեսնելով՝ սուրբ հայրապետը ոտքն իջեցրեց մահճից. այդժամ Տիրոջից մեծ ահ ընկաւ այն մարդու վրայ,

նրա ձեռքերը կապ ընկան ու չկարողացաւ ոչինչ անել: Ուղեկիցները սենեակից դուրս փախան, իսկ ինքը՝ զինուորականը, արտասուքն աչքերին ընկաւ երանելի Գրիգորի ոտքերն ու սկսեց թողութիւն խնդրել այն չարիքի համար, որ կամենում էր գործել նրա դէմ: Սուրբը քաղցրութեամբ խրատեց նրան եւ ազատ արձակեց՝ ասելով.

—Իմ Աստուածը, որ պահեց ինձ թշնամու որոգայթից, թող պահի նաեւ քեզ:

Սուրբն ինքը ոչ ոքի չասաց այս մասին եւ այդօրինակ անոխակալութեամբ գրաւեց հակառակորդներից շատերի սիրտը: Ամբողջ քաղաքում խօսւում էր երանելու հեզութեան մասին:

Աստուածաբանը յաճախ էր յորդորում բարեպաշտ Թէոդոսին հոգ տանել Եկեղեցու խաղաղութեան մասին՝ մաքրելով իր կայսրութիւնը տեսակ-տեսակ հերձուածներից, որոնց չար որոմները տարածուած էին բազմաթիւ վայրերում, մանաւանդ՝ հոգեմարտ մակեդոնականներից: Նաեւ աղաչում էր գտնել արժանաւոր մէկին եւ կարգել Կոստանդնուպոլսի գահակալ, իսկ իրեն ազատ արձակել: Հոգեմարտների հերձուածի պատճառով 381 թ. Կոստանդնուպոլսում գումարուեց երկրորդ տիեզերական սուրբ ժողովը՝ հարիւր յիսուն հայրապետերի մասնակցութեամբ, որոնցից երեւելի էր Անտիոքի սուրբ Մելիտոս հայրապետը: Ժողովը հաստատեց հաւատքի ճշմարիտ դաւանութիւնն ընդդէմ ժամանակի հերձուածների: Այնուհետեւ սուրբ Մելիտոսն ու միւս գլխաւոր եպիսկոպոսները Գրիգոր Աստուածաբանին ստիպելով հաստատեցին արքայանիստ քաղաքի պատրիարք, եւ նա, թէեւ նախ ընդդիմացաւ, սակայն յետոյ յանձն առաւ հնազանդուել ժողովական հայրերին՝ նայելով ոչ թէ միայն իր օգտին՝ իր փափագած հանդարտութեանը, այլեւ Քրիստոսի հօտի, որը կարիք ունէր նախանձախնդիր հովուի:

Ժողովը դեռ չաւարտուած, սուրբ Մելիտոսը վախճանուեց, ում, շատերի թւում, ներքողական ճառով պատուեց նաեւ Գրիգոր Աստուածաբանը: Իսկ երբ Անտիոքի աթոռին սուրբ Մելիտոսին յաջորդելու խնդրով հակառակութիւն եղաւ, Աստուածաբանը խաղաղութեան միջնորդ դարձաւ եւ խորհուրդ տուեց անել ինչ որ հարկն էր: Սակայն շատերը չընդունեցին նրա խորհուրդը, ուստի երկպառակութիւնը մեծացաւ, այն աստիճան, որ ոմանք նոյնիսկ թշնամացան սուրբի դէմ: Դրան աւելացաւ մի դժուարութիւն եւս. Եգիպտոսի եպիսկոպոսներից ոմանք, ուշացած ներկայանալով ժողովին, սկսեցին մեղադրել հայրերին, թէ ինչո՛ւ առանց իրենց կամքի Գրիգորին պատրիարք կարգեցին

եւ չսպասեցին իրենց գալստեանը: Այս առիթն օգտագործելով՝ Գրիգորի հակառակորդները սկսեցին նրա դէմ չարախօսել, թէ առանց իրաւունքի եւ ոչ ըստ կանոնների, փառքի եւ պատուի համար է ստացել Կոստանդնուպոլսի աթոռը՝ թողնելով նախ Սասիմի նուաստ առաջնորդութիւնը, ապա Նազիանզինը՝ իբրեւ եպիսկոպոսարանների հետամուտ մի թափառական, եւ հեգնելով «եռեպիսկոպոս» էին անուանում նրան, որ երեք վայրերում եպիսկոպոս էր ընտրուել:

Երբ խռովութիւնն օրըստօրէ մեծացաւ, երանելի Գրիգորը ժողովում հրաշալի ատենախօսութեամբ մերկացրեց չարախօսների զրպարտութիւնները եւ հասկացրեց իր մեծ վաստակը Քրիստոսի հօտի հոգեւոր խնամքի գործում: Նա հայրերից թոյլտուութիւն խնդրեց հրաժարուելու աթոռից՝ ասելով.

—Եթէ իմ պատճառով է այս խռովութիւնը, ես Յովնանից լաւը չեմ, վերցրէք ու ծո՛վը գցէք ինձ, եւ մրրիկը կը դադարի ձեր մէջ: Իսկ ես մեծապէս կ'ուրախանամ ու կ'ազատուեմ տաղտկալի հոգսերից եւ կը վերադառնամ իմ ցանկալի հանդարտութեանը: Ես մեծապէս ուրախ եմ ի Տէր, որ ովքեր ինձ հեռացնում են աթոռից, Աստծուց հեռացնել չեն կարող, այլ առաւել են մօտեցնում Նրան, Ում փափագում եմ: Տուէ՛ք ինձ, աղաչում եմ, առանձնութեան անզբաղ կեանքը, որպէսզի միայն իմ Տէր Աստուծոյ հետ լինեմ: Իսկ դուք ձեզ համար այնպիսի մէկին ընտրէք, որ Աստուծոյ Հոգով առաջնորդուի եւ Եկեղեցին խաղաղութեան մէջ պահի, քանզի ինձ համար ծանր է տանել այսպիսի դժուարակիր աշխատութիւնը՝ հեղութիւն ցուցաբերել ու դրա համար յանցաւոր համարուել կամ բարերարութեան համար չարագործ կարծուել: Առաւել եւս չեմ կարող կռուել չար նախանձի դէմ՝ սիրելիների եւ թշնամիների դէմ պայքարելով նոյն կերպ:

Այս ամէնը եւ աւելին խօսեց ժողովական հայրերի, ժողովրդի ու կայսեր հետ եւ հազիւ համոզելով նրանց՝ իր հայրենի գաւառ գնալու արտօնութիւն ստացաւ: Բայց այս ամէնի պատճառով երանելին սրտում տխուր էր, քանզի չգիտէր, թէ ո՛ւմ ձեռքը կ'ընկնի այն հօտը, որն ինքը հովուեց այդքա՛ն ջանադրութեամբ, եւ կամ ինչպէ՛ս կը պահեն ուղղափառ հաւատքն իր հոգեւոր զաւակները, որոնց մեծ երկունքով ծնեց Քրիստոսով: Այսպէս ելաւ մեկնեց Կոստանդնուպոլիս քաղաքից՝ ուրախ լինելով աղմուկներից ազատուելու եւ տխուր՝ որդիներից բաժանուելու համար: Բայց առաւել տրտմեցին սուրբ ժողովի գլխաւոր հայրերը, եւ շատ արտասուք հեղեցին նրա հոգեւոր զաւակները: Ճշմարտասէրների սրտի թախիծն այնքան մեծ էր, որ երեւելի եպիսկոպոսներից ոմանք, իրենց գլխին խփելով եւ կուրծք ծեծելով, հեռացան քաղաքից, որպէսզի չտեսնեն որեւէ մէկին նստած Աստուծոյ մարդու՝ Գրիգորի տեղում: Մնացած եպիսկոպոսներն էլ վարանեցին, թէ ո՛ւմ դնեն աթոռին Գրիգորի փոխարէն եւ ծագած երկպառակութեան պատճառով ելք չէին գտնում այդ վիճակից, մինչեւ որ Թէոդոս ինքնակալի հաւանութեամբ ընտրուեց Նեքտարիոս Տարսոնացին՝ մի բարի մարդ պալատականների դասից:

Իսկ երանելի Աստուածաբանը գնաց առանձնացաւ իր հօր կալուածքում՝ Նազիանզի մօտ գտնուող Արիազոն աւանի Կարպաղ կոչուող վայրում տրուելով միայնակեցական ճգնութեան: Նազիանզացիները ստիպում էին նրան դառնալ իրենց առաջնորդը, բայց նա յանձն չէր առնում, որպէսզի չզրկուէր հանդարտութիւնից, որը վերջապէս գտել էր, ինչպէս վաղուց ի վեր փափագում էր: Նազիանզի եպիսկոպոսական աթոռին իր ծանօթներից մի բարեկրօն մարդու՝ Եւլաղիոսին ձեռնադրելուց յետոյ նա իր հօր տան ամբողջ ունեցուածքը յօժարակամօրէն բաշխեց աղքատներին, առանձնացաւ Արիազոնում եւ հանապազ գոհանում էր Տիրոջից իր վիճակի համար: Այդ մասին նոյնիսկ գրեց Կոստանդնուպոլսի Սոփրոնիոս իշխանին. «Ոմանք աթոռից զրկելն ինձ համար զրկանք համարեցին, բայց ես երանի եմ տալիս այսպիսի զրկանքներին, որոնք ինձ հանդարտութիւն եւ անզբաղ իմաստասիրելու հնարաւորութիւն են տալիս»: Այստեղ երանելին գրեց բազմաթիւ օգտաշահ երկեր ու նամակներ՝ Եկեղեցու օգուտի, շինութեան եւ ժամանակի աղանդաւորներին դարձի բերելու համար: Թէպէտ մեկուսացած էր մարդկանցից, բայց անհոգ չէր Աստուծոյ շնորհների հանդէպ, որոնք տրուել էին իրեն Եկեղեցու պայծառութեան համար: Այնտեղ անդուռ բերանները փակելու համար չափածոյաբար շարադրեց նաեւ իր վարքը, քանզի շատերն էին բամբասում, թէ յանցանքի կամ մոլորութեան պատճառով մերժուեց աթոռից, իսկ ոմանք էլ՝ թէ ակամայ հրաժարուեց իշխանութիւնից: Ուրիշները եւս ջանում էին թերութիւններ գտնել նրա խօսքերի եւ գործերի մէջ: Դրա համար էլ հարկ համարեց ամենայն ստուգութեամբ գրել բոլոր դէպքերը, որոնք կատարուեցին իր հետ, եւ ուղարկեց Կոստանդնուպոլսի բնակիչներին, որով բոլոր չարախօսներն ամօթահար եղան:

Սակայն չարը տակաւին շարունակում էր առանձնութեան մէջ սուրբի դէմ փորձութիւններ յարուցել: Գրիգորի մերձաւորները սկ-

սեցին բամբասել, թէ այդեստաններում եւ զուարճութիւնների մէջ է անցկացնում իր ծերութեան օրերը եւ ձեւացնում է, թէ միայնակեցական ճգնաւորութեամբ է ապրում: Նաեւ բազմաթիւ ուրիշ անպատեհ խօսքեր էին ասում: Սակայն չգիտէին, որ երանելին ծածուկ ճգնում եւ ողջ օրը տանջում էր իր ծերացած մարմինը՝ խիստ պահեցողութեամբ, գետնախշտութեամբ, խարազնազգեցութեամբ՝ առաւել, քան անապատում բնակուող խստակրօն ճգնաւորները: Հաշուի չառնելով իր մշտական հիւանդութիւնը՝ անխնայ ճնշում էր իր անձը եւ տանջուելու առիթ կարծես փնտրում: Օրինակ՝ մի անգամ նրան թուաց, թէ անհամբերութիւնից, ծերունական բարքից դրդուած՝ խստութեամբ խօսեց ինչ-որ մէկի հետ, ուստի քառասուն օր կատարեալ լռութեամբ սանձահարեց իր լեզուն:

Սուրբը երկու անգամ Թէոդոս կայսրից եւ եպիսկոպոսներից հրաւէր ստացաւ Կոստանդնուպոլիս գնալու՝ ծագած զանազան հարցերի համար նոր ժողով գումարելու համար, բայց յանձն չառաւ, քանզի չէր սիրում այն վիճաբանութիւնները, որ լինում էին եպիսկոպոսների միջեւ: Երբ շատ ստիպեցին, երանելին պատասխանեց.

—Եթէ նոյնիսկ կամենայի գալ, մարմնիս խիստ տկարութիւնը եւ մահացու հիւանդութիւնն ինձ թոյլ չէին տայ, եւ ես ուրախ եմ, որ չեմ կարող գալ:

Բայց այս ամէնով հանդերձ՝ մինչեւ իր կեանքի վերջին օրերը չէր դադարում իմաստալից գրութիւններով եպիսկոպոսներին թիկունք կանգնել՝ ուսուցանելով ճշմարիտը եւ զօրաւոր աստուածաբանութեամբ յաղթելով հերձուածողներին, քանզի ծանր հիւանդութեան մէջ անգամ չէր դադարում օգտակար գրուածքներ շարադրելուց՝ երբեմն անձամբ գրելով, երբեմն էլ թելադրելով գրագիրներին:

Երբ մարմնի ցաւերը սաստկացան, եւ հասկացաւ, որ հասել է իր երկրաւոր կեանքի վախճանը, սկսեց խանդակաթ խօսքերով մտերմաբար խօսել իր Փրկչի՝ Քրիստոսի հետ եւ այս զրոյցով էլ քաղցրութեամբ հոգին աւանդեց Աստծուն՝ Տիրոջ 389 կամ 390 թ., ըստ այլոց՝ 391 թ. (ոմանք նրա տարիքը վաթսուներկու են համարում, ոմանք էլ՝ ոչ պակաս, քան իննսուն)՝ Եկեղեցուն բացի առաքելական վաստակից թանկագին ժառանգութիւն թողնելով իր աստուածաբան վարդապետութեան աքանչելի մատեանները, որոնք անվրէպ ուղղորդ եւ առաջնորդ են ճշմարիտ աստուածաբանութեան բոլոր աշակերտների համար:

Սուրբի պատուական մարմինը թաղուեց իր հայրենի քաղաքում՝ Նազիանզում՝ իր հօր գերեզմանի մօտ, մինչեւ որ շատ տարիներ անց՝ Տիրոջ 945 թ., ասում են, փոխադրուեց Կոստանդնուպոլիս կայսերանիստ քաղաք՝ հետեւեալ հանգամանքներում: Բարեպաշտ կայսր Կոստանդին Պերփեռուժէն՝ Վասիլ Արշակունու թոռը, յաճախակի մտածելով այն մեծագոյն երախտիքների մասին, որոնք Գրիգոր Աստուածաբանն իր կենդանութեան օրօք ցուցաբերել էր Կոստանդնուպոլսի բնակիչների հանդէպ, մի օր այսպէս ասաց իր աւագանու անդամներին.

—Ինչպէ՞ս Աստուծոյ այս մարդուն՝ մեր բազմերախտ հօրը եւ Եկեղեցու պայծառ ջահին, մեր նախնիները թողեցին անյայտութեան մէջ, ինչպէս թաքստոցում թողնելով Նազիանզի այն խուլ վայրերում:

Եւ խորհրդակցելով՝ մարդիկ առաքեց Նազիանզի ղեկավարների մօտ՝ փնտրելու եւ գտնելու սուրբի նշխարները եւ արժանավայել պատուով բերելու կայսերական քաղաք: Թագաւորը նաեւ խոնարհ թախանձանքով աղերսական գիր յղեց Աստուածաբանին՝ ասես կենդանի սուրբի՝ աղաչելով նրան կատարել իր հոգեւոր փափագը եւ գալ հանգչել այլ սուրբերի հետ, որոնք ամփոփուած էին Կոստանդնուպոլսի եկեղեցում: Նշանակուած մարդիկ, վերցնելով գրութիւնը, գնացին Նազիանզ եւ գտան սուրբի գերեզմանի տեղը, բայց քանի որ երկու միանման շիրիմներ կային կողք կողքի, երկմտանքի մէջ ընկան, թէ դրանցից ո՞րն է Աստուածաբանինը, որովհետեւ տեղի բնակիչները եւս աւանդութեամբ միայն այնքանը գիտէին, որ այդ շիրիմներում թաղուած են Գրիգոր Աստուածաբանը եւ նրա հայր Գրիգորիոսը: Նրա ազգականներն էլ ստոյգ չգիտէին, թէ որն է Գրիգորի շիրիմը:

Այնժամ արքունիքից եկած մարդիկ սկսեցին արտասուախառն պաղատանքով աղաղակել առ Աստուած, որպէսզի ունայն չլինեն իրենց ջանքերը եւ իզուր չանցնի կայսեր աստուածահաճոյ մտադրութիւնը: Եւ Տէրը կատարեց նրանց խնդրանքը, քանզի երբ սուրբի գերեզմանը բացեցին, անուշահոտութիւն բուրեց, եւ նրա բոլոր ոսկորներն իրենց տեղում յարմարապէս դասաւորուած գտան, մինչեւ որ բազմաթիւ նշաններից բոլորը հասկացան, որ դա է Գրիգոր Աստուածաբանի մարմինը: Այնուհետեւ իրենց հետ տանելու համար խոյոյն պատուով ամփոփեցին նրան նոր տապանի (արկղի) մէջ, քանզի մեծ խնդութեան պատճառով շտապում էին նոյն օրը վերադառնալ: Եւ հակառակութիւն առաջացաւ տեղի բնակիչների հետ, որոնց համար մեծ ցաւ էր այդպիսի պատուական գանձից զրկուելը, բայց արքունի

պատուիրակները տեսակ-տեսակ փաստերով համոզեցին նրանց եւ, վերցնելով սուրբ գանձը, ճանապարհ ընկան: Այս լուրը տարածուեց շուրջբոլորը: Եւ ահա ճանապարհին խմբերով մօտենում էին մեծերն ու փոքրերը, հոգեւորականներն ու աշխարհականները եւ հոծ բազմութեամբ, խնկերով ու մոմերով, օրհնութեան երգերով ուղեկցում սուրբին՝ կարծես թափօր կազմելով Նազիանզից մինչեւ Կոստանդնուպոլիս: Երբ սուրբի տապանը մօտեցաւ կայսերական քաղաքին, մեծաշուք փառքով ընդառաջ ելան թագաւորը եւ նրա բոլոր մեծամեծերը՝ քահանաների եւ ժողովրդի բազմութեամբ: Անպատմելի ցնծութեամբ եւ օրհնութեամբ սուրբի նշխարները քաղաք բերեցին ամառային այդ օրերին եւ, վերցնելով տապանը, նախ տարան կայսերական եկեղեցին եւ ապա ծիրանիներով ու շքեղ զարդերով զարդարուած դագաղ պատրաստելով՝ եպիսկոպոսներն իրենց ուսերի վրայ բարձրացրին եւ սինկղիտոսների՝ բարձրաստիճան պաշտօնեաների դասով շրջապատուած՝ կայսեր հետ բերեցին ու թաղեցին Սուրբ Առաքեալների տաճարում սուրբ Յովհան Ոսկեբերանի մօտ՝ խորանի մի կողմում: Սա այն եկեղեցին էր, որտեղ Աստուածաբանը Կոստանդնուպոլսի աթոռից մեկնելիս ասել էր. «Մնաք խաղաղութեամբ, առաքեալնե՛ր, եւ դո՛ւ, բնակութեան գեղեցի՛կ օթեւան»: Ահա այդ նոյն գեղեցիկ տաճարը դարձաւ սուրբի հանգստարանը:

Մի քանի դար անց (թէպէտ պարզ չէ, թէ երբ եւ ինչպէս) ոմանք այնտեղից վերցրին Աստուածաբանի նշխարները եւ, տանելով Հռոմ, ամփոփեցին «Սուրբ Մարիամ» կոչուող մի կուսանոցի եկեղեցում, որը գտնւում էր Մարտեան (կամ Արեսեան) դաշտում: Դրանից եւս դարեր անց՝ Տիրոջ 1580 թ., Վատիկանի Սուրբ Պետրոս տաճարում կառուցուեց մի մեծ մատուռ, ուր եւ ամփոփուեցին սուրբ Գրիգոր Աստուածաբանի պատուական նշխարները՝ այլ սուրբերի նշխարների հետ միասին: Նրա մասունքները գտնւում են նաեւ այլ վայրերում եւ ամենուրեք մեծ յարգանքով պատւում հաւատացեալների կողմից՝ ի փառս Նրա, Ով փառաւորուած է Իր սուրբերի խորհուրդներում:

ԵՐԱՆԵԼԻ ՀԱՅՐ ՍԻՍՈՅԻՒ ՎԱՐՔԸ

Երիտասարդ տարիքից սիրելով Աստծուն՝ երանելի Սիսոյին իր վրայ վերցրեց Քրիստոսի խաչը եւ ջերմեռանդօրէն հետեւեց Նրան: Եգիպտական անապատներում ճգնելով՝ նա ապրեց հրեշտակներին վայել կեանքով՝ խոնարհութեամբ եւ աղօթքներով յաղթելով անտեսանելի թշնամիների գնդերին: Նրա սխրանքների վայրն անապատի լեռն էր, ուր ճգնել էր երանելի Անտոն Մեծը, եւ երանելի Սիսոյին իր վարքով արտացոլեց Անտոնի կենցաղավարութիւնը: Իր խոնարհամտութեան համար նա այնպիսի շնորհ ստացաւ Աստծուց, որ անգամ մեռելներին էր յարութիւն տալիս, ինչպէս յայտնում է «Հարանց վարք»-ը, որտեղ սուրբ Սիսոյիի մասին գրուած է հետեւեալը:

Մի աշխարհական, իր հետ վերցնելով իր որդուն, գնաց աբբայ Սիսոյիի մօտ՝ Անտոնեան լեռը՝ օրհնութիւն ստանալու: Այնպէս պատահեց, որ ճանապարհին հիւանդանալով՝ երեխան մեռաւ: Սակայն հայրն իրեն չկորցրեց եւ մեռեալին հաւատով տարաւ ծերի մօտ: Մտնելով Սիսոյիի խուցը՝ նա ընկաւ նրա ոտքերը՝ դրանց առաջ դնելով իր մեռած որդուն, կարծես վերջինս ծերից օրհնութիւն ու աղօթք էր խնդրում: Երբ ծերն աղօթքն աւարտեց եւ օրհնեց, աշխարհականը դուրս ելաւ՝ մեռած երեխային թողնելով ծերի ոտքերի մօտ: Ծերը, չիմանալով, որ երեխան մեռած է, եւ կարծելով, թէ նա օրհնութեան է սպասում, ասաց.

—Վե՛ր կաց, մանուկ, գնա՛ այստեղից:

Մեռեալն անմիջապէս յարութիւն առաւ եւ գնաց իր հօր յետեւից:

Այդժամ այն մարդը, ողջ տեսնելով իր որդուն, նրա հետ միասին վերադարձաւ ծերի մօտ եւ խոնարհուելով՝ շնորհակալութիւն յայտնեց նրան: Ծերը, հասկանալով, որ յարութիւն է տուել մեռեալին, շատ տխրեց, քանզի չէր կամենում հրաշագործի անուն ունենալ, եւ արգելեց այն մարդուն մինչեւ իր կեանքի վերջը պատմել պատահածի մասին:

Աստուծոյ Հոգով լցուած աբբայ Սիսոյիին եղբայրները մի անգամ հարցրին.

—Եթէ եղբայրն ընկնում է մեղքի մէջ, ապաշխարութեան համար բաւակա՞ն է արդեօք մէկ տարին:

— Դաժան է ասուած,— պատասխանեց ծերը:

Այդժամ եղբայրներն ասացին.

— Ուրեմն մեղաւորը պիտի ապաշխարի վեց ամի՞ս:

— Շատ է, — պատասխանեց ծերը:

— Ուրեմն նրա ապաշխարութեան համար բաւական է քառասուն օ՞րը,— կրկին հարցրին եղբայրները:

— Շատ է, — կրկին պատասխանեց ծերը:

Ապա ասաց.

— Ես հաւատում եմ մարդասէր Աստուծոյ գթասրտութեանը: Եթէ մարդը զղջայ իր ամբողջ հոգով, ապա Աստուած կ՚ընդունի նաեւ երեքօրեայ ապաշխարութիւնը:

Մի եղբայր ծերին հարցրեց.

—Ի՞նչ անեմ, հա՛յր, մեղք եմ գործել:

—Ուղղուի՛ր, որդեա՛կ,— պատասխանեց ծերը,— եւ կը փրկուես:

—Ուղղուեցի, սակայն դարձեալ վայր ընկայ,— պատասխանեց եղբայրը:

—Կրկի՛ն ոտքի ելիր,— ասաց ծերը:

—Հա՛յր, մինչեւ ե՞րբ պիտի շարունակուի իմ ընկնելն ու ոտքի կանգնելը,— հարցրեց եղբայրը:

—Մինչեւ քո վախճանը կը գայ եւ կը գտնի քեզ կա՛մ բարու, կա՛մ չարի մէջ. ուստիեւ պէտք է միշտ·ուղղուել, որպէսզի դրա մէջ էլ մեր վերջը հասնի:

Երանելի հայրն Ապողոս անունով մի աշակերտ ունէր: Նենգ թշնամու խարդաւանքով այլ ցանկութիւնների հետ միասին նրա մէջ ցանկութիւն առաջացաւ նաեւ հոգեւորականի կոչում ստանալու: Երազում նրան յայտնւում էին դեւեր հրեշտակների տեսքով, որոնք նրան եպիսկոպոս էին ձեռնադրում: Քնից արթնանալով՝ նա սկսեց ծերին խնդրել, որ իրեն ուղարկի քաղաք՝ արքեպիսկոպոսի մօտ՝ ընդունելու հոգեւորականի ձեռնադրութիւն: Սակայն ծերն արգելեց նրան եւ սովորեցրեց չփնտրել իր արժանիքից աւելի բարձր կոչում: Տխրելով ծերի մշտական ուսուցումներից ու գաստիարակութիւնից՝ Ապողոսը գաղտնի փախաւ նրանից եւ գնաց իր ազգականների մօտ՝ Ալեքսանդրիա, որպէսզի նրանց գործակցութեամբ շուտով ստանայ հոգեւորականի ձեռնադրութիւն:

Երբ Ապողոսը գնում էր, ճանապարհին նրան հանդիպեց մի դեւ՝ շատ բարձրահասակ մարդու կերպարանքով: Նա մերկ էր ու սեւ, զազրելի դէմքով, հաստ շուրթերով ու երկաթեայ եղունգներով: Գազանի նմանութիւն ունենալով՝ միաժամանակ նա նման էր ե՛ւ տղամարդու, ե՛ւ կնոջ: Գարշելի հոտ արձակելով՝ դեւն այնպիսի անամօթութիւն էր ներկայացնում նրա առջեւ, որի մասին անհնարին է գրել: Գրկելով Ապողոսի վիզը՝ դեւը սկսեց համբուրել նրան: Ապողոսը կնքեց իրեն խաչի նշանով եւ դուրս պրծաւ նրա ձեռքից: Դեւը նրան ասաց.

—Ինչո՞ւ ես փախչում ինձնից: Իմացի՛ր, որ դու իմն ես, եւ ես քեզ սիրում եմ, քանի որ դու կատարում ես իմ ցանկութիւնները: Դրա համար էլ ես եկել եմ քեզ մօտ, որպէսզի ուղեկցեմ քեզ այնքան ժամանակ, մինչեւ ի կատար ածեմ քո բոլոր ցանկութիւնները:

Ի վիճակի չլինելով տանելու նրա գարշահոտութիւնն ու անամօթութիւնը՝ Ապողոսն աչքերը երկինք բարձրացրեց եւ բարձրաձայն գոչեց.

—Տէ՛ր, իմ հայր Սիսոյիի աղօթքներով օգնի՛ր ինձ եւ ազատի՛ր այս փորձութիւնից:

Եւ ահա դեւը, փոքր-ինչ հեռանալով նրանից, դարձաւ գեղեցիկ, մերկ կին եւ նրան ասաց.

—Մօտեցի՛ր եւ բաւարարի՛ր քո ցանկութիւնը, որովհետեւ դու քո սրտում շատ անգամ ես հնազանդուել ինձ քո մտքերով:

—Ես կամենում էի,— յետոյ ասաց դեւը,— քեզ դարձնել քահանայ եւ եպիսկոպոս, սակայն Սիսոյիի աղօթքներն ինձ հեռացնում են քեզնից:

Այս խօսքերն ասելով՝ դեւն անհետացաւ:

Սարսափով լցուած Ապողոսը վերադարձաւ ծերի մօտ եւ, ընկնելով նրա ոտքերը, խոստովանեց նրան ամէն ինչ եւ թողութիւն խնդրեց: Նա նաեւ եղբայրներին պատմեց, թէ ինչ տառապանքներ է կրել դիւային գայթակղութիւնների պատճառով, եւ թէ ինչպէս են իրեն օգնել երանելի հայր Սիսոյիի աղօթքները:

Ցիրաւի, Սիսոյիի աղօթքը զօրեղ էր՝ դեւերին քշելու համար: Այն նրա մէկ այլ աշակերտից, ում անունն Աբրահամ էր, քշեց նրան տանջող պիղծ ոգուն: Բոլոր չար ոգիները փախչում էին նրանից՝ չհամաձակուելով մօտենալ Քրիստոսի քաջ եւ անյաղթելի զինուորին:

Երանելի Սիսոյին անապատում ապրեց վաթսուն տարի: Երբ մօտենում էր նրա մահը (այդ ժամանակ եղբայրները նրա մօտ էին), նրա դէմքը պայծառացաւ, ինչպէս լոյս, եւ նա ասաց եղբայրներին.

— Ահա եկաւ աբբայ Անտոնը:

Ապա, փոքր-ինչ լռելով, ասաց.

— Ահա եկաւ մարգարէների դասը:

Եւ կրկին փոքր-ինչ դադար առնելով՝ ասաց.

— Ահա եկաւ առաքեալների դասը:

Նրա դէմքը սկսեց շողալ, եւ նա սկսեց խօսել մարդկանց հետ, ովքեր անտեսանելի էին շրջապատի համար:

Եղբայրները նրան հարցրին.

— Հա՛յր, ասա՛ մեզ՝ ո՞ւմ հետ ես խօսում:

Պատասխանեց.

—Հրեշտակներն են եկել ինձ տանելու, բայց ես խնդրում եմ նրանց, որ մի քիչ ժամանակ թողնեն ինձ, որպէսզի կարողանամ ապաշխարել:

— Դու ապաշխարութեան կարիք չունես, հա՛յր,— ասացին նրան եղբայրները:

Մերն այս խօսքին պատասխանեց.

— Ես իսկապէս չգիտեմ արդեօք երբեւէ սկսե՞լ եմ ապաշխարել:

Բայց բոլոր եղբայրները գիտէին, որ նա կատարեալ էր բոլոր առաքինութիւնների մէջ:

Դրանից յետոյ նա աւելի պայծառացաւ, դէմքը դարձաւ արեւի նման, եւ բոլորը սկսեցին վախենալ դրանից: Այդժամ ծերն ասաց.

— Ահա գալիս է Տէրը, նայէ՛ք բոլորդ: Նա ասում է. «Իմ ընտրեալ անօթին անապատից Ինձ մո՛տ բերէք»:

Այս խօսքով երանելին իր հոգին աւանդեց Տիրոջը: Նոյն պահին կայծակ երեւաց, եւ խուցը լցուեց անուշահոտութեամբ:

Այսպիսի երանելի վախճանով աւարտելով ժամանակաւոր կեանքը՝ երանելի Սիսոյին տեղափոխուեց անվերջանալի կեանքի մէջ եւ այժմ բնակւում է Քրիստոսին ու վայելում է Նրա տեսութիւնը սուրբերի այն դասերի հետ, որոնց նա տեսաւ իր վախճանի ժամանակ:

Մեր երանելի հայր Սիսոյի աղօթքներով մենք նոյնպէս թող արժանանանք այն ուրախութեանը՝ շնորհով մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Ում փա՛ռք յաւիտեանս. ամէն:

ԵՐԱՆԵԼԻ ՀԱՅՐ ՊԻՄԵՆ ՄԵԾԻ ՎԱՐՔԸ

Երանելի Պիմենը եգիպտացի էր: Իր երկու կրտսեր եղբայրների հետ նա գնաց Եգիպտոսի վանքերից մէկը, ուր նրանց հետ դարձաւ վանական: Տարիներ անց նրանց մայրը եկաւ նրանց մօտ՝ կամենալով տեսնել իր որդիներին: Սակայն տեսնել չկարողանալով՝ մնաց եկեղեցու մօտ՝ սպասելով նրանց եկեղեցի՝ աղօթքի գալուն: Երբ եղբայրները գալիս էին, մայրը մօտեցաւ, բայց նրանք յետ փախան նրանից եւ, մտնելով իրենց խուցը, դուռը փակեցին նրա առջեւ: Մօտենալով դռանը՝ մայրը սկսեց լաց լինելով ու խնդրելով թակել ու կանչել իր զաւակներին: Բայց վանականները ոչ միայն չբացեցին խցի դուռը, այլ անգամ չպատասխանեցին: Երբ կինը, խցի դռան մօտ կանգնած, երկար լաց էր լինում, աբբայ Անուբը, ով տեսել էր այս ամէնը, միւս դռնով եկաւ եղբայրների մօտ եւ Պիմենին ասաց.

—Ի՞նչ անենք այս ծեր կնոջ հետ: Ահա երկար ժամանակ է՝ դառնօրէն լաց է լինում՝ այստեղից չհեռանալով:

Պիմենը, վեր կենալով, մօտեցաւ դռանը եւ հարցրեց.

—Ինչո՞ւ ես լաց լինում, ո՛վ կին:

Մայրը, լսելով նրա ձայնը, սակայն նրան չտեսնելով (քանի որ դուռը փակ էր), ասաց.

—Ես ուզում եմ տեսնել ձեզ, իմ որդեակնե՛ր: Մի՞թէ ես ձեզ իմ կաթով չեմ սնել, մի՞թէ ես չեմ մեծացրել ձեզ: Ահա արդէն ծերացել եմ, սիրտս տառապում է՝ լսելով զաւակներիս ձայնը եւ չտեսնելով նրանց: Մեռնելուցս առաջ ուզում եմ տեսնել ձեզ, որդեակնե՛րս:

Պիմենն ասաց.

—Որտե՞ղ ես ուզում տեսնել մեզ՝ այստե՞ղ, թէ՞ հանդերձեալ կեանքում:

Նա պատասխանեց.

—Կը տեսնե՞մ արդեօք ձեզ այնտեղ, իմ որդինե՛ր, եթէ չտեսնեմ այստեղ:

Պիմենը պատասխանեց.

—Եթէ դու համբերես եւ չտեսնես մեզ այստեղ, ապա մենք յոյս ունենք, որ Աստուծոյ մարդասիրութեամբ դու անպայման կը տեսնես մեզ այնտեղ:

Լսելով իրեն ասուածը՝ մայրը պատասխանեց.

—Այո՛, ես գերադասում եմ ձեզ այնտեղ տեսնել, քան այստեղ:

Ապա հեռացաւ՝ մեծ յոյսով ուրախանալով, քանզի լաւ համարեց տեսնել իր զաւակներին ոչ թէ այս ժամանակաւոր, այլ հանդերձեալ կեանքում:

Երանելի Պիմենը, իր օրերն ու տարիներն անցկացնելով պահքով ու յարատեւ աղօթքներով, ձեռք բերեց կրօնաւորական բոլոր առաքինութիւնները եւ Աստուծոյ օգնութեամբ արիաբար ընդդիմացաւ անտեսանելի թշնամուն. նա մեռցրեց իր մարմինը, որը մարտնչում էր հոգու դէմ, մեծագոյն ջանքերով ճնշեց այն եւ հնազանդեցրեց հոգուն: Այդպիսով նա հասաւ անկրքութեան ծայրակէտին եւ դարձաւ ամենապանծալին բոլոր անապատական հայրերի մէջ:

Որոշ ժամանակ անց այդ երկրի իշխանը ցանկացաւ տեսնել երանելի հայր Պիմենին եւ պատգամաւոր ուղարկեց նրա մօտ՝ խնդրանքով, որ երանելին ընդունի իրեն:

Ծերը տխրեց՝ ինքն իրեն խորհրդածելով. «Եթէ մեծատուններին դան ինձ պատուելու, ապա ժողովրդի միջից էլ մարդիկ կը դան եւ կ՚անհանգստացնեն ինձ. նրանք կը խաթարեն իմ լռութիւնը, եւ ես կը զրկուեմ խոնարհութիւնից, որն Աստուծոյ օգնութեամբ ձեռք եմ բերել մեծ ջանքերով. այդժամ կարող եմ ընկնել հպարտութեան մէջ»:

Այսպէս խորհելով՝ երանելին հրաժարուեց իշխանին տեսնելուց եւ պատգամաւորի միջոցով խնդրեց նրան չգալ իր մօտ՝ ասելով, որ ինքը չի ցանկանում ընդունել նրան: Այդպիսի պատասխան լսելով՝ իշխանը տրտմեց եւ ասաց.

—Իմ մեղքերի պատճառով է, որ ես արժանի չեղայ տեսնելու Աստուծոյ մարդուն:

Սակայն շատ կամենալով տեսնել սուրբ ծերին՝ այսպիսի խորամանկութիւն մտածեց. ինչ-որ չնչին զանցանքի համար բռնեց ու բանտ նետեց նրա քրոջ որդուն՝ յոյս ունենալով, որ ծերը կը բարեխօսի իր մօտ իր զարմիկի համար: Այդպէս էր իշխանը կամենում տեսնել սուրբին: Իր սպասաւորներին նա ասաց.

—Հէնց որ աբբայ Պիմենը գայ, պատանուն ազատ կ՚արձակեմ, իսկ եթէ չգայ, անպատիժ չեմ թողնի մեղաւորին, քանզի մեծ է նրա յանցանքը:

Երբ պատանու մայրը լսեց իր որդու բանտարկման մասին, գնաց անապատ՝ եղբօր մօտ, եւ հասնելով նրա խցին՝ սկսեց թակել դուռը՝ արտասուքով աղաչելով նրան գնալ իշխանի մօտ եւ բարեխօսել իր որդու համար, որպէսզի նրան ազատի:

Ծերը ոչ միայն դուռը չբացեց նրա առջեւ, այլեւ ոչինչ չպատասխանեց:

Սակայն քոյրը, երկար ժամանակ դուռը թակելով, չարունակեց արցունքներով խնդրել ծերին եւ, ոչ մի պատասխան չստանալով, սկսեց կշտամբանքով ու ցասումով ասել.

—Անգո՛ւթ, անզգա՛յ, դաժա՛ն, անաստուա՛ծ եւ գազանաբարոյ, մի՞թէ քեզ վրայ չեն ազդում արցունքներս. իմ տղան՝ իմ միակ զաւակը, մահուան վտանգի մէջ է:

Ծերն ուղարկեց իր աշակերտին՝ նրան ասելու.

—Գնա՛ այստեղից: Պիմենը երեխաներ չունի, ուստիեւ չի տխրում:

Քոյրը վերադարձաւ դառն արտասուելով եւ եղբօրը կշտամբելով:

Երբ իշխանը լսեց պատահածի մասին, իր ընկերներին ասաց.

—Ասացէ՛ք ծերին, որ ինձ նամակ գրի ու բարեխօսի քրոջ որդուն բանտից ազատելու համար, եւ ես ազատ կ՚արձակեմ նրան:

Շատերը խորհուրդ տուեցին ծերին նամակ գրել իշխանին: Ծերը գրեց. «Հրամայի՛ր քո պաշտօնեաներին լաւ քննել մեղադրուող պատանու յանցանքը, եւ եթէ այն մահուան արժանի համարուի, ապա թող մեռնի, որպէսզի ժամանակաւոր տանջանքով խուսափի յաւիտենական տանջանքներից, իսկ եթէ մեղադրուողը մահուան արժանի չլինի, ապա, պատժելով նրան ըստ օրէնքի, ազա՛տ արձակիր»:

Երբ իշխանը կարդաց ծերի գրութիւնը, զարմացաւ նրա առաքինութեան վրայ՝ հասկանալով, որ իսկապէս Աստծուն հաճելի մարդ է նա: Եւ ազատեց պատանուն:

Երանելի Պիմենը, փախչելով աշխարհիկ փառքից ու մարդկային պատիւներից, գնաց մէկ այլ տեղ եւ երկար ժամանակ շրջեց տարբեր վայրերում: Ապա կրկին եգիպտական անապատ եկաւ եւ մնաց այնտեղ մինչեւ խոր ծերութիւն՝ հաճելի լինելով Աստծուն ճգնաւորական ջանքերով: Եւ շատ մենակեցների համար հայր եղաւ նա:

Խոնարհամիտ լինելով՝ իր աշակերտներին խոնարհամտութիւն էր ուսուցանում: Նա իր աշակերտներին օրինակ բերեց մի ծերի (հաւանաբար հէնց իրեն)՝ ասելով. «Ոչ շատ առաջ Թագաւորանիստ քաղաքի մօտ գտնուող անապատում մի փոքրիկ խցում, եգիպտացի մի մե-

նակեաց էր ապրում: Պատահեց, որ մի անգամ այդտեղով անցաւ Թէոդոս Փոքր բարեպաշտ կայսրը: Լսելով այդտեղ ապրող մենակեացի մասին՝ կայսրը թողեց իր ուղեկիցներին եւ, հասարակ զինուորի կերպարանք ընդունելով, ուղղուեց դէպի ծերի խուցը: Երբ կայսրը դուռը թակեց, մենակեացը բացեց այն եւ կայսերը հասարակ զինուոր կարծելով՝ ներս ընդունեց: Երբ միասին աղօթելուց յետոյ նրանք նստեցին, կայսրը հարցրեց.

—Ինչպէ՞ս են ճգնում Եգիպտոսում բնակուող հայրերը:

—Բոլորն աղօթում են Աստծուն ձեր փրկութեան համար,— պատասխանեց ծերը:

Իր շուրջ նայելով՝ կայսրը չգտաւ ոչինչ, բացի պատից կախուած զամբիւղից, որի մէջ մի քիչ չոր հաց կար, եւ ասաց ծերին.

—Հա՛յր, օրհնի՛ր ինձ՝ փոքր-ինչ հաց ուտելու:

Ծերն ամանի մէջ ջուր լցրեց, աւելացրեց աղ եւ չոր հացի կտորները, եւ երկուսը միասին կերան: Ապա ծերը բերեց ջրի կուլան եւ տուեց կայսերը՝ խմելու: Ճաշից յետոյ կայսրը հարցրեց ծերին.

—Դու գիտե՞ս՝ ով եմ ես:

Նա պատասխանեց.

—Չգիտեմ, տէր, Աստուա՛ծ գիտի քեզ:

Այդժամ կայսրը նրան ասաց.

—Ես Թէոդոս կայսրն եմ:

Սա լսելուն պէս ծերը խոնարհուեց նրան, ապա կայսրն ասաց.

—Երանելի էք դուք՝ մենակեացներդ, քանի որ ազատ էք այս ունայն աշխարհի հոգսերից եւ ձեր կեանքն անցկացնում էք աղօթքներով, հոգում միայն այն մասին, թէ ինչպէս ունենաք երկնաւոր յաւիտենական կեանք եւ երկնային պարգեւներ: Ճշմարիտ եմ ասում քեզ, որ ես, ծնուած լինելով կայսերական ընտանիքում եւ այժմ էլ կայսր լինելով, երբեւէ այդքան հաճոյքով հաց չէի կերել եւ չէի խմել այնպիսի ջուր, որ հիմա կերայ եւ խմեցի:

Ծերը պատասխանեց.

—Պատճառն այն է, որ մենք՝ մենակեացներս, կերակուրն աղօթքով ու փառաբանութիւններով ենք ուտում, այդ պատճառով էլ ամենապարզ կերակուրն իսկ քաղցր է լինում: Իսկ ձեր տներում այն պատրաստւում է առանց աղօթքի, բազում խօսակցութիւններով ու վէճերով, այդ պատճառով էլ օրհնութիւն չի ստանում, որը կը քաղցրացնէր այն:

Համբուրելով ծերին՝ կայսրը հեռացաւ՝ պատուելով նրան: Իսկ ծերը, վախենալով կործանարար մեծարումից եւ հպարտութիւնից, որպէսզի մարդկանց մեծարանքի պատճառով չկորցնի իր խոնարհութեան շնորհը եւ չզրկուի Աստուծոյ շնորհից, հեռացաւ այդտեղից եւ որոշ ժամանակ անց կրկին Եգիպտոս եկաւ»:

Սուրբ Պիմենը, կամենալով իր աշակերտներին հնազանդութիւն սովորեցնել, խրատում էր, որ հեռու մնան ունայն գովեստներից ու պատիւներից, որոնք մենակեացներին ոչ թէ օգուտ են բերում, այլ վնաս: Սուրբ Պիմենի խրատները միշտ ազդու էին, քանզի կարողանում էր բոլորին ուսուցանել փրկութեան ճանապարհը. ինչպէս իր կեանքով էր ցոյց տալիս հրեշտակներին հաւասար առաքինութեան օրինակ, այնպէս էլ նրա խօսքերն էին օգուտ բերում բոլորին: Եւ գալիս էին նրա մօտ ոչ միայն սկսնակներ, այլ նաեւ մենակեցական սխրանքների մէջ ծերացած մարդիկ եւ նրան հարցնում, թէ ինչն է օգտակար հոգու փրկութեան համար: Բոլորը, ովքեր գալիս էին նրա մօտ, նրանից ստանում էին իմաստուն եւ աստուածային ներշնչանքով լեցուն պատասխաններ՝ ի շահ իրենց հոգիների: Այդ պատասխաններից մի քանիսը ներկայացնենք ստորեւ:

Աբբայ Պիմենին հարցրին.

—Եթէ տեսնեմ իմ եղբօրը մեղանչելիս, պէ՞տք է արդեօք թաքցնեմ նրա մեղքը:

Պիմենը պատասխանեց.

—Եթէ մենք թաքցնենք մեր եղբայրների մեղքերը, ապա Աստուած էլ կը թաքցնի մեր մեղքերը:

Մի եղբայր հարցրեց աբբայ Պիմենին.

—Հա՛յր, ես խռովութեան մէջ եմ եւ մտածում եմ այստեղից հեռանալու մասին:

Ծերը հարցրեց.

—Ի՞նչ պատճառով ես ուզում հեռանալ այստեղից:

Եղբայրն ասաց.

—Ես չար բաներ եմ լսում այստեղ ապրող եղբայրներից մէկի մասին եւ գայթակղւում եմ:

Ծերն ասաց.

—Այն, ինչ դու լսում ես, ճիշտ չէ:

Եղբայրն ասաց.

—Հա՛յր, յիրաւի ճշմարիտ է լսածս, քանի որ այն ինձ ասողն արժանի է ամենայն վստահութեան:

Բայց ծերն ասաց.

—Ո՛չ, քեզ յայտնողն արժանի չէ վստահութեան, քանզի եթէ վստահութեան արժանի լինէր, ապա եղբօրը չէր վատաբանի քո առաջ: Սակայն դու երբեք մի՛ հաւատա նրան, ինչ ասում են քեզ, եթէ դու ինքդ չես տեսել այն. քանզի Աստուած Ինքը, լսելով Սոդոմի աղաղակը, չվստահեց լսածին, մինչեւ Ինքը չեկաւ՝ ամէն ինչ Իր աչքով տեսնելու. «Տէրն ասաց. «Սոդոմացիների ու գոմորացիների աղաղակն ահագնացել, հասել է Ինձ. նրանց մեղքերը խիստ շատացել են: Արդ՝ իջնեմ տեսնեմ, թէ Ինձ հասած աղաղակը համապատասխանո՞ւմ է նրանց կատարածին, թէ՞ ոչ»:

Եղբայրը սրան պատասխանեց.

—Ես նոյնպէս, հա՛յր, իմ իսկ աչքերով տեսայ՝ ինչպէս է այդ եղբայրը մեղանչում:

Լսելով սա՝ ծերը նայեց գետնին, ապա, գետնից մի փոքրիկ ճիւղ վերցնելով, ասաց եղբօրը.

—Ի՞նչ է սա:

Եղբայրն ասաց.

—Ճիւղ է:

Ցետոյ ծերը նայեց վերեւ եւ, ցոյց տալով գերանը, որի վրա կտուրն էր, հարցրեց.

—Իսկ սա՞ ինչ է:

Եղբայրը պատասխանեց.

—Գերան:

Եւ ծերը եղբօրն ասաց.

—Ցիշի՛ր դու քո սրտում, որ քո մեղքերը նման են այս գերանին, իսկ այն եղբօր մեղքը, որի մասին դու ասացիր, նման է այս ճիւղին: Եթէ մտապահես սա, երբեք չես խռովուի ու չես գայթակղուի:

Սուրբ Պիմենի այս խօսքերը լսեց աբբայ Սիսոյին, ով այդ ժամանակ նրա մօտ էր. իր լսածից զարմացած՝ նա ասաց սուրբ Պիմենին.

—Ինչպէ՞ս գովեմ քեզ, աբբա՛յ Պիմեն, յիրաւի քո խօսքերը լեցուն են շնորհով եւ փառքով, ինչպէս թանկարժէք քար:

Այդժամ աբբայ Պիմենն ասաց.

—Ասուած է՝ վկայիր միայն այն մասին, ինչ տեսել են քո աչքերը: Բայց ես ձեզ ասում եմ՝ եթէ ձեր աչքով էլ տեսնէք, հաւատ մի՛ ընծայէք դրան:

Ապա այսպիսի մի դէպք պատմեց. «Մի եղբայր փորձութեան ենթարկուեց դեւի կողմից, որը նրան այսպիսի բան ցոյց տուեց. եղբայրը տեսաւ մէկ այլ եղբօր, ով մեղանչում էր կնոջ հետ: Եղբօր մտքերը խառնուեցին, եւ կիրքը փոթորկուեց նրա մէջ: Մօտենալով՝ նա ոտքով հրեց նրանց եւ ասաց. «Թողէ՛ք, ինչո՞ւ էք մեղանչում»: Սակայն պարզուեց, որ դրանք ցորենի պարկեր են, ո՛չ թէ մարդիկ: Այդ պատճառով էլ, ասում եմ ձեզ, հաւատ մի՛ ընծայէք նաեւ նրան, ինչ տեսնում էք ձեր աչքով»:

Աբբայ Անուբը հարցրեց սուրբ Պիմենին.

—Իսկ դու ի՞նչ պատասխան կը տայիր Աստծուն, եթէ տեսնէիր եղբօրդ մեղքը եւ չմերկացնէիր այն:

Պիմենն ասաց.

—Ես Աստծուն կ՚ասէի. «Տէ՛ր, Դո՛ւ ես ասել. «Կեղծաւո՛ր, նախ հանիր քո աչքից գերանը եւ ապա յստակ կը տեսնես՝ քո եղբօր աչքից շիւղը հանելու համար» [Մատթ. է 5]: Ես կատարեցի Քո հրամանը:

Մի եղբայր հարցրեց աբբայ Պիմենին.

—Հա՛յր, ես մեծ մեղք եմ գործել եւ ուզում եմ երեք տարի ապաշխարել: Երեք տարին բաւակա՞ն է ապաշխարելու համար:

Ծերը պատասխանեց.

—Շատ է:

Այդժամ եղբայրն ասաց.

—Ուրեմն դու հրամայում ես ապաշխարել մէ՞կ տարի:

Ծերը պատասխանեց.

—Դա էլ է շատ:

Երբ այդ մասին լսեցին միւս եղբայրները, ասացին.

—Հետեւաբար պէտք է ապաշխարել քառասուն օրից ոչ աւելի՞:

Սակայն ծերը սրան պատասխանեց.

—Դա էլ է շատ:

Իսկ յետոյ աւելացրեց.

—Ես մտածում եմ, որ եթէ մարդը զղջում է իր ամբողջ սրտով եւ որոշում այլեւս երբեք չվերադառնալ մեղքին, ապա Աստուած կ՚ընդունի նրա երեքօրեայ ապաշխարութիւնն էլ:

Մէկ ուրիշ եղբայր հարցրեց աբբայ Պիմենին.

—Ինչպէ՞ս պէտք է ապրի մարդ:

Մերը պատասխանեց.

—Դանիէլի օրինակից տեսնում ենք, որ նրան չկարողացան մեղադրել ոչ մի բանում, բացի միայն նրանից, որ նա իր Աստծուն է ծառայում:

Այս խօսքով նա հասկացնում էր, որ մարդը պէտք է ապրի այնպէս, որ նրա ողջ կեանքը չլինի այլ բան, քան Աստծուն ծառայութիւն:

Մէկ այլ վանական հարցրեց.

—Ինչպէ՞ս պաշտպանուեմ թշնամու խարդաւանքներից:

Հայրը պատասխանեց.

—Երբ կաթսան, որի տակ կրակ է վառուում, եռում է, ապա ո՛չ ճանճ եւ ո՛չ էլ այլ միջատ չեն կարող նրան կպչել, իսկ երբ այն սառչի, նրա վրայ կը նստեն ե՛ւ ճանճեր, ե՛ւ բզեզներ: Այդպէս նաեւ վանականները. նրանք, ովքեր ջանադրաբար սիրագործում են առաքինութիւնների մէջ, թշնամին չի համարձակւում մօտենալ եւ հրապուրել նրանց դէպի իր ցանցերը, իսկ այն մարդուն, ով իր կեանքն անցկացնում է ծուլութեամբ ու անհոգութեամբ, թշնամին մօտենում է հեշտութեամբ եւ հրապուրում դէպի մեղքը, ինչպէս ինքն է կամենում:

Մէկը հարցրեց, թէ ինչպէ՞ս կարելի է ազատուել չար մտքերից: Մերը պատասխանեց. «Այս դէպքը շատ նման է մի մարդու, ում ձախ կողմում կրակ է, իսկ աջ կողմում՝ ջրով լի անօթ: Երբ մարդն այրւում է կրակից, անօթից ջուր է վերցնում եւ հանգցնում կրակը: Կրակը չար մտքերն են, որոնք մեր փրկութեան թշնամին դնում է մարդու սրտի մէջ, ինչպէս մի չինութեան մէջ դրուած կայծ, մինչեւ որ մարդը լցուի մեղսալի ցանկութիւններով: Իսկ ջուրը մարդու՝ աղօթքով ձգտումն է առ Աստուած»:

Աբբայ Ամոնը նոյնպէս հարցրեց Պիմենին չար մտքերի մասին, որոնք բխում են սրտից եւ ունայն ցանկութիւններից: Եւ ծերը պատասխանեց Սուրբ Գրքից՝ ասելով. «Ինչպիսի՞ փառք կարող է ստանալ կացինը առանց իրենով հարուածողի, եւ կարո՞ղ է արդեօք գովուել սղոցը՝ աշխատեցնող չունենալով: Այդպէս նաեւ դու չար մտքերին օգնական մի՛ ուղարկիր քո հաւանութիւնը, եւ նրանք կը ցրուեն»:

Աբբայ Յովսէփը հարցրեց աբբայ Պիմենին պահքի մասին.

—Ինչպէ՞ս պէտք է պահք պահել:

Մերը պատասխանեց.

—Ես ամէն օր ուտում եմ շատ սակաւ՝ առանց կշտանալու:

Աբբայ Յովսէփը հարցրեց.

—Իսկ երբ պատանի էիր, երկօրեայ պահք չէի՞ր պահում:

Պիմենը պատասխանեց.

—Պահում էի ոչ միայն երկու, այլ նաեւ երեք օր, մէկ շաբաթ, սակայն սուրբ հայրերը, ովքեր փորձել են ե՛ւ մէկը, ե՛ւ միւսը, ասում են, որ աւելի լաւ է ուտել ամէն օր եւ սակաւ. քանզի դա է աբքայական ճանապարհը դէպի փրկութիւն, աւելի թեթեւ եւ յարմար, որպէսզի միտքը չհպարտանայ:

Մեծ վանքի վանահայրը հարցրեց աբբայ Պիմենին.

—Ինչպէ՞ս կարող եմ ձեռք բերել սրտի փչրուածութիւն:

Մերը պատասխանեց.

—Մի՞թէ կարող է փչրուածութիւն լինել այն սրտում, որը մտահոգւում է պանրի, իւղով լի անօթների ու կենցաղային այլ բաների մասին:

Մէկ ուրիշը ծերին հարցրեց.

—Ո՞րն է լաւ՝ խօսե՞լը, թէ՞ լռելը:

Մերը պատասխանեց.

—Լա՛ւ բան է անում, ով խօսում է Աստուծոյ համար, այդպէս լաւ բան է անում նաեւ նա, ով լռում է Աստուծոյ համար:

Մի անգամ սուրբ Պիմենն ասաց.

— Երկու բան կայ, որոնք եթէ վանականն ատի, կարող է ազատ լինել այս աշխարհի գայթակղութիւններից:

Մի եղբայր հարցրեց նրան.

— Որո՞նք են դրանք:

Մերը պատասխանեց.

— Մարմնի հանգիստն ու փառասիրութիւնը:

Ապա ծերն ասաց.

— Աւետարանում գրուած է. «Վերարկու ունեցողը թող վաճառի այն ու սուր գնի» (Ղուկ. ԻԲ 36). սա նշանակում է՝ ով մարմնի հան-

գիստ է փնտրում, թող թողնի այն եւ սկսի վարժեցնել մարմինը խստակեցութեան՝ գնալով նեղ ճանապարհով:

Մի անգամ աբբայ Պիմենը լսեց մի եղբօր մասին, ով շաբաթուայ վեց օրը պահք էր պահում եւ ուտում էր միայն եօթերորդ օրը, սակայն շարունակ բարկանում էր իր եղբօր վրայ: Աբբայ Պիմենն այդ մասին ասաց. «Սովորեց պահք պահել վեց օր, իսկ բարկութիւնից չի կարողանում հեռու մնալ նոյնիսկ մէկ օր»:

Մի վանքի վանահայր, որոշ եղբայրների մասին լսելով, թէ յաճախ են գնում քաղաք, լողանում բաղնիքում՝ չմտահոգուելով իրենց փրկութեան մասին, բարկացաւ նրանց վրայ եւ, գալով վանք, նրանց վրայից հանեց վանական հագուստը: Յետոյ գնաց աբբայ Պիմենի մօտ եւ պատմեց նրան այն ամէնն, ինչ արել էր այդ եղբայրներին: Մերը նրան ասաց. «Դու ինքդ քո մէջ ոչինչ չունե՞ս հին մարդուց, արդէն վերջնականապէս յաղթե՞լ ես նրան»: Վանահայրը, նրանից այս խօսքը լսելով, գթութեամբ լցուեց, իր մօտ կանչեց այն եղբայրներին, որոնց վշտացրել էր, ներողութիւն խնդրեց եւ կրկին հագցրեց նրանց վանական հագուստները:

Մի անգամ աբբայ Պիմենի մօտ եկաւ աբբայ Իսահակը եւ, տեսնելով, որ նա իր ոտքերին ջուր է լցրել, ասաց նրան.

— Ուրիշները որքա՜ն դաժանօրէն են ճնշում իրենց մարմինը:

Մերը նրան պատասխանեց.

— Մենք չենք սովորել մարմնասպան լինել:

Իսկ յետոյ ասաց.

— Երբեմն լինում է, որ մարդը լուռ է թւում, սակայն եթէ նրա սիրտը դատում է ուրիշներին, ապա նա խօսում է միշտ: Կան եւ այնպիսիք, ովքեր առաւօտից գիշեր խօսում են լեզուով, սակայն միաժամանակ լռութիւն են պահպանում (քանզի մերձաւորին չդատելը հաւասարազօր է լռելուն):

Աբբայ Յովսէփը պատմեց. «Երբ մի անգամ նստած էինք աբբայ Պիմենի մօտ, մեզ հետ էր երիտասարդ եղբայր Աղաթոնը: Կամենալով ինչ-որ բան ասել Աղաթոնին՝ Պիմենը նրան «աբբայ» անուանեց՝ ասելով «աբբայ Աղաթոն»: Մենք ծերին ասացինք.

— Այդ եղբայրը դեռ երիտասարդ է, ինչո՞ւ ես նրան «աբբայ» կոչում:

Մերը պատասխանեց.

— Նրա լուռ շուրթերն են ինձ ստիպում նրան «աբբայ» կոչել:

Յետոյ ասաց.

— Կրօնաւորը, գտնուելով իր մերձաւորների մէջ, պէտք է նմանուի քարէ արձանի. վիրաւորուելիս չպէտք է բարկանայ, գովուելիս չպէտք է մեծամտանայ:

Մինչեւ Պիմենի՝ Եգիպտական անապատ գալը այնտեղ ապրում էր մի ծեր, ում բոլորը պատուում էին: Երբ այդտեղ եկաւ աբբայ Պիմենը, շատերը, թողնելով այդ ծերին, սկսեցին գալ Պիմենի մօտ: Այս պատճառով այդ ծերը բարկութեամբ լցուեց աբբայ Պիմենի նկատմամբ, սկսեց նախանձել ու բամբասել նրան: Երբ աբբայ Պիմենը լսեց այս մասին, տխրեց ու ասաց իր եղբայրներին.

— Ի՞նչ անենք հիմա, քանզի այս մարդիկ մեզ վշտի մէջ դցեցին՝ թողնելով այնքան սուրբ ու առաքինի ծերին եւ գալով մեզ մօտ, որ մեզնից ոչինչ չենք ներկայացնում: Ի՞նչ միջոցով այն մեծ հօրն ազատենք բարկութիւնից: Պատրաստենք մի քիչ կերակուր, վերցնենք գինի, գնանք ծերի մօտ եւ ուտենք նրա հետ: Երեւի այս միջոցով կը մեղմացնենք նրա սիրտը: Եւ վերցնելով փոքր-ինչ կերակուր ու գինի՝ նրանք ուղղուեցին այն ծերի մօտ եւ թակեցին նրա խցի դուռը: Մերի աշակերտը, թակոցը լսելով, հարցրեց.

— Ո՞վ է:

Նրան պատասխանեցին.

— Քո աբբային ասա՛, որ Պիմենն իր եղբայրների հետ եկել է՝ նրանից օրհնութիւն ստանալու:

Աշակերտը գնաց եւ այդ մասին ասաց ծերին: Մերը լսելով՝ ասաց.

— Գնա եւ նրանց ասա՝ գնացէ՛ք այստեղից, ժամանակ չունեմ ձեզ տեսնելու:

Երբ աշակերտը սա հաղորդեց եկածներին, վերջիններս պատասխանեցին.

— Մենք այստեղից չենք հեռանայ, մինչեւ ծերի առաջ չխոնարհուենք:

Եւ կանգնեցին խցի դռան մօտ՝ կիսիչ արեւի տակ:

Տեսնելով նրանց խոնարհութիւնն ու համբերութիւնը՝ ծերը գթով լցուեց, դուռը բացեց նրանց առջեւ եւ նրանց համբուրելով ընդունեց: Ապա նստելով՝ սկսեցին զրուցել սիրով եւ կերան բերուած կերակուրը: Յետոյ այդ ծերն ասաց Պիմենին.

— Ցիրաւի՛, ո՛չ միայն ճիշտ է այն, ինչ ես լսել եմ քո մասին, այլեւ քո մէջ հարիւրապատիկ աւելի առաքինութիւն եմ տեսնում:

Այն ժամանակուանից ծերը սկսեց լաւ վերաբերուել աբբայ Պիմենին: Այդպէս կարողացաւ երանելի Պիմենը հեռացնել իր դէմ կուտակուած չարիքը եւ դրանով օրինակ եղաւ միւսների համար:

Երանելի Պիմենը կարողանում էր բժշկել նաեւ իր լռութեամբ, ինչպէս խօսքով:

Մի անգամ երկրի քահանաները այցելեցին այն վանքը, որտեղ գտնուում էր երանելին. աբբայ Անուրը, կամենալով նրանց հիւրասիրել, մտաւ երանելի Պիմենի մօտ եւ նրան ասաց հիւրերի մասին: Սակայն Պիմենը չպատասխանեց, այլ երկար ժամանակ լռեց, ուստի աբբայ Անուրը տխուր հեռացաւ նրանից:

Յետոյ եղբայրները հարցրին Պիմենին.

— Ինչո՞ւ չպատասխանեցիր աբբայ Անուրին:

Ծերը պատասխանեց.

— Ես դրա համար միջոց (այսինքն՝ լեզու) չունէի. քանզի ես մեռած եմ, իսկ մեռածը չի խօսում. ուստիեւ մի՛ համարէք, թէ ես ձեր կողքին եմ:

Ծերն այդպէս արեց, որպէսզի իրեն չկանչէին սեղանատուն՝ նոր եկած եղբայրների մօտ: Քանզի երբ եղբայրները կանչեցին նրան ուտելու իրենց հետ, նա գնաց լաց լինելով, կարծես չուզելով. որովհետեւ չէր կամենում լցնել որովայնը, միաժամանակ չէր ուզում չհնազանդուել եղբայրներին՝ նրանց չվշտացնելու համար:

Ոմն վանական, լսելով երանելի Պիմենի առաքինի կեանքի մասին, հեռու երկրից եկաւ նրա մօտ՝ նրան տեսնելու եւ նրանից սովորելու: Ծերը վանականին ընդունեց մեծ պատուով: Համբուրելով միմեանց՝ նստեցին: Վանականը սկսեց զրուցել ծերի հետ աստուածային Գրքերում եղած դժուարըմբռնելի հատուածների եւ երկնային բաների մասին: Երանելի Պիմենը, երեսը շրջելով, լռեց եւ ոչ մի պատասխան չտուեց նրան: Վանականը երկար խօսեց Գրքերից, սակայն ծերից պատասխան չստացաւ, ապա տխուր դուրս եկաւ խցից եւ ծերի աշակերտին ասաց.

— Իզուր յանձն առայ այդքան երկար ու դժուար ճանապարհ անցնել: Ես այստեղ նրա համար եկայ, իսկ նա ինձ ոչ մի բառ չասաց:

Այդ աշակերտը, մտնելով ծերի մօտ, նրան ասաց.

— Հա՛յր, քեզ համար էր եկել այն արդար, իր երկրի վանականների մէջ փառաբանուած մարդը. ինչո՞ւ դու նրան ոչինչ չասացիր:

Ծերը պատասխանեց.

— Նա երկնայիններից է եւ խօսում է երկնային բաների մասին, իսկ ես երկրաւոր եմ եւ կարող եմ միայն երկրաւոր բաների մասին խօսել: Եթէ մեզ մօտ եկած եղբայրը խօսէր հոգեւոր կրքերի, մարմնի տկարութիւնների մասին, ես նրան կը պատասխանէի, իսկ քանի որ նա խօսում է երկնայինի մասին, այդ մասին ես չեմ կարող ոչինչ ասել:

Աշակերտը, ելնելով ծերի մօտից, գնաց այն վանականի մօտ եւ նրան ասաց.

— Հա՛յր, իմացիր, որ ծերը հաճոյքով չի խօսում աստուածային Գրքերի մասին, սակայն եթէ որեւէ մէկը սկսում է նրա հետ խօսել հոգեւոր կրքերի մասին, ծերը պատասխանում է:

Մեղմանալով՝ վանականը վերադարձաւ ծերի մօտ եւ հարցրեց.

— Աբբա՛յ, ի՞նչ անեմ, կրքերի իշխանութեան տակ եմ:

Այդժամ ուրախ դէմքով նայելով նրան՝ ծերն ասաց.

— Լա՛ւ արեցիր, որ եկար. հիմա ես կը բացեմ բերանս եւ կը լցնեմ այն բարի խօսքերով:

Եւ բաւական ժամանակ խօսեց նրա հետ այն մասին, թէ ինչպէս յաղթանակ տանել մեր դէմ ելնող մարմնի դէմ: Վանականը, վայելելով ծերի՝ աստուածային ներշնչանքով ասած խօսքերը, զոհացաւ Աստծուց, որ արժանացրեց իրեն տեսնելու այդպիսի մէկին եւ լսելու նրա խօսքը. եւ վերադարձաւ իր վանքը՝ ուրախանալով, որ իր հոգին մեծ օգուտ ստացաւ:

Յետոյ մէկ այլ վանական՝ աբբայ Իսահակը, եկաւ հայր Պիմենի մօտ եւ տեսաւ, որ նա լուռ նստած է՝ կարծես գտնուելով մտքի յափշտակութեան մէջ: Բաւական ժամանակ սպասելուց յետոյ Իսահակը երկրպագեց ծերի առաջ՝ ասելով.

— Ասա՛ ինձ, հա՛յր, որտե՞ղ էր քո միտքը:

Նա ստիպուած լինելով պատասխանել՝ ասաց.

— Իմ միտքն այնտեղ էր, ուր լաց էր լինում ամենասուրբ կոյս Մարիամ Աստուածածինը՝ կանգնած խաչի մօտ: Ես նոյնպէս կ՛ուզէի այդպէս միշտ լաց լինել:

Ահա եւս մի քանի խօսք՝ ասուած սուրբ Պիմենի կողմից:

«Երբ մարդը պատրաստւում է տուն կառուցել, հաւաքում է շատ նիւթեր, որոնցով կարելի է տուն շինել: Այդպէս էլ մենք հեշտութեամբ մեր մէջ հոգեւոր տուն կը շինենք, եթէ վերցնենք ամէն բարի գործից մի մաս»:

«Մարդը պէտք է հետեւի երեք հիմնական կանոնի՝ Աստծուց պիտի երկիւղի, յաճախ աղօթի եւ մերձաւորին բարիք գործի»:

«Ժուժկալութիւն, համբերութիւն եւ խոհեմութիւն. ահա՛ երեք հիմքերը կրօնաւորական կեանքի, քանզի գրուած է. «Եւ եթէ այնտեղ լինեն այն երեք մարդիկ՝ Նոյը, Ցոբն ու Դանիէլը, նրանք փրկուելու են» [Եզեկ. ԺԴ 14]: Նոյն օրինակն է ժուժկալութեան, Ցոբը՝ համբերութեան, իսկ Դանիէլը՝ խոհեմութեան. եթէ կրօնաւորի մէջ լինեն այս երեք շնորհները, ապա Աստուած կը բնակուի նրա մէջ»:

«Երբ Դաւիթը մարտնչում էր առիւծի կամ արջի հետ, բռնում էր նրանց կոկորդից ու սպանում նրանց [Ա Թագ. ԺԷ 34, 35]: Այսպէս նաեւ մենք Աստուծոյ օգնութեամբ կը յաղթենք առիւծին՝ սատանային, եւ արջին՝ մեր մարմնին, եթէ ժուժկալութեան սանձ դնենք մեր կոկորդին ու որովայնին»:

«Եթէ Նաբուզարդանը՝ բաբելացիների արքայի խոհարարապետը, չդար Երուսաղէմ, Աստուծոյ տաճարը չէր այրուի [Դ Թագ. ԻԵ 8—10]: Այդպէս էլ մեր մէջ չի բորբոքուի մեղաւոր ցանկութեան կրակը, եւ մեր միտքը, պայքարելով թշնամու դէմ, երբեք չի պարտուի, եթէ մենք չտրուենք որկրամոլութեան եւ հաճոյքների»:

«Ինչպէս մեղուներն են փախչում ծխից՝ թոյլ տալով մարդկանց օգտուել իրենց աշխատանքի քաղցր պտուղներից, այդպէս էլ մարմնի հանդիստը մեր հոգուց քշում է Աստուծոյ երկիւղը, եւ հոգին զրկւում է բոլոր բարի գործերից»:

«Այնպէս, ինչպէս կայսերական զինուորն է կանգնում կայսեր մօտ՝ մշտապէս պատրաստ լինելով նրան պաշտպանելու, այդպէս էլ մեր հոգին մշտապէս պատրաստ պէտք է լինի պայքարելու անառակութեան դեւի դէմ»:

Այսպէս հայրերի մէջ մեծը՝ երանելի Պիմենը, սովորելով բոլոր առաքինութիւնները, օգուտ տալով բոլորին ինչպէս իր կեանքով, այնպէս էլ խօսքերով, այնքան մեծ հնազանդութիւն ունէր իր մտքում, որ յաճախ յոգոց հանելով ասում էր. «Ես պիտի նետուեմ այնտեղ, ուր նետուելու է սատանան»: Սակայն Աստուած Իր խոնարհ ծառային տարաւ այնտեղ, ուր սուրբ հրեշտակներն են գտնւում՝ երանելիների ու արդարների բնակավայրը. երկրաւոր երկար կեանքից յետոյ Աստուած նրան բնակեցրեց երկնաւոր օթեւաններում, որտեղ կեանքը վերջ չունի, եւ բոլոր սուրբերը, կանգնելով Աստուծոյ փառքի աթոռի առջեւ, մշտապէս փառաբանում են Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն՝ Մի Աստծուն եւ Երրորդութեանը, Ում մեզնից՝ մեղաւորներիցս, փա՛ռք այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: